Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը ձեռնամուխ է եղել մի նախաձեռնության, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կտեղադրվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

«Գրքամոլ»-ը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք հետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com էլ. հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2016 © Grqamol. All Rights Reserved.

URL: *www.grqamol.am*, e-mail: *grqamol@gmail.com*

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

ԹՈՄԵՆ ԹՈՒԼԱՆ

ՀՄԱՅՎԱԾ ՀՈԳԻՆ

ՎԵՊ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

«Սովետական գրող» հրատարակչության Երևանի

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

ԱՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆԱԽԱԳՈՒՇԱԿԸ

«Սովետական գրող» հրատարակչություն Երևան 1983

ԳՄԴ 84. 4 ֆր
Ռ 640

Ռուսերենից թարգմանեցին
ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱՊՅԱՆԸ և
ԴՈՖԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Ռոլան, Ռ.
Ռ 640 Համայված հոգին։ Վեպ. 4 հատորով.— Եր.։— Սովետ. գրող։
Հ. 4/Ռուս. թարգմ. Գ. Վիրապյանը, Դ. Թումանյանը.
1983, 576 էջ։

Ռոմեն Ռոլանը իր «Համայված հոգին» վեպ-էպոպեան գրել է առաջին համաշխարհային պատերազմից հետո։ Նրա այս նշանավոր ստեղծագործությունը արտացոլում է եվրոպական առաջադեմ մտավորականության հոգևոր կյանքի տիպական կողմերը։

«Նախագուշակը» վեպի եզրափակիչ գիրքն է։

Ռ 470 3000000 (1158)
705 (01) 83 — 83 «Ց»

ԳՄԴ 84. 4 ֆր.
И (Фр.)

© Государственное издательство «Художественная литература». Москва, 1957

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1983

Նախսգոուծակը

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Սիրո առաջին շրջանը արբեցուցիչ էր։ Մեղրամիսն այրում էր, ինչպես հուլիսյան տապը։ Թաքուն հրով, արբեցնող թմբիրով էր լցված այդ մեղրը։ Ի՞նչ ծաղիկներից էին այն հավաքում մեր երկու մեղուները։ Դե, իհարկե, ոչ միայն սոսկ գարնանային ծաղիկներից։

Երկուսն էլ մինչև ժամկետը ճաշակել էին ամռան նեկտարները, իսկ դրանց մեջ քիչ չէր տոհպն ու կծուն։ Երիտասարդ սիրո ուժը, դրանք խառնելով իրար, կախարդական ըմպելիք ըստեղծեց։ Ամեն ինչ նոր էր, ամեն ինչ մաքուր էր, ամեն ինչ բոցեղեն։ Ինչ ասես, որ չի նորոգում և չի մաքրում բոցը։ (Բայց դրանից հետո մի՞թե շատ բան է մնում)։

Այդ խելագար թռուններն գիշեր ու ցօր անց էին կացնում մագիլներն իրար մեջ մխրճած, առանց շրթունքներն իրարից անջատելու, մի շնչառությամբ շնչելով։ Գիշեր ու ցերեկ նրանք իրար հետ էին, կողք-կողքի, ինչպես երկու մինչև խորքերը խոյահարված նավեր։

Այդ ամբողջ ժամանակ Ասյան ու Մարկը անցկացրին փակված, չծածկելով ննջարանի միակ լուսամուտը, ոչ մի տեղ դուրս չէին գալիս և ոչ ոքի չէին թողնում իրենց մոտ այդ տանջահար, անկշտում գիշատիչները։

Աննետային հաջողվեց թափանցել նրանց մոտ, և նա գտավ երկուսին անկողնում. հարբած, հածող աչքերով, երջանիկ ու հոգնած, տենդից ու կրքից այրվելով, նրանց մտքով չէր անցնում թաքնվել։ Ասյան, գրկելով Աննետայի որդու գլուխը, խանդոտ ու չարացած, կատաղի ու ագահ հայացքով չափում էր անկոչ հյուրին։ Բայց Աննետան նրանց նայեց քնքշությամբ, սեղմեց իրեն և, չթաքցնելով ժպիտը, որի մեջ տագնապ կար, գլուխն օրորելով, ասաց.

— Խե՜ղճ իմ երեխանե՜ր... Ամբողջ բերքը միանգամից մի՛ կտցեք։ Գոնե մի քի՛չ թողեք սև օրվա։

Աննետան գիտեր, որ, միևնույն է, նրանք իրեն չեն լսի։ Նա ոտքերի ծայրերին դուրս եկավ ննջարանից։ Նրա հոգում և՛ ուրախություն կար և՛ թախիծ։ Նրան շատ պարզ էր պատկերանում ապագան։ Բայց ինչ լավ է, որ նրանք գոնե այդ ունեն։ Այդքա-նի՛ց էլ շնորհակալ եմ։ Նա հոգ տարավ, որ ոչ մի բան չխանգա-րի իր երեխաների երջանկությանը։ Ոչինչ չասելով ո՛չ մեկին, ո՛չ մյուսին (Ասյան հետո իմացավ, իսկ Մարկը, անհոգ, ինչպես բոլոր տղամարդիկ, երբեք չիմացավ), Աննետան, ձեռնամուխ եղավ երիտասարդ զույգի տնտեսությանը — խելահեղության այդ առաջին շաբաթներին նրանց բնական էր թվում, որ տանն ամեն ինչ ինքն իրեն էր ընթանում, առանց նրանց որևէ մասնակ-ցության։ Աննետան դարձավ նրանց ծառան, անաղմուկ և ան-նկատ եփում-թափում էր և հավաքում։ Բայց ահա Ասյան սկսեց ուշքի գալ։ Դեռ ծանրացած գլխով, դեռ չթոթափած այդ շաբաթ-ների շմոլքը, նա սկսեց ականջ դնել տան մեջ արագ-արագ այս ու այն կողմ գնացող-եկող անդադրում սուվերի շրշյուններին ու ոտնաձայներին, և այդ ժամանակ նրա մեջ նախ արթնացավ ինք-նասիրությունը, իսկ այնուհետև՝ երախտագիտությունը (սիրա-հարները համարում են, որ ամբողջ աշխարհը պարտավոր է իրենց ստրկաբար ծառայել)։ Ասյան որոշեց, որ իր երեկված իշ-խանությունը հաստատելու ժամանակն է, և գնաց Աննետայի մոտ։ Աննետան ավլում էր հատակը, երբ Ասյան բոբիկ, շապ-կանց, աչքերը չոած, ինչպես խրձանոցից պայծառ արև դուրս թռած բվի ճուտը, հանկարծ հայտնվեց ճաշասենյակի շեմքին։ Հարսին տեսնելով, Աննետան քրջջաց, ձեռքից ավելը գցեց, և, նետվելով դեպի Ասյան, նրան իր գիրկն առավ։ Ասյան լուրջ, ան-ժպիտ— նա դեռ մշուշի մեջ էր— արթնական ներողամտու-թյամբ թույլ տվեց իրեն համբուրել, հետո նստեց Աննետայի ծնկներին ու, բռնելով նրա կզակը, ուշադիր զննում էր դեմքը։

Մատով կամացուկ սեղմելով Աննետայի այտը, շրջեց նրա գլուխը, ցանկանալով նորից տեսնել ծանոթ կիսադեմը։ Հետո ափերի մեջ առավ հաճելի դեմքը, հայացքը սուզեց նրա աչքերի մեջ։ Եվ մթանգամից Ասյայի աչքերի մետաղային փայլը մեղ-մացավ։ Մատները բացվեցին, դեռ քնից խոնավ ձեռքը փաղաք-շորեն հպվեց Աննետայի շրթունքներին, և Ասյան շշնջաց.

— Շնորհակալ եմ ձեզ։

— Ես չեմ ուզում քո շնորհակալությունը,— ասաց Աննետան։

— Ինձ համար կարևոր չէ, թե դուք ինչ եք ուզում։ Ե՛ս եմ ուզում։ Շնորհակալ եմ։

— Ինչի՞ համար ես շնորհակալ։

— Այն բանի, որ նա այդքան...

Աննետան ամուր գրկեց Ասյային։

— Այդքան լա՞վն է։

— Ճիշտ իմ ուզածի չափ։

Երկու խորամանկ հայացքներ հանդգնորեն խաչաձևվեցին։ Փորձիր կպչել այդպիսի կանանց, նրանք չեն ամաչի բարիք կոչել այն, ինչ տեր աստված է արարել ի ուրախություն մարդկանց։ Սակայն Աննետան կատակող համեստությամբ ավելացրեց.

— Բայց չէ՞ որ մենք, մայրերս, նրանց միայն կիսով չափ ենք ստեղծում։ Պակասը դու պետք է լրացնես։

— Ես արդեն ձեռնամուխ եմ եղել դրան։

— Օ՜, դրա համար մի գիշերը բավական չէ։ Քեզ հեշտ խնդիր չէ բաժին ընկել։ Դու դեռ շատ կտանջվես նրա հետ։ Իսկ համբերություն ունե՞ս։

— Ո՛չ մի կաթիլ։

— Այ, այ, այ։

— Միայն թե նա՛ համբերատար լինի։

— Այդ ես չեմ երաշխավորի։

— Որ այդպես է, նրան ետ վերցրեք։ Ինձ վրա խոտան ապրանք եք սաղացրել...

— Իսկ եթե ես քեզ խոսքի վրա բռնե՞մ։ Եվ ետ վերցնե՞մ։

— Ապա մի փորձե՛ք։

Եվ Ասյան ահեղ տեսքով շտկվեց։

— Հանգստացի՛ր, գեղեցկուհիս,— ասաց Աննետան։— Ոչ ոք նրան քեզանից չի խլում։ Վերցրել ես, ուրեմն, տիրիր։ Դա քո իրավունքն է։ Դու ինձանից խլեցիր իմ որդուն։ Քեզանից էլ քո՛ որդուն կխլեն։

— Էհ, մինչև այն օ՜րը,— ծոր տվեց Ասյան,— ես կհավաքեմ ու կուտեմ իմ բերքը։ Սերմի մասին հետո էլ ժամանակ կունենանք մտածելու։

— Ձգույշ եղիր, հանկարծ ամառը շատ շուտ չգա։

— Ամառն ինձ չի վախեցնում։ Ես կրակ սիրո՛ւմ եմ։

— Ինձ դա ծանոթ է,— ասաց Աննետան։

— Դժվար չէ գլխի ընկնել։— քմծիծաղեց Ասյան, քթանցք-

ներով օդը ներս քաշելով։— Ձեզանից դեռ այրվածի հոտ է գալիս։

— Կրակը վաղուց է հանգել։

— Դուք այդքան համոզվա՞ծ եք դրանում։ Եթե ես վերցնեմ ու մոխիրը ցրիվ տա՞մ։

— Ոչ, ոչ, պետք չէ... Ես այնքան էլ չեմ ուզում նորից սկսել։ Ամեն մարդ իր հերթն ունի։ Հիմա կրակը ձեզ մոտ է։ Պահպանեք այն։

— Էհ, ինչ կրակին է վերաբերում, կրակ ունե՞նք։

Թող այդպես լինի, մտածում էր Աննետան։ Անզգուշություն կլիներ ցույց տալ սեփական կասկածները։ Երիտասարդությունը միշտ ավելի լավ գիտի։ Թող պահպանի նրանց կրակի աստվածը։ Նրա դեմ ինքն անզոր է։ Այդ աստված ոչ մի բան չի կարող անսալ։ Նա ոչ ականջ ունի, ոչ աչքեր։ Միայն՝ լեզու, բայց ոչ թե խոսելու համար, այլ խայթելու։ Ինչի որ կպչի, բոլորն անմնացորդ այրվում է։ Ագահ աստված է։ Անվերջ նոր սնունդ է պահանջում։ Բայց Մարկն ու Ասյան ավելի հարուստ էին, քան ենթադրում էր Աննետան։ Դեռ երկար ամիսներ այն բանից հետո, ինչ սկսել էին բոցավառվել տոնական լույսերը, երկուսի սրտերը շարունակում էին վառվել։ Նրանք վերադարձան իրենց սովորական զբաղմունքներին, բայց կախած կոպերի տակ թաքնված էր ցանկության հուրը, և հենց որ նրանք աչքերը բարձրացնում էին, բոցը բռնկվում էր, ինչպես Ֆարնեզինի դղյակի որմնանկարում պատկերված սիրահարների աչքերում։ Թվում էր, այդ բոցը երբեք չի հանգչի...

Իսկ հետո, մի գեղեցիկ օր, այն կրակը, որ դեռ երեկ բոցկըլտում էր, հանգավ։ Եվ իջավ գիշերը...

Աղետը տապալեց երկուսին էլ, բայց ամեն մեկին իր ժամին։ Առաջինն Ասյան էր։

Մարկը նոր էր հրաժեշտ տվել նրան։ Ասյան պատրաստվում էր նրա հետևից դուրս գալ։ Նրանք հենց նոր էին տեղի տվել հերթական պոռթկումին։ Վարագույրը ննջարանում մնաց իջեցված։ Լուսամուտից անդին արև էր, փողոցի աղմուկ։ Ասյային ամեն ինչ զզվելի էր թվում։ Նա նստել էր մահճակալին մի տե-

սակ թուլացած, առանց որևէ մտքի, մի քիչ տխուր էր։ Ննջարանում տոթ էր։ Ասյան վարագույրը բարձրացրեց։ Արևը լցվեց սենյակ։ Նա իրեն հայելու մեջ նայեց և, ձեռքերը ետ գցելով, սկսեց մազերը կարգի բերել։ Պայծառ լույսն աչքերը ծակում էր, և նա աչքերը կկոցեց։ Նվ կարճ մի ակնթարթում, մինչ կոպերն իջան ու բարձրացան,— ամեն ինչ խափանվեց... Երբ Ասյան աչքերը բացեց, դա արդեն ուրիշ աշխարհ էր, ուրիշ մոլորակ։ Ակնթարթը հենց այնպես չփոխվեց մի ուրիշ ակնթարթով,— դրանց միջև ճեղք կար, հրեշավոր մի վիհ։ Ասես արահետը շռշաիփող կույրի աչքերով կինը չդիտեր ո՛ր կողմը գնալ— որտեղ է նրա տունը, նրա սերը։ Գլուխն սկսեց պտտվել։ Նստարանին ընկնելով, Ասյան կոթնեց պատին։ Նա ուժ չուներ նույնիսկ անջատելու ծոծրակին իրար բերած մատները։ Ձեռքերը ճնշում էին նրան, ինչպես քարն կամարը։ Նա քարացած նայում էր ուղիղ իր առջև։ Ոչինչ չէր տեսնում, ոչնչի մասին չէր մտածում։ Մտածում էր ոչնչի մասին։ Սրտում ոչինչ չկար։ Ոչինչ չկար մտքում։ Դատարկություն, կատարյալ դատարկություն։ Անցյալը անհետ չքացել էր, երբ Ասյան փորձ արեց վերադարձնել այն, ձեռքն ինչ-որ բանի գցել։ Նա ընկնում էր բարձր աշտարակից, նրա արյունը սառել էր երակներում, ամեն ինչ օտար էր. և՛ նա, այդ տղամարդը, և՛ նրա մարմինը, որ հպվում էր իրեն, և՛ սեփական հիացմունքների հիշողությունը, և՛ այդ մերկ հնազանդ կինը, այդ Ասյան... «Սիրել... Սիրել...»— անմտաբար կրկնում էր նա այդ երկու մեռյալ բառը։ Ո՛չ թրթիռ, ո՛չ զգացմունքների արձագանք— ոչի՛նչ։ Ասյան ասաց իրեն.

«Ես խելագարվել եմ։ Չէ՞ որ ես գիտեմ, որ սիրե՛լ եմ...»

Բայց խռովահույզ գիտակցությունը պատասխանեց.

«Ի՞նչ... ի՞նչ ասել է սիրել։ Չեմ հասկանում...»

Մոլորվածի նման նա երկար ժամեր անցկացրեց իր անկյունում կուչ եկած, լուռ ու անշարժ։ Մթնում էր։ Եկեղեցու աշտարակի զանգերը նրան հիշեցրին, որ շուտով «նա» կվերադառնա։ Ասյան ցնցվեց, ցատկեց տեղից։ Նա լվացվեց, մազերը սանրեց, աշխատեց դեմքին սովորական արտահայտություն տալ։ Բայց հայելու միջից մոռյլ ու դաժան իրեն նայող բիբերի խորքում Ասյան նորից տեսավ նույն սարսափելի դատարկությունը։ Նա շտապեց դատարկության վրա վարագույր գցել։ Նա չէր կարող այդ դատարկությունը ցույց տալ այդպես բացահայտ... Մարկի՞ն էր խզճում։ Ծե՞ր իրենից էր վախենում։

Մարկը ոչինչ չնկատեց (սիրահարները լցված են իրենց «ես»-ով), և էգոիզմի այդ կուրությունը էլ ավելի խորացրեց անդունդը։ Վիրավորանքը պոկեց այն վարագույրը, որի տակ Ասյան ջանում էր Մարկից թաքնվել, Մարկը նայեց նրա աչքերին ու զարմանքով այդ աչքերի մեջ անապատ տեսավ։ Բայց վարագույրը նորից իջավ։ Մարկն այլևս փորձ չէր անում ետ քաշել այն։ Բոլոր հարցերին Ասյան պատասխանում էր.

— Ոչինչ։

Մարկը չէր համառում։ Նա մի տեսակ անհանգիստ էր։

Գիշերը նա իր գրկում մեռած մարմին էր պահում, մեռած, թեև այդ մարմինը անտարբերորեն թույլ էր տալիս անելու այն ամենը, ինչ Մարկն ուզում էր,— հոգու կողմից լքված մարմին։ Այն կինը, որին Մարկը ճանաչում էր, այն կինը, որը Մարկին էր պատկանում, այլևս չկար։ Դեռ լավ էր, որ Մարկը մյուս էակին չտեսավ, որը սկսվել էր խավարում և պաղ հայացքով հետևում էր իրեն։ Բայց դրա փոխարեն նա զգաց այդ էակից փչող սառնությունը։ Մարկը թևերը բացեց, և այդ մարմինը նույն հնազանդությամբ դուրս սահեց նրա գրկից։ Ասյան ամենևին չշարժվեց, բայց Մարկին թվաց, թե նա քարի նման ընկավ, և իր ձեռքերը գրկում են դատարկությունը։ Իրար կողքի պառկած, նրանք աշխատում էին շունչը պահել, քնած ձևանալ։ Նվաղուն սրտով, կծկված, նրանք զգուշավորությամբ ականջ էին դնում մեկը մյուսին...

«Այդ ո՞վ է իմ կողքին»։

Իրեն համոզելով, որ Մարկը քնեց, Ասյան փախուստի վճիռ կայացրեց. նա զգուշությամբ մեջքով նրա կողմը շրջվեց։ Հիմա նրանց միջև պատնեշ կար։ Մարկը հետևում էր Ասյայի յուրաքանչյուր շարժումին, ինչպես հետևում են խորամանկ գազանին, որ փորձում է դուրս պրծնել, և թախիծով հարցնում էր իրեն.

«Ես ի՞նչ արի նրան»։

Ասյան իր ծոծրակին զգում էր Մարկի շնչառությունը, բայց դրա փոխարեն նրա առջև անկողնու ոչ ոքի կողմից չզբաղեցրած եղրն էր, ազատ գիշերը։ Ասյան փախչում էր անտառով... Բարբեբախտաբար, շինծու քունը փոխվեց իսկականի. նա հաղթեց երկու երեխային էլ և դադարեցրեց հետապնդումը։ Իսկ առավոտյան նրանք հոգնատանջ հանդիպեցին իրար, բայց արդեն առանց երեկվա անհարմարության զգացումի, նրանք նույնիսկ ժպիտներ փոխանակեցին, թեև չհամարձակվելով իրար աչքերի

մեջ նայել։ Մարկն սկսեց Ասյայից վախենալ, Ասյան վախենում էր իրենից (դա ավելի վատ էր... Նա արդեն ոչնչի համար երաշխավորել չէր կարող)։

Իսկ հետո վրա հասավ Մարկի հերթը։ Նրա առաջ բացվեց անդունդը։ Առավոտյան, այն ժամին, որը գալիս է սիրո ժամերից հետո, երբ մտքի վրա դեռևս ամբողջովին իշխում է քիչ առաջվա մերձեցման ցանկությունն ու բերկրությունը, սիրն սկսեց սպառվել։ սիրելի կինը հիմա մեոյալ բեռ էր։ Մարկի անտարբերությունը տանջալից էր և սահմանակցում էր զզվանքի, համարյա ատելության հետ։ Հատկապես ծանր էր այդ ներքին հեզաշրջումը նրանով, որ դա տեղի էր ունենում կամաց-կամաց, աննկատելիորեն և, կատարվելուց հետո էր միայն, որ դիտակցությանն էր հասնում։ Մարկը սարսափով էր դիտում հանկարծական փոփոխությունը։ Լինելով ծայրաստիճան ազնիվ, նա մեղադրում էր իրեն, նշավակում էր իրեն, բայց ոչինչ անել չէր կարողանում։ Դժբախտություն էր պատահել, և նա անզոր էր այդ դժբախտության առաջ։ Նա փորձում էր Ասյայից թաքցնել ազնտի հետևանքները։ Ջուր ճիգե՛ր։ Սեփական փորձը Ասյային օգնում էր զգալու վրա հասած կործանումը։

Ե՛վ Մարկը, և՛ Ասյան վերապրեցին այդ վիճակը։ Հերթով, ոչ մի անգամ իրար հետ։ Երբեմն այդ վիճակը շարունակվում էր մի քանի ժամ, երբեմն ամբողջ օրեր էին տևում։ Այդ վիճակը կորցրեց իր սկզբնական սրությունը, բայց ամեն անգամ դառնում էր ավելի հարատև ու ավելի ճնշող։ Նման ժամերին ապրելու ցանկություն չէր մնում։ Նրանք այդպես էլ համարձակություն չունեցան միմյանց խոստովանել այդ փորձանքը։ Վատ հիվանդության նման նրանք թաքցնում էին այդ նոպաները։ Օգտվելով նրանց համր մնալուց, ցավը խորացավ ու դարձավ խրոնիկ։ Միայն Աննետան կարող էր բացել նրանց աչքերը, բայց Մարկն ու Ասյան դիտավորյալ նրան հեռու էին պահում, իսկ Աննետան իր հերթին խուսափում էր երիտասարդների կյանքին խառնվելուց։ Աննետան լավ դիտեր իր հարսի կասկածամտությունը, նրա վստահությունը կարող էր նվաճել միայն նա, ով դրան չէր ձգտում։ Մանավանդ, որ երիտասարդները Աննետային մոլորության մեջ էին դցել։ Նախապես զգալով ու սպասելով, որ վեր խոյանալուց հետո անխուսափելիորեն կհետևի կորուկ անկումը, Աննետան վրիպել էր սառելու հանգամանքը, և զարմանալի չէ. Մարկը և Ասյան, փոխադարձ լուռ համաձայ-

նությամբ, նրանից ամեն ինչ թաքցրեցին։ Հենց այն ժամանակ, երբ այդ երկուսի սերը մինչև հիմքերը սասանված էին, նրանց ընտանեկան բարեհաջողությունը շրջապատին ներկայանում էր ավելի ամուր։ Նրանք ոչ մի բանով չէին դրսևորում իրենց դրժբախտությունը, դրանից ամաչելով ինչպես մի այլանդակությունից, քանի որ պատճառ չունեցող ցավից ավելի անբնական ինչ կարող էր լինել, մտածում էին նրանք։

Մինչդեռ ո՛չ Մարկը, ո՛չ Ասյան սիրո մեջ սկսնակներ չէին, երկուսն էլ արդեն հասցրել էին ճաշակել հագեցածությունը։ Բայց նախկին փորձը ոչ մի կերպ չէր համեմատվի այն բանի հետ, ինչ նրանք հիմա էին զգում։ Մինչև հիմա խոսքը ոչ թե իսկական սիրո մասին էր, այլ, ավելի շուտ՝ արթնացող ցանկություններից։— Նրանք կարծես առաջին անգամ են դուրս գալիս որսի, ճանաչում խաղի մոլուցքը, բայց առայժմ խոր ոչինչ չկա, թեև ոչինչ անառողջ ևս չկա,— դա պարզապես հենց բնության անհոգությունն է, որը ուրախությամբ փորձում է իր ուժերը և նույնպիսի ուրախությամբ էլ մոլորության մեջ է ընկնում,— արժե՞ արդյոք տխրել, երբ առջևում այդքան շատ ժամանակ կա։ Իսկ եթե պատահականորեն բնությունն ընկնում է իր սեփական թակարդը, ապա, կատաղած, ընդհատում է խաղը, ինչպես մի անգամ զայրույթով վարվեց Մարկը, երբ Սիլվիան գայթակղեց նրան։ Բայց այստեղ ո՛չ մի թակարդ, ո՛չ մի խաղ չկար։ Բանը վերաբերում էր ամբողջ կյանքին, կյանքում ամեն ինչին, առաջարկված և ընդունված զոհին։ Նրանք առաջին իսկ ժամից ամեն ինչ ասացին միմյանց, ամեն ինչ բացեցին միմյանց առաջ։ Ամեն ինչ վերցրին և ամեն ինչ տվին։ Իրենց կյանքի ամբողջ ազբյուրը սպառեցին այդ սիրո մեջ։ Եվ հենց այն պատճառով, որ սպառեցին ամբողջությամբ՝ առանց մնացորդի, մինչև վերջին կաթիլը, նրանց համար ոչինչ չմնաց (բայց նրանք այդ չէին հասկանում)։ Այն օրերին, երբ սերը գնալով նվազում էր, ցամաքում էր կյանքի հոսանքը։ Եվ նրանք խեղդվում էին այդ ծանծաղուտում։

Միայն շատ ավելի ուշ նրանք ըմբռնեցին այն իմաստությունը, որը գիտե հասկանալ և գթալ, որը գիտե, որ անհնար է յուրա գնալ առանց փոխադարձ ներողամտության և որ հարկավոր է նեզ օրվա համար ունենալ մի ապաստարան, որտեղ կարելի է առանձնանալ՝ մի կողմ քաշված սպասելու համար, մինչև որ տեղատվությունը վերջանա և նորից սկսի մակընթացությունը։ Քանի որ խոսքը կյանքի հենց այն ռիթմի մասին է ու նրա տատա-

նումների, որոնց թափը այնքան ավելի մեծ է, որքան ավելի վատնող է ապրողը։ Ամեն մի անկումին հետևում է վերելքը, եթե միայն աղեղի լարը հաճախակի և խիստ պրկումից չի թուլացել, և եթե սիրտը չի կորցրել իր առաձգականությունը։

Աղեղը սարքին էր, բայց նետաձիգը կորցրել էր վստահությունը, նույնիսկ, երբ նորից սկսում էր բխել կյանքի աղբյուրը, նրանք այնուամենայնիվ, չէին կարողանում մոռանալ երաշտի ժամանակն ու իրենց, ինչպիսին որ լինում էին այդ շրջանում։

Ի տարբերություն սիրահարվածներից շատերի, նրանց աչքերին շորակապ չկար, և նրանք չէին վախենում միմյանց նայելուց։ Միշտ, դեռ սկզբից էլ, նրանք իրար տեսնում էին լիակատար անսքող մերկությամբ, բոլոր թուլություններով, բոլոր պակասություններով ու արատներով (իսկ ով չունի պակասություն ու արատ, դրանցից վերծ չեն նույնիսկ ամենալավերն ու ամենագեղեցիկները)։ Երկուսն էլ սրատես աչքեր ունեին, և յուրաքանչյուրն իր արժանիքն էր համարում ամեն ինչը անձամբ տեսնելու և մյուսին տեսնել տալու վճռականությունը։ Բայց տեսնել կարելի է տարբեր ձևով։ Երբ նրանք սիրում էին, նրանք սիրում էին նույնիսկ թերությունները։ Նրանք սիրում էին այդ թերությունները (հոգու խորքում), գուցե, ավելի շատ, քան արժանիքները. դրանց շնորհիվ սիրած անձը թվում էր ավելի մոտ, ավելի անպաշտպան, ավելի սրտառուչ։ Բայց երբ սերը նվազման շրջանում է, ինչպե՞ս են փոխվում սովերներն ու ուրվագծերը։ Ծանոթ գծերը աղավաղվում են, ծիծաղելին ու այլանդակը դուրս է ցցվում։ Ի՜նչ ողբալելիություն։ Ինչպե՞ս կարելի էր նման բանը ոչ թե սիրել, այլ թեկուզ հանդուրժել... Հանդուրժել և իր կողքին տեսնել ամբողջ այդ երկա՜ր կյանքում։ Բայց ահա խավարումը վերջանում էր, ցերեկվա լույսում նորից հայտնվում էր հարազատ և սիրելի բնապատկերը։ Սակայն զուր էին նրանք իրենց հանգստացնում— տեսածը մոռանալ արդեն անհնար էր։ Ասյայի քննող հայացքը անդադար հետևում էր Մարկի բոլոր շարժումներին, որն այդ զգում էր և ինքն էլ իր հերթին հետևում։ Հետո նրանք միմյանց գիրկ էին նետվում, սիրում էին է՛լ ավելի կրակոտ, մի տեսակ կատաղած,— կատաղած իրենց դեմ, իրար կորցնելու սարսափով։ Ների՛ր, ների՛ր։

Սակայն, վեր խոյանալով, ալիքը գահավիժում էր, նորից էր բարձրանում, թավալվում ետ և կրկին խուժում առաջ... Նվ նը-

բանք գիտեին, որ սանձել այդ ալիքը չի հաջողվի։ Վստահությունն անհետացել էր...

Ասենք, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել... Հնարավոր չէ ամբողջ կյանքն անցկացնել քարե պատի հետևում։ Նրանք այդ գիտեին կամ պետք է իմանային. կյանքը կատույց է, որտեղ աշխատանքը չի սպասում և անբանները տեղ չունեն։ Սիրո իրավունք— այո։ Բայց նույնպիսի, ինչպես և հացի իրավունքը։ Այդ իրավունքը աշխատանքով է հատուցվում, ով չի աշխատում, նա չի ուտում. նրան ոչ սեր է հասնում, ոչ հաց։ Սա երկաթյա օրենք է։ Եվ եթե դեռ ձրիակերների ոհմակին հաջողվում է այդ օրենքը շրջանցել, ապա դա նրանց համար անպատիժ չի անցնում։ Գողացած հացը մնում է նրանց կոկորդում։ Թեև նրանք հաճույքների մեջ լողում են, բայց այդ հաճույքները նրանց համար մահու չափ ղվվելի են։ Ոչ, չի կարելի ապրել միայն հացով ու սիրով... Աշխատիր և տիրիր։

Ոչ Ասյան, ոչ Մարկը, նույնիսկ եթե ուզենային, չէին կարող անհոգ ու տաքուկ կյանք վարել իրենց բնում, հուզվելով ու հառաչելով սիրո չերմաչափի անկայունության վրա։ Երկուսն էլ պետք է կատարեին իրենց տաղտկալի ու ծանր աշխատանքը։ Մարկը ծառայում էր ռադիոընդունիչներ վաճառող ու տեղադրող ընկերությունում։

Ասյան ռուսերենից թարգմանություններ էր անում մի հրատարակչության համար։ Թարգմանում և մեքենագրում էր ինչոր գրասենյակի գործաթղթեր։ Նրանք տեսնվում էին միայն սեղան նստելիս և երեկոյան, երբեմն բավական ուշ։ Բայց աշխատանքը չի կարող մարել «այն մյուս միտքը»։ Խոր թաքցրած լինելով, ազատությունից և օդից զրկված այդ միտքը սկսում է խմորվել։ «Դա, այդ մյուս միտքը» անսանձելի է, ինչպես այն քարավանի շարժումը, որը տաղտկալի և շիկացած ավազների միջով համառորեն ձգվում է դեպի աստղալից երկնքի տակ բխող աղբյուրը...

«Օ, գիշե՜ր։ Օ, աղբյո՜ւր... ինչի՞ց է քո ջուրն այդպես տաքացել, դառել անհամ ու պղտոր։ Ես խմեցի քո ջրից, բայց իմ ծարավն ավելի ուժեղացավ...»։

Գիշերը դիշերվա հետևից կրկնվում էր կրքի դողը։ Թվում էր, թե նրանք անբաժանելիորեն պատկանում են միմյանց, սակայն բավական էր հեռանան իրար գրկից, և նրանք իսկույն անբավա-

կանությունն էին զգում, նույնիսկ հիասթափություն, թեև չէին համարձակվում այդ խոստովանել։ Բայց եթե Մարկը, հասկանալով, որ իր սիրած աղջիկը սահում-հեռանում է իրենից, է՛լ ավելի մեծ համառությամբ էր նետվում նրա հետևից, չանալով ամեն ինչ լցնել և չթողնել աղջկա իշխանության տակ նրա էության և ոչ մի նվիրական անկյուն, ոչ մի միտք, Ասյան ընդվզում էր և, սթափվելով, հպարտ դառնությամբ սկսում էր գիտակցել իր սիրո սահմանները։

«Ես լայնորեն բացում եմ քո առաջ դռները։ Մտի՛ր։ Բայց իմացի՛ր. դու ավելի հեռուն չես գնա, քան ես եմ ուզում։ Ոչ մի քայլ ավելի...»

Նորից Ասյան բացում էր իր սրտի սահմաններից անդին գտնվող անընդգրկելի տարածությունները, ուր ոչ ոք իրավունք չուներ ներխուժելու, տարածություններ, որոնք ծանոթ չէին նույնիսկ իրեն, կորած էին ինչ-որ տեղ հեռվում,— նորից գտնում էր իր «հոգին»...

«Իմ մարմինը, իմ սիրտը պատկանում են քեզ... բայց ո՛չ իմ «հոգին»։ Իմ «հոգին» ինձ է պատկանում... Ի՞նձ։ Արդյո՞ք այդպես է։ Թե՞ ես եմ պատկանում նրան»։

Իսկ Մարկին հարկավոր էր հենց հոգին։

Հենց այն «հոգին», որին Ասյան հրաժարվում էր հավատալ։ Ինչպես 1917 թվականից հետո եկող շրջանի իսկական ռուս կինը, որը սնվել էր պաշտոնապես ընդունված դեղատոմսով պատրաստած մատերիալիզմի լափով, Ասյան հյուսերի հետ կտրել էր նաև հոգին։ Նա այլևս չէր օգտագործում այդ անիմաստ բառը։ Նա ասում էր. «ես, իմ պահանջները, իմ իրավունքները»։ Եվ ո՞վ էր արդյոք նրա հիշողության մեջ հարություն տվել այդ հնացած բառի հնչյունին, այդ մոռացված երգին։

Ոչ այլ ոք, քան Աննետան։ Նա վերջի վերջո գլխի ընկավ, որ երեխաների միջև գժտություն է սկսվել, որը գնալով խորանում է, թեև նրանք աշխատում են նրանից այդ թաքցնել։ Կրքոտ խառնվածքի տեր լինելով, նրանք չէին կարողանում իրենց կեղծել։ Այն, ինչ նրանք փորձում էին թաքցնել, հենց իրենք էլ մատնում էին։ Երբ Ասյան ու Մարկը միասին էին լինում, նրանց կիտած հոնքերն ու տագնապալի տեսքը հիշեցնում էին երկու համառ գազանների, որոնք և՛ կռվում են իրար հետ, և՛ փաղաքշաբար սեղմվում իրար։

— Դու պատկանում ես ի՛նձ։

— Ո՛չ, ես ինձ եմ պատկանում...

Բայց եթե մարդ կամակորին խոսքի վրա բռնի, նա աղաղակով կնետվի դեպի մյուսը.

— Վերցրո՛ւ ինձ։

Որքա՜ն ծանոթ էր Աննետային այդ պայքարը։ Նա հիշեց, թե ինչպես էր Ռոժեն հեկեկում անտառում, և ինչպես էր հեռվից նրանց ականջին հասնում որսի հետևից ընկած շան հաչոցը։ Ե՛վ հասկանալով, և՛ խղճալով իր որդուն, Աննետան թաքուն շշնջում էր նրան.

«Պի՛նդ կաց»։

Մի անգամ, երբ Աննետայի հետ մենակ մնալով, Ասյան ամպի նման մթնդած փքվել նստել էր (նա համոզված էր, որ Աննետան իրեն չի հասկանա, իսկ եթե հասկանա էլ, ապա կդատապարտի), Աննետան ժպտալով, կարծես ոչինչ չի նկատում բացի փոքրիկ չեպչիկից, որ կարում էր բոլորից գաղտնի, հանկարծ մի երգ դնդնաց.

El corazón te daré
También te daré la vida,
Y el alma no te la doy,
Porgue esa prenda no es mia.

Ասյան ականջները սրեց։ Ինչպես և սլավոնների մեծամասնությանը, լեզուները նրան հեշտ էին տրվում։ Եվ որոշ բառերի իմաստը հասավ նրան։

— Դա ի՞նչ է։

— Դու հասկացա՞ր։

— Դա ի՞նչ է։

— Մեր մարտական հիմնը։

Ասյան ձեռքը դրեց Աննետայի ձեռքին։

— Մեր հի՞մնը։ Ի՛մը։

— Հապա, թարգմանիր։

Ասյան, կմկմալով, Աննետայի օգնությամբ թարգմանեց.

— «Ահա իմ սիրտը նվիրում եմ քեզ — քեզ եմ նվիրում իմ կյանքը ահա։ Բայց հոգիս չեմ նվիրում քեզ, քանի որ դանձն այդ չի պատկանում ինձ»։

Եվ, զարմացած, լռեց։ Քիչ հետո նա հարցրեց.

— Այդ ո՞վ է ասել։

— «Una niña bonita». *ինչպես դու և ես... Կուզե՞ս էլի...— ես Աննետան երգեց.*

Una niña bonita
Se asomó a su balcon...

(«Մի գեղեցիկ աղջիկ կանգնել էր պատշգամբում։ Նա պահանջեց ինձնից հոգիս— ես տվի նրան իմ սիրտը։ Նա նորից պահանջեց իմ հոգին— և ես ասացի նրան. «Մնաս բարո՛վ...»)։

Ասյան լուռ էր, նա հազիվ էր շունչը տեղը բերում, և նրա եղունգները ավելի ու ավելի խորն էին մխրճվում Աննետայի ձեռքի մեջ։ Աննետան կռացավ և համբուրեց Ասյայի մազաթաժուկը։

— Նրան մի ասա «մնաս բարով», —շշնջաց Աննետան։

Ասյան տեղից ցատկեց։

— Դուք որտեղի՞ց գիտեք։ Ձեզ ի՞նչ է հայտնի։

— Ես եմ նրան կերակրել։ Ես գիտեմ, թե նա ինչքա՜ն է ագահ։

— Բա ուրիշ ինչպե՞ս,— բացականչեց Ասյան։— Եթե նրա ճաշակով չլինեի, ես նրա երեսին չէի էլ նայի։

— Է, իսկ եթե նրան պետք է ոչ միայն քո կա՞թը։

— «Ես նվիրում եմ իմ կյանքը...»— ասաց Ասյան, կրկնելով իսպանական երգի խոսքերը։

— «Սակայն ես հոգիս չեմ նվիրում...»— շարունակեց երգի բառերը Աննետան։

— Մի՞թե ես իրավացի չեմ։

— Ոչ, հազար անգամ իրավացի ես։

Ասյան նետվեց դեպի Աննետան, բռնեց նրա ձեռքերը։

— Ուրեմն ես իրավացի՞ եմ։ Եվ այդ դո՞ւք եք ինձ ասում։

— Այո։

Ասյան հախուռն կերպով գրկեց նրան։

— Ձգո՜ւշ։ Կծակի,— ասաց Աննետան, մի կողմ քաշելով ասեղը։ Հետո մեղմ ավելացրեց.— բայց հենց այն պատճառով, որ իրավացի ես, դու պետք է ներողամիտ լինես իմ որդու նկատմամբ։ Նա չգիտի։ Տղամարդիկ այդ չգիտեն, խեղճերը։ Իսկ մենք դիտենք, և մենք պետք է հասկանանք և սիրենք նրանց այնպես, ինչպես որ նրանք կան։

— Ես հենց նրան այդպես էլ սիրում եմ, ինչպես որ նա կա։ Եթե նա ուրիշ լիներ, ես նրան չէի սիրի։

— Այդ դեպքում ինչո՞ւ ես նրան տանջում և ինքդ էլ հետը տանջվում։

— Որովհետև նա ինձ տանջում է։

— Նա երեխա է։ Քո երեխան։ Տղամարդը, որը մեզ սիրում է, միշտ էլ մեր երեխան է։ Նրան պետք է օրոր ասել, կուրծք տալ։ Եվ եթե պատահում է, կծում էլ է մեզ այդ շնիկը, ապա միայն այն պատճառով, որ մեզ վրա է առամները սրում։ Ուրեմն, լավ շուն է։

Ասյան մատները սահեցրեց Աննետայի ձեռքերի վրայով։

— Ի՞նչ ես փնտրում։

— Ժանիքների հետքեր։

Աննետան ձեռքերը հետ քաշեց։

— Դու շատ ես հետաքրքրվող։

— Պատմե՛ք։

— Ի՞նչ պատմեմ։

— Որևէ բան ձեր և ձեր շների մասին։

Աննետան կրկնեց քառյակի վերջը։

Y el alma no te la doy,
Porgue esa prenda no es mia.

— Կնշանակի, հոգին ոչ ոքի հետ կիսել չի՞ կարելի։ Հոգին մարդ պետք է պահի միայն ի՞ր համար։

— Ո՛չ իր համար։

— Բա ո՞ւմ համար։

— Հենց նրա համար։

— Ջեմ հասկանում,— ասաց Ասյան։

— Ես էլ չեմ հասկանում,— պատասխանեց Աննետան։— Բայց դա այդպես է։

Ասյան, կուչ գալով, այտը սեղմեց Աննետայի ծնկին և սուզվեց մտքերի մեջ։ Վերջապես նա ասաց.

— Այո, թերևս... Բայց դա այնքան էլ ուրախ բան չէ... Իմանալ, որ այդ հոգին տեղավորվել է իմ մեջ, կարգադրություններ է անում ինձ, որ ես ունեմ մտքեր, որոնք իշխում են ինձ, իսկ իրենք դուրս են սողում իմ իշխանությունից... ուրեմն ինչ, մի՞թե ես իջևանատուն եմ։

— Վախենալու հարկ չկա։ Դու բացառություն չես։ Ի՞նչ կարող ես անել։ Բոլորն էլ անախորժություններ ունենում են։ Աշ-

խարհը նույնպես մաքուր ոսկուց չէ։ Հարցն այն է, որ այդ աշխարհը, որը դու ինքդ ես, գոյություն ունենա, իսկ դրա համար պետք է կարողանաս զեկավարել քեզ։ Դու առայժմ չես կարողանում։ Ոչինչ, կսովորես։

— Ի՞նչը կսովորեմ։ Այն, որ միտքը արարք չդառնա՞։ Բայց մեկից մինչև մյուսը ընդամենը մի քայլ է։ Եվ ինձ համար, եթե անկեղծ լինենք, միտքը արարքին հավասարազոր է։ Այն կինը, որն ամուսնու անկողնում մտածում է սիրեկանի մասին, հիանալի հասկանում է, որ դավաճանում է նրան, թեև նա իր ամուսնու հետ է և ոչ թե սիրեկանի։

Աննետան իրեն հատուկ հումորով ժամանակին կանգնեցրեց պերճախոսության այդ հոսանքը։

— Դե ինչ արած, աղջիկս, արի այդպես էլ գրենք. նա կոտոշավոր է։ Եթե լոկ միտքը դրա համար բավական է։ Միայն թե այդ միտքը թող արարք չդառնա։ Մեկից մինչև մյուսը, ինչպես դու ես ասում, ընդամենը մի քայլ է։ Բայց ամուսնու համար, կողմնակի մարդկանց համար, եթե ոչ ինձ ու քեզ համար,— այդ քայլը շատ էական է... Այնպես որ, ես քեզ խնդրում եմ, խնայիր իմ Մարկին և մի անցիր սահմանը։

Ասյան, որ գիտեր հեգնանքը գնահատել, սրտանց քրքջաց։

— Ի՞նչ եք ասում, այդ մասին խոսք անգամ լինել չի կարող։ Ես սիրում եմ իմ Մարկին սահմանի և այս, և այն կողմում։

— Այս կողմում, գուցեև, միշտ չէ, որ կսիրես։

— Ինչո՞ւ։

— Դու ինքդ ասացիր. մեզ չենթարկվող միտքը հաճախ աստված գիտե, թե ուր է հասնում։ Նրա հետևից մի՛ ընկնիր։ Նա կվերադառնա... Իսկ մինչ այդ, իմ մեծ աղջիկ, կարիք չկա, որ քո բարեկամն իմանա, թե որտեղ է ճախրում քո միտքը, թույլատրելի՞ թե անթույլատրելի սահմաններում։

— Խաբե՞լ նրան։ Երբե՛ք։

— Նրան ավելորդ տառապանքներից ազատելը դեռ չի նշանակում խաբել։ Պայքարիր մենակ։ Հետո նրան կասես, թե ինչով վերջացավ մենամարտը։

— Ուրեմն, մենա՞կ մնամ այդ հրեշների հետ։

— Պետք է կարողանաս ինքդ նրանց հաղթել։ Առանց կողմնակի օգնության։ Իսկ եթե այդ անպետքների թիվը չափազանց շատ է, մի մոռացիր, որ ես միշտ այստեղ եմ. ինձ էլ հրավիրիր քո սեղանին։

— Մարդ ձեզ հետ խոսելիս երբեք չդիտի, դուք կատակ եք անում թե՞ լուրջ եք ասում։

— Իհարկե, լուրջ։ Բայց առանց ողբերգություններիւ Բնությունը բնություն է։ Նրա դեմ ընդվզելը անմտություն է։ Հարկավոր է ճանաչել նրան և աշխատել ուղղություն տալ այդ բնությանը։ Իսկ եթե չես կարողանում և նավակդ քամին քշում է, այն ժամանակ հնազանդվիր և աղոթիր աստծուն կամ ծիծաղիր— դա արդեն նայած ճաշակի։

— Ծիծաղե՞լ։

— Իսկ ինչո՞ւ չէ։ Դա այնուամենայնիվ հաղթանակ է։

— Վիկինգների՞ դուստր։

— Ինչ կա որ, գուցե։ Մեր երիտասարդ օրերին Սիլվիան ինձ նորմանդական հորթ էր կոչում։ Հիշում եմ հյուսիսային սպիտակամորթ մարտիկներով մակույկը, իջնում եմ ափ, հիանալի արոտավայրը և պոկում զմրուխտյա խոտը։

— Խոտ պոկել, աղոթել— այդ բոլորն ինձ համար չէ։ Ես դեմ չեմ ծիծաղելուն, բայց ամենից լավն այն է, երբ ծիծաղում ես ինքնամոռ վրա, մարտնչելով։ Չենթարկվել։

— Ուզում ես՝ ենթարկվիր, ուզում ես՝ մի ենթարկվիր։ Նա քեզ չի հարցնի։

— Ո՞վ։

— Նա, ով աշխարհ է գալու։

Ասյան ոչ առանց դժվարության վեր կացավ հատակից և միայն այդ ժամանակ նկատեց բազկաթոռից ընկած նուրբ կտորը։ Մեքենաբար շոշափեց կտորը, հարցական նայեց Աննետային.

— Այդ ի՞նչ եք կարում։ Չեպչի՞կ։

Նա սկսեց զննել։

— Իսկ ո՞ւմ համար է։

— Նրա, ով աշխարհ է գալու,— պատասխանեց Աննետան։

Ասյան շրջվեց նրա կողմը.

— Ձեզ ո՞վ է ասել. Մարկը երդվեց ոչինչ չասել։

Աննետան ազատ ձեռքով թիթիփացրեց հարսի այտին։

— Ոչ ոք էլ չի ասել։ Բայց ես կարծում եմ, որ դուք սպասում եք նրան։ Այդ պատճառով էլ պատրաստվում եմ։ Ըստ երևույթին, երկարատև լակոտ է լինելու։ Պապան ու մաման շատ են վազել։

Ասյան ծիծաղելով, քիթը քսում էր իրեն շոյող Աննետայի ձեռքին։

— Նա էլ է ամբողջ թափով վազում։ Ես փորիս մեջ զգում եմ նրա թաթերը։ Ամբողջ թափով սլանում է, և դեռ ինչեր է անելու։ Տե՜ր իմ աստված, իսկ ե՞ս։ Մի՞թե ստիպված եմ լինելու կապված նստել։ Ես չե՞մ ուզում։ Բնում նստած մնալն իմ բանը չէ։

— Ինչի՞ց ես վախենում,— ասաց Աննետան։— Եթե դու ինքդ ի վիճակի չես գլուխ հանել քո հոգուց, ո՞վ կարող է նրա վիզը շղթա դնել։

Բայց նույնիսկ Աննետան կարող էր իր երեխաներին հասցնել միայն ճանապարհի կեսը։ Դրանից այն կողմ նա ինքն էլ չդիտեր, թե ուր գնա։ Մոլորվել էր։ Լռելյայն Աննետան ապրում էր նույն հոգեկան ճգնաժամը, ինչ որ նրանք։ Ասենք, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ պարզվեց, որ երեքն էլ նույն խառնվածքի տեր են, և ամեն մեկը, թեև առաջ էր շարժվում իր հույսն իր վրա դնելով, իր շավիղով, բայց անխուսափելիորեն դուրս էր գալիս փակուղի տանող նույն ճանապարհը։

Կրոնը, որն ամբողջ կյանքում անգիտակցորեն դավանում էր Աննետան, մի վեհ ինդիվիդուալիզմ էր։ Այդ հավատը, որն Աննետայի մեջ ոչնչով պղտորված չէր, չթերմացնում էր նրա սերնդի նաև մյուս ներկայացուցիչներին, հատկապես առավել ազատներին և ուժեղներին,— բոլոր նրանց, ում նա ընտրում էր կամ համաձայնվում ընդունել որպես սիրեցյալ, բարեկամ և դաշնակից։ Իրենց սեփական ազատ «ես»-ի թեկուզև մի մասնիկից հրաժարվելը նրանց թվում էր իսկական անուղղելի հանցագործություն, մահացու մեղք։ Չզիջելու համար իրենց այդ ազատությունը նրանք պատրաստ էին հանդուրժել ամեն ինչ. ղրկանքներ, միայնություն... Աննետան հակված էր նույնիսկ ընկնելու հակառակ ծայրահեղության մեջ։ Նա մի անգամ չէ, որ հակվել էր (թեև նա այդ դժկամորեն էր խոստովանում) դեպի ասոցիալ բնույթի մարդիկ, դեպի վարձկանները։ Այստեղից էլ Աննետայի տարօրինակությունները, նրան ճանաչող օրինավոր մարդկանց համար առաջին հայացքից անհասկանալի նրա կապը Ֆիլիպ Վիլլարի հետ և բարեկամությունը՝ Տիմոնի հետ։ Այդ օրինավոր մարդիկ շատ կզարմանային, ինչպես կզարմանար, հավանական է, նաև ինքն Աննետան, եթե ազատություն տար իր ներքին

ձայնին, որը ոչ մի գործ չունի բարոյականության օրենքների հետ։ «Նրանք ինձ ավելի մոտիկ են, քան դուք,— ասում էր այդ ձայնը։— Ավելի լավ է այդ դեպքում գայլ լինել, քան ոչխար։ Ամեն ինչ, միայն թե ոչ ոչխար»։ Աղոտ, անհաղթահարելի զըզվա՞նք դեպի հոտը։

Ահա թե նա ինչ էր միս ու արյան հետ տվել Մարկին։ Դա, իհարկե, լավագույնը չէր, ինչ Մարկը ժառանգել էր մորից, և, համենայն դեպս, չէր թեթևացնում իր կյանքը։ Մարկն այդպես էլ չկարողացավ հարել հասարակական մտքի և ոչ մի ուղղությանը։

Ինչպես նրա մայրը չէր համաձայնվում իր կյանքը սահմանափակել ամուսնական անկողնով, այնպես էլ Մարկն էր հրաժարվում իր հոգևոր աշխարհը մտցնել որևէ դոկտրինայի պրոկրուստյան մահճի մեջ։ Նա չէր հասկանում, թե մարդկանց մեծամասնության մեջ որտեղից է առաջանում ինքնախոշտանգման այդ կիրքը, թե ինչու է անպայման նրանց պետք, երեք տակ ծալվելով, այլանդակելով ու խեղելով իրենց, նստել երկաթյա վանդակի մեջ։ Նրա ինչին են պետք բոլոր վեճերն ու կռիվները, որ առաջանում են ամեն տեսակի «իզմերի»— մատերիալիզմի, սպիրիտուալիզմի, սոցիալիզմի, կոմունիզմի և այլ պատճառներով։ Այդ բոլորը մեկայն վզի կապեր են շների, որոնց շղթայած են պահում։ Ասյան նույնպես փախչում էր շղթայից, փախչում էր բոլոր և ամեն տեսակի ամբարտակումներից, փախչում էր նշված ուղուց, նախապես բացած հունից, փախչում էր այն ամենից, ինչը կապանքում էր, և այնպիսի մոլեռանդությամբ էր պահպանում իր «ես»-ը, որ նա դուրս էր պրծնում իրենից, ինչպես ափերից ելած առվակն է դուրս թափվելով, կորչում դաշտերում ինչ-որ տեղ։ Իր վազքի մեջ նա կորցնում է ուղղությունն ու արագությունը։ Զգույշ եղիր, առվակ, հանկարծ չդառնաս մեկը այն անծայրածիր ճահիճներից, որոնք Իտալիայի այրող արևի տակ օդը թունավորում են իրենց վնասաբեր գոլորշիներով։ Զգուշացիր և դո՛ւ, Մարկ։ Իր հունը կորցրած այդ առվակին, այդ տենդ-արքայագետերը ի՞նչը բերից քո մահիճը։

Ե՛վ Ասյան, և՛ Մարկը որոնում էին մենություն երկուսով, փորձում էին իրականության մեջ մարմնավորել Յանուսի երկդեմ ինդիվիդուալիզմը։ Ասյան ենթարկվում էր կյանքի բնազդին։ Իմ «ե՛ս»-ը, իմ «ե՛ս»-ը։ Այն միշտ քաղցած է։ Այն պետք է հագեցնել... «քեզնով հագեցնել։ Ուզում եմ նույնանալ քեզ հետ։

Ոչ, չլինել դու։ Տիրանալ քեզ»։ Յանուսի երկու դեմքը, բայց ո՛չ Janus-ը Janus-ին, այլ շուրթ շուրթի։ Ով ում կլանի։ Եթե նա-րինջը պինդ է ու դառնահամ, կպահպանվի։ Եթե փափուկ է և հյութեզ՝ ծծում, քամում են, բայց այդ դեպքում ի՞նչ է մնում իմ ծարավը հագեցնելու համար։ Կեղևը՞։ Կեղևը շպրտում են... Եվ ահա ես նորից միայնակ եմ և կրկին տոչորվում եմ ծարավից...

Մարկը և Ասյան շուտով բերաններում զգացին դառնություն, առամնառություն, ձանձրույթ, որը ամբողջական ու ազնիվ բնավորությունների մեջ առաջացնում է (ավելի բացարձակ՝ Ասյայի մեջ, թաքնված ձևով՝ Մարկի) նրանց գոյության հա-սարակական միանգամայն անօգտակարության գիտակցու-թյունը։

Աննետան նկատում էր, որ իրեն այցելության եկող Մարկը ամեն անգամ ավելի ու ավելի մոայլված է լինում։ Ասենք, նա մորն այնքան էլ հաճախ այցելության չէր գնում, իսկ երբ գնում էր, ավելի շատ լուռ էր մնում։ Նա իրեն մի տեսակ անհարմար էր զգում, կուչ էր գալիս Աննետայի հարցասեր հայացքի տակ, թեև իրեն համոզում էր, որ մայրը չի կարող կռահել իր մտքերը։ Տղամարդկանց հատուկ գոռոզամտությամբ Մարկը կանանց օրգանապես անընդունակ էր համարում իրենց անձնական ապ-րումների սահմաններից դուրս գալու համար, իրենց երազների տենդային մշուշում թափառող լուսնոտների կարճատեսություն էր վերագրում նրանց։

Մարկն այցելության էր գալիս և լռում կամ էլ զառաջու-թյուններ էր անում անկարևոր ա՛ռարկաների մասին, իսկ Աննե-տան նայում էր նրա մտահոգ դեմքին, ժամանակից շուտ հայտ-նըված կնճիռներին, որոնք ակոսել էին նրա ճակատը, և սպա-տասխանում էր մտացրիվ, տարապատեհ։

Մտքերով Աննետան հեռու էր, ամեն մեկն իր շավղով էր գնում։

Մի անգամ Աննետան ակամա հառաչեց։ Մարկը հարցրեց.

— Քեզ ի՞նչ է պատահել, մամա։

— Ոչ մի բան, մի քիչ հոգնել եմ։

— Վերջապես, դու ե՞րբ ես հանգստանալու։

— Երբ իմ երեխաները երջանիկ լինեն։

— Մենք երջանիկ ենք,— ասաց Մարկը։

Աննետան ժպտաց ու նայեց որդու աչքերին։ Մարկն սկզբում աչքերը գետնին հառեց, բայց և իսկույն, ղայրանալով իր թու-

լության վրա, հաստատակամ դիմավորեց մոր հայացքը։ Էհ, ինչ կա որ, չափենք մեր ուժերը,— ասում էին նրա աչքերը։ Աննետան բռնեց որդու թևը արմունկից փոքր-ինչ վեր և զգաց, թե ինչպես են պրկվել մկանները։ Աննետան ծիծաղեց և ասաց։

— Չլինի՞ ինձ հետ կռվել ես ուզում։

Ուրախացած՝ խոսքը կտուրը գցելու հնարավորությունից, Մարկը դուրս պրծավ ու, ինքը բռնելով մոր ձեռքերը, սիրով, բայց ուժեղ սեղմեց, ինչպես որ խաղալիս երեխաներն են անում։ Աննետան ծվաց։ Նրա ձեռքերը ցավեցին։ Նա իրեն լավ էր զգում։ Հանձնվելով, Աննետան ասաց.

— Մի տես թե ինչքա՜ն ես ուժեղ։ Ինչպե՜ս սեղմեցիր։

Մարկն անմիջապես բաց թողեց մոր ձեռքերը.

— Օյ, ցավացրի՞։

— Չէ, հենց այնպես ասացի... Ահա թե ի՜նչ աջքաններ եմ քեզ տվել... Դու, տեսնում եմ, վատ չես զինված... բայց ուժը և լավ զինվածությունը դեռ քի՜չ է... Հարկավոր է ճանաչել թշնամուն։ Իսկ դու ճանաչո՞ւմ ես։

Աննետան խոսում էր արդեն ոչ իր մասին։ Մարկն այդ չհասկացավ։

Մայր ու որդի նստել էին համարյա ճակատ-ճակատի։ Աննետան քնքշորեն դիպցրեց ճակատը Մարկին և կրկնեց.

— Ճանաչո՞ւմ ես թշնամուդ, մարտիկ։ Լա՞վ ես ուսումնասիրել նրան։

— Ո՞ւմ,— հարցրեց Մարկը։— Քե՞զ։

— Ինձ թե նրան, կարևոր չէ։ Նրան, ով բոլորից շատ է քեզ սիրում, և ում դու ինքդ ես սիրում... դու պատրա՞ստ ես, արդյոք։

Մարկը տարակուսանքով խոստովանեց.

— Ոչինչ չեմ հասկանում։

Տագնապը նրան սկսում էր հաղթահարել։

Աննետան շտկվեց, ափերով սեղմեց որդու քունքերը, որպեսզի նա չկարողանա դուրս պրծնել, և նրանից չհեռացնելով իր անհեռուն հայացքը, սկսեց խոսել արդեն ուրիշ տոնով։ Բավական է կատակեն։ Առանց ձայնը բարձրացնելու, բայց վճռականորեն («ես իրավասու չեմ այլևս քեզ խնայելու...») Աննետան ասաց.

— Ուրեմն, լմացիր և պատրաստ եղիր... Կգա ժամը, երբ նա, ում դու սիրում ես և ով քեզ բոլորից շատ է սիրում, ատելությամբ կլցվի քո նկատմամբ և ինքդ էլ նրան կատես։ Ասենք,

աստվածությունն ի՞նչ է որ Զզվանքը կգա նրա համար զզվելի կդառնա նույնիսկ քո ներկայությունը նա կսկսի դա թաքցնել քեզանից, իրենից... Երբեմն դա կտևի մի քանի վայրկյան, երբեմն էլ՝ մի քանի օր... Զզվանքը կհետևի սիրո ամենաբուռն պոռթկումներին, իսկ ամենաբուռն սիրո պոռթկումները կհետևեն ամենախոր զզվանքին։ Եվ կամ այդ զզվանքն անաղմուկ կսկսի սողալ, տարածվել ու երկար ժամանակով բույն կդնի ձեր մեջ՝ գորշ առօրյայի ծածկույթի տակ, ընդ որում ամենևին չխախտելով օր առ օր վերականգնվող լուռ համաձայնությունը։ Բայց հիվանդությունը կլինի այնտեղ, քեզ սիրելի սրտում։ Եվ քո սիրտը նույնպես չի խուսափի այդ հիվանդությունից։ Եվ դու կզգաս ճակատագրի կողմից նշանակված օրը և նույն ժամին կզգաս այդ աստվածությունը և նույն տանջանքները։ Բայց ամենից սոսկալին այն է, որ այդ օրերը ձեզ մոտ չեն համընկնելու, քանի որ երբեք չի համընկնում երկու խոովահույզ հոգիների ընդվզման ժամը։ Գուցե հենց այն երեկո, երբ դու մոտենաս նրան, լցված ամենաջերմ սիրով, նրա սիրտը զզվանքով քեզ ետ հրի։ Եվ այն գիշեր, երբ նրա մարմինը ինքնամոռացությամբ սեղմվի քեզ, քո հոգին չարությամբ ֆշշացնի. «Հեռացի՛ր ինձանից»։ Բայց դու ոչինչ չես ասի։ Նա էլ քեզ ոչինչ չի ասի։ Քանի որ յուրաքանչյուրդ ամաչելու է իրենից և խղճալու է մյուսին... Ամոթ և խղճահարություն... Դա լա՛վ է։ Դա առաջին քայլն է։ Կնշանակի, ձեր տառապանքները զուր չեն անցնի։ Մարդկանց մեծամասնությունը, եթե միայն նրանց մեջ գոնե մի քիչ մարդկություն կա, հասնում է այդ սահմանին և կանգ է առնում։ Բայց դու, Մարկ, պետք է անես հաջորդ քայլը։ Պետք է սովորել հակառակորդի երեսին նայել, ինչպես որ դու հիմա ինձ ես նայում (սպասիր, մի՛ շարժվիր), և պետք է նրան ասել. «Դու այդպիսին ես, և ես հենց այդպես էլ քեզ սիրում եմ։ Թող որ դու ինձ մերժես, թող որատես ինձ, ես քեզ սիրում եմ, սիրում եմ ի հեճուկս քեզ։ Դու պետք է ինձ ներես։ Այդպես է պահանջում ընդվզումի դաժան օրենքը. նույնքան սրբազան, որքան սիրո օրենքը։ Եվ ես քեզ գուցե ավելի քիչ սիրեի, եթե դու չկարողանայիր հետևել այդ օրենքին...»։

Աննետտան ձեռքերից բաց չէր թողնում որդու գլուխը և զգում էր, թե ինչպես են խփում նրա քունքերի երակները։ Իսկ Մարկը նստել էր շունչը պահած։ Հետո երկուսն էլ ետ քաշվեցին, խուսափելով իրար նայելուց։

Մարկը ճնշված ձայնով շշնջաց.

— Ես սարսափում եմ... պատրաստ չեմ...

Աննետան ասաց.

— Իմ խեղճ տղա... Իսկ ես, կարծում ես, պատրա՞ստ եմ։ Պատրաստականությունը միշտ էլ եկել է միայն այն ժամանակ, երբ մարտը արդեն սկսվել է... Բայց և հոգեպահուստ միշտ էլ ունեցել եմ։ Ես դա քեզ եմ փոխանցում։

Մարկը նույն տոնով նրան պատասխանեց.

— Նա ինձ վախեցնում է, թերևս, հակառակորդից ոչ պակաս։

Աննետան ծիծաղեց.

— Տղաս... ներիր ինձ...

Մարկը, պատրաստվելով գնալ, վեր կացավ։ Արդեն դռան մոտ էր, երբ շրջվեց.

— Եվ դու, մամա, կարող ես կյանքը սիրե՞լ... Այդ հրեշի՞ն։

— Լինում են հիանալի հրեշներ,— պատասխանեց Աննետան։

Մարկը կատակեց։

— Ինչպես դո՞ւ ես։

— Ես նրանց ցեղից եմ։ Եվ դրանից չեմ ամաչում։ Դո՛ւ էլ աշխատիր չամաչել։

— Միայն թե երբե՛ք ստիպված չլինես կարմրել իմ փոխարեն։

— Իսկ ինչո՞ւ պետք է քո փոխարեն կարմրեմ։ Դու իմ արարածն ես, կնշանակի, ամեն ինչի համար ես պատասխանատու եմ։ Ես չեմ հրաժարվի իմ ստորագրությունից։ Ինչքան էլ ուզում է հաշիվը մեծ լինի՝ ներկայում և ապագայում։

— Նույնիսկ նողկալի բաների՞ց էլ չես հրաժարվի։

— Գոմաղբն էլ է պետք։

— Դա արդեն ցինիզմ է։ Ի՞նչ վատ պիտի զգա իրեն այդպիսի մոր որդին,— չինծու բարեպաշտությամբ ասաց Մարկը։— Եվ հետո, դրանք քո խոսքերը չեն. դու թալանում ես Լաբիշին։

— Ես ավելի հաճույքով կթալանեի Ռաբլեին։ Միայն թե չեմ համարձակվում շփոթեցնել իմ համեստ որդուն։

— Ախ այդպե՞ս,— վերավորված բացականչեց Մարկը։— Դու, ինչ է, երևակայում ես, թե ինձ խոսքերն ու գործողությունները վախեցնո՞ւմ են։

— Իհարկե։ Եթե կյանքը քեզ համար զվարճալի՞ է։

— Ես ինքս էլ եմ ինձ համար զզվելի, Բայց դա արդեն իմ իրավունքն է։

— Իզուր ես այդպես կարծում... Մի լավ փորիր քո դաշտը, Թող ամեն ինչ գնա դրա պարարտացմանը, Եվ աղբը, և նույնիսկ որդերը, և մայիսյան բզեզի թրթուրները։ Ամուր խփիր բահին, ինչպես մերկ մարդը ծերուկ լեմերի[1] գրքերի վրա։ Փորիր քո դաշտը... Եվ մի մոռացիր Ասյայի դաշտը։

— Այդ արդեն, ողորմած տիրուհի,— ասաց Մարկը,— ինձ սովորեցնելու հարկ չկա։

Մայր ու որդի քրջացին իրար երեսին։
Սանդուղքով իջնելիս Մարկը մտածեց.
«Եթե Ասյան այդպիսի՞ն լիներ»։

Ասյան ավելի մոտ էր Աննետային, քան Մարկը ենթադրում էր։ Ավելի մոտ էր, քան իրեն՝ Մարկին։ Բոլոր կանայք—սպիտակ, սև, դեղին, կանաչ— իրար հետ կապված են գաղտնի խմբակցության պայմանական նշաններով։ Եթե նրանք գերադասում են դրանք չնկատել, ապա լոկ այն պատճառով, որ տասից հինգ դեպքում հանդիպում են որպես մրցակիցներ. ամեն մեկին ուզում է մյուսի ձեռքից տղամարդ խլել, նույնիսկ առանց նրան սիրելու։ Դա մի բնազդ է, որին դիմանալ կարող են միայն լավագույնները, բայց նույնիսկ լավագույններին այդ բնազդը ծանոթ է։ Ասյան հենց առաջին օրերից զգաց— շատ ավելի ուժգին, քան Մարկը,-- թե Աննետան ինչպիսի իշխանություն ունի նրա վրա։ Եվ բնական է, իր առաջ նպատակ դրեց մորից խլել Մարկին։ Թեև երկուսն էլ իրենց դաշնակիցներ էին համարում և նույնիսկ անկեղծորեն սիրում էին իրար, այնուամենայնիվ բնազդը շշնջում էր նրանցից յուրաքանչյուրին.

«Մարկն իմն է»։

Միակ տարբերությունը նրանց միջև այն էր, որ Աննետան, երբ դա հասնում էր նրա դիտակցությանը, ջանում էր, ճիշտ է, բավական ծուլորեն, ընշել իր մեջ բնազդը, մինչդեռ Ասյան գիտակցորեն բնազդին ավելացնում էր նաև անսահման էգոիզմը և Մարկին ուրիշի հետ կիսել չցանկանալը։ Այդ պատճառով էլ, երբ երիտասարդ վույգի սերը ծանր փորձության ենթարկվեց,

---

[1] Նկատի ունի Լեմերի հրատարակչության մակնիշը։

Աննետայի հեռատեսությունը քիչ բանով կարող էր օգնել նրանց։ Եվ ի՞նչ իմանաս խարդավանքի ինչ-որ մաս չկա՞ր, արդյոք, թեկուզև չգիտակցված, կոպիտ անողոքության մեջ, որով Աննետան պոկում էր բոլոր ծածկույթները կանացի սրտից և բացում որպես առաջ նրան սպառնող վտանգը։ Ասյան, համենայն դեպս, դա դավաճանություն կհամարեր ։ Այն կինը, որը տղամարդուն հայտնում է սիրող սրտի գաղտնիքները, դավաճանում է իր ցեղին ու տոհմին։ Նրանցից ամեն մեկը մի օր դավաճանում է մյուսին։ Բայց ոչ մեկը դա մյուսին չի ներում...

Երիտասարդների միջև արդեն սկսվել էր սառնությունը, սակայն Ասյան, ինչ էլ ուզում է լիներ, ոչ մի դյույմ չէր զիջի Աննետայից նվաճած տարածությունից։ Ընդհակառակն, որքան ավելի բարձրաձայն էին նրա մեջ խոսում մորիկի բերած կասկածները, այնքան ավելի չղաձգորեն էր նա կառչում իր սեփականությանը։

«Ի՞նչ նպատակ ունի քո ապրելը, եթե ամեն ինչից անջատվում ես պատով»։ Մանկիկը, որին Ասյան կրում էր իր արգանդում, նույնպես նրա նվաճումների մասն էր։ Անմեղ մանկիկ... (իսկ Ասյան, մի՞թե նա որևէ բանում մեղավոր է։ Մարկը և նա կույր են...)։ Երեխան հաղթողի դրոշն է։ Բայց դրոշակակիրը գլխի էլ չի ընկնում, որ ինքն ընդամենը դրոշի կոթ է. նրան ամուր բռնում են։

Ավա՜ղ, Ասյան չափազանց ուշ հասկացավ, որ ինքն էլ չի կարող դուրս պրծնել։ Նա իր գլուխը խրել էր նույն անուրի մեջ։ Եվ ո՞վ է նրան պահում։ Նրա մարմնի պտուղը. փոքրիկ մարմինը։ Այդ փոքրիկ մարմինը Ասյային էր գամել ձեռք ու ոտք կապած Մարկին, այդ փոքրիկ մարմինը նրանց երկուսին էլ գամել էր արտաքին աշխարհին, անանուն և առեղծվածային իշխանին ու տիրակալին, որից նրանք երկուսն էլ սարսափում էին. և հրաժարվում էին ընդունել,— հասարակական օրգանիզմին՝ կեղեքման և ստրկության բոլոր տարատեսակություններով։ Իրենց ժառանգի պատճառով նրանք խճճվել էին արմատների ու արմատիկների բարդ միահյուսվածության մեջ, նրանք մասնակից էին դառնում այդ փոքրիկի լինելիության բոլոր անակնկալներին, նրա կույր թափառումներին, նրա սխալներին և անխուսափելի պատժին։ Անցել էր այն ժամանակը, երբ նրանք կարող էին գոռոզամտորեն ու անտարբեր դիտել հեռվից։ Նրանք իրենք նետվեցին ցանցի մեջ։

Ni˘na[1]-ն ընկավ իր սեփական թակարդի մեջ։ Թեև երբեք չէր խոստովանի։ Միայն կոկորդն էր սեղմվում, կարծես Ասյայի վիզը օղակ էին գցել... Եվ ո՞վ էր խեղդում նրան։ Նորածինը իր անզոր, լաթե թաթիկներով, խոնարհվելով փոքրիկ օրորոցի վրա, Ասյան նրան էր հառել իր տագնապալի և չար հայացքը։ Բռնվեց։

Բայց չէ՞ որ նա առաջին անգամը չէր, որ մայր էր... Այո, նրա մեջ սոսկալի հիշողություն էր ապրում, թեև նա ջանում էր որքան կարելի է խոր թաքցնել այն։ Դա անմեղ վոհ էր, արնաթաթախ պատուղ... Ասյան այդ միտքը ետ հրեց ինչ-որ տեղ, մոռացության խավարը, սուզեց ամենախոր հատակը... Այդպե՞ս է պետք... Եթե այդպես չանես, կարող ես խելագարվել... Եվ ով գիտի, ջրի երես չի՞ ելնի արդյոք, նախկինը, բայց գուցե նա արդեն եկել է... Իսկ եթե դա հենց նա ինքն է որ կա՞, այդ փոքրիկ եկվորը, որը հիմա արթնանում է իր անկողնո՞ւմ... Այդպիսի դժբախտությանը մոտիկ ցնորական պատկերացումները երբեմն կայծակի պես բռնկվում են կանանց ուղեղի մեջ։ Դրանց դեմ բանականության փաստարկներով կռվելն անօգուտ է։ Ասյան չէր էլ փորձում։ Միակ բանը, որ նա կարող էր,— դա այն է, որ աշխատի չմտածել այդ մասին, ձևացնի, թե ոչինչ չգիտի, թող ինքն իրեն անցնի։ Դիմադրությունը հավասարազոր կլիներ «դրա» հետ դեմառդեմ հանդիպելուն։ Հենց միայն այդ մտքից արյունը երակներում սառում էր... Երեսը բարձի մեջ թաղելով, Ասյան ամբողջովին կծկվում էր...

«Ես ոչինչ չեմ տեսել։ Ես ոչինչ չգիտեմ...»։

Բայց մի ակնթարթ հետո նա նորից էր սկսում աչքի պոչով հետևել նորածնին։ Ասյայի ամբողջ կյանքը հիմա բաղկացած էր նրա էության խորքում տեղի ունեցող այդպիսի արգելակումներից ու պայթյուններից։ Բարեբախտաբար, առաջին պլան դուրս էր գալիս ամենօրյա կյանքը, և կողմնակի հայացքը ոչինչ չէր տեսնում, բացի օրերի անընդհատ փոփոխությունից, բացի ծիածանի բռնկումներով միահյուսված ամպերի այդ վազքից։

Եվ այսպես, Ասյան պաշտպանական դիրք գրավեց փոքրիկ անծանոթի՝ երեխայի նկատմամբ։ Նա գրեթե ավելի շատ վախ էր զգում (երբեմն՝ նույնիսկ թշնամանք), քան սեր։ Ասյայի գըլխին եկած աղետը նրան ստիպել էր ինքնապահպանման աղոտ ղգացումի պատճառով իր մեջ խեղդել մայրական բնազդը, որն

[1] մանկիկ— (խոզ.)

ընդհանրապես նրա մեջ թույլ էր զարգացած,— այլապես նա չէր կարող ապրել այդ բաց վերքով։ Կյանքի ձգտումը մի կերպ բուժել էր վերքը, իսկ պատրաստակամ գիտակցությունը ուրիշ կողմ էր ուղղել իր մեջ ճնշած մայրության խուլ կանչը՝ տղամարդու կողմը։ Շատ կանայք են ունեցել այդ ապրումը, երեխային սպասելով, Ասյան քիչ էր մտածում նրա մասին, իսկ եթե անգամ մտածում էր, ապա նրա մտքերը վերաբերում էին Մարկին։ Ասյան իր մեջ նրա սերն էր կրում։ Մարկն էր նրա մեջ։ Մարկը պատկանում էր նրան, Ասյային... Ասյան ամենից առաջ իր մասին էր մտածում։ Նրա մեջ միավորվել էին իրենք երկուսն էլ, Ասյան ամեն ինչ էր դառել... Բայց ահա... հիմա Ասյան ոչինչ է... Իսկ նա, ով ամեն ինչ է դառել,— ահա նա... այդ շերեփուկը... Մենդաբերությունն արդեն եղել էր։ Կռվել-վերջացրել էր Ասյան։ Հիմա նա քշված է երկրորդ պլան, շարք է վերադարձել որպես հասարակ զինվոր։ Մարկի մասին խոսել անգամ չարժե։ Նրան ուղարկեցին գումակ...

Իսկ այդ նոր տիրակալը ո՞վ է։ Որտեղի՞ց լույս ընկավ։ Մահվան խավարի՞ց, Ուկրաինայի սարսափելի մարտերի՞ց, որոնք կլանեցին այն, մյուս փոքրիկ մարմինը։ Դեպի ո՞ւր է ճամփա բռնել։ Ո՞ւր է տանում Ասյային։ Դեպի ի՞նչ նոր ճակատամարտեր։ Նույնպիսի տիրակալ և ստրուկ, ինչպես և նրանք, մի շղթայի օղակ, որը Ասյային ամուր կապել է անցյալի, ներկայի և ապագայի մի ամբողջ կծիկ անակնկալների հետ, հասարակության հետ, որը ոտնձգություն էր անում նրա ազատության դեմ։ Մինչդեռ ինքը հույս ուներ ցած գցել նրա լուծը։ Նա նայում էր իր մանկիկին տարակուսանքով, սարսափով, զզվանքով, ատելությամբ։ Եվ հանկարծ հորդաց փոթորկուն քնքշությունը։ Հեղեղը ճեղքեց բոլոր ամբարտակները։ Այդ հեղեղի մեջ կործանարար ուժն էր այն պոռթկումների, որոնք տարածվում էին Ասյայի հոգում, ինչպես ամպրոպներ և, ինչպես ամպրոպներ, վերականգնացման թարմություն էին բերում։ Ասյան իր համար անսպասելի կերպով երկար շաբաթներ կենդանու պես կուրորեն և խենթաբար կապվեց երեխային։ Մնացյալ ամեն ինչ կորցրեց իր իմաստը։ Մարկն ավելորդ էր։ Սարդերի էգը լափում է իր արուին, հենց որ վերջինս կատարում է իր պարտականությունը։ Մարկը բավականին խելք ուներ՝ եսին պլան քաշվելու համար։ Ասենք, նա ամենևին էլ չէր հրապուրվում այդ թրթուրով։ Տղամարդկանց մեծամասնության նման, հատկապես երիտասարդ, նա

նույնիսկ որոշ զգվանքով էր նայում սիրելի արգանդի այդ պլաստին, երեխան տղամարդկանց մեջ սկսում է հետաքրքրություն շարժել սովորաբար տարին լրանալուց հետո միայն, երբ նա մաքրվել է... Մաքրվել է ինչի՞ց։ Աղտեղությունի՞ց։ Այդ ո՛ւ չպետք է ասենք... Քաոսի մութ անդունդի՞ց... Այսպես թե այնպես, նրանք սպասում են, մինչև որ կարելի լինի նրա մեջ ճանաչել ուրվագծերն ու սահմանները։ Ճանաչել մարդուն։

Ասյան արդեն տեսավ այդ ուրվագծերն ու սահմանները, զգաց, որ իր կիրքն սկսեց պակասել, հենց որ երեխան դադարեց իսորհրդավոր տիրակալ լինելուց, որին սնահավատ սարսափով հարց էին տալիս։ Դա մարդու սովորական մի ձագուկ էր, որն ամենևին նման չէր նրան, ում ինքը մի ժամանակ կորցրել էր, և շատ քիչ նման իրեն։ Սակայն այդ փոքրիկին չես էլ տարբերի այն ֆրանսիացի երեխաներից, որոնց մրջյուն աղախինները դուրս են բերում Լյուքսեմբուրգյան այգու գունատ արևի տակ և որոնց կողքով Ասյան ամեն օր անցնում էր ամենայն ուշադրությամբ։ Այդ մանկան մեջ Ասյայի երազանքներից ոչինչ չկար։ Նրան խաբեցին։ Նորմալ, առողջ երեխա է, և դրա հետ միասին՝ շատ պահանջկոտ. ապա փորձիր նրան մի րոպե մոռանալ։ Հենց իր ագահությամբ էլ նա Ասյային չէր թողնում, որ իր կողքից հեռանա — ծծում էր, կպչում նրան։ Ասյան գուտ կենդանական հաճույք էր զգում, երբ փոքրիկ, ապահ բերանը, չփչփացնելով, ծծում էր նրա կուրծքը։ Այո, փոքրիկը իր մոտ էր պահում նրան, պահում էր շատ ամուր։ Ասյայի մեջ աճում էր խոլ դայրությը, և նա մտածում էր. «Հիմա ես ինչպե՞ս և երբ դուրս կպրծնեմ»։

Նվ հաղթողը մերթ դայրությն էր, մերթ սերը։

Իսկ Ասյայի համար ամենածանր հայտնագործությունն այն էր, որ սրանից հետո նա չէր կարող լինել ոչ լիովին ազատ, ոչ լիովին կլանված... Եթե մայրությունը նրան ամբողջովին հափշտակե՛ր։ Ասյայի ամբողջական բնավորությունը (ամբողջական և ամեն ակնթարթ փոփոխվող, բայց ամեն տվյալ ակնթարթում՝ ամբողջական) թերի ոչինչ չէր հանդուրժում... Երբեք... Այդ դեպքում ավելի լավ է վատթարը։ Նա աղնվորեն փորձեց իրեն ամբողջությամբ նվիրել երեխային... Հնարավոր չէ։ Դրա համար հարկավոր է պատրանք, հարկավոր է հավատալ, ինչպես որոշ մայրեր են հավատում, որ դու աշխարհ ես բերել ոչ թե անճոռնի բաղիկ, այլ հրաշքների հրաշք... Հոգատարությամբ աչքի վրա դնելով իր ձագուկին, Ասյան մտածում էր.

«Ես մի միջակություն... Եվ սրա համար մարդ զոհաբերի իր ազատությո՞ւնը։ Ոչ, դա չափից ավել է...»։

Բայց ի՞նչ արժեր այդ ազատությունը։ Ինչի՞ էր պետք։ Որտե՞ղ պետք է օգտագործվեր... Ասյան անչափ ազնիվ էր երեխայի կամ իր հաշվով խաբվելու համար։

Նա կարող էր ի ծնե լինել ագահ ու տիրական, բայց չէր փորձում իրեն համոզել, որ ինչ-որ բնածին գերազանցության շնորհիվ ինքն ու իրենից ծնվածը ապահովված պետք է լինեն հատուկ իրավունքներով։ Ընդհակառակը, նա ավելի շուտ հակված էր տեսնել և անքթորեն իրեն ապացուցում էր իր միջակությունը։ Նա միջակ խելքի տեր է, միջակ (եթե ոչ ավելի վատ) սիրտ ունի, միջակ արտաքին, պարզապես տգեղ կին է։

«Հետո ի՞նչ։ Մի՞թե դա ինձ զրկում է քաղց ղգալու իրավունքից։ Ես նույն ձևով քաղցած եմ, ինչպես և նա։ Նա, այդ ծծկերը, իմ կուրծքն է ուզում, իսկ ես, ինչպես շան կույր ծագուկները, աշխատում եմ իմ տեղը գտնել բնության պտուկների մոտ։ Ո՞ւր է այդ տեղը։ Ես քթով խցկվում եմ, ափլփորում եմ իմ չորս թաթերով, փնտրում։ Եվ եթե ես ինձ համար ուղեկից եմ ընտրել տղամարդու, ապա միայն նրա համար, որ նա օգնի ինձ իմ որոնումներում, ստիպի, որ կաթը ժայթքի, ո՜չ, ո՜չ թե անալի կաթ, այլ արյուն, որը աղբյուրի նման բխում է կյանքի սրտից...»։

Տղամարդը Ասյայի համար վատ օգնական է։ Նա նույնպես, ինչպես և Ասյան, կույր ձագուկ է, նա նորից ու նորից ապարդյուն լմլմացնում է մայր Եվրոպայի ծերունական կրծքի թառամած, գրեթե ցամաքած պտուկը... Նա այս ու այն կողմ է նետվում ինդիվիդուալիզմի անապատում։

Ինչպե՞ս կարող էր այդ պատահել։ Վաղո՞ւց էր արդյոք, որ այստեղ լայն, սավերաշատ, ծաղկափթիթ, առատորեն ոռոգված հովիտ էր։ Դեռ երեկ պատերազմի հրդեհատեղերի և ավերակների միջև դա աղատ ոգու օազիս էր. այստեղ ճամփորդին զով աղբյուր էր սպասում և պարզ գիշերներ՝ արմավենիների տակ։ Հիմա աղբյուրն ապականված է, ոտնատակ արված, արմավենիները կարել են, և լայն բացվածքների միջով քամին ավազ է բերում։ Ճերմակելու ատիճան շիկացած երկնքից կրակ է թափվում, անապատը գրեթե ամեն ինչ կլանել է...

Բայց ասենք առանց քաշվելու, առանց բանաստեղծական համեմատությունների. չափազանց մեծ պատիվ է, երբ խոսքը

վերաբերում է վաճառականների խայտառակ կապիտուլյացիային։ Քանի որ դա այլ կերպ չես անվանի, քան խայտառակ կապիտուլյացիա։ Ինդիվիդուալիզմը, ոգու ազատությունը պատերազմը վերջնականապես հնաոճ լեռնցյան վերապրուկ իր Մեծն ու Սեղանը։ Նա հանձնվեց... Ի՞նչ մնաց նրանից։ Գրպաններում թաքցրած հին դրոշի ինչ-որ պատառներ, որ դուրս են հանում նեղ շրջանակում կամ անվտանգ խոսքակիցներում։ Հիմա ո՞վ է համարձակվում հակաճառել Պետությանը և նրա շղթայակապ շներին։ Հասարակական կարծիքին ու մամուլին նրանք պնդում են, որ ազատ են իրենց փոքրիկ պարտեզում պահակների անքուն աչքի տակ, և մշակում են այդ պարտեզը, վայելելով ազնվությամբ չեզոքն ոտանավորներ, նման Հորացիոսին, որը, հնազանդորեն շղթան վիզը դցած, հպարտ հաչում էր սերունդների համար։ Բայց Հորացիոսը գոնե չէր թաքցնում իր ցինիզմը, այլ պարծենում էր նրանով, որ վահանը ջնել է։ Իսկ սրանք, սեղմվելով տերունական մսուրի մոտ, ուզում են բոլորին հավատացնել, որ իրենք անկախ են։ Այդ հպարտ մտավորականների և տիրոջ միջև (տերը փոխվում է, չի փոխվում նրան ստրկանող անասունների հնազանդությունը) հաստատվել է այնպիսի լուռ, փոխադարձ համաձայնություն, որը գործադրում են տնային կենդանիների նկատմամբ։ Արա ինչ ուզում ես, բայց միայն իմ փարախում։ Աստված չանի, դունչդ դարպասից դուրս հանես։ Այդ պայմանով եմ քեզ կերակրելու... Նրանք այնքան են ընտելացել իրենց վիճակին, որ նույնիսկ ընդվզումի փորձ էլ չեն անում։ Տերը հանգիստ նրանց դուրս է թողնում, չէ՞ որ նրանց վզնոցին կապկա։ Այն քչերը, որոնք դեռ վերջնականապես չեն կորցրել ամոթի զգացումը, թաքուն կապը հանում են իրենց վրայից, բայց իզուր են ջանում վզնոցը ցույց տալ. բուրդը վաղուց է տրորվել, թափվել։ Մարկը կարմրում էր, տեսնելով, թե ինչպես են մարդիկ, որոնց նա սովորել էր համարել իր դաստիարակները, ավազ սերնդի մարդիկ, որոնց վրա նա հենվում էր ինչպես քարե լեռան վրա, կաշվից դուրս են գալիս, ողորմելի ճիգ ու ջանք գործադրում, որպեսզի ազատ ընտրության տեսք տան հարմարվողականությանը, որին դիմում էին իրենց շահը հաշվի առնելով կամ վախկոտությունից։ Նման օրինակները այլասերում էին դեռ նոր փետրակալած պատանիներին, վազ տարիներից ընտելացնելով նրանց մտքի պոռնկացմանը. սրանք վաճառվում էին այն մարդուն, ով ավելի շատ էր վճարում, բայց, ինչպես և հարկն է,

բարձր կարդի պռոնիկները ջանում էին ուշադրություն ստեղծել, որ նրանք ոչ թե հենց այնպես են դնում օրվա հերթական տիրակալի մոտ՝ նրա հաշվին ապրելու, այլ առաջնորդվում են ամենաբարձր սիրով։ Դեռ հաղիվ էր որևէ լորդունդ— կարմիր կամ սև, հետապնդում կամ հաշտվողություն,— ճանաչվում կամ խոստանում ճանաչվել պաշտոնական, երբ նրանք ամբողջ ուժով նետվում էին այն քարոզելու և ծառայելու նրան։ Երբ մեկն ու մեկն սկսում էր տատանվել, տատանվում էին նաև նրանք, սպասելով, թե քամին որ կողմը կփչի։ Երբ լորդունդը, դժբախտաբար, հանկարծ հանգուցյալ էին հայտարարում, նրանք, առանց թաղման վրա ժամանակ կորչելու, ցնծությամբ ողջունում էին նոր միապետին։

Այդպես էր լինում բոլոր ժամանակներում։ Բայց հիմա սիրուհու վիճակի էին անցել մեր ոլորտի մարդիկ, մեր իսկական մտավորականությունը, հետը վերցնելով իր դեմոկրատական իդեալների սուրբ հաղորդությունը։ Երբ պռոնկությունն անողը քայքայվող արիստոկրատիան էր, դա մեզ քիչ էր անհանգստացնում. շնորհ արա, քեզ համար գերեզման փորիր, քեղնով պարարտացված հողում իմ արտերը ավելի բերրի կդառնան։ Բայց չէ՞ որ հիմա փտում են իմ արտերը, իմ գաղափարները պավաճանում են ինձ, դավաճանում են իմ խոսք-լուսատուները, իմ խոսք-ակունքները, որոնք իրենցով սնում էին մեծ ինդիվիդուալիզմը։ Անկախությո՜ւնը Ոգու... ո՞ւր է նա... ի՞նչ եղավ... Լավագույն դեպքում նա մարմնավորվում է իրավագետ մտքերի օպորտիցիայի մեջ, ուղղված այն հասարակարգի դեմ, որին տապալելուց նա ամենից շատ է վախենում, քանի որ ուզում է դառնալ այդ հասարակարգի ժառանգորդը և կանխապես իր վրա է վերցնում ժառանգությունն ստանալու դատավճռի բոլոր պարտավորությունները, բոլոր ծախսերն ու վնասները։ Այդ մարդիկ այնպես են վարժվել խուսանավել գաղափարական փոխզիջումների ալիքների միջև, որ երբեմն չես էլ կարող միանգամից տարբերել կարմիրներին սևերից, ձախ ձեռքը աջից. ամեն ինչ իրար է խառնվել, և կուսակցությունները ինչպես դեպուտատների պալատում, այնպես էլ նրա պատերից դուրս, ավել կամ պակաս չափով, դարձել են երկկենցաղ։

«Երբ բանը դրան է հասել, ավելի շատ իմ սրտով են այն պարոնները, որ ռեակցիայի «arrabiati»[1]-ների թվին են պատ-

[1] կատաղածների— (իտ.)

կանում,— մտածում էր Մարկը.— նրանց մեջ ամեն ինչ մերկացած է, ինչպես դանակի բերանը, որը վաղ թե ուշ նրանք իմ կողը կխրեն։ Բայց այդ հետպատերազմյան սոցիալիստները հուզայի իրենց համբույրներով, նրանք, որ պատրաստ են դավաճանել Հեղափոխությանը և փորձում են կտրել այդ Հեղափոխության արմատը, որովհետև այդ Հեղափոխությունը նրանց խանգարում էր հանդարտ ու անհոգ քարշ գալ ռեֆորմիզմի ճանապարհով... Պետության ձրիակյացները լինելով, նրանք վախենում են խանգարել այն տան հանդիստը, որը ժամանակի ընթացքում իրենք են մտադիր վարձով տալ... Բայց ինձ պետք չեն ընտանիքի հայրերի այդ ավանդները, ես մտադիր չեմ վարձակալելու շահադիտական բնաղդներն ու նախապաշարմունքները։ Եթե ես միայն կարողանա՞յի Արևմուտքում երկու տասնյակ ազատ մարդ գտնել,— մարդիկ, որ վճռել են, ինչ գնով էլ լինի գտնել ճշմարտությունը և ծառայել նրան, անկախ նրանից, թե որտե՞ղ են հայտնաբերել այն։ Նույնիսկ եթե նրանք հարկադրվա՞ծ լինեին դեմ գնալ հայրենիքին, դեմ գնալ իրենց կառավարին։ Դե՞մ գնային իրենք իրենց։ Քանզի ճշմարտությունը ազատ մարդու հայրենիքն է... Բայց բոլորը, ովքեր ինձ շրջապատում են, առանց հայրենիքի մարդիկ են։ Կամակոր լակեյներ են։ Նրանք խաբում են տիրոջը, որը նրանց խաբեությանը մատների արտքով է նայում, որովհետև խարդախ ծառաները միևնույն է նրա ձեռքում են գտնվում։ Եվ այդ ինտելիգենտները, և այդ շնագնդները միատեղ են պահում այն դուքսը, որտեղ դաղափար են վաճառում ու գործեր սարքում։ Երեկ նրանք պատերազմ էին վաճառում, հայրենիք, լատինական քաղաքակրթություն։ Այսօր— եվրոպական խաղաղություն և, իհարկե, ազատություն— սա ամենագնային ապրանքն է (բորսայում այդ ազատության կուրսը վերջին ժամանակներս խիստ ընկել է, և դա վաճառվում է չնչին գնով)։ Ով ցանկանում է ազատ լինել, պետք է փող ունենա։ Իսկ ով փող է ուզում, պետք է իր ազատությունը վաճառի։ Եղնի կոնֆլիկտնե՞ր են։ Բնա՞վ ոչ։ Այսօրվա խղճի սիրտը չափազանց թույլ է՝ իրեն խիստ հուզմունքների ենթարկելու և առողջությունը վտանգի տակ դնելու համար։ Նա իրեն ապացուցում է ինչպես երկու անգամ երկու, որ եթե ազատ է, ապա իրավունք ունի իրեն վաճառելու.- բավական է, որ այն գնելով, դուք հաշվի առնեք նրա ցանկությունները։ Հիմա նա պատրաստ է ամեն ինչի, միայն ասեք նրան, իսկ ինչ համա-

պատասխան փաստարկներին է վերաբերում, ապա ինքը դրանք կընտրի։ Կմնա միայն այդ փաստարկներին կշիռ տալ,— կամ ոսկով, կամ տաքուկ տեղով, կամ բարձր դիրքով, հղորությամբ... Ճիշտ է ասված. «ուզել—կնշանակի կարողանալ»։ Բոլորն էլ հզորություն են ուզում։ Ամեն մեկն աշխատում է որքան կարելի է շա՜տ պոկել։ Իսկ ինչի՞ համար։ Միայն ու միայն նրա համար, որ, բարձունքին հասնելով, հաստատվի այնտեղ։ Եվ, իհարկե, այդ ժամանակ նրանք չեն կարող դուրս պրծնել կոմպրոմիսների կծիկից, որի մեջ իրենք խճճվել են վեր ելնելու ժամանակ։ Խճըճվել են հիմնավորապես, ինչպես ճանճը ոստայնում։ Իսկ ուր է սարդը և ո՞վ է նա։ Սարդը կուշտ է և հանգստում է իր պահեստին։ Մեծ հանճերը շարունակում են տղտալ։ Նրանք ճգնում են իրենց համոզել, որ դեռ ազատ են։ Իզուր։ Թևերի ամեն մի շարժման հետ ավելի ու ավելի են խճճվում։ Վերնատան դրանում համոզվեց խոշոր իշամեղվի՝ իր Տիմոնի օրինակով։ Որքան էլ դղեաց, ինչպիսի սարսափ էլ տարածեց շուրջը, միևնույն է, արդեն չկարողացավ դուրս պրծնել։ Տիմոնն ինքն էլ այդ գիտեր։ Քանի անգամ էր Աննետան տեսել, թե նա ինչպես է մոլեգնած դեսուդեն նետվում։ Եվ միայն ավելի ու ավելի էր խրվում, իր հետևից քաշելով ցանցի մեջ ընկած անթիվ ու անհամար մժեղներին։ Նա խեղդվում էր. սարդոստայնը դառնում էր սավան։ Նա բռնված էր։ Նրանք բոլորը բռնված էին, խոշոր գիշատիչները, արդյունաբերության արքաները, պողպատի, նավթի, լուցկու, թնդանոթի արքաները։ Նրանցից ոչ մեկին չի հաջողվի դուրս պրծնել այդ ցանցի կպչուն թելերից։ Երբ մի թելը պրկվում է ու դողում, այդ դողը զգացվում է նրանցից ամեն մեկի փորում, քանի որ բոլորը կախված են մեկը մյուսից և բոլորը միասին կախված են Սարդի մսի դարակից... Սարդի, այդ կույր գիշատչի, որն իր ուտկանը նետել է կյանքի գետը։ Էկոնոմիկայի ճակատագիրը ղեկավարում է մարդկային հասարակության ուղիները և իր հետևից բուքսիրով քաշում է ոգին...

Բայց Մարկը չէր ցանկանում հաշտվել։ Նա համաձայն չէր ստորագրել կապիտուլյացիայի ակտը։ Համարում էր, որ ինքը, Մարկը, կպահպանի ոգու ազատությունը։ Եվ վկա էր կոչում իր երկու դաշնակիցներին, երկու համառ և անկախ գլուխներին— Աննետային և Ասյային։ Աննետան ասում էր.

— Պի՛նդ կաց։

Բայց Ասյան, հեգնաբար ժպտալով, անփութորեն ասում էր.

— Իսկ ինչի՞ դ է պետք քո այդ հոդսոր ազատությունը։

Մարկի սիրտը կծկվում է։ Նա կատաղի պաշտպանվում է, բայց հարվածը նպատակին է հասել։

Անհատապաշտի ամլությունն... Նա զուր է ջանում խաբել իրեն.

— Ես ինքս մի ամբողջ աշխարհ եմ։ Եթե ես փրկեմ այդ աշխարհը, միթե դա քի՞չ բան է։

Ասյան պատասխանում է.

— Իր մեջ կենտրոնացած աշխարհը՝ մարող բոսորագույն մի աստղ է, որն այլևս ոչ ոքի չի տաքացնում։

— Նույնիսկ քե՞զ, Ասյա...

Նա խղճում է Մարկին, բայց նրա բնությին խորթ էր դառը հշմարտությունը դունատարդելը։

— Ինձ մի քիչ տաքացնում է։ Մի՞ պուճուր, մատներիս ծայրերը միայն։

Մարկին պետք չէ նրա կարեկցանքը, ավելի լավ կլիներ, որ նա ուղղակի ասեր. «Իմ սիրտը սառում է»։

Մարկը համառում է.

— Բայց մի՞թե դու քո ներքին կրակը չունես, քո օջախը։

— Կրակը պետք է պահպանել։

— Իսկ քո փոքրիկ եղնիկը... (Նա ուզում է, բայց չի համարձակվում ավելացնել՝ «և քո Մա՞րկը...»)։

Ասյան ծիծաղում է.

— Իմ փոքրիկ եղնիկը և իմ մեծ եղջերուն...

Մարկը վեհերոտ, գրեթե նվաստորեն աղերսում է.

— Դա քեզ համար քի՞չ է, որպեսզի կրակը պահպանես։

Ասյան շոյում է Մարկի այտը, և Մարկը հենց օդում համբուրում է նրա ձեռքը։

— Ոչ, ինչու, վատ չեռակ չէ...

— Հենց այդքա՞ն։

— Դա քիչ չէ։ Բայց (ների՞ր ինձ) չէ որ հարկավոր է երբեմն նաև շարժվել, որ մարմինդ բացվի, քայլել դեռնի վրայով— տաք լինի գետինը թե սառը։ Ես ուզում եմ, որ իմ ոտքերը տաքանան— քայլելուց, վազելուց, գործունեությունից։

— Բայց մի՞թե մենք չենք կարող միասին գործել։

— Այո, միայն թե ինչպե՞ս։ Դու ի՞նչ կարող ես անել։

Մարիին շատ լավ հայտնի է սեփական անզորությունը, բայց նա փորձում է առարկել.

— Ինչ ասես։ Մենք ազատ ենք։

Ասլայի շրթունքներին ժպիտ է հայտնվում, վհատեցնող, շփոթեցնող Ասլայի ժպիտը։

— Ազատ ենք մեր վարքագծում պատկառ տալու համար։ Հիմարություններ մի՛ ասա։ Դու հիանալի գիտես, որ ազատությունը քշված է համակենտրոնացման ճամբարները։ Փշալարերից այն կողմ դուրս գալը արգելվում է։ Իհարկե, նրանք կարող են ոչնչացնել ազատությունը։ Բայց չէ որ նրանք բարի են, նրանք հուսով են, որ ազատասերների ցեղը ինքն իրեն կոչնչանա։ Վերջին ազատ մարդկանց— ինչի՞ց ազատ—կգցեն վանդակի մեջ և ի ցույց կդնեն կենդանաբանական այգում։ Այ քեզ, օրինակ։

— Իսկ քե՞զ, Ասլա։

— Ինձ՝ ո՛չ։ Ազատ եմ թե չէ, ես այնտեղից դուրս կպրծնեմ. ինքս էլ դեռ չգիտեմ ինչպես, բայց դուրս կպրծնեմ։

— Ազատ ես թե չէ՞։ Կնշանակի, դուրս պրծնելու համար դու պատրաստ ես հրաժարվե՞լ քո ազատությունից։

— Միայն դրսում է մարդն ազատ։ Փնտրիր ուղածդ ձևակերպումը։ Քեզ պետք են բառերը, իսկ ինձ՝ էությունը։

Նրանց երկուսից Ասլան ավելի ազնիվ էր։ Մարկը, խանդոտաբար պաշտպանելով իր մենախոսությունը, չէր ցանկանում հարել և ոչ մի կուսակցության. ոչ նրանց, ովքեր մարանչում են ազնիվ մարտում, ոչ նրանց, ովքեր, թաքնվելով ամրոցի պատի հետևում, սակարկում են զիջումների համար։ Նա ուզում է պահպանել իր ազատությունը։ Ինդրե՛մ։ Ոչ ոք ոտնձգություն չի անում այդ ազատության դեմ։ Ո՞ւմ է պետք։ Դրանով փոր չի կշտանա։ Մարկը հարիպադրված է ամբողջ օրն անցկացնել հրատարակչությունում, առանց մեջքը շտկելու արագ-արագ գործադրական նամակներ թխել։ Նրան հաջողվել էր այդ գործն սառնալ չորս լեզու իմանալու շնորհիվ, բայց գրականության հետ այդ աշխատանքը ոչ մի կապ չուներ, հատկապես այն պատճառով, որ Մարկն իր դեմքն ուներ, կվախենային նրան ձեռագրեր վստահել գրախոսության, իսկ եթե նա ժամանակ ունենա գիրք գրելու, կարելի է երաշխավորել, որ նա այդ գրքի համար հրատարակիչ չի գտնի։ Նա երբեմն հոդվածներ է գրում, որոնք հայտնվում են կեղծ անվան տակ երկու թե երեք ֆերթերից մեկում, այն թերթերի, որ դեռ պահպանում են, առանց որևէ վնաս

հասցնելու իրենց, նախկին համբավը անկախության, մամուլի ազատության և այլն, և այլն։

Նրանց հավատալ կարող է միայն շատ միամիտ ընթերցողը։ Նրան, ով իսկապես կարդալ դիտե, չես կարող խաբել։ Ահա մի համարը՝ կոմպրոմիսների ցնծալի վիճակագրեա է։ Այնտեղ իրենց ջարդում են և հիմիկվա ոխրոջ ու տիրակալի և նրա առաջ, ով տեր ու տիրակալ է լինելու վաղը (մանավանդ որ երկու հակառակորդն էլ կամ միևնույն շուկայից են, կամ, իրար ձեռք սեղմելով, ատրճանակը պատրաստ են պահում իրենց մոտ)։ Առաջին էջում խաղաղության է քարոզվում, երրորդում՝ սպառազինում։ Եվ հայաբարակության կոտքերը գեղգեղում են սուրբ դեմոկրատիայի և մարդու սրբազան իրավունքների մասին, մինչդեռ հրատարակիչները հատուցում են առանում լռելու և այն բանի համար, որ փակում են չափազանց միամիտ լրագրողների բերանները, որոնք հալած յուղի տեղ են ընդունում գաղութարարության հանցագործությունների և նրա բերած դիվիդենդների վերաբերյալ փքուն խոսքերը։ Բայց մի գեղեցիկ օր հանկարծ մեկն ու մեկը հակառակի պես բերնից կծոցնի, և բոլորը կիմանան, որ այդ ազնիվ սրտերի, անմահ սկզբունքների այդ ասպետների մատը խառն է որևէ բաժնետիրական ընկերության կամ պարզապես բանդայի ամենաակեղտոտ աֆյորայի մեջ, որ բացահայտել է մրցակից շայկան։ Մեծ աղմուկ վասն ոչնչի։ Ի պատասխան մերկացմանը խայտառակված շայկան իր հերթին սկանդալով է սպառնում։ Ընկուսն էլ մոտ երկու շաբաթ դոդոռում են խոպոռելու ատելության. «Արդարությո՞ւն, Հատուցո՞ւմ», հետո աղմուկը դադարում է, խաբեբաները համաձայնության են գալիս իրար հետ. «Ես գողանում եմ ձախից, դու՝ աջից, սրանից հետո այդ մասին այլևս չխոսենք»... Սո՛ւս կաց և գրպա՛նդ լցրու։ Իսկ խմբագրության հլու-հնազանդ ճորտերի, ազնիվ, բայց թույլ մարդկանց (որ համաձայնվել էին իսկապես իդեալիստների դեր խաղալ՝ բաժանորդներ ոչոչելու համար) գրպանը ինչպես կար, այնպես էլ մնում է դատարկ։ Դրանք չեն խաբում, բայց խայծ են ներկայացնում այն խաբեբաների համար, ովքեր պղտոր ջրում ձուկ են որսում. և, իհարկե, ամեն կերպ աշխատում են մոռանալ իրենց այդ ստորացուցիչ դերի մասին։ Ինչ կարող են անել։ Մի կերպ պիտի ապրեն, թե ոչ։ Որտե՞ղ տալագրվեն։ Եվ ահա նրանք իրենք իրենց համոզում են, որ սրբազան միսիա են կատարում։ Ստրկավաճառը բավական խելացի էր, որպեսզի իր

Նեգրերին ամուր կապելով թիանալի նատարաններին, նրանց թույլ տա «ազատ» թիավարել։ Ստրկավաճառը դիտի, որ նրանք իր համար վտանգավոր չեն, և նրանց թիակների ծույլ շարժումները ոչ մի դյույմ չեն փոխի նավի կուրսը։ Ոչ թե թիավարներն են նավին ուղղություն տալիս, այլ նավն է նրանց տանում իրենց բարեհոգի ոռնոցների հետ ասես նավաքթին փորագրված տրիտոնների, մինչդեռ այնտեղ, նավախելի հետևում, առաջներն է կափկափում դիշատիչ շնաձուկը։ Դուք բողոքելու տեղ չունեք, պարոն «իդեալիստներ»։ Հուշակե՞ք ինչքան սրտներդ կուզի առաքինի տիրադները։ Առայժմ դրանք վերաբերում են միայն ամեն ինչին ընդհանրապես և ոչնչի՝ մասնավորապես,— ամեն ինչ լավ է և լրիվ համապատասխանում է շքերթի կարդացուցակին։ Քիչ, շատ քիչ հոգևկան այլանդակներ կան, Մարկի նման, որոնք ամաչում են բալաթանային հաճախորդ կանչող դերից։ Եթե նա մի կաթիլ տակտ ունենար կամ ներողամտություն (իր մասին չի մտածում, դոնե մասածներ ուրիշների մասին), մի՞թե աչքերից կպոկեր այն փրկարար կապը, որն ընկերներին հնարավորություն է տալիս երանելի անդրաուիյան մեջ լինել և թույլ տալ, որ իրենց հիմարն ուշ դնեն։ Գլխի ընկնել— կնշանակի հայտնվել հանցակիցների ուշամ դերում։ Մի՞թե բարեկարգ մարդկանց համար հեշտ է հրաժարվել մսուրում եղած իրենց կերի օրաբաժնից։ Այդ դեպքում ինչպե՞ս ապրել։ Նրանք այլևս երիտասարդ չեն, արդեն հալից ընկել են, իսկ մյուս բոլոր մսուրները վաղուց են զբաղեցված։

Միայն հարուստներին է թույլատրված առանց անուրի մնալ և ազատ ազատահայտել իրենց մտքերը այն առարկաների վերաբերյալ, որոնք ուղղակի և անմիջականորեն շոշափում են որևէ մեկի շահերը։ Իսկ հարուստները, հասկանալի է, ի՞նչ օգուտ կտրել իրենց ուսին ճյուղը, բացելով իրենց հարստության աղբյուրները։ Եվ ահա լնտելիգենտների մեջ գտնվում են այնպիսի փչունիկներ, որոնք, հրաշալի հասկանալով դործուն ազատության անհնարինությունը կամ վտանգավորությունը, ինքնագովեստով են զբաղվում և ձևացնում, որ իբր սրճամարհում են ազատությունը։ Եկեք ի ծառայության դնել հասարակական և քաղաքական կյանքին— ի՞նչ պրոֆանացիա,— ասում են նրանք։ Ոգու այդ դյուցազունների համար ուրիշ ազատություն չկա, բացի անպատուհ ազատությունից. հավատան առանց գործերի... Եթե չհաշվենք մաքուր դաշափարների յոթերորդ երկնքում տեղի

ունեցող գործունեությունը, որտեղ ամեն ինչ ընթանում է, ինչպես ժամացույցը արհեստանոցի չորս պատերի մեջ՝ արտաքին աշխարհի անակնկալներից ու հարվածներից պատսպարված։ Հիրավի նրանք ազատ են... ազատ են կյանքից կամ մեռած են։ Բենդան, այդ ստորաքարշ «ոգու պահապանը»[1], հսկում է Հովսափաթի հովտում սպիտակին տվող ոսկորների կույտերը։ Պահպանում է տիրոջ հրեշտակից...

Այդ գերեզմանային ազատությունը չէ, որ պետք է հագեցներ Մարկի քաղցը։ Նա նողկանքով թքում է։ Ոգի և կյանք միայն նրանք ունեն, ովքեր գործում են։ Բայց ո՞ւր են նրանք, իսկական կենդանի մարդիկ։ Եվ ինչպե՞ս նրանք շտկվեն ամբողջ հասակով մեկ, արհամարհելով այն սահմանված չափը, որն հիմա կռացնում է բոլոր գլուխները։ Ջարդի՛ր չափը։ Մակի՛ր առաստաղը։ Դա մի հոգու ուժի բան չէ։ Դանգի կիշերես։ Հարկավոր է համախմբվել մյուս ընդվզողների հետ։ Բայց համախմբվել— կնշանակի կապանքի մեջ ընկնել։ Դա կնշանակի ընդունել այն դոկտրինաները, որոնցով կաշկանդված են կուսակցությունները և նրանց կարգապահությունը։ Մարկը համաձայն չի։ Նա սպասում է Ասյայի հավանությանը, բայց Ասյան ուսերը թոթվում է և չոր ասում.

— Սահել սիրում ես, սահնակ տանելն էլ սիրիր։

Մարկը վրդովված է.

— Կապանքներով կաշկանդվել։ Եվ այդ դո՞ւ ես առաջարկում, Ասյա։

Ասյայի բերանը չար մի քմծիծաղ է ծռմռում։

— Երեկ կապել եմ ինձ, վազը կարող եմ խզել այդ կապը։

Մարկը ծիծաղի տրամադրություն չուներ։

— Ինձ հետ նույնպե՞ս։ Խզել մեր հարաբերությունները։

— Իսկ ինչո՞ւ չէ,— մարտահրավեր է նետում Ասյան։— Եթե ազատ ես, ուրեմն քեզ կարող ես կապել, կարող ես նաև կապերդ խզել։ Ես անձամբ այդպես եմ համարում։

— Այդպիսի բաներում կատակ չեն անում, Ասյա։

Ասյան տեսնում է, Մարկին ինչպես է անհանգստացած, ժըպտում է (այս անգամ իր լավ ժպիտով)։ Եվ համբուրում է նրան։

— Ախ դու իմ փոքրիկ տղա։

---

[1] Նկատի ունի Ժյուլիեն Բենդայի «la Trahison des cleres» — «Ննրանք, ովքեր դավաճանում են ոգուն»—գիրքը։

Մարկը քիթը սեղմեց նրա պարանոցին, նա և սիրուհած է, և մի քիչ նեղացած։

— Ես քո ամուսինն եմ։

— Ոչ։ Ոչ բոլորովին։

— Քեզ էլ ի՞նչ է պետք։

— Տղամարդ է պետք։ Լավ կլիներ, եթե այդ տղամարդը դու լինեիր։ Տղամարդ եղիր։ Եթե ոչ՝ զգուշացիր...

Ասյան կատակ է անում։ Բայց նրա կատակների հետևում սովորաբար մի լուրջ բան է թաքնվում։ Մարկն այդ գիտի։ Նա շփոթված է։

— Ասա ինձ, ի՞նչ անեմ,— հարցնում է Մարկը։

— Այդ չեղավ,— ասում է Ասյան։— Դա արդեն քո գործն է։ Տղամարդը դու ես, դու էլ վճռիր։

— Իսկ եթե դու հետո դժգո՞հ լինես։

— Գոհ ըն դժգոհ, այդ մասին ես քեզ հետո կասեմ։ Ոչ հիմա։ Դու տղամարդ ես։ Նախ գործիր։

Խոսելու, վիճելու ցանկությունն չունենալը, այդ աղոտ ապառնալիքը, այդ աչքերը, որոնք սառչ և խիստ հետևում են նրան ու դնահատում նրա ամեն մի քայլը,— այդ ամենը բոլորովին չի օգնում Մարկի գործելուն։ Նա կաշկանդված է։ Ասյան, ուրեք, այնքան էլ չի գիտակցում, թե ինչ է ուզում, բայց դրա փոխարեն Մարկը հիանալի հասկանում է. Ասյան պահանջում է այն, ինչ Մարկն ինքը չի ուզում և չի կարող։ Մարկը նկատում է, ևն ինչպես որոշ ժամանակից ի վեր Ասյան, թերթեր ու գրքեր կարդալով, մարդկանց հետ զրուցելով, իր մեջ է ներծծում բնության այն կծու գոլորշիները, որ տարածվել են օդում, ելնելով հին աշխարհի ուժերից մերթ այստեղ, մերթ այնտեղ,— ամենուրեք, մերթ հեռու, մերթ մոտիկ. Ամերիկայում, Ռուսաստանում, Իտալիայում, Բալկաններում, Կենտրոնական Եվրոպայում։ Կատաղության այդ բռնկումները մեծամասամբ տարերային են և, առաջին հայացքից, կարող են հանգեցնել սոսկ ավերումների. բայց նրանցից նույնիսկ ամենակույրն ու արյունահեղը՝ կյանքի ընդվզումն է։ Ինչ ուզում է լինի, միայն թե անկամորեն փոված պառկած չլինես։ Ignavia est jacere[1]... Ասյայի հոգում կուտակվող այդ ընդվզումը նրան ստիպում է հետաքրքրություամբ (որը նա ամաչում է խոստովանել) հետևել նույնիսկ ֆաշիզմի ածին, այն

---

[1] Պառկելը ծուլության նշան է (լատ.)։

նույն ֆաշիզմի, որը մահակի հարվածներով դատապատան է տեսնում եվրոպայի հյուծված դեմոկրատական ազատությունների վերջին մնացորդների հետ։ Սակայն, ենթարկվելով ընդհանուր համաճարակին, ենթարկվելով արյան ձայնին, Ասյան, այնուամենայնիվ ձգտում է ավելի շատ դեպի այն ճակատամարտերը, որոնք վարում է Սովետական Միությունը։ Արյունով ներկված ասպարեզը, որտեղ բռնության մեջ նոր աշխարհ է ծնվում, նրա համար անհաղթահարելի ձգող ուժ ունի։ Մարդի սերը վտանգի մեջ է, և նա իր սրացված հոտառությամբ կռահում է այն թաքնված աշխատանքի մասին, որ կատարվում է համատարած լռող Ասյայի մաքում. եւ մի քիչ ժամանակ— և Ասյան կգլորվի դարբվար։ Մարկն ուզում է եւս պահել նրան, բայց ինքը սիրտ չի անում մոտենալ եզրին. Սովետական Միությունը Մարկի մեջ մտքերի մրրիկ է առաջացնում, նա գլուխը կորցրել է և խուսափում է այդ թեմայի շուրջն Ասյայի հետ խոսել։ Նա Ասյային պրոհում է հեռվից, խոսակցություն է բացում Իտալիայի իրադարձությունների մասին, հույս ունենալով, որ Ասյան կվրդովվի, կդատապարտի այնտեղ կատարվող ոճրագործությունները։ Բայց Ասյան լռում է, կարծես բերանը ջուր է առել։

— Գուցե, դու հավանություն՞ն ես տալիս այն ամենին, ինչ նրանք անում են այնտեղ,— չհամբերելով, հարցրեց, վերջապես Մարկը։

— Համենայն դեպս, ավելի շատ քան այն բանին, որ մյուսները ոչինչ չեն անում,— կարուկ ասաց Ասյան, նույնիսկ չնայելով Մարկի կողմը։

Հարվածը կպավ ուղիղ սրտին։ Դրա դեմ Մարկն առարկելու բան չուներ։ Նա ինքն էլ է իրեն դատապարտում, որ ոչինչ չի անում, ոչինչ չի կարողանում անել։ Մարկն այդպես էլ երբեք լրիվ չլսվացավ այն հիվանդությունից, որը նրան անկողին էր գցել հենց ամուսնությունից առաջ, իսկ հիվանդությունից անմիջապես հետո նրանք ամուսնացան և ուժերի խնայողական վատնումը էլ ավելի քայքայեց չամրացած օրգանիզմը։ Դրան էր նա պարտական սկզբում իր զորակոչի տարեկետումը ստանալու, իսկ հետո նաև զինվորական ծառայությունից ամբողջովին ազատվելու համար, որը հնարավորություն տվեց նրան խուսափել այդ ծառայությունից պաշտոնապես հրաժարվելու քայլից, որ վաղուց պատրաստվում էր անել, որը իր հետեվից համապատասխան պատիժ էր բերելու։ Ասենք, ով գիտի,

Մարկի համար ավելի լավ չէ՞ր լինի արդյոք, եթե նա անցներ այդ փորձության միջով,— դա կարող էր նրան ներքնապես ամրապնդել։ Նա պատրաստ էր այդ քայլին դիմել, նույնիսկ առանց ուղղակի անհրաժեշտության— չէ որ հիմա ոչինչ չէր հարկադրում արտահայտվել,— պատրաստ էր միայն հանուն սեփական ինքնահաստատման, դուռ որպես բողոք։ Սակայն նրա երկու խորհրդատու կանայք էլ ընդդիմացան. Անյան՝ այն պատճառով, որ անմիթ խիղաճությունը նրա համար խորթ էր և անհասկանալի (եթե Մարկը ստիպված լիներ բացեիբաց հայտարարել իր հայացքների մասին, դա գեթ ոչինչ։ Ասենք, Անյան, համաձայնվելով կոմունիստների հետ, համարում էր, որ այդ դեպքում պատրաստ է բանակ գնալ՝ թշնամու դեմքն օգտագործելու համար), համոզմունքով դիվորական ծառայությունից հրաժարվելը Անյային անհեթեթություն էր թվում... Անեետան, որ հասկանում էր այդ արարքի ողջ վեհությունը, չէր ուզում Մարկի վրա ազդել։ Նա գիտակցում էր, որքու համոզմունքները անկայուն են և որ նրա հրաժարման մեջ ավելի շատ ինքնախրթություն է լինելու, քան անկեղծ հավատ։ Բանականությունը նույնպես պատրաստակամորեն հուշում էր ոչ քիչ «խելամիտ» առաջարկներ. երևակայի մոտալուտ ծնունդը, ընտանիքի գլխավորի ծանր պարտականությունները, թույլ առողջությունը։ Մարկը խուսա տվեց։ Բայց հոգում նա իրեն նվաստացած էր զգում, ափսոսում էր, որ դուրս չեկավ մարտի, պարտություն կրեց (Անյան դիպավ լավացած վերքին), ափսոսում էր այն բանի համար, «ինչ չարեց»։ Նա ընկավ իր սեփական աչքում։

Եթե նա գոնե կարողանար տանուլ տվածը որևէ բանով վերադարձնել— հրապարակով հանդես գար կամ գրեր։ Բայց նրա հնարավորությունները, ինչպես մենք արդեն տեսանք, շատ սահմանափակ էին։ Նա չէր կարողանում գործել նույնիսկ գրչով, շատ հաղվադեպ էր նրան հաջողվում մի քանի տող գրել, դրանք էլ արձագանք չէին գտնում։ Նա իրեն զնդանել էր ինդիվիդուալիզմի բանտում։ Միայն վերևից, դատարկ երկնքից էր նրա մոտ լույս թափանցում։ Նման կյանքի հետ հաշտվել գուցե կարող էր միայն նրա մայրը։ (Եվ հաշտվե՞ց արդյոք։ Նա ոչ ոքի չէր ասում, թե ինչ շատ կարիք ունի, չէր ասում, որ այդ երկինքը նրա համար քիչ է...)։ Բայց այդպես կարելի էր գոնե շնչել,— այնուամենայնիվ ինչ-որ ելք է։

Ոչ Մարկի համար։ Ելքն այդ ոչ միայն Անսահմանի թագավո-

բուքյունն է, այլև մահվան թագավորությունը։ Մարկը լուսամուտներ է փնտրում գեպի ողջերի աշխարհը։ Ցատկել լուսամուտից կյանքի խորքը... Դե, ուրեմն շուտ թռիր։ Մի՞թե դու չես տեսնում, թե ինչպես է Ասյան խոնարհած կոպերի տակից հետևում քո ամեն մի շարժումին։ Դու չես հասցնի ոտքդ լուսամուտի գոգին դնել, երբ նա քո առաջն ընկնելով արդեն կցատկի։ Այո, Մարկը տեսնում է։ Նա տեսնում է, որ Ասյան հենց այդ է իրենից ուզում, հենց այդ է սպասում իրենից...

Բայց Մարկը ոչ մի կերպ սիրտ չի անի։ Այնտեղ, ներքևում, իշխում է բռնությունը, այնտեղ Մարկի համար ատելի ճնշման բռնակալությունն է։ Կրկնակի ատելի, որովհետև այդ ճնշումը նաև իր արյան մեջ է, իր բորբոքված արյան մեջ, որը չափազանց տիրականորեն բռնության է կանչում։ Իսկ քանի որ, գոհություն աստծո, նա այդպիսի հնարավորությունից զրկված է (երբեմն նա սոսկում է այն մտքից, թե ինչ ծայրահեղությունների նա կարող էր ընդունակ լինել), նա ուրիշների կողմից ճնշում չի հանդուրժի։ Բռնության նկատմամբ ունեցած ամբողջ սեփական կամքը նա կնվիրի այն բանին, որպեսզի ոչ մի դյուժ չդիջի իր սեփականությունից՝ իր «ես»-ից։ Ախ, եթե Հեղափոխությունը լիներ առաչվա նման, երբ վառվում էր ինչպես ռմռնող հրավառություն, զայրույթի ազատ բռնկումով, որտեղ ամեն մեկն ընդհանուր ընդվզման մեջ իր բաժինն էր մտցնում։ Բայց այժմ Հեղափոխությունը միլիտարիզացված է։ Ջորանոց։ Կարգապահությունը տարածվում է ամեն ինչի վրա— այն ամենի, ինչ անում ես, գրում ես, մտածում ես։ Մուրճ ու մանգաղի նոր քուրմերը իրենց իրավասու են երևակայում իշխել նույնիսկ փիլիսոփայության և դիտության վրա։ Մի՞թե նրանք բանադրանքի չենթարկեցին ժամանակակից ֆիզիկայի և էներգետիկայի ազատ հիպոթեզները, որոնք չէին տեղավորվում մարքսիստական մատերիալիստական ավետարանի շրշանակներում։ Եվ, զուցե, նրանք նույնիսկ յուրովի իրավացի են, երբ ուզում են, որպեսզի առաջին տարին Հեղափոխության լինի Գեջրայի[1] տարին. ամեն մի սրբազան պատերազմ պետք է իր զորանն ունենա... Բայց Մարկին զզվեցնում են վզին փաթաթած աստվածները։ Երբ խոսքը

[1] Առաջին տարին Հեղափոխության.— այստեղ նկատի ունի նոր տարեգրությունը, որը սահմանված էր ֆրանսիական բուրժուական հեղափոխության սկզբում։ Գեջրա— սկիզբը տարեգրության, որն ընդունված է մուսուլմանների մոտ մեր տարեգրության 7-րդ դարում։

ոգու մասին է, նա կատակ չի ճանաչում։ Իմ ոգին ինձ է պատկանում։ Եվ վա՜յ նրան, ով ոտնձգություն անի այդ ոգու դեմ։

Ասյան անտարբեր է այդ պրոբլեմների նկատմամբ։ Ոգին, ինչպես և մարմինը պատկանում է նրան, ով կգրավի այն,— ամենաուժեղին։ Բայց ամենաուժեղը նույնպես կարող է այն նվաճել միայն, եթե դա ես ինքս ուզեմ։ Իսկ եթե փոշմանեցի, ես կվերցնեմ...

Ասյան ավելի ու ավելի էր հեռանում այդ ֆրանսիացուց, որը չէր կարողանում ոչ ամբողջովին ընդունել, ոչ ամբողջովին մերժել և իր ուժերը ծախսում էր ապարդյուն տատանումների վրա։ Նա սկսեց իր շուրջը նայել և համեմատել, ընդ որում համեմատությունները դուրս էին գալիս ոչ նրա օգտին։

Աննետան Ասյային տարավ ֆրանսիական այն ոլորտները, որ նը ճիշտ է, դեռ շատ երկիրտ, կուլտուրական մերձեցում էին փնտրում Սովետական Միության հետ։ Այնտեղ Ասյան հանդիպեց ռուսների հետ, որոնք սովետական կազմակերպություններից էին։ Նրանցից ոմանց հետ Աննետան ծանոթ էր դեռ այն ժամանակ, երբ Չիմոնի մոտ էր աշխատում։ Այնպես որ նրանք բավական ժամանակ ունեին՝ Աննետային ճանաչելու համար։ Հիմա նրանք սկսեցին հետաքրքրվել Աննետայի հարսով։ Ասյային թարգմանություններ պատվիրեցին ռուսերենից կիրառական արվեստի Միջազգային ցուցահանդեսի համար, որ այն ժամանակ բացվելու էր Փարիզում. դրանք հոդվածներ էին ռուսական ժողովրդական արվեստի, դաջվի գործվածքեղենի, խաղալիքների, Պալեխյան լաքերի, թատերական դեկորացիաների և այլնի մասին... Այնուհետև բրոշյուրները, որոնցում հմուտ գաղափարական պրոպագանդա էր տարվում։ Եվ, վերջապես, ավելի շուտ տեխնիկական բնույթի աշխատանք՝ Փարիզում գտնվող սովետական առևտրական ներկայացուցչության համար։ Սկզբում Ասյան աշխատում էր տանը, հետո, երբ հանգամանորեն ուսումնասիրեցին նրան և դրան ավելացրած նաև տեղեկություններ հավաքեցին նրա մասին սովետական լիազոր ներկայացուցչությունում աշխատող Ասյայի վաղեմի մի ընկերուհուց, որը երբեմն և անհրաժեշտ զգուշություն պահպանելով հանդիպում էր նրա հետ, դուռը մի փոքր բացեցին, և Ասյային թույլատրվեց միջանցք մտնել։ Հենց որ երեխային արդեն կարելի էր կրծքից կտրել (Ասյան այդ մասին Մարկի կարծիքը չէր հարցնում), Ասյան

երան գնաց Աննետայի վզին, որին հենց դա էլ պետք էր, և սկսեց աշխատել առևտրական ներկայացուցչությունում։ Ինչպես քրիստոնեության սկզբնական շրջանում նրանց, ովքեր ցանկանում էին ընդունել նոր հավատը, արգելում էին տաճար մտնել, և թույլ էին տալիս ժամերգությունը լսել եկեղեցու գավթում, այդպես էլ Ասյայի աշխատանքային սեղանը դրին նախասրահում, կողքի անցատեղի մոտ, և կամաց-կամաց նա սկսեց այնտեղ անցկացնել ամբողջ օրեր։

Այստեղ Ասյան մի բավականություն էր զգում, որի բնույթի մեջ չէր փորձում խորանալ։ Նա իրեն չէր խոստովանում, որ նորից հարազատ հող է գտել, հող, որը անել էր նրա միտքը։ Ասյան աշխատում էր իրեն հավատացնել, թե մեկընդմիշտ թափ է տվել նրա փոշին։ Բայց մյուս հողի նկատմամբ, որի մեջ ինքը հիմա արմատներ էր գցել, դա փախուստ էր... «Դուք ինձ վրա իշխանություն չունե՛ք... երկուսդ էլ իշխանություն չունե՛ք...»։ Այդ զգացումը նրան թեթևություն էր բերում։ Ամբողջ օրն անցկացնելով ուսանների մեջ, Ասյան երեկոյան հաճույքով էր վերադառնում իր ֆրանսիական ընտանեկան օջախը։ Բայց հենց այն բանի համար, որպեսզի ինքը լիակատար կերպով գնահատի այդ օջախը, նա պետք է դուրս գա այդ օջախի սահմաններից։ Փախուստի լավ արդարացում է սեփական անձի առաջ։

Արդարացում, բայց ոչ Մարկի համար։ Ասենք, Ասյան չէր էլ ցանկանում արդարանալ։ Նա այդ ստորացուցիչ կհամարեր։ Մարկի տրամադրությունը մռայլ էր։ Նա ամփոփվել էր իր մեջ և չարագուշակորեն լռում էր։ Ավելի վատ ոչինչ հնարել չէր կարելի։ Տեսեք թե դլխներիս ինչ զայրագին տիրակալ է գտնվել։ Տիրակալ ձևացնել այն ժամանակ, երբ ուժեղ ես,— դա դեռ ոչինչ։ Բայց եթե դու մրցակցիդ ավելի թույլ ես, պարզապես ծիծաղելի է։ Ասյայի՝ կատվի նման ճկուն մեջքը, գուցեև, ամուր ճանկերի հարվածին ցանկասեր դողով պատասխաներ։

Հետո կարելի է հարյուրապատիկ հատուցել։ Բայց այդ ուռցրած շրթունքները, կիտած հոնքերը, անզոր զայրույթը, որը իբր կարևոր չի համարում, իսկ իրականում չի համարձակվում արտահայտել,— այդ բոլորը միայն ապացուցում էր, որ Մարկը շատ կուզեր, բայց թե չի կարող նրան ենթարկել իրեն, և Ասյային միայն ընդվզման էր հրահրում։ Ասյան հատուկ չարախընդությամբ էր Մարկին պատմում իր իմացած բոլոր նորությունները, նա երկուսն էլ չէին կարող մոքում չհամեմատել Մարկի

բողոքի անարդյունք լինելը և Սովետական Միության կենսատու ուժը, նրանց ուժը, ովքեր գործում են։ Մարկն ինքն էլ էր անցկացնում նման զուգահեռներ և դրանցից տառապում, բայց չէր կարողանում հանդուրժել, երբ դա անում էր Ասյան։ Երկուսն էլ աներոջ էին դառնում այդ հոգևոր մենամարտում։ Մրտքից խոսքին անցնելով, նրանք ընդգծում էին այն, ինչը բաժանում էր նրանց։ Վերջ ի վերջո Մարկը պարզ ու որոշակիորեն պահանջեց, որ Ասյան դադարի հաճախել առևտրական ներկայացուցչության։ Ասյան կտրուկ հայտարարեց. ոչ։ Ինքն ազատ է...

Իր ազատությունը հաստատելու տարօրինակ ձև է— վազել նրանց մոտ, ովքեր երկաթյա ձեռքով Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության վիթխարի տերիտորիայում հաստատել էին գաղափարական, սոցիալական, տնտեսական և քաղաքական դիկտատուրա, և կուզեին տարածել այն ամբողջ հոգագնդի վրա։ Բայց ի հակակշիռ Արևմուտքի հեղհեղուկ և անողնաշար լիբերալիզմի, նրա երկերեսանիությամբ և թուլակամությամբ, որը ջուր էր լցնում անկշռում շահագործողների ջրաղացին, Մոսկվայի կոպիտ ուժը, որն իրեն նվիրել էր շահագործվող դասակարգերին, քաջալերում, առույգացնում էր, ինչպես ծովային թարմ քամին, որ արյունը մաքրում է, ավելի աշագ մղում երակներով։ Ուժն այդ հանում էր կարծրացած այն ժանդը, որն առաջացնում էր ժամանակակից ֆրանսիական կամազուրկ միտքը։ Չկա ավելի նողկալի սորկություն, քան Արևմուտքի սորկությունն է, որը, մխիթարություն գտնելով պատրանքներում, հանդուրժում է ամեն ինչ և կամ, ըմբոստանալու արիություն չունենալով, լուռ խռովվում է։ Ասյան ապա իրեն ավելի ազատ էր զգում դիկտատուրայի կոպիտ սրունքների տակ, այն դիկտատուրայի, որը թամբել էր ժողովուրդներին՝ նրանց դեպի հաղթանակ տանելու համար, քան կեղծ դեմոկրատիայի փարախում, որն իր հոտերին տալիս է արոտավայրի մի ողորմելի կտոր,— արածե՛ք կամ սովից սատկե՛ք, բայց չհամարձակվեք ցանկապատից այն կողմ գնալ կամ գործել, իսկ երբ հարկ լինի, դուք կօգտագործվեք պատերազմի կամ խաղաղության համար, խուզելու կամ սպանդանոցի համար։ Եթե Ասյային խոստանային անձամբ նրա և նրա մերձավորների համար ինչ-որ ողորմություն, ինչպես այդ անում են դեմոկրատիաները լրագրային ծախու գրչակների և դեպուտատների կամ

նրանց հաշվին ապրող «ընտրյալների» նկատմամբ, Ասյան կթքեր այդպիսի բարերարների երեսին։ Ողորմությունը նույնպես սարկության տեսակ է, և առավել գարշելի սարկության տեսակ — չէ՞ որ դրա դիմաց վճարում են։ Համենայն դեպս այդպիսի սարկության նրա Մարկը երբեք չի գնա, և ոչ ոք նրան այդ չի առաջարկի. հենց այդ պատճառով էլ Մարկը թանկ էր Ասյայի համար։ Բայց Մարկին ինչո՞ւ է սահմանափակվում լոկ սարկությունը մերժելով, երբ պետք է տապալել սարկության վրա հիմնված կարգը։ Իհարկե, դա անհնար է առանց ենթարկվելու մարտական կարգապահության, որը նույնպես սարկություն է ժամանակավոր, որ մարդ կամովին իր վրա է վերցնում զոհն արդարացնող վեհ նպատակի համար։

Ավելացնենք, որ Գրենել փողոցից զոհը Ասյային ամենևին այնքան մեծ չէր թվում։ Շղթան թուլացված էր, մանավանդ պատահական այցելուհու համար, որը սկզբից ուզում է իր շուրջը նայել։ Դիկտատուրան թեթև է, երբ այն հեռվից ես կշռում։ Առայժմ նա մեծ տեղ չէր գրավում Ասյայի խոհերում։ Ասյային միջոցները չէին հետաքրքրում. նա տեսնում էր միայն ջանքերը և վերջնական նպատակը։ Եվ մեկով, և մյուսով նա սքանչանում էր։ Բարձրանում է մի նոր աշխարհ՝ աղատ ու արձակ հարյուր վաթսուն միլիոն մարդկային էակների համար, որոնք սեփական կամքով կամ հարկադրաբար հավաքագրվել են նրա կառուցմանը։ Բշնամական հին աշխարհը, որ ընդունակ չէ ոչ հաղթահարել, ոչ ընդունել կատարվածը, իր բթամտության պատճառով փորձում էր խեղդել նրանց, պայշարելով ավերված շենքերի բոլոր մուտքերն ու ելքերը։ Բայց ռուսներն ընդունեցին մարտահրավերը և դաժան անհրաժեշտությունը դարձրին իրենց ստեղծագործական պոռթկման օրենքը։ Խղճուկ հյուղի ավերակների վրա բարձրացան ոգու տիտանական կառույցներ, ոգի, որ իրեն էր ենթարկում տարերքի կույր ուժը։ Կազմում էին առաջին ուրվագծերը մեծ պլանների, որոնք ծնում էին նոր ֆաունա՝ ժամանակակից մաստոդոնտներ. Դնեպրոստրոյը, Մագնիտոստրոյը, Տրակտորոստրոյի իրենց կնճիթներով ու ժանիքներով խրվում էին ջրի, օդի, հողի մեջ։ Եվ միևնույն ժամանակ աճում էր այն բանվորների թիվը, որոնք կոչված էին արածացնել այդ հրեշների նախիրները— գոմնային վառարանները, գործարանները, վիթխարի ամբարտակները։ Բոցավառ և դաժան ոգևորությունը այդ կոհորտաներին տանում էր մարտի, լարում էր նը-

բանց մկաններըը, պրպում էր հերոսության մրցության մեջ մանավ՝ հանուն մեծ խնդրի կատարման՝ անխորտակ հիմքի առնչման, որի վրա կբարձրանա— ինչպես բարձրանում էր օրըստօրե արդեն հիմա մի կարգ, որտեղ քոլորի վրա իշխում է մարդու աշխատանքը, աղատ և հավասար։ Ջափաղանց մեծ զոհ չկա նման սխրանքների համար։ Ներկայի ուզածդ չարիքը, ուզածդ անհաջողություններըը, և անձնական, և մերձավորների, աննշան ու չնչին էին թվում ապագա բարիքի համեմատությամբ, որի մասին երազել են, որը ցանկացել են և որը ստեղծվել է ամբողջ մարդկության լուսավոր ապագայի համար։ Իսկ նրանք, ովքեր Արևմուտքում դանդաղվում կամ ջայրանում են Սովետական Միության վրա այն բանի համար, որ այնտեղ վերացրել են աստվածներին, եկեղեցիները, էրոնը, ավելի լավ կլինեն նրանք՝ այդ մեռելները, իրենց մեռելներին թաղնին։ Բայալ դիրեկտաներ— նրանցից ի՞նչ կարելի է սպասել։ Դատարկ ակնարկներով չի կարելի տեսնել, որ այնտեղ՝ Աբևելքում, ծնվել է մի նոր աստված։

Պրոլետարական, մարքսիստական, մատերիալիստական աստծուն չհավատացող երիտասարդության, որը դաժան բերկրությամբ զոհաբերում է իրեն այն մարդկանց երջանկության և ընդհանուր բարօրության համար, ովքեր լինելու են, երբ իրենք արդեն չեն լինի, այո, հենց այդ երիտասարդության մուրճ ու մանգաղում ավելի շատ իսկական հավատ կա, քան ստախոս Արևմուտքի կեղծ բարեպաշտների և կեղծ ճգնավորների բոլոր եկեղեցական և ոչ-եկեղեցական սաղմոսներում։ Գործողությունից դուրս ամեն ինչ կեղծիք է և մի՛այն կեղծիք։ Գործողությունն է միայն, որ չի կեղծում։ Եվ միայն գործերը թող դատեն նրանց և մեր մասին։

Հանրագումարի բերելով Մարկի ամբողջ կյանքը, իր կրքոտության մեջ անարդարամիտ Ասյան այդ կյանքը չնջում էր մի խոսքով. ոչինչ։

Ասյան գիտեր, որ Մարկի անգործությունը հարկադրական է, և որ Մարկն ինքն էլ է տառապում, ինչպես քորոցի վրա խրած միջատ։ Բայց Ասյան անողոք էր դառնում, երբ տեսնում էր, որ մյուս միջատներն իրենց թևերը չխնայելով, պտկվում են քորոցից։ Թող նրանցից օրինակ վերցնի։ Եվ ինքը շրթունքները կհպի Մարկի վերքերին, ինչպես կցանկանար հպել այն մանիշակագույն սպիին, որը հատել էր Դիտո Ջանելիձեի այտը։

Նա Թրանսիա էր եկել կոմինտերնի գաղտնի հանձնարարությամբ, ոչ մի պաշտոնական պոստ չէր զբաղեցնում, բայց պաշտոնական անձինք նրանից վախենում էին։ Առևտրական ներկայացուցչության այցելուներին, ուր Ջանելիձեն գալիս էր որպես յուրային և առանց քաշվելու նստում այնտեղ, նա թվում էր լռակյաց, ոչ առանձնապես հաճելի, բայց և ոչ առանձնապես նշանակալից զրուցակից. նա ծխում էր ծխախոտը ծխախոտի ետևից, կարծես ամենևին զրույցով չհետաքրքրվելով, բայց առևտրական ներկայացուցչության ղեկավարը, նախքան որոշում ընդունելը, փնտրում էր նրա հայացքը։ Դիտոն խոշոր, հաղթանդամ տղամարդ էր, լայնսկր, բայց շարժվում էր ճարպկորեն և համարյա անաղմուկ։ Խոր կնճիռով ակոսված նեղ ճակատին ընկնում էին գզգզված, խիտ, կոշտ և շատ սև մազերը։ Հոնքերը թավ էին ու խավիղ։ Կկոցած աչքերի միջև ասես գոյություն ուներ աշխատանքի յուրատեսակ բաժանում. աջը վկայում էր խորամանկության մասին, իսկ ձախը՝ կայուն բնավորության։ Մեծ, արմատի մոտ լայն, մսեղ քիթ ուներ՝ խոշոր, բայց սեղմված ռունգերով։ Բեղերն ստեպխիտ էին, այտերը՝ թուխ և ձիգ։ Գիշատչորեն առաջ ցցված ծնոտ, զգուշավոր քմծիծաղ։ Ամբողջ կերպարանքում կոպտավուն հեգնանք էր, անողորմ զգոնություն։ Նա դեռ քառասուն տարեկան էլ չկար։

Ասյան չհապաղեց նրա վրա ուշադրություն դարձնել։ Իսկ Դիտոն, թվում էր, նրան չի նկատում։ Ծնոտելով և գնահատելով նրան իր երկակի հայացքով, նա ուշադրության չարժանացրեց այդ որսը։ Նա ավելի կարևոր որս ուներ։ Ասյան վրդովված էր, և անմիջապես հակակրանք զգաց։ Նա ցուցադրական կերպով չէր նայում Դիտոյին։ Սենյակում, որտեղ Ասյան նստում էր, աշխատակիցներն անցնելիս, զրույցի բռնվելով, կանգ էին առնում, և Ասյան, առանց աշխատանքից կտրվելու, սլավոններին հատուկ անմիջականությամբ երբեմն խոսակցությանն էր խառնվում։ Երկու թե երեք անգամ Դիտո Ջանելիձեն նրան ընդհատել էր որևէ ծաղրական և բավականին վիրավորական դիտողությամբ։ Ասյան կատաղում էր, բայց ցույց չէր տալիս, ձևացնելով, թե չի լսում։ Իսկ Դիտոն միայն ծիծաղում էր մտքում։

Մի անգամ, երբ սենյակում, բացի նրանցից, ոչ ոք չկար, Դիտոն նստեց Ասյայի սեղանի մոտ։ Գլուխը բարձրացնելով, Ասյան շատ մոտիկից տեսավ իր առջև Դիտոյի լայն դեմքը, ծակող հայացքը և շուրթերի անկյունում նրա քմծիծաղը։ Բայց Ջանե-

լիճեի հեգնանքում այս անգամ անբարյացակամություն չէր զգացվում։ Հիշաչար Ասյան հոնքերը սպառնալից կիտեց։ Դիտոն ծիծաղեց ուղղակի նրա երեսին։ Եվ ինչքան էլ Ասյան իրեն խիստ էր պահում, բայց արդեն չէր կարողանում զայրանալ նրա վրա։ Վախենալով, որ կծիծաղի, Ասյան իր համառ ճակատով գլուխը կախեց և շարունակեց ընդհատված աշխատանքը։ Բայց Ջանելիճեն, իր հսկայական թաթով ծածկեց էջը և ասաց.

— *Սպասիր, նախ մի քիչ զրուցենք։*

— *Իսկ եթե ես չեմ ցանկանում զրուցե՞լ։*

— *Ցանկանում ես։*

Ասյայի շունչը նույնիսկ կտրվեց այդպիսի լկտիությունից, և, հայացքով չափելով նրան, միանգամից կտրեց.

— *Ոչ։*

— *Դա նշանակում է այո,— շարունակեց նա, ամենևին չշփոթվելով։*

— *Այդ ի՞նչ լեզվով։*

— *Քո։*

Եվ, մինչև Ասյայի առարկելը, Դիտոն նրան մեկնեց ծխախոտատուփը.

— *Ծխե՞նք, ընկեր։*

Դիտոյի հայացքը, տոնը, «ընկեր» բառը խաղաղեցրին Ասյային։ Բայց դեռ վրդովված, նա վերցրեց ծխախոտը։

— *Ես ժամանակ չունեմ։ Իմ ձեռքին աշխատանք կա։*

— *Օ, մի տևսեք ինչքա՜ն է համարձակ։ Մեղ մոտ է իսկական քո աշխատելու տեղը։*

— *Ես ի՞նչ պետք է անեմ այնտեղ։ Բայց քեզ հայտնի՞ է, թե ես ով եմ։*

— *Հայտնի է։*

— *Ես Դենիկինի մոտ եմ եղել, սպիտակների հետ։*

— *Բայց հիմա նրանց հետ չես։*

— *Իսկ ի՞նչ գիտես։*

— *Գիտեմ։*

Այդ ինքնավստահությունը վրդովեց Ասյային։ Մի պահ նա նույնիսկ ափսոսեց, որ ինքը հակառակորդի լագերում չէ, այնպես էր ուզում այդ մարդու ամբարտավանությունը կոտրել։ Բայց Ասյան չէր կարող ինքն իրեն խաբել և ստիպված էր բավարարվել զայրագին հայացքով։ Իսկ Դիտոյի շրթունքներն անձայն ծիծաղից ցնցվում էին։ Ասյան մեքենաբար ծխախոտը վառեց և

սխեմեց կատաղությամբ ծամել կոթը։ Յամած ծայրը կծելով, Ասյան թքեց այն և մարտահրավերով ասաց.

— Իսկ ես վաղն ով եմ լինելու, նույնպե՞ս գիտես։

— Իհարկե։ Մեզ հետ ես լինելու։ Դու արդեն մեզ հետ ես։

Դիտոն այլևս չէր ծիծաղում։ Ասյան նույնպես սկսվեց։ Նա պարտված էր։ Մի քանի վայրկյան երկուսն էլ լուռ ծխում էին։ Ասյան նայում էր լուսամուտից։ Այո, դա պարզ է. նա կարող է միանալ միայն նրանց, նա ուրիշ գնալու տեղ չունի։ Միայն այնտեղ, որտեղ այդ ժողովուրդն է— իր ժողովուրդը, նրա պայքարը... Ասյան դա վաղուց գիտեր։ Բայց առաջին անգամ ուրիշից էր լսում... Նա փորձում էր դեռ ընդդիմանալ։ Կարծես ինքն իր հետ խոսելով, Ասյան արտասանեց.

— Ես իմ վրին լուծ չեմ դնի։ Ավելի լավ է սատկեմ, քան զոհաբերեմ իմ անկախությունը։ Ես չափազանց շատ եմ տառապել այդ անկախությունը պահպանելու համար։

— Եվ այդ պատճառով էլ ամուսնացար,— խոյթեց Դիտոն։

— Իմ ամուսինն էլ այնպիսին է, ինչպես ես։ Մենք նույն ձևով ենք մտածում։

— Եվ այդ պատճառո՞վ նա ամուսնացավ,— կրկնեց ծաղրաբանը։

Հարվածը խափանելու համար Ասյան խորամանկություն արեց։

— Երկուսով,— ասաց նա,— մենք ավելի ուժեղ ենք։

— Իսկ որքա՞ն ավելի կուժեղանաս, եթե քեզ հետ հարյուր վաթսուն միլիոն լինի։

Ասյան ինքն էլ էր այդպես մտածում։ Բայց իր անհատապաշտության մեջ վանում էր այդ միտքը։

— Ես հո չեմ կարող ամուսնանալ քո բոլոր հարյուր վաթսուն միլիոնի հետ։

— Իսկ ինչո՞ւ չէ,— ասաց Դիտոն։— Դու ամուր ես։

— Հետո ինչ, որ ամուր եմ, եթե ես չեմ ուզում։

— Կուզե՞ս։

Իր կամքին հակառակ Ասյան ենթարկվեց այդ տոնին։ Ստիպված էր շարունակել։ Նա ինքն էլ զարմացավ, լսելով, թե ինչպես բերնից թռավ.

— Այն, ինչ ես ուզում եմ, իմ գործն է, թանկագին ընկեր։ Եվ ավելի լավ կլինի, եթե դու զբաղվես նրանով, ինչ քեզ է վերաբերում։

— Հենց դու էլ վերաբերում ես։

Կղակը բռունցքներին հենած և ծուխը բաց թողնելով զրուցակցի երեսին, նրանք սկեռուն իրար էին նայում։ Վերջապես Ասյան ասաց.

— Դու բավական լկտիություն ունես։

— Եղածն ինձ հերիք է,— պատասխանեց Դիտոն։

— Ի՞նչ ես ուզում ինձանից։

— Այն, որ մեզ ծառայես։

— «Ծառայել» բառը իմ լեքսիկոնում գոյություն չունի։

— Ունի, դու պարզապես կարդալ չգիտես։

Ասյան պայթեց։ Ջախջախանց երկար է նա հանդուրժում այդ մարդու լկտի, ինքնավստահ տոնը։

— Բավակա՞ն է,— բռունցքով խփեց նա սեղանին։— Ո՞վ է վերջապես իմ տերը, դո՞ւք թե ես։

— Ոչ դու և ոչ էլ ես, օրենքը։

— Ի՞նչ օրենք։

— Բնության օրենքը։ Պայքարի օրենքը։ Կամ մեզ հետ։ Կամ մեր դեմ։ Բայց դու դեմ լինել չես կարող։

— Բայց չէ որ կարողացել էի։

— Ոչ, չէիր կարողացել։

— Մի կատաղեցրու ինձ։ Թե չէ ես կպատմեմ այն բոլորը, ինչ արել եմ...

— Կարիք չկա։ Ուզո՞ւմ ես, ես ինքս քեզ պատմեմ։

Եվ, թեքվելով դեպի Ասյան, Ջանելիձեն, առանց ծխախոտը բերանից հանելու, կխաձայն, ընդհատում, առանց որևէ հաջորդականության Ասյային թվեց մոտ տասը փորձիկ փաստեր, որոնք, ինչպես Ասյան կարծում էր, հայտնի են միայն իրեն կամ անհետ սուզվել են անցյալի գիրկը— այն մարդկանց հետ, ովքեր դրանց մասնակիցներն էին կամ ականատեսները։ Որոշ փաստեր վերաբերում էին դեռ Ուկրաինայի լայնարձակ տարածություններին, մյուսները նրա փարիզյան միայնակ ձեղնասենյակին։ Ասյան սոսկաց, մեջքը փշաքաղվեց, բայց նա տիրապետեց իրեն։

— Հերիք է։ Քեզ իրազեկողները հազը ձրի չեն ուտում։ Միայն մտքովդ չանցնի, թե ես կդայթակղվեմ այդ հաղոյվ։ Ես շան կյանք եմ քաշել, բայց յուզոտ ոսկորի հետևից չեմ ընկնի։ Նեհար եմ, նիհար էլ կմնամ։

— Նիհարները բոլորից լավն են։ Ես չեմ էլ ուզում, որ դու փոխվես։ Մնա այնպիսին, ինչպիսին կաս։ Բայց խիղախ՛ր հա-

բազատ մնալ ինքդ քեզ։ Քո ձևով աղնիվ եղիր և անկեղծ մինչև վերջ։ Դու նրանցից չես, ովքեր մշտապես հավասարակշռության են պահպանում «դեմի» և «թերի» միջև, ինչպես որոշ փարիզյան լարախաղացներ...— Հետո ավելացրեց,— ինչպես քո ամուսինը։

Ասյան խայթվածի նման տեղից վեր ցատկեց.

— Ես արգելում եմ քեզ նրա մասին խոսել։

Այդ րոպեին Ասյան նման էր մազերը ցցած կատվի, որն ահա ահա որ է կճանկի ձեր աչքերը։

— Իսկ ինչո՞ւ խոսեմ, երբ դու ինքդ ես նրա մասին այդպես մտածում։

— Դա ճի՛շտ չէ,— բացականչեց Ասյան։— Դու արժանի չես նույնիսկ նրա կոշկի քուղերն արձակելու։

— Այդ պատիվը ես թողնում եմ քեզ,— խայթեց Դիտոն։— Բայց վախենում եմ, որ նրա կոշկի քուղերը վատ կապած լինեն։

— Դու, կնշանակի, լրտեսում ես նաև իմ ննջարանո՞ւմ։

Դիտոն հանդարտեց ծխախոտի մնացուկը։ Սեղմելով Ասյայի ձեռքը ինչպես մամլակով, նա բարեհոգորեն, բայց լուրջ ասաց.

— Կատակ արինք, պատիկս, հերի՛ք է։ Հիմի արի նատենք, խոսենք։ Բոլորը, ինչ մեզ համար օգտակար կարող է լինել, մենք իրավունք ունենք (կամ համարում ենք, որ ունենք) իմանալու։ Մինչդեռ առանց ակնոցի էլ երևում է, որ դու և նա մի լծվածքի համար չեք ստեղծված... Ոչ, թող վերջացնեմ... Ես ոչ մի վատ բան չեմ ասում քո զեղաչքիս մասին։ Նա ունի կամ կարող է ունենալ ամեն տեսակի արժանիքներ։ Բայց նա իր արժանիքներն ունի, դու՝ քոնը։ Ահա հենց դրա համար էլ դու քացի ես տալիս։ Եվ դու իրավացի ես։

— Ոչ, իրավացի չեմ,— առարկեց Ասյան։— Նպատակը նա ինձնից վատ չի տեսնում։ Եվ չի վախենում դնալ դեպի այդ նպատակը։ Նրա սիրտն ավելի քաջ ու համարձակ է, քան իմը։ Բայց նրա միտքը կեղտոտված է Արևմուտքի գաղափարներով, այդ բեռը խճճվում է ոտքերի տակ և խանգարում է առաջ գնալ։ Ժամանակ է պետք՝ այդ բեռից ազատվելու համար։

— Իսկ մենք ժամանակ չունենք։ Թող վճռի։ Կամ դու վճռիր։ Նրան կամ մեզ մոտ բեր, կամ թող նրան։ Մեր ժամանակը երիտասարդ Համլետների համար չէ, որ գերեզմանոցում դատողություններ են անում. «լինե՞լ, թե չլինել»։ Ով չի ուզում լինել, նրան կթաղեն։ Դուրս բեր նրան փոսից կամ հրիր փոսը։ Բայց

Նախ ինքդ դուրս արի այդ փոսից, եվ քայլեր դնպի մեզ։ Դու նրան փոխարինող կդառնաս։

Ասյան արհամարհական հայացքով նրան ոտից գլուխ չափեց.

— Չլինի՞ քեզ։

— Ինձ կամ ուրիշի։ Բանն այդ չէ։ Ժառանգություն ինձ չի հրապուրում։ Ինձ ավելի կարևոր գործեր են սպասում։ Աեեենք, քեզ նույնպես։ Ձուր ժամանակ մի՛ վատնիր։

— Անասո՜ւն,— նետեց Ասյան, և, երեսը դարձնելով նրանից, վեր կացավ։

Դիտոն մնաց սեղանի մոտ նստած։

— Դա քեզ դուր չեկա՞վ։ Ինչ արած։ Ես ասում եմ այն, ինչ որ կա։ Քո բոլոր անձնական պատմություննները կոպեկ չարժեն այն մեծ պատմության համեմատությամբ, որը մենք պետք է գրենք։ Եթե մարդու փորը քաղցից մնշջին է կպել, այդ փորը պետք է կշտացնել։ Փող գոգռալուն վերջ տա։ Փորը դեռ միայն փոր է։ Իսկ մենք պետք է բավարարենք մարդկանց բոլոր պահանջները, և ոչ միայն մարմնականը,— միլիոնավոր էակներ ոչ միայն հացի և սիրո քաղց են զգում, այլև լույսի և ազատության...

Արդեն դռան շեմին կանգնած, Ասյան ասաց.

— Եվ դուք, դուք համարձակվո՞ւմ եք խոսել ազատության մասին։

Եվ նախքան դռան փակվելը լսեց.

— Այո, համարձակվում ենք։ Հենց մենք է, որ համարձակվում ենք։ Իսկ նրանց, ովքեր ընդունակ չեն այդ ազատությանը հասնել, մենք ուժով ենք քարշ տալիս։ Քեզ էլ քարշ կտանք։

Ասյան դուռը շրխկացրեց.

— Երբե՛ք։

Հենց նույն երեկոյան նա վիճեց Մարկի հետ, որն ապացուցում էր, թե ամեն մի բռնություն ուրիշի հոգու նկատմամբ,— հանցագործություն է։ Մարկը հենց նոր էր իր համար հայտնագործել Գանդիի ուսմունքը չընդդիմադրելու վերաբերյալ։ Ինքնուրույն մտածողի նկատմամբ ավելի խորաթափանց իր քննադատական վերաբերմունքով, քան Մարկն իր խոնարհվելով նրա առաջ, Ասյան ասաց.

— Մի՞թե դու չես հասկանում, որ դա նույնպես բռնություն է, միայն հակառակ կողմից։

Մարկը իրենն էր պնդում, իսկ Ասյան՝ իրենը։

— Ամեն ինչ բռնություն է,— պնդում էր Ասյան,— նույնիսկ սերը։ Հատկապես սերը։ Նա մարդուն ստրուկ է դարձնում։ Ստիպում է դավաճանել իր էությանը։ Նվաստացնում է։

— Եթե դու այդպես ես նայում դրան,— ասաց խորը խոցված Մարկը,— ազատի՛ր քեզ։

— Շնորհակալ եմ թույլտվության համար,— դառը քմծիծաղով ասաց Ասյան։

Աշխատանքն առևտրական ներկայացուցչությունում Ասյան չթողեց, բայց երբվեց այլևս խոսակցությունների չբռնվել բուի Ջանելիձեի հետ։ Նա ժամանակավորապես բացակա էր, իսկ երբ մի երկու շաբաթից նորից հայտնվեց, ապա Ասյայի վրա ոչ մի ուշադրություն չդարձրեց։ Ասյան ներքնապես վրդովված էր։ Դիտոյի բացակայության ժամանակ Ասյան նրա մասին տեղեկություններ էր հավաքել։ Նրա անձնավորությունը դրավում էր ոչ միայն Ասյայի ուշադրությունը։ Նրանով հիանում էին և վախենում էին նրանից։ Նրա մասին խոսում էին անբարյացակամությամբ և հարգանքով։ Այն ամենում, ինչ պատմում էին Ջանելիձեի կյանքի մասին, լեգենդը միահյուսվում էր ճշմարտության հետ, բայց ինչպես առածն է ասում,— առանց կրակի ծուխ չի լինում։ Բաքվեցի մսագործի տղան՝ Ջանելիձեն, դեռ բոլորովին պատանի, մասնակցել է պետական և մասնավոր գանձարանի վրա զինված հարձակումներին և բռնի «էքսպրոպրիացիաների», որոնք անցկացվում էին Կովկասի երիտասարդ հեղափոխական կուսակցության կողմից 1905 թվականի նախօրեին։ Հինգ թե վեց անգամ նրան բանտ էին նստեցրել, աքսորել էին Սիբիր, բայց նա փախել էր և նորից վերադարձել ընդհատակյա աշխատանքի։ Հոկտեմբերյան ապստամբության օրերին նրան՝ Ռազմա-հեղափոխական խորհրդի անդամին, որն ավելի շատ հակված էր գործել, քան ճառեր արտասանել,— ուղարկում էին բոլոր այն տեղերը, որտեղ պետք էր բորբոքել հրդեհի բոցերը։ Ինչպիսի վտանգավոր կամ անշնորհակալ առաջադրանք էլ նրան հանձնարարեին, նա երբեք չէր հրաժարվում։ Նա չէր ձգտում փառամոլ և «նշանավոր» կուսակցական գործիչներից համեղ պատառներ պոկել, գերադասում էր կրծելու ոսկորը — թշշ-

նամուն։ (Իսկ թշնամին այն ամենն էր, ինչը որ վտանգ էր սպառնում գործին. և թշնամուն ոչնչացնելու համար բոլոր միջոցները լավ են։ Այն մարդու արարքից, որը կյանքը վտանգի է ենթարկում հանուն գործի, չի կարող վատ հոտ գալ)։ Դա այն անանուն և անհայտ մարդկանցից մեկն էր, ով լռելյայն հյուսատրաստել էր աշխարհը դիտարկման անտեսանելի սարդոստայնով, ձանձեր խլելով մյուս սպրիչ՝ Ընդհանրական կայսրության Ինֆելիջենս սերվիսից։ Այդ մարդու ուժեղ օրգանիզմը սովոր էր բանալարվել քշովի Դյուռոն ուտում էր ոտի վրա, կարող էր քնել համարյա կանգնած։ Նա ժամանակ չուներ սրտեր նվաճողի դեր խաղալու։ Բայց դրա փոխարեն, երբ նրա վարժված աչքը հանդիպում էր հոանդի, որը կարելի էր նվաճել, բոցի, որը հարկավոր էր բորբոքել և ստիպել նրան կամավոր կամ բռնի ծառայել ընդհանուր գործին, նա երկաթյա մատիտով նշան էր անում, ցեխաթաղ սեփականություն։ Այդպես նա նշան արեց նաև Ասյայի վրա։

Դուցե նա ոչինչ չէր հասկանում Ասյայի կանացի խառնվածքից, ցանկությունները ու տրամադրությունները, քանի որ կանացի էությունը, «das ewing weibliche» (հավերժ կանացին), նրան բնավ չէին հետաքրքրում։ Բայց դրա փոխարեն նա Ասյայից լավ էր գլուխ հանում «ewig menschliche»-ից (հավերժ մարդկայինից), հզոր բնազդներից, որոնք, չրչանցելով սեռի ոլորտը, բարձրանում են մարդկային անհագ էության ընդերքներից, որտեղ օձերի նման վխտում են կրքերը, բացելով իրենց հրաշունչ երախը։ Այդ երախը իսկապես էլ հուր է ժայթքում, քանի որ ամեն մի էներգանի էակի համար, տղամարդ լինի թե կին, բնորոշ է այրվել և լափել կրակի պես, աճել, արարել, ավերել, գործել։ Եվ այդ այրման էությունը հասկանալու համար հարկ չկար դիպչել Ասյային։

Ինչքան էլ որ Ասյան զսպում էր իրեն, նա ստիպված եղավ անել առաջին քայլը։ Մի անգամ, երբ Ջանելիձեն, առանց Ասյային նայելու գնում էր դեպի ելքը, Ասյան տեղից վեր կացավ (նրա բոլոր թոքերը վաղուց արդեն հավաքված էին)։

— Դուցե միասի՞ն գնանք, ընկեր,— առաջարկում է Ասյան։ Նրանք դուրս են գալիս։ Ջանելիձեն գնում հայացքով նայում է անցորդներին և համարյա ուշադրություն չի դարձնում իր ուղեկցուհու վրա. Ասյան հազիվ էր նրա ետևից հասնում։ Բայց Ասյայի որոշ հարցեր արթնացնում են նրա ուշադրությունը։ Ջա-

նկրկնեն Եսայում է Ասլային. ձուկը կոցեց խայծը։ Ասյան հուզմունքով ու սարսափով նրան հարցուփորձ է անում նոր Ուսասատանի առաջ կանգնած խնդիրների մասին, փորձում է հասկանալ, թե ինչ ելք կարող է ունենալ սկսված ճակատամարտը։ Ասլայի հետաքրքրությունը շննծու չէ, Ասյան խնդասես էլ համակված է այդ մտքերով։ Հիմա նա կարող է խոսել Ջանելիձեն առանց փոխում է, որպեսզի կողմնակի մարդիկ լսեն, նա թևանցուկ է անում Ասլային և խոնարհվում, մոտենում է նրա ականջին։ Ասլայի մայերի վերջը խոտոտա էր տալիս նրա շրթունքները, խոսքերը սաք շնչի հետ թափանցում են Ասլայի մեջ։ Սասակի Թրջվելուց հետո միայն նրանք նկատում են, որ ամ-ձրև է գալիս։ Ջրույցը շարունակում են անբարեհաս մի սրճարանում, որ ամ-պամբարշտ ։ ոճախում են մանր առևտրականներն ու ծառայողները։ Այսօր Ջանելիձեն ոչ մի տեղ չի շտապում. նա զրծնելը Ջրանսիայում վերջացրել է և վաղը երեկոյան մեկնում է։ Նստելով վատ լուսավորված, գրեթե դատարկ սրահի խորքում դրված սեղանի մոտ, թեյի փոխարեն խմելով ինչ-որ պղտոր ջուր, նրանք զրուցում են կիսաձայն, ինչպես կարոշտնում են զրուցել միայն սլավոններն ու մեկ էլ իտալացիները. անընդմեջ ու արագ-արագ, ճակատներն համարյա իրար կպցրած։ Եվ որքան ավելի շատ է Ասյան հարցնում, այնքան ավելի շատ բան է ուզում իմանալ։ Շուտով Ասյան դադարում է հարցեր տալուց, զերադասելով լսել Ջանելիձեի խոսքը,,որն ոգևորում է Ասլայի կրքոտ ուշադրությունը զեպի իր պատմությունը, հոսում է հզոր հեղեղի նման։ Նա նկարագրում է Սովետական Միության վեհ պայքարը արտաքին և ներքին թշնամիների հորդաների դեմ։ Երբեմն արևէ զրվագում երևում է նա ինքը, բայց իր մասին Ջանելիձեն խոսում է ինչպես կողմնակի մարդու մասին կամ, ավելի լավ է ասել, հսկայական հազարազլուխ էակի անհամար օրգաններից մեկի մասին։ Նրա բոլոր պատմությունների կենտրոնական կերպարը միտք է հղացնում մրջնանոցի մասին, բյուրավոր էակների մասին, և Ասյան, որը միշտ բնազդային զգվանք էր զղում զեպի բյուրավորը, հանկարծ, ինքն էլ չիմանալով ինչպես, լցվում է այն սիրտնեան մրջյունի հիացմունքով, որը մասնակցում է անթիվ-անհամարների այս կյանքին։ Ցլխովին սուղելով ծխացող, նավթի պես յուղոտ հոսանքի մեջ, Ասյան կորցնում է իր «ես»-ը։ Ներքին բողոքի ուժով Ասյան դուրս է լողում զեպի մակերես, բայց նախազգում է, որ դա լոկ մի ակնթարթ է տևե-

լու, Ջանելիձեի երկաթյա տրամաբանությունը ուժեղ ձեռքի նրման Ասլային քաշում է խորքը։ Նրա բոլոր պատկերացումները երերում են, բոլոր արժեքները վերագնահատում են, հենց որ աշխատական չափումից անցնում են կոլեկտիվ չափման։ Ճիշտ է, հետո, երբ Ասլան մենակ է մնում, սարսափում է. հոսանքի խորությունը քիչ էր մնում ներս ծծի նրան— այդպես Ասլային թվում է, երբ նա մտաբերում է իրենց խոսակցությունը։ Բայց սարսափն այդ լի է ակնածանքով, գիտակցված չէ։ Ասլան իր զգացմունքների գտաավորը չէ։ Ոգելից խմիչքից մշուշվում է նրա գիտակցությունը։ Ջանելիձեն կոփված է։ Հարբածության մեջ նա պահպանում է մտքի պայծառությունը։ Գուցե, Ասլային այսօր նորից է հոգնեցնում մարդկային հորձանուտը, որը տարիներ առաջ պտույտի մեջ էր առել նրան և քարշ տվել փախուստի և նահանջի բոլոր սարսափների միջով։ Բայց հիմա դա միայն հիշողություն էր։ Այս անգամ նա լաստի վրա է, ղեկակալի կողքին, և ոտքերի տակ, տախտակամածի ճեղքերից, նա տեսնում է, թե ինչպես է հոսում ջուրը։ Նա աչքերը փակում է, հենարան է փնտրում, նրա գլուխը պտտվում է...

Արդեն երեկոյան ժամը իննին մոտ էր, երբ Ասլան, վերջապես, ուշքի եկավ, տեսավ, որ դեռ նստած է սրճարանի սեղանի մոտ, և հիշեց ամենը։ Նա ցնցվեց և, շտապ հրաժեշտ տալով Ջանելիձեին, իրեն գցեց փողոց։ Համարյա ամբողջ ճանապարհը մինչև տուն Ասլան վազեց։ Նա պատկերացնում էր, թե ինչ դեմք կընդունի Մարկը, և խոստովանում էր, որ նրան մեղադրել, թերևս, չի կարող։ Կարելի է պատկերացնել, թե այդ խեղճը կարգ ու կանոնի նկատմամբ ունեցած իր ֆրանսիական սովորությամբ, ինչպես կզդա իրեն։ Ասլան պատրաստ էր ներողություն խնդրել, թեև միշտ, երբ նա ստիպված էր լինում հաշիվ տալ իր արարքների համար, խոսքերը ձկան փշի նման խրվում մնում էին կոկորդում։ Ասլան թաքցնելու ոչինչ չունի, նա միշտ էլ ինքն է ամեն ինչ խոստովանում, առանց բան թաքցնելուց միայն թե թող իրեն հարցուփորձ չանեն...

Իսկ Մարկն, իհարկե, գլխի չի ընկնի լռել... Ոչ, էհ, թող այդպես լինի. այս անգամ Ասլան մի կերպ կուլ կտա փուշը, նա համաձայն է ընդունել իր մեղքը, որքան էլ դա տհաճ լինի։ Ափսոս, բայց Մարկն ինքն ազատեց նրան այդ տհաճությունից։ Տեղին կլիներ, որ արդեն Մարկը ներողություն խնդրեր։ Սպասելուց տանջված— ինչ ասես որ նրա մտքով չանցավ կնոջ բացակայու-

թյան ժամանակ, ինչ զարհուրելի բաներ ասես, որ նրա աչքին չերևացին։ Մարկը Ասյային դիմավորեց դատավորի ահեղ տեսքով։ Ասյայի խոստովանության արամադրությունը իսկույն ևեթ ցնդեց, հանգիստ ու խաղաղ բացատրվելու ամեն ցանկություն կորավ։ Ոչ մի խոսք չասելով, Ասյան գնաց ննջարան, փոխեց բրշված զուլպաներն ու կոշիկները և սեզանատուն վերադարձավ, որպեսզի իսկույն ընթրիք մատուցի։ Մարկը չարագուշակ տեսքով այս ու այն կողմ էր գնում, նրա կոկորդը չորացել էր, չէր համբերում, թե երբ է հարցաքննությունն սկսելու։ Տան գործերով իրար անցած, Ասյան հետևում էր Մարկին։ Ուսերը թոթվի՞, ժպտա՞։ Վերջապես Մարկը քննիչի տոնով հարցրեց.

— Որտե՞ղ էիր։

Ասյան չոր պատասխանեց, որ աշխատանքից հետո նա խոսակցություն ուներ, որի պատճառով և ուշացել է։

— Ո՞ւմ հետ։

— Մինենույն է, դու այդ մարդուն չես ճանաչում։

Ասյան ինքն էլ դժգոհ մնաց իր պատասխանից և աչքերը բարձրացրեց, պատրաստվելով ժպտալ, իսկ երբ տեսավ իր տղայի տառապալից դեմքը, մոտեցավ նրան համբույրի հաղիվ հպվելով, Մարկը մոլեգնած նրան ետ հրեց.

— Դու զզվելի ես։ Ամբողջովին ներծծվեցիր ես ծխախոտի ծխով,— մազերդ, շորերդ։ Որտե՞ղ էիր քարշ տալիս։

— Սրճարանում էի նստած։ Ըստ երևույթին այնտեղ շատ էին ծխել։ Բայց դու կարող էիր ավելի քաղաքավարի լինել,— նեղացած, թեև որոշ չափով ընդունելով Մարկի իրավացիությունը, պատասխանում էր Ասյան։

— Սրճարանում,— կրկնեց Մարկը։— Ամբողջ չորս ժամ։

Ասյան հասկացավ, որ Մարկը իրեն չի հավատում։

— Ինչ հիմար բաներ ես մտածում...

Եվ նա նորից քայլ արեց դեպի Մարկը։ Բայց Մարկը, մի տեսակ պոռթկուն, ներվայնացած, լարի պես ձգված, խանդի հանկարծական բռնկումով, զզվանքով ետ ցատկեց նրանից և բղավեց.

— Չկպնե՛ս ինձ։

— Դու գժվել ես։

Ասյան սեզան նստեց և սկսեց ուտել։ Մարկը գնաց մյուս սենյակը և չէր վերադառնում։ Ասյան ձայն տվեց.

— Մա՛րկ։

Մարկը չէր պատասխանում։ Ասյան ընթրեց։ Մտավ ամուսնու մոտ։ Նա բերանքսիվայր պառկած էր բազմոցին և նույնիսկ չշարժվեց էլ... Իսկակա՞ն երեխա է...

— Մի լսիր, թե ինչ եմ ասում, Մարկ,— ասաց Ասյան խղճահարվելով։

— Ինչի՞ համար։ Միևնույն է խաբելու ես,— պատասխանեց Մարկը սառը տոնով։

Ասյան բռնկվեց։ Խղճահարությունն իսկույն չքացավ։

— Դու ինչպե՞ս ես համարձակվում,— խոտորին ասաց Ասյանը։

Մարկը ոչինչ չպատասխանեց։

— Հիմար,— արհամարհանքով ասաց Ասյան՝ ատամները սեղմած։

*Հետո զայրացած նետեց. «Կարող ես հավատալ կամ չհավատալ։ Դա քո գործն է»։ Եվ գնաց ննջարան՝ անկողինը պատրաստելու։ Մարկը մնաց բազմոցին, մյուս սենյակում։ Բայց գիշերը Ասյան լսում էր, թե նա ինչպես է սենյակում ետ ու առաջ քայլում։ Ասյան շուռումուռ էր գալիս անկողնում և կատաղում։ Ջանելիձեի հետ ունեցած խոսակցության ժամանակ ոչ նա, ոչ ինքը՝ Ասյան, ոչ մի այնպիսի զգացում չունեցան, որ նման լիներ ֆիզիկական հակումի, նույնիսկ նման ոչ մի բանի մասին նրանք չէին մտածում։ Իսկ այս ապուշ Մարկը մտածում է նրանց երկուսի փոխարեն, միայն այդ մասին է մտածում և իրեն էլ ստիպում է մտածել։ Արժե՞ր արդյոք սրան խնայել... Այդ ժամանակ սատանան փսփսաց նրա ականջին Մելյոնի օձաձկան առածը, որին, ինչպես հայտնի է, «մտադիր չեն քերթելու, իսկ նա արդեն ծվծվում է ու գալարվում...»։ Ծվծվա, աղավնյակս։ Ժամանակ տուր, ծվծվոցը դու դեռ հետո՜ կտեսնես... Բայց դա դատարկ սպառնալիք էր։ Ասյան ամենևին էլ նրան քերթելու մտադրություն չուներ։ Խեղճ տղայի մաշկը այնքան նուրբ է։ Եվ անմիջապես ուրիշ մաշկի հետ համեմատելու ցանկություն ունեցավ— ամրակազմ գայլի կոպիտ, կոշտացած մաշկի հետ։ Ասյայի մեջքով թեթև մի սարսուռ անցավ։ Նա ետ հրեց գայլին, բայց դայլն այդտեղ էր։ Մթության մեջ Ասյան զգում էր իր դեմքին նրա տաք շունչը։ Ասյան զայրացած շրջվեց մյուս կողքին։ Բայց գայլը չէր գնում։ Հիմա նրա շունչը այրում էր ծոծրակը... Այդ հիմար Մարկի պատճառով ինքը հիմա մտածում ո՜ւ համեմատում է... Նա մտաբերում էր այսօրվա ամբողջ խոսակցու-

թյունը, ծանր մի հեղեղ, որն այնքան կերպարներ ու մոքեր էր բերում, և նրա առաջ հառնում էր առնական, նախնադարյան, դեռ կեղտից չմաքրված աշխարհը, նոր աշխարհը, որն, այնուամենայնիվ, իր մաշկի մեջ պահպանում էր հարազատ հողի և անցյալի ծանոթ, սուր հոտը։ Ասյան այդ հոտը ներս էր քաշում ղզվանքով, բայց չէր կարողանում կտրվել նրանից։ Ասյայի մարմնի ամեն մի ծակոտին, թվում էր, ներծծված է այդ հոտով։ Կարծես տենդի մեջ, նա անկողնուց դուրս թռավ և ոտքից գլուխ իրեն լվաց, մաքրեց։ Հետո նորից պառկեց։ Բայց հենց որ սավաններին կպավ, բոլորը նորից սկսվեց...

Լավում էր, թե կողքի սենյակում ինչպես Մարկի տակ ճռճռացին զսպանակները։ Ասյան կրկին շուռ ու մուռ եկավ անկողնում... «Հիմար։ Այ քեզ հիմար...»։ Նա Մարկին դրեց կշեռքի մի նժարին, իսկ երկրորդ նժարին դրեց այն մյուսին։ Չէ՞ որ Մարկն այնքան էլ շատ չի քաշում իր անմիտ խանդով, մեծամտությամբ, բռնակալությամբ, մոքերով, որոնք բոլորը մինչև վերջ ուղղված են միայն դեպի իր եսը, եսը, եսը, եսը... «Դու պատկանում ես ինձ, դու իմն ես...— «Պատկանում եմ քե՞զ։ Ես ոչ ոքի չեմ պատկանում։ Իսկ եթե տրվելու լինեմ ամբողջովին, առանց մնացորդի, ապա միայն հանուն ինչ-որ ավելի մեծ բանի, քան դու ես կամ նա. դա կարելի է անել հանուն այն մեծ ուժի, որը ոգեշնչում և շարժման մեջ է դնում ամբողջ աշխարհը... Միայն այնտեղ ես նորից կգտնեմ իմ ուղին և իմ հունը։ Այնտեղ կգտնեմ ինձ...»։ Եվ Ասյային հանկարծ թվաց, որ նա, ով կանգնած էր իր թիկունքում, գրկեց իր ազդրերը։ Նա ասես ճզմվեց ջաղացքարի տակ, կոկորդից ճիչ էր դուրս պրծնում... Ասյան վառեց լամպը և նստեց, նրա ատինքներն ուռճացան, նա շնչում էր ծանր ու հաճախակի...

Ասյան անկողնուց ելավ, առանց հագնվելու նստեց բազկաթոռին և միայն այդ ժամանակ մի կերպ տիրապետեց իրեն։ Նորից, բայց արդեն սառնարյուն, նա բոլորը ծանրութեթև արեց։ Նա հույս ուներ ճանաչել իրեն հանգիստ չտվող այդ մարդուն, հասկանալ նրան։ Քանդելով պատուտակ առ պատուտակ, նա փորձում էր որոշել, թե ինչ կա նրա մեջ զուտ իրենից և ինչ՝ միլիոնների այն մեծ, խորհրդավոր ուժից, որը շարժման մեջ է դնում նրանց, ինչպես բանող վիթխարի մեքենայի մի մաս։ Ասյան հավատացնում էր իրեն, որ մեքենան ամեն ինչ է, իսկ պատուտակը՝ ոչինչ։ Միևնույն է, սա է թե ուրիշը— ով ասես կարող է կատա-

րել այդ նույն խնդիրը... Եվ այդտեղ Ասյան հիշեց նրա խոսքերը. «Ես չլինեմ, մի ուրիշը կլինի...»։ Ասյան մոլեգնած կզակը վեր բարձրացրեց։ «Համենայն դեպս դու չես լինի...»։ Ասյան սառը և անաչառ զննում էր նրան, կարծես նա այստեղ էր, իր առջև։ Շոշափեց զարկերակը։ Ոչ, Ասյան չի խաբում իրեն։ Ոչ մի երակ չէր զարկում ավելի ուժեղ կամ ավելի հաճախակի։ Նրա սրտում ցանկություն չկար։ Կապրի՞ արդյոք այդ մարդը թե կմեռնի— ինձ ինչ...

Ասյան խաղաղվեց, նրա շնչառությունը դարձավ հավասար, կրակվող գլուխը սառեց։ Նա իսկույն քնեց և մեռածի պես քնած մնաց մինչև առավոտ։

Արթնանալուց հետո Ասյան երկար ժամանակ պառկել էր անկողնում և մտածում էր Մարկի հետ տեղի ունեցած անհեթեթ ընդհարումի մասին։ Նրանք երկուսն էլ մեղավոր էին։ Արդեն մի քանի ամիս էր, ինչ նրանց հարաբերությունները ավելի ու ավելի լարված էին դառնում, ու թեև ամեն մեկն ընդունում էր իր մեղքը, ոչ մեկը, ոչ մյուսը որևէ բան փոխելու խելամտություն կամ ուժ չունեցավ։ Մարկը կատաղության նոպաներ էր ունենում, որոնք ցնցում էին նրա անհավասարակշիռ բնությունը, ինչպես ներվային փոթորիկներ։ Դրանից հետո նա իրեն բոլորովին չարդված էր զգում, կրքի անզուսպ վատնումից հետո վրա էր հասնում ուժերի անկում, բայց հոգնածությունը, նույն չափով ինչպես և կիրքը, նրան դարձնում էին կատաղության զոհը։ Ասյան համառ լռությունից հետո հանկարծ սկսում էր ճչալ, նա խանդում էր, առանց որևէ պատճառի նեղանում էր, նրան հետապընդում էին հիվանդագին երևակայություններ, որ սովորաբար համընկնում էին նրա ֆիզիոլոգիական վիճակի հետ։ Երբեմն կարճատև մակընթացություններ ու տեղատվություններ էին լինում որևէ անզգույշ խոսքի կամ Մարկի անհաջող շարժման պատճառով, որոնք սխալ՝ իմաստով էր մեկնաբանում Ասյայի հիվանդ երևակայությունը։ Դա անխուսափելիորեն հանգեցնում էր դաժան կռիվների, նրանք երկուսն էլ կորցնում էին իրենց տիրապետելու ամեն մի ընդունակություն, հետո գիտակցության պայծառությունը նորից վերադառնում էր, իսկ դրա հետ մեկտեղ լինում էին նաև ուշացած ափսոսանքներ, բայց շատ հազվադեպ՝ երկուսի մոտ միաժամանակ։ Սակայն իսկական սերը խուժում էր ամեն ինչի մեջ, և չէր լքում Մարկին ու Ասյային նույնիսկ վիրավորանքների ժամանակ, որոնք գործում էին ինչպես ապ-

տակ,— սերն այդտեղ էր, բայց ստորացված, վիրավորված, նա կուչ էր գալիս մնում սրտի խորքում...

Ասյան հիմա գիտակցում էր, որ եթե երեկ Մարկը համբերությունից դուրս եկավ, ապա դրանում մասամբ ինքն էլ է մեղավոր։ Փոխանակ հանգստացնի ամուսնու բավական հիմնավորված երկյուղները, որը վախենում էր, թե չլինի հանկարծ Ռուսաստանի այդ օտար և իրեն անմատչելի հոգին խլի իր կնոջը, Ասյան ինչ-որ չար խելառությունից բորբոքում էր նրա կասկածները։ Նա մինչև ուշ երեկո մնում էր իր ծառայության վայրում և առհասարակ ժամանակի մեծ մասը անց էր կացնում տնից դուրս։ Առաջ Ասյան աշխատանքային ընկերներին, որոնց հետ նա ծանոթացել էր առևտրական ներկայացուցչությունում, հրավիրում էր իրենց տուն, բայց նրանց մտերմավարի տոնը և անվերջանալի շաղակրատանքները անհասկանալի լեզվով Մարկի մեջ առաջացրին խուլ դժգոհություն։

Մի անգամ նա Ասիայի հետ կռվի տեսարան սարքեց և պայրույթի պահին պահանջեց, որ նա տանը հյուրեր չընդունի (ճիշտ է, Մարկը հենց նույն րոպեին զղջաց, հասկանալով, որ չափն անցկացրեց)։ Դա հանգեցրեց միայն այն բանին, որ Ասյան իր ծանոթների հետ սկսեց հանդիպել տանից դուրս։ Կասկածանքների մի ավելորդ առիթ։ Ասյան հասկանում էր, որ ինքը Մարկից ավելի խելացի չի վարվում, սնունդ տալով նրա խանդին սոսկ այն բանի համար, որպեսզի ամուսնուն զսպի և ապացուցի իր անկախությունը։ Նրանք ամբողջ թափով մոտենում էին ազետի։ Այդ կանխատեսելու համար Ասյան բավական փորձառու էր։ Երկուսն էլ խելագարվել էին... Կանգ առ, կանգ առ... Այդ ո՞ւր եք գնում...

Ասյան տեղից ելավ՝ ամեն ինչ կարգավորելու վճռականությամբ լցված։

Եթե Մարկը չար ու խենթ երեխա է, Ասյայի պարտքն է նրան խելք սովորեցնել մոր նման։ Մարկն Ասյայի սրտում ավելի շուտ երեխայի տեղ էր գրավում, քան ամուսնու։ Եվ նրա չվատնված սիրո ճնշող մասը հենց երեխային էր հասնում։ Բայց երբ Ասյան նայեց սենյակը, որտեղ Մարկն էր գիշերում, պարզվեց, որ նա այնտեղ չէ։ Նա գնացել էր, նույնիսկ առանց մի երկտող թողնելու։ Ասյան կատաղեց, և նրա բարի մտադրությունները անմիջապես ծխի նման ցրվեցին։ Այնուամենայնիվ նա որոշեց սպասել

Մարկին (գուցե, միայն այն պատճառով, որ ընդդծի նրա մեղքը)։

Ասյան գործի չգնաց։ Ու թեև բաց էր թողնում Ջանելիձեին՝ նրա մեկնելուց առաջ տեսնելու վերջին հնարավորությունը, ձևացնում էր, թե իր համար դա ոչ մի նշանակություն չունի։ Իսկ գուցե, հենց այդ հանգամանքն էր, որ նրան դրդել էր տանը մնալ, որպեսզի ինքն իրեն ապացուցի, թե Ջանելիձեի նկատմամբ որքան է անտարբեր։ Ի՞նչ գործ ունի նրա հետ... Նա սկսեց հավաքել ու կարգի բերել բնակարանը, որը վերջին ժամանակներս խիստ բարձիթողի վիճակում էր։ Նա մշտապես վազքի մեջ էր, երբեք ազատ ժամանակ չէր ունենում, և օրըստօրե փոշին ու թափթփվածությունը կուտակվում ու կուտակվում էին։ Սենյակներն հավաքելու ամենաթունդ ժամանակ Աննետան եկավ Վանյային տանելու (երեխան ամբողջ օրը նրա մոտ էր լինում, իսկ երեկոյան նորից ետ էր բերում)։ Օգտվելով այն պատրվակից, որ բնակարանում ամեն ինչ տակնուվրա էր արված և, որ նա չի ուզում Աննետային ցույց տալ թափթփվածությունը, Ասյան նրան ներս չհրավիրեց, այլ դուռը մի փոքր բացելով, Վանյային դուրս թողեց դեպի սանդղահարթակը։ Միջանցքի կիսախավարում Աննետան մի ակնթարթ տեսավ հարսի չոքած, հատակին խոնարհված կերպարանքը. գզգզված, այտերի վրա կախված մազերի փնջերով, որ մկան պոչերի էին նման, Ասյան, խիստ կռացած, մոլեգնաբար պռտում էր հատակը։ Մարկը չէր վերադարձել, և Ասյան իր զայրույթը ոչ մի մեղք չունեցող պարկետի վրա էր թափում։

Մարկը չվերադարձավ նաև նախաճաշի ժամանակ։ Ասյան սպասում էր նրան։ Բայց նա այդպես էլ չեկավ։

«Դեռ խռովո՞ւմ էլ է, ապո՞ւշ... Դե, լա՞վ, կտեսնենք»։

Համբերությունը կորցրած, Ասյան խեղդվելով ուտում էր։ Հետո ետ հրեց ափսեն։ Հագնվեց և ուշադիր զննեց իրեն հայելու մեջ։ Ցույց տվեց շնիկի ատամների նման սուր ատամները։ Այ թե կկծեր։ Հիմա կարելի է գնալ... Գնա՞լ։ Ինչի՞ համար։ Ո՞ւր։ Ո՞ւմ մոտ... Այդ «ում մոտը» նրան հանկարծակիի բերեց։ Ասյան ցնցվեց։ Նորից նստեց, հագնված, կարծես այցելության էր եկել, սեղանից մի ժուռնալ վերցրեց և փորձեց կարդալ։ Գրողի ծո՞ցը թող գնա, գրողի ծոցը, գրողի ծո՞ցը... Ժուռնալը թռավ մի անկյուն... Նա կրունկով կտկտացնում էր պարկետը... Ժամացույցը խփեց երեքը։

«Հերիք է»։

Ասյան տանից դուրս եկավ։ Ոչ մի որոշակի նպատակ չուներ, նա որոշեց մտնել հանրախանութ, որտեղ հենց նոր սպիտակեղենի վաճառք էին հայտարարել։ Բայց շարժվեց հակառակ ուղղությամբ։ Եվ այդ նկատեց այն ժամանակ, երբ չափազանց հեռացել էր՝ նորից ետ դառնալու համար։

«Դե լա՛վ։ Մի ուրիշ անգամ կգնամ։ Բայց ի՞նչ անեմ այսօր...

Մինչև առևտրական ներկայացուցչության ուրբով տասը րոպեի ճանապարհ էր։

«Շատ ուշ է։ Չեմ գնա...»։

Եվ այնուամենայնիվ գնաց։ Իհարկե, ինքը չի մտնի այնտեղ... Եվ հարկ էլ չեղավ մտնել։ Զբոսայգու հակառակ կողմում, մի քառատուն քայլի վրա, Ասյան անցորդների բազմության մեջ տեսավ Ջանելիձեի լայն ուսերն ու գզգզված մազերով գլուխը։ Ասյան քար կտրեց։ Նա հասկացավ, որ ինքն ամբողջ ժամանակ ընդառաջ է գնացել Ջանելիձեին։

Չայրացավ։ Նա վախ զգաց, կանգ առավ խանութի ցուցափեղկի առաջ և առանց շրջվելու մնաց տեղում։ Սպասում էր, որ Ջանելիձեն անցնի։

Անցնելով փողոցը, Ջանելիձեն առանց ձայն հանելու կանգնեց ցուցափեղկի մոտ։ Ասյայի կողքին։ Եվ աչքով արեց Ասյային իր փոքր-ինչ շեղ աչքով։ Ասյան շրջվեց նրա կողմը և հայացքով չափեց նրան։ Թվում էր, թե Ջանելիձեն նրան չի նայում։ Բայց նրա շեղ աչքերը խորամանկորեն ծիծաղում էին։

— Զբոսնո՞ւմ ես։

Չպատասխանելով նրա հարցին, Ասյան ասաց.

— Ես կարծում էի, դու մեկնել ես։

Դա սուտ էր, և Ջանելիձեն գիտեր, որ նա ստում է. նախորդ օրը Ասյան հարցրեց երբ է մեկնում նրա գնացքը։

— Մեկնում եմ,— պատասխանեց Ջանելիձեն։— Հիմա տուն եմ գնում իրերս հավաքելու։ Այնտեղից էլ ուղիղ կայարան։ Դու ազա՞տ ես։ Ճանապարհ դիր ինձ։

Բայց երեկվա նման նա թևանցուկ չարեց Ասյային։ Իրեն որոշ հեռավորության վրա էր պահում։ Եվ խոսում էր նույնպես առանց Ասյային նայելու.

— Չեացրու, որ ինձ չես ճանաչում։ Ինձ հետևում են, համենայն դեպս պետք է զգույշ լինել։

Նա պատուհաններ էր տալիս, թեքվում էր կողքի փողոցներն ու

երբանցքները, որոնք դուրս էին բերում նույն զբոսայգին, և առանց կանգ առնելու, շատ արագ հայացքով ուսի վրայից ստուգում էր, թե հետևի՞ց չեն գալիս արդյոք։ Ասենք, դա բոլորովին էլ չէր խանգարում նրան, առանց շրջվելու իր ուղեկցուհու կողմը, անցորդների կրկնակի հոսքի մեջ մայրենի լեզվով կատակի խոսքեր փոխանակել Ասյայի հետ։ Հասնելով անկյունային տան շքամուտքին, նա ետ նայեց և ասաց.

— Գնանք։

Ասյան տատանվեց։ Ջանելիձեն ավելացրեց.

— Դու կօգնես ինձ ճամպրուկը դասավորել։

Նա բռնեց Ասյայի արմունկը, և միասին սուզվեցին շքամուտքը։ Սանդուղքը գիրք էր և խավար։ Ասյան աստիճանները չէր տեսնում, Ջանելիձեն ձեռնափով թեթևակի հրում էր նրա մեջքին։ Այդ մեծ ձեռքը Ասյային պահում էր գերի թռչունի նման։ Բայց թռչունը ամենևին ձեռնասուն չէր։ Նա լարվում էր՝ հակահարված տալու պատրաստ, պատրաստ նրան կոցահարելու, իսկ գուցե նաև նրա համար, որ վայելի այդ ձեռքի հպումը։ Նեղ սանդղահարթակում Ջանելիձեն, Ասյայի հետևը կանգնած, ձեռքը մեկնեց դեպի փակը և բանալին պտտեց։ Բացեց դուռը և Ասյային ներս հրեց։ Ասյան հայտնվեց շատ փոքրիկ, երեսի վրա թողած մի բնակարանում։ Ծածկված վարագույրով դեպի բակ նայող միակ լուսամուտը փակ էր։ Ջանելիձեն ապրում էր ինչ-որ բանվորի մոտ (նա ամեն երկու օրը մեկ ապատտարանը փոխում էր)։ Այդ ժամին սենյակը դատարկ էր, նրա տերը գալիս էր միայն ուշ երեկոյան։ Ջանելիձեի ունեցած-չունեցածը անկանոն թափված էր մահճակալին, սեղանին, հատակին՝ սպիտակեղենն ու թղթերը, ավելի շատ թուղթ, քան սպիտակեղեն։ Ջանելիձեն խառը, առանց դրանք դասավորելու, իրերը վերցնում և խրում էր մաշված կաշվե ճամպրուկը։ Բայց, որքան էլ ուժեղ էր սեղմում և հուպ տալիս, իրերը չէին տեղավորվում։ Ասյան դրանք բոլորը թափեց և սկսեց նորից դասավորել։ Նա հեղձուկ օդում խեղդվում էր, քրտինքով ողողվում։ Ջանելիձեն թույլ չտվեց լուսամուտը բացել. նա վախենում էր, որ հարևանները իրեն կտեսնեն։ Ասյան վերարկուն հանեց, արձակեց շորի օձիքի կոճակները։ Ջանելիձեն հանեց պիջակը։ Նրանք խոսում էին քիչ և միայն իրերը դասավորելու մասին։ Ջանելիձեն իրերը տալիս էր նրան, իսկ Ասյան, պպզած, ջոկչկում էր դրանք և ճամպրուկում դասավորում։ Նրա մերկ պարանոցն ու մեջքը ծածկվել էին քրտինքի կա-

թիլներով... Մի ակնթարթ Ասյայի աչքերը սևացան, ու նա իրեն անկողնում տեսավ, ինչպես անցած գիշերը, և նորից այրող երանը շնչում էր նրա ծոծրակին։ Ասյան շրջվեց ցած խոնարհվելով, Դիտոն ագահորեն ներս էր քաշում նրա բուրմունքը։ Ծանր թաթը իջավ Ասյայի ուսին և շուռ տվեց...

Երբ Ասյան նորից նստեց հատակին, նրա հայացքը թափառում էր շուրջը, բերանը չորացել էր, մարմինը վառվում էր, մազերը գզգվել էին, հագի շորը՝ ճմրթվել։ Երկուսն էլ լուռ էին։ Ասյան միտք էլ չուներ մեղադրելու նրան, մեղադրելու իրեն։ Այդպես նախանշված էր։ Բայց վայ նրան, եթե նա համարձակվի դիպչել իրեն հիմա։ Նրանց միշև նորից պատնեշ բարձրացավ։ Ջանելիձեն այդ հասկանում էր հիանալի, քանի որ օժտված էր մի խելքով, որը շատ հազվադեպ է հանդիպում,— մարմնական խելքով։ Նա ետ քաշվեց և կանգնած սկսեց ծխախոտ փաթաթել, վերևից նայելով իր ոտքերի մոտ պտնվող մռայլ կնոջը, որը մազերն էր կարգի բերում։ Ջանելիձեի մեջ չկար հաղթողի հպարտություն։ Նա չէր ուզում, չէր նախապատրաստում այդ ինտիմությունը, ամեն ինչ արեց բնությունը։ Էլ ինչ մտածեր։

Ասյան նորից ձեռնամուխ եղավ ճամպրուկը դասավորելուն, որի միջից թափվել էր պարունակության մի մասը։ Ամեն ինչ կարգի բերելով, նա կափարիչը ծածկեց։ Ջանելիձեն ծնկով սեղմեց ճամպրուկը, փակեց, ձգեց ու կապեց կաշեփոկերը։ Ասյան վեր կացավ, հագավ վերարկուն։

— Դե գնա,— ասաց Ջանելիձեն։— Քեզ համար ավելի լավ կլինի, որ մեզ միասին չտեսնեն։

Ասյան իրեն զննեց գրպանի փոքրիկ հայելու մեջ։ Բերետն ուղղելով, նա գնաց դեպի դուռը։

— Մնաս բարով, ընկեր,— ասաց Ջանելիձեն, նրան պարզելով իր ձեռքը։

Ասյան շրջվեց և նրա ափի մեջ դրեց իր ձեռքը։ Ջանիլեձեն նրան էր նայում առանց ժպիտի, ձեռքը բաց չթողնելով։ Ասյան հոնքերի տակից նրան հառեց իր սևեռուն հայացքը։ Ջանելիձեն ասաց.

— Եվ մեզ մոտ բեր քո ամուսնուն։ Ես հույս և քեզ վրա եմ դնում, և նրա։

Այդպիսի բոպեին ամուսնու մասին հիշատակելը բացառիկ

անտակտություն էր։ Բայց Ասյան դա չնկատեց նույնիսկ։ Ջանելիձեն ավելացրեց.

— Նա ուղի է փնտրում։ Ցավալի կլինի, եթե մոլորվի։ Իսկ դու ճանապարհը գիտես, Ուրեմն, ցույց տուր նրան։ Նրա տեղը մեզ հետ է։

Ասյան ոչինչ չպատասխանեց։ Ջանելիձեն ասաց այն, ինչ Ասյան ինքն էլ էր մտածում։ Եվ նա երախտապարտ էր դրա համար այդ մարդուն։ Միայն բավական ժամանակ անց Ասյան գլխի ընկավ, որ Ջանելիձեն, ըստ երևույթին, կարգադրել է Մարկի վրա հսկողություն սահմանել։ Բայց այն, ինչ Մարկին կարող էր կատաղեցնել, Ասյային միայն մի քիչ վշտացրեց. նա արդեն սովորել էր դա բնական համարել, չէ որ պետք է իրազեկ լինել.

Նրա ձեռքը, որ դեռ խոնավ էր քրտինելուց, որպես պատասխան սեղմեց տղամարդու մեծ ձեռքը և ետ քաշվեց։

— Մնաս բարով,— ասաց Ասյան։

Եվ դուրս եկավ։

Ասյան քայլում էր փողոցով առանց ետ շրջվելու։ Օրը վերջանալու վրա էր։ Զբոսայգու հակառակ կողմում գտնվող տների վերին հարկերը մայրամուտից վարդագունել էին։ Ասյան ոչնչի մասին չէր մտածում։ Անչափ շատ հույզեր էին համակել նրան։ Նա չէր ուրախանում և չէր տխրում։ Պարզապես հաճելի էր հաստատ քայլերով ընթանալ պինդ ասֆալտի վրայով։ Ոլորանից այն կողմ, որտեղ բացվում էր մայրամուտի վերջին շողերով ողողված Սենան, Ասյան հանկարծ կանգ առավ, ինչպես ամպրոպից խոցված։

— Ես այս ինչ արի...

Շփոթված ու հուզված նա պատկերացրեց այն բոլորը, ինչ տեղի է ունեցել, բայց մի րոպե անց արդեն սառը և խիստ հանրագումարի էր բերում։ Ասյան ստորացումից շրթունքները կըրծում էր։ Պարզվեց, որ հաշիվը նրա օգտին չէ։ Նա խաղում էր չմտածված և տարվեց։ Տարվե՞ց, եթե դա վերաբերեր միայն իրեն, նա երկար չէր վշտանար։ Խաղի մեջ միշտ էլ տարվելը հնարավոր է, տարվեցիր, և վերջ։ Չէ որ փաստն, առանձին վերցրած կարևոր չէ, կարևորն այն նշանակությունն է, որը դու տալիս ես փաստին։ Ասյան նրան ամենանշնչին նշանակություն անգամ չէր տալիս։ Նա զայրանում էր ոչ այնքան փաստի վրա, որքան այն բանի, որ իրեն հանկարծակիի բերին և ինքն իր կամքից անկախ զիջեց։ Դա նրան պատիվ չէր բերում։ Ասենք, նա արդեն վաղուց

էր կորցրել իր նկատմամբ ունեցած հարգանքը։ Նա իրեն չէր խնայում։ Նրա մեջ հպարտություն շատ կար, դա այդպես է։ Բայց նա հպարտանում էր հենց այն բանով, որ ինքն իր հաշվով չի գայթակղվում։ Եթե նա մենակ լիներ, ապա այդ ամբողջ պատմության հետ հաշիվները կմաքրեր դեռ տուն չհասած։ Բայց նա մենակ չէր։ Տանն իրեն սպասում էր «նա»— այն մարդը, որի ներկայությունը, որի գոյությունը սանձի նման զրգռում էր, բայց նրան դուր էր գալիս լսմը կրծել, իսկ երկաթի համը կյանքին առանձնահատուկ համ էր տալիս,— տանը իրեն սպասում էր նա, ում հետ ինքը ամեն ինչ կիսում էր։ Ինչպե՞ս նա կընդունի այդ։ Նույն գիտեր, որքան լուրջ է նայում Մարկը այդ կարգի հարցերին։ Պատվի մասին ունեցած նրա հասկացությունները աչքի էին ընկնում բուրժուական հնաոճությամբ, նրա աչքին ամեն ինչում պատվի անարգություն էր երևում։ Այդ առիթով Ասյան հաճախ էր ձեռ առնում նրան։ Բայց, ձեռ առնելով հանդերձ, ել ավելի շատ էր հարգում նրան դրա համար։ Եթե նա այդ հիմար արկածի մասին Մարկին ոչինչ չասի, Մարկը ոչինչ չի էլ իմանա, և ոչ մի բան չի պղտորի նրա հանգիստը... Բայց ահա հենց այդ էլ բացառված էր։ Այդպիսի հնաոճությունը Ասյան իրենից վճռականորեն դեն էր նետում։ «Դավաճանություն» առանձին վերցրած (ինչպես առիթը բաց չեն թողնի դա այդպես կոչել) շատ չէր ծանրանում Ասյայի խղճի վրա։ Բայց թաքցնել այդ «դավաճանությունը»,— ահա թե ինչն էր Ասյայի համար իսկական դավաճանություն թվում։ Ոչ, ոչ, այդ քայլին նա երբեք չի դիմի։ Ավելի լավ է Մարկին ցավ պատճառել, քան «խաբել» նրան։ Իսկ նրա հասկացությամբ «խաբել» նշանակում էր ստել (կամ լռության մատնել)։ Ասյան չի խարի։ Չի խորամանկի։

Նա որոշեց Մարկին բոլորը պատմել։ Այդպես էլ Ասյային պետք է։ Նա ավելացրեց ևս in petto[1] «Այդպես էլ Մարկին պետք է...»։ Եթե Մարկի հիմար վարմունքը չլիներ, նա այսօր ոչ մի տեղ չէր գնա։ Մարկն ինքը հասցրեց դրան... (Ասյան, իհարկե, չափազանցում էր)։ Որոշումն ընդունված էր։ Ասյային դեկավարում էին ազնիվ մղումները. շիտակությունը, սակ նկատմամբ ունեցած նողկանքը— և պակաս ազնիվ՝ Մարկին հատուցելու գաղտնի ցանկությունը, իսկ գուցե, նաև ենթագիտակցական, սլավոնական հոգեբանությանը բնորոշ հետաքրքրությունը, որն ստիպած գիտե ինչպիսի արարքների կարող է դրդել հանուն այն

[1] Հոգու խորքում (իտ.)։

բանի միայն, որպեսզի մարդ հիանա իր ապրումներով։ «Ինչպե՞ս կվերաբերվի նա»։ «Ինչպե՞ս կվերաբերվի Մարկը...» Վտանգավո՞ր փորձ է։ Ասյան այդ գիտեր։ Բայց վտանգը միայն ամրացնում էր նրա վճռականությունը։ Ինչքան ազնիվ բան է։

Երբ Ասյան Մարկին տեսավ, վճռականությունը տատանվեց։ Նա պատրաստվում է երեկվա կռիվը շարունակել, իսկ Մարկն այդ ընթացքում հասցրել էր մտածել, զղջալ և, նայելով Ասյային երկյոտ ու քնքուշ հայացքով, որից Ասյայի սիրտը կտոր-կտոր էր լինում, սրտաշարժ կերպով ներում էր աղերսում։ Ասյան թամբից դուրս էր գցված։ Ի՞նչ էր մնում անել։ Նա շոյում էր Մարկի մազերն ու դեմքը, իսկ Մարկը համբույրներով էր ծածկում նրա ձեռքերը։ Նրա պղծված ձեռքերը...

Ասյան ձեռքերը ետ քաշեց և թաքցրեց մեջքին։ Նա ընկել էր կեղծ վիճակի մեջ— ինքը չէր, որ հիմա պետք է ներեր Մարկին. նրանք փոխել էին իրենց դերերը։ Եվ որպեսզի որքան կարելի է շուտ վերջ դնի դրան, Ասյան թոթովում էր.

— Դե բավական է, փոքրիկս։ Պետք չէ այդպես։ Ջարժե այլևս այդ մասին խոսել։ Ես նույնիսկ մոռացել եմ երեկվա մասին մտածել։ Դա վերջացավ-գնաց։

Մարկն ուրախացավ։

— Ուրեմն, հաշտությո՛ւն։ Դու ինձ ներե՞լ ես։

— Այո՛,— դժվարությամբ արտաբերեց Ասյան։— Իսկ հիմա քո հերթն է ինձ ներելու։

— Ես վաղո՞ւց եմ արդեն ներել,— բացականչեց Մարկը։

— Երեկվա համար։ Իսկ այսօրվա՞։

— Այսօրվա՞։

Մարկը ժպտում էր։ Ասյան չգիտեր ինչից սկսել։ Բայց հիմա, երբ Մարկը նայում էր նրան, Ասյային սարսափը պատեց...

— Ինձ այդպես մի՛ նայիր։ Առանց այդ էլ ինձ համար շատ ծանր է...

Ասյան բռնեց նրա կզակից և ստիպեց շրջվել։

— Ասա՛։

Մարկը կարծում էր Ասյան կատակ է անում։ Թեև ինքը նրա նկատմամբ կիսադեմով էր նստած, բայց երևում էր, որ Մարկը ժպտում է։

Ասյան ուժը գետնին խփեց։

— Դու պարզապես հիմար ես։ Վերջ տուր ծիծաղիդ։

Մարկը զարմացած շրջվեց դեպի Ասյան.

— Քեզ ի՞նչ է պատահել։

Ասյան մոայլորեն հայացքը սևեռեց նրա վրա։

— Ես քեզ խաբել եմ։

Ոչինչ չհասկանալով, Մարկը աչքերը լայն բացեց։

— Ո՛չ, չեմ խաբել,— ինքն իրեն ուղղեց Ասյան։— Ես քեզանից ոչինչ չեմ թաքցնում։ Այսօր ես... ես... (Եվ շփոթվեց... Ինչպես տաներ նրա հարցական, մոլորված, վախվորած, այդքան անպաշտպան հայացքը...)։ Չգիտեմ, ինչպես դա եղավ...— Ասյան կարող էր ասել. «Ինձ ուժով վերցրին», բայց հպարտությունը թույլ չտվեց։ Եվ որպեսզի որքան կարելի է շուտ վերջացնի, կոպտորեն վրա տվեց. — Ես... Ես հենց նոր ուրիշի հետ էի։ (Նրա համար անիմաստ էր ասել՝ ում հետ։ Ասյան արդեն մի քանի անգամ գրավել էր Ջանելիձեի նկատմամբ Մարկի խանդոտ ուշադրությունը, երբ, ցանկանալով ամուսնուն բորբոքել, պատմում էր իր աշխատանքի մասին առևտրական ներկայացուցչությունում։

Ասյան տեսավ, ինչպես Մարկի բիբերը լայնացան, բերանը բացվեց ... Մարկը միանգամից չգիտակցեց, թե ինչ հարված է հասցված իրեն։ Ասյան հիշեց փուրգոնի տակ ընկած փոքրիկ ողային. անիվը անցել էր նրա ձեռքի վրայով, իսկ նա դեռ մի վայրկյան ժպտում էր։ Եվ միայն այն ժամանակ, երբ սոսկալի ցավը հասավ, վերջապես, նրա գիտակցությանը, նա սկսեց վայրի ճիչ արձակել...

Մարկը ճիչ չարձակեց, բայց նրա դեմքը ծռվեց, ջղաձգությունը սեղմեց կոկորդը։ Խեղդվելով, նա խռպոտ ասաց.

— Ո՛ւտ ես ասում։

Մարկն աղերսում էր.

— Ասա՛, որ սուտ ես ասում։

Ասյան հպարտությունից ու սարսափից կարկամել էր։

— Ես ճշմարտությունն ասացի։

Ասյան չէր պատկերացնում, որ Մարկն այդպիսի դեմք կարող է ունենալ։ Վիրավոր, ցավից խելագար կենդանի, որը մարդասպանի աչքեր ունի...

Ասյան դեռ չէր հասցրել սթափվել, երբ Մարկը բռնեց նրա կոկորդը և սկսեց խեղդել։ Ասյան չէր պաշտպանվում... «Խեղդի՛ր։ Ինձ տե՛ղն է։ Դա քո իրավո՞ւնքն է...»։ Բայց աչքերը նա չփախեց։ Մարկը կախեց աչքերը։ Եվ ձեռքերը թուլացրեց։ Ինչպիսի ցավ կար Մարկի հայացքում... Դա շատ ավելի սարսափե-

լի էր։ Մի քանի վայրկյան Մարկը կանգնել էր կարծես շվարած, կուզը դուրս գցած, ձեռքերն անզոր կախած։ Հետո մի երեք-չորս քայլ ետ գնաց, օրորվեց, շրմփալով փլվեց լուսամուտի մոտ դրված սնդուկին, ամբողջ իրանով առաջ ընկավ և, գլուխը դնելով լուսամուտի գոգին, սկսեց հեկեկալ։ Նրա հեկեկանքներում գրեթե ոչինչ մարդկային չկար։ Դա մահացու վիրավոր գազանի ոռնոց էր։ Ասյայի ամբողջ ընդերքը շուռ եկավ։ Նա ուզում էր ճչալ, նետվել դեպի նա, գրկել։ Բայց չէր կարողանում շարժվել։ Խոսքերը դուրս չէին գալիս նրա բերանից, դեմքին սառել էր անտարբերության արտահայտությունը։ Անսահման հուսալքության այդ պայթյունը Ասյային քար դարձրեց, բայց սիրտը կրծքի մեջ կարծես մզած քուրջ լիներ։ Չոր աչքերով, ձգված, քարացած, Ասյան ներկա էր այդ կատաղի հոգեվարքին։ Այդպիսի տանջանք չէր կարող գտնել նույնիսկ ամենահնարամիտ դահիճը։ Վերջապես կամքի սոսկալի լարումով Ասյային հաջողվեց թոթափել իրենից ընդարմացումը և Ասյան քայլեց դեպի Մարկը շշնջալով.

— Իմ փոքրիկ... Եթե ես միայն իմանա՜յի... Մի՛ տանջվիր... Ջարժի...

Մարկը հեկեկանքը խեղդեց իր մեջ, բարձրացրեց գլուխը, բացելով արցունքներով ողողված, բայց անողորմ դեմքը, և ասաց.

— Կորի՛ր այստեղից։

Հարկ չկար, որ Մարկը ցույց տար նրան դուռը։ Բոունցքի պես ծանր հայացքով նա Ասյային քշում էր տնից։

Եվ այդտեղ հպարտությունը նորից վատ ծառայություն ունեցավ Ասյայի համար։ Նա բացատրություններ չտվեց։ Հատակից վերարկուն վերցրեց, քորոցով կպցրեց շորի օձիքը, որից Մարկը կատաղության պահին պոկել էր ճարմանդը և ասաց.

— Դու ինձ դո՞ւրս ես անում։

Մարկը բղավեց.

— Դո՛ւրս...

Եվ գլուխը բռնելով, կրկին ճակատը հենեց պատուհանի գոգին։

Ասյան լուռ անցավ ննջարանը, դուրս քաշեց մեկ, հետո մյուս արկղը, վերցրեց որոշ իրեր և արդեն փոքրիկ մի ճամպրուկով վերադարձավ ճաշասենյակ։ Վերջին անգամ նայեց տապալված Մարկին, բերանը բացեց՝ ինչ-որ բան ասելու համար,— մոտեցավ դռանը, լայնորեն բացեց, հետո շրջվեց և ձայն տվեց կամաց.

— Մա՛րկ...

Մարկը չշարժվեց։ Ասյան դուրս եկավ և փակեց դուռը։

Մի հարկ ներքևում, սանդղահարթակին, նա ոտքերում թուլություն զգաց, հենվեց պատին և մթության մեջ սկսեց լաց լինել։ Լալիս էր հոնգուր-հոնգուր։ Այնպես էր ուզում վեր բարձրանալ և Մարկին ասել.

«Չէ որ սա հանցագործություն է... Մենք հանցագործություն ենք կատարում։ Մի՞թե այսպիսի հիմարության համար մենք կխորտակենք մեր կյանքը...»

Ասյան չէր ուզում ընդունել, որ Մարկը իրավացի է, երբ վռնդում է իրեն...

«Էլ ի՞նչ սեր...»։

Նա չէր ասում. «Այո, այս սեր է...»։ Նա ընդունում էր իր մեղքը, բայց չէր համաձայնվում, որ կշեռքի նժարների վրա այդ մեղքը ավելի ծանր լիներ, քան իրենց ամբողջ սերը։ Մի՞թե դա այդքան կարևոր է։ Եթե նա մեկին խաչտառակել է, ապա նախ և առաջ խաչտառակել է իրեն, և ոչ թե նրան, եթե մեկին դավաճանել է, ապա դավաճանել է իրեն, և ոչ թե նրան։ Այդպես անձնատուր լինել ցանկասիրության հանկարծական զրոհին— կամքի ի՞նչ խաչտառակ բացակայություն... Ա՜խ, եթե Մարկին զգար դեպի իրեն հորդող սիրո հեղեղի այս ամբողջ ո՜ւժը։ Որքա՜ն ավելի շատ էր նա հիմա սիրում Մարկին։ Հիմա, երբ տեսնում էր նրա տառապանքները։ Եվ այդ տառապանքները նրա ձեռքի գործն էին... Ասյան նորից զգաց Մարկի ձեռքերի պատճառած այրող ցավը, երբ նա սեղմում էր իր վիզը... Ինչպե՜ս կուզեր համբուրել այդ ձեռքերը... Ասյան մի երեք-չորս աստիճան վեր բարձրացավ... Նորից հպարտությունն արթնացավ նրա մեջ, բայց նա գիտեր նաև Մարկի անդրդվելի հպարտությունը... Ոչ, նա իրեն չի ստորացնի աղերսանքներով...

«Դու ինքդ ինձ վռնդեցիր։ Էհ, ինչ արած, մնաս բարո՛վ։ Մինչև չկանչես, չեմ վերադառնա։ Իսկ եթե ընդմիշտ է, թող ընդմիշտ լինի»։

Եվ վառվող այտերով, որոնց վրա մնացել էին չսրբած արցունքների հետքերը, Ասյան վազեց ներքև։ Նրա ճարպիկ ոտքերի տակ դղրդում էին սանդուղքի մոմած աստիճանները։ Դրունապահուհու կողքով Ասյան անցավ առանց բարևելու, գլուխը բարձր պահած։ Իսկ փողոցում մարտահրավերով էր պատասխանում անցորդների հետաքրքրվող հայացքներին։ Շատերը

շրջվում էին երիտասարդ կնոջը նայելու, որի աչքերում զայրույթի ցոլքեր կային և շողշողում էին վերջին, ուշացած արցունքները։ Հիմա նրա համար ամեն ինչ մեկ է։ Նա գնում էր, ինքն էլ չիմանալով՝ ուր։ Հետո հանկարծ թեքվեց առաջին հանդիպած հյուրանոցը— կեղտոտ մի հաստատություն, որը շատ վատ համբավ ուներ։ Առանց նայելու, մի համար վարձեց և, նախապես վճարելով, փակվեց նրա ներսում։ Կյանքը վերջացած է։ Ովս մի կյանք... Տե՜ր աստված, երբ են դրանք բոլորը վերջանալու։

Մարկը տեղից չշարժվեց, գլուխը առաջվա պես հենել էր պատուհանի գոգին, ինչպես կառափնակոճղին։ Կացնի հարվածը կուրախացներ նրան։ Օ՜, եթե կարելի լիներ ուսերի վրա չկրել տառապանքից ծանրացած այս գլուխը։ Եթե կարելի լիներ միանգամից կտրել հիշողությունը անցած օրերից ու գիշերներից։ Բայց գանգի ոսկրե տուփի տակ կրքերը փոթորկվում էին... Մի կծիկի մեջ էին ջղաձգորեն միահյուսվել ցավն ու ատելությունը։ Եվ Մարկի ամբողջ միս ու արյունը նողկանքից ցնցվում էր։ Ոչ մի անգամ նա կարեկցանքով չհիշեց այն կնոջը, որին հենց նոր էր դուրս վռնդել։ Ոչ մի անգամ ներելու ցանկություն չզգաց։ Ջփորձեց հասկանալ։ Խոցված արուն միայն իրեն էր տեսնում և իր վիրավորանքը...

Մանկական ոտիկների թփթփոց սանդուղքին...

Մարկը վայրկենապես տեղից ցատկեց։ Դա Վանյան էր վերադառնում։

Երեխան ոչինչ չպետք է իմանա։ Մարկը շտապով սրբեց կարմրած աչքերը, իր տեղը դրեց աթոռը, որ շրջվել էր կարճատև գոտեմարտի ժամանակ, վերցրեց ճարմանդը, բացեց սանդղահարթակ դուրս եկող դուռը և կախվեց բազրիքից։ Աննետան ներքևից գոռաց.

— Դու տա՞ն ես, Ասյա։ Ես ու Վանյան եկանք։

— Այդ ես եմ։ Շնորհակալ եմ, մամա։

— Դո՞ւ ես, տղաս։ Ասյան դո՞ւրս է եկել։

Մարկը հակիրճ պատասխանեց.

— Այո։

Վանյան արդեն համարյա սանդղահարթակին էր հասել։

— Ես չեմ ուզում էլ բարձրանալ,— ավելացրեց Աննետան։— Շատ եմ հոգնած։ Բարի գիշեր, տղաս։

— Բարի գիշեր, մամա։

Մարկը բռնեց Վանյայի ձեռքը և մտավ բնակարան։

Մարկը ստիպված եղավ տղային ասել, որ մայրն այսօր տանը չի լինի. նա մի քանի օրով ուրիշ տեղ է մեկնել։ Բայց հետաքրքրվող Վանյան սկսեց հարցերով ձանձրացնել։ Թվում էր, թե նրա բոլոր հարցերին արդեն պատասխան է տրված, երբ հանկարծ փոքրիկը անսպասելի մի նոր հարց էր տալիս, և Մարկը շփոթվում էր։ Մանավանդ որ պետք էր հետևել յուրաքանչյուր բառին, թե չէ կմոռանաս քիչ առաջ ասածդ, և նա քեզ կբռնի։ Մարկը քիչ ջանքեր չգործադրեց նաև Վանյային կերակրելու և քուն դնելու համար։ Երբ նա անվարժ ձեռքերով հանում էր երեխայի շորերը, վերջինս գերազանցող տեսքով ասում էր.

— Է՛, չեղավ, պապա, այդպես չէ։ Դու չգիտես...

Եվ հուշում էր հորը սրբազան ծիսակարգը. լվացումն ու մնացյալ բաները։ Բոլոր այդ մանր հոգսերը Մարկին մի քիչ մոռացնել էին տալիս իր վիշտը։ Իսկ Վանյան այդ բոլոր նորություններից ցնծության մեջ էր։ Նա և հայրը, երկու տղամարդ, տանը մենա՛կ էին մնացել։ Հանա՛ք բան չէ։

Առավոտյան Մարկը տղայից խոսք առավ՝ տատիկին ոչինչ չասել մամայի մասին։ Նա ասաց, որ Մամայի մեկնումը մեծ գաղտնիք է, բայց Վանյան, չցանկանալով բավարարվել այդքան մշուշապատ բացատրությունով, հոր գլխին այնպիսի հարցեր տեղաց, որոնց Մարկը չգիտեր ինչպես պատասխանել։ Վերջ ի վերջո Մարկը խճճվեց։ Եվ Վանյան հիանալի հասկացավ, որ հայրը ճիշտ չի ասում. իրենից ինչ-որ բան են թաքցնում։ Բայց նա ամենևին այդ ցույց չտվեց, միայն, շան ձագուկի նման, սրեց ականջները. գաղտնիքը նրան շատ էր հետաքրքրում, և նա ջանում էր կամաց-կամաց այդ իմանալ։ Այնուամենայնիվ Վանյան իր խոսքը կատարեց, տատիկին ոչինչ չասաց, վարվեց ինչպես հայրը,— ստեց։ Նա նույնիսկ հանդգնություն ունեցավ Աննետային ասելու, որ մաման իրեն լավ է զգում և այսօր առավոտյան այսինչ-այսինչ բաներն էր անում։ Նաբելը նրան զուր եկավ։ Նա ինքն իրեն կարևոր անձնավորություն էր թվում։ Թե ինչ դեր է խաղում, նա այդ չգիտեր, բայց այդ դերով շատ էր հպարտանում։ Նա արդեն միանգամայն հասունացած տղամարդ է...

Ասլայի գնալու երկրորդ օրը Մարկը նրանից մի երկար նամակ ստացավ։ Մատիտով մանր գրած քսան էջ։ Նա չէր արդարանում և վերադառնալու ցանկություն չէր հայտնում, բայց

իրեն պարտավոր էր համարում ճշտորեն շարադրել Մարկին տեղի ունեցածը։ Ասյան չէր մտածում այն մասին, թե Մարկն ինչ աչքերով է այդ ընթերցելու։ Պարտքը պահանջում է, որ նա հաշիվ տա ամուսնուն,— վերջին հաշիվը։ Ինչ-որ տարօրինակ մոլուցքով բռնված իր հոգին վերլուծելու սլավոնների այդ հիվանդագին պահանջով համակված, նա, իրեն չխնայելով, չխնայելով Մարկին, քչփորում էր իր խիղճը, բացում էր արարքներն ու մտքերը իրենց ամբողջ անհրապույր մերկությամբ։ Եթե արտահայտությունը նրան ճիշտ չէր թվում, նա ջնջում էր, ուղղում, լրացնում։ Նա իրեն խնայելու մտադրություն չուներ, բայց մտադրություն չուներ խնայելու նաև Մարկին։ Նա պետք է այդ ծանրությունը գցի իր վրայից։ Չէ որ հետո մարդ իրեն շատ թեթև է զգում։ Քուրձը ներդործում է ճիշտ ինչպես մասաժի ձեռնոցը։ Երկուսն էլ մաշկը տրորում են կարմրելու աստիճան։

Երբ Մարկը կարդում էր Ասյայի խոստովանանքը, գույնը թռել էր երեսից և ձեռքերը դողում էին։ Ամենք, նա միայն թերթեց ուղերձը— բորբոքված աչքերը հրաժարվում էին տողը տողի հետևից կարդալ։ Բայց, դժբախտաբար, ուղղումների ու ջնջումների այդ կույտում, որոնց միջով հակառակ ամեն ինչի երևում էր նրան խաբող կնոջ դաժան շիտակությունը, Մարկի աչքով ընկավ մի քանի տող այնպիսի անսքող անկեղծություն, որ աչքերը մթնեց։ Նա մռնչաց, կատաղությամբ պատռեց, ու ճմռթեց նամակը — նա կուզեր, որ դա ինքը Ասյան լիներ,— և, վերջապես, շպրտեց թուղթը բուխարու մեջ և այրեց... Հետո նա ամբողջ կյանքում ափսոսում էր, որ մինչև վերջ այդ նամակը չկարդաց։ Հիմա նա արդեն երբեք չի կարող իմանալ ճշմարտությունը։ Ասյան երկու անգամ խոստովանություն չի անի։

Նամակին կից դրված մի երկտողում, որը բարեհաջողությամբ խուսափել էր այրվելուց, Ասյան խնդրում էր հյուրանոց ուղարկել այն սպիտակեղենն ու իրերը, որոնք թվարկում էր։ Եվ կամ թող Մարկը նշանակի օրն ու ժամը, թե երբ Ասյան ինքը գա դրանք տանելու։ Կասկած չկար, Ասյան հոգու խորքում Մարկի հետ հանդիպելու թույլ հույս էր տածում։ Բայց Մաքկը չցանկացավ նրան որևէ հույս թողնել։ Այն մտքից, որ Ասյան նորից կանցնի նրա տան շեմքը, Մարկը ցնցվում էր։ Անհապաղ հավաքելով պահանջվող իրերը, նա որոշեց մի ապտակ ևս հասցնել և ճամպրուկի մեջ դրեց Ասյայի բոլոր լուսանկարները։ Այդ նույն օրը Մարկը հանձնակատարի հետ իրերն ուղարկեց տիկին Վուկո-

վայի հասցեով։ Սրբ Ասյան ճամպրուկը բացեց, արյունը խփեց դեմքին։ Նա պայուսակից հանեց պորտմոնեն, իսկ այնտեղից սիրողական մի նկար, որը միշտ իր մոտ էր պահում,— ինքն ու Մարկը նախկին երջանիկ օրերին, և կտոր-կտոր արեց այդ նկարը, որպեսզի միանգամից վերջ տա ամեն ինչին։ Իսկ գիշերը, ի վիճակի չլինելով քնել, վեր կացավ և սկսեց հավաքել կտորները նույնիսկ մահճակալի տակը եղած փոշու փաթիլների մեջ, սակայն իրար կպցնել, ինչպես առաջ էր, այդպես էլ չկարողացավ, անչափ մեծ եռանդով էր պատառ-պատառ արել նա նկարը։ Այնուամենայնիվ Ասյան այդ կտորները դրեց ծրարի մեջ և, որպեսզի չենթարկվի դրանց մի անգամ ևս նայելու գայթակղությանը ծրարը կպցրեց։

Մարկը գնաց առևտրական ներկայացուցչություն։ Նա պատրաստվում էր ապտակներ հասցնել այն մարդուն, որը կեղտոտել էր իր ընտանեկան օջախը։ Բայց այնտեղ իմացավ, որ կկուն թռել է անտառի թավուտը, և նա մնաց մենակ իր չհագեցած վրեժի և արյունարբու մտադրությունների հետ։

Այդ ժամանակաընթացքում Աննետան, որից նրանք համառորեն թաքցնում էին իրենց գժտությունը, սկսեց անհանգստանալ, թե ինչու Ասյան չի գալիս իր մոտ, և, վերջապես, որդուց իմացավ ճշմարտությունը։ Խոսակցությունը տեղի էր ունենում ընթրիքից հետո Մարկի ննջարանում։ Փոքրիկը քնած էր— իսկ գուցե քնած չէր— կողքի սենյակում, ավելի ճիշտ, ալկովում, որը դռնով բաժանված չէր։ Նրանք նստել էին դեմ դիմաց, կոթնած գրասեղանին, լամպից ընկնող լույսի շրջանակի տակ, և չանում էին խոսել շշնջոցով։ Աննետան երկար բացատրություններ կարիք չզգաց, նա ընդհատեց որդու դառը խոստովանությունները,— այստեղ դրանք լսելու և դրանց պատասխանելու ոչ տեղն էր և ոչ էլ ժամանակը. նա վախենում էր, երեխան քնած չլինի, և չէր ուզում, որ Մարկը վիրավորական խոսքերին ազատություն տար, որոնք պատրաստ էին դուրս թռչել բերանից։ Պետք էր կործանումից փրկել բոլորը, ինչ կարելի էր։ Աննետան տանջվում էր իր Մարկի համար, բայց, որպես կին, տառապում էր նաև Ասյայի համար։ Առանց Ասյայի հետ խոսելու, Նա Մարկին ամբողջովին չի արդարացնի. հարկավոր է երկու կողմին էլ լսել։ Աննետան վաղուց էր զգուշանում նրանց սիրո այդպիսի վերջավորությունից։ Եվ հիմա, երբ դա տեղի էր ունեցել, նա այնքան չէր մեղադրում, որքան խղճում էր մեղավոր կնոջը— երկու մե-

ղավորներին, երկու զոհերին։ Իհարկե, նա չէր կարող Մարկին ասել այն, ինչ մտածում էր։ Նա պարզապես գրկեց որդու վիզը։ Երկուսն էլ լուռ էին, բայց Աննետան զգում էր, թե ինչպես է դողում Մարկի այտը։ Ամենից շատ Մարկը վախենում էր իր թուլությունը ցույց տալուց։ Վախենում էր նաև, որ մայրը կսկսի որդուն խղճալ. կասի. «Իմ խե՜ղճ տղա, չէ որ ես քեզ նախազգուշացնում էի...»։ Եվ երբ զգաց, որ ձայնը իրեն չի դավաճանի, շտապեց սառը և գործարար խոսել տնային հարցերը կարգի գցելու մասին. Աննետան երեխային կվերցնի իր մոտ, բնակարանը Մարկն իր ձեռքին չի թողնի, վաղը ևեթ նա կնախազգուշացնի տան տիրոջը և ժամանակավորապես կփոխադրվի հյուրանոց։ Կահույքը կարելի է հանձնել պահպանման... Ապագայի մասին խոսք չէր եղել։ Բայց Աննետան հիշեցրեց, որ հարկավոր է նախ նրան հարցնել։ Մարկն այդ մասին լսել անգամ չէր ուզում։ Նա կոպտորեն ասաց.

— Նա այլևս գոյություն չունի։

Գլխի շարժումով ցույց տալով ալկովը, որտեղ Վանյան էր քնած, Աննետան առարկեց.

— Նա այստեղ է։

Մարկն իրենն էր պնդում.

— Նա երեխայի նկատմամբ կորցրել է բոլոր իրավունքները։

— Ոչ ոք չի կարող նրանից խլել այդ իրավունքները,— պատասխանեց Աննետան։— Պատկերացրու, եթե որևէ մեկը այդպիսի պահանջ ինձ ներկայացներ։

Մարկը մերժեց այդպիսի համեմատության հնարավորությունը։

— Չէ որ նա ինքը, ինքն է հրաժարվել իր իրավունքներից։

— Օ՜, ոչ, սիրելիս, մի՛ շփոթիր. կինը և մայրը տարբեր հասկացություններ են։

Վրդովված Մարկին թվաց, թե այդ խոսքերում հնչում է մայրերի խմբական և գաղտնի երաշխավորությունը.

— Կնշանակի, դու նրա հետ միաբա՞ն ես, իմ դեմ։

— Տղաս, դու— այդ ես եմ։ Բայց նույնիսկ մեր առաջ մեղավորն էլ իր իրավունքներն ունի։

— Ես այդ իրավունքները չեմ ընդունում։

— Դու մարտնչում ես, իսկ մարտի թունդ պահին իրավունքը լռում է, մնում է մերկ ուժը։ Բայց նկատի ունեցիր, որ դու ամենաուժեղը չես։

— Կնշանակի, նա՞ է։

— Ոչ դու ես, ոչ նա, այն մյուսն է (և Աննետան նորից ցույց տվեց երեխային)։

— Նա իմն է, և միայն իմը,— ճչաց Մարկը։— Այլապես ես հրաժարվում եմ այդ երեխայից։

— Նա պատկանում է ինքն իրեն,— ծանրակշիռ ասաց Աննետան։— Ես նույնպես պատկանում եմ նրան։

Աննետան քիչ դեսուդեն չընկավ, մինչև գտավ Ասյային հասցեն։ Մարկը չասաց, նա ուր է փոխադրվել, իսկ Աննետան, որպեսզի պահպանի գործողությունների ազատությունը, չէր ուզում որդուց այդ հարցնել։ Վերջապես, նա, այնուամենայնիվ, գտավ նոզկալի որջը, որն Ասյան առանց նայելու, ընտրել էր իր համար։ Միևնույն չէ՞, թե գլուխդ առած որտեղ ես ծվարել։ Ասյան երբեք աչքի չի ընկել զգացմունքների առանձնահատուկ նրբությամբ, բայց այդ օրերին իր նկատմամբ, Մարկի, մարդկանց նկատմամբ այնպիսի զղվանք էր զգում, որ ամբողջ կյանքը նրան նոզկանք էր թվում։ Մի քիչ ավել, մի քիչ պակաս— մի՞թե նույն բանը չէ։ Եվ նույնիսկ այնքան զգացմունքը չէ, որքան Ասյայի միտքն էր վրդովվում այդ պատմության անհեթեթությունից։ Ոչ թե այն դժբախտությունից, որն իրեն պատահել էր (դա գարշելի և անշնաղ պատահականություն էր, ցեխ, որը փողոցում քեզ վրա են շպրտում անիվները),— նա զայրանում էր այն հիմար, անմիտ արկածի վրա, որը կյանք է կոչվում։ Բայց այդ արկածի նկատմամբ ունեցած ամբողջ արհամարհանքով հանդերձ, Ասյան այն մարդկանցից չէր, ովքեր կես ճանապարհին կանդ են առնում. ուր էլ ուզում է տանի այդ արկածը, Ասյան կգնա ամբողջ ուղին մինչև վերջ...

Աննետան պատահական նրան տանը հանդիպեց (ընդհանրապես Ասյան գալիս էր իր որջը միայն դիշերելու)։ Ասյան բնավ չուրախացավ իր հյուրի համար։ Նա բերետն արձեն գլխին էր դրել։ Պատրաստվում էր, ինչպես երևում է, գնալու և նույնիսկ Աննետային չառաջարկեց իր միակ աթոռը, որի վրա սպիտակեղենն էր թափված։ Կեղտոտ, չավլած սենյակը, չհավաքած անկողինը, փոշու թանձր շերտով ծածկված փոքրիկ պահարանը՝ կիսաբաց դռնով, այս ու այնտեղ թափթփած իրերը վկայում էին իր և շրջապատի նկատմամբ ունեցած լիակատար արհամարհանքի մասին։ Աննետան կնճռոտվեց։ Զբարևելով և չնկատելով իրեն մեկնած ձեռքը, Ասյան նա քաշվեց, ճանապարհ տալով Աննե-

նետային, ձեռքերով ու մեջքով հենվեց մի ոտը կարճ սեղանի եզրին և, հոնքերը կիտելով, հյուրի վրա հառեց իր անբարյացակամ հայացքը։ Մի ակնթարթ Աննետան իրեն կորցրեց։ Կարեկցանքի խոսքերը դուրս չէին գալիս նրա բերանից։ Ասյան առաջինն սկսեց խոսել.

— Հիմա գուք գո՞հ եք։

— Ա՛սյա,— բացականչեց Աննետան։

— Չէ որ ամեն ինչ ճիշտ այնպես տեղի ունեցավ, ինչպես դուք կանխագուշակում էիք։

Աննետան ձեռքերը մեկնեց նրան.

— Աղջի՛կս։

Ասյայի գույնը սպիտակ քաթան դառավ, նա ցնցվեց, պաղ, քարացած դեմքով մի ջղաձգություն անցավ, և նա հեկեկալով լաց եղավ։ Ասյան չանում էր խեղդել իր մեջ այդ հեկեկանքները, նրա բերանը ծռվել էր, ստացել այլանդակ, հրեշավոր մի արտահայտություն։ Բայց Աննետան այլանդակություն չէր տեսնում, Ասյայի դեմքի այդ ծամածռությունը նրան հուզում էր անսահմանորեն ավելի շատ, քան ամենակատարյալ գեղեցկությունը։ Աննետան նետվեց դեպի հարսը և գրկեց նրան։ Ասյան, ամուր բռնելով սեղանի եզրից, չէր դիմադրում, նա արցունքներից խեղդվում էր, հեծկլտում, ֆոֆսում, նրա աչքերը թաց էին, աչքերից ու քթից անընդհատ հոսում էր։ Աննետան համբուրում էր այդ աչքերը, այդ աչքերը, այդ քիթը։ Իսկ պարտված Ասյան, նեղ ճակատը հենելով մոր ուսին, երեսը քսում էր նրա հագի շորին։

Երբ հեկեկանքները մի քիչ դադարեցին, Աննետան, հայացքն այս ու այն կողմ գցեց, փնտրելով, թե որտեղ կարող է նստել, և Ասյայի հետ միասին տեղավորվեց չհավաքած անկողնու վրա։ Աննետան բռնեց Ասյայի ձեռքերը և զգաց, թե նա ինչպես է անգիտակցորեն եղունգները մխրճում իր ափերի մեջ։ Նրանք դեռ տասը խոսք էլ չէին փոխանակել միմյանց հետ։ Ոչինչ չէր ասվել, և ամեն ինչ ասվել էր։ Աննետան Ասյային խոստովանանքի չէր հարկադրում, նա չէր պատկանում այն տրտացավ հետաքրքրքրվող կանանց, որոնք անհամբերությամբ ամեն ինչ հարցուփորձ են անում և իմանում. «Ե՛ղճ իմ աղջիկ, ախր դա ինչպե՞ս եղավ»։ Աննետան շատ լավ գիտեր, դա ինչպես է լինում,— դա բավական հայտնի և կյանքի փորձով իմաստնացած կնոջ համար ոչ այնքան հրապուրիչ պատմություն է։ Բայց Ասյան

չէր կարող իրեն զսպել ու չլսատմել։ Կամա թե ակամա նա ստիպված եղավ լսել։ Իսկ Ասյան կծիկը ետ տալու հետ նորից ձեռք էր բերում ինքնավստահություն, և Ասյային էր վերադառնում նրա անհեթեթ մարտական խանդավառությունը։ Ինչ-որ պարծենկոտությամբ նա անկեղծորեն անում էր իր խոստովանություններ։ Ջէր արդարանում, մեղադրում էր։ Վատ էր վարվել թե լավ, նա վարվել էր այնպես, ինչպես ուզել էր։ Մի՞թե դա նրա իրավունքը չէ։ Եվ Ասյան մարտահրավերով հայացքը դցեց մոր վրա։

— Իրավունք՝ ցավ պատճառել նրան, ով քեզ սիրո՞մ է։

Այդ խոսքերը, որոնք Աննետան արտասանեց կիսաձայն, կարծես ինքն իր մեջ, թամբից դուրս շպրտեցին բորբոքված հեծելուհուն։ Մի վայրկյան նրա լեզուն կապ ընկավ, հետո, կարծես ոչինչ չնկատելով, նորից նստեց իր ձին և նետվեց առաջ։ Աննետան անվրդով տեսքով լսում էր նույնիսկ այն ժամանակ, երբ Ասյան սևացնում էր նրա որդուն, և միայն երբեմն էր ձեռքի ափով փակում հարսի բերանը, որ զսպի չափազանց կոպիտ խոսքերը, որոնք նշանավոր հնքիաթի դոդոշների և գորտերի նման ժայթքում էր այդ վայրենի կինը.

— Մի՛ պղծիր բերանդ։

— Իմ սիրտն է պղծված։ Ահա և ես թքում-թափում եմ այդ կեղտը,— պատասխանում էր Ասյան, շուրթերը սրբելով Աննետայի ափով։ Աննետան հակված չէր ժխտելու, որ կեղտը կեղտ է, բայց այդ կեղտը ցույց տալու Ասյայի այս եղանակի մեջ զգացվում էր հպարտ ինքնանվաստացում։

Այժմ շատ կանայք թաքուն ինքնաբավականությամբ բոլորի առաջ ի ցույց են դնում իրենց մանրաքրաբարո արարքները, ինչպես կեղտոտ, շատ լվանալուց մաշված քրջեր, որ հարավային քաղաքներում դրոշակների նման կախում են փողոցների լայնքով։ Ըստ երևույթին, այդ չափից ավելի սրտաբաց խոսակցությունները մի տեսակ փոխարինող են ծառայում այն անհամեստ խոստովանությունների համար, որոնց կանայք մի ժամանակ տրվում էին եկեղեցու բարյացակամ կիսախավարում, խոստովանարանի լուսամուտի մոտ, որտեղ նրանց անսում էր ամեն ինչին ընտելացած փարաջավոր ունկնդիրը։

— Վե՛րջ տուր, կեղտոտ սպիտակեղենը չեն մզում անցորդների գլխին,— ասաց Աննետան։

Ասյան իր պատմությունն ընդհատեց կես խոսքի վրա։ Աննետայի նկատողությունը նրան տարակուսանքի մեջ դցեց ու

զայրացրեց։ Նա քիչ էր մնում անպատկառությամբ պատասխանի։ Բայց հետո, չնայած իր վշտին ու վիրավորվածությանը, քմծիծաղեց.

— Իսկ ի՞նչ կհրամայեիք անել այդ սպիտակեղենը։— Եվ նա ձեռքի լայն շարժումով ցույց տվեց իր ողորմելի խուցը։— Ես նույնիսկ զամբյուղ չունեմ։

— Այրե՛լ։ Այրե՛լ։ Ինչպես չէր խանգարի այրել նաև այն ամենը, ինչ այստեղ կա։

— Ինձ հետ միասի՛ն,— ասաց Ասյան։— Մի՞թե դա միայն ինձ է վերաբերում։ Իսկ ինչո՞ւ այդ դեպքում չայրել միաժամանակ նաև ամբողջ Փարիզը։

— Ամեն բանն իր ժամանակին,— խոստացավ Աննետան։— Սկզբից արի զբաղվենք մեր գործերով։

Ջրույցը վերսկսեցին արդեն ուրիշ տոնով։ Ասյան այդպես էլ մինչև վերջ չասաց իր պատմությունը. պատմությունն այդ չէր հետաքրքրում Աննետային, և Ասյայի համար պարզ դարձավ, որ այդ կապակցությամբ Մարկի մոր աչքերը բացելու կարիք չկա։ Սակայն Ասյան իրենց այդ ազատ ու ազնիվ միության մեջ համառորեն վերադառնում էր իր իրավունքների հարցին։ Չէ՞ որ նա կարող էր ստել կամ լռել։ Իսկ նա չստեց և չխաբեց։ Եվ ինչո՞ւ լռեր։ Դա նրա իրավունքն էր։

— Ձևական իրավունքը տվյալ դեպքում, ասենք նաև մեծամասնապես—բարձրագույն անարդարություն է,— նկատեց Աննետան։— Քանի որ մեզ է գործում սիրո դեմ։ Իսկ իսկական սերը բարձրագույն օրենքն է։

— Այդ դեպքում ինչո՞ւ ձեր որդին պետք է արտոնյալ վիճակում լինի,— վրդովվեց Ասյան։— Ինչո՞ւ է նրան թույլատրելի հենվել իր ձևական իրավունքի վրա ի վնաս ինձ, իմ իրավունքի, իմ ցանկության։

— Որովհետև նա ավելի թույլ է,— ասաց Աննետան։

— Ավելի թո՞ւյլ է,— բացականչեց Ասյան։

— Բոլոր տղամարդիկ էլ ավելի թույլ են։

— Դուք իսկապե՞ս այդպես եք կարծում,— զարմացած հարցրեց Ասյան։

— Դու էլ ես այդպես կարծում։

Փոքր-ինչ լռելով, Ասյան ասաց.

— Այո, կարծում եմ։

Նա ինքն էլ զարմացավ, որ Աննետայի հետ համաձայն է։ Փորձեց համառել, պնդել իր ասածը.

— Բայց դա դեռ չի նշանակում, որ թուլլի իրավունքը պետք է ավելի ծանր քաշի։

— Այնուամենայնիվ այդպես է ինձ ասում սիրտս։ Ասենք, քեզ էլ, երևի։ Ուրիշ կերպ չի էլ լինի։ Մենք երկուսս էլ մայր ենք։ Մենք ինչպե՞ս չխղճանք մեր երեխաներին։

Ասյայի սիրտը դողաց։ Նա լռեց. այսօր այսքանը բավական է։ Աննետան վեր կացավ։

— Ախր ես եկել էի քեզ հետ մյուս երեխայի մասին խոսելու։

— Ո՞ր,— հարցրեց Ասյան։ Այդ վայրկյանին նա մտածում էր միայն մեծի մասին։

— Վանյայի մասին,— կշտամբանքով ասաց Աննետան։

Ասյան անտարբերությամբ ձեռքը թափ տվեց։ Այդ խելագարը հիմա նրա մասին չէր, որ մտածում էր.

— Նա ձերն է։ Դուք, իհարկե, նրան կտանեք ձեզ մոտ։

— Ասյա,— բացականչեց Աննետան։— Մի՞թե դու նրան այնքան քիչ ես սիրում, որ նույնիսկ չես պահանջում քո բաժինը։

Մոր սիրտը բացվեց։ Փոքրիկը պատկերացավ նրան, և Ասյան զգաց թե ինչպես է կարոտել որդուն։ Նրա աչքերը բոցավառվեցին։ Ասյան դողդոջուն ձեռքերը մեկնեց դեպի Աննետան։

— Ե՛տ տվեք ինձ նրան։ Ե՛տ տվեք։

Բայց նույն րոպեին նրա աչքերը լցվեցին արցունքով, և ձեռքերն անզոր ընկան։

— Ես նրա հետ ինչ կարող եմ անել այստեղ։ Ոչ, նրան ձեզ մոտ թողեք։ Դուք ինձանից լավ կդաստիարակեք նրան։

Աննետան հարցրեց.

— Դու վերջնականապե՞ս ես որոշել տուն չվերադառնալ։

— Վերջնականապես։

Զայրույթը Մարկի դեմ նորից Ասյայի մեջ բարձրացավ, ինչպես թունավոր օձ։ Նա Աննետայի վրա նետեց ատելությամբ թունավորված հայացքը։ Աննետային դա ցավ պատճառեց, բայց նա մտածեց.

«Մարկը ի՞նչ կարող է սրան արած լինել»։

Ասյան զգաց, որ խայթը, նախքան Մարկին հասնելը, խոցեց մոր սիրտը, և որոշեց բթացնել այրող ծայրը։ Դառնությամբ, բայց արդեն ավելի մեղմ, նա ասաց.

— Ես այլևս տուն չունեմ։ Բոլորը, ինչ կա այնտեղ, հիմա ինձ չի պատկանում։

— Դու կարող ես այդպես մտածել,— ասաց Աննետան,— բայց ես չեմ մոռացել, որ այդ բոլորի կեսը քեզ է պատկանում։

— Ես դատարկ եկել եմ, դատարկ էլ կգնամ։

— Եթե դուք բաժանվում եք, ես երբեք թույլ չեմ տա, որ Մարկը քեզ առանց միջոցների թողնի, նա պարտավոր է քեզ օգնել։

— Նախ ասեմ,— առարկեց Ասյան, շտկվելով հասակով մեկ, որպեսզի պատասխանի պատշաճ արժանապատվությամբ,— վերջին երեք ամիսն ընտանիքը պահել եմ ես։ Նա ընդունակ չէ նույնիսկ իր ուտելու հացը վաստակել։ Հետևապես, մի՞թե ես կհավաքեմ նրա փշրանքները։

Աննետան հասկացավ, որ ոչ մի բանի չի հասնի, եթե չգտնի կողմնակի ճանապարհ, որտեղ Ասյայի հպարտությունը վիրավորելու վտանգ չկա։

— Դե, լավ, այդ մասին այլևս չխոսենք։ Բայց ասա, դու ինչո՞ւ ես ինձ ստիպում հատուցել այն չարիքի դիմաց, որ կարող էր քեզ պատճառել Մարկը։

Այսպիսով, Աննետան ոչ միայն չէր մեղադրում Ասյային, ինչպես դրան ծարավի էր նրա խոցված սիրտը, այլ նույնիսկ հնարավոր էր համարում, որ Մարկն է մեղավոր։ Դա հուզեց Ասյային, նրա վերքի վրա բուժիչ բալասան լցրեց։ Շնորհակալության ջերմ պոռթկումի պահին նա գրկեց Աննետային։

— Ի՞նչ եք ասում։ Իմ մտքով էլ չի անցել։

— Այդ դեպքում ինչո՞ւ, հեռանալով նրանից, դու պետք է հեռանաս նաև ինձնից։

Ասյան սեղմեց նրա ձեռքերը։

— Ես ձեզ հրաժեշտ չեմ տալիս։ Ձեզ ուզում, և ոչ էլ կարող եմ հրաժեշտ տալ։

— Ես նույնպես։ Ես էլ չեմ կարող և չեմ ուզում։

— Իսկապե՞ս։

Եվ Ասյան խանդավառված համբուրեց նրան։

— Ուրեմն, պայմանավորվեցինք,— ասաց Աննետան,— իմ բնակարանը չեզոք գոտի է։ Երբ ուզես, կարող ես գալ։ Իսկ եթե պատահի (ես հասկանում եմ քո հպարտությունը, բայց երբ ինձ հետ ես, քիթդ տնկելու կարիք չկա, վերջ ի վերջո դու նույ-

նիսկ պարտավոր ես այդ փոքրիկ զոհաբերությունն անել ինձ համար), որ քո տան եղածը ցամաք հաց է, կամ նույնիսկ դա էլ չկա, խոսք տուր, որ կգաս ինձ հետ կիսելու իմ սեղանին եղածը։

— Խոսք եմ տալիս,— ասաց Ասյան։— Բայց չէ որ դուք էլ առանձնապես մեծ վստահություն չունեք վաղվա օրվա նկատմամբ։

— Այդ դեպքում ես կգամ քեզ մոտ։

— Պայմանավորվեցի՛նք։

Ասյան չէր խաբվում այդ դործարքում, նա գնահատեց Աննետայի ողջ մեծահոգությունը և սիրահարված աչքերով խժռում էր նրան։

— Ափսոս, որ ես ձեզ հետ չեմ ամուսնացել։

— Խոնարհաբար շնորհակալ եմ,— ասաց Աննետան։— Լավ է, որ այդպես չէ։

Եվ շարժվեց դեպի դուռը։

— Եթե կարելի՞ լիներ ոչ մի գործ չունենալ տղամարդկանց հետ,— մոթմոթաց Ասյան։

— Այո,— հանդիսա ու ծաղրանքով պատասխանեց Աննետան։— Միայն թե դա կլինի ոչ այնքան շուտ։ Համենայն դեպս դու մինչև այդ դեռ շատ ժամանակ ունես։

— Ինչո՞ւ,— բռնկվեց Ասյան։— Նրանք ինձ այլևս պետք չեն։

Թող սատանան նրանց պոչերը խանձի, ինչպես Սամսոնն աղվեսներինը... Թող նա մի անգամից իմ խաղողի այգին էլ վառի, եթե ես կրկին հին գործին անցնեմ։

— Քանի ապրես, այնքան պիտի խմես,— ասաց Աննետան։

— Միայն թե ոչ ձեր գինին,— նորից բռնկվող զայրույթով կտրեց Ասյան։— Այդ լակից իմ սիրտը խառնում է։

Եվ նա թքեց։

Աննետան ուսերը թոթվեց ու դուրս գնաց։ Սանդուղքի վրա Ասյան հասավ նրան, մրրիկի նման վրա պրծավ, գրկեց և շշրնջաց.

— Ներեցե՛ք, ներեցե՛ք ինձ։

Դուրս գալով փողոց, Աննետան ծաղրական կարեկցանքով մտածեց.

«Այդպես աոում են միայն նրանք, ովքեր սիրում են»։

Ով աչքերը բարձրացնելով դեպի բարձրյալի, անմատչելու, խուլ և համրի գահը, աղոթեց.

— Libera nos ab Amore! *(Ազատի՛ր մեզ սիրուց)*

Կտոր-կտոր արված կյանքը (գժտված ամուսինները, նրանց երեխան, Աննետան) մի կերպ վերականգնվեց։ Այդ կտորներից յուրաքանչյուրի մեջ շատ կյանք էր թաքնված, և այդ կյանքը չէր կարող կանգ առնել։ Բայց որտեղ իսկական կյանք կա, այնտեղ էլ՝ տառապանք։ Տառապանքները չկային միայն երեխային։ Վանյան տեղի ունեցած փոփոխություններից չէր կարող բողոքել։

Տատիկի տանը նա իսկական կուռք էր, և նրան ամեն ձևով երես էին տալիս ի հատուցում այն ամենի, ինչից նա իր համար անհայտ պատճառով զրկվել էր։ Խորամանկ, ինչպես և բոլոր երեխաները, այդ ճտլիկը անմիջապես հասկացավ, որ ինքն առանձնահատուկ վիճակի մեջ է, և շատ շուտ սովորեց դրանից օգուտ քաղել։ Կատարվածի իսկական իմաստի մասին նա, իհարկե, շատ աղոտ պատկերացում ուներ։ Ասենք, ի՞նչ իմանաս,— եթե նա չէր հասկանում, ապա դրա փոխարեն զննում էր ու հոտոտում. հետաքրքրությունը նրա մեջ գերակշռում էր մյուս բոլոր զգացումները։ Բայց ո՛չ մի ապրում։ Իհարկե, խաղը հետաքրքրաշարժ էր. այն էլ ինչպե՞ս, նա համարյա հետախույզ էր դարձել։ Բայց դա ընդամենը խաղ էր՝ մյուս խաղերի մեջ։ Մեկից ձանձրանալով, նա ձեռնամուխ էր լինում մյուսին և մոռանում էր նապաստակի հետքի մասին։ Ժամանակ առ ժամանակ նրան այցելության էին գալիս մայրը կամ հայրը, երկուսն էլ անբնական մտահոգ, մռայլ։ Երկուսն էլ իրենց պարտավոր էին համարում նվերներ բերել և զրկում էին շատ ավելի պինդ, քան երբ ինքը նրանց մոտ էր ապրում։ Նա թույլ էր տալիս, որ իրեն սեղմեն գրկում. հարկավոր է ներողամիտ լինել մեծերի նկատմամբ։ Նա ծնողներին սիրում էր, ինչպես իրեն պատկանող իրը, խորհրդավոր, հետաքրքիր և ոչ այնքան մեծ հոգս պատճառող, բայց հիանալի կերպով կարող էր յոլա գնալ առանց նրանց փաղաքշանքների։ Այնուամենայնիվ բնական խորամանկությունը հուշում էր նրան, որ ծնողների մրցակցությունը իրեն ձեռնտու է։ Նա շատ բան չէր հասկանում, բայց ինչ տեսնելուն է վերաբերում, տեսնում էր։ Ամեն ոտնգամ, երբ մայրը կամ հայրը գալիս էին,

նրանք Աննետայի հետ փակվում էին ննջարանում և երկար ժամանակ այնտեղ փսփսում։ Բայց ինչքան էլ ձայները նրանք ցածրացնեին, փոքրիկ ականջը երբեմն-երբեմն մեկ էլ տեսար մի երկու խոսք որսաց։ Եվ այդ խոսքերը դրվում էին արկղը, մինչև որ մի ամբողջ կույտ էր հավաքվում։ Այդ ժամանակ տղան ջոկչկում էր դրանք, իրար կողք դնում, կապակցում։ Բարեբախտաբար, դա շատ շուտ հոգնեցնում էր նրան, և, խնդիրը թողնելով առանց լուծելու և չբացահայտված, նա իր համար ուրիշ զվարճանք էր գտնում։

Աննետան իր երկու մեծ դժտված երեխաներին թույլ չավեց այդ խզումը ձևակերպել։ Ապահարզանը իմաստից զուրկ է, երբ ամուսինը կամ կինը սեփականություն չունեն, եթե, իհարկե, սեփականություն չհամարել երեխային, որին Աննետան, հանգույցը կտրելով, իր մոտ էր տարել։ Չխոսելով արդեն այն մասին, որ ապահարզանի ժամանակ հասարակությունը առանց քաշվելու քիթը ձեր ննջարանն է խոթում, ինքը արարողությունը ահագին ժամանակ է խլում, որն առանց այն էլ հազիվ է բավականացնում հաց վաստակելու համար։ Այսպիսով, երկուսն էլ լուռ համաձայնեցին, յոլա գնալ առանց ձևականությունների։ Նրանք իրենց կապերը խզելու համար հասարակության սանկցիայի կարիքը չունեին։ Եվ, իհարկե, Աննետան չէր, որ նրանց պետք է դրդեր այդ քայլին։ Դրա համար նա իր դիտավորությունն ուներ։ Առայժմ նա հետևում էր միայն, որ նրանք պատահաբար չհանդիպեին իր տանը, ցուցադրական կերպով չանում էր հշարժել կշեռքի նժարները։ Թող ոչ Մարկը, ոչ Ասյան չկարծեն, թե նա ուզում է ազդել նրանց վրա, թող վատ կրքերն իրենք իրենց ցրվեն։ Ճիշտ է, վրեժխնդրության կամ իրենց անկախությունն ապացուցելու ցանկությունից նրանք կարող են ընկնել միանգամայն ողբալի ծայրահեղության մեջ— ի՞նչ կարող ես անել։ Ավելի լավ է նրանցից զղջում չպահանջել, այդ դեպքում նրանք ավելի շուտ կզղջան։ Այնպիսի սխալներ են լինում, որ ուրիշին հետու պահել չես կարող. ամեն մեկն ինքն է վճարում իր փորձի դիմաց։ Հենց այդ պատճառով էլ Աննետան, ինքն իրեն կոտրելով, որոշեց չտեսնել, չհարցնել և երբեք ուզղակի չխառնվել իր երեխաների անձնական կյանքին։ Երկու մարդկանց այդ ողորմելի կյանքին, որոնք դուրս էին ընկել հունից, որոնք ընդունակ էին ամեն մի խենթության, որից նրանց հետու էր պահում միայն մի բան— այն դիտակցությունը, որ մի տեղ գոյություն

ունի (մոտիկ թե հեռու— դա արդեն ոնց ուզում է լինի) չեզոք գոտի, այնտեղ ոչ ոք քեզանից հաշիվ չի պահանջի և ոչ ոք չի փորձի քեզ պահել։ «Արի՛, երբ ուզում ես։ Գնա՛, երբ ուզում ես։ Դու ինձ ոչինչ պարտական չես...»։ Ոչ Մարկը, ոչ Ասյան չէին չարաշահում այդ հնարավորությունը։ Բայց ամեն մեկը գիտեր, որ ինքը նավահանգիստ ունի, որտեղ կարելի է հանդարտվել և գոնե մի քիչ հանգստանալ հոգով և մարմնով։

Ասենք, այդ ապաստարանը նույնպես չէր կարող փրկել նրանց, եթե Մարկի և Ասյայի համար ուրիշ սանձ չլիներ, որն արգելում էր չարագործ հոգուն չափից ավելի ոգևորել։ Այդ սանձը աղքատությունն էր, քաղցը, որը կրծում ու ջլատում է երիտասարդ մարմինը, ազատություն չի տալիս ոչ անհագ երազանքներին, ոչ վրեժխնդրությանը, ոչ ցանկասիրությանը, ոչ կարոտին։ Ամեն առավոտ նրանք ստիպված էին դուրս գալ և ընկնել մի կտոր հացի հետևից, իսկ երեկոյան հոգնածությունից ու քաղցից ոտի վրա կանգնել չէին կարողանում։

Ասյան դասախոսություններ ու զեկուցումներ էր սղագրում, մի րոպեում երկու հարյուր երեսունական բառ, որ մեծ լարում էր պահանջում, և այդպես վեց-յոթ ժամ շարունակ։ Նա դրան չէր դիմանա, բայց նրան փրկում էր անհողդողդ կամքը և անխափան, հիրավի պողպատյա օրգանիզմը. լսողությունը, մատները, ուղեղը։ Բայց որքան անհաջողություն էր եղել, մինչև որ նա, վերշապես, տիրապետել էր արհեստին։ Նա աշխատանքից գնում էր դատարկված, աչքերը փոս ընկած։ Գլխում ոչ մի հատիկ միտք, միայն բառեր էին ու մեկ էլ տպագիր տառեր, որոնք վայրի վարգով երևում և անհետանում էին ասես էկրանի վրա... Կա՛նգ առ։ Բավակա՛ն է... Նա պատրաստ էր իր գլուխը ջնջել էկրանի հետ միասին... Կրակել ճակատին... Նա նույնիսկ վաճառեց իր բրաունինգը, վախենալով թուլության րոպեին ենթարկվել գայթակղությանը... Հետո (ով չի սատկում— ընտելանում է) սովորեց։ Իսկ եթե դու լավ վարժված ես և աշխույժ, սուր միտք ունես, որն առիթը ոչ միայն բաց չի թողնում, այլ ավելին, ինքն է առիթ փնտրում, կարելի է։ այդ մասնագիտության մեջ հասնել համեմատաբար անկախ և ապահով վիճակի. մեկնել կոնգրեսների, ուղեկցել արտասահման մեկնող պատվիրակություններին։ Բայց առայժմ Ասյան դեռ նիհար կովերի նախրում էր գտնվում... Ասյան ինքն էլ մի անգամ Աննետայի լողասենյակում նկատեց, որ խիստ հյուծվել, նիհարել է։ Չէ՞ որ

Աննետան այնպիսի շքեղություն ուներ, ինչպիսին լողարանն է, և Ասյան հաճույքով օգտվում էր դրանից։ Դա միակ բանն էր, որից նա համաձայնվում էր օգտվել։ Ասենք, Աննետան, երբ Ասյան նրա մոտ էր գալիս, միշտ հնարը գտնում էր նրա բուռը մրտցընել, եթե ոչ բարի կամքով, ապա զորով որևէ մի հսկայական, բուտերբրոտ սառը մսով, որն Ասյան ախորժակով հուպ էր տալիս, պնդելով, որ ամենևին սոված չէ։ Վանյան շատ շուտ հասկացավ այդ խաղը, և երբ մայրը գալիս էր այն ժամանակ, երբ նա նախաճաշելիս էր լինում, Ասյային էր մեկնում պատառաքաղի ծայրին մի կտոր և ասում.

— Աչքերդ փակիր և բերանդ բաց արա։

Ասյան չգիտեր ծիծաղի, թե զայրանա, բայց փոքրիկը շատ անմեղ տեսք էր ունենում, և Ասյան, հոնքերը կիտելով, աչքերը փակում էր ու բերանը բացում. պատառը վայրկենապես անհետանում էր։ Այդ ժամանակ Աննետան նրան էր մոտեցնում աթոռը, Ասյայի առաջ հայտնվում էր ափսե, և նա, շարունակելով չեմուչում անել, ամբողջը ուտում էր, մինչև վերջ։ Նա միշտ գայլի պես սոված էր լինում։ Բայց աստված չաներ, եթե այդ նկատեին։ Ասյան անմիջապես ափսեն ետ էր հրում և, վրդովված, սեղանի մոտից ցատկում։

Ասյան առաջվա պես զայրանում էր նրա վրա, ում խաբել էր (ոչ, չէր խաբել...), ում իրավունքները խախտել էր (նույնպես ոչ. Ասյան չէր ընդունում նրա իրավունքները), ում վիրավորել էր (ենթադրե՞նք։ եթե Մարկին այդպես է համարում... Չէ որ ես վրե՞ժ եմ լուծել)։ Վրեժ եմ լուծել ինչի՞ համար։ Թող իրեն հարցնեին, և նա այդ հարցի պատասխանը կտար նախ և առաջ ինքն իրեն, կկարողանար խոսքերով արտահայտել այն անպարզն ու աղոտը, որը տանում էր գիտակցության շիմին։ Ասյան, իրեն բնորոշ անտակտությամբ, չամաչեց նույնիսկ Աննետային ցույց տալ իր վրիժառական զգացումները, հույս ունենալով նրա մեջ ընդդիմադրություն առաջացնել։ Բայց Աննետան այդ բոլորը լսելու տվեց։ Նա լռում էր, չցանկանալով կրակը բորբոքել, և բոցը հանգչում էր։ Ասյան վերադառնում էր իր կեղտոտ խուցը (նա համառությունից մնացել էր նախկին հյուրանոցում) չար զգացումների նույն բեռով։

Բայց ենթարկվելով ինչ-որ անբացատրելի բնազդի, Ասյան, Մարկի հետ կապերը խզելուց հետո, խուսափում էր առևտրական ներկայացուցչությունից և մոլեգնաբար հիշողությունից վանում

էր նրա, մյուսի կերպարը... Ասյան չէր ուզում նույնիսկ նրա անունը լսել... Սեփական գաղտնի մղումները փորփրելու՝ անամոթության հետ սահմանակցող իր ամբողջ կրքով հանդերձ, այստեղ նա պարզությունից խուսափում էր։ Ջանելիձեից բացիկ ստանալուց հետո նրան համակած կատաղության նոպան էր միայն, որ բացահայտեց այն նվիրական մտքերը, որոնք Ասյան գըրվանի տակ էր պահում։ Բացիկը— երեք ոչինչ չնշանակող բառ («Հաջող տեղ հասա։ Շնորհակալություն»— իսկույն գցել էր զուգարան և վրան միզել էր։ Նա կատաղի ատելությունից գազազած փշերը ցցել էր։ Եվ այդ ժամանակ նրա համար պարզվեց, որ Մարկի դեմ ունեցած իր զայրույթը անցել է,— զայրույթը ուղղված էր ուրիշի դեմ։ Երբ նա սկսեց քրքրել բոլոր այն մութ ու խառնակը, ինչ կուտակել էր հոգու խորքում, պարզվեց, որ նախկին, այնքան չանադրաբար հավաքված վիրավորանքները այլևս չկան, և Ասյան իրեն անզեն զգաց։ Եթե մինչև այդ օրը նա Մարկին համարում էր իր պարտապանը, ապա մի՞թե ինքը նրանից լրիվ չի վերցրել իր ստանալիքը։ Հիմա նրանք քվիտ էին։ Ասյան ընդունեց (ի տարբերություն առաջվա), որ դավաճանել է Մարկին։ Ամենևին ոչ այն իմաստով, ինչպես Մարկը և ուրիշները այդ հասկանում էին։ Արարքը նշանակում էր անհամեմատ ավելի քիչ, քան միտքը։ Արարքը վերաբերում էր իրեն՝ Ասյային, և ոչ թե Մարկին։ Ասյայի հոգսը այդ արարքն իր խղճի հետ հաշտեցնելն է, նրան լիուլի հերիք է սեփական արհամարհանքը, զզվանքը, դա իր գործն է— դատապարտել և արարքը, և իրեն։ Մարկն ի՞նչ գործ ունի այդտեղ։ Շատ ավելի վատ էր մի ուրիշ բան— այն, որ մինչև այդ արարքը, երկար ամիսների ընթացքում, Ասյան իր մտքում դավաճանում էր Մարկինչ

Ամբողջ գիշերներ, Մարկի հետ կողք-կողքի պառկած անկողնում, Ասյան՝ հեռու, օտար, թշնամական— հարաբերությունները խզում էր նրա հետ։ Ի՞նչ էր ինքնամոռացության րոպեն տևական, համառ, կանխամտածված դավաճանության համեմատությամբ, դավաճանություն, որը նա կատարում էր մտովի, լռելյայն, ատամները սեղմած։ Իրականում ես դավաճանել եմ, բայց բոլորովին չեմ ամրապնդել այդ օտարացածությունը, ընդհակառակն, վերջ եմ տվել նրան։ Ավելին, այդ արարքը Ասյային զրկեց դավաճանելու գայթակղությունից, որը ընդունում էր սրտում։ Մարդկային հոգեբանությանը բնորոշ տարօրինակությամբ, հենց այն րոպեին, որն անցավ և այլևս չի կրկնվի,—

երբ Ասյան նվաղել էր ուրիշի գրկում, նա իրենից թոթափեց դավաճանական կախարդանքը և նորից գտավ Մարկի նկատմամբ ունեցած իր մեծ սերը, խոր, հավատարիմ, միակ։ Բայց ոչ ոք, բացի իրենից, այդ չէր հասկանա, ասենք, ինքն Ասյան էլ այդ միտքը հեռու էր վանում։ Վախենալով այդ մտքին ենթարկվելուց, նա օգնության կանչեց անհնազանդության բոլոր չար և դաժան ոգիներին։ Բայց հիմա այդ միտքը ներս թափանցեց ինչ-որ ճեղքվածքի միջով։ Ասյան դա պահպանում էր իր մեջ։ Նա երբեք ոչ ոքի այդ մասին ոչինչ չի ասի, չի ջանալու որևէ բան փոխել։ Ինչ արված է, արված է։ Ասյան հպարտությունից մուրհակի վճարն իր վրա վերցրեց, որի վրա ստորագրեց հիմարաբար, իր վրա վերցրեց իր մոլորությունների հետևանքները։ Սակայն թեև հոգում նա չէր փոխել արարքի գնահատականը, որը խզման պատճառ էր հանդիսացել, սերը, որը նա արդեն չէր սանձահարում, Մարկի նկատմամբ ունեցած սերը հրաշք էր գործում, թույլ էր տալիս Ասյային իր արարքին նայել Մարկի սրտով, և ոչ թե իր։ Եվ նա հազորդակից դարձավ Մարկի զայրույթին ու տառապանքներին, Ասյայի նկատմամբ կայացրած նրա դատավճռին, թեև մենակ ինքն իր հետ մտածում էր.

«Դա իմ իրավունքն էր (Ասյան համառում էր)։ Ասենք, մի մեծ բան չէ։ Մոռանալ— և վերջ»։

Բայց հիմա Ասյան արդեն իրավունք չուներ մոռանալու։ Այդ իրավունքը պատկանում էր ուրիշին.

«Իմ խեղճ... Իմ մեծ երեխա... Նա ինձ ատում է։ Ես գիտեմ նրան։ Նա երբեք չի ների... Ավելի վատ ինձ համար։ Ավելի վատ նրա համար...»

Այդպիսի եզրակացության գալով, նա ասիական ֆատալիզմով ընդունեց անանկությունը։ Արդարացի դատավճիռ։ Նա սխալ թույլ տվեց։ Նրանք երկուսն էլ սխալ թույլ տվեցին։ Ինչ միտք ունի տրվել ապարդյուն ափսոսանքների կամ զղջումների։ Թող ների կամ չների, ինչպես ուզում է ինքն, Ասյան նրան ներել է։ Իսկ հիմա ի՞նչ, տեսնենք, ի՞նչ կնախանշի ինձ ճակատագիրը։ Ասյան գնաց Նորվեգիա, ուր նրան ուղարկում էին կոնգրեսում սղագրությունն անելու համար։ Իսկ Ասյան վերադնվելու,— նորից ծնվելու ապշեցուցիչ ունակություն ուներ։ Հետևում նա թողել էր անցյալի չարդված կճեպը։

Իսկ Մարկը ոչ մի կերպ չէր կարողանում դուրս գալ կճեպից։ Նա պատկանում էր մարդկանց այն տեսակին, որոնք չեն կարողանում յոլա գնալ առանց ելքի և մուտքի մատյանների։ Նրանք հաշիվ չեն կատարի պատահած մի թղթի կտորի վրա։ Եվ ոչինչ չեն մոռանում։

Պետք է խոստովանել, որ տվյալ դեպքում գրի առնելը Մարկի համար շատ ավելի ձեռնտու էր, քան Ասլայի համար։ Ի՞նչ էր Ասլան թողնում իրենից հետո։ Մարկին հասցրած վիրավորանքը։ Մարկը դառնությամբ ծամում հա ծամում էր դա։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում թքել, թափել, դառնահամը դեռ երկար հետապնդում էր նրան, ներծծվել էր նույնիսկ հագուստի մեջ։ Նրան թվում էր, թե այդ հոտը ինքն է կրում իր հետ և բոլորն առնում են այդ հոտը։ Եվ դեռ երկար ժամանակ հանկարծ նրան համակում էր խանդի զգացումը, նա դողում էր խոցված սիրո և հպարտության ցասումից ու տառապանքից, հիշողությունների անտանելի ծանրությունից։ Եթե դա նրա հետ կատարվում էր փողոցում, նա շտապում էր տուն և այնտեղ թաքնվում բոլորից։ Աննետան, նկատելով, ի՛նչ է կատարվում որդու հետ, չէր փորձում թափանցել նրա մոտ։ Նրան մենակ էր թողնում. բնազդը նրան հուշում էր, որ, որպես կին, նա նույնպես մասնակից է որդու դժբախտությանը և միայն գրգռում է վերքը։ Եվ Աննետան ճիշտ էր։ Այդպիսի րոպեներին Ասլայի նկատմամբ ունեցած Մարկիատելությունը տարածվում էր բոլոր կանանց վրա։ Կանացի ձե՞ռք էր հպվում նրան, թե՞ փողոցում անցնող կինն էր անզգուշաբար դիպչում, Մարկը զզվանքից ցնցվում էր։ Միջնադարյան նկարիչների նման, որոնք հավիտենական տառապանքների դատապարտված մեղավորների էին պատկերում, հագուստի տակ Մարկի աչքին երևում էր դժոխքի երախը— «Հեշտանքի սատանան», որ կրծում ու ապականում է մարդու մարմինը։ Մարկն ուրախանում էր, որ տղա ունի, և ոչ աղջիկ։ Եթե նա աղջիկ ունենար, ատելությամբ կլցվեր նրա դեմ։ Եվ եթե, աստված մի արասցե, Վանյայի ձայնում որևէ երանգ, անգիտակցական կամ գիտակցական ընդօրինակում (չէ՞ որ այդ կապիկները սիրում են մեծերին ընդօրինակել) հանկարծ հիշեցնում էին նրան, որ երեխան կիսով չափ Ասլայի միս ու արյունից է, նա կոպտորեն մի կողմ էր քաշվում և հեռացնում իրենից Վանյային։ Երբեմն շաբաթներով նա որդուն այցելության չէր գնում։

Ատելությունը մագնիսի պես պահում էր Մարկին, և այդ մո-

լաբարության ժամանակ նրան հետապնդում էր ոչ միայն Ասյայի մարմինը, որը նա ինքն էր մտովի հետապնդում և ուրախությամբ պատառ-պատառ կաներ, այլև նրա ոգին... Ո՞վ գլուխ կհանի, որտեղ է վերջանում մեկը և սկսում մյուսը։ Նրանց համար, ովքեր սիրում են, ինչպես և նրանց համար, ովքերատում են, ոգին մարմին է, ոգին կարելի է հոտոտել, համը տեսնել, շոշափել, կարելի է բռնություն գործադրել նրա վրա, եղունգներով, ատամներով ծվեն-ծվեն անել նրան... Մարկը կատաղությամբ հալածում էր Ասյայի ոգուն, ինչպես գազան։ Նա վերլուծում էր Ասյայի բոլոր խոսքերը, նրա բոլոր մտքերը, որոնք ամիսներ շարունակ օրըստօրե մենամարտի էին բռնվում իր խոսքերի ու մտքերի հետ։ Մարկը ջարդում էր Ասյայի սուրը և հավաքում կտորները, որպեսզի նորից ջարդի, բայց այդ անելիս իր ձեռքերը կտրում էր և արյունոտում։ Ասյայի մտքերը ամուր պողպատից էին։ Նրանք պաշտպանվում էին, հարձակվում էին և, նույնիսկ ջարդված, խրվում էին Մարկի մարմնի մեջ։ Խրվում էին ավելի մեծ հեշտությամբ. վերքերի մեջ մնում էին մետաղի կտորները։

Մարկը կատաղի կռվում էր ռուսական կոմունիզմի դոգմաների դեմ, որոնց մասին Ասյան, ինքը չընդունելով դրանք, զայրացած վիճում էր Մարկի հետ,— և դա նրա դեմ, նրա ինդիվիդուալիստական գաղափարների դեմ ունեցած բողոքի (վաղո՞ւց էր արդյոք, որ ինքը նույնպես դավանում էր այդ գաղափարները), այն կյանքի նկատմամբ ունեցած դժգոհության պատճառով, որը նա հարկադրված էր վարել Մարկի մեղքով։ Եվ, ի հեճուկս Ասյայի, ցանկանալով է՛լ ավելի հեռանալ նրանից, Մարկը համառում էր իր ինդիվիդուալիզմի մեջ, որն Ասյան մերժում էր և ծանակում. Մարկը մինչև կոկորդը թաղվել էր նրա մեջ— այնպես, որ շնչելն արդեն դժվար էր։ Քանի որ ինդիվիդուալիստը, եթե միայն նա չի ջարդում միստիկական բնազդի երկար ու մութ թունելը պատնեշող ցանցը, որի վերջում թույլ կերպով երկուսերեք աստղեր են թարթում, դառնում է ինքն իր մեջ զնդանված։ Արտաքին աշխարհից ազատ— այո՛։ Բայց ի՞նչ գնով։ Հավիտենապես փակված ես միայնության մեջ։ Դատապարտված ես խլուրդի կյանք վարելու, որը գետնի տակ իր սրահներն է փորում։ Բայց խլուրդը գոնե երբեմն դուրս է գալիս, խլուրդային բլրիկներ է կառուցում։ Իսկ ի՞նչ էին կառուցել նրանք, պարոնայք ինտելիգենտներն ու ինդիվիդուալիստները, որոնք իրենց

անկախներ էին կոչում, ի՞նչ էին անում նրանք, դուրս գալով մակերես։

Հույս ունենալով ամրապնդել հավատի (կամ հույսի) իր սիմվոլը, որը կասկածներն ու փորձը հասցրել էին զգալիորեն երերել, Մարկն այդ շրջանում մտերմացավ Սորբոնի իր նախկին ուսանողական ընկերոջ՝ Ֆելիսիեն Լերոնի հետ։

Լերոնն իր համար եթե ոչ հարստություն, ապա որոշ համբավ ստեղծեց գիտական շրջաններում՝ տարբեր տեսակի ճառագայթումներին նիտրոցելյուլոզայի հակազդեցության իր հետազոտություններով։ Նա աշխատում էր, մի կողմ քաշվելով ոչ միայն սոցիալական ճակատամարտերից ու ցնցումներից, այլև նրանց հեռավոր արձագանքներից, անմասնակից անցյալին, ներկայի և ապագայի ողբերգությանը, ինչպես և կատակերգությանը, որն ապրում էին Ֆրանսիան, Եվրոպան, ամբողջ մարդկությունը։ Դա զայրացուցիչ կլիներ, բայց Լերոնի անտարբերությունը հավասար չափով տարածվում էր նաև սեփական անձի, սեփական կոմֆորտի, սեփական հաջողության վրա, տարածվում էր այն ամենի վրա, ինչ, բացի աշխատանքից, նրան էր վերաբերում։ Ասենք, նա իր աշխատանքը նույնպես վարում էր աներևակայելի պայմաններում, սարքավորում գնելու համար պետությունից ոչ մի դրամական օժանդակություն չէր ստանում և իր մանրակրկիտ ու բարդ էքսպերիմենտները կատարում էր տնայնագործական ձևով, սեփական խնայողությունների հաշվին, ծեփերը թափվող, կիսավեր բարաքի նեղ, մառանի նման նկուղում, որտեղ բոլոր ճեղքերից փչում էր ու կաթում և ուր հնարավոր էր մտնել գրեթե երկտակված միայն։ Ամենաանհետաձգելի ծախսերի համար նա փող էր վերցնում իր չնչին ռոճիկից, իրեն զրկելով ամենաանհրաժեշտ բաներից։ Բայց նա չէր տրտնջում ու չէր բողոքում, համարելով, որ այդպես էլ պետք է լինի։ Գիտնականները միշտ էլ նույնն են արել բոլոր իրավակարգերում և բոլոր ժամանակներում։ Եվ պատշաճ չէին համարում հասարակությանը տեղյակ պահել իրենց անհաջողությունների մասին։ Նրանք դա պատվի գործ էին համարում, ինչպես դպրոցականները, որոնք արհամարհում են լացկաններին ու խաբարբզիկներին։

Մեծ արժանիք չէ արդյունքների հասնել այնպիսի շքեղ լաբորատորիաների պայմաններում, ինչպիսին նրանց ամերիկյան կոլեգաներն ունեն։

Հոգու խորքում նրանց նախանձելով,— չէ որ իրենք ստիպված

լին լինում տափակաբերան աքցանով և պղնձե լարով սարքել իրենց մի կերպ իրար կցմցած ապարատները,— նրանք հպարտանում էին այն բանի համար, որ իրենք ֆրանսիացի են։ Բայց ամենաղվարճալին գոյություն ունեցող հասարակարգի նկատմամբ նրանց նվիրվածությունն էր։ Դժվար կլիներ գտնել ուշածծ սոցիալական ցնցման ավելի թունդ հակառակորդներ,— այդ հարցում նրանք համաձայնության էին գալիս միջին խավերի բոլոր բարեմիտ մարդկանց հետ, որոնք հիմա, ավաղ, հարկադրված են գոտիներն ավելի պինդ ձգել. աշխատասեր և անձայն այդ զոհերը, որոնք բացառապես ոչինչ չէին կորցնի փոփոխությունից, մեն միայն «բոլշևիզմ» կամ «կոմունիզմ» բառից քիչ էր մնում ջղաձգության հասնեին։ Եվ փորձ չանեք նրանց ապացուցել, որ իրենց աշխատանքը այլ հասարակարգի պայմաններում անկասկած ավելի կգնահատեին և ավելի լավ կվարձատրեին։ Նրանք ոչինչ չեն ցանկանում իմանալ։ Այն կույսերի նման, որոնց միշտ թվում է, թե ինչ-որ մեկը ոտնձգություն է անում իրենց առաքինության դեմ, նրանք ծածկվում են երկու ձեռքով, պաշտպանելով իրենց թանկագին ազատությունը։ Նրանք գլխի չեն ընկնում, որ գանձը հաճախակի ձեռք տալուց արդեն խիստ կեղտոտվել է։ Ինչ սրիկաներ ասես, որ չօգտվեցին դրանից, ինչպես մինչ սրբազան դեմոկրատիայի հաստատումը (Թղթի վրա), այնպես էլ նրանից հետո։ Մնաց լոկ այն, ինչից խորշեցին ծառայամիտները։ Մնաց այդ պառաված օրիորդների, այդ բարեմիտ այրերի պատիվը։ Եվ նրանք աչքի լույսից լավ են պահպանում այդ արխիվ հանձնած առաքինությունը, օգտվում են ոչ այնքան ռևալ, որքան երևակայական, գոյություն չունեցող բարիքներից։ Առանց եկամուտների սեփականության պատրանքը որքան կարելի է լայն տարածելն էլ հենց տիրակալների արվեստն է։ Իսկ կողոպտվածները նաև ծափահարում են այն պերճախոսության համար, որով այդ պարոնայք պահպանում են գաղտնի գանձը (այնքան գաղտնի, որ նրա գոյության մասին ոչ ոքի մտքով չի՞ էլ անցնում)— նրանց ազատությո՞ւնը... Աղատ ենք— ամեն ձևով հոլովվող այդ բառի վրա համաձայնության են գալիս և թալանողները, և թալանվածները։

Մարկը ոչ պակաս համառությամբ էր Ասյայի առաջ պաշտպանում այդ կարծեցյալ ազատությունը (քիթը վեր ցցելով, նա այդ ազատությամբ այնպես էր պարծենում, ինչպես պճնամոլը փողկապով), բայց նույն այդ փողկապը ֆելիսիենի վրին տես-

նելով, հանկարծ զգաց այդ զարդի ամբողջ ծիծաղելիությունը և հասկացավ, որ դա խեղդում է։

— Հիմար, դու հիմար— ասաց նա Լորենին։— Պարծենալու բան գտավ։ Ի՞նչ է քեզ տալիս, քո այդ ազատությունը։

Ֆելիսիենը նեղացած նայեց Մարկի վրա։ Հետո արժանապատվությամբ ասաց.

— Մի՞թե բանը միայն օգուտն է։ Աշխարհում ուրիշ արժեքներ էլ կան։

— Ի՞նչ արժեքներ։ Քո աննման հոգի՞ն։ Պառա՞վ կոկետուհի։ Հիանո՞ւմ ես հայելու մեջ նրանով։ Իսկ բոլորը նրա վրա թքած ունեն։

— Ես քեզ չեմ հասկանում,— հեզորեն, բայց վշտացած արտասանեց Ֆելիսիենը։— Դու միշտ այնպես խանդոտաբար ես պահպանել քո անկախությունը։ Ո՞ւմ կամ ինչի՞ վրա ես այսօր զայրանում։

Մարկն ամաչեց իր գրգռող տոնից։ Նա հասկացավ, որ ռիկոշետով հակառակորդի վրա է թափում նույն այն փոքրիկ քարերը, որոնք Ասյան իր՝ Մարկի բանջարանոցն էր գցում, և կարմրըրեց, բայց հետո ծիծաղը եկավ։ Այսպես, ուրեմն, նա պարտության դառնությունը իր իսկ կարիկատուրայի վրա է թափում։ Բայց հանկանալով, իր կատաղության պատճառը, Մարկն ավելի ներողամիտ չդառավ։ Ընդհակառակը։ Նա կատաղի համառությամբ շարունակում էր Ֆելիսիենին ապացուցել նրա զովական անկախության իսկական արժեքը։ Նա բացահայտ անբարեխղճությամբ կշտամբում էր գիտության ասկետին, որը սուրբ Ֆրանցիսկի նման կյանքի ընկերուհի էր ընտրել աղքատությունը, նախատում էր այն բանի համար, որ նա չի թողնում իր խուցը և անշահախնդիր աշխատանքը՝ հասարակության հետ մարտի բռնվելու և սոցիալական անարդարությունը դատապարտելու համար։ Ֆելիսիենը հեզորեն լսում էր, տարակուսանքով աչքերը կլորացրած, և լուռ սրբում էր պենսնեի ապակիները։ Նա մեղմ մարդ էր, շատ մեղմ։ Մեծ, անճոռնի ձեռքեր ուներ, որ նուրբ փորձանոթներին կպչելուն պես միանգամից ճարպկանում էին, անբարեհաս կոր մեջքով կազմվածք, կաշկանդուն շարժումներ, կարճլիկ, թույլ ոտքեր, մի խոսքով՝ շերեփուկ, և միտքն էլ անթև։

— Իսկ ես ի՞նչ կարող եմ անել։ Մենք ի՞նչ կարող ենք անել։ Ես էյնշտեյն չեմ, Լանժեվեն չեմ։ Ասենք, նրանք էլ, մի՞թե նրանք

իրենց բողոքներով շատ բանի հասան։ Ավելի լավ կլիներ միայն գիտությամբ զբաղվեին։ Նրանց կորցրած ամեն մի ժամը անդառնալի կորուստ է։ Մեր ուժը գիտությունն է, եվ թող ամեն մարդ իր տանը նստի։

— Բայց հարկավոր է գոնե տան առաջն ավլել, ինչպես վայմարացի ծերունին է ասել։

— Օ՛, ո՛չ։ Այդ էր մնացել, որ ես դեռ փողոցն էլ մաքրեի։ Այն էլ հերիք է, որ սարքերը մաքուր եմ պահում և ստուգում քաշը։ Թող ամեն մարդ իր գործով զբաղվի։ Եթե բոլորն այդպես վարվեին, աշխարհը դրանից միայն կշահեր։

— Շնաձկները նույնպես իրենց գործով են զբաղվում։

— Մանր ձկները ևս։

— Քո կարծիքով, դա լա՞վ է։

— Աշխարհի կարգն այդ է։ Ես չեմ դա ստեղծել։ Եվ ոչ էլ մենք ենք այդ կարգը փոխողը։

— Բայց դու փշացնում ես այն։ Քո գիտությունը շնաձկներին է ծառայում, եվ ձեր բոլոր հայտնագործությունները իսկույն եւթ օգտագործվում են ապագա պատերազմի համար։ Կնշանակի, դու մարդասպանների հանցակիցն ես։ Դու երբևէ մտածե՞լ ես արդյոք այն հարցի շուրջը, որ բջջանյութի նիտրացված մթերքները և նրանց վրա զանազան տեսակի ճառագայթումների ազդեցության քո հետազոտությունները օգնում են լուծել պայթուցիկ նյութերի կայունության և տևական պահպանման պրոբլեմը։ Այն ամենը, ինչ անհրաժեշտ է պայթուցիկ նյութերի, հեղձուցիչ գազերի համար, բոլոր այդ իպրիտները, տոլիտները, մելինիտները, ֆոսգենները,— ո՞վ է դրանք մատակարարում, եթե ոչ դուք, հանճարեղ կրետիններ։

— Այդ նույն նյութերը կարող են ոչ միայն ավերել, այլև դարմանել, ծառայել մարդուն։ Դրանցից պատրաստում են ներկեր, օծանելիք, դեղորայք։ Մեր մեղքը չէ, եթե բարին ու չարը միևնույն մեդալի երկու կողմերն են։ Այդպիսին է իրականությ՝ նը, իսկ մեզ մնում է, առանց խելքին զոռ տալու, արձանագրել, բացատրել, վերլուծել, սինթեզել, բայց բնավ ոչ հավանություն տալ կամ պարսավել։

— Անտարբեր, ինչպես բնությունն ինքը, այո՞։ Հրեշի ծնունդը ինքն էլ է հրեշ...

— Շարունակիր, շարունակիր, որ ւ՛սել ես, վերջացրու— Լերնեյան Հիդրա...

— Դուք հիդրայի գլուխներն եք։

— Իսկ դու, կնշանակի, Հերկուլե՞սն ես։

— Էխ, նրա բիցեպսներն ի՞մը լինեին։ Մարդկության պատմության մեջ գլխավորը, նրա գոյության հավիտենական իմաստը— բնության նվաճումն է։ Բայց հիմա նվաճողն ինքն է նվաճված։ Դուք դավաճան եք։ Ձեզ բոլորիդ պետք է պատին դեմ տալ։

— Դու այդ ինչ է, ուզում ես գիտությո՞ւնը ոչնչացնել։

Մարկը կատաղած բղավեց.

— Ամբողջ քաղաքակրթությո՞ւնը պետք է ոչնչացնել։

— Անիծյա՛լ բոլշևիկ։ Գնա՛ Մոսկվա։

— Եվ կգնա՛մ։

Մարկը լեզուն կծեց։ Նա ջղայնացել էր։ Ինչպե՞ս դա նրա բերնից թռավ։ Բայց նահանջել նա չէր ուզում, և ավելացրեց.

— Բոլորն առանց մնացորդի սրբել, մաքրել...

Ֆելիսիեն ծաղրանքով, բայց նույն հեզությամբ շարունակում էր.

— Տիեզերքը վերափոխման կարիք է զգում։ Առաջին փորձը չի հաջողվել։ Սկսենք նորից...

— Միայն թե ոչ ես,— բացականչեց Մարկը։— Մի անգամն էլ բավական է։ Թեկուզ գրողի ծոցը կգնամ, միայն թե ձեզ հետ չինեմ։

Գնալիս Մարկը դուռը շրմփացրեց։ Ֆելիսիենը, տեղից վեր թռնելով, հայհոյեց.

— Էյ, խոզ, մի քիչ կամաց։ Ամանեղենը ջարդուփշուր կանես։ Բարաքը քիչ է մնում փլվի։

Հնազանդն փսփսուն կատաղեց։ Բայց դրա փոխարեն Մարկը հանդարտվեց։ Նա քրքջաց.

— Փորձանոթները նրա համար մարդկանցից թա՞նկ են։

Բայց նա իրենով այնքան էլ չէր հպարտանում։ Փաստորեն նա ինքն իրեն ձաղկեց և ոչ թե Ֆելիսիենին։ Եվ ի լրումն այդ ամենի այդ նպատակի համար օգտագործեց մոսկովյան ճիպոտներ... Մարկը կատաղությունից նույնիսկ սկսեց դողալ։

— Երբե՛ք։ Երբե՛ք։ Ես չեմ տրվի նրանց։

Երկու երիտասարդ բանվորուհիներ, որոնք անցնում էին այդտեղից, զոռացին նրան.

— Իսկ մյուսներն հո տրվեցի՞ն։

Զարմանքից շվարած, Մարկը շրջվեց։ Աղջիկներն շտապ

քայլերով հեռանում էին։ Բայց մեկն ընթացքի ժամանակ գլուխը շրջեց արագիլի նման և լեղու ցույց տվեց Մարկին.

— Մի՛ անհանգստանա, կտրվե՛ս։

«Չե՞մ տրվի... Ոչ ձեզ, քածեր (հենց միայն ձեր հոտն առնելուց մարդու սիրտ խառնում է։ Մինչև մահ դրանից պրծում չի լինի), ոչ ձեզ, մոսկովյան արջեր... Եվ չեմ տրվի։ Ինչպես հին գվարդիան։ Ես մեռնելու մտադրություն չունեմ... Բայց ձեզ չէ, որ հասցեագրում եմ մարշալ Կամբրոննի թևավոր խոսքը։ Այլ մտքի այն հերմաֆրոդիտներին, այն գիտնականներին, որոնք բուռն գոռոզությամբ դավանում են իրենց անմարդկային «գիտությունը գիտության համար», հոգ չտանելով այն մասին, թե դա ինչ հետևանք կունենա մարդկության համար»։

Եվ այդ ժամանակ պատահականորեն Մարկը կանգ առավ բուկինիստի ցուցափեղկի առաջ, որտեղ, դեռ շարունակելով փնթփնթալ, սկսեց թերթել մի նշանավոր մանրէաբանի գիրք, որի մեջ առանց դժվարության իր վարժված աչքով նկատեց, որ իր դեմ ծաղրանկար է, որ դիտնական այրը իր ծաղրանկարն է արել, քանի որ չկա ավելի անհեթեթ բան,— քան վարակիչ հիվանդությունների հարուցիչ ստեղծելու վրա տքնող գիտության ներկայացուցիչը։ Մանրէ արարողը, ավա՛ղ, մինչև հիմա հաջողություն չի ունեցել և վշտացած դժգոհում է, որ իրեն դեռ չի հաջողվել, «փայլուն կերպով լրացնել այդ ցավալի պակասը», այսինքն. փտամանրէները դարձնել ախտածին։ Բայց նա մխիթարվում էր նրանով, որ դոնե փայլուն կերպով լուծել է պաթոգեն մանրէների կորցրած ախտածին լինելու հատկությունը վերադարձնելու խնդիրը և նույնիսկ ուժեղացրել է նրանց ակտիվությունը, հասցնելով այն մինչ այդ չտեսնված աստիճանի։ Ոչ առանց հպարտության նա նկարագրում էր կուլտուրաների աճեցման գծով իր տքնաջան աշխատանքը և աստիճանաբար ուժեղացող պատվաստների հատուկ մեթոդը, որոնց շնորհիվ էլ նրան հաջողվել էր իրականացնել այս սխրագործությունը. սկսելով երիտասարդ մկից, նա անցավ ծեր մկանը, այնուհետև կուլտուրան պատվաստեց ծովախոզուկին, նույնպես նախ երիտասարդ, ապա՝ ծեր, հետո փորձը կատարվեց ոչխարի վրա, շան վրա և այլն, և այլն։ Հերթը հասել է մարդո՞ւն։

Մարկը քրքջաց։ Որտեղ ես դու, Մոլիեր... Ահա քեզ ևս մի ավար, ժյուլ Ռոմեն... Հետո Մարկը հիշեց, որ մռայլ օրերին,

երբ Եվրոպայի վրա կախվել էր գազային պատերազմի վտանգը, ոչ մի մեծ գիտնական, նույնիսկ նրանցից, ովքեր անկեղծորեն ցանկանում էին այդ վտանգը կանխել, չէր համաձայնվում իր գիտական հետազոտությունները ենթարկել հասարակական բարոյականությանը։ Գիտությունը «über alles!...»[1]։ Եվ նրա մեջ նորից բորբոքվեց կատաղությունը... Թող գիտության այդ մոլագարները չվկայակոչեն իրենց անշահախնդրությունը։ Որոշել են իրենց հոգին փրկե՞լ։ Հիանալի՜ է։ Բայց ընդամին նրանք կործանում են իմ կյանքը։ Ավելի լավ կլիներ նրանք կործանեին իրենց հոգիները, և փրկեին իմ և ուրիշների կյանքը... Նրանք չարաշահեցին իրենց վստահված իշխանությունը։ Եվ պատասխան կտան դրա համար, խստորեն պատասխան կտան։ Գալիք պրոլետարական հասարակարգը իրավացի կլինի շղթայակապել նրանց կամ գոնե հասարակական օրգանների հսկողության տակ դնել։ Գուցե նույնիսկ հարկադրված լինեն փակել որոշ լաբորատորիաներ, իսկ որոշ մարդկանց էլ արգելեն շարունակել հետազոտությունները։ Ոչ մի վատ բան չի լինի։ Primum vivere...[2] ... Հասարակական բարիքի դիկտատուրան գիտության նկատմամբ...

Նորից ուղիները Մարկին տանում էին դեպի Մոսկվա։ Նա հայհոյեց...

«Ո՛չ, ո՛չ և ո՛չ... Ես չեմ հրաժարվի իմ ինդիվիդուալիզմից, բայցև չեմ ամփոփվի նրա մեջ, ինչպես աշտարակում...»։

Նրան պատկերացավ Ֆելիսիենի երերուն աշտարակը՝ իր փորձանոթներով ու սպիրտայրոցներով... Մարկը Ասյայի դաժան քմծիծաղով նայում էր այդ աշտարակին... Բայց ծաղրը հավասար չափով վերաբերում էր նաև իրեն։ Մարկը բարկացած քշեց նրան ձեռքի երեսի կողմով, ինչպես աներես ճանճին... իսկ ճանճը վերադարձավ։ Վերադարձավ և նորից շարժվեց շուրթերի վրայով... Մարկի բերանը ծռել էր դառը քմծիծաղը մնացյալ բոլոր մարդկանցից անջրպետված անպատուհան ինդիվիդուալիզմի չէնչինության ու դատարկության վրա։ Ցավն այն չէ, որ անձնական փրկությունը խիստ հիշեցնում էր էգոիզմի մահացու մեղքը, ցավն այն է, որ այդ փրկությունն ընդհանրապես պնդնարին է։ Անհնարին է, քանի որ դա անհեթեթություն է։ Ինչպե՞ս փրկել ճյուղը, երբ ծառն ինքը դատապարտված է։ Ենթադրենք նույ-

---

1 *Ամեն ինչից վեր է (գերմ.)։*

2 *Ամենից առաջ ապրելն է (լատ.)։*

նիսկ, թե ճյուղը կարող է կանաչել նաև այն բանից հետո, երբ ծառը մեռած է, բայց դա ընդամենը վերջին ցնցումներ են, շուտով այդ ճյուղը նույնպես կթառամի։ Իր «եսի» մեջ ընկած Մարկը, հետաղոտելով իրեն, հասկացավ, որ այդ «եսը» ապրում և հյութերով սնվում է սոսկ շնորհիվ այն ուղիների, որոնք նրան միացնում են կոլեկտիվի անընդդիմելի «մենքի» հետ։ Փրկվելու, համար պետք է փրկել այդ «մեղքը» և կամ մնանել նրա հետ... Իսկ հանդած ժողովուրդների և դարերի հանճարնե՞րը։ Նրանք ծովը նետած շիշ են, մեռնողների վերջին կանչ։ Բայց ամեն մարդու չէ, որ տրված է դանել կանչի խոսքերը։ Իսկ ի՞նչ խոսքեր կգտնեմ ես, Մարկս, որ արժանի լինեմ ապրելու դարերում։ Իսկ եթե ես ասելու բան չունեմ (կամ առայժմ դեռ չունեմ... Գուցե, ժամանակի ընթացքո՞ւմ...), պարտքս ինձ թելադրում է կռվել մինչև վերջին հնարավորությունը, փրկելով խորտակվող նավը։

Ուրիշ մարդկանց պայքարից հետու մնալը թույլատրելի է միայն հանճարին կամ սրբին, որովհետև նրանք հանճար են և սրբեր, բայց այն ժամանակ ստիպված ես ավելի ծանր պայքար տանելու, քանի որ այդ պայքարի ասպարեզը հավիտենականությունն է։ Այդտեղ պահանջվում է լիակատար ինքնահրաժարում, լիակատար ինքնազոհաբերում, որը «իմ ուժերից վեր է»,— խոստովանում էր Մարկը։ «Պետք է ուզել լոկ այն, ինչն ուժերդ ներում են։ Եվ այն, ինչն ուժերս ներում են, ես պարտավոր եմ ուզել և ուզում եմ։ Եթե ես ուզում եմ փրկել իմ ազատության կանաչ ճյուղը, ապա ուզում եմ փրկել նաև ամբողջ ծառը։ Իսկ քանի որ ես ուզում եմ փրկել ծառը, ապա ուզում եմ կրծողներից պաշտպանել նրա արմատները, ուզում եմ գործել, արհամարհելով վտանգը։ Իսկ նրանք, ովքեր հանգիստ նստում մնում են հարվածներից հետու, սուզված իրենց մտքերի մեջ, ինչպես փեռուրե ներքնակներում, փոքրոգի և անձնասեր քաղքենիներ են և ոչ ավելին։ Բարձր գաղափարական մղումները, որոնցով նրանք քողարկում են իրենց վախկոտությունը, միայն ստորություն են ավելացնում այդ վախկոտությանը։ Իսկական ինդիվիդուալիզմը ոչ մի բանի առաջ կանգ չի առնում, նա գիտե հարկ եղած դեպքում նաև ճակատամարտը տանուլ տալ... Իսկ ինչո՞ւ ոչ։ Շամամատային տախտակի վրա ես ընդամենը զինվոր եմ։ Ուրիշներն ինձ կփոխարինեն պատում։ Մեր նշանաբանն է— դիմանալ մինչև վերջը, մինչև վերջին մարդը»։

Ցանկանալով ապացուցել իրեն, հակառակ Ասյայի ցավալի

կշտամբանքին, որը մինչև հիմա դեռ շարունակում էր հնչել նրա ականջներում, որ իր ինդիվիդուալիզմն ընդունակ է գործողության և անդորրության հետք չի կրում, Մարկն սկսեց փնտրել այնպիսի մարդկանց, որոնց կարող էր միանալ։ Այն օրերին ծածանվող դրոշների վրա (Աննետայի որդին հաճույքով յուլա կգնար առանց դրոշների, նա այնքան շատ էլ չէր վստահում դրոշներին, բայց երևում է, մարդկանց մեծամասնությանը կեղծ փայլը պետք է) ուրվագծված էին երեք գաղափարներ, որոնք չէին կարող չգրավել Մարկի ուշադրությունը, որը ծարավի էր գործունեության. ոգու Աննկախություն, խաղաղություն, Եվրոպա։ Պատերազմի ժամանակ այս երեքն էլ ենթարկվում էին հալածանքների, և դա խոսում էր ի օդուտ նրանց։ Նրանց շատ սազում էր այն մակագրությունը, որը Ֆորենը կցել էր հանրապետության վրա արված իր ծաղրանկարին, «Ինչ գեղեցիկ էր նա կայսրության ժամանակ»։ Բայց ի՞նչ էր մնացել նրանց գեղեցկությունից։ Մարկը հետաքրքրությամբ, որին խառնվում էր անվստահության մի մեծ բաժին, գնաց նայելու, թե ինչպիսին են նրանք հիմա։ Գեղեցկությունները բացահայտորեն ընկել էին վատ միջավայր։ Մի ժամանակ բոլորի կողմից լքված, նրանք հիմա շրջապատված էին որոնողների երամով։ Մարկն իրեն ստիպեց խեղդել այն նողկանքը, որ առաջացնում էին նրա մեջ Պենելոպայի փեսացուները, երիտասարդ ու ծեր բախտախնդիրները, որոնք գտնվում էին ոչ թե իրենց ընտրյալի ննջարանում, այլ նրա սեղանատունը, որտեղ նրանց հրապուրում էր հարուստ սեղանը։

Այստեղ առաջնությունը գրավում էին փորձված քաղաքագետները, որոնք չափազանց ճկուն ողնաշար ունենալով, կարողանում էին խցկվել բարձր գաղափարներով առաջնորդվող ուղածդ կուսակցության մեջ և իրենց հետ բերում ճահճի հոտած մթնոլորտ։

Ամենուրեք— աջից, ձախից— գետնի վրա թմբիկների նման փոքրիկ անցումներ էին երևում, որոնք կոչվում էին մտքի ինտերնացիոնալներ, պենկլուբներ և թանաքի պարագաների կոնգրեսներ,— մտավորականության ամեն տեսակի միավորումներ, իսկ նրանց վրա Հառնում էր Ազգերի լիգային կից գրականության և արվեստի Միջտական կոմիտեն։ Հասնել այդպիսի բարձրության, մտնել մեծավաստակ գիտնականների շարքը, այդ մասին մտածելն անդամ ավելորդ էր։ Եթե անգամ մուտքն այնտեղ փակ լիներ և այդքան խստորեն չպահպանվեր, միևնույն է, այդ հան-

դարտության մեջ չարժեր մտնել. որքան ավելի շատ են բարձրանում, գործելու անհրաժեշտությունն այնքան քիչ է։ Կոմիտեի անդամները մատը մատին չէին խփում, նրանք միայն նիստեր էին անում։ Եվ ինչու գործեին, երբ բազկաթոռների մեջ նստելն այնքան հանգիստ էր իրենց համար։ Իսկ Մարկը, թեև ոչ իր մեղքով, չափազանց երկար հետևը աթոռին կպցրած լինելով, հիմա շարժվելու անհաղթահարելի պահանջ էր զգում, պահանջ էր զգում իրեն ապացուցելու, որ ինքը գոյություն ունի։ Նրան համակել էր գործունեության տենչանքը։ Ցածում, հարթավայրում, ավելի շուտ կարելի էր հանդիպել «գործողներին»։

Եվ Մարկը հանդիպեց նրանց— նրանք կանգնած էին հոծ շարքերով, բռունցքները թափ էին տալիս և ազմուկ բարձրացնում թերթերի էջերում և միջազգային բանկետներում։ Բայց այդ բոլորը հանուն իրենց նեղ մասնագիտական շահերի, հանուն իրենց հեղինակային իրավունքների, իրենց հրատարակումների, թարգմանությունների, ծառայություն ծառայության համար սկզբունքը տարածող ֆիրմաների ռեկլամի։ Ակնհայտ նրանց չնախատենք, ամեն մի հեղինակ ուզում է— և այդ ցանկությունը միանգամայն օրինական է,— որ իր գրքերը կարդան, և որ գլխավորն է, գնեն. չէ՞ որ ինչ-որ կերպ պետք է ապրել։ Սակայն Մարկը, որ ներողամտությամբ աչքի չէր ընկնում, դրան այլ կերպ էր նայում։ Նրան «եկամտաբեր» իդեալիզմը չէր հրապուրում։ Մարտից հետո կարող եք մտածել ավարի մասին։ Բայց հիմա մարտը դեռ նոր է սկսվել։ Եվ պետք էր ոչ թե անձնական շահ փնտրել, այլ վտանգներ։ Սակայն շատ շուտով Մարկը համոզվեց, որ շահի որոնումները դուրս են մղում մնացած բոլոր հետաքրքրությունները, կապում են նրա ընկերների ձեռքերն ու ոտքերը։ Հանուն շահի նրանք հարկադրված էին այնքան բաներ զիջել, որ վերջում հավանություն էին տալիս այս ամբողջ աշխարհին, ներառյալ ուրիշի մեջքին թափվող դագանակի հարվածները և բոլոր տեսակի աղատությունների ոչնչացումը, միայն թե աշխարհը նրանց ընդուներ, այսինքն՝ ընդուներ և վճարեր նրանց արտադրանքի դիմաց։ Զարմանալի բան է, այդքան փորձված այդ պրոֆեսիոնալներին ապշեցնում էր ակնթարթային կուրությունը, հենց որ պահանջվում էր նշավակել «ամֆիտրիոնների, որոնց մոտ ճաշում են» կամ երաշում են ճաշել,— Ֆրանսիայի տիրակալների (ում ձեռքերում որ գտնվում են և՛ պատիվները, և՛ պարգևները) կամ աղուհացով դիկտատորների հասարակական հան-

ցագործությունները։ Միայն մի բուռ գրողներ էին— միշտ միևնույն մարդիկ, որ համարձակվում էին բողոքել, և այն էլ լոկ ախորժակի բացակայության պատճառով, բայց այդ բողոքները (Մարկը դրանց միացնում էր նաև իր բողոքը), նույնքան հյուծված և վհատ, որքան իրենք բողոքավորները, արձագանք չէին գտնում։ Մերկացումները կրկնվում էին օրըստօրե, ինչպես և հանցագործությունները, որոնց խոսքը վերաբերում էր։ Վերջում պարզապես դադարում էին դրանք լսել։ Ջանձրանալով անվերջ նույն բանից, ընթերցողը զայրացած բացականչում էր. «Է՛լի նույնը»— և դադարում էր բաժանորդագրվել այն թերթերին, որտեղ մշտապես անձրև էր մաղում։ Հասարակությանը պետք էին բարոմետրեր՝ «պարզ»-ի վրա կանգնած. և գոյատեր՝ սանդուղքի վերևի աստիճաններին։ Կլեման Վոտել[1]— այ դա մեզ ձեռ է տալիս։

Մարկին նույնպես համակել էր ձանձրույթը՝ այդ թույլ և անգործուն բողոքներից։ Վերջ ի վերջո դրանք դառնում էին գործարք սեփական խղճի հետ, պահեստային ելք, ուր կարելի էր փախչել գործողության վտանգներից կամ սեփական անզորության ծանր գիտակցությունից։ Ստորագրելով մի տասն այդպիսի կոչեր, Մարկը կատաղությունից իր անվան հենց առաջին տառի վրա ծայրը չարդեց, և՝ Մ-ն դարձնելով Ք-ը, երեք տառից բաղկացած շատ թունդ մի բառ գրեց։ Բողոքների անպտուղ դաշտում աղբը պետք կգա...

Բայց դրա փոխարեն թունավոր սնկերի համար, որոնք անսպասելիորեն անթիվ անհամար քանակությամբ բուսնել էին պացիֆիզմի պարարտ հողում համարյա մի գիշերվա ընթացքում, ոչ մի լրացուցիչ սնունդ չէր պահանջվում։ Հրաշալի բերք է։ Դեռ երեկ խաղաղությունը շնորհազրկված էր։ Նույնիսկ խաղաղության մասին խոսելը պետական դավաճանություն էր համարվում։ Իսկ հիմա դա լավ տոնի նշան է։ Սևիլիայի սիգարագործ կանանց նման, որոնք ատամների արանքում պլրանքով ծաղիկ են պահում, ամեն մեկը ջանում էր հիմա իր շրթունքները կամ գրչակոթի ծայրը զարդարել ձիթենու թարմ տերևով։ Կարճ ճանապարհ չեն անցել Նոյի տապանի այդ աղավնիները։ Ոմանք տասը տարի առաջ պատավների նման ճախրում էին մարտի դաշտերի վրա և կռկռում, պահանջելով մինչև ժամկետը դուրս եկած,

---

1 Բուրժուական «վեճ ժուռնալ» լրագրի աշխատակից։

դեռ չարտոնագրված պացիֆիստների գլուխները։ Ի պատասխան ձեր զարմանքի նրանք, առանց երկար մտածելու, կպատասխանեին, որ ամեն բանջարեղեն իր ժամանակն ունի. երեկ պատերազմ էր, այսօր՝ խաղաղություն։ Մարկը, որը մորից ժառանգել էր նրա «անհաշտությունը», մի վերստի վրա զգում էր ուլածոդ համաձայնողականությունը, խեթ-խեթ էր նայում «խաղաղության» այդ տարօրինակ «պահապանների» անսպասելի արշավանքին։ Ո՞ւմ հրամանով էին նրանք գործում։ Կռահելը դժվար չէր։ Այդ խաղաղությունը, որը խրախուսվում էր ղեկավարության, եկեղեցու, համալսարանի և բարձրագույն իշխանությունների կողմից, բարեմիտ խաղաղություն էր— այն խաղաղությունը, որ սպեղանու նման հոսում է հոգևորականների շուրթերից, ավելի ճիշտ, եկեղեցիներում քարոզ կարդացող խոշոր կապիտալի կամակատարների շուրթերից, եկեղեցիներ, որ դարձվել են գործարանային դարպասների կողքը դրված թողանցման տնակներ, որոնք գոնվում են գինետան կամ պոռնկանոցի դիմդիմացը այն հաշվով, որպեսզի կրոնի հեղինակությամբ սրբագործեն շահագործումը և շահագործվողների մեջ սիֆիլիսի և ալկոհոլի հետ միասին պատվաստեն ամենատարանական հնազանդություն,— դա օրինականացված և նախաստորագրված կողոպուտի խաղաղություն է, հաշտության պայմանագրերից եկամուտ բերող խաղաղություն, սպեկուլյանտների խաղաղություն, որ գործեր են սարքում խաղաղության վրա (երեկվա և վաղվա պատերազմի վրա, քանի որ պատերազմում հարստանում են միշտ միևնույն մարդիկ)։ Աղքատները մուտք չունեն այդ շրջանակի մեջ։ Նրանց ձեռը ոչինչ չի ընկնում։ Բայց դրա փոխարեն նրանց կաշին լավ են քերթում, օգուտների փոխարեն նրանց հրամցնում քարոզներ. հարուստների աստվածը միշտ պատրաստ է քաղցածներին ողողել խաղաղության, իդեալիզմի և սիրո մանանայով։ Դեպուտատների պալատի զառամյալ հիսուսները ձուկ էին որսում ճանկելով այդ ձկանը լեռան նստարաններից արտասանվող լեռնային քարոզների կարթով, նրանք քարթակներին ու գայլաձկներին կոչ էին անում իրար սիրել, իսկ կողոպտվածներին՝ զոհաբերել իրենց ունեցվածքը հանուն խաղաղության գեղեցիկ աչքերի։ Բայց կոչ անել ուրիշի սեփականության հաշվին ճարպակալած հարուստների զոհերին— ինչպե՞ս չէ։ Մեր զառամյալ հիսուսները նույնպես մասնակից են եղել պատերազմին։ «Եկեք այդ չհիշենք, եղածը, եղած է։ Մենք ավելի լավ կանենք... Խաղաղություն բա-

րի կամքի մարդկանց, խաղաղություն և բարեհաճություն (իսկ այն կամքն է միայն բարի, որը հաջողության է հանգեցնում)։ Եվ թող օրհնվի գոյություն ունեցող կարգը»։

Բայց առաջիկայում դեռ պետք էր համոզել պարտվածներին։ Այստեղ շատ ավելի մեծ պերճախոսություն էր պահանջվում. հաղթողների իդեալիզմը բացահայտորեն չէր բավականացնում։ Ամեն մի պարտվող իր իդեալիզմն ուներ, և ամեն մեկը հնչում էր իր տոնայնությամբ. ստացվում էր աննկարագրելի անհարմարություն։ Ստիպելու համար, որ նրանք ներդաշնակորեն հնչեն, պետք էր կպնել ուրիշ լարերի, սարսափի և ընդհանուր շահերի լարերին։ Հարմար պահին լույս աշխարհ եկավ պան-Եվրոպան, և հարմոնիան խոշոր ձկների միջև վերականգնվեց, իսկ հենց նրանք էլ փաստորեն տոն են տալիս։ Նրանք են գետի տերերը։ Նրանց համար ձեռնտու է համախմբվել ամենքի դեմ, ով ոտնձգություն է անում նրանց անգամանի վրա։ Կարմիր Կրեմլի վիթխարի աստվերը, որ ձգված էր եվրոպական հարթավայրի վրայով, հանդիսանում էր այն խրտվիլակը, որին ճարպկորեն օգտագործում էին պանեվրոպական խաղի պարագլուխները— սամուրայի[1] սառը հայացքով երիտասարդ նորաձաշակ արիստոկրատը և սոցիալիստ-կարգալույծ[2], խաբեբա ծեր միասիկը Քեդ Օրսեի հետ։ Նրանք աճապարում էին հավաքել իրենց հովվական գավազանի ներքո ու քշել մի փարախի մեջ և հաղթողների հոտը, և պարտվածների, միայն թե բուրդը չընկներ ընդհանուր հակառակորդի ձեռքը։ պրոլետարական պետությունների միությանը՝ ամուր նատած ձիուն, որը երկու սմբակով Ասիայում էր կանգնած, երկու սմբակով՝ Եվրոպայում, սպառնում էր, ինչպես մի նոր Ոսկե Հորդա, նվաճել աշխարհը։ Հնարավոր է, որ այդ աշխարհը— նրանց աշխարհը, ում վրա ընկած է արտոնյալ դասակարգի ճնշող ծանրությունը,— մեծ հաճույքով կփոխեր հեծվորին կամ ինքը կթռչեր ձիու վրա և կշարժվեր Ոսկե Հորդայի հեծյալի հետևից, եթե իմանար, որ այդ Հորդայի նպատակը իրեն օգնելն է և իր սեփական հողը ետ նվաճելը։ Բայց հենց այդ էր, որ նա չպետք է իմանար։ Եվ նա դա չգիտեր։ Քի՞չ միջոցներ գոյություն ունեն ուղեղներ մթագնելու համար, թանկարժեք ոսկեգեղմ ունե-

---

1 Նկատի ունի «պանեվրոպական» շարժման հիմնադիր կոմս Կուդենհոֆ-Կալերգիին, որի մայրը ճապոնուհի էր։

2 Արիստիդ Բրիանը (1862—1932), որը ժամանակին սոցիալիստական կուսակցության անդամ էր և հեռացվեց նրա շարքերից։

ցող միլիոնավոր մարդիկ, միլիոնավոր հասարակ մարդիկ, որոնց գլուխները օրըստօրե միևնույն բանը լցնում են այնպիսի լրագրեր, ինչպիսին է «Ժողովրդի բարեկամները», իրենք էին վախվորած սեղմվում նրանց, ովքեր իրենց խուղել էին, և ապստամբվում էին հենց իրենց փրկարարների դեմ։ Վարպետորեն սեղմելով երկու ստեղներին— սարսափին և հիմարությանը, հեշտությամբ կարելի է նույնիսկ ոչխարի սիրտը դարձնել առյուծի սիրտ։ Պան-Եվրոպայի ինժիներները առանց որևէ դժվարության պատարկ իդեալիզմների ջրերը ամեն տեսակի հոտած ճահիճներից տարան դեպի պահանջվող հունը— խաչակրած արշավանքի հունը, որ կոչված էր Մոսկվայի սեփականատիրկիչների մատնրիալիզմից պաշտպանելու աստծուն և դիվիդենդները։ Եկեղեցու իշխանները և մետաղագործության բարոնները, պաստորները, ռաբբիները, ֆաշիստները, Քրիստոսը, Կրուպը և Կրեզոն այս անգամ միաբան եղան։ Ֆանվեցին նաև սոցիալական Բեռնար Ճղնավորները[1]։ Մարկի նախկին բարեկամ[2] հասարիկ Ադոլֆ Շևալիեն, որը դանվում էր Ազդերի լիպային հիմք Բրիանի շքախմբում, դարձավ պան-Եվրոպայի զորագրոշակիրներից մեկը։ Սակայն դա նրան չէր խանգարում լինել զինված ազգի ազգային պաշտպանության բոցաշունչ ջատագովը, ազգ, որին ամբողջապես, առանց սեռի խարության, փոքրից մինչև մեծը, անհրաժեշտ է զորակոչի ենթարկել։ Բարեմիտ ինքթերը իրենց էջերում շարունակ վերարտադրում էին նրա՝ երաժշտի խնամված բաշը և հաճախակի տեսնելուց սովորական դարձած մի տեսակ պատավային դեմքը՝ Ռոբեսպիերի շրթունքի նման դուրս ցցված ներքևի շրթունքով։

Բայց դրա փոխարեն Վերոնի փթթուն կերպարանքը հազվադեպ էր երևում, ավելի հիշտ, ամենևին չէր երևում։ Ավելի շուտ կարելի էր տեսնել նրա ճարպիկ կարճամատ ձեռքերը. դրանք, զուր տեղը ժամանակ չկորցնելով, այս ու այն կողմ էին նետվում ու, թեև կորագծեր էին քաշում Ֆրանսիայի և Գերմանիայի միջև, սլանում էին ուղիղ դեպի նպատակ, այստեղից-այնտեղից ձեռք գցելով ավարի ամենահամեղ պատառները։ Ներկայումս նա մասնակցություն էր ունենում գաղտնի բանակցություններում,

---

[1] Նկատի ունի Բեռնար դ'Կլերվոյին (1091—1153), որը կոչ էր անում երկրորդ խաչակրած արշավանքի։

[2] Տես նախընթաց հատորը «Մի աշխարհի վախճան»։

որոնք արդյունաբերողների ֆրանս-գերմանական ինտերնացիոնալը վարում էր Հայդելբերգի «Պողպատյա սաղավարտի»[1] հետ։ Այդ մասին պատմեց Ժան-Կազիմիրը,— այլ կերպ իր բունը խըցկըված խեղճ Ռիվիերը երբեք դա չէր իմանա։ Խաղաղության ուժերի և պատերազմի ուժերի անտագոնիզմը մինչև հիմա Մարկը պատկերացնում էր ծայրահեղորեն գռեհկացված ձևով։ Փարիզ կատարած իր այցելություններից մեկի ժամանակ Ժան-Կազիմիրը նրա աչքերը բացեց։ Նա Մարկի նկատմամբ պահպանել էր պոռնիկի յուրահատուկ հավատարմություն, որը անոտի ակնածանքից, որպես քնքշություն և թեթևակի ծաղր առաջացնող անցյալի հիշատակ, գոնե տարին մի անգամ անպայման այցելում է իր առաջին սիրեկանին։ Ճիշտ է, այժմյան այցելությունը պայմանավորված էր նաև հետաքրքրությամբ, որը Ժան-Կազիմիրը չանում էր թաքցնել։ Նա, իհարկե, լսել էր Մարկի ընտանեկան դրամայի մասին, ինքն առաջիններից մեկն էր, որ կանխագուշակեց մոտակա դժբախտությունը և հիմա աշխատում էր ընկերոջ դեմքին կարդալ աղետի հետքերը։ Ի՞նչ պատկաս ներկայացում է։ Բայց Մարկը, շատ լավ ճանաչելով իր Սեն-Լյուսին, շտապեց վարագույրն իջեցնել։ Նա հագավ անտարբերության դիմակը։ Բայց և այնպես դրանով ոչնչի չհասավ։ Սեն-Լյուսը կարողանում էր ճեղքերից ներս նայել և ինքն իրեն ասաց. «Օհո, խիստ վիրավորված է»։ Մարկի բարձր հետաքրքրքրությունը քաղաքականության նկատմամբ նա համարեց (որում չէր սխալվում) բարոյական տանջանքները մոռացության տալու միջոց, բայց այդ տանջանքների խորությունը նա չէր պատկերացնում, քանի որ բացի կնոջ դավաճանությունից Մարկին այրում էր չրավարարված հոգու կրակը, որը ձգտում էր գտնել իր կոչումը։ Ցանկության դեպքում Ժան-Կազիմիրը կարող էր Մարկին որոշ նորություններ հաղորդել փախստականությունից մասին. նա ուներ այդ կնոջ մասին ամենաթարմ տեղեկությունները, որոնք ստացված էին Ստոկհոլմում գտնվող ֆրանսիական դեսպանության դիվանագիտական կանալներից, որի գործակալները Ասյայի դոսյեն լրացրել էին ամենաանհեթեթ տեղեկություններով։ Փողոցային կնոջ չարախնդությամբ, որը ոչ այնքան չարությունից,

---

[1] Միլիտարիստական կազմակերպություն Գերմանիայում, հիմնադրված 1918 թ., որը դրամական օժանդակություն էր ստանում գերմանական խոշոր արդյունաբերողներից, նույն թվում՝ Հայդելբերգից։

որքան չարաճճիությունից է վրեժ լուծում իր ծածկամիտ ընկերուհուց, նա անցողակի հիշատակեց մի ընկերոջ, որը «վերջերս հաճույք էր ունեցել արտասահմանում հանդիպելու տիկին Ռիվիերին»։ Մարկը հոնքն էլ չշարժեց, նա սպասում էր շարունակությանը։ Ժան-Կազիմիրը նայեց Մարկի ձեռքին, որը եղունգնելով տետրակի երեսին խազեր էր քաշում, նույնպես սպասեց, ժպտաց և նորից սկսեց խոսել քաղաքականությունից։ Մի քանի վայրկյան Մարկը չէր կարողանում սթափվել. նրա ականջները դժժում էին, նա ամեն ինչ կտար, որպեսզի խոսակցությունը շրջեր նախկին թեմային։ Բայց արդեն ուշ էր, և, ներքուստ կատաղելով, նա սկսեց դատողություններ անել փողի, խորամանկության և իշխանության վերաբերյալ— խոսք բացեց իր համար առելի քաղաքականության մասին։

Ժան-Կազիմիրը այդ շրջանում— ոչ երկար ժամանակով— Բեռլինում գտնվող դեսպանության ատաշեն էր։ Նա բոլոր հիմքերն ուներ լավատեղյակ լինելու ֆրանսո-գերմանական քաղաքական և ֆինանսական գաղտնի բանակցություններին, քանի որ դրանցում ինքը ոչ վերջին դերն էր խաղում։ Իսկական աղվեսի նման, որն զգացել է, թե որտեղից է հոտը գալիս, ուրիշ ոչ մի բանի չնմանվող հոտը (այդ ո՞ր հոտառությունից զուրկ խելոքն է համարձակվել ասելու, թե փողը հոտ չունի), նա երկու ուժերից— պետություն և դրամ— ընտրեց առավել ռեալը։

Դեսպանական զգեստի տակ նա ծառայում էր խոշոր արդյունաբերական մագնատներին։ Նույնիսկ ինքը դեսպանորդը գլխի չէր ընկնում նրա մեքենայությունների մասին։ Գոյություն ունեն երկու ֆրանսիական քաղաքագետներ, ոչ այնքան հակառակ, որքան տարբեր հարթություններում ծավալվող. պարադայնորեն-ցուցադրական և խորքային։ Ժան-Կազիմիրը, ինչպես սպիտակաձուկը, ճարպկորեն լողում էր գետի մակերեսի և հատակի միջև։ Նրան սովորաբար զեկավարում էր ոչ թե շահադիտությունը (թեև նա հիանալի կարողանում էր շատ արագ ճանկել որսը։ Բայց Ժան-Կազիմիրի ընչին ախորժակի պայմաններում նրան լիովին բավականացնում էր ճանճի թևն անգամ)— նրան հրապուրում էր խաղի նկատմամբ ունեցած կիրքը։ Նա առաջին կարգի խաղացող կլիներ, եթե չունենար մի էական թերություն. հակառակորդի խաղաթղթերը դուշակելը նրան ավելի մեծ հաճույք էր պատճառում, քան սեփական խաղաթղթերով լավ խաղալը— և երկրորդ, էլ ավելի լուրջ թերությունը— չափազանց երկար լեզուն։

Անկողնում հաճելի կնոջ կամ երես առ երես առաջին իսկ հանդիպած զրուցակցի հետ խոսելիս, որի կերպարանքն իրեն դուր էր եկել, նա չէր կարողանում զսպել որևէ մեկի վրա մի կուշտ ծիծաղելու գայթակղությունը։ Բայց չէ որ նա ավելի լավ գիտեր, քան որևէ մեկը, թե որքան թանկ են վաթսատրվում լսել իմացող ականջները։ Զուր չէր, որ մի ժամանակ նրա ղեկավարության տակ էր գտնվում գիշերային գեղեցկուհիների մի ամբողջ գումարտակ։ Բայց նրա անսպառ սրամտությունը ելք էր պահանջում։ Եվ սրամտությամբ խաղին հասցրած վնասն ուղղելու համար նա հուլյոը դնում էր իր աշխույժ մտքի վրա։ Եթե բանը դրան է հասել, ապա նա այդ խաղն էլ խաղում էր սոսկ զվարճանքի և ոչ թե օգուտի համար։ Թե ով վերջ ի վերջո կտանի կամ ով կտարվի— նա թքել էր դրա վրա։ Երբեմն նա նույնիսկ դեմ չէր ստիպել, որ տարվեն նրանք, ում համար ջանքեր էր թափում, որ շահեն... Արծիվ թե գիր։ Նայած տրամադրությանը։ Դա բացատրվում էր նրանով, որ, ինչպես նրա տերերից շատերը, ֆինանսական մեծ նշանակորհների կոնդոտիերները[1], նա խառնածին էր և օժտված հռոմեական կայսրության ժամանակների ազատարձակի բարոյականությամբ։ Նա ոչ մի արմատ չէր գցել։

Երբ Մարկն սկսեց ճնկճնկացնել եվրոպական խաղաղարարի ջութակը, Ժան-Կազիմիրը, որ փողոցային կնոջ նման շատախոս էր, չկարողացավ թաքցնել իր ուրախությունը։ Նրա ծիծաղը գալիս էր կրետի բունն ընկած անօգնական ծղրիդի վրա։ Խեղճը երևակայում է, թե ինքը տքնում է հանուն երկրում խաղաղության ամրապնդման։

— Խաղաղությունը, սիրելիդ իմ, հիմա չի արարվում ոչ մանուլով, ոչ ֆորումում կամ պառլամենտում արտասանված ճառերով, ոչ մինիստրական կաբինետներում, ոչ դիվանագետների խորհրդակցություններում և ոչ էլ նույնիսկ մարտերի դաշտում։ Այդ բոլորը հեռավոր անցյալ է։ Դա հնացել է։ Խաղաղությունը, ինչպես պատերազմը, այն մարդկանց ձեռքին է, ում ձեռքին քսակի կապերն են. այդ վիթխարի գործարանները ընդամենը մի տասը հոգի են, ոչ ավելին։ «Կյանքդ կամ քսակդ»։ Ասենք, նրանք նույնիսկ քեզ ընտրության իրավունք էլ չեն թողնում։ Քո փոխա-

---

1 Կոնդոտիեր— վարձու չոկատի հրամանատար հին Իտալիայում, փնթ. վարձով ամեն գործի համար կռվելու պատրաստ։

րեն իրենք են որոշում՝ ո՛ր կյանքը, ո՛ր մահը մեր ձեռքում է, սիրելիդ իմ։ Ամեն րոպեն՝ բավական է միայն ուզենք...

Մարկը տեղից խայթվածի նման ցատկեց։ Ա՜յ թեզ հիմար պարծենկոտություն։ Նույնիսկ որպես կատակ, որպես հեգնանք...

— Բավական է ուզե՞ք... Բավական է միայն ուզե՞ք։ Այդ ո՞վ։ Բավական է ո՞վ ուզի։ Չլինի՞ դու, Լու[1]։ Դու ոչինչ չես կարող։ Ոչինչ չես էլ ուզում...

Բայց Լուն նեղացկոտությամբ աչքի չէր ընկնում։ Տվյալ րոպեին նա ուզում էր միայն Մարկին ձեռ առնել։ Եվ այդ հարցում նա մեծ հաջողություն ուներ։

— Լուն ինքը մեծ չէ, բայց քնել չի թողնում։ Դիմացի՞ր։

Եվ նա սկսեց ետ տալ իր գաղտնի ինֆորմացիաների կծիկը։ Մարկը, հոնքերը կիտած, լսում էր սկզբում անտարբեր։ Երրորդ նախադասության վրա նա ականջները սրեց։ Տասներորդի վրա գազազեց ու մռնչաց։ Եվ ամեն մի նոր մերկացում դիմավորում էր կեղծ կլասիկական ոգով արտաբերած կատաղի ու անիմաստ մռնչոցով։ Վախենալով մի խոսք անգամ արտասանել, նա անսում էր շատախոս Մերկուրիոսի պատմությունը, որը բացահայտում էր իր տերերի խորամանկություններըժան-Կազիմիրը պատրաստակամությամբ մերկացնում էր քաղաքականության գաղտնի զսլանակները այն մարդկանց քաղաքականության, ովքեր ղեկավարում են հասարակական կարծիքը և պետությունները. բոլոր այդ «Ոսկյալ դատերին», «Ստանդարտ օյլերին» («Քեզ պե՞ր է գալիս նավթի հոտը։ Հիմա ամեն ինչին նավթի հոտ է կպած...»), Կոմիտե դ'Ֆորժին, Ածուխի տրեստին, Շկոդային, Կրեզոյին և այլոց։ Փայլելով իր լավատեղյակությամբ (այդ կատարյալ Սկապենը ոչինչ չէ՞ր մոռանում), նա զանազան թվեր էր բերում, տալիս էր ստույգ տարեթվերը և այն վայրերի անունները, որտեղ կնքում էին գաղտնի համաձայնագրերը, պայմանագրերը, որոնք ժողովրդին անտեղյակ պահելով, կապում էին պետության ոտ ու ձեռը հենց այդ պետության ծառաների՝ մամուլի և կառավարության լակեյների աջակցությամբ։ Նա մատների վրա թվում էր այն խոշոր լրագրերը, որոնք վաճառվել էին (այսինչ ժամանակ, այսքան դումարով) այդ մարդակերներից մեկին կամ մյուսին, պատմում էր, թե ինչպես նրանց գործակալնե-

---

[1] Բնագրում բառախաղ է. ժան-Կազիմիրի ազգանունը, որ Սեն-Լյուս է (Saint-Luce), համահնչյուն է «puce»-ի (լու) հետ։

րը կրպակների, ռեկլամային բյուրոների, գրախանութների միջով հսկում են թերթերի, ժուռնալների, բրոշյուրների վաճառքը, ամբողջ տպագիր միտքը։ Եվ քանի նա խոսում էր, Մարկն ավելի ու ավելի խորն էր սուզվում գարշահոտ ճահճի մեջ։ Նա խեղդվում էր։ Ազատ միտքը կապարի պես գնում էր դեպի հատակը։ Նրանից մնում էին միայն մի քանի պղպջակներ, որոնք, պայթելով, շրջանաձև տարածվում-ցրվում էին յուղոտ մակերևույթի վրա։ Մարկը պաշտպանվում էր, առարկում, վիճում։ Բայց զգում էր, որ խոսում է միայն խղճի մաքրության համար։ Հենց ոչ մի փորձում էր որևէ բան հերքել, ժան-Կազիմիրը նրա բերանը փակում էր նոր փաստով։ Այդ փաստին Մարկը կարող էր հարկադրել միայն անզոր «չեմ ուզում»-ը—բողոքը մի մանկան, որին մեծերը առանց ցանկությունն հարցնելու, բարուրում են, բարուրն արձակում, շրպտացնում են, սրբում, պահկեցնում, երբ և ինչպես խելքներին փչի։

Վերջ ի վերջո Մարկը, միանգամայն ընկճված, ասաց.

— Կնշանակի, այն ամենը, ինչ մենք անում ենք, այն ամենը, ինչ մենք ի վիճակի ենք անելու,— այդ բոլորն անիմաստ է։ Մնում է միայն, որ մարդ անձնասպան լինի... Էհ, եթե հնարավոր լիներ միաժամանակ բոլորի հետ հաշիվը մաքրե՛լ...

Ժան-Կազիմիրը, թողած տպավորությունից բավարարված, մեծահոգաբար խեղդվողին մեկնեց կարթաձողը.

— Ի՜նչ իմանաս։ Գուցե, դա պատահի ավելի շուտ, քան մենք սպասում ենք։ Երբեք չպետք է հուսահատվել այս աշխարհի հզորների հիմարությունից... Իհարկե, եթե հույսը ձեզ վրա դնեն, քեզ վրա և գեղեցիկ Եվրոպայի այլ պլատոնական երկրպագուների վրա, նա, այդ անսահման գեղեցիկ Եվրոպան, վաղուց արդեն խայտառակված կլիներ կամ ընկած էվկսինի Պոնտոսի հատակին։ Տես թե ցուլն ուր է տանում նրան... Բայց, հնարավոր է, որ փրկությունը հենց այդ հիմար ցուլի մեջ է։ (Դու երբևէ գլամարտ տեսե՞լ ես)։ Եվ (տիրոջ ողորմածությունները անսահմա՜ն են) դա մի ցուլ չէ, նրանք երկուսն են, երեքը, չորսը, մի կես դյուժին. դու այդտեղ և սպիտակ ցուլ կտեսնես, և սև ցուլ, և կարմիր, և Յունիոն-Ջեկ[1], և սվաստիկա, և աստղազարդ դրոշ, և, վերջապես (խնդրում եմ

---

1 *Անգլիական ազգային դրոշի անունը։*

ոտքի ելնել) կապտա-սպիտակ-կարմիր դրոշը Սեն-Պուենի[1] եռագույն կարապի, պ-րն Ալֆոնս Լամարտինի, դրոշ, որը փողփողում է մեր բանկի մառանների (ես ասում եմ մեր՝ հասկանալի՞ է) և մեր հանրապետության կայսրության վրա, որտեղ արևը երբեք մայր չի մտնում... Բոլոր այդ ցուլերը կռվում են իրար միջև, պոզահարում են իրար, հարձակվում են միմյանց վրա։ Հեռու գնալ պետք չէ, նայիր, թե ինչպես են կոտոշներով իրար կպել երկու այդպիսի գոմեշ, այլ կերպ ասած՝ ֆինանսական կապիտալը և արհեստների կապիտալը։ Նրանցից յուրաքանչյուրն իր հովանավորն ունի արտասահմանում։ Եվ բոլորն էլ ուզում են ամեն ինչ վերցնել, ինչ հնարավոր է։ Բայց ամեն մեկն իր գործելաձևն ունի և իր սեփական օգուտը։ Բացարձակ թալանի քաղաքականությունը, մի խմբի ֆինանսական ճնշման քաղաքականությունն հանդիպում է մյուս խմբի քաղաքականության հետ ամենուրեք՝ բորսայում, միջազգային կոնֆերանսների կանաչ դաշտում, իսկ երբ հնարավոր լինի, ապա նաև մարտի դաշտում։ Արդյունքը լինում է այն, որ խաղը վերջանում է ոչ ոքի, և ժողովուրդները, որոնք այդ խաղում դրոշնքի դեր են կատարում, մի երկու ժամ շունչ առնելու հնարավորություն են ստանում։ Ուրեմն օգտվեցեք դրանից։ «Carpe diem»[2]։ Մարդագետնում խոտ պոճկիր մի տարեկան հորթերի հետ։

— Իմ ախորժակը փակվեց,— մռայլորեն ասաց Մարկը։— Ինչպիսի ծաղր՝ ճարպ հավաքել, որպեսզի վաղը քեզ սպանդանոց ուղարկեն։

— Ի՞նչ իմանաս։ Մեկ էլ տեսար դադարը տևեց այնքան, ինչքան մենք ենք տևելու։

— Տաղտկալի կյանք քարշ տալը չի նշանակում ապրել։

— Պատահական մեջ միշտ էլ տեղ կգտնվի։ Ես դրամ եմ դնում, ես խաղում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ։

— Իսկ դու ինչպե՞ս կարող ես խաղալ։ Ամեն ինչ ֆինանսների կողմից դրավված է, իսկ ի՞նչ է մնում քաղաքականությանը։

— Դա ամենանուրբ խաղն է։ Քաղաքականության ձեռքին են կշեռքի նժարները։ Նա անվճռականության մեջ է, նա տատանվում է և երկու խաղընկերների համար էլ դրամ դնում,

---

[1] Սեն-Պուեն— գյուղ Սոնա-և-Լուարա դեպարտամենտում, որտեղ սիրում էր ապրել Լամարտինը։

[2] Բոպեն բաց մի թողնիր (լատ.)։

իսկ ինքը ծածուկ հետևում է, թե որ կողմը կտանի։ Խաղի իմաստըն այն է, որ մարդ կռահի, թե ո՞վ է հաղթելու ֆինիշից թեկուզ մի վայրկյան առաջ։ Այն ժամանակ ստացվում է, որ դու առջևում ես, և նույնիսկ իրենք հաղթողներն էլ հիմարաբար դրան հավատում են։ Թթե, օրինակ, սկսում են դերակշռել ֆինանսական շրջանները, մենք ֆրանս-գերմանական մերձեցում ենք խաղում։ Թթե գերակշռում է ծանր արդյունաբերությունը, մենք դիմակազերծ ենք անում Գերմանիայի սպառազինումը և սկսում ենք ինքներս սպառազինվել։ Երբ ուժերը մոտավորապես հավասար են, մենք միաժամանակ և՛ զինաթափվում ենք, և սպառազինվում։ Մեր ախոռում միշտ պատրաստ կանգնած են երկու լծվածք. Մաժինոն[1] և Բրիանը— պատերազմը և խաղաղությունը։ Ձիերը քացի են տալիս, կծում են իրար, բայց ավելի շուտ գալլորկայի համար։ Իսկ իրականում դրանք լավ վարժեցված, շատ անգամ պարգևատրված ծեր յաբուներ են, որոնք պարծենում են Ֆրանսիայի ախոռին պատկանելու համար։ Ամեն մեկը համբերությամբ սպասում է իր հերթին։ Որ համաձին էլ ընկնի շահումը, մենք ոչինչ չենք կորցնում։

— Որովհետև դուք կորցնելու ոչինչ չունեք։ Ինչ խաղ էլ դուք խաղաք, դուք ուրիշի խաղն եք վարում։

— Այս աշխարհում, սիրելիս, կարևորն այն չէ, ի՛նչ դու կաս, այլ այն, թե դու ինչ ես թվում։

— Դա ձեր ճակատագիրն է՝ այդ թվալը, չէ՞ որ դուք լոկ ստվեր եք։ Բայց ֆինանսական մեծ գործարարները, որոնց դիմակները դու նոր-պոկում էիր, ամենևին էլ ստվեր չեն։ Նրանք դերադասում են լինել, և ոչ թե թվալ (և ես նրանց հասկանում եմ)։

— Էհ, ինչ կա որ, կնշանակի, բոլորն էլ գոհ են։

— Միայն թե ոչ ես։ Ես կուզեի, որ դուք բոլորդ էլ սատկեիք։

— Այդպես էլ կլինի։ Չէ որ ես քեզ ասել եմ։ Համբերիր մի քիչ։

— Թթե քեզ այդքան քիչ է հուզում ապագան, ինչո՞ւ չես չանում, որ նա որքան կարելի է շուտ գա։

---

1 Մաժինո Անդրե (1877—1932)— Ֆրանսիայի ռազմական մինիստրը։ 1929—1932 թվերին նրա նախաձեռնությամբ սկսվեց Ֆրանսիայի արևելյան սահմանում գտնվող ամրությունների շինարարությունը— «Մաժինոյի գիծը», որն այդպես էլ ավարտի չհասցվեց։

— Ինձ համար հերիք է և այն, ինչ անում եմ։ Հին նավը դեռևս հպարտորեն բացում է առագաստները, բայց նրա մեջ ջուր է լցվում, իսկ մենք ի լուրն դրա կրծում ենք նրա հատակը։

— Այդ դեպքում ավելի լավ չէ՞ արդյոք փոխադրվել ուրիշ նավի վրա՝ կարմիրների նավի վրա, և ծովը մաքրել ձեր հնոտիքից։

— Մոսկովյան ինտերնացիոնա՞լը,— ծոր ուվեց ժան-կազիմիրը, եւ քաշվելով— Օ՜, ոչ, բարեկամս։ Ազատի՛ր ինձ։ Ես ո՛չ մի ցանկություն չեմ զգում։ Դա ինձ համար չէ։ Նրանց խաղացած խաղը անշա՛փ լուրջ է։ Ամբողջ հաճույքը կորչում է, եվ հետո ես պլեբսին տանել չեմ կարող։

— Ծառայամիտների և խաբեբաների հասարակությունը ավելի է քո սրտով։

— Ի՞նչ արած։ Ես գերադասում եմ խաբեբաներին, որոնք գիտեն իրենց պահել հասարակության մեջ։ Նրանց հետ միասին ես կրծում եմ հին նավը։ Չէ՞ որ մենք սիրում ենք այդ նավը։

— Եթե այդպես է, սիրե՛ք ինչքան ուզում եք։ Կրծեք, մինչև որ կշտանաք։ Եվ նրա հետ միասին սուզվեք հատակը։

Այն երեկո Մարկը մի առանձնահատուկ ցանկությամբ ուզեց շնչել Աննետայի օդը (Մարկը խելագարվում էր)։ Ամսից ավելի էր, ինչ Մարկը չէր լինում մոր մոտ։ Նա չէր ուզում, որ մայրը տեսնի իր խուճապը։ Մարկն իրեն ասում էր. «Ես պետք է ինքս փրկվեմ, ապացուցեմ նրանց...»։ (Ո՞ւմ։ Աննետայի՞ն։ Թե՞ մյուսին,— նրան, որը, հեռանալով Փնդիկից, նամակագրական կապ էր պահպանում Աննետայի հետ)։ Մարկն ուզում էր ապացուցել նրան, ում կերպարը նա վտարել էր իր մտքերից (բայց միտքը խաբեությամբ էր զբաղվում), «որ ինքը ի վիճակի է լուա գնալ առանց նրա, որ ինքը առանց նրա էլ կարող է ապրել, հավատալ, գործել»։ Հենց այդ լռելյայն մարտահրավերը, որը կամքի քիչ լարում չէր պահանջում, Մարկին փրկից կործանումից։ Կործանվել— կնշանակեր ապացուցել Ասյայի իրավացիությունը... Բայց այն երեկո նա արդեն ուժ չուներ դիմանալու, միայն կանացի սիրտը, միայն կանացի ձեռքերը կարող էին կիսել նրա հետ վշտի և զայրույթի անտանելի ծանրությունը։ Նա անկեղծորեն մորն հաղորդեց այն ամենը, ինչ լսացել էր ժան-Կազիմիրից։ Աննետայի համար դա անակնկալ չէր։ Տիմոնի հետ ունեցած բարեկամությունը շատ բան սովորեցրեց նրան։ Նա գիտեր, որ քաղաքականությունը տիկնիկային կա-

տակերգություն է և որ Սպիտակ տան, Քե-դ' Օրսեի, Վիլհելմշտրասսեի և Չեկերսի[1] ճոռոմաբաններըը Կապիտալի տիրակալի առաջ ընդամենը խաղատիկնիկներ են։ Գիտեր, որ թելերը խճճվել են, քանի որ Կապիտալ տիրակալը վիթխարի մի հիդրա է, որի գլուխները մշտապես իրար միս են կրծում։ Բայց ում միտքն ու ձեռքերն էլ որ ղեկավարեին մարիոնետներին, միևնույն է, քաղաքականության տերը միշտ և ամենուրեք մնում է Փողը։ Ի՞նչ է ծրագրում հիմա այդ տիրակալը։ Հետաքրքրվելով Մարկի նոր տեղեկություններով, Աննետան այնուամենայնիվ նրան մինչև վերջ լսեց ապշեցուցիչ սառնասրտությամբ։ Մարկը չէր հասկանում այդ անտարբերությունը և ինքն իրեն վրդովվում էր։ Դա չվրիպեց Աննետայից, և նա ժպտալով նկատեց, որ իրեն հիմա ոչնչով արդեն չես զարմացնի։ Ամբողջ պատերազմի ժամանակ, երբ տեղի էր ունենում ժողովուրդների փոխադարձ ոչնչացում, կոտորածի միջոցով վաստակած ֆրանս-գերմանական մետալագործական կոնցեռնների դրամը հարկագրում էր երկու երկրների կառավարություններին և գլխավոր շտաբներին սրբորեն պահպանել Բրիեի ավազանը— ոսկե ձվեր ածող հավին։ Եվ այդ պայմանավորվածությունը երկու կողմն էլ ազնվորեն պահպանում էին, և դա այն ժամանակ, երբ միապետների, մինիստրների և պետությունների մյուս բոլոր պայմանագրերը դարձել էին թղթի մի կտոր, իսկ բոլոր մարդկային և աստվածային օրենքները առանց խղճի խայթի ոտնահարվում էին։ Եթե հասարակական կարծիքը համր էր մնում տագնապալից ազդանշանների նկատմամբ, էլ ո՞վ կերաշխավորի, որ ապագայում տեղի չի ունենա նույնը, եթե ոչ ավելի վատը։ Ինչո՞ւ ամաչել։ Աննետան հեգնանքով զարմանում էր այն բանի վրա, որ աշխարհի «ամենազորները» նույնիսկ չափից ավելի են նրբանկատ։ Մարկը, որ գնահատում էր միայն սեփական հեգնանքը, ասաց.

— Բավակա՞ն է... Եթե դու գիտեիր այն բոլորը, ինչ ես այսօր եմ իմացել, ինչպե՞ս կարող էիր, ինչպե՞ս կարող ես հաշտվել դրա հետ։

---

[1] Սպիտակ տուն— ԱՄՆ-ի պրեզիդենտի նստավայրը։ Քե-դ'Օրսե— փողոց Փարիզում, որտեղ տեղավորվում է արտաքին գործերի մինիստրությունը։ Վիլհելմշտրասսե— փողոց Բեռլինում, որտեղ ժամանակին գտնվում էր արտաքին գործերի մինիստրությունը։ Չեկերս—Անգլիայի պրեմիեր-մինիստրի ամառային նստավայրը։

— Ես չեմ հաշտվում,— ասաց Աննահատան.— Եվ դրանում է իմ դոյության իմաստը։

— Դրանով ի՞նչ ես ուզում ասել։

— Ես ոչ մի բանի հետ չեմ հաշտվում, տղաս։ Բայց ինչ որ կա՝ կա։ Ես գոյություն ունեմ։

— Իսկ դու ո՞վ ես։ Ես ո՞վ եմ։ Չհաշտվելը քիչ է։ Մենք ի՞նչ ենք ուզում։ Ո՞ւմ հետ պետք է դնանք։ Նրանց հե՞տ, արդյոք, ովքեր հույսները կապում են խաղաղության հետ, թե՞ նրանց հետ, ովքեր հույս են դնում պատերազմի վրա։ Եվ սրանց, և նրանց համար դա ավելին չէ, քան ձեռնտու օպերացիա։ Առաջին դեպքում Եվրոպան (ոչ, դա չափազանց շա՞տ է ասված— մեր Արևմուտքը) շահում է սպառազինված խաղաղության քսան-երեսուն տարի։ Բայց երբ տեսնում ես, թե ինչ է իրենով ծածկում այդ խաղաղությունը, որքան է նստում և դեռ որքան է նստելու մնացյալ բոլոր մարդկության վրա, կարելի՞ է արդյոք, կարո՞ղ եմ ես արդյոք լինել նրանց հետ։ Այդ խաղաղարարներին պետք է ոչ թե խաղաղությունը, այլ փողը։ Իսկ փողին այսօր պետք է խաղաղություն, վաղը՝ պատերազմ։ Խաղաղություն չկա, գոյություն չունի։

Աննահատան ասաց.

— Խաղաղություն չկա և չի էլ եղել։ Խաղաղության դիմակի տակ թաքնվում է պատերազմը։ Այդպիսին է նրանց քաղաքակրթությունը։ Ծաղիկները ծածկում են գերեզմանային վիհը։ Իսկ բարեմիտ մարդկանց հենց այդ էլ պետք է։ Միայն թե ծաղիկներ տեսնեն և ոչ թե փոս։ Նրանց համար թշնամին նա չէ, ով գերեզման է փորում, այլ նա՝ ով սոխակում է այդ ծաղիկների տակ տեսնել գերեզմանը... Նրանց համար կարևորը մի բան է. ձգձգել որքան հնարավոր է այն օրը, երբ իրենք կընկնեն գերեզմանոց։ Պահպանել այն պատրանքը, որ իբրև թե գերեզմանափորը մոռացել է իրենց մասին։ Այդպես էլ ահա նրանք ապրում են։ Խաղաղությունը, նրանց խաղաղությունը— դա գերեզմանոցային ոչ բարձր այն ցանկապատն է, որի հետևում չեն երևում (տեսնելու ցանկության դեպքում) նրանք, ում թաղում են,— շահագործվողներն ու ճնշվածները, նրանք, ովքեր վճարում են դանդաղ հոգեվարքով, ինչպես դու ճիշտ ասացիր. ուրիշների կուշտ, շքեղ կյանքի համար։

— Ուրեմն ի՞նչ անենք։

— Կռվենք մեր խաղաղության համար և շարունակենք մեր

պատերազմը։ Մենք նրանց հետ ընդհանուր հասկացություններ չունենք, ինչպիսին էլ ուզում է լինեն այն բառերը, որոնք մենք արտասանում ենք։

— Ես լոք եմ տալիս գերեզմանոցային պարսպի վրայով։

— Եղունգներով ես պարսպապատին անցք եմ բացել և ճեղքից տեսնում եմ ազատ դաշտերի լույսը։

— Իսկ ես ոչինչ չեմ տեսնում, չեմ ուզում տեսնել, եթե մյուսները ինձ հետ միասին չեն տեսնելու։ Կամ բոլորի հետ միասին մնալ կույր, կամ բոլորի հետ միասին տեսնել լույսը։

Աննետան համբուրեց որդու աչքերը։

Հենց այդ ժամանակ էլ ես Մարկին առաջին անգամ հանդիպեցի։ Ուղանցաբար ես եղա Փարիզում և կանգ առա Սորբոնի մոտ գտնվող մի փոքրիկ հյուրանոցում։ Արդեն երեք թե չորս տարի էր, ինչ ես Ֆրանսիայում չէի ապրում։ Մարկը Աննետայի մոտ գտել էր վերջերս լույս տեսած Գանդիի մասին իմ գիրքը։ Հրապուրվել էր դրանով։ Անտառի մութ թավուտում, ճանապարհի վերջին ինչ-որ տեղ լույս էր երևում։ Մարկը չգնում էր հասկանալ, թե ինքն արդյոք այդ ուղղությա՞մբ է գնալու։ Նա տատանվում էր, գտնվում էր ճամփաբաժանում։ Մի անգամ առավոտյան նա եկավ ինձ մոտ հյուրանոցի փոքրիկ սրահը, ուր մարդիկ անընդհատ այս ու այն կողմ էին գնում։ Եվ ոչ մի կերպ սիրտ չարեց խոսակցությունն սկսել։ Ես ուշադիր նայում էի իմ առջև կանգնած նիհար, սպասողական տեսքով այդ երիտասարդ դայլին, նրա ջղային ձեռքերին, գեղեցիկ վճիտ աչքերին, որոնք հիմա թուխ էին թվում, ամոթխածորեն-զայրացած հայացքին, և հասկացա, ինչ է կատարվում նրա հետ։ Ես նրան տարա իմ չհավաքած համարը, որտեղ մահճակալը դեռ ծածկված չէր և ամեն ինչ թափված էր ցաքուցրիվ։ Ներողություն խնդրելու հարկ չկար։ Գեղեցիկ աչքերը շողշողում էին։ Անվրդովտահությունը, որով նա զինված էր, հանկարծ փոխվեց միամիտ երախտագիտության։ Եվ նա միանգամից սկսեց խոսել։

Առաջին դեպքը չէր, որ երիտասարդները խորհուրդ էին հարցնում ինձնից, ընտրելով կյանքի երթուղին, ես դարձել էի ճանապարհորդությունների բյուրոյի յուրատեսակ մի գործակալ, և քանի-քանի անգամ էր ինձ պատահել, մեկին ուղարկել Ասյա, մյուսին Մոսկվա, քանի որ Արևելքում վառվող երկու աստղերից

մեկը շատ պատանիների ու աղջիկների բիբերում էր արտացոլվում։ Բայց իմ երիտասարդ գայլի աչքերում ես տեսա մի քանի աստղերի ցոլք. շողերի խուրձերը խաչաձևվում էին, բախվում իրար, հանգչում էին և նորից բռնկվում, իսկ երբեմն էլ նրանց ծածկում էին ծանր թուխպերը։ Եվ մինչ Մարկը, տենդագին ու անկապ բառերն արագ-արագ արտասանելով, հաստատում էր իր համաձայնությունը հերոսական պասսիվության և չընդդիմադրելու ուսմունքի հետ, որ գործողության մեջ էր դրվել Մախատմա Գանդիի կողմից, և ջանում էր իմ աչքերում կարդալ իր ուղին,— ինձ համար պարզ էին դառնում նրա խառնվածքի ամբողջ անզսպությունը և նրա մեջ եռացող հակասական կրքերը, և ես հասկացա, որ նրան հրապուրողը ոչ թե սիրո անդորրն է, այլ նրա ճակատամարտերը, ոչ թե հավատի հանգստությունը, այլ այդ հավատի ճշմարտությամբ գործելու անհամբեր ծարավը։ Բայց այդ ճշմարտությունը նա դեռ չէր գտել, նա միայն փնտրում էր այդ ճշմարտությունը, նա տեսնում էր մի քանի տարբեր ուղիներ, և նրա ողջ պատանի էությունը ծվեն-ծվեն էին անում հակասությունները։

Եվ ես ասացի նրան այդ, քանի որ առաջին իսկ հայացքից երևում էր, որ նա այն պատանիներից է, որոնք ընդունակ չեն իրենք իրենց հետ խորամանկել, բավականություն ստանալ պատրանքներից։ Թեև պատրանքը նրանց նույնքան պետք է, որքան ուրիշներին։ Բայց, նրա համը տեսնելով, Մարկը և նրա նմանները տանջվում են խղճի խայթից. չէ՞ որ պատրանքը նրբանց անունդը չէ, և նրանք չեն հանգստանում, մինչև դա ետ չեն տալիս... Ես Մարկին ասացի.

— Ձեր ճշմարտությունը հենց ձեր բնույթի մեջ է։ Մի դավաճանեք ձեր բնույթին, բռնություն մի գործադրեք նրա վրա, որպեսզի հարմարվեք ուրիշին։ Դուք ստեղծված չեք ամուսնության համար։ (Ես նկատեցի, թե նրա բերանը ինչպես դառնությամբ ծռվեց)։ Դուք ինքներդ ձեզ հետ անդամ դժվար եք հաշտվում։ Ձեր էության մեջ և տղամարդկային բան կա, և կանացի, և «թեր» կա, և «դեմ», և «այո», և «ոչ», և կիրք, և զգվանք դեպի բռնությունը, չափազանց փքված «եսի» հավակնություններ և ձեզ զոհաբերելու պահանջ։ Ոչ մի բանից մի՛ հրաժարվեք։ Ձեր մեջ պահպանեք ամեն ինչ։ Տառապեք, ձգտեք բոլոր ներդաշնա-

կություններից ամենագեղեցիկին—դիսոնանսների սև մեղրին... εεν τῶν ζιαφερόνων παλλὶ οτην αἀρὐἰαν...»[1]

— Ասելը հեշտ է։ Իսկ եթե ներդաշնակությունն անհնարի՞ն է... Համենայն դեպս, անհնարին է ինձ համա՞ր...

— Այդպիսի առնական և ազնիվ խառնվածքում, ինչպիսին ձերն է...

— Ի՞նչ գիտեք դուք իմ խառնվածքի մասին... ի՞նչ գիտեմ ես ինքս նրա մասին։

— Ինչ ինձ է վերաբերում, ես գիտեմ այդ խառնվածքի մասին... Եթե այդպիսի հոգեկան մենամարտ է սկսվել, եթե այն այդքան երկար է տևում և եթե նրա մեջ ներգրավված են ընդդիմամարտող ուժեր՝ այն աստվածների, որոնք կռվում են, պարուրելով իրենց թուխպերով ու շանթերով, ձեր ներսում, կնշանակի հենց դա էլ անհրաժեշտ օղակն է մեծ ճակատամարտի, այն իլիականի, որը գրում և արարում է մարդկությունը։ Եվ որքան ավելի են ցավ պատճառում հասցվող և ստացվող հարվածները, այնքան ավելի անվիճելի է պայքարի հերոսական անհրաժեշտությունը։

— Իսկ եթե ես զոհվե՞մ պայքարում։

— Զոհվիր, տղաս Stirb und werde![2] *(Ներեցեք, որ ես ձեզ «Դու»-ով եմ դիմում)։*

— Ես ձեզ խնդրո՞ւմ եմ։ Շնորհակալ եմ...

Կտրուկ մի շարժումով նա ձեռքը դրեց ծնկիս և սեղմեց իր նուրբ և ուժեղ մատներով, հետո, կարծես ամաչելով իր արածից, ձեռքը թափով ետ քաշեց...

— Ես պատրաստ եմ մեռնել։ Ես չեմ վախենում։ Ես ուրախ կլինեի... Բայց չեմ ուզում մեռնել, առանց օգուտ բերելու։ Ո՛չ թե ինձ։ Ոչ թե միայն ինձ։ Ոչ թե նրա համար, որ փրկվեմ, ինչպես փրկվում են այդ վախկոտները, մտքի և կրոնի այդ եսասերները...

Նա ինձ համար անսահման թանկ դարձավ։ Ես բռնեցի նրա ձեռքը։

— Մի անհանգստանա։ Կգա ժամը։ Դու քեզ կզոհաբերես հանուն մարդկանց։ Դրա համար մեր ժամանակ առիթներ ինչ-

---

1 Հերակլիտ Եփեսացու ասույթը. «Դիսոնանսներից ստեղծվում է ամենագեղեցիկ ներդաշնակությունը»։

2 Մեռի՛ր և եղի՛ր (գերմ.)։

քան ասես կան։ Համբերիր։ Առիթը կներկայանա։ Սպասի՛ր։ Եվ պատրաստ եղիր...

Նա տեղից ելավ, ես նույնպես վեր կացա։ Նա փորձում էր ինչ-որ բան ասել և չէր կարողանում։ Բայց նրա ձեռքը, որը ես դեռ պահում էի իմ ձեռքում, նրա վոխարեն ասաց։ Շփոթահար, ինչպես դեռատի աղջիկ, նա ինձ վրա նետեց շնորհակալ հայացքը և գնաց։

Այլևս նրա հետ ես չեմ հանդիպել, միայն մի անգամ տեսա հեռվից, բայց նա ինձ չնկատեց (այդ մասին խոսք կլինի հետո)։ Սակայն, ինչպես ես իմացա հետագայում, նա շնորհակալ էր ինձ այն բանի համար, որ ես իրեն չխնայեցի, չթաքցրի, որ նրա մեջ տեսնում եմ մի մարդու, որին վիճակված է իրեն զոհաբերել և որի համար զոհաբերությունը հպարտություն է լինելու և բերկրություն։

Բայց առայժմ գերակշռում էր թախիծը. մեղրի ոսկին սևին էր տալիս։ Ողբերգական տեսիլքը մոայլ ստվերի նման ընկնում էր ճանապարհին։ Քսան տարեկանում հեշտ չէ հրաժարվել հաղթանակից (այն իմաստով, ինչ իմաստով դա հասկանում է աշխարհը, անարդ աշխարհը— ինչպե՞ս կարորեի այդ աշխարհը)։ Բայց զուր չէր, որ Մարկը Աննեսայի որդին էր։ Նրա սիրտը ավելի ուժեղ էր թաբախում, երբ մտածում էր ուրիշ հաղթանակի մասին, Սոկրատեսի հաղթանակի և այն մարդու, որին խալի հանեցին։ Յան Գուսի և Ջորդանո Բրունոյի հաղթանակի, նրանց հաղթանակի, ովքեր ուրիշի ուրախության համար իրենց արյունն են տալիս։ «Dürch Leiden Freude»[1] նիզակի հարվածից— աղբյուր, և թող խմե՛ն ծարավ եղջերուները։ «Sicut cervi[2]։ Նա հպարտանում էր, և տխրում (խեղճ տղա), որ ես առաջին իսկ հայացքից գնահատեցի նրան։ Կնշանակի, դա նրա ճակատի՞ն էր դրված։ Թող նույնիսկ այդպես լինի։ Շնորհակալություն նրանց, ովքեր, նրա հետ խոսելով, հետևում են միակ օրենքին— ճշմարտությանը։ Քանի որ հիմա նա վերջնականապես համոզվեց, որ դա նաև իր սեփական օրենքն է։ Նրա դերը— ճշմարտությանը հավատարիմ մնալն է։ Տառապել, մոլորվել, սեփական անձի հետ հակասության մեջ

---

1 Խնդությո՛ւն՝ տառապանքների միջով (գերմ.)։

2 Ինչպես եղջերուները (լատ.)։

լինել, գուցեև երբեմն էլ գայթել, ընկնել ցեխի մեջ, բայց ճշմարտացի լինել։ Նա կելնի։ Կլվանա վրայի ցեխը։ Ճշմարտասեր հոգին երբեք նզովյալ չի լինի։ Գերեզմանային որդը անզոր է հավիտենական ճշմարտության դեմ։ Եվ Մարկի սիրտը լցվում էր այն մտքից, որ դա նրա՝ Մարկի, ճշմարտության սեփական օրենքն է դրված նաև Գանդիի հոգում, դեպի որը իրեն մղել է ինքնապաշտպանության կույր բնազդը, թեև Մարկը պետք է ընթանար ուրիշ ճանապարհով— ես նրա առաջ բացեցի աննկուն կամքով փոքր, թուլակազմ մարդու հավատի խորհրդանշանը, այն մարդու, որն իր հետևից տանում էր երեք հարյուր միլիոն մարդ. «Աստվածը ճշմարտությունն է»։

Եվ այսպես, չէր կարելի հրաժարվել նրա մեջ թաքնված և ոչ մի ուժից, եթե անգամ այդ ուժերը թշնամի են միմյանց, եթե անգամ ատամներն իրար մեջ խրելով, նրանք այդ ատամները խրում են նաև Մարկի ընդերքը։ Անհատի անկախություն և իրեն կոլեկտիվին զոհաբերելու ունակություն։ Մարքս և Գանդի։ « Still voice»[1] Տիրոջ դստեր, հավիտենական հոգու և կործանարար «անանկե»[2] մուրճով ու զնդանով պատմական մատերիալիզմի մի ուժ, որը փոխում և վերափոխում է հասարակությունը։ Կմիացնի՞ արդյոք Մարկը երբևէ այդ երկու մետաղները մի ընդհանուր ձուլվածքի մեջ, գեղեցիկ և ամուր։ Թե՞ կմեռնի, ճխլվելով մուրճի և զնդանի միջև... Կմեռնենք, կտեսնենք... Իսկ առայժմ— խփիր մուրճով։ Քո միս ու արյունո՛վ, քո ցավո՛վ... Այրվիր, եթե դա պետք է, բայց մի՛ թողնիր, որ կրակը հանգչի։

Այն օրերին Աննետան հուզմունքով էր հետևում կրակին, որը վառվում էր նրա որդու աչքերում։ Բայց Մարկը ոչինչ չասաց նրան մեր հանդիպման մասին։ Հոգեկան վերելքը նրա մոտ շարունակվեց մի քանի օր, հետո ընկավ, լուծվեց ձանձրալի առօրյայի անախորժ մանրուքների մեջ։ Բայց հոգու հատակում մի կրակ էր մնում, որը ոչինչ այլևս հանգցնել չէր կարող։

Վճռելով պայքարել— մենակ և բոլորի համար, առանց զիջումների և կոմպրոմիսների, Մարկը շատ շուտով վտարվեց բոլոր կուսակցություններից, որոնք նրան իրենց համար անընդունելի համարեցին։ Նրանք Մարկին աղմուկ-աղաղակով

---

1 Ներքին ձայնը (անգլ.)։

2 Անանկե— հունական գիցաբանության մեջ ճակատագրի աստվածուհին և անխուսափելիության մարմնացումը։

չէին հեռացնում. դա նրանց ոգով չէր, նրանց վախկոտ ժամանակի ոգով. նրանք պարզապես Մարկից երես դարձրին։ Հոդվածները, որոնք Մարկը բերում էր նրանց պատկանող թերթերի խմբագրությունը, չէին մերժվում, բայց և չէին տպագրվում. դրանք դրվում էին մահուդի տակ։ Ամեն ինչից իրեն զրկելով, Մարկն իր փողով հրատարակեց մի բրոշյուր, որի մեջ մերկացնում էր Սեն-Լյուսի նկարագրած կառավարությունների թևի տակ գործող Ֆրանսիայի և Գերմանիայի արդյունաբերող-նացիոնալիստների գաղտնի դավադրությունը։ Բայց բրոշյուրը չգիտես ինչու ոչ մի կրպակ, ոչ մի գրախանութ չհասավ։ Ավելի ճիշտ, տպարանից դուրս գալուն պես անհետացավ, կարծես անցավ դետնի տակը։ Կարելի էր ենթադրել, թե այդ գրքույկը գնորդներն իսկույն խլելեցին։ Բայց կես տարի անց չվաճառված օրինակների կապոցները, դեղնած, կեղտոտ, բորբոսապատ, նորից դուրս լողացին. ոչ մի օրինակի թերթիկները նույնիսկ կարված չէին։ Գրախանութի ո՞ր մութ անկյունում, դործակալության՝ հասարակական անդորրի այդ պահապանի— ո՞ր գետնահարկում էր թաղու դրվել Մարկի միտքը։ Ինչևիցե, Մարկին վերադարձրին այդ ամբողջ մակուլատուրան և միաժամանակ պատկառելի մի հաշիվ ներկայացրին պահպանման համար։ Ատամները սեղմելով և էլ ավելի սինդ ձգելով գոտին, նա հեռացավ իր վրանը։ Կնշանակի, ժամը դեռ չի հասել։ Բայց կգա ժամանակը, երբ արյունով գրված նրա միտքը կկանգնի բոլորի առաջ։ Եվ այն ժամանակ նրանք հարկադրված կլինեն կարդալու այդ միտքը... Իսկ այդ ընթացքում պետք էր պարզություն մտցնել այդ դեռ չզուլալացած մտքի մեջ, և առաջին հերթին հագեցնել ստամոքսը, որն այդ մտքին կյանք էր տալիս։ Հնդկաստանցին ասել է. «Դատարկ ստամոքսի համար աստված չկա»[1],

Մարկին բախտ վիճակվեց աշխատանք գտնել մի ծերունի կազմարարի մոտ, որը նախկին հասկացողությամբ ինդիվիդուալիստ ու անարխիստ էր և պատվերով գեղարվեստական կազմեր էր պատրաստում սիրողների համար։ Արևմուտքի վաղեմի ճաշակի հետ միասին այդ հնամենի արհեստները գնալով ավելի շատ են անկում ապրում պատվիրատուների բացակայության պատճառով։ Ջնչին աշխատավարձը հազիվ էր հերի-

[1] Ռամակրիշնա— Ռ. Ռ.

քում, մի կերպ գլուխ պահելու համար։ Էլիզե Ռատոն հիանալի կարող էր յուղ գնալ առանց օգնականի, բայց նա սիրեց այդ գործազուրկ երիտասարդ ինտելիգենտին, նրա նուրբ, ասես վերածնունդի վարպետների պատկերած ձեռքերը, որոնք այնքան արագ տիրապետեցին կազմարարի սքանչելի արհեստին, դուր եկավ ինդիվիդուալիստի նրա անհաշտորեն լարված հպարտությունը։ Ներսունուն այդ հպարտությունը թվում էր մի արգելապատնեշ, որը նրան անջատում էր ամեն ինչը լցնող Մեքենայից, նոր ժամանակների հարձակումից։ Նա չէր ենթադրում, որ նոր ժամանակները, նոր աշխարհը նրա մոտ են խուժել այդ պատանու անհանգիստ ոգու հետ։ Մարկն, ատամները սեղմելով, մտքերն իր ներսում էր պահում և լռում, հնարավորություն տալով խոսելու ծերունուն, որին չէր լսում։ Աշխատելով կողք-կողքի, յուրաքանչյուրն արտասանում էր իր մենախոսությունը, մեկը բարձրաձայն, մյուսը մտքում, և ամեն մեկը թեքում էր իր կողմը։ Սակայն մատների արագ և ճշգրիտ շարժումները չէին կարողանում Մարկից հեռացնել նրա սիրտը համառորեն մաշող հոգսը։

Վտարված, մերժված, նզովքի ենթարկված Ասյան վերադառնում էր Մարկի մարմնի տաքուկ կացարանը, որտեղ դեռ շարունակում էր եռալ Ասյայի համբույրների արբեցուցիչ հյութը։ Ասյայի մասին միտքը տնքում և ալրում էր, բութ, ծանրացած, ինչպես թարախով լցված վերքը։ Մարկը չէր կարողանում պատկերացնել Ասյայի դիմագծերը, բայց Ասյայով լցված էր ամբողջությամբ— գլուխը, դողդողացող ձեռքերը, չորացած լեզուն մատնում էին Ասյայի ներկայությունը։ Երբեմն, լսելով նման մի ձայնի երանգ կամ զգալով պատահական մի հպում, Մարկը ցնցվում էր և դեռ երկար ժամանակ անօգնական այս ու այն կողմ էր նետվում, ինչպես հանկարծակի տատանված մագնիսային սլաք։ Ստիպված էր լինում կամքի ամբողջ լարվածությամբ բանականությունը կարգի հրավիրել։ Բայց բանականությունը չէր կարողանում հանգիստ գործել, նա պետք է իրենից պոկեր այն կնոջը, որն ամբողջովին լցրել էր իր էությունը, պետք է բռներ նրա ուսերից, նայեր նրա աչքերին և ասեր. «Այլևս ոչ մի քայլ։ Մուտքն արգելված է...»։ Ահա հենց այդտեղ էլ կարելի էր առանց շոշափելու ոտից գլուխ նայել միմյանց։ Բայց Մարկը չէր համարձակվում նայել նրա երեսին, նա աչքերը փախցնում էր, ինչպես էլեկտրական բռնկումից, ջանում էր

սևեռել իր հայացքը կլորիկ կզակին, միայն թե չտեսնի այդ կնոջ անչափ ուշադիր աչքերը, քանի որ չէր ուզում վախկոտորեն փախչել նրանից։ Բայց դրա փոխարեն Մարկն աչքերով խժռում էր նրաատելի մարմինը և դողում էր այն մտքից, որ չի կարող այդ մարմինը ճզմել իր տակ։ Բայց և այնպես դա նման չէր իրենց հարաբերությունների խզման առաջին օրերի խոցված ինքնասիրությանը, խանդին, որը ծարավի է վրեժխնդրության։ Ամենավատանդավոր պահն անցել էր, խանդը սպառված էր։ Հպելով ճակատը, շրթունքները, աչքերը անկուխ իրանին (Մարկը չէր ուզում երևսը տեսնել), Մարկը նորից ներծծվում էր այդ մարմնի գրգռիչ և գազանային սուր հոտով, լուծվում էր այդ հոտի մեջ, ինչպես այն դիշերներին, երբ նրանք երկուսով մեկ էին, կորցնում էր իր «եսը», որպեսզի ջրհորի հատակում գտնի սիրելի կնոջ «եսը» և նրա մտքերը։ Եվ ահա նա տեսնող մատներով շոշափեց Ասյայի դավաճանության իսկական պատճառները։ «Իսկական» և «դավաճանություն». Այդ երկու բառերը իրար էին զարնվում, ինչպես երկու անհաշտ թշնամիներ, բայց Մարկը ոչ մի կերպ չէր կարողանում բաժանել նրանց, և նրանք ճանկռտում էին նրան, ծվեն-ծվեն անում իրենց մագիլներով։ Ասյայի մարմնի բուրմունքի հետ նա ներս էր քաշում մահացնող դատարկությունը ինդիվիդուալիզմի, որը անթափանցելի պատնեշով, պողպատյա վարագույրով բաժանված էր մեծ կյանքից, մարդկայնությունից, գործողության աշխարհից, ներս էր քաշում հոտը դամբարանի, որտեղ նա ուզում էր զնդանել նաև Ասյային։ Ավելի խելացնոր, դաժան, ավելի ագնիվ և անսահման Ասյան չարդեց պատը։ Նա լոք տվեց անցավ Մարկի վրայով։ Կյանքի բնազդը չխաբեց Ասյային։ Նա բնությանն ավելի մոտ էր։ Ավելի ճշմարտացի էր, քան Մարկը։ Նա փախչում էր, փախչում էր մահից, մոռացած ուղեկցին, ինչպես հրդեհի ժամանակ խուճապով բռնված ամբոխը, դազանացած, իրեն դեպի ելքն է նետում։

— Ասյան իրավացի՞ է...

Մարկն իր կամքից անկախ հարկադրված էր այդ ընդունել և լսում էր, ինչպես են իր շրթունքները, որ դեռ պահպանում էին Ասյայի համբույրների համը, ակամա, շշնջում.

— Փրկվի՛ր, հարազատս։ Փառք աստծո, որ գոնե դու փրկվեցիր... Իսկ ես, որ չկարողացա քեզ փրկել, կփրկվեմ, եթե կարողանամ։ Իսկ եթե չկարողանամ, այնժամ ավելի լավ է

մեռնեմ։ Դու գնա, մի նայիր ինձ։ Ես ինքս պետք է ինձ փրկեմ, Եվ դու ինձ ցույց տվիր ճանապարհը...

Բայց այդ դուրս թռած խոստովանությունն արդեն մի րոպե անց տրորված էր խոցված ինքնասիրության կողմից, որը, ծառս եղած, աղաղակում էր. «Դավաճանեցի՛ր, Դավաճանեցի՛ր ինձ»— և չէր ցանկանում ներել։ Եվ հակասական կրքերի մրրկասյունում, դատարկության մեջ, բոլոր կուտակված գաղափարների խորտակման մեջ, գաղափարներ, որոնցից միտքը, համբերատար, ինչպես որմնադիրը, ջանում էր ապաստարան կառուցել, որ լավ թե վատ կծառայեր Մարկին, նա մնաց մերկ, անպաշտպան, նրան այրում էր ցանկությունը, նա բռնկվում էր, ինչպես ջահ։ Նրա քազցած երիտասարդ մարմինը, որին ինքն ստիպում էր խստորեն պաս պահել, ընդվզում էր։ Հազար ու մի գիշերների փոթորկուն և կրակոտ զրկախառնություններից հետո հանկարծակի անցումը դեպի ասկետիզմ հղի է վտանգներով։ Ցանկությունը նման է կոկաինի, նրանից կարելի է ետ սովորել միայն աստիճանաբար՝ մեծ զգուշությամբ։ Կոտրելով ինքդ քեզ, դու ուժերդ ջլատելու ռիսկի ես դիմում, և կամքը կորցնում է իր իշխանությունը՝ հալյուցինացիայով ապրող մարմնի վրա։ Մարկը հագեցած էր էլեկտրականությամբ, ինչպես չոր տապով հուրհրատող ամառային օրը, երբ մշուշով պատված Փարիզը տոչորվում է ցածր կախված սպիտակավուն երկնքի տակ։ Շոգից ճաքճքած հողը անձրև է աղերսում, իսկ տարափի տակ—ծուխ է արձակում, բացելով իր գիրկը։ Նախաամպրոպային տոթում ամեն ինչ տեզատարափ անձրև էր կանխագուշակում...

Երիտասարդ գույգի պատակման մասին շուտով բոլորն իմացան, թեև Ռիվիերներն ամեն կերպ աշխատում էին այդ թաքցնել։ Առաջիններից մեկը, որ այդ հետն առավ, նույնիսկ մինչև նորության հրապարակվելը, դա Բեռնադետտա Վերդիեն էր, ծնյալ Գասսերո, որին Սիլվիան մի ժամանակ ապարդյուն կնքով մտադրվում էր դարձնել Մարկի կինը։

Երբ Մարկն ամուսնացավ, Բեռնարդետտան կարողացավ թաքցընել իր հիասթափությունը։ Ոչ ոք ոչ մի բան գլխի չընկավ, նույնիսկ Սիլվիան, թեև նա հիանալի գիտեր իր որդեգիր աղջկան և կանխատեսում էր, որ Մարկի ամուսնությունը կվշտացնի նրան։ Բեռնադետտան զարմանալի անտարբերություն ցուցաբե-

րեց։ Սիլվիան նույնիսկ բարկացավ։ Նա կուզեր, որ Բեռնադետտան տառապեր, գանգատվեր, բաժաներ նրա դժգոհությունը։ Բայց նա հնարավորություն տվեց խորթ մորը զայրանալ մենակ, և Սիլվիան հիմար վիճակի մեջ ընկավ. հո նա ինքը չէր կարող մերժված հարսնացուի դեր կատարել։ Սիլվիան կատաղեց Բեռնադետտայի վրա համարյա ավելի շատ, քան Ասլայի վրա։ Նույնիսկ հայհոյեց նրան։

— Հիմա՜ր։

Բայց Բեռնադետտային դա ամենևին չվիրավորեց։ Ոչ մի ակնթարթ նրա շրթունքներից սառը ժպիտը չէր իջնում։ Բեռնադետտան չէր խաղում գալլորկայի համար։ Նա նույնիսկ կարգին չէր կարող բացատրել, ինչու է իրեն այդպես պահում և արդյո՞ք նրա վարքագիծը մի տեսակ ինքնապաշտպանություն չէ։ Նա աշխատում էր իր ներսը չնայել. գիտեր միայն, որ երբեմն անողորմ ցավը սիրտը խայթում է, իսկ մնացած ժամանակ թախիծն էր քարի նման ծանրանում վրան։ Գիտեր, որ ամենախորքում, ծերպի հատակին շարժվում են փոքրիկ կարծր եռանկյունն գլուխներ, գոնդուկծիկ եկած մտքերը— սարսափելի աչքերով երկար օձերը — ոչ, ավելի լավ է քարերը շուռումուռ չտալ... Ապրում ես, ուրեմն ապրիր։ Ապրիր քո նմանի համար միակ ընդունելի հատկացողությամբ, այսինքն՝ սթափ ու գործնական կյանքով։ Արժի՞ արդյոք տրվել ապարդյուն ափսոսանքներին։ Իսկ վիրավորանքնե՞րը։ Չէ՞ որ դրանց վրա ոչինչ չես կառուցի, իսկ կառուցել պետք է։ Եվ ահա վիրավորանքները, որոնց վրա խնամքով նավթալին էր ցանված, առայժմ, մինչև որոշ ժամանակ դրվեցին սնդուկը։ Բեռնադետտան, առանց հապաղելու, իր ճանապարհը շարունակեց և, քանի որ նրան պետք էր ամուսին, նա ամուսին գտավ իրեն։ Գտավ իր գործնական հատկացողության չափով, որը երեք պահանջների բավարարում էր ենթադրում. փառասիրության, բուրժուական բարեհարմարության և անկողնու։

Նրա ընտրյալը, ոմն Անդրե Վերդիե, երեսունհինգ տարեկան մի գործամոլ, հին (Փարիզում ամեն ինչ շուտ է հնանում) նշանավոր ավտոմոբիլային ֆիրմայի կոմպանյոնն էր։ Տասը տարվա ընթացքում նա իր համար պատկառելի կարողություն էր ձեռք բերել և հիմա միայն բարենպաստ պահի էր սպասում, որպեսզի հիմնի իր սեփական ֆիրման և խորտակի հինը, որը նրան կերակրել էր և ոտքի կանգնեցրել։ Դա գեղեցիկ երկնա-

գույն աչքերով մի մարդ էր, ճիշտ դիմագծերով և ուրախ ժպիտով, քաղաքավարի, սիրալիր և հրեշավոր անհոգի։ Կանանց նա շատ էր դուր գալիս։ Բայց ինչո՞ւ նա իր ընտրությունը կանգնեցրեց Բեռնադետտայի վրա։ Նա, որը, բավական է գլխով աներ, և ուզածդ, ամենագեղեցիկ և հարուստ աղջիկը կընկներ նրա գիրկը։ Բեռնադետտայի համար այդ ամուսնությունը փայլուն ռևանշ էր մերժված սիրո դիմաց։ Նա պետք է նվաճեր այդ տղամարդուն, եթե մի ուրիշը իրեն արհամարհել էր։ Սևուկ, նիհար, ամենևին ոչ գեղեցկուհի, բայց սլացիկ ու ճկուն, նա գիտեր ներկայացնել ձեռնոտու լույսի տակ իր, այն ժամանակվա համար մոդային, ալլանդակությունը։

... և ողորկ ուսի գեղեցիկ
Կորագիծը նրբիկ իջնող ցած,
Եվ ազդրը, որ սուր է փոքր-ինչ, իրանը շարժուն, սլացիկ,
Սողուն է կարծես գալարվող, մի բանից անչափ գրգռված։

Վերդիեն, որ կանանց լավ գիտակ էր, Բեռնադետտայի բարակ, պոմպադայի հատ շերտի տակ ծռմռվող շրթունքներին կարդաց հաճելի գիշերների խոստումը, իսկ պողպատափայլ գորշ աչքերի սառը, գործարարական հայացքում— նույնքան գործնական օրերի գրավականը, թեև անցկացրած ուրիշ դաշտում։ Նրանք առանց դժվարության պայմանավորվեցին այն մասին, թե ինչպես փոխադարձ շահի համար շրջանառության մեջ դնեն իրենց ամուսնությունը։ Իսկ օժիտի կլոր թիվը, որը Սիլվիան առանձնացրել էր Բեռնադետտայի համար, բավական էր՝ գեղեցկության պակասը փոխհատուցելու համար։ Գործը կատարվել էր ավելի շուտ, քան Սիլվիան որևէ բանի մասին տեղեկացել էր։ Նա դժգոհությամբ համաձայնություն տվեց այդ ամուսնությանը։ Ճիշտ է, նա ինքն էլ մի ժամանակ առանձնապես փայլուն ընտրություն չէր կատարել։ Բայց դրա փոխարեն նրա լեռպուղը գոնե լավորակ մահուդից էր, առանց փայլի, բայց նաև առանց խաբեության։ Սիլվիան լավ տեսնում էր Բեռնադետտայի փեսացուի (կամ ընտրյալի) գլխավոր թերությունները։ Ասենք, Բեռնադետտան ինքն էլ դրանք վատ չէր տեսնում. շողում աչքերով լկտի դուրսպրծուկի ձյունասպիտակ կրծքակապի տակ թաքնված էին բարոյական, իսկ երբեմն նաև ֆիզիկական վախկոտությունն ու կեղծությունը— վախկոտության տարատեսակն ու հետևանքը, թույլ բնավորության տարբերիչ նշանը, որը վախենում և փախչում է ճշմարտությունից, իսկ լավա-

գույն դևպքում իրենից թաքցնում է ճշմարտությունը։ Նա ոչ մի անգամ սիրտ չարեց հայելու մեջ նայել իր մերկ հոգուն, բայց հիանալի կարողանում էր տեսնել ուրիշների հոգիները, նրանց արատները, թուլություններն ու թերությունները, որպեսզի դրանք օգտագործի։ Բայց դրա փոխարեն ուրիշի դժբախտությունը նրա համար պարզապես դույություն չուներ,— այդ նկատելը չափազանց ծանր հույս էր։ Նա չէր սիրում չարիք գործել հանուն չարիքի, այլ միայն հանուն սեփական բարօրության։ Սակայն այն դեպքում, երբ նա վստահ էր լինում լիակատար անպատժելիության մեջ— կամ այն դեպքում, երբ հանդես էր գալիս երես առ երես (իհարկե, եթե հակառակորդը ավելի թույլ էր լինում), կամ էլ, երբ հենվում էր, ինչպես մեծ աղետների, պատերազմի կամ խուճապի ժամանակ, հասարակական կարծիքի տարերային դաժանության վրա,— նա կարող էր դառնալ հիրավի վայրագ... մեր ժամանակներում բավական տարածված միջին բուրժուայի, այսպես կոչված «աղնիվ մարդու» տիպ։ Մենք ետ ինք վարժվել նրա դեմ վրդովվելուց— միայն թե նա բարեխղճորեն վարի իր առևտրական մատյանները և վարժեցնի իր բարեմիտ աղնվությունը ոչ ի վնաս մեզ և մեր ռենտային, այլ մեր հարևանի վրա։ Բայց Բեռնադետտային այդ ամենը բոլորովին չէր հուզում։ Առանց վկաների մենամարտում նա Վերդիեին մի քանի միավորով առաջ կտար։ Իսկ մարդկանց մեջ նրանից վատ չի կարողանում հարմարվել ընդունված կարծիքին. ուժն այդ կարծիքի կողմն է, իսկ երբ հենվում ես ուժի վրա, ինքդ էլ ես դառնում ուժեղ։ Վերդիեի սխալներն իրենք ծառայում էին Բեռնադետտայի համար որպես մի տեսակ երաշխիք. Բեռնադետտան իր ձեռքերում նրան ավելի ամուր կպահի, քան այնպիսինին, ինչպիսին Մարկն է, որի հետ հիմարություն կունենար հաշվի նստել ոչ թե նրան հարգելուց, ոչ, այլ սիրելուց։

Եվ ամուսնությունը հաջողակ դուրս եկավ։ Ամուր սանձած Վերդիեն հիանալի էր գնում իր զույգի հետ։ Ասենք Բեռնադետտան նույնպես։ Պայմանագիրը սրբորեն պահպանվում էր երկու կողմից էլ։

Եվ Վերդիեն, և Բեռնադետտան անչափ շատ էին զբաղված եկամուտի թվերը կլորացնելով, որը, սակայն, չխանգարեց նաև Բեռնադետտայի տափակ փորի կլորանալուն, և նույնիսկ երկու անգամ։ Երբ կարողություն ես աճեցնում, պետք է աճեցնես նաև ժառանգորդի։ Ժառանգորդները հայտնվեցին, նախ տղա,

ապա աղջիկ. չէ՞ որ պետք է մտածել և ապագայի մասին, գա մի օր, երբ ստիպված կլինի «փեսայավորվել»։ Եվ Բեռնադետտան դարձավ լավ մայր, ինչպես որ լավ կին էր, առանց առանձնահատուկ սիրո, որ ամենևին չի նշանակում «առանց կապվածության»։ Ձեռքդ պղտոր ես բռնելու այն, ինչ ունես, հատկապես այն, ինչ ինքդ ես ձեռք բերել, ինքդ ես ստեղծել,— որովհետև դա իմ ունեցվածքն է. ահա այդ պատճառով էլ պահպանում ես։

Բայց երբ Բեռնադետտան անքնության երկար ժամերին, անկողնում պառկած, մինչև մերկության հանում էր իր հոգու շորերը, ենթագիտակցության մութ գիշերից, լքելով իր որջը, անձայն ու զգուշավոր դուրս էր սողում նախկին խոցված կիրքը։ Հայացքով, որին հիշաչարությունն առանձնահատուկ սրատեսություն էր տալիս, Բեռնադետտան թաքուն հետևում էր Մարկի ընտանեկան կյանքին։ Նա բոլորից շուտ նկատեց ճեղքը։ Եվ երբ անջատումը տեղի ունեցավ, Բեռնադետտան (ո՞ր վեցերորդ զգայարանով) այդ մասին իմացավ հենց առաջին օրերից, նույնիսկ Վենետայից ավելի շուտ։

Բեռնադետտան միայն մի սխալ քայլ կատարեց (ասենք, իսկապես դա սխալ քայլ էր Քե ոչ, ոչ ոք չգիտեր). նա այդ բոլորը պատմեց իր քրոջը՝ Կոլոմբային։ Հանդիստ, կարծես Քե խոսքը կոզմնակի մարդու մասին էր, նա հաղորդեց, ինչ հարված էր Մարկի համար ընդ որում դավաճանությունը, և պատկերեց նրա մենակությունը։ Զգայուն Կոլոմբան հուզվեց։ Սառը, նույնիսկ հեգնական տոնը, որով Բեռնադետտան նրան մատուցեց այդ նորությունը, միայն ուժեղացրեց նրա կարեկցությունը. Կոլոմբան Մարկի փոխարեն ցավ էր զգում։ Դեռ մանկությունից նա համակրանք էր տածում դեպի Մարկը։ Նա շատ բան էր լսել Մարկի մասին, երբ դեռ փոքրիկ աղջիկ էր։ Բեռնադետտայի հետ ունեցած զրույցների ժամանակ Սիլվիան սովորական կատակներով ամեն կերպ գովաբանում էր իր «մորուկին», քանի որ հույս ուներ նրան բաց թողնել ավազ քրոջ մարգագետինը։ Եվ Կոլոմբան Մարկին էր նայում ցանկապատի վրայով, տուկնեը չտած, որոնց մեջ և հիացմունք էր արտացոլվում, և բարեհոգի նախանձ։ Հառաչելով, նա հաշտվեց ավազ քրոջ երջանիկ բախտի հետ, իսկ երբ վերջինիս երջանկությունը խանգարվեց, հառաչում էր, Քերևս, ավելի վշտացած, քան ինքը Բեռնադետտան։ Կոլոմբան նուրբ, ռոմանտիկ, մշտապես տատապող հոգի ուներ, քանի որ նրա անսահման քնքուշ մաշկի վրա քերծվածքներ էին

հայտնվում նույնիսկ այն ժամանակ, երբ կյանքը իր ճանկով հաղիվ էր դիպչում նրան։ Սակայն այդ նուրբ մաշկը երբեք չէր գայթակղում մեր քաղցրասեր Մարկին։ Ի դժբախտություն Կոլոմբայի, Մարկը, վրդովված այն բանից, որ Սիլվիան փորձում է նրան խնամախոսության կարթին գցել, իր վրդովմունքը փոխադրեց ամբողջ ընտանիքի վրա, և Մարկին համբերությունից հավասարապես հանում էր գիշատիչ պոզպատագորշ բիբերի աննահանջ հայացքը և անմեղ Կոլոմբայի խոշոր ու թախծագորով շագանակագույն աչքերում գրված հիացմունքը... իսկ աչքերը լավիկն էին— ավելի լավը, քան Ասյայինը, և հրաշք գեղեցկություն ունեին ձեռքերը, պարանոցը, այտերը, մազուր, թախծոտ, հիմարավուն և հյութեղ բերանը... Բայց սիրո քամին փչում է երբ և ինչպես ուզի։ Կոլոմբայի համար նա համընթաց չէր։ Նրա ամբողջ կյանքի ընթացքում այդ քամին անփոփոխ փչել էր հակառակ ուղղությամբ։ Ինքն էր մեղավոր, կարողացիր առաղաստը ղեկավարել։ Կոլոմբան սպասում էր, հույսը չէր կտրում, նա լողում էր ալիքների կամքին տրված։ Եհ՜ղճ աղավնյակ։ Աղավնատուն էին թռչում չգիտես ինչու միայն չսիրված աղավնիները։

Սիլվիան տնօրինում էր նրա ճակատագիրը, ինչպես մտադրված էր (ճիշտ է, առանց հաջողության) տնօրինել Բեռնադետտայի ճակատագիրը։ Կոլոմբայի սիրունատեսությունն ու բնածին նրբագեղությունը սրտի վեհերոտության զուգակցությամբ, որոնք նրան առանձնահատուկ հմայք էին տալիս, փարիզյան զվարճանքների և բավականությունների բազմափորձ էքս-թագուհու աչքում վիայում էին, որ փոքրիկի կոչումը «Saltare et Placare»[1] -ի մեջ է։ Սիլվիան նրան տվեց բալետի դպրոց... Աղջիկն աշխատում էր փութաջան, ոչ առանց հաջողության, բայց առանց բերկրանքի։ Համեստ մարգարտածաղիկը բարեխղճորեն մեկնում էր իր ոտիկների բարակ և ճկուն ցողուններըւ Նա կգերադասեր դրանք փաթաթել սիրեցյալին։ (Ինչ սիրեցյալի՞։ Միևնույն է թե ինչ, միայն թե ամբողջ կյանքում սիրեն իրար)։ Բայց ամոթ է և ցավալի դրանք ցույց տալ անանուն հառաչողների բազմությանը։ Կոլոմբայի մեջ դերասանական ոչինչ չկար, կատարելապես ոչինչ չկար, նույնիսկ մի կաթիլ այն բնական, ընդ որում շատ անմեղ, կոմեդիանտության,

[1] Պարել և դուր գալ (լատ.)։

որը թաքնված է կամ կայծկլտում է համարյա ամեն մի սիրունիկ փարիզուհու մեջ։ Նա ուրախությամբ կյանքը կանցկացներ ընտանեկան օջախի մոտ կամ մահճակալում՝ երկտեղանոց, իհարկե։ Ինչ խոսք, հոգեբանության հարցերում Սիլվիան բնավ չէր կարող պարծենալ նուրբ հոտառությամբ։ Բայց սխալներն ընդունելը նրա սկզբունքներին դեմ էին։ Եթե բնությունը հակառակվում է, ավելի վատ բնության համար։ Մեղմաբարո Կոլոմբան չէր հակառակվում, նա հառաչում էր, բայց էնթարկվում էր։ Նույնիսկ հնազանդությամբ նա դպրոցն ավարտելիս ընդունեց վերջերս բացված թատրոնի կորդեբալետում մասնակցելու որոշումը, որը մյուզիկ-հոլլի և օպերայի միջև ընկած մի բան էր։ Բայց իր ամբողջ հնազանդությամբ հանդերձ երկրորդ մեծության աստղից այն կողմ Կոլոմբան չգնաց, թեև մի ուրիշ, նույնքան հմայիչ, բայց ավելի ճարպիկ բալերինան, առանց դժվարության կդառնար, Ֆորենի արտահայտությամբ, Փարիզի օպերայի գիսաստղը։ Նրան մի բան էր պակասում— հովանավոր։ Մինչդեռ հովանավորների պակաս չէր զգացվում։ Բայց խեղճը չէր կարողանում ոչ ճիշտ ժամանակին համաձայնել, ոչ ճիշտ ժամանակին մերժել։ Նա ուզում էր հետևել սրտի թելադրանքին։ Իսկ սրտից արյուն էր կաթում, և «ոչ» էր ասում բոլոր պատկառելի հովանավորներին, իսկ հետո, նկրտումներից հոգնած ու տանջահար, միայն թե գլուխն ազատի, «այո» էր ասում ոչ պատկառելի հովանավորներին։ Հետո նա գալիս էր (հետագայում նա արդեն սիրտ չէր անում գալ)։ Սիլվիայի մոտ իր բախտը ոգբալու։

— Այ թե հիմա՜րն ես,— ասում էր Սիլվիան։— Մի տես թե աստված ինձ ի՜նչ սագ է պարգևել։

Կամ նա գնում էր Բեռնադետտայի մոտ, որը, դժգոհությամբ սեղմելով շրթունքները, նեռում էր.

— Ես ժամանակ չունեմ...— Եվ մտածում էր. «Ախա՜, ինչ ուզում ես։ Բայց բերանդ փակ պահիր... Տեսնում ես, ես էլ եմ փակ պահում»։

Միայն եղբոր՝ Անժի, հոգևոր սեմինարիայի շրջանավարտի առաջ էր, որ Կոլոմբան կարող էր սիրտը դատարկել։ Խեղճ տղան այնքան խոստովանանքներ էր լսել, որ կշտացած էր։ Բայց դե կրոնավորների արհեստն այդ է, պետք էր դրան նախապես ընտելանալ։ Եվ նա էլ կամաց-կամաց ընտելանում էր։

Աբենք, նա դեռ մանկությունից էր վստահելի անձ քրոջ բոլոր գաղտնիքների համար։ Իսկ Կոլոմբայի միամտությունն ու դյուրահավատությունն ունեցողը ինչեր ասես, որ չէր ասել նրան։ Բայց ինչքան էլ խեղճը քաշվեր քրոջ անկեղծ խոստովանություններից, նա լրջորեն ամեն ինչ լսում էր մինչև վերջ, համբերությամբ, կարեկցանքով համակված, քանի որ լավ էր ճանաչում իր աղավնյակին և կարողանում էր տեսնել քրոջ հոգեկան մաքրությունը նույնիսկ նրա մոլորությունների մեջ, նույնիսկ այն արարքներում, որոնցից ամաչում էր ինքը՝ Կոլոմբան։ Եթե Անժը կարողանար մեղքերի թողություն տալ, նա լիքը բռերով ջուր կցաներ քրոջ ապականված փեսուրների վրա, բայց, սուրբ ջուր չունենալու պատճառով, Կոլոմբայի վրա լցնում էր իր քնքշությունը և խրատական քարոզների սպեղանին, որոնց փոքրիկ բալերինան հնազանդորեն միացնում էր իր ոզբը, ավելի ճիշտ, ղունղունոցը։

Խոստովանահայրը, սակայն, միշտ չէր, որ կողքին էր զանգվում։ Նա մենություն էր փնտրում։ Հետո, երբ ձեռնադրվեց, ծուխ ստացավ Փարիզից դուրս։ Եվ Կոլոմբան, որը չէր կարողանում իր զգացմունքները շարադրել թղթի վրա, կամ թե ակամա ստիպված եղավ թախիծը պահել իր ներսում։ Պետք է ենթադրել, որ աստվածավախ Անժի համար դա փոքր թեթևություն չէր։ Ժամանակ առ ժամանակ նա այնուամենայնիվ քրոջը փոստով մխիթարանքներ էր առաքում։ Բայց, ինչպես և Կոլոմբան, Անժը չէր տիրապետում թղթի վրա զրուցելու արվեստին։ Երբ նա գրում էր— մի մարդ էր, իսկ երբ խոսում էր՝ ուրիշ։ Այն, ինչ փոստով Կոլոմբայի մոտ էր գալիս, ճոռոմ էր և քաղցրմեղը. սուրբ հայրը ժլատ չէր աստծո խոսքը գործածելիս։ Կոլոմբան ակնածանքով կարդում էր ուղերձը և վերջում խաչակնքում էր իրեն։ Բայց ամեն ինչից սառնություն էր փչում։ Տաքանալու համար Կոլոմբան մարդկային ջերմ խոսքի կարիք ուներ։ Տաք մարդկային ձեռքի, գրկի կարիք։

Մարկի ընտանեկան դրաման, որի մասին նա իմացավ Բեռնադետտայից, ցնցեց նրան, կարծես դա իր հետ էր կատարվել։ Գիշերները մինչև լույս, սեղմվելով տաք բարձին, մտածում էր Մարկի դժբախտությունների մասին, իսկ միաժամանակ նաև Մարկի մասին, ընդ որում առանց վատ մտքերի։ Իր երևակայության մեջ նա նկարում էր Մարկին ըստ իր սեփական պատկերի և նմանության, որպես սիրողի և չսիրվածի, որպես խաբվածի,

լքվածի։ Նա կուզեր Մարկին չերմացնել և ինքն էլ չերմանալ նրա կողքին... Օ՜, առանց որևէ բանի հավակնության։ Միայն սփոփել նրան և սփոփվել... իսկ հետո ով գիտի... Դիշերային անուրջներում Կոլոմբան այդքան հեռու չէր նայում... Միտքը չէր համարձակվում շրջել էջը...

Եվ մի գեղեցիկ առավոտ ճակատագրին պետք էր, որ Կոլոմբան փողոցում հանդիպի Մարկին։ Սքանչելիորեն հագնված, վարպետությամբ ու թեթևակի քսված— ընդամենը մի երկու երեք, նուրբ դիմագծերին կենդանություն տվող ժլատ շտրիխներ, որոնք արված էին արտիստիկ համտությամբ,— մի խոսքով, անսահման գայթակղիչ։ Իսկ երիտասարդ գայլը քաղցած էր։ Ոչ Մարկը, ոչ Կոլոմբան դրա մեջ սարսափելի ոչ մի բան չէին տեսնում։ Բնությունն ինքն էր ամեն ինչի մասին հոգ տարել։ Կոլոմբան մտածում էր միայն սփոփել Մարկին (գոնե այդպես նրան թվում էր)։ Բայց հենց այդ էր, որ Հպարտ Մարկը երբեք չէր հանդուրժի։ Սակայն բնազդը Կոլոմբային հուշեց ամենաճիշտ ուղին դեպի Մարկի սիրտը։ Նա սկսեց Մարկի հետ խոսել, ինչպես դժբախտության ընկերոջ հետ, որը վիրավորվել էր նույն ճակատամարտում, բայցև որն իրենից ավելի ուժեղ էր և անեղուն. Կոլոմբան հույս ուներ նրա մեջ պաշտպանություն գտնել։ Կոլոմբայի լռակյացությունը, մեղմ, տխուր աչքերի հայացքը, որը ոչ թե ճնշում, այլ գրկում էր, ինչպես բարեկամիդ ձեռքը, որ իջնելով ուսիդ, աշխատում է մնալ անկշիռ— շորի միջով զգում ես միայն մատների կենդանի չերմությունը,— այդ ամենը չէր կարող չունենալ իր ազդեցությունը... Առաջին անգամ Մարկը հայտնագործեց, թե որքան լավն են այդ ձեռքերը, այդ աչքերը։ (Քաղցը լավագույն խոհարարն է)։ Աչքերը (զարմանալի է) նույնիսկ խելացի էին թվում։ Եվ, ինչն ամենից շատ զարմացրեց, այդ րոպեին աչքերն այդ իսկապես էլ խելացի էին։ Սիրուց ոգեշնչված մարմինը պարզապես կույր կախարդ է, նա ընդունակ է հրաշքներ գործել։ Ավաղ, կախարդանքը երկար չի տևում։ Էհ, ինչ կա որ, միայն թե այդ կախարդանքն իր նպատակին հասնի, ավելին նրան պետք էլ չէ։

Մարկն ինքն էլ չնկատեց, ինչպիսի քնքշությամբ թևանցուկ արեց գեղեցկուհուն, քայլեց փողոցով, վստահելով նրան իր գաղտնիքները։ Կոլոմբան ոչինչ նրան չէր հարցնում, Մարկն ինքն սկսեց խոսել իր դժբախտության մասին. նա ասում էր

ողջ ճշմարտությունը, բայց անտարբերությամբ, կարծես թե խոսքը ինչ-որ կողմնակի մարդու մասին էր։

Եվ Կոլոմբան ախ ու վախ չէր անում, հնարավորություն էր տալիս Մարկին պատմելու այն, ինչ նա կարևոր կհամարի։ Ինչո՞ւ ընդհատակվել։ Մի՞թե Կոլոմբան չգիտի։ Չի՞ հասկանում։ Գոնե այդպես էին ասում նրա աչքերը։ Եվ Մարկը չէր կարող պարտքի տակ մնալ։ Երախտագիտությունը Մարկի մեջ արթնացրեց Կոլոմբայի դժբախտություններն հասկանալու և նրանց մեջ մասնակցություն ունենալու զգացում։ Առաջին անգամ Մարկը մտածեց, որ Կոլոմբան նույնպես կարող է վիշտ ունենալ։ Մինչև հիմա այդ նրա մտքով անգամ չէր անցնում։ Մի վայրկյան Մարկը նույնիսկ մոռացավ իր սեփական վշտերը, որպեսզի եղբայրաբար կարեկցի փոքրիկ պարուհուն։ Եվ հենց առաջին սրտակից հարցերին Կոլոմբան պատասխանեց այնպիսի անսահման երախտագիտության հայացքով, որ Մարկի գլուխը պտտվեց։ Նրանք նստեցին ավտոմոբիլային շշակների ոռնոցով օդակի մեջ առնված պուրակի արձանի մոտ։ Եվ Կոլոմբան նրա առաջ բացեց Պանդորայի արկղիկը։ Բայց նույն այն միամիտ խորամանկությունը, որը նրան օգնել էր մինչև հիմա, այժմ տուփի հատակին պահում էր անպատշաճ խոստովանություններն ու թույլ էր տալիս, որ մատների արանքով դուրս սրծնեն միայն ողջախոհ և վիրավորված քնքշության երկչոտ, սրտաշարժ գաղտնիքները։ Ամենևին ոչ միամիտ Մարկը կարող էր գնահատել կորդեբալետի աղավնյակի ամաչկոտ ինքնախարազանումը, բայցև այնպես նա հենց առաջին խոսքից, առանց խոստովանանք պահանջելու, Կոլոմբային կտար Քրիստոսի մարմնի մասնիկը։ Բայց Կոլոմբան, պետք է ենթադրել, կխընդրեր սատանայի մասնիկը... Սատանան ևս գայթակղություն էր զգում։ Սակայն Մարկը աննահանջ պաշտպանում էր իր չարաշտավորված այրիությունը։ Թող որ դավաճան կինը նրա համար մեռած է։ Այո՛, այո՛։ Հենց այդ պատճառով էլ հավատարմությունը Մարկի համար պատվի գործ էր։ Հպարտությունը նրա սիրո գաղտնիքի հանցակիցն էր, որքան էլ նա հրաժարվեր դավաճան կնոջից,— հպարտությունը, ինչպես նաև ատելությունն ու ցասումնալից արհամարհանքը, որ նա մեկընդմիշտ որոշել էր դրսևորել կանանց նկատմամբ։ Ու թեև Մարկն ինքն իրեն խոստովանում էր, որ ինքն անտարբեր չէ փոքրիկ պարուհու աքանչելի և այնքան տխուր աչքերի ու նրա՝ հասած պտուղի

նման հյութեղ շրթունքների նկատմամբ, այնուամենայնիվ, հաստատ որոշեց մնալ բարեկամական հարաբերությունների չեզոք գոտում։ Իսկ ժամանակակից պատերազմի պայմաններում չեզոք գոտիները վտանգավոր են։ Մի գեղեցիկ օր կարող ես արթնանալ նվաճողի գերության մեջ...

Նվաճողուհին զգույշ տակտիկայի կողմնակից էր։ Հիմարիկ պարուհու սիրտը հուշեց, որ եթե ուզում ես ցանկալի լինել, պետք է կարողանաս ճիշտ ժամանակին նահանջել։ Նա զգուշանում էր բարեհաճ ունկնդրին ձանձրացնելուց, որի վերջերս երևան եկած բարեհաճությունը դեռ բավարար չափով չէր ամրապնդվել։ Հանդիպումների ժամանակ նա ամեն անգամ առաջինն էր հեռանում։ Ասենք, հազվադեպ էլ հանդիպում էր Մարկի հետ, համառորեն չէր առաջարկում այն, ինչ առաջարկելու համաբ վառվում էր և ինչը Մարկն էր սպասում. հանդիպել Կոլոմբայի հետ նրա տանը։ Կոլոմբան վախենում էր, որ Մարկն իր փորձված աչքով անմիջապես կռահի շքեղության կասկածելի աղբյուրը, և միևնույն ժամանակ նրա համար ցավալի կլիներ ընդունել այդ մահճում նրան, ով կարող էր վերադարձնել իրեն անկեղծ սիրո հնոցում վերաձուլված մաքրությունը, որը և ինքը որպես նվեր կմատուցեր իր սիրած տղային։ Այդպես շարունակվում էր քավական երկար. նրանք հանդիպում էին ընդհատում. ներով և միայն փողոցում, մինչդեռ երիտասարդ գայլի քաղցը գնալով աճում էր։ Բայց դառնուկը, որը չէր համբերում, թե երբ պիտի իրեն ուտեն, ամեն հանդիպումից հետո նորից դառնում էր ոչխարավարի հիմար և խորհրդի էր վազում իր բարի քրոջ՝ Բեռնադետտայի մոտ, որը, ի տարբերություն առաջվա, ջերմորեն հետաքրքրվում էր սիրավեպի ընթացքով և չէր զլանում խորհուրդներ տալ։ Կոլոմբան քրոջն ամեն ինչ, սկզբից մինչև վերջը, պատմում էր այնպիսի հափշտակությամբ, որ չէր նկատում, ինչպես է մոխրագույն աչքերի հայացքը դառնում մի տեսակ չոր։ Ով ահա, վերջապես, վրա հասավ այն օրը, երբ Կոլոմբան, քափուքրտինք մտած (նա անհամբերությունից չէր սպասել վերելակին), խուժեց Բեռնադետտայի մոտ, որպեսզի նախապես պարծենա իր երջանկությամբ (Բեռնադետտան չոր ափով փակեց քրոջ բերանը), այսօր երեկոյան նա Մարկի մոտ է լինելու։ Այդ գոռոզն այնպես էր խնդրում, այնպես էր խնդրում նրան, և, խղճալով, ինքը զիջեց (իսկ իրականում Կոլոմբան հազիվ զըս-

պես իրեն, որ չբղավի.— Վերջապես, վերջապես... Քոնն եմ... քոնն եմ... Շնորհակալ եմ...)։

Բեռնադետտան երկար ժամանակ կշտամբում էր նրան, չի կարելի տղամարդկանց ցույց տալ իր թուլությունը։ Այդպես կարելի է ամեն ինչ կորցնել։ Հետո հետքրքրվեց, թե տեսակցության գնալիս ինչ է մտադիր հագնել։ Երկար քննարկում էր Կոլոմբայի հետ զգեստների բոլոր մանրամասնությունները և հրաժեշտի ժամանակ նա Կոլոմբային խորհուրդ տվեց ոչ մի դեպքում նշանակված ժամանակից շուտ չգնալ, թող որքան կարելի է երկար սպասի։ Կոլոմբան քրոջից հեռացավ երախտագիտությամբ լցված։ Ինչքան գեղեցիկ է ամեն ինչ, ինչքան լավ է ամեն ինչ—երկինքը, երկիրը, մարդիկ, աստված։ Իսկ ամենագեղեցիկը, ամենալավը— այսօրվա հանդիպումն է սիրեցյալի հետ... Նա վազում էր փողոցով, երջանկությունից ոտքերը գետնից կտրված, և, ապագա գրկախառնությունների կանխավայելումների մեջ, պղտորված հայացքով արդեն նվաղում էր, ինչպես Դանայան...

Մարկի մտքով չէր էլ անցնում «այնպես խնդրել»։ Նա չկարողացավ դիմանալ Ֆորնարինայի աչքերի նման քնքշանվաղ աչքերի աննահանջ հայացքին, և Կոլոմբային հրավիրեց այցելել իր ձեղնահարկը։ Այնքան վաղուց էին արդեն Մարկին կանչում այդ աչքերը, որ նա բարձրաձայն արտաբերեց երկար սպասված խոսքերը, և Կոլոմբան համաձայնեց նույն վայրկյանին, էլ ավելի ջերմ խոսքերով։ Գլխավորն այն էր, որ դրանք ասվեցին։ Նահանջելն ուշ էր։ Բայց Մարկն իրենից գոհ չէր։ Նա ամենևին էլ չէր փնտրում այդ արկածը, թեև հենց առաջին օրից կանխատեսում էր վերջը։ Նա ուզում էր պահպանել Ասյայի նկատմամբ հավատարմության իր առավելությունը, թող դա լիներ նույնիսկ ոչնչով չհիմնավորված, միայն թե նրան արհամարհելու ավելի շատ հիմքեր ունենար։ Եվ հետո նա հասկանում էր, որ տրանստեվերյան էդ էշի զգայական ու ռոմանտիկ ախորժակի հանդեպ ներողամիտ լինելն անվտանգ բան չէ։ Վայ նրան, ում կապվի Կոլոմբան։ Նա այդ մարդուն կենթարկի իրեն։ Բայց Մարկը հաստատ որոշել էր, չենթարկվել։ Եվ նույնիսկ այն երեկո, սպասելով Կոլոմբային, ակամայից խորամանկում էր, ջանալով իրեն համոզել, որ ամեն ինչ կսահմանափակվի խրատական զրույցով։ Պահպանելով իրեն, Մարկը համարում էր, որ ձեռնտու է պահպանել նաև Կոլոմբային. Մարկը նրանից մեծ

է, նա փոքրիկ քալերինային ճանաչում է մանկությունից, իսկ դա Մարկի վրա պատասխանատվություն է դնում։ Մարկը նույնիսկ (դրա անպատկառությո՜ւնը տես) պատրաստվում էր նրան խրատ կարդալ և հիմա ճառն էր սերտում։ Ընդ որում, նա անընդհատ կորցնում էր դատողությունների թելը և շեղվում. ականջ դնում եկեղեցու աշտարակի ժամացույցի հարվածներին, և ոչ մի կերպ չէր կարողանում տեղում նստած մնալ... Քանիերորդ անգամն էր Մարկը կրկնում առաքինի խրատի սկիզբը, խրատ, որով նա պատրաստվում էր դիմավորել Կոլոմբային, միայն թե չէր կարողանում հասցնել մինչև վերջը։ Բայց ահա նա աստիճանների վրա շտապող, անհամբեր քայլերի ձայն լսեց։ Նախադասության վերջը գլխից դուրս թռավ։ Ասենք, սկիզբը նույնպես։ Ձեռքն իրեն-իրեն հայտնվեց դռան բռնակին և դուռն ավելի շուտ բացվեց, քան հյուր եկողը կհասցներ բախել։ Մինչև միմյանց տեսնելը երկուսն էլ դռան ետևում լսեցին, ընդհատուն, ինչպես մրցավազքի, շնչառությունը։

Մարաֆոնյան մրցավազքը հայտնվեց։ Մարկը միայն հասցրեց նկատել դեպի իրեն ձգտող՝ մանտիլիան գլխին գցած կերպարանքը։ Հյուրը վայրկենապես պատեց լույսի անջատիչը։ Երբ դուռը ծածկվեց, նրանք հայտնվեցին կատարյալ մթության մեջ, միմյանց կիպ սեղմված, ինչպես կափարիչն էր արվեղին, և Մարկին կպավ մի ազահ բերան։ Գերի վերցված, Մարկն ինքը վերցրեց աղջկան։ Նա հաշիվ չէր տալիս իրեն, թե ինչ եղավ դրանից հետո։ Նրանք ուշքի եկան մահճակալի վրա, իրար փաթաթված, կծիկ դարձած։ Մարկի շունչը կտրվում էր ճուտակի կոցի հարվածների տակ։ Այ քեզ աղավնյակ։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում կշտանալ։ Եվ նորից նրանք գլորվում էին սև անդունդը։ Բայց երբ տենդն իջավ և ալքերը կամաց-կամաց սովորեցին խավարին, Մարկն իր վերևում տեսավ գիշատիչի կատուն ու կլո՛ր ալքերը և չճանաչեց իր թշնամիին։ Ազատվելով, նրա գրկից Մարկը շոշափեց ոսկրոտ ազդրերն ու նիհար ձեռքերը։ Մարկի շունչը կտրվում էր։ Նա փորձեց տեղից կանգնել և, իրեն կորցրած, արտասանեց.

— Կոլո՛մբա։

Բայց նիհար ձեռքերը Մարկին գամեցին անկողնուն, նրա շրթունքներին սեղմված բերանի նեղլիկ ճեղքը անձայն ծիծաղից լայնացավ, և երկար բարակ ձեռքը, բաց թողնելով Մարկին, բարձրացավ դեպի իրենց գլխավերևում գտնվող անջա-

միչը։ Եվ կուրացուցիչ պայծառ լույսի տակ նա տեսավ դող-կաղաղակին, թուխ և նիհար Բեռնադետտային, որը, արմունկի վրա փոքր-ինչ բարձրանալով, բայց ոտքերով Մարկին ամուր գրկած իր հաղթանակն էր տոնում... «Nigra sum sed pulchra...»[1] Շողշողալով կրքից, չարախնդումից, հաղթանակի բերկրությունից, Բեռնադետտան իսկապես էլ գեղեցիկ էր։ Ապուշ կտրած, Մարկը նայում էր նրան և հիմարաբար միայն կրնկում։

— Կոլո՞մբա։

Բեռնադետտայի բարձր ու սուր ծիծաղը պոռթկաց և նա ասաց։

— «Վերջացրու Լիայի շաբաթը. հետո քեզ կտանք նաև մյուսին, այն ծառայության համար, որ դու անելու ես ինձ մոտ ևս յոթ տարիներ...»։

Նրա ծիծաղը, աչքերը, սուր ատամները, կրքից, խարդավանքից և բավականության ծամռված բարակ շրթունքներով մեծ բերանը, իսկ որ գլխավորն է, այդ ջերմ շունչը, որ կարծես արևից տաքացած հողից բարձրացած լիներ, այդ երջանիկ մարմինը, որը առաջին անգամ էր ծաղկել դեռ վաղուց ըղձալի և, վերջապես, նվաճված շուրթերի համբույրներից,— այդ բոլորը շշմեցրել էր պարտվածին։ Վրդովմունքի խոսքերը, որոնք նա ապարդյուն կերպով ճգնում էր ասել ընդարմացած, ինչպես և խիղճը, լեզվով, այդպես էլ մնացին չասված։ Մարկը նույնպես անբնականորեն քրքջաց և, բռնելով Լիային, մի տարի ևս ծառայեց նրան...

Եվ հենց այդ րոպեին, ամբողջապես քրտինքով ողողված ու տենդի մեջ, Մարկը լսեց «մյուսի» քայլերի ձայնը— այնտեղ՝ աստիճանների վրա, և դռան թակոցը... Այդ թակոցը նրա մեջ արձագանքեց ինչպես ամպրոպի ճայթյուն։ Կայծակի պես փայլատակող միտքը խոցեց նրան և ստիպեց ուշքի գալ։ Մարկն իրենից պոկեց կենդանի բաղեղը, ձգվեց անկողնու մեջ և սարսափահար քարացավ, չիմանալով, ինչ անի... «Մյուսն» սպասում է դռան հետևը, նա ականջ է դնում, կարող է դռան ճեղքից տեսնել գիշերալամպի լույսը, որը նրանք մոռացել էին հանգցնել։ Ինչպես հանցագործության վայրում բռնված տղա, որը փորձում է հակառակ ակնհայտությանը, դեռ ժխտել էր հանցանքը, Մարկը թեքվեց Բեռնադետտայի վրայով, որն իրեն էր հառել զննող հայացքը, և անհարմար մի շարժումով ուզում էր պատել էլեկ-

[1] Սև եմ, բայց գեղեցիկ եմ (լատ.)։

արբական անջատիչը, բայց, չփոթվածությունից վրիպեց։ Մինչդեռ աղավնյակը, սանդղահարթակին համբերությունը կորցնելով, նորից սկսեց կոցահարել դուռը։ Եվ այդ ժամանակ, աչքերը կախ գցելով, նա նկատեց gazza ladra[1] -ի մեծ բերանը, որը պատրաստ էր անհաղթահարելի ծիծաղից պոռթկալ։ Մարկը սպառնագին լռեց աչքերը, հրամայելով Բեռնադետտային լռել։ Ուշ էր... բարձրաձայն քրքիջը շափաղեց լռությունը, կրճտոցը, գլորվեց ամբողջ սենյակով մեկ, մտավ դռան տակ և բանալու անցքով դուրս եկավ սանդղահարթակ։ Մարկը կոպտորեն, կարծես ապտակով, ձեռնափով փակեց Բեռնադետտայի բերանը։ Ուշ էր... Դռան հետևից տնքոցի ձայն լսվեց... Հետո ամեն ինչ լռեց... Մարկը պառկել էր, անկարող շարժվելու, առանց որևէ մտքի, չնկատելով, որ Բեռնադետտայի ատամները խրվում են իր ափի մեջ։ Իսկ շեմի մոտ, վշտից քարացած, ուժասպառ հենվելով պատին, կանգնել էր մյուսը... Եվ հանկարծ սրտակեղեք մի ճիչ լսելի էր, թե նա ինչպես խուճապահար նետվեց սանդուղքն ի վար փախչելու... Հենվելով իրեն կպչող Բեռնադետտայի կրծքին, Մարկը ցատկեց մահճակալից, դուրս թռավ սանդղահարթակ, կռացավ ճաղաշարի վրայով և ձայն տվեց.

— Կոլո՛մբա։

Մարկը նույնիսկ վազեց նրա հետևից մինչև մյուս հարկի սանդղահարթակը։ Բայց հեկեկանքով լացող Կոլոմբան չէր արձագանքում. ներքևից լսվում էր միայն հեծկլտոցի անպարզ ձայնը, իսկ հետո դուռը շրմփոցով փակվեց։ Մարկը բարձրացավ իր սենյակը։ Բեռնադետտան, հայելու առաջ մերկ կանգնած, ճլմկոտում էր։ Նա հետաքրքրությամբ մատը քսում էր կրծքի վրայի կապտուկին— Մարկի բռունցքի թեղած հետքին, հետո նստեց անկողնու ծայրին և սկսեց առանց շտապելու հագնվել։ Մարկը, քար կտրած, կանգնել և բութ հայացքով նրան էր նայում, բայց տեսնում էր «մյուսին»։ Սակայն նրա հայացքի և «մյուսի» միջև սեպվում էր այդ տկլոր, նիհար, հագեցած կինը։ Թուխ, գզգզված մազերով, նա վայելում էր իր հաղթանակը, պարծենում էր իր ցնծացող այլանդակությամբ և մազոտ սրընքամսերով, ոսկրոտ ոտնաթաթերով, գլուտված կաուչի դուրս ցցվող ողնաշարով—մեկընդմիշտ դանակի նման մխրճվեց Մարկի հիշողության մեջ կոշիկներն հագնող Աուեքինի այդ կուշ

1 Գող-կաչաղակ (իտ.)։

եկած սիլուետը մինչև կզակը բարձրացրած սուր ծնկներով և շուրթերին խաղացող ծուռ քմծիծաղով։ Մարկը ոչ մի քայլ չարեց, մատն անգամ չշարժեց նրան օգնելու համար։ Նա լուռ էր։ Բեռնադետտան նույնպես չէր խոսում։ Վերջացնելով հագնվելը, նա վերջին մի հայացք գցեց հայելուն, նրա մեջ տեսավ Մարկի մոայլ, քարացած դեմքը և քմծիծաղեց։ Հետո մոտեցավ Մարկին, բռնեց նրա ուսերից, նրա ցրված աչքերի մեջ սուզեց իր հայացքի պողպատը և, շրջելով սուրը, ցանկության բեկորների և հուզմունքի տակ հայտնաբերեց նիզակի սայրը— ատելությունը։ Հենց այդտեղ էր, որ Բեռնադետտան զգաց իր լիակատար հաղթանակը։ Նա հագեցավ և վրեժից, և սիրուց։ Գնալուց առաջ, նա, կարծես հանրագումարի բերելով, մի հայացք գցեց մարտադաշտի վրա— անկողնուն, սենյակին, պարտվածի դեմքին։ Ամեն ինչ այնպես էր, ինչպես պետք է։ Նա դուրս եկավ։ Այն րոպեից, ինչ Բեռնադետտան քրքջաց անկողնում, երկուսի բերանից էլ ոչ մի խոսք դուրս չէր եկել։ Աստիճանների վրա նա հիշեց հատակին ընկած մանտիլիան և վերադարձավ վերցնելու։ Մարկը կռացավ և նրան տվեց մանտիլիան։ Գլխի շարժումով շնորհակալություն հայտնելով Մարկին և նկատելով թե ինչպիսի խռովքի մեջ է թողնում նրան, Բեռնադետտան յուրովի խղճաց նրան և ասաց.

— Մի՛ վշտանա։

Եվ դուրս եկավ։

Փոթորիկի նման անհանգիստ քնից հետո Մարկն առավոտյան արթնացավ մարմնում մի հաճելի թեթևությամբ, բայց ամոթի զգացումը չէր թողնում նրան։ Ավելի լավ կլիներ հիվանդություն լիներ, քան ֆիզիկական առույգության և հոգեկան անբարեհաջողության այս ոչ բնական զուգակցումը։ Թախիծը կրծում էր նրան։ Բայց խորհրդածելու ժամանակ չկար. նա ուշ էր վեր կացել, հարկավոր էր շտապել աշխատանքի, նույնիսկ թերթը նայել նա չհասցրեց։ Սակայն ամբողջ օրը նրան հետապընդում էր ինչ-որ չգիտակցված մի տագնապ։

Ուշ երեկոյան, տուն վերադառնալիս, նա մետրոյում լսեց, որ երկու աղջիկ խոսում են ինչ-որ մի բալերինայի մասին, որն իրեն Սենան է գցել։ Հենց առաջին կրպակում Մարկը թերթ գնեց և լապտերի լույսով, անձրևի տակ կանգնած երիներանգ լույսից փայլփլող մայթին, պատահարների բաժնում կարդաց

մի հաղորդագրություն, որը մի քանի ժամով պետք է ձգձգեիր Փարիզի քաղքենիների պարապ մտքերը։ Այն, ինչ Մարկը կարդաց, նա արդեն տեսել էր անցած գիշեր մի ծանր մղձավանջում։ Ցնորված Կոլոմբան վազել էր ուղիղ դեպի Սենան և Սեն-Միշել կամուրջի մոտ նետվել էր գետը։ Նրան փրկել էին և կիսամեռ հասցրել հիվանդանոց։ Միայն հաջորդ օրն էր հաջողվել ճանաչել մահափորձ կատարողի անձը։ Տուժողի վիճակն այնքան ծանր էր, որ նրան տուն ուղարկել չէր կարելի։ Կոլոմբայի անունը մի կարճ ակնթարթ պայծառ լույսով բռնվեց թերթերի էջերում։ Այն, ինչ նա չէր կարողացել նվաճել իր պերուետներով, նրան բերեց Սենա կատարած թռիչքը, որը նրա՝ բոլորի համար անհայտ անունը շրջապատել էր փառքի բենգալյան կրակով։ Բոլորը խոսում էին այն մասին, ով կամ ինչն է փոքրիկ բալերինային հասցրել այդ հուսահատության։ Բայց Մարկի լեզուն կապել էր կոկորդին։ Նա սարսափից քար էր կտրել։ Զգալով, որ անձրևից թրջվում է, նա թափառում էր փողոցներով, առափնյակներով և, վերջապես, ինքն էլ չիմանալով ինչպես, հայտնվեց Սեն-Միշել կամրջի մոտ։ Այնտեղ նա երկար-երկար նայում էր կամարների տակ հոսող ջրի մթին մուարե նախշերին և հիվանդանոցի լուսավոր պատուհաններին։ Երբ Մարկը վերադարձավ տուն, նա արդեն տենդում էր։ Հետագա օրերին նա գրիպով հիվանդ գնում էր աշխատանքի և էթյուել հրապարակի մոտ գտնվող հյուրանոցը, որպեսզի տեղեկություններ ստանա Կոլոմբայի մասին։ Բայց ամեն անգամ նրան պատասխանում էին, որ նա չի վերադարձել, իսկ հիվանդանոցից դուրս են գրել նրան։ Մարկը չգիտեր ում դիմի, ոչ մի գնով նա չէր ուզում այլևս հանդիպել Բեռնադետտային, իսկ վերջինս նույնպես չէր ուզում տեսնվել Մարկի հետ, թեև չէր խուսափում նրանից։ Բեռնադետտան ոտացել էր այն, ինչ ուզեցել էր. հասել էր իր նպատակին, բավարարել էր տարրեր շահունակ իրեն կրծող ցանկություններ։ Դա նրան հագեցրել էր երկար ժամանակով և բացառում էր խղճի խայթ զգալը։ Մնում էր միայն քաղցուն ճաշակած խնդությունը ծածկել ամեն ինչ կլանող մոռացության քներով։ Բեռնադետտան այնպես իր բույնը վերադարձավ, կարծես ոչինչ չէր էլ պատահել, և նորից հանաչափ հասնող ամուսնական կյանքը, որին շատ քիչ ծածանեց ուրը և կտնեռամտած-ված խնդագարությունն միակ երեկոն։ Կոլոմբայի այդքան ուժեղ հանած թռիչքը կատաղեցրեց Բեռնադետտային. այդ թռիչ-

քը անպատեհ ժամանակ հիշեցրեց խարդախած խաղաթղթի մասին, որի շնորհիվ խաղը շահել էր, իսկ որ գլխավորն է— հիմա Վերդիե—Պասսերոյի հարգարժան ընտանիքի անձնական գործերի մեջ էր խուժել հասարակական կարծիքը, բամբասանքի խոզային դունչը։ Բեռնադետտան նույնիսկ չտեղեկացավ փրկվածի առողջական վիճակի մասին, քանզի համարում էր, որ այդ սկանդալը շոշափել է իր «պատիվը»։

Բայց մի անգամ, արհեստանոցից վերադառնալիս, Մարկն իրենց տան առաջ մի քահանա տեսավ,— այդ քահանան, որին ուղեկցում էին թաղի բոլոր պոռնիկների հետաքրքրվող հայացքները, ըստ երևույթին, վաղուց էր եռ ու առաջ անում նրա շքամուտքի մոտ։ Դա Անժն էր։ Մարկի սենյակում տեղի ունեցավ ընդարձակ և որոշ չափով արտասովոր մի զրույց։ Բարի քահանան հաղորդեց, որ Կոլոմբան թոքերի բորբոքումից հետո մեկնել է կիսամենաստանային տիպի մերձքաղաքային պանսիոնը և որոշել է այլևս չվերադառնալ ոչ իր հյուրանոցը, ոչ թատերական բեմահարթակ։

Երկար ժամերի ընթացքում, որոնք նա անց էր կացրել քրոջ մահճակալի մոտ, Անժը քիչ խոստովանություններ չէր լսել հիվանդից ու հիվանդապահ կնոջից, որը նրան տեղեկություններ էր տվել այն մասին, ինչ Կոլոմբան հայտնել էր ջերմելու ժամանակ զառանցելիս, և գիտեր ավելի շատ, քան ասում էր, և նույնիսկ ավելի շատ, քան իրականում եղել էր։ Այո, ինչպես երևում էր, Կոլոմբան չէր էլ թաքցնում դեպի Մարկն ունեցած իր սերը։ Բայց Անժը մտածել էր, որ Մարկը պատասխանում է Կոլոմբային փոխադարձությամբ և որ նրանք մտերիմ են եղել։ Դուցե, շատ խիստ այդ ցանկանալով, Կոլոմբան վերջ ի վերջո ինքն էլ հավատացել է իրենց մտերմությանը։ Համենայն դեպս, նա չէր ուզում փոխել եղբոր կարծիքը։ Ազնիվ կյուրեն հանդիմանաբար գլուխն օրորեց, բայց բարյացակամ նայում էր Մարկին։ Թվում էր, նա ուզում է, բայց չի համարձակվում ինչ-որ բան ասել, կամ սպասում է, որ այդ բանն ինքը Մարկն ասի։ Իսկ Մարկը լռում էր։ Ո՞ւր է այդ կյուրեն թեքում։ Կյուրեն վարանում էր, հազում, հետո սկսում էր խոսել բոլորովին ուրիշ բանի մասին, Մարկի ընտանեկան դրամայի մասին, քանի որ դրան շատ լավ տեղյակ էր։ Սակայն «ընտանեկան» բառը չէր արտաբերվել, նա խուսափում էր ասել «ձեր կինը», նրա համար եկեղեցու կողմից չօրհնված միությունը անվավեր էր, խզումը կարծես Մարկին

նույնիսկ վերադարձնում էր դեպի ճշմարիտ ուղի։ Անժը վախենում էր, շփոթվում... Եվ հանկարծ Մարկը հասկացավ. սուրբ հայրն ուզում է, որ նա, Մարկը, ապահարզան ստանալով, աղնվորեն ամուսնանա իր քրոջ՝ Կոլոմբայի հետ։ Այն ժամանակ, մեղքերը խոստովանելով, նրանք այդ մեղքերի համար թողություն կստանան, ad majorem gloriam Dei[1] և ըստ ընտանիքի շահերի։ Ինչպես քահանա Անժը անկեղծ էր իր բարեպաշտության մեջ, անկեղծ էր նաև ինչպես եղբայր, որն իր խեղճ քրոջը երջանկություն էր ցանկանում։ Դրան ավելացրած և այն, որ այդ փարիզեցու մեջ ապրում էր հաշվենկատ, խելամիտ գյուղացին, որը ներողամտորեն էր վերաբերվում մարդուն գերության մեջ պահող կյանքի օրենքներին։ Մարկին մնում էր կամ ջղայնանալ, կամ հիմար ձևանալ։ Նա ընտրեց վերջինը։ Հանկարծ նրան համակեց վշտալի մի խլություն։

Իզուր էր կյուրե Անժը հազում, բարձրացնում ձայնը։ Միայնակ մնալով այս երերուն ճանապարհին, նա մի քանի անճիշտ քայլ արեց, խճճվեց, կանգ առավ մի քիչ, նայեց Մարկին, հառաչեց և, բարեսրտորեն օրհնելով նրան, հրաժեշտ տվեց։

Մարկը խղճում էր Կոլոմբային, բայց նրա առաջ ոչ մի հանցանք չէր զգում։ Նա հանցավոր էր ուրիշի առաջ։ Բայց դա հանցանքի զգացում էր, արդյոք, թե դառնություն։ Թեև դժվար էր ենթադրել, որ Ասյան կիմանա նրա մեղանչանքի մասին, Մարկը զայրանում էր իր վրա, ինչի՞ համար ինքն ընկավ հենց նույն թակարդը,— մինչև հիմա նրա հպարտությունն ու ոչ մի բանով չարատավորված սերը իրավունք էին տալիս նրան բարձրից նայել Ասյայի վրա և արհամարհել նրան։ Ընկնել թակարդը և այնտեղ աղավնու փոխարեն սև ագռա՛վ գտնել։ Մարկն ամոթից այրվում էր, ինչպես կամաչեր աղվեսը, եթե նրան դաքի քաշեր լղար հավը։ Անհաջողությունը, առաջացնելով նրա մեջ խիստ ատելություն Բեռնադետտայի նկատմամբ, բարերար էր այն առումով, որ հարկագրեց նրան ուշադիր քննության առնել իրեն։ Հարկադրված եղավ ընդունել, որ նրան չէր սազում այդքան խստորեն դատապարտել ուրիշի թերությունները։ Տղամարդիկ էլ մի բարի պտուղ չեն։ Ավելի շատ պատահականություն է մեղավոր, քան կամքը։ Ողորմելի՛ կամք։ Մարկը, որ միշտ այնպես հպարտանում էր իր կամքով, հասկանում էր հիմա, որ

---

1 Ի պատիվ տիրոջ ավելի մեծ փառքի (լատ.)։

այն շատ քիչ բան արժի, երբ մարմինը տանջվում է անհագ քաղցից։ Եվ ոչ միայն սիրային քաղցից։ Բոլոր խենթությունները, բոլոր կրքերը հաղթում են մարդուն, երբ արյան առատությունը տակնուվրա է անում գիտակցության ամբարտակը և քշում տանում է այն։ Միակ միջոցն այդ հզոր հեղեղների էներգիան օգտագործելն է, ինչպես բոցեղեն այն ուժը, որով սնում են դոմնան. թող ցանկությունը, թող կիրքը նույնպես խթանեն գործողությանը։ Primum agere...[1] Բուժիչ է գործունեությունը և անհրաժեշտ։ Բայց որտե՞ղ ես դու, գործունեություն... Ասյան այդ գործունեությունը փնտրում էր Մարկից հեռու և նա իրավացի էր։

Գտա՞վ նա արդյոք այն, ինչ փնտրում էր։

Իզուր էր անխոնջ Ասյան թափառում, որոնում ամբողջ Եվրոպայում։ Որսը խույս էր տալիս որսորդուհուց։

Միլիոնավոր տղամարդիկ ու կանայք իրենց ուժերի ծաղկման շրջանում, ինչպես և Ասյան, գործողություն փնտրելով, այս ու այն կողմ էին նետվում։ Հազիվ էր Ասյան անցել Ֆրանսիայի սահմանը, երբ հանդիպեց երիտասարդության բազմությունների, որոնք համակված էին գործունեության ծարավով։ Միևնույն է թե ինչպիսի։ Գայթելով, հրմշտելով միմյանց, ինչպես ոչխարները, նրանք սլանում էին ինչ-որ տեղ, բայց արժանի նպատակ չէին գտնում։ Իրենց գտնելու այդ փորձերը նման էին խելագարության։ Հետպատերազմյան Գերմանիայում թագավորում էր տարրնթացություն, մտքերի քաոսը հասնում էր կատաղի հուսահատության։ Այն բոլորը, ինչին առաջ հավատում էին, կործանվել էր— պետություն, ընտանիք, հասարակություն, բոլոր հոգևոր ավանդույթները, բոլոր արժանահավատ ճշմարտությունները և նույնիսկ հենց արժանահավատություն հասկացությունը։ Ամեն մի հավատ մշտական և անփոփոխ որևէ բանի նկատմամբ նողկանք է առաջացնում հոգում, ինչպես սառը ու գազրելի կեղծիքը։ Եվ Դանթեի դժոխքում այրվելու դատապարտվածների այդ բազմություններին, որոնց ֆրանսիական հաղթողների խելագար էգոիզմը ինչպես մրրիկ նետում էր դեպի մռայլ և հուսահատ չքողնող բանտի պատերը, համալսրում էր մի կատաղի կիրք— ատելություն դեպի սեփական հոգու բանտը։

---

1 Նախ և առաջ գործիր (լատ.)։

Նրանք իսկապես ատում էին բթացնող լռությունը, կարգուկանոնը, նույնիսկ այն անգորրը, որից անցյալի բանտային հոտ էր փչում։ Եվ դրա անձնավորումն ամբողջ աշխարհի աչքում այն ժամանակվա Ֆրանսիան էր, հարստացած Ֆրանսիան, հաղթանակի հետևանքով չափից ավելի լափած, ծերունաբար լխկած Ֆրանսիան և հենց այդ Ֆրանսիան էլ երևակայում էր, թե իբր ինքն ի վիճակի է հակադրվել քաոսին, անկարգությանը, պայքարին, առանց որոնց չի կարող նորոգվել կենդանի աշխարհի արյունը։ Պարտության ամբողջ դառնությունը, ավերածության բոլոր տանջանքները խորամանկորեն որովել էին, ենթարկվել ֆելդֆերբելական ճիպոտին և խարդավանքով դրվել շրջանառության մեջ Ֆրանսիայի մրցակցող և թշնամական ուժերի կողմից։ Այդպես էին վարվում գերմանական ցինիկ կապիտալիստները, որոնք սպեկուլյացիա էին անում սեփական ժողովրդի գժբախտության վրա, ինչպես և նրանք, ովքեր հակված են սոցիալական չղակծկումների ժամանակամիջոցներին պղտոր ջրում ձուկ որսալ,— նրանք չանում էին ամեն ինչ շուռ տալ ի վնաս Ֆրանսիայի, ի վնաս միակ այդ քողության նոխազի, միակ այդ կենդանի մեռելի, որի գլխին իրենք թափել էին ամբողջ պատասխանատվությունը այն բանի համար, որ Գերմանիան, որին Ֆրանսիան, այդ փտող դիակը, ուզում էր գամել իրեն, հիմա ըմբոստացել էր, թպրտում էր Հոգեվարքի տանջանքներում։ Ֆրանսիան պետք է նաև պատասխան տար անհեթեթ գոռոզամտության համար այնպիսի մարդկանց, ինչպիսիք են Պուանկարեն, Պենլևեն, Էքրեռն, Տարդիեն (նրանք բոլորն իրար արժեին իրենց բութ ինքնագոհության մեջ, բոլորը հավատում էին սեփական անսխալականությանը), պատասխան պետք է տար նրանց վնասաբեր համոզվածության համար, որ իբր նրանք իրենց գրպանում են պահում ճշմարտությունն ու առաջադիմության,— այն ճշմարտությունը, որը բարեհաջող հաղորել էր մեռնել, պառկել գերեզմանում և արդեն վաղուց փտել էր դեռ այն ժամանակից ի վեր, ինչ այդ ճշմարտությունը նվաճել էին նախապապերն իրենց անմահ սկզբունքներով,— հիմա այդ պարոնայք միայն ջուր էին լցնում չղաղացին... «Ջրաղացպան, արթնացիր»։ Ջրաղացը հուսահատության և տենդության է աղում։ Պատրաստվում էին նոր պատերազմներ հանուն Իրավունքի, որին սնում էր նոր գաղափարախոսությունը. ապրելու Իրավունքի, շարժման, փոփոխամների Իրավունքի, պայքե-

ցումների Իրավունքի, երբ ճնշված մարդկային զանգվածների մեջ անխուսափելիորեն խմորում է սկսվում... Քաոսի Իրավունքի...

Քաոսի իրավունքն այն իրավունքն էր, որից Գերմանիան օգտվում էր այն ժամանակ առանձնապես լայնորեն։ Բոլոր ժամանակներում քաոսը նրա տարերքն է եղել։ Գերմանական միտքը քաոսն արդարացնում է այն պատճառով, որ քաոսը համարում է իբրև վերակենդանացման, նորոգման աղբյուր... Stirb und werde... Բայց գործնականում ամեն ինչ վերջանում էր ռազմական կազմակերպություններով։ Պահանջվում էին ամուր կաղապարներ և հուսալի փողրակներ, որպեսզի նրանց միջով հնարավոր լինի բաց թողնել եռացող մետաղը և սոխակել նրան ծառայելու պարոնայք Կրուպպներին, Տիսսեններին, Հուգենբերգներին, արդյունաբերողներին և գործարաններին, ժամանակակից աշխարհի պարագլուխներին։

Որոշ բաներ հասնում էին նաև Ասյայի ականջին, որը սղագրուհու և մեքենագրուհու իր մասնագիտության բերումով, կենդանի մեխանիզմի իրավունքով, ներկա էր գտնվում ֆրանսիական ու գերմանական ծանր արդյունաբերության խոշոր ձեռնարկությունների ներկայացուցիչների գաղտնի բանակցություններում։ Վիրտուոզ տեխնիկան և աննկատելի դառնալու, ասես կախարդական գլխարկի օգնությամբ սքողվելու իմաստուն կարողությունը Ասյայի համար ֆինանսական աշխարհի և անգրկուլիսային քաղաքականության տերերի շքախմբում ապահովեցին վստահությամբ օժտված անձի դիրքը։ Ցանկության դեպքում նա կարող էր դրանից օգուտ քաղել։ Բայց միակ օգուտը, որն Ասյան ունենում էր, դա հասարակությունից վրեժ լուծելու նրա փորձն էր ու ծարավը, հասարակություն, որի նկատմամբ կուտակվել էր նրա ատելությունը։ Նրա մեջ կուտակվել էր նաև արհամարհանք դեպի աղքատների, շահագործվողների այն զանգվածները, որոնք թույլ էին տալիս, որ իրենց սանձեն ու սանձից բռնած տանեն։ Գերմանիայում նրանց հետ վարվում էին ինչպես ուզում էին։ Օգտվելով գերմանացիներից շատերի համար սովորական դարձած ասես մշտապես տենդով բռնված մտքի անհեռահոդականությունից, դժվար չէր նրանց գաղափարական խմորումները ենթարկել բռնակալության և ֆաշիզմի շահերին։ Ֆաշիզմն այդ ժամանակ գնում էր դեպի իշխանություն, իսկ որոշ տեղեր արդեն իշխանության գլուխ էր կանգնած։ Այդպես այդ մտածող-

ներն ու պրևդո-մտածողները դառնում էին ֆինանսների և ռա-
տիկանության հնազանդ գործիքը, ազատության խեղդիչների
հավատարիմ օգնականները։ Ասյան ոչ մի կերպ չէր կարողա-
նում հասկանալ, թե ինչու էին բոլոր այդ հոսանքները, բոլոր
խենթորեն պտույտ տվող մրրիկները անխմաստ զարնվում պա-
տին, չարդվում, պատվում պարույրաձև, փոխանակ ձգտելու
դեպի միակ ելքը, որն ազատ և անկաշկանդ ապագա էր խոստա-
նում, դեպի Արևելքում գտնվող նեղ դաքպասները, որ Սովե-
տական Միության էր տանում։ Սակայն, բացառությամբ մի
քանի կոմունիստական խմբերի, Գերմանիային համակել էր
ռասսայական գոռոզամտությունը, հարյուրտոկոսանոց արիա-
ցու իր գերազանցության մեջ համոզվածի զարհուրելի կրեփ-
նիզմը, և նույնիսկ նրանք, ովքեր պատրաստ էին արյուն թափել
հեղափոխության համար, անգամ նրանք էլ հոգու խորքում
ուզում էին, որ հեղափոխությունը դրեր «Պատրաստված է Գեր-
մանիայում» դրոշմը։ Իսկ ստրկացնողները դրանից օգտվում
էին։

Բայց այդ ե՞լքը, Արևելքի վրա բացվող այդ դուռը, որից Ասյան աչքը չէր կտրում, ինչո՞ւ, տեսնելով այդ դուռը, Ասյան վճռականորեն ճամփա չընկավ։ Նա լոկ պտտվում էր դրա շուրջը, մոտենում էր սահմանագծին, թարմ օդի շիթը որսում էր նրան, ներս էր քաշում, ինչպես ձագարի մեջ, բայց վերջին վայրկյանին նա այնուամենայնիվ թռչում էր մի կողմ և դուրս պրծնում... Դա ինչի՞ց կարող էր լինել։ Նրա տեղը որոշակիորեն այնտեղ էր, օրըստօրե նա ավելի ու ավելի շատ էր դրանում համոզվում, և ուրիշներն էին նրան այդ հասկացնել տալիս։ Ասյայի Բեռլինում և Օսլոյում հայտնվելը աննկատ չմնաց, նրան հետևում էին։ Ջանելիձեն հաղորդել էր նրա մասին, և հիմա այնտեղ գիտեին, որ հակառակորդի լագերում կամավոր դաշնակցուհի ունեն։ Շուտով Ասյան հասկացավ, որ միայն ինքը չէ այդպես։ Ինչպես բարբարոսներն էին մեծ արշավանքների նախօրեին հավաքագրվում հռոմեացիների բանակը, այդպես էլ Հեղափոխությունն էր թափանցում կապիտալիստների ամրոցները, գործարանները, գրասենյակները։ Ուշադիր ականջները հայտնվում էին հարկավոր դռների մոտ, ճարպիկ մատները տկտկացնում էին գլխավոր շտաբների գաղտնիքները։ Երբեմն խոշոր արդյունաբերության զորավարների խորհրդակցության թունդ պահին Ասյայի հայացքը կանգ էր առնում իր կոլեգանե-

բից որևէ մեկի, նրա անհայտ և անսպասելի հանցակիցների— սղագրուհիների կամ քարտուղարների վրա։ Թող որ նրանք խոսք չէին փոխանակում, միևնույն է, նրանք հեռվից ղգում էին միմյանց։ Մի ընտանի՛ք էր։ Այդտեղ ոչ ոքի փողով չէին հավաքագրում։ Արյան ձայնը, ազատ, բնազդական հակումը— ահա լավագույն հավաքագրողները, երբ հասարակական կարգի հիմքերը երերում են, երբ հողը արտաքին կեղևի տակ ճեղքեր է տալիս և երակներով սլանում է հրաշունչ հեղուկը։ Այդ հեղուկը կարող է անսպասելիորեն իր մեջ առնել և տոհմական բուրժուային և չապահովված անհայտ ծագումի մարդուն։ Քայքայված էկոնոմիկան, որին երերել էին պատերազմը, ավերածությունը, ինֆլյացիան, սնանկացումները, գործազրկությունը, սովը,— այդ ամենը չլատեցին եվրոպայի ուժերը և նրան նախապահված զարձրին հեղափոխության բացիլների ներգործությանը։ Իսկ ինչ բան է հեղափոխությունը, եթե ոչ ահեղ մի համաճարակ, որը դատաստան է տեսնում հասարակության դատապարտված օրգանիզմների հետ և պարբերաբար տեղ մաքրում մարդկային նոր ալիքի համար։ Այդ երևույթն առավել զգալի էր հրաբխային ճեղքերով ակոսված եվրոպայի կենտրոնում, և որքան ավելի մոտ խառնարանին, այնքան ավելի ուժեղ։

Բայց Ասյան, լավայի շիթերից մեկը, չէր ձգտում ետ դեպի խառնարանը։ Ուզում էր Ասյան այդ թե ոչ, նա շարժվում էր այն լանջով, որն Արևմուտքին էր նայում։ Իսկ գուցե ոչ թե Արևմուտքին, այլ որոշակի մի տեղ, ձգողական ինչ-որ մի կետի՞ այդ Արևմուտքում։ Ասյան հակառակվում էր այդ մտքին։ Բայց սովորաբար հակառակվում են միայն այն բանին, ինչն սպառնում է, ինչը քեզ վրա իշխանություն ունի։ Ասյան կարող էր ջղայնանալ ինչքան ուզում է— նրա հոդին, նրա մարմինը ամբողջությամբ իրեն չէին պատկանում։ Ուրիշ արյուն էր խառնվել նրա արյան հետ։ Մեր օտարականը ոչ մի կերպ չէր կարողանում ազատվել այդ խառնված արյունից։ Եվ ինքը մի անգամ չէ, որ համոզվել էր դրանում։ Երբ զարտուղի ճանապարհով նրան առաջարկեցին պայքարի ընկերներին տալ գաղտնի բանակցությունների մասին հաշվետվությունը, որոնց վկան էր ինքը, իր աշխատանքի բնույթով, Ասյան բնավ իրեն չկորցրեց։ Ավելորդ նրբանկատությունը թշնամու նկատմամբ տեղին չէր, բայց և այնպես Ասյան չկարողացավ խնդրանքը կատարել.

ինչ-որ ձեռք, ինչ-որ սանձ զսպում էր նրան։ Նա փորձում էր այդ հաշվի չառնել, ծառս էր լինում, բայց ձեռքը, սանձը ետ էր քաշում նրան։ Նա լկամբ կրծում էր։ Նա շատ լավ զգում էր, ում հպարտ փափկանկատությունն է զսպում իրեն, շատ լավ ծանոթ էր այդ լկամներին, որոնք արյունոտում էին իր շրթունքները։ Նա դեռ շարունակում էր իր բերանում զգալ երկաթի համը... Բայց որքա՜ն հեռու էր Մարկի բերանը։ Եվ Ասյան կատաղությամբ ու ցանկասիրությամբ կրծում էր իր շրթունքները։

Ասյան չէր պատկանում այն կանանց թվին, որոնք ընդունակ են իրենց երկար խաբելու։ Նա կարողանում էր տեսնել այն, ինչ չէր ուզում տեսնել։ Այսպես, ուրեմն, նրան դեռ մինչև հիմա ամուր է պահում այդ մերժված, ատելի Մարկը։ Ի՞նչ կա նրա մեջ։ Ինչո՞ւ ինքը չի կարողանում պոկվել նրանից։ Տասնյակ անգամ իրեն ատիթ է ներկայացել նրան փոխարինող գտնել։ Ոչինչ չէր խոչընդոտում... Եվ այնուամենայնիվ Ասյան այդ չարեց։ Վերջին ակնթարթին նրանց միջև կանգնում էր նա, այն մյուսը։ Ոչ, ոչ, ոչ թե մյուսը, այլ Մարկը— մեն ու միակը... Ինչո՞ւ միակը։ Չէ՞ որ առաջ նա միակը չէր։ Ինչո՞ւ նա հիմա միակը դարձավ։ Ասյան զայրանում էր, լուտանք էր թափում նրա հասցեին, նրա վրայից դեն էր նետում բոլոր ծածկույթները, որպեսզի գինը գցի, ինչպես տնտեսուհին, որն արհամարհանքով է նայում շուկայում լղար նապաստակին, շոշափում նրա ցցված կողամասերը։ Տգեղ, նիհար, վտիտ և անզուսպ, քնքուշ և կոպիտ, արագ բռնկվող և նույնքան արագ սառչող, միջակ ու կրքոտ սիրեկան—ուղղակի աննախանձելի մի որս...

«Ետ վերցրեք ձեր նապաստակին, թող առնի, ով ուզում է... Ջրի էլ տաք, ինձ պետք չէ....»— Եվ՝ շրթմփ, շպրտում վաճառասեղանին։

Բայց, դեռ չշպրտած.

«Ոչ, ոչ, վերցնում եմ։ Փաթաթեք»։

Միայն թե նա իրեն հանգիստ թողնի, վերջ տա հետապնդելուն։ Կախարդանքից ազատվելու համար, Ասյան համաձայնեց սիրային տեսակցության... Եվ չդնաց։ «Սպասիր։ Օրերից մի օր. անձրևից հետո հինգշաբթի օրը...»

Միակ մարդը, որ քիչ էր մնացել հաջողություն ունենա, դա բավական հանդգնորեն իրեն սիրահետող ժան-Կազիմիրն էր։ Կազիմիրի հետ Ասյան հանդիպեց. բանն այն էր, որ նա Ասյայի համար Մարկի մի տեսակ alter ego *էր, միայն արտացոլ-*

ված ծուռ հայելու մեջ, իսկ նա, այդ ավաղակը, հնարավոր է նույնիսկ ի հեճուկս Մարկի, ցանկություն ունեցավ կողոպտել ուրիշի բույնը։ Բայց հենց որ Ասյան այդ հասկացավ (հասկանալը դժվար չէր), այնպիսի մի կատաղի հայացք գցեց նրա վրա, այնպես ատեց իրեն, և արհամարհեց, որ Կաղիմիրը նրա համար դարձավ դատարկ տեղ, ոտի տակի կեղտ։

«Մա՜րկ, իմ Մա՜րկ։ Ի՞նչ օգուտ, որ ես քեզանից փախչում եմ, ինչի՞ համար են այդ ամոթալի խորամանկությունները։ Թաքնվում եմ, իսկ ինքս ջանում եմ քեզ մոտենալ։ Ինչո՞վ ես դու ինձ քեզ կապել... Նրանով, որ ինչպիսին էլ լինես, միևնույն է, ի՜մն ես»։

Այդ ներքին մենախոսությունը Ասյան արտասանեց, երբ իր շեֆի՝ խոշոր արդյունաբերական կարտելի ներկայացուցչի կաբինետում սղագրում էր գաղտնի մի խորհրդակցություն։ Մարկը, նրա Մարկը հանկարծ ուրուրի նման բարձունքից ընկավ նրա վրա և նրան ծածկեց իր լայն թևերով ու նիհար մարմնով։

«... իմ նիհա՜րուկ։ Գարշե՜լի իմ թռչնակ։ Իմ լղա՜ր նապաստակ։ Միայն կաշիդ ու ոսկորդ է մնացել, սուր ծնկներդ, կոպիտ, սիրալիր, ջերմ ձեռքերդ,— ինչ կապտուկներ են թողնում... Իսկ քո զայրույթն ու քո թուլությունները, իսկ քո գուրգուրանքներն ու քո վիրավորանքները, մերթ երեխայական, մերթ դահճային, քո տառապանքները, քո կասկածները, որոնցով հոգի էիր հանում, մտրակում էիր, աղերսելով վերջ ի վերջո սիրալիր մի բառ՝ որպես սփոփանք, և փնտրելով իմ կուրծքը, ատամներով ու շրթունքներով... Փոքրի՜կ գազան։ Սիրելի՜ս... ես վրե՜ժ լուծեցի... Ի՞նչ է... էլի՜ կծիր։ Այնպես կծիր, որ ցավի... Ա՜խ, ինչպե՜ս կուզենայի քեզ նույնպես ստիպել, որ ճչա՜ս...»։

Ասյան առանց գիտակցելու, այդ ամենը գրում էր, իսկ հետո սղագրված ձևով զտավ ածուխի ու պողպատի մատակարարման տվյալների մեջ։ Դեռ զարմանալի է, թե Ասյան ինչպես չէր նկարել, նրան, իր Մարկին իր գեղեցկությամբ (և նիհարությամբ)։ Ասյան ապուշ կտրեց, երբ սթափվելով, տեսավ այդ խորհրդավոր նշաններով էջերը։ Եվ, սեղմելով շրթունքները, սկսեց ցնցվել մեջը սրոտիկացող ծիծաղից։

«Մարկ, իմ Մա՜րկ... Արժի՞ արդյոք, որ այսուհետև էլ խաբեմ ինձ։ Ինձ հաջողվում է բոլորին խաբել, բոլորին, միայն ինձ է, որ ես չեմ կարողանում խաբել...»։

Հիմա նա հարկադրված էր ընդունել, որ ինքը Մարկի մեջ

սիրում էր ամեն ինչ, և նույնիսկ այն (գուցե, հենց հատկապես այն), ինչն ամենից շատ էր նրան վիրավորել ու ցավ պատճառել... Երբ Ասյան Մարկի հպարտ անհաշտությունը, նույնիսկ դաժանությունը, նրա անկախությունը, անգամ անգործնական, աննպատակ, համեմատում էր թուլլ ու ստոր հոգիների հետ, որոնք կեղտով ու թքով էին շաղախված,— Մարկի մեջ ամեն ինչ նրան թվում էր գեղեցիկ, առողջ, ամեն ինչ պետքական էր, նա ձեռքը մեկնում էր ամեն ինչին, եթե անգամ իրեն վիճակված էր արյունոտվել ու վերք ստանալ, իր Մարկին դիպչելու համար։

«Մարկն ինձ պե՞տք է։ Ով ես ուզում եմ նրան... Իսկ եթե նա այլևս չի ուզո՞ւմ... Էհ, ինչ արած, հենց դրանով էլ նա ինձ ավելի է պետք։ Այդ էր պակաս։ Մենք նրան չենք էլ հարցնի... Իսկ եթե այնուամենայնիվ ուշ է։ Եթե նա իր կյանքը նորի՞ց է կառուցել։ Ստիպված կլինենք վերակառուցել— ուրիշ ոչինչ»։

Ով այնուամենայնիվ Ասյան անհանգիստ էր։ Նա ոչինչ Մարկի մասին չգիտեր։

Նամակներում, որոնց Ասյան սպասում էր, ինչպես մուրացիկն է ողորմության սպասում, Աննետան գրում էր իր մասին, գրում էր երեխայի մասին, և ոչ մի խոսք այն միակ մարդու մասին, ում անունն ինքն ուզում էր կարդալ և ում մասին չէր համարձակվում հարցնել։ Նենգ ժան-Կազիմիրը Ասյայից վրեժ լուծելու համար (և ոչ թե այն պատճառով, որ դա կարևոր էր համարում) նրան հաղորդեց Փարիզում պտտվող բամբասանքը Սենայից հանած աղավնյակի վերաբերյալ։ Իրազեկներին հասկացնել էին տալիս, որ նա ընկել էր ոչ թե մրից մրաջուրը, այլ մի գետից մյուսը։ Ասյան ակնարկը[1] հասկացավ, եղունգները սեղմեց ափերի մեջ.

«Էժանագին կատակերգություն է»...

Եթե Ասյան Սեն-Միշել կամուրջին լիներ, նա աղավնյակի կտուցն անպայման ջրի տակ կպահեր, որ խեղդվի։

«Մի տես թե ի՞նչ դեր է իր համար հնարել»։ Դե որ այդպես է, խաղա մինչև վերջը...»։

Ասյան վերադարձավ Փարիզ։ Նա արդեն մի քանի օր էր, ինչ տատանվում էր, ամեն առավոտ իրերը ճամպրուկում դասավորելով ու երեկոյան հանելով։ Փարիզից եկած լուրը նրան

1 Ռիվիեր— ֆրանսերեն նշանակում է գետ։

հարկադրեց վերջնական որոշում կայացնել։ Նա նստեց գնացք, բող նա Մարկին չտեսնի, բայց և այնպես նրան ավելի մոտ կլինի։ Ասենք, զենքը ցած դնելու մտադրություն Ասյան բոլորովին չուներ։ Գնացքում, որը նրան Փարիզ էր տանում, համառ Ասյան մի առանձնահատուկ մոլուխյամբ էր վերանայում «գործը» սկզբից մինչև վերջը։ Նա ընդունում էր, որ շատ դժվան է վիրավորել Մարկին։ Համաձայնվելով նրա հետ ամուսնանալ, Ասյան գիտեր, Մարկն ինչ մարդ է, ինչ է նա իրենից սպասում, ինչը նա երբեք չի հանդուրժի, լի էր իր ուղևկցի բարոյական ու հասարակական սկզբունքներին ալնվորեն հետևելու վճռականուխյամբ։ Ասյան պատրաստ էր հնարավոր համարելու, որ գայրուխյի պահին Մարկը կարող էր իրեն հարվածել, նույնիսկ սպանել։ Էհ, ինչ կա որ, «ամեն արհեստ իր վտանգներն ունի», ինչպես ասել է մի թագավոր, ընկնելով դաշույնի հարվածից։ Ամեն մարդ պարտավոր է պատասխանել իր արարքների հետևանքի համար։ Բայց այն, որ Մարկն է նրան վիրավորել, ոտոդել արհամարհանքով— այդ Ասյան տանել չէր կարողանում։ Տուժել էր Ասյայի ոչ միայն հպարտուխյունը, տուժել էր նաև նրա արդարուխյան զգացումը։ Ասյան իրեն հաշիվ չէր տալիս (իսկ գուցե, նաև տալիս էր), որ Մարկի կիրքն իր նկատմամբ միշտ մնում էր նրա տածած արհամարհանքի ուժին հավասարազոր և որ այդ արհամարհանքի պատճառը անպատասխան կիրքըն էր։ Ասյան կարող էր ամեն ինչ հանդուրժել, ամեն ինչ, բացի արհամարհանքից։ Եվ նույնիսկ հիմա, դղրդացող վագոնում, արյան աղմուկը խլացնում էր անիվների դղրդյունը, և Ասյան կրկնում էր.

«Ես երբե՛ք նրան այդ չեմ ների»։

Նա տեսակցեց Աննետայի հետ։ Տեսակցեց Վանյայի հետ։ Նրանք զրուցեցին ամեն ինչի մասին, բացի Մարկից։ Աննետան դիտավորյալ որդու մասին խոսք չէր բացում. թող կասկածամիտ գոռողն ինքն առաջինը խոսել սկսի նրա մասին։ Բայց Ասյան կգերադասեր արյունոտելու չափ կծել իր շրթունքները, քան արտաբերել այդ անունը։ Եվ այնուամենայնիվ նա համարյա ամեն օր Աննետայի մոտ էր գալիս, օգտվելով ամեն մի առիթից։ Եվ անընդհատ սպասում էր— նրանք երկուսով էլ սպասում էին,— թե դուրս չի՞ թռչի արդյոք զրուցակցի բերանից Մարկի անունը։ Բայց Վանյան, որը լռելու առանձնահատուկ պատճառներ չուներ, իսկ հնարավոր է նույնիսկ խոսելու պատ-

ճառ ուներ, տատիկի դրդումով, հանգիստ և ոչ առանց կարևորության հարցրեց.

— Իսկ ե՞րբ ես դու նորից պապայի հետ քնելու։

Ասյան սիրտ ունեցավ, կարմրեց, հոնքերը կիտելով ու գազազած, տեղից ցատկեց ու դուրս գնաց։ Բայց աստիճանների վրա քրքջաց.

— Այ քեզ ստահա՛կ։ Կապիկ, կապիկի մեկը։

Այնուհետև Ասյան մտածեց, որ դա նրան, ըստ երևույթին, սովորեցրել է Աննետան և, որպես պատիժ, իրեն խոսք տվեց մի ամբողջ ամիս չերևալ այստեղ։ Նա հաստատակամություն ցուցաբերեց մի շաբաթ, որից հետո սկսեց Աննետային այցելել ամեն օր։ Բայց առաջվա նման լի էր չզիջելու վճռակամությամբ։

Մարկը պակաս համառը չէր։ Նա, ճիշտ է, մոր հետ իրեն ավելի անկեղծ էր պահում։ Երես առ երես նա թախիծով էր վերհիշում անցյալը և չէր վախենում ընդունել թույլ տված վրիպումները, ոչ թե ուրիշի, այլ իր սեփականը, խոսում էր իր սխալների և այն անուղղելի քայլի մասին, ինչ նրանք կատարել էին։ Մոր և որդու միջև տեղի էին ունենում երկար երկխոսություններ, որոնք ընդհատվում էին տևական լռությամբ, քնքուշ, դառը, հեգնական և անդեմ երկխոսություններ սիրո խենթության մասին, որ ցանկանում էր ստրկացնել մի ուրիշ էակի, այդ սիրո կամայական պահանջի, բռնության և երեխայական դաժանության մասին, նրա կործանարար խանդի մասին։

Ի՜նչ անմտություն, և ի՜նչ ցավալի է... Աննետան նայում էր որդու նիհարած, ժամանակից շուտ ծերացած դեմքին, նրա աչքերի շուրջը հայտնված նոր կնճիռներին, բերանի անկյուններում գոյացած ծալքերին, որոնք ոչ թե նախկինի պես թունոտ էին, այլ ավելի շուտ հոգնած։ Եվ Աննետայի սիրտը ճմլվում էր։ Բայց նա գիտեր. Աքիլլեսի նիզակով հասցրած վերքը կբուժվի միայն նույն նիզակով։ Նրանով զինվելու համար բավական էր, որ թշնամին միայն ձեռքը մեկներ։ Բայց երկու խելագարն էլ համառում էին։ Աննետան գիտեր, որ նրանք սիրում են իրար և ցանկանում են միանալ։ Բայց ոչ մեկը չէր ուզում առաջին քայլն անել։ Եթե խոսենք նրանց ցանկությունների մասին, ապա, թվում էր, թե նրանք միայն մի միտք ունեն, ինչպես ավելի հաստատ կործանեն իրենց։

Նրանք հասել էին ամենավերջին սահմանին, այլևս չէին կարողանում ապրել առանց իրար տեսնելու։ Մարկն իմա-

գավ, որ Ասյան նորից Փարիզում է, և Աննետան նախազգուշացրեց երկուսին էլ այն օրերի և ժամերի մասին, որ ինքը նշանակել էր յուրաքանչյուրի համար, այն հաշվով (ինչպես ասում էր այդ խմաստուն կինը), որ նրանց ազատի այդ ծանր հանդիպումից։ Այդ օրերին ամեն մեկն աշխատում էր ինքն անկատ մնալով, մյուսին թաքուն տեսնել Աննետայի տան մոտ։ Բայց ամենազվարճալին այն էր, որ տափկնոցի խաղալով, ամեն մեկը երևակայում էր, թե միայն ինքն է խաղում։ Եվ ամեն անգամ, երբ, խցկվելով խանութի շքամուտքը, Մարկը կամ Ասյան հայացքով որսում էին ծանոթ սիլուետը, երկուսի սիրտն էլ քիչ էր մնում կրծքից դուրս թռչեր, և նրանք հազիվ էին իրենց զսպում, որպեսզի չնեղվեն իրենց թաքստոցից, և կամ, ընդհակառակը, հաղիվ էին ոտի վրա մնում, ողողվելով սառը և տաք քրտինքով։ Եվ տուն էին վերադառնում ուժասպառ, հուզմունքից ջարդված, չորացած բերաններով։ Եվ ամբողջ օրը զուր էր կորչում։

Այդպես երկար շարունակվել չէր կարող։ Վաղ թե ուշ նրանք պետք է հանդիպեին։ Մարկն այդ օրը մտավ մոր մոտ։ Աննետան որոշեց, վերջապես, խոսք բացել որդու հետ հաշտության մասին, բայց Մարկը կտրականապես հրաժարվեց և խստորեն, նույնիսկ շատ կոպիտ, ընդհատեց խոսակցությունը։ Ասյան հերթապահում էր հակառակ մայթին, շքամուտքի դեմդիմացը։ Ծածկվելով բեռնատար մեքենայի հետևում, նա սպասում էր, թե երբ Մարկը դուրս կգա։ Բայց Մարկը չէր երևում։ Ասյան չդիմացավ։ Կտրեց-անցավ փողոցը և մտավ Աննետայենց շենքը։ Նա միայն ուզում էր Մարկին մոտ լինել։ Շքամուտքում կանգնած, Ասյան ականջ էր դնում։ Երբ չորրորդ հարկում Աննետայի դուռը շրխկա, Ասյան կհասցնի փախչել։ Դուռը շրխկաց, բայց Ասյան շարժվեց դեպի վեր։ Կամքն այլտեղ դեր չէր խաղում, ոտքերն իրենք էին նրան տանում։ Ասյան բարձրանում էր ինչպես լուսնոտ։ Առանց մտքերի։ Բայց դրա փոխարեն սրված լսողությունը, ինչպես ռեզոնատոր, ուժեղացնում էր նրա ոտքերի ձայնը, ով ներքև էր իջնում։ Նրանք ճանապարհի կեսին իրար դեմ ելան։ Ասյան հասավ մինչև երկրորդ հարկի սանդղահարթակը։ Երեք թե չորս աստիճան բարձր, այնտեղ, որտեղ սանդուղքը միանգամից թեքվում էր, հայտնվեց Մարկը։ Ամբողջ արյունը նրանց երակներում կանգ առավ, բայց երկուսն էլ շարունակում էին քայլել, ինչպես ավտոմատներ։ Սանդղահարթա-

կում սպասելու փոխարեն, Ասյան, իրեն կորցնելով, շարունակում էր նեղ աստիճաններով վեր բարձրանալ, որտեղ երկու հոգի դժվարությամբ կարող էին անցնել։ Նրանք անցան, աչքները գետնին հառած, ուղիղ, ձգված, համարյա իրար քսվելով, և քիչ էր մնում ընկնեին։ Մարկը սեղմվեց պատին, Ասյան բազրիքի վրայից կախվեց։ Մարկի շունչը կտրվում էր։ Ասյան, ատամները սեղմած, քթանցքներով օդը բարձրաձայն ներս էր քաշում։ Ահա նրանք իրարից անցան... Մարկն արդեն սանդղահարթակին էր։ Երկուսն էլ միանգամից ետ շրջվեցին։ Նետվեցին իրար մոտ... Մարկը գրկեց Ասյայի ծնկները, որը երկու թեք երեք աստիճան վերև էր կանգնած։ Մարկի գլուխը գտնվում էր Ասյայի փորի բարձրության վրա, և Մարկը դեմքը սեղմեց նրա փորին, այդ դավաճան արգանդին, այդ սրբազան արգանդին— իր ապաստարանին, որը կորցրել էր և նորից գտել... Ասյան, հավասարակշռությունը կորցնելով սայթաքեց և ընկավ սանդղահարթակին։ Նրա շրթունքները հպվեցին Մարկի շրթունքներին. ամբարտակը ճեղքվեց...

Աղմուկի վրա ցածի հարկում դուռը բացեցին։ Ասյան ու Մարկը ետ ցատկեցին տարբեր ուղղությամբ։ Ի՞նչ անեն։ Ո՞ւր փախչեն, որպեսզի լուծվեն նորից գտնված բերկրության անդունդում։ Մարկի՞ մոտ։ Ասյայի՞ մոտ։ Նրանք գնալու ուժ չունեին, նրանք չէին կարող փողոցի անցորդների բազմության միջով ճանապարհ ճեղքել։ Եվ չէին ուզում, որ մարդկային հեղեղը կլաներ նրանց սերը... Մնում էր միայն մի ելք. նրանք նետվեցին դեպի վերև, դեպի չորրորդ հարկում գտնվող գուռը։

Աննետան դուռը բացեց։ Տեսավ, որ նրանց ձեռքերը միահյուսված են, որ նրանք աչքերով լափում են միմյանց, ինչպես սիրահարները Ռաֆայելի Տրանստեվերայի որմնանկարի վրա։ Աննետան զարմանք չարտահայտեց։ Ուրախությունից ծիծաղեց ու շտապեց անհետանալ։ Ասյան ու Մարկը իրենց գցեցին ներսում գտնվող սենյակները։ Ոչինչ չէր ասվել։ «Երջանիկ ժողովուրդները պատմություն չունեն...» Աննետան նրանց հետևից փակեց իր ննջասենյակի դուռը։ Նրանք ամբողջ գիշերն անցկացրին այնտեղ։

Մայրը մյուս սենյակում նստել էր երեխայի գլխավերևը։ Նա փոքրիկի հետ քչփչում էր։ Երեխան շատ գոհ էր, նրա հետաքրքրությունը շարժված էր, անընդհատ հարցեր էր տալիս,

բայց շատ բան ինքն էր գլխի ընկնում։ Քնեց նա երջանիկ ժպիտը երեսին, տատիկի մատը բռնած։

Եվ գիշերը մինչև լույս Աննեսան գրկում, փայփայում էր վիրավոր երջանկությանը, սիրուն, որ լիզում էր իր արյունոտ սպիները, անառակ որդուն, ինչպես և դատերը, որոնք կորցրեցին և նորից ապաստան գտան։ Նրանք վերադարձան։ Նրանք իր հետ են, այստեղ՝ այս պատի հետևում, որի մոտ դրված է իր մահճակալը։ Եվ մայրը երանությամբ ձեռքերը սեղմում էր որովայնին։ Սեղմում էր այդ որովայնում իր երկու զավակներին։

ՖԼՈՐԵՆՑԻԱՑԻ ՄԱՑԻՍԸ

—«Նա աղջկան բռնեց, շաքար-շուրթերն համբուրեց, պինդ-պինդ իր սրտին սեղմեց։ Նրանք այդտեղ պառկեցին, հետո մի քիչ ինչ-որ բան արին։ Մեկ էլ՝ թե հերիք է, չեմ ասի»։

Այսպես է պատմում ժողովրդական հեքիաթը «Սիրուն-Մարիայի, Սև ծամերովի» մասին, որն Ասյան, նույն «Սևծամ սիրունը» և անսպառ հեքիաթասացը բազմաթիվ անգամ պատմել էր Վանյային։

Բայց այդ ամիսը չէր նմանվում այն մյուսին, առաջինին, մեղրամսին։ Արդեն սպառվել էր ծաղկի մեղրը, գարնան մեղրը։ Եվ դրա փոխարեն նրա մեղրը աշնանային է (իսկ չէ որ նրանք երկուսն էլ այնքան երիտասարդ էին), սոճու բևեկն է, սուր, թախծալի բուրմունքի, մեղրի թուխ ոսկի է։ Եվ ինչպես է այրում սերն այդ, որ տառապանքների մեջ է հասունացել։ Նա այլևս իրեն չի վատնում։ Ոչինչ պետք չէ— միայն թե զգաս այստեղ, կողքիդ, հարազատ ներկայություն։ Եվ նորից ու նորից քո բոլոր զգացումներով, այն ամենով, ինչ կյանքը տվել է մեզ, ջանում ես զգալ այդ մարմինը, որը ճակատագրով է մեզ տրված,— չափազանց նեղ մի զետեղարան, մի սահման, նախորոշված ու մարդու կաշկանդող և այնուամենայնիվ անկարող նրան ամբողջությամբ իր մեջ առնելու... «Իմ սիրելի Մարկ, իմ սիրելի Ասյա, իսկապե՞ս այդ դու ես»։

Amantito, amantito,
Amante, amante...

Թարթիչների վարագույրը ինձ խանգարում է քեզ տեսնել...[1]

[1] Las pestañas me estorben
Para mirarte. Ռ. Ռ.

Եվ նրանք նորից ուժասպառ ընկնում էին մահճին։

Հպվիր, հպվիր դու ինձ, իսկ ես հպվեմ սիրուդ,
Ինչպես որ մողեսն է կպչում քարե պատին[1]։

Մողեսը նինջում է, աչքը կիսաբաց... Այդ աչքը կլանում է արևի լույսը։ Աչքը չի տեսնում։ Տեսնում է հիմա միայն նրա կողքը, որ սեղմվել է պատին, տաք մարմինը, որ փռվել է քարի վրա։ Դո՞ւ։ Դու այստե՞ղ ես»։

Եվ նույնիսկ շարժվելու ուժ չկա... Հոգնածությունն անչափ է, դարերի հոգնածությունը, որից չես ազատվի միանգամից։ Դու, որ ճաշակել ես դիշերային արթունությունը, մտածե՞լ ես արդյոք, որ ստիպված կլինես տեղը հանել այդ անքուն դիշերնեբի... Նույնիսկ երբ նրանց թվում էր, թե իրենք քնած են, հարազատ հողից հեռու անցկացրած երկար ամիսներ շարունակ, նրանք ուժասպառվում էին տառապանքների և ճակատամարտերի ծանրության տակ, նրանց մաշում էր անհագ ափսոսանքը... Այժմ, երբ նրանք գտել էին միմյանց... «նորից էին գտել» միմյանց, նրանք ուժ չունեին տիրանալու իրենց ունեցածին, և նրանց համար բավական էր լոկ այն գիտակցությունը, որ նա, մյուսը, իր կողքին է, սրտի մոտ։

«Դու քնած ես, և դու իմն ես, ես քոնն եմ, ես էլ եմ քնած»...
Ասյան քնած է, քնած է... այդպես էլ նա կքնի, կքնի...

Իսկ երբ նրանք արթնանում էին (մեկը մի րոպե շուտ, մեկը մի ժամ ուշ, բայց երբեք ոչ միաժամանակ), յուրաքանչյուրը հրճվում էր դիտելով մյուսին, իր կողքին քնածին։ Ջահր ձեռքին Պսիխեայի նման նրանք բծախնդիր ուսումնասիրում էին սիրելի մարմինը, դեմքը, ինչպես խոցված սիրո դիրք, հուսալով, որ երազում նա ինքն իրեն կմատնի։ Երկուսն էլ, ցնցվելով, կռահում էին տառապանքների և ընդվզման գաղտնիքը, որոնք անջատման ամիսների ընթացքում թողել էին իրենց ճանկերի հետքն այդքան ծանոթ և հիմա այդքան անճանաչելի դեմքի վրա։ Այդ դեմքը նախկինն էր, բայց ուրիշ էր այդ դեմքը։ Իսկ ի՞նչ էր

---

[1] Arrimato a mi querer
Como las sulamanquesas
Se arriman a la pared:

(Կոպլա—Իսպ. ժող. երգ)—Ռ. Ռ.

փոխվելու եվ երբ նրանցից մեկը, ուշադիր զննելով, ինչպես հայելու մեջ, քնածի երեսը, հարցնում էր նրա գաղտնիքները, նա այդ դեմքում կարդում էր իր գծերի անդրադարձումը, արտացոլանքը, չէ որ նան նա, այն մեկը, ով արթուն է մնում և դիտում, նա ևս այն չէ, նա արդեն ուրիշ է... Իսկ ինչն է փոխվել... երկուսի մեջ էլ կատարվում էր հերկի խոր աշխատանք։ Անցավ գութանի խոփը, և արտն սկսեց հասկավորվել...

Ամենաառաջինը։ Մի ուրիշ սիրո առաջին հասկը։ Այն սերը, որը երեկ էր, այրեց իրեն։ Մնվեց նորը։ Մի սեր, որ սնվել էր երախտագիտությամբ և կրքոտ ինքնահրաժարումով։ Երկուսն էլ, տատապանքների գնով, զգացին, թե ինչ են նշանակում նրանք մեկը մյուսի համար, և հասկացան, որ առանց մեկը մյուսի ապրել չեն կարող։ Գոռոզամտությունը, որի պատճառով ընդհարվում էին նրանք ինչպես թշնամիներ, ջախջախված էր։ Եվ ի՞նչ երջանկություն, որ նա ջախջախված է։ Սրտում բացվեց այն դուռը, ուր հիմա կարող էր առանց վախի մտնել մյուսը...

«Ես քո կացարա՞նն եմ։ Ապրի՛ր իմ մեջ։ Թե դու չգնես ինձ, ես անապատի կնմանվեմ... Ինչ հրաշք է, ասում էր Գորկին, մարդկային էակ սիրելը։ Ինչո՞ւ այս և ոչ թե այն։ Չգիտեմ։ Գիտեմ միայն, որ հենց այդ եմ սիրում։ Եվ նրա սերն ինձ հարություն է տալիս մեռած տեղից... Եվ դա ես եմ, որ ինքս եմ Մարկին խաչվելու ուղարկել (Խոնարհվելով քնած Մարկի վրա, Ասյան շուրթերը հպեց գեղարդով խոցված կողքին)։ Երբեք, երբեք նա այլևս չի տատապելու իմ մեղքով...»։

Եվ արթնացած Մարկի աչքերում Ասյան կարդում էր իրեն ցավ պատճառելու նրա նույն սարսափը, նույն քնքուշ հոգսը։ Իզուր չէր, երևում է, կյանքը ճզմել նրանց, ամեն մեկը վայրկենապես կռահում էր իր սիրեցյալի մաշկի վրայով անցնող նույնիսկ ամենաթեթև դողը։ Փոխադարձ հոգատարությունը, որն արտահայտվում էր հարյուրավոր անորսալի մանրուքների մեջ, միաձուլում էր նրանց հոգիները։ Ամեն մեկը թաքուն կոտրում էր իրեն՝ միայն թե իր զույգին ուրախություն պատճառի։ Ցուրաքանչյուրն աշխատում էր սանձել իրեն, իր պոռթկումները, իր խառնվածքը, միայն թե չվիրավորի ու չվշտացնի սիրեցյալին։ Երկուսն էլ ապրում էին անընդմեջ հնազանդության վիճակում, իսկ չէ որ հնազանդությունը ամենևին էլ նրանց հատուկ առաքինությունը չէր։ Հիմա արդեն ի հեճուկս մյուսի իր իրավացիությունն ապացուցելը կարևոր չէր։ Շատ ավելի լավ էր անիրա-

վացի դուրս գալ սիրած մարդու հետ։ Ասյան չէր փորձում արդեն Մարկին քշել նրա նշանակված սահմաններից այն կողմ։ Այդ օրերին, երբ նրանք նորից «գտել» էին միմյանց, Ասյան խնդություն էր առնում այն բանից, որ քայլը հարմարեցնում էր իր սիրեցյալի քայլին։ Ասյային բավական էր նաև այն գիտակցությունը, որ նրանք քայլում են կողք-կողքի։

«Քայլիր ինչպես սիրտդ ուզում է։ Մի՛ շտապիր։ Ես քեզ հետ եմ, և մեր առջևում դեռ շա՜տ, շատ ժամանակ կա»։

Եթե անգամ Մարկին չհաջողվի է՛լ, առանց իր բնույթը կոտրելու, հասնել այն նպատակին, որն Ասյայի համար այնքան բնական էր թվում, ինչ կա որ, Ասյան հիմա չէր էլ ձգտում այդ նպատակին հասնել առանց Մարկի։ Նրա առաջին հոգսը, առաջին պարտքը և երջանկությունը (նա ամբողջ սրտով դա զգում էր հիմա) իր սիրեցյալին օգնելն էր, որպեսզի սիրեցյալն ինքն իրեն հարազատ մնա։ Մարկը նրա որդին էր, իսկական որդին, նույնիսկ ավելին, քան փոքրիկ Վանյան է։ Փոքրիկին նա իր սրտի տակ էր կրում այնքան ժամանակ, որքան որ պետք էր, իսկ իր մեծ որդուն նա մշտապես կրում է իր արգանդում, նա այդ որդուն ստեղծում է, նա թխսի նման իր քնքշությամբ դուրս է բերել նրան, նրան տվել է իր արյունը... Ասյան մտաբերից Աննետայի խոսքերը, որոնք նա ասել էր հարաբերությունների խզման հաջորդ օրը.

— Ջէ որ մենք մայր ենք։ Եվ մենք պարտավոր ենք խղճալ մեր երեխային։

Մի անգամ, երբ նրանք երկուսով էին, Ասյան վերադարձավ այդ խոսակցությանը.

— Այն ժամանակ դու ճիշտ ասացիր։ Նույնիսկ սիրած տղամարդու գրկում ամեն տեսակի զգացմունքների մեջ ամենահզորը (և ամենաաղոտը, բայց հիմա նա ինձ համար դարձել է միանգամայն հասկանալի)— դա այն զգացումն է, որ դու մայր ես։ Նա մեր մեջ է, և ավելի բարձր երանություն չկա, քան սեփական էության ընդերքներում այն մարդուն օրորելն է, ով մեզ վերցնում է, ինքը տրվելով,— մեր մեծ երեխային հանգըստացնելն, օրորելը։

Աննետան ասաց.

— Միայն թե պետք չէ այդ ցույց տալ բացեիբաց։ Խելացի մայրը կարողանում է խնայել իր փոքրիկի ինքնասիրությունը, որն իրեն մեծ է երևակայում։ Այդ մայրը պետք է ըմբռնի բարի

գիտությունը— ծառայելու նրան որպես փորձադաշտ, ինչ մարզի անճարպիկ անփորձ երեխան իր ծնունդ առնող ուժը, թեկուզև ի վնաս մեզ։ Մայրը համբերությամբ տանում է նրա բոլոր անարդարությունները և նույնիսկ նրանց մեջ գազանի բավականություն է զգում։ Մենք տղամարդ ենք դարձնում նրանց, ում սիրում ենք, և մեր երեխան հասունանում է ի դժբախտություն մեր։ Դա սեր է։ Սերն սկսում է վերքով։

— Բայց չէ որ ես ցավ պատճառեցի նրան, իմ մեծ երեխային։ Ես խելացի մայր չէի։

— Խելացի մայր ես դառնում միայն որոշ ժամանակ անխելք մայր լինելուց հետո։

— Ուրեմն, ձեր կարծիքով, խելացի կույսերը նրանք են, ովքեր դեռ երեկ խելացի՞ չէին։ Ուրեմն, դուք նրանց առաջ ձեր դուռը չէիք փակի։

— Ես նրանց առաջ դուռն ավելի մեծ հաճույքով կբացեի, քան խելացի կույսերի առաջ, որոնք հրաժարվեցին բաժանել իրենց յուղը։ Ես այնքան էլ հավատարմությամբ չեմ հետևում ավետարանին։

— Այո, դուք կիսեցիք ինձ հետ յուղը, և ահա իմ ջահը նորից է վառվում։ Փնտրում վերադարձավ։ Նա ինձ հետ է, ինձ հետ, և ես պահպանում եմ նրան, հիմա էլ ոչ ոք չի հանգցնի իմ ջահը... «Լուսնի լույսի տակ»... Ես պահպանում եմ իմ կրակը։

Մարկը նայում էր ջահը ձեռքին իր վրա խոնարհված, գիշերները չքնող կնոջը։ Տեսնում էր ինչ ջանադրությամբ է նա ափով ծածկում լույսը, պահպանելով սիրո վեհստին բռնկված բոցը ամեն տեսակ հոսանքներից, տեսնում էր նրա քնքուշ, մտահոգ դեմքին թռչկոտող վարդագույն ցոլքերի խաղը։ Նրա ազատությունը պաշտպանելու Ասյայի ջանքերը Մարկի համար զուր չանցան։ Նա զգացված էր, տեսնելով, որ Ասյան գրեթե պատրաստ է ի սեր Մարկի հրաժարվել իր սեփական օրենքից։ Բայց Մարկն այն մարդը չէր, որ ընդուներ այդ նվերը։ Նա միայն ավելի պարզորոշ էր զգում Ասյայի նկատմամբ ունեցած իր սեփական պարտականությունները։ Ասյան հավատում է նրան, կնշանակի ինքը պարտավոր է դառնալ Ասյային արժանի։ Որպեսզի արդարացնի նրա սպասումները։ Գնա առաջ։ Գնա մինչև վերջը։ Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե նա կհամաձայնվի ի սեր Ասյայի զոհաբերել իր րնածին անկեղծությունը։ Մար-

կը դիտեր (և Ասյան հիմա նույնպես գիտեր), որ եթե ինքը, թուլության պատճառով ենթարկվելով նրան, դավաճանի իրեն, ապա կդավաճանի նաև Ասյային։ Ընտանեկան օջախին Մարկը նվիրեց իր անկեղծությունը, և հիմա այդ անկեղծությունը դառել է նրանց ընդհանուր սեփականությունը։ Պետք էր միայն զգոնությամբ հետևել, որ նա, աստված մի արասցե, չմնա ձեռնունայն, հարկավոր էր, որ այդ ներքին ուժը իրագործեր այն, ինչ պահանջվում էր նրանից, որ նա, ինչպես գարնանային հեղեղ, իրեն ճանապարհ բացի ժայռերի միջով։ Հարկավոր էր լուծումը գտնել բանականության հակասական պահանջների և այն ժամանակ Մարկի հոգում իրար բախվող բոլոր օրենքները կայծ կտան։ Կծնվի մի նոր օրենք, որը կընդգրկի մյուս բոլորը։

Այդպես էր դրսևորվում սիրո անսպասելի հատկությունը— նոր սիրո հատկությունը, որը Մարկին վերք հասցնելով, թարմացրեց նրա արյունը։ Քանի որ ազատելով նրան բազմաթիվ տաքուկ պատրանքներից, որ կուրորեն ստեղծում է կյանքը, մարմնի էգոիզմից— տիրանալու այդ խենթ ագահությունից,— սերը նրան ազատեց նաև ոգու էգոիզմից, ամենակործանարար էգոիզմից, գաղափարների և մտքի աբսոլյուտների էգոիզմից։ Այդ սերը օգնեց Մարկի կյանքին անցնելու մի ոլորտից մյուսը, անհատական պլանից սոցիալական պլանի։ Ինչպես Vita Nuova[1]-ի այս առաջին ամիսներին Ասյան կարող էր երջանկություն ստանալ միայն հավատարմորեն Մարկին ծառայելով, զիջելով իր անկախությունն ու գոռոզամտությունը, այնպես էլ Մարկը պատրաստվում էր զոհաբերել իր անկանոն ինդիվիդուալիզմը, ենթարկելով դրան հասարակական գործունեության և պայքարի պահանջներին, և այդ բոլորը, իր համար իսկ անհասկանալի ձևով, նրան ներշնչում էր Ասյայի սերը։ Ասյան Մարկից ոչինչ չէր պահանջում։ Նա դարձել էր Մարկ, դա բավական էր, որպեսզի Մարկը դառնար Ասյա, և, դառնալով Ասյա, ի հայտ բերեր ինչպես սեփական դիծ Ասյային յուրահատուկ բնազդների նախաստեղծ ուժը։ Ինքնըստինքյան հասկանալի է, մտքերի նման փոխադարձ ներթափանցումը հնարավոր է միայն սիրո առաջին շաբաթների էքստազի ժամանակ, երբ նրանք նորից գտան միմյանց։ Ժամանակի ընթացքում այդ

[1] Նոր կյանք (իտ.)։

կապը կթուլանա, և նորից իրենց կվերադարձնեն անկախությունը, նորից իրար կողքի կհոսեն երկու ներքին կյանք։ Այդպիսին է օրենքը։ Բայց միևնույն է, երկուսն էլ երկար ժամանակ կպահպանեն հիշողությունն այդ ակնթարթների մասին, երբ նրանք թափանցում էին միմյանց մեջ, միաձուլվում էին հոգով և ամեն մեկի մեջ այնքան ինքը չէր, որքան մյուսն էր։ Նույնիսկ իրենց բերանում նրանք զգում էին մյուսի հոգու համը։ Բայց եթե անգամ նրանք ցանկանային այդ համը լվանալ իրենց լեզվի վրայից (երբեմն այդ խաբկանքը չորացնում էր ինչպես տենդը), ոչ մի ջուր չէր կարող թարմացնել քիմքը։ Սոսկալի էին ապրել իրենց ցավի հետ— իրենց երանության հետ,— երբ մարմնին ուրիշի հոգի էր պատվաստված։ Այդ հոգին նոր դուրս եկող ատամի նման տնքում էր։ Նոր ատամներ, ծիրտասարդ կենդանու նման նրանք փնտրում էին, թե ինչ կրծեն, որ ատամներն որքան կարելի է շուտ դուրս գան։ Նրանց տանջում էր քաղցը։ Նրանք գործողության քաղց էին զգում։

Նրանց միջև պահպանվում էր տարբերությունը։ Ասյայի քաղցն ավելի շուտ բավականություն էր,— առողջ ու անհոգ, նա կարծես թե ասում էր. «Ես քաղցած եմ, և ես ուտում եմ... Ավելի վատ նրա համար, ում ես ուտում եմ»։ Իսկ Մարկը, նույնիսկ քաղցած լինելով, չէր մոռանում այն, որ և նա, ով ուտում է, և նա, ում ուտում են, ապրելու իրավունք ունեն։ Կյանքն իր առաջընթաց շարժման մեջ ընթանում է դիակների վրայով։ Ամեն մի հիրավի նոր հասարակություն բարձրանում է այն հասարակության ավերակների վրա, որը եղել է իրենից առաջ, եղել է նախկինում։ Եվ այդ ավերակները— անզգա քար չեն, այլ՝ կենդանի արյունով կենդանի մարմիններ։ Արյան համն իմանալու համար, բավական էր, որ Մարկը լեզուն քսեր իր սեփական վերքերին։ Այն ճակատամարտում, որը Մարկն ինքն էր ցանկանում սկսել, նա ըստ իր խառնվածքի առանձնահատկություններ գտնվում էր միաժամանակ բարիկադի և այս, և մյուս կողմում։ Նա հարվածներ էր հասցնում և ինքն ստանում հարվածներ։ Ճակատամարտի դաժանությունը նա զգում էր երկուսի փոխարեն,— հարվածներ ստացողի և հարվածներ տվողի փոխարեն։ Ասենք նաև պայքարի գաղափարախոսությունը վատ էր համակերպվում նրա սեփական գաղափարախոսության հետ. պրոլետարական մասսայի այդ ոգին, այդ դիալեկտիկական

մատերիալիզմը վերավորում էին Մարկին անձամբ՝ նրա արմատացած մտավորական-անհատապաշտի արիստոկրատականությամբ հանդերձ, մտավորական-անհատապաշտ, որը պարզապես չի կարող յուլա գնալ առանց այն հավատի, որ իր ինտելեկտն ու իր կաստան առանձնահատուկ իրավունքներ ունեն, — այդ կաստան Մարկը նույնացնում է իր հետ, իսկ դադարելով հավատալ, կործանվում է...

Մարկին այդ կապանքներից դուրս պրծնել օգնում էր յուրատեսակ ասկետիզմը, որով նա պատժում էր իրեն, իրեն և իր կաստային, բոլոր այն ստոր բաների համար, որ հատուկ է իրենց։ Այդ պատիժը պրոլետարիատի դասակարգին խստորեն ծառայելն էր և պայքարի այն ձևերի ընդունումը, որոնք պահանջում էր այդ գործը։ Նա կործանարար և անպտուղ ինդիվիդուալիզմի հագուստը արդեն մաշել էր մինչև ծակծկվելը։ Նա տեսնում էր, նա իր աչքով տեսնում ու համոզվում էր, որ ինտելիգենտ ընկերների ձեռքում մի ժամանակ իր համար թանկ գաղափարները— ոգու ազատությունը, չընդդիմադրելը— պոռնկաբար վաճառվում էին։ Բուրժուազիայի բոլոր և ամեն տեսակի գաղափարախոսները, խոշոր լինելին նրանք թե մանր, դիմում էին այդ գաղափարների ծառայություններին։ Այդ գաղափարները դարձել էին հասարակաց կանայք և էժան գնով բոլորին վաճառում էին միտք խաղալու աղնիվ ու հաճելի այդ խաղի բավականությունը։ Ընդ որում առանց ռուբլէ վտանգի ենթարկվելու։ Խայտաբղետ մի խառնուրդ էր դա օբյեկտիվիզմի, իդեալիզմի, էսթետիզմի, պատվի, խղճմտանքի, հարգանքի, առաքինության, անհատականորեն ազատ խղճի, մարդկայնության...: դրանք այնքան անկողիններ էին տեսել, որ առանց դժվարության տեղավորվում էին ուզածդ ձևի մեջ. դրանք հարմար էին ուզածդ խելքի համար։ Դրանց օգնությամբ Մարկի ընկերները խուսափում էին տհաճ շփումից իրականության հետ, նրա կոշտացած ձեռքերի հետ, կեղտոտ կամ արյունոտված ձեռքերի հետ։ Նրանք օգտվում էին իրենց գաղափարներից, իրենց պոռնիկներից, որպեսզի գլուխներն ազատեն պատասխանատվությունից և սոցիալական գործողության վտանգներից։ Նրանցից լավագույնների մոտ դա ոչ միայն փոքրոգության հետևանք էր, ոչ թե արյան առաջ ունեցած սարսափ, այլ, առաջին հերթին, խոցված հպարտության գաղտնի տառապանք. նրանք կուզեին, ծայրահեղ դեպքում, իրենց նվիրել ժողովրդա-

կան գործին, բայց պայմանով, որ մազաչափ անգամ չզիջեն իրենց պատվավոր տեղը, հետագայում էլ մնան նույն արտոնյալ վերնախավը, որն իր հետևից տանում է անտաշ մասսաներին, նույն ex catedra[1] բարբառող պրոֆեսորները։ Քողարկվելով դեմոկրատիայի կեղծիքի տակ, նրանք չէին ցանկանում ընդունել, թեև լռում էին այդ մասին, ինչ-որ պրոլետարների խիստ լկտի այդ հավասարությունները, պրոլետարների, որոնք համաձայնվում էին ընդունել այդ բոլորը, միայն թե հավասարության սկզբունքով։ Թեթե իրադարձությունների ուժը նրանց հարկադրեր աշխատակցել մասսաների հետ, ինչպես այդ տեղի էր ունեցել Սովետական Միությունում, նրանք, իհարկե, դավադրություններ կկազմակերպեին,— որը իսկական, որը մտահայեցողական, ձգտելով մասնագետների օլիգարխիա սահմանել, լինի դա նյութական բնագավառում թե հոգևոր։ Նրանց մեծ մասը պրոլետարական կամ մանր բուրժուական ծագում ուներ, բայց դա նրանց չէր խանգարում հովանավորի նման նայել նրանց, ովքեր իրենց աչքում կրտսեր եղբայր էին համարվում։ Բոլոր դարաշրջաններում հենց նրանք, ովքեր դուրս էին եկել ժողովրդի միջից և վեր բարձրացել այդ ժողովրդից շնորհիվ իրենց բնական ճկունության կամ պինդ բռունցքների, այդ ժողովրդին նայում են շատ բարձրից և շատ կոպիտ են նրա հետ վարվում։ Հին կարգերի ժամանակ կաւավարիչները միշտ աղնվատոհմիկ վերնախավի պահապան շներն էին։ Մեր օրերում բուրժուազիայի համար նրանց դերը կատարում են ինտելիգենցիան և մասնագետները։ Մարկը նրանց էությունը լավ գիտեր, նա առանց դժվարության կարդում էր նրանց գաղտնի մտքերը, որովհետև իր մեջ նույնպես թաքնված էին նման մտքեր։ Նա ստիպված էր լինում այդ մտքերից ազատվել։ Այդ պատճառով էր, որ նա նման կրքոտությամբ կռվի էր դուրս գալիս նրանց դեմ։ Նրանք հենց ինքն էին, նրա «եսերից» մեկը, և հիմա նա կռվում էր այդ մերժված «եսի» դեմ։

Ինքն իր հետ սկսած ճակատամարտերի մի այդպիսի տեղագին գիշեր, այն գիշերը, որը մարդու համար դառնում է կարծես թե նրա անձնական օգոստոսի չորսը[2], երբ մարդը հրաժար-

---

1 Ամբիոնից (լատ.)։

2 Ֆրանսիական բուրժուական հեղափոխության սկզբում— 1789 թ. օգոստոսի 1-ի և 10-ի միջև— հրապարակվեցին դեկրետներ, որոնք չեղյալ հայտարարեցին հիմնական ֆեոդալական արտոնությունները։

վում է բոլոր արատներից, Մարկն ազատվեց անհատական ազատությունից, որպեսզի անվերապահորեն ծառայի սոցիալական կարգը վերափոխելու ձգտող մասսաների կոլեկտիվ գործողությանը։ Բայց նա անհրաժեշտ պարզությամբ չէր հասկանում, թե ինչ տեղ է ինքն իրեն հատկացնում այդ ճակատամարտում։ Նա դեմ առավ բռնության գաղափարին։ Ընդունում էր զոհաբերության գաղափարը— ոչ ավելին։ Սեփական բնազդների դեմ ունեցած նույն այն կրքոտ բողոքի պատճառով, որը նրան ստիպում էր անողոքաբար սանձել իր անհատապաշտությունը, նա բանականությամբ հրաժարվեց բռնությունն ընդունելուց, թեև իր խառնվածքի բնույթով ավելի քան հակված էր դեպի բռնությունը։ Նա անձնական փորձով գիտեր, հենց որ ինքն սկսի, այդ բռնությունն իրեն կկլանի ամբողջովին։ Եվ Մարկը ոչ առանց հիմքի ենթադրում էր, որ այդպես է նաև մարդկանց մեծամասնության մոտ։ Բռնությունը չափազանց թունդ խմիչք է նրանց համար։ Մի բաժակը բավական է, որպեսզի նրանք կորցնեն բանականության վրա իշխելու ուժը։ Մինչդեռ Եվրոպան չէր կարողանում յոլա գնալ առանց բռնության։ Բազմաթիվ դարերի ընթացքում նա անչափ շատ էր ընտելացել այդ ալկոհոլին։ Եվ ինչպե՞ս փրկել նրան, ի՞նչ անել։ Խոսքերով այդտեղ չես օգնի։ Այդտեղ պետք է գործուն օրինակ։ Ջոհ։ Բայց զոհ, որ համապատասխանում է մարտական կարգապահության։

Այդպիսի որոշումը ամենահերոսական, ամենամաքուր սկզբունքների կոչ էր անում։ Սակայն լույսի շողի կարիք էր զգացվում. այն խնդության կարիքը, առանց որի չի լուսավորվում գործողությունը։ Կոտրելով իրեն հանուն ինքնազոհաբերման և ինքնահրաժարման, Մարկը տխրում էր։ Նա թաքցնում էր դա Ասյայից։ Բայց Ասյան ոչինչ չէր էլ նկատում. լինելով, գուցեև, ոչ պակաս բարդ խառնվածքի տեր իր խորքերում, Ասյան չէր տառապում մաշկի ավելորդ զգայնությամբ և այդ պատճառով պարզապես չէր հասկանում գործողության հարցերում այդ բոլոր կասկածները։ Նա հարգանքով էր վերաբերվում Մարկին տանջող հարցերին, բայց թողնում էր, որ դրանք նա ինքը լուծի։ Բավական էր և այն, որ Ասյան նախապես համաձայնվում էր հետևել այն ուղղությանը, որը Մարկը էր ընտրել։ Սերը վստահում էր Մարկին։ Բայց թող ընտրի նա ինքը և թող գործի։ Այդ երիտասարդ կնոջ համար երիտա-

սարդության ծագման շրջանում ամեն ինչ գործողություն էր, նույնիսկ սերն ինքը։ Նա նման էր դեպի արևը, դեպի կյանքի շարժումը, դեպի փախչող օրը դարձած բույսին։ Ուրեմն, նվաճենք մեր օրը։ Օրերը կվերցնենք մեկը մյուսի հետևից։ Ետ նայելու ժամանակ չէ։

Երբ Մարկի վիճակը արդեն անտանելի էր դառնում և նա անհրաժեշտություն էր զգում մտքի այդ ճակատամարտին հաղորդակից դարձնել որևէ կենդանի էակի, նա վազում էր մոր մոտ, դուրս լողալով արդեն գործողության հեղեղից, որն հիմա ողողում էր նրա ուղերը սոսկ մինչև ծնկները։ Աննետան կարող էր մյուսներից ավելի լավ հասկանալ իր որդու ողբերգական երկատվածությունը։ Նա տեսնում էր, որ Մարկը նախկին կրքոտությամբ է վերաբերվում կյանքին, բայց արդեն թույլ չի տա, որ իրեն հիմարի տեղ դնեն. սեղմելով մորը իր գրկում, Մարկն սթափորեն է դատում նրա մասին։ Եվ նրա ամենատաք բոցը ձգվում էր կյանքի միջով դեպի ապագան, ինչ-որ սահմաններից այն կողմ, նա չէր տեսնում այդ սահմանները, բայց բաղձում էր և փնտրում, նման այն օձին, որն առաջ է պարզում իր կույր գլուխը։ Որդին մորը չէր պատմել իր այդ գաղտնի կյանքի մասին։ Նրանց միջև գոյություն ուներ յուրահատուկ կոնտակտ, և դա բավական էր՝ հասկանալու համար, երկուսի մոտ էլ, այդպիսով, արյունը միևնույն ջերմաստիճանն ուներ, և միասին նրանք գտնում էին պետք եղած հավասարակշռությունը։ Հենց դրանում էլ կայանում էր նրանց մինչև վերջը չհասցրած գրույցների օգտակարությունը. Աննետան հեշտ էր կարդում որդու հոգին, բայց Աննետան նրա փոխարեն չէր կարող կարդալ այն, ինչ որդուց դուրս էր գտնվում, և չէր կարող նրան խորհուրդ տալ, թե ինչ անել։

Այդպես էլ Մարկն ապրում էր այդ երկու կանանց միջև, որոնք իրենց ամբողջ սիրով հանդերձ ոչնչով չէին կարող նրա առաջ գնալուն օգնել, բացի նրանից, որ քայլում էին Մարկի կողքով։ Նրանք պատրաստ էին գնալ Մարկի հետևից ուր ուզում է լինի։ Բայց չէին կարողանում կամ չէին ցանկանում հուշել նրան. «Գնա այնտեղ»։ Նրանք այդ խոսքերը Մարկից էին սպասում։ Եվ Մարկն այդ համարում էր միանգամայն արդարացի։ Չէ՞ որ նա տղամարդ է։ Բայց այդ երկուսի համար ու նաև իր համար ցանկանալը— խնդրի բարդությունը չէր պակասեցնում։ Երեքից ամեն մեկը հետևում էր իր ներքին օրենքին։

Ինչպես գտնել այն հատհնչյունությունը, որում լիովին իրեն կարտահայտեր նրանց ներդաշնակությունը։

Եվ քանի դեռ բանականությունը հապաղում էր կայացնել անհրաժեշտ որոշումը, նրանց առաջնորդում էր ավելի իմաստուն և ավելի նուրբ բնազդը։ Այդ երեք էակների միջև ստեղծված գաղտնի փոխանակությունը Մարկին Ասլայից բերում էր կյանքի այրող հյութեր, գործելու թափ, իսկ Աննետայից խելացի հանդարտություն, որը ինչպես ամբարտակ զսպում է գործողությունը։ Իսկ Մարկը երկու կանանց էլ հենարան էր տալիս, նրանց համար մի ծառ էր, որին նրանք կարող էին փաթաթվել։ Եվ նրա շնորհիվ միացնել իրենց ճյուղերը։

Նրանք համեմատում էին այն փորձը, որ յուրաքանչյուրը կուտակել էր անջատման ամիսների ընթացքում։ Տեղեկությունները, որոնք Ասլան ձեռք էր բերել Կենտրոնական Եվրոպայում, բավական կարևոր էին, քանի որ նրան հաջողվել էր իր պահակակետից լսել «աստվածների գաղտնիքների» պատառները։ Նրա դիտումները հիանալիորեն լրացնում էին այն հայտնագործությունները, որոնք Աննետան արել էր Տիմոնի հետ մտերմության տարիներին։ Դրանք հաստատում էին նաև Մարկի տագնապալից նախազգացումներն ու կռահումները, որոնք նա ունեցել էր այն ամիսներին, երբ ինքը չափչփում էր Փարիզի փողոցները։

Ակնհայտ էր, որ Եվրոպան, ասենք նաև ամբողջ աշխարհը, հանձնված են արդյունաբերական և ֆինանսական ուժերի իշխանությանը, որոնք գաղտնի կերպով առաջ են շարժում պետական գործերը. ամեն ինչ նրանց պահանջմունքի համար էր— դեմոկրատիա, ֆաշիզմ, բալկանյան թագավորներ, իրենց ժողովրդին վաճառած ծախու տիրակալներ, կոնդոտիերներ և դուչեններ, աչքները սևեռած ինչպես ատրճանակի փող, պատերազմի և ջարդերի կրակը բորբոքող ճղճղաններ, դաշույնի, դատանակի և լուծողականի հերոսներ, ինչպես նաև ազնվաբարո հայրեր, 89 թվականի անմահ սկզբունքների մունետիկներ,— մի խոսքով, նաև պառամող ախմարներ, պառլամենտական բանսարկուներ, և Հիտլեր, Հորտի, Մուսսոլինի, Պիլսուդսկի, Փարիզի, Պրագայի, Ժնևի կամ Վաշինգտոնի ճարտարախոսների հետ միասին— ամեն ինչ գործին պետք էր գալիս։ Ավազակություն և իդեալիզմ, անշահախնդիր բարեհոդություն և սրիկայություն,— խոսքը գնում էր միայն գնի մասին, իսկ գինը փառ-

քըն էր, գրամը կամ հանցագործությունը։ Կարճ ասած, ուղա՜ծդ ճաշակի ապրանք։ Հավասարապես թակարդ էին ընկնում և ամենամիամիտները և ամենափորձվածները, հենց որ եղունգը խրվեր, հսկույն թռչնակը բռնվում էր։ Մնացածն ավարտում էր սարսափը. մեկին շողոքորթությամբ էին հրապուրում, մեկին փոքրիկ բարեկամական նվերներով, խոշոր ձկներին կարթով էին սրսում։

Նվ աշխարհի տիրակալները խաղը կշահեին. երկու դեպքում. եթե նրանք պայմանավորվեին աշխարհի բաժանման մասին, ինչպես և եթե պայմանավորվեին համատեղ գործողությունների մասին՝ միակ արժանի հակառակորդի դեմ, որը պատրաստում էր իր հակահարձակումը,— չէ որ Սովետական Միությունը պողպատյա բարձր պատի ետևում ծխնելույզների ծխի մեջ կոփում էր իր մեծ Սրատգրերի զրահը։ Դրանք հիմնական պայմաններն էին։ Երեխան էլ կարող էր այդ հասկանալ։ Բայց կապիտալի և գործամոլության հսկաները, այդ պնդակազմ ու մսեղ խուժադուժները, Տիմոնի համոզմամբ, շատ պստլիկ ուղեղներ ունեին։ Նրբանք չէին կարողանում հեռացնել իրենց արյունով լցված, կարճատես և չվված աչքերը սեփական հակասական կրքերից,— փառամոլությունը, շահերի մրցակցությունը, օրախնդիրը ծածկում էին նրանց հայացքը։ Արդեն երկար տարիներ էին, ինչ նրանք ետ էին վարժվել ճակատ դուրս գալ ընդհանուր թշնամու դեմ։ Աշխարհի այդ դնորդներին գնելուց հեշտ բան չկար. նրանք ուժի վրա դավաճանում էին իրար— հարևանից գողացած մի կտոր կարկանդակի համար, կոնտրակտի համար՝ կնքված խելոք թշնամու հետ, որը մրցակցի հաշվին արտոնյալ պայմաններ էր տվել իրենց։ Այդպես, հակառակ նրանց կամքին, աճում էր պրոլետարական մի վիթխարի դարբնոց, որտեղ դիշեր-ցերեկ նրանց մահն էր կոփվում։

Բայց երբ խփեց ժամը տասնմեկը (նույնիսկ, ավելի ճիշտ, տասնմեկն անց տասնհինգ), նրանք, վերջապես, զգացին, թե ինչպես է, ահագնանալով, մոտենում այդ դարբնոցի ստվերը։ Այդ ժամանակ նրանք որոշեցին համախմբվել, ստեղծել Սրբազան միություն։ Բոլոր զանգակատներում սկսեցին ղողանջել զանգակները։ Ավազ, արդեն ուշ էր։ Երկրաշարժն արդեն սկսվել էր։ Առաջին ճեղքերն ուրվագծվեցին կապիտալիզմի ամուր պատի վրա։ Մեկը մյուսի հետևից տապալվեցին մի քանի հզոր աշտարակներ. Սաքենսեք, Տիմոնը, Լևենշտայնը... փրկվածները— խոհ

փրկվել էին ամենաուժեղները— հարկադրված եղան համաձայնության գալ միմյանց հետ։ Ասյան վկա էր եղել այն բանին, թե ինչպես էին փորձում համախմբել իրենց ուժերը խոշոր արդյունաբերական կարտելներն ու ֆրանսո-գերմանական ֆաշիստները։ Օվկիանոսի տակ զգուշորեն իրար էին մեկնվում անգլո-սաքսոնական երկրների շոշափուկները— Բրիտանական իմպերիայի և Միացյալ Նահանգների— հույս ունենալով վերաստեղծել Ութոտաւուն։ Հրեշը կամաց-կամաց իր ձեռքն էր հավաքում վարձու մարդասպաններին և՝ ամեն ինչի պատրաստ Իտալիայի ու Բալկանների ֆաշիստական իշխանություններին։ Բոլոր անկյուններում, ինչպես աղբաճանճերի ցարսեր, վխտում էին լրտեսներն ու պրովոկատորները։ Իր սեփական տերիտորիայում Ֆրանսիան պահում էր սպիտակամորթ վարձկանների մի ամբողջ բանակ-թնդանոթային մխս, որն սպասում էր այն րոպեին, երբ իրեն գործածության մեջ կդնեն— այստեղ թե այնտեղ, երկրի ներսում թե նրա սահմաններից դուրս։ Փարիզի, Լոնդոնի և Մոսկվայի միջև, Պրագայի, Ռիգայի և Վարշավայի միջով անընդհատ գաղտնի գործակալներ էին վազվզում։ Նրանք թափանցում էին ՍՍՀՄ, որպեսզի կազմալուծեն, վնասներ տան, դժգոհություն բորբոքեն, ճանապարհ հարթեն սպառնացող ինտերվենցիայի մարտակառքերի համար, ինտերվենցիայի, որի սկիզբ առնելու մասին արդեն կես տարի էր, ինչ բոլոր խաչմերուկներում ծուղրուղու էր անում սպիտակ գեներալների և հոլանդական նավթային արքայի ապուշային պարծենկոտությունը։

Արևմուտքի «լիբերալիզմը» թողնում էր, որ իրագործությունները զարգանան իրենց ընթացքով։ Եվ սոցիալիստները, խոցված կոմունիստական բարձրաձայն հռետորների ոչինչ չխնայող պոլեմիկայից, հիշաչարությամբ ձևացնում էին, իբր չեն նկատում, թե ինչ է պատրաստվում հենց իրենց քթի տակ։ Համրությունը, որ համակել էր նրանց այնքան հիշո ժամանակին, թույլ էր տալիս նրանց ձեռքները ծալած նստել։ Ժամանակն էր, որ նրանց լսողությունը մաքրեին։ Իսկ միաժամանակ մաքրեին նաև լսողությունն այն ինտելիգենտների, որոնք հարել էին ձախ կուսակցություններին, այն հարպակալած ու անվրդով ինտելիգենտների, որոնք չէին ուզում անտարբերությամբ նայել, թե ինչպես են իրենց աչքի առաջ ոչնչացնում նոր աշխարհը, բայց ավելի շատ չէին ուզում վարկաբեկել իրենց՝ պաշտ-

պանելով այդ նոր աշխարհը։ Նրանք անհուսալիորեն խուլ էին և միահամուռ մկկում էին, «Բեե՛», ինչպես փաստաբան Պաթլենի հովիվը։

«Լավ, լավ։ Ես ձեզ, աղավնյակներս, դեռ թափ կտամ։ Լսո՞ւմ եք փրկության կանչող ճիչերը։ Տեսնենք, կդիմանա՞ն արդյոք ձեր քմբկաթաղանթները այդ վայնասունին»։

Բայց ինչպե՞ս գործի անցնել։

Մարկը Ֆրանսիայում առաջիններից մեկը մի բուռ համարձակ պատանիների հետ, որոնք ոչնչից չէին վախենում (կորցնել նրանք կարող էին ամեն ինչ, իսկ շահել՝ ոչինչ չէին կարող), սկսեց մարտական խմբեր կազմակերպել՝ ի պաշտպանություն Սովետական Միության։ Կարիք չկար, որ Ասյան խոսքով կամ գործով առաջ մղեր Մարկին։ Բավական էր և այն, որ նա գոյություն ունի և որ ինքը սիրում է նրան։ Քանի որ Մարկը անգիտակցորեն ներծծվում էր Ասյայի մտքով, ինչպես նրա հագուստի բուրմունքով։ Երբ գիշերը միասին անցկացրած երկու էակ խոսքերի կարիք են զգում՝ միմք արտահայտելու համար,— գա ասես անհոտ ծաղիկ լինի։ Առաստությամբ էր Ասյայի այգուց հորդում ակացիայի ջերմ բուրմունքը։ Նա, այդ խորամանկը, ոչ մի անգամ Մարկին նկատել չտվեց, որ Մարկն իր մաշկին տանում է նրա մտքերի բուրմունքը։ Ասյան ձևացնում էր, թե գնում է նրա հետևից։ Եվ վերջին հաշվով երկուսն էլ գնում էին ճիշտ արահետով, որը տանում էր դեպի իսկական նպատակ, իսկական գործողություն, իսկ գործողությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ուզածդ լիաթյուն կյանքի հաստատություն։ Այդպիսին էր նրանց զարգացման սեփական գիծը։ Նա հարմարվում էր դեպի անխուսափելի Հեղափոխություն տանող դարաշրջանի քայլին։ Երբ ծալքերն ակսում են կնճռոտել երկրի կեղևը, փոքրիկ առուները հոսում են նույն այն լանջերով, ինչպես և մեծ գետերը, և նրանց հետ են միացնում իրենց ջրերը։ Նույնիսկ Աննետան, որին տարիներն ու մտքի աշխատանքն արդեն բերել էին դեպի լեռնալանջի ստորոտը, որտեղ անդորրվում է փոթորկուն հեղեղը, միացավ շարժմանը ու, թեև նրան լուսավորում էր խաղաղ երկինքը, գնաց նույն ուղղությամբ։

Իր նախկին պատրոնի կազմարաբական արհեստանոցին կից և այդ պատրոնի օգնությամբ Մարկը մի փոքրիկ տպարան բացեց, որտեղ պարբերաբար տպագրվում էին մտքեր արթնացնող և սոցիալական ճակատամարտերի կոչ անող բրոշյուրներ,

Մարքսի, Լենինի, ինտերնացիոնալ գործողության վարպետների թարգմանություններ, փաստաթղթերի ժողովածուներ, ինչպես և կոչեր ու պամֆլետներ, որոնք Մարկի սեփական ստեղծագործություններն էին։ Հարկեւ, Ասյան նրա ռուսերենի և գերմաներենի թարգմանչուհին էր, իսկ երբեմն էլ իտալական և անգլիական տեքստերը թարգմանում էր Աննետան։ Բայց նա աշխատում էր առանց որևէ խանդավառության։ Եթե նրա ձեռքը տնտեսագիտական կամ սոցիալական հարցերին վերաբերող աշխատություններ էին ընկնում, թարգմանությունն անսահմանորեն ձգձգվում էր։ Նա աշխատում էր կամացուկ որևէ տեղ ծլկել փոքրիկ Վանյայի հետ, որին Աննետան մորը չտվեց նույնիսկ երբ Ասյան վերադարձավ։ Եվ մայրամուտը մոտենալու հետ Աննետան նորից էր սկսում ապրել նրազանքով։ Պատահում էր, որ նրան անակնկալի էին բերում— բացելով դիրքը կամ տետրը, Աննետան տողերին նայում էր բացակա հայացքով, ինչպես ցրված աշակերտուհին, նրա մտքերը թափառում էին ինչ-որ տեղ, հայտնի չէ որտեղ, ստիպված էին լինում ձայն տալ։

— Ախ դու, քնկոտ։ Լավ ես պահպանում մեր մարգագետինը...

Ասյան հաճույքով էր սթափեցնում Աննետային։ Եվ դա Աննետային դուր էր գալիս։ Նա վերադառնում էր, հիշտ է, առանց շտապելու, իր մարգագետինը։ Իսկ թե որտեղից էր վերադառնում, չէր ասում ոչ ոքի, թեև Ասյան գրգռում էր նրան ձեռ առնելով, որպեսզի մի կերպ որևէ բան դուրս քաշի։ Աննետային զվարճացնում էր նրա երկու մտրուկների եռանդուն տրտինգը։ Եվ նա չէր ջանում զսպել նրանց։

Աննետան հայտնագործեց նրանց համար ուրիշ դաշտեր։ Վաղեմի լիբերալիզմը և հիշողությունները Ռումինիայի ու Իտալիայի մասին նրան զարձնում էին ավելի զգաստ լատինական երկրներում ֆաշիզմի սանձարձակությունների նկատմամբ։ Այնտեղ ամենուրեք մնացել էին Աննետայի բարեկամները, և նրա օգնությամբ Մարկի գրքերի հրատարակչությունը զարձավ իտալական վտարանդի հակաֆաշիստների օջախներից մեկը։ Նրանց հետևից հորդաց նաև կլիենտուրան, ոչ այնքան հարուստ փողով, որքան անսպառ վճճերի տեսակետից։ Հեշտ չէր հասնել այն բանին, որ նրանք համաձայնության գան կոմունիստների հետ։ Նույնիսկ իրենց սեփական միջավայրում նրանք ոչ մի կերպ չէին կարողանում համաձայնության գալ։ Նրանց ամ-

բողջ եռանդը ծախսվում էր այն բանի վրա, որ նորից կառուցեն դեմոկրատիայի շենքը, որը պայթեցրել էր համաշխարհային պատերազմը և որին միանգամից հարվածել էին հեղափոխության և հակահեղափոխության թնդանոթները։ Նրանք կրկնակի աքսորական էին—աքսորական՝ հարազատ երկրից ու գարաշրջանից դուրս։ Աննեատան հասկանում էր նրանց, թեև ինքը հրաժարվել էր շատ բաներից, որոնք իր ներկի հավատն ու սերն էին հանդիսանում, հրաժարվել էր իր պատանության իդեալներից, որոնք ծերանում էին նրա հետ միասին և զիջում իրենց տեղը (այդպես է կյանքի օրենքը) փոխարինելու եկած պատանության իդեալներին,— հասկանում էր նրանց և իր վրա վերցրեց ազատության այդ երկու դարաշրջանների միջև եզած միջնորդի դերը, չանալով ոմանց ներշնչել հարգանք դեպի հնի հանգչող վեհությունը, բուրժուական իդեալիզմը, որ ծնվել էր Բաստիլիայի ավերակների վրա, ոմանց՝ հարգանք դեպի աշխարհի վերափոխումը, որ իրականացվում էր պրոլետարական հեղափոխության հերոսական մատերիալիզմի ուժով։ Նա այն մարդկանցից չէր, ովքեր ամաչում են դպրոցական ֆորմուլաներից։ Մատերալիզմ, իդեալիզմ—թող կյանքի կրակը իրեն կոչի ինչպես սիրտն ուզում է։ Միայն թե նա հուրհրա։

Մարկը, ինչպես և Աննեատան, թուլություն էր զգում այդ fuorusciti[1] նկատմամբ. նրանց ողբերգական ճակատագիրը, դարաշրջանից դուրս գտնվող մարգկանց ճակատագիրը, հոգու խորքում նրան մոտիկ էր, թեև նա ինքը նպատակասլաց կամքի ճիգերով խուսափեց նրանց վիճակված բախտից։ Մարկը դառնում էր նրանց ջատագովը։ Ասյան համարում էր, որ իր սիրելի Դոն Քիշոտը մարտնչում է անհույս գործի համար։ Բայց Ասյան իր համար կանոն էր դարձրել չխոչընդոտել իր ասպետին վարգելու ուր ուզում է լինի նիհար Ռոսինանտին հետած, և Ասյայի սրտով էին, թեև նա մտքում ծիծաղում էր, նրա լողլող ոտքերն ու նիզակի հարվածները։ Հենց այդ հարվածների շնորհիվ էլ Մարկն արժանացավ վտարանդիների երախտագիտությանն ու պատվին, որից նա հաճույքով կհրաժարվեր,— նրա վրա դարձրին իրենց հայացքները Ֆրանսիայում ֆաշիստական գործակալները։ Փոքրիկ փողոցը, որտեղ տպարանն էր տեղավորված, հանկարծ փոխվեց տշխույժ մայրուղու, որով զբոսնում էին ինչ-

1 Աքսորականների (իտ.)։

որ անորոշ տեսքի անձնավորություններ, որոնք շատ մեծ հետաքրքրությամբ դիտում էին տեղական կրպակների ողորմելի ցուցափեղկերը։ Գրախանութն իրենց այցելությանն էին արժանացնում նոր հաճախորդները, որոնք անսահման երկար էին գրքեր ջոկոտում, նախքան գնում կատարելու որոշում կայացնելը։ Նույնիսկ Մարկի մոտ տուն էին գալիս իտալացիները— նրա ստեղծագործությունների երկրպագուները, որոնք ամենահուզիչ երախտագիտության արտահայտությունները մեջբերում էին այնպիսի կատաղի տիրապետությամբ, որ Ասյան, միջանցքում կանգնելով ու պահպանելով իր մեծ երեխային, տագնապով էր լցվում։ Մարկը չափազանց դյուրահավատ էր, հաճախ կարիք էր լինում նրան հիշեցնել, որ քաղաքական պայքարում, դեռ գործողության չանցած, ավելի օգտակար է լսել, քան խոսել... Ճանճե՛ր, ճանճե՛ր։ Այն օրերին դրանք վխտում էին ամբողջ Եվրոպայում։ Հատկապես աներես էին իտալական ՕՎՐԱ[1]-ի գործակալները։ Փարիզի իտալական հակաֆաշիստների գաղութը մշտապես հարկադրված էր զգաստ լինել, որպեսզի պաշտպանի իրեն նրանց ոտնձգություններից. դա, թերևս, նրա ամենազլխավոր հոգսն էր, քանի որ մի գեղեցիկ օր մարդիկ, որոնք վաղուց ի վեր օգտվել էին միանգամայն օրինավոր մարդկանց համբավից, հանկարծ ի ցույց էին բերում իրենց ստոր ներքին էությունը։ Նույնիսկ բարեկամները, որոնք այնքան հուսալի էին թվում, խոստովանում էին,— ավա՛ղ, շատ մեծ ուշացումով,— որ նրանք հանդիսանում էին որսորդական լեզվով արտահայտված, ֆաշիստական գաղտնի ոստիկանության որսահալածները, զարանակալում էին զոհերին և հրապուրում նրանց դեպի ցանցերը։ Ցայտուն վկայությո՞ւնն այն բանի, թե ինչպես պատերազմից հետո այդ ամբողջ փտած միջավայրում աճեց հարստանալու և ստորության ախորժակը, հատկապես շավիղից դուրս ընկած երիտասարդության մեջ։ Ասյան օժտված էր անսխալ, գրեթե երբեք իրեն չխաբած հոտառությամբ, եվ քանի անգամ էր նրան պատահել այրել այդպիսի չարաղետ ճանճերից որևէ մեկի թևիկները, որոնք չանացել էին սողոսկել Մարկի մոտ. բավական էր մի հայացք, հոտուկ տոնով ասած մի բառ, և ճանճն այդ անհետանում էր, սիրտ չանելով նորից հայտնվել։ Բայց հենց որ Ասյան մի ժա-

[1] Մուսոլինիին կից իտալական գաղտնի ոստիկանություն։

մով հեռանում էր, Մարկը զիջում էր, հատկապես երբ դիմում էին նրա հպարտությանն ու կարեկցությանը։ Միևնույն հեշտությամբ էր նա մարդկանց նվիրում իր քսակն ու վստահությունը։

Կոմունիստական լագերը նույնպես չէր կարող իրեն զգալ լիակատար անվտանգության մեջ։ Պատերազմը սովորեցրել էր տիրակալներին օգտագործել ամոթալի արատները, որոնք թաքնված էին բազմաթիվ «ազնիվ մարդկանց» ընդերքում «honest Iago»[1], որոնց համար ամենաբարձր երանությունը իրենց արատները սնուցելն է, իսկ ավելի ճիշտ նրանց հաշվին սնվելը։ Նրանց, նույնիսկ իրենցից թաքնված, դավաճանելու, լրտեսելու, մատնելու հակումը վերին աստիճանի խրախուսվում էր։ Ընտրելով այն ուղին, որը գցել էր հին ցարական սրբազան Ռուսիան և քաղաքական ուխտադրժության գծով մեծ վարպետ Ինթելիջենս սերվիսը, Բրիտանական կայսրության այդ պատվարը, ֆրանսիական դեմոկրատիայի պարագլուխները գործակալ-պրովոկատորներին համարում էին հիմա կառավարական մեքենայի անհրաժեշտագույն մասը։ Նախանձելի առատաձեռնությամբ նրանք իրենց լրտեսներին ուղարկում էին բոլոր օպոզիցիոն լագերները— և ձախ, և աջ, և Հեղափոխության լագերը, և ռոյալիստների լագերը։ Տասնհինգ տարվա ընթացքում քաղաքական ոստիկանության ապարատը հրեշավոր կերպով աճել էր։ Ինթելիջենս սերվիսի օրինակով ոստիկանությունը ձգտում էր պետության մեջ պետություն դառնալ։ Արդեն դժվար չէր պատկերացնել, թե ինչպես մոտ ապագայում պրեմիեր մինիստրը հարկադրված է լինելու միևնույն ժամանակ լինել նաև պետության պրեմիեր-լրտեսը (վատթարագույն դեպքում— պարզապես Կյապպի օգնականը)[2]։ Աղատությանն ընդամենը մի ժամվա կյանք էր մնացել, որից հետո նրա վիզը կոլորեն։ Ուրեմն, օգտագործենք, Մարկի օրինակով, այդ մի ժամը։

Մարկը, որ շարունակում էր իր հարձակումները, մի անգամ չէր, որ սիրտ էր արել ընկնել տեղամաս և այնտեղ ոստիկանական բռունցքներ ճաշակել, նա չխուսափեց նույնիսկ մահափոր-

---

I Ազնիվ Յագոների (անգլ.)։

1 Կյապպ— Փարիզի ոստիկանության պրեֆեկտը, որը հռչակված էր պրոգրեսիվ տարրերի դեմ գործադրած իր դաժանություններով։

ձից— մի անգամ գիշերը, երբ նա տուն էր վերադառնում, անկյունից նրա վրա հարձակվեց պրոֆեսիոնալ խուլիգանների մի խումբ։ Բայց նրանք հաշվի չէին առել Ասյայի ատրճանակը։ Կրակոցը կանխեց նրանց, և վիրավորվածը դերադասեց պահպանել ինկոգնիտո։ Իսկ հետո, ի զարմանս ոչինչ չկասկածող Մարկի և Աննեթայի, բեմում հայտնվեց Սիլվիան։

Նրան կանչել էր Ասյան։ Այդ երկու կինը, որ իրար չէին սիրում, դաշինք կնքեցին իրենց տղայի պահպանության համար։ Սիլվիան ծանոթություններ ուներ հասարակության բոլոր շերտերում— և մամուլում, և պառլամենտում։ Նա լայնորեն օգտվում էր այն արտոնություններից, որոնց իրավունքը Փարիզը լուսյամբ մոդայի թագուհիներին է շնորհում, որոնք հռչակվել են իրենց սուր խոսքով և նրբակիրթ արկածներով— հատկապես թատամելու շրջանում։ Փարիզյան հաշակով՝ նշանավոր կանայք տարիների հետ, ինչպես գիտեն, ձեռք են բերում մի առանձնահատուկ թունդ համ ու հոտ։ Սիլվիան օգտվում էր այդ առավելություններից և, գործի դնելով իր լեզուն, նախազգուշացրեց Սրածայր աշտարակի պարոններին, որ նրանք զգուշանան և ձեռք չտան իր քրոջ տղային. որսն արգելվում է, այլապես կարող է բանը սկանդալի հասնել։ «Մարդու իրավունքների լիգան» էր ոտքի կանգնեցվել։ Ամեն ինչ, ընդհուպ մինչև ծերունի Ռոժե Բրիսսոն[1], գործի էր դրված։ (Թե Մարկն իմանար այդ, նա պատառ-պատառ կաներ Սիլվիային)։

Բրիսսոն, որ այն ժամանակ արդարադատության մինիստր էր, ողողված պատիվներով ու ոսկով, ամենահզոր ֆինանսական խմբերի երկու տասնյակ վարչական խորհուրդների անդամ էր, խմբերի, որոնք բաժանում էին իրար մեջ իշխանությունը Ֆրանսիայի նկատմամբ, ինչպես և ամբողջ աշխարհից թալանած բարիքը։ Նրա խոսքը համազոր էր ուղղակիորեն տրված հրամանի։ Բրիսսոն տառապում էր լյարդի անբուժելի հիվանդությունից, որը նրան ոչ հեռավոր ապագայում պետության հանձին շքեղ թաղում էր խոստանում։ Նա արդեն ապրում վերջացնում էր իր կյանքը, ամեն ինչից հագեցած և միևնույն ժամանակ քաղցից տանջահար. գոյությունը նրա համար ոչ մի բեռ էր, այլ նրախը րաց անդունդ, որը նա ապարդյուն կերպով փորձում էր լցնել։ Նույնիսկ պանթեոնը— նրա նվիրական երազան-

---

[1] Տես «Աննեթան և Սիլվիան» և «Մայր և որդի»։—Ռ. Ռ.

քը— չափազանց փոքր էր և չէր կարող փակել բացվածքը։ Քարի մեջ դրոշմված փառքը դա նույն մահն է։ Իսկ նրան պետք էր կյանք— այն կյանքը, որ քեզանից երկար է տարբերում։ Բայց Բրիսսոյից երկար կարող էին ապրել միայն նրա ճառերը, որոնք առաջացնում էին ձանձրույթ և լեշի հոտ էին արձակում։ Նա հիանալի գիտեր Մարկի գոյության մասին։ Այդ կենդանի էակին, իր միս ու արյամբ, տիրանալու նրա փորձերը հանդիպում էին ամենավիրավորական մերժումների, և այն էլ ոչ ուղղակի (Մարկը ոչ մի անգամ նրան չէր արժանացրել իր խոսքին), այլ նվաստացուցիչ միջնորդության միջոցով։ Բրիսսոն հիմա Մարկի նկատմամբ համարյա ատելություն էր զգում։ Նա կուզեր որդուն ջնջեր իր հիշողության միջից։ Նվ եթե նույնիսկ Մարկին ատհասարակ ջնջեին ողջերի ցուցակից, ով գիտե, Բրիսսոն հանգիստ շունչ չէ՞ր քաշի արդյոք։ Բայց Սիլվիայի միջոցով չափազանց շատ մարդ գիտեր նրա մերժված հայրության խայտառակ պատմությունը։ Նրան զսպում էին ինքնասիրությունն ու հասարակական կարծիքի առաջ ունեցած սարսափը, որի անտեսանելի հսկողությունն ինքը զգում էր։ Քանի որ նա մտադրություն չուներ Բրուտոսի դեր կատարելու, որն հայրենիքի զոհասեղանին էր բերում իր հետնորդին (այդտեղ չէր օգնի նույնիսկ ամենաճարտար հռետորությունը, հռետորական այդպիսի սխրանքը վեր էր նույնիսկ Բրիսսոյի ուժերից), նա պարտավոր էր պահպանել իր շառավղին այն թակարդներից, որոնք պետությունն էր դնում։ «Պետությունն այդ ես եմ»։ Նա իսկապես էլ պետությունն էր։

Բրիսսոն միջոցներ ձեռք առավ։ Վերջին հաշվով նա այնքան էլ վատ մարդ չէր։ Նա հաճույքով կսիրեր որդուն և ավելի մեծ հաճույքով կընդուներ նրա սերը։ Որպես պետական գործիչ նա կարող էր արատներ ունենալ։ Բայց որպես ընտանիքի հայր կցուցաբերեր որոշ առաքինություններ, նույն ձևով, ինչպես, ի միջի այլոց, նաև ֆրանսիական բուրժուաների մեծամասնությունը։ Հնարավոր է, Մարկն ու Աննետան, ընդունելով նրան, բարի գործ արած կլինեին։ Բայց Մարկն ու Աննետան մնում էին անդրդվելի։ Ծնկեք նրանց առանձնապես չգովենք դրա համար։ Անմարդկայնությունը երիտասարդության բնական հատկությունն է։ Իսկ կինը, նույնիսկ ամենալավը, երբեմն վերծ չէ չափազանց մեծ կարծրությունից։ Նա հոգու մութ անկյուններում պահպանում է շար զգացմունքներ, որոնց մասին չի

խոստովանում նույնիսկ իրեն, միայն թե վեճի մեջ չմտնի նրանց հետ։ Աննետան անկեղծորեն համարում էր, որ ինքը չի մտածում Ռոժե Բրիսսոյի մասին։ Նա Բրիսսոյին վատ բան չէր ցանկանում, որովհետև նրա համար Բրիսսոն մեռած էր, բայց հենց դա էր սոսկալին. Աննետան ենթագիտակցորեն սպանել էր նրան։ Աննետան ժխտում էր ողջերի օրը շնչելու նրա իրավունքը։ Հանցագործության մտքից ցնցվող շատ սրտեր, հանցագործություն են կատարում իրենք էլ այդ չիմանալով։ Ով այդ տեսակետից վտանգավոր են ամենամեծահոգիները, ամենաազնիվները։ Նրանք ոչ թե ուղղակի ատում են։ Նրանք ջնջում, դեն են շպրտում։ Շատ ավելի լավ է ատելությունը, քան այդ սառնասիրտ ոչնչացումը։ Նույնիսկ այնպիսի մարդը, ինչպիսին Բրիսսոն է, ընդունակ չէ դրան։ Այդքան հոգեկան ուժեր չունի։ Նրա ատելությունը, ինչպես և նրա սերը, չափազանց անհետևողական է և մակերեսային։ Բրիսսոն կարգադրություն արեց, որ Մարկին հանգիստ թողնեն։

Մարկն այդպես երբեք էլ չիմացավ այն մասին, թե ինքն ինչով է պարտական հորը և երկու շաղակրատ դավադիր կանանց. Ասյային ու Սիլվիային։ Նրանք զգուշացան Մարկին բան ասել այդ մասին։ Բայց ընդհանուր գաղտնիքը մոտեցրել էր նրանց։ Սիլվիան ամենևին էլ մտադիր չէր հրաժարվել հարազատ բունը վերադարձած այդ ճարպիկ կնոջ նկատմամբ ունեցած անբարյացակամությունից, բայց իր զգացումները դրեց հեռավոր արկղի մեջ (մեկ էլ տեսար դրանք նորից լույս աշխարհ հանելու կարիք եղավ) և որոշեց հաճախ երևալ երիտասարդ զույգի տանը։ Նրա անկաշկանդ խոսակցություններն ու հումորը Ասյայի սրտին մոտ էին։ Երկուսն էլ սիրում էին կուշտ քրքջալ, և երկուսն էլ գիտեին, որ դեռ խաղաղություն չի կընքված, բայց պինադարը պահպանվում էր աղնվաբար, դաշինքը նույնպես. երկուսն էլ պետք է պաշտպաներ իրենց Մարկին։

Այսպիսով, Մարկը շարունակում էր վաճառել և հրատարակել գրքեր ու պրոպագանդիստական բրոշյուրներ հակաֆաշիստական, հակաիմպերիալիստական, պրո-սովետական և այլն, առանց վճռականորեն որոշակի դիրքեր գրավելու այդ տարբեր մարտնչող ուժերի նկատմամբ, բայց դրա փոխարեն փորձում էր կապող օղակ դառնալ այդ բանակների միջև ու միասնական ճակատով նրանց տանել (երազա՞նք, ուտո՞պիա) ռեակցիայի հզոր ուժերի դեմ։ Ինքնըստինքյան հասկանալի է, հաջողության

նա չհասավ, եթե անգամ անդիմադրողականների և դիմադրողների, լիբերալների և ծայրահեղականների ջոկատների միջև հասել էին միասնության, ապա դա բացատրվում էր նրանով, որ ըստ վերևից տրված հրամանի նրանց բոլորին հավասար չափով ջանում էին խեղդել լռության պատմուճանի տակ։ Ոչ մի թերի մի խոսքով անգամ չէր հիշատակում նրանց, և ոչ մի գրքեր վաճառող կրպակում չէր կարելի հայտնաբերել նրանց հրատարակություններ։ Այնուամենայնիվ դրանք կարդում էին և թաքուն տարածում։ Մարկի անողորմ և բոցաշունչ տաղանդը, որ ամբացել էր պայքարի և տառապանքների մեջ, Ասյայի մտրակող հումորի զուգակցությամբ, որը չէր ստորագրում հոդվածների տակ, բայց կարողանում էր միահյուսել իր միտքը ամուսնու մտքի հետ, շուտով նվաճեց անկախ ընթերցողներին, իսկ նրանք էլ կամաց-կամաց Մարկի համար ռեկլամ արին։ Եվ ամենալավ ռեկլամը։ Նա բոցավառվում է հակառակ բոլոր խոչընդոտներին, նման այն ազդանշանային խարույկների, որոնք հնում սարքում էին բլրի գագաթին։ Ազդանշանային լույսերից սկսում էին վառվել ամենահեռավոր և ամենատարբեր երկրների կանթեղները։ Հեղեղի նման հորդում էին կամավոր բաժանորդագրվողների նամակները։ Աննետան ուրախանում էր, տեսնելով, ինչպես է լայնանում իր որդու գործունեության շրջանակը, բայց չէր ցանկանում տեսնել, թե ինչի կարող է հանգեցնել այդ գործունեությունը։ Մինչդեռ նա գիտեր, ի՜նչ մեծ է վտանգը։ Եվ իհարկե, չէր ուզում, որ իր որդին վտանգի ենթարկվի։ Բայց չէր ուզում, որ որդին խույս տա։ Եվ իսկապես էլ, հո վաղը չի վտանգ առաջանալու նրանց համար, ովքեր գործում են,— սփոփում էր նա իրեն հույսով...

Եվ, բացի դրանից, նրա մեջ գոյակցում էին, ինչպես ամեն մի ուժեղ խառնվածքի մեջ, կամքը և ֆատալիզմը («Իմ կամքը այն է, ինչ պետք է լինի։ Այն, ինչ պետք է լինի, կլինի»)։ Մեզ քշում է գետի հոսանքը։ Մեզ մի բան է մնում— բռնել նավակի ղեկը։ Ղեկը, նավակը և հոսանքը— դա ես եմ։ Թող լինի կա՜մքը գետի։

Առայժմ վտանգը դեռ հեռու էր։ Մարկի գործունեությունը դեռ անվնաս էր թվում այն երկրի համար, որտեղ նա ապրում էր։ Այդ գործունեությունը չափազանց ընդհանուր և ազնիվ բնույթ ուներ, միանգամայն ընդունելի դեմոկրատական պետու-

թյան համար՝ նրա երկերեսանությամբ հանդերձ։ Մարկի և նրա խմբի առաջին հոգսն այն ժամանակ ճնշվածների իրավունքի պաշտպանությունն էր, եվրոպայի բոլոր ծայրերից արտաքսվածների իրավունքի պաշտպանության բաստիոն դառնալու կամ իր շուրջը համընդհանուր ռեակցիայի դեմ ազատության բաստիոն ստեղծելու հոգսը։ Ֆրանսիան շնորհիվ հաղթանակի, որն ապահովում էր նրա տնտեսական գերազանցությունը և մի քանի տարի աղքատության և տենդի մթնոլորտում խեղդվող մնացած կոնտինենտի համեմատ, կարող էր թույլ տալ իրեն գաղափարական ազատության էժանագին շքեղություն։ Ավելին, օպոզիցիայի առկայությունը եվրոպայի աչքում նույնիսկ վերլականգնում էր իմպերիալիստական կապիտալիզմի քաղաքականության վարկը, նրա մանյովրանների համար շիրմայի դեր էր կատարում, որի հետևում տաքուկ անկյուն էր գտել երկիմաստ դեմոկրատիան,— վերջինս փքվում էր ազնիվ սկզբունքներից, և ինքն էլ իր ձեռքի տակ պահում ու կերակրում էր ֆաշիզմին Հարավսլավիայում, Լեհաստանում և Բալկաններում, իսկ Ֆրանսիական հողում սնում էր վարձու սպիտակգվարդիականներին։ Մարկը և նրա բարեկամներն սկսեցին նեղություն պատճառել միայն այն ժամանակ, երբ կատաղաբար հարձակվեցին այդ կեղծիքի վրա։ Բայց առայժմ նրանց արարքները ջանում էին կոծկել։ Կարգ ու կանոնի նախանձախնդիրների շարքերում պաշտոնական ճիզվիտականության բավականաչափ ջերմեռանդ պահապան շներ կային, որոնք, կյանք չխնայելով, պաշտպանում էին այդ կեղծիքը Ֆրանսիայի պատանիորեն անհաշտ և ոչ հարգալից որդիների հարձակումներից. այդպես էին պահպանում օպոզիցիայի շարքերում փրկարար երկպատակությունը։ Մի բուռ անսասանները չափազանց սակավաթիվ էին և անազդեցիկ՝ անհանգստություն առաջացնելու համար։ Հետապնդել նրանց նշանակում էր ուշադրություն հրավիրել նրանց կողմը։ Այդ պատճառով էլ հանդուրժում էին նրանց, պահելով միաժամանակ հսկողության տակ։

Բայց մարդկային ճակատագրերի հատվող ուղիները Մարկին հանդիպեցրին ուրիշ մարդկանց հետ։ Նրանցից շատերը ավելի հարուստ փորձ ունեին, օգտվում էին իրենց հեղինակությունից։ Պաշտպանելով Մարկին, նրանք իրենք էին դառնում ավելի ուժեղ՝ շնորհիվ նրա պաշտպանության։

Հենց այդ օրերին, Աննետայի, իսկ նրա միջոցով՝ նաև Մար-

կի կյանքի մեջ մտավ հին բարեկամությունը, որը թվում էր ջազուց մոռացված, մեռած, բայց որը անջատման տարիների ընթացքում ամրապնդվել էր, մաքրվել ամեն տեսակի օտար բաներից. Ժուլիեն Դավիի բարեկամությունը, առաջվա, երեսունամյա Աննետայի նախկին փեսացուի բարեկամությունը։

Աննետան մի փոքր հիվանդացել էր և տնից դուրս չէր գալիս։ Թոքերի բորբոքումից հետո, որ ռումինական ճահճներով թափառելու ժառանգությունն էր և, թվում էր, թե անհետևանք անցել է, ամեն ձմեռ Աննետայի մոտ սկսվում էր թաքնված և արտաքնապես շատ սովորական գրիպ, որ աստիճանաբար քայքայում էր նրա ամուր օրգանիզմը։ Հիվանդությունը առայժմ դեռ իրեն զգացնել էր տալիս լոկ թեթևակի բռնկումներով, որոնք Աննետային մի երկու շաբաթով տանն էին պահում։ Հարկադրված անգործության այդ օրերի ընթացքում, երբ նրա մոտ հանկարծ կարդալու, մտածելու, անցյալի արահետներով թափառելու ժամանակ էր հայտնվում, Աննետան անսպասելիորեն հանդիպեց մեռած տարիների ուղեկցին, որը, ինչպես ինքը, առանձնակի էր պահում իրեն։ Առհասարակ Աննետան աշխատում էր խուսափել նախկին ճանապարհներից, նրա գեղմից չափազանց շատ ծվենններ էին մնացել ճանապարհամերձ փշոտ թփուտների վրա— սեր, ափսոսանք, ղղջում, երազանքներ, տառապանք։ Ինչո՞ւ փնտրել դրանք։ Նրանք նման են նրբափետուր սերմերի, որոնք թռչում են օդում և այնպես են կրպչում շորերիդ, որ ոչ մի կերպ չես կարողանում մաքրվել նրբանցից։ Մեզ մոտ, փառք աստծո, հերիք է նաև այսօրվա, ամենօրվա փոշին, դրա գլխացավանքն էլ քիչ չէ, որ դեռ անցյալի փոշին էլ հավաքենք։ Ամեն մի օրն իր հոգսն ունի։

Բայց երբ մեքենան, դեմ առնելով անսպասելի խոչընդոտի, կանգ է առնում, միտքը շարունակում է պտտվել ինչպես սկյուռը անվի մեջ և, որպես կանոն, ետ է մնում։ Աննետան հանկարծ երես առ երես դուրս եկավ նախկին Աննետայի և նրա նախկին սիրեցյալի առաջ, Արիադնային լքած նրա Թեզեի՝ Ժուլիեն Դավիի առաջ։

Այդ քսան տարիների ընթացքում առաջին անգամ չէր Աննետան հանդիպում այդ անունին։ Թեև նա ժամանակ լուներ գիտական աշխատություններ կարդալու համար (իսկ երբ մի փոքրիկ ընդմիջում ես տալիս, փորձիր հետո, առանց հևալու հասնել, առաջ գնացած գիտությանը), բայց ժամանակ առ ժա-

մանակ հանդիպում էր նրա անվանը ժուռնալում կամ գրքերում, եվ ամեն անգամ կարծես ինչ-որ բան հարվածում էր Աննետայի սրտին, նրա առաջին շարժումը՝ աչքերը մի կողմ փախցնելն էր. «Ոչինչ չեմ նկատել»... Բայց հետագա օրերին ոտքերն իրենք էին նրան բերում գրախանութի ցուցափեղկի մոտ, և այդտեղ նրա հայացքը, որն այնքան անտարբեր էր թվում, ամեն ինչ նկատում էր։ Հետո նա հեռանում էր։ Եվ իր հիշողության մեջ տանում էր գրքի տիտղոսաթերթը։ Եվ հեղինակի տիտղոսները։ Նա Կոլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր էր։ Նա լավ աշխատեց... Աննետայի սիրտը կծկվում էր, բայց նա ուրախանում էր։ Նրա համար ցավալի կլիներ՝ առաջ ընկնել նրանից, ում սիրում էր։ Իսկ ժուլիենը առաջ գնաց։

Բայց ո՞ւր։ Աննետան փորձ էլ չարեց իմանալ։ Նրա մասին խոսել ուրիշների հե՞տ։ Ոչ, ո՛չ։ Աննետան ենթադրում էր, որ ժուլիենը գնում էր նախկին ճանապարհով, հետևելով իր ընտանիքի խորհուրդներին, որը պահպանում էր կաթոլիկության ոգին և հավատարմությունը ավանդույթների նկատմամբ։ Պատերազմի տարիներին Աննետան անչափ շատ էր կլանված իր սեփական գործունեությամբ ու սեփական կրքերով, որպեսզի տարբեր ժուլիենի Փարիզից հասնող խլացած ձայնը։ Եվ ժուլիենը չէր լինի, եթե մտահոգվեր այն հարցով, թե իր ձայնը խլացնում են թե ոչ։ Նա չափազանց հպարտ մարդ էր՝ որպեսզի մրցեր մի ամբողջ ոռնացող խմբի հետ։ Նա խոսում էր ոչ ուրիշների համար։ Նա խոսում էր իր համար։

Ջուտ պատահականությամբ Աննետայի ականջին հասան նրա մտքերի բեկորները, և այն էլ մեծ ուշացումով։ Այն ժամանակ Աննետան դեռ Տիմոնի մոտ չէր աշխատում։ Այդ օրը նա գրամեքենայի վրա ինչ-որ հոդված էր տպագրում։ Աշխատասենյակի դուռը բաց էր, և Տիմոնը, շարունակ ընդհատելով թելադրելը, մի քանի անգամ խոսում էր բազմաթիվ այցելուների հետ։ Հանկարծ այդ աղմուկի մեջ հնչեց ժուլիեն Դավիի անունը։ Աննետան ականջները սրեց։ Նրա լսողությունից ոչ մի բան չվրիպեց այն ամենից, ինչ նրա պատրոնն ասաց այդ «պարտվողականի» այդ «նզովյալ ողորմելի դասատուցյի» մասին՝ նրանց պրուսացված Կոլեժ դը Ֆրանսից, որը «հիմա փոխում է բեռլինյան լագուրը կրեմլյան վառ կարմրի հետ»։

— Մի՛ անհանգստացեք, ես նրա հետույքին քացի կտամ։

Առանց մատներն ստեղներից վերցնելու, Աննետան հարցրեց.

— Իսկ նա ի՞նչ է արել։

Մի քանի տող թելադրելուց հետո Տիմոնը կանգ առավ և հարցրեց.

— Դա քո ի՞նչ գործն է։

Աննետան պատասխանեց.

— Ես նրան ճանաչում և հարգում եմ։

Տիմոնի խոսակիցն սպասում էր, որ այդ անտաշ մարդը հիմա կհարձակվի հանդուգն քարտուղարուհու վրա, որը համարձակվեց արտահայտել իր դատողությունը։ Բայց չէ որ հայտնի էր, թե ինչ իշխանություն ունի մեքենագրուհին իր բոնակալի վրա։ Բռունցքի հարվածով Տիմոնը ճզմեց գրասեղանի վրա գտնվող սիգարը, նա քիչ էր մնացել խեղդվի.

— Ախ դու նրան ճանաչո՞ւմ ես։ Ախ դու նրան հարգո՞ւմ ես։ Այդ սրիկային։

Նա մի տեսակ խռխռոցով ծուխը կուլ տվեց և ավելացրեց.

— Ասենք, ես նույնպես...

Բայց հենց տեղնուտեղը իրեն ուղղեց.

— Այնուամենայնիվ ես նրա կաշին կքերթե՛մ։

Աննետան նորից կրկնեց իր հարցը.

— Իսկ նա ի՞նչ է արել։

— Թե դու նրան ճանաչում ես, էլ ի՞նչ ես հարցնում։

Աննետան զուսպ արտահայտություններով բացատրեց, որ ինքը նրան ճանաչում է, բայց շատ վաղուց է, ինչ տեսադաշտից կորցրել է։ Տիմոնն իսկույն ամեն ինչ հասկացավ։ Աննետան իր վրա զգաց նրա ծաղրական հայացքը, որ պրպտում էր հոգու խորքերում։ Բայց Տիմոնը չուզեց զարգացնել այդ թեման։ Իր սովորական կոպտությամբ, բայց առանց վիրավորական խոսքերի Տիմոնը համառոտակի պատմեց Աննետային, որ այդ «տիպը», Դավին, պատերազմի ժամանակ պացիֆիստի և մեծատուն եվրոպացու շատ անհարթ դեր էր խաղում, իսկ խաղաղություն կնքելուց հետո (ոչինչ անել չես կարող, այդպիսին է նրա արատավոր բնավորությունը) անցավ հակառակ ամպլուայի, «ատամների արանքին դանակ ունեցող մարդկանց» և «Հակաեվրոպայի» չատագովի փաստաբանական դերին (այդ տերմինի տակ Տիմոնը նկատի ուներ ՍՍՀՄ-ը)։ Իր պատմությունը նա եզրափակեց հարցով.

— Հիմա բավակա՞ն է, Հը, ի՞նչ կասես։

— Կասեմ, որ եթե նա պաշտպանել է երկու այդքան հակառակ տեսակետներ, ապա, պետք է ենթադրել, որ նրանցից գոնե մեկն ու մեկի հետ դուք պետք է համաձայնեք։

Տիմոնը կարճ ծիծաղեց.

— Դու այդպե՞ս ես կարծում։

Աննետան ժպտալով պատասխանեց.

— Ոչ, չեմ կարծում։

Աննետան հիանալի գիտեր, որ Տիմոնին չեն հետաքրքրում ոչ մի տեսակետներ։ Նրան հետաքրքրում է օգուտը։ Եվ նույնիսկ ոչ թե ինքն օգուտը, այլ խաղի պրոցեսը, թեկուզ պարտությունը։ Կարծիքներով թող սիրափվեն այդ իդեալիստ տրխմարները, այդ զինվորները, որոնց տախտակի վրա այս ու այն կողմ է հրում կողմնակի ձեռքը։ Բայց այդ դեպքում արժե՞, արդյոք, փոթորկվել նրանց դեմ։ Ոչ, մի՛ ասեք, չէ որ դա նույնպես խաղ է...

Հաճախ, Աննետայի հետ մենակ մնալով, Տիմոնը վերադառնում էր այդ թեմային, ու թեև նա գործում էր առանց որևէ նրբանկատության, նրա ծաղրանքներում երբեք չարություն չէր հնչում, նա պարզապես ուզում էր իմանալ... Եվ (շա՜տ զարմանալի բան) Աննետա Ռիվիերը, որը ոչ ոքի առաջ չէր բացում իր հոգու խորքերում քնած գաղտնիքը, ոչ միայն շատ հանգիստ տանում էր այդ ավազակի հարցերը, այլև ինքն էր ընդառաջ գնում նրա հետաքրքրությանը։ Առանց մի փոքր անդամ քաշվելու, ժպիտը շրթունքներին, ոչ առանց թեթևակի հեղնանքի Աննետան, նրան պատմեց իր չարաբաստիկ սիրավեպի մասին։ Իսկ Տիմո՞նը։ Նա ի չարը չգործադրեց Աննետայի վստահությունը։ Ճիշտ է, պատահում էր, որ Տիմոնը լռում էր, լռում, ու մեկ էլ հանկարծ որևէ կոպիտ կատակով դիպչում էր Աննետային, բայց հենց այնպես, առանց չարության։ Իսկ ինքն Աննետան առաջինն էր ծիծաղում իր վրա։ Եվ այնուամենայնիվ դա չափազանց. լուրջ թեմա է, համենայն դեպս այդպիսին էր առաջ, չի կարելի դրան կեղտոտ ձեռքերով կպչել։ Տիմոնը չէր էլ կպնում, թեև նրա թաթը ծանր էր։ Եվ Աննետայի կողմից առանց որևէ խնդրանքի Տիմոնի լրագիրը դադարեց ժուլիեն Դավիի վրա հարձակվելուց։ Նրա անունը պարզապես լռությամբ շրջանցում էին։ Տիմոնը միայն մի անգամ Աննետային ասաց.

— Բայց քո ապո՞ւշն էլ լավն է։ Գնացքից ուշանալու առաջին վարպետն է։ Դե ասա, Ռր այդպես չէ։

Աննետան «չէ» չասաց։ Իսկ պատրոնի շուրթերից լսելով, որ Ժուլիենը «ուշանալու վարպետ է», մի քիչ նույնիսկ վրեժը լուծած զգաց... Ուրեմն իրեն վրե՞ժ է պետք։ Ո՞նց թե, մի՞թե լրիվ մոռացության տասնհինգ տարիներից հետո, մոռացության, որի վրա շերտավորվել էին այնքան ուրիշ կրքեր, այնուամենայնիվ հետք է մնացել, և այն էլ այրող հետք... Մի՞թե կինը երբևէ կարող է մոռանալ իր սրտին կամ հպարտությանը հասցրած վերքը։

Բայց Աննետան ուրիշ վրեժ չէր պահանջում։ Այդ էլ միանգամայն բավական էր։ Թող գոնե մի անգամ Ժուլիենի մտքով անցած լիներ այն, ինչ նոր ասաց Տիմոնը... Թեկուզ մի երկուերեք անգամ նրա ամբողջ կյանքի ընթացքում... Ավելին պետք չէ։ Աննետան ամենևին էլ չի ուզում, որ այդ ափսոսանքը փշի նման խրվի նրա ոտքը... Մանավանդ որ նա ինքն էլ չէր ամաչում կասկածելի փոխարինողներ գտնել։

«Ասենք նա ինքն էլ, իմ խեղճ Ժուլիենը, ըստ երևույթին, ինձ համար նույնպես այն մարդու փոխարինողն էր, որին փընտրում ես ամբողջ կյանքում և երբեք չես գտնում... Փառք աստծո, որ մեզանից ամեն մեկն իր ճանապարհով է գնացել, այդպես ավելի լավ է»։

Բայց և այնպես Աննետայի համար հաճելի էր գիտակցել, որ Ժուլիենի ուղին այնքան էլ հեռու չի թեքվել իր սեփական ուղուց։

Այդ սփոփանքն, ասենք, զուտ պլատոնական էր։ Աննետան ոչինչ չնախաձեռնեց՝ Ժուլիեն Դավիին տեսնելու համար։ Ոչ մի բան չարեց՝ ավելի լավ իմանալու համար, թե նա ի՞նչ ճանապարհով է գնացել։ Միայն վերջին հիվանդության և հարկադրված ազատ ժամանակ ունենալու օրերին էր, որ նա առաջին անգամ ծանոթացավ նրա գրածներին։ Գուցե այդտեղ մեզք ուներ նաև մի ոչ մեծ տենդ, որը նպաստել էր մտքերի նման վերադարձին։

Աննետան շինծու սառը հետաքրքրությամբ խնդրեց երիտասարդ հարսին ճարել նախ Ժուլիենի մի գիրքը, հետո երկրորդը, իսկ այնուհետև էլի ու էլի («Պառկել ես անկողնում, կարդացիր ձանձրանալ»)... Հիմա Աննետան արդեն ամբողջ օրեր անց էր կացնում հույզերի երանալից խոովքի մեջ։ Ասյան, մի

քանի անգամ նկատելով սկեսրոջ հորանջն ու քնով մշուշված հայացքը, համոզում էր նրան.

— Քնի՛ր, քնի՛ր։ Ավելի լավ է քնե՛ս...

Աննետան հնազանդորեն աչքերը փակում էր, պահպանելով իր երջանկությունը։

Իսկ ի՞նչն էր այդպես հուզում, այդպես ուրախացնում նրան այդ գրքերի մեջ, այդ դիտական ու պատմական աշխատություններում, որտեղ մյուս բոլորի համար արտացոլվում էին միայն օբյեկտիվ իրականության օրենքների վերաբերյալ խորհրդածող մտքի անշահախնդիր որոնումները։ Ամենից առաջ Աննետան դրանց մեջ տեսնում էր ոգու անվախություն, որն այնքան նման չէր նախկին, իրեն ծանոթ, երկչոտ և տատանվող մտքին։ «Նման չէ՞ր»։ Նմա՞ն էր։ Եվ այն էլ ինչպե՞ս։ Աննետան, միայն ինքն Աննետան էր ժուլիենի մեջ տեսնում արտաքին տատանումների տակ ճնշված, հերոսական ճշմարտության ձգտող մտքի պոռթկումները։ Աննետան ինքն էր տաքացրել, լույս աշխարհ բերել թխսի նման իր սեփական բների տակ առած։ Եվ հիմա ճանաչում էր իր ձագուկներին, իր ճտերին, նրա ճտերին։ Նրանք քթիկով ջարդել էին կճեպը։ Իսկական ժուլիենն էր։

«Իմ ժուլիե՛նը... Ահա՛ թե նա ինչպիսին է։ Նա դուրս է եկել լույս աշխարհ... Իսկ ո՞ւմ արգանդից։ Իմ, իմ սեփական։ Ես իմ մեջ եմ կրել նրան, նա իմ ծնածն է։ Նա իմ սիրո և իմ տառապանքի որդին է։ Ճանաչում եմ ինձ...»։

Եվ ինչպե՞ս կարելի էր չճանաչել։ Դա իր ձայնն էր, իր խոսքերը։ Աննետան նույնիսկ հիշում էր, երբ է դրանք ասել նրան... Եվ տասնհինգ տարի հետո ժուլիենը կրկնեց դրանք... Ավելի հաճախ դրանք նույնիսկ խոսքեր էլ չէին, այլ այն, ինչ խոսքերից ավելի քիչ է, բայց և անսահմանորեն ավելի շատ. նրա կենդանի ձայնի հնչյունը, այն, ինչ ժուլիենն ասել էր, նրանն էր, բայց նա այդ արտասանում էր Աննետայի շուրթերով։ Նրա շրթունքները պահպանել էին այդ բառերի համը...

Եվ ամբողջ օրերով աչքերը փակ ու անշարժ պառկած անկողնում, նա լուծվում էր շնորհապարտ ուրախության մեջ։

«Ժուլիե՛ն, սիրելիս...»

Իսկ ևթե բոլոր այդ մտքերին հպարտություն. է խառնվել և նրա առաստությունը հանգեցրել է պատրանքների՞։ Պատրանքնե՞ր։ Ոչ, ոչ, Աննետան զգում էր, որ ոչ։ Այդ գիտեր միայն Աննետան։ Բայց գիտեր հաստատ։ Նրան չի կարելի խաբել... Իսկ

հպարտություն, էհ, ինչ կա որ, հպարտություն կա, մի՞թե նա ժխտում է։ Կա՝ Մի քիչ... Շատ չի՞ արդյոք։

«Հնարավոր է, որ նույնիսկ ավելի շատ է, քան ես ենթադրում եմ։ Ճիշտ է, այդ հպարտությունը, կա, նա իմ բոլոր արարքներում է, նրանց խորքում, նույնիսկ երբ ես համարում եմ, որ իմ վրայից հանել-թափել եմ բոլոր անձնականը, երբ ձգտում եմ դրան, երբ մտածում եմ. «Հիմա ես վերջնականապես մահացել եմ ինքս ինձ համար...»։ Բայց ես չեմ մեռել։ Ապա նայեք, Աննետա մորաքույրը կենդանի է... Եվ այն էլ ինչպե՞ս, ինչպե՞ս է նա պահանջում իր ունեցվածքը.... Իր Ժուլիենին... Ապա մի մտածե՛ք, Ժուլիենն ինձ հետ է ամբողջ տասը տարի, իսկ ես նույնիսկ չեմ իմացել»։

Ու թեև նա մեծացել է, միևնույն է, նա Աննետայինն է։ Աննետան մոքով էլ չի անցկացրել համեմատվել նրա հետ։ Նա հասկանում էր, թե Ժուլիենի միտքը որքան հեռու է գնացել։ Աննետան նրան հետևում էր հեռվից, մինչև ինչ-որ մի ոլորան։ Եվ չէր թաքցնում իրենից, որ դրանից այն կողմը գնալ ի վիճակի չէ։ Անչափ շատ ժամանակ կպահանջվեր հաղթահարելու համար այն տարածությունը, որտեղ գիտությունը և Ժուլիենը առաջ էին անցել իրենից այդ տասնհինգ տարիների ընթացքում։ Բայց հենց դրանում անգամ Աննետայի հպարտությունը իր համար սնունդ է գտնում... Ժուլիենն առաջ գնաց, նա դարձավ այդքան մեծ մարդ, նա՝ Աննետայի փոքրիկը։

Եվ Աննետան փորձում էր պատկերացնել, թե ինչպես կդասավորվեր նրանց միատեղ կյանքը։ Այդ մասին մտածում էր ժամերով, առանց շարժվելու, կծկված անկողնու մի անկյունում։ Նրան համակում էր քնքշությունը, թախիծը, ուրախությունը։ Երազանքներում նա իր կյանքը ձևում ու վերաձևում էր հարյուր տեսակ։

Բավակա՞ն է քնել։ Նա առողջացել է։ «Կյանքը քուն է»։ Ինչ կա որ, հնարավոր է, որ այդպես է... Միայն թե կյանքն այնպիսի քուն է, որտեղ հացը երկնքից չի թափվում, այլ այդ հացը պետք է վաստակել... Աննետան ցատկեց մահճակալից։ Ի գո՞րծ։

«Իսկ քեզ հետ, իմ փոքրիկ Ժուլիեն, մենք նորից կտեսնվենք, երբ կրկին աղատ ժամանակ գտնվի։ Թող որ դա լինի ո՛չ վաղը...»։

Աննետան վերջ տվեց Ժուլիենի մասին մտածելը։ Բայց Մարկը նկատեց.

— Ինչքա՞ն ես երիտասարդացել։

Աննետան ծիծաղեց.

— Մեզ նման մարդիկ միայն հիվանդության ժամանակ է, որ հանգստանում են...

Ժուլիենը երբեք չէր հանգստացել։ Նա մարդկային այն տեսակից էր, որոնք չեն կարողանում հանգստանալ... Նա չէր կարողանում ապրել առանց աշխատելու։ Ապրելու համար նրան ամենևին էլ աշխատելը պարտադիր չէր։ Բայց աշխատանքով նա ստեղծում էր մտքի կյանք։ Եվ մտքի այդ անընդմեջ աշխատանքը դուրը փակում էր մնացած բոլոր մտքերի առաջ։ Բայց փակում էր վատ։ Դռան փեղկերն իրարից հեռանում էին և բաց թողնում թարմ օդ։ Ժուլիենը երբեք տաքուկ տեղ չէր ապրում։

Բայց հիմա նա արդեն, անշարժ ու մրսկան, չի նստում Սեն-Սիուլպիս թաղամասում գտնվող հին օջախի մոտ, ինչպես այն ժամանակները, երբ Աննետան ճանաչում էր նրան։ Ժուլիենը դուրս էր եկել անցյալի տնից։ Պոկել ու թափել էր այնտեղ իր վրայից բուրժուական նախապաշարմունքների ծանր հագուստները։ Աննետան այդ հասկացավ, կարդալով նրա գրքերը։

Քիչ հերոսություն չպահանջվեց նրան, ֆրանսիական այդ մանր բուրժուային, այդ երկչոտ ու խղճմտանքով մարդուն, որ դեռ դուրս չէր եկել իշխողատենչ մոր հովանավորության տակից, ձեռք ու ոտքը կաշկանդված մտքի և սովորույթների դարավոր ընտելություններ հնացած հագուստով, այդ պահպանողական և կրոնական ընտանիքի բարեմիտ ժառանգորդին, որպեսզի քառասուն տարեկան հասակում համարձակվի նայել իր հոգու խորքը և աստիճանաբար, առանց գործարքի մեջ մտնելու բանականության հետ, իր վրայից թոթափի այն ամենը, ինչն առաջ հավատի խորհրդանիշ էր, իսկ հիմա նրա համար դարձել էր կեղծիք։ Այդ ժամանակ պարզվում է, որ մնացել ես մերկ, սարսափելիորեն մերկ, իսկ ինչպես հայտնվես այն մարդկանց առաջ ովքեր երկար տարիներ քեզ տեսել են կեղծիքի զգեստներով, որով նրանք ծածկել և ծածկում են իրենց վիրավորված ամոթխածությունը,— այն մարդկանց առաջ, ովքեր չեն ցանկանում նկատել աշխարհի մերկությունը և սարսափով բռնված ոգու ճշմարտությանը թզի տերև են կպցնում, ինչպես ամոթալի տեղին։

Դեպքն այս առանձնապես լուրջ էր այնպիսիների համար,

ինչպիսին Ժուլիենն է, մի մարդու համար, ով չէր պատկանում ազորմելի կարգալույծների թվին, որոնք, խզելով իրենց կապերը որևէ բանի հետ, անհապաղ պարգևատրություն են պահանջում իրենց հերոսական գործողության համար, իսկ իրենք շատ հանգիստ միանում են հարևան մրցակցող կրպակին և սպասարկում անտիկլերիկալիզմի և «ազատամտության» կրքերը։ Ժուլիենը մնաց մերկ, միայնակ, փողոցում, չար հողմերից անպաշտպան։

Դա հեշտ չէր։ Բայց այդ երկչոտ մարդը երբեք ետ չէր դառնում։

Փառք աստծո, նա ապրում էր մի ընտանիքում, որն ամենից քիչ էր հետաքրքրվում մտքի դաշտում ունեցած նրա ճակատամարտերով։ (Ահռելի մեծ զրկանք, երբ ընտանեկան օջախում չունես մի մտերիմ մարդ, որի հետ կարելի է մտքեր փոխանակել։ Բայց այդպես ավելի հանգիստ է. պատկերացրեք, որ ամեն րոպե ձեր տանը դուք հանդիպում եք ձեր մտքի թշնամիների սպասողական հայացքին)։ Մեռնելուց առաջ մայրը Ժուլիենին ամուսնացրեց, նրա համար գտնելով ոդով ու մարմնով առողջ մի աղչկա, դատարկության մի իդեալի, իհարկե, լավ օժիտով, սիրունատես ու անգույն, հիանալի մի տնտեսուհու, բայց որն աչքի էր ընկնում մտքի բնագավառին վերաբերող ամեն ինչի նկատմամբ հետաքրքրասիրության այնպիսի մի անհույս բացակայությամբ, ինչպիսին հազվադեպ է հանդիպում նույնիսկ նրա տեսակի մարդկանց մոտ։ Նա երբեք գիրք չէր բացում,— այն գրքերը, որոնք նա, որպես բարեպաշտ պանսիոներուհի, պետք է կարդացած լիներ դպրոցական տարիներին, այնպիսի ձանձրույթ էին պատճառել, որ նա ամուսնության առավելություններից մեկը համարում էր երբեք այլևս տպագիր խոսքի հետ գործ չունենալու հնարավորությունը։ Այն հանգամանքը, որ ամուսինն առավոտից մինչև գիշեր աչքում էր թղթերի վրա խոնարհված, նրան ամենևին չէր հուզում։ Տղամարդն իր գործերն ունի, որոնք նրան երբեք չէին հետաքրքրում։ Նա Ժուլիենին առանձնապես չէր էլ սիրում... բայց նաև չէր ատում։ Նրան ոչ մի տհաճություն չէր պատճառում— ավելի շատի մասին այդտեղ խոսք լինել անգամ չէր կարող— ամեն օր նրա հետ սեղանի շուրջն ու անկողնում հանդիպելը։ Նա համեղ ուտելիքի բավական մեծ սիրահար էր, իսկ Ժուլիենն այդ տանել չէր կարողանում։ Կարճ ասած, նա բավականաչափ սիրում էր ամուսնուն,

բայց (ինչպես նորմանդացիները) ոչ այնքան, որպեսզի հետաքրքրվի նրանով, ինչ տեղի է ունենում ամուսնու գլխում։ Նրա մտեսական պարտականությունների շրջանակի մեջ չէր մտնում այդ պահարանի մաքրելն ու կարգի բերելը։

Այդպես էլ նա ոչինչ չէր իմանա քառասունամյա Ժուլիենի մեջ տեղի ունեցած բեկման մասին, որը դուրս բերեց նրան ինքնահանգստացման ու այսպես կոչված «Օրինավոր մարդկանց» սոցիալական և կրոնական դաղափարներն ընդունող պասսիվության կախարդական շրջանակից, եթե բարեմիտ ընկերուհիները և նույնիսկ խոստովանահայրն ինքը ցույց չտային նրան մի պարտականություն, որն ընկած է այն քրիստոնյա կնոջ ու տիկնոջ վրա, ում ամուսինն իր օրինակով, իր սկանդալային վարքագծով հասարակության գայթակղության մեջ է գցում։ Դրան հետևեցին ողբացող տիկնոջ մի քանի արշավանքները ամուսնու արտի վրա։ Դրա հետևանքով տուժեց ընտանեկան խաղաղությունը, առանց որևէ օգուտ բերելու բարոյական թարմացման գործին. շատ սիրելի Կոնստանսը, ինչպես և պետք էր սպասել, ոչինչ չհասկացավ ամուսնու արարքից, այդ պատճառով էլ նրա բոլոր հորդորները չկարողացան օգնել դժբախտությանը։ Իսկ Ժուլիենը, նրա մտքի ազատության վրա կատարած ուղածդ ոտնձգության դեպքում, դառնում էր կոպիտ։ Այդ պատճառով էլ նա գթասրտություն չունեցավ Կոնստանսից թաքցնելու, թե որքան փարթամորեն է ծաղկում նրա հիմարությունը, երբ խոսքը վերաբերում է այդքան բարձր առարկաներին։ Ասենք, Կոնստանսն ինքն էլ այդ հասկացավ, բայց, ինչպես բոլոր հիմար կանայք, էլ ավելի ուժեղ համառեց։ Միայն աստված գիտի, ինչով այն բոլորը կվերջանար, եթե քահանան, որ շատ խորաթափանց մարդ էր, չշտապեր փակել իր հոգևոր դռները բերանը, վախենալով, որ սուրբ հավատն չարաբախտ պաշտպանը անխուսափելիորեն գործը կհասցնի մինչև հասարակական սկանդալի։ Խոստովանարանի փայտե ճաղերի արանքից լսելով անպարզ տրտունջները, որոնք ընդհատվում էին ներվային հեկեկոցներով ու խնչոցով, քահանան ջանաց չափավորել խոսքերի անկանոն հեղեղը, իսկ որ գլխավորն է— իր ծխականուհու փութաջանությունը, որն անզգուշորեն դուրս էր քաշվել օրհնված անխոհության թագավորությունից։ Պահանջվում էր նրան նորից տեղավորել այնտեղ։ Խնդիրը դժվարներից չէր, քանի որ ինքը Կոնստանսը սոսկալի ուզում էր հա-

մոզվել, որ տեր աստվածը իր վրա պատասխանատվություն չի դնի ամուսնու աղետաբեր մոլորությունների համար, որ հակառակվելով մոլորյալին, մեկ էլ տեսար ավելի սաստկացրեց նրա արատները,— և ամենալավը առ աստված աղերսելն է դժբախտի փրկության մասին։ Մնացյալ բոլորը անտծո ձեռքին է։ «Մնացյալի» տակ ենթադրվում էր. եթե աստված կամենում է, թող ժուլիենն այրվի դժոխքում... կամ թող չայրվի... Կոնստանսըն անկեղծորեն հույս ուներ, որ ավելի վատ բան չի պատահի։ Բայց և այնպես, եթե պատահի... ոչ, նա գերադասում էր այդ մասին չմտածել։ Նրան հերիք են նաև իր սեփական հոգսերը... Նկատելով, որ կինը ման է գալիս անձնազոհության պատրաստ մարդու հնազանդությամբ, ժուլիենը զղջաց և ցանկացավ մեղքը քավել, բայց երբ նա փորձ արեց բացատրել կնոջն իր միտքը ամենապարզ արտահայտություններով, ինչպիսի արտահայտություններով ուսուցիչն է բացատրում դասը յոթ տարեկան փոքրիկ աղջկան, կինը վախվորած նրան հեռացրեց իրենից, որ նշանակում էր. «Ո՛չ, ո՛չ։ Այդ բոլորը շատ հոգնեցուցիչ է»։ Հանկարծ նա, աստված մի արատցի, որևէ բա՜ն չհասկանա։ Չէ որ դա նույն բանն է, թե սառցադաշտ բարձրանալիս մարդ իրեն մի պարանով կապի խելագարի հետ, որը մանավանդ ոտի վրա ամուր չի կանգնում։ Մեծապես շնորհակա՜լ եմ, ես գերադասում եմ ինձ առհասարակ չկապել... Եհ՜ղե ժուլիեն։

Իսկ բարձրաձայն նա ասաց, որ նման բաների համար ինքը չափազանց անխելք է (նա երջանիկ էր այդ հանգամանքի համար, ավելին, հպարտանում էր դրանով... Հո իզուր չի ասվում. «Երանելի են հոգով աղքատները»)։ Եհ՜ղե ժուլիեն։ Այն մտքից, թե իբր խեղճ ամուսինը միայնակ սահում էր վտանգավոր անգունդի վրա, Կոնստանսն հանկարծ զարթավ մարմնավորված հեզություն, և նրա բարեհաճ օգնությամբ ժուլիենն սկսեց հետզհետե վայելել անդորրը, հանգստավետությունը, խոհանոցի բարիքները...

«Պետք է, վերջին հաշվով, որ այս կյանքում նա դոնե ինչ-որ հաճույք ստանա»։

Ժուլիենը չէր մոլորվում այդ հեզության իսկական պատճառների վերաբերյալ։ Բայց այսպես թե այնպես ընտանեկան օջախում խաղաղություն տիրեց։ Ճիշտ է, այդ օջախի կրակն առանձնապես չէր տաքացնում։ Բայց, մի լավ փաթաթվելով իր մտքի վերարկուի մեջ և օձիքը բարձրացնելով, ժուլիենը կա-

րող էր աշխատել, առանց վախենալու միջանցուկ քամիներից, ինչու ճակատագրից պահանջել ավելի շատ, քան նա կարող է տալ։ Մանավանդ որ Ժուլիենն ինքը փչացրեց իր կյանքը։ Դրանում Ժուլիենը համոզված էր։ Այդքան ծանր ու սևեռուն զգացումը չէր կարող էապես։ Միայն քե պէտք չէ վերլուծել այդ զգացումը։ Ինչի՞ համար։ Հատկապես հիմա։ Երջանկությունը Ժուլիենի մոտ եկավ։ Իսկ Ժուլիենն այդ երջանկության հետ վարվեց ավելի վատ, քան եթե ձեռքից բաց թողներ, նա ետ հրեց այդ երջանկությունը իր ձեռքերով։ Նա իր հարաբերությունները խզեց այն մեկի հետ, որը կարող էր իր կյանքի իսկական ուղեկիցը դառնալ։ Բայց իզուր էր Ժուլիենը ջանում հեռանալ նրանից։ Տասնվեց տարվա ընթացքում Ժուլիենի ներքին կյանքը հոսել է նրա տեսանելի կյանքից, ընտանիքից, տնից դուրս, և այդ ներքին կյանքին ուղղություն էր տալիս բացակա կինը։ Ոչ այնքան նրա նկարագիրը, նրա դեմքը (դա, իհարկե, նույնպես կար. բայց մեր գիտնականը սրտային գործերում աչքի էր ընկնում կարճատեսությամբ, և Աննետայի կերպարը, աղոտանում էր), ոչ այնքան Աննետայի կենդանի կերպարը, որքան այն հուրհրատող ակոսը, որով Աննետան ճեղքել էր Ժուլիենի գիտակցության ուղղակի միջուկը և հենց դրանով էլ փոխել Ժուլիենի ամբողջ ներքին էությունը։ 1905 թվականի այն հեռավոր օրերից ի վեր, այն ժամանակից ի վեր, ինչ վերջացան նրանց հանդիպումները, նա չէր պատրում Աննետայի ազդեցությունն զգալուց. ափսոսանքը, ղջումը աննկատելիորեն ձևավորեցին նրան ըստ այն հոգևոր օրինակի, որը համապատասխանում էր Աննետայի ցանկություններին, կամ ավելի ճիշտ, համապատասխանում էր այն ցանկություններին, որոնք ինքը Ժուլիենն էր վերադրում նրան։

Այդպիսով, Ժուլիենն իր կյանքի գերագույն ճիգով պարտական էր Աննետային, Աննետայի շնորհիվ լույսնանում էր նրա ազատագրված ոգու հորիզոնը։ Աննկատելի խմորիչը ջուրը գինի էր դարձնում, և նրա հանդարտ մտքի մեջ ամբողջ աշխարհից թափանցեցին հանդուգն սերմերը։ Նրանք առայժմ դեռ դանդաղ էին ծլում, բայց Ժուլիենն արդեն վաղուց էր իր մեջ զգում այդ ազատ եկվորների ներկայությունը, շատ ավելի վաղուց, քան այդ սկսեցին կասկածել բոլոր շրջապատողները— ընտանիքը, բարեկամները, կոլեգաները։ Ասենք նա չէր էլ շտապում որևէ բան ի ցույց դնել կողմնակի մարդկանց համար։ Նրա այդ շրջա-

նի առաջին աշխատությունները, որոնք համարյա բոլորն էլ նվիրված էին գիտական հարցերին, թեև վկայում էին անկախ հայացքների առկայության մասին, խստորեն սահմանափակված էին պրոֆեսիոնալ շրջանակներով։ Զգուշությո՞ւն։ Հարգա՞նք իր միջավայրի նկատմամբ, որին ինչպես նա գիտեր, դա անխուսափելիորեն կվիրավորի։ Թե՞ պարզապես նա չէր ծնվել որպես մարտիկ։ Նրան բնորոշ ամաչկոտության մնացորդնե՞րը, ամենանվիրական բանի մասին լռելու սովորությո՞ւնը։ Իսկ գուցե դա ավելի խորհրդավոր զգացո՞ւմ էր— ակնածալից զսպվածությո՞ւն, որ դրդում էր պահպանել այն ամենն, ինչ նվիրական է, այն ամենն, ինչ արժեքավոր է, իր և իր ներքին կյանքի երևակայական վկայի համար— նրա կիսահնարված Աննետայի համար։

Բայց, զարմանալի մի բան, նա երբեք առիթ չէր փնտրում հանդիպելու չհնարված, իրական Աննետայի հետ։ Նա նույնիսկ վախենում էր Աննետայի մասին տեղեկություններ իմանալ։ Դա այնքան էլ գովելի գիծ չէ։ Իր հոգեկան հավասարակշռությունը խախտելու վախից նա գերադասում էր չիմանալ՝ Աննետան իր կարիքն ունի՞ թե ոչ, և որքան հաճախ է ունենում այդ կարիքը դժվարին, իսկ գուցե նույնիսկ ահեղ րոպեին։ Ինչ արած, այդպիսին է չափազանց «զգայուն սիրտը», որը շրջվում է անիվի տակ ընկած շնից, որովհետև, այդ շունը ցավ է զգում», կամ «կարող է ցավ զգալ», և այդ պատճառաբանությամբ չի փորձում կապել շան ջարդված թաթը։ Մենք տեսել ենք այդպիսի տարօրինակ մարդկանց։ Բայց Ժուլիենը զզվանքով ընդունում էր, որ ինքն այդպիսի խենթություններ ունի և զգում էր, որ ինքը տարօրինակ է։ Ավաղ, ժամանակ է պետք, որպեսզի մարդ կարողանա ազատվել իր մեջ արմատացած արատներից։ Եվ, իհարկե, Ժուլիենը նրանցից վերջնականապես չազատվեց։ Անոթի հատակին մեկընդմիշտ ժանգ էր նստել, և Ժուլիենը զուր էր եղունգները կոտրատում, այն քերելով։

Բայց ամեն մարդու մեջ իր ժանգն է նստում, այդ թվում նաև Աննետայի մեջ։ Գլխավորն այն է, որ մարդու հոգում միշտ թարմ ջուր հոսի և թույլ չտա, որ կյանքի ժորանները խցանվեն։ Սրբազա՞ն ջուր, ջուր, որ հավիտենապես սրբազա՞ն է։ Ամենասոսկալին հոգու համար— կանգնած լճի հոտն է։ Գետը սրբում տանում է տիղմը։ Աննետան հոսում էր, Ժուլիենի Ռիվիե-

րը, նրա գե՛տը։ Աննետան նրան դուրս էր հանել ընդարմացու-մից, անշարժությունից, ոգու քավարանից, ինչպիսին հնազան-դությունն է, բյուրավոր մարդկային ինֆուզորիաների գորշ, անբովանդակ կյանքը։ Աննետան դարձավ ժուլիենի առաջ շարժվելու խթանը և ժուլիենի առաջ բացեց կյանքը նրա կրքերի, նրա տառապանքի և նրա դիշերում հուրհրացող բոցի հետ։

Ավելին (որքան էլ տխուր լինի, բայց դա այդպես է), այն տառապանքների մեջ, որ ժուլիենը պատճառել էր Աննետային, այո, հենց նույն այդ տառապանքների մեջ ժուլիենը քավու-թյուն գտավ։ Անարդարացի տառապանքները, որ մենք պատ-ճառում ենք որևէ էակի, կարող են դառնալ մեր հոգին հարթա-տացնող հայտնություն, եթե միայն մենք մեր մեջ ըրանք մինչև վերջը գիտակցելու ուժ գտնենք։ Հենց այդ պատճառով էլ ժու-լիենը պարտական էր Աննետային այն բանի համար, որ նա այդքան խղճի խայթ ապրելով, սկսել էր ավելի խորն հասկա-նալ մարդկանց, ավելի սուր զգալ անարդարությունը, և ձգտում էր շատերին բարություն անելով, փոխհատուցել այն չարիքը, որ նա պատճառել էր մեկին։ Աննետան վճարել էր նրա փոխարեն։

Ժուլիենը պատկանում էր հին ֆրանսիական բուրժուազիա-յին, որը բաղմաթիվ կեղտոտ արատներ ուներ և զուրկ ձեռ-քեր, բայց որը կրոնի աստիճանի է հասցրել պարտքերը վճարելու անհրաժեշտությունը և ամենից շատ վախենում է մեռնել, չհասցնելով պարտքատերերի հետ հաշիվները փակել։ Երբ այդ-պիսի բուրժուազիայի ժառանգորդը զբոսնում է դաշտերում, նրա համար չեն դայլայլում թռչունները սիրո և գարնան մա-սին։ Նա լսում է միայն լորի ձայնը, որը ճչում է.

«Պարտքերդ վճարի՛ր։ Պարտքերդ վճարիր»։
Ժուլիենը վճարեց։

Ո՞վ կարող էր դրան հավատալ։ Եվ նա ինքը գիտե՞ր արդյոք այդ։ Հենց այդ պարտքերի վճարման համար էլ նա պատերազ-մի ժամանակ հայտնվեց, հակառակ իր կամքի, այն սոցիալա-կան միջավայրում, որը նրան ֆիզիկական ու բարոյական նող-կանք էր ներշնչում։

Սկզբում նա խորասուզվեց իր մեջ, պահպանում էր իրեն, մի տեսակ կարծես շունչը պահած լիներ, ուժեր կուտակելով իր անկախությունը հաստատելու համար, և այդ ամբողջ ժամա-նակ անտեսանելի Աննետան չէր հեռանում նրանից։ Նա խոսելու

անհրաժեշտություն չուներ։ Քայլում էր առաջ։ Ժուլիենը չէր փորձում իմանալ, ճանապարհն ուր է տանում։ Միայն մի ճանապարհ կար. այն, որով նրա կողքին քայլում էին այդ գեղեցիկ ոտքերը։

Կամաց-կամաց իր աշխատություններում Ժուլիենն սկսեց թեքվել դեպի գիտության պատմությունն ու փիլիսոփայությունը։ Եվ հակագործողության մեջ լրացվող գործողության կրկնակի պրոցեսում Ժուլիենի ոգին ազատվում էր նրա ձեռք ու ոտքը կապող կաթոլիցիզմի կպչուն լիանաներից և միևնույն ժամանակ խորանում էր գաղափարների թավուտը, որոնք տանում էին ոչ միայն կրոնի սահմաններից այն կողմ, այլև այն ժամանակվա գիտության և բանականության սահմաններից այն կողմ։ Նույնքան վտանգավոր մի արշավ, որքան և Վասկո դա Գամայի ճանապարհորդությունը, և նույնպես շրջանցող Փոթորիկների իր հրվանդանը։ Նավը դուրս եկավ բաց ծով, մի ծով, որտեղ ոչ մի նավահանգիստ չկար. հիմա դու հոգսի և ծովային հոսանքների խաղալիքն ես։ Դու հրաժեշտ ես տվել երկրին։ Սրանից հետո քո հայրենիքը դառնում է օվկիանոսի հարթությունը կամ խորխորատները նրա։

Կաթոլիկը, լատինացին, երբ նա հավատում է և երբ դադրում է հավատալուց, խարիսխ չի գցում կասկածների ջրերում, կանգ չի առնում այն բոլոր մարդկանց նման, ովքեր «բողոքում են» կամ «բողոքել են». ինչպես վաղ ժամանակներից ընդունված է գերմանացիների և անգլոսաքսերի մոտ։ Նա գնում է դեպի խորքը, դեպի անտակ խորքը։ Փոթորկի մեջ ընկնելով, նա չի ջանում անդունդի վրա կախված տախտակամած կառուցել իր համար, ինչպես «ռեֆորմատորները» (հաջող անուն է նրանց համար, ովքեր ժխտում են միայն կիսով չափ) կամ նորդյան բանականության մաքուր կամ գործնական, մետաֆիզիկները։ Նա միայնակ է, նա մերկ է, և նա լողում է։ Եվ նա ուրիշ պաշտպան չունի, բացի մի զույգ ձեռքերից։ Նա գիտի. վաղ թե ուշ ինքը հատակ է գնալու։ Բայց նա չի ազոթի հանուն փրկության։

Ժուլիենը նետվեց անողորմ և հիասթափված բանականության խորխորատը, բանականության, որը ոչ մի կոմպրոմիս չի ճանաչում։ Մարդկանց մեծամասնության նման, որոնք չափազանց երկար են զգացել հասարակության կողմից իրենց վրա դրված հավատի և հարկադրանքների բեռը, նա հավատի և հարկադրանքների նկատմամբ ատելության ոխ էր պահում

արտում, իսկ արդարացիության չափն անցնող ատելության։ Նա, թերևս, ընդունակ էր ճանաչելու այդ զգացումի չափազանցությունը, բայց անընդունակ էր հրաժարվել վրիժառությունից։ Նա ինքն էլ դառնությամբ իրեն կոչում էր «Հուլիանոս Ուրատզրուժ»։ Եվ դատաստան տեսնելու այդ պահանջը, որն սկսել էր զգացվել նրա գրվածքներում, մի տեսակ ապաշխարանք էր, որը նա ինքն էր դրել իր վրա, նախկին ժուլիենի վրա։

Դրա առաջին նշանները երևացին նրա «Փիլիսոփայական փորձերի» տողերի միջև։ Եվ կրոնն առաջինը հաշկացավ, որ նշանը հենց իր վրա են բռնել։ Նա այդ մասին հայտարարեց իր լուր ամենքի, աճապարեց իրեն հասցեատեր ճանաչել։ Ժուլիենը պատասխանեց նոր հարվածների կարկուտով։ Ու թեև մի քանի խիստ ընդհարումներից հետո նա խելամիտ համարեց եւս քաշվել ու սսկվել (հետայսու ուղղամիտ մտքով հաղվադյուտ միաբանությամբ մի խոսք անգամ չի ասի Դավիթ աշխատանքների մասին), խզումը վերջնական եղավ, և այն ողջույնները, որոնք ժուլիենը փոխանակում էր իր նախկին ծանոթների հետ, պատրանքների համար տեղ չէին թողնում։ «Համընդհանուր մորթիզացիան դեռ պատերազմ չէ», ասում էին ավդուրները. բայց, հայացքով հանդիպելիս, նրանք չէին ծիծաղում. պատերազմը մոտենում էր, պատերազմն արդեն հեռու չէր, նա սպասում էր իր ժամին։

Եկավ մի ուրիշ պատերազմ—իսկականը, 1914 թվի պատերազմը։ Նախապատերազմյան շրջանում կուտակված բոլոր կրքերը այդ պատերազմի մեջ հիանալի միջավայր գտան բազմանալու համար։ Ատելության բազմաթիվ տեսակների մեջ բավարարություն էր փնտրում ոչ միայն արտաքին թշնամու նկատմամբ եղած ատելությունը։ Եվ, ինչպես միշտ, թաքցրած կասկածները, չարությունը, ատելությունը րարեկամությունից շատ ավելի խորաթափանց դուրս եկան։ Հնարավոր է, նույնիսկ ավելի խորաթափանց, քան ինքը ժուլիենն էր։ Քանի որ նա այն ժամանակ դեռ չէր գիտակցում, որ իր մեջ հեղափոխության ոգի է կրում։ Ավտոբուսների միալար հոնդյունի տակ, որոնք վինչոցով սլանում են գորշ ճակատով շենքերի երկու շարքի միջև, մենախոսություններում իրեն արտահայտող բողոքը աստիճանաբար մեղմանում է, ինչպես ոսկրաթաղանթի ցավը։ Մի բան չկա, որ մարդ ատամներով կառչի։ Խաբուսիկ հանդարտություն։ Ժուլիենը հիանալի հասկանում էր, որ նրա անկանխակալ քննադատությունը,

ծակել անցնելով մեռած հավատի առաջին թաղանթը, ծակեց նաև հասարակության նեխած թաղանթը։ Նա՛ կարող էր ավելի խորը սուզել քննադատության սայրը՝ թարախապալարը բացելու համար։ Բայց նա չսուզեց։ Նա հապաղում էր ընդունել, որ ամբողջ հասարակական կարգը և նրա բարոյական հիմքերը դատապարտված են կործանման։ Նրան հարկ էր հենց նույն րոպեին ձեռնամուխ լինել ուրիշ կացարանի որոնումներին, բայց, քառասուն տարի մնալով ամուր նստած, նա սարսափով էր մտածում տեղափոխությունների մասին։ Այնուամենայնիվ նա գիտեր, որ վաղ թե ուշ ստիպված կլինի հրաժարվել նախկին բնակարանից։ Բայց, որպես իսկական ֆատալիստ, սպասում էր. ահա կվերջանա պայմանագրի ժամկետը, և այն ժամանակ տեղափոխվելուց արդեն չես խուսափի... Անցյալի քարավան-սարայում նաև պահեստ կար, որի բանալին նա չէր համարձակվում ոչ մեկին տալ։ Նա աշխատում էր այնտեղ չնայել. նա փակել էր դուռը, փակել էր փակոցափեղկերը, ծածկելով դարավոր փոշին. խելամիտ չէր լինի ներս թողնել այնտեղ ցերեկային լույսը և ձեռնամուխ լինել հավաքել-մաքրելուն։ Այդ պահեստը հայրենիքն էր։ Տասնչորս թվականի ֆրանսիացիների համար դա միակ անվիճելի աստվածությունն էր։ Մյուս բոլոր աստվածները ենթարկվում էին կյանքի ընդհանուր օրենքներին, մահվանն ընդհանրապես և, մասնավորապես, ծերության, հիվանդությունների, զոհասեղանները քայքայող որդնածության։ Այլևս անսասան աստվածներ չէին մնացել։ Բացի նրանից, բացի հայրենիքից՝ նվ հավատացյալների համար, և «ազատախոհների»։ Իսկ հատկապես վերջիններիս համար։ Քանի որ, բացի հայրենիքից, այդ դժբախտները տեղ չունեին գնալու։ Հիմա հասկանալի է աշխարհիկ գիտության մեծ մունետիկի, ծերունի Լևիսի տագնապալից, սրտաշարժ, աղիողորմ ճիչը.

«Բայց եթե դուք ինձանից խլեք հայրենիքը, էլ ի՞նչ կմնա ինձ։ էլ հանուն ինչի՞ եմ ես ապրել»։

Օ՛, այդ ծերունիները, որոնք ընդհուպ մինչև մահվան ժամը զնդանված են բլուրների շատ սիրելի, բայց անչափ նեղ շարքով, բլուրների, որոնք այդ ծերունիների համար փոխարինում են հորիզոնի ամբողջ անծայրածիրությունը։ Նրանք կարող են քայլել միայն այդ հողի վրա, միայն այդ գերեզմանների, որտեղ տասնհինգ հարյուրամյակների ընթացքում թաղել են իրենց մեռելներին։ Եթե դուք տատանեք նրանց «հայրենիքը», դա համա-

զոր կլինի երկրաշարժի. ամեն մի մարդ, ով ստորերկրյա ցընցումներ է զգացել, նրան ծանոթ է այդ առանձնահատուկ, անարտահայտելի սարսափի զգացումը։ Հենակետը, միակ հուսալի հենակետը հանկարծ գնում է ոտքերիդ տակից, և այլևս ուրիշ ոչինչ չկա։ Ժուլիենը, ինքը լինելով գերզգայուն սեյսմոգրաֆ, որսաց երկրային ընդերքների նախազգուշացնող մռնմռոցը և նախապես զգաց ազոտ տաղնապը հոգու, որն ահա ուր որ է իր հենակետից կդրկվի։ Նվ նա փութաջանորեն հայացքը հեռացնում էր։ Նա կանգնած էր անշարժ, լուռ։ Նա տեղից չէր շարժվում և վախենում էր հանդգնորեն հավել վերջին կուռքին։ Բայց նրանցից մի քանիսը, որոնցից ինքը հեռացել էր, հատկապես կրոնավորները, որոնք սովոր են կարդալ մարդու հոգին, և առաջին հերթին նրա նախկին խոստովանահայրը, խորամանկ ծերուկը, վոլտերի բերանի նման հսկայական անատամ բերանով (միայն նրա աչքերում չկար վոլտերյան հեգնանքը), խորամանկությամբ կամ ուժով թափանցում էին հոգու կացարանը։ Նվ առաջին րոպեից, երբ խռովությունը դեռ նոր էր ծնունդ առնում, տեսան, որ խռովարարը խելամտություն չի ունենա ընտրություն կատարելու fas և nefas[1]-ի միջև, որ վազ թե ուշ նա չարամիտ փորձ կկատարի մեծ ֆետիշի նկատմամբ, և, համբերատարությամբ ձեռքերը խաչելով վարաչայի երկար թևքերի մեջ, նրանք սպասում, նրանք դարանակալում էին աղետը։ Ավելի սրակաս խորաթափանց դուրս եկավ ժողովուրդը, նրա կարծիքով Ժուլիենն անվնաս աղատախոհ մարդ էր, որը գավաճանել էր խորանին հանուն մասոնական ժողովարանի և ծառայության էր հավաքագրվել պահպանողական, նացիոնալիստական, բուրժուական, աշխարհիկ և բոլորին պարտադիր բանականության։ Նրանք Ժուլիենի առաջ բացեցին Կոլեժ դը Ֆրանս-ի դռները, ինչպես նաև բարոյական և քաղաքական գիտությունների Ակադեմիայի դռները, սպասելով այն նշանակալից օրվան, երբ նրան իրենց գիրկը կընդունեն միակ ճանաչված Անմահները,— այդ մեծ ընտրողներից ոմանց ընտրությունն արդեն կանգ էր առել Դավիի վրա. Ժուլիենի ծեր ուսուցիչը, որի մանկականորեն սրտաշարժ բացականչությունը մենք բերինք վերևում, հավատացնում էր, որ մի երկու-երեք տարուց հետո սյարոն Դավիին անպայման կընտրեն,— ծերուկի համար դա պատվի գործ

---

1. Թույլատրելիի և անթույլատրելիի (լատ.)։

էր դարձել։ Հայտնի չէ ինչու, Ծերունի Լևիսը Ժուլիենի նկատմամբ թուլություն էր զգում։ Նա Ժուլիենին ճանաչում էր դեռ որպես փոքրիկ լիցեիստ, հետո որպես իր ֆակուլտետի ուսանող և, չջանալով առանձնապես թափանցել նրա մտքերի մեջ, կապվեց այդ պատանու հետ, որի լուրջ և ազնիվ հայացքը նրա համար հաճելի ապաստարան էր դասախոսության ժամանակ։ Այդ բարեկամական հայացքների թռուցիկ փոխանակությունը ժամանակի ընթացքում փոխվեց հայրական կապվածության մի կողմից, և լուռ երախտագիտության՝ մյուս։ Ծերունին Ժուլիենի մեջ տեսնում էր իր հոգևոր ժառանգորդին։ Եվ Ժուլիենը, լցված երախտագիտությամբ ու հարգանքով, չգիտես ինչու, ոչ մի անգամ չմտածեց.— իսկ ինչպե՞ս կպատասխանի ինքը ուսուցչի սպասումներին։

Երբ պատերազմն սկսվեց և երբ ինտելիգենցիան (և նրա առաջին շարքերում համալսարանային պրոֆեսորական կազմը) հավաքագրվեց հայրենիքի դրոշների տակ, պաշտոնական բանականության հին փորձված ծառայողը, համալսարանի մարշալը միանգամայն բնական կերպով իր սիրելի աշակերտին հանձնեց առաջատար դերը Զենքի նոր տեսակի իր ստեղծած ջոկատում. պատմության մեջ առաջին անգամ ոգին միլիտարիզացվել էր և ուղղարկվել գործարանները, որոնք ինտելեկտուալ զինամթերք էին արտադրում և թնդանոթներ։ Պատմությունը, գիտությունը, պերճախոսությունը— բոլորը գործի էին դրվել։ Ավելի լավ կլիներ Ժուլիենին ստվերում թողնել։ Ժուլիենը միայն ուրախ կլիներ և ձեռնպահ կմնար սկզբունքների քննարկումից, որոնց տակ ավագ բարեկամներն ու կուլեգաները նրան ստիպում էին ստորագրել։ Բայց Ժուլիենից պահանջել, որ նա հսկիչի դե՞ր խաղար, որ նա հազորդակից դառնար ռազմական արտադրության գաղտնիքներին։ Ինչպիսի անզգուշություն։ Նրանք վարվում էին յուրովի անկեղծ։ Այդ քաջ մարդիկ այնքան էին լեցուն իրենց ազգայնական կրքերով, այնքան էին համոզված, որ հենց դա է ճշմարտությունը որ կա... Իսկ երբ ճշմարտությունը, կարծես հակասում էր նրանց, նրանք համարձակորեն փակում էին այդ ճշմարտության բերանը կամ նրան ստիպում բարբառել այն, ինչ իրենք կամենում են։ Բավական էր նրա եղունգների տակ թեթևակիորեն փուշ խրել և ձեռք ու ոտքը կապել (Հո զուր չէ Սորբոնը իր նախնիների մեջ ունեցել արվեստի և գիտության այնպիսի մարդկանց, որոնք կարողանում էին

«կանխակալությամբ հարցաքննություն» վարել, խոշտանգելով նրանց, ումից պահանջվում էր «ճշմարտության» դուրս կորզել)։ Ժուլիենն այդ արվեստի մեջ փորձ չուներ։ Նա ականջ էր դնում ճշմարտության ձայնին և չգիտեր, ինչ է նշանակում «կանխակալությամբ հարցաքննություն»։ Գերմանական տեքստերն ուսումնասիրելով, նա միամտորեն դրանք շարադրեց այն ձևով, ինչպես դրանք իսկապես հնչում էին։ Բայց Ժուլիենից այդ չէին սպասում։ Սկսվեց բանավեճը։ Քանի որ այդ բանավեճը հանգեցրեց նրա կոլեգաների բացահայտորեն հակառակ եզրահանգումների հետ բախվելուն, Ժուլիենի հակառակորդները համախմբվեցին։ Նրանք արտահայտվում էին անթերկմտորեն, խիստ և կոպիտ։ Թթե ինտելիգենտին գազազեցրիր, անզգուշաբար կպչելով նրա խոցելի տեղին, նա հասնում է ոչ թե կարմիր շիկացման, այլ ճերմակ շիկացման (իսկ դա, ինչպես հայտնի է, շիկացման բարձրագույն աստիճանն է)։ Երբ Ժուլիենը լսեց, ինչպես է մեկնաբանում փաստերը իր կոլեգաներից մեկը, նրա շրթունքները սփրթնեցին, և, ափը խփելով սեղանին, նա բացականչեց.

— Չէ որ դա նենգափոխում է։

Ինչ աղաղակ բարձրացավ այդ ժամանակ... Իսկ չէ որ նա, ում համար նախատեսված էր ապտակը, դեռ այսօր առավոտյան Ժուլիենի սիրելի և հարգելի բարեկամն էր, մի նշանավոր պրոֆեսոր, որին գնահատում էին ոչ միայն նրա պատկառելի գիտելիքների, այլև անկաշառության համար։ Ժուլիենը հենց նույն րոպեին ներողություն խնդրեց, նա կցկտուր սկսեց շարադրել իր մտքերը, աշխատելով մեղմացնել դրանք։ Բայց ապտակի հետքը չհաջողվեց սրբել, վիրավորվածի դեմքը կանաչեց, և նրա աչքերում հանկարծ բոցավառվեց անհագատելությունը։ Ինտելիգենտը երբեք չի ներում իր եղբայրակցին, որը տեսել է այն, ինչ ցանկալի չէ, որ տեսնի ինքը՝ հանցավորը. չէ որ նա հիմա, ինչ էլ որ ուզում է անի, հաստատ գիտի—անդուրեկան մի բան գոյություն ունի։ Ժուլիենը, որ տեղի ունեցածից ճնշվել էր ավելի շատ, քան ինքը վիրավորվածը, տուն գնալիս կրկնում էր.

— Ախր նա ազնի՛վ մարդ է։

Ժուլիենը դա գիտեր, նա պատրաստ էր գլխով երաշխավորել այդ... Խոշոր գիտնական... Մի կյանք, որի համար խորթ է

ամեն մի շահախնդրություն... Եվ ճշմարտության պաշտամունք... Ժուլիենը դառնորեն ժպտաց.

— Ահա նա, ազնիվ մարդկանց ճշմարտությունը։

Նրա համար այդ բոլորը հավասար էր կործանման։ Նրա մեջ իրեն զգացնել էր տալիս մաքրակրոնական դաստիարակությունը։ Ամենահամոզված մաքրակրոնները հենց ամենից հաճախ են կապերը խզում կրոնի հետ։ Թող նրանք երևակայեն, թե այդ կապերը խզում են հանուն ազատության նկատմամբ ունեցած սիրո, ոչ, նրանք խզում են դեպի մաքրությունն ունեցած սիրո համար, դեպի ճշմարտությունն ունեցած մաքուր, կոմպրոմիս չճանաչող սիրո համար։ Ժուլիենը մտածում էր ճշմարտությունը երևան հանել ազատ բանականության մարդկանց մեջ։ Բայց այդ ճշմարտությունն այնտեղ էլ չկար... Եվ, մի կողմ շպրտելով հարգանքի այն վարագույրը, որով նա ինքն էր պարուրել այդ «ազնիվ մարդկանց», Ժուլիենը նայեց իրերի խորքը։ Այդ օրը նա շատ բարեկամների թաղեց։ Բայց դամբանական խոսք ասելու համարձակություն չունեցավ։ Նա այնքան խորն էր հարգում այդ բարեկամներին, որ նրանց անկումը հանդիսացավ իր սեփական անկումը։

Ամենաանջալին եղավ ծեր ուսուցչի հետ գժտվելը։ Սովորական, առօրյա գժտություն։ Այդպես սովորական պայմաններում մեռնող հայրն է մահվան մահճից լուռ և վշտալի հանդիմանությամբ նայում որդուն։ Մերունին հանդիսատ հրաժարվեց զեկուցագիրը կարդալուց, որը նրան բերել էր Ժուլիենը (իր կամքից անկախ ընկնելով ճշմարտության հետքի վրա, Ժուլիենն արդեն չէր կարող կանգ առնել որոնումների մեջ, բայց առաջվա նման որսը տիրոջն էր տանում)։ Մերունին միայն ասաց.

— Ոչ, ոչ, ես չեմ ուզում։ Միտք չունի...

Եվ, ծերունական ձեռքը Ժուլիենի ձեռքին դնելով, ավելացրեց.

— Բարեկամս, դուք ինձ վշտացնում եք... Լա՛վ մտածեք... Մի՛ կործանեք ձեզ... Դուք արհամարհում եք այն ամենը, ինչ մենք ձեզանից սպասում էինք... Մեր ընդհանուր պարտականությունը...

Ժուլիենը չէր զիջում.

— Մեր ընդհանուր պարտականությունը, ընդհանուր մեզ, գիտության մարդկանց համար— ճշմարտությանը ծառայելն

է, ինչ գնով էլ այդ ուղում է լինի։ Չէ որ դուք ինքներդ եք այդ սովորեցրել։

Մերունին օրորեց իր մեծ գլուխը, և նրա ուռուցիկ, կարմիր երակներով ակոսված աչքերում հուրը բոցավառվեց.

— Չի կարելի ճշմարտությունը բաժանել հայրենիքից։ Ճշմարտության գործը և հայրենիքի գործը— միևնույն բանն է։

— Շատ լավ, համաձայն եմ։ Այդ դեպքում թող հայրենիքը չխուսափի ճշմարտությունից։

— Հայրենիքը՝ ամենից առաջ,— ասաց Մերունին։— Մենք բոլորս նրան ենք ծառայում։

— Բոլորս, բայց ոչ...

Մերունին առարկությունը մինչև վերջը լսեց.

— Բոլորս։ Եվ ամեն բանով, ինչ մենք ունենք։ Ամեն բանով առանց բացառության։

Ուսուցիչն ու աշակերտը լռեցին։ Մերունու աչքերում բոցավառվող հուրը հանկարծ հանգավ։ Նա խուսափում էր Ժուլիենի հայացքից։ Նա սպասում էր, թե Ժուլիենը կսկսի խոսել, թե Ժուլիենը կասի այն խոսքերը, որոնք ինքը հույս ուներ լսել նրանից։ Բայց Ժուլիենը լռությունը չէր խախտում, և այդ ժամանակ Մերունին, ետ գցելով իր խոշոր գլուխը, ծեր, մեծ առյուծի գլուխը, բարձրացրեց ծանր կոպերը, որոնց նայելիս ակամայից պագաղի կավե բրիչ ես հիշում։ Խավար, արցունքաստվող աչքերով նա դիմահար նայեց աշակերտին քնքուշ, անհամարձակ, պահանջկոտ։ Ժուլիենը ճնշված էր և կարող էր միայն ասել.

«Ես չեմ համարձակվի տալ այն, ինչը ինձ չի պատկանում, այն, ինչին պատկանում եմ ես ինքս,— ճշմարտությունը»։

Բայց նա այդ չասաց. ինչի՞ համար նոր անօգուտ ցավ պատճառել։ Եվ այնուամենայնիվ պատճառեց։ Մերունին կարդաց Ժուլիենի մոքերը։ Ծանր կոպերը փակվեցին, գլուխն ընկավ կրծքին։ Շունչ առնելով, վշտաբեկ Մերունին դժվարությամբ ելավ աթոռից, բռունցքները հենելով սեղանի եզրերին։ Ժուլիենը նետվեց դեպի նա, որպեսզի օգնի։ Բայց անճարպիկ, մի տեսակ փայտե շարժումով Մերունին, առանց Ժուլիենին նայելու, մի կողմ հրեց պարզած ձեռքը։ Եվ դուրս եկավ, ետ չնայելով, գլուխը կռացրած ու կորացած մեջքով,— նրա ծանր քայլերի տակ հատակի տախտակները ճռճռում էին։ Նա մահացու վերք էր ստացել։

Եթե այնպիսի մարդը, ինչպիսին Ժուլիենն է, մեկին վերք է հասցնում, նա տանջվում է ավելի շատ, քան ինքը տուժողը. չէ որ ուրիշի վերքը չես բուժի, ինչպես քո սեփականը։ Սեփական մաշկը կսպիանա, սեփական վերքը կլավանա, բայց ինչպե՞ս սպիացնել ուրիշի վերքը։ Այդ վերքի ցավը քո ցավն է դառնում... Այնպիսի մարդու մոտ, ինչպիսին Ժուլիենն է, նույնիսկ այդ ցավի համառությունը չէր կարող կասեցնել բանականության անխափանելի ընթացքը։ Բանականությունը համառորեն առաջ է շարժվում վիրավորների, դիակների վրայով։ Ժուլիենը չէր կարող հրամայել իր մտքին.

«Կանգ առ։ Եվ մոռացիր բոլորը, ինչ տեսել ես»։

Նա չէր մոռանում ոչինչ։ Դա մի յուրատեսակ մտավոր այլանդակություն էր։ Նա շարունակում էր առաջ գնալ։ Բանավեճերի չէր ձգտում և գործում էր առանց աղմուկի։ Ուզում էր միայն մի բան՝ պարզել իր համար ամեն ինչ և առիթ-չէր փընտրում ուրիշներին լուսավորելու. նա հիմա բավական լավ գիտեր, որ նրանք, ուրիշները, չեն ուզում լուսավորվել։ Բայց նրա ներկայության մթքից, նրա լուռ և թշնամական հսկողությունից, նույնքան լուռ դատապարտումից (արդեն փաստերից չէր կարելի խույս տալ) նրանք լցվում էին մի ցասումով, որը Ժուլիենի զսպվածությունից տասնապատկվում էր՝ ենթարկվելով կույր բնազդին, նրանք ջանում էին դուրս քաշել նրան լռության շրջանակից։ Ամենից շատ դրա համար ճիգ ու ջանք էր գործադրում նրա բարեկամը— մեռած բարեկամը, երդվյալ թշնամին, որի այտին հավիտենապես այրվելու էր ապտակի հետքը։ Ժուլիենին թույլ չտվին լուր։ Ջափազանց մեծ շռայլություն չէ՞ արդյոք ոչ մի խոսք չասել և մտածել ազատ։ Նրան ստիպում էին ստորագրել ընդհանուր դեկլարացիան։ Նա չստորագրեց։ Այն ժամանակ բացատրություն պահանջեցին նրանից։ Ժուլիենին ստրսափեցնում էր իր հավատամքը հրապարակավ խոստովանելու անհրաժեշտությունը։ Բայց նա չէր ցանկանում խույս տալ պատասխանատվությունից։ Եվ նա բացատրվեց։ Բացատրվեց այնքան աներկիմաստ, այնքան ճշգրիտ արտահայտություններով, որ լսելով դրանք, չափազանց անշրջահայաց կոլեգաները շատ բան կտային, միայն թե դրանք նորից ետ խրեն նրա կոկորդը։ Կրքերից կուրացած նրանք չափից ավելի ջանքեր էին գործադրել։ Նրանք ուզում էին թակարդի մեջ քաշել թշնամուն, իսկ նրա մեջ ընկան իրենք։ Եվ չարիքի փոքրագույնը կլիներ, եթե նրանք

կարողանային ամեն ինչ սուսուփուս անել։ Բայց սկանդալի հոտն առան ժուռնալիստները և մեկը մյուսի հետևից սկսեցին հայտնվել հերետիկոսական վտանգավոր ելույթի պատճենը վերցնելու։ Գրաքննության բյուրոն ավարտեց **սկսածը**. նա ինքը բացեց մուտքը դեպի վառոդի պահեստը, ինքը բորբոքեց կրակը, որպեսզի բարձր գիտական, բարձր հայրենասիրական կորպորացիան կարողանա ավելի խիստ նշավակել իր մոլորյալ եղբայրակցին։ Ժուլիենի ելույթից գրաքննիչի անճարպիկ ձեռքով կորված ու հանված էր մի քանի պարբերություն, ոչ ավելի համարձակ, քան մյուսները, բայց կրճատումները միայն բորբոքում էին ընթերցողների երևակայությունը, նրանք կասկածում էին, թե այդ տեղերում աստված գիտե ինչ պետական դավադրություն է եղել։

Կարդալով իր սեփական հոդվածը, Ժուլիենը ցնցված էր մյուսներից ոչ պակաս։ Նրա բնածին երկչոտությունը հարցնում էր.

«Բայց ո՞վ։ Ո՞վ ասաց այդ խոսքերը։ Ո՞վ ինձ ստիպեց ասել այդ խոսքերը»։

Եվ հանկարծ նա լռեց։ Խոնարհվելով նրա ուսին, Աննետան կարդում էր Ժուլիենի հետ միասին։ Ժուլիենը վեր կացավ աթոռից և մի քանի անգամ ետ ու առաջ արեց կաբինետում։ Հետո նստեց։ Եվ ժպտաց.

«Ի՞նչ է ուզում կինը... Թող լինի, ինչ լինելու է»։

«Կինը» հասավ իր ուզածին։ Ժուլիենը խզեց— նույն ձևով, ինչպես կինն էր խզել, կապերը հին հասարակարգի հետ։ Եվ հիմա Ժուլիենը մենակ է մնացել— մենակ «այդ կնոջ» հետ։ Ժուլիենը սենտիմենտալ մարդ էր, բայց և այնպես հասկանում էր, որ այդ «կինը» ընդամենն ստվեր է, իր մտքի ստեղծագործությունը։ Իսկ նա իրական էակի պահանջ ուներ, մսով և արյունով, որպեսզի պայքարի այդ իրական աշխարհի դեմ։ Սակայն նա նույնիսկ չէր երազում այդ կնոջ հետ միանալու մասին։ Ջափազանց ուշ է։ Նա պարտիան տանուլ տվեց։ Ժուլիենը պատկանում էր ստոիկների այն տեսակին (աստված պահի նրանց, այդ ստոիկներին, ողջունում եմ նրանց, բայց աչքս նրանց ապուրի վրա չեմ տնկել, թող իրենք ուտեն ու շրթունքները լիզեն), որոնք պարտությունից չեն վախենում և պատրաստ են հաշտվել նրանց հետ, միայն թե ոչինչ չնախաձեռնեն։ Ժուլիենը հպարտորեն հետացավ բնատնկական օջախի անապատը, ոլտեղ, բարիբախտաբար, անդադար հրն-

ում էր մանկական ուրախ ձայներ։ Մենք հետագայում կլսենք այն, բայց առայժմ նա, դուստրը, դեռ այն հասակում է, երբ խաղում են,— չէ, ոչ թե տիկնիկ, նա չէր սիրում խաղալ, ինչպես մյուս փոքրիկ աղջիկները,— նա խաղում էր իր, տղայական խաղերը։ Ինքնին հասկանալի է, լինելով «պացիֆիստի» աղջիկ, նա երազում էր միայն բռնցքահարվածների ու կապտուկների մասին։ Նրա անունը Ժորժետտա էր, իսկ հարկ էր, որ Ժորժ կոչեին։ Առայժմ դեռ երեխայի ներկայությունը տանը արտահայտվում էր միայն անընդհատ աղմուկի ու շխկոց-թխկոցի մեջ։ Ոչ մի շաբաթ չէր անցնում առանց ապտակի։ Մայրը Ռախիլի նման տանջվում էր։ Հայրը լուռ էր։ Նա ոչ մի անգամ դատերը չնախատեց։

Իսկ այնտեղ, տան պատերից դուրս ավելի ու ավելի լայն էր տարածվում թշնամական դատարկության զոնան։ Ժուլիենի ակադեմիական կարիերան անփառունակ վերջացավ։ Ակադեմիայի մեծ ընտրողները որոշեցին հետապնդել Անմահների թվի մեջ մտցնել միայն իրենց համախոհներին՝ մինիստրներին, մարշալներին կամ այն ինտելիգենտներին, որոնք, նույն ձևով, ինչպես նրանք, ի փառս այդքար գործի դավաճանեցին ճշմարտությանը։ «Հանուն հավատի, թագավորի և հայրենիքի»— սա Միխայիլ Ստրոգովի նշանաբանն է... Մեր ուսուցիչը և հովանավորը չէր պատասխանում աշակերտի սրտագին նամակներին և նրան վերադարձրեց, առանց թերթերը կտրելու, բրոշյուրը, որտեղ Ժուլիենը զուսպ և հարգանքով, միայն թե չվիրավորի այլախոհներին, զարգացնում էր (հենվելով փաստաթղթերի վրա) այն միտքը, որ պատերազմի պատասխանատվությունը կրում էն երկու կողմերը, որ ինտելիգենցիայի պարտականությունը չուտափույթ խաղաղության համար ամեն ինչ անելն է։ «Ակսիոն ֆրանսեզի» խրամատավորված մարտիկները, որոնք գործում էին առանց փոքր իսկ վտանգի իրենց համար «թիկունքային բարոյականության պաշտպանների» դերում, մի երկու անգամ Կոլեժ դը Ֆրանսում նրա դասախոսությունների ժամանակ կատավային համրգ սարքեցին։ Բարեբախտաբար, պրոֆեսիոնալ համերաշխությունը, որը, պարզվեց, ավելի կենսունակ էր, քան նույնիսկ հայրենասիրական կրքերը, տաճարը պաշտպանեց պղծիչներից ճիշտ այնպես, ինչպես դարի կեսին սրբազան պատերը պաշտպանում էին տաճարում թաքնված հանցագործին։ Նրա համար այդ կուրսը թողեցին, բայց մի քանի շաբաթով փա-

կեցին։ Իսկ այդ ժամանակաընթացքում Ժուլիենին հասցրին մոռանալ «Ակսիոն ֆրանսեզի» ջարդարարները նոր օբյեկտ գտան հարձակումների համար։

Երկրորդ սկանդալային ելույթը տեղի չունեցավ։ Բայց դա Ժուլիենի ծառայությունը չէր։ Իմաստնացած գրաքննչությունը դրանից հետո բաց չէր թողնում նրա և ոչ մի տողը։ Նույնիսկ նրա «Հնագիտական հուշագրությունները» կասկածի տակ էին առնվել։ Այդ հուշագրություններից ոչ մի գլուխ չհայտնվեց մինչև պատերազմի վերջը։ Իսկ այն առաջարկությունները, որ թափվում էին քաղաքական օպորտիզիայի կուսակցություններից, որոնք անհամբերությամբ ուզում էին ստանալ գիտնականի անունն իրենց կազմակերպությունների և ժողովների համար, ընդ որում սակավաթիվ ու հետապնդվող, Ժուլիենը մերժեց. չափազանց կենսունակ դուրս եկավ նրա մեջ բուրժուայի հպարտության հետ բազմապատկած ինտելիգենտի հպարտությունը։

Տարիներ ու տարիներ են պահանջվելու, որպեսզի դեն գցվի օսլայած նեղ օձիքը։ Եվ նույնիսկ սեղմված վիզն ազատելով այդ լծից, նա դեռ երկար էր իրեն զգում ավելի հարմարավետ զրքերի հետ առանձնացած, քան մարդկանց բազմության մեջ։ Բայց արիությունը նրա բանականության հատկություններից մեկն էր. ոչինչ նրան չէր կարող շեղել ճանապարհից։ Եվ ինքը Ժուլիենը խոնարհաբար ու ազնվորեն առանց ուրախության, բայց և առանց տրտունջների, գնում էր իր ողու հետևից ամենուրեք, ուր նրան տանում էր այդ ոգին և եթե կարիք լիներ, կբարձրանար բարիկադի վրա։

Բայց տասնհինգից տասնինը թվականների միջև ընկած ժամանակաշրջանում նա դեռ շատ հեռու էր գտնվում բարիկադներից։ Նա լռում էր, նա խորհրդածում էր։ Նրա շուրջը գոյացած դատարկությունը մի առավելություն ուներ— բավական ազատ ժամանակ էր տալիս նրան։ Մտավոր միայնակությունը ոչ միայն Ժուլիենին հարստացրեց, այլև նրան արիություն տվեց։ Նա սովորեց յուրա գնալ առանց մերձավորների։ Իսկ այդ մերձավորները, որոնք աշխատում էին Ժուլիենին զրկել օդից, բայց փաստորեն նրան դրդում էին միայն բարձրանալ գագաթները, որտեղ թարմ շունչ է փչում, այդ մերձավորները համբերությունները կորցնում էին, տեսնելով իրենց անհաջողությունները, և նրանց թշնամական զգացումները էլ ավելի էին բորբոքվում։ Ջուր էին նրանք չանում խլացնել սկանդալը։ Նրանք հասան

համրության, բայց համրությունը դա դեռ մահ չէ, և սկանդալն ապրում էր։

Ժուլիենի դառնագին և այրող խոհերի առարկան ոչ միայն գաղափարների աշխարհն էր, այլև մարդու կյանքի փորձը, որը ջարդել էր նրա կողերը, բարենպաստ գտնվեց նրա ոգու համար։ Այդ փորձը լուսավորեց Ժուլիենի համար մարդկային բնավորությունը և մարդկային լաբիրինթոսների ծուռումուռ ճանապարհները։ Ժուլիենը դուրս պրծավ դրքային գիտելիքների շրջանակից։ Մի շարք տարիների ընթացքում օր օրի հետևից նա ավելի ու ավելի խորն էր թափանցում հոգու կատակոմբները, ենթագիտակցականի խճողամատությունները, որն իր համար անցուդիներ է բացում գետնի տակ, որի մակերեսով ընթանում է բարբառած միտքը և ամենօրյա կեղծիքը։ Նա հետազոտում էր դրանք մենակ, չդիմելով այն ջահին, որից օգտվում էին հոգեվերլուծության գիտնական այրերը։ Նա ուներ իր լապտերը։ Սեփական կրոնականության մնացորդները նրան որպես բանալի տվին հազվագյուտ մի նկրըմրոնում, որը, թերևս, ավելի շուտ նման է գալանային հոտառության, քան մարդկային բանականության, բայց ուղղությունն ստանում է բանականությունից և նրան էլ ենթարկվում է։ Իսկ արդյունքը՝ մտքերը եղան, որոնք բավական երկար թափառելով գետնի տակ ու ելք փնտրելով, ճեղքեցին խավարի ծածկույթը և ցայտեցին կերպարների արտեզյան շիթով երկրի կեղևի այն ամենաբարակ շերտերից, ուր նշանաձողեր են դնում հետախուզիչները։ Նվ պարզվեց, որ այդ հզոր ալիքները, որոնք հաճախ ճողփում են խորքերում և քնակեցված են խորհրդանիշներով (իրար նկատմամբ օտար, ինչպես կույր ձկները), պոետ-փիլիսոփայի ծնունդ են հանդիսանում։ Ժուլիենն ինքը դա միանգամից չհայտնաբերեց։ Քանի որ նա զուրկ էր այն բանի ճաշակից, ինչը պոեզիա անվան տակ համընդհանուր հիացմունք է առաջացնում, նա անկեղծորեն համարում էր, որ իր հոգին փակ է արվեստի լույսի համար, և չէր ափսոսում դրա համար։ Իսկ ինչ փիլիսոփայությանն է վերաբերում... այն ժամանակից ի վեր, ինչ Ժուլիենն սկսեց կասկածով նայել կրոնին, նա երևակայեց, որ ինքը հիմքեր առհասարակ չունի, և ծաղրի էր ենթարկում դրանք նորից ստեղծելու բավականության ապարդյուն ճիգերը։ Նա անկեղծորեն հավատում էր, որ ինքը ոչ մի բանի չի հավատում... ինչ կա որ, հնարավոր է, որ իսկապես էլ այլևս չի հավատում։ Իսկ ստեղծել մի՞թե չի

նշանակում հավատալ։ Ստեղծել կարող է ոչ միայն ճակատը, այլև մեջքը։ Կեցության ձայնը հրամայում է. «Սկսիր...»։ Եվ ճակատն սկսում է ստեղծել։ Մարմնի խորքում եղած ուժերի համեմատությամբ, ճակատը ոչինչ է, միանդամայն դատարկ բան է։ Երբ ես ասում եմ. «մարմին», ես ասում եմ. «հոգի» և ամբողջ դպրականությունը նրա։ Ժուլիենի մեջ այդ ուժերի պաշարն ավելի շատ էր, քան թվում էր նրան։ Մեղանից յուրաքանչյուրի մեջ դա շատ առատ է։ Բայց նրանք քնած են, մենք վախենում ենք նրանց արթնացնել։ Եվ վախեցողների մեծամասնությունը միանդամայն իրավացի է։ Որովհետև հետո զըսպելը դժվար կլինի։ Վայ այն երկրին, որտեղ սանձերը բաց են թողնված։ Սակայն Ժուլիենը նույնիսկ գնալով իր ղրքի հետևից, կարողանում էր ղեկավարել նրանց։ Նրա կուլվածությունն ունեցող ինտելիգենտը համարձակորեն կարող է իր մակույկը բաց թողնել փոթորկվող ջրերի մեջ. ղեկը նա երբեք բաց չի թողնի։

Քննադատական բանականության և ներըմբռնման այդ բացառիկ հավասարակշռությունը լույս աշխարհ բերեց «Ժողովրդի երկխոսությունները Ավենտինյան բլրի վրա»[1], որտեղ Հոգու ժողովուրդը, կապերը խզելով Քաղաքի հետ, վիճում է և հուզվում։ Եվ վերջին խոսքն այս անգամ պատկանում է ոչ թե այն մարդուն, որը «Ստամոքսի» ուժն է ներկայացնում։ Ուզում ես ուտել— գնա աշխատիր։ «Ապա ցույց տուր ձեռքերդ։ Ինտելիգենտներ, գիտնականներ, նկարիչներ, գրողներ, հաշիվ տվեք։ Ի՞նչ արիք այն հարյուր տարիների ընթացքում, երբ դուք հասարակական կարծիքի արքաներն էիք (կամ լակեյները)։ Դա շքահանդես էր Դոմիեի[2] ոգով։ Թանաքամանի և գրչի հերոսներ, ապա բե՛մ բարձրացեք։ Բայց իսկական ողբերգությունը տեղի ունեցավ հանդիսատեսի հոգում, որը ըղվանքով երեսը շրջեց այդ պատկերից,— ժողովրդի հոգում, որն իր վրանը խփեց Քաղաքի պարիսպներից դուրս, գիշերային խավարում վիթխարի խարույկներ վառեց և նայում է, թե ինչպես է բարձրանում բոստ-

---

1. Որպես պատրիկների ճնշման դեմ բողոքի նշան պլեբեյները Հռոմում գնացին Ավենտինյան բլուրը (մեր թ. ա. V դար)։ Ըստ ավանդության, նրանց համոզեց վերադառնալ պատրիկ Մենենի Ագրիպպան, պատմելով նրանց մի առակ, որտեղ հասարակությունը համեմատվում է մարդկային մարմնի հետ, որի ստամոքսը (պատրիկները) և ձեռքերը (պլեբեյները) չեն կարող առանց մեկը մյուսի յոլա գնալ։

2 Դոմիե Օնորե (1808—1879)— ռեալիստական ուղղության նշանավոր ֆրանսիական նկարիչ և ծաղրանկարիչ։

բագուն ծուխը դեպի երկնքի անծայրածիր անհունը, որտեղ աստղերը թռչկոտող կայծերի են նմանվում։ Ոգին առանց առաջնորդողի կատարեց իր Հեղափոխությունը, այն ժամանակ, երբ ինչ-որ տեղ հեռու Եվրոպայում ժողովուրդը սեփական բռունցքների ուժով կատարում էր իր Հեղափոխությունը։ Բայց ոգին փաստեր չէր ճանաչում և չէր ձգտում ճանաչված լինել— Ժուլիենն այդ խոհերն ի լուր աշխարհի չէր հայտնում։ Նույնիսկ այն բանից հետո, երբ եկավ պատերազմի և դրաքննության վերջը և դժվար չէր հրատարակիչ գտնելը, նա իր աշխատությունները արկղում էր պահում. նրա համար նողկալի էր դրանք համընդհանուր քննության դնելու միտքը։ Հնարավոր է և այն պատճառով, որ այն ժամանակ նա ինքն իրեն կտեսներ օրվա անողոքաբար աչք ծակող լույսի տակ։ Իսկ այն րոպեից, երբ ցերեկային լույսը թափանցեց տան մեջ, նրա առաջ դռներն արդեն չեն փակի։ Վերջ խավարին... Եվ խավարի վերջը եկավ։ Բայց դեռ ծառայակամորեն հապաղում է կիսախավարը, որն այնքան հաճելի է մտքի մարդկանց համար։ Վերջ ռեմբրանդտյան լուսաստվերներին, որտեղ անչափ զգայուն աչք ծակող անտեսանելի արևը սենյակի ամենահեռու անկյունն է թափում թավշյա-նարնջագույն ցոլքերը... Արևը թափանցում է տուն։ Վրա է հասնում գործողության պահը։

Ժուլիենը ձգձգում էր այն րոպեն, երբ դռներն ստիպված կլինի բացել անկոչ հյուրի առաջ։

Հետպատերազմյան շրջանում նա հրատարակեց միայն իր խոշոր աշխատությունները փիտության պատմության վերաբերյալ։ Ժուլիենը գրանք համարում էր օբյեկտիվ աշխատություններ։ Բայց նրա հզոր անհատականությունը հասունացել էր մենության ընթացքում, պրկվել էր ծանր տարիներին, ինչպես աղեղնալարը, և հիմա Ժուլիենը ինքն էլ այդ չիմանալով ամեն գլխում պողպատյա նետեր էր ուղարկում, որոնք ոչնչացնում էին մեր ժամանակի, բոլոր ժամանակների կեղծ մտքերը։ Իսկ քանի որ նա ինքն էլ բավականաչափ ներծծվեց այդ կեղծիքով, նշանը բռնեց նաև իր վրա։ Բայց ո՞վ էր աղեղը լարում։ Նա ինքը։ Նոր Ժուլիենը, նոր մարդը, որը ձգտելով ազատվել, ձեռքերը պլոկելով արյունլվա արեց։ Հաղվածը հասավ մտավոր կյանքի ամբողջ դարաշրջանին, մահացող հասարակարգի ամբողջ սերընդին, և այդ հասարակարգը հաստատեց, որ հարվածը հասցրված է։

Հաստատեց լռելյայն, վախենալով հասարակական ուշադրությունը բևեռել նետաձգի վրա։ Եվ երիտասարդությունը, որը ժամանակ ու ցանկություն չունի փորփրելով հասնել հատորներում ամփոփված ճշմարտությանը, հատորներ, որոնք տաճարի նման վիթխարի են և ի ցույց են դնում իրենց որմահեցերը (ես նկատի ունեմ ամենապատկառելի դոկումենտացիայի նիգուկները), այդ երիտասարդությունն անցնում էր կողքից, նույնիսկ առանց ետ շրջվելու։ Ասենք, եթե նա շրջվեր էլ, ի՞նչ կհասկանար նա։ Իսկ հասկանալով, մի՞թե կընդուներ։ Առաջին հետպատերազմյան տարիներին ոգու հերոսների մեծ սերունդը, Շպիտելերի և Թոմազ Հարդիի[1] նման, ընտելանալով հպարտ միայնությանը, որը կարողացավ հերոսական պեսիմիզմով ու արիությամբ նայել ողբերգական իրականության երեսին արդեն հույս չունենալով այն վերափոխելու, ննջարկվեց կատաղի հալածանքների։ Շվեյցարիան, որ տանջանքներով այնքան աղքատ է, թունոտ ծաղրանքներով ողողից քանաստեղծին, «Օլիմպիական դարնան» հեղինակին։ Ստոկհոլմը, որն այնքան շռայլ է Նոբելյան մրցանակներ շնորհելու մեջ, այդ մրցանակին չէր արժանացնի Թոմազ Հարդիին։ Այդ մարդիկ կատաղեցնում էին իրենց անվհատ անշահախնդրությամբ, որն «իր համար հրանություն էր վայելում» անողոք ճշմարտության մեջ։ Նրանց դատապարտում էին էգոիզմի համար, որն ընդունում է մեր անհուսալիորեն նողկալի աշխարհը և, հաղմաորեն դասավորելով իր կյանքը, փառք նվաճելով, ուղիներ չի փնտրում այդ աշխարհը բուժելու համար։ Եվ ոչ ոք չէր նկատում, որ այդ մեծ ժխրունիներին համարյա ամբողջ կյանքում տանջել է անարգված արդարության միտքը, որ նրանք ստիպված են եղել հաստատակամորեն պաշտպանվել տառապանքներից և որ եթե նրանք, Շպիտելերի նման, ծածկվել են անտարբեր և ամբարտավան ծաղրի զրահով, ապա չէ որ նույն ձևով վարվում էր նաև Տիմոն Աթենացին, որը մարդկության նկատմամբ ունեցած իր սիրո մեջ խաբված դուրս եկավ... «Durchaus»— «Հակառակ ամեն ինչի», Պրոմեթեոսի և Հերակլեսի խոսքերը, որոնք իրենց հավատը կորցրել էին այն մարդկանց նկատմամբ, ում համար նրանք զոհաբերում են իրենց կյանքը...

---

1. Շպիտելեր Կարլ (1845—1924)— շվեյցարական գրող և փիլիսոփա, «Օլիմպիական դարնան» հեղինակը։
Հարդի Թոմազ (1840—1928)— նշանավոր անգլիական գրող։

Ժուլիենը սնվել էր այդ դառը սննդով, այդ նիցշեական պե-սիմիզմով հին առյուծների, որոնց ծիծաղեցնում է աշխարհը։ Սակայն նա պատկանում էր ուրիշ սերնդի, որը կես ճանապար-հին կանգ էր առել անգործունյա մտքի այդ մեծ ճգնավորների և հետպատերազմյան երիտասարդության միջև, որի գործողու-թյունը մտքից առաջ էր անցնում, միայն թե անդունդը լցնել։ (Բայց այդ երիտասարդների ուժերից վեր էր անդունդը լցնելը։ Նրանց մարմինները, հոգիները կփլվեն կընկնեն այդ անդունդի մեջ...)։

Նրանց նման Ժուլիենն սկսեց տեսնել այդ անդունդի խորքե-րը, մարդկային գոյության խորին հիմքերը։ Բայց այդ տեսու-նակությունը նա ձեռք բերեց ոչ թե այն բեկումային հասակում, երբ մարմինն ու ոգին դեռ թույլ են, դեռ նոր են ձևավորվում։ Կմախքը նրա արդեն բավական ամրացել էր, և Ժուլիենը չջարդ-վեց, չկոացավ այդ ոչնչի առաջ։ Նա աներկյուղ նայում էր մարդկության մռայլ ճակատագրին և խավարը լուսավորում չանթերով ոգու, որն արարում էր սեփական ճշմարտությունը, սեփական գեղեցկությունը, սեփական բարիքը։ Ժուլիենը դրանք զգում էր իր կողքին, նա ուրախությամբ իրեն պատում էր նը-րանց ծածկույթով, չափազանց հստակորեն տեսնելով անդունդը, որի եզրից ինքը կախված էր,— ինքը և այն ամենը, ինչ նա սիրում էր։

Իսկ նա ի՞նչ էր սիրում։ Ո՞ւմ էր սիրում նա... Նա միայնակ էր, նա կորցրել էր մարդկանց նկատմամբ ունեցած իր պատ-րանքները, նա այդ մարդկանցից մի կողմ էր քաշված և մոտ չէր թողնում նրանց... Այո, այսօրվա օրը այն է, ինչ մեռնում է, այն է, ինչ մեռնելու է վաղը... Եվ նա մտածում էր, ապրում և արարում ոչ այդ դատապարտվածների համար, ոչ այսօրվա մարդկանց համար։ Բայց նա, ով արարում է, մարմնով լինի այդ թե հոգով (քանի որ դա միևնույն բանն է), նա իր մեջ է կրում ապագայի մարդկանց։ Ինչպե՞ս կարող էր նա չսիրել այդ մարդ-կանց։ Ժուլիենն ուղարկում էր նրանց խավարի մեջ։ Այդ նրանց էր վիճակված լցնել անդունդը։

Մեր մեծ ճգնավորը, որն անվախորեն միտք էր ծնում, նույ-նիսկ ինքն այդ չիմանալով, ստեղծում էր ապագա, ինքն այդ չիմանալով, նա բանվոր էր մարդկանց և ժողովուրդների չինա-րարության վրա, որոնք այդ պահին աշխատում էին նոր-կար-գեր, նոր աշխարհ կերտելու համար։ Եվ ավելի ուշ, երբ նա այդ

գիտակցեց (նրա կաբինետի խաղաղությունը խուժած արտաքին իրադարձություններից հետո), հասկացավ, որ արդեն հավաքագրվել է Հնդավոխության բանակը։ Մի ամբողջ տասը տարի այդ «տարերային հեղափոխականը» հանուն հեղափոխության իր սրղպատյա նետերով մահացու խոցում էր **Բշնամական** միաբը։

Դեռ այն ժամանակ, երբ նա միայն կիսով չափ էր իրեն հաշիվ տալիս այդ մասին, Աննետան, հիվանդությամբ գամված անկողնուն, կարդալով նրա գրքերը, ամեն ինչ հենց առաջին հայացքից հասկացավ։ Ուրախությունը ողողեց նրա սիրտը, որտեղ ոչ մի կերպ չէր ուզում ծերանալ հին սերը և նրա կուրծքը լցվեց, ինչպես լցվում է կերակրող մոր կուրծքը։ Աննետան ծնեց նրան, ով իրեն սիրում էր։ Իր ժուլիենին... Նետաձգին...

Այդպիսով, հին բարեկամները հայտնվեցին համարյա իրար կողքի։ Բայց նրանց նոր հանդիպումը, ըստ երևույթին, երբեք տեղի չէր ունենա, եթե մի զույգ երիտասարդ ձեռքեր նրանց չհրեր միմյանց մոտ. «Դե առաջ, առաջ գնա»— մի զույգ ուժեղ աղջկական ձեռքեր, որոնք հմտացած էին գնդակ նետելու մեջ։

Բարի ոգուն, պատանի էլֆին, որն աշնանային դիշերվա երազի կախարդական անտառում քսան տարվա բաժանումներից հետո միացրել էր երկու սիրահարներին, պատիկ Պեկի հետ հարաղատեցնում էր միայն մի հատկություն—կենսուրախությունը։ Ճիշտ է, աղջիկը նույնպես աշխույժ էր ու ճարպիկ, և մարմինը նրա այնքան ճկուն էր, որ, ետ ընկնելով, նա հեշտությամբ էր ձեռքերով բռնում կրունկները։ Բայց նա անտեսանելի գլխարկ չուներ, ի՞նչ գլխարկ։ Եթե ձեր գիտենը խոսել իմանար, նա կտնքար այդ աղջիկ ոտքերի տակ։ Եթե մեր չարաճճիի ներքաննները ինչ-որ բանի էին կպչում, ուրեմն այդ բանը դառնում էր նրա սեփականությունը, յուրաքանչյուր քայլը կարծես թե հաստատում էր. «Իմն է»։ Հողն իմն է, կյանքը նույնպես իմն է։ Իսկ ամեն ինչն «իրենն» էր հայտարարում երկարատև տղայի պես ամուր, կլոր գլխով, մաղերը կարճ կտրած, կուրծքը տափակ, ուսերը լայն, մկանուտ ձեռքերով, նեղ կոնքերով, շատ սպիտակ սրունքներով և փոքր-ինչ ծռաթաթ ոտքերով մի աղջիկ։ Ժուլիենի աղջիկը։ Ժորժետտա անունով։ Բայց ավելի լավ է Ժորժ կոչեք նրան, կոչեք տղա։ Ուզածդ րոպեին նա պատրաստ է վիշապի հետ կռվի բռնվել։ Եվ իհարկե, մի կուշտ կծիծա-

զեր, տեսնելով, թե ինչպես է իր կրունկի տակ գալարվում վիթխարի մողեսը... ծիծաղել նա կարողանում էր, իր աշխարհ գալու հենց առաջին օրից նա կարողանում էր ծիծաղել։ Միայն աստված գիտի, որտեղ էր նա այդ սովորել։ Նրանց մոայլ կացարանում հայրը, մայրը և տատը սկզբնական շրջանում զարմանքից քար էին կտրում, և նույնիսկ հիմա, իր ժորժետտային ունենալուց հետո, քսան տարի ժուլիենն զգում էր միևնույն հիացմունքը, նույն ձևով ամաչում էր իրենից և նույն ձևով էլ շարունակում էր անհանգստանալ.

«Իսկ եթե հանկարծ այդ հրաշքը դադարի՞»։

Քանի որ դա հրաշք էր, Բնությունը ժուլիենին զգալ էր թողել ծիծաղելու ունակությունից։ Եվ, լսելով դատեր ծիծաղը, ժուլիենը զգում էր, թե դա ինչ զեղեցիկ է, ինչ լավ է։ Ո՞վ էր առաքել նրան այդ պարգևը։ Ժուլիենն անընդհատ կրկնում էր, որ ինքն այդպիսի պարգևի արժանի չէ։ Եվ իսկապես էլ դրան արժանի չէր, եթե տանջվում էր արժանի և անարժան պարգևների մտքից, կարծես կեռնեխը տանջվում է այդպիսի հարցերից։ Նա պարզապես համարում է, որ լավ բան է խաղողը։ Ժորժը համարում էր, որ կյա՛նքն է լավ բան։ «Քսքս...»։ Եվ նա նետվում էր հրամանը կատարելու— բռնում էր... Ո՞վ կարող էր մտածել, որ ավերակներով ծածկված նույն այն դաշտում, որտեղ, նվնվալով, ժուլիենի սերնդի մարդիկ հավաքում էին իրենց ջարդված տաշտակի բեկորները, երիտասարդ ձագուկը կարող է խաղող գտնել։ Չէ՞ որ ավագներից ոչ ոք ցույց չտվեց ճանապարհը։ Ժորժը գնում էր ձենակ։ Բավական էր նայել քայլող ժորժին, իրանը փոքր-ինչ առաջ է թեքված, ինչպես մրցավազողինը, արմունկները սեղմված են կողքերին, ձեռքերը պարզված են առաջ, պատրաստ ճանկելու այն ամենը, ինչ հանդիպի ճանապարհին, բերանը կիսաբաց, շնչառությունը ռիթմիկ բարձրացնում է կրծքավանդակը, իսկ սպիտակ, այժմ արևից սևացած դեմքին վառվում են շատ վճիտ աչքերը, նրանք ոչինչ ճանապարհին բաց չեն թողնի, և ոչինչ չի խոսվի նրանց հոգեկան անդորրը։ Հարստորեն օժտված լինելով ֆիզիկապես ու հոգեպես, նա հրաշալի կերպով զարգանում էր, առանց շտապողականության, առանց ավելորդ խղճի խայթի և անակընկալների։ Բարեբախտաբար, բնությունն ինքը օժտել էր նրան զարմանալի անթափանցելիությամբ— հատկապես հայկական տան մթնոլորտի համար։ Աղջկա գանդատներ ու խրատ-

ներ չլսելու ունակությունը մորը հուսահատության էր հասցնում. դա ոչ թե բարի կամքի բացակայություն էր, այլ ավելի վատ մի բան— պարզապես անտարբերություն։ Ժորժը չէր լսում այն, ինչն իրեն ձանձրացնում էր։ Այդ ֆիզիկական անզգայությունը ամեներին էլ չէր բացառում սրտի խանդավառությունը։ Պատահում էր, մայրն ամաչեցնում էր նրան, նախատում, հետո հարցնում էր. «Հասկացա՞ր Հասկացա՞ր, ինչ ասացի»։ Ժորժետտան քրքիջով ընկնում էր մոր վիզը և այնպիսի մի կրքով համբուրում նրան, որ այդ բարի կնոջ ձեռքերը թուլանում ու կախվում էին,— դե ասացեք, մարդ ինչպես նախատի այսպիսի աղջկան, թեև միանգամայն պարզ է. այս անգամ էլ ժամանակը զուր է վատնված հորդորանքի ու խրատների համար։ Գոնե մարդ հասկանա, ի՞նչ է կատարվում այդ աղջկա մեջ։ Բայց մոր համար նա մնում էր որպես մի «գազտնարան», որի շեմից այն կողմը մայրը ոտք դնել չէր կարող։ Նա չգիտեր, Ժորժն ինչ է մտածում կրոնի մասին— որն ամենանվիրական բանն էր նրա մոր համար։ Ժորժը, առանց հակառակվելու, գնում էր պատարագի, աղոթքներ էր կարդում և նույնիսկ ժամանակ առ ժամանակ մոր թախանձանքով մտնում էր խոստովանարան՝ իր սպիտակեղենը պարզաջրելու համար, իսկ եկեղեցուց գալիս էր մի այնպիսի անհոգ տրամադրությամբ, կարծես դպրոցից էր վերադառնում կամ թենիսի կորտից. մեղքերը նրան առանձնապես չէին տանջում։ Բայց ի՞նչ էր նա մտածում։ Ինչ էր մտածում նա այն բառերի մասին, որոնք կարդում էր աղոթագրքում, ինչ էր մտածում ավետարանի մասին, Հիսուս Քրիստոսի մասին, կույս Մարիամ աստվածածնի մասին, եկեղեցու մասին, աստծո և նույնիսկ, անդրշիրիմյան կյանքի ու հարության մասին։ Այդ իմանալն անհնարին էր։ Բանն այն է, որ Ժորժը պարզապես այդ մասին չէր մտածում։ Այդպիսի բաները նրան չէին հետաքրքրում...

«Օ՜, աստված իմ, դե, իհարկե, նա, ինչպես և բոլոր մարդիկ, մտածում էր, որ առջևում մեռնել կա։ Բայց այդ դեռ այնքա՜ն է հեռու։ Եվ այն էլ մեռնում են միայն մի անգամ։ Իսկ ապրում են հարյուր հազար անգամ, ապրում են ամեն րոպե։ Եվ ժամանակ չկա վերջի մասին մտածելու համար։ Ասենք, ինչ միտք ունի։ Մենք ի՞նչ գիտենք այդ մասին... իհարկե, կա եկեղեցի, որը ձեզ ասում է. այսպես և այսպես։ Եվ կա նաև ուրիշ շատ բան, որ ասում է. ոչ, այսպես։ Իսկ եթե ինձ հարցնեք, թող

լինի այսպես և այսպես։ Իմ գործը չէ վիճարկել այն, ինչ ես չեմ հասկանում։ Ես անչափ շատ ուրիշ գործեր ունեմ, որոնք ավելի հետաքրքիր են։ Իսկ եթե դուք այդքան ուզում եք, մտածեք իմ փոխարեն բոլոր այդ բաների մասին։ Ես, որ գլխավորն է, իմ փոխարեն մի՛ տանջեք ձեզ։ Մի կերպ ես ինքս տակից դուրս կգամ»։

Բարձրաձայն նա այդ չասաց։ Հնարավոր է, որ նույնիսկ չէր կարող բավական հստակությամբ արտահայտել այդ միտքը։ Բայց դա զգացվում էր նրա իսկապես հիանալի անհոգության մեջ։ Եվ այդ պատճառով մայրը նորանոր հուզումների համար առիթների պակաս չուներ... Նա այդ հուզումներին տրվում էր ամբողջ հոգով։ (Սովը լինում է տարբեր, ամեն մարդու պետք է իր հացը։ Ոմանք գերադասում են արցունքներով թրջած հացը։ Ժորժը հաճույքով մերձավորներին էր թողնում այդ կերակուրը...)։

Գուցե, դա նրանց երկուսի համար էլ բարեբախտություն էր, մայրը այս աշխարհից գնաց այն աշխարհը, որը նրան լավագույնն էր թվում, երբ դատեր տասնհինգ տարին դեռ չէր էլ լրացել։ Իհարկե, Ժորժը լալիս էր ու կրկնում։

— Խեղճ մայրիկ։

Նա հեզեզի նման արցունք էր թափում. լաց լինել նա գիտեր ուրիշներից ոչ վատ։ Առիթի դեպքում նա երեխայի նման հոգու ամբողջ ուժով այնպես էր տրվում վշտին, երբ հուսահատ լացուկոծից հետո մարդու քիթն ուռում է և աչքերն արդեն չեն տեսնում աստծո լույսը։ Բայց տարափն անցնում էր— դրանում Ժորժը մեզք չուներ,— արցունքները չորանում էին, և ամեն ինչ նորից պայծառանում էր։ «Խեղճ մայրիկը» բնակարանում արդեն այդքան մեծ տեղ չէր գրավում։ Ոչ հայրը, ոչ դուստրը ոչ մի կերպ դա չէին խոստովանի, բայց նրանք իրենց մի տեսակ ավելի ազատ էին զգում։

Կարծես չհետազոտված երկիր լիներ Ժուլիենի համար դատեր՝ նրանից փակված ներքին կյանքը։ Բայց աղչկա նկատմամբ հայրը անհասկանալի ներողամտություն էր ցուցաբերում, որն առանձնապես ուժեղացավ այն ժամանակից ի վեր, երբ Ժորժը, մնալով հոր խնամքին, կամաց-կամաց սկսեց դեռատի աղչկանից կին դառնալ։ Հայրը ոչ-մի բանում չէր կաշկանդում դատեր զարդացումը։ Նրան լիակատար ազատություն էր տրված, ինչը, իհարկե, կասրսափեցներ հանգուցյալ մորը։ Ժորժը տանից

դուրս էր գալիս և տուն վերադառնում, երբ ուզում էր, նա ինքն էր սահմանում, իր ուզածի պես, օրվա կարգ ու կանոնը, ուզում էր— պատմում էր, չէր ուզում, չէր պատմում հորը իր ժամանցի մասին,— մի խոսքով, իր կյանքը դասավորում էր ուզածի պես։ Ժուլիենը միայն մի բան էր պահանջում— որպեսզի նա ուշադրություն դարձնի տան կարգ ու կանոնին և խստորեն հետևի նախաճաշերի և ճաշերի որոշակի ժամերին, իսկ ինչ մնացյալին էր վերաբերում, թող իմանա, որ հայրն հավատում է իրեն։ Ժորժն այդ գիտեր, և հոր վստահությունը ամենագործուն կարգապահություններն էր։ Երբեմն, երբ գլուխը հանկարծ սկսում էր պտտվել ու վառվել (ո՞ր աղջիկը այդ չի զգացել), Ժորժը, հորը հիշելով, սթափվում էր.

«Մենք ընդամենը երկուսով ենք— ես և նա»։

Չէ որ հայրը շատ է հավատում դասերը։ Եթե Ժուլիենը ղբաստեր գործողությունների վրա իր արգելքները դնի, դուստրը, հնարավոր է, հենց այնպես, զվարճանքի համար, ոտի տակ կտա հոր բոլոր վետոները։ Սակայն նրան պահպանում էր ոչ միայն Ժուլիենի կողմից ընդունած ծնողական չարին չհակառակվելու սիստեմը— միայն այդ սիստեմը քիչ կլիներ։ Մի՞թե նա իրեն չէր կարող ասել.

«Իսկ ինչ կլինի, եթե փորձե՞նք։ Պապային դրանից վնաս չի լինի, իսկ ինձ համար դա զվարճալի է...»։

Բայց հենց բանն էլ այն էր, որ Ժորժը փորձելու տրամադրություն չուներ, սերն աշխարհում նրան ամենից քիչ էր հետաքրքրում, իսկ չէ որ Ժորժը զեղեցիկ աղջիկ էր, արարիչը նրան ոչ մի բանից զուրկ չէր թողել։ Բայց արի ու տես, որ նա զեղի տղամարդիկ հակում չուներ։ Իսկ տղամարդկանց հակումն իր նկատմամբ նրան ծիծաղ էր պատճառում։ Ոչ ոք Ժորժին չէր նախատի անտեղյակության մեղքի համար։ Նա կարդում էր. և ի՜նչ ջանասիրությամբ— բնության մեծ գիրքը։ Ժորժը ուսանողուհի էր— սովորում էր բժշկական ֆակուլտետի առաջին կուրսում։ Եվ միայն աստված գիտի, թե ինչեր էր լսել և ինչեր տեսել։ Բայց այդ բոլորը նրան փույթ չէր։ Ամենավատանգավոր խոսակցություններն ու տեսարանները չէին պղտորում նրա հոգու աղբյուրի պես վճիտ մակերեսը և, կկլոցով, ինչպես ջրի մեջ նետած քար, անհետք իջնում էին հատակ։ Նրա բարձրաձայն տղայական քրքիջը սառեցնում էր ամենահամառ երկրպագուներին, և նրանք, հրաժարվելով իրենց նկրտումներից, Ժորժի հետ

միասին ծիծաղում էին։ Նրանք այդ աղջկա հետ իրենց պահում էին ընկերաբար, միայն երբեմն ձեռ էին առնում «աննվաճելիին»։ Եվ նա առաջինն էր ծիծաղում իր վրա։ Բայց և այնպես բոլորովին չէր ուզում փոխվել։

Ոչինչ հորը չհաղորդելով (հայրն այդ մասին իմացավ վերջինը, երբ ամբողջ Փարիզն արդեն գիտեր), Ժորժը որոշեց համառորեն ու կանոնավոր մարզվել, նա իրեն ասում էր.

«Ես կհասնեմ նույն այն բանին, ինչին և նրանք, ես կհասնեմ լավագույն արդյունքների»։

Երբ Ժորժը տեսնում էր, ինչպես են սպորտսմենները սլանում այրուքացան ճանապարհով, նրա երիտասարդ արյունը սրընթաց ալիքով հոսում էր մարմնի միջով, և նա նույնիսկ փնչացնում էր անհամբերությունից. նա վստահ էր իր վրա, չէր կասկածում իր ոտքերի ամրությանը, իր կրծքավանդակին։ Եվ նա սկսեց վազել ու ռեկորդ խփեց երեք հարյուր մետրի վրա։ Համառորեն նա մի քանի ամիս շարունակ առաջնությունն իր ձեռքին էր պահում։ Նա նույնպես ունեցավ օլիմպիական փառքի իր ժամը անախորոնիզմ թվացող այդ փոքրիկ աշխարհում, այդ երիտասարդության միջև, որը անգիտակցորեն հարություն էր տալիս հին Հունաստանին, թեև Եվրոպայի երկնքի կեսը ծածկել էր քաոսի սև թևը։ Պետք էր տեսնել հաղթանակի այդ անզուսպ խնդությունն ու հաղթանակող այդ աղջկան ուժից ընկած, շրնչահեղձ, քրտինքի հոտով պարուրված, մազերը թաց ճակատին կպած, աչքերը կլորացած ու ներս ընկած և քիթը սրված այդ աղջկան, որը փոքր-ինչ շփոթված էր, անկեղծորեն ագեղ, գեղեցկության նկատմամբ անտարբեր,— և ավելի գեղեցիկ, քան ինքը գեղեցկությունը։ Նա ցնծում էր.

— Տարա՛։

Ի՞նչ տարար։ Ռեկո՞րդ։ Ո՛չ, այդտեղ ավելի մեծ մի բան կար, քան պարզապես սպորտային հաջողությունն է...

«Տարա ողջ լեցունությունը կյանքի։ Ինքս ինձ հաղթեցի»։

Ինչի՞ն տիրելը կարող է համեմատվել դրա հետ։ Սիրո՞ւն... Այդ նվաճումն ի՞նչ է դրա առաջ։ Ահա նա— ուշնով չպղտորված մաքրության կատարյալ խնդությունը։ Դրան ոչինչ ավելացնել չի կարելի, ոչ մի հատիկ... Այդ խնդությունը կարճատև՞ է։ Իսկ ի՞նչն է հարատև։ Բայց նա քեզ հետ է։ Դու այն զգում ես ամբողջ մարմնով, նա արևի հետ հոսում է երակներիդ միջով։ Ի՞նչը կարող է ավելի հաստատուն լինել այս աշխարհում։

Լինում էին օրեր, երբ նա ծառուղիում մանր-մանր քայլող մի դույգ պատիկ ոտքեր էր տեսնում և փոքրիկ խորամանկորեն վեր ցցված քթիկ, գաղտնի մի ձայն շշնջում էր նրան.

«Իսկ Երեխա՞ն»։

Ամազոնուհին չէր կարել իր աչ կուրծքը։ Կանացի սիրտը իր հիշողություններն ունի... Եվ նա ժպտում էր թմբլիկ ճտիկին։

«Այո, երեխան նույնպես լավ կլիներ, եթե միայն դա լիներ առանց տղամարդու»։

Բայց առանց տղամարդու այդտեղ գործը գլուխ չի գա։ «Էհ, ինչ լինում է, լինի»։ Նա երեխայի մասին մտքերն իրենից վանում էր։ Հո չի կարելի աշխարհում ամեն ինչ ունենալ։ Նրան հերիք է և այն, ինչ կա։

.

Իսկ Ժուլիենը, այդ մռայլ ալքեմիկոսը, այդ Ֆաուստը, իր առանձնասենյակի կիսախավարը մտած, թաքուն այնտեղից հետևում էր դատերը։ Նա սքանչանում էր ոչ առանց վախի ազատասեր աղջկանով, իր զավակով, և ամեն օր սարսափից դողում էր, թե նա իրեն կլքի, և ամեն օր թեթևացած շունչ էր քաշում, համոզվելով, որ նա գոհ է, որ նրան չեն տանջում տագնապներն ու ցանկությունները։ Ժուլիենը ինքն իրեն հարցնում էր։

«Այդ ինչպե՞ս ստացվեց։ Ինչպե՞ս ստացվեց, որ ժորժը իմ աղջիկն է»։

Եվ ներքին մի ձայն պատասխանում էր.

«Դա քեզ հիանալի հայտնի է։ Դու ճանաչում ես նրան»։

Ո՛ւմ։ Նրան, որ նշանավորել է Ժուլիենի կյանքը, նրան, որ Ժուլիենի կյանքը ժխտել է։ Բայց, փառք աստծո, այդ աղջիկն ավելի ուժեղ դուրս եկավ։ Ժորժը երբեք չլքեց հոր տունը։ Նա դանդաղ և աստիճանաբար տիրանում էր հոր մտքին։ Ավելին։ Աղջիկը տիրացել էր հոր շանմարանին։ Նայելով այդ կենդանի հատիկին, իր հատիկին, Ժուլիենը ամբողջ հոգով ուզում էր համոզել իրեն, որ այդ հատիկն իր կյանքով պարտական է նրան։ Ժուլիենը նեղնչում էր իրեն, որ ճանաչում է նրան։ Նա նկատում էր ուրիշի աչքի համար աննկատելի նմանության գծիկները— շրթունքների անկյուններում եղած թեթև ազվամազը, պարանոցի գիծը, որոշ բառերի արտասանման առանձնահատկությունները, նրա նկատողություններում յուրօրինակությունը, և էլի ու էլի ուրիշ բաներ։ Ժուլիենը մտածում էր.

«Տեր իմ աստված, իսկական Աննետան է...»։

Իհարկե, դա պատրանք էր։ Միտքը, որ հագեցված էր Աննետայով, նրա ցոլքը գցում էր շրջապատող ամեն ինչի վրա։ Բայց քանի որ Ժուլիենի ամբողջ հոգին լցված էր Աննետայով, ինչո՞ւ Ժորժը նրա աղջիկը չլիներ։ Թող դա մոլագարություն լինի,— այդ մոլագարությունը անթիվ հետևանքներ է ունեցել Ժորժի երջանկության համար։ Ժորժը չէր էլ ենթադրում, որ հենց այդ մոլագարությանն է ինքը պարտական և հոր զարմանալի հիշողամտության և իր ազատության նկատմամբ նրա սրտաշարժ հարգանքի համար։ Նա մտածում է. «Իմ բախտը լա՛վ է բերել»։ Բայց գլխի չէր ընկնում, թե ով է այդ հաջողության պատճառը։

Եվ ահա մի գեղեցիկ օր Ժորժը հանդիպեց այն սավերին, որը անտեսանելիորեն հաճախում էր իրենց տունը։ Կասկած չկա, Ժորժը տասնյակ անգամ անցել էր այդ սավերի կողքով, հոր կաբինետի շեմն անցնելիս քիչ էր մնացել կպչի նրան, մանկական տարիներից սկսած տեսել էր այդ սավերի ցոլքը հոր աչքերում։ Բայց այդ սավերն այնքան սովորական էր դարձել, որ Ժորժը ոչ մի անգամ չէր նկատել նրան։ Սավերը պետք է խոսեր։ Եվ սկսեց խոսել։

Ժուլիենը մեկնեց Լոնդոն կանգնեցնելու նա մտադիր էր այնտեղ մոտ երկու շաբաթ մնալ։ Ժորժը օգտվեց հոր բացակայության առիթից և պատերազմ հայտարարեց փոշուն, որը լցվել էր սրբությունն սրբոց կաբինետը։ Ինչպես գիտության բոլոր իսկական մշակները, Ժուլիենը արգելում էր դիպչել սեղանին և դրքերի դասակներին. նա հավատացնում էր, որ իր սեղանն ու գրքերը ինքը կարգի կբերի։ Իհարկե, նրա կարգը, ուշածգ օտար հայացքի համար, սարսափելի անկարգություն էր։ Ժորժը, քնածին թշնամին ամեն տեսակի քաոսի, համառորեն սպասում էր իր ժամին, որպեսզի հակառակորդին վճռական հարված հասցնի։ Եվ հասցրեց այդ հարվածը կաբինետի տիրոջ բացակայության ժամանակ։ Բայց թե նա այնպիսի՞ մի համերգ կսարքի երբ վերադառնա... Այնպիսի համերգ կսարքի...

— Դե երգի՛ր, հայրիկս...

Կանխավայելելով ապագա տեսարանը, Ժորժը փոքրիկ աղջկա պես ծիծաղեց։

— Ապա, սրբազան թղթեր, բողոքեք։ (Ժորժը այդ «սրբազան

թղթերը» կուլաերով վերցնում էր ու շպրտում հատակին), Հիմա ևս եմ ձեր տեր ու տնօրենը։

Ժորժը գործում էր այնքան եռանդուն, այնքան դիշատչորեն էր նետվում թղթերի կապոցների վրա, այնքան համարձակ էր թղթատեղանակներով ձեռնածություն անում, որ՝ նրանցից մեկը այնուամենայնիվ սկսեց բողոքել. բացելով ստվարաթղթե երախը, նա, ինչպես կախարդական հեքիաթում, հատակին ժայթքեց իր միջ ամփոփված բառերի մի ամբողջ հեղեղ, տասնյակ ու տասնյակ նամակներ, որոնք անհմուտ կապված էին երիզահանգույցով, և այդ նամակները, ճախրելով օդում, ցաքուցրիվ եղան սենյակով մեկ։ Դա ի՞նչ էր։ Ժորժը նստեց հատակին, որ նամակներն հավաքելը հարմար լինի, և սրտանց քրջջում էր։

«Գրողը դրանց տանի... Իսկ եթե նա նկատի, որ ես դրանց ձեռք եմ տվե՞լ... Ի՞նչ անեմ, ինչպե՞ս դրանք դասավորեմ նախկին ձևով։ Միակ միջոցը կարդալն ու ըստ ամսաթվերի դասավորելն է։ Կնայեմ միայն, ում է գրված։ Գործն արագ կգնա առաջ։ Հայրիկի նամակագրություննե՞րը, տե՞ր իմ աստված, պատկերացնում եմ, թե դա ի՞նչ ահավոր ձանձրույթ է լինելու։ Օհո՛, Այ քեզ բա՜ն»։

Հենց առաջին նամակի առաջին տողերում «ձանձրույթի» նմանվող ոչինչ չկար... Եվ, այդ անշնորհք կապ տված երիզակը, որը կապոցն ընկնելիս չարձակվեց, այդ երիզակը, որը չէր դիմացել թղթե ծանրությանը, մի ժամանակ, շատ վաղուց, ժապավեն էր եղել...

«Ոչ, ապա մի մտածեք, պապան։ Մեր հայրի՞կը»։

Ժորժը նույնիսկ չմտածեց, թե իրեն վայե՞լ է արդյոք կարդալ ուրիշի նամակները,— մի բան, որը պարտավոր էր անել գոնե վաղեմի նրբանկատության մնացորդը պահպանած ամեն մի մարդ։ Իհարկե, Ժորժը կկարդա։ Չէ որ դա, ըստ երևույթին, շատ հետաքրքիր է։ Ժորժը հարմար տեղավորվեց հատակին թափված նամակների միջև և, ոտքերը խաչելով, նստեց դրա-սեղանի մոտ։ Եվ թղթակույտի միջից սկսեց բախտաբերի դուրս քաշել նամակը նամակի հետևից։ Ոչ ոք Ժորժին անհանգստացնել չէր կարող— նա մենակ էր տանը... «Իսկ եթե զանգը տան, չեմ բացի, թող զանգեն թեկուզ մինչև լույս...»։ Լուսամուտն ամբողջ լայնությամբ բացված էր։ Այգուց լսվում էր կեռնեխների փոխադարձ սուլոցները։ Հունիսյան արևը ողողել էր ամբողջ կաբինետը և քնքշորեն ոսկեզօծել էր նրա գլխավերևում դանվող

պղնձե վահանակները, որ զարդարում էին սեղանի արկղները, ժորժը կարծես սովորում տաղավարում լիներ, նրա մատներին փաթաթվում էին ուրիշի հոգու լիանաները, որ ամփոփված էին այդ նամակներում, և նրանց բուրմունքը խառնվում էր այդում ծաղկող հասմիկի քաղցր բուրմունքին։ Ժորժը երգ էր մմռռում։ Նա երանության մեջ էր...

Հասկանո՞ւմ էր արդյոք նա ինքը, որ հանցագործություն է կատարում։ Օ՛, անպայման հասկանում էր։ Հասկանում էր և ուրախանում։ Նա վաղուց էր արդեն կորցրել հարգանքն ընդհանուր ճանաչում գտած բարոյականության նկատմամբ։ Եելամիտ ծաղրարան՝ այդ աղջիկը գիտեր, որ դրանով չի կարելի բացեիբաց հոխորտալ։ Էհ, իսկ փակ դռների հետևո՞ւմ։ «Էլ ո՞նց կլինի, այդ հնոտին էր պակաս»։ Ժորժը գործում էր լորդ Կիտչենների նման. Սուեզի ջրանցքից այն կողմը ուրիշ բարոյականություն է սկսում, «Իսկ ես իմ սեփականն ունեմ...» Բայց (իհարկե, ի մեծ բարերախտություն) նրա բարոյականությունը առողջ, լավ բարոյականություն էր, դուցե շատ ավելի լավը այն բարոյականությունից, որը թողնում էին նավահանգստում, ջրանցքի այս կողմը։ Ժորժը ամբողջ սրտով սիրում էր Հորը։ Հնարավոր է,— ոչ, ոչ թե հնարավոր է, այլ իսկապես,— սիրում էր ոչ այն սիրով, որը մի ժամանակ հնազանդ աղջիկներն էին տածում դեպի իրենց հայրերը։ Հարգանքի որոշակի բաժինը գոլորշիացել էր։ Եվ, իհարկե, հասկանալի է, ոչ մի կաթիլ սարսափ չէր մնացել։ Եղած հարգալիցության ոսկեձերտը չափազանց խունացել էր։ Բայց արդյո՞ք դրա հետևանքով պակասել էր որդիական սերը։ Կարծում եմ, որ ոչ։ Այն պայմանով, իհարկե, որ այդ մարդը, այսինքն՝ հայրը, արժանի էր որդիական սիրուն։

«Իսկ ինչի՞ համար եմ ես պարտավոր նրան սիրել։ Հենց միայն նրա համար, որ նա ինձ լույս աշխարհ է բերել։ Եթե անկեղծ խոսենք, սիրելի հայրիկ, ապա դա քեզանից առանձին չանքեր չի պահանջել... Ախ հա՛, դու ինձ մեծացրե՞լ ես... Դա արդեն ուրիշ բան է... Այդ մասին թույլ տվեք, որ ես ինքս դատեմ։ Ավելի վատ քեզ համար, եթե դու չես ուզեցել իմանալ կամ չես իմացել, ո՞րն է իմ բարիքը կամ իրավունքը... Բայց դու ուզեցել ես, դու իմացել ես, իմ ծերուկ։ Փառք քեզ և պատիվ դրա համար, մանավանդ որ քո աղջիկը այն այծիկներից չէ, որոնց կարելի է չհսկել։ Չէ որ ես տրորել եմ քո բոլոր նախապաշարմունքներով մարգերը։ Ես ոչինչ չեմ մո-

ռանում։ Ոչ մի բան երբեք չեմ մոռանում։ Եվ եթե որևէ մեկի մտքով անցնի քեզ ձեռք տալ, նա ստիպված կլինի ինձ հետ գործ ունենալ։ Մենք դաշնակիցներ ենք։ Բայց, մեր միջ ասած, իմ ծերունի բարեկամ, ես լիակատար իրավունք ունեմ քեզ բոլորի վրա և բրբրել քո բղթերը...» Իհարկե, դու դրա հետ չես համաձայնվի, չէ որ դու շատ հնականոն մարդ ես։ Իսկ ես հիմիկվա եմ։ Բավակա՛ն է։ Սկսում եմ կարդալ... Եվ դու երբեք այդ մասին չես իմանա։ Փոքրիկներին նեղացնելը մեղք է...»։

Ժորժը սիգարետ վառեց։

— Ձգո՛ւյշ եղիր։ Հանկարծ չհրդեհես այս ամբողջ գրասենյակը...

Նա ձայնը կտրեց և կենտրոնացած ուշադրությամբ սկսեց ներս ծծել գրածի բույրը ու ծխախոտի բույրը։

— Ո՛չ։ Դուք միայն պատկերացրեք... Ուղղակի անհրեական յելի է, որ մեր ծերունի հայրիկը այսքան կրքոտ սիրված լինի։

Սիգարետը մարմրեց, մարմրեց ու հանդավ։ Միայն երբ Ժորժը սուր ցավ զգաց մատների ծայրերին, նա հիշեց, որ ձեռքին սիգարետ է բռնել։ Նա մտադրություն էլ չուներ երկրորդը ծխելու։ Ավելի հարմար լինելու համար Ժորժը փորի վրա փռվեց հատակին, գլուխը ձեռքերին հենած։ Նա կարդում ու կարդում էր... Իսկական հեղե՞ղ։ Ժորժին թվում էր, թե այդ հեղեղը լվանում է իրեն։ Նա կարդում էր, նույնիսկ չջանալով հասկանալ, առանց դատելու, առանց կարդացածն ըմբռնելու։ Ժորժի առաջ բացվում էր իրեն այնքա՛ն օտար մի աշխարհ։ Բայց ամեն մի տողից, այդ հեղեղի ամեն մի երփներանգող ծփանքից հառնում էր կինը... Ժորժը տեսնում էր այդ կնոջը— սիրող ու տառապող, առնական իր տրտունջներում և իր կրքի մեջ, մի կնոջ, որը դերազանցում էր նրան, «այդ տղամարդուն», ոգու վեհությամբ, որը նրան տանում էր ձեռքը բռնած, որը քաջալերում էր նրան քնքուշ ու եռանդուն, որն իրեն զոհ էր բերում և սփոփում նրան այն բանի համար, որ նա իրեն զոհաբերել է... Իսկ նա, տղամարդը, նա այդ կնոջ համեմատությամբ բավական ողբալի և ողորմելի տեսք ուներ, չէ որ նա տեսնում էր, ինչպես է երջանկությունը հեռանում, և չկարողացավ բռնել ու պահպանել նրան։ Նա հասկանում էր, որ հրաժարվելով երջանկությունից, նա կործանում է իրեն, հո զուր չէր ծրարի վրա, որտեղ պահպանում էր նամակների մի դարս, նա իր խոշորատառ ձեռագրով նշել.

«Իմ սպանված երջանկություն»։

Ժորժը հոգու այդ ճիչը կարդաց միայն վերջում, երբ հավաքում էր շուրջը ցաք ու ցրիվ թափված նամակները։

Նա դադարեցրեց հավաքելը։ Պառկեց մեջքի վրա, ձեռքը դրեց գլխի տակ։ Նայում էր վառ կարմիր վարդին, որին լուսամուտի մոտ օրորում էր նախաամպրոպային քամին։ Իսկ շուրջը, հատակին, սիրո անձայն սիմֆոնիան էր...

Երեսուն տարի առաջ մի ուրիշ կին, մի ուրիշ աղջիկ ներս խուժեց իր հոր[1] սիրային կյանքի գաղտնարանը։ Վրեժխնդիր ճակատագիրը հիմա մատնում էր նրա գաղտնիքները։ Բայց այն աղջկա հայրը մեռած էր։ Իսկ Ժորժի հայրը կենդանի է։ Եվ մոխրի տակնուվրա արված կույտը դեռ այրում էր։ Այրեց Ժորժի մատները, որոնք դիպել էին մոխրին...

Ժորժը երազում էր, երազանքը նրան տանում էր անհայտ ծովեր։ Տաք գնդորշիները նրա մոտ էին գալիս Պոլինեզյան կղզիներից, իսկ իրենք կղզիները բուտախութերի և մագնիֆերաների ալիքաձև գծով, ձյունաճերմակ փրփուրով երիզված, հայտնվում էին անափ ծովային զմրուխտի միջից... Այդ արշիպելագները Ժորժի համար օտար երկիր էր... Բայց հենց այդ պատճառով էլ ավելի համառ էր աղջկա քթանցքները թափանցում այդ արշիպելագների բուրմունքը։ Եվ Ժորժն ընկնում էր, ինչպես թակարդի մեջ, այն անբացատրելի հուզմունքի իշխանության տակ, որն զգացել է մեզանից ամեն մեկն այլ հանդիպումների ժամանակ, այլ կողմերում առաջին անգամ։

«Ես արդեն եղել եմ այստեղ...»։

Ժո՞րժը։ Նա եղել է այստեղ։ Այդ ինչպե՞ս կարող էր տեղի ունենալ։ Չէ որ նա ոչ ոքի չէր սիրում։ Եվ հիմա նույնպես սիրուց ազատ էր, հեռու էր նրանից... Եվ, այնուամենայնիվ, այդ անծանոթ կնոջ սերը նրա սրտում արձագանք գտավ, ինչպես հարազատ զանգակների հեռավոր ղողանջ։ Կարծես Ժորժը մի ժամանակ կիսաքնած վիճակում լսել էր այդ սիրո պատմությունը և մոռացել էր միայն հետո։ Նրան թվում էր, թե իր կարդացած իրադարձություններից ամեն մեկի մասին ինքը կարող էր պատմել նախապես, դեռ էջը չշրջած։ Եվ Ժորժը հանկարծ հասկացավ, որ այդ կնոջից, այդքան առեղծվածային և այդքան մտերիմ, իրեն փոխանցվեցին ոչ թե տատապանքները, այլ խոյանքները, ոչ թե մեղքի, ոչ թե սեր կամ էյեգիա, այլ ռիթմ,

1. Տես «Աննետան և Սիլվիան»— Ռ. Ռ.

ուժ, շիթերի ժայթքում, արյուն։ Ժորժը պատրաստ էր երդվել, որ նրան տեսել է։ Ո՜ւ, ոչ միայն տեսել է, այլ ճանաչել է... Ո՜ւ, ոչ միայն ճանաչել է։ Ի՞նչ «ոչ միայն»։

Ժորժն այնքան թաւիւղ տեղից ելավ, որ գլուխը խփեց սեղանի կողին։

«Ոչ միայն ճանաչում էի։ Դա իմն է»։

Բայց հարվածքը սթափեցրեց նրան։ Ժորժը տրորեց ծոծրակին առաջացած ուռուցքը։

«Սատանան տանի։ Ես ուղղակի խելքս թոցրել եմ... Նույնիսկ նախաճաշն եմ մոռացել»։

Ժորժը ուտելու մեծ սիրահար էր։ Քանի որ նա մոռացել էր նախաճաշը, կնշանակի կորցրել էր հոգեկան հավասարակշռությունը։ Բայց նույն րոպեին ուշքի եկավ։ Ճաշի ժամանակ, բայց թողածը լրացնելուց, նա տեսադաշտից չէր կորցնում իր հենց նոր հայտնաբերած շավիղը։ Իզուր էր նա կրկնում.

«Սա ապուշությո՜ւն է»։

Նույն րոպեին նա ավելացրեց.

«Չէ որ հայրս նրան սիրել է ավելի շուտ, քան ես աշխարհ եմ եկել»։

Եվ միայն ասածում է հայտնի, թե էլ ինչ պատմություններ ու ենթադրություններ չի սարքի հետագայում նրա կանացի, ռոմանականացված գիտությամբ լցված երևակայությունը։ Նախքան պահանջված կարգով դասավորելը, դեռ տասնյակ անգամ ընթերցվելու և բերանացի են արվելու այդ դժբախտ նամակները։ Եվ այն ժամանակ Ժորժը կարող է ցանկության դեպքում վիճել հոր հետ այս կամ այն իրադարձությունների, այս կամ այն տարեթվերի վերաբերյալ։ Եվ եթե նա չի վիճում, ապա ոչ թե այն պատճառով է, որ նա հեշտությամբ իրեն զսպում է,— որոշ երեկոներ նա իր լեզուն ուղղակի կծում էր, որ այդ մասին խոսակցությունն սկսի... Անիծյա՜լ նախապաշարմունքներ։ Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ նրանք անկեղծորեն, ընկերաբար չզրուցեն այդ բոլոր բաների մասին... Ասպագա զրույցների թեման չէր, որ նա էր պահում նրան։ Ժորժը չէր կարողանում պատշաճ ձև գտնել պատմելու համար, թե ինչպես ինքը տիրացավ ուրիշի գաղտնիքներին և ինչքա՜ն այդ բոլորը զվարճալի էր ու սրատաշարժ։

«Իսկ նա, խեղճը, նստում է իմ դիմաց ու երևակայում, որ ոչ ոք չգիտի իր գաղտնիքները, չգիտի, որ դրանք հրահալի ինձ հայտնի են, որ ես իր էությունը լավ դիտեմ, տեսնում եմ նրա

բոլոր տառապանքները, նրա սերը, նրա թուլություններր, նրա բոլոր վերքերը... Եվ դատապարտում եմ իրեն... Դատապարտում եմ քեզ... էլ ի՞նչ հիմարություն ասես, որ դու չես արել։ Դու առանձնապես չես փայլել... Իսկ ես քեզ դրա համար ավելի ուժեղ եմ սիրում»։

Եվ ժորժը նետվեց հորն համբուրելու։

— Խե՛ղճ հայրիկ։

Իսկ Ժուլիենը չէր հասկանում, թե ինչու է աղջիկը իրեն խեղճ անվանում։

Ժորժն սկսեց իր որոնումները։ Նա վճռեց ինչ գնով էլ ուզում է լինի գտնել Աննետային։ Բայց, իհարկե, հայրը նրան ցույց չի՛ տա այդ ճանապարհը։ Իսկ սպասվող որոնումներն այնքան էլ հեշտերից չէին։ Տիկին Ռիվիերի անունը տեղեկատուներում չէր նշված։ Նա կարող էր անհետանալ, կարող էր, վերջապես, մարդու գնալ։ Տեղեկություններ հավաքելու համար ժամանակ էր պետք։

Սակայն ժորժը հետքը գտավ, սկզբում Ասյայի, հետո Մարկի, որի երիտասարդ փառքը գնալով մեծանում էր։ Երկու թե երեք անգամ նա մտավ գրախանութ, բայց Աննետային չհանդիպեց։ Իսկ նրա մոտ տուն գնալ նա չէր համարձակվում։ Ջեռքն արդեն բարձրացնելով, որ դուռը բախի, նա թողնում ու հեռանում էր։ Իզուր էր ժորժը աշխատում իրեն անբռնազբոսիկ պահել, իբրև թե, ոչ մի բան ինձ համար նշանակություն չունի,— նրան տարօրինակ մի վախ էր համակում։ Եթե նա Աննետայի հետ հանդիպի, ի՞նչ է ասելու նրան։ Ջի՞ որ շատ անհարմար բան է երես առ երես հանդիպել մի այնպիսի ծանոթ անծանոթուհու հետ, մի այնպիսի հեռու, և մոտիկ կնոջ հետ, որի գաղտնիքին ինքը՝ ժորժը, այդքան անհամեստորեն տիրացել էր։ Աննետան, ինչպես որ նրան պատկերացնում էր ժորժը, երբեք դա չի ների, եթե իմանա։ Իսկ այդ նա կիմանա հենց առաջին խոսքից։ Ժորժը գգում էր, Աննետայի մի հայացքը բավական է, որ ինքը շփոթվի, մատնի իրեն։ Նա նախապես կորցնում էր իր ամբողջ ինքնավստահությունը և, բերանը բաց, կանգնում էր ամոթից կարմրելով, կորցնելով խոսելու ունակությունը։ Եվ, ցանկանալով դուրս գալ այդ վիճակից, նա ինչպես բոլոր ամաչկոտ մարդիկ, հավանական է անպատկառ բաներ կասի և, ի հեճուկս առողջ դատողու-

թյան, անպայման կմատնի ամենանվիրական գաղտնիքները։ Իսկ այդ ժամանակ Աննետան նրան կնայի առջի պես պաղ հայացքով, նրա առաջ կշրխկացնի բացած դուռը, և մնաս բարո՜վ, վատահուբյուն։ Նրանց միջև ընկած վիհը է՛լ ավելի կխորանա։ Մի խոսքով, ժորժը իր մեջ արիություն չէր գտնում։ Սակայն իր մտահղացումից չհրաժարվեց։ Նա սպասում էր (ինքն էլ չիմանալով ինչպիսի) առիթի, որը կօգներ կամ կստիպեր նրան ռիսկի դիմել։ Չէ որ այդպիսի առիթ պետք է լիներ։ Անպայման լինելու է։

Երջանիկ առիթի սպասողների մեծամասնության համար այդ առիթը երբեք չի լինում, քանի որ նրանց սպասումը չափազանց պասսիվ է։ Բայց ժորժի մոտ սպասումը նույնպես գործունյա էր, գոնե գործունեության պատրաստ։ Նա արթուն էր մնում, նա պատրաստվում էր հաջողությանը։ Հաջողությունը մեծամասամբ ոչ թե ձեռքից բաց են թողնում, այլ չեն նկատում, չեն հասցնում բռնել թռիչքի ժամանակ, երբ նա անցնում է կողքով։ Բայց մի անհանգստացեք, այնպիսի աղջիկը, ինչպիսին ժորժն է, ձեռքից բաց չի թողնի երջանիկ առիթը։ Մի հայացք, մի թռիչք— և նա կբռնի այդ առիթը, ինչպես թենիսի գնդակը։

Իսկ ո՞վ այս անգամ գնդակը գցեց։ Մի անծանոթ։ Մի խազընկեր, որ եկել էր Իտալիայից։ Նրան նույնպես Աննետայի հետ հանդիպեցրեց առիթը։ Ավելի ճիշտ, այդպես արդեն նախանշված էր։ Մտավոր հարաշտաուբյունը հյուրին մտերմացրեց ժուլիենի հետ, իսկ ժորժն աշխատեց նրան դարձնել լրարեր, որը կբացի երկու հին բարեկամներին իրարից բաժանող դուռը։

Աննետան բնավ չէր սպասում նրան... Այդ առավոտ Աննետան նստած էր ննջարանի անկյունում։ Նա հոգնել էր սենյակը մաքրելուց, ոտքերը տնքում էին։ Մշտական ծառա Աննետան չէր պահում, ծանր աշխատանքների համար մի քանի ժամով մի աղջիկ էր գալիս։ Աննետան մենակ էր, բավական մոռացված երեխաների կողմից, որոնք իրենց ցավելուով արդեն չէին վազում նրա մոտ, որովհետև ցավերը, փառք աստծո, վերջացել էին, իսկ իրենց հաճույքներն ու գործունեությունը նրանք պահպանում էին իրենց համար (երկուսով գործելը գերագույն բավականություն է)։ Բայց Աննետան բավական տակտ ուներ, և նա չէր տրտնջում։ Ա՞յդ է մայրերի ճակատագիրը։ Երբ երեխաները երջանիկ են, նրանք դուրս են անում հիշողությունից մորը, ինչպես իր ծառա-

յությունը վերշացրած անանահուն։ Գործը արել-վերջացրել ես, դե գնա... Աննետան ծպտում էր։ Բայց մեջքը ցավում էր։ Նա արդեն երիտասարդ չէր։

Մանավանդ որ նա տարել էր իր և ուրիշների տառապանքների անչափ ծանր բեռը։ Հոգնածությունից ու խոհերից քարացած, նա նստել էր անշարժ, ձեռքին բռնած փոշոտ շորը։ Փողոցին նայող լուսամուտը լայնորեն բաց էր, ցուրտը սառեցնում էր ուսերը։ Բայց նա ոչ ցուրտ էր նկատում, ոչ փողոցի միալար աղմուկը։ Նա մտածում էր. մտածում էր այն մասին, թե ի՞նչ լավ է պաշտպանել նրանց, ում սիրում ես։ Բայց շատ լավ է, երբ քիչ նույնպես ժամանակ առ ժամանակ որևէ մեկը պաշտպանում է։ Ասենք, դա չափազանց մեծ շքեղություն է։ Աննետան ոչ ոքի չէր մեղադրում։ Ամեն մարդ տալիս է՝ըստ այն, ինչ ինքն ունի։ Իսկ նրա ճանաչած մարդկանցից յուրաքանչյուրը ճիշտ այնքան ուներ, որքան որ միայն իրեն էր հերիքում։ Աննետայի ներքին հայացքի առջևով անցնում էին, հարգալիցորեն ծիծաղելի, բոլոր նրանք, ում ինքը սնել էր։ Նրանք անցնում էին անկանոն շարքերով, և նրանց հայտնվելը երբեմն անսպասելի էր։ Ծանոթ և հարազատ դեմքերի միջև հանկարծ հայտնվում էին հազիվ ծանոթ, պատահական ուղեկիցներ, և առաջին անգամ էին նրանց իսկական գծերը (գուցե, ըստ կոնտրաստի) ի հայտ գալիս անողորմ լուսավորության մեջ։ Այդպիսի խորհրդավոր լուսավորության մեջ անցյալի անդունդից դուրս լողաց մի դեմք, որին նկատելով, Աննետան շշնջաց.

— Ահա այս մեկը ինձանից ոչինչ չի վերցրել։ Նա միայն տալիս էր։

Աննետան զարմացավ, որ նրան մոռացել է, այնքան է մոռացել, որ չէր կարողանում նույնիսկ անմիջապես այդ րոպեին հիշել նրա անունը... Հենց այդ վայրկյանին դուռը բացվեց, և վատ գաղտնիարակված ծառան առանց նախազգուշացման ներս թողեց հյուրին.

— Ձեզ են հարցնում...

Հանկարծ Աննետան դռան շեմին տեսավ նրան, ում հենց նոր մտաբերել էր. նույն դեմքը, ալեհեր մորուք, սքանչելի ժպիտ և պայծառ աչքեր Որքան էլ անհավանական լիներ այդ հանդիպումը, Աննետան ոչ մի ակնթարթ չտատանվեց։ Եվ անունը, որը ես չէր կարողանում մտաբերել, իսկույն հիշեց։ Աննետան ձեռքերը մեկնեց դեպի ներս մտնողը։ Միայն մի րոպե անց Աննետան

մի տեսակ անհարմարություն զգաց այն բանից, որ հյուրը իրեն տեսավ բափթիփված ու նաև բափթիփված զգացմունքների մեջ։ Բայց նա նույն րոպեին ուրախ ծիծաղեց, նկատելով, որ հենց այդպես էլ կանոնած է մնացել՝ փոշոտ շորը ձեռքին։ Հյուրը նույնպես ծիծաղեց, սկսեց ներողություն խնդրել անսպասելի ներխուժման համար, խնդրեց ներել ծառային, որի վրա կշտամբանքով ուզում էր Աննետան հարձակվել։ Նա Աննետայի աչքերում նկատեց— իրեն ընդառաջ եկող անկեղծ, ջերմ ուրախության պոռթկում։ Այդ նույն պոռթկումն էլ նրան էր բերել այստեղ։ Թեև նա համարյա ծերունի էր, Աննետային նայում էին քսան տարեկանի աչքեր։

Յոթ տարի առաջ Աննետան նրա հետ հանդիպել էր Իտալիայի հարավային մարզերով անցնող գնացքի վագոնում։ Աննետան վերադառնում էր Ռումինիայից[1]։ Դեռ ոչ բոլորովին ապաքինված իր հիվանդությունից, որը իրեն զրկացնել էր տալիս տենդի նոպաներով, Աննետան քնելու մի անհաղթահարելի ցանկություն էր զգում։ Նրան առաջվա պես թվում էր, թե ինքը ջունգլիներում է գտնվում— թափառում է եղեգնի անանցանելի թփուտներում, մինչև գոտկատեղը խրված տիղմի մեջ։ Իտալական մալարիա շնչող ցածրավայրերը, անծայրածիր ճահիճները, որոնց կողքով սլանում էր գնացքը, Աննետային հիշեցնում էին այդ ջունգլիները։ Նա նստել էր քար կտրած, լարված ամբողջովին և ննջում էր։ Կուվում էր իրեն հետամտող քնի հետ։ Ժամանակ առ ժամանակ նինջը պատում էր նրան, գլուխն անզորությամբ թեքվում էր կրծքին, բայց նույն վայրկյանին Աննետան գլուխը ետ էր գցում և, հոնքերը կիտելով, անվստահ նայում էր հարևաններին։ Մեծամասամբ դրանք ժողովրդից ելած հասարակ մարդիկ էին և մանր բուրժուաներ, իտալացիներ։ Աննետան ճանապարհորդում էր երրորդ կարգի վագոնում, որը լեփ լեցուն էր մարդկանցով, և որտեղ իրեն տեղ էր հասել միջին բաժանմունքում։ Կայարաններում զոռով արդեն լցված վագոնն էին խուժում գերհամալրական ուղևորները։ Նրանք առանց քաշվելու հարմարվում էին նստածների համարյա ծնկներին։ Մի կին, որին տեղ չհասավ, մնաց կանգնած, օրորվելով գնացքի շարժմանն համապատասխան, և բռնելով հարևանների ուսերից։ Տղամարդիկ ծխում էին, քթում ուղղակի հատակին։ Աննետան, մտել էր անկյունը և

---

1 Տես «Նախագուշակը», հատ. III— Ռ. Ռ.։

զգվանքով ոտքերը քաշել իրեն։ Նրա կողքին կանգնած էր մի տղամարդ, հենված ոչ բարձր միջնորմին, որը նրանց բաժանմունքն անջատում էր անցատեղից։ Նրա արմունկը համարյա քսվում էր Աննետայի գլխին։ Դրեթե բոլոր ուղևորները հոգնատանջ տեսք ունեին, նրանց այտերը ներս էին ընկած, կզակները վաղուց չսափրված։ Մի ծերուկ պարծանքով ի ցույց էր դնում մաղոտ ականջին գցած ականջօղը։ Եվ շուրջն ամենուրեք տեսադաշտին փայլփլող աչքեր էին, աչքերի դեղնավուն սպիտակուցներ։ Միայն մի քանիսի մոտ էին, որ փայլփլում էին վայրի, գիշատիչ գազանների բիբերի նման գեղեցիկ բիբերը։ Դեռահաս մի տղա, կզակը հենած դռմացի միջնորմին, և մի փոքրիկ աղջիկ, որ նստած էր ուղղակի հատակին, թքերի մեջ, իրենց ծակող աչքերը չէին հեռացնում Աննետայից։ Բոլոր երեք բաժանմունքներն էլ միմյանց հետ կոպիտ ռեպլիկներ էին փոխանակում, իսկ երբեմն էլ՝ գինու շշեր ու գարշահոտ պանրի կտորներ։ Ուժասպառ Աննետային հետապնդում էր մղձավանջը— նրան թվում էր, թե ինքը նույնպես դառել է անասուն, որ իրեն գցել են մի վանդակի մեջ ուրիշ ցեղի գազանների հետ, և այդ գազանները անհանգիստ հոտոտում են նրան, ավելի ու ավելի սեղմում նրա շուրջը իրենց մարմինների օղակը։ Նա ապարդյուն հավաքում էր իր բոլոր ուժերը։ «Նրանք սպասում են,— թվում էր նրան,— սպասում են, թե երբ ես կթուլանամ, ուշքս կկորցնեմ, որ նետվեն ինձ վրա»։ Նա սկսեց իրեն վատ զգալ, գլուխը ծանրորեն ետ ընկավ, խփվելով փայտե միջնորմին, իսկ հետո սկսեց դանդաղ մի կողմի վրա թեքվել մարմինը։ Գիտակցությունը վերջնականապես չէր մարել, բայց, հնազանդորեն տրվելով ինքնամոռացման, արդեն չէր պայքարում, և նույն այդ րոպեին նա զգաց, թե ինչպես մեկի ձեռքերը հոգատարությամբ գրկեցին իր ուսերը և գլխատակը մի պարկ խրեցին։ Վերջին անգամ բարձրացնելով ծանրացած կոպերը, նա թարթիչների վարագույրի միջով հասցրեց նկատել ինչ-որ տղամարդու. մեկնվելով միջնորմի վրայից նա բռնեց Աննետային այն մարդու շարժումով, որը Ռուբենսի նկարում պահում է խաչից հանած Փրկիչին։ Եվ դա կարծես լիճն էր լեռների միջև։ Կարծես քեզ վրա տարածված թև էր։ Աննետան սուզվեց քնի մեջ։

Մի ժամ հետո, երբ Աննետան դուրս լողաց ինքնամոռացության խորքերից, նա իսկույն զգաց, որ վագոնի օդը ուրիշ է դարձել։ Նրա հարևանները, որ բարի, հասարակ մարդիկ էին, հսկում

էին նրա անդորրը։ Աննետան իր այտի տակ շալ հայտնաբերեց— դա պառավ գեղջկուհին էր դրել բարձի փոխարեն։ Իսկ հատակին նստած փոքրիկ աղջիկը Աննետային մեկնեց նարնջի կեսը։ Նկատելով, որ Աննետան ուշքի եկավ, բոլոր ուղևորները նրան կատակով ու բարեհոգորեն ուշքունեցին։ Աննետան նրանց պատասխանում էր նույն ուրախ ու սրտագին տոնով։ Անհարմարության ամեն մի ստվեր անհետացավ. հանկարծ պարզվեց, որ բոլորը միևնույն ցեղի էակներ են։ Աննետան հասկացավ, ով թափ տվեց կախարդական փայտիկը, որն ի հակադրություն կիրկեի փայտիկի, գազաններին բարի ընկերներ դարձնելու հատկություն ուներ։ Կախարդը կանգնած էր նրա թիկունքում։ Դեռ առանց շրջվելու, Աննետան արդեն գիտեր, ինչպիսին է նա։ Նրա երգեցիկ հանգիստ ձայնը կարծես ցանցով բռնում և մոտեցնում էր այդ մարդկանց, ծնելով համակրանքների և հետաքրքրությունների ընդհանրություն։ Վագոնի երեք բաժանմունքների միջև սկիզբ առավ մի զրույց, ու թեև այդ մարդը ոչնչով աչքի չէր ընկնում, նա այդ զրույցի առանցքն էր։ Զրուցողների հայացքները դիմում էին նրան, բայց քանի որ ճանապարհին այդ հայացքները չէին կարող շրջանցել Աննետային, ապա ակամայից մի վայրկյան կանգ էին առնում նրա վրա։ Աննետան քաշվեց զրույցի մեջ։ Եվ կամաց-կամաց ընտելանալով նրանց խոսելաձևին, Աննետան նույնպես սկսեց խոսել, դժվարությամբ ընտրելով իտալական բառեր, որը նրա ուղեկիցներին բարեհոգի ծիծաղի առիթ էր տալիս։ Աննետային զարմացրեց, որ այդ մարդը, որին ինքը չէր տեսնում, իրեն պատասխանեց շատ լավ, նույնիսկ նրբաճաշակ ֆրանսերենով։ Երկխոսությունը շարունակվում էր, իսկ Աննետան դեռ չէր տեսել իր զրուցակցին։ Զրուցակիցն առանց որևէ անհետության տեղնկացավ, որտեղից է Աննետան գալիս, ուր է գնում, հաղորդեց նրան մոտակա կայարանների անունները։ Իր մասին նա չէր խոսում, ասենք, Աննետան նույնպես չէր հարցնում։ Գյուղացիները նրան անվանում էին signor conte,[1] և Աննետան գլխի ընկավ, որ նա հրիտասարդ չէ արդեն. խոսակցության մեջ նա հիշատակեց որոշ իրադարձությունների մասին, որոնց վկան եղել էր ինքը, իսկ այդ իրադարձությունները տեղի էին ունեցել մոտ երեսուն տարի առաջ։ Նա արտահայտվում էր անկաշկանդ քաղաքավարությամբ։ Աննետա-

[1] Պարոն կոմս (իտ.)։

յի համար ուրախալի էր պատկերացնել, թե նա ինչպիսին է։ Բայց Աննետան գիտեր, որ այդ մարդն իրեն տեսնում է, և իրեն այնպես էր զգում, կարծես այդ մարդը նրան առել է իր հովանավորության տակ։ Դա հաճելի էր, կարծես նրանք երկուսով ինչ-որ գաղտնի դաշինք էին կապել... «Դուք ինձ պահպանում եք... իսկ ես վստահում եմ ձեզ...»։

Եվ ամենազարմանալին, թերևս, այն էր, որ այդ վստահությունը արդարացավ վտանգի րոպեին։ Վագոնն օրորվում էր ռելսերի կցման տեղերում, ուղևորներն անհոգորեն ննջում էին, չենթադրելով, թե ինչ է առջևում սպասում իրենց։ Հանկարծ՝ սոսկալի մի ցնցում, երկաթի ճռինչ, գերանների դղրդյուն, ապակիների զրնգոց։ Վագոնը ճեղքվեց, ինչպես ընկույզը։ Բաժանվեց երկու մասի։ Ամեն ինչ փլվեց մահառաջի գազանային ոռնոցի մեջ։ Աննետան ուշքի եկավ ջարդուփշուր եղած վագոնի կույտերի միջև։ Հարվածը նրան մի կողմ էր շպրտել, սեղմել ջարդված նստարանների միջև, նրան քիչ էր մնացել ոտնատակ տա խելագար նախիրը (ճանապարհի ընկերները նորից դարձան գազաններ)։ Եվ, ի լրումն դժբախտության, վագոնը սկսեց այրվել։ Աննետան փորձեց դուրս գալ որոգայթից, բայց ձեռքերն ու ոտքերը չենթարկվեցին նրան։ Տրվելով ճակատագրի կամքին, նա մեջքի վրա ցած ընկավ, այդպես գլուխը ետ ընկած, անհարմար դիրքով մնաց պառկած։ Արյան տաք շիթը հոսում էր նրա ճեղքված կրծքից, բայց Աննետան ցավ չէր զգում, չէր կարողանում որոշել, թե վերքը որտեղ է։ Ամենուրեք դժոխք էր, իսկ վագոնի ջարդված կտուրի ճեղքվածքի միջով նա տեսնում էր սքանչելիորեն գեղեցիկ երկնքի մի շերտը, որի վրա այրվում վերջանում էր մայրամուտը։ Աննետային համակեց անհասկանալի մի հանգստություն։ Նա լսում էր բոցերի չարագուշակ ճարճատյունը, քամին նրա գլխավերևում իրիկնային քնքուշ երկնքով քշտմտանում էր դեպի հեռուն ծխի սև քուլաները և այդ ծխի հետ վեր էին թռչում ու կրակի մեջ գցած շագանակների նման տրաքում այրվող փայտի կոստղոտ բեկորները։ Նրա անշարժ մարմնից մի քանի մետր այն կողմ կրակի բոցերը բորբոքվում էին, և դրանց այրող շունչն արդեն կպչում էր Աննետայի այտերին։

Աննետան սպասում էր։ Սպասում էր, որ նա իրեն փրկի։ Չգիտես ինչու, հավատում էր, թե նա կենդանի է, թե նա օգնության կգա իրեն։ Նա գիտեր, որ դա այդպես է լինելու։ Եվ բոլորովին չզարմացավ, լսելով իրեն կանչող ձայնը.

— Cara Francia[1], դուք այստե՞ղ եք,

Աննետան պատասխանեց.

— Այստեղ եմ, բարեկամս, ես այստեղ եմ։

Գրեթե նույն րոպեին ճեղքի միջով Աննետան նկատեց նրա տագնապալից եղբայրական հայացքը։ Այդ մարդը ժամանակ չուզեց կորցնել անօգուտ բացականչությունների և հարցուփորձի վրա։ Մի ակնթարթում նա հավաքեց բազմաթիվ կամավորներ և նրանց հետ նետվեց Աննետային փրկելու։ Դա վտանգավոր աշխատանք էր։ Ամեն մի անզգույշ շարժումից կարող էր փուլ գալ փայտե բեկորների ամբողջ զանգվածը, որն ինչ-որ հրաշքով դեռ կախված էր մնացել։ Մինչդեռ մտածելու ժամանակ չկար. բոցերի լեզուներն արդեն մոտենում էին Աննետայի ներբաններին։ Նա լուռ էր։ Գործելը նրանց էր թողել։ Երբ Աննետայի ուսերն արդեն ազատվել էին մամլակներից, նա հանկարծ ցավագին դադար վերքը։ Եվ մտածեց, որ հիմա գիտակցությունը կկորցնի։ Բայց նա դեռ հասցրեց վստահությամբ ժպտալ իր փրկչին, որն անսահման զգուշությամբ բեկորների կույտի տակից ազատում էր նրա խեղճ գլուխը և, մի վայրկյան ափերը սեղմելով նրա քունքերին, արտասանեց.

— Արիացեք, շուտով ամեն ինչ կարգի կընկնի։

Աննետան պատասխանեց.

— Ես չեմ վախենում։ Չէ որ ես ձեր ձեռքին եմ։

Այդ մարդուն հուզեց Աննետայի անսպասելի վստահությունը.

— Կեցցեք...

Ցավից Աննետան գիտակցությունը կորցրեց։ Ընդամենը մի քանի րոպե։ Եվ անմիջապես սթափվեց։ Վերջապես հաջողվեց Աննետային դուրս քաշել ջարդված վագոնի տակից, և փրկարարները վերցրին ու տարան նրան։

— Ոչ, թողեք, ես ինքս։ Ես կարող եմ գնալ։

Բայց բարեկամն առարկեց.

— Դուք վիրավորված եք։

— Վերքի մասին հետո կմտածենք,— պատասխանեց Աննետան։— Պետք է նախ փրկել մյուսներին։

Ջարդված վագոնը ջահի նման բոցկլտում էր։ Հիմա նրան մոտենալն անհնարին էր։ Մյուս վագոնները վնասվել էին ավելի քիչ, բայց կրակը նրանց նույնպես սպառնում էր։ Հիմա հարկա-

---

[1] Բանկային ֆրանսիա (իտ.)։

վոր էր փրկել նրանց, ով դեռ չէր հասցրել դուրս գալ։ Ուղևորների մեծամասնությունը փախել էր, նրանք, գոռում-գոչյունով այս ու այն կողմ էին նետվում շուրջը փռված հարթավայրով, ինչպես հավաքնից վախով դուրս թռած հավեր։ Գայթելով հողաթմբերին նրանք աղաղակով ընկնում էին գետին։ Խուճապով բռնված, նրանք չէին հավատում, որ վտանգն արդեն հետևում է մնացել։ Բայց առանց դժվարության հաջողվեց կանգնեցնել նրանց ու հավաքել։ Ահա հենց այդ ժամանակ էլ ի հայտ եկավ signor conte-ի հանգիստ տիրականությունը։ Նա ոչ ոքի վրա չէր գոռում։ Ամենևին չէր հուզվում։ Անվրդով անցնում էր հուսահատորեն ձեռքերով զանազան շարժումներ անող մարդկանց միջով, բռնում էր որևէ տղամարդու կամ կնոջ արմունկից։ Մի ակնթարթում նրա կամքը հաղորդվում էր ուրիշին, դուրս թռչելու պատրաստ ճիչը քարանում էր կոկորդում։ Նա ասում էր.

— Դե լավ, դե լավ, կամաց, թանկագինս... Գիտես ինչ, բարեկամս, քո վերին «ֆա»-ն պահպանիր մինչև ապագա դեբյուտդ օպերայում... Քանի որ դու այդպիսի թոքեր ունես, բարի եղիր շնչել մյուս կողմը։ Ջուր տեղը կրակը մի բորբոքիր...

Մարդիկ ծիծաղում էին... Իսկ նա վարվում էր նրանց հետ այնպես, ինչպես ուզում էր։ Կարճ ժամանակում հաջողվեց բոլորին փրկել, ով դեռ փրկության կարիք էր զգում։ Վիրավորներին մի կողմ էին պառկեցնում, հրկաթգծերի հրկարության, ավազե թեքալանջի պաշտպանության տակ գտնվող փոսում։ Կոմսի մոտ երթային փոքրիկ դեղարկղ կար, նա արագ-արագ կապեց ավելի ծանր վնասվածների վերքերը։ Նա հայացքով փնտրում էր ֆրանսուհուն։ Եվ գտավ—Աննետան նստած էր նրանից հրկու քայլ այն կողմ, հենված ձիթենու ծուռ բնին։ Նրան առաջվա պես թվում էր, որ ինքը հիմա ուր որ է գիտակցությունը կկորցնի, և, որպեսզի մնա մակերեսին, նա շուրթը արյունոտելու չափ կծեց։ Կոմսը շատ արագ մոտեցավ նրան։

— Էհ, հիմա էլ ձեզ,— ասաց նա։

Ամենուրեք չոր ու խանձված հարթություն է, և տեղ չկա, բոլորովին տեղ չկա թաքնվելու քեզ վրա հառած հարյուրավոր հետաքրքրասեր աչքերից։

— Ինչ արած, պատերազմում պատերազմավարի,— ասաց Աննետան։

Նա արձակեց կոֆտայի կոճակները։ Արյունով ներծծված գործվածքը կպել էր մարմնին։ Կոմսը գրպանի դանակով կտրեց

կտորի եղրերը։ Աջ ուսի ներքևում, կրծքի վրա կարմրին էր տալիս վերքը— մաշկը ճեղքել էր սուր մի տաշեղ, որը աղետի ժամանակ պոկվել էր վագոնի փայտե երեսվածքից։ Երբ վերքի վրայից պոկեցին շապկի չորացած կտորը, արյունը ցայտեց։ Աննետան կանղնել էր ձեռքերը վեր բարձրացրած և նմանվում էր ինչ ճակատամարտում դանվող ամազոնուհու։ Մարդկանց բազմությունը բառերդի անկեղծությամբ բարձրաձայն արտահայտում էր իր հիացմունքը. իտալացիները զեղեցիկ մարմնի զեղեցիկ վերքերի գիտակներ են։

Signor conte-ն վերքը նայեց, լվաց, արագ վիրակապեց, ղգուշորեն իր գործիքաց ու բարակ մատներով Աննետայի մարմնին հպվելով։

Նրան օգնում էր մի պառավ զեղչկուհի։

— Ցավո՞ւմ է,— հարցրեց նա Աննետային։

— Ես այսպիսի բաներ չէ, որ տեսել եմ,— պատասխանեց Աննետան— Ճի՞շտ է, մայրիկ։— Այդ խոսքերը հասցեագրված էին պառավ զեղչկուհուն։ Տղամարդիկ շատ են պարծենում պատերազմում ստացած իրենց վիրքերով։ Իսկ մենք պարեր ի վեր մեր վերքերն ենք ստանում և չենք պարծենում մեր մարտերով։

— Իսկ այդ ինչ մարտեր են,— հարցրեց կոմսը։

— Si signori! Երբ մենք մեր հորթերին աշխարհ ենք բերում։

Ամբոխը հռհռաց։ Մի ծերուկ ավելացրեց.

— Կեցցե՛ս։ Եվ այդ չարաճճիները կարողանում են ոչ միայն հորթեր ծնել, այլև կոտոշներ դնել։

Աննետան, վախեցալով, որ կարող է ուշաթափվել, իրեն սիրտ էր տալիս։ Նա խոսում էր։ Կարծես մշուշի մեջ։ Դա չվրիպեց նրա բուժարարի հայացքից, որը հրաման տվեց.

— Իսկ հիմա պառկիք։

Բայց Աննետան համառում էր։

— Միթե ես ոչնչով չեմ կարող ձեզ օգնել։

— Հիմա միայն մի բան է պահանջվում. համբերությամբ սպասել Տարենտոյի եկող գնացքին։

Սպասեցին շատ երկար։ Դա հետպատերազմյան քայքայումի տարիներն էին։ Վնասվածք ստացածները դիշերելու համար տեղավորվեցին դաշտում։ Լուսնկա և զով դիշեր էր։ Գծերի շուրջը թափված բեկորները հավաքելով, խարույկներ վառեցին։ Աննետան և կոմսը նստել էին մի կողմ և զրուցում էին։ Աջից հետ

վում ծխում էին հանգած հրդեհվածքի մնացորդները։ Իսկ բոլորովին հեռվից քամին բերում էր Տիբենյան ծովի աղմուկը։ Ժամերն անցնում էին իտալական գիշերվա երկնքի շքեղ ամպհովանու տակ։ Թվում էր, ցածր աստղերին ձեռքով կարելի է հպվել այնպես, ինչպես խաղողի ոսկե հատիկներին։ Երկու պատահական ուղեկիցներն էլ սրտանց գովում էին իրար՝ ցուցաբերած արիության համար, և, որպես դաստիարակված մարդիկ, այդ կապակցությամբ զարմանք չէին դրսևորում։ Աննետան այնուամենայնիվ խոստովանեց, որ այդ արիությունն իրեն ներշնչել է կոմսը, և հարցրեց, թե որտեղից է նրա մեջ այդ հսկայական հանդարտությունը, որը ուրիշներին է փոխանցվում, մի շնորհք, որն այնքան էլ հաճախ կյանքում չի հանդիպում. որտեղի՞ց է նա այդ շնորհքը վերցրել։ Չլինի՞ այս երկնքից, որը հարազատ է կոմսին։

Աչքերը խարույկին հառած, կոմսը ժպտաց։ Բոցերի դողդողացող ցոլքերը նրա ժպիտին ինչ-որ առանձնահատուկ, ողբերգական բեկվածք էին տալիս։

— Ես դա վերցրել եմ այս հողից, որը կլանել է այն ամենը, ինչ ես սիրել եմ։

Աննետան, առանց որևէ խոսք ասելու, ավելի մոտ նստեց նրան։ Կոմսն, առանց նրան նայելու, շարունակեց.

— Բարեկամս, այս հողը, այս պապանձված, պինդ հողը, ձեզ մեռած է թվում, ինչպես հանգած մոլորակ։ Դուք պառկած եք այդ հողի վրա և չեք նկատում, որ քուրայում կրակը բոցկըլտում է։ Ակա՞նջ դրեք։ Դուք կլսեք ցիկլոպների մուրճերի ձայները։ Դուք ոչինչ չե՞ք լսում։ Իսկ ես օր ու գիշեր, ամբողջ այդ քսանչորս ժամը չեմ դադարում չափոգել նրանց պղնձե յամբը։ Ով ես լսում եմ, ինչպես է խորտակվում Մեսսինան...

— Դուք այնտե՞ղ եք եղել,— հարցրեց Աննետան։

— Իմ մեծ ձավորները նույնպես։ Մայրս, կինս, եղբայրս, չորս երեխաներս... Նրանք հիմա էլ այնտեղ են։ Այնտեղ, հողի տակ։

Աննետան բռնեց նրա ձեռքը։ Կոմսը պատասխանեց բարեկամական սեղմումով, և, բաց չթողնելով Աննետայի ձեռքերը, այդ խաղաղ, անդորր գիշերին պատմեց իր կյանքի պատմությունը։

Մենք հիմա նրա պատմությունը կհաղորդենք ընթերցողներին։ Բայց ոչ այնպես ժլատորեն, ինչպես ինքն՝ այդ պատմությունն անողը։ Նրա նկարագրի շատ գծեր Աննետայի համար քաց-

վեցին ոչ անմիջապես, այլ աստիճանաբար, մի քանի տարի հետո։ Առաջին հանդիպման ժամանակ ի հայտ եկան միայն հիմնական գծերը։ Բայց մենք, փոքր աստվածներս, օժտված ենք մեր զավակների ճակատագրերը կարդալու արտոնությամբ, ուրեմն բացենք նրանց կյանքի գիրքը։

Նա պատկանում էր հին սիցիլական մի տոհմի։ Կոմս Բրունո կոչվեցավ։ Մի վաղեմի տոհմ, որը փառաբանված էր դեռ նորմանների ժամանակ։ Միսսինայի արվարձանում, քաղաքի վերին մասում, որը մի ժամանակ, հարուստ տիրուհիների մնացորդն էր, Մատագրիֆոնների ավերակներից ոչ հեռու պահվող մի հնամենի շինություն, առանց ժամանակակից հարմարությունների, որը ճակատով նայում էր նեղ մի փողոցի։ Բայց դրա փոխարեն ամբողջ շքամուտքը լուսավորում էր դեպի Ռոբբիայի սքանչելի հարթաքանդակը։ Տան հետևում ընդհուպ մինչև ծով սանդղաձև բլրակներով ձգվում էր նարնջի այգին։ Կիարենցանների ընտանիքը հարյուրամյակների ընթացքում այնտեղ հասարակ, գրեթե գյուղական կյանք էր վարել, սրբորեն պահպանելով ողու հումանիզմի ազնիվ ավանդույթները, փոքր-ինչ հնաոճ, բայց ամբողջական ու բուրումնավետ, ինչպես թեոկրիտի մեղրը։ Նրանք հաճախ էին աշխուժացրել խիղախ անցյալի հիշողությունները, խաչաձևելով իրենց նիզակները գավառական ակադեմիաների բանաստիրական և պոետական մրցույթներում, ակադեմիաներ, որոնք կրում էին լուսան կամ Արծվաբույծ հերալդիկ հրեշների անունները։ Այդտեղ նրանք պարբեր բանաստեր-սիրահարների քիչ սրամիտ ենթադրություններ չէին շռայլում, այդտեղ փայլում էր խակական հունա-լատինական էրուդիցիան, որը հորից որդուն էր փոխանցվում, իսկ երբեմն էլ նույնիսկ հորից աղջկան։ Պյութագորասի ժամանակների Մեծ Հունաստանը մոքի ոլորտում ընդունում էր կանանց իրավահավասարությունը։

Կոմս Բրունոն համարյա խաղ ու պարով վաստակեց գիտական-հելլենագետի արժանի հռչակը։ Մշակելով իր նարնջի այգիները և եղբոր՝ պառլամենտի դեպուտատի հետ բաժանելով ծծմբահանքերից եկած հնամուտները, նա վիմագրության վերաբերյալ հիանալի գրած աշխատություններ հրապարակեց և հրատարակեց օրփեոսական բանաստեղծների անթոլոգիա։ Նա ինքը նույնպես բանաստեղծություններ էր գրում հավասար հմտությամբ և հունարեն, և իտալերեն։ Նա հասել էր մինչև քառա-

սուն տարեկանը, այդպես էլ չիմանալով, որ կյանքը կարող է դաժան լինել։ Երջապատված սիրով և ինքն էլ օժտված լինելով սիրող սրտով, նա հեշտությամբ իր լուսավորյալ ծնողներից հակում ընդունեց դեպի անշահախնդիր աշխատանքը, որն հենց ինքնին բավականություն է, և ներողամիտ օպտիմիզմը, որը շատ հեշտ է այն մարդու համար, ով ամբողջ կյանքում ոչինչ չի անում, միայն ընթում է «Մոր» ծիծաղող դեմքը։ Գրականությամբ զբաղվող այդ ազնվականները իրենց այգիներից վտարում էին ուրախացնող աղքատ բյան արձակդանքներ կատարի մարտերի անդրադարձող շառաչը, մարտեր, որոնք Բրունոյի մանկության տարիներին ցնցում էին ծառս հզոր Հարևան Կալաբրիան ու Բազիլիկատան՝ սոցիալական պատեռազմները, որոնք տեղի էին ունենում galantuomini-ների և cafoni[1] -ների միջև։ Կոմս Բրունոն իրեն նեղություն չտվեց գոնե մի անգամ այցելելու իր ծծմբահանքերը, որոնցից ստացված եկամուտները նրան հնարավորություն էին տալիս հղկելու իր սեփական կամ Պյութագորասյան «Ոսկյա հանգերը»։ Նրա եղբայրը, որը շատ հազվադեպ լինում էր այնտեղ, Բրունոյին համոզեց հրաժարվել հանքերը մեկնելու մտքից, անցողակի նշելով այնտեղի զարհուրելի փոշին, աղքատությունը, հետամնացությունը։ Բրունոն անկեղծորեն վշտացավ. դա անխուսափելի չարիք է, և այնքան էլ պարտադիր չէ, որ կիարենցա կոմսելը այդ տեսարանով խավարեցնեն իրենց պայծառ աչքերը, որոնցում արտացոլվում էր Գալաթեա հավերժահարսի, ըստ առասպելական ավանդությունների նրանց հարևանուհու, զմայլելի դեմքը։ Ամեն մարդ իր դերն ունի. նրանց գործը գեղեցկությունը գրչով, ինչպես և (մի՞թե նրանք արժանի չեն դրան) իրենց կյանքով ամբողջացնելն է։

Բնությունը կոմս Բրունոյին շռայլությամբ օժտել էր այն ամենով, ինչն անհրաժեշտ է նման դերը կատարելու համար։ Նրա հիանալի ձեռքերը ճարպիկ ու անփութ հեռացնում էին ճանապարհներից բոլոր մոայլ ստվերները։ Սիրակիր, համայիլ, ինքն էլ շատ հեշտ համայլող, նա բազմաթիվ վեպերի հերոս էր, և շնորհիվ իր բնավորության նրբագեղության ու համայքի, իր մակերեսային, բայց բնական բարության, նա կարողանում էր բավականություն ստանալ նրանցից, ընդհատել, նորից բավա-

---

1 19-րդ դարի Կալաբրիայի և Բազիլիկատայի պրովինցիաներում միմյանց թշնամի կուսակցություններ։

կանությունն գտնել նրանց մեջ, ընդ որում բաժակի տակին երբեք դառը նստվածք չէր մնում ոչ իր, ոչ իր ընկերուհիների համար։ Ամուսնացել էր նա բավական շուտ, քսանվեց տարեկան հասակում, ամուսնացել էր Իտալիայի հյուսիսում բնակվող մի հարուստ բուրժուական ընտանիքի երիտասարդ աղջկա հետ։ Դա երկնագույն աչքերով մի թուխ աղջիկ էր Վինչենցայից, որը պաշտում էր նրան, և կոմսը նույնպես քնքշորեն սիրում էր նրան։ Այդ կատարելագույն միությունից չորս կյանք էին ծաղկել, չորս սքանչելի և նրբագեղ երեխաներ։ Ոչ հիվանդություններ, ոչ հոգսեր։ Այնքան ամուր ու հաստատուն մի երջանկություն, որ, թվում էր, ուրիշ կերպ լինել չէր էլ կարող։ Նա և իր մերձավորները իրավունք ունեին մտածելու, որ դժբախտությունը այն մարդկանց ճակատագիրն է, ովքեր չեն կարողանում երջանիկ լինել, կամ նրանց, ովքեր ի ծնե հակված են դեպի թախիծը, իսկ դա արդեն արատ է, որը բժշկական միջամտություն է պահանջում։ Արժե՞ արդյոք ասել, որ այդպիսի հայացքները շրջապատող աշխարհի նկատմամբ ենթադրում են անտարբերության բավական մեծ բաժին։ Բայց այդ էգոիզմն այնքան հաճելի էր, այնքան բարեհոգի, որ ոչ ոքի չէր կարող վիրավորել։ Ի արդարացում նրա ավելացնենք, որ ուրիշի վիշտը տակտով էր և կարողանում էր իրեն ի ցույց չդնել. դարեր ի վեր Mezzogiorno[1]-ի բնակիչների հուսահատությունը հասել էր վերջին աստիճանին, դարձել էր ապատիա, երբ մարդ մատն անգամ շարժել չի ուզում՝ իր վիճակը փոխելու համար, վախենալով նոր, բոլորովին անտանելի ցավ զգալ։ Նրանց ամբողջ դառը իմաստությունը արտահայտվում էր դաժանորեն-ծիծաղելի արտահայտությամբ. «Addo ne'a՝ sfizii, nun c'e՝ perdenza» *(Ով ի վիճակի չէ դիմադրել, նա կորցնելու բան չունի)*։

Իվ փորձված քաղաքական գայլերը աշխատում էին չանհանգստացնել այդ աղքատ գոյությունը, թե չէ մեկ էլ տեսար հանկարծ ժողովրդին արթնացրիր։ Այդ ավգուրներից մեկը հայտարարեց.

— Ավելի խելամիտ կլինի ձեռք չտալ փորձանքին, որը խոր քնով քնած է[2]։

Բայց ժամանակը առաջ էր ընթանում։ Ժամանակը եկավ։

---

[1] Իտալիայի հարավի *(իտ.)*։

[2] Ագոստինո Դեպրետիսա— Ռ. Ռ.

Նոր հարյուրամյակի առաջին տարիներին նոր սոցիալական դժվարություններ են ծնվում. Աֆրիկայում կրած պարտությունների հետևանքը, և նոր հույները, որ սկսեցին տարածել ժամանակակից առաքյալները, ինչպես էլեկտրական հոսանքով խոցում էին քնկոտ Հարավին և հուսահատությունը դարձնում էին կատաղություն։ Մեռնող հողի վրա արյունահեղ ապստամբություններ բռնկվեցին Ապուլիայում և Սիցիլիայում։ Կոմս Բրունոն այդ չնկատել չէր կարող։ Հո իր չար կամքով չէր, որ նա չէր նկատում կյանքի տխուր և անհրապույր կողմերը։ Նա պարզապես դրանք չէր փնտրում։ Իսկ երբ մոտիկից աղքատություն ու տառապանքներ էր տեսնում, նա ինքն ու նրա մերձավորները համակվում էին մի ողորմածությամբ, որը սահմանակցում էր շռայլության հետ։ Բայց այդպիսի պոռթկումները պատահական և ոչ մշտական բնույթ էին կրում։ Իսկապես, որ «Աչքից հեռացողը սրտից դուրս է գալիս...»։ Չէ՞ որ աշխարհում հայացք շոյող այնքա՜ն գեղեցիկ բաներ կան։ Նա պատկանում էր այն երջանիկ խառնվածքների, այն բախտից երեսառածների թվին, որոնց համար ամեն ինչ կոպտությունից զերծ բավականություն է դառնում. և ինտելեկտը, և աշխատանքը, և հաճույքը, և ամեն մի առօրյա գործը։

Եվ իր շուրջն էր նա տարածում երջանկության այդ մթնոլորտը...

Այդպես էր։ Այդպես էր մինչև 1908 թվականի դեկտեմբերյան այն գիշերը, երբ հին կաշկանդված հողը զայրույթի, իսկ դուրս նաև հուսահատության, անզսպելի պոռթկումով դուրս ցցեց իր կուրծքը։ Եվ երեք րոպեի ընթացքում ամբողջ Մեսսինան, տասը դարերի փառքը, հարյուր քսան հազար կենդանի էակներին,— բոլորը մասին վերցրած կլանեցին երկրի ընդերքները։ Կոմս Բրունոյի ամբողջ ընտանիքը— նրա պառավ մայրը, նրա եղբայրը, կինը և չորս երեխաները մեռան ավերակների տակ։

Աղետի նախօրեին ի պատիվ եղբոր ժամանման, որը Հռոմից գալիս էր Մեսսինա, ամբողջ ընտանիքը մինչև ուշ գիշեր նստած մնաց ներքևի հարկի դահլիճում, որը լուսամուտներով նայում էր նարնջի այգուն։ Երկար զրույցը ընդհատվում էր երաժշտությամբ- կամ լռությամբ։ Այդ ժամանակ բոլորն ականջ էին դնում գիշերվա քաղցր լռությանը։ Բրունոյի երիտասարդ

քենին երգում էր Բելլինիի արիաները։ Նրա ձայնը քնքուշ էր և մաքուր, սոխակի ձայնի նման և Կոմս Բրունոն կոպերն իջեցրած, սիրահարի նման սքանչանում էր նրանով։ Աղջիկն զգում էր այդ. երգելու ժամանակ նա աչքը չէր հեռացնում կոմսից։ Նրանց անմեղ ֆլիրտը ոչ ոքի համար գաղտնիք չէր և ոչ ոք դրանից չէր քաշվում։ Նույնիսկ նրա քույրը, Բրունոյի կինը, նեղրոդամտորեն ժպտում էր։ Բրունոն ընտանիքի սիրեցյալն էր, ամեն մեկը, և նա առաջինը, շատ բնական էր համարում, որ սիրում են իրեն։ Բայց այդտեղից շատ հեռու էր մինչև ինքնասիրահարվածությունը։ Բրունոն սիրում էր նրանց բոլորին, և բոլորն էլ նրան էին սիրում։ Եվ բոլորն էլ գոհ էին։ Նրա կրտսեր աղջիկը, Սիբիլլան, որին հայրն այդպես էր անվանել ի պատիվ վերջին նորմանդական թագուհու, նրա սիրեցյալը, փոքրիկ նըստարանի վրա նստել էր հոր ոտքերի մոտ և, այտը հենելով նրա ծնկին, նայում էր իր պաշտելի հորը, իսկ վերջինս ժամանակ առ ժամանակ կոպերը բաց էր անում ու ժպտում դստերը։ Ձեռքըն իջեցնելով դստեր կլոր գլխին, շոյում էր նրա նուրբ մետաքսանման մազերը և ափի տակ զգում դստեր մտքի գաղտնի դողը։ Սիբիլլան չափազանց քնքուշ երեխա էր, շատ ավելի նուրբ, քան նրա ավագ եղբայրները։ Դյուրզգացության նոպաների, թեթև վազանցիկ թախծի և անբացատրելի տագնապի նկատմամբ նախատրամադիր էր, որի համար ավագները ծիծաղում էին վրան (հետագայում Բրունոն հաճախ էր մտաբերում այդ սարսափները)։ Իսկ այդ երեկո, երբ Բրունոյի կինը, որ հիանալի դաշնակահարուհի էր (նա Հռոմում դասեր էր առնում հանրաճանաչ Սգամբատտիի մոտ), դաշնամուրի առաջ նստած, մտացրիվ ինչ-որ բան էր նվագում և հանկարծ (ինչո՛ւ), ենթարկվելով մի տեսակ ազոտ պահանջի, վերցրեց Բեթհովենի 3որերորդ սիմֆոնիայի խորհրդավոր անդանտեի առաջին ակկորդները,— մոդուլորեն—անողորմ քայլերի հենց առաջին crescendo-ի ժամանակ (դա կոչում են հարսանեկան, բայց ո՞ւմ հետ է հարսանիքը։ Մահվա՞ն հետ) աղջիկը հեկեկաց և ճչալով «Ջե՛մ ուղում»— դուրս վազեց սենյակից։ Մայրն սկսեց նվագել ուրախ մի վալս, իսկ հայրը իր Սիբիլլային գըրկեց։ Նրանք կանգնել էին լուսամուտի որմնախորշում։ Փոքրիկն արդեն ուրախ ինչ-որ բան էր թոթովում և մանկական թխլիկ մատիկներին փաթաթում հոր մորուքի մազափնջերը։ Երիտասարդ կոնայք, մայրը և մորաքույրը, մոտեցան նրանց և

լուռ կանգնեցին, ներս քաշելով այգու բուրմունքը։ Նրանք երկուսն էլ, առանց խանդելու, սեղմվեցին Բրունոյին։ Ֆլորան՝ կինը, քրոջն ասաց.

— Ջեմմա, ես տեսնում եմ, դու Բրունոյին համբուրելու ցանկությունից մեռնում ես, կարող ես համբուրել, միայն թե քո համբույրները նա ինձ վերադարձնի։

Ներքևից լսվում էր ծովի՝ համբույրի նմանվող ճողփյունը։ Իսկ, երկնքում տանիքի ուղիղ վերևը, բոցկլտող աչքն էր կիկլոպի— Սիրիուսը։ Այդպես էլ երեքով նրանք կանգնած էին, ամուր սեղմված իրար։ Եվ նա զգում էր, ինչպես է ափի տակ բաբախում իր մանկան փոքրիկ սիրտը...

Երջանիկ գիշերները պատմություն չունեն։ Սիրային գրկախառնությունները լուռ երազ են, որը ոչ մի հետք չի թողնում։ Եվ միտքը նույնպես արդեն չգիտի, թե երբ է ինքը կրկին ստացել իր իրավունքները։ Եվ այդ վերջին գիշերը նրանցից ոչ ոք չլսեց, ինչպես նրանց օջախի մոտ տաքացած մանուկ երջանկությունը հանկարծ ընդհատեց իր երգը և լացով դուրս նետվեց Մեսսինայից...

Ամուսիններն արթնացան միանգամից, հենց առաջին հարվածից։ Բրունոն զգաց, ինչպես Ֆլորայի ոտքը ջղաձգորեն կծկվեց,— այդպես թռչունն է ջղաձգորեն բռնում ճյուղը։ Լուսամուտներից ներս էր նայում գունատ արշալույսը։ Մի շարժումով երկուսն էլ նստեցին մահճակալին, կախեցին բորիկ ոտքերը, պատրաստվելով ցատկել։ Մահճակալն օրորվում էր, ամբողջ տունը հիմքից մինչև տանիքը ճռնչում էր։ Իսկ փողոցից լսվում էր թափվող կղմինդրների թփթփոցը, ջարդվող ապակիների զրնգոցը։ Դղրդյունով փլվում էին աղյուսե ծխնելույզները։

Այդ վայրում երկրաշարժը սովորական հյուր էր։ Ուժեղ զուտ հարավային անհոգությամբ դրա մասին մոռանում են, մանավանդ եթե հաճախակի չեն կրկնվում, այնուամենայնիվ ամեն մեկին, հորից որդուն, փոխանցվում է փորձը, և ամեն մեկը գիտե, ինչ պետք է անել առաջին ցնցումի ժամանակ։ Այդտեղ զուր ժամանակ չեն կորցնում ախ ու վախի և տրտունջների վրա։ Այդ ժամանակ անմիջապես իրենց դուրս են գցում բաց երկնքի տակ։ Կամ, եթե արդեն ուշ է, աշխատում են մի կերպ հարմարվել որևէ հուսալի պատի մոտ։ Ֆլորան նետվեց հարևան սենյակը, որտեղ հանկարծ տագնապով սկսեցին աղաղակել երեխաները։

կա հույս ուներ երեխաներին դուրս բերել այդ։ Բայց երկրորդ ցնցումը եղավ, հետո երրորդը— որ զարհուրելի ուժի ցնցումներ էին— և տունն սկսեց այնպես օրորվել, կարծես ալիքների կատարին լիներ։ Պատերը առագաստի պես ուռճանում էին, հաստ գերանները տեղահան էին լինում, պարկետը կորանում էր,— զուր էր ոտքը հենարան փնտրում։ Իսկ դրսից լսվում էր քաղաքի աղմուկն ու ծովի շառաչը։ Ահեղ դատաստանի լաց ու կականը...

Ամեն ինչ կատարվեց մի քանի վայրկյանում։ Այդպիսի ակնթարթներին խելագար բանականությունը լսում է միայն մի բան— իր սեփական ոռնացող սարսափը։ Բրունոն հասկացավ, որ սանդուղքից օգտվելն արդեն ուշ է, և, ձայն տալով կնոջը, որ նա հետևի իրեն, նետվեց դեպի պատշգամբը, քանի որ նրա բնազդը, որտեղ ննջում էր բաղմադարյան փորձի հատիկը, հուշեց նրան, որ, տունը փլվում է, պետք է հնարավորին չափ դրսի պատերին մոտ կանգնել քանի որ այդ դեպքում գոնե փլատակների տակից հանելու հավանականություն կա։ Բայց հետո ամբողջ կյանքի ընթացքում, որը նրան վիճակված էր ապրել, նա իրեն նախատում էր այն բանի համար, որ ենթարկվեց բնազդի ձայնին, և ոչ թե վազեց մյուսների հետևից, որպեսզի նրանց հետ լինի, փրկի նրանց կամ մեռնի նրանց հետ միասին։ Այդ րոպեին ոչ ոք չհասկացավ նրա մտադրությունները, իսկ նա ժամանակ չունեցավ բացատրելու, ինչ պետք է անել... վերջին տեսիլքները... Հարևան պատուհանում մերկացած կուրծքը երիտասարդ Ջեմմայի, որը Բրունոյին էր կարկառել ձեռքերը... Եվ Սիբիլլայի լացը, նրա ճիչը. «Պապա՜...»։ Խլացուցիչ մի հարված— և հնամենի տունը փլվեց... Ամեն ինչ անհետացավ, և Բրունոն գիտակցությունը կորցրեց։

Նա ուշքի եկավ շոգենավի մահճակալին։ Շոգենավը նրան հեռացնում էր այդ անիծյալ ափից։ Հետո (գիտակցության փայլատակումները երբեմն-երբեմն ճնշղում դուրս էին գալիս խավարից, և նորից վերադառնում էր խավարը) նա սթափվեց Նեապոլի մի հիվանդանոցում, ծանր վիրահատությունից հետո։ Բացի ազգրի կոտրվածքից, պարզվեց, որ ջարդվել է նաև գանգը և ուղեղի ցնցում է ունեցել։ Անցյալը նա չէր հիշում, չէր հիշում բոլորովին։ Գիտակցության փայլատակումների հետ նա սկսեց թախիծ ու ցավ զգալ։ Բայց նա չգիտեր, որտեղից են դրանք, ինչու են դրանք սև ամպի նման պատում իրեն։ Նա ի վիճակի

չէր նույնիսկ երկու բառ իրար կապել։ Նա տանջալիորեն ջանում էր լույս գցել անցյալի վրա և դողում էր այդ լույսն ընկնելուց... Ամեն ինչ կատարվեց հանկարծակի։ Ամպը ցրվեց։ Նա լսեց Սիբիլլայի բարալիճ լացը։ Եվ գոռաց.

— Աղջի՜կս։

Նա փորձեց տեղից բարձրանալ, բայց տախտավանդներջ չթողին, և նա շրմփալով դիպավ պատին։ Հիվանդապահ կանայք նրա ձեռքերը բռնել էին։ Իսկ Բրունոն անընդհատ կանչում էր.

— Թանկագիննե՜րս։ Ես այստե՞ղ եմ։ Գալի՞ս եմ, գալի՞ս եմ։ Ախր որտե՞ղ եք։

Նրան փորձում էին հանգստացնել։ Նրան հաջողվեց վերականգնել իր ուղեղում աղետից առաջ վերջին ակնթարթները, նա աղերսում էր, որ իրեն ասեն, ուր են մնացածները։ Նա՞ մպասում էր— հիմա իրեն կասեն, որ նրանց փրկել են։ Նրան հակառակվել չէին համարձակվում։ Նրան հանգստացնում էին անորոշ, մշուշապատ արտահայտություններով, որոնց նա չէր հավատում, բայց պահանջում էր, որ դրանք նորից ու նորից կրկրկնեին, այլ կերպ նա չէր կարող ապրել, իսկ հակառակ հենց իրեն, անգիտակցական էգոիզմը նրան ստիպում էր ապրել։ Բայց մի քանի օրից հետո— օրեր, երբ նա լռելյայն, սարսափած, ծանր ու թեթև էր անում իրեն պատած ամեն մի բառը, իր կողմից նշան արած ամեն մի հայացք և իր սեփական հիշողությունները,— նա աղերսանքով նայեց իր վրա խոնարհված բժշկին (Բրունոն նրան վաղուց էր ճանաչում, բժիշկը նույնպես Հարավի ծնունդ էր, և նրա ընտանիքը հանդիպումներ էր ունենում Կիարենցաների ընտանիքի հետ).

— Ես գիտեմ, գիտեմ... Ես ձեզ չեմ հարցնում, թե ում եմ կորցրել... Ես ձեզ միայն հարցնում եմ, ո՞վ է մեռոնցից մնացել։

Այնպիսի անսահման կարեկցանք նա կարդաց բժշկի հայացքում, որ, ամբողջովին կծկված սառեցնող սոսկումից, կառչեց ուժեղ մի ձեռքից, որը դրված էր մահճակալի եզրին, և բղավեց.

— Ո՛չ։ Գոնե մեկնումեկը մնացել է... Ո՞վ է մնացել... Ասացեք ինձ, ո՞վ։

Բժիշկը կռացավ և համբուրեց նրան։ Այդ համբույրը կարծես երկրորդ անգամ Բրունոյին հրեց դեպի անդունդ։ Եվ նրա հատակից Բրունոն բղավեց հեկեկալով.

— Ինչի՞ համար, ինչի՞ համար դուք ինձ փրկեցիք։

Առավոտյան նա արդեն չէր հեկեկում, արցունք այլևս չկար։ Նա սոխրեց իրեն մանրամասն պատմեն բոլորը, ինչ հաջողվել էր իմանալ վկաներից, և տառապանքներից աղավաղված, բայց հանգիստ ձայնով այդ պատմությունը լսեց մինչև վերջը։ Նրան գտել են մենակ, ամբողջ ընտանիքից միայն իրեն, գտել են ավերակների եզրին, թափված բեկորներով կիսով չափ ծածկված։ Նրանց տունն իրենից անձև ավերակների կույտ էր ներկայացնում։ Նրանց քանդել-հանելու ոչ մի հնարավորություն չկար։ Մարդկային ձեռքերը չէին բավականացնում։ Ամբողջ քաղաքն ավերված էր։ Մի քանի հարյուր փրկված բնակիչների համակել էր գազանային խուճապը, և մահվան դեռ չհագեցած խայթը (հողը շարունակում էր մռթմռթալ, և ժամանակ առ ժամանակ դղրդյունով փլվում էին վերջին ավերակները) տափանքի և դաժանության թույնով բորբոքում էր այդ աստծո նզովյալների ընդերքը։ Մի ամբողջ ժողովուրդ ավերակների տակ էր գտնվում։ Եվ այդ նույն ավերակների տակ էր թաղված նաև աստված։ Արուներն ու էգերը, որ ողջ էին մնացել, բայց որոնց հոգիները մեռած էին, զուգավորվում էին եկեղեցաբեմերում։ Նախքան ծովից օգնություն հասնելը, քաղաքով սլացավ նողկալի, բարբարոսական կողոպուտների հեղեղը։ Այդ սոսկալի աղետից հետո մի ժամ էլ չէր անցել, երբ գիշատիչների հրոսակները նետվեցին դիակների վրա և սկսեցին թալանել նրանց։ Իսկ լեռներից իջավ ծովահենների, ավերակները պղծող ցեղը, որը դարեր ու դարեր դարանակալում է քաղաքների գլխին թափվող աղետներին, նման այն բանին, ինչպես մի ժամանակ մեր Բրետանի ափերին ծովահենները նավաբեկման էին սպասում։ Բայց, բարեբախտաբար, Բրունոն այդ ամենի մասին իմացավ ավելի ուշ։ Քանի որ բնության անողորմության և մարդկանց գազանության մասին միաժամանակ իմանալը նրա ուժերից վեր կլիներ։

Բրունոն հավաքեց իր ամբողջ արիությունը։ Որոշեց ինչ գնով էլ ուզում է լինի այցելել աղետի վայրը։ Հույս այլևս չէր մնում։ Անցել էր արդեն ամբողջ երեք շաբաթ։ Բայց նա ուզում էր տեսնել, ուզում էր տեսնել, ուզում էր ձեռք տալ։ Ախ, ո՞վ գիտե։ Չէ՞ որ Մագթաղինացին իր սեփական աչքերով տեսավ Ուսուցչի մահը, իր սեփական մատներով հպվեց նրա պաղ մարմնին, իսկ առավոտյան գնաց ու նրան կենդանի տեսավ,

տեսավ Այգեպանին... Ո՞ւմ կգտնի նա ավերակների տակ... Ջուր էին փորձում Բրունոյին ետ պահել։ Շարժվել նա չէր կարողանում, տախտավանդները կաշկանդում էին նրա շարժումները։ Նա կարգադրեց, որ իրեն պատգարակով տանեն։ Հավատարիմ բարեկամը պատրաստակամություն հայտնեց ուղեկցել նրան։ Ամբողջ գիշերը, չնայած փոթորկին, նա անցկացրեց շոգենավի տախտակամածին, իր պատգարակին պատկած, և նրա հայացքը մագնիսի նման ձգում էր, կանչում խավարի խորքերից սարսափների հոդը, որի մոտեցման մասին ազդարարում էին Ստրոմբոլիի կրակները։ Դանգի վերքին վնաս չհասցնելու համար, որի վրա ոսկե մեխիկներով արծաթյա թիթեղ էին դրել, բժիշկը Բրունոյին ստիպեց հագնել կաշվե սաղավարտ, և նա հիմա հիշեցնում էր նորմանդական խաչակիր։ Նա նույնպես գնում էր դեպի տիրող գերեզմանը... Դեպի գերեզմանը մի ամբողջ ժողովրդի...

„Horror, Fetor"[1]...

Արդեն Ռեջջոյի մոտերքը քամին հոտեր բերեց... Հսկայական աստված քայքայվում էր նարնջի այգիների կանաչով պատված բլուրների տակ... Դժվարությամբ զսպելով դեպի կոկորդը բարձրացող սրտխառնոցը, խաչակիրն անդրդվելի հաստատակամությամբ կարգադրեց իրեն տանեն այնտեղ, որտեղ առաջ նրա բույնն էր։ Աղետի օրվանից ոչ ոքի ձեռքը չէր դիպել ավերակներին։ Ասենք, նրանց սիրտ էլ չէին անում մոտենալ։ Այդ ավերակները ընկած էին վիթխարի բուրգերի նման, և ճակատագրի ծաղրով նրանց պսակում էր կոմս Կիարենցաների գլխիվայր շրջված զինանշանը։ Ջահ պատկերող նշանի տակ կարելի էր կարդալ. Per Chiarità carità» (Լույսի միջով՝ սեր)։

Այդ կույտը թաղել էր նրանց բոլորին, նրա ամբողջ արյունը, ամբողջ տոհմը... «Սեր, լույս»։ Ջահը հանգավ։ Ահա նա, Կիարենցա ընտանիքի դամբարանը։ Եվ թող այդպես էլ դամբարան մնա։

Բրունոն տունը չվերաշինեց։ Ավելի ուշ նա կարգադրեց ցեմենտապատել այդ գերեզմանաթումբը, և վիթխարի բուրգի վրա նրա հրամանով փորագրեցին այս բառերը.

Ruinae Sacrum[2]։

---

1 Սարսափ, ժխտահոտություն (լատ.)։

2 Սուրբ ավերակներ (լատ.)։

Հետագայում, շատ ավելի ուշ, նա պետք է նվիրեր «Մեծ Մայր» զոհասեղանը (Μήτηρ μεγίατη — «Սև հողին») (Գη-ρελαυσα)։

Նեապոլ վերադառնալու ճանապարհին նա շոգենավում հանդիպեց մի ուրիշ վիրավորի, մի ուրիշ դժոխքից ելածի, որը, ինչպես զառանցանքի մեջ, պատմում էր, որ ինքն աղետի վայրում այնպիսի տղամարդկանց է տեսել, որոնք նետվել են թալանելու դեռ չսառած դիակները աղետյալների։ Այդ մարդու աչքի առաջ նրանք ջարդել են մի կնոջ օգնություն աղերսող ձեռքը, որպեսզի ապարանջանը պոկեն նրա վրայից։ Պատմողը գոռում էր։

— Թող դրանց բոլորին սպանեն։ Այդպիսի մարդկանց պետք է ոչնչացնել։ Ե՞րբ է, վերջապես, հողը ճզմելու այդ բոլոր գարշելի սողուններին։

Եվ իր սրտում Բրունոն շնորհակալություն հայտնեց Սև մորը այն բանի համար, որ նա մարդկային դժոխքից փրկեց իր մեռելներին։

Համարյա մի տարով նա հեռացավ մարդկանցից, փակվեց իր մեկուսացած կալվածքում, Մարեմմայի ափին,— ճահիճներ, որ գտնվում են Նինֆայի և Ջիրլեո հրվանդանի մոտերքը։ Այդ կալվածքը, ուրիշ շատերի հետ միասին, պատկանում էր Կիարենցաններ տոհմին, և մնացած ունեցվածքի հետ միասին անցել էր նրան. կասկած չկար, կալվածքը, ուր նա հեռացել էր, ամենաանհրապույրն էր բոլոր եղածների մեջ, ընտանիքից ոչ ոք նրան նույնիսկ չէր գալիս այցելություն։ Սակավաթիվ բնակիչները ավերակների միջև արածեցնում էին իրենց հոտերը և տարեկան ութ ամիս հեռանում էին այդ անհյուրընկալ կողմերից՝ քշելով իրենց անասունները դեպի լեռնային արոտավայրերը։ Գյուղական խղճուկ հյուղակները պահպանելու համար մնում էին մի երկու-երեք թշվառական։ Նրանց քայքայում էր մալարիան։ Այստեղի իշխան-կալվածատերերը, որոնցից մնկն իր արծվային բնից կառավարում էր այդ ճահիճները, բնակիչներին խինինի հատիկ անգամ չէին տալիս։ Լեռների բարձունքից նրանք ճուռակի աչքով հետևում էին ջրերի և եղեգների անծայրածիր անապատներով։ Բրունոն այդ վայրերը չլքեց տենդի ժամանակաշրջանում և ինքն էլ հիվանդացավ մալարիայով։ Բայց դա նրա համար այնքա՞ն աննշան բան էր։ Վեր-

ջին ամիսների ընթացքում նա համարյա մարդկային դեմքեր չէր տեսնում, բացի մի պառավից, որը նրա տնտեսությանն էր հետևում, նրա փոքրիկ աղջիկ թոռնիկից և դեռահաս-տղայից (ուրիշ ոչ ոք այդ խավ վայրում չէր մնացել)։ Նրանք նույնպես մալարիայով հիվանդ էին։ Եվ բոլորովին չէին զարմանում։ Տղան (նրա տասնչորս տարին դեռ չէր լրացել, բայց նա տղամարդ էր, ընտանիքի գլխավոր) հանգիստ ասում էր որ իրենք կորստի մատնված մարդիկ են։ Նրա ճիշտ, զեղեցիկ դիմագծերով երեսը ապշեցնում էր իր գունատությամբ, աչքերը խելք էին ճաշակում, նա իրեն պահում էր ծանր ու պատկառելի, գիտակցելով իր պատասխանատվությունը, խոսում էր անկաշկանդ ու լուրջ, բայց ժամանակ առ ժամանակ խստորեն սեղմած շուրթերին կատարյալ մանկական մի ժպիտ էր հայտնվում։ Նրա անունը Աթանասիո էր։ Երկար ամիսների ինչ-որ դաժան լռությունից հետո, որը երեխան սրբորեն հարգում էր, նրա հետ, վերջապես, առաջին անգամ Բրունոն համաձայնվեց հոդու հաց՝ խոսք, փոխանակել։ Եվ տղան զարմանալի կերպով կարողանում էր գտնել տոնը։ Ութ ամիս էլ չէր անցել, փոքրիկ գյուղի բնակիչները դեռ չէին վերադարձրել իրենց հոտերը լեռնային արոտավայրերից, բայց Բրունոն արդեն այդ երեխայի վրա էր փոխանցել իր անհուն ու բուռն սիրո ամբողջ ուժը, մի սեր, որն այլևս նա չէր կարողանում զեղել իր սիրելի ճեռյալների վրա։

Բրունոն երեխային խլեց այդ Հողից, որը նրա միջից ծծել էր արյունը։ Նա Տարանտոյում բնակեցրեց տատիկին իր աղջիկ թոռնիկի հետ և նրանց ապրելու միջոցներ նշանակեց։ Իսկ իր վիլլան, որ Մետապոնտեի և Սիբարիսի միջև գտնվող Տարանտոյի ծովածոցից վեր բարձրացող լեռների վերջին ճյուղավորմանը վրա էր գտնվում, նա տարավ սևաշ տղային, որը, թվում էր, լսեց նրա հոգու կոչը։ Նա սկսեց երեխային ուսում տալ, և գիտելիքների հատիկն ընկնում էր արգավանդ դաշտի մեջ։ Վսեմաշունչ միայնության մեջ անցկացրած ամիսները Բրունոյի մտքերի առաջ բացեցին նոր անհայտ արահետներ, որոնք նա մինչև հիմա արհամարհում էր. նա հասկացավ Մեծ Հունաստանի հին առասպելների գաղտնի իմաստը, որոնց վեհ բանաստեղծություններն ու կերպարները սկզբում միայն զվարճանք էին, որ օգնում էին այդ դիլետանտ-գիտնականին մի կերպ անցկացնել ժամանակը։ Լուռ բարեկամության երկար

ամիսների ընթացքում Ծերունու և երեխայի միջև մի անբաժանելի փոխադարձ ըմբռնում հաստատվեց, և Բրունոն, հեքիաթներ պատմելով, ավելի ու ավելի հաճախ էր որսում պատանի հայացքում իր սեփական տեսնելու ձևերը։ Եվ ավելի ու ավելի հաճախ նա անգիտակցորեն իր տեսնելուն տալիս էր այն անպարզ ձևերը, որոնք առաջանում էին արթնացող պատանի գիտակցության մեջ, իսկ նրա հետ միասին կենդանանում էր նաև հանճարն այդ հին հողի, որտեղ ոչ հեռու հանգչում էր Պյութագորասը։ Դրանք տարօրինակ զրույցներ էին— երեխան ուշադիր, ագահաբար, բայց առանց որևէ բանի վրա զարմանալու, ունկնդրում էր եռակի իմաստով լուսավորված լեգենդներին, իմաստ, որը թաքնված է Օրփեոսականների խոր թեոգոնիայի մեջ. նրա հիմքում Դիոնիսից սերող աստվածների վեց սերունդ կա, աստվածների՝ Վեցերորդ թագավորության և Տիտաններին։ Եվ նույն այդ իմաստը իր համար բացում էր Բրունոն պատանու բոցավառ հայացքում։ Այդ տղայի համար, որին և դպրոցը, և եկեղեցին թողել էին անբովանդակ կյանք վարելու մալարիայի ճահիճներում, Քրիստոսը forestiere էր (օտարական)։ Եվ միայն զանգերի հեռավոր ղողանջն էր լեռնային հովտում երեխայի ականջին հասցնում աստծո որդու վախճանի լուրը. նրա համար դա մի հարո՜ւստ էր։ Երեխան հարգում էր նրան, բայց հեռվից, և չէր ընկերանում նրա հետ։ Մինչև աղետի օրը Բրունոն հաճույքով, գրեթե առանց երկար մտածելու և շատ սիրալիր կատարում էր կաթոլիկական արարողությունները, բայց Մեսսինայի ծառս եղած հողը մի շարժումով ավերեց նրա հավատի տաճարը. ավերակների կույտի վրա բազմաթիվ ամիսների ընթացքում ոռնում էր հուսահատության կատաղի քամին։ Աղետից հետո սկզբնական շրջանում Բրունոն ատելությամբ լցվեց աստծո դեմ, որին հավատում էր։ Եվ այդ աստծուն հատկացված տեղը դրանից հետո բաց էր նոր աստվածների համար։ Մեծ առասպելները, որոնք ննջում էին ազնիվ և գիտնական տրինակրիացու[1] ուղեղում, սթափվեցին, տարանտինյան լույսով արթնացված, որ ցայտում էր երիտասարդ Զագրեյի[2]— Դիոնիսի, գաղտնիքների ար-

---

1 Տրինակրիա— Սիցիլիայի հին անունը։

2 Զագրեյ—կրիտոսյան աստված, որին ըստ ավանդության, սպանել են տիտանները։ Յուպիտերը նրան վերակենդանացրեց ի դեմս Դիոնիսի։

քայլի աչքերից։ Երեխային առասպելներ պատմելով և չխաբվելով այդ առասպելներին, ինչպես, ըստ երևույթին, երեխան էր դրանց խաբվում, Բրունոն, այնուամենայնիվ, ցնցված էր նրանց մարգարեական իմաստով և իր սեփական ճակատագրի անողորմ ընթացքի հետ ունեցած, հանկարծակի հայտնաբերած, նմանությամբ։ Եվ քանի որ Բրունոն, Սիցիլիայի լուսավորված բնակիչը, գրեթե նույնքան անհավատ էր, որքան այդ գյուղացի տղան, նա հարբում էր անուրջներով, որոնք տեսլային մշուշի նման բարձրանում էին գետնից նրա կանգնած ջրերի սրտխռնուք առաջացնող քաղցրավուն հոտի հետ միասին։ Ավերված հարազատ քաղաքը նրան հիշեցնում էր Տիֆոնի ջղաձգությունները, որին ճզմել էր էտնայի ծանրությունը։ Եվ դաժանությունք տիտանների, որոնք դավաճանաբար առևանգեցին Դիոնիսի մանկանը, պատատոտեցին նրան և չափեցին, խառնվում էր նրա պատկերացման մեջ՝ կույր ցասման հետ տարերքների, որոնք ոչնչացրին այն ամենը, ինչ նա սիրում էր, այն ամենը, ինչ հուսահատության էդոիզմի մեջ նա կյանք էր համարում...

Բայց և սերը, և կյանքը վերածնվում էին։ Ոգետեսի աչքերը սեր և կյանք էին դոնում այդ տղայի մեջ, որին որդեգրել էր սիրո պահանջը, կյանքի բնազդը։ Ավելին, կիսազառանցանքի այդ վիճակում, որին նպաստում էր աղետից և նրանից հետո խուժող միրաժներով լեցուն լույսից ցնցված բանաստեղծի տպավորվողությունը, երեխան դարձավ հարություն առած Դիոնիսի մարմնացումը։ Եվ մի անգամ երեկոյան Բրունոն հանկարծ նրան տեսավ այնպես, ինչպես որ նրան նկարագրում է Հոմերոսի բանաստեղծությունը. ահա նստած է նա «անծայրածիր ծովի ափին, հրվանդանի դուրս ցցված մասում, մազերի սև, գեղեցիկ խոպոպները ուսերին թափված։ Նա դողալով փաթաթվում է կարմիր ցնցոտիներով և տենդային ջերմության մեջ ժպտում է «իր սև աչքերով»։

Բայց հանկարծական պայծառացման հետ միասին վերադարձավ տագնապը։ Չլինի՞ թե այդ պատանի աստծուն, «այդ տառապող աստծուն», վիճակված է նորից մեռնել։ Բրունոն չափազանց ուշ նկատեց արևի այրող շողերի տակ դողացող այդ պատանու գունատ դեմքին Մեֆիտիսի՝ տենդի թագուհու, քևի ստվերը։ Նա անհրաժեշտ խելամտություն չցուցաբերեց— այդ նվազ բույսը դուրս չքաշեց ծունավորված հողից, չտարավ

նրան հեռավոր հյուսիսը, որտեղ օդն ուրիշ է, ուրիշ է հողը։ Բրունոն կործանարար հարթավայրերից նրան տեղափոխեց ընդամենը մի քանի լյո հեռավորության վրա, տեղավորեց բլրալանջին, փոքր-ինչ ավելի հեռու, ավելի բարձր, և բավարարվեց դրանով։ Հաճախ էր նա տրվում վտանգավոր գայթակղությանը և, կարծես կախարդված, երեխայի հետ միասին իջնում էր ստափնյա ավերակների չոր կախարդանքներով վարակված գոտին։ Նա, ով գոնե մի անգամ լսել է ծովահարսերի ձայնը, այնքան էլ հեշտ չի մոռանա։ Եվ, ինչքան էլ ուզում է փորձված լինես, քեզ չի հաջողվի չենթարկվել այն կանչին, որը գալիս է անապատում գտնվող օազիսներից, այդ սաղարթախիտ օթևանից, որտեղ ժպիտի նման շողշողում է կանգնած, անհանգիստ ջրերի աչքը, երկնքի և ծովի ցոլքերից առաջացած այդ ծիածանին։ Երբ Բրունոն գիտակցեց չարքը, այն արդեն կատարված էր, վճիռն ստորագրված էր արդեն։ Նկրտում խընդրելն արդեն ուշ էր։ Ով գիտե, գուցե մի տարի առաջ էլ, միևնույն է, ուշ կլիներ։ Պատանի աստվածը դատապարտված էր ծնունդի հենց առաջին օրից։ Հազար օրվա, հազար դիշերվա ընթացքում թույնը նրա երակներում կուտակվել էր, ինչպես ջրային ճանապարհներում։ Անլսելի քայլով տենդը գողեգող մոտեցել էր ու թափանցել ամենախորքը։ Եվ, դառնալով լիիրավ տեր, նա շուրջն ամեն ինչ թունավորում էր իր վաղորյին շնչով։

Բրունոն վախեցած էր նոպաների ուժից. սկզբում հիվանդ երեխայի ատամները դողից չկչկում էին, գալարվելով գալիս էին ալիքները պաղեցնող ցրտի, որը մի քանի ժամվա ընթացքում մարմինը ցնցում էր մպհվան դողով, իսկ այնուհետև՝ անզսպելի սրտխառնության նոպաներ, չկրմուքյուն, թաց քունքեր և զառանցանք։ Բրունոն սեղմում էր, գրկում դժբաղթ թուշնակին, ապարդյուն ջանում էր մերթ ջերմացնել նրան, իր կրծքին սեղմելով, մերթ հովացնել վառվող դեմքը։ Մոր հոգատարությամբ նա սրբում է երեխայի քրտինքը, որից ամբողջովին թրջվում էին շապիկներն ու սավաններըր։ Ջորացնում, փոխում սպիտակեղենը։ Խեղճ փոքրիկ Դիոնիսը, հոդագույն, սիրթնած դեմքով, ուռած փորով, նիհար ձեռքերով ու ոտքերով, օր օրի վրա հալվում էր։ Բրունոն քայլ առ քայլ ջանում էր նրան խլել մահվան ձեռքից։ Այդ ճակատամարտում, որ նրանք վարում էին երկուսով, Բրունոն երեխայի համար փոխարինում էր բոլորին. հորը, մորը, եղբորը, քրոջը... Նա

երիտասարդ այդ հոգու մեջ էր դրել սիրո ամբողջ պահանջը... Այդ կայծը նրա օջախից ելնող բոցի վերջին ցոլքն էր։ Նա կենտրոնացրեց դրա վրա իր հոգու կրակի ամբողջ մնացորդը, եթե նա ականջ դներ իր մեջ եղած բողոքի աղաղակներին, նա առասպելական տիտաններու նման, կատաղության մեջ կընկներ։ Բայց Բրունոյի ձեռքերի վրա պառկած էր մեռապոետացի փոքրիկ Քրիստոսը, որը խաչ էր տանում, Քրիստոսի չարչարանքների խաչը, Διονυσω τα՝ παζη՝ματα, և, թվում էր, թե գիտակցում է այդ։ Երեխան Բրունոյից չէր հեռացնում իր խոր և տխուր հայացքը, որը զառանցանքի բոպեին անդունդի էր նմանվում. Սակայն նույնիսկ ստվերների միջով անցնում էր տարօրինակ հանդարտության ցոլքը։ Եվ երբ հիվանդությունը շունչ առնելու հնարավորություն էր տալիս և ժամանակավորապես հանգիստ էր թողնում այդ ուժաթեկված մարմինը, տղան քնքշորեն խնդրում էր իր բարեկամին էլի մի հեքիաթ պատմել— նոր կամ մի անգամ արդեն լսած։ Եվ Բրունոն, կարծես ոգևորված երիտասարդ աստծո աղերսանքից, բացում էր այդ աստծո առաջ— և բացում իր առաջ— նրա ճակատագրի գաղտնիքը. գաղտնիքը Օրփեոսական ավետարանից գոհաքերված Փրկչի, որը մեր այսօրվա հերոսների «Durch Leiden Freude»-ից քանհինգ դար առաջ իր օրինակով տառապանքների և չարչարանքների միջոցով,— գաղտնիքն աստծո, որը չարդում էր ծնունդների անիվը, որպեսզի միացնի ընտրյալներին Միակի համապարփակ խնդության մեջ։ Ով գիտե, երեխան հասկանո՞ւմ էր արդյոք բոլոր այդ բառերը։ Բայց բնազդով դրանք ընդունում էր։ Ընդունում էր խարույկին զամված բնածին զոհի ֆատալիզմով։ Դեռ մանուկ հասակից նա պատկվել էր Բնության, այդ մարդասպանի հետ, որը լափում էր նրան։ Եվ չէր փորձում ապստամբել։ Նա լուռ ընդունում էր իր նշանածին, իր սիրեցյալին— Տենդին, որի աչքերը արեով ոսկեզօծված ծավալճակներ են, իսկ մանյակը՝ եղեգներում վխտացող սողունները։ Այդպես պետք է։ Նա հնազանդվեց։ Եվ հիմա պետք է ամուսնանար նրա հետ։ Այդ փոքրիկ տղամարդը ամուր էր սեղմում այն բարեկամի ձեռքը, որին շուտով կլքի։ Եվ երբ նրան ցնցում էր տենդը, նա Բրունոին այնպես էր նայում, կարծես ներողություն խնդրելիս լիներ։ Նա Բրունոյին կինաղաուռնցանքի մեջ ասում էր, որ ինքը պնում է

pellgrinaggio pi l' Angile[1]։ Նիհարիկ ձեռքով նա շոյում էր Բրունոյի այտերը։

Մի առանձնահատուկ ուժեղ նոպա տարավ նրան։ Նա մեռավ այն օրը, երբ արևը ճահիճների մուժի միջով, դաժանորեն այրում էր, մեռավ ձեռքերը կրծքին խաչած և լայն բացած աչքերը հառած դեպի բարձր, ոչ մի կնճիռ չունեցող երկնքի լաղուրը։ Նա խմում էր այդ լազուրը իր թաց շրթունքներով։ Եվ խելագար Բրունոյին, որը տղայի վրա խոնարհված, որսում էր նրա վերջին շունչը, հանկարծ թվաց, որ այդ շուրթերի մեջ թափվեց աշխարհի ամբողջ գեղը...

Կարծես ի լրումն խորհրդանշանի հանդավ աշնանային օրը։ Մոտենում էր ձմեռը։ Դիոնիսը՝ սպանված աստվածը, անհետացավ։ Նա հարություն կառնի, ինչպես հարություն էր առնում գարնանը նա, ում փառաբանում էին Բաքոսի քրմուհիները Διχνίτηις, ինչպես այն «նորածինը»։

Բրունոն փակեց նրա աչքերը, ինքը լողացրեց և ինքը թաղեց տղային դեպի ծովն իջնող բլրալանջին, երիտասարդ նշենիների այգու մեջ, և գերեզմանին դրեց հասարակ մի քար, որի վրա գրված էր ընդամենը մի բառ. Αζανατοζ[2]։

Բրունոյի մանկիկի գերեզմանաթմբի շուրջը բզզում էին մեղուները, նրանց թևիկները, թվում էր, օդում դրոշմում են երկու ոսկյա բանաստեղծական տող.

«··· éiζ αiζέρ élξυζίρον··· α'ζα'ναζ ζεὸζ ἄμβρο'τοζ»[3]

Այդ ժամանակ Բրունոն վեդադարձավ «մահկանացուների» մոտ։

Մոտ երկու տարի անցավ աղետի ժամանակից, երբ Բրունոն նորից հայտնվեց մարդկանց մեջ, արդեն շատ քչերն էին հիշում նրա մասին։ Բայց նույնիսկ այն քչերը, ովքեր հիշողություն էին պահպանել Մեսսինայի մասին, նույնիսկ նրանք, Բրունոյին նայելիս, վախեցած հարցնում էին իրենց, չլինի՞ իրենց աչքին է երևացել այդ ուրվականը։ Անցյալը ոչ մի հետք չէր թողել կոմս

---

1 Ուխտադնացություն դեպի Սան-Միկելե-ալ-Գարգանդ սրբավայրը, դեպի հրաշքների լեռը, որը գտնվում է Իտալիայի սապոգի խթանին։— Ռ. Ռ.։

2 «Անմահ»։ Հունարեն այդ բառը համահնչյուն է Ատանասիո անվան հետ։— Ռ. Ռ.։

3 «Ագատ եթերում...աստված է, անմահ, անեղծ»։— Ռ. Ռ.

Կիարենցայի, ազնվական տոհմի վերջին ներկայացուցչի դեմքին։ Նա ոչ միայն ինքը երբեք խոսք չէր բացում ազեռի մասին, այլև հեռացնում էր, կարծես չլսելու տալով ամեն մի ակնարկ կամ կարեկցանքի խոսք։ Նրա հանդիստ դիմագծերը լուսավորում էր խիստ, ինքնամփոփ ժպիտը։ Տառապանքների մատները սահել էին լոկ մազերի և խնամված մետաքսանման մորուքի վրայով, ժամանակից շուտ ծածկելով դրանք ճերմակով (կոմսի դեռ քառասուն տարին էլ չէր լրացել)։ Նա ուժերի կատարյալ ծաղկման շրջանում էր— երիտասարդորեն ճկուն էր և ամուր։ Նա, ով չգիտեր, դիսսոնանսների ինչ ժայռաբեկորից էր քանդակված այդ ներդաշնակությունը, ակամայից տարակուսանքի զգացում էր ունենում... Բրունոն կարծես ծառ լիներ— բոլոր ճյուղերը կտրտված են, իսկ բունը համառորեն ձգվում է դեպի երկինք։ Որոշ զգայուն հոգիներ քիչ էր մնում դրա համար նախատեին նրան։ Նրանց, ինչպես Պեկյուշեին[1], ավելի շատ ձեռք կտար կայծակից տապալված կազնու տեսարանը։ Կոմս Կիարենցան նրանց չէր հաղորդում, որ կայծակը մտել է նրա միս ու արյան մեջ, նա կարծես առասպելական սալամանդր լիներ. կրակը պարձել էր նրա տարերքը։ Եվ նա ապրում էր այդ տարերքի մեջ միայնակ ու մերկ։ Նրա երջանկության կառույցը, նրա մտքի շենքը, նրա ամբողջ անցյալը ավերված էր, կտրած ու դեն նետած չնչած երկրի երեսից։ Ստիպված էր ամեն ինչ նորից սկսել։ Եվ նա մենակ սկսեց վերակառուցել հիմքը։ Որքա՜ն արյուն «quanto sangue», պետք եղավ դրա համար։ Բայց առանց այդպիսի ցեմենտի ոչինչ չէր ստացվի, այլապես շենքը երկար չի դիմանա։ Կոմս Բրունոն միայն հիմա հայտնաբերեց, որ հենց այդ ցեմենտից չկար բոլոր այն կառույցներում, որոնք նա կանգնեցրել էր մինչև հիմա։ Այն ամենը, ինչ նա մինչև հիմա անում էր կամ մտածում էր, որ անում է, սիրում էր կամ մտածում, որ սիրում է, ընդամենը խաղ էր... Բայց ի՞նչ սքանչելի խաղ... Նրա մասին մտածելիս հեկեկանքները խեղդում էին կոկորդը, թախիծը կտոր-կտոր էր անում սիրտը։ Այո, միա՛յն խաղ։ Եվ ի՞նչ զարմանալի բան կա, եթե հասարակ սյուքը, երկրագնդի կեղևի դողը հոդմացրիվ արին նրա խաղը... Մնաց սոսկ այն, ինչ մեռնող չէ. հավիտենապես Միակի սարսափելի Ոգին, նրա անողորմ լույսը և նրա անողորմ անդորրը։ Բրունոն լույս հայտնաբերեց

1 Պեկյուշե—Ֆլոբերի «Բովար և Պեկյուշե» վեպի հերոսը։

այն դատարկության խորքերում, որն հիմա ապրում էր իր մեջ և մեռնող ἀσάνατος -ի հայացքում։ Նա հայտնաբերեց նրան հին տրինակրիական և իոնական մտածողների մումիաների թաղանթի տակ, որոնցով մինչև օրս հիանում էր ինչպես թանգարանային մեծ արժեքի հազվագյուտ իրով։ Նրանք հանդես էին գալիս Բրունոյի առաջ իրենց իսկական լույսով, աղետներով հագեցած այն օդում, որը շնչում էին նրանք և շնչում էր ինքը։ Նրանք հարազատ էին դարձել իրեն։ Եվ այժմ, երբ Բրունոն նրանց հետքերով ավարտում էր իր Κατάβασις Ἄδου իր դժոխք իջնելը, աշխարհը տեսնելու նրանց սղբերգական և պարզ ձևը դարձավ իր տեսնելու ձևը։

Բարեբախտաբար, դա սկսեց իշխել ոչ միայն նրա մտքի վրա,— պատանի բարեկամի մահից առաջ ունեցած ժպիտը տիրացավ նաև սրտին։ Տղայի վերջին շնչից նա վերցրեց ընդունելությունը— εὐδαιμονία։ Եվ եթե նա անկարող էր արգելել, որ վերքերը նորից չբացվեն գիշերը (գիշերները), լոկ գիշերն էր դրա վկան, վերքերից հոսող արյունը թափվում էր խավարի մեջ։ Եվ Բրունոն, ինքը զոհ լինելով, մահճին փռված, երկու ձեռքով սեղմում էր սիրտը, նա իր արյունը զոհաբերում էր երկնային ներդաշնակությանը, նա այդ ներդաշնակության աղեկտուր ակորդն էր։ Եվ երբ օրը բացվում էր, նրա անտարբեր լույսը մարդկանց առաջ բացում էր ոչ թե անցողիկ տառապանքները, այլ հավիտենական ներդաշնակությունը։

Հարազատների մահը Բրունոյին դարձրեց տոհմական հարստությունների մեկ տերուտնօրենը։ Դրանք նրա համար բեռ էին։ Բայց այնքան էլ դժվար չէր նրանց արժանի կիրառում գտնելը։ Հենց այդ շրջանում Իտալիան, վերջապես ժամանակ գտավ նկատելու այն անլուր բարբարոսությունը, որի մեջ քարանում էր ասիծո և մարդկանց կողմից մոռացված դժբախտ Հարավը— Mezzogiorno-ն։ Մեծահոգի մարդկանց մի ամբողջ սերունդ իրեն նվիրել էր գրեթե անլուծելի մի խնդրի լուծման— դուրս քաշել մահվան անողորմ ճիրաններից այդ վայրի և նեխած հողը։ Նույնիսկ պառլամենտը— պառլամենտական շատախոսները— առաջարկում էին եթե ոչ գործնական օգնություն, ապա գոնե այնպիսի օրենքներ, որոնց խնդիրն օգնելն էր։ Մասնավոր նախաձեռնությունը, չանալով փոխհատուցել պետության դատարկ խոստումները, ստեղծում էր բարեգործական

ընկերություններ և ընկերություններ՝ Բազիլիկատայի և Կալաբրիայի վերաստեղծման գծով։ Կոմս Կիարենցան իր ունեցվածքի մեծ մասը տվեց դիսպանսերներ, որբանոցներ և դպրոցներ կառուցելուն։

Բայց անարդարացի կլիներ այդ վերագրել նրա սրտի մեծահոգությանը (նա ինքն առաջինը կժխտեր նման գովասանքը)։ Նա եղբայրական սիրո համար դեռ չէր ծնվել։ Աղետի ժամանակից ի վեր, որը տարավ բոլորին, ումով նա ապրում էր, Բրունոն խուլ և կույր, չգիտակցված չարությամբ էր նայում նրանց, ովքեր ողջ էին մնացել։ Նույնիսկ ոգու պայծառացումը չէր կարողանում բուժել այդ թարախակալած վերքը։ Նա ամաչում էր դրանից, բոլորից թաքցնում էր այդ։ Նա թաքուն փորձում էր շիկացած երկաթով այրել ու ոչնչացնել այդ վերքը։ Փորձում էր նորից հարաբերությունների մեջ մտնել մարդկանց հետ, ժպտալ նրանց, օգնել։ Բայց չէր կարողանում հաղթահարել իր օտարացումը։ Եվ միշտ չէր, որ հաջողվում էր թաքցնել այն։ Ուրիշի հայացքից չէր սպրդում այդ պաղեցնող փայլը։ Չէ որ նա կարող էր միայն հարկադրել իր ոգուն, որ գործի, բայց չգիտեր սիրո ջերմ խնդությունը։ Նա բարի գործ էր անում, շատ բարի գործեր, իր անունը դնելով հանգանաձերթերի վրա, բարի գործ էր կատարում ուրիշի ձեռքերով։ Շնորհակալության նա չէր արժանանում։ Նա այնպես էլ գլուխն ազատում իր հարստությունից, կարծես ձանձրացնող պարտք էր վճարում։ Եվ մուրհակները մարելով, մտովի պարտատերերին ասում էր. «Իսկ հիմա աչքիցս հեռացեք»։ Դեռ շատ ժամանակ պահանջվեց, նախքան նա ուժ կգտներ առանց վրդովմունքի տեսնել մարդկային դեմք։ Պահանջվեց, որ դադարից ելնի պատանի Դիոնիսը։

Ձմեռային արևը երկնքից չէր հեռանում։ Չէր հեռանում ամբողջ տարիներ։ Կոմս Կիարենցան դրանք անցկացրեց գիտությամբ զբաղվելով և երկար ճանապարհորդություններում։ Նա զարգացրեց հին իմաստունների մտքերը, և Պյութագորասի ու Էմպեդոկլեսի ստղը նրան բերեց Արևելք։ Նա առաջ էլ մի քիչ գիտեր սանսկրիտը։

Հիմա նա լրացրեց իր բանասիրական կրթությունը, և քանի որ մնացած միջոցները նրան թույլ էին տալիս տեսական ճանապարհորդություններ կատարել, նա մի քանի տարի անցկացրեց Հնդկաստանում ու Տիբեթում։ 1911 և 1914 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում նա հորիզոնից անհետացավ։ Որտեղ

էր և ինչպես էր ապրում,— ոչ ոք ստույգ այդպես էլ չիմացավ։ Իսկ նա ինքը այդ ժամանակի մասին լուռ էր պահպանում, երբ գուցե պիլիգրիմի և մուրացկանի ցնցոտիներով, թափառում էր Ասիայի բարձրավանդակներով կամ ամիսներ շարունակ փակվում էր որևէ լամայական[1] մենաստանի խցում, տիվ ու պիշեր անցկացնելով գաղտնիքների ինքնախորասուզված ճանաչման մեջ։ Նա հեռանում էր կենդանի աշխարհից, բայց, պետք է ենթադրել, հենց այդ ժամանակ և այդտեղից առավ իր հիանալի խորաթափանցությունը, որը հետագայում ցայտուն կերպով դրսևորվում էր գործերի մեջ։ Լեռնագագաթների դունատ լույսի մեջ միայնակ թռչունի նրա հայացքը, որ այնքան երկար մշուշված էր արցունքով ու փոշով, մաքրվեց, ձեռք բերեց չարխած դանակի սրություն և, հենց դանակի նման էլ, սուզվում էր հիմա մարդու սիրտը։ Բրունոն տեսնում էր խորքերը, շփվում էր եվրոպական քաղաքակրթության ախտերին ու մոլորություններին, աղետ տեսավ և ավերակներ, որոնք սպառնում էին Արևմուտքին։

Մենակյացն իր Հիմալայները թողեց 1914 թվի հունիսի վերջին և իջավ դեպի Գանգեսի հովիտները, քանզի զգաց, որ իր ոտքերի տակ հողն սկսեց ահեղորեն մոթմոթալ։ Եվ ընդառաջ գնաց պատերազմին, թեև Եվրոպայում այն ժամանակ լոկ քչերն էին տեսնում նրա մոտենալը։ Նա պատերազմի հետ բախվեց Կալկուտայում. այնտեղ նա իմացավ կոտորածի պաշտոնական հայտարարության մասին, կարդալով սպիտակ մի թերթիկ, կախված փողոցում, որով հոսում էր արյան մի առվակ,— արյունը հոսում էր Կալի տաճարի դարբասատակից, որտեղ մորթում էին մատաղի բերված այծերին։ Նա Եվրոպա մեկնեց շոգենավով։ Քանի որ միայնակ ու կրքոտ ինքնախորասուզման ժամերին նրա առաջ բացվեց իր ապշեցուցիչ նույնականությունը բոլոր կենդանի էակների հետ, կարծես երկու մարմին զրկախառնված միաձուլվեցին,— և նա հասկացավ այն, ինչն այդքան երկար ու այդքան համառ միայն սգի էգոիստական վշտի մեջ ցանկություն չէր ունեցել նկատելու։ Եվ նա որոշեց ճաշակել մարդկային փորձություններն իր բաժինը։

Բրունոն գիտակցում էր այդ պատերազմի անմտություն ու հանցավորությունը։ Հակառակ լստինական արյան ու Ֆրանսիայի նկատմամբ ունեցած համակրանքի գաղտնի ձայնին, նա

---

[1] *Լամա*—բուդդայական քահանա Տիբեթում և Մոնղոլիայում։

փորձում էր կոտորածից հետ պահել իր ժողովրդին։ Բայց ոչ ոք ժողովրդի կարծիքը չհարցրեց։ Եվ երբ ժողովրդին բռնի կերպով սպանդանոց նետեցին, կոմս Կիարենցան կամավոր գնաց նրա հետևից։ Նա գրանցվեց սանիտարական ծառայության, շարժական հոսպիտալ կազմակերպեց ու ամբողջապես տրվեց այդ գործին։ Նա գտնվում էր ամենավտանգավոր տեղերում, Ալբանիայի և Մակեդոնիայի ամենադժվարին արշավանքների մասնակիցն էր, անփառունակաբար նահանջում էր իր Հարավի զինվորների հետ, նրանց հետ միասին փտում էր խրամատներում, տեսնում էր, ինչպես են նրանց հնձում բծավոր տիֆն ու մալարիան։ Նրա խորին հանգստությունը ընդանիքային դնդակոծության ժամանակ փոխանցվում էր հոսպիտալի սանիտարներին և բազիլիկատացի վայրենի գյուղացիներին՝ հոդեվարքի րոպեներին։ Նա իր միսիան ավարտված չէր համարում, երբ կյանքը հասնում էր իր վերջին։ Հենց այդ ժամանակ էր, որ սկսվում էր նրա իսկական միսիան—Բրունոն օգնում էր նրանց վերջին հանգրվանում։ Նա մեծ մեդալ ստացավ համաճարակային հիվանդությունների դեմ պայքարելու համար և ռազմական խաչ։

Երբ պատերազմը վերջացավ (կամ, ավելի ճիշտ, ժամանակավորապես դադարեց), Բրունոն իրեն նվիրեց այդ Mezzogiorno-ի վերածննդին, որին նա ավելի խորը ճանաչեց՝ շփվելով նրա նահատակների հետ, նրանց հետ, ովքեր իրենց մարմիններով ծածկեցին պատերազմի դաշտերը։ Այս անգամ նա չզոհացավ, իր մնացած ունեցվածքի մեծ մասը տալով տարբեր Associazioni և Opere nazionale[1], որոնք գործում էին նրա փոխարեն այնպես, որպեսզի նրա աչքը չտեսնի, ուր է գնում նրա ձեռքի շնորհածը (անտարբերի համար ինքնահրաժարման դոկտրինայից ավելի հաճելի բան չկա, որ պահանջում է՝ ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում աջը)։ Կոմս Կիարենցան բնակություն հաստատեց այդ կողմերում, Պոտենցայում, որտեղ հարյուրավոր ընտանիքներ, ինչպես սպիտակ որդեր, վխտում էին գեռևի տակ sottani-ում— նկուղներում, քարայրներում, չորացած ջրամբարներում։ Նա հավաքագրվեց որպես խաչակիր, որոնք նպատակ էին դրել դամբարաններից պոկել այդ խաբնված, դավաճանված, լքված «մարդկային որդիներին», նվաճել այդ չարաբաստիկ երկրամասը երեք վհուկներից, երեք արնախում

---

1 Ասոցիացիաներին և ազգային կոմիտեներին (իտ.)։

աստվածուհիներից։ Նրանց ուրվականներին կոմս Բրունոն դուրս կանչեց Աննեատայի առաջ բլրի վրա, որը, կարծես լուսնե օղակով, շրջապատված էր ճահիճների մահաբեր գոլորշիներով,— Աղքատության ուրվականին, Տենդի ուրվականին և Սոսորգեանյա հրի ուրվականին,— և ավելի սոսկալի, քան այդ երեքն են, ուրվականին չորրորդ աստվածուհու, որը, դատելով հանգամանքներից, կոչվում է մերթ Ընդունում, մերթ Հնազանդություն, մերթ Ապատիա և որը ոչ այլ ինչ է եթե ոչ՝ անշարժություն, թմրածություն, որը թույլ չի տալիս նույնիսկ խուսափել ճակատագրի քեզ վրա բարձրացրած բռունցքի հարվածից... Չէ՞ որ այդպես է եղել դարեր ու դարեր շարունակ և այդպես էլ լինելու է in saecula[1]։ Այդ միջնադարը, անբուժելի վերքի նման, քայքայում էր հպարտ աղգի մարմինը, որը նորից ու նորից դառնությամբ համոզվում էր, որ հաղթանակը չարզարացրեց շատ սպասումներ, և ուխդրում էր հռետորների սադրանքներին, որոնք կոչ էին անում պահանջել Imperium Romanum[2] ժառանգություններ։ Բայց պատերազմի, փառքի, զավթումների և փրկուն խրատական ասացվածքների հին ժառանգության մեջ մի պատվիրան ոչ մի կերպ չէր գայթակղում այդ առաջին եռապատերազմյան տարիներին աղմկող քարոզիչներին. պատվիրանը հին Հռոմապետության լեգեոներների, որոնք, վերադառնալով հարպաս օջախ, համառորեն նվաճում էին սեփական հողը նրանց, ովքեր չորացնում էին տենդով վարակված դաշտերը, բաց էին թողնում նրանց կանգ առած արյունը և վերականգնում էին Իտալիայի ամբողջ հսկայական մարմնում հղոր աքվեդուկների սիստեմը։ Բայց արյունը պետք է հոսեր ոչ միայն երակների մեջ, այլև հոգում այդ երկրամասի, որը կարծես թաղվել էր կաթվածական համայնքություններում,— l'han pigliateduocchi (չար աչքն է փչացրել), կասեին հին ժամանակներում։

Եվ ահա կոմս Կիարենցայի պայծառ ու հանդիսա աչքերը պայքար սկսեցին այդ չար աչքի դեմ։ Նա անցավ ամբողջ շրջակայքը, բուժելով ֆիզիկական ու բարոյական վերքերը։ Նա փոխափոխ և բժիշկ էր դառնում, և առաքյալ, և հող փորող, ու ամենուրեք, որտեղ նա ոտք էր դնում, լույսի մի շերտ էր մնում։

---

1 Հավիտյան (լատ.)։

2 Հռոմեական կայսրության (լատ.)։

Բարալիկ մի ժպտավեն։ Բայց մատնաչափիկի քարերի նման նա եռևից գնացողներին հնարավորություն էր տալիս գտնելու անտառում ճանապարհը։ Քանի որ նրա եռևից գնում էին ուրիշները։ Նա զարմանքով իր մեջ կազմակերպչական հատկություններ ու քարոզչական կրակ հայտնագործեց։ Նրա կրքոտ իդեալիզմը բորբոքում էր ուրիշ գլուխներ, կանանց և տղամարդկանց գլուխներ. ինչպես ամենաբարձր, այնպես էլ ամենացածր կարգի, փոքրիկ կոհորտայի կրակոտ ու մաքուր,— այդպիսի բարձր շիկացածության, թերևս կարելի է հանդիպել միայն Իտալիայում. որտեղ իրար են միանում հոգու ծայրահեղությունները. կեղտն ու կրակը։

Կոմս Բրունոյի ուղևորություններից մեկի ժամանակ, երբ նա մեկնում էր Ագրի, որ Պիստիչչիի հարավում է, Աննետան հանդիպեց նրան վագոնում այն գնացքի, որը կատում-անցնում էր Բազենտոյի հովիտը։

Եվ իր ամբողջ կյանքը, որ ընդգրկում էր հզոր թռիչքով ամենատարբեր տեսարաններ— Մեսսինայի նարնջի այգիները, Դիոնիսին, որ տենդից վառվում էր ճահիճների խավարի փայլի մեջ, Տիբեթի բարձրավանդակների ձնափոշին և այնքան լեռնագագաթներ ու այնքան անդունդներ,— այդ ամբողջ կյանքը իր ուշադիր զրուցակցի առաջ կոմս Բրունոն բացեց ընդամենը մի գիշերվա ընթացքում, բացեց արագ ու հապճեպ, ինչպես համայնապատկերում։ Սակայն հիմնական գծերը կարծես փորված լինեին հատիչով, և դրանք տպավորվեցին Աննետայի հիշողության մեջ։ Բնությունից օժտված լինելով անսխալական ներքմբռնմամբ, Աննետան առանց դժվարության թափանցեց այդ ողբերգական անվրդովության գաղտնի էության մեջ։ Ոչ թե հասկացավ, այլ մատով հպվեց։ Աննետան չէր փորձում հարցաքննել իր ուղեկցին։ Բրունոն ինքն էր պատմում, առանց հարցերի սպասելու։ Եվ, առանց Բրունոյի հարցերին սպասելու,, Աննետան էլ ինքը նրան պատմեց իր մասին։ Պատմեց ինչ-որ տարերային պոռթկումով, ի շնորհակալություն այն բանի, որ Բրունոն վստահեց իրեն։

Նրանք գնացք նստեցին արդեն որպես բարեկամներ։ Բրունոն խնամում էր իր հիվանդին։ Աննետան դեռ լրիվ չէր ապաքինվել թոքերի գրիպոզ բորբոքումից, և այդ բորբոքումն իրեն զգացնել էր տալիս տենդի նոպաներով։ Ու թեև Բրունոյի ճանապարհն ընկած էր բոլորովին ուրիշ ուղղությամբ, նա Աննետա-

յին չթողեց մենակ,— գիշերը նեապոլում անցկացնելուց հետո նա իր ձեռքով Աննետային նստեցրեց Փարիզ գնացող գնացքը և այդ ժամանակ միայն նրան հրաժեշտ տվեց։ Ամեն ինչ պարզ ու հասկանալի էր նրանց զուտ եղբայրական հարաբերությունների մեջ, ոչ մի անհարմարություն, ոչ մի եսին միտք։ Եվ այնուամենայնիվ նրանք չպայմանավորվեցին նոր հանդիպման համար։ Նրանցից ամեն մեկի կյանքը մինչև վերջը լեփ-լեցուն էր իր պարտականություններով։ Միայն իմանան, որ նա, այն մյուսը, գոյություն ունի,— և դա լիուլի բավական էր երկուսի համար էլ։ Նոր տարուն նրանք կանոնավոր կերպով կարճ բարեկամական ողջույններ էին փոխանակում։ Աննետային գործերը խիստ կլանում էին,— չէ որ նա ոչ թե մի կյանք, այլ երեք կյանք ուներ, նույնիսկ չորս, (իր սեփականը, որդիներինը և թոռնիկինը), նա ժամանակ չուներ, ասենք, պարզապես չէր էլ կարող հետևել իր հին բարեկամի-իտալացու գործունեությանը։ Աննետան չգիտեր, որ կոմս Կիարենցայի անունը հռչակ էր ձեռք բերել, և, իհարկե, ինքը Բրունոն այդ մասին ոչ մի դեպքում չէր հայտնի նրան։

Կոմս Բրունոն շարունակում էր իր հասարակական ծառայությունը։ Նորից էր արթնացել նրա մտքի երբեմնի հակումը դեպի գիտությունն ու մտահայեցողությունը, բայց հիմա նրա հետաքրքրությունները դարձել էին շատ ավելի խոր ու ավելի լայն։ Աշխատանքները, որոնք նրա ղեկավարությամբ տարվում էին Բազիլիկատայում՝ ճահիճները չորացնելու և հողերը ոռոգելու գծով, բերին որոշ հնագիտական հայտնագործություններ, իսկ նրանք էլ իրենց հերթին արթնացրին գիտական որոնումների ոգին և պոկեցին լռության կնիքը, որը նա իր շրթունքների վրա էր դրել քսան տարի առաջ։ Սկզբում նա մի քանի բրոշյուր հրապարակեց, հետո՝ մի քանի գիրք, ավելացնելով գիտնական-հելլենագետի իր նախկին խոր գիտելիքներին նոր հետազոտություններ արևելագիտության բնագավառում։ Ու թեև արիստոկրատական զսպվածությունը նրան ստիպում էր գիտական հետազոտությունների տողերի հետևում թաքցնել իր անձնավորությունը, ուշադիր կարդալ կարողացող մարդը մտքերի օբյեկտիվ շարադրանքում կռահում էր ինքնատիպ ու միայնակ մտքի խորությունը, ինչպես և ոճի ներդաշնակությունը, որը բնորոշ էր Միջերկրականի մշակույթին։ Պատիվներն իրենք եկան նրա մոտ։ Արտասահմանյան ակադեմիաները, այդ թվում նաև մա-

կագրությունների Փարիզի ակադեմիան, նրան ընտրեցին իրենց թղթակից-անդամը։ Ժուլիեն Դավին, որը բոլորովին ուրիշ ճանապարհներով էր մոտեցել հնդուստանաբանությանը, առաջինների մեկն էր, որ հասկացավ այդ ոգու նոր և միևնույն ժամանակ անտիկ վեհությունը։ Նա Բրունոյի հետ նամակագրական կապերի մեջ մտավ։ Դրա պատճառը պյութագորասյան տեքստերի քննարկումն էր, որոնք Ժուլիենն ուսումնասիրում էր գիտության պատմությանը վերաբերող իր աշխատանքների համար։ Բայց շուտով երկուսն էլ անցան մետաֆիզիկական և կրոնական մտքերի ամենանվիրական հարցերին, և ամեն մեկը կարողացավ գնահատել մյուսի անկեղծությունը (քանի որ նրանց երկուսի համար էլ բնորոշ էր անկեղծությունը), և երկուսն էլ իրենց մտածողության մեջ մի անգամ չէր, որ մոտեցել էին անդունդի եզրին։ Նրանք բարեկամներ դարձան, նախքան այդ գիտակցելը, քանի որ երկուսն էլ հպարտ զսպվածության հավասարակշռի պաշար ունեին։

Նրանք երկուսն էլ չափազանց հեռու էին բոլոր և ամեն տեսակի քաղաքական ֆարսերից և նույնիսկ չէին կարող պատկերացնել, որ մի գեղեցիկ օր հարկադրված են լինելու խառնվել նրանց ընթացքին։ Բայց Ֆարսը դարձավ ողբերգություն («commediante...Tragediante...» և նրանց դարաշրջանի դժբախտությունն այն էր, որ հասարակական կաթիլի պարագլուխներն ու ճանաչված խրատատուները,— ինչպես քաղաքականության ասպարեզում, այնպես էլ ինտելեկտի ասպարեզում,— կատարելապես հրաժարվեցին նախկին իդեալներից, դավաճանեցին նրանց, որի հետևանքով Եվրոպայի ազատությունը և ոգու բոլոր սրբազան դանձերը, նվաճված դարավոր ճիգերով, գիշատիչների ավար դարձան, որոնք ամեն ինչ կտոր-կտոր էին անում։ Այդ պատճառով էլ այն մարդիկ, ում խղճի աչքերը դեռ չէին հանել,— իսկ այդպիսի մարդկանց թիվն այնքա՜ն քիչ էր,— հարկադրված եղան հանդես գալ իրենց համար ոչ բնորոշ դերում— պահապանների և նախաձեռնողների դերում։ Ով ընդունակ է այդ դերը կատարել նավաբեկության րոպեին, նա էլ փրկում է։ «Ի՜նչ արած, մեռնենք միասին։ Բայց ես կմեռնեմ աչքերս բաց»։

Ժուլիենն արդեն աչքերից մի կողմ շպրտեց այն կապը, որը պատերազմի ժամանակ մոլեգին հնազանդությամբ աչքերին էին կապում նրա կոլեգաները, միայն թե ոչինչ չտեսնեն։ Նա արհա-

մարհանքով մերժեց կնդծիքով և առելությամբ ֆրանսիական հասարակական կարծիքի ընդհանրմանը մասնակցելու բոլոր առաջարկությունները։ Այդպես նա իր ձեռքերով քանդեց այն կամուրջը, որը նրան հաստատապես ակադեմիա էր բերում։ Եվ մենք արդեն գիտենք, որ նա պատիվ ունեցավ Կոլեժ դը Ֆրանսում դասախոսությունների ժամանակ սուլոցների ենթարկվել քաջ թիկունքայինների խմբի կողմից։ Բայց փակել նրա դասախոսությունների կուրսն այնուամենայնիվ վախեցան։ Նրան պաշտպանողներ գտնվեցին— նա ինքը նրանց չէր փնտրում— դրանք բարեմիտ, պահպանողական-կաթոլիկների շրջանին պատկանող մարդիկ էին, որին մի ժամանակ պատկանում էր նաև ինքը. նրանք վախեցան սկանդալից, չցանկացան հոշոտման տալ իրենցից մեկին, որի բծախնդիր աղնվությանը վստահ էին (և հոգու խորքում հարգում էին այդ ազնվությունը)։ Նրանք բավարավում էին նրանով, որ քող էին գցում «պարտվողական» դեկլարացիաների վրա, որոնց տակ դըրված էր Ժուլիենի վարկաբեկող ստորագրությունը։ Ասենք, դրանք, այդ դեկլարացիաները, հազվադեպ էին ի հայտ գալիս և շատ քչերին էին հայտնի, գրաքննությունն ամեն անդամ իր մկրատով անցնում էր դրանց վրայով, իսկ «alma sdegnosa[1]»-ն ամեն տեսակի աղմուկներից խուսափում էր։ Ժուլիենի պեսիմիզմը չափազանց խորաթափանց էր, որպեսզի նա կարողանար իր միայնակ ելույթների օգտակարության վերաբերյալ ինչ-որ պատրանքներ ստեղծել։ Նա բավարարվեց նրանով, որ իր եղբայրակից-դավաճաններին ասաց. «Ոչ»։

Պատերազմից հետո ամեն երկրում մի քանի մարդ դտնվեց, որ «ոչ» ասաց։ Բնական է, որ նրանց ձեռքերը ձգվեցին միմյանց, եվ անկախ նրանց ցանկությունից, պարզապես իրերի բերումով, այդ մարդիկ համախմբվեցին Ողու միասնական միջազգային ճակատի մեջ, որին մի անգամ չէր, որ վիճակվում էր հակադրվել հրեշային չարաշահումներին ու չարագործություններին, որոնք ծնունդ էին առել պատերազմից, ապա զարշահոտ խաղաղությունից— վագրի բերանի շնչից։ Ամենահռչակավոր հերետիկոսներից մեկը էյնշտեյնն էր, որը, ժամանելով Փարիզ, իր գրեթե առաջին այցելությունը տվեց Ժուլիեն Դավիին։ Եվ

[1] Անարգ հոգին (իտ.)։

շուտով նրանց շարքերը բացվեցին՝ կոմս Կիարենցային ընդունելու համար։

Բայց կոմսը չէր շտապում։ Նա համառորեն ընթացիկ գործերից հեռու էր կանգնում։ Երբ Իտալիայում սկսեցին կոմունիստական հուզումները, իսկ դրանից հետո հանդես եկավ ֆաշիզմը, Բրունոն պարզապես ուշադրություն չէր դարձնում այդ իրադարձությունների վրա այնքան ժամանակ, քանի դեռ նրանք չէին անդրադառնում իր գործունեության ու իր հասարակական նախաձեռնությունների վրա։ Նա ջանքեր էր թափում հանուն նրանց, ովքեր տառապում էին (իսկ փաստորեն, ո՞վ չէր տառապում)։ Նրան ի՞նչ այս կամ այն կուսակցությունը։ Նա քաղաքական փոթորիկներ չէր փնտրում։ Բայց քաղաքականությունն ինքը եկավ նրա մոտ։ Ֆաշիզմը ցանկացավ խառնվել նրա գործունեությանը, իր թաթը դնել այդ գործունեության վրա, ճզմել իր տակ։ Բրունոն դիմադրում էր հանգիստ, բայց համառությամբ։ Եվ կոմսի՝ ամեն կասկածից դուրս գտնվող անշահախնդրությունը այն աստիճանի էր բյուրիմացության մեջ գցել այդ մարդկանց, այդ բռնության գործադրողներին, որոնք ոչինչ և ոչ ոքի չէին խնայում, որ բավական երկար ժամանակ նրանք հանդուրժում էին Բրունոյին։ Եթե հարգելի կոմսի ձեռքի տակով միլիոններ են անցնում, պարզ բան է, որ այդ գումարի ոչ փոքր մասը պետք է կպչեր նրա սպիտակ ձեռքերին— չէ որ ուրիշ կերպ ֆիլանտրոպների մոտ չի լինում։ Բայց կոմս Բրունոյի սպիտակ ձեռքերին ոչինչ չէր կպչում— ասենք, ոչ այնքան սպիտակ այն ժամանակից ի վեր, ինչ այդ ձեռքերը ծանոթացել էին հողափորի բահի և ծեփոցի մալայի հետ)։ Նա իր սնանկացումն ավարտում էր քաղցածների ու որբերի վիթխարի եղբայրությանը ծառայելով։ Ոչ մի շահի մասին խոսք լինել անգամ չէր կարող։ Ոչ ոք արդեն չէր հավակնում նրա տեղին։ Բայց եթե անգամ շահադիտական մոտիվները վերանում էին, բռնության և չնչին բծախնդրության ոգին միևնույն է չէր կարող այլևս հանդուրժել բարի սամարացիների այդ ջոկատներին, որոնք ջանում էին բժշկել վերքերը, փոխանակ վերքեր հասցնելու, իսկ դա, պետք է ենթադրել, հիրավի անվեհեր մարդկանց բնորոշ առանձնահատկությունն է, առանձնահատկությունը այն մարդկանց, ովքեր պատերազմներ են անում և հեղափոխություններ, ստեղծում են նոր կամ նոր թվացող կարգեր և կամ էլ կործանում են դրանք։ Եթե անձամբ կոմս Բրունոյին ոչ ոք չէր նեղում (նա նույնիսկ

չէր էլ ննթադրում, որ դրանով պարտական է նոր ռեժիմի երկու մեծատոհմիկ ներկայացուցիչների, որոնցից մեկը, ժողովրդական կրթության մինիստրը, սկեպտիկ փիլիսոփան, ըմբռշխնում էր, իհարկե, ոչ դաղափարները, այլ նրա երկասիրությունների ներդաշնակ ոճը), ապա հալածանքներ սկսեցին նրա ղինակիցների դեմ, այն ուսուցիչների և ուսուցչուհիների դեմ, որոնք, ոգևորված նրա օրինակով ու խորհուրդներով, իրենց վրա դժվարին միսիա վերցրին— վերակենդանացնել աստծո և մարդկանց կողմից մոռացված այդ երկրի բնակիչներին. նրանցից ուզում էին ցուցմունքներ դուրս կորզել, որոնք անհրաժեշտ էին նրանց խղճի համար, նրանց ստիպում էին սարկույության երդում տալ նոր քաղաքական բռնակալությանը, որ ստեղծվել էր սահմանադրության ավերակների վրա, սահմանադրություն, ոտնահարված նրանց կողմից, ովքեր իրենց նրա պահապաններ էին հայտարարել։ Այդ տղամարդիկ ու կանայք, որոնք հավատարիմ էին իրենց գաղափարներին, չէին կարող խղճի հետ ունեցած գործարքին նայել որպես ղվարճալից խաղի, ի տարբերություն մինիստր Ջենտիլեի, որը ծաղրանքով պատասխանեց իր աշակերտների նկատմամբ գործադրած բռնության դեմ բողոք հայտարարելու եկած կոմս Կիարենցային.

— Բայց cara mio[1], մի՞թե ավետարանը մեզ չի սովորեցնում, որ «սլեպք է հոգին սպանել, նրան փրկելու համար»։

Բրունոն հարկադրված եղավ թողնել Հարավը և մեկնել Հռոմ՝ իր նախաձեռնությունների ու իր բարեկամներին պաշտպանելու համար։ Եվ, դուրս պրծնելով այդ խուլ անկյունից, նա իսկույն ևեթ վկա դարձավ մի դաժան պայքարի, որից փոթորկվում էր, իսկ հետո նաև սկսվում հազարավոր իտալացիների խիղճը։ Նա չէր կարող այլևս չտեսնել, չդատապարտել, և նա սկսեց խոսել։ Հանգամանքների պատահական բերումով նա ինքը դարձավ նողկալի բռնության վկա. երիտասարդ սրիկաների մի շայկա հարձակվեց նրա նախկին ճակատային ընկերոջ, բժշկի վրա, որը ծանր վիրավորվելուց հետո կիսահաշմանդամ էր դարձել։ Եվ այդ մարդուն, որը պատերազմի ժամանակ պարդևատրվել էր շքանշաններով, նրա աչքի առաջ վիրավորանքներ էին հասցնում և տրորում ոտքերի տակ։ Ստանալով հարվածների մի զգալի բաժին (ինքնին հասկանալի է, կոմս Բրունոն մտավ այդ կռվի մեջ),

---

1 Թանկագինս (իտ.)։

նա գնաց տուժածների օգտին ցուցմունքներ տալու, ուշադրություն չդարձնելով սպառնացող ճիչերին ու ոռնոցներին, որոնք փողոցից խուժում էին դատարանի դահլիճը։ Բայց, ինչպես և պետք էր սպասել, նա տոնը չիջեցրեց։ Հետագայում Բրունոն ծիծաղով պատմում էր, որ այդ «Հումերին»[1], այդ սև դևերին (սև շապիկներ և սև հոգիներ) տեսնելիս, նա զգաց, թե ինչպես են իր մեջքին հեղափոխականի կարմիր թևեր աճում։ Պաշտպանից նա դարձավ մեղադրող։ Նա հարձակվեց դատարանի և ոստիկանության վրա, որոնք նման բռնություն էին թույլ տվել արդարադատության և վկայական ցուցմունքների ազատության նկատմամբ։ Նրա ազդեցիկ կերպարանքը, նրա մեծահռչակ անունը, նրա ձայնի տոնը (թե որտեղից էին հայտնվել այդ որոտագոռ նոտաները, որոնք պատիվ կբերեին նույնիսկ «Լա Սկալայի» տենորին, սրախոսում էր նա հետագայում) շփոթություն առաջացրին դատավորների շարքերում։ Դատախազը նվաստաբար նեղողություն էր խնդրում։ Ազմկարարների ամբոխին հանգստացրին։ Բայց կոմս Կիարենցան թանկ վճարեց դրա համար։

— Թերևս, ավելի լավ միջոց չկար,— կատակով ասում էր նա,— ինձ վեհ անտարբերության վիճակին վերադարձնելու, անտարբերություն, որով ես պարծենում էի, արհամարհելով սին հոգսերը։ Նորից ինձ տարավ փոշու փոթորիկը...

Դատարանի շենքի մոտ սպասում էր սևշապիկավորների ամբոխը. նրանք քիչ էր մնացել պատառ-պատառ անեին հանդուգն վկային։ Այդ դասը Բրունոյին զգուշություն չսովորեցրեց, բայց դրա փոխարեն ավելացավ նրա հեգնանքն ու իրեն տիրապետելու կարողությունը։ Ջուր էին նրա բարձրաստիճան հովանավորները ջանում խափանել վտանգը, համոզում էին Բրունոյին չորոնել այն։ Միանգամայն օրինաչափ կերպով վրա հասավ մի այնպիսի պահ, երբ դադարեցին նրան խնայել։ Նա հրաժարվեց արտասահման գնալուց, թեև Իտալիայում ապրելը նրա համար դառնում էր օրըստօրե ավելի ու ավելի դժվար, որոշեց մնալ, քանի դեռ չի սպառվել տանջվածների տառապանքները թեթևացնելու, նրանց օգնելու վերջին հնարավորությունը։ Եվ իր ասածը պնդում էր մեղմ, բայց անշեղորեն։ Իսկ երբ բացահայտ օգնությունը դարձավ անհնար, նա սկսեց գաղտնի գործել, զուտ իտա-

---

[1] Հումեր— ըստ հելլենական հավատալիքի, սև ոգիներ, որոնք ապրում են քավարանում— Ռ. Ռ.։

լական հումորով ոչնչացնելով աշխարհ ոստիկանության բոլոր դավերը։ Նա նամակագրական կապեր էր պահպանում կամ աշխատակցում էր ֆաշիզմի քաղաքական հակառակորդների հետ այն գործերում, որոնք թելադրված էին զուտ հումանիստական նկատառումներով։

Գտնվելով «domicilio coatto»-ի[1] տակ, նա հնար գտավ իր գործունեությունը շարունակելու համարյա իր ներողամիտ բանտապահների աչքի առաջ։ Գրեթե ամեն մի իսկական իտալացու հոգում ապրում է հին «Commedia dell' Arte»-ի ոգին, և այդ պատճառով ամենաողբերգական րոպեներին նա սրտով ուրախ է և ամենաանտանելի հանգամանքներում չի հուսահատվում։ Ազդեցիկ և խստաբարո կոմս Կիարենցան հաջողությամբ զուգակցում էր տիբեթական լամաների խորհրդավոր հզորությունը Պուլչինելլոյի խորամանկությունների հետ, որպեսզի հարկադրի իր պահապաններին օգնել իրեն այն վտանգավոր խաղում, որը նա վարում էր մարդկության բարօրության համար, մոռանալով, որ դրոշները կարող է լինել իր սեփական գլուխը։

Հիմարացնելով ուշածի չափ իր հսկիչներին, Բրունոն առաքեց նրանց ամբողջ քաղաքով մեկ, հրամայելով ցույց տրված հասցեները տանել ամենավարկաբեկիչ բնույթի ուղերձներ (ավելացնենք, որ նրա երկարաքիթ պահապանները խարդավանքը չզգացին)։ Նույն այն օրվա նախօրեին, երբ նրան պետք է բանտարկեին և արտաքսեին Լիպարյան կղզիները, Բրունոն, բարի կարաբինիերներին հնարավորություն տալով, որ իրեն սպասեն ոչ թե «ծառի ստվերում», այլ հասարակ ձևով ասած, զուգարանի դռան մոտ, ինքն այնտեղից սանդուղքին նայող լուսամուտով դուրս եկավ (իր հիասնվեց տարեկան հասակում նա ճարպիկ ու ճկուն էր, ինչպես մարմնամարզիկ)։ Առանց շտապելու, կարծես զբոսանքի ժամանակ, նա կտրեց-անցավ պրեմոնտական փոքրիկ քաղաքը, որտեղ առանց այն էլ նա անչափ շատ հապաղեց իր սեփական գործերի, ինչպես և ոստիկանության հոգատարության պատճառով, դուրս եկավ քաղաքի ծայրամասը և շարունակեց քայլել ամբողջ օրն ու ամբողջ գիշերը, առանց հոգնության ու վստահորեն։ Իսկ երբ նրա առաջ հառնեց Ալպերի պատը, նա սկսեց վերելքը։

---

1 Տնային կալանքի (իտ.)։

Ահա հենց այստեղ էլ նրան պետք եկավ Տիբեթի փորձը։ Տեղանքը նա գիտեր բավական լավ և մոտն ուներ գլխավոր շտաբի քարտեզը։ Սակայն սառցադաշտերով ճանապարհորդելու համար, հատկապես հիմա, ձմեռվա սկզբին, նա պահանջվածի չափ հանդերձանք չուներ, քանի որ, սովորական լեռնանցք ընտրելու փոխարեն, որտեղ նա անկասկած թակարդի մեջ կընկներ, Բրունոն գերադասեց գնալ ուղիղ և վտանգավոր ճանապարհով, Սեն-Թեոդուլի միջով։ Բարեբախտաբար, բարձր լեռնային հովիտներում ապրող բնակիչների մեջ նա հանցակիցներ գտավ, որոնք, ցույց չտալով, որ իրենք հասկանում են նրա մտադրությունները, ճամփորդին մետաղյա ցցիկներով կոշիկներ տվին, թոկերի մի ամբողջ կապոց, բրիչ, հովվական անձրևանոց և մի ուղեցույց-տղայի, որին հանձնարարեցին ճանապարհի կեսից վերադառնալ։ Այնուամենայնիվ, վտանգը դարանակալում էր փախստականին. ցանկանալով խուսափել ֆաշիստական սահմանապահ պոստերի հետ հանդիպումներ ունենալուց, Բրունոն գնաց ուղիղ ձյուների միջով և մոլորվեց։ Ամբողջ գիշերը նա ստիպված եղավ անցկացնել սառցակալած թեք լանջին սեղմված, անդունդի եզրին, և նա հավանական է ցրտահար կլիներ, եթե ժամանակին տիբեթցիներից սովորած չլիներ իրեն «տոմո» վիճակի բերել, որը թույլ էր տալիս պսիխոֆիզիոլոգիական մեթոդների միջոցով իր օրգանիզմում ներքին ջերմություն առաջացնել, որի բարերար ազդեցությունը իր վրա զգացել է երբեմն մեծ ասկետ ու բանաստեղծ Միլարեպան։ Հոգնածությունից հազիվ ոտքի վրա մնալով, սառցե զրահով ծածկված, եղյամապատված թարթիչներով ու մորուքի փոխարեն կախված սառցալուլաներով, Բրունոն քարշ եկավ մինչև շվեյցարական տերիտորիան, մինչև հուսալի ապաստարանը, որտեղ վայրի այծեր որսողները տաքացրին ճամփորդին բոցկլտացող օջախի մոտ և տաք բան տվին խմելու։ Միայն այդ ժամանակ Բրունոն հասկացավ, ինչ մեռցնող ուժով է իր գրկի մեջ սեղմում նրան ցուրտը, որի դեմ տասնհինգ ժամ շարունակ կռվում էր ներքին հուրը։ Նա քիչ մնաց մեռնի դրանից, եթե չլիներ խոր քունն ու քրտինքը, որը բառացիորեն ողողում էր նրան։ Այդ հիանալի մարդիկ, որոնք պահպանում էին անծանոթի անդորրը, նրան ոտքի կանգնեցրին։ Բրունոն նրանց հետ իջավ Ցերմատ, հանգստացավ այնտեղ երկու օր և հանգիստ կերպով վիեժում նստեց Սիմպլոնի Փարիզ տանող գնացքը։

Կոմս Բրունոյի Փարիզ ժամանելուն նախորդել էին նրա փախուստի մասին լուրերը։ Սկզբում հիմարաբար այդ լուրերը տարածեցին, հետո հիմարաբար սկսեցին հերքել, բայց նրանց հավաստի լինելը հաստատվում էր նրա ամոթահար, խայտառակված պահապանների չարությամբ, և հատկապես պարագլխի ցասումով, որն իր վայրույթը թափել էր ոստիկանական կոնակների վրա։ Իտալական վտարանդիները, որոնք հեռագրով նախազգուշացվել էին Շվեյցարիայից, փարիզյան կայարանում Բրունոյի համար հանդիսավոր դիմավորում կազմակերպեցին, եվ մի ամբողջ շաբաթ կոմս Բրունոն դարձավ լրագրողների որսը։ Բայց հնարամիտ իտալացին այնքան էլ հեշտ չհանձնվեց նրանց ձեռքը։ Իր փախուստը Inferno[1]-ից և իր սալտո-մորտալեն լեռնաշղթայի վրայով նա նկարագրեց այնպիսի նրբերանգներով, որ իսկական վեներիկյան կատակերգության տեսարան ստացվեց։ Փարիզեցիների ծիծաղը հիմարացված բռնակալի հասցեին զաշույնի նման խոցեց նրա կուրծքը։ Եվ Ալպերից այն կողմ լռություն տիրեց. այդպես լռել կարող է միայն կատաղի զայրույթը։ Ամբողջ երկու, եթե ոչ երեք շաբաթ եվրոպական խրոնիկան սնվում էր կոմս Բրունոյի արկածներով։ Իսկ ինքն հերոսը, փառքից փրկվելով, համաձայնվեց Ժուլիեն Դավիի առաջարկությանը— նրա խաղաղ հանգրվանում սպասել փոթորկի վերջանալուն։ Տարածության վրա գոյություն ունեցող մտերմության երկար տարիներից հետո նրանք երկուսն էլ անկեղծորեն ուրախացան վերջապես տեղի ունեցած հանդիպման համար։ Դուռը փակելով հետաքրքրվողների համառ ներխուժման առաջ, նրանք երկար ու բարակ զրուցում էին, բայց քաղաքականությունը չէր նրանց զրույցների գլխավոր թեման։ Առաջին հայացքից նրանք ընդունեցին իրար. հո իզուր չէին նրանք երկուսն էլ մինչև հատակն սպառել մարդկային կյանքի ողբերգական փորձը, երկուսն էլ իզուր չէին դուրս եկել անդունդից, ամեն մեկն իր ճանապարհով, ամեն մեկն իր բրիչով աստիճաններ սարքելով սարսափների սառցե պատին։ Բայց աստիճանները երկուսի մոտ էլ տարբեր դուրս եկան։ Եվ մանավանդ բրիչները։ Եվ ձեռքերը։ Եվ բանականությունը։ Մեկն ընտրեց լանջի կողը, որ արևով էր լուսավորված։ Ավելի ճիշտ, արևն էր նրան ընտրել։ Իսկ մյուսն ընտրել էր սովերը։ Բայց նրանք եր-

---

[1] Դժոխք (իտ.)։

կուսն էլ հասան համարյա միևնույն մակարդակին։ Եվ եղբայրական ըմբռնման հայացքներ էին փոխանակում միմյանց հետ։

Հաճախ էր նրանց զրույցն ընդհատվում—լուսավորվում—ժորժի հայտնվելով։ Այդ ժամանակ նա ցնծում էր իր տասնութ տարեկանի երանելի փայլով։ Եվ բացի դրանից, նա սիրահարվեց ծեր ալպինիստին։ Հասկանալի է, առաջին հերթին նրան գերեցին Բրունոյի սպորտային ռեկորդները։ Եվ, ի հայտ բերելով աղջկա մեջ առողջ ու անհոգ ուրախություն, որը մարմնամարզությամբ զբաղվելու պարապմունքների էր կանչում և ֆիզիկական լիցքաթափման ու արկածների, Բրունոն մի առանձնահատուկ համուրքով էր պատմում աղջկան Տիբեթում կատարած ճանապարհորդությունների մասին, չդիպչելով, իհարկե, մտքի բնագավառում այնտեղի իր որոնումներին։ Ժամեր շարունակ նրանք այդ մասին էին շաղակրատում, որը Ժուլիենին ամենից քիչ էր հետաքրքրում, և ծերուկ Բրունոն, պատմելով, զգում էր նույն այն մանկական բերկրությունը, ինչ որ ժորժն էր զգում, նրան լսելիս։ Քնքշությամբ էր նա նայում այդ կլորիկ, ուրախ և երջանիկ դեմքին, սքանչանում մաշկի հիանալի ոսկեգօծ արևայրուքով, կարծես մարմարից կերտած ձեռքերով, պարանոցով, այտերով, շողշողուն աչքերով, որոնք դեռ չէին մոայլվել վերացական մտքի ստվերով, թախիծով, սարսափով,— ոչ մի բան անդրաշխարհից։ Բայց այս աշխարհը նրանք բռնել ու պահում էին պինդ, և դա բավական էր։ Ինչպես հին հռոմեացիների ամբողջ աշխարհը, որից այն կողմը «finis orbis terrarum[1]»։ Հերկուլեսի սյուներից այն կողմ— Կալիպսոն։ Եկեք մնանք այստեղ, Նավզիկեի և Պեննելոպեի հետ։ Նա այդ կոչում էր mare nostro...[2] Միջերկրական ծով... Եվ երբ Բրունոն նայում էր աղջկա ժպտացող, հյութեղ, ինչպես ոսկեղեն պտուղը, չներկված, ալ շրթունքներին, նրան թվում էր, թե ինքը, ինչպես մտապատրանքի մեջ, ինչպես երանավետ, բայց տխուր երազում, տեսնում է անհոգ ու սքանչացած ժպիտը իր երիտասարդ քենու, որն այն ժամանակ երգում էր Շուբերտի «Գեղեցկուհի ջրաղացպանուհին», լսում է Պոլիֆեմի անդունդի վրա խոխոջող առվակի օրորոցային երգը։

Մի անգամ, երբ երեքով— Ժուլիենը, ժորժը և Բրունոն— սե-

---

1 Երկրագնդի սահմանն է (լատ.)։

2 Մեր ծովը (իտ.)։

դանի շուրջը նստած զրուցում էին, Բրոնոն հանկարծ մտաբերեց մի ֆրանսուհու, որի հետ Բազիլիկատայում նա գնացքի մեջ ծանոթացել էր— ավելի ճիշտ կլիներ ասել, ոելսերի վրա։ Հույս ունենալով նրա մասին որևէ բան իմանալու, նա տվեց այդ կնոջ անունը. «Տիկին Ռիվիեր»։ Ժորժը ծափ տվեց և, առանց մտածելու, բացականչեց.

— Օյ, Աննե՞տան։

Ո՞վ էր ավելի շատ զարմացած։ Բրունո՞ն, թե՞ Ժուլիենը։ Ինչպե՞ս կարող էր Ժուլիենը ենթադրել, որ իր դուստրը ճանաչում է այն կնոջը, որի մասին երբեք խոսք չի եղել։ Նա չկարողացավ իր զարմանքը թաքցնել, և Ժորժը կարմրեց։ Նա լեզուն կծեց, բայց ուշ էր։ «Ինչ լինում է, լինի»...

Եվ ամենաանփույթ տոնով այդ համեստ աղջիկը, հանդգնորեն աչքերը փայլեցնելով, դիմեց հորը.

— Չէ՞ որ դու նրան ճանաչում ես։

Եվ, ծիծաղելով, շրջվեց դեպի Բրունոն.

— Դա պապայի շատ մոտ բարեկամներից է։

Եվ ավելացրեց.

— Իսկ ես ուզում եմ, որ նա հիմա իմ բարեկամն էլ դառնա։

Ժուլիենը նստել էր այնպիսի շփոթահար տեսքով, որ նույնիսկ Բրունոն դրան ուշադրություն դարձրեց։ Նա հոնքերը կիտեց և Ժորժի վրա գցեց իր մռայլ հայացքը, հրամայելով նրան լռել։ Բայց մի՞թե Ժորժի վրա այդպիսի դատարկ բանով կազդես։

«Ձափադանց երկար եմ ես նրան հետևել,— մտածում էր Ժորժը։— Այս հիանալի առիթը ձեռքիցս բաց թողնեմ։ Ոչ մի դեպքում»։

Իսկ բարձրաձայն ասաց.

— Եկեք նրան հրավիրենք։

Իրեն չզսպելով, Ժուլիենը գոռաց.

— Դա ի՞նչ հիմարություն է։

— Շատ պարզ,— վրա բերեց Ժորժը։— Արդեն քանի տարի է, ինչ ես ուզում եմ նրան տեսնել։ Եվ անպայման կտեսնեմ։

Ժուլիենը շփոթահար նայեց աղջկան։ Նա հասկացավ, որ դատերը ամեն ինչ հայտնի է։ Բայց ի՞նչ ձևով,— ահա այդ էր, որ նա չէր կարողանում պատկերացնել։ (Ոչ մի անգամ նա չհամարձակվեց դատերը հարցնել, նույնիսկ հետո. այնքա՞ն սուրբ էին Ժուլիենի համար այդ հիշողությունները։ Ոչ ոքի հետ նա

չէր կարողանում խոսել այդ մասին։ Միայն այն մտքից, որ Ժորժն այդ գիտե, նա ցավից կծկվում էր)։ Նա կտրուկ հրաժարվեց Աննետային հրավիրելուց և բավական անճարպիկ, բայց շատ վճռական փոխեց խոսակցությունը։ Բարեբախտաբար, Բրունոն նրան օգնության հասավ և շեղեց տանջող աղջկա ուշադրությունը։ Իսկ աղջիկը կծում էր իր շրթունքները, որպեսզի չհոհոա նրանց երեսին. նա ամբողջովին շողշողում էր չարաճճի ֆորամանկությամբ։ Բրունոն խորաթափանց հայացքը փոխադրում էր աղջկանից հոր վրա և, խղճալով ծեր երեխային, փաղաքշանքով քաշեց ծաղրաբան աղջկա ականջները։ Վճռեցին, որ տիկին Ռիվիերին կհրավիրեն, բայց թե ոչ որպես հյուր Դավիի մոտ, այլ կհրավիրեն միտինգի, որը կազմակերպվելու էր գիտնականների ընկերության կողմից, որտեղ Բրունոն մտադիր էր հանդես գալ զեկուցումով։

Բրունոն չէր կարող խուսափել իր ելույթից բողոքի երեկույթին, որ կազմակերպել էր ֆրանսիական հակաֆաշիստական լիգան, իսկ Ժուլիենը նրան օգնել այդ հարցում չէր կարող, քանի որ ինքը ընկերության գլխավոր կոմիտեի փոխ-նախագահներից մեկն էր։ (Ըստ իր սովորության, Ժուլիեն Դավին մատն անգամ չշարժեց ոչ այն բանի համար, որ ստանա փոխ-նախագահական տեղը, ոչ այն բանի, որ խուսափի այդ պատվից)։

Եվ այդպես, Աննետային հրավիրեցին միտինգի։ Սակայն նա չեկավ Բրունոյի ելույթին, որն իսկույն ևեթ հմայեց դահլիճին իր պարզ և նպատակներին խփող պերճախոսությամբ, իր անխռով ու հանգիստ հայացքով և խորամանկ քմծիծաղով, որ փոքր-ինչ բարձրացնում էր շրթունքների անկյունը նույնիսկ այն ժամանակ, երբ նա անողոքաբար մերկացնում էր բռնակալներին։ Աննետան գրիպով հիվանդ էր և մնաց տանը, բուխարու մոտ։ Արդեն մի շաբաթ կլիներ, եթե ոչ ավելին, ինչ նա ձեռքը լրագիր չէր առնում։ (Նույնիսկ այն կանայք, որոնք բոլոր մնացածներից ավելի պակաս անտարբեր են դեպի հասարակական գործերը, նույնիսկ այդպիսիները միշտ չէ, որ համբերություն են ունենում ամեն օր հետաքրքրվել դրանցով։ Ժամանակ առ ժամանակ նրանց հետաքրքրությունը մարում է։ Նրանց կլանում է սրտի կյանքը)։ Այդ պատճառով էլ Աննետան ոչինչ չգիտեր ոչ կոմս Կիարենցայի փախուստի, ոչ նրա Փարիզ ժամանելու մասին։ Իսկ տղան ու հարսը, որոնք, ինքնին հաս-

կանալի է, առիթը բաց չթողին տեսնել ու լսել «fuoruscito»[1]-ին, մտքներովն էլ չանցկացրին Աննետային տեղեկացնել միտինգի մասին։ Ասենք, հիմա նրանք Աննետային այցելության էին գալիս հազվադեպ, նստում էին մի տեսակ մտացրիվ տեսքով։ Միմյանց գտնելու ուրախությունը ամբողջովին կլանել էր նրանց, և նրանք կարծես արձակուրդում գտնվող աշակերտներ լինեին։

Ժորժը դառը հիասթափություն ապրեց։ Իզուր էր նա լեփլեցուն դահլիճում հայացքով փնտրում Աննետային։ Մարդկանց մեջ Ժորժը նկատեց (այդ երիտասարդ շողշողուն աչքերով փոքրիկ բամբասասերը բոլորին և ամեն ինչ գիտեր) Աննետայի որդուն ու նրա «մոսկվուհուն», ինչպես նա արտահայտվում էր։ Նա իրեն նույնիսկ հաճույքից չզրկեց միտինգից հետո նրանց ծանոթացնել կոմս Բրունոյի հետ, առանց իր անունը տալու։ Երիտասարդ Ռիվերները Բրունոյի ձեռքը սեղմելու ցանկությունից այրվում էին, բայց քանի որ էստրադայի շուրջը վխտում ու աղմկում էր մարդկային ամբոխը, նրանց չհաջողվեց նույնիսկ մի երկու-երեք կապակցված նախադասություն փոխանակել։ Մանավանդ որ երիտասարդ զույգի ներկայությունը միայն ամենաթույլ կողմից էր սփոփում Ժորժին, նա զգում էր իր Աննետայի պահանջը, Աննետային էր նա ուզում տեսնել ու իր ձեռքը գցել։

Իսկ եթե նա ուզում է (հիմա դա արդեն որոշված հարց էր) փորձիր խանգարել նրան։ Ժորժը սկսեց կոմս Կիարենցայից և չհանգստացավ, մինչև որ չներշնչեց նրան Աննետայի մոտ գնալու միտքը։ Եվ, իհարկե, իրեն առաջարկեց որպես ուղեկից։ Բայց կոմս Բրունոյին խաբելն այնքան էլ հեշտ չէր, և, անհոգրեն շաշակրատելով Ժորժի հետ, նա, դեռ նշված տեղը չհասած, Ժորժի շուրթերից լսեց վաղուցվա սիրո պատմությունը, որի մասին գլխի ընկավ իրեն բնորոշ նուրբ հոտառությամբ։ Իսկ Ժորժին հենց դա էլ պետք էր։ Արդեն վաղուց էր, ինչ գաղտնիքը խեղդում էր նրան, դուրս էր թռչում լեզվի ծայրից։ Այդպես ծերուկ իտալացին դարձավ Ժորժի խենթությունների մասնակիցը, համարյա գործակիցը։ Երբ Ժորժը պատմում էր Բրունոյին հոր առանձնասենյակի վրա կատարած իր արշավանքի մասին, Բրունոյին թվում էր, թե իրենք միասին են կատարել այդ հանցագործությունը։ Որոշ առանձնապես զվարճալի մանրամասնու-

---

1 *Փախստական (իտ.)։*

թյուններ հիշելիս նրանք երկուսն էլ կանգ էին առնում Լյուքսեմբուրգյան այգու ճանապարհին և ուղղակի ծիծաղից թուլանում էին։ Կոմս Բրունոն հանդիմանանքով գլուխն օրորում էր, և նրա պերճախոս աչքերն ասում էին. «Ախ, ի՞նչ ամոթ բան է դա, անամոթ գող, եվ չե՞ս ամաչում»։ Իսկ ժորժն ուզում էր պատասխանել. «Իսկ դո՞ւ...»։ Եվ այնուամենայնիվ երկուսն էլ տրվեցին այդ չհաջողված, ճմրթված, դժբախտ սիրո կախարդանքին, եվ ճանապարհի ամբողջ մնացած մասը լուռ էին։ Աննետային տան մոտ ժորժն հանկարծ խոսեց.

— Բայց և այնպես ես նողկալի վարվեցի։ Հիմա դուք ինձ կյանքում երբեք չեք հավատա։

— Է, իսկ եթե ձեզ, աղջիկս, առիթ ներկայանար այդ բոլորը նորից անելու, դուք կանեի՞ք, հը՞,— հարցրեց Բրունոն։

Ժորժը քրքջաց։

— Իհարկե, կանեի։

Նրանք ուրախ բարձրացան սանդուղքն ի վեր։ Այնուամենայնիվ ժորժի սիրտը տագնապալից բաբախում էր։ Հնարավոր է, որ նա հենց այդ պատճառով էլ քրքջում էր այդպես բարձր։ Բրունոյի հետ ներս մտնելուց նա հրաժարվեց և առաջարկեց նրան սպասել հարևան պուրակում։ Հետո, հորդորների ենթարկվելով, համաձայնեց Բրունոյին նախասենյակում սպասել։ Նա հույս ուներ (և վախենում էր) Աննետային տեսնել, երբ վերջինս դուրս գա հյուրին ճանապարհ դնելու։ Բայց նրա հետևից նախասրահ եկավ ինքը Բրունոն։ Ջրույցի կեսին, այն բանից հետո, երբ երկու հին բարեկամները զեղեցին հանդիպման ուրախությունը, Բրունոն հանկարծ հիշեց իր Անտիգոնային և Աննետային ասաց.

— Թույլ տվեք... Այնտեղ ձեր դռան մոտ մի սիրահար աղջիկ է տանջվում...

Բրունոն դուրս եկավ նախասրահ և բռնեց ժորժի ձեռքը։ Թեև աղջիկը Աննետային տեսնելու ցանկությունից մեռնում էր, կոմս Բրունոն ստիպված եղավ նրան իր հետևից համարյա ուժով քարշ տալ։

Իր երևակայության մեջ ժորժը ստեղծել էր բոլորովին ուրիշ Աննետա, քան այն, որը հիմա կանգնած էր նրա առաջ։ Ստեղծել էր թեև ոչ ըստ իր պատկերի և նմանության, բայց համենայն դեպս ստեղծել էր իրեն հարուցած տարրերից։ Որովհետև

Ժորժի համար հաճելի էր այն միտքը, որ, սկիզբ դնելով իր գաղթերը, հայրն ամբողջովին այդ կերպարի իշխանության տակ է եղել։ Ժորժը հասկանում էր, որ այդ բոլորն այդպես չէ, ծիծաղում էր իր վրա, և այնուամենայնիվ հոգում փայփայում էր այդ հեքիաթը։

Մտովի ստեղծված Աննետան Ժորժին քաշում էր կրքերի աշխարհը, ուր Ժորժն ինքն այնքան էլ չէր ձգտում թափանցել. նմանակը նրան ազատում էր այդ անհրաժեշտությունից, իր վրա էր վերցնում բոլոր դժվարությունները։ Արդեն մի քանի տարի նա քարշ էր գալիս իր երազանքի հետ, ամենևին ոչ տենդագին, ոչ փոթորկուն, երազանքի, և երազանքների ամբողջ հմայքը նրանում էր, որ կարելի էր վերապրել այն, մյուս Աննետայի արկածը— վերապրել, իհարկե, իր ձևով, բոլոր հարմարություններով, պատմել դրանք քնելուց առաջ, գլուխը բարձի մեջ թաղած, ինչպես անվերջանալի մի սիրավեպ։ Ժորժը հնարեց իր պահանջմունքով կրքերի մի ամբողջ աշխարհ և ապրում էր նրա մեջ ինչպես լուսնոտ, ապրում էր ուրիշի կամքով։ Իրական կյանքը դրանից ամենևին չէր տուժում։

Երևակայության խաղը հակակշիռ էր հանդիսանում, որի կարիքն զգում են այդպիսի ուժեղ բնավորությունները անհրաժեշտ հավասարակշռությունը պահպանելու համար։

Այդպիսին է բազմաթիվ կանանց ճակատագիրը— նայելիս դու նրանց մեջ տեսնում ես հավատարիմ կնոջ արտաքինից խաղաղ, համաչափ կյանքը, իսկ խորքում, հոգու ամենախորքում, խելագար սեր կա, որը նրան մղում է դեպի ռոմանտիկ արկածները,— դա էներգիայի և չիրականացված ցանկությունների ելքի կափույրն է։ Իմ կոլան, որ Նեվերի կողմերից է, մոլի ծաղրասեր և իմաստուն, այսպես կասեր ամուսիններին.

«Դուք բոլորովին էլ չվշտանաք, եթե այն, ինչ ձեր կողմից է ստեղծված, ամպի հետ է քնում։ Եթե բանն այնտեղ է հասել, որ դուք միևնույն է չեք խուսափի կոտրշավորի ճակատագրից, ուրեմն թող այդ կոտրշները ձեզ դնեն երազանքների մեջ։ Խաղաղությո՛ւն նրանց, այդ երազանքներին և երազողուհիներին։ Երբ նրանք հեռավոր ճանապարհից ետ են վերադառնում, ինչ-որ բանի ժպտալով, զարմացած ձեր վրա բարձրացնելով մթին ստվերով օդակված իրենց աչքերը, և չեն լսում ձեր խոսքերը, սիրալիր ժպտացեք ձեր նավորդուհուն։

Հարազատ օջախը վերադարձից հետո նրա համար կրկնակի տաք կլինի...»

Ամենևին էլ նրանք ոչ բոլորն են այդպես անմեղ (բայց շատերն այնուամենայնիվ անմեղ են), ինչպես ժորժը։ Նա աչքի էր ընկնում ամենաբարձր թռիչքի անմեղությամբ— այն անմեղությամբ, որը չի երազում ոչ լավի, ոչ վատի մասին։ Նա երազում է... Եվ ուրիշ ոչինչ։ Միծեռնակը ճախրում է երկնքում...

Եվ ահա հիմա մեր միծեռնակը քիթ քթի դուրս եկավ իր երազանքի հետ։ Իսկ երազանքը, պարզվում է, ամենևին էլ այն չէ, որի հետևից էր նա ընկել այդքան երկար։ Աննետան ոչ ոքի նմանակը չէր։ Աննետան Աննետան էր, ինքն իր անձը և ոչինչ ուրիշ...

Բայց մի՞թե դա այդքան կարևոր է։ Միծեռնակը մի ակնթարթում կտուցը չռեց, և նրա մեջ ընկավ Աննետան։ Ի՜նչ երջանկություն է, որ Աննետան գոյություն ունի։ Նա կարող էր լինել ինչպես խելքին փչում է։ Եվ այդպիսին էր նա պետք ժորժին։

Նրանք նայում էին միմյանց։ Ժորժը, որ մեծ աղջիկ էր, ժորժը որ ուժեղ, կոպիտ և շատ վճռական անձնավորություն էր, հանկարծ, սկսեց ամաչել, տեղում քարացավ, միայն կուրծքն էր հուզմունքից բարձրանում և մեկ էլ շրթունքներին հայտնվեց հիմարության հատնող պարզամիտ ժպիտը։ Եվ Աննետան,— ճերմակած մազեր, անխռով ու հանգիստ ճակատ, հոգնած դեմք, հսկայական աչքեր, խելացի, փոքր-ինչ դուրս պրծած աչքեր, որի հայելանման մակերեսը իր մեջ էր առնում ամեն ինչ և առաջին հերթին այդ մեծ երեխայի տագնապալից ու փոթորկուն սերը։ Եվ այդ աչքերի հայացքի տակ ձախորդ ամազոնուհու սիրտը հալվեց և ուժեղ ծնկները ծալվեցին։ Նա քիչ մնաց լաց լիներ ամոթից։ Իսկ երբ համարձակվեց, վերջապես, բարձրացնել կախ գցած թարթիչները, նրան դիմավորեց Աննետայի ամեն ինչ հասկացող ժպիտը։ Արագ մի շարժումով ժորժը իր շառագունած դեմքը հպեց այն կնոջ կրծքին, որը կարդաց նրա բոլոր գաղտնիքները, և ամբողջ ուժով գրկեց նրան։ Աննետան նույնիսկ ճչաց.

— Կամա՛ց։ կամա՛ց։ Հիմա այս աղջիկն ինձ կխեղդի։

Ամոթահար ժորժը ձեռքերը թուլացրեց։ Աննետան բարձրացրեց աղջկա գլուխը և տեսավ նրա կարմիր, շողշողացող, երջանիկ և հուզված դեմքը և արցունքի երկու խոշոր կաթիլ, որ կախվել էր թարթիչներից։

Կոմս Բրունոն քահ-քահ ծիծաղում էր, ծիծաղում էր Աննետան, և նույնիսկ Ժորժը, երեխայի նման ձեռքերով սրբելով արցունքները, նույնպես սկսեց քրքջալ։ Այդ ժամանակ Աննետան հարցրեց.

— Այդ ո՞վ սվեց ինձ այս դատրիկը։

Եվ Ժորժը պատասխանեց.

— Ժուլիեն Դավենն։ Ես նրա աղջիկն եմ։

Աննետայի հսկայական աչքերը էլ ավելի լայն բացվեցին։ Նա ոչինչ չասաց։ Երկու ձեռքերը դրեց Ժորժի ուսերին և լուռ նայեց նրան։ Հետո ասաց.

— Ի՞նչ կա որ։ Ես քեզ որդեգրում եմ։

Ժորժը հաջորդ օրը եկավ վաղ առավոտյան։ Նա եկավ նաև երեկոյան։ Եվ հետագա բոլոր օրերին նույնպես գալիս էր։ Աննետայի նախասենյակը լցվեց ծաղիկներով։ Ծաղկամաններն արդեն չէին հերիքում։ Ժորժը ծաղիկները բերում էր ամբողջ խրձերով։ Նա շատ ամուր հիմնավորվեց տանը, Ասյայի հետ նա արդեն «դուով» էր խոսում և տիրել էր երեխային։ Ասյան հաճույքով թույլ էր տալիս, որ Ժորժը հոգ տանի երեխայի համար, նրա քիթը սրբի և զբոսանքի տանի։ Ասյան առհասարակ կարողանում էր ուրիշի կապվածությունը շրջել իր օգտին և առաջին հայացքից որոշեց, որ այդ ամպրոնուհին բոլոր տվյալներն ունի առաջնակարգ դայակ դառնալու համար։ Ժորժը պատկանում էր այն կանանց ցեղին, որոնք մայրության աղոտ պահանջ են զգում։ Միայն թե եթե հնար լիներ այդ գործում յոլա գնալ առանց տղամարդու։ Իսկ այդտեղ նրան առաջարկել էին բոլորովին պատրաստի երեխա, և այն էլ իր Աննետայի շառավիղից։ Կնշանակի նրա բախտը կրկնակի էր բերել, և մանավանդ որ Ռիվիերների տանը արմատավորվելու համար դա հիանալի պատրվակ էր։ Աննետան ստիպված էր լինում Ժորժին հիշեցնել, որ նա իր տունն ունի, հայր ունի, որին բոլորովին բարձիթողի է արել։ Ժամեր շարունակ Ժորժը նստում էր Աննետայի ոտքերի մոտ, ցածրիկ աթոռակի վրա, կամ հատակին երեխայի հետ խաղ էր անում։ Նա խոսում էր, նա լռում էր. դա կարևոր չէր, միայն թե այստեղ լիներ։ Նրա տարվածությունը հիվանդության նման մի բան էր։ Հազիվ թե նա ինքը կարողանար այդ հասկանալ։ Եվ Աննետան էլ հետը։ Եթե Աննետան Ժորժին տեսնում էր այնպես, ինչպիսին նա կա իրականում (կամ մոտավորա-

պես այդպիսին), ապա Ժորժն Աննետայի մեջ տեսնում էր ռոմանտիկ նմանակի, որի կերպարը ինքն էր ստեղծել իր համար, եվ Աննետան այդ գիտեր, միայն թե ուսերն էր վեր քաշում. ոչ մի բանով հնարավոր չէր ավերել Ժորժի կախարդական աշխարհը։ Ասենք, դա միտք էլ չուներ, քանի որ վերջ ի վերջո մյուս, իսկական Աննետան սիրեց Ժորժին, իսկ Ժորժի համար ուրիշ ոչինչ չէր էլ պահանջվում։ Աննետան չէր կարողանում անդրդվելի մնալ աղջկա այդ լռին, կրքոտ և անկեղծ պոռթկումի առաջ։ Միծաղելի կլիներ սեթևեթել, երբ քեզ հիանալի պարգև են առաջարկում, իրենց պատանի հոգին։ Իսկ Ժորժը միանգամայն բավարարված էր, չէ որ նրա պարգևը համաձայնում էին ընդունել։ Նրան պետք էր Աննետան, եվ նա իրեն երջանիկ էր զգում Աննետայի տանը, իրեն երջանիկ էր զգում, երբ Աննետան պատահականորեն ձեռքով կպչում էր իրեն, երջանկություն էր համարում Աննետայի հետ շնչել միևնույն օդը։ Դա սեր էր, գեռ չգիտակցված սեր։ Քանի որ Ժորժը, երբեք առանձնապես հակված չլինելով դեպի խորհրդածություննները, քիչ բան գիտեր իր ներքնաշխարհի մասին։ Այդ աղջկա սերը կազդեց այն կարոտի ենթագիտակցական արտահայտությունն էր, որը համակել էր նրա հորը, կորցրած հայրենիքի նկատմամբ ունեցած կարոտի։ Եվ այդ կարոտը Ժորժի մեջ իր հագեցումը գտավ։ Ժորժը հայրենիք գտավ։

Իր բավարարված էգոիզմի մեջ Ժորժը մոռանում էր լքած հորը, որին հիմա տեսնում էր միայն երեկոները, ընթրելու ժամանակ, և այն էլ այնքան ցրված էր նստում, այնպիսի բացակա տեսքով, որ Ժուլիենը հասկանում էր. հոգով իր աղջիկն այստեղ չէ։ Ժորժը արագ-արագ կուլ էր տալիս ճաշը և դուրս թռչում տնից և կամ էլ փակվում իր սենյակում— չէ որ հարկավոր էր օրվա տպավորություններին զուլալվելու ժամանակ տալ։ Կաբինետից հայրը լսում էր, ինչպես է Ժորժը քրքջում իր սենյակում կամ խոսում ինքն իր հետ։

Աննետան առաջինը Ժորժին խնդրեց Ժուլիենին իր մոտ բերել։ Բայց Ժուլիենն այդ առաջարկությունն ընդունեց ավելի քան սառը։ Հոգու խորքում նա ցնցված էր։ Բայց այդպիսին էին նրա բնավորության հատկությունները. այդ բնավորության բնածին անճկունության մեջ դրսևորվում էին ինչպես Ժուլիենի թերությունները, այնպես էլ արժանիքները— զգացմունքների առաքինությունը, հպարտությունն ու ավելորդ հեղությունը (այդ վերջին երկու հատկությունը իրար հետ գոյակցում են ավելի

հաճախ, քան կարող է թվալ), և հենց այդ պատճառով էլ Ժուլիենը զուրկ էր իր ամենաուժեղ զգացմունքերը իրենից դուրս արտահայտելու կարողությունից։ Որքան ավելի շատ էր նա սիրում, որքան ավելի շատ էր հուզմունքներ ունենում, այնքան ավելի քիչ էր դրանք հայտնաբերում. նա սառեցնում էր իրեն, ով հենց ինքն էլ առաջինն էր տուժում դրանից։ Այդպես նա բաց թողեց դատեր հետ մտերմանալու առիթը, որն անշափ շատ էր ցանկանում հորը վատահել իր նվիրական մտքերը։ Այն ժամանակ ժորժը երջանիկ կլիներ հորը պատմել այն ամենը, ինչը լցնում էր իր սիրտը, պատմել այն օրերի մասին, որոնք նա անց էր կացրել Աննետայի հետ։ Բայց փորձիր կիսել ուրախություն, երբ քո դիմաց նստած է այդքան անտարբեր կերպարանքով մի մարդ, և հենց մեն միայն այն մտքից, որ իր շաղակրատ աղջիկը հիմա կարտաբերի Աննետայի անունը, կյանքի կկոչի նրա կերպարը, նա արդեն նախապես իրեն սառը և թշնամական տեսք էր տալիս։ Ժորժը, իհարկե, հիանալի հասկանում էր, թե ինչ է թաքնված այդ սառնության տակ... Ինչ արած, ավելի վատ հոր համար։ Անհամբեր երիտասարդությունը հոգնում էր և հոգու համար փնտրում ուրիշ ապաստարան։ Հորից պատասխան ռեպլիկաներ չստանալով, Ժորժը զրուցում էր ինքն իր հետ։

— Էհ, աղավնյա՜կս։ Տաքացրու նրան, տաքացրու։ Ուղղակի լեզուդ սառեց այդ սառցալուլան լիզելուց...

Իսկ Ժուլիենն ամեն շաբաթ նորանոր պատճառներ էր գըտնում, միայն թե չարձագանքի Աննետայի հրավերին, թեև աղջիկն հիմա արդեն ոչ մի բանի վրա չէր համառում։

«Ով շատ լավ է, որ չի գալիս։ Իսկ եթե գար— իմ ամբողջ հաճույքը կփչացներ...»։

Սակայն Աննետան հակված չէր անսահմանորեն սպասել։ Նա լավ էր ճանաչում իր նախկին Ժուլիենին։ Մի անգամ երեկոյան, գլխարկը դնելով, Աննետան դիմեց Ժորժին.

— Ես քեզ ճանապարհ կդնեմ։ Հայրդ տա՞նն է։ Ես ձեզ մոտ կբարձրանամ։

Ժորժը, իրեն չզսպելով բացականչեց.

— Իսկ նա ի՞նչ կասի։

— Կնշանակի, քո կարծիքով, նա ինձ դո՞ւրս կանի։

Ժորժը քրքջաց.

— Իհարկե, չէ։ Իմ զժբա՜խտ ծերուկ։ Այդպես միանգամից,

առանց նախազգուշացման՝ նա ուղղակի կաթվածահար կլինի։

— Եթե մենք նրան նախազգուշացնենք, նա կծլկի, և մենք երբեք նրան չենք բռնի։

— Ահա, ինչպես երևում է, դուք լավ եք ուսումնասիրել նրա նապաստակային բնավորությունը...

— Անհարգալից աղջիկ։

— Գրողի ծոցը գնա հարգալիցությունը։ Մենք ձանձրացել ենք դրանից։

— Մենք այդ ո՞վ։

— Ես ու դուք։

— Օ՜, ոչ, խնդրում եմ, ինձ այդ կոմպանիայից ազատեք, ես ամեն ինչ հարգում եմ։

— Ամեն ինչ հարգո՞ւմ եք։ Դո՞ւք։ Հա՜-հա՜-հա՜։

— Ոչ մի «հա՜-հա՜-հա՜»։ Ես սիրում եմ, և ես պայքարում եմ, հետևաբար ես հարգում եմ։

— Խաղի կանոննե՞րը։

— Ոչ, հակառակորդին։ Չի կարելի լավ կռվել, եթե չես հավատում հակառակորդի ուժին։

— Իրականացնելով սեփական հավատը upper-cut[1]-ի մեջ։ Դրա հետ ես համաձայն եմ։

— Դու, բացի խաղից, ոչինչ չես ընդունում։

Հնարավոր է, այդ երկու կանանցից նա, որը ոչինչ չէր ընդունում, բացի խաղից, անկեղծորեն մոռանում էր, որ դա խաղ է։ Բայց երկուսն էլ դրանում իրենց հաշիվ չէին տալիս։

Նրանք միասին սանդուղքով բարձրացան։ Ժորժը իր բանալին ուներ։ Նա Աննետային նախասենյակում թողեց։

— Պապա,— ձայն տվեց Ժորժը, նայելով հոր կաբինետի դուռը,— թույլ տուր քեզ ներկայացնել քո լավ ընկերուհուն։

Եթե անգամ երկնային կայծակը խփեր Ժուլիենին, թերևս այդպես չխոցեր նրան։ Ժուլիենը նույնիսկ տեղից կանգնելու ուժ չունեցավ՝ հյուրին ընդառաջ գնալու համար։

— Ներեցեք ինձ,— սկսեց Աննետան։— Ձեր աղջիկը, Ժուլիեն, իսկական սատանա է։ Այդ ինչպե՞ս եք հաջողացրել այսպիսի դստեր աշխարհ բերել։

— Ես գիտեմ, ինչ օրինակով են ինձ ձևել,— բղավեց Ժորժը։

Աննետան քնքշորեն նրան հրեց դեպի դուռը։

---

1 Օպերկոտ— Բռնցքամարտի հարվածի ձև

— Իսկ դու, աղջիկս, առայժմ մեզ միասին թող։ Գնա այս-տեղից։ Եվ փորձ չանես դռան մոտ ականջ դնել. ես քեզ լավ եմ ուսումնասիրել։

Ժորժն սկսեց դրան հակառակել։

— Այո, այո-այո,— համառեց Աննետան։— Դու առանց այն էլ շափազանց շատ բան գիտես, թեև այդ իմանալ քեզ բոլորովին չի կարելի... Իսկ հիմա շուտ հեռացիր։ Չլինի՛ մտքովդ անցնում է, որ քո հաճույքի համար մենք այստեղ ներկայացնելու ենք ծերունիների տեսարանը «Աուլեզիանուհուց»։

Ժորժը ծիծաղելով թույլ տվեց իրեն վռնդեն կաբինետից։ Աննետան մոտեցավ գրասեղանին, որի մոտ քարե արձանի պես անշարժ նստել էր Ժուլիենը։

— Իմ հին բարեկամ,— ասաց նա, մեկնելով Ժուլիենին իր ձեռքը,— մի՞թե դուք վախենում եք պառավ կնոջից։

Ժուլիենը կտրուկ շարժումով նա հրեց բազկաթոռը, բռնեց իրեն պարզած ձեռքը և լռելյան ճակատով սեղմվեց նրան։ Աննետան նստեց։ Ժուլիենի մտքով չանցավ էլ նրան աթոռ առաջարկել։

— Մի զայրացեք ինձ վրա այն բանի համար, որ այստեղ եմ եկել։ Այդպես պետք էր։ Եթե ես չգայի, դուք երբեք չէիք գա ինձ մոտ։ Ճի՞շտ է։

— Այո,— համաձայնվեց Ժուլիենը։— Երբեք։

Նա գլուխը բարձրացրեց և նայեց Աննետային։ Նրա շրթունքները շարժեց թույլ, շնորհակալ, գրեթե վեհերոտ ժպիտը։

— Լավ, լռենք մի քիչ,— ասաց Աննետան։

Հին բարեկամները սևեռուն նայում էին միմյանց։ Ամեն մեկն ուսումնասիրում էր մյուսի դեմքը, այնքան ծանոթ դեմքը, տեսնում էր այդ դեմքի վրա անցած կյանքի հետքերը։ Իսկ որքա՜ն կնճիռներ կային տան ճակատին։ Բայց դրա փոխարեն նրա վրա հիմա նստած է ստվերների և արևի բրոնզափառը, ինչպես հին Հռոմի այն ֆրոնտոնների վրա, որոնք նայողին ցույց են տալիս ժամանակի հետքերը, արքայական անվրդովությունը, որը չի ենթարկվում դարերի վաղքին։ Նրանք չէին կիսում իրենց մտքերը։ Աննետան կարդում էր յոթ փակի տակ գտնվող այդ գրքում, որը չէր ցանկանում բացվել,— իսկ հիմա շատ ավելի քիչ, քան երբևէ, չէ որ Ժուլիենը գիտեր, որ իրեն հետևում են, և նա այնքա՜ն շատ բաներ էր ուզում թաքցնել Աննետայից։ Աննետան առանց դժվարության կռահեց այդ և խղճահարու-

թյամբ լցվեց այդ հոգու նկատմամբ, որն այդպես էլ չէր բացվել իր ամբողջ կյանքի ընթացքում, այդ միայնակ հոգու նկատմամբ, որն ավելի շատ սայսափում էր կապվածությունից, քան թշնամանքից, քանի որ սովոր չէր սիրուն և նրա հետ պայքարում էր միայն մի զենքով,— փախուստով։

Աննետան առաջինը ընդհատեց լռությունը։

— Շատ շնորհակալ եմ,— ասաց նա,— այն բանի համար, որ դուք ինձ երիտասարդ ընկերուհի եք տվել։

— Նա ձերն է,— պատասխանեց Ժուլիենը։— Դա այն լավագույնն է, ինչ ես ունեմ։

— Դուք հիանալի կյանք եք ապրել,— լուրջ ժպիտով վրա բերեց Աննետան։

— Իմ ամենաոխերիմ թշնամուն ես չեմ ցանկանա այդպիսի կյանք,— դառնությամբ արձագանքեց Ժուլիենը։

— Ես էլ չեմ ցանկանա, որովհետև ուրիշ ոչ ոք արժանի չէր լինի այդ կյանքը տանելու։

— Ուրեմն, դուք գիտե՞ք։

— Գիտեմ։ Գիտեմ ձեր մարտերի մասին։ Կարդացել եմ ձեր գրածները։ Իսկ այն, ինչ չեմ կարդացել, տեսել եմ (Աննետան աչքերը կիսափակեց)... Ով հպարտանում եմ ձեզնով։

Ժուլիենը ցնցվեց.

— Ես... այն, ինչ ես հիմա ներկայացնում եմ ինձնից... այն, ինչ ես դառել եմ... Ես ձեր ստեղծածն եմ... Ով ամեն ինչ ես դնում եմ ձեր ոտքերի առաջ։

Հիմա էլ Աննետան ցնցվեց.

— Ես ի՞նչ եմ արել ձեզ համար։

— Դուք ինձ ստեղծել եք։

Նորից բացվեց լռության անդունդը։ Այնտեղից հորդաց այրող զգացմունքների հեղեղը... Ժորժը զուր էր պատի հետևից սրել ականջները և սրտնեղած մռթմռթում.

— Այդ ի՞նչ են անում, երկուսն էլ այնտեղ մեռե՞լ են, ինչ է։

Աննետան բարձրացրեց Ժուլիենի վրա իր խոնավ շողշողուն աչքերը, որոնց գամված էր նրա հայացքը— հավատարիմ, նվիրված շան հայացքը, և արյան հոսքը սրտից հորդաց դեպի երես։ Բայց Ժուլիենի համար այդ շառագունած այտերը, այդ կարմիր բծերով ծածկված ճակատը ավելի գեղեցիկ էին, քան ինքը գեղեցկությունը։ Ով Աննետան ասաց.

— Կնշանակի, մենք մեր կյանքը իզուր չենք կործանել։

Ժուլիենը քիչ մնաց պատասխաններ.

«Այդ ե՞ս։ Չեմ կործանել։ Իսկ ինչի՞ է ծառայել իմ կյանքը»։

Սակայն, նայելով բերկրությամբ շողշողացող Աննետայի դեմքին, Ժուլիենն զգաց, որ դա ուղղակի երախտամոռություն կլիներ։ Նա ուզեց Աննետայի առաջ ծունկ չոքել։ Բայց այդ պոռթկումին խանգարեց բարոյական ընդարմացումը և բնածին արատը— կաշկանդվածությունը. Ժուլիենը հանկարծ իրեն տեսավ կողմնակի աչքով, տեսավ ծեր, ծիծաղելի մարդու։ Եվ մոթմոթաց։

— Թթե ես չեմ կործանել ձեր կյանքը, մնացած բոլորը, բոլոր ձախորդությունները, բոլոր տխրությունները, այդ բոլորը ոչինչ են, և ամեն ինչ սքանչելի է։

Նրանք լուռ և խիստ երախտագիտության ժպիտ փոխանակեցին։ Հետո Աննետան տեղից վեր կացավ։

— Այսօրվա համար երջանկությունը բավական է։

Աննետան շարժվեց դեպի դուռը։ Շեմին Ժուլիենը հարցրեց նրան։

— Իսկ շարունակությո՞ւնը։

Աննետան պատասխանեց.

— Երբ դուք ինքներդ գաք նրա հետևից։

Օրերի դարպասները կրկին բացվեցին։

Հին բարեկամները հիմա հանդիպում էին կանոնավոր կերպով։ Երկուսն էլ սրբորեն պահպանում էին ուրիշի ոտնձգությունները այն ժամերը, որոնք հատկացված էին իրենց ղրույցներին։ Թեև Ժուլիենը ծանոթացավ Մարկի, Վանյայի և Ասյայի հետ, թեև շուտով նա Ռիվերների մոտ դարձավ յուրային, այնուամենայնիվ նրանց ներկայությամբ Ժուլիենին ոչ մի կերպ չէր հաջողվում վերջնականապես «հալչել» ու դուրս գալ կաշկանդվածության վիճակից։ Նա քաշվում էր ոչ միայն Ասյայից, այլև փոքրիկ Վանյայից,— Ժուլիենը երեխաների հետ խոսել չգիտեր։ Մենմիայն Մարկն էր կարդում գիտնականի մտահոգորեն մռայլված ճակատի հետևում թաքնված անվախ ու անողորմ միտքը և ագահորեն ձգտում էր գտնել նրա մեկնությունը։ Իսկ Ժուլիենին ուրիշ առեղծված էր վախեցնում. նա շփոթվում էր այդ երիտասարդության ինկվիզատորական հայացքի տակ, ի վիճակի չէր հասկանալու նրա հետաքրքրությունները, նրա հեգնանքը և խստությունը։ Այդ ժամանակ նա ապաստան էր գտնում Աննետայի մոտ, որը նույնքան լավ, որքան և ինքը Ժուլիենը, գիտեր

նրա թերությունները և շատ ավելի լավ, քան Ժուլիենը, գիտեր նրա թախծոտ հոգու, նրա հպարտ հոգու վեհությունը,— Աննետային ոչինչ բացատրել պետք չէր։ Նույնիսկ առանց որևէ խոսք արտաբերելու, հենց միայն Աննետայի մոտենալուց, Ժուլիենը ցած էր գցում էլեկտրականությամբ գերհագեցված հոգու բեռը։ Աննետան այդ այնպես էր ընդունում, կարծես հենց այդպես էլ պետք է լիներ։ Ավելորդ բեռը չէր ճնշում նրան, ավելի շուտ դա նպաստում էր հավասարակշռությանը, և նավն ավելի հաստատուն էր նստում ջրի մեջ։ Այդպես էր կատարվում բարեկամի հոգում վերստին գտած նրանց կեցության գաղտնի օրենքը։ Սիրո տարիներն անցնում էին, հիմա խոսքն ավելի շատի մասին էր (և ավելի քիչի)։ Պետք է հնչեր վերջին ակորդը, որը եզրափակում է երկու ճակատագրերի, երկու մարդկային ճակատագրերի նախանշված կորագիծը։ Եվ ամենից հաճախ գիշերը ամեն մեկն իր տանը, իր անկողնու մեջ, մտածում էր բացակայողի մասին և լցվում էր նրա նկատմամբ երախտագիտությամբ, և առանց խոսքի ամեն մեկը հասկանում էր, որ միշտ, բոլոր այդ տարիներին, ինքն ապրել է բարեկամի սրտում։

Բայց միանման չէին բնակեցված այդ երկու ապաստանները. Աննետայի տանը Ժուլիենին հատկացված էր միայն մի սենյակ։ Ժուլիենի տանը քիչ իրեր կային ու մարդիկ. այնտեղ ապրում էին միայն Աննետան և Ժորժը, և այն էլ բնվակային վիճակում, իսկ մնացած տարածությունը լեփ-լեցուն էր գրքերով ու գաղափարներով։ Բայց փոշին ու սարդոստայնը ամեն ինչ ծածկել էին։ Իսկ Աննետայի տանը նույնիսկ նեղվածք էր. նեղվածք էր անցյալից, նեղվածք՝ ներկայից։ Եվ եթե այնտեղ սենյակները դատարկ էին, ապա լոկ այն պատճառով, որ սպասում էին, որ մեկը վաղը կարող է գալ և անպայման կգա։ Ոչ, անհավասար էր այդ խաղը։ Ասենք, հավասար լինել չէր էլ կարող։ Խաղ գոյություն չէր ունենա, գոյություն չէր ունենա ինքը կյանքը, եթե չլիներ նա, ով տարվում է, և նա, ով շահում է, նա, ով ավելի շատ է տալիս, և նա, ով ավելի շատ է վերցնում։ Ժուլիենը պատկանում էր առաջին կատեգորիայի խաղացողներին, նա կարող էր տալ ավելի շատ, նա տալիս էր ավելի շատ, իր տրամադրության տակ ունենալով կապվածության ավելի մեծ պաշար։ Իսկ Աննետան չէր կարող իր տրամադրության տակ ունենալ այն բաժինը, որը տրվել էր կամ տրվելու է ուրիշներին (չէ

որ ապագան նույնպես պահում է իր բաժինը)։ Ժուլիենի համար առանձնացրած բաժինը քիչ չէր։ Հարկ էր, որ նա բավարարվի այդ բաժնով։ Իսկ եթե այնուամենայնիվ քաղցը հագեցնելու համար չհերիքեր, ապա դա նրա մեղքն է, երբ Աննետայի սիրտը գրեթե ամբողջովին նրան էր պատկանում, նա այդ սիրտը ձեռքից բաց թողեց։ Հիմա բավարարվիր մասնիկով, որը պահպանել են քեզ համար։ Եվ նա բավարարվում էր։

Բայց և այնպես, նա ափսոսում էր, կշտամբելով իրեն այդ զգացումի համար, այն բանի համար, որ չկարողացավ տիրանալ նրա սրտին, ամբողջությամբ, հատկապես նրա այն մասին, որն, առանց խնդրելու, ստացավ եկվորը, նոր բարեկամը. կոմս Բրունոն։

Այդ երջանիկը—երջանիկ մարդը հակառակ նրա գլխին թափված ճակատագրի բոլոր հարվածների,— բավական է հայտնվեր ոչդադծդ տանը, իսկույն ևեթ գրավում էր բոլոր սրտերը։ «Veni, vici»[1]։ Բրունոն համարում էր, որ հենց այդպես էլ պետք է լինի։ Իսկ նրա հետևից նաև մյուսներն էին համաձայնում, որ հենց այդպես էլ պետք է լինի։ Երկու կողմերն էլ իրավացի էին։ Այլ կերպ էր լինում Ժուլիենի հետ.— նրա հետ ստիպված էին բավական ջանք թափել ընկույզի համը տեսնելու համար, և պինդ կճեպի պատճառով երկար ժամանակ բերանում դառնության համ էր մնում։ Իսկ կոմսի դեպքում պարզվեց, որ ընկույզը և կճեպը միատուկ ու քաղցր են։ Առանց որևէ կասկածի, կոմս Բրունոյի մեղմությունը նրա հմայքի կեսն էր կազմում, եթե չխոսենք նրա սիրալիրության, բարության և բնածին հրապույրի մասին։ Նա քայլում էր առանց ստվեր գցելու։ Կյանքի բոլոր դժվարությունները լուծվում էին նրա երկնագույն աչքերի փաղաքշող շողշողանքի մեջ, որոնք իրենց շուրջն էին նայում ոչ առանց սեթևեթանքի, ընդ որում, բոլորովին անմեղ սեթևեթանքի։ Այդ ծերուկը, ավելի ճիշտ երեխան, որ մետաքսյա ճերմակ մորուք ուներ, որը նա, ինչպես կատվի մեջքը, քնքշորեն շոյում էր իր բարակ մատներով, պահանջ էր զգում լինել բոլորի սիրելին և սիրել բոլորին։ Դա նրան չէր խանգարում մերձավորների մասին դատել այնքան հստակորեն ու առողջ, այնքան խորը թափանցել ուրիշի հոգին, այնքան անսխալ հավել հիվանդ տեղի ամենազգայուն կետին, որ մարդ իրենից անկախ շփոթմուն-

[1] veni, vidi, vici — եկա, տեսա, հաղթեցի (լատ.)։

քի մեջ էր ընկնում։ Սակայն այդ հպումն այնքան քնքուշ էր լինում, այնքան անսխալ, որ մարդկանց նույնիսկ բավականություն էր պատճառում։ Եվ բարյացակամ վիրաբույժը կարողանում էր ամեն ինչի պատրաստ պացիենտի հետ հաստատել խորհրդավոր մի մտերմություն, որի բանալին երկուսն էլ պահում էին իրենց մոտ։

Ի տարբերություն մնացյալ բոլորի միայն Ասյան էր—փշոտ վայրի շագանակենին, որ չտրվեց այդ խաղին։ Նա «մեղմություն, ավելի շատ մեղմություն»[1] տանել չէր կարողանում—ինչպես և չէր տանում չափից ավելի մեղմ տղամարդկանց, չափազանց գեղեցիկ մորուքներ, չափազանց խնամված և չափազանց նուրբ ձեռքեր, իսկ հատկապես այնպիսի հայացքներ, որոնք փաղաքշանքի նման մարդու սիրտ են սողոսկում։ Նա հաճույքով համաձայնվում էր, որ Բրունոն բարի է, որ նա խելացի է, որ նա հեռուն է տեսնում։ Բայց նա առանձնապես բարձր չէր գնահատում այդ իմաստությունը, այդ բարությունը, այդ խորաթափանցությունը... «Ես այնքան էլ հեռուն չեմ տեսնում, տեսնում եմ իմ Մարկին, նա լավն է թե վատը, ես նրան ընդունում եմ այնպես, ինչպես որ նա կա։ Նա ինձ ընդունում է այնպես, ինչպես որ ես կամ, նա գնում է այնտեղ, ուր ես եմ գնում, իսկ ես գիտեմ, թե ուր եմ գնում»։ Ասյան զգում էր, որ Բրունոյի հայացքը թափանցում էր ուղածդ փեղկերից ներս և որ ինքը բացառություն չի կազմում։ Եվ Ասյան կատաղում էր, զայրույթով լցվում։ Իսկ Բրունոն բարեհոգի տեսքով ձևացնում էր, որ ինքն ամենևին էլ նրա կողմը չի նայում, բայց դիմանալ չէր կարողանում և, տեսնելով մոայլված կատվային դեմքը, կամացուկ ծիծաղում էր անուշահոտություններով օծված իր մորուքի մեջ։

Բայց և այնպես մյուսները պարտված էին. փոքրիկ Վանյան և Ժորժը, Մարկը և Աննետան։ Բոլորն էլ իրենց ըմբռնողության ու պահանջների չափով զգում էին այդ օպտիմիզմի բարերար ազդեցությունը, որն անձնատուր չէր լինում ոչ կյանքի աղետների, ոչ բիլ աչքերով բանականության առաջ։ Որքան էլ իռացիոնալ լիներ այդ օպտիմիզմը, որն իր էության մեջ հերքվում

---

1 «Մեղմություն, ավելի շատ մեղմություն»— խորհուրդ, որը, ըստ Դիդրոյի ասածի, մշտապես տալիս էր իր աշակերտներին նկարիչ Շարդենը (1699—1799)— Ռ. Ռ. (Ծանոթագր. ռուս. հրատ. համար)։

էր կյանքի ողբերգական փորձով, նա բոլորովին ուրիշ պայծառատեսությունից, ժուլիենի մոայլ տեսնելուց, պեսիմիզմից շունչ առնելու հնարավորություն էր տալիս, պեսիմիզմ, որը կոփում էր, որն ատոիկորեն անդրդվելի էր, բայց որը խլում էր կյանքի բերկրությունը նրա պոզիկումների հետ միասին։ Եվ այդ օպտիմիզմը, միակ բեզմնավոր բանն էր, քանի որ լոկ նա էր կենսունակը. նա համապատասխանում էր գաղտնի օրենքներին այն «արարող Բնության»[1], որն ուզում է ապրել, հոգ չտանելով ոչ բարու, ոչ չարի մասին, ոչ տառապանքների, ոչ էլ մարդկային ճիգերի ապարդյունության մասին։ Նա ուզում էր ապրել և ապրում էր, հակառակ բարոյականության և բանականության օրենքների, «արարված Բնության» օրենքների, տրամաբանական մարդու օրենքների, որը բավականաչափ իմաստություն չունի ճիշտ ժամանակին թևը բաց թողնելու իր իլիկի վրայից, մարդու, որը ամեն ինչ մտածում է մինչև վերջը,— մտածում է մինչև վերջն այն աստիճանի, որ դադարում է ապրելուց։ Բրունոն ճանաչեց մտքի բնագավառը. իր ճարպիկ մատներով նա առանց դժվարության կարող էր քանդել այդ մտքի ուզածդ կծիկը։ Բայց նա կարողանում էր ականջ դնել ճախարակի ձայնին և ներքին սենյակներից ձայնակցող երազանքի երգին, ծովահարսի երգին։ Մի ժամանակ նա ինքն էր այդ ծովահարսի ղոհը, իսկ հիմա նրան հաջողվել էր Սիցիլիայի այդ ծովահարսին իր ցանցի մեջ գցել։ Այսուհետև նա երգում էր Բրունոյի անձնական զվարճանքի ու նրա հյուրերի զվարճանքի համար, ինչպես վանդակում գտնվող ընտելացած թռչունը։ Եվ բոլոր նրանց համար, ովքեր լսում էին այդ ծովահարսի երգը, կյանքի բեռը մի տեսակ թեթևանում էր։ Թռչունն այդ չէր թաքցնում գոյության դժվարությունները, նա չէր ասում.

«Այն, ինչ կա, չկա»։

Նա ասում էր.

«Այն, ինչ կա, կա։ Հետևաբար, դա սքանչելի է։ Քանզի սքանչելին՝ լինելն է»։

Եվ նրա հիասքանչ, թավջութակի հնչյունների նման, ձայնը, որը, գուցե, փոքր-ինչ ականջ էր դնում ինքն իրեն, լուսավորում էր այն ամենն, ինչ գոյություն ունի և գեղեցիկը, և տգեղը,—

---

[1] Natura naturans և natura naturata — *Սպինոզայի փիլիսոփայության տերմիններն են։*

վետվետում էր ինչպես արևի շողը մահվան ժայռի ստորոտում դտնվող լազուր ծովի հարթության վրա, մահվան ժայռ, որի անունը Սցիլլա է։

Ահա հենց այդ շողն էլ հպվեց Մարկի մոայլված ճակատին։ Եվ հաստատուն կերպով մնաց այդ երիտասարդ ճակատի վրա։ Նրանք ձգտում էին իրար։ Առաջին հայացքից ծեր իմաստուն սիցիլիացին զարմացած էր Մարկի երեսին դրված անկեղծ և այրող հիասթափության կնիքից։ Մահն իր զոհն էր նշանակել կրքերով փոթորկվող հոգուն։ Մարկն արդեն պատրաստ էր նրա հետ հանդիպելու։ Եվ, կռահելով, որ այդ խռովված խառնվածքը չանում է կամքի մեծագույն լարումով իր վրայից ցած գցել դաժանության և պատանի էգոիզմի դևերին, Բրունոն հուզվել էր։ Նա կնոջից ավելի պարզ, մորից ավելի լավ էր տեսնում այդ անձայն մարտերը։ Եվ այդ պատանին, տաքարյուն, անողոք, նույնիսկ դաժան, հպարտ, բռնակալ, գիշատիչ, անսանձ, որ համառորեն չանում էր զսպել իր վագրային բնազդներով, Բրունոյին հրապուրում էր իր այդ բնազդների ուժով և ուժով հոգու, որն հնազանդեցնում էր նրանց։ Նա տեսնում էր, ինչպես Մարկը մարմնամարզիկի համառությամբ իր կամքը վարժեցնում է ինքնազոհության, և հուզմունքով հիանում էր այդ հերոսական և նուրբ ներդաշնակությամբ։ Հոգու խորքում նա, այդ ծերուկը, այդ երեխայի, այդ քսանհինգ տարեկան պատանու նկատմամբ ինչ-որ մի տարօրինակ հարգանք էր տածում, որը ժամանակ առ ժամանակ իրենից անկախ, դրսևորվում էր նրա խոսակցության, շարժուձևերի մեջ։ Օրինակ, Բրունոն միշտ նրան բաց էր թողնում իր առջևից— ուրիշների նկատմամբ նա այդպես չէր վարվում, եթե չհաշվենք կանանց, որոնց այդպես էր վերաբերվում բարձրաշխարհիկ սիրալիրության որոշակի երանգով,— այլ խոսքերով ասած, արժեքազրկելով իր ակնածանքը։ Թվում էր, թե նա խոնարհվում է խորհրդավոր ապագայի առաջ։ Հնարավոր է, Բրունոն ինքը չէր կարող պատասխանել այն հարցին, թե ինչ զոհ է նա կանխատեսում, ինչու է նրա աչքին երևում Իսահակը, որն իր խարույկի համար մի կապ ցախ է բերում։ Եվ Աննետային այդպիսի րոպեներին համակում էր հուզմունքը։ Նա իրեն հարցնում էր.

«Իսկ ի՞նչ են տեսնում այդ աչքերը»։

Բայց հարցնել չէր համարձակվում։

Մարկն ինքը ոչինչ չէր նկատում։ Նա չափազանց կլանված

էր լինում այն հարցի լուծումով, որն իր առաջ էր դնում ճակատագիրը։ Նա խաղում էր իր դերը, խաղում էր իր դրաման, գործողությունը գործողության հետևից, չնայելով ու չհետաքրքրքրվելով, թե ինչպիսին է լինելու ողբերգության ավարտը։ Բայց խաղում էր վատ, նման այն վատ դերասաններին, որոնց մասին Դիդրոն ասում էր, թե նրանք չափազանց շատ են հափշշտակված դերով և այդ պատճառով էլ դերին են ենթարկվում։ Իսկ որպեսզի դերից դուրս գա, Մարկին ավելի շատ Բրունոյի ժպիտն էր պետք, որը թաքցնում էր իր համար դեռ անհայտ մի աշխարհ, քան Ժուլիենի դառը տեսնելը, որն այնքան մոտ էր իր սեփական տեսնելու եղանակին։

Նվ առաջին բարերարությունը, որ Մարկը վերցրեց Ծերունի Ուլիսի հետ ունեցած իր շփվելուց, դա հանգստացումն էր— խռովված հոգին զգաց, ինչպես է ուրիշի ձեռքի տակ կաթիլ առ կաթիլ նրա մեջ թափանցում ինքն իր հետ հաշտվելու երանելի զգացումը։ Մարկն ազատված էր հիմա ստորացուցիչ մարտերին վերաբերող խոստովանանքներից, մարտեր, որոնք որպես ասպարեզ ընտրել էին նրա մարմինը, և իր համար տհաճ մտքերից, որոնցից առաջ չէր հաջողվում խույս տալ, ինչպես անկոչ հյուրերից։ Բրունոյի կիսափակ աչքերը հայտնաբերեցին նրանց բնատեղը, և նա իր փաղաքշական հեգնանքով, կարծես ձեռքի ափով, ծածկեց վախեցրած թռչուններին, ձևացնելով, որ նույնիսկ չի էլ կպչում նրանց։ Մի անգամ, երբ Մարկը տանջվում էր, չհամարձակվելով բաժանել իր մտքերն ու հիշողություններըը, Բրունոն, ձևացնելով, որ ցանկություն չունի լսելու ամեն տեսակի ծեծված պատմություններ, որոնք ոչ մի առնչություն չունեն պատանու տառապանքների հետ, հանկարծ ժպտաց և ինքն սկսեց պատմել մի հին հնդկական զվարճալի առակ։ Խոսքըն այդ առակի մեջ վերաբերում էր մի առաքինի մարդու, որը գնացել էր ճգնավորի մոտ և խնդրել Ծերունուն, որ նա իր իրատատուն դառնա։ Նրան փորձելու համար իմաստունը հարցնում է։

«Սուտ ասել գիտե՞ս, որդիս»։

«Աստված չանի,— բացականչում է առաքինի եկվորը։— Երբեք կյանքում ես չեմ կարող ստել»։

«Այդ դեպքում գնա և սովորիր,— պատասխանում է նրան իմաստունը։— Իսկ երբ կսովորես, ետ կգաս»։

Քանի որ, ինչպես ասում է տիբեթյան իմաստությունը. «Անկարողությունը ոչ թե առաքինություն է, այլ անզորություն...»։

— Սատանան տանի,— բացականչեց Մարկը։— Ինչում ուզում եք, բայց այդ բանում ինձ արդեն չի կարելի նախատել։

Եվ անամոթ Ասյան, որ սենյակով անցնելիս հասցրեց լսել և տիբեթյան իմաստունի խոսքերը, և Մարկի բացականչությունը, հաստատեց.

— Ճիշտ է, ճիշտ է, դրա մեջ Մարկին չի կարելի նախատել։

Տղամարդիկ քահ-քահ ծիծաղեցին։ Բայց երբ Ասյան դուրս եկավ, Մարկը դեմեց Բրունոյին.

— Մի՛ կարծեք, թե ստախոսությունը այն է, ինչն ինձ սպառնում է առաջին հերթին։ Սուտն ամենալուրջ զազանը կլիներ մնացյալ իմ ֆաունայի մեջ։ Եվ հույս ունեմ, դուք առանձնապես չեք պնդում, որ ես կերակրեմ նրան։ Այդ դեպքում ավելի լավ է ես զբաղվեմ մյուս վեց մահացու մեղքերի ամեցմամբ։ Բայց դրանք և բոլոր գարշանքները, որոնք նույնիսկ արժանացած չեն «մահացու» կոչվելուն, հենց նրանք են, որ ամենաանողկալին են... Դրանք այնպիսի պարազիտներ են...

— Չեմ ուզում ձեզ հիշեցնել,— պատասխանեց Բրունոն, շոյելով իր մետաքսյա մորուքը,— ձեր ֆրանսիական բամբասասեր կանանց ասացվածքը (ասենք, մեր՝ իտալականների, նույնպես). «Ոչիլը առողջության գրավականն է»։ Բայց ներքին կյանքի բնագավառում իսկական իմաստությունը, ինչպես այդ պնդում են իմ տիբեթյան ճգնավորները, հնարավոր է, ոչ թե նրանում է, որ մարդ ավերի (ոչինչ մի՛ ավերիր), այլ նրանում, որ մի ուժերի սուբստանցիան զարձնի մի ուրիշ ուժերի սուբստանցիա։ Ջարի ուժերը նույնպիսի պարգև է, ինչպես և բարու ուժերը։ Այն մահկանացուն, որը դեռ օրորոցում է ստացել զբրանք, ստացել է աստվածների օրհնությունը։

— Կնշանակի, ես էլ եմ այդ օրհնությունն ստացել,— ասաց Մարկը։— Թող դրանք բոլորն էլ նզովյալ լինեն։ Ես մի կերպ յոլա կգնայի առանց այդ պարգևների։

— Երիտասարդությունը միշտ էլ անշնորհակալ է,— առարկեց Բրունոն։

Բայց պարադոքսալ միտքը իր գործն արեց. Մարկի մտքում նա իր համար բարեբեր հող գտավ, կպավ և պտուղ տվեց։ Նա հիանալի հասկանում էր, ինչ կենսական արժեք ունեին իր համար այդ ուժերը, հասկանում էր, որ զրկվելով դրանցից, ինքն

ավելի թույլ և ավելի խոցելի կդառնար... Նվ մի առակ պատմեց Հաղար ու մի հեքիաթից, ինչպես կոչում էր Բրունոյին անհարգալից Ասյան,— Միլինդա թագավորի տված հարցը։

«Հարցրեց մի անգամ Միլինդա թագավորը Նագասենային. «Երկու մեղք գործողներից ո՞րն է ավելի մեղավորը. նա, ով մեղք է գործում առանց գիտակցելու, թե՞ նա, ով մեղք է գործում գիտակցորեն»։ Նա, ով մեղքը գործում է առանց գիտակցելու։ Եթե երկու մարդ իրենց ձեռքը վերցնեն շիկացած երկաթի կտորը, ո՞վ ավելի շատ կայրվի։ Նա, ով գիտի, որ երկաթը շիկացած է, թե՞ նա, ով այդ չգիտի։ Ավելի շատ կայրվի նա, ով չգիտի»։

Իսկական ֆրանսիացի, Աննետայի որդին, Մարկը կարողանում էր ճանաչել շիկացած երկաթի կտորը։ Դա արդեն բանականության գործ է. բռնել այն և գործի դնել։ «Հոգով աղքատներ», վայ ձեզ։ Երկնային արքայությունն է ձեզ սպասում։ Բայց հանուն երկնքի, հանուն մեր փրկության թող ձեզ համար պատվիրվի երկնային արքայության մուտքը։ «Պարզամտությունը կարդա՝ հիմարությունը) ավելին է, քան հանցագործությունը,— հայտարարում էր Ասյան։ Սլավոնական իմաստությունը, Հընդկաստանի իմաստությունը, Քրանսիայի իմաստությունը, աշխարհի բոլոր իմաստությունները միահամուռ պնդում են. «Հիմար մի՛ եղիր»։ Ժողովուրդների առողջ միտքը ոչ մի տեղ և երբեք չի հաշտվում հիմարության հետ։

Տևական պայքարը, որը երկար տարիներ Մարկը տանում էր իր հրեշների դեմ, մենակ, լռության մեջ, հաղորդակից չդարձնելով նույնիսկ ամենամոտիկ մարդկանց, հանկարծ ավելի հզոր տացավ ավագի ներկայությունից, որը ամեն ինչ հասկանում էր առանց խոսքի և կարողանում էր, շոյելով հրեշների փարթամ բաշը, հնազանդեցնել նրանց առանց մտրակի և խթաններին։ Անհանգիստ «ես»-ի համաձայնությունը աշխարհի հետ (այդ դեռ գործի կեսն է),— այդ «ես»-ի համաձայնությունը իր հետ, որին հասավ կոմս Բրունոն, կարծես օամոսի միջոցով թափանցում էր Մարկի խռովված հոգին։ Կարելի էր նույնիսկ մտածել, թե նա հանկարծ հասկացավ իր սեփական տառապանքների, իր ինքնահրաժարման խոր և խաղաղեցնող իմաստը, տեսավ նրանցում «իր մեջ մարդու մարդկայնության աղատագրման» համար դրված փրկագինը։

Քավում է մաքուր մարդկայնությունը
Բոլոր ոճիրներն հանուր մարդկության...

Բրունոյից Մարկն առաջին անգամ լսեց այդ հիանալի բանաստեղծությունը և վայմարյան «Իֆիգենիային»[1], որն այդ խաղաղված մեսսինացի Օրեստի համար ամենասիրելի քույրը դարձավ։

Նվ բռնության պրոբլեմը, որին անխուսափելիորեն դեմ էր առնում Մարկը,— բռնության, որն անքակտելիորեն կապված էր պայքարի հետ, բռնության, որից ազատ չէ զգում ոչ մի գործողություն, եթե անգամ միանգամայն վերջ է բռնության հանդեպ ունեցած ամեն մի կամքից, ինչպես, օրինակ, Գանդիի Սատիագրահան[2] (մի՞թե բռնություն չէ ամեն կարգի աշխատակցությունից հրաժարվելը, որ գոյության ամենաանհրաժեշտ պայմանն է, հրաժարում, նման պնևմատիկ պոմպի, որ դուրս է մղում ամբողջ օդը և ապառնում շնչահեղձությամբ), դաժանությունը, որով, ինչպես խարանով, բնությունը նշել է մեր ամեն մի շարժումը, մեր բերանի շունչը, եթե մենք ուզում ենք ապրել և ապրում ենք,— նույնիսկ այդ այրող պրոբլեմը դադարեց Մարկի խոնջացած թոքերն այրելուց, և դա տեղի ունեցավ շնորհիվ նրա ավագ բարեկամի անսպասելի ներողամտության և հանգիստ հեգնանքի։ Բրունոն խոսում էր «մերձավորին ծառայելու և նրա նկատմամբ ունեցած կարեկցանքի» տարօրինակ գաղափարների մասին, որոնք նա հայտնաբերեց ձնափոշու մրրիկի մեջ, որ պատվում էր Ասիայի բարձր սարահարթում, և նրա ժպիտը ոչ երկիմաստորեն ասում էր, որ իրեն այդքան էլ հեշտ չես խաբի։ Մարդկային բանականությունը, որ փաստորեն ամենուրեք հանդիսանում է այն օձառը, որն ամենից հիմնովին է լվանում կեղտով կամ արյունով աղտոտված ձեռքերը, այդ բանականությունը ոճրագործությանը պատշաճ տեղ է հատկացրել բարեպաշտ ճգնավորների քարոզված կարեկցանքի կրոնում։ Նրանք կարողացան իրենց համոզել, որ սպանությունը դա մարդու վերամարմնավորումների երկար շղթայի մեջ հասարակ պատահականություն է և կարող է ուրիշ դեպքերում փրկարար

---

1 Նկատի ունի Գյոթեի «Իֆիգենիա» ողբերգությունը և նրա հերոսներից մեկին— Օրեստին։

2 Գանդիի ուսմունքը «պասիվ դիմադրության մասին»։

խթանի դեր կատարել և սպանվածին դնել ճշմարիտ ուղու վրա։ Հետևաբար, դա գթության ակտ է, քանի որ շնորհիվ դրան չարագործը վերջնականապես շղթայվեց դժոխքում և իր մեղքերը քավելու հիանալի առիթ ունի։

Ինքնըստինքյան հասկանալի է, Մարկը ըմբոստացավ։ Նա հարձակվեց այդ բոլոր «տերտերների» վրա։ Բրունոն պաշտպան կանգնեց նրանց այն ներողամտությամբ, որն ամեն մի դատապարտումից ավելի վատ է. նրա խոսքերում անընդհատ լսվում էր («Ականջ ունեցողը թող լսի»), որ այդ կարեկցանքից կատարած ոճրագործությունների և մյուս առօրյա ոճրագործությունների միջև, որոնցով, այսպես ասած, երիզված է ազնիվ մարդկանց կյանքը, տարբերությունն ավելի մեծ չէ, քան, օրինակ, խոշոր արժեթղթի և մանր դրամի վերածված նույն արժեթղթի միջև։

Հասարակության մեջ, որ մարդն ստեղծել է իր կարիքի համար, հնարավոր չէ յոլա գնալ առանց այդ մանրադրամի, որն արդարադատություն է կոչվում, առանց ոճրագործության մանրուն դրամի, որն իրեն իրավունք է վերապահում հանուն հասարակության փրկության անարդարի կյանք վարել (աստվածավախ մարդիկ ավելի մեծ հանգստության համար ավելացնում են «հանուն պատժվողի հավիտենական փրկության»)։

Բրունոն լռում էր այն մասին, որ ինքն արդեն դուրս է եկել այդ հասարակությունից։ Այն «արահետը», որ ցույց էին տալիս տիբեթյան իմաստության քարոզիչները, ավելի հեռուն էր գնում «արդարամիտ և առաքինի գործունեության» այդ առաջին փուլից. նա ուղիղ տանում էր «հաղթահարված գործունեություն» ցուցանակի տակ գտնվող իջևանատուն։ Ճամփորդն այդ տան շեմին թողնում էր «գործողությունը» և դռան հետևում հայտնաբերում «կեցությունը», մաքուր, ինչպես արևը։ Այդ գաղտնիքը Բրունոն ոչ ոքի չէր բացում, մինչդեռ դրա շնորհիվ նրանից սկիզբ էր առնում լեռնային գագաթների փայլը, որը կենարար ուժ ուներ ամեն մեկի աչքի համար, ով նրա հետ հանդիպում էր։ Բայց նա զգուշանում էր բանալին Մարկին վստահելուց։ Նրա համար դեռ չէր եկել պտուղը ճաշակելու ժամը, որն ազատված էր գործողությունից անդին, դա երիտասարդության ճակատագիրը չէր։ Նրա համար, ով ջրաբաժան գծից ոտքն այն կողմը չէր դրել, որտեղից մի ճանապարհ կա— ներքև, դեպի մայրամուտ, նրա համար այդ պտուղը թույն կդառնա... Ուրեմն,

ելիր, բարեկամս, ելիր և գործիր։ Այստեղ, ճանապարհի վերջում,— կեցուլյունն է։ Իսկ սկզբից գործողուլյունը։

Բրունոն ժուլիենի նման չէր մտածում. «ինչի՞ համար գործել։ Ինչի՞ համար ապրել»։

Մարդկուլյան երկու տեսակ գոլուլյուն ունի (ինչպես ասում են Ֆրանսիայում դատավորական չինովնիկների մասին). «նըշանած» մարդկուլյուն և «կանգնած» մարդկուլյուն։ Ժուլիենը ամբողջովին պատկանում էր, ինչպիսև բոլոր նրա կարգի մարդիկ, կաբինետային մտավորականուլյանը, այն կարգի մարդկանց թվին, որոնք ապրում ու մեռնում են, այդպես էլ հետևը աթոռից չկտրելով։ Եվ, այնուամենայնիվ, նա կատարյալ հեռոսական ճիգեր էր գործադրում, որպեսզի բարձրացնի իր միտքը։ Իր անզոր ձեռքերով նա ժայռի նման նետեց այդ միտքը գործողուլյան հոսանքի մեջ։ Բայց ապարդյուն ցնցեց այն հին հասարակարգի պատերը,— նա ռիկոշետով վերադարձավ դեպի անհաջող սկավառակածիգը, ընկավ ուղղակի նրա վրա։ Եվ երեկոները պատրաստվելով քնելու, նա, հոնքերը կիտելով, կըրկնում էր։

— Տե՜ր իմ աստված, ինչ ծանր է այս բեռը՝ մարդկուլյունը։

Այո, դա Գողգոթայի խաչն էր։ Դրա ծանրուլյան տակ էր ընկնում մարդաստվածը, և ոչ թե խղճուկ փայտե խաչի ծանրուլյան տակ։ Ժուլիենին տանջում էին անարդարուլյան տառապանքների, անցյալի, ներկայի և ապագայի մարդկուլյան այդ դիվային խելագարուլյան մասին եղած մտքերը։ Լինելով լայն կուլտուրայի մարդ, նա ամեն ինչի և հենց իր այդ անարդարուլյան մեջ էր տեսնում մարդու—դահիճի և զոհի հավիտենական մոլագարուլյունը։ Տանջալիորեն դժվար էր այդ խաչը մենակ տանելը։ Քանի որ նա, ժուլիենը, բավականալափ ազնիվ էր և ոչ մի անգամ չցանկացավ այդ անլափ ծանր բեռը գցել մերձավորների ուսերին։ Միայն Աննետայի հայացքը կարող էր կարդալ նրա տառապանքները և թեթևացնել դրանք։ Ժուլիենը զրկված էր այն հարմար ելքից, որը գտավ Բրունոն, ցած գցելով մարդկուլյան բեռը տիեզերքի օվկիանոսի մասին ունեցած լուսաշող երազանքի մեջ։ Ժուլիենը չկտրեց այն կապը, որը նրան պահում էր մեր երկրի վրա— հինավուրց այն դաշտում, ուր քշված է մարդկային նախիրը։ Նա կիսում էր ընդհանուր ճակատագիրը։ Ազատագրման մի ուղի նա գիտե՜ր— թոթափել բոլոր պատրանքները, որոնցով և մարդն ապրում է։ Այն օրից

լեր, ինչ բացվեցին նրա աչքերը և խլվեց նրա տեսական կա-
կրոնի հետ, նա հայացքով թափանցեց մինչև ժամման հա-
կը (բայց Ժամանման հատակ չունի)։ Նա չէր ընդունում նույ-
սկ անմահության քրիստոնեական գաղափարը, որի կախար-
նքի տակ ապրել էր կյանքի կեսը։ Եվ քանի որ նա մյուսնե-
ց ավելի լավ գիտեր, ինչպիսի տեսիլքներ են հառնում քրիս-
նյայի աչքերի առաջ, ապա դառը բավականությամբ էր նա-
մ այն մանկական ագահությանը, որը ձգտում է ինչ գնով էլ
զում է լինել հավիտենականի մեջ պահպանել անցնող սուբս-
անցիաներն ու ձևերը։ Եվ նույնքան քիչ էին նրա վրա իշխում
ոքի և սրտի կուռքերը. գիտությունը, արվեստը և սերը։ Նա
արդորոշ տեսնում էր դրանց սահմանները և դրանցից վեր ել-
ող ծուխը— ափիոնի ծուխը։ Ժուլիենի մեջ ապրում էր դև-կոր-
անարարը, և միայն ինքը Ժուլիենը գիտեր, ինչի է նա ընդու-
ակ խեղկատակության չարագուշակ նոպաների ժամանակ։
այց նրա բնական բարությունը դևերին սանձած էր պա-
ում, քանի որ վախենում էր սպանել թույլերի հույսն ու հավա-
ը և չբավարարված, քնքշության չգիտակցված պահանջ էր
գում, քնքշություն, որը նրան մերժել էր կյանքը։ Եվ ահա,
երջապես, նրա մոտ եկավ ի դեմս Աննետայի բարեկամությու-
ը։ Նա ծպտուն չէր հանել դրա մասին ամբողջ քսան տարի,
այց նրա միջոցով Ժուլիենի առաջ բացվեց կյանքի իմաստը,
ենց այն իմաստը, որը նա չէր վերագրում կյանքին։ Նա տես-
ում էր, ինչպես են այդ դռնակի միջով անլսելի քայլերով վե-
ադառնում Հավատն ու հույսը, ինչպես են վերադառնում բո-
որ այն պատրանքները, որոնք նրանից հեռացել էին մյուս
ոնով։ Ժուլիենը գիտեր... բայց հրաժարվում էր, հրաժարվում
ր գիտակցորեն։ Նա պատրաստ էր նվաստացած ընդունել ամեն
ինչ, միայն թե ունենա այն, ինչին կարելի է հավատալ, այն, ինչ
արելի է սիրել, ինչի առաջ կարելի է ծունկ չոքել։ Այդքան մեծ
էր ծարավն հոգու-բանականության վանդակի հետևում տանջ-
վող բանտարկյալի,— որն ուզում էր արմատներ դնել հողում և
իր մեջ հավաքել նրա կենդանի արյունը՝ ապրելու համար։

Այդ մեծ լռակյաց սերը, որ զնդանել էր իրեն, չվրիպեց Ան-
նետայի ներքին հայացքից։ Եվ եթե սերն սկսեր խոսել, նա այդ-
քան կլանող չէր լինի։ Նա չերմացնում էր, ինչպես արևի շողը,
որ ընկել էր պատերի միջև։ Խեղճ Ժուլիենը սովորել էր միշտ
բոլորից թաքցնել իր օջախի չերմությունը։ Նա իր մոտ ներս էր

Թողնում միայն լույսը, բանականության լույսը, որը լուսավորում է, և ոչ թե տաքացնում։ Բայց չծախսված ջերմությունը ներս էր թափանցում քարե պատերից, որոնց հպվում էր Աննետայի ձեռքը։ Նա զգաց ծեր Թրթռացող սրտի այդ խլացրած ջերմությունը։ Իսկ որքա՜ն քնքշություն և որքա՜ն թախիծ կա նրա մեջ։ Որքա՜ն հավատարիմ է այդ սիրտը Աննետային։

Իսկ ինքն Աննետան այդ օրերին իր սիրտը կիսում էր երկու հին բարեկամների միջև։ Եթե նա իր սրտին թույլ տար ազատ ընտրություն կատարելու, նա կհակվեր դեպի Բրունոն։ Բրունոն կարող էր ավելի շատ բան պարգևել Աննետային։ Բայց Աննետան կարող էր ավելի շատ պարգևել Ժուլիենին։ Իսկ Աննետայի նման կնոջ համար ուրիշին պարգևելը ամենաանհրաժեշտ պահանջ է։

Ինչ լավ կլիներ թողնել, որ քեզ օրորի կոմս Կիարենցայի վիթխարի լուսաճաճանչ երազանքը, ժպտուն իմաստությունը և սիրալիր քնքշությունը։ Կանացի հոգին, որը հոգնել էր երկար տարիների միայնակ պայքարից, որը խոցված էր ու տանջված, ուրախությամբ իրեն կվստահեր հանգիստ ու հավատարիմ ուղեկցի հովանավորությանը։ Բայց ինչպես դիմանալ անձայն կոչին (միայն Աննետան էր լսում այդ կոչը) նրա, մյուսի, որն իր պատանեկության բարեկամն էր, ով արիաբար փորձում էր թոթափել իրենց նեղ ու փոքրիկ աշխարհի շղթաները և ընդամին պահպանեց իր ամբողջ անվախ խորաթափանցությունը, թեև զրկվեց երջանկությունից։ Չափազանց հիասթափված և անչափ միայնակ՝ սեփական միջոցներով երջանկության հասնելու համար, չափազանց հպարտ և չափազանց համեստ՝ այդ երջանկությունը ուրիշ էակի մեջ գտնելու համար, էակ, որը նրա համար խնդություն և հույս կրող էր, նա լռում էր, տխուր ու շնորհակալ այն բանի համար, որ Աննետան հանդուրժում է իր ներկայությունը, անկյուն է հատկացնում իրեն, թող որ ամենահամեստ անկյունը, իր բարեկամական կապերի միջև։ Բայց Աննետան այդ ինքնամփոփ սրտի խորքում տեսավ խլացած մի աղերսանք, և նրան սկսեց հուզել այդ ձեռքերի սրտաշարժ ամաչկոտությունը, որոնք չէին համարձակվում ձգվել դեպի իրեն։

Աննետան այդ ժամանակ հուզական խռովքի վիճակում էր ապրում իր համար միանման թանկ այդ երկու մարդկանց միջև։ Նրանց տարիքում սիրո մասին խոսք լինել անգամ չէր կարող

(ասենք, ինչո՞ւ չէր կարող), իսկ «բարեկամություն» բառը չափազանց նեղ շրջանակ էր. Զգացմունքները նրա միջից դուրս էին հորդում։ Աննետան ջանում էր դրանք զսպել։ Իրեն շրջանակներից դուրս գալու իրավունք չէր վերապահում։ Անընդհատ կրկնում էր, որ ինքը մայր է, տատիկ, որ իր կյանքի շրջանն ավարտված է, որ նա ամբողջապես պատկանում է իր ընտանիքին։ Բայց և կարմրում էր այն մտքից, որ կյանքը շարունակում էր իր ընթացքը, որ նրա շրջանը ամենևին էլ ավարտված չէ։ Ընտանիքը չէր կարող փակել այդ շրջանը, ասենք, ինքը Աննետան նույնպես իր համար ստեղծում էր ուրիշ, անկախ մի շրջան։ Թող երեխաները նրան սիրեն զգացմունքների ամենայն անկեղծությամբ— նրանք ապրում են իրենց առանձին փոքրիկ աշխարհով։ Այնտեղ նա ցանկալի հյուր է։ Բայց չէ որ հյուրը գալիս է և գնում։ Իսկ նա սեփական օջախի կարիք էր զգում։ Նա իրեն արգելում էր այդ մասին նույնիսկ մտածել։ Բայց հոգնությունն ժամերին չէր կարողանում հաղթահարել ձանձրույթը, որը հենց ինքն էլ դատապարտում էր կամ պատժում սպանիչ ծաղրով։ Ժամանակն է, այնուամենայնիվ, սովորել ծերանալ։ Չէ որ երբեք երիտասարդությունը չի ներում այն, ինչը նրա աչքում հիմարություններից վատթարագույնն է,— սպիտակած մազերի տակ պահպանել երիտասարդ, տաք գլուխ։

Աննետան ջանում էր անիրականանալի երազանքների էներգիան սրտի հունից ուղղել դեպի ոգու հունը— գործողության ոգու։ Նա գործում էր համարձակ։ Այնքան համարձակ, որ համարձակության մեջ գերազանցում էր երկու տղամարդկանց էլ։

Այդ երկու մարդը— Ժուլիենը և Բրունոն,— երկուսն էլ այնքան քաջարի և այնքան խորաթափանց, իրենց գործողության մեջ չէին հասնում մինչև վերջը։ Երևակայության սպոթկումը նրանց կարող էր համակել մեկ-երկու ժամ, կարող էր մղել ընդվզուման, դեսպոտիզմի կամ ստի ընդունման։ Երկուսն էլ իրենց հոգու խորքում դիմադրության կրողներ էին ընդդեմ սոցիալական կարգի անարդարության և անմտության։ Բայց ամենուրեք նրանց դիմադրությունը տեղ էր բռնում գիտակցության շեմին։ Եվ անցնում էր այդ շեմից սոսկ այն դեպքում, երբ թշնամին ուժով խուժում էր նրանց ամրությունները։ Ավելին, նույնիսկ այդ ժամանակ գրոհին հակագրոհով չէր պատասխանում, այլ սահմանափակվում էր նրանով, որ հակադրում էր թշնամուն իր

անխախտ «ոչը»։ Ich kann nicht anders»[1] Նրանք ոչինչ չէին անում, որպեսզի ինչ միջոցներով էլ ուզում է լինի աշխարհը բերեն իրենց «ուրիշ կերպին» («anders») -ի։

Երկուսն էլ պատկանում էին ինտելիգենտների այն հին փառավոր սերնդին, որի ակտիվությունը թունավորված էր խորհրդածությամբ։ Նույնիսկ ամենաազնիվները հակված են իրենց մտքին հատկացնել չափազանց արտոնյալ վիճակ, որը շատ հաճախ պարզապես կյանքից հեռանալ է նշանակում, հանգրստացում։ Նրանք խորհում էին, և դրանով ասված է ամեն ինչ. թեկուզ ամբողջ աշխարհն այն ժամանակ պտտվեր շուրջպար բռնած, նրանք մտահայեցությամբ էին զբաղվում։ Որքան ավելի լայն էր լինում նրանց մտքի դաշտը, այնքան ավելի ծիծաղելի էր նրանց թվում այդ շուրջպարը։ Հազիվ թե արժեր նրա վրա թանկագին ժամանակ կորցնել։ Ժուլիենի և Բրունոյի մոտ սիրտը հավասարակշռում էր բանականությանը, և, ի տարբերություն իրենց փառաբանված՝ ոգով հարազատ եղբայրակիցների մեծամասնության, նրանց չէր հաջողվում անտարբերությամբ նայել մարդկանց տառապանքներին և նրանց անկանոն ճիղերին։ Այդ պատճառով էլ պատահում էր, որ նրանց նույնպես համակում էր շուրջպարի մրրիկը։ Բայց նրանք շատ արագ էին պոկվում դրանից և վերադառնում էին իրենց գործունեությանը։ Ժուլիենը բարձրաձայն իր կոչն արձակից այդ մարտի վերևում, այդ մարտից մի կողմ, և նրա անողորմ սարկազմն առաջվա նման ժամանակ առ ժամանակ մերկացնում էր (ընդ որում, ավելի շուտ սեփական խղճի մաքրության համար) պարալոգիզմների կեղծիքը, որոնց վրա հիմնվում է հասարակարգը։ Բայց նա ինքը չէր հետևում իր մտքի անողորմ թռիչքին։ Ասենք, այդ միտքը նույնպես շատ ավելի պետքական էր սուտը հայտնաբերելու և կործանելու համար, քան ստեղծելու։ Բրունոն, որ բնականից օժտված էր ավելի հզոր բնազդով, բազմաթիվ անգամ մասնակցություն էր ունեցել հասարակական օգնության գործերում և, հավատարիմ մնալով իր ծաղրասեր խառնվածքին և մարտընչող նախորդների արյան ձայնին, կեղեքիչներին մարտահրավեր նետեց։ Բայց դա ավելի շուտ խելքի ուժանդ էր հաղթանակող հիմարության դեմ։ Նա այնքան հաղթանակի չէր ձգտում (հաղթանակ, պարտություն, այդ բոլորն ընդամենը երկար ֆիլ-

---

1 Ուրիշ կերպ ես չեմ կարող (գերմ.)։

մի անցողիկ էպիզոդներ են), որքան ուրախանում էր այն բա-նի համար, որ կարող է հաղթողների երեսին ծիծաղել։ Եվ առանձնապես անհոգործեն նրա ծիծաղը կհնչեր պատժի դաշտում, նրա վրա ուղղած հրացանների փողերի տակ։ Նա անկեղծորեն կվշտանար, եթե թույլ տար, որ բռնությունը խանդավառի իրեն և ինքն էլ պատասխանի նրան նույն բռնությամբ։ Նա բռնկման կարճ նոպաներ էր ունենում, բայց նա ինքը դրա համար հան-դիմանում էր իրեն։ Իսկ ժուլիենը նույնիսկ չէր կարողանում իրեն հանդիմանել դրա համար։ Նրա բռնկումներից տուժում էր միայն ինքը. նա ճնշում էր այդ բռնկումները։

Նրանք երկուսն էլ վճռականապես մերժում էին բռնությունը, նրբ բանն անձամբ իրենց էր վերաբերում։ Բրունոյի մոտ դա յուրատեսակ արիստոկրատական գոռոզամտություն էր։ Գի-տակցությամբ նա թույլ էր տալիս բռնություն, բայց միայն ուրիշների համար։ Եվ ամենևին չէր ջանում ինքը նմանվել այդ ուրիշներին։ Եվ նա, և ժուլիենը համարում էին, որ բռնությունը ըստ էության ոտնձգություն է ոգու աղատության դեմ, և չէին ցանկանում նման հանցագործության մասնակից լինել։ Այդ պատճառով էլ նրանք համակիր էին Տոլստոյի ուսմունքին, ասիական ուսմունքներին, որոնք իրենց հետևորդներին պատ-վիրում էին չընդունել՝ առանց բռնություն գործադրելու։ Դա չէր նշանակում, թե նրանք՝ խելքի քննադատական կերպվածքով եվրոպացիները, այդ ուսմունքները համարում էին ունիվերսալ միջոց, որ պետքական էր կյանքի բոլոր դեպքերի համար։ Բայց քանի որ նրանց համար իսկական մարտը բռնկվում էր ոգու բնագավառում, ամենակարևորը այդ ոգին փրկելն էր... «Salvavi animam meam»[1]։

Մարկի համար արդեն վաղուց այդ բոլորը բավական չէր։ Նույնիսկ մերձավորների հոգու փրկությունը նրան բավակա-նություն չէր պատճառում, եթե հնարավոր չէր փրկել նրանց սպասկանացու մարմինը։ Այդ խղճուկ մարմինը, ներկած դա-գաղն այդ, կյանք միօրյակը, որի մասին իդեալիստներն էին ասում, արհամարհանքով շրթունքները սեղմած։ Նրանք, իհարկե, կարիք չունեն հոգ տանելու իրենց մարմնի համար, քանի որ այդ մարմինն ապահովված է լրիվ խնամքով... Օ ոչ, պատեցեք ինձ դրանից։ Նախ և առաջ՝ մարմինը։ Եվ եկեք

[1] Ես հոգիս փրկեցի (լատ.)։

նրան իր անունով կոչենք, իր փառավոր ու խայտառակ անունով. արգանդ... Օ դուք, լավահոգիներ, արհամարհե՞ք այդ... Քաղցած արգանդը, արգանդը, որ կյանքի սկիզբ է դնում, արգանդը, որտեղից դուրս է գալիս Յոսեի ծառը՝ արմատը... Կերակրեք նրան։ Հաղթեք նախ և առաջ քաղցը, աղքատությունը, սոցիալական աղետները... Իսկ հոգին, եթե կհաճեն, թող ծաղկի գագաթին որևէ տեղ։ Ես փորում եմ հողը ծառի տակ, ես պարարտացնում եմ այդ հողը։ Այդ բուսահողում կծնվի աստված կամ աստվածամարդը... Ոչ Բրունոն, ոչ Ժուլիենը դրա դեմ չէին առարկում։ Բրունոն հիշում էր Հնդկաստանի[1] քնքուշ Ֆրանչեսկո Ասիզիացու դաժան խոսքերը. «Դատարկ ստամոքսների համար կրոն չկա»։ Եվ իսկապես, Բրունոն համակերպել էր այդ ասույթի հետ իր ամբողջ կյանքը, որովհետև ունեցած-չունեցածը տվել էր, միայն թե դատարկ ստամոքսները լցնի։

Բայց դրանով էլ նրա մասնակցությունը սոցիալական գործողությանը սահմանափակվում էր։ Բրունոն մտադրություն չուներ ուրիշներին հարկադրելու, որ հետևեն իր օրինակին։ Եվ եթե նա բավական պարզորոշ տեսնում էր բանականությամբ, որ կապիտալիզմի ճնշումը տանում է դեպի պայթյուն, նա մատն անգամ չշարժեց, որպեսզի հետաձգի կամ արագացնի այդ պայթյունը։ Նա շատ էր տեսել թափված արյուն և չէր ցանկանում դրանով կեղտոտել իր հիանալի ձեռքերը։ (Այդ ձեռքերը քիչ չէին պրպտել ավերված քաղաքի փլատակների մեջ, կպել մարդկային ժանտահոտ դիակներին։ Նրա մատների ծայրերին մինչև հիմա պահպանվել էր այդ սրտխառնոց առաջացնող հոտը...)։ Բացի դրանից, նա հիանալի գիտեր, որ ոչ մի բանի այլևս չի կարելի խանգարել։ Սոցիալական ճակատագիրը նույն ձևով կույր է և անխուսափելի, ինչպես terremoti[2]։ Ճակատագրի անխուսափելիության այդ չափազանց պարզ զգացումը, այդ ավելորդ իմաստնացածությունը կաշկանդում է ինտելիգենտների գործողությունները, նույնիսկ ամենաազատ ոգու տեր և ամենաանվեհեր ինտելիգենտների գործողությունները։ Նրանց կարելի է նմանեցնել այն հանդիսատեսներին, որոնք նախապես կարդացել են բեմադրվող պիեսը. այդ պիեսը խաղում են առանց նրանց կարեկցության, դերասանները ոտուձեռ են ընկել՝ ցույց

---

1 Ռամակրիշնա։— Ռ. Ռ.

2 Երկրաշարժերը (իտ.)։

տաչու համար հանգույցը, իսկ հանդիսատեսներն արդեն հանգուցալուծումն են ապրում։

Մարկը դեռ հանգույցների փուլում էր գտնվում, և գործողության երիտասարդ ընձյուղները պատանուն ոգևորում էին ավելի ուժեղ, քան պտուղը։ Ասյայի՝ կոտրված եղունգներից չվախեցող, ձեռքերը նա գերադասում էր Բրունոյի խնամքով պահած սպիտակ ձեռքերից։ Նա միայն մի բան էր ուզում իմանալ նրանցից, ովքեր իրենից մեծ էին. արդյոք նա ճի՞շտ ճանապարհով է գնում, մեծ Ճակատագրի լայն ճանապարհով։ Եվ այդ հարցում նրանք իսկապես էլ կարող էին օգնել Մարկին։ Նրանք Մարկին ասում էին. «Via sacra»[1] լեգեոնների լայն ճանապարհը,— ուղիղ և ճիշտ ճանապարհը։ Այն տանում է դեպի նպատակը— ճակատամարտերի միջով։ Եվ երկու հասուն տղամարդ, Ժուլիենը և Բրունոն, միահամուռ ջանում էին չտատանել երիտասարդ մարտիկի անվեհեր հոգին, չջարդել նրա կոճերը։ Դա նրա ճանապարհն էր։ Նրա օրենքը։

Մարկի օրենքը նրան դուրս էր քաշում իր կլանի սահմաններից... Բայց պատկանո՞ւմ էր նա արդյոք որևէ որոշակի կլանի։ Այո, պատկանում էր։ Նա արևմուտքի որդին էր, նա սիրում էր Ֆրանսիան, Լուարայից ավելի հյուսիս գտնվող իր Ֆրանսիան, նրա բիլ, մոխրաերանգ երկինքը Ֆրանսիայի պայծառ ու վարդագույն հողը, որ նման էր նրա դուստրերի մարմիններին, նրա հորիզոնները, անտառներն ու բլուրները, նրա գետերը, որ հոսում են սոխակների անլռելի գեղգեղանքի տակ, նրա հստակ լեզուն ու նրա հին ֆաբլիոների չարաճճի ծաղրանքը։

Ուրիշ ժամանակ նա երջանիկ կլիներ (այդպես նա ենթադրում էր), ինչպես Ֆրանսիայի գետերը, որ խաղաղ հոսում են իրենց հունով։ Բայց այն գետերը, որ ամենահարազատն էին ու մոտիկը, որոնց մեջ նա իր սեփական ընթացքն էր ճանաչում, սեփական ջրերի հոսքը,— Աննետան, Ռյուշը— իրենք թեքվեցին մի կողմ... «Per non dormire»[2], անչափ քաղցր է քնել այդ հովիտներում, որտեղ ձկնորսները համալվածի նման աչքները չեն հեռացնում ննջացող լողանից...

Եվ որքան էլ ուզում է Մարկը հրաժարվեր, նա նույնպես պատկանում էր ինտելիգենտների կլանին։ Նրանց հետ Մարկին

---

1 Սրբազան ճանապարհ։

2 Որպեսզի չքնի (իտ.)։

կապում էին մտավոր հետաքրքրությունները, տրամաբանելու կիրքը և «ընտրյալների» հպարտությունը, որը բազմաթիվ անգամ և ապարդյուն կերպով վարկաբեկում էին։ Բայց վերջին տարիների փորձը ամբողջ ակնառությամբ ցույց տվեց Նրան, որ նրանց վրա հույս դնել չի կարելի։ Այդտեղ բանն այնքան խելքի բացակայությունը չէր, որքան միտքը գործողություն դարձնելու անկարողությունը։ Նրանց մեջ քիչ չկային այնպիսիները, որոնք նույնքան պարզորոշ, ինչպես Մարկը ինքը, տեսնում էին իրերի դրությունը։ Նրանք նույնիսկ գիտեին, թե ինչ պետք է անել։ Բայց երբ բանը գործին էր հասնում, նրանք չէին ցանկանում իրենց անհանգստացնել։ Ոմանք խորամանկ ու վախկոտ չինովնիկների բնածին շրջահայացությամբ խուսափում էին այն ամենից, ինչը կարող էր խանգարել իրենց հանգիստը, ընդհատել իրենց քնկոտ վազքը (մանրավազքը) դեպի պատիվներն ու ոռճիկները (նրանք, ովքեր հասել էին որոշակի աստիճանների, արդեն շահագրգռված չէին շարժման մեջ)։ Մյուսներն ավելի կամ պակաս գիտակցորեն զգուշանում էին հիմքերի ամեն մի ցնցումից։ Նրանք վատթարագույն դեպքում մի կերպ կզոհաբերեին արմատացած բուրժուայի իրենց հասատուն սովորույթները և կհանդուրժեին ուրիշ կարգեր, որ տարբեր կլինեին այն կարգերից, որոնց ընտելացել էին, բայց նրանց համար անտանելի էր տեղից տեղ փոխադրվելու միտքը. ցնցումների ժամանակ, աստված մի արասցե, մեկ էլ տեսար տուժեցին նրանց աթոռներն ու թղթերը։ Նրանք համաձայն կլինեին ապրել հեղափոխության պայթյունից մի հարյուր տարի հետո, երբ ամեն ինչ խաղաղված կլինի։ Բայց ինչպե՞ս այնուամենայնիվ մարդ ստիպի իրեն տեղափոխվել նոր բնակարան, երբ հին բարաքը դատապարտված է քանդման, չէ որ շատերն էին հասկանում, որ դատապարտված է։ Եվ, ցանկանալով հեռու վանել իր կաբինետի անդորրում աղմկոտ բեռնակիրների ներկայության ծանր տեսարանը, որոնք բարձրաձայն դոփդոփում էին ոտքերով և կոպտորեն հափռում իրերը, նրանք հանգստացնում էին իրենց.

— Ոչինչ, դա մեզ հերիք է մինչև մեր կյանքի վերջը.

Դա մշտական ու վախկոտ կրկներգն էր նույնիսկ այն կուսակցությունների, որոնք տեսության մեջ թույլ էին տալիս հեղափոխություն,— սոցիալիստների, բուրժուական ռեֆորմատորների...

Վա՜ղը, վա՜ղը՝ հեղափոխությունը վաղն արեք, երբ մենք, ավազներս, այլևս չենք լինի...

Եվ վերջին հարվածը, ինտելիգենցիայի բնածին անկորուստյան, նրա գործելու անկարողության ևս մի ապացույցը, հանդիսացավ այն հանգամանքը, որ այդ երկու ավազները, որոնց Մարկը սիրում էր և հարգում նրանց անկախությունը, անշահախնդրությունը, արհամարհանքը վտանգի նկատմամբ, այո, այդ ավազները երկուսն էլ— Բրունոն և Ժուլիենը— ոչինչ ոչ նախաձեռնում էին, ոչ էլ ցանկանում նախաձեռնել՝ ընդհանուր անհետաձգելի գործին հաղորդակից դառնալու համար: Միայն մտածել: Երբեմն խոսել: Անհրաժեշտության դեպքում գրավոր շարադրել սեփական կարծիքը, եթե նրանցից այդ հարցնում են: Նման դեպքում նրանք պա շարադրում էին ոչ երկիմաստ պարզությամբ: Բայց նրանք խուսափում էին այդ կարծիքը ուրիշի վզին փաթաթել, եթե անգամ խոսքը լինում էր նրանց փրկության մասին, ում նրանք պետք է հարկադրեին իրենց կողմը կանգնել: Սոցիալական գործողությունը ծանր էր շղթաների նման, իսկ նրանք մտադիր չէին կրելու այդ շղթաները կամ ուրիշի վրա դրանք գցելու:

Այդ ազատ մարդիկ մոռացել էին ամենահասարակ պահանջները, որ ներկայացվում էին հողագործին: Որպեսզի արտը հասկավորվի, հարկավոր է նախ և առաջ խոպանը վարել, հավաքել քարերը, անտառն այրել, իսկ հետո որքան կարելի է ուժեղ սեղմել մաճին և խոփով ուղիղ, երկար և խոր ակոս անել— առաջին ակոսը: Այդտեղ արդեն միայն «սերմնացանի արքայատես շարժումով գործը գլուխ չի գա»: Այդտեղ պետք է ճնշելով ստիպես համառ հողին, եզներին, որոնք լծի տակ ուժասպառվել են, պետք է ստիպես ձեռքերիդ, սրտիդ:

Սկզբում Մարկը խնամքով մաղեց իր ավազների հիանալի սասածները— ես նկատի ունեմ այն ավազներին, որոնք իրենց կյանքով ներշնչում էին նրան հարգանք, որի համար երբեք հարկադրված չի լինի զղջալ:

Առաջին կանոնը. չափից ավելի հույս չդնել մեծ սկզբունքների վրա, «կատեգորիկ իմպերատիվների վրա, որոնք պիտանի են բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների համար, վերացական ճշմարտությունների վրա, որոնք արքայորեն— անառարկելի են, անվիճելի և հավիտենական: Դրանք կիրառելի

են ամեն ինչի նկատմամբ։ Եվ ոչ մի բանի նկատմամբ կիրառելի չեն։ Մշտապես փոփոխությունների մեջ գտնվող աշխարհում անփոփոխ ճշմարտությունը սուտն է, կամ դրանից ավելի վատը, կարգին մարդկանց մոտ, որոնք ընդունակ չեն սուտը տարբերել ճշմարտությունից,— նա ոչինչ է։

Ճշմարիտ է լոկ իրականը, և ազնիվ մտքի առաջին օրենքը՝ այդ իրականությունը բոլոր հնարավոր մանրամասնություններով ուսումնասիրելն է ու նրանից իր կանոնները դուրս բերելը, օրինապահ, առնական կանոնները, որոնք պիտանի են և դաստողության, և գործողության համար, և ոչ թե դրանցից միայն որևէ մեկի համար։ Եվ ոչ թե վաղվա համար, ոչ թե բոլոր ժամանակների համար, այլ ընթացիկ, մեր այսօրվա համար, անհապաղ կիրառելու համար այստեղ, մեր երկրի վրա, որտեղ ես կանգնած եմ հաստատուն կերպով և, քայլս առաջ գցելով, իսկույն ևեթ ոտքիս տակ նոր հենակետ եմ զգում։

Ես տեսնում եմ երկիրը։ Ես տեսնում եմ մարդկության այսօրվա օրը, շահագործման և կոտորածի այդ իրական աշխարհը, որը հոշոտման է տրված խոշոր գիշատիչներին՝ ջանքերով այն բուրժուազիայի, որը որոճող անասունների նման արածում է իր հին, հյութերը կորցնող, արոտավայրում։ Տեսնում եմ, ինչպես են դավաճանում մեր աշխարհին վարժեցրած կրթեսային գազաններն ու երկար ժամանակ կապ կրելուց կլպված վզերով արագագիր գրչակների ոհմակները։ Տեսնում եմ, ինչպես է պատերազմի հետևանքով առաջացած սարկացման տուրիներին, այդ պատերազմին հաջորդող ավերածությունների տարիներին մեր աչքի առաջ տեղի ունենում այդ աշխարհի այնքան կայծակնային և այնքան չափեր չճանաչող կողոպուտը, որ նույնիսկ տնաբույս կոնկվիստադորները, որոնք իրենց ճնշող մեծամասնությամբ կեղտոտ միջակության մակարդակից վեր չեն բարձրանում,— նույնիսկ նրանք էին հանկարծակիի եկել իրենց հաղթանակով և անընդունակ դուրս էկան ձևքները վերցնել այն։ Այդ մի քանի տարվա ընթացքում նրանք կարողացան միայն ցնցել համաշխարհային էկոնոմիկան, որի կողմնացուցային սլաքը այս ու այն կողմ է նետվում, ինչպես շմոլագարվածը, կարողացան կուտակել երկու մայրցամաքներում ոսկու կույտեր ու հարստություններ, ոչ միայն անօգուտ, այլև ավելին—կործանարար։ Տեսնում եմ պատերազմ, պատերազմներ ամենուրեք,— մեկը դեռ նոր է պատրաստվում, մյուսն ար-

դեն գնում է ժնևյան չարագուշակ կատակերգության ծածկույթի տակ, որի անունը ազգերի լիգա է։ Տեսնում եմ, ինչպես են զինաթափության ամոթալի ֆարսի հետևում թաքցնում ռազմական բյուջեն, որ հրեշավոր կերպով աճել է նույնիսկ պատերազմից արյունաքամված ազգերի մոտ, որոնք չեն ցանկանում վատնել անգամ իրենց տունը պահպանելու, հասարակական աշխատանքների, գործազուրկների հացի, լուսավորության գործի համար մնացած խղճուկ եկամուտների մեկ տասներորդական մասը։ Այն ամենը, ինչ անում է մարդկանց կյանքը, նրանց ամբողջ արյունը,— բոլորն այդ ծառայում է ավերելուն, վերածուլվում ու դառնում է թնդանոթներ... Տեսնում եմ, թե ինչպես են ամենուրեք ոչնչանում կենսական արժեքները— այն երկրներում, որտեղ սովից մեռնում են միլիոնավոր մարդիկ։ Հացահատիկն այրում են... (Եվ այդ միտքը, որ զայրացնում էր խելահեղ Մարկին, ի վիճակի չէր ծակելու բութ անտարբերության պատը միանգամայն կարգին, բայց էգոիստական մարդկանց, որոնք անզգա են այն բանի նկատմամբ, ինչը անմիջականորեն չի դիպչում իրենց անգին մաշկին)։ Ամենուրեք ֆաշիզմ եմ տեսնում գործողության մեջ կամ ֆաշիզմ, որին պահպանում են մինչև ժամանակն հասնի, որպեսզի հարմար պահին բաց թողնեն նրան՝ անիրավ կարգերի պաշտպանության համար։ Տեսնում եմ աշխարհի սոսկում պատճառող անբարոյականությունը, որը սահմանակցում է այդ աշխարհի ոճրագործ խնդագարության հետ...

Եվ դրանում հանցավոր են ոչ միայն առանձին անհատներ կամ էլ այս կամ այն խմբավորումները, ոչ միայն բռունցքի ֆաշիզմը կամ ֆինանսական ֆաշիզմը, որին համեմատաբար հեշտ կլիներ սանձել։ Այդ բոլորն անքակտելիորեն կապված է այլասերված բուրժուազիայի կապիտալիստական իրավակարգի հետ։ Ոչխարի բրդի մեջ թաղված տիզերի նման նրա մեջ են խրվում—փոխադարձաբար միմյանց պայմանավորող բոլոր ոճրագործությունները, ոչ միայն այսօրվա, այլև վաղվա։ Բոլոր տիրակալները, բոլոր շահույթ կորզողները իրենք նույնպես ենթակա են իրենց սեփական սիստեմին։ Մարկատներն իրենք սարսուռներ են։ Նրանք չեն կարողանում գլուխները դուրս հանել բիզնեսի կաղապարից։ Նրանք բիզնեսի գերության մեջ են, իսկ այն ամենը, ինչը հենց իրենց մոտ է գերության մեջ, դառնում է հանցագործություն։ Որովհետև երբ գործերի մեջ կանգ է առաջա-

նում, բիզնեսի այդ տիրակալներն ու ծառաներն ուրիշ ելք չունեն, քացի կենսական արժեքների կործանումից, իրենց խանգարող արտադրողական ուժերի կործանումից, քացի հասարակարգի ստրկացումից՝ նրա բոլոր միջոցների և արտադրության գործիքների հետ միասին, քացի պրոլետարիատի աշխատավոր մասսաների ստրկացումից, որն իրականացվում է տարբեր երանգի ֆաշիզմի և պատերազմի օժանդակությամբ։ Բոլոր տեսակի շահութաբեր գործերից ամենամեծը և ամենահյութեղը պատերազմն է. այդ աֆերայից ուղղակի ոսկի է ցայտում, ցայտում է արյուն։ Մագնատների, ֆաբրիկանտների, գործամոլների համար, մետաղագործական և քիմիական արդյունաբերության, մոնոպոլիաների և տրեստների համար, որոնք ապրանքների, հացահատիկի, բամբակի վիթխարի պաշարներ են կուտակել, ռազմական աֆերաներից ուղղակի դիվիդենտներ են ցայտում և բաժնետոմսերի կուրսներ (միակ ակցիան. միակ գործողությունը, որոնցով պարծենում են հիմա 89 թվականի մեծ բուրժուաների որդիները)։ Իսկ մնացորդներն ընկնում են սովահար գրչակների և ծախու գաղափարախոսների երախը, որ պատրաստ են ում ուզում է լինի ծառայել, միայն թե վճարեն իրենց։

Կռիվ, առևտուր, ծովահենություն,
երեքն էլ մեկ են,— ի՞նչ տարբերություն...[1]

Այդ երրորդությունն անուն ունի—Կապիտալիզմ։ Եվ ուրիշ ճանապարհ չկա— կամ պետք է ոչնչացնել այն, կամ պետք է ընդունել։ Ժնևյան պացիֆիզմը իսկական խաղաղության դավաճան է։ Նրա հիմնական հոգսը, հիմնական նպատակը ժողովուրդներին անգործության մեջ թմրեցնելու մեջ է, որպեսզի դավաճանի նրանց։ Իսկական խաղաղությունը պահանջում է, որ ամենից առաջ հեռացվեն պատերազմի տերերը։ Իսկ նրանք հնռացված կլինեն այն ժամանակ, երբ գրոհից հետո կկործանվի նրանց բաստիլիան։ Ռուսաստանում արդեն փլվել են բոլոր բաստիլիաների պատերը։ Իսկ ե՞րբ կփլվեն մերի պատերը։ Եվ պատրա՞ստ ենք մենք արդյոք գրոհի։

Ամբողջ հողագնդի աշխատավոր մասսաները, որոնք ավելի են փորձված քան մնացած ժողովուրդը, խուլ կերպով հուզվում

---

[1] „Krieg, Handel und Piraterie,
dreieinig sind sie, nicht zutrennen Գյոթե, «Ֆաուստ». Ռ. Ռ.

*են և տրտնջում, բայց նրանց ահեղ ուժը առայժմ դեռ կազմակերպված չէ։ Նրանց անջատող շատ բան կա— թշնամիներն այդ հանգամանքը սպեկուլյացիայի առարկա են դարձնում, խանդարելով կապանքազերծել էներգիան, կուսակցությունների մահացու թշնամանքը, որոնք հոշակում են միևնույն սոցիալիստական գաղափարները և, ինչպես Թալմուդի մեկնաբանները, իրար գլխի վերավորանքներ են թափում, տեքստերի իրենց մեկնաբանությունը հակադրում են հարևանի մեկնաբանությանը և իրենց տակտիկան նրա տակտիկային։ Կասկածամիտ և կարճ խելքի տեր լիդերները պաշտպանում են այդ տարաձայնությունները, որոնք նրանց թույլ են տալիս անվերջանալիորեն խաղալ Հեղափոխության անտեսբերեն ոյորների ձեռնտու դերը առանց փոքրագույն ռիսկի, որ դա տեղի կունենա իրենց կենդանության օրոք։ Եվ մահվան խոշորագույն ֆաբրիկանների համար, Լապիտալիստական կեղեքող տերերի համար մեծ դժվարություն չէ հրապուրելով իրենց ցանցը գցել նույնիսկ պրոլետարական մասսաներին— բավական է միայն գործազրկության շրջանում, երբ միլիոնավոր աշխատավորներ ամբողջ Եվրոպայով մեկ փողոց են շպրտվել, նրանց առաջ բացել ռազմանյութեր պատրաստող, ինչպես և արդյունաբերական ու քիմիական արտադրանք տվող նոր գործարանների դռներ, արտադրանք, որ ցանկության դեպքում կարելի է օգտագործել և այլապես, և այնպես։ Նույնիսկ ամենահեղափոխական տրամադրությունների տեր մարդիկ գնում են այնտեղ և ճակատագրի բարբարոսական ծաղրով իրենց աշխատանքով օգնում են կռելու մահ, որը երկրի երեսից կսրբի ուրիշ ազգության իրենց եղբայրներին կամ ռիկոշետով կշրջվի իրենց դեմ, և նրանք կզգան նրա թունավորված շունչը, քանի որ տերերը առանց խղճի խայթի թշնամական կողմին են վաճառում ռազմական նյութեր ու զազեր։ Իսկ բուրժուազիան, որին հիանալի կերպով այդ հայտնի է, գրեթե չի վրդովվում այդ գործարքների համար, որոնք հավասարազոր են պետական դավաճանության։ Եթե նման գործարքների հետևանքով սեյֆերի մեջ է լցվում ոսկյա հեղեղը, թող արյան հեղեղներ թափվեն։ Մետաղագործական գործարանների գերմանական ազգանուններով տերերը տնօրինում են Ֆրանսիայի ճակատագիրը, և հենց նրանք էլ— համաշխարհային մասշտաբով սպանությունների հանցավորները— համարվում են մեր հայրենիքի փա՞ռքը։ «Noli tangere»[1]

1 Ձեռք չտաս (լատ.)։

նրանց։ Իսկ բանվորները, նրանց խեղդելու փոխարեն, այդ մեծաքանակ պատիվ ավազակների ձեռքից հաց են ընդունում, որն իրենց եղբայրների արյունով է չաղախված։ Եվ ասում են.

— Իսկ ի՞նչ կհրամայեք անել։ Չէ՞ որ մարդ պետք է ուտի։ Մենք հերոսներ չենք։

Հերոսնե՞ր չենք։ Ի՞նչ արած, թող այդպես լինի։ Ոչ դու ես հերոս, ոչ ես։ Բայց մարդը հերոս է դառնում, եթե նա այդ ուզում է, եթե հարկավոր է հերոս դառնալ։ Իսկ հերոս դառնալ պետք է։ Միայն մի ընտրություն կա երկու մահվան միջև։ Կամ դու կմեռնես որպես անազնիվ ստրուկ, կամ կմեռնես ազատ և վրեժդ լուծած։ Մահն ընդունել, որպեսզի կարողանան ապրել վաղը եկողները, նրանք, ովքեր ազատ են լինելու... Այդպիսի օրինակ մեզ ցույց տվեցին հեղափոխության զորաբանակները, որոնք ընկան ՍՍՀՄ-ի համար մղված մարտերում։ Միամիտ կլինի մտածել, որ նրանց օրինակին կհետևի արևմտյան բուրժուազիան կամ նրա փառապանծ ինտելիգենցիան, երկակվա բոլոր մարդիկ,— ապա եկեք կոչ աննենք նրանց, ում վաղվա օրը պատկանում է, նրանց, ովքեր չեն կառչում ինտելեկտի արտոնություններին, հույս ունենալով այդ կերպ գլուխներն ազատել պատասխանատվությունից և գործողության հետ կապված ռիսկից, նրանց, ովքեր չեն հրաժարվում աշխատավոր պրոլետարիատի հետ ունեցած իրենց եղբայրությունից։ 89 թվականի երրորդ խավի նման, չորրորդ խավը, որը ոչինչ չուներ, ուզում է ունենալ և կունենա ամեն ինչ։ Առանց բանվոր դասակարգի կազմակերպված էներգիայի ոչ մի բան չի կարող տեղի ունենալ։ Չէ որ նրանց ուսերը, նրանց գլուխները— խելքը և ուժը, ինքնազոհաբերման նրանց կամքը կյանքի հիմքն են հանդիսանում և վճռում են աշխարհի ճակատագիրը։ Եվ ամենից առաջ այդ միլիոնները թող իմանան, որ բավական է իրենք հաստատ վճիռ կայացնեն, բավական է իրենք միահամուռ բղավեն «Ոչ»— և այդ «ոչից» կտապալվի մահարեր կարգը, կծալվեն ծնկները տերերի, որոնք սպանությունննե՞ր են կռում։ Թող իմպերիալիստական պատերազմների սպառնալիքի պատասխանը լինի գործադուլն ու ապստամբությունը։ Մետաղագործների գործադուլը։ Բոլոր արդյունաբերական բանվորների գործադուլը։ Երկաթուղայինների գործադուլը։ Աշխատանքն իր ուսերից ցած է նետում բոլոր և ասում.

«Ո՛չ։ Դուք, որ հավաքնություն ունեք ինձ կարգադրություն-

ներ անելու, փորձեցեք ապա յոլա գնալ առանց ինձ։ Ախր առանց ինձ դուք մի օր էլ չեք կարող ապրել։ Մրջյուն-պարագլուխների նման դուք ինքներդ ընդունակ չեք նույնիսկ սնունդը ծամելու և կուլ եք տալիս լոկ այն, ինչ ձեր բերանն է դնում Աշխատանքը՝ Հանձնվեք, Գրավեք ձեր տեղն ընդհանուր շարքում։ Եվ ձեր աշխատանքով նվաճեք ուտելու իրավունքը»։

Մեր օրերում սրբազան է միայն մի բան—Աշխատանքը՝ Մնացած բոլորը— հավատն ու կուլտուրան, զուտ բանականությունը, սոցիալական կառուցվածքը— բոլորը պետք է վերափոխվի վերևից մինչև ներքև ու դրվի կազմակերպված աշխատանքի անսասան հիմքի վրա։ Բայց նման կազմակերպությունը մարտի թունդ պահին իսկական հերկուլեսյան ուժեր է պահանջում։ «Իսկ ես Հերկուլես չեմ, ես որտեղ, Հերկուլեսը որտեղ,— մտածում էր Մարկը, սրհամարհական ափսոսանքով զննելով ի, նիհար ձեռքերը։— Ես կաննեմ այն բոլորը, ինչ կարողանամ։ կատա իմ ունեցած-չունեցածը,— իմ կյանքը, ավելին— եթե հարկ լինի— իմ մահը, ինքնազոհաբերման իմ ամբողջ ուժը։ Եթե աշխարհում գոյություն ունենար թեկուզև հազար մարդ, որոնք ծարավի են նույնպիսի կրքոտությամբ գործելու, ոնց որ ես, դա բավական կլիներ, որ մեր միջուկին միանար անձև մի զանգված. մենք տեղից լեռներ կշարժեինք»։

Եվ այսպես Մարկը որոշում ընդունեց. իրեն նվիրել մեծ գործին, պատրաստվել գալիք սոցիալական ճակատամարտերին, հավաքելով բոլոր ուժերը, որոնք ընդունակ են ծառայելու պայքարին, և, առանց հետաձգելու, մասնակցություն ունենալ այդ պայքարի կազմակերպման մեջ։

Ահա հենց այդ էլ ամենադժվարն էր։ Քանի որ Մարկի համար, ինչպես նրա հասակակից ինտելիգենտների մեծամասնության համար, դժվար էր իսկական տեղ գտնել բանվորական միջավայրում, որի հետ նա արմատներով կապված չէր, ինչպես և երկրորդ կարգի քաղաքագետների միջավայրում, այն աստիճան խլացած սեփական դեմագոգիկ աղաղակներից, որ ետ էին վարժվել մտքդավալի խոսելուց, լսում են միայն իրենց սեփական ոռնոցը և անհրաժեշտ չեն համարում մտածել։ Դրա համար պահանջվում էր, որ Արևմուտքի պրոլետարիատն անցնի հեղափոխական կուսակցության կարգապահության խստապահանջ դպրոցով, կուսակցություն, որն, ինչպես Ռուսաստանում,

կես դար շարունակ հալածանքների ու մահապատիժների են-թարկվեր, ձեռք կբերեր պայքարի արյունալի փորձ, հարյուրա-վոր անգամ չհաջողված, հարյուրավոր անգամ նորից սկսված, կտաներ աքսորի տարիները և տարիները խորհրդածություննե-րի։ Փարիզի կոմունան ընդամենը խարույկ էր, Եվ այդ խարույ-կի բոցը լափում էր ամեն ինչ՝ մեկը մյուսի ետևից, անխտիր, նա իրենից հետո ոչինչ չթողեց, բացի բոսորագույն ցոլքից եր-կընքում և ծխից։ Ֆրանսիական բանվորները դեռ փորձ չունեին այնպիսի սոցիալական ճակատամարտերի, որոնք նրանք պետք է ծավալեին առաջիկայում։ Եվ, կասկած չկա, նրանք այդ փորձը ձեռք կբերեն բազմաթիվ պարտավորությունների գնով, ինչպես և հեղափոխական Ռուսաստանը մինչև 1805 թվականը։ Սոսկ այն հույժ էական տարբերությամբ, որ հիմա գոյություն ունի Սովետական Միությունը՝ որպես ցրնկակ և որպես հենարան։ Հարկավոր էր սովորելու գնալ տանկերի մոտակայքն վար-պետների մոտ, բայց իր սնփական երկրի լիակատար իմացու-թյամբ, գիտենալով այդ երկրի բոլոր հնարավորությունները, նրա հոգևոր պահանջները, հաշվի առնելով հեղափոխության նրա հին կուսակցությունների—անցած պատերազմների այդ վետերանների— և նրա երիտասարդ արհեստակցական միու-թյունների համար փորձերը։ Մարկը հետևյալ դրանով սկսեց զբաղվել։ Առայժմ նա ընդամենն աշակերտ էր։ Բայց աշխա-տում էր բաց թողածի տեղը հանել։ Նա ուզում էր լրիվ զինված դիմավորել այն օրը, երբ տեղի կունենա բոլոր ուժերի ստուգա-տեսը։

Ժուլիենը և Բրունոն հետևում էին նրա գործողություններին։ Նրանք հրահրում էին Մարկի մտադրությունները, Եվ ամենևին էլ փորձ չէին անում ետ պահել նրան այդ մտադրություններից։ Երկուսն էլ բավական ազատամիտ էին՝ պատանու մտադրու-թյունները հասկանալու համար, պատանու, որը գործողության կարոտ էր զգում և կոմպրոմիսներ չէր ճանաչում։ Բայց իրենք Մարկին ընդօրինակելու փոքրագույն ցանկություն անգամ չու-նեին։ Ինչ արած, այդպիսին էր ինտելիգենտների այդ սերդի. նույնիսկ ամենաանկեղծների, անբուժելի թերություն։ Նրանք չափազանց լավ են տեսնում հեռուն՝ մոտիկը լավ տեսնելու հա-մար։ Մեկը—դերասաններից անկախ—ողբերգական հանգուցա-լուծում էր տեսնում. աչքերը հառած արյունաշաղախ էդիպին։ Մյուսը տեսնում էր միայն խաղ. տրագիկոմիկական դիմակ,

որը թաքցնում էր հովազի աչքերով նույն այն Դիոնիսի դեմքը, կյանքի երազանքի ճակատը, որ պսակված էր խաղողի որթով։ Թող որ նրանք նույնիսկ երբեմն հափշտակվելին խաղով— միևնույն է, նրանք գերադասում էին այդ խաղին հետևել, օթյակում հարմարավետորեն նստած։ Ջուր էր Մարկը տաքանում, ջանալով նրանց տեղից շարժել։ Նրա բոլոր փորձերը տապալվում էին, հանդիպելով բարեկամների հավանություն տվող հայացքներին, բարեկամների, որոնց համար նա՝ Մարկը, ինքն էր ներկայացման մի մաս հանդիսանում։ Գոնե Մարկն ստիպված լիներ կուվելու նրանց հետ։ Ի՞նչ կուիլ, ի՞նչ բան։ Թվում էր, նրանք իրեն ասում են.

«Գնա՛, փոքրիկս։ Դու գտել ես քո ճանապարհը։ Գնա՛ քո ճանապարհով»։

Բայց նրանք հետու էին պահում իրենց։ Նրանք հաճույքով ապացուցում էին, որ նա պետք է գործի իր, և ոչ թե նրանց օրենքի համաձայն։ Նրանք նույնիսկ Մարկին օգնում էին այս կամ այն բարդ պրոբլեմը լուծել իր ոգով և ոչ թե նրանց, օրինակ, բռնության հարցը։ Իսկ Մարկին չղայնացնում էր ներողամիտ հավանության նրանց մոտեցումը, երբ բացահայտորեն նրան ուղեկցելու ցանկություն չէին դրսևորում։ Մի անգամ վրդովված նա Բրունոյին ասաց.

— Ես այլևս չեմ կարողանում նայել, թե ինչ գոռոզամտությամբ եք դուք վերաբերվում այն ամենին, ինչ ես անում եմ կամ մտադրվում անելու։

— Դա ամենևին էլ գոռոզամտություն չէ, տղաս,— պատասխանեց Բրունոն.— Բնդհակառակն, ես ձեզ ասում եմ «կեցցե՛ք»։

— Իսկ ինչու՞ այդ դեպքում ոչ «լի՛ս»։ Դու ոչ շատում եք ինձ այդ «կեցցեք»-ը, ինչպես ակրոբատին, որը կրկես է գնում՝ իր համարը կատարելու։

Բրունոն քրքջաց և առարկեց.

— Ես արդեն կատարել եմ իմ համարը, բարեկամս։

Մարկը, սթափվելով, բռնեց նրա ձեռքը.

— Ճիշտ է։ Ներեցեք ինձ։ Դուք ունեցել եք ձեր, ոչ հեշտ խնդիրը։ Բայց եթե իմ խնդիրը ճիշտ է, եթե դուք հավանություն եք տալիս դրան, հապա ինչո՞ւ այդ դեպքում դուք չեք ուզում ինքներդ մասնակցություն ունենալ։

Բրունոն պատասխանեց.

— Հիմա ես պահեստում եմ դտնվում, իսկ դուք գործող բանակում եք։ Ամեն մեկն իր հերթն ունի։

— Երբ մարտ է սկսված,— առարկեց Մարկը։— Ամեն մի զինվոր պետք է։

— Ձեր մարտը,— պատասխանեց Բրունոն,— միայն մեծ ճակատամարտի մի էպիզոդ է։ Դուք պահում եք միայն թևերից մեկը։ Մի՛ անհանգստացեք մնացած բանակի մասին։ Ամեն մի կորպուս իր առաջադրանքն է ստացել։ Կատարեք ձե՛րը։ Առա՛ջ գնացեք։

— Իսկ ուր է գորահրամանատարը,— հարցրեց Մարկը։

— Նա առջևում է,— արձագանքեց Բրունոն,— ինչպես մի ժամանակ Արկոլի կամրջին։ Հասե՛ք նրան։

— Իսկ դուք մեզ կլքեք այս երերուն կամրջի վրա և չե՞ք գա մեր հետևից։

— Ի՞նչ իմանաս,— պատասխանեց Բրունոն իր սովորական նուրբ ժպիտով։— Հնարավոր է, դուք մեզ գտնեք մյուս ափին։

Այո, հենց այդտեղ էլ թաքնված էր գաղտնիքը։ Կորականապես հրաժարվելով ակտիվ գործողություններին մասնակցելուց, Բրունոն և Ժուլիենը քարշ չէին գալիս ինչ-որ տեղ հետևում, բանակի գումակում։ Այդ երկու իրարից այնքան տարբեր մարդկանց միջև— Դեմոկրիտի և Հերակլիտի միջև, ինչպիսին նրանց պատկերում է լեգենդը,— գոյություն ուներ մի նմանություն. դուրս պրծնելով գործողության ամրոցի պատի հետևից տարբեր ուղիներով, պատի, որը գոտևորում և պաշտպանում է քաղաքը մարդկային, երկուսն էլ, ինչպես ժամապահներ, ամենուրեք պահպանում էին նրա առաջավոր սահմանները, որտեղ ամենավտանգավոր մարտերն էին սկսվում։ Եվ իր դիտակետից, որը գտնվում էր ամենևին էլ ոչ թաքստարանում, այլ թշնամական ճամբարների խաչաձևող համազարկերի տակ, երկուսն էլ երբեք չէին դադարում ուսումնասիրել կեցությունը նրա շարժման մեջ։ Նրանց հմտացած և անսխալ դիտողականությունը գիտեր որոշել թեքման անկյունը, իսկ նրանց միտքը նախօրոք հոսանքի հուն էր բացում։ Որովհետև այդպիսին է մեր Արևմուտքի հոգու էությունը,— նա կարող է հայտնաբերել փախուստի դռնակը դեպի երազանք կամ նույնիսկ դեպի անէություն, կարող է կասկածել ամեն ինչին, նույնիսկ իր գործողությունների նպատակահարմարությանը, կարող է հավատալ կամ չհավատալ,—մինչ

նույն է նա, Արևմուտքի հոգին, քայլում է, միշտ քայլում է... «Et pur si mouve!»[1]։ Նա իրեն թույլ չի տա փնտրելու այնքան հեշտ մի ապաստարան, ինչպիսին անշարժությունն է, մելանխոլիան կամ երանությունը, որը մեկին կասկածանք է տալիս, մյուսին՝ հավատ՝ թամբելով իր «ես ի՞նչ գիտեմ»-ը նույնքան հաստատուն, ինչպես և իր «Հավատում եմ»-ը— Ռոսսինանտի կամ Սանչոյի ավանակի նման,— Արևմուտքի հոգին անխոնջորեն շարժվում է։ Եվ այդ անդադար շարժումը հավիտենական ժամագործի արհեստանոցում խառնվում է աշխարհների ընթացքի հետ։ Ընթանալ— նշանակում է ունենալ հավատ, ուզում ես դու այդ թե չես ուզում։ Եվ այդ հավատն ավելի ուժեղ է, քան աղոթքի գործունեության նկատմամբ ունեցած հավատը։ Իսկ աղոթքը մի ուղի է, որը տանում է դեպի Գոյը։ Բայց ինքը Գոյը ճանապարհ է բացում այդ շարժման համար։ Միայն շարժման շնորհիվ է, որ Գոյը իր հետագիծն է թողնում գիշերվա սև ֆոնի վրա։

Հենց կյանքի, նրա շարժման նկատմամբ ունեցած այդ անհաղթելի հավատի պատճառով էր, որ Բրունոն և Ժուլիենը, որոնք ոչ պատկանում և ոչ էլ ցանկություն ունեին պատկանելու որևէ կուսակցության, անխուսափելիորեն պետք է համագործակցեին Մարկի հետ։ Երբ նրանք ուշադիր զննում էին մարդկության հսկայական մարմինը, երկուսն էլ փորձված աչքով, սրատես, ինչպես ռենտգենյան ճառագայթները, անմիջապես հայտնաբերում էին, որտեղ է կենդանի մարմինը և որտեղ՝ մեռած։ Եվ անսխալ հոտառությունը նրանց հուշում էր ընտրությունը. այնտեղ, որտեղ կյանքն է, այն տեղն էլ նրանց հայրենիքն է։ Նրանք հայտնաբերում էին այդ առանձին մարդկանց կամ ազգերի մեջ, որոնք հին աշխարհի ողբերգական ֆորմուլայում. «Մեռի՛ր և դարձի՛ր»— կանգնում էին մեծ վերափոխության կողմը— նոր գիտության պիոներների, նոր բարոյականության, նոր հասարակարգի կողմը,— կողմը այն բոլորի, ովքեր կտրում են նախապաշարմունքների և չարաշահումների նեղ գոտին («կամ մի անցք թուլացնում են»,— ինչպես հեգնորեն նկատում էր Բրունոն)։

---

1 Այնուամենայնիվ նա (երկիրը) պտտվում է (իտ.)։ Գալիլեյի բացականչությունը։

Երեխան մեծանում է, երեկվա շորը նրա վրա այսօր արդեն փոքր է։

Աշխարհը— պատերազմների դարաշրջանի և համաշխարհային հեղափոխությունների զավակը— կտոր-կտոր էր անում բոլոր կապանքները, պատառոտում էր բոլոր ծածկույթները, տապալում էր աստվածներին, օրենքները, որոնք դեռ երեկ իր չափսով էին։ Եվ միթե, կանգնելով ամբողջ հասակով մեկ, նա գլուխը չխփեց ու չծակեց հին արեգակնային համակարգության առաստաղը, միթե նա Ծիր Կաթինի բյուրավոր աստղերից ավելի վեր չբարձրացավ, միթե աչքով չորսաց, ինչպես ծովի հատակի մեդուզաներին, այլ աշխարհների, գլխավոր աստղերի ամբողջական խուրձերը, մեծ պարուրաձև միգամածությունների սերմերի կաթիլները։ Միթե այդպիսի միտքը շփոթի կենթարկվի հասարակարգի ցնցման տեսարանից, որ տեղի է ունենում իսոյահարվածների հետևանքով և ամբողջ երկրագնդի վրա ավերում է հին քաղաքների սովորական հիմքերը։ Նույնիսկ Ժուլիենը, այդ բուրժուան, որ սնվել է դասական ու կաթոլիկական Ֆրանսիայի ավանդություններով, նույնիսկ Բրունոն, այդ սիցիլիական աղնվականը, որը ծայրեծայր— մինչև օծանելիքներով առատորեն օծված մորուքի դանգուր մազերը— ներծծված էր հունա-լատինական կուլտուրայով,— նույնիսկ նրանք էին ոչ այնքան ապագայում անցյալ փնտրում, որքան անցյալում ծրնված ապագա և այն սլատանի Հերկուլեսին, որն արդեն օրորոցում խեղդում է թունավոր օձերին։ Նրանք խեթ չէին նայում նաև հասունացած Հերկուլեսին, որն իր դագանակով մաքրել էր սկիֆների տափաստանները։ Նրանց հետաքրքրում էր ռուսական հեղափոխության կողմից ձեռնարկված աշխատանքները, և նրանք այդ հեղափոխության գործերին հետևում էին կարեկցանքով, որը չէր բացառում քննադատությունը։ Բայց քննադատում էին նրանք ինչպես հին բարեկամներ, որոնք ափսոսում են, որ իրենք արդեն չեն կարող հաղորդակից լինել այդ աշխատանքներին և նույնիսկ երիտասարդ մոլորություններին,— այն ամենին, ինչը նոր ճշմարտություն, նոր կյանք է ծնում։ Մարկն ուրախանում էր իր երիտասարդության համար, ուրախանում էր, որ կարող է մտնել ավետյաց երկիրը, որի շեմին հապաղել էին ավագները։ Նրա համար դա բոլորովին նոր զգացում էր։ Մինչև հիմա նա մի տեսակ շատ չէր գնահատում իր հաջողությունը. ավետյաց երկիրն ու երիտասարդությունը նրան անիծյալ երկիր

էին թվում։ Առաջ, երբ ավազներից որևէ մեկը Մարկին ասում էր. «Այ երջանիկը դուք եք, ընդամենը քսան տարեկան եք»,— Մարկն ուզում էր այդ ասողին ապտակել, նա այդ խոսքերի մեջ դաժան կատակ էր լսում... Իսկ եթե դա կատակ չէ, կնշանակի նրանք պարզապես ապուշներ են։ Բայց այդ երկու մարդը չափազանց շռայլ էին վճարել կյանքին գժվարությունների իրենց բաժինը,— եթե նրանք արդեն ափսոսում են որ իրենք այլևս տալու բան չունեն, դա նշանակում է նրանց կարելի է հավատալ։ Եվ Մարկն իրավացի չէ, երբ քիթը շրջում է ճաշից, դեռ համը չտեսած։

Նրա Ասյան քիթը չէր շրջում, թեև ինքը չէր էլ կարող բացատրել, ինչու է այդպես լինում։ Նրա ամուր առամները պատրաստ էին ծամելու ինչ պատահեր— և լավը, և վատը։ Ասյան չէր հրդեհում ոչ կյանքից, ոչ գործունեությունից, նա քաղցի զգացում ուներ և փաստարկների կարիք չէր զգում։ Բայց Մարկը շատ չնորհակալ կլիներ, եթե նրան ցույց տային այդ փաստարկները, քանի որ նրա բանականությունն ավելի պակաս շարժիչ չէր, քան, նրա բնազդը, և այդ շարժիչը հարկավոր էր սնել։ Որքան էլ ուզում է Մարկը գործողության քաղց զգալ, որքան էլ ուզում է պատրաստ լինել էժան տալու իր կյանքը, նա և ուժը, և խնդությունը վերցնում էր այն գիտակցությունից, որ այս աշխարհը, մեր, այժմյան աշխարհը, որը, գուցե, իրենից, Մարկից, վերցնելու է կյանքը, արժանի է այդ պարգևին, արժե նման զոհողության։ Եվ, կարծես ընդառաջ գնալով պատանու գաղտնի ցանկություններին, Բրունոն կարծես մի տեսակ հարևանցի բերում էր նրա համար պետք եղած փաստարկները, ծուլիենի հետ մեծ զարաշրջանի մասին զրուցելիս։ Ո՞ր։ Մեր, այն զարաշրջանի, որը մեզ ստիպում է քայի ու քրտինքի մեջ մտած աշխատել, այն զարաշրջանի, որը մեզ ստեղծում ու վերափոխում է և որը կառուցում, որը ստեղծում ենք մենք, հասարակ սրմնադիրներս, վիթխարի պլանի շինարարներս։ Կառույցի իրարանցման ու աղմուկի հետևում, կառույցի, որը քամում է իրեն զոհաբերած միլիոնավոր բանվորական կյանքերը, ճիշտ նույն ձևով, ինչպես փարավոնների ժամանակ, մենք չենք նկատում, ինչպես է աճում բուրգը. ոգու ամենօրյա սխրանքները, գիտության ամենաապշեցուցիչ հայտնագործությունները ու նվաճումները, կրոնական և հեղափոխական հոգու նոր լուսավորումները, դագաղի մեջ դրված հին ոսսսաների,— Հնդկաստանի և Ջինաստանի,— հա-

րութիյուն առնելը և մեծ առաջնորդների հայտնութիյունը, այնպիսի առաջնորդների, ինչպիսիք են Սուն Ցաթ-սենը, Գանդին և Լենինը, որոնց մեջ մարմնավորված է հերոսական ժողովուրդների գիտակցութիյունը։

Իր երկու ավագ բարեկամների հետ շփվելուց Մարկը ձեռք բերեց խոր, անսասան հանգստութիյուն։ Ինչ-որ Օսմոսի օգնութիյամբ Բրունոն նրան հաղորդում էր շարժման մեջ գտնվող կեցութիյան իր հասկացողութիյունը (որը Մարկը դեռ չէր հասցրել ստուգել փորձով) և նրան իր հավատն էր ներշնչում անդադար մարտերի միջով դեպի միասնութիյուն տանող աշխարհի առաջադիմող ընթացքի նկատմամբ։ Մարկն աղոտ կերպով զգում էր, որ քաոսի վարագույրի հետևում թաքնված է հավիտենական ներդաշնակութիյունը, հեռավոր երաժշտութիյունը այն ոլորտների, որտեղ լուծվում են բոլոր անլուծելի հակասութիյունները։ Նա որսում էր այդ երաժշտութիյան արձագանքները։ Եվ դա բավական էր, որ ինչպիսի հանգամանքներ էլ ուղում է լինեին, չզահավիժեր խավարի մեջ։ Բանակը կարող էր ձգտել դեպի մարտ։ Նրա թիկունքը հուսալի էր։

Է լավ, իսկ առաջավոր չոկատնե՞րը։ Ճակատի ամբողջ գիծը՞։ Ինքնին հասկանալի է, Մարկը ժամանակ չուներ մարտի թեժ պահին լուծելու բոլոր հակասութիյունները, որոնց մեջ նրան քաշել էր միտքը։ Գործողութիյունը ժամանակ չուներ սպասելու։ Գործողութիյունը քեզ համակում է ամբողջովին, և այդ ժամանակ արդեն չես կարող դուրս պրծնել։ Ոչ մի բան չես կարող պահպանել քեզ համար։ Ամեն մի արարք տնօրինում է միտքը։ Երբ քո առաջ թշնամի է, գործը պահանջում է մտքի ամբողջ ուժը։ Ով վատնում է թեկուզ նրա մի մասնիկը, կյանքը ռիսկի է ենթարկում, ռիսկի է ենթարկում շատ ավելի մեծ բան, ռիսկ է անում կորստյան մատնել իր համախոհների կոհորտան և իր գործը... Այդպես, ուրեմն, շտապիր արագ մտածել, քանի դեռ փողհարը չի շեփորել գրոհի։ «Es muß sein...»[1]։ Թող կատարվի այն, ինչ կատարվելու է։ Իսկ կատարել կարող են միայն մեր ձեռքերը։ «Այդպես պետք է լինի»-ն հավասարազոր է «Ես պետք է լինեմ այդպիսին»։ Ճակատագիրը մե՛նք ենք։

Իսկ հիմա ճակատագիրը կարող է իրականանալ (նա, ով

---

[1] *Այդպես պետք է լինի... (գերմ.)։— Բեթհովենի թնաթաները իր վերջին կվարտետի համար։— Ռ. Ռ.։*

մտածում է, գիտի այդ, և այդտեղ արդեն անզոր են բոլոր խոստումանկուրյունները) միայն այն դեպքում, եթե կապանքաջերծվեն տարերային ուժերը, եթե ալիքը բարձրանա ամենախորքերից և ամեն ինչ սրբի ու տանի, և Մարկը չի կարող այդ չիմանալ։ Նա տեսնում է, նա կանխատեսում է, ինչպես ինքը մատների մեջ եղած և սոցիալական ճակատամարտերի դաժանությունը, որոնք պատրաստվում էին, որոնք արդեն տեղի էին ունենում Եվրոպայի մի մասում, և սարսափելի սպառնալիքը, որն իրենից ներկայացնում էր ասիական անսանձ ու հատուցման արբածությունից իր բռունցքը Եվրոպայի վրա բարձրացրած նացիոնալիզմը։ Երբեմն Մարկին թվում է, թե իր վառվող ձեռնափին է արդեն հպվում այդ բռունցքը, ճանկը, թե աշխարհն ահա ուր որ է ոտք կդնի մի ահեղ դատաշրջան, երբ բացվում են հեղափոխության շլյուզները։ Ինչպե՞ս ներս մտնել այնտեղ առանց տագնապի ու սարսափի։ Բրունոն խաղաղ հայացքով դննում է այդ ցիկլոնները, քանի որ նրանց մեջ ինքը տեսնում է անհրաժեշտության այն փուլը, որը ուղղություն է տալիս աշխարհներին, նրան բավական է և այդ դննումը։ Բայց Մարկն իր վրա վերցրեց պատասխանատվության ամբողջ ծանրությունը այն բանի համար, ինչ տեղի կունենա, ճակատագրի համար։ Մինչդեռ նա որոշել էր ոտքը չեմից այն կողմը դնել։ Եվ ինչ էլ որ տեղի ունենար, նա իրեն իրավունք չէր վերապահում շեղվել։ Ճգնավորությունը նույն վախկոտությունն է։

Նա հիմա որոշել էր ծառայել ուղածդ պոստում, ուր նրան ուղարկի ճնշվածների բանակի մարտական հրամանը, բանակ, որին վիճակված է ջախջախել սոցիալական անարդարության հին հասարակարգը։ Իսկ այն նոր անարդարություններն ու տառապանքները, որոնք ճակատագրական կերպով կապված են մարտի հետ, ինչ արած— նա գիտի, դրանք անխուսափելի են, հետևաբար անհրաժեշտ են, հետևաբար անհրաժեշտ է դրանք բաժանել։ Նա իրավունք չունի ձեռքերը լվանալ ու մնացյալ բոլորին ասել.

«Ինքնե՛րդ կեղտոտվեք։ Ես գործ չունեմ»։

Ավելի լավ է մարդ իր վրա վերցնի նրանց հանցագործությունները, քան թե կրկնի Պիղատոսի շարժումը։ Մարկին անհրաժեշտ էր իր վրա վերցնել տառապանքների իր բաժինը— և ոչ միայն այն տառապանքների, որ ինքն էր անձամբ տարել, այլև այն, որ ինքն էր պատճառել։ Եվ դա նրա համար անհան-

դուրժելի էր։ Նա այդ մասին ոչ ոքի չէր ասում, նույնիսկ ամենամոտիկ մարդկանց։ Ասենք դա օգուտ էլ չուներ. ոչ ոք չի կարող նրա փոխարեն որոշել, ոչ ոք չի կարող նրանից հեռու պահել իր ճակատագրի ծանրությունը։ Նա ընդունում էր այդ ճակատագիրը։ Այլևս չէր ուզում վիճարկել հրամանը։ Տեսնում էր, ինչպես է մոտենում գործողության ժամը, անհրաժեշտության կապարե ծանր ժամը։ Ու թեև նրա սիրտը տագնապահար ճմլվում էր, նա վճռականությամբ առաջ էր նայում։ Բայց իր սրտում նա դիմում էր ճակատագրին— այն մութ ուժին, որը մեզ տանում է իր հետևից, ինչպես պտույտն աշխարհների գիշերը— կրքոտ մի աղերսանքով։

«Թող հեռու մնա ինձնից մարտական պոստում որևէ մեկի արյունը թափելու դեպքը, բացի իմ սեփական արյունից, թող ես մի մազաչափ անգամ չավելացնեմ այն տառապանքները, որոնց ծանրությունը դարեդար ավելանում է։ Թող քավեմ ես դրանք իմ տառապանքով»։

Նա գիտեր և ինքն իրենից թաքցնում էր իր գաղտնի սարսափը— անչափ լավ գիտեր, որ, թույլ տալով բռնությանը իշխի իր վրա, նա կգլորվի ավելի ու ավելի ցած, ինչպես ուրվականներով հետապնդվող Մակբեթը...

Մի դեպք, կոպիտ ու անսպասելի, նրան գցեց արյունալի զառանցանքի մեջ։

Մարկի անունը վերջնականապես դուրս եկավ անհայտության խավարից։ Արդեն չէր կարելի պարզապես չնկատել նրան։ Ժուլիեն Դավիի բացահայտ պաշտպանությունը, որի բարոյական (իսկ ավելի շատ ակադեմիական) հեղինակությունը գիտական աշխարհում հաստատուն էր դառել, պաշտպանությունը տարբեր լիգաների, ուր մտնում էին Ժուլիենն ու Բրունոն, հասարակությանը հարկադրում էին ականջ դնել Մարկի խոսքերին։ Եվ երիտասարդ մարտիկի ձեռքը, մարտիկի, որ ժամանակից շուտ իմաստնացել էր ավագ բարեկամների կողմից իրեն փոխանցված փորձով, անսխալորեն հարվածներ էր հասցնում այնտեղ, որտեղ կապիտալիզմի հսկան ավելի խոցելի է։ Հարվա՛ծ արդյունաբերական կապիտալիզմի ծովահեններին, որոնք, տիրանալով հրամանատարական բարձունքներին և ոչ մի բանի հետ հաշվի չնստելով, իրենց կամքն էին թելադրում կառավարություններին։

երկրորդ հարվածը՝ մետաղագործության և թնդանոթային գործարանների մագնատներին։ Երրորդը տրեստների տերերին, որոնք գրպանել են մամուլը և իրենց ենթարկել հասարակական կարծիքը։ Այն րոպեից, ինչ մարտը դուրս եկավ մշուշոտ և անոքոշ գաղափարական ոլորտից և ճակատային գրոհ սկսվեց իսկական թշնամու, ամբողջական խմբավորումների, առանձին անձնավորությունների վրա, հիշատակելով նրանց անուններն ու ազգանունները, Մարկ Ռիվիերը դարձավ «հասարակական վտանգ» և անմիջապես ինքը հայտնվեց վտանգի մեջ։

Անողորմ գրոհները Մարկի մոտ վտանգավոր դաշնակիցներ բերին այն մարդկանց թվից, ովքեր թիավարում էին պողպատի տրեստների պրոկոնսուլների գալեոնների վրա. այդտեղ կային դժգոհներ, խռովարարներ-բանվորներ, ինժեներներ, որոնք գալիս էին մերկացնելու գաղտնի և խայտառակ գործարքները, հանցագործորեն ռազմանյութեր մատակարարելը օտարերկրյա կառավարություններին, բարեկամներին, թշնամիներին, երեկվա լինելին դրանք թե վաղվա («Միևնո՞ւյն չէ թե ում, միայն թե վճարեին»)։ Երբեմն դրանք լինում էին Մարկի քաղաքական հակառակորդները— նացիոնալիստներ, շովինիստներ։ Դրանց զայրացնում էին արդյունաբերական կոմիտեների շնաձկները՝ իրենց ավազակային «ինտերնացիոնալ» մտքով,— նրանք Մարկին փաստաթղթեր էին հանձնում, որոնք դիմակազերծում էին իրենց եղբայրակիցների դավաճանական գործողությունները։ Բայց այդ դժգոհների շարքերը առանց դժվարության կարող էին թափանցել պրովոկատորներ, որոնք միևնույն հեշտությամբ դավաճանում էին երկու կողմին էլ։ Նրանց ոտքերի տակ հողն այրվում էր, և բոլոր դեպքերում էլ նրանք վտանգի էին ենթարկում իրենց գլուխը։ Իսկ պրոկոնսուլները, հասկանալով, որ ոչ միայն ճակատային գրոհ է գնում, այլև նեղքին խարդավանք, ջանում էին կանխել իրադարձությունները։ Արդեն ուշ էր պատրանքներով իրեն հանգստացնել, թե հակառակորդին կարելի է զսպել սովորական, փորձված ձևերի օգնությամբ— խորամանկության, դրամի, շողոքորթության կամ խոստումների։ Հարկավոր էր եթե ոչ այսօր, ապա վաղը վերացնել հակառակորդին։ Իսկ դրա համար ինչքան ասես միջոցներ կային, եվ ամենահուսալին տակնահան գործելն էր։ Ասենք, բոլոր միջոցներն էլ վատը չէին։ Պահեստում մնում էր բանտարկությունը, որը կարելի էր երկարացնել անսահմանորեն, մեկնաբանելով մի անզգույշ բառը որպես

հայրենիքի վիրավորանք,— մի՞թե չեն փորձել բանտի պատերի ներսում թաղել այնպիսի մարդկանց, ինչպիսին Մարտին է։ Կային ոստիկանության կողմից հրահրած փողոցային անկարգություններ և հրապուրելով այդ թակարդի մեջ էին գցում անփորձ ագիտատորներին։ Գոյություն ուներ վերջապես անհաջող կրակոց, պատահական գնդակ, կապարե գլխիկով ձեռնափայտ,— և այդ բոլորը միանգների ժամանակ, կամ միանգից դուրս գնալիս, կամ էլ (մարդու գլխին փորձանք բերելը դժվա՞ր բան է, տեր իմ աստված) ամրոցի փողոցներով միայնակ զբոսնելու ժամանակ և ամենևին էլ պարտադիր չէ, որ «դրժբախտ պատահարը» տեղի ունենա ուղղակի արգելոցում։ Ֆրանսիական հողի վրա ցավալի իրադարձությունը կարող էր տեղի ունենալ ամեն մի երկրում, ուզածդ տերիտորիայի վրա,— չէ որ ճակատագիրը սահմանները հաշվի չի առնում, հատկապես նրան հմտորեն ուղղություն տալ նրա աջին։ Քանի որ հիմա մոդայիկ են ինտերնացիոնալները, միտք չունի այդպիսի զենքը թողնել խռովարարների ձեռքին,— կարգուկանոնի մարդիկ, խեղդիչները, կատեղծեն իրենց սեփականը։ Եթե նրանց նույնիսկ չի հաջողվում լեզու գտնել միմյանց հետ, նրանք հիանալի կերպով համաձայնության են գալիս, երբ խոսքը վերաբերում է նրանց ընդհանուր թշնամուն։ Ջենտլմենների միջև ընդունված չէ հարևանին մերժել այդպիսի աննշան ծառայությունը. պարտքը, ինչպես հայտնի է, լավ է հատուցմամբ։ Նման պայմաններում որսորդությունը դառնում է ոչ ձանձրալի զվարճալիք։ Բավական է դարան մտնել ու սպասել, մինչև որ որսահալածները որսին քշեն ձեզ վրա։ Մարկ Ռիվիերը արդեն նշան էր արված։ Առայժմ որսորդները դեռ չէին շտապում, նրանք դիտում էին։ Կարելի էր նաև սպասել, որսը չի հեռանա...

Ոչ ինքը Մարկը, ոչ նրա ընկերները չէին գիտակցում իրենց վրա կախված վտանգի չափերը։ Նրանք, իհարկե, հասկանում էին, որ վտանգ գոյություն ունի։ Բայց այսօր այդ վտանգը նրանց թվում էր հեռավոր ու մշուշոտ։ Այո, երկնակամարում խտանում են ամպերը, բայց մենք դեռ կհասցընենք թաքնվել տեղատարափից։ Որքան էլ ուզում է փորձված լինելին Ժուլիեն Դավին ու կոմս Կիարենցան, սեփական ազնվությունը ծածկում էր նրանց հայացքը։ Իսկ Ասյան, որը տարված էր գործողությամբ, ամբողջովին խաղով համակված, աննեղլիորեն մոռանում էր իր պարտնյորին սպառնող վտանգի մասին։

Անհանգստանում էր միայն ու միայն Աննետան, որին հետապընդում էր Տիմոնի մահվան միտքը, բայց նոպաներով նրան համակող աղոտ սարսափը շուտով անհետանում էր։ Նա սիրտ չէր անում այդ մասին խոսք բացել, իմանալով, որ միևնույն է իրեն չեն լսի, կամ ուղղակի կծիծաղեն իր փոքրոգությյան վրա։ Ինչևիցե, Մարկն ու Ասյան նրան իրազեկ չէին պահում այն վտանգավոր ձեռնարկությունների մասին, ուր նրանց քաշում-տանում էր սկսած կամպանիան։ Աննետան սոսկ գուշակում էր վտանգը։ Եվ ավելի շատ, քան բոլոր արտաքին վտանգները, նրան անհանգստացնում էր առողջությունը Մարկի, որն իրեն չէր խնայում, տանջում էր, և չորացել էր կատաղի պոռթկումներից։ Աննետան միայն մի բան էր ուզում— հետու պահել որդուն նրա տենդագին գործունեությունից, ստիպել, որ նա մի երկու ամիս հանգստանա։ Բայց ոչ Մարկը, ոչ Ասյան ոչինչ լսել անգամ չէին ցանկանում։

Եվ այդպես, ամպերը շարունակում էին խտանալ, մինչև որ, վերջապես, ամպրոպը պայթեց, պարպելով լարվածությունը, և անսպասելիորեն Աննետային օգնեց դուրս քաշել Մարկին, թող որ ոչ երկար ժամանակով, էլեկտրականությամբ գերհագեցված մթնոլորտից։

Մարկն ու Ասյան մասնակցում էին միջազգային մի կամպանիայի, որն ամեն տարի անց էր կացնում հեղափոխականներին օգնող Միջազգային կազմակերպությունը (ՄՈՊՐ-ը), զուգադիպեցնելով այն մարտի 18-ի հետ։ Այդպիսով Փարիզի կոմունայի հիշատակման օրը նշանավորում էր հեղափոխականների ամբողջ աշխարհի քաղաքական բանտարկյալների հետ ունեցած պրոլետարական համերաշխության ցույցով։ Այդ օրերին ՄՈՊՐ-ն աշխատում էր նաև մոբիլիզացնել հասարակական կարծիքը ի պաշտպանություն գաղութային ժողովուրդների, որոնք կեղեքվում էին մեծ տերությունների իմպերիալիստների կողմից։ Այդ նույն ժամանակաշրջանում երկրագնդի բոլոր անկյուններում— Հընդկաչինում, Չինաստանում, Սիրիայում և Եգիպտոսում, Մարոկկոյում, Մալայական արշիպելագում և Կոնգոյում, Սամոայում, Նիկարագուայում, Հարավային Ամերիկայում և Կուբայում— սկսել էին բորբոքվել ապստամբությունները, ու թեև բոլոր փորձերը դաժանորեն ճնշվում էին, բոցը մխլում էր մոխրի տակ, ինչպես անտառային հրդեհը, և սպառնում էր անցնել օվկիանոսների և անապատների վրայով։ Մարկը բազմաթիվ անգամ

մերկացնում էր ազդեցիկ մոնոպոլիաների դերը զավթողական գաղութային պատերազմներում և հրապարակում էր այնպիսի փաստաթղթեր, որոնք դիմակազերծում էին եկամտաբեր մահվան առևտրականներին, նրանց, ովքեր գաղտնի զենք ու զինամթերք էին մատակարարում Հեռավոր Արևելքի դահիճներին՝ դաժան պատիժների և կողոպուչական ռազմական էքսպեդիցիաների համար։ Ինքնին հասկանալի է, Մարկին նույնպես իսկույն ևեթ մերկացնում էին, հայտարարում էին Եվրոպայի թշնամին և քաղաքակրթության դավաճան։ Քիչ անկեղծ և հրապուրվող մարդիկ չգտնվեցին, որոնց հրահրում էին գործամոլները իրենց մամուլի միջոցով, որն առատորեն ողողվում էր ոսկի անձրևով,— և հենց այդ մարդիկ էին, որ պահանջում էին Մարկին բանտարկել։ Զուրկ լինելով պետական իշխանությունից, որին իրենք հայհոյում էին նրա թուլության համար, նրանք հայտարարում էին, որ իրենք կարող են դավաճանի բերանը փակել սեփական բռունցքների օգնությամբ. բայց կոկորդ պատռողներն այնպիսի բարձր նոտա վերցրին, որ հիմա ոչ ոք արդեն ուշադրություն չէր դարձնում թագավորական կտրիճների ծիծաղ առաջացնող սպառնալիքների և նրանց հանրապետական կոլեգաների վրա։

Եվ ահա ամեռվա վերջին օրերին, երբ ղազացվեց գարնան շունչը և բարոմետրն սկսեց եղանակի փոփոխություն ցույց տալ, մարտի տասնութի երեկոյան, մտնելով միտինգի համար առանձնացրած դահլիճը, որտեղ պետք է տեղի ունենար Մարկի ելույթը, նրա բարեկամներն իսկույն վրա հասնող փոթորկի հոտ առան։ Ժուլիեն Դավին և Ասյան Մարկի հետ միասին նստել էին բեմում (Աննետան Բրունոյի հետ մնացել էր տանը, նրանք նրան ժողովներ չէին սիրում)։ Ոչ սովորական, տենդագին հուզմունքը դահլիճում թագավորում էր դեռ մինչև միտինգի բացվելը։ Բորբոքվում էին սուր վեճերը։ Առաջին շարքերը, անցումները, ամենուրեք խցկվել էին ինչ-որ հուզված, ինչպես և միանգամայն կասկածելի տիպեր, որոնք ըստ երևույթին ենթարկվելով հրամանին, պատրաստվում էին գրոհի և արդեն խմբերի էին բաժանվում։ Ամբիոնի վրա, Մարկի և Ժուլիենի հայտնվելուն պես թշնամական բացականչություններ լսվեցին, որոնց դեմ վրդովվեց լսարանի մնացած մասը։ Ներկաների ճնշող մեծամասնությունը Մարկի կողմնակիցներն էին, բայց գործում էին նրանք ոչ կազմակերպված։ Սակայն կարծես անտեսանելի դիրիժորի մի նշանով աղմուկը հանկարծ լռեց։ Սուրաչը Ասյան

անմիջապես ամեն ինչ տեսավ և իսկույն հասկացավ, որ գրոհի համար սպասում են հարմար րոպեի և այդ գրոհը կսկսեն հենց որ դերիժորական փայտիկը թափահարվի։ Ասլային նույնպես ճանաչեցին և նշան բռնեցին. շարժվելով դեպի ամբիոնը Ասլան անցավ ատող հայացքների շարքի միջով, որոնք նրան ոտից գլուխ չափեցին։ Բայց նա չդողաց և համարձակորեն ինքն էր զննում հակառակորդին։

Ժուլիենի ելույթը դիմավորեցին վիրավորական բացականչություններով, որոնք անմիջապես դադարեցին։ Նրա սառը համաչափ խոսքը դինաթափում էր ամենահանդուգն մարդկանց։ Համալսարանի պրոֆեսորի պաշտոնական կոչումը, նշանավոր գիտնականի հեղինակությունը հարգանք էին ներշնչում։ Բացի այդ Ժուլիեն Դավիի մեջ տեսնում էին միայն պացիֆիստի, «բոշի», իսկ դա արդեն հին էր— հերթական ճաշատեսակը վաղուց էր հասցրել սառել։ Բայց դրա փոխարեն, երբ տեղից վեր կացավ Մարկը, փոթորիկ ալացնեց։ Սուլոցներն ու հարայհրոցը, նրա կողմնակիցների պատասխան բացականչությունները միայն ուժեղացնում էին աղմուկը։ Մարկն սպասում էր, թե երբ գոնե մի րոպեով լռություն կտիրի։ Բայց հենց որ նա բացում էր բերանը, աղմուկն իսկույն աճում էր։ Ակնհայտորեն չէին ուզում թույլ տալ, որ նա խոսի։ Մարկն սկսեց բղավել։ Նրա ձայնի ականջ ծակող նոտաները շաղափի նման խրվում էին դադարների մեջ, որոնցով մեջընդմիջվում էին ոռնոցներն ու աղաղակները։ Նա տաքացավ, կորցրեց համբերությունը և, արդեն իրեն չտիրապետելով, սկսեց ինքն էլ իր հերթին վիրավորել լսարանին։ Նրա առանձին բառերը, կոպիտ ու դաժող, ինչպես ապտակներ, շրխկում էին նրանց դեմքերին, ում որ նա նշան էր բռնել։ Մարակի հարվածներ ստանալով, վիրավորվածները կատաղում էին։ Նրանք տեղներից վեր էին ցատկում, սպառնում բռունցքներով։ Եվ հանկարծ ամբարտակը ճեղքվեց։ Կտրելով բալմությունը, ջարդելով իր ճամփին բոլոր արգելակները, դեպի ամբիոնը հորդաց ջարդարարների հեղեղը։ Այդտեղ էին «Ակսյոն Ֆրանսեզ»-ի պատանի ջենտլմենները— պարոն Կոտիի օգնականները, որոնց շինկացրել ու քըս էին տալիս հրահրիչները, և որոնք լավ գին ստանալու դեպքում չէին խնայում իրենց ցուլային կոկորդները։ Կանգնելով Մարկի առաջ, որին շրջապատել էր բարեկամների մի խումբ, որ ջանում էր նրան պաշտպանել, Ասլան ամբիոնի բարձրությունից նայում էր, թե ինչպես են նը-

բանք մոտենում։ Նա իրեն զսպել չկարողացավ և ամբոխին նե-
տեց մի քանի գրգռիչ նախադասություններ, որոնք ընդգծված
էին արտահայտիչ միմիկայով. Ասյան շուրթերը խողովակաձև
առաջ ցցեց ու ձևացրեց, թե ուղում է ըստ ռուսական սովորու-
թյան, թքել։

Մարդկային ալիքը ծառս եղավ։ Մի հինգ-վեց խիղախ կորիճ-
ներ, որոնց առաջ էին քշում և հետևից հրում,— ցատկեցին
բարձրության վրա, և ամենաճարպիկը դուրս եկավ Մարկի հա-
սակակից մի պատանի զարմանալիորեն նրան նման— նույն
ձևով նիհար, նույնպիսի նուրբ, ինտելիգենտ դեմքով։ Բայց նրա
աչքերը չռվել էին, և նա ինքը, խելքը թոցրած կատաղի զայ-
րույթից, թվում էր, ալկոհոլի ազդեցության տակ է գտնվում։
Բղավելով ինչ-որ հայհոյանքներ, նա փայտը բարձրացրեց,
նետվեց Ասյայի վրա և խփեց նրա երեսին։ Եվ եթե Մարկը կատ-
վի նման չթռչեր սեղանի վրայով և չբռներ խուլիգանի կոկոր-
դից, նա Ասյային կսպաներ։ Մարկը հասցրեց կասեցնել Ասյայի
վրա եկող հարվածը, և միայն փայտի ծայրը ճղեց Ասյայի այ-
տը։ Բայց երիտասարդ վագրը տարված իր սեփական թռիչքով,
հետևից քաշեց նաև իր հակառակորդին,— ճանկերով կպավ նրա
կոկորդից և իր զոհի հետ միասին բարձունքից ցած թրմփաց։
Նրա համար, ով ներքևում էր գտնվում, անկումն իսկապես էլ
սարսափելի էր. նրա ծոծրակը զարնվեց հատակին։ Իսկ նրա
վրա— մյուս խելագարը—Մարկը, որն ամենևին մտադրություն
չուներ բացելու մահաբեր գիրկը։ Արյան շղարշը փակում էր նրա
աչքերը, նրա ուղեղը, նրա հոգին լողում էին արյան մեջ։ Նա ար-
յան ծարավի էր, նրա ծնոտները տենդագին չխկչխկում էին։ Եվս
մի րոպե, և նա ատամներով կկպչեր հակառակորդից։ Նա չէր
նկատում, որ տապալված թշնամին արդեն կորցրել է գիտակ-
ցությունը։ Մեծ դժվարությամբ Մարկին ետ քաշեցին անզգայա-
ցած մարմնից, որին նա ջղաձգորեն տրորում էր։ Միայն այդ
ժամանակ նա տեսավ մեռելի պես գունատ դեմքը, որն այդքան
տարօրինակորեն նման էր իր սեփական դեմքին։ Զարմանքից
բերանը բացելով, նա տեղում քարացավ։ Բայց դա վայրկյանից
ավել չտևեց։ Կատաղությունը դեռ փոթորկվում էր նրա մեջ, իսկ
շուրջը սկսում էր մոլեգին մի մարտ։ Գլուխը կռացնելով, կարծես
պատրաստվելով նորից նետվել մարտի, նա անողոք հայացքով
նայում էր պարտված թշնամուն, որին դահլիճից դուրս էին բե-
րում, և մտածում. «Սպանել նրան, նորից ու նորից»։

Մարկին մոտեցան բեմից իջած ժուլիենը արնաշաղախ, ուռած այտով Ասյան։ Նա չէր լսում իրեն ուղղված խոսքերը։ Նվ հանկարծ մթնեց. ինչ-որ մեկը լույսերն անջատեց։ Ամբողջ դահլիճը դարձավ տեսիլային մռնչացող երախ։ Խոցելով ամբոխին, լսվեց երեք թե չորս ատրճանակային կրակոց։ Ինչ-որ մեկի ուժեղ ձեռքերը բռնեցին Մարկի արմունկները և խավարում քարշ տվին դեպի ելքը, իսկ նրա գլխի վերևում ջղային ծիծաղում էր Ասյան։ Մարկը չէր հասցրել սթափվել, երբ հայտնվեց փողոցում իր կողմնակիցների պահակախմբի հսկողության տակ։ Այնուհետև նրան ժուլիենի և Ասյայի հետ խցկեցին տաքսու մեջ։

Այդ ժամանակ վրա հասավ ներվային լարվածության թուլացում. Մարկին համակել էր անհաղթահարելի մի դող։ Ժուլիենը բռնեց նրա ձեռքից, սկսեց խոսել նրա հետ,— նա շատ խորը վշտացած է Մարկի հետ պատահած նոպայի համար, որը մի վայրկյան նրան համակել էր ինքնասպանության ծարավով։ Բայց ժուլիենը ջանում էր թաքցնել պատանի բարեկամից իր զգացմունքները և, որպեսզի Մարկը կարողանա որքան կարելի է շուտ թոթափել արյունալի վառանցանքը, խոսում էր հանգիստ ու սրտագին, ոչ մի խոսքով չանդրադառնալով անցած տեսարանին։ Իսկ Ասյան, որ նստած էր Մարկի կողքին, իր արնաողող այտով հպվում էր Մարկի այտին։ Մարկն սկսեց դողալ, երբ տանը, ննջարանում Ասյայի դեմքին արյուն տեսավ, իսկ բորբոքված շաղակրատող Ասյայի աչքերում՝ հաղթանակի ցոլք։ Ասյան միայն մտածում էր ճակատամարտի ու վտանգների մասին, որոնցից երկուսն էլ այնքան հաջողությամբ խուսափեցին։ Բայց այդ խնդությունը նրա համար հաղթանակի խնդություն էր, որն Ասյան տարել էր նրա՝ Մարկի նկատմամբ։ Մարկը դարձել էր այնպիսին, ինչպիսին Ասյան էր ուզում, բայց ինչպիսին ինքը ամենևին էլ չէր ուզում լինել։ Գործողությունը ավելի ծանր դուրս եկավ, քան միտքը։ Նա այդպիսին էր և հետագայում էլ այդպիսին էր լինելու ի հեճուկս ներքին երդումի, ի հեճուկս իրեն տված խոստումի, ի հեճուկս իր կամքին, քանի որ նրան քշեց-տարավ բռնության հեղեղը և նա գիտեր, որ նորից կարող է կապը կտրել-ուզածդ բոպեին, այսօր, վաղը, և կկտրի, ինչպես հենց նոր կըտրեց։ Նրա ձեռքերը, նրա սիրտը, նրա մտքերը այլևս իրեն չէին պատկանում, նրանք պատկանում էին այդ բարբարոսական ուժին։ Նա տնօրինում էր դրանց և հետագայում էլ պետք է տնօրինի։ Վերջում ուժասպառվելով, ինչպես պարտված, բայց չընե-

դունելով պարտության միտքը, պահել էր նա անկողնում իրեն սեղմված Ասյայի կողքին։ Նա անտարբերությամբ, առանց շարժվելու, ընկած էր Ասյայի գրկում, նա կարծես իր կողմից պարտված այն պատանի թշնամին լիներ կապտած դեմքով, որն այնքան տարօրինակորեն նման էր իր սեփական դեմքին։ Նա մտածում էր.

«Ես ինձ եմ սպանել, ինձ»։

Եվ նորից այդ գիշեր Ասյայի այրող համբույրների ներքո, տենդագինորեն վառվելով, ինչպես Ասյան, բայց հոգով հեռացած, նա աղերսում էր ճակատագրին իրեն փրկել այն բանից, ինչն արդեն մոտենում էր։ Երբ Ասյան, ձեռքերը թուլացնելով, քաց թողնց, վերջապես, իր գրկից այդ մարմինը, որին լքել էր հոգին, և քնեց, երբեմն-երբեմն ցնցվելով քնի մեջ, Մարկը, անսահմանորեն միայնակ, թեև իր կողքին, իրենց նեղ անկողնում, նա դեռ էր Ասյայի սառը նեղբաններն ու տաք ուսը, աղոթում էր, աղոթում հուսահատաբար, որպեսզի «գալիք մարտերում ճակատագիրը թույլ տա նրան զոհաբերելու իր կյանքը, և ոչ թե ուրիշների կյանքը զոհաբերել՝ մարդկային տառապանքների բեռը թեթևացնելու և ճնշվածներին պաշտպանելու համար»։

Կիսաքառանցանքի մեջ Մարկը մի հարված զգաց և հասկացավ, որ իր խորաթափանց, ոչ ոքի լսողությանը չհասնող աղոթքը տեղ հասավ։ Պայմանը կնքվա՞ծ է... Նրա սիրտը կծկվեց։ Բայց նա իր ճակատագիրն ընդունելու արիություն ուներ։ Եթե նա հավատացյալ կաթոլիկ լիներ, կասեր. «Թող կատարվի կամքը քո»։

Մարկը չափազանց հեռու էր նախապաշարմունքներից, չափազանց անողոքաբար էր ենթարկում իրեն քննադատության, նա չէր հավատա ոչ ճակատագրին և ոչ ինչ-որ անճանաչելի ուժի, որի հետ խոսակցության են բռնվում։ Նրա բանականությունն արհամարհանքով մերժում էր այդ պատրանքը։ Բայց բանականությունը միակ լծակը չէր՝ ղեկավարելու համար այն մեքենան, որը մարդն է հանդիսանում։ Արդեն վաղուց Մարկը սովորություն էր դարձրել (և փորձությունների վերջին տարիներին այդ սովորությունը արմատավորվեց) նայել հոգու այն հեռավոր խորքերը, որոնց ենթարկվում է մեր կյանքը, իսկ կյանքն իր հերթին իշխում է այդ ուժերի վրա և ոչ թե նրանցից պատասխան է սպասում, այլ ինքն է հուշում այդ պատասխանը և ինքն է ուղղություն տալիս նրանց դեպի այդ ճանապարհը, որով հե-

տագայում այդ ուժերը տանելու են նրան։ Միևնույն էակը հարց է դնում և պատասխանում այդ հարցին։ Հենց այդ էակն էլ արա-րում է իր ճակատագիրը, որովհետև ճակատագիրը նրա մոտ է գալիս, ով ինքն է ընդառաջ գնում նրան։ Ոչ ոք, բացառությամբ, թերևս, Բրունոյից, չէր տեսնում, թե որ ճակատագրին էր ընդա-ռաջ գնում այդ պատանի լուսնոտը։ Աննետան այդ ճակատագրի մասին իմացավ միայն այն բանից հետո, երբ ճակատագիրը վճռված էր։ Այդ ժամանակ միայն նա հասկացավ, որ մինչև այդ արդեն տեսել էր նրան։ Նրա հսկայական աչքերի հայելանման մակերեսի վրայով անցնում էին բազմաթիվ շղթեր, որ ուրիշները չէին նկատում։ Բայց այդ անդրադարձումներից շատերը նրա գի-տակցությունը հրաժարվում էր ընդունել։

Սակայն Աննետային անհանգստացնում էր Մարկի վիճակը։ Միտինգին տեղի ունեցած տուրուդմբոցից հետո նա ման էր գա-լիս բացակա, մտահոգ և հոգնած տեսքով։ Ողբերգական մենա-մարտը, որից հետո հակառակորդն այդպես էլ ուշքի չեկավ, իրավաբանական հրապարակում չունեցավ և ոչ մի բանով չէր սպառնում Մարկին։ Վկաները հաստատեցին, որ մեռածն ինքն էր եղել հարձակվող կողմը և ճակատագրական վախճանը տեղի էր ունեցել դժբախտ պատահականության հետևանքով, այսինքն ամբոխից ընկնելու պատճառով։ Ասյայի կռռված այրը նույն-պես վկայում էր հարձակման դաժանության մասին, որն ար-դարացնում էր ինքնապաշտպանության դաժանությունը։ Այդ պատճառով էլ հետաքննությունը դադարեցվեց։ Բայց Մարկը չհրաժարվեց մեղադրանքից, որն իր սրտում էր կրում ընդդեմ իրեն, քանի որ միայն ինքը գիտեր, որքան է ուժեղ դեպի սպա-նությունն իրեն համակած կամքը։ Ճիշտ է, նա ոչինչ չասաց, բայց հոգու խորքում իր նկատմամբ մեղադրական վճիռ կայաց-րեց։ Նա հոգնել էր ինքն իրենից, իր բոլոր գործերից ու պար-տականություններից։ Կորցրել էր աշխատանքի ցանկությունը։ Դադարել էր ջշնամական մամուլի կատաղի հարձակումներով հետաքրքրվելուց։ Նույնիսկ Ասյան ստիպված եղավ համաձայ-նել Աննետայի հետ, որ իրենց տղային հարկավոր է ժամանա-կավորապես, գոնե մի քանի շաբաթով, հեռացնել Փարիզից, կտրել սովորական միջավայրից։ Նրանք երկուսով էլ որոշեցին, որ աննահանջ Ռոգսերի դեմ ճանապարհորդությունը լավագույն դեղամիջոցը կարող է լինել։

Պատահականությունը նրանց օգնեց իրականացնել մտադրու-

ված ծրագիրը։ Միանգամայն անսպասելի կերպով Մարկն իր գրած սցենարի համար ստացավ բավական կլոր մի գումար։ Եվ Ասյան հայտարարեց, որ անհրաժեշտ է որքան կարելի է շուտ ծախսել այդ դրամը։

— Դրամը կապիտալ դարձնելն անբարոյականություն է,— ամենալուրջ տեսքով դատում էր նա,— դա չի համապատասխանում իմ սկզբունքներին։ Բայց իմ սկզբունքները թույլ են տալիս փողն ուտել, եթե ես կամ դու, մի խոսքով, եթե մենք այդ փողը վաստակել ենք։ Ուտելիքն այդ համեղ է և օգտակար հասարակության համար։

— Ես առանձնապես քաղցած չեմ,— ասաց Մարկը։— Բայց եթե դու քաղցած ես, կեր ու խմիր, աղջիկս։ Իսկ քեզ նայելով, ես, գուցե, ինքս էլ ուզեմ ուտել։ Ընտրիր, ինչ ուզում ես։ Ինձ համար միևնույն է, թե ինչ կուտեմ, միայն թե ուտեմ քեզ հետ միևնույն ափսեից։

Ասյան իրեն խնդրել չստիպեց։ Նա հայտարարեց, որ իրենք երեք ամսով դուրս են գալիս Փարիզից։ Նրա համար բավական է յոթ, նույնիսկ ամբողջ ութ տարի հալումաշ լինելն այստեղ, այս ասֆալտների մեջ— նրան հարկավոր է ջուր, ջուր, որն հոսում է սառույցների տակից, հոսում է լեռների գագաթներից, հարկավոր է կուսական ջուր, որը դեռ չի պղտորել մարդկությունը։

— Ուրեմն, դու որոշել ես,— հարցրեց նրան Մարկը,— պարզևել նրան մեր տենդը և մեր ամբողջ աղտոտությունները։

— Ամենևին,— առարկեց Ասյան։— Ես սկզբից ծունկ կչոքեմ այդ ջրի առաջ և նրանից ներում կխնդրեմ, հետո նրա մեջ ձեռքս կթրջեմ և կխաչակնքեմ բերանս ու ճակատս։

Ասյայի ընտրությունը կանգ առավ Ալպերի վրա։ Հյուրանոցներ։ «Ո՛չ մի դեպքում։ Փոքրիկ մի տնակ կվարձենք և երեքով էլ այնտեղ կապրենք ամբողջ սեզոնը»։

— Երեքո՞վ։ Կնշանակի Վանյային նո՞ւնպես վերցնում ենք։

— Վանյան հաշիվ չէ, երեխան միևնույն է թե ոչ ոք։ Երեքով— ես նկատի ունեմ քեզ, ինձ և մեր Աննետային։

Մարկը երախտապարտ էր Ասյային այն բանի համար, որ նա մտածեց իր մոր մասին և որոշեց նրան էլ վերցնել իրենց հետ։ Անմիջապես ուղևորության բոլոր առարկությունները վերացան։ Ասյայից այդ հանգամանքը չթողարկվեց, և նա ասաց Աննետային, որը ոչ անմիջապես իր համաձայնությունը տվեց ուղե-

վթարության համար, որ նրա ներկայությունը անհրաժեշտ է։ Մարկն առանց նրան ապրել չի կարող, նա պարզապես սիրահարված է իր մայրիկին— և ավելի շատ, քան կնոջը։

— Դու խանդո՞ւմ ես,— հարցրեց Աննեետան։

— Ոչ, չեմ խանդում։ Միևնույն է կովկիլն անմատույց է։ Այդ հրաշալի թուչնակին դուք տիրապետում եք ամբողջովին։ Իսկ ինձ, ինչքան էլ ուզում է ճիգ ու ջանք թափեմ, միևնույն է միայն մի փոքրիկ կաոր է հասնելու։

Թերևս, չարժի, որ այստեղ բերվեն Աննեետայի պատասխան խոսքերը։ Գալիայի կարճահեր որդեգրված աղջիկները հեռու էին նրա երևարահյուս դուստրերից։ Կարմրեց միայն Մարկը։

Նրանք խաղաղորեն ուղևորության ծրագրեր էին կազմում, երբ հանկարծ Ժորժը Վանյայի հետ սենյակ խուժեց։ Դեռ մինչև վերջը լսած, թե խոսքն ինչի մասին է, նա սկսեց գոռալ։

— Ինձ էլ վերցրեք։ Ես դայակություն կանեմ։

— Ինչ կա որ, հիանալի է,— պատասխանեց Ասյան։

Ժորժը երեխային կնայի, Աննեետան կվարի տնտեսությունը... Ասյան հիանալի կարողանում էր զուգակցել հաճելին օգտակարի հետ, իսկ այդտեղ առիթ էր ներկայացել իրենց հետ վերցնել երկու միմյանց հավատարիմ ընկերուհիների և նրանց վրա թափել ամբողջ տնտեսական ու մյուս հոգսերը։ Բայց միայն Ասյան էր, որ կարողանում էր այդքան հրապուրիչ կերպով մարդկանց երեսին նման բաներ ասել։ Ամաչկոտ Մարկը ուզում էր ներողություն խնդրել, բայց Ասյան ընդհատեց նրան.

— Չէ-չ՛, անխելք։ Ես ուզում եմ պարզապես նրանց բավականություն պատճառել։ Ժորժը մրջյունների ցեղից է։ Նրան անմիջապես թրթուր պիտի տաս, որ իմանա ում համար հոգ տանի։ Իսկ մեր մայրիկ Աննեետան դեռ շատ կաթ ունի կրծքում— է, ես էլ նրան եմ վերադարձնում իր ծծկերին— այսինքն՝ քեզ։ Ի միջի այլոց, այդ կաթը երկու հոգու էլ կհերիքի, ինձ նույնպես։

Ժորժը շատ կուզեր հանդուգն ծաղրաբանի ականջները քաշել, բայց հոգու խորքում նա ցնծում էր։ Աննեետան անկեղծորեն քրքջում էր։ Իսկապե՞ս որ։ Նա դառնում էր իսկական «մեծ մայր»— այդպիսին է առողջ կանանց, իր հասակակիցների բնազդը, որոնք այլևս արյուն չեն կորցնում և այդ արյունը կուտակում են սիրո հեղեղի հետ միասին։ Նա կարող էր դեռ տասնյակ երեխաների կերակրել։

Երբ ամեն ինչ վերջնականապես որոշված էր, Մարկը, որ

առաջ չէր պնդում, որ մեկնեն, հսկայական թեթևություն զգաց։

Նրան համակեց ընդհանուր ուրախությունը, և (երկու կինն էլ այդ նախատեսել էին) նա ավելի ազատ շունչ քաշեց այն մտքից, որ շուտով ժամանակավորապես կհեռանա Փարիզից ու նրա հոգսերով ծանրացած մթնոլորտից։ Փախչե՞ս ինքդ քեզանից։ Այդքան լարված աշխատանքից հետո նա իրավունք ուներ հանգստանալու, պարապ-սարսապ ման գալու։ Երեք-չորս ամսով մոռանալ ամեն ինչ։ Ինչ վերաբերում է ամեն կարգի տագնապներին, ոչ մի տեղ չեն կորչի և բոլորն էլ, մինչև վերջինը, կսպասեն նրա վերադարձին։ Իսկ հիմա պետք է, առանց խորհրդակցելու, վայելել այսօրվա օրը։ Նորից դառնալ երեխա... Չէ որ ինքը շատ շուտ հասունացավ, շատ շուտ նրա մանկությանը փոխարինելու եկավ վաղաժամ և տանջալից դժվարություններով լի կյանքը։ Ուրեմն, որքան կարելի է շուտ պետք է լրացնել կորցրած ժամանակը։

Ժան-Կազիմիրը մեկնելու նախօրեին մի րոպեով նրանց մոտ անցավ՝ Մարկին տեսնելու համար,— նա երբեք իր ընկերոջ դեմքն այդքան երջանիկ չէր տեսել։ Երբ հյուրին ճանապարհորդության մասին հայտնեցին, նա դրա նկատմամբ արտահայտեց իր հավանությունը, որն ի միջի այլոց ոչ ոք չէր էլ հարցնում, և տեսքն էլ հազվադեպորեն գոհունակ էր։ Մարկն ու Ասյան տեղեկացան, թե նա ինչո՞ւ է այդպես ցնծում։ Ժան-Կազիմիրը ոչինչ չէր բացատրում, բայց հայտարարեց.

— Հիանալի՜ միտք է։ Շատ լավ է, որ քո մասին կմոռանան։

Ասյան նրան մի կողմ տարավ և հարցրեց.

— Ձեզ որևէ բան հայտնի՞ է։ Կնշանակի, ինչ-որ վտա՞նգ գոյություն ունի։

— Դուք ինքներդ պետք է հասկանաք,— պատասխանեց Ժան-Կազիմիրը, սևեռուն նայելով Ասյային,— որ այն արհեստը, որով դուք Մարկին հարկադրում եք զբաղվել, այնքան էլ հանգիստ արհեստներից չէ։

Ասյան վրդովվեց.

— Ո՞նց թե «հարկադրում եմ»։ Նա ինչ ուզում, այն էլ անում է։ Անում է այն, ինչ պետք է անի։ Ես էլ եմ այն անում, ինչ ուզում եմ։

— Այդ արդեն ինչպես ուզում եք։ Գերադասում եմ չվիճել գումարելիների տեղերի մասին։ Դրանց գումարը չի փոխվում։

Ասյային դժվարությամբ հաջողվեց ետ պահել իրեն նոր

հարձակումից, թեև նրա ձեռքերը քոր էին գալիս (աստվա՜ծ իմ, որքա՜ն էր այդ կազմիրը կատաղեցնում իրեն), բայց պետք էր դուրս քաշել այն ամենը, ինչ նրան հայտնի էր, և Ասյան ամենահակախարդիչ ժպիտով արտասանեց.

— Ուրեմն, ձեր կարծիքով, Փարիզն հիմա այնքան էլ անվտանգ տեղ չէ՞ Մարկի համար։

— Ոչ միայն Փարիզը։ Զգոն եղեք։

Նա խոսում էր արդեն առանց հեգնանքի։ Բայց Ծաղրանքի ղենքը ձեռքն առավ Ասյան— այդպես հեշտ էր խոսակցությունը շարունակել։

— Էհ, դրա համար նրանք չափազանց վախկոտ են։ Երկու շաբաթվա բացակայություն և վերջ։ Փարիզում շուտ են մոռանում։

— Հաշվապահությունը չի մոռանում։ Ելք ու մուտք։ Բոլորն էլ անցկացված են համապատասխան այունակների մեջ։

— Ոչինչ, մենք հաշիվները կարգի կբերենք վերադարձից հետո,— խոսք տվեց Ասյան,— ես նույնպես մուրհակ ունեմ։

Եվ նա ցույց տվեց այտը հատող սպին։

— Հաշիվներն արդեն մաքրված են,— առարկեց Ժան-Կազիմիրը։— Եվ ձեր մուրհակը կարող է անցնել միայն Փարիզում։ Իսկ ձեր բոլոր պարտքերը ձեզ հետևելու են ամենուրեք, ուր էլ ուզում է գնաք։ Դուք, ըստ երևույթին, վատ գիտեք ձեր վարկատուների միջազգային կոնսորցիումը։

Ասյան ուսերը թոթվեց։ Այդ կեցվածքամոլը երևակայում է, թե իրեն կհաջողվի Ասյային վախեցնել... Ժան-Կազիմիրը այլևս չհամառեց։ Թող իրենք այդ կապանքներից դուրս գան։ Ամեն մեկն իր համար։

Ինչքա՜ն ուրախ և անհոգ էին հեռանում Փարիզից նրանք— չորսն էլ, ազատ ու երջանիկ։ Նրանց թվում էր, թե իրենք այստեղ թողնում են հոգսերի ծանր մի բեռ, անցյալի բոլոր մռայլ տավերները։ Եվ արտով ամենաերիտասարդը Աննետան էր։ Նա երանություն էր զգում իր երեխաների կրկին գտած երջանկությունից և այն բանից, որ նրանք բոլորն էլ միասին, ինչպես դպրոցականներն արձակուրդի ժամանակ, ճանապարհորդության են դուրս եկել։ Սկզբում նրան տանջում էր խիղճը— թե ինչն ինչպես համաձայնեց մեկնել, բայց հիմա նա չէր կարողանում թաքցնել իր ուրախությունը, որ թույլ տվեց համարյա զորով իրեն տանեն Փարիզից։ Աննետան անկեղծորեն այդ խոս-

տովանեց և, նայելով նրա շողշողացող դեմքին, Ասյան խորամանկորեն ժպտում էր։ Աննետան նկատեց հարսի ծաղրական հայացքը։

— Այդ ինչ է, դու ձե՞ռ ես առնում ինձ, ինչ է։

— Ես ձեզնով հիանում եմ։

— Դա միևնույն բանն է...

— Դուք այնպիսի տեսք ունեք, կարծես նորից եք սկսել ձեր կյանքը։

— Ես նորից եմ սկսում ապրել ամեն առավոտ, ձեզ հետ միասին, որ կյանք եք սկսում։

— Իհարկե, ոչ միայն մեզ հետ...

— Բա ինչպե՞ս...

— Ինչ սկսելուն է վերաբերում, դուք այն սկսում եք, բայց միայն ձեզ համար։

— Վախենում եմ, որ դու ճիշտ ես ասում... Ապա ասա, դա ամո՞թ է իմ տարիքի համար։

— Ամենևին։ Ես էլ կուզեի ձեր տարիքին այդպես լինել։ Միայն թե չգիտեմ, կհաջողվի՞ արդյոք։ Ես պարզապես նախանձում եմ ձեր աչքերին... Ձեր աչքերը կարծես նորահարսի աչքեր լինեն։

— Դու խելքդ բոլորովին թոցրե՞լ ես,— բացականչեց Աննետան, գոհունակ ու ամոթահար։

— Ոչ, դուք եք թոցրել։

— Երկուսդ էլ թոցրել եք,— ճշտեց Մարկը։

— Ես էլ եմ թոցրել,— վրա բերեց Ժորժը։

Եվ իսկապես, չորսն էլ կարծես խելքները թոցրել էին։ Beata Stulticia[1]։ Մեր չորս ցանցառներն էլ երջանիկ ծիծաղում էին։

Լույսը բացվում էր։ Աննետան այդպես էլ ամբողջ գիշերը նստեց կուպեի անկյունում։ Նրա ուղեկիցները քնել էին։ Երբ գունատ արշալույսը ներկեց սարահարթի ալիքաձև եզրերը, Աննետան հառաչեց. «Արդե՜ն»։ Նա ուզում էր, որ այդ գիշերը երբեք չվերջանա։ Բոլորը, ում նա սիրում էր, այդտեղ էին, նրա կողքին, նրա թևերի տակ։ Նրա որդին, սեղմված կոպերն առանց բացելու, քնկոտորեն գլուխն իջեցրեց մոր ուսին։ Աննետան խոնարհվեց երիտասարդ ճակատի վրա, որին արդեն իր ճանկերով

---

1 Երջանիկ հիմարություն (լատ.)։

հպվել էր հոգսը, և չանում էր կարդալ անուրախ օրերի այդ գիրքը։ Որքա՜ն գաղտնիքներ կան այնտեղ գրված... Ա՜խ, եթե հնարավոր լիներ իր վրա վերցնել նրա վերքերը... Նա տեղից փոքրինչ մոտ շարժվեց, ուսը քնածի գլխի տակ դրեց։ Մարկի աչքերը բացվեցին, և սուվերը, որը նրա դեմքին մռայլություն էր տալիս, անհետացավ։ Մարկը տեսավ միայն այն շրթունքները, որոնք համբույրով հպվել էին իր ճակատին, և ժպտաց։ Գլուխը մոր ուսից չբարձրացնելով, նա ցածր ձայնով ասաց.

— Ահա և մեր ճանապարհորդության առաջին գիշերը։

— Ոչ, առաջինը չէ, ուրիշ գիշերներ էլ են եղել,— շշնջաց Աննետան։

— Այդ ե՞րբ։

— Երբ դու դեռ ծնված չէիր։

— Իսկ ո՞ւր էինք մենք գնում։

— Ես դաշտերն էի գնում՝ քեզ ծննդաբերելու համար։ Ես վազում էի...

— Ինչպես Իո հո՞րթը։

— Ոչ, ինձ բոռեխներ չէին կրծում։ Իմ երջանկությունն իմ մեջ էր, իմ արգանդում։

— Լա՜վ ժամանակ է եղել,— փաղաքշող ծաղրով ասաց Մարկը։

— Այո, քեզ համար ամենևին ոչ վատ։ Դու պարում էիր։

— Շատ ուրախ եմ դրա համար։ Իսկ դու ի՞նչ էիր անում։ Երգո՞ւմ էիր։

— Գլխի ընկար... Երգում էի ժաննա դ'Ալբրեի իմ հիմնը։

— Արի սկսենք, հա՞։

— Ի՞նչ սկսենք։

— Ավետարանն ըստ Մարկոսի։

— Եվ ոչ մի տող բաց չթողնենք, լա՞վ։

— Բոլոր գլուխները չեն, որ հավասարապես լավն են, իմ պատճառով դու հաճախ ես ողողվել արյունով։

— Բայց չէ որ ես ինքս եմ քեզ ճիրաններ տվել։

— Ի՜նչ երջանկություն է, որ այս դաժան կյանքում մենք այնուամենայնիվ հանդիպեցինք։

— Եվ դու դա հանդիպո՞ւմ ես համարում։ Իմ սրտի հատի՜կ։

— Իսկ որտեղի՞ց է հատիկը։

— Չգիտեմ։ Ես յուրացրի այդ հատիկը, և ուրիշ ոչինչ։

— Իսկ ի՞նչ կլիներ, եթե քամին առներ ինձ ու տաներ մի ուրիշ դաշտ։

— Բայց քեզ չէր հաջողվի այդքան հեշտ դուրս պրծնել։ Ես քեզ կպատրաստեի ուշածոծ հատիկից։

— Ցորենը քիչ է, որովհետև շատ։

— Շատ են կակաչներն ու կապույտ տերեփուկները... Այնքան էլ ուտելու բան չեն։ Բայց դա իմ փունջն է։

— Մամա... Ոչ, մորից ավելի,— ընկերուհի։ Մեր երկուսի մեջ կա այն, ինչ դու տվել ես ինձ— խելագարությանը խառնված բանականությունն։

— Ով հիանալի՜ է։ Մի՞թե մենք կարող ենք ապրել առանց դրան։ Անարև տարիներին մեզ լույս են տալիս կակաչներն ու կապույտ տերեփուկները։

— Դու իրավացի ես։ Եթե ես հարյուրավոր անգամ չեմ սուզվել հատակը, եթե հուսահատությունն ու ամոթը քարի նման ինձ չի քաշել դեպի հատակ, ապա լոկ այն պատճառով, որ ես մի ժամանակ պարել եմ քո արգանդում։

— Դու դեռ հիմա էլ ես պարում վագոնի ճոճմանը համապատասխան։ Ուրեմն, արի պարելով վաննենք մեր վշտերը, տղաս, ինչպես մժեղները արևի այրան մեջ։

Առաջին շողը սահեց քրտնած լուսամուտի վրայով։

Մարկը նստեց, և նրա պայծառ աչքերը իրենց մեջ առան մոր այտին ընկած արևի շողքն ու հովտում բացվող նոր օրը։

— Մժեղներին ընդամենը կյանքի մի օր է տրված,— ասաց Մարկը։— Պարելը պարել է, ուրեմն, արի պարենք։

Առավոտից իրիկուն ժորժն ու Ասյան լեռներում վազվզում էին։ Ժորժին տանջում էին երկու հավասարապես ուժեղ կրքեր— Վանյայի սերն ու սպորտի սերը, բայց վերջ ի վերջո ժորժը Վանյային զիջեց Աննետային, որն աղջկանն ազատելու համար բազմաթիվ անգամ առաջարկել էր փոքրիկի հոգսերն իր վրա վերցնել։ Ժորժը փոքր-ինչ ամաչում էր, բայց ինչ կարող ես անել։ Նրա ոտքերը, նրա կուրծքը, նրա ամբողջ մարմինը, նա ինքն ամբողջությամբ անխոնջ, ինչպես մորուկը, ձգտում էր դեպի լեռնագագաթները, դեպի արևը, դեպի վազքը։ Աննետան չէր տրտնջում իր պարտավորությունից։ Սկզբում նա նույնպես փորձեց մասնակցել նրանց զբոսանքներին, չմտածված կերպով հույս դնելով ալպինիստուհու իր նախ-

կին սխրանքների վրա։ Բայց սիրտը չհապաղեց հիշեցնել, որ առաջվա և այսօրվա միջև մի ամբողջ կյանք է անցել։ Դժվարին վերելքի կեսին կարծես Աննետային խոցեց նետը, և նա ստիպված եղավ կանգ առնել։ Աննետայի շունչը կտրվում էր, բայց չէր ուզում, որ իր երեք ուղեկիցները նկատեն այդ։

— Դե երիտասարդներ, առա՛ջ։ Իսկ ես ձեր հետևից կգամ։

Թող մտածեն, թե ինքը կանգ է առել լեռնային ծաղիկների փունջ հավաքելու համար։ Իսկ ժայռեր մագլցող երիտասարդները ծիծաղով անցան առաջ։ Աննետան նստեց գարիթափի եզրին, քրտինքից ամբողջովին թաց, և դրա հանցավորը այնքան դիք վերելքը չէր, որքան սրտի հանկարծակի թուլությունը։ Շնչառությունը կամաց-կամաց հանդարտվում էր, և Աննետան, մատները սեղմելով կոկորդի տակի զարկերակին, ջանում էր հայտնաբերել թշնամուն, որը թաքուն մտել էր իր ճամբարը։ Կամա թե ակամա ստիպված էր ճանաչել իր սահմանները։— նրանց մասին արդեն մի անգամ չէր, որ հիշեցնում էին հիվանդությունները, հաճախակի դարձող գրիպները։ Բայց Աննետան չէր ցանկանում դրանք հաշվի առնել, նա ինքն իրեն կրկնում էր.

«Ժամանակավոր նահանջ է, միայն ժամանակավոր։ Ժամանակ տվեք, նոր կազդուրվեմ, նորից կնվաճեմ Հռենոսի իմ սահմանները»։

Իսկ հիմա նա հարկադրված էր համաձայնել, որ պետք է նահանջել իր սահմանները։ Բայց ո՞ւր։ Եվ ինչքա՞ն հեռու։ Եվ կհաջողվի՞ դրանք հետագայում պահպանել։ Նույնիսկ այդպիսի կրճատված տեսքով։ Ֆրանսիական կամպանիա[1]... Եվ վաղ թե ուշ հրաժեշտը Ֆոնտենբլոյում[2]... Ծաղրական ժպիտը փոքր-ինչ բարձրացրեց նրա ծանր շնչող կիսաբաց բերանի անկյունը— ահա թե ինչպիսին է նա՝ «Աննետայի Իլիականը»։ Վերջ ի վերջո բոլոր իլիականներն արժեն մեկը մյուսին։ Ահա այս մրջյունի նման, որը մագլցում է լանջն ի վեր, Աննետան նույնպես քարշ էր տալիս խոտի իր ցողունը... Ո՞ւր և ինչո՞ւ։ Քարշ էր տալիս, նույնիսկ իր առաջ այդ հարցը չդնելով։ Որովհետև ուրիշ միտք չկար, բացի մեկից. չլինի թե հանկարծ գայթի իր բեռի տակ... Բայց ամենազվարճալին այն է, որ հիմա, երբ արդեն շատ քիչ

---

1 Նապոլեոն 1-ի վերջին կամպանիան, որ 1814 թ. ուղղված էր կոալիցիայի զորքերի դեմ։

2 Ֆոնտենբլոյում Նապոլեոն I հրաժեշտ տվեց զորքերին, երբ իրեն ուղարկում էին էլբա կղզին։

տեղ է մնացել տանելու, դու դեռ վշտանում ես. վերջ։ Այնքան շուտ վերջը եկա՞վ։

Աննետան դանդաղ իջավ մինչև ճանապարհի ոլորանը, որտեղ մի հարյուր մետր ավելի ներքևից երևում էր արևով ողողված փոքրիկ մի շալե։ Նա նստեց տաք խոտերի վրա, ծնկները վեր բարձրացրեց ու գրկեց ձեռքերով։ Հովտից եկող անորոշ հռնդյունի, գետակի աղմուկի, զանգակների բվվոցի ֆոնի վրա նա համարյա իր կողքին լսում էր մանկական մի ձայն. դա Վանյան էր, որ հաստ ոտքերի վրա օրորվելով, վազում էր հավի ծվծվան ճուտերի հետևից։ Եվ մի կարճ ակնթարթում ամեն ինչ խառնվեց նրա սրտի մեջ։ Որտե՞ղ է նա։ Ո՞վ է նա, տատիկ, մա՞յր, թե՞ դեռ ինքն է երեխա։ Բավական է արդեն և այն, որ, հասնելով ճանապարհի վերջին, դու իրավազոր ես նորից կրկնելու այդ ամբողջը, գիտես այդ ճանապարհը բերանացի և ամեն ինչից բավականություն ես ստանում։ Քեզ այդ չի տրվում ճանապարհի սկզբին։ Նա այնքան լիակատար բավականություն էր ստանում, որ սկսեց ճանապարհի կեսին ինչ-որ տեղ ոտքը կախ գցել. իրեն տեսավ ճիշտ այն ձևով, ինչպես որ կար երեսուն տարի առաջ։ Ստինքների ծայրերն այրվում էին։ Դա նրա երեխան էր խաղում այստեղ իր ոտքերի մոտ։ Նա մոռացել էր, որ ընդամենը մի րոպե առաջ ցավը հիշեցրեց նրան ապրած գնացած տարիների մասին։ Եվ իզուր էր ժամանակը ձգում իր օղակաթոկը։ Նա բնականորեն ձգտում էր երիտասարդության։ Եվ այդ հաշվով չէր խաբվում...

«Այո, գիտեմ, ինքս էլ ամեն ինչ գիտեմ... Բայց աչքերս փակում եմ... փախչում եմ հեռու»։

Աչքերը լայն բացած, ցրված ականջ դնելով որոճից ու բոդից նեկտար հավաքող մեղուների բզզոցին, Աննետան առանձնապես չէր էլ ջանում կարդալ իր երազանքների գաղտնի իմաստը։

Այդ երազանքները կարդաց ուրիշը, առանց թույլտվության։ Մարկն սկսեց անհանգստանալ, չլինի թե մորը բան է պատահել։ Եվ մինչ իր ուղեկցուհիները շարունակում էին վերելքը, ինքը ցած իջավ։ Աննետան քայլերի ձայն լսեց։ Մարկը կանգ առավ, որպեսզի նայի մորը։ Նա հանկարծակիի բերեց նրան, եվ Աննետան իրենից անկախ մատնեց մի ուրիշ Աննետայի գոյությունը, բայց, որքան էլ այդ փոփոխությունը անսպասելի լիներ, Մարկն այնուամենայնիվ ճանաչեց մորը, նրան, որն ապ-

րում էր իր մանկական հիշողությունների լուսապսակների մեջ։ Նա մոր աչքերով տեսավ երեխային, տեսավ այն հասակում, ինչ հասակում ինքն էր գտնվում հիմա... Բայց լուսավորումը շարունակվեց ընդամենը մի ակնթարթ. այդ երազող կինը, կարծես վեցերորդ զգայարանով նախազգուշացված, հանկարծ շրջվեց, նրա դեմքի վրայով սահեց բերկրալից զարմանքի սուվիլը, և ծիծեռնակի նման սրընթաց նա վայրէջք կատարեց իր այսօրվա օրը։ Մարկի առաջ նորից իր մայրն էր։ Նա նստեց մոր կողքին, և սկիզբ առավ սրտագին մի զրույց։ Սակայն Մարկը չէր մոռացել այն, ինչ կատղացել էր հենց նոր այդ չինչ աչքերում, կիսաբաց շրթունքների կորագծի մեջ. միամիտ երազանքը, անցած-գնացած գարնան կոչը։ Եվ Աննեատան, աղոտ կերպով զգալով, որ իրեն տեսան ամբողջովին ինչպես առվակում լողացող լողվորուհու, չբողոքեց (չարիքն արդեն կատարված էր),— նա նստել էր սիրալիր ու շփոթահար տեսքով. թվում էր, թե որդուց ներում է խնդրում.

«Գարշելի տղա, չհամարձակվես նայել։ Դու ինձ տեսար։ Ների՛ր։ Ներիր»։

Զրույցն ընթանում էր ամենասովորական տնային գործերի մասին, սահում էր ինչ-որ տեղ բարձր նրանց մտքի նվիրական խորքերի վերևում։ Բայց երկուսի համար էլ անհայտ պատճառով սովորական հարաբերակցությունը խիստ փոխվեց։ Նրանց երկուսից Աննեատան ավելի երիտասարդն էր, իսկ Մարկն ավելի մեծը։ Թվում էր, խորհրդավոր փոփոխություն է տեղի ունեցել, և այդ փոփոխությունը հաշիվն հավասարեցրեց։ Երկուսն էլ հանկարծ զգացին, որ իրենք հավասար զույգեր են և ընկերներ. Աննեատային չզարմացրեց այդ հանկարծակի ծնված եղբայրությունը։ Բայց Մարկը լուռ էր, նա շփոթված էր։ Հանկարծ Աննեատային նույնպես համակեց շփոթումունքը. նա հասկացավ, որ որդին հիմա ուր որ է ինչ-որ մի գաղտնիքի կդիպչի։ Բայց Աննեատայի՞, թե՞ իր գաղտնիքին։ Եվ երբ հասունացած տղան ձեռքը դրեց մոր ձեռքի վրա, ներքին թեթև դողը հուշեց Աննեատային, որ խոսքը իր մասին է լինելու։ Մարկն սկզբից կմկմաց, իսկ հետո շատ հանգիստ արտասանեց.

— Մամա, դու ինչո՞ւ չես ամուսնանում։

Աննեատային կարծես կրակն այրեց։ Նա ամեն ինչ սպասում էր, բացի այն բանից, որ իր գաղտնիքը բացվելու է։ Ի՞նչ գաղտնիք։ Ո՞ւմ գաղտնիքը։ Գաղտնիք նույնիսկ իր համար։ Աննեատան

ամբողջովին կծկվեց. մյուսը կարդաց միտքը, խլացած, արդեն մեռած, ինչպես Աննետային թվում էր,— այդ գաղտնիքն ինքը հայտնեց հայացքով։ Նա գլուխը կախեց կոահման ծանրությունից ճնշված։ Նա ուզում էր նրան ափերի մեջ առնել։ Բայց չէր կարողանում շարժվել։ Մարկն աչքերը մորից չհեռացնելով, զգաց նրա մեջ տեղի ունեցող խռովքը։ Մարկը քնքշորեն գրկեց մորը։ Աննետան սեղմվեց որդուն, թաքցնելով աչքերը, ի վիճակի չլինելով ոչ մի բառ արտասանելու։ Եվ հենց ինքը լռելը խոստովանություն էր։ Ի՜նչ երիտասարդ էր Աննետան, ինչքա՜ն սրտաշարժ էր նրա շփոթմունքը։

— Ների՛ր ինձ,— ասաց Մարկը։

Գլուխն առանց բարձրացնելու Աննետան պատասխանեց.

— Ես ամաչում եմ. մի՞թե իմ մեջ կարելի է այդպիսի մտքեր կարդալ։ Բայց դու սխալվում ես։

Մարկն ուզեց նրա գլուխը մի փոքր բարձրացնել.

— Ասա ինձ նայիր։

Բայց Աննետան «չէ» ասաց և ավելի ամուր սեղմվեց որդու ուսին։ Մարկը ժպտաց և արտասանեց, շոյելով մոր գլուխը.

— Մի՛ ամաչիր։ Ի՞նչ ամաչելու բան կա այդտեղ։ Նա քեզ սիրում է։ Դու սիրում ես նրան։ Մենք նույնպես սիրում ենք նրան։ Նա արժանի է քեզ։ Նա մեր բոլորից լավն է։

Աննետան գլուխը բարձրացրեց և նայեց որդուն։ Ամոթի կարմրությունը դեռ չէր անցել երեսից, բայց դիմագծերը դարձել էին հանգիստ, հաստատուն.

— Այդ ո՞ւմ մասին ես ասում։ Ես քեզ չեմ հասկանում, սիրելիս։ Դու չես կարող իմանալ... Չէ՞ որ դու Բրունոյի մասին էիր խոսում։

— Ա՛պա էլ ո՞ւմ։

— Ոչ, դու չգիտես... Թթե ես նույնիսկ որոշեի ամուսնանալ, ես կամուսնանայի ոչ թե Բրունոյի հետ։

— Դու նրան չե՞ս սիրում։

— Թթե անգամ սիրեի։

— Ոչինչ չեմ հասկանում։

— Եվ մի՛ էլ հասկանա։ Դռնի մի կոբեկի չափ գաղտնիք թող ինձ։ Մարդն առանց ստվերի չի կարող ապրել, թեկուզ և ամենաթեթեև ստվերի։

Մարկը լուռ էր։ Նա ամեն ինչ հասկացավ։ Աննետան գլխի

ընկավ, որ նա հիմա նորից կսկսի խոսել։ Ձեռքով նա փակեց Մարկի բերանը։

— Լռիր, սիրելիս։

Բայց Մարկը համառում էր.

— Այն դեպքում ամուսնացիր երկրորդի հետ։

— Ոչ, չեմ ուզում։

— Իսկ ինչո՞ւ։

— Հենց այնպես, չեմ կարող... Էհ, բավական է։ Լսելն անգամ ծիծաղելի է։ Ձեր կին, և հանկարծ...

— Դու նույնքան երիտասարդ ես, որքան ես, ինձանից շատ ավելի երիտասարդ։

— Էի։ Իսկ հիմա իմ ժամանակն անցել է։

— Ճիշտ չէ։ Որոշ սրտեր դեռ քսան տարեկանում են մաշվում։ Իսկ քո սրտի համար— կյանքն ամեն օր ավելի ու ավելի է նոր։ Ամեն առավոտ դու սկսում ես քո ուղին։

— Ո՜չ։ Ո՜չ։ Ես ամենևին էլ չեմ ուզում դառնալ Հավիտենական հրեան, որը դարեր շարունակ քայլում ու քայլում էր... Բավական է, տանջվել-վերջացրել եմ։ Բավական է, սիրել-վերջացրել եմ...

— Կնշանակի դու հրաժարվո՞ւմ ես մեզանից։

— Ոչ, ձեզանից ես չեմ հրաժարվում։ Հիմա ես միայն մի իրավունք ունեմ— իմ երեխաների վրա ունեցած իրավունքն է դա։

— Դա բավական չէ։

— Բավական չեն իմ Մարկն ու նրա կապի՞կը։

— Ոչ, բավական չեն։ Չէ որ երիտասարդները որսի են գնում և Աննետային թողնում, ինչպես այսօր թողին, լեռան տակ։

— Եե՞ղճ Աննետա։ Ինչ արած, նա կսպասի... Վա՜ղ տվեք, փոքրիկներս։ Ամեն մարդ իր հերթն ունի։

Մարկը ձեռքը դրեց մոր ուսին։

— Աննետա,— դուրս թռավ հակառակ իր կամքին Մարկի շուրթերից, և նա նույն րոպեին ամոթահար ուվելացրեց.— Ներիր, մամա։

Բայց Աննետան պատասխանի փոխարեն միայն քրքջաց.

— Այդ ձևով նույնպես վատ չէ։ Դու դարձել ես ընտանիքի իսկական հայր։

Մարկը հուղված լռում էր։ Հետո հաստատակամորեն սկսեց խոսել.

— Դե լավ, թող լինի՝ Աննետա։ Իմ կարծիքով, սոսկալի անարդարացի է, որ կյանքը կանգ է առնում մանկական սենյակի շեմին։ Իսկ եթե նա ամբողջովին լցված է ուժերով, ինչպես քունը, ապա այդպիսի կյանքը ճնշելը պարզապես հանցագործություն է։ Ինձ թվում է, թե ես մարդասպան եմ։ Նայիր, թե ինչպես է ստեղծված բնության մեջ. երբ թռչունների ձագերը սովորում են թռչել, հայրն ու մայրը նոր թռիչքի են ելնում։ Դու ստեղծված չես հավիտենական ուրիշի օջախի մոտ նստելու համար։ Իմ օջախը քեզ է պատկանում։ Բայց քեզ համար ստեղծիր քո սեփականը։ Եվ թող դա իմը լինի։ Թույլ տուր ինձ քեզ օգնելու, որ նորից սկսես ապրել անկախ կյանքով։

— Ինչ լինի-չլինի, իսկ անկախություն ես ունեմ, մի վախեցիր։ Եվ, իմ թանկագին տղա, ես ոչ ոքի օգնության կարիքը չեմ զգում՝ անկախ լինելու համար։ Թեև, ես ավելի շատ նրա օգնության կարիքն եմ զգում, ով կարող է վերցնել իմ անկախությունը։

— Ահա, տեսնո՞ւմ ես, դու ինքդ ես այդ խոստովանում։ Դու սիրում ես...

— Քեզ,— շարունակեց Աննետան շրջվելով։

— Ստախո՞ս։

— Ես ստախո՞ս։ Ե՞ս,— պոռթկումով բացականչեց Աննետան ափերի մեջ սեղմելով որդու դեմքը։

— Ինչ խոսք, դու ինձ, իհարկե, սիրում ես։ Իսկ եթե սիրում ես, ուրեմն ինչո՞ւ չես ուզում ինձ հետ մինչև վերջն անկեղծ լինել։

— Ախր ես քեզ խոստովանելու բան չունեմ։ Մի տես թե ինչ անհամեստ ես, ամեն ինչ նայել, ամեն ինչ գիտես։

— Իսկ եթե ես միևնույն է գիտեմ, ուրեմն խոստովանիր։

— Ասենք, ինձ թվում է, ես առանց այն էլ ամեն ինչ արդեն խոստովանել եմ։

Նրանք մի րոպե լուռ նայում էին միմյանց։ Հետո Մարկը հարցրեց, ձայնը ցածրացնելով.

— Այդ դեպքում, ի՞նչն է քեզ խանգարում։ Դու վախենում ես երկուսից մեկին ցա՞վ պատճառել։

Աննետան շարժումով հրամայեց Մարկին լռել։

— Բավական է, Մարկ, հերիք է։ Այդ մասին պետք չէ խոսել... Դուցե հետո, մի երկու-երեք ամիս անց, ես ինքս քեզ ասեմ։ Ինձ անհրաժեշտ է մտածել մենակ։ Ես քեզանից ամա-

չում եմ։ Բայց ինձ համար թանկ է նույնիսկ այդ ամոթը, չէ՞ որ դու ես դրա պատճառը... Շնորհակալություն, որ դու ինձ ստիպեցիր ճիշտ հասկանալ իմ զգացմունքները։

Նրանք նստել էին կողք-կողքի և լուռ նայում էին ներքևում տարածված հովտին։

Վերջապես Աննետան արտասանեց.

— Իմ մե՜ծ որդի։

— Գիտե՞ս ինչ,— արձագանքեց Մարկը։— Ես դժվարությամբ զսպեցի ինձ, որպեսզի քեզ չասեմ «իմ փոքրիկ», իմ կրտսեր քույրիկ։

— Ինչ կա որ, ես իսկապես էլ կրտսեր եմ,— ասաց Աննետան։— Երբ ծերանում ես, դառնում ես ավելի փոքր։ Իսկ դու մեծացել ես։ Հիմա դու ես ավագը։

— Որ այդպես է, հենվիր ինձ։

Աննետան հենվեց։ Նրանք ականջ էին դնում աճող դղրդոցին— հովտով անցնում էր գնացքը։

— Ինչ լավ է ապրել մինչև այն րոպեն, երբ այդեն ոչ մայր կա, ոչ որդի, այլ միայն քույր ու եղբայր են, և քույրը եղբորն ասում է. «Դու ես գլխավորը։ Հիմա քո հերթն է ինձ առաջնորդել»։

Մարկը բռնեց մոր ձեռքը։ Այդ րոպեին—ներքևից լսվեց պատարագի կանչող զանգերի դողանջը,— նրանք երկուսն էլ հանկարծ շատ սուր զգացին, որ պատույտը, իրենց կյանքի պատույտը մի տեսակ արդեն ավարտված է։ Նրանց վրա թափվում էր անամպ օրվա խոր լույսը... Բայց ավելի անդին, այդ օրվա հետեվից, վրա էր հասնում գիշերը։ Քանի որ այդ ակնթարթի հետեվում նրանք չէին տեսնում փոխարինելու եկող օրերի շարքը։

Եվ այն, որ տեսանելին ընդհատվեց, տագնապով, անհայտ, մոտիկ դժբախտության կանխազգացումով լցրեց նրանց սրտերը։ Բայց նրանք ոչինչ չասացին միմյանց ու, ևս մի քիչ բարձունքով գնալուց հետո, իջան դեպի տուն։

Սլանում էին երանելի օրերը, օրերը վստահության, օրերն անկեղծ զեղումների, և դրանք իրենց նմանը չունեին։ Հիմա մայր ու որդի լայնորեն բացեցին լռության դռնակը, հրաժարվեցին կեղծ բարոյականության բոլոր պատնեշներից։ Նրանք եղբայրաբար միմյանց առաջ բացում էին իրենց այն բոլոր գաղտնիքները, որոնք մինչև հիմա զգուշանում էին հաղորդել։ Եվ երկուսն էլ ուրախ էին մյուսի մեջ հայտնաբերել իրենց սե-

փական թուլությունները, սեփական պոռթկումները, կյանքի խորհրդավոր հոսանքները։ Եվ շատ առեղծվածներ, որ նրանց առաջ էր դրել ճակատագիրը և շփոթի էր մատնում նրանց տարբեր ձևով, առեղծվածներ, որոնց համար ամեն մեկը սուսուփուս կշտամբում էր իրեն, դարձան ավելի հստակ և ավելի պարզ, և նույնիսկ բոլորովին բթացրել էին իրենց խայթն հիմա, երբ Աննետան և Մարկը եղբայրաբար իրենց միջև բաժանեցին նրանց բեռը։ Նրանք ժպիտով խոստովանում էին իրենց անշրջահայացությունը, իրենց մոլորությունները, երկուսի համար ընդհանուր սերը դեպի կրակը, դեպի ռիսկը, սեր, որին ենթարկվելով, նրանք երկուսն էլ հաճախ են ի վնաս իրենց գնացել վտանգին ընդառաջ և այրվել, կպչելով «վտանգավոր հոգիներին»։ Երկուսն էլ ստիպված էին խոստովանել, որ նրանց համար ավելի թանկ էին այդ այրվածքները, քան իրենց ծանոթների թվին պատկանող բարեվարք մարդկանց սիրտխառնելու չափ հանգիստ ջերմությունը։ Նրանք միահամուռ կերպով նախատում էին այդ «բարեվարք մարդկանց» նկատմամբ ունեցած իրենց սառնությունը»... Նրանք այդ մարդկանց հարգում էին... Հարգում էին... Ախ այդ «բարեվարք» մարդի՜կ։ Նրանք նման են Ռոլանդի զամբիկին։ Անչափ հնչաշալի զամբիկ, առանց մի թիթույնի։ Բայց, ավաղ, սատկած։ Եվ նրան հարություն տալու ոչ մի հույս չկա։ Կյանքի թթխմոր, ընդվզում— ահա թե ինչ չունեին նրանք։ Այդ բարի հողում, որը վերշնականապես ուժասպառ է եղել, ոչ մի բան չի աճի։ Նրան կյանք վերադարձնելու համար հարկավոր է պարարտանյութ և գութան, «վտանգավոր հոգի» և ընդվզումի խոփ։ Հարկավոր է ծայրեծայր հերկել և վերահերկել, խոփի ամբողջ խորությամբ, այդ անպտուղ ազնվության տխուր դաշտը և նրա մեջ թափել սերմերի շիվնդը, նրա մեջ գցել տաք հատիկը, որը, կյանք տալով, մեռնում է։ Բայց դա հնարավոր է միայն այն ժամանակ, երբ դու ոչ միայն գութանի խոփ ես, այլև հատիկ...տալ սեփական մարմինը։ Տալ սեփական մահը...

Մարկը ոչ միայն հավատում էր, դիտեր, որ տալիս է իր մահը, նրա մեջ ապրում էր այդ չգիտակցված վստահությունը, որտեղ խառնվում էին ցանկությունն ու սարսափը (ոգին ընդունում էր, երիտասարդ մարմինը դիմադրում էր)։ Աննետան գըլխի էր ընկնում, թե ինչ մտքեր են փոթորկում իր որդուն, բայց փորձում էր դյանց հեռու քշել։ Նա համառորեն համոզում էր

իրեն, որ սույն զոհը Մարկին չի դիպչի, ինչպես չի դիպել իրեն՝ Աննեսային, վտանգներով ու ճակատամարտերով լեցուն նրա կյանքի ընթացքում... Նա սովորական սխալ էր թույլ տալիս՝ ըստ անցյալի գնահատելով ապագան. նա չէր նկատում, որ այն պարաշրջանը, որի մեջ էր մտնում Մարկի կյանքը, դա երկրագնդի մեծ ցնցումների դարաշրջան էր, իսկ իր կյանքը կանդ էր առել այդ դարաշրջանի շեմին... Ասենք, իսկապե՞ս արդյոք դա չէր նկատում: Պարզապես հայացքը փախցնում էր... Հետո՞: Հետո՞: Դեռ ժամանակ կունենանք այդ մասին մտածելու: Եկեք լիովին օրհնված օրերը: Խաղաղությունը, խաղաղության առվակը հոսում է օդում:

Աննեսան միայնակ թափառում էր լեռնալանջը ծածկող անտառում: Փշատերև ծառերն այդտեղ աճում էին փեկոններով հետ մեկընդմեջ: Անցած տարվա սաղարթները թափած ճյուղերի վրա դուրս էին գալիս հրիտասարդ ընձյուղները: Եվ ժայռերին կառչող այդ ծառաբներն ամրոցներ գրոհող հոծ զորքեր էին հիշեցնում, որոնք պատրաստ են մարտի նետվելու: Ինչ-որ տեղից լսվում էին տապարի հարվածների ձայնն ու տապալվող ծառերի ճռինչը: Անդունդի վրա օձագալար ձգվում էր շավիղը: Երկու-երեք տեղ շավիղն այդ հատում էր լեռնային մի պաղ վտակ, որը հնաոճանդրերն վազում էր կոպտորեն իրար կպցրած, երերուն և առանց ճարերի փոքրիկ կամրջի տակով, և մեկ էլ այսպես կոչված «վաքեր»— քարե խոր ակոսներ, որ կոտորած ծառաբները ցած գլորելու համար էին այստեղ: Ոչ մի բան օտար մարդու չէր նախազգուշացնում այստեղ վտանգավոր հարևանության մասին, եթե չհաշվենք գերմաներեն մակագրությամբ մի սյուն, որը քամին ցած էր գցել, իսկ տեղացի բնակիչները, որոնք նման ցուցումների կարիք չէին զգում, իրենց անհոգության պատճառով տեղը չէին դրել:

Աննեսան, որ երկար ժամանակ ապրել էր լեռներում, նույնպես ցուցումների կարիք չէր զգում: Բայց դրանք անկասկած պահանջվում էին այն ընտանիքի համար, որը մոտակայքում էր տեղավորվել: Ծնողները նստելով վաքից մի քանի քայլի վրա, որն այնտեղ արմունկ էր կազմում, հանգիստ նայում էին, թե ինչպես են երկու երեխա տնային դաստիարակչուհու հսկողության տակ ձնծաղիկ հավաքում: Մոտ յոթ-ութ տարեկան մի ազջիկ համարձակվից ոչ միայն մոտենալ վաքին, այլև ոտքը դրնց նրա

եղբին, աշխատելով ձեռքը հասցնել ձնծաղիկների թփին։ Ոչ մի վտանգ չէր նախատեսվում։ Վաքը թվում էր լքված։ Բայց այստեղ գրոսնելն այնուամենայնիվ խելամտություն չէր, և Աննետան, հենց նոր պատրաստվում էր այդ մասին հայտնել ծնողներին, երբ հանկարծ փոքրիկ աղջիկը սայթաքեց վաքի փոքր եզրին, որը միանգամից նստեց, իսկ դրա հետևից աղջիկը նույնպես հայտնվեց ակոսի հատակին։ Նա բարձրաձայն քրքջաց և չէր շտապում այնտեղից դուրս գալ։ Այդ նույն րոպեին վերևում լսվեցին անտառահատների խոպոտ գոռոզոցները, որոնք տեղեկացնում էին, որ իրենք սկսում են գերանները գլորել։ Մինչ ծնողները կհասկանային վտանգը, Աննետան արագ շարժումով թեքվեց վաքի եղրի վրայով և փորձեց բռնել աղջկա թևը, բայց քանի որ նրա փորձը չհաջողվեց, նա, առանց երկար մտածելու, թռավ ակոսի մեջ, բռնեց երեխային և հրեց նրան ծեր եղևնիների արմատներից գոյացած փոսի մեջ, որ տեղավորված էր հենց ակոսի վրա գտնվող քարե ելուստին։ Գերանների և քարերի հեղեղը փոթորիկի նման սլացավ նրանց կողքով, ոչ մի վնաս չպատճառելով նրանց։ Ամբողջ ընտանիքը լուռ ներկա էր այդ տեսարանին, որը ծավալվեց կայծակի արագությամբ, և այն ժամանակ միայն, երբ վտանգն արդեն անցել էր, սարսափից քար կտրած ծնողները հասկացան տեղի ունեցածը։ Փրկարար Աննետան բարձրացրեց աղջկան, որը միայն հիմա վախեցավ, նրան գետին դրեց, հետո ակոսի միջից դուրս եկավ ինքը և ընկավ հիացմունքից իրենց մոռացած ծնողների գիրկը։ Հոր հուզմունքը նույնիսկ հասնում էր հիստերիկայի։ Արցունքներով ողողված, նա համբուրեց Աննետային։ Իսկ ինքն Աննետան ձեռքից ձեռք էր անցնում, նրան շշմեցրել էր շնորհակալությունների հեղեղը, որն ընդհատվում էր հեկեկոցներով։ Նա, սկզբում ցավով, իսկ հետո հաճույքով լսեց երկար տարիներ անց իտալական արագ, իր համար այնքան սիրելի խոսակցությունը...

Երբ զգացմունքների առաջին պայթյունն անցավ-գնաց և դադարեցին գրկախառնությունները, սկսեցին փոխադարձ ներկայացումները։ Կոկիկ սափրած կապտավուն սև այտերով, որ դիպել էին Աննետայի այտերին, երկարավուն անհամաչափ դեմքով, վառվող աչքերով թխահեր հայրը, անշուշտ, կրթված ու ծայրաստիճան նյարդային, բայց (Աննետան իսկույն կռահեց այդ) իր նյարդերի հետ վարպետորեն խաղացող մարդ էր։

այդպես փորձառու դերասանն է, նույնիսկ դերով տարված, իրեն տեսնում ուրիշի աչքերով։ Պարզվեց, որ բանկիր է, վենետիկցի, եկել է ընտանիքով հանգստանալու և հաստատվել է հյուրանոցում, Ռիվիերների շալեի կողքին։ Նա արդեն հանդիպել էր հարևաններին և իր սովորական զգաստ ուշադրությամբ նրանց զննելով, հանձին Աննետաայի ճանաչել Տիմոնի քարտուղարուհուն, թեև ընդամենը մի անգամ էր նրան տեսել։ Չէր մոռացել, որ այդ առաջին ու միակ հանդիպման ժամանակ դաժանաբարո պետը շարունակ դիմում էր Աննետաայի հիշողության օգնությանը, որը պահպանում էր թղթակցությունների ու գործերի ամենաչնչին մանրամասնությունները։ Աննետաայի դերն այդ «կոնդոտիերի» մոտ շարժել էր այցելուի հետաքրքրությունը, և նա չէր ծուլացել ավելի մանրամասն տեղեկություններ հավաքել նրա մասին։ Աննետաայի մասին լավն էլ էին ասել, վատն էլ, և այդ տեղեկությունները հետաքրքրություն էին առաջացրել անծանոթ կնոջ նկատմամբ։ Ով-ով, բայց նա բան հասկանում էր այդ «կոնդոտիերներից»։ Փորձառու, սակայն, թուղթիկ հայացքով նա իսկույն որոշեց մոր, որդու և հարսի մարդկային արժեքը, և երեքն էլ նրան թվացին ուշադրության արժանի։ Նա Ռիվիերներին հրավիրեց ընթրիքի։ Դժվար էր խույս տալ հրավերից, մանավանդ, որ նրանցից բացի այնտեղ զբոսաշրջիկներ գրեթե չկային (սեզոնը նոր էր սկսվել, և հյուրանոցը բացվել էր ընդամենը մի շաբաթ առաջ)։ Երախտապարտ ծնողների զգացմունքները պետք է ելք գտնեին, ուստի ամենախոհեմ քայլը հոժարակամ հնազանդվելն էր։ Մարդամոտ ու սիրալիր ղույգի հետ մի քանի ժամ տևած զրույցից հետո հալվեց նույնիսկ Մարկի ու Ասյայի զսպվածությունը։

Տանտերերի սիրալիրությունն ու խանդավառությունը շինծու չէին. վստահությունը ևս, որ բանկիրը դրսևորում էր իր պատահական ծանոթների հետ զրուցելիս, անշուշտ, անկեղծ էր, չէ որ նրանցից ոչ մի օգուտ չուներ, ստիպված էր հատուցել նույն ձևով։ Ուստի բոլորն էլ խոսում էին միանգամայն ազատ։

Լեոն Զարան դոլմատցի հրեա էր, Վենետիկում հաստատված հինավուրց ընտանիքի շառավիղը։ Նա ղեկավարում էր եւրոպատերազմյան ժամանակներում երևան եկած խոշորագույն բանկերից մեկը։ Նրա կինը, որը ամերիկահրեա էր, նույնպես պատկանում էր դրամատերերի աշխարհին։ «Ադիջե և Պիավե բանկը»

«Հռոմի վրա արշավանքից»[1] հետո կարողացել էր ոչ միայն համագործակցել նոր վարչակարգի հետ, այլև դառնալ նրա գրեթե գլխավոր հենարանը։ Բանկի ավանդատուների բոլոր կապիտալների ու ավանդների վիթխարի մասը տրամադրում էր այն գործառնություններին, որոնցում շահագրգռված էր ֆաշիզմը՝ ֆաշիստական գրականության հրատարակմանը, արտասահմանում իտալական գրքի թանկ նստող պրոպագանդմանը։ Ավելին, բանկը (բանկի գործունեության այդ կողմի մասին Զարան միայն ամոթխածորեն ակնարկեց) լայնորեն դրամական նպաստ էր տալիս նրանց, ում նվիրվածությունը ֆաշիզմին շատ ու շատ բարձր էր գնահատվում (այստեղ Զարան խորամանկորեն աչքով արեց իր զրուցակիցներին)։ Այդպիսի բոլոր տիպերի համար որոնում-գտնում էին տաքուկ, առատորեն վարձատրվող պաշտոններ, ուստի այդ պարոնների բացառիկ փափկանկատությունը բնավ չէր տուժում, Զարան շատ ավելի հաճույքով պատմում էր բանկի միջոցներով քաղաքական, առևտրական ու գիտական նպատակներով կենտրոնական Ասիայում կատարված արշավների մասին։ Զարան, որ նրբամիտ, կրթված մարդ էր, զավակը հնագույն քաղաքակիրթ ռասսայի, վարվեցողությամբ սիրալիր (Աննետան չհապաղեց նրան համեմատել իր պերիգորցի բոհի հետ), գնահատում էր արվեստը և մտքի խաղը։ Սակայն նրա գլխավոր հակումը, այսպես ասած, մարդկային տարբեր տիպարների հոգեբանական հավաքածու կազմելն էր. իր հաճույքի համար նա ստեղծել էր մի ամբողջ գաղտնի թանգարան, ուր, իբրև անտեսանելի ցուցանմուշներ, հավաքված էին Քառնակ դարաշրջանի ձևավորած կամ ձևափոխած մարդկային բոլոր և ամեն տեսակ անկանոնությունները, ցնդած հոգիներ, գերմարդիկ և թերմարդիկ։ Նա հպարտանում էր իր «հրեշներով»։ «Հրեշ» բառի մեջ ամենևին էլ վիրավորական իմաստ չէր դնում, նրա աչքում այդ թանգարանը կարծես կրակոտ ցատկ էր բնության, որը փնտրում ու փնտրում է նոր տիպար, հաճախ չհասնելով նպատակին, ավելի հաճախ էլ անցնելով նպատակի կողքով, բայց գուցե հենց այդպես է սկզբնավորվելու մարդկային նոր ցեղը... Զարան չէր թաքցնում, որ իր թանգարանում կա հրեշի մի հազվագյուտ նմուշ, նրա նմուշը, ով

---

[1] Նկատի է առնվում իշխանության գալիքումը Մուսոլինիի ֆաշիստական հանցախմբի կողմից։

կապված է պահում հենց իրեն՝ բանկիրին, դուչեի նմուշը... Ասենք, երկուսն էլ միմյանց կապված էին պահում՝ Փողը և բռունցքը։ Եվ երկուսն էլ պնդագլուխ էին, մեկը Հռոմից, մյուսը Տյրից և սուրբ Մարկոսի հրապարակից։

Ջարան վարպետորեն ուրվագծեց առաջնորդի դիմանկարը։ Նրա մասին խոսում էր անկեղծ, շատ էլ չխնայելով, բայց ձայնի մեջ լսվում էին համակրանքի երանգներ. այդպես օթյակում հարմար նստած հանդիսականն է հիանում թատրոնի բեմահարթակին կանգնած բռնակալով։ Նրա խոսքերով, դուչեն իրեն ստեղծել է հենց այնպիսին, ինչպիսին որ նրան պատկերում են սցենարներում։ Գոնե այդ էր պնդում ինքը՝ artifex[1]-ը, որի համար համայն աշխարհը կաղապարման ենթակա կավ էր։ Այս տեսակետից commediante[2]-ի (ավելի ճիշտ՝ tragediante[3]-ի համար, քանզի կատակի ժամանակը չէր) համար ամեն ինչ դառնում էր թատերական բեմիր՝ ժողովուրդները, պետությունը, հասարակական բարօրությունը։ Ամեն ինչ ի սպաս էր դրվում նրա դերի պահանջմունքներին։ Նա բռունցքի մեջ էր սեղմել մարդկային զանգվածը, բռնադատում էր նրան, թափանցում նրա մեջ... Բայց մնում էր նրանից դուրս։ Մնում մենակ, նույնիսկ տիրանալով։ Ցանկությունն ուժեղ էր, իսկ սերը՝ քիչ։ Քիչ էր կարեկցությունը, հարգանքը մարդու նկատմամբ։ Ավելի շուտ կար ատելության ուժ, իսկ ամենից շատ՝ մեծագույն անտարբերություն նրա ոտներն ընկած, նրա կրնկի տակ դիտապաստ փռված մարդկանց նկատմամբ։ Այդ կատաղի ծեփակերտողի համար «զանգված» բառը հնչում էր որպես «կաղապարման զանգված»։ Եվ, վերջ ի վերջո, միակ բանը, որ նշանակություն ուներ, որը լցնում էր նրա ամոլ և հրաճարակ հոգին, ոչ թե մարդիկ էին, ոչ թե պետությունը, այլ իր սեփական կերտվածքը։ Եվ դրանից չի կարելի այնպես հեշտ ու հանգիստ խույս տալ։ Գործունեության նման թափը տեր artifex-ի համար դա անհամեմատ ավելի է, քան միջին չափսերի սովորական «ես»-ը, ավելի, քան սնապարծությունը, մինչև անգամ ավելի, քան փառքը... Այդ գործողության մեջ ամայի տարածություններում դժնի ճակատամարտի կանչող ծխացող ջահի

---

1 Նկարիչ, դերասան (լատ.)։

2 Կատակերգակ (իտ.)։

3 Ողբերգակ (իտալ.)։

պես մի բան կար։ Պարտութիւն, հաղթանակ՝ մեկ չէ՞։ Միայն թե գործել։ Գործել, պայքարել, անգործութեան դեմ ինքնահաստատման ուրիշ միջոց չկա։

Հետևելով Զարայի նեղ, չարժուն, բավականութիւնից նույնիսկ ծոմավող շրթունքներին (չէ որ Զարան էլ էր artifex), Աննետան չանում էր պատկերացնել այն մարդուն, և նրան երևակա նսեմ, նիրհուն կյանքի դեմ կռվի ելած և սրի հարվածներով թանձր ու արնաներկ խավարից հենց իր՝ ճակատագրի կերպարը քանդակող շեքսպիրյան ոմն արկածների որոնող... Իսկ Զարան, որը ևս դեր էր խաղում պիեսում, ասում էր.

— Ավելի վատ կամ ավելի լավ նրանց համար, ովքեր բարեբախտաբար (կամ դժբախտաբար) դարձել են մի կտոր կավ, որ քանդակագործը տրորում է ձեռքի մեջ, կերտելով իր ստեղծագործությունը։ Մեր դարաշրջանում, այն դարաշրջանում, երբ մարդկային վիթխարի զանգվածները գտնվում են ձուլման վիճակում, լի են եռանդով, իսկ լիակատար անզորության հասած դեմոկրատիան թողնում է, որ նրանք քարանան ու փոխադարձաբար ոչնչացնեն իրար, գոյություն ունեն միայն երկու հրահալոցային վառարաններ, որոնք կարողանում են օգտագործել նրանց։ Դրանք են մեր դուշեի Հռոմը և ՍՍՀՄ-ը։ Սակայն վերջինս կործանում է իրերի ամբողջ հին, ընդունված կարգը և ձգտում է կառուցել նորը։ Իսկ դուշեն փորձում է հարմարվել հին կարգերի գիմքերին, որ նա նորոգում է ավելի շուտ ձևով, քան էությամբ. նա չի հավատում առաջադիմությանը, ճգնում է պահպանել հին Քորքը՝ թագավորին, եկեղեցին, կապիտալը, ընտանիքը և մասնավոր սեփականությունը։ Նա նրանց նոր մանրէներ է պատրաստում՝ արհեստակցական միություններ և դրանց միավորումներ, կորպորացիաներ, բանվորական կազմակերպություններ, որպեսզի վնասազերծի վերջիններիս...

Միանգամայն բնական է, որ Զարան իր համար առավել օգտավետ էր համարում հին, ստուգված, երկաթբետոնով ամրացված կարգերը, հռոմեական իրավունքի վրա հիմնված այդ կարգերի հավիտենական անարդարություններով, կաստայական և պրոֆեսիոնալ անջրպետներով, բնածին և ձեռք բերած արտոնություններով, պլեբսով՝ populusgue[1]*-ով և կայսրով հանդերձ։*

Բայց դա չէր նշանակում, թե նա աչք է փակում մի մարդու՝

---

[1] Senatus populusgue romanus—*սենատը և հռոմեական ժողովուրդը (լատ.)։*

բռնության վարպետի իշխանության վրա հիմնված սոցիալական նման կառուցվածքի վտանգավորության առաջ։ Այդ մարդուն նա ավելի լավ էր ճանաչում, քան որևէ մեկը. գիտեր նրա բարոյական և ֆիզիկական արատները, թուլությունները, ախտերը, հանկարծակաև ու շեշտակի տատանումները, տրամադրության և կամքի վտանգավոր անկայունությունը, այն alea[1]-ն, որը հավերժական քաղաքին մշտապես սպառնացող երկրաշարժերի պես ցնցում էր հողը։ Պիրանեզիի ոճով կառուցված այդ ավելի շուտ դեկորատիվ, քան մոնումենտալ շենքը այսօր-վաղը սպառնում էր փլվել։ Վտանգավոր էր հույս դնել նրա վրա, նրա նման մարդու, նրա գործի վրա։ Սակայն բանկիրը, ինչպես որ ճակատագրի բոլոր սպասավորները, հոգով խառամոլ էր։ Կամ «թագավորի» վրա պիտի դներ, կամ «թագավորի» դեմ... Այսօր նա խաղագումարը դնում էր անվարան։ Իսկ վաղը՞։ Կապրենք, կտեսնենք... Բանկիրն ուներ երկար, ճարպիկ մատներ։ Եթե թագավորը Մաքիավելի էր կարդում, սպասավորն էլ էր կարդում, մի անհանգստանաք։ Ասենք, նա այնքան թանկ չէր գնահատում հաջողության վերապահությունները, քանզի գիտեր, որ ամեն բան անհաստատ է։ Նա հավասարապես պատրաստ էր ինչպես շահելուն, այնպես էլ տանուլ տալուն։ Խաղը, սոսկ խաղը, գրգռում էր Ջարային, և անգամ կանաչ սեղանի մոտ չէր խամրում նրա հեգնանքը։ Դուշեի զարհուրելի լրջությունը չէր վարակում նրան, թեև նա կարողանում էր դրան հարմարվել։ Նա իսկական հրեա էր, այնպիսին, որին նկարագրում է էքզեգիաստը՝ դյուրագրգիռ, ընչաքաղց և վերացածո։

Խոսակցության ժամանակ նրա խորաթափանց աչքերը ջանում էին որսալ Աննետայի հայացքը։ Ինքնավստահության պոռթկման մեջ իր զգացմունքները նա իզուր էր վերագրել նրան։ Այլ ժամանակներում, չահելության օրերին, Աննետան գուցեև հետաքրքրվեր այդ կոնդոտիերով։ Բայց տարիքն ու փորձը բթացրել էին հետաքրքրության այդ տեսակը։ Նրան չէին ալեկոծում այն արկածախնդրությունները, որ կորտեսների ու պիզարոների, զանազան դուչեների ու տիմոնների կյանքի իմաստն էին։ Նա չէր պատկանում բացբերանների այն տեսակին, որին գմայլեցնում են սեղմված ծնոտներով այդ ծանրաքարշերի տեսքը, գազանային հայացքները, որ մահակի պես

---

[1] Վիճակ, բախտ, ճակատագիր (լատ.)։

խփում են գանահարման կանխավայելքի մեջ սարսափից և բավականությունից քրտինքով ծածկված մարդկանց դեմքին և նրանց կուացնում մինչև գետին։ Ինչպես Ջարան, Աննետան ևս գիտեր, որ այդ ծանրաքաշներն իրենց թուլություններն ունեն, որ այդպիսի հաստ պատը, երբ ճիղը է տալիս, անմիջապես փըլվում է։ Բայց ի տարբերություն բանկիրի, նրա հետաքրքրությունը գրգռում էր, թերևս հենց այն ողորմելի բանը, որ կար նրանցում և որը նրանք թաքցնում էին իբրև խայտառակություն։ Նա հետևում էր այդ դիվոտածների ջղաձիգ ճիգերին, որոնք կաշվից դուրս էին գալիս, միայն թե դուրս պրծնեն հոտից, իշխեն նրա վրա։ Աննետան վաղօրոք գիտեր, որ նրանք պարտված են... Սա ևս, ինչպես մնացած բոլորը։

«Սև դուչե, Դու պարտվելու ես։ Վերջին հաշվով բոլորս էլ արդեն պարտվածներ ենք, բոլորս էլ պարտվելու ենք։ Եվ բոլորս հաղթողների՝ էդիպ-արքաների, կորիոլաննների, մանրեթների մեջ, ողբերգության հենց սկզբից, մեզ հետաքրքրում է նախօրոք իսկ տրված այդ հանգուցալուծումը։ Մեկով ավելի՛... Մթացող ջահ, դու հանգչելու ես։ Կենդանի ուրվական, հայտներվիր ու մեռիր...»։

Մարկը հռոմեական այդ ջահերի նկատմամբ ոչ համակրանք էր զգում, ոչ էլ խղճահարություն (ասենք, խղճահարությունը նրանց համար խիստ ծանր վիրավորանք կլիներ). նա ուզում էր կոխկրտել նրանց։ (Ատելությունը ևս երբեմն համակրանքի ձև է, նրանից պաշտպանող զրահ...) Մարկը իր առջև վենետիկյան գետաոչից հայտնված այդ fa presto[1]-ի ուրվագծած որմնանկարում առաջին հերթին ոչ թե դիշատչաբար սեղմված ծնոտներով և մահակը ձեռքին մարդուն տեսավ, այլ մեջքեր, մահակի հարվածներից տակ կորացած, ստացած ճիպոտահարություններից հետո գոհունակորեն շտկվող միլիոնավոր մեջքեր... Այդ վախկոտ պատանյակները (Մարկը նրանց նմաններին բավականաչափ տեսել էր Ֆրանսիայում և ամենուրեք) տրտնջում են մեր անզոր ժամանակներից, իսկ թաքուն մորմոքվում դուչեի կամ ֆյուրերի համար, հետույքին հասցված լավ աքացու համար։ Դեհ, եթե նրանք այդպես խոնարհվում են ուժի առաջ, թող ցույց տան իրե՛նց ուժը։ Հույսը դնել ուրիշի ուժի վրա, նրա

---

1 Արագ է արված (իտալ.)։ Իտալիայում XVII դարում այդպես էին անվանում որմնանկարի որոշ վարպետներին։

լիակատար և անվերապահ օգտագործմանը հանձնել սեփական ուժը, այն ուժը, որին ծարավի ես, որից զուրկ ես, որը չես տեսնելու՝ կա՞ արդյոք դրանից ավելի զաղրելի տեսարան։ Քծնում են, ինչպես շներ։ Սողում են փոշի վրա, ինչպես շներ։ Թող մարակը ղբոսնի նրանց մեջքին... Մեր պատանի արուն մրցակցության և զայրույթի չգիտակցված զգացում էր տածում (ամեն ինչ կարող է պատահել) իրենց հլու «հոտը» կառավարող այդ մեծահասակ արուների նկատմամբ։ Նա երբեք չէր կարող իրեն զոհել հանուն մի մարդու։ Անչափ չնչին է պատրվակը։ Նա արդեն հասցրել էր այդ իմանալ։ Նրա սիրտը խառնում էր «Qualis artifex»[1] բառերից։ Իրեն զոհաբերելու համար նա ավելի վսեմ նպատակ էր պահանջում, ոչ թե ինչ-որ մարդ, այլ ժողովուրդներ, նվաստացված ու ստրկացված զանգվածներ, բովանդակ մարդկություն... Բայց Մարկին չէր հաջողվում հավասարազոր մի բան գտնել այդ երկու բևեռների միջև։ Ծառայել մարդկանց և գործել նրանց համար, նրանց միջոցով ու, եթե հարկ լինի, գործել նաև նրանց դեմ, այլ խոսքերով, գործել հանուն նրանց, կարողանալ գլխավորել ու հնազանդվել՝ երկու բևեռ (առանց երկու բևեռի հողագունդը չի կարող գոյություն ունենալ)։

Ասյան, որ Մարկից ոչ պակաս թշնամանքով էր գնահատել սև մեջքերի այդ շարքերը, անգամ չէր փորձում թաքցնել իր հետաքրքրությունը ֆաշիստական փորձի նկատմամբ։ Նրա աչքում գուռեմարտի կատաղությունը չէր բացառում որոշակի համակրանքը թշնամու փորձի հանդեպ, միայն թե նա լինի արժանավոր հակառակորդ։ Ասյան անկեղծ դարշանք էր զգում միայն նրանց նկատմամբ, ովքեր խուսափում էին պայքարից, դիմակ կրում, բոլոր նրանց նկատմամբ, որոնցից չես կառչի, որովհետև նրանք կարծես յուղոտված են, բոլոր լպրծուններների՝ նրանց նկատմամբ, ովքեր փառքից դուրս են սողում, բոլոր ներքինիների, ամեն տեսակ սեռական տկարության, դիմազուրկ ամեն ինչի նկատմամբ։ Խորաթափանց Զարան կարողացավ զգվանքի ծամածռության տակ նկատել այդ համակրանքը։ Նա հմտորեն էր դնում իր ծուղակները՝ արտույտներին հրապուրելու հայելիները և դրանց թվում՝ գործելու տենդալից պահանջը, որը իտա-

---

[1] Ինչ դերասա՞ն է [մեռնում] (լատ.)։ Բառեր, որ վերագրվում են Ներոնին։

լական երիտասարդության գլխում վառել էր այն սև արևը, որին իրենց թևերով թե ծածկում, թե արտացոլում էին հաղարավոր ինքնաթիռներ՝ Բալբոյի[1] գիշատիչ թռչունների ձագակազմը։ Բանկիրն Ասյային և Մարկին առաջարկեց տեղում շոշափել կատաղի զարկերակը երիտասարդ Իտալիայի, որի մասին գրեթե ոչինչ չգիտեն արտասահմանում և որին ֆաշիզմն ահեցնում է ոչ թե մսուրի, այլ ասպարեզի համար, ինչպես ցուլին։ Ասյան անմիջապես գնահատեց գործողության արհեստականորեն պահպանվող կրակը, որն, իհարկե, ագրեսիվ ձևով, մարդկանց համախմբում էր թշնամու դեմ ելնելու պատրաստ բանակի մեջ...

— Բայց ասացեք, խնդրեմ, իսկ ո՞վ է թշնամին։

Նրա պողպատափայլ աչքերի համար չէին այդ բոլոր հրապուրանքները, որոնք ընդունակ էին խաբելու միայն հիմարին...

— Բոլոր այդ կովողները ո՞ւմ և ինչի դեմ են գնում։ Եվ ո՞ւմ, ինչի համար։ Ո՞ւր եք գնում դուք։ Գուցե ինքներդ գիտե՞ք... Ես, անշուշտ, նկատի չունեմ անձամբ ձեզ, պարոն Զարա։ Գուցե անձամբ դուք գիտեք, և իմ կողմից անհամեստություն կլիներ ձեզ այդպիսի հարցեր տալ... Բայց մյուսները, բայց ձեր, ձեր բոլոր զորքերը, նրա զորքը, նույնիսկ նա ինքը։ Նա, այն մարդը, որն առաջնորդում է զորքերին, նա՝ ձեր գլխավոր ռեժիսորը։ Նա գիտի՞ իր իսկ պիեսի հանգուցալուծումը։ Նա ի՞նչ է ուզում ըստ էության։ Ինչի՞ է հավատում։ Ընտրե՞լ է սցենարի վերջնական տարբերակը։ Արդեն տասնյակ անգամ փոփոխել է այն և դեռ նույնքան անգամ էլ կփոփոխի՝ պատերազմ, խաղաղություն, բռունցք, դաշնագրեր, եթե միայն հանդիսականը համբերություն ունենա նստելու մինչև պիեսի ավարտը։ Ներկայումս իտալական ֆաշիզմի իդեալը (թող որ դուք թաքցնում եք այդ) սպառազինված, զրահավորված և փշալարերի հետև քշված ազդից վեր չի բարձրանում։ Ձեր սև բլուզավոր հրոսակախմբերի համար, որոնք պատրաստ են վաղն ևեթ դուրս գալու արշավանքի, ով ասեք, որ թշնամի չէ։ Նրանց համար թշնամին այն ամենն է, ինչ դրսում է, բերդապատնեշից այն կողմ, կայսրության սահմաններից դուրս։ Հռոմն ընդդեմ բարբարոսների... Կնշանակի, ես բարբարո՞ս եմ, կնշանակի, բոլորս թշնամինե՞ր ենք։ Հապա խաղաթղթերը դրեք սեղանին։ Դուք պայքարում եք ոչ

[1] Այսինքն՝ ֆաշիստական ավիացիայի։

մեզ համար։ Պայքարում եք մեր դեմ։ Եվ վաստահ ե՞ք, արդյոք, որ պայքարում եք ձեզ համար։ Իսկ ո՞ղն է պայքարի նպատակը։ Եվ մտածում ե՞ք արդյոք նպատակի մասին։ Վերցնենք ձեր ֆաշիզմը, ամենավսեմ, ամենահիանալի, ամենաողբերգական նշանակությամբ, ինչպիսին նրան վերագրում են գրականության նիցշեական աքաղաղները, ովքեր հավաք են շեփորում, բայց իրենք չեն կռվում, այլ իրենց փոխարեն մարտի են ուղարկում հարևաններին։ Ձեր ֆաշիզմը բոլոր ժողովուրդներին ներշնչում է պայքարի և գերազանցության ոգի, հավերժական իմպերիալիզմի ոգի, քանզի նա, եթե հավատանք ձեր դուչեին, ոչ այլ ինչ է, եթե ոչ կյանքի գլխավոր իմաստը հավիտյանս հավիտենից։ Դա մարտ է հանուն մարտի, մարտ առանց նպատակի, ապագայի, հույսի («Գործելու համար ես հույսի կարիք չեմ զգում...») Հին երգ է։ Իսկ ահա ես զգում եմ հույսի կարիքը և ուզում եմ իմանալ, թե ուր եմ գնում։ Իսկ դուք ուր ե՞ք գնում։

Ժպիտը ծոմռեց Զարայի երկար ու նեղ բերանը։ Բանկիրը քահ-քահ ծիծաղեց։

— Այո, մենք գնում ենք։ Մի՞թե այսքանը քիչ է։ Մարդկանց հարկավոր են Animatori-ներ[1], որպեսզի ժամանակ առ ժամանակ լարեն կյանքի ժանգոտած զարթուցիչը։ Եվ, ձեր կարծիքով, միթե Ֆրանսիան չէր զգա մեր Animatore-ի նման որևէ Animatore-ի կարիքը, որը թոթափեր ձեր անշափ անփոփոխելի դեմոկրատիայի նիրհը։

— Հաղմար չէ,— առարկեց Ասյան։— Չէ որ ես տեղացի չեմ։ Ես ոչ մի Animatore-ի կարիքը չեմ զգում։ Մենք սկիֆներ ենք։ Եվ ՍՍՀՄ-ում պայքարում ենք ոչ հանուն այն բանի, որ պետք կբերենք ինքնասիրահարված դերասանի անդրին։ Մենք պայքարում ենք բոլոր մարդկանց համար, լավագույն ապագայի համար։

— Իսկ առայժմ,— արձագանքեց Զարան,— վատթարագույն ներկայի համար։

— Այս ներկան չեմ փոխի ոչ մի այլ բանի հետ,— առարկեց Ասյան։— Ես ներկան կարող եմ համեմատել այն ժամանակների հետ, երբ սրտիս տակ երեխա էի կրում։ Ներկան հզի է ապագայով։

---

1 Ոգեշնչողներ։ Արտահայտությունը վերցված է դ'Անունցիոյի վեպերից։— Ռ. Ռ.։

— Այսպիսով, յուրաքանչյուրն իր ուրախությունն ունի,— շարունակեց բանկիրը հմայիչ ժպիտով։— Ձեզ տիկին, հրաշալի մանկիկ՝ ապագա։ Իսկ անձամբ ես գոհանում եմ ներկայով։

Նրանք բաժանվեցին լավ բարեկամների պես, քանզի, գոհություն աստծուն, ընդհարվելու կարծես ոչ մի հիմք չկար։ Յուրաքանչյուրն ուներ գործողության իր առանձին ասպարեզը։ Երիտասարդ Ռիվիերները բանկիր Զարային թվացին բավական անշառ (նա Մարկի գրածներից ոչ մի տող չէր կարդացել)։ Եվ քանի որ նրանք բոլորն էլ քաղաքավարի մարդիկ էին, անգամ այնպիսի մի հարց, ինչպիսին է քաղաքական հայացքների տարբերությունը, շոշափեցին թեթևակի, ինչպես սովորական աշխարհիկ թեմա։ Զարայի համար հանդիպման մեջ միակ կարևոր բանը այն արագ շարժումն էր, որով կինը մահից փրկեց նրա դրստերը։ Թերահավատությունը նրա բոլոր կրքերից խնայել էր միայն ընտանեկան զգացմունքները։ Բանկիրի ժիր աչքերում արտացոլվում էր պատահական ծանոթների հետ զրույցից ստացած բավականությունը՝ բայց զգացվում էր, որ նրա համար գոյություն ունի միայն Աննետան, որին երախտագիտության խոսքեր շռայլեց, դրանք անդրադարձումով տարածելով նաև երիտասարդ զույգի վրա։ Զարա ամուսիններն իրենց նոր բարեկամներին հրավիրեցին Իտալիա, խնդրեցին Հռոմում այցելել իրենց։ Բանկիրը հայտարարեց, որ ինքը նրանց լիակատար տրամադրության տակ է և կարիք լինելու դեպքում պատրաստ է ծառայելու, ինչով կարող է։ Բայց դժվար էր ենթադրել, որ նրանք երբևէ հարկադրված են լինելու օգտվել նրա սիրալիրությունից։ Նրանք որոշեցին իրենց ճանապարհորդությունը սահմանափակել Շվեյցարիայով և չէին պատրաստվում մեկնել Լուգանոյից այն կողմ։ Թե ժամանակ, թե փող շատ քիչ էր մնացել։

Հատկապես ժամանակ։ Նրանք չէին էլ կասկածում, թե որքան քիչ ժամանակ էր մնացել։

Թեև հիշողությունս չի դավաճանում ինձ, ես նրանց տեսա Թեսինոյից մեկնելու նախօրեին։ Նստել էի փոքրիկ բացատում։ Ներքևում լճանալանջին պտույտ էր տալիս արահետը։ Նրանք ինձ չնկատեցին։ Մինչդեռ ես իսկույն ճանաչեցի Մարկին։ Նա թևանցուկ տանում էր մորը։ Աչքի էր զարնում, թե ինչպիսի հոգատարությամբ է նա իր ուղեկցուհուն անցկացնում առվակի

վրայով։ Աննետան մի քիչ հոգնած տեսք ուներ։ Նրանց հետից մանրաքայլ գնում էր մի մանչուկ։ Նա և Ասյան ծաղիկներ էին հավաքում և ետ էին մնացել, որովհետև Ասյան վայրի այծի ճարպկությամբ շարունակ բարձրանում էր թեք լանջերը։ Հավասարվելով ինձ, նա մի պահ կանգ առավ. նրա ուշադրությունը գրավեց նստարանիս վերևում ամած մանուշակի թուփը։ Ասյան, մագլցելով, բարձրացավ լեռը, ծաղիկները պոկեց արմատով, առանց քաշվելու հողը վրաս շաղ տալով, և ցած թռավ արահետի վրա։ Նվ աչքերն էլ ոսկեգույն էին, այծի աչքերի պես։ Նա անթթիթ նայում էր Աննետային։ Անհուն երջանկությունը լուսավորել էր նրա դեմքը։ Նրբ Մարկը կոացավ քարը վերցնելու, որպեսզի հեշտացներ մոր անցումը առվակի վրայով, ես նկատեցի, թե ինչպիսի գորովանքով է նա նայում իր տղայի գեղեցիկ գլխին։ Նրանք անհետացան Ճանապարհի ոլորանի հետևում։ Հույս ունեի երեկոյան հյուրանոցում հանդիպել նրանց։ Բայց նրանց այնտեղ չգտա։ Առավոտյան, Ռիվիերների մասին ծառային հարցուփորձ անելով իմացա, որ նրանք մեկնել են առաջին գնացքով։

Արևը թաքնվեց Սեն-Գոթարդի լեռնանցքի մյուս կողմում։ Արևի հետքերով նրանք հասան Լուգանո։ Նվ առաջին բանը, որ այնտեղ տեսան, Ժորժն էր։ Նա կանգնել էր Ճանապարհին, որի վերևում միահյուսվել էին խաղողի որթերը։ Ձեռքերը բարձրացրած դեպի գլխավերևում կախված ողկույզները, բերանը լայն բացած, կարծես պատրաստվում էր խմել ամբողջ արբեցուցիչ հյութը, Ժորժը բարձրաձայն քրքջում էր։ Տեսնելով իր բարեկամներին, նա նետվեց նրանց գիրկը։

Ժորժն այդտեղ էր եկել, որպեսզի լիներ հոր կողքին, որին իբրև վկա կանչել էին Լուգանո՝ դատավարության։ Ամբաստանյալը իտալացի օդաչու էր, այն fuoruscito-ն, որը Միլանի վրա մի ամբողջ կույտ հակաֆաշիստական թռուցիկներ էր թափել և եռգարձի Ճանապարհին ինքնաթիռը Գոթարդի լանջին խփելով ջարդուփշուր արել։ Վիրավոր օդաչուին խնամել էին, ոտքի կանգնեցրել, բայց ֆեդերալ կառավարությունը նրան ձերբակալելու հրաման էր տվել, և նա կանգնեց Բելինցոնեի դատարանի առաջ՝ շվեյցարական սահմանը խախտելու մեղադրանքով։ Պաշտպանության վկաների պակաս չկար. դատարանում հանդես եկան վտարանդիների գլխավոր խմբերի ներկայացուցիչ-

ները, խմբեր, որոնց միջավայրում ճանաչում և գնահատում էին օգաշուին։ Դիմեցին նաև Ժուլիենին։ Ինչքան էլ որ նա ծանրաբեռնված էր լինում իր պարտականություններով, որքան էլ որ հոգու խորքում տրտնջում էր գիտությունից իրեն կտրող պարապանհրից (նա գիտությանը չնվիրաբերած յուրաքանչյուր ժամը կորած էր համարում), այնուամենայնիվ, անվարան կատարում էր աշխարհի քաղաքացու իր պարտքը, հատկապես, երբ նրա հեղինակությունը կարող էր գերաքաշել կշեռքի նժարներից մեկը, նժարի, որի վրա դրված էին ճնշվածների, բռնապետների դեմ ըմբոստացողների գործերը։ Շիլլերի «Yn tyrannos»[1] բառերն այդ հին լիբերալը դրոշմել էր իր սրտում։ Ժուլիեն Դավիի՝ որպես պաշտպանի, հլուլթը մեծ աղմուկ առաջացրեց դատավարությունում, որտեղ ամբաստանյալը փոխվեց մեղադրողի։ Լոնդոնից և Փարիզից ժամանած փառապանծ տարեգիրները առիթից օգտվեցին, որպեսզի հրապարակավ ապտակներ հասցրնեն հալածիչներին։ Եվ շվեյցարական կանտոնի դեմոկրատ դատավորները, որոնք նույնիսկ չէին թաքցնում իրենց համակրանքը հանդեպ ազատամարտիկների, ամբաստանյալի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացրին։ Բայց Բեռնում ֆեդերալ խորհուրդը, անհանգստացած արդարացման դատավճռից հետո բարձրացած աղմուկից և ցանկանալով խնայել իր վտանգավոր հարևանի խոցված ինքնասիրությունը, որոշից մեղմացնել վիրավորանքը ու ձևի համար ամբաստանյալին դատապարտից կարճատև բանտային կալանքի։

Այդ բոլոր իրադարձությունները ծայր աստիճան գրգռել էին հասարակական կարծիքը, և Լուգանոյի սովորական աղմկալի անհոգությունը խախտվել էր։ Կամարների տակ, սրճարաններում, ամենուրեք լսվում էր կրետի՝ հանգիստը վրդոված բնի բարձր բզզոցը։ Եվ դեռ բոլոր կողմերից ճանճերի պես վրա տվեցին լրտեսները։ Նրանք փութագարությամբ ափից ափ էին վազվզում։ Այն հրանելի ժամանակներում Լուգանոյի բոլոր շենքերի պատերը զարդարված էին լաթերով, ինչպես տիրոջ մարմնի տոնի օրը, բայց թե գորգերի փոխարեն ամենուրեք ցցվել էին լրտեսների սև ականջները։ Տարբեր ականջներ կային՝ թե եկվորների, թե տեղացիների համար։ Ինչպես միշտ ոչ Աննեսայի հոգըն էր, ոչ Ժորժի, ոչ էլ Մարկիի։ Բազմափորձ Ասյան, սակայն

[1] Ընդդեմ բռնապետների (լատ.)։

իր անթերի հոտառությամբ ղգաց վտանգի հոտը։ Յանկացած վայրում նրա ոտնգները անմիջապես հայտնաբերում էին գայլական ներկայությունը։ Ասլայի աշխույժ, անդուլ հայացքը, արագ սահելով մարդկանց խմբի վրայով, անսխալ հայտնաբերում էր ձկանը և կարուկ հարվածով կարթը խրում կոկորդը։ Իսկ քերծված կոկորդով ղոհը, աթոռին նստած, անհանգիստ շարժումներ էր անում, ճգնելով պոկվել կարթից, ուշադրությունը շեղել իրենից և, ի վերջո, լքում էր մարտադաշտը։ Մեկ անգամ չէ, որ նման լուրն մենամարտեր տեղի ունեցան confetteria-ի[1] սեղանի շուրջ, ուրտեղ նստել էին Ասլայի ոչինչ չկասկածող ուղեկիցները։ Երեքն էլ առանց քաշվելու բարձրաձայն արտահայտում էին իրենց մտքերը։ Մարկը ևս, որին տղայական բավականություն էր պատճառում ժորժի մանկական բարձր ծիծաղը, սիրում էր հատիտի ցուպով՝ դաղել «նեգրոիդների» մեջքը, ինչպես նա հորջորջում էր «սև բլուզավորներին» և ամեն անգամ զարմացած աչքերն էր չռում, երբ Ասլան ափը դնելով նրա ձեռքին, շշնջում էր.

— Կամաց, խնդրում եմ.

Նա հարցնում էր.

— Ինչո՞ւ կամաց։

Եվ Ասլան մտորելով, որոշեց.

«Վերջ ի վերջո, իսկ ինչու՝ ոչ։ Ավելի վատ, ավելի լավ այս գայլաձուկ-լրտեսների համար։ Տես թե ինչ են կանաչ կտրել իրենց խաշուի մեջ։ Մի պտղունց էլ աղ ավելացնենք և թող իրենց համար եփվեն մարմանդ կրակի վրա»։

Արտասահմանում աշխատող լրտեսները վաղուց արդեն ընտելացել էին ամեն տեսակ վիրավորանքներին և առանձին նշանակություն չէին տա սովորական ղբոսաշրջիկների հանդուգն վարքագծին։ Բայց Մարկն անմիջապես ուշադրություն գրավեց, հենց որ հայտնի դարձավ նրա մտերմությունը ժուլիենի հետ, որի դերը դատավարության ժամանակ համընդհանուր ուշադրության էր արժանացել։ Ժուլիենը, որպես միջազգային հակաֆաշիստական լիգայի պատվավոր նախագահ, առաջիններից մեկն էր հիշատակվում սև ցուցակներում, ուստի և դարձել էր հատուկ հսկողության առարկա։ Նա չէր փորձում խույս տալ այդ հսկողությունից, այլ ուղղակի քամահրում էր այն։ Պրոֆեսոր Դավիի

---

[1] Սրճարան (իտալ.)։

գափնիները Լուգանում քաղում էր նրա պատանի ընկերը։

Նրանց հետ զրուցելու առիթ փնտրող անձանց մեջ կար մի երիտասարդ իտալացի, որի հետ Մարկն արդեն հանդիպել էր Փարիզում, հակաֆաշիստական շրջաններում։ Այտի խալը և ձախ կոպի նյարդային ցնցումները տգեղացնում էին նրա խելացի և գեղեցիկ դեմքը։ Անունը Բուոնամիկո էր։ Նա չէր թաքցնում իր անզուսպ ատելությունը ֆաշիստական վարչակարգի նկատմամբ։ Նա Փարիզից ճամփորդում էր Լոնդոն, Բրյուսել ու ետ, շրջում վտարանդիների տարբեր գաղութներում։ Խռովության սրբազան կրակով այրվելով, նա բորբոքում էր հուսալքվածների հավատը, ակնարկներով նրանց առաջարկում մշուշոտ, հանդուգն ծրագրեր, խոսում ռումբերից ու դավադրություններից, նրանց մեջ հուշեր արթնացնում դավադիր-կարբոնարիների մասին։ Փորձառու վտարանդի-հեղափոխականները նրան ոմանտիկ էին համարում և այնքան էլ չէին վստահում։ Իսկ երիտասարդությունը, որն ավելի էր հակված գործողության, հաճույքով էր լսում նրան, բայց փորձով իմաստնացած, բավական սառն էր ընդունում նրա առաջարկները։ Բայց նա համառ էր և համբերատար։ Հազիվ զսպելով արցունքներն ու ցասումը, նա խոսում էր իր պառավ մոր և պատանի եղբոր մասին, որոնց կյանքը վտանգի տակ էր, քանզի նրանց, իբրև պատանդներ, պահում էին Ֆաենցում։ Նրա հուզմունքը փոխանցվում էր տարագիրներին, որոնցից շատերը նույն ցավն էին զգում։ Նա ծանոթացավ բոլորի հետ, պատրաստակամ էր, գործունյա. երբեք ոչինչ չէր խնդրում։ Գիտեին նրա միակ մի թուլությունը՝ նա շարունակ իր այս կամ այն ծանոթի մոտ պահելու էր թողնում ճամպրուկ կամ թղթե փաթեթ։ Բայց մշտական ուղևորությունները լիովին արդարացնում էին այդ վատ սովորությունը, թեև ոչ ոք առանձնապես շոյված չէր զգում իրեն վիճակված պահապանի դերից. փարիզյան ոստիկանության հետ ունեցած անախորժությունները տարագիրներին սովորեցրել էին այն ճշմարտությունը, որ աջ ձեռքի համար վտանգավոր է չիմանալ, թե ինչ է վերցրել ձախ ձեռքը։ Ամեն մեկն աշխատում է շուտ ազատվել իրեն վստահված բեռից և այն ուղարկել հարևանին։ Մարկը մեկ անգամ չէ, որ ստացել և իր մոտ էր պահել Բուոնամիկոյի իրերն ու թղթերը, պահել էր, պետք է ասել, առանց մի բավականության, բայց համարել էր, որ մերժումը կարող է վիրավորել իտալացուն, և ինքն էր տանջվում Բուոնամիկոյի հասցրած վիրավորանքներից։

Մարկի մաշկը, հավանաբար, ավելի զգայուն էր, քան իտալացունը, որովհետև սա երբեք սրտնեղություն չէր արտահայտում, նույնիսկ չէր հիշում իրեն հասցված վիրավորանքները, և անդուլորն վերսկսում էր իր փորձերը, զարձյալ խնդրանքով դիմում նրանց, ովքեր չէին մերժում նրան։ Իսկ եթե ոմանք պետք է որ ամաչեին, ապա հենց մերժողները, չէ՞ որ նրանց թերահավատությունը ոչնչով չէր հաստատվում։

Բուոնամիկոն իրեն վիրավորողների նկատմամբ անբարյացակամություն չէր տածում, դրա փոխարեն անկեղծորեն շնորհակալ էր բարեկամներից, իսկ Մարկն արժանանում էր նրա առանձին բարեհաճությանը։ Երկու տարի առաջ, երբ նախապատրաստվում էր կալանավորների փախուստը Լիպարյան կղզիներից, որոշ անվանի գործիչներ՝ Ֆրանսիայի, Անգլիայի և Բելգիայի լիբերալ շրջանների տղամարդիկ և կանայք, լարված գործի անցան։ Այդ փորձերով հետաքրքրվող Մարկն անզգուշություն ունեցավ ակնարկելու, որ գիտի ավելին, քան ասում է։ Ասենք, Բուոնամիկոն նրան բնավ էլ հարցուփորձ չարեց և կարծես ի միջի այլոց նրան վստահեց փախուստի ուրիշ ծրագիր, որի մշակմանը ինքն էր մասնակցել, խնդրելով սրբորեն պահպանել գաղտնիքը։ Այդժամ, ի նշան երախտագիտության անկեղծ խոստովանության համար Մարկն էլ պատմեց այն բոլորը, ինչ իրեն հայտնի էր նրանց ծրագրի մասին։ Նա դերադասեց իր դյուրահավատությամբ չպարծենալ Ասլայի առաջ, որը բարեհաճ չէր Բուոնամիկոյի նկատմամբ։ Բայց երբ շաբաթներ անց Մարկն իմացավ, որ Լիպարյան կղզիների իշխանությունները տագնապ են բարձրացրել և փախուստի ծրագիրը ձախողվել է, նրա հոգում անախորժ նստվածք մնաց։ Ջանալով ստուգել որոշ կասկածներ, որոնք չէր սիրում խոստովանել անգամ իրեն, Մարկը փորձեց, անուններն, իհարկե, չտալով, Բուոնամիկոյի ծրագրի մասին պատմել որոշ լիովին իրազեկ անձանց, բայց նրանք միայն գլուխները տարուբերեցին ու վճռականորեն հայտարարեցին.

— Ի՞նչ եք ասում, չէ որ դա անլուրջ բան է, պարզապես անհեթեթություն։

Այդ ժամանակ Մարկը վախեցավ, չլինի թե խաբեբային տասը ռուբլիանոց է տվել կեղծ դրամի դիմաց։ Սակայն վտարանդիհակաֆաշիստների միջավայրում փոխադարձ մեղադրանքները առավել քան սովորական բաներ էին, և քանի որ չէր կարելի

կասկածել թե՛ մեղադրողների, թե՛ մեղադրվողների անկեղծությանը, Մարկը բավարար հիմքեր չուներ ընդունելու ոմանց արդարացիությունը՝ ի վնաս ուրիշների, ասենք, ոչ մի բան թույլ չէր տալիս հաստատելու անմիջական կապը փախուստի փորձի ձախողման և Բուոնամիկոյի անհամեստության միջև։ Մարկը պարզապես աշխատում էր խուսափել նրա հետագա հանդիպումներից։

Եվ ահա մեկ տարի անց Լուգանոյում նա կրկին հանդիպեց Բուոնամիկոյին։ Իտալացին գրեթե գրկաբաց նետվեց դեպի նա։ Մարկը պատասխանեց զուսպ։ Բայց դա Բուոնամիկոյին չշփոթեցրեց։ Նա դավաճանեց ինքնաթիռը չարդուփշուր արած օդաչուի խիզախությունը, սակայն տեղնուտեղն էլ բարձրաձայն ավելացրեց, որ քաղաքի վրա մի քանի թռուցիկ գցելու համար կյանքը վտանգելը երեխայական արարք է, իսկ եթե մարդը գործ էր ձեռնարկել, ապա առավել օգտակար կլիներ դժոխքի պալատի վրա այլ բեռ գցել՝ մի զույգ ռումբ։ Մարկը լուռ մնաց։ Ժուլիենը, որի օդնությանն էր դիմում Բուոնամիկոն, նույնպես ոչինչ չպատասխանեց. նա սովորություն ուներ իր մեջ պահել իր մտքերը։ Ասյան վերցրեց Բուոնամիկոյի մատուցած ծաղիկները։ Խոտրեն ժպտալով, նա սևեռուն նայեց Բուոնամիկոյին, հոտ քաշեց ծաղիկներից, շուռ եկավ ու գնաց, ծաղկեփունջը մոռանալով նստարանին։ Բուոնամիկոյի ավանակներին պատասխանած միակ մարդը Աննետան էր, որին հուզել էին իտալացու պատմությունները իր տարաբախտ մոր մասին։ Նրանք հաճախ զրուցում էին, և Աննետան համբերությամբ լսում էր Բուոնամիկոյի տրտունջները, զվարճացնում անմխիթար զավակին, որը թաքուն սրբում էր գլորվող արցունքը, և երախտագիտությունից շնչահեղձ լինելով, հարգալից համբուրում իրեն սփոփող կնոջ ձեռքն ու անհաշիվ անգամ կրկնում. «Jante gracia»[1], Աննետան, սակայն, ոչ մի գաղտնիք չգիտեր և այդ պատճառով էլ չէր կարող դրանք մատնել։ Եվ պատշաճավարք Բուոնամիկոն որոշից չշարաշահել իրեն մխիթարող կնոջ բարությունը, նա սկսեց հեռու պահել իրեն փոքր ընկերախմբից։

Այնուամենայնիվ, նա գրեթե առաջինն իմացավ Իտալիա դնալու նրանց մտադրության մասին։ Մարկն ու Ասիան միայն նախորդ օրվա երեկոյան էին հյուրանոցի համարյա դատարկ

[1] Հազար անգամ շնորհակալություն (իտալ.)։

սրահում խոսել ենթադրվող ճամփորդության մասին։ Այնտեղ էին միայն Ժյուլիենը, Աննեատան և մի քիչ հեռու, սուրճի գավաթն առջևը դրած մի բարետես ծերունի էր նստել ու «Թայմս» էր կարդում։

Հյուսիսի անհյուրընկալ հողին ստվեր գցող լեռնապարիսպն անցնելու օրից Մարկը տառացիորեն հարբում էր արևի լույսից, ագահ հայացքով նա կլանում էր գեղեցիկ եզերքներն Իտալիայի, որն այնքան մոտ էր, գրեթե իր կողքին, և փթթում էր ծաղկի պես, իսկ վերևում, զարմանահրաշ բլրաշղթայից այն կողմ, Քոմո լճի դողդոջուն մշուշը ձուլվում էր երկնքի կապույտին։ Աննեատային և Ասլային աղդեն ծանոթ էր այդ կախարդական երկիրը։ Աննեատան պատանի հասակում, տակավին հոր կենդանության ժամանակ, եղել էր այնտեղ, այնուհետև պատերազմի տարիներին արտասահման կատարած ուղևորությունների ժամանակ հաճախ էր ծայրից ծայր կտրել-անցել նրա տարածքը։ Ասլան էլ էր եղել այնտեղ՝ երկու անգամ։ Առաջին անգամ նրան այնտեղ էին տարել, երբ փոքրիկ աղջիկ էր, մանկության երջանիկ օրերին, իսկ երկրորդ անգամ՝ վախճանի սև օրերին։ Կանայք տեսնում էին այդ երկրի երկերեսանի դիմակը՝ վարդերով հյուսապատված դղյակները, ինչպես նաև տենդը, քաղցը, կեղտը։ Բայց թե՛ մեկը և թե՛ մյուսը պարագծվում էր Ցիրցեայի մոգական շրջանակով՝ արևի լույսով, որի քաղցրանուշ անխռովությունը ողողում էր և՛ պերճանքը, և՛ աղքատությունը։ Այդ մասին, ինչպես լոկ իրազեկներին հասկանալի դաղտնի ուրախության մասին, Ասլան ու Աննեատան խոսում էին դավադրական ժպիտով։ Մարկը չգիտեր պաղի իսկական համը և այրվում էր ատամները դրա մեջ խրելու ցանկությամբ։ Ցանկալի պտուղը պոկելու համար բավական էր միայն ձեռքը պարզեր...

— Իսկ եթե գնանք Իտալիա։

Կանայք կառչեցին այդ մտքից։

Քո վայելած, իսկ սիրեցյալիդ դեռևս անհայտ հաճույքը նրա հետ կիսելը նույնն է, ինչ նրա հետ միասին, նրա բերանից քաղցրաբույր պտուղ ճաշակելը։ Ճիշտ է, Ժուլիենն այնքան էլ հավանություն չտվեց այդ մտքին։ Նրա կարծիքով ժամանակը չէր դեպի Իտալիա ճամփորդություն կատարելու, նա հասկանում էր, որ այնտեղ գնալը պարզապես վտանգավոր է։ Բայց նա գիտեր ավելորդ շրջահայեցություն դրսևորելու իր ներողությունը. ինչու փչացնել բարեկամների տրամադրությունը, դառնացնել

նրանց իրական ոչ մի հիմք չունեցող երկյուղներով։ Բացի այդ, Ժուլիենը այնքան էլ «գործերին տեղյակ» չէր, ինչպես որ լիբերալ, նույնիսկ ծայրահեղ ձախ մտավորականության ներկայացուցիչների մեծամասնությունը։ Նա սոցիալական մարտերում չափազանց մեծ տեղ էր տալիս գաղափարներին և խիստ թույլ էր «տնտեսագիտությունից»։ Նա վախենում էր Մարկի համար, բայց տվյալ պահին նրան անհանգստացնում էր այդ պատանի բանավիճողի գործունեության միայն մի կողմը՝ նրա պայքարը հակաֆաշիստական ճակատում։ Նա հաշվի չէր նստում շահի ինտերնացիոնալի, արդյունաբերական իմպերիալիզմի ֆեոդալների ուժերը, որոնց անհանգստացրել էին Մարկի կազմակերպած ելույթները։ Ժուլիենը բարեկամներից խոսք առավ հետևել իրենց և սահմանի այն կողմում լեզուների կապերը չարձակել։ Մարկն ու Ասյան ծիծաղեցին նրա վրա՝ իրենք բոլորովին չեն պատրաստվում արձակել իրենց լեզվի կապը, միայն մի բան էին ուզում՝ երկու շաբաթվա ընթացքում վայելել հրաշալի եղանակի հաճույքը։ Ո՛չ մի քաղաքականություն։ Երկու շաբաթով կորչեն բոլոր լուրջ հարցերն ու գործերը... Պայմանավորվեցին, որ Ժուլիենն ու Ժորժը Վանյային տանեն Փարիզ։ Աննետան նույնպես, քաղաքավարությունից դրդված, կամեցավ վերադառնալ տուն։ Բայց Ասյան հայտարարեց.

— Տե՛ս հա, կկառչենք խոսքիցդ, հենց քեզ համար վատ կլինի։

Աննետան պատասխանեց.

— Դու ճիշտ ես, մի կառչիր խոսքիցս, խնդրում եմ։

Բայց դեռ ոչինչ վերջնականապես որոշված չէր, ուստի և նրանք շատ զարմացան, երբ հաջորդ առավոտյան Բուոնամիկոն մոտեցավ նրանց և պայծառ ժպիտով հարցրեց.

— Դեհ, իսկ ե՞րբ եք մեկնում։

Մարկը ձևացրեց, թե չհասկացավ հարցը և խոսեց այլ բանից։ Ասյան մոայլվեց և վրա տվեց Աննետային՝ բերանբացության համար։ Բայց Աննետան երդվում էր, որ ոչ մեկին մի խոսք չի ասել։ Իրիկնադեմին, լճափնյա հոյակապ զբոսայգու հարավային ստվերախիտ ծառուղիներում ճեմելիս, Ասյան տեսավ նույն ծեր չենտլմենին՝ երեկվա «Թայմս» ընթերցողին։ Նա նստել էր նստարանին, Բուոնամիկոյի կողքին և ինչ-որ բանի մասին զրուցում էր նրա հետ։ Երեկոյան, հյուրանոցի սրահում Աննետան ամոթից կարմրեց, երբ Ասյան, նկատելով, որ այդ բարետես ծե-

բունին նստեց հարևան սեղանի մոտ, հանկարծ ընդհատեց խոսակցությունը, ոտքի ելավ և պարզ ու հստակ ասաց.

— Գնա՛նք մի ուրիշ տեղ խոսենք։

Երբ նրանք անցան սրահի հակադիր կողմը, Ասյան պարզաբանեց իր արարքը, և այնուամենայնիվ, չհամոզեց Մարկին։ Նա լսում էր Ասյայի փաստարկները, բայց նրան գրգռում էր նրա մշտական կասկածամտությունը։ Նա ձևացնում էր, թե նշանակություն չի տալիս Ասյայի խոսքերին և դրանցում տեսնում է կանացի խելքի բնածին հակվածություն դեպի հուզմունքներն ու տագնապները։ Նա անվանեց դա փոքրոգություն։ Իսկ Ասյայի համար դրանից ավելի մեծ վիրավորանք չկար։

Այդ պատճառով էլ Մարկը զուտ ցուցադրական խիզախությամբ հետագա օրերին դադարեց խուսափել Բուոնամիկոյի հետ հանդիպումներից, թեև իտալացու ընկերակցությունը նրան մաղաչափ բավականություն չէր պատճառում։ Ավելին, նա Բուոնամիկոյին նույնիսկ պատմեց ենթադրվող ճանապարհորդության մասին. Ասյան վիրավորվեց և մեջ չընկավ։ Բուոնամիկոն ջերմ հավանություն տվեց Մարկի պլաններին։ Նշեց ամենահարմար երթուղին, տվեց հասցեներ։ Եվ խիստ վշտացավ, որ չի կարող դուրս գալ նրանց հետ։ Ողբաց, որ իրեն արգելված է մուտք գործել հայրենիք։

Այնքան մեծ էր իտալական հողի հմայքը, որ Մարկն ու Ասյան Բուոնամիկոյի ուղեկցությամբ հաճախ զբոսանքներ էին կատարում նրա սահմանների մոտ։ Մի անգամ, Գանդրիայի մոտ, Բուոնամիկոն անցավ սահմանն ու իր ուղեկիցներին հրավիրեց հետևել իրեն։ Նրանք թույլտվություն չունեին, սակայն Բուոնամիկոն պարծենում էր, թե գիտի գաղտնի արահետներ, ուր իրենց ոչ ոք չի հանդիպի։ Ասյան, սակայն, կտրականապես հրաժարվեց այդ երեխայական մտքից, գաղտնի անցնել սահմանը, այն էլ ինչ-որ fuoruscito-ի (դեռ հայտնի էլ չի, թե ինչ տեսակի) ընկերակցությամբ, ոչ, որոշակիորեն չարժեր նեղություն կրել։ Բայց Մարկը համառեց ի հեճուկս նրա. ինչի՞ց պետք է ինքը վախենա։ Ախր Բուոնամիկոն իրեն ավելի շատ է վտանգում. համենայն դեպս ինքն էր այդպես պնդում և, այդու հանդերձ, հանձն առավ Մարկին տանել փոքրիկ ծովախորշը, որտեղ նրանք հաստատապես մակույկ կգտնեն և աննկատ, կախված ժայռերի պաշտպանության տակ, կկարողանան գետով վերադառնալ Գանդրիա։ Նա անպայման ուզում է Մարկին

ցույց տալ այն գաղտնի արահետները, որոնցով իտալացի վաճառականներն անցնում էին սահմանն ու իրենց հետ պրոպագանդիստական գրականություն տանում։ Ամեն ինչ ստացվեց այնպես, ինչպես նա ասել էր։ Մարկն ու Ասյան (որովհետև հենց որ Մարկը անփույթ տոնով Ասյային խորհուրդ տվեց մնալ, Ասյան, ինքնին հասկանալի է, անմիջապես գնաց նրա հետ) նշված վայրում իրոք գտան մակույկը, որը թաքցված էր խիտ սաղարթի ու առափնյա ուռենիների ճյուղերի վրանի տակ, և առանց արկածների վերադարձան լուգանու։ Բայց նույնիսկ այդ դեպքը չցրեց Բուռնամիկոյի նկատմամբ Ասյայի անվստահությունը։ Նա որոշեց, որ զինվոր զոհաբերելով, Բուռնամիկոն հույս ունի շահելու պարտիան։ Սակայն իր մտքերը նա պահում էր իր մեջ և դրանք չարտահայտեց անգամ հետևյալ օրը, երբ Համորեն Անննետային խոստովանություն կորզեց, որ իր բացակայության ժամանակ եկել էր Բուռնամիկոն, շատ հուզված, և ծածուկ նրան մի նամակ է տվել իր պառավ մորը հանձնելու համար, իսկ քանի որ մոր տանը հետևում են, զգուշությունից, որպեսզի բարեկամներին վտանգի չենթարկի, նա նամակը դրել է մեկ այլ փակ ծրարի մեջ, միլանցի իր ծանոթներից մեկի հասցեով, որը և նրա ուղերձը կհանձնի ըստ նշանակման։

Ասյան լռեց։ Վիճելն անօգուտ էր. նրա երկու տխմարները արդեն խոսք էին տվել։ Աննետային համար դա զգացմունքի խնդիր էր, Մարկի համար՝ պատվի։ Դեհ, իսկ Ասյային այնքան էլ չէին հուզում զգացմունքի և պատվի խնդիրները, երբ խոսքը մերձավորների կյանքի մասին էր։ Նա չէր տառապում ավելորդ փափկանկատությամբ։ Եվ վերջին գիշերը, որ Իտալիա մեկնելուց առաջ նրանք անցկացրին լուգանոյում, մինչ Մարկը քաղցր քնած էր, Ասյան հուշիկ վեր կացավ անկողնուց, պրպտեց նրա պիջակի գրպանները, հանեց դրամապանակը, իսկ դրամապանակից՝ նամակը և կատվաձագի պես անաղմուկ սողոսկեց վերմակի տակ, նույնպես անաղմուկ ավարը խոթեց բարձի տակ, իսկ հետո, զգալով, որ կատակը տակավին չի վերջացել, սկսեց քաշքշել Մարկին։ Մարկն արթնացավ, փնթփնթաց և ոչ մի կերպ չկարողացավ հասկանալ թե ինչու է այդ խելագար կինը քրքջում ու քրքջում...

Հաջորդ օրը հարմար պահ գտնելով, Ասյան տնտղեց հափշտակված ծրարը, ապա շատ խնամքով բացելով, ընթերցեց նամակը, այնուհետև վերընթերցեց բարձրաձայն ֆոֆսալով։

Նրա աչքերը պղտորվեցին, դեմքը խժռուվեց, մի ակնթարթ նստեց անշարժ, ուսումնասիրելով ուղերձը, սերտեց այն առաջին բառից մինչև վերջինը, ապա պատառոտեց, թքեց վրան, ասես իր առջև նամակագրի նողկալի կերպարանքն էր և, վերջապես, այրեց բոլոր հանցանշանները։ Ասյան չդոհացավ ուղերձի հետ դատաստան տեսնելով. նա մի պահ մտածեց, ապա շրթունքները լիզելով, ուրիշ նամակ գրեց, դրեց անվնաս մնացած ծրարի մեջ և նույն խնամքով էլ սոսնձեց։ Ծրարը պետք է հակադարձ ճանապարհով դրվեր Մարկի դրպանը, մի բան, որ Ասյային հաջողվեց անել մինչև Լուքանոյից մեկնելը։

Արևակնագույն լճի երանելի ափերին նրանց թափառումների առաջին օրերը նման էին այդ լճից ծաղկի պես բարձրացող Բորոմեյան կախարդիչ կղզիներին։ Այգիների տաք հովանու տակ օդը լցված էր տատրակների դունդունոցներով ու ծաղկած թուրինջների բուրմունքով։ Խնդությունների ծուլ նվագազարկը, ինչպես ելևէջային դամմա, ներհյուսվում էր երեք դպրոցականների անհոգ ծիծաղին։ Երեքն էլ հետևում էին թռղել հոգսերը. երջանիկ մարմինը, որ թոթափել էր սեփական ծանրությունը, ինչպես որ թոթափել էր նաև հոգին, մարգագետնի վրա ցածր սավառնող կաթնուկի նրբափետրիկի պես թեթև-թեթև էր թվում։ Բայց երեքից Աննետան, թերևս, ամենաջահելն էր։ Մոռանալով, որ սիրտը հիվանդ է, նա հեշտությամբ բարձրանում էր սարերը։ Նա ոտքով սայթաքուն կածաններով Մոնտարոնից իջավ Բավենո։ Երեկոյան նրա ներբաններն սկսեցին ցավել, իսկ առավոտյան կողմ ուռեցին կոճերը։ Բայց նա վախեցավ խոստովանել դա։ Այնուամենայնիվ, Միլան ժամանելու պես հարկ եղավ զենքը վայր դնել։ Երբ Աննետան փորձեց վեր կենալ, գոտկատեղի ցավից ճչաց։ Եվ խեղճ ալպինիստուհին հարկադրված էր հրաժարվել հետագա արշավներից և ամբողջ օրերով պառկել անկողնում։

Դրա փոխարեն նրա երկու ձագուկները բավականության ոչ մի փշրանք չկորցրին։ Աննետան ինքը նրանց վռնդեց սենյակից. «Գնացեք կեր հավաքեք թանգարաններում ու փողոցներում...»։ Չէ որ Իտալիայում ճանապարհորդությանը ընդամենը երկու շաբաթ էր հատկացվել։ Եվ, կնշանակի, չէր կարելի մի օր իսկ իզուր վատնել։ Ավելի վատ անոտք հաշմանդամների համար։ Աննետան կատակում էր, որպեսզի չվհատվի։ Վերմակի տակ անշարժ պառկած, վախենալով անգամ շարժումով արթնաց-

նել նիհրոդ-ցավը, նա լսում էր բաց պատուհանից ներս խուժող փողոցի ուրախ աղմուկը, հմայված հայացքով թափառում Duomo-ի տաճարի քիվի ճերմակ ճաղաշարքում, խեմերում ու մարմարակերտ անտառում, տաճարի նրբագեղ կարճ սլաքները քաղաքի շենքերի տանիքներից ավելի վեր էին խոյանում արևային թափանցիկ մշուշում։ Աղավնիների պտտվող երամն էլ կարծես տաճարի լուսապսակն էր։ Ժամանակն անցնում էր, բայց Աննետան ժամերը չէր հաշվում, իրեն միայնակ չէր զգում։ Հավանություն տալով երեխաների երիտասարդ եսասիրությանը, նա ձեռքն առավ Միլանի ուղեցույցը, հուսալով, որ այն մասամբ կփոխարինի giro -ին՝ քաղաքում զբոսնելուն։ Այդպես էլ ուղեցույցը ձեռքին աննկատելիորեն քնեց...

Ոտնաձայներ միջանցքում, դռան տիրական թակոց... Աննետան ցնցվեց... Հավանաբար արդեն ժամը հինգի մոտ էր։

— Մտեք,— ասաց Աննետան։

Ներս մտավ մեկը, հետո երկրորդը, երրորդը... Սափրելուց հետո կապտավուն դարձած այտերով երեք հաստատուն տիպ մտան սենյակ, կատաղած ու միամիտ հայացքներ գցելով այս ու այն կողմ։ Օպերետային յագոների շարժուձևերից Աննետան իսկույն ճանաչեց ոստիկաններին. նրանք հսկողության տակ բերել էին Մարկին ու Ասյային։ Իսկ միջանցքից զինվորական երկարաճիտ կոշիկների դոփյուն լսվեց՝ օգնության էր շտապում չորրորդ ոստիկանը։ Կտավի պես գունատված Մարկը ցասումից ամբողջովին կծկվել էր։ Նա բողոքում էր ներխուժման դեմ, նրա ձայնը հնչում էր խուլ, զգացվում էր, որ դժվարությամբ է զբսպում իր ճիչը։ Ասյան, անխռով, հանգիստ Ասյան իր պահակների թիկունքից մի արագ, խորամանկ հայացք գցեց Աննետայի վրա։ Առանց որևէ բացատրությունների, երկու ոստիկան սկսեցին պրպտել ճամպրուկներն ու իրերը։ Երրորդը, բնավ չքաշվելով, նստեց Աննետայի գրասեղանի մոտ և սկսեց արձանագրություն թխել։ Մի րոպեից Աննետայի սենյակը և երիտասարդ ւլույգի զբաղեցրած սենյակը լցվեցին ցիրուցան արած շորերով։ Կոպիտ խոշոր թաթերը տակնուվրա էին անում Ասյայի շապիկները։ Մարկը դոփում էր տեղում, չանալով զսպել իր կատաղությունը։ Ասյան նստեց աթոռին, ոտքը գցեց ոտքին, սիգարեթ վառեց և արհամարհանքով նայեց մոլի որսորդներին։ Նա ոստիկանական կոմիսարին խորհուրդ տվեց գրել այն խանութի անվանումը, որտեղից ինքը վարտիքներ է գնում։ Ոստիկաննե-

րին անտարբեր հայացքով ոտքից գլուխ չափող Աննետայի հանգըստությունը, երիտասարդ ծխամոլուհու հանդուգն վարքագիծը խորը խոցեցին ոստիկաններին։ Նրանք հայտարարեցին, որ անհրաժեշտ է խուզարկել հիվանդի անկողինը։ Մարկը կանգնեց մոր անկողնու առջև ու երդվեց, որ երբեք այդ թույլ չի տա։ Աննետան նրան ձեռքով մի կողմ հեռացրեց և դիմեց ոստիկաններին.

— Խնդրեմ, պարոնայք, չեմ առարկում, կարող եք հարդարել անկողինս։

Հենվելով Ասյայի ուսին, դժվարությամբ քարշ տալով չծալվող ոտքերը, Աննետան հասավ գրասեղանին, որի մոտ նստել էր ոստիկանական կոմիսարը, և ձեռքը մեկնեց հեռախոսափողին։ Բայց կոմիսարն արագ մի կողմ դրեց ապարատը։

— Հրաշալի է,— ասաց Աննետան այնպիսի տոնով, ասես բարապանին էր դիմում։— Այդ դեպքում ինքներդ զանգահարեք «Ադիջե և Պիավե բանկ» և հաղորդեք, որ տիկին Ռիվիերն ուզում է խոսել դիրեկտոր Լեոն Ջարայի հետ։

Ոստիկանը զարմացած հարցրեց.

—Signore commendatore[1] -ի՞։ Իսկ ինչո՞ւ։

— Ուզում եմ, որ նա ներկա լինի խուզարկության ժամանակ,— պատասխանեց Աննետան։

— Դուք ճանաչում ե՞ք signore commendatore -ին։

— Այդ մասին հարցրեք իրեն։

Ոստիկանները շփոթված իրար նայեցին. Կոմիսարի երկու օգնականները, որ արդեն բռնել էին ներքնակի ծայրերը, տեղում քարացան և հայացքով պետից հետագա ցուցումներ խնդրեցին։ Կոմիսարը, վերջապես, որոշեց զանգահարել։ Հեռախոսափողի մեջ լսելով ոսկեհունչ ձայնը (Ջարայի անունն արդեն վաղուց հիշատակվում էր «ոսկե» մակդիրով), լսելով commendatore-ի ձայնը, կոմիսարը տեղնուտեղը ողողվեց քծնի ժպիտով. նա մեծագույն հարգանք էր տածում ֆինանսական տիրակալի հանդեպ։ Ամեն ոք գիտեր, որ Ջարան վարչակարգի սյուներից մեկն է։ Թող որ դուշեն են դառնում բռունցքի կամ հանճարի շնորհիվ, մեկ է նման դուշեններին նեցուկ է լինում փողը, առանց փողի նրանց կործանում է սպասումը։ Բայց անսահման նվիրվածություն արտահայտող հաճկատար ժպիտը, որից նվաղում էր ոս-

[1] Սինյոր կոմանդոր (իտալ.)։

տիկնական կոմիսարը, հանկարծ տեղը զիջեց շփոթված ծառայողությանը. նա տվեց տիկին Ռիվիերի անունը և ի պատասխան լսեց ուրախ բացականչություն, ապա զայրագին բղավոց։ Բուռն երկխոսություն սկսվեց։ Կոմիսարը շփոթված ջանում էր բացատրել իրերի վիճակը, իսկ անտեսանելի commendatore-ն որոտ ու կայծակ էր արձակում։ Կոմիսարը վիճում էր, ներողություն խնդրում, նահանջում։ Կանայք և Մարկը լռում էին, աշխատելով հնարավորին չափ հասկանալ, թե ինչի մասին է խոսքը, լսելով հեռախոսափողից ժայթքող ձայնի խուլ դղրդյուններն ու կոմիսարի անճարտար հավաստիացումները, որոնք թույլ էին տալիս կռահելու, որ ոստիկանությունն ինքն է ընկել իր իսկ սարած ծուղակը և ցանկանալով շտկել իր առաջին սխալը, կատարել է երկրորդը՝ չի կարողացել մի այնպիսի բան հայտնաբերել, որը կալանքի օրինական հիմք տար։ Իսկ շշպռանքը դեռ շարունակվում էր։ Վերջնականապես ընկճված կոմիսարը հիմա պատասխանում էր միայն հարցալից ձայնարկություններով։ Անհետաև նրա ձեռքից վերցրեց հեռախոսափողը (կոմիսարը փութանակի մոտեցրեց ապարատը), բանկիրից ներողություն խընդրեց, որ նրան անհանգստացրել են նման անհեթեթ առիթով։ Շնորհակալություն հայտնեց Ջարային, ընդունեց Հռոմում զտնվելիս նրանց տուն այցելելու հրավերը և, խղճալով անշնորհք կատարողներին, որոնք տագնապած լսում էին խոսակցությունը, ասաց, որ միջադեպն սպառված է։ Կոմիսարը շտապեց հաստատելու Աննետայի խոսքերը և, հեռախոսափողը կախելով, երկար-բարակ ներողություն շռայլեց։ Իր օգնականներին նա հրամայեց համպրուկների մեջ դասավորել դուրս նետված իրերը, բայց Ասյան հարկ չհամարեց, որ ոստիկանները իրենց քրտնած ձեռքերով երկրորդ անգամ ճանկեն իր սպիտակեղենը, և անկոչ օգնականներին ազատեց այդ աշխատանքից։ Տագնապըն անցավ։ Համոզվելով, որ վրիպումը չի գրանցվի իր հաշվում, կոմիսարը վերափոխվեց սիրալիր ասպետի և նույնիսկ սիրտ արեց Ասյայի հասցեին հաճոյախոսել՝ իբր թե ինքը երջանիկ է, որ հանգամանքներն իրեն առիթ տվեցին ժամանակ անցկացնելու մի այդպիսի հմայիչ տիկնոջ հետ։

— Ես նույնպես,— պատասխանեց Ասյան,— ես նույնպես շատ երջանիկ եմ, դուք ինձ հրաշալի նյութ տվեցիք թերթի ապագա համարի համար։

Նենգ կինը մինչև վերջին րոպեն թաքցրել էր, որ ամերիկյան

թերթի խմբագուհի է։ Կամիսարը քիչ մնաց հուզմունքից շնչահեղձ լինի։ Աննետան ձեռքի շարժումով հանգստացրեց նրան ու կրկնեց, որ միջադեպը սպառված է։ Մարկը վերջ դրեց նվիրվածության նրանց հավաստիացումներին և լուռ, ձեռքի ցասկոտ շարժումով ասպատակիչներին խնդրեց հեռանալ, իսկ երբ նրանք դուրս եկան, դուռը շրխկոցով փակեց նրանց եռևից։ Ասյան ծիծաղեց զրնգուն, մի քիչ շինծու ծիծաղով։

Աննետան նրան ստիպեց լռել և, երկուսին էլ հանդիմանելով անհոգության համար, պահանջեց, որ անհապաղ բացատրեն, թե բանն ինչ է։ Մարկն սկսեց պատմել։ Այսան չէր ընդհատում։ Աչքերը խորամանկորեն կկոցած, նա հետևում էր Մարկի դեմքի արտահայտությանը, փոթկում ծիծաղից, լսելով նրա զայրույթով լի, կծկտուր պատմությունը, որովհետև Մարկն ինքն էլ չէր հասկանում, թե ինչ էր կատարվել. նա գաղտնիքի բացահայտման բանալի չուներ։ Վերջ ի վերջո, Ասյան չդիմացավ և ամեն ինչ բացատրեց։ Մարկը Բուոնամիկոյի նամակը տարավ նշված հասցեով։ Ինքնին հասկանալի է, ինչպես որ Ասյան էր սպասում, բարյացակամ ավետաբերներն ընկան մկան թակարդը՝ ուղղակի դռան մոտ իրենց սպասող ոստիկանության ճանկը։ Բայց երբ Ասյայի ու Մարկի ներկայությամբ նամակը բաց արեցին, կոմիսարը զարմանքից կակազելով, բարձրաձայն կարդաց հետևյալ տողերը.

«Եթե ուզում եք ձուկ որսալ, խայծը փոխեք։ Բուոնամիկոն մերկացված է»։

— Բայց ինչպե՞ս,— շփոթված տեսքով կրկնում էր Մարկը։— Չէ որ ինքն էր ինձ հանձնել այդ նամակը։

Հանկարծ Աննետան կռահեց։

— Ա՛յ թե ավազակն ես,— բացականչեց նա, նայելով Ասյային։— Ասա, ի՞նչ էր գրված իսկական նամակում։

Ասյան բառ առ բառ կրկնեց նամակի բովանդակությունը։

Նամակում, որն իրր հասցեագրված էր մեղսակիցներից մեկին, շարադրված էր ֆաշիստական ռեժիմի դեմ դավադրության մի ֆանտաստիկ ծրագիր։ Բուոնամիկոն խնդրում էր այդ երևակայական դավադրին ստորև նշված անձանց (այստեղ հետևում էր վտարանդի առավել ականավոր հակաֆաշիստ-գործիչների անունների մի երկար ցուցակ) հայտնել ամենաստույգ տեղեկություններ շատ բազմազան հարցերի վերաբերյալ՝ հակաօդային պաշտպանության, օդանավակայանների և ոստիկա-

նախան զորանոցների տեղաբաշխման, պահակային ծառայության և այլն, և այլն։ Իր ստորագրությունը Բուոնամիկոն նամակի տակ չէր դրել։

Մարկը շշմած լռում էր։ Անամոթ Ասյան հրճվում էր։

— Դեհ, ո՞վ է իրավացի։ Հիմարիկ ես, հիմարիկ։ Հասկացա՞ր, վերջապես, թե ով է քո ընկերը։

Մարկն ուսերը թոթվեց.

— Նա արդեն վաղուց էր ինձ կասկածելի թվում։ Բայց ես դեռ տատանվում էի։

— Իսկական Հռոմի պապի ջորի ես։ Ուրեմն դու այդ ամենը դիտավորյալ էիր անում, զուտ համառությունի՞ց։

— Կասկածելը կասկածում էի, սակայն ապացույցներ չունեի։ Բացի այդ, կարծում էի, թե կարելի է դավաճան լինել, բայց ունենալ մայր, միաժամանակ լրտես լինել ու ջերմորեն սիրող զավակ... Ես նրան արհամարհում էի, բայց խղճում... Մի բան չեմ հասկանում...

— Ի՞նչ կա այստեղ չհասկանալու։

— Չեմ հասկանում, թե ինչու նա որոշեց մատնել հենց ինձ, չէ որ ես միշտ նրան պաշտպանում էի բոլորից (և դա նա շատ լավ գիտեր), հենց ինձ, ախր եթե ես չլինեի, նրա դատաստանը Փարիզում վաղուց էին տեսել։

— Նրան կատաղության են հասցրել մշտական ձախորդությունները։ Եվ, նրան անհրաժեշտ էր ցանկացած գնով ինչ-որ բացառիկ բան անել։ Ասա, դու նրանից թաքցնո՞ւմ էիր քո կասկածները։

— Ոչ,— պատասխանեց Մարկը,— ես դա արժանապատվությունիցս ցածր էի համարում։

— Դե, տեսնում ես, դու նրան չես արժանացրել մի այնպիսի պատվի, ինչպիսին նրանից վախենալն է։ Եվ զարմանում ես, որ ցանկացել է քեզանից վրեժ լուծել։

— Իսկ դու, աղջիկս,— միջամտեց Աննետան,— դու, որ այդքան նրբամտորեն ըմբռնում ես ուրիշների սխալները, ինչո՞ւ ես ինքդ մեղք գործում։ Եթե ավելի խոհեմ լիներիր, մեզ կազատեիր ծուղակից, ուր քո իսկ սեփական բավականության համար, գայթակղելով գցեցիր հենց իրենց՝ որս հալածողներին։

— Մեղավոր եմ,— աղաղակեց Ասյան։— Մեղք գործել եմ և կգործեմ։ Չեմ կարող անդրդվելի մնալ մեղքի գայթակղու-

թյան դեմ, Et ne nos inducas[1], բայց ինչ քաղցր բան է վրեժխնդիր լինելը։

— Նա վրեժը լուծեց։ Դու վրեժդ լուծեցիր, հիմա ո՞ւմ հերթն է։

Աննետան իր երիտասարդ ուղեկիցներից թաքցրեց, որ երբ ինքը հեռախոսով բանկիրին ասաց Հռոմում նրա ընտանիքին այցելելու և երախտագիտություն հայտնելու իր մտադրության մասին, Ջարայի ձայնում հնչել էին անվճռական երանգներ և նա չէր կրկնել հրավերը։ Սակայն երեկոյան Ջարան ինքը զանգահարեց հյուրանոց՝ Աննետային։ Բայց Աննետան զավակների հետ գնացել էր զբոսնելու, իսկ երբ վերադարձավ, դռնապանը մոռացավ նրան հայտնել հեռախոսազանգի մասին և հաղորդեց միայն առավոտյան, այն պահին, երբ երեք ճանապարհորդները շտապում էին հասնել Բոլոնյան գնացքին։ Արդեն ուշ էր Հռոմ զանգահարելու համար։ Այդպես էլ Աննետան չիմացավ, որ Ջարան ինչ էր ցանկացել իրեն ասել։ Իսկ Ջարան շվեյցարական հանդիպումից հետո տեղեկություններ էր հավաքել իր նոր ծանոթների մասին և, մի քիչ տատանվելով բարեկամական տրամադրվածության զգացումի և զգուշության միջև, վերջինը ավելի ձեռնտու էր համարել իր համար, և հենց այդ պատճառով էլ լռեց։ Ջարան ճակատագրապաշտ էր՝ այն չափով, որ չափով ճակատագրապաշտությունը նպաստում էր նրա հանգստությանը։ Եթե ճակատագրին հաճելի չէ, որ նախորդ օրվա երեկոյան հեռախոսային խոսակցություն տեղի ունենար Աննետայի հետ, թող այդպես էլ լինի։ Իր պարտքը նա կատարել էր...

Աննետան խելացի էր համարում Ֆրանսիա վերադառնալ։ Այդչափ անհաջող սկսված ճանապարհորդությունը տագնապեցնում էր նրան։ Ասյան սակայն, ցնծում էր։ Նա ուրախանում էր, որ այնպես ճարպկորեն պատռել էր իրենց դուռը պատած սարդոստայնը։ Արկածախնդրության նրա կիրքը բավարարված էր։ Նրան հետաքրքրում էին ոչ այնքան թանգարանները, որքան այժմյան կենդանի Իտալիան։

Մարկը շտապեց ցրել ամպը, որը քիչ էր մնում մթագներ իր իտալական երկինքը, սակայն միլանյան պատահարը նրա մեջ մի շարք այնպիսի զգացումներ էր առաջացրել, որոնցից ազատվելը վեր էր նրա կամքից. անձնական, թեկուզև կարճատև ընդհարումը բռնակալությունը զրահի պես պաշտպանող ոստիկանա-

---

1 Մի գցիր մեզ գայթակղության մեջ (լատ.)։

կան ապարատի պրովոկացիայի հետ նրան օգնեց տեսնելու, որ այդ բռնակալությունը շատ ավելի իրական և անհանդուրժելի է, քան երևում էր թերթերում իր կարդացած բոլոր հոդվածներից ու նկարագրություններից։ Արդեն ոչ առաջվա ուրախությամբ էր նա հաճույք ստանում Իտալիայի օդից, արևից, արևայրուկով պատված գեղեցիկ դեմքերից, ձեռքերից, նրա առողջ ու հպարտ geoviness[1] -ից, ծաղիկներից, պտուղներից ու նկարազարդ տաճարներից։ Նա ակամա զգում էր ծովալճակի սիրտ խառնող հոտը, որը տարածվում էր Գաուդենցիոյի և Լուինիի նկարներից շողոմաբար աչքով անող սուրբ անառակ տղամարդկանցից ու կիսակույսերից, Լեոնարդո դա Վինչիի արուէգերի գայթակղիչ ժպիտներից։ Նրանց մեջ նա չկարողացավ դտնել լուսավոր մորմոքը այն անարգված ոգու, որը բոլոր ժամանակներում, Մորոյից[2] մինչև դուշե, հեգնանքի և երազանքի ուժով վրնջ էր լուծել բռնակալներից։ Մարկին նրանք թվացին հոգեպիղծ սատրուկների լոկ խորամանկ հնարք։ Նա տեսնում էր, որ վիթխարի գիշատիչ թռչնի թևերի ստվերը ծածկել էր արևը։

Այդ ստվերն ընկել էր Լոմբարդոյի հարթավայրերի վրա։ Վախկոտ հոգիները կուչ էին եկել մեկուսի անկյուններում, գլուխները թաքցրել թևերի տակ կամ ծլվլում էին, ձեացնելով, թե մոռացել են սարկությունն ու գլխներին կախված սպառնալիքը։ Աննեատայի և Կոմո կիսաբենցայի բարեկամները, որոնց Ռիվիերներն այցելեցին Միլանում և Բոլոնիայում, հյուրերին ընդունեցին աներկմիտ շփոթված տեսքով։ Նրանք տագնապալի հայացք էին գցում չորս կողմը, թվում էր վախենում էին, որ այցելուների բերանից ուր որ է մի անզգույշ խոսք կթռնի, ուստի և առաջինն էին սկսում խոսել եղանակից, անբնական հետաքրքրություն դրսևորելով նման քիչ հետաքրքրական թեմայի նկատմամբ, և դիտավորյալ բարձրացնում էին իրենց ձայները։ Ոմանք էլ, ավելի քաջերը, նույնիսկ սիրտ էին անում հյուրերին ընդունել հեռավոր անկյունում, նրանց տանելով սենյակաշարքի միջով, և բոլոր դռները փակելուց հետո, համոզվելով, որ կից սենյակում ոչ ոք ականջ չի դնում, նստում էին ու նստած մնում սաստիկ ընկճված տեսքով։ Նրանք այնպես էին նայում, ասես ներողություն էին խնդրում։ Եվ շշուկով նախազգուշաց-

---

1 Երիտասարդություն (իտալ.)։

2 Լոդովիկո Մորո, XV դարի վերջին Միլանի բռնակալ։

նում էին. «Խոսել չի կարելի...»։ Զգացվում էր, որ ամոթը հրել-մել է նրանց։ Նրանք չէին վստահում անգամ սեփական երեխաներին, որոնց տասը տարեկան հասակից հավաքագրել ու վարժեցրել էին որսամսխ, սովորեցնելով հետամտել ու մատնել, եվ ամենից վատը (նրանք չէին կարող դա չընդունել) զայրալի վախն էր, որը կաշկանդել էր Իտալիայի մի մասը, ամենից վատը մարքեր արտահայտելու անհնարինությունն էր. ամենօրյա սուտը, բառի, շարժման, հայացքի սուտը թափանցում էր հոգու մեջ, դառնում ստորացուցիչ սովորություն։ Ամենամաքուրները իրենց վրա դառնությամբ զգում էին դրա խարանը և, անկեղծ զեղումների պահին, զգացվում էր, թե որքան տանջված, վախեցած են նրանք։ Անհագուրդ կատաղություն էր թաքնված նրանց հոգու խորքում, բայց այդ կատաղության ձեռքերն ու ոտքերը չարդված էին։ Կարեկցությունից դրա բերանը կալնում էին հոգով.

— Խեղդվիր ու մեռի՛ր։

Դրա հետ մեկտեղ, քիչ չէին նաև այն մարդիկ, ովքեր անհիվանդագին, իրենց ազատության գնով հարմարվել էին նոր վարչակարգին։ Դրանում զգացվում էր խառնվածքների տարբերությունը։ Անգամ հարավի ժողովուրդները, իրենց անհատապաշտության ոգով հանդերձ, հազար կտոր են լինում նրա երկու հակամարտ տեսակների՝ ցանկացած գնով ազատության անհատապաշտության և կեսարյան վարչակարգի անհատապաշտության միջև, որը նույնպես լավ է, միայն թե բավարարված լինի անձնական հպարտությունը։ Ընդհակառակը մեծամասնությունը այդպիսին է։ Այդ նրանք են, ովքեր իրենցով առանձնապես հպարտանալու պատճառ չունեն, որովհետև միայնակ նրանք մերկ են, ընդունակ չեն ինքնուրույն ո՛չ մտածելու, ո՛չ էլ գործելու, ուստի թեթևացած շունչ քաշելով, հանձնվում են տիրոջ կամ պետության ձեռքը, որը մտածում է նրանց փոխարեն, դործում նրանց միջոցով, իսկ նրանց խիստ հաճելի է հաղորդակից դառնալ պետության հզորությանն ու խոստացած փառքին։ Ամեն մի առանձին մասնիկ ուռչում և դանդաղած է դառնում կամ փքվում այն գորտի պես, որը ձգտում է աճելով գերազանցել եզանը։ Երբ եզը բառաչում է, այդ կոկոռանները, այդ դողդոշները գլուխները կորցնում են հպարտությունից։ Իրենց բոլոր իրավունքները փոխանցելով բռնապետին կամ պետությանը, այդ տիպերը երևակայում են, թե դառնում են այն, ինչ երբեք չեն եղել, չէին կարող

լինել, այլ միայն երազել են։ Այդ պատճառով էլ նրանք հաճույքով համբուրում են կոշիկը իսկական կամ ստվարաթղթե կեսարի միայն թե նա կարողանա ներշնչել, որ թուլություններից յուրաքանչյուրը, մտնելով լիկտորական[1] փնջի մեջ, ձևական միավորման հետևանքով ուժ է դառնում... «Պետությունը ես եմ...» խեղճե՜ր։ Այդ նույն ժամանակ «կորպորատիվ» պետությունը ամբողջությամբ և մաս-մաս լափում էր կորպորացիաները, քաղաքացիների միությունները։ Փունջը սեղմել էին բռունցքի մեջ։ Suum cuigue[2]։ Ոմանց տրված էր խեղդել, ոմանց էլ՝ վզները դեմ անել։ Ով նրանք դեմ էին անում։

Ավելին, հպարտանում էին դրանով։ Հպարտանում էին բռունցքով։ Ով հակառակ ամեն ինչի, բոլոր տեղերից ճեղքում դուրս էր գալիս հույսը (ցանկացած հույս՝ կառուցելու կամ ավերելու), որը թաքնվել էր այդ հիանալի, խոստումնալից ժողովրդի մեջ, որի անսպառ կենսունակությունը նրան բարձրացնում է մտքի հուսահատությունից, տենդի և անէության իշխանությանը հանձնված դաշտերից էլ վեր։ Այդ երիտասարդները, այդ կրտած հոգիները նման գործողությունից հետո իրենց ավելի լավ էին զգում. համակվում էին անաբնական ուրախությամբ և նրանց բորբոքված հպարտությունը վառվում էր ջահի պես։ Դուչեի քամին սիրոկկոյի նման բորբոքում էր բոցը, տարածում ծուխը։ Թող կրակի սյունը՝ մոտալուտ ժայթքման նախանշանակը պսակի հրաբուխի գագաթը, նա՝ այդ երիտասարդությունը անհոգ խաղող է քաղում լեռնալանջերում։ Բայց դեռևս հայտնի չէ՝ նա ինքը գինի չի դառնա՞ արդյոք։ Ով ո՞վ կխմի այդ գինին։

Մարկի ուրախությունը պղտորվել էր։ Նրա հայացքը տեսնում էր ոչ միայն այդ նորաթուխ և հիպնոսացած կայսրության արտաքին ցուցադրանքը, նա տեսնում էր ավելին, քան կայսրության հավաքագրած երիտասարդության ցնծությունն էր, որն արդեն չէր գնահատում ազատությունը։ Նրա հայացքը թափանցում էր շենքի շքեղ ճակատամասից ներս, որտեղ ոչինչ չկար, այդ զարդարուն, օտարերկրացիներին ի ցույց դրված հոյակերտության ներսը։ Նա զգում էր, որ այնտեղ հոգու դատարկություն է տիրում։ Մարկը որպես սեփական ցավ էր ընդունում այդ երկիրը հյուծող տենդն ու աղքատությունը։ Երիտասարդ սիրա-

---

1 Լիկտոր— թիկնապահ հին Հռոմում։

2 Յուրաքանչյուրին՝ իրենը (լատ.)։

Հարի ամբողջ հրայրքով նա գեղեցիկ Իտալիան սեղմում էր գրկի մեջ և տառապում, տեսնելով նրա ստրկացումն ու նվաստացումը, իսկ ավելի շատ այն պատճառով, որ Իտալիան, հասնելով այդպիսի ստրկության և նվաստացման, այլևս չէր նկատում իր խայտառակությունը։

Ասյան, անկողնում պառկած, սիրաղեղ շոյում էր նրա ճակատը, աչքերը, շրթունքները։

— Բայց դա քո մեղքը չէ, թանկագինս։ Իզուր մի վշտանա։ կարելի է մտածել, որ բարկանում ես նրա վրա, գրեթե ինչպես ինձ վրա...

«... երբ դավաճանեցի քեզ»,— մտածեց նա։ Բայց լռեց։ Սակայն այն բանից, թե ինչպես Մարկը կտրուկ մի կողմ քաշվեց, Ասյան հասկացավ, որ նա կռահել է իր միտքը և ամբողջովին կծկվեց։

— Ներիր,— շշնջաց նա,— ներիր նրան և ինձ։

Մարկը գրկեց Ասյային։

— Հիմա ես քեզ առաջվանից ավելի ուժեղ եմ սիրում, բայց ես տխրում եմ նրա համար, քեզ համար, կատարվածի համար։

— Իսկ ես ամենևին էլ չեմ տխրում,— առարկեց Ասյան։— Եթե հիմա դու ինձ առաջվանից ավելի ուժեղ ես սիրում (իսկ ես քեզ է՛լ ավելի ուժեղ եմ սիրում), ես միայն ուրախանում եմ կատարվածի համար։

— Ինչպե՞ս ես համարձակվում,— ասաց Մարկը։

— Համարձակվում եմ։ Դո՛ւ էլ համարձակվիր,— պատասխանեց Ասյան, քնքշորեն կծկելով նրա վիզը։— Ես և դու տնային ձյունաթռչուլ սագեր չենք, որոնք կեղտոտելով թևերի ծայրերը, սկսում են նվնվալ։ Ես և դու վայրի բազեր ենք և առվի մեջ սուզվելուց հետո է՛լ ավելի վեր ենք սլանում։ Նեղություն քաշիր սիրել քո բադին։ Սիրիր, խնդրեմ, ուրիշի (թույլ եմ տալիս քեզ), սիրիր քո Իտալիան, որը կարապի գեղեցիկ վիզը մխրճելով տիղմի մեջ հաղթանակի խուրձի նման երկնքին է ցույց տալիս իր տտիկը։ Իսկ երբ նա սպառիսպուռ կեղտ հավաքի, նրա երկար վիզը չրի խոյրից դուրս կգա, և վիթխարի թռչունը թևերն ավելի ազատ կտարածի, կլողա իր ծովում՝ «mare nostro -ում»... Ամեն բան իր ժամանակն ունի՝ թե՛ ցեխի լոգանքը, և թե՛ օդային լոգանքը։ Իտալիան կվարժվի ճիշտ ինձ նման։ Ես մաքրվեցի իմ կեղտից։ Լողացա։ Եվ դու իմն ես, իմը։ Մի՞թե ինձնից ծովի թարմ օդի հոտ չի գալիս։

— Ծովահա՜ր,— ասաց Մարկը՝ նրա գրկում նրան փաթաթվելով,— նույնիսկ քո կեղտից է ծովային ջրիմուռների հոտ գալիս։

Իր հրճվագին վստահությամբ Ասյան վերականգնում էր Մարկի կյանքի հավատը. ոչ, չի կարող պատահել, որ Իտալիան, աստվածների ու հերոսների այդ երկիրը դառնա այնպիսին, ինչպիսին պատկերում է կոնդոտիերներին ծախված մամուլը, չի կարող պատահել, որ նրան փոխաբինեն հատկապես դուչեի սցենարի համար ներկած թատերական բեմիրերը։ Թող որ փակել են նրա բերանը, բայց մենք գիտենք, հավանորեն գիտենք, որ այնտեղ կան մեր կոմս Կիարենցայի պես ազատ հոգիներ։ Գիտենք, որ ողջերից շատերն օժտված են ազատ հոգով, բայց մենք կզգուշանանք նրանց անունը տալուց, հիշատակենք լոկ նրանց, ովքեր իրենց կյանքը զոհաբերելով, արժանացան անմահության։ Ամենդոլային, Սատեոտիին և Լաուրոյին[1] Իկարի եղբայրներին։ Սև բռնակալներին ու ծախու քահանաներին մեծ Դանթեն, որը նույնքան դաժան էր, որքան նրանք, բայց և՛ ատելության, և՛ սիրո պահին շողշողում էր իր հանճարի գոհարներով, դատապարտեց հավերժական տառապանքների իր խոկ ստեղծած դժոխքում։ Եվ այդ բռնակալներին ու քահանաներին ծնած նույն հողը բոսորանում է սուրբ Ֆրանցիսկի վարդերից ու արյունից։ Անարգ խաժամուժը, որ հոշոտում էր Բուրբոնների ապնիվ զոհերին, ինչպես գազանները Հռոմի կրկեսի ասպարեզում, հարազատ եղբայրն էր Risorgimento[2]-ի նահատակների ու աշխարհի ամենամարդկային ժողովրդի։ Այդ սրբազան երկիրը մեզ համար ընդմիշտ կմնա որպես մեր սիրո առարկա, որպես երկիր, որը ծնել է մարդու իրավունքների առաքյալ Մաձինիին։ Նա՝ Մաձինին, մինչև այժմ էլ ապրում է կեղեքվածների սրտում, կեղեքվածների, որ երբեք մեջք չեն ծռի կեղեքիչների առաջ։ Եվ այդպիսի մի իտալացու՝ կոմս Բրունոյի երիտասարդ բարեկամի,

---

1 Ամենդոլա— իտալիայում պառլամենտական ընդդիմադրության ղեկավար, սպանվել է ֆաշիստների կողմից։ Մատեոտի— իտալացի սոցիալիստ, 1924 թ. ապրիլին ունեցած իր ելույթում մերկացրել է ընտրությունների ժամանակ ֆաշիստների կատարած մեքենայություններ։ Սպանվել է Մուսոլինիի հրամանով։ Լաուրո դե Բոզիս— իտալացի երիտասարդ վարպետի, որը ինքնաթիռով թռչելով Հռոմի վրայով ֆաշիղմի դեմ պայքարի կոչող թռուցիկներ է նետել։ Վեպում հանդես է գալիս Սիլվիո անվամբ։

2 Ավստրիայի տիրապետությունից ազատագրվելու համար XIX դարի կեսերին Իտալիայում ծավալված ազատագրական շարժում։

նրա alter ego[1]-ի, Հարուսվում բռնավորների կողմից ընդհատված համառոտ աշխատանքի նրա դինակցի հետ Մարկի ունեցած առաջին իսկ հանդիպման ժամանակ այդ իտալացին հպարտ ու տխուր ժպիտով մեջ բերեց Էվֆորիոնի հերոսական խոսքերը. «Մարդու բրոնզե կուրծքը անհաղթահարելի ամրոց է»[2], եվ Մարկը հանկարծ համակվեց վստահությամբ, որ բռնապետության բոլոր գրոհները, զարնվելով այդ ամրոցի պատերին, կփշրվեն։ «Credo... Հավատո՛ւմ եմ։ Հավատում եմ, որ Իտալիան հարություն կառնի։ Հավատում եմ ճշմարտության ու կյանքի ուժին»։

Ասյան ասաց.

— Մենք առողջ ենք։ Աշխարհն առողջ է։ Այն ամենը, ինչ անառողջ է, մեռնում է։ Առողջը կապրի, առողջը կհաղթի։ Եվ մենք, սրտակից ընկեր, կօգնենք նրան։ Ես և դու զորակոչված ենք ավլող-սրբողների մեծ բանակի շարքերը։ Վաղը տագնապ կլինի։ Թող ամեն ոք սրբի իր դռան առաջը։ Եվ եթե նրանց դռների առջևից գարշահոտ է գալիս և այդ ծուլերը, այդ lazzaroniները հապաղում են, ինչ աշած, ուրիշները կավլեն նրանց դռների առաջը։ Եթե նրանք իրենք չազատագրվեն, մենք նրանց կազատագրենք... Իսկ առայժմ, ծուլիկ, մաքրիր մարմինդ ժանգից։ Եվ ամբողջ ուժով (չէ որ ուրախությունը ևս նույն ուժն է) վերցնենք մեր ուրախությունը։

— Ես վերցնում եմ իմ ուրախությունը,— ասաց Մարկը, գրկելով Ասյային։

Ուրախությունը վերադարձավ։ Եվ տիրելով Մարկի մարմնին, այլևս նրան չլքեց նրանց ամբողջ ճանապարհորդության ժամանակ։ Երկու թովչուհիների՝ կատվիկ Ասյայի և իտալական primavera[3]-ի ընկերակցությունը հոգսի և տխրության տեղ չէր թողել։ Եվ ինչ հոգսեր կարող են տանջել մարդուն, եթե նա գիտի, թե ի՛նչ է անելու և հաստատ գիտի, որ վաղը սկսելու է դրծել։ Մնում է միայն սպասել այդ վաղվան։ Վաղվա օրը կգա։ Ուրեմն, հանգիստ խղճով, թեթև սրտով կտցահարենք ու ըմբոշխնենք այսօրվա վերջին ժամերը։

Եվ նրանք ըմբոշխնում էին այդ ժամերը, ըմբոշխնում երեք

---

1 երկրորդ «ես» (լատ.)։

2 Գյոթե. «Ֆաուստ», երկրորդ մաս— Ռ. Ռ.։

3 Գարուն (իտալ.)։

կտուցով։ Նույնիսկ սարյակը՝ խաղողի այգիների այդ պատուհասը, իր ախորժակով զիջում էր նրանց։ Նրանք շա՜տ երկար ժամանակ էին զրկված եղել այդ ոսկեփայլ պտուղներից։ Իսկ Մարկը երբեք դրանք չէր ճաշակել։ Նա առաջին անգամ էր դուրս եկել Հյուսիսային Ֆրանսիայի սահմաններից։ Հիացմունքի արցունքներն աչքերին, նա շարունակ կրկնում էր.

— Կնշանակի, այդ ճի՞շտ է։ Կնշանակի, երկրի վրա իրոք գեղեցկություն գոյություն ունի։

Ասյան ի պատասխան ծիծաղում էր։

— Ինչ ասել կուզի, սիրաշահեցիր մեզ։

Մարկը շփոթված փորձեց արդարանալ.

— Դեհ, ոչ, ես քո մասին չեմ ասում, ձեր մասին չեմ ասում։ Դուք, դուք իմն եք, ես ձեզ այլևս չեմ տեսնում։ Ես նկատի ունեի այս բոլորը, բոլորը, ինչ կա մեր շուրջը... (Եվ նա ձեռքի շրջագիծ շարժումով ցույց տվեց երկինքն ու երկիրը)։

— Լավ, ներողություն մի խնդրիր, գայլի ձագ,— ասաց Ասյան։— Ես շատ լավ գիտեմ, որ եթե հազարապատիկ այլանդակ էլ լինեի, դու, այնուամենայնիվ, ինձ ավելի շատ կսիրեիր, քան առաջին գեղեցկուհուն։ Դա արդեն կախված չէ քեզնից։ Որովհետև դու իմն ես, ես՝ քոնը։ Ուրեմն, աչքերդ լայն բաց, ըմբոշխնիր։ Քո Ասյան խանդոտ չէ։ Եվ եթե շատ ես ուզում, նույնիսկ կարող ես համբուրել բոցկլտացող աչքերով տեղացի որևէ աղջկա շուրթերը, միթե՞ Հաղթանակի արձանին նմանվող քչերը կան, որ զամբյուղը գլխներին դրած, վահանի պես ամուր և առագաստի պես ալիքներից վեր բարձրացող կրծքով գնում են ճանապարհներով։ Իսկ ինձ կբերես նարնջի... կամ սոխի բուրմունք,— ավելացրեց նա։— Բայց դրանք դատարկ բաներ են։ Ես չեմ խանդոտ երկրային պտուղներին։ Քո շրթունքներն իմն են։ Ուրեմն, նրանց հաճույք պատճառիր։ Բոլորը իմն է։

Որքան ավելի էին նրանք առաջ շարժվում դեպի Իտալիայի խորքերը, այնքան շատ էին ուրախանում։ Այն իր բարձրակետին հասավ Ապենինյան լեռնապարից անդին։ Կանայք կանխավայելում էին Մարկի հուզմունքը, որն անխուսափելիորեն համակելու էր նրան Ֆլորենցիան տեսնելիս։ Սակայն այդ հուզմունքը գերազանցեց նրանց բոլոր սպասելիքները։ Մարկը տառացիորեն շնչահեղձ եղավ, երբ նրան լորս կողմից շրջապատեցին լայն ալեերով պատված նեղլիկ փողոցները, պալատների ահռելի պատերը, երբ հանկարծ երկինք մխրճվեց Սինյորայի աշտարակի

մերկացած սուրը։ Սկզբում՝ վախ։ Մարկը լուծց։ Դաշույնի հարվածը, Մարկը ոտքերում թուլություն զգաց և հենվեց պատին։ Հետո հիացմունքը, ինչպես արյան շիթը վերքից, դուրս հորդեց և դարձավ ճիչ։ Նրա ուղեկցուհիները քրքջում էին. նրանք տեսնում էին միայն գեղեցկությունը։ Կվատրոչենտոն[1], նրա կոտորածով ու ամեն մի անկյունում դարան մտած մահով հանդերձ Armeria[2]-ի այդ գեղեցիկ ու նրբակերտ օդազրահը, որի վրայից դարերը, թանգարանապահներից ոչ վատ, սրբել էին արյան բծերը, նրանք տեսնում էին միմիայն արվեստի հանդերձով։ Բայց Մարկը, որ լավ որսկան շուն էր, իսկույն ևթ զգաց ժանգի անախորժ հոտը։ Արյունը արյուն է։ Եվ տարիներն այստեղ կապ չունեն։ Գուցե սա Մատեոտիի արյո՞ւնն է... Աննեատան Մարկին ցույց տվեց այն հրապարակը, որտեղ ողջակիզել էին Սավոնարոլային՝ «տիրոջ նոխազին...», իսկ հետո այն պալատի սև ճակատամասն էր, ուր կեռիկներից, ինչպես մսի կրպակի ցուցափեղկում, մի ժամանակ կախ էին տալիս քառատված դավադիրների գլուխներն ու մարմինները։ Եվ եկեղեցու պատերը, որ նախշված էին բոլոր այդ դուչեների, կոնդոտիերների, մեծն մսագործների դիմանկարներով։ Ասյան ու Աննեատան ծիծաղում էին այնպես, ինչպես բարակ պարանոցները անչափ մեծ գլուխների ծանրության տակ ցողունի պես թեքած շիկավարս, նրբակազմ, երկայնաոտք աղջիկներն են ծիծաղում թանգարանների որմնանկարներում ու նկարներում։ Մարկն էլ էր ծիծաղում։ Նա նույնպես ծիծաղում էր։ Կյանքը գեղեցիկ է։ Ինչ դաժանություններ֊ի համար ասես, որ չես ների նրան, երբ երկինքը մանուշակահյուս իր պսակը դնում է նրա ճակատին, ինչպես մռայլ պալատների տանիքին։ Եվ եթե այդ ճակատի տակ ծաղկում են շուրթերի պես հրաբորբոք հայացքներ։ Եվ եթե այդ շուրթերից երաժշտության պես ծորում է տոսկանյան խոսքի մեղեդին։ Եվ այդ արբեցումը երկընքից, արվեստից, մարմնական գեղեցկությունից ամբողջական դարձնելու համար՝ սառն ու այրող կիանտիով համեմված համեղ ճաշ... Մարկը բոլորովին էլ գինեժուժկալ մարդ չէր, և նրա ուղեկցուհիները՝ նախահայր Նոյի իսկական դուստրերը,

---

1 Իտալական մշակույթի վաղ վերածննդի շրջանի իտալերեն անվանումը։ Բառացի՝ չորս հարյուր։

2 Ձինանոց (իտալ.)։

նույնպես։ Նրանք պատշաճն էին հատուցում այն ամենին, ինչ լավ էր...

Բայց եթե իրիկնադեմին տուն էին վերադառնում անվերջանալի վազվզոցներից հոգնած ու երջանիկ, եթե նրանց գլուխները պտտվում էին, մեղավորը ոչ այնքան չափավոր խմած կիանտին էր, որքան Ֆլորենցիայում անցկացրած հերթական օրը, որի պերճանքն այնպես ագահաբար կլանում էին նրանց հայացքները։ Եվ արդեն անկողնում պառկած, երկու կից սենյակները միմյանցից բաժանող դռները չկողպելով, նրանք՝ մայրիկն ու նրա բադիկները շարունակում էին շատախոսել այնքան, մինչև որ քունը վրա չէր հասնում։ Բայց Աննետան հաճախ կեսգիշերին վեր էր կենում անկողնուց (քունը նրան պետք էր միայն ոչ մեծ չափերով), բոբիկ ոտքերով անաղմուկ մոտենում պատուհանին, ագահաբար խմում աստղային խավարի զովությունը։ Նա կարող էր ժամերով այդպես կանգնել ինչ-որ զմայլուն ընդարմացման մեջ, քանի դեռ այգն ու վաղորդյան զովը նրան, որ արդեն մրրսում էր, չէին քշում վերմակի տակ։

Մի անգամ Մարկը գտավ նրան այդ վիճակում։ Մեկնելու նախօրյակին էր։ Վաղը երեկոյան գնացքով նրանք ուղևորվելու էին Հռոմ։ Հինգ օր պետք է մնային Հավերժական քաղաքում։ Իսկ հետո՝ տուն... Մարկն անաղմուկ գաղտագողի մոտեցավ Աննետային։ Ձեռքը դրեց նրա ուսին։ Աննետան ամբողջ մարմնով դողաց և հանկարծ մեղավոր աղջնակի նման ներողություն խնդրեց։

— Մի բարկանա ինձ վրա,— ասաց նա։— Այսպիսի գիշերներին մեղք է քնելը, հատկապես, երբ այնքան քիչ է մնացել ապրելու։

Մարկը չառարկեց, ինչպես որ նման դեպքերում սովորաբար առարկում են քաղաքավարությունից դրդված։ Նա չասաց. «Բոլորովին էլ քիչ չէ մնացել քեզ ապրելու, այլ շատ»։ Նա ասաց.

— Դու իրավացի ես։

(Եվ վաղը երեկոյան Աննետան կհիշի այդ խոսքերը)։

Մարկը աթոռի վրայից վերցրեց թիկնոցն ու քնքշորեն ծածկեց մոր ուսերը։ Այդ ժամանակ միայն Աննետան զգաց գիշերվա զովությունն ու ցնցվեց։ Մարկը բռնեց Աննետայի ձեռքը, և նրանք մնացին կանգնած պատուհանի մոտ, հետևելով գիշերային ժամացույցի և սեփական մտքերի վազքին։ Պատուհանից (նրանց սենյակները գտնվում էին հյուրանոցի ամենավերին

հարկում) նրանք սեսնում էին Ֆլորենցիայի տանիքներն ու թմբուկների վրա ծանրորեն նստած, ցատկի պատրաստ հրեշավոր միջատի նմանվող ցածրիկ տաճարի խավարից դուրս լողացող զանդակատները։ Ներքևում ինչ-որ տեղից լսվում էր շատրվանների կարկաչյունը, և ժամացույցները, աքաղաղների պես միմյանց աղդանշանելով, տասնհինգ րոպեն մեկ ծլնգում էին, անդուլորեն հիշեցնելով, որ ժամանակն անցնում է։ Քարե սալերի վրա թնդյունով արձադանքվում էին ուշացած անցորդի ոտնաձայները, իսկ հարևան սենյակից (Աննետան ու Մարկը ժպտալով նայեցին իրար) լսվում էր Ասյայի ցածր գորգծարար խոմփոցը։ Աննետան դիմեց որդուն.

— Իմ մեծ աղա, դու երջանի՞կ ես։

Նա պատասխանեց.

— Շնորհակալ եմ քեղանից, իմ մեծ մայրիկ։

— Ինչի՞ համար ես շնորհակալ։

— Ինձ կյանք պարգևելու համար։

Աննետայի սիրտը ուրախությունից խայտաց.

— Կնշանակի, վերջ ի վերջո, դու չես ափսոսում այս արկածի համար։

— Այն բանի համար, որ ինձ վիճակվել է մա՞րդ լինել,— հարցին հարցով պատասխանեց նա։— Ոչ։ Հակառակ ամեն ինչի՝ վշտին, ամոթին, դաժանությանը և նույնիսկ մահվան անխուսափելիությանը, որ վրա է հասնում վերջում, այնուամենայնիվ, արժե՛ր ապրել։ Dimicandum[1] : Դա լավ է, դա հիանալի է...

— Խաղաղությամբ՝ սրտում։

— Խաղաղությամբ՝ մարտում։ Եվ բարի մարտական գինակիցները, ինչպես որ դուք երկուսդ եք...

Նա ցույց տվեց այն սենյակի դուռը, որտեղ քնել էր Ասյան, և գրկեց մյուսի ուսերը։

— Եթե մեկն ընկնի մարտում, մյուս երկուսը նրան կհասցրնեն նպատակին (Աննետան նկատի ուներ իրեն)։

— Վճռված է։ Իսկ հաղթողը կհաղթի երեքի փոխարեն։

Աննետան հպարտությամբ հաստատեց.

— Բոլորի փոխարեն։

Մարկն ուրախությունից ծիծաղեց։ Նա պոռթկումով գրկեց

---

1 Պետք է պայքարել (լատ.)։

Աննետային, որը քնքշորեն պատասխանեց նրա գրկախառնությանը...

Հանկարծ բոբիկ ոտքեր դուրս եկան հատակին։ Մաղրական մի ձայն շշնջաց.

— Բռնե՞լ եմ հանցանքի վայրում։

Եվ երկու թաթիկներ միաժամանակ իրենց եղունգները խրեցին երկու հանցագործների մեջքը։ Դա նրանց կատվիկն էր, նրանց Ասյան։

— Ա՜հ, ինչ ամոթ է,— ասաց նա։— Աննետա մայրիկը փչացնում է ամուսնուս։ Լովելա՜ս։ Անմիջապես վերադարձիր իմ անկողինը։

Բայց նրանք գրկեցին նրա ուսերը, նույնպես փաթաթեցին թիկնոցով։ Սկզբում Ասյան ձեռք էր առնում Մարկին, ձեռք էր առնում Աննետային, իսկ նրանք խուտուտ էին տալիս նրան... Բայց, վերջապես, երեքն էլ քար կտրեցին, հափշտակված բացառիկ գեղեցիկ տեսարանով՝ բացվում էր արշալույսը և, ասես զույգ արագավազ ոտքերով օժտված, տանիքից տանիք էր վազում։ Գիշերային խավարը նահանջում էր, կուչ գալիս մթին անկյուններում։ Եվ հանկարծ, ինչպես ոսկե շերտաձող, հրդեհվեց տաճարի տանիքը պսակող խաչի շեղբը։ Օրը աշխարհին տիրում էր մարտով։

Նրանք բավական ուշ դուրս եկան հյուրանոցից։ Նախօրյակին խոսք էին տվել Ֆլորենցիայում իրենց այդ վերջին օրվա ոչ մի մասնիկը չկորցնել։ Բայց անքուն գիշերից հետո քնով անցան։ Մարկն ու Ասյան, արթնանալով մեկը մյուսի գրկում և լսելով, որ ժամացույցը տասնմեկը խփեց, խենթի նման վեր թռան։ Սակայն, «վերջին հաշվով», ինչպես Աննետան էր ասում, երկուսն էլ համարեցին, որ ժամանակը զուր չի կորսվել։

Աննետան չսպասեց նրանց։ Նա սեղանին երկտող թողեց, որով նրանց ժամադրություն նշանակեց կեսօրին մոտ, տաճարում։ Նրանք գնացին այնտեղ և ոչ առանց դժվարության Աննետային գտան ամենամութ անկյունում, գլխավոր զոհասեղանի հովանու տակ, ողբերգական «խաչից իջեցնելը» քանդակի պատվանդանի մոտ։ Միքելանջելոյի բոլոր ստեղծագործություններից այն ավելի մոտ էր նրա սրտին, բոլորից շատ էր հուզում, և Աննետան եկել էր նրան հրաժեշտ տալու։ Երիտասարդները նրան տարան իրենց հետ։ Ասյան այնքան էլ չէր սիրում Միքելանջելոյին (առհասարակ նա շատ էլ չէր սիրում արվեստը) և

արհամարհանքով դուրս ցցեց ստորին շրթունքը, որպեսզի ցույց տար իր ղզվանքը խավարով, ինչպես սարդոստայնով, պատված այդ քարակոփ ճիվաղների նկատմամբ։ Իսկ սարդը կծկվել էր գմբեթի տակ և տարածել իր վիթխարի շոշափուկները։

— Թո՛ւհ։ Շուտ գնանք,— պահանջեց Ասյան, նրանց աղմուկով տանելով իր ետևից։ Նա իրեն վատ էր զգում տաճարում, աստծո հայացքի տակ, որը կծկվել էր իր խուլ անկյունում, ասես դարանակալում էր մեկին։

— Սատանան օրհնյալ ջուր չի սիրում,— հիշեցրեց Մարկը։

— Ես սիրում եմ աղատ ջրերը,— առարկեց Ասյան,— երկրային ջրերը և այն ջրերը, որ արևի տակ են։ Համբ, թանդրեմ, ոտքերի լոգանքի օրհնյալ ջուրը։

— Իսկ էլ ավելի շատ սիրում ես խաղողի ողկույզների ջո՞ւրը։

— Բայց չէ որ այն Քրիստոսի արյունն է,— դրգռում էր կինսատանան։— Գնա՛նք հարբեցողությամբ զբաղվենք։

Նրանք ուրախ գնացին նախաճաշելու։

Ընտրությունը կանգ առավ Առնոյի մոտ գտնվող trattoria[1]-ի վրա։ Ճանապարհին Ասյան կատակով ծաղրում էր Աննեհատայի բարեպաշտությունն ու խավարի սերը։ Եթե ինքը ավելի շուտ իմանար դա, ասաց Ասյան, ոչ մի դեպքում չէր ամուսնանա նրա որդու հետ։ Աննեհատան պաշտպանվելով հավատացնում էր, թե խավարն անհրաժեշտ է թեկուզ այն բանի համար, որ ավելի լիակատար վայելեն լույսը։

— Իսկ վիշտը այն բանի համար, որ վայելեն ուրախությունը,— շարունակեց Ասյան,— հին երգ է «Durch Leiden Freude»։ Խոնարհաբար շնորհակալ եմ։ Ես գերադասում եմ չքնդեցրած գինու պես անխառն ուրախությունը։ Ոչինչ, գլուխս մի կերպ կդիմանա։ Ջեմ ցանկանում, որ բաժակիս մեջ արցունքներ կաթեն։ Ինձ իմ Մարկն է պետք, առանց խառնուրդի...

— Քո Մարկը, քո Մարկը։ Ահ թե զավթիչ ես, հա՛։ Արի կիսենք։ Ախր նա ինչքան չլինի իմ գուռից է դուրս եկել։

— Այդ դեպքում ինձ ի՞նչ դեր է հատկացվում,— վրդովվեց Մարկը։— Աստված վկա, նույնիսկ ծիծաղելի է։ Լեզուներդ ձեզ քաշեք, սիրելի շաղակրատներ։ Եթե, այնուամենայնիվ, վիճակված է, որ ինձ ուտեն ու խմեն, թող այդ անի գոնե մարդկության «մեծ կոկորդը»։

---

1 Փոքրիկ ռեստորան (իտալ.)։

— Մարդկությունը ես եմ,— կտրուկ ասաց որկրամոլը։ Բայց տեղն ու տեղն էլ ավելացրեց.

— Այս բոլորը կատակ է, սիրելիս, սակայն դու ճիշտ ես։ Հենց դրա համար էլ մենք սիրում ենք քեզ։ Եվ ես բնավ զավթիչ չեմ։ Ես ուզում եմ, որ իմ Մարկը լինի բոլորի համար։ Թող քաղցածները քեզ ուտեն։ Եվ եթե այդպես է վիճակված, թող ուտեն ու իմեն երեքիս միասին։

Պոնտո-Վիքոյում կանայք մի քիչ երկար մնացին՝ ուզում էին կրպակում որևէ բան գնել ի հիշատակ Ֆլորենցիայի։ Գուցե խճանկար, գուցե ճարմանդ։ Ասյային դուր եկան եղջյուրավոր մարջանները, որոնք, ինչպես հայտնի է, օժտված են չար աչքից պահպանելու հատկությամբ։ Ասյան թեպետև ծիծաղում էր անահավատության վրա, բայց ով կերաշխավորի, որ այն չէր ապրում նրա խառնաշփոթ հոգու խորքում։ Կրոնասիրություն՝ ոչ մի կաթիլ։ Դեհ, իսկ անահավատություն, որքան ուզես։ Դա հո խաղի պես բան է։ Իսկ խաղից բավականություն ստանալու համար պետք է համակվել նրանով։ Տակնուվրա անելով արկղերը՝ Ասյան չզգաց, որ չար աչքն արդեն այնտեղ է, իր կողքին։ Մարկը, որը ոչինչ չէր փնտրում արկղերի մեջ և, հետևաբար, կարող էր չորս կողմը նայել, կամրջի մուտքի մոտ նկատեց մի քանի երիտասարդ սև բլուզավորների, որ շրջան էին կազմել ու սպասում էին ինչ-որ մեկի։ Նրանց մոտով անցնելիս իր վրա զգաց նրանց հայացքը։ Անգամ նկատեց, որ նրանցից երկուսը իրեն ցույց տալով, իրար երես նայեցին։ Մարկը ոչինչ չասաց իր ուղեկցուհիներին։ Ուրիշ ժամանակ Ասյան ամեն ինչ Մարկից շուտ կտեսներ ու կհասկանար. առաջին անգամ չէ, որ նրանց ճանապարհին այդպիսի տիպեր էին հանդիպում։ Սակայն մարջանե ֆետիշները օտար տոհմի աստվածների նման իրենց վրա գամեցին նրա ուշադրությունն ու ծուղակը գցեցին։

Վաճառողի հետ հաշիվները փակելով, Ասյան և Աննետան Մարկի հետ ուղվեցին դեպի կամուրջ։ Նրանք քիթ-քթի հանդիպեցին մի խումբ սև բլուզավորների, որոնք ակնբախորեն հետևում էին ինչ-որ մեկին։ Այդ նրանք էին, որ բոպե առաջ լպիրշ հայացքով ոտքից գլուխ չափեցին Մարկին, որին նա պատասխանեց նույնությամբ։ Ասյան, որ անհոգ շաղակրատում էր գնած աննշան զարդարանքների մասին, հանկարծ ընդհատեց խոսքն ու շուռ եկավ. նրան թվաց (լոկ թվա՛ց), թե կողքով անցած տաքսիի պատուհանում մի ակնթարթ երևաց լուգանցի ծեր չեխուլ-

մենի՝ Բուոնամիկոյի մտերմի ու բարեկամի, դեմքը։ Ասյան տագնապալի հայացքը չէր կտրում մի քանի քայլ այն կողմ կանգ առած մեքենայից։ Նա լարեց ուշադրությունը։ Բայց տաքսիից ոչ ոք դուրս չեկավ, ու մինչ Ասյան ետ էր նայում, jattatura -ն (չար աչքը) կրկին խաբեց նրան, և ճակատագիրը իր հարվածը հասցրեց առջևից։

Երբ նրանք ոտք դրին Լունգարնո Աչայօլի գետափին, անկյունից մի տարեց, կուզիկ մարդ դուրս եկավ փոքրիկ, ճերմակ մորուքով։ Տիպիկ մտավորականի նրա նիհար դեմքը նյարդայնորեն չղաձգվում էր, քթակնոցի ապակիների ետևում փայլում էին կարճատես աչքերը։ Նա տագնապալի, երկչոտ հայացքով շուրջն էր նայում։ Առջևից գնում էր տասնչորս-տասնհինգ տարեկան մի տղա, և նրա ժիր աչքերը որսին հետամուտ սև թրուչուններին ավելի շուտ ճանաչեցին, քան նրանք կնետվեին ղոհի վրա։ Ճչալով, նա նետվեց դեպի հայրը, ջանալով նրան ներս քաշել մոտակա շենքի մուտքը։ Բայց հրոսակախումբը վայրենի մռնչյունով արդեն հարձակվել էր իր զոհի վրա։ Մի ակնթարթում տղային մի կողմ շպրտեցին, և նա թավալվեց սալարկի վրա։ Ներուներն շրջապատեցին, մեկը խփեց նրա երեսին, ջարդելով քթակնոցը, մյուսը երկարաճիտ կոշիկով աքացի տվեց փորին, և ծերունին երկտակ կռացած, օրորվեց, թափահարեց ձեռքերն ու հուսահատ ճչաց։ Կողքին կանգնած հրոսակը, անեծք տեղալով, բարձրացրեց մահակը։ Դեռահասը, դեմքից վեր ցատկելով, նետվեց առաջ, հուսալով ետ մղել հորն ուղղված հարվածը, բայց մահակն իջավ մանկական բարալիկ ձեռքին, որը մատղաշ ծառի պես ճռթաց, և նույն պահին էլ սև բլուզավորները վրա սլրծան երեխային, կոխկրտեցին նրան ու, վերջապես, օձիքից բռնած, ինչպես շան ձագի, քաշ տալով տարան գետում խեղդելու։

Այս ամբողջ տեսարանը, որ Ասյայի առջև ծավալվեց ինչպես էկրանին իրար հաջորդած կինոկադրերի մրրիկ, նրա ուշադրությունը շեղեց Մարկից։ Իսկ երբ նա ուշքի եկավ, Մարկն արդեն նետվել էր առաջ։

Ճանապարհին միայն նրանք էին երեքով կանգնած։ Անցորդները վախեցած այս ու այն կողմ էին փախել, ումանք էլ երկչոտաբար նայում էին ծակուծուկերից։ Նրանց մոտով մի ավտոմեքենա անցավ։ Նրա մեջ նստած արդեն ոչ երիտասարդ, բարձրաստիճան զինվորականը, որի կրծքին շքանշաններ կային,

ցրված նայեց մարդասպաններին, և լսելով տղայի օգնություն աղերսող ճիչերը, աչքերը մի կողմ փախցրեց, իսկ վարորդն ավելացրեց արագությունը։ Մարկը բղավեց.

— Սրիկանե՛ր։

Սիրտն առաջ ընկավ Մարկից, նրա ոտքերից։ Իր գործողությունների մեջ իրեն հաշիվ չտալով, նա արկի պես մխրճվեց սև բլուզավորների ամենահոծ տեղը։ Նա հասցրեց նրանց ճանկերից խլել տղային, որի մարմինն արդեն կախ էր ընկել եզրապատի վրայով։ Բայց տեղնուտեղը բաց թողեց փրկված երեխային ու փլվեց մայթին, ձեռքերը սեղմելով սրտին։ Դուրս ընկած ծնոտով ֆաշիստը, որ մի գլխով բարձր էր Մարկից (այն նույն ֆաշիստը, որը կամրջի վրա այնպես ուշադիր զննել էր նրան), երկու ձեռքով դաշույնը մխրճեց Մարկի սրտի տակ։ Երկու կանայք էլ տեսան հարվածը։ Աննետան երերաց. այդ նրան հարվածեցին։ Ասյան էգ վագրի նման նետվեց պաշտպանելու իր կորյունին, նա իր բոլոր տասը մատներով ճանկռեց մսագործի գարշելի երեսը, չանաց մատներով ծվատել նրա աչքերը։ Հանդիսականները շունչները պահեցին՝ հիմա նրան էլ կսպանեն։ Բայց հանկարծ, կարծես թե կախարդանքով ամեն ինչ փոխվեց։ Մի մարդ, որը հեռվից-հեռու հետևում էր այդ ամբողջ տեսարանին և, հավանաբար դրա գլխավոր ռեժիսորն էր, անսպասելիորեն հայտնվեց առաջին պլանում։ Նրա կիսաձայն ասած մեկ բառը բավական եղավ։ Հրոսակախումբը մի ակնթարթում ցրվեց։ Մարկի և Ասյայի շուրջը դատարկություն գոյացավ։ Նրանք երկուսով էին արևի պայծառ շողերի տակ... Իսկ հանկարծակի խմբված ամբոխը նայում էր նրանց, չհամարձակվելով մոտենալ։

Մարկը մեռած էր։ Սպանված՝ մի հարվածով։ Կրծքին սեղմված նրա ձեռքերն այդպես էլ մնացել էին։ Մատների արանքից արյան շիթ էր հոսում։ Ծռ թեքված գլուխը դիպել էր սալարկին, լայն բացված աչքերն արյան շղարշի միջով այլևս չէին տեսնում իրենց մեջ դրոշմված տոսկանյան երկինքը...

Մի հիսուն քայլի վրա քարացած կանգնել էր Աննետան, աչքերը լայն բացած նա նայում էր որդուն, ձեռքերը պարզում դեպի նա, չէր շնչում։ Հետո սկսեց շնչել խռխռացնելով, ճիգ թափելով, խափանված փուքսի պես։ Առաջվա նման հեռի պլան քաշված ամբոխը լսեց այդ խռպոտ ձայնը, սակայն ոչ ոք չշարժվեց տեղից, ոչ ոք չսատարեց մորը։ Իսկ նա դանդաղ գնաց դե-

պի որդին։ Ոտքերն ասես անդամալույծ էին, չէին ենթարկվում։ Ամեն քայլը անմարդկային ջանքեր էր պահանջում։

Նա կանգնեց Ասլայի կողքին, որը չնկատելով արյունը, խոնարհվել էր իր սիրեցյալի վրա։ Աննեետան ձեռքով նրան մի կողմ հեռացրեց։ Նստեց զավակի կողքին, ուղիղ արյան լճակի մեջ։ Գիրկն առավ իր մեռած երեխայի գլուխը, սեղմեց կրծքին, դրեց ծնկներին։ Եվ հանկարծ ամբողջ կյանքը, իսկ կյանքի հետ միասին նաև ցավը, դուրս եկան իրենց ափերից, ինչպես դեպը վարարելիս. դեմքը դեպի անողոք, դաժանորեն երկինք բարձրացնելով, նա սկսեց ողբալ։ Ողբում էր ինչպես կորսիկացի եղերամայր։ Հիմա համր ամբոխն էլ էր հուզմունքից շնչահեղձ լինում։ Բայց մեծամասնության համար դա սոսկ հուղիչ տեսարան էր։ Մինչև հոգու խորքը ցնցված Ասյան դադարեց հեծկլտալ և լսում էր այդ Lamento[1]-ն։ Մայրը կանչում էր զավակին.

— Վերադարձի՛ր, վերադարձի՛ր։ Մի՛ գնա, սպասի՛։

Նա ուրիշ մայրերից, կյանքի անմատչելի ակունքներից աղերսում, պահանջում էր ետ վերադարձնել նրան։ Օրփևոսի նման նա անվարան կլներ այնտեղ, նրան որոնելու։ Նա համբուրում էր Մարկին, շրթունքները հպում նրա արյունոտ վերքին, նրա կրծքից դուրս հոսող արյան վտակին։ Եվ հիմա սրտակեղեք գանգատը դուրս էր թռչում նրա արյունաշաղախ բերանից, բայց աչքերը չոր էին։

Այդ ժամանակ բեմում հայտնվեց ոստիկանությունը։ Րոպե անց ամբոխին մի կողմ քշեցին կամրջից, շարժումը լիովին դադարեցվեց։ Պոր-Սանտա-Մարիա փողոցով երրորդ արագության վրա մի տաքսի սլացավ ու կանգ առավ երկու կանանց ու մեռած Մարկի մոտ։ Ավտոմեքենայից դուրս եկավ մի մարդ, որն էլ հենց, պետք է ենթադրել, ղեկավարում էր այդ ամբողջ պիեսը։ Գլխաբաց, հանդիսավորությամբ ցավակցող տեսքով նա մոտեցավ Աննեետային, ցանկանալով պաշտոնական կարեկցություն հայտնել. նա ձեռքով նշան արեց, և նրա օդնականները կոացան դիակի վրա... Մոր գանգատն ընդհատվեց... Աչքը «թշնամուց» չկտրելով, Աննեետան մի կողմ հրեց նրան։ Նա հանկարծ լսեց սեփական ձայնի հեռավոր որոտներն ու դրանցում ճանաչեց այն վայրենի վայնասունը, որ Փարիզում Սիլվիան բարձ-

---

1 Գանգատ (իտալ.)։

բացրել էր պատուհանից ցած ընկած դատեր[1] դիակի վրա... Ահավոր հանդարտություն իջավ Աննետայի վրա։ Շրթունքները փակվեցին։ Նա վեր կացավ գետնից։ Հայացքով Ասլային հրամայեց մոտենալ։ Նրա օգնությամբ բարձրացրեց սիրասուն զավակի, սիրեցյալի, սիրելիի դիակը։ Նա բռնեց ուսերից, Ասլան՝ ոտքերից։ Ջնայելով իրենց ծառայությունն առաջարկող մարդկանց, մի կողմ հրելով նրանց, մայրը դիակը տարավ տաքսիի մոտ։ Եվ դրեց նստոցին։ Ասլան նստեց մեքենա։ Նախքան նրան միանալը, Աննետան նայեց շուրջը, ոստիկանների տողանի հետևում նկատեց ծերունուն ու երեխային, որոնց վրա հարձակվել էին մարդասպանները, հանուն որոնց զոհվեց իր որդին։ Երկուսն էլ՝ թե՛ ծերունին, թե՛ տղան, արյունաթաթախ, ցեխակոլոլ, ծեծված շների պես երկչոտաբար նայում էին իրեն և, թվում էր, հայացքով ներողություն էին խնդրում։ Աննետան դանդաղ ու վեհակերպ գլխով արեց նրանց։ Նրա ողբերգականորեն խաղաղ դեմքը կարծես ասում էր.

«Հարկավոր չէ»։

Տաքսին շարժվեց տեղից։ Հյուրանոցի նախասրահում, աստիճաններին, նրանց ամբողջ ճանապարհին ոչ մի շունչ չկար. ոստիկանությունը շտապել էր մաքրազարդել շենքը։ Տանիքի տակ գտնվող իրենց համարում, որտեղ որդու հետ դիմավորում էր արշալույսը և որտեղ հիմա տեր ու տնօրինություն էր անում դահիճ արևը, Աննետան լողացրեց որդու մարմինը, կապեց վերքն ու հագցրեց շորերը։ Նա թույլ չտվեց, որ որևէ օտար ձեռք դիպչի նրա մարմնին, իր սրբությանը, բացի Ասլայի ձեռքից... Սակայն Ասլան ավելի շուտ խանգարում էր։ Կատարվածը տառացիորեն ճզմել էր մահվան տեսարանին սովոր այդ կնոջը։ Նա չէր կարողանում առանց հեկեկանքի նայել իր սիրելիի մարմնին. շարունակ ընկնում էր նրա կրծքին ու խելահեղ համբույրներով ծածկում նրան։ Որդուն վերջին անգամ հագցնելու համար Աննետան ստիպված էր Ասլային փակել հարևան սենյակում։ Երբ Աննետան, վերջապես, բացեց դուռը, տեսավ, որ Ասլան անզգա պառկած է շեմքի մոտ։ Նրան շորերով տեղափոխեց անկողին։ Ասլան, արձանի նման, թույլ էր տալիս իր հետ վարվելու ինչպես կամենում են։ Քարացման նոպաները հանկարծ փոխվում էին կատաղության նոպաների։

---

1 Տես՝ «Ամառը»։ Ի. Բ.։

Իսկ նրանց երկու սեւյակների չորս կողմը լուռիյուն էր։ Բոլոր միջոցները ձեռք էին առնվել այդ երկու կանանց լռության անթափանց պարսպով արտաքին աշխարհից լիովին կտրելու համար։ Ոչ ոք չմտավ նրանց մոտ։ Ղեկավարությունը խստիվ հետևում էր, որպեսզի ոչ ոք չշփվի նրանց հետ։ Հայրն ու որդին, որոնք ողջ էին մնացել ֆաշիստների սարքած կատաղի ծեծկըռտուքից հետո, գալիս էին հյուրանոց, բայց նրանց այնպես էլ չհաջողվեց իրենց երախտագիտությունը հայտնել ֆրանսուհիներին։ Աննետան ու Ասյան այդ չգիտեին։ Պատահարը մամուլում արձագանք չգտավ։ Ձևականության համար նրանց մոտ եկավ ոստիկանական բժիշկը։ Երեկոյան դեմ նրանց այցելեցին իշխանությունների ներկայացուցիչները, ցավակցություն հայտնեցին։ Աննետան նրանց ընդունեց կանգնած, հանգիստ ու խրոստադեմ, գլուխը բարձր պահած. նա ուժ ունեցավ ոչնչով չմատնելու իր զգացմունքները։ Ասյան հարկադրված էր հեռանալ մյուս սենյակը, որպեսզի ցույց չտար իր ցասումը։ Բերանքսիվայր նետվելով մահճակալին, նա ջղաձգորեն կծոտում էր բարձի անկյունը։ Իր հերթին եկավ ֆրանսիական հյուպատոսը, որպեսզի, թեկուզև ուշացումով, կատարի իր պաշտոնական պարտքը։ Նա գրի առավ նրանց ցուցմունքները, Աննետայի հետ պայմանավորվեց դագաղի, հուղարկավորության և մեկնման ժամերի վերաբերյալ։ Աննետան այլևս ոչ մի ժամ չէր ուզում մնալ այնտեղ։ Բայց ձևականությունները նրան պահեցին մինչև հաջորդ օրվա երեկո։

Հարկ եղավ կամա թե ակամա ևս մի գիշեր անցկացնել այդ մարդասպան-քաղաքում, այդ քարակերտ քաղաքում, որը դարեդար ազահաբար լակել էր սպանվածների արյունը։ (Եվ այդ արյունից աճել էր արվեստի ծաղիկը։ Հիմա Աննետան պատրաստ էր կոխկրտելու այդ ծաղիկը...) Ասյան նույնպես որոշեց արթուն մնալ ամբողջ գիշերը. ծնկի իջած, նա համբուրում էր մեռած ոտքերը, ողբում անհասկանալի շշնջյունով, և նրա գանգատը մերթ բարձր էր հնչում, մերթ էլ հանկարծ՝ մարում։ Ի վերջո մոռացության խավարը կլանեց նրան, և նա գահավիժեց անդունդ, այտը հպած Մարկի մերկ ոտնաթաթին։ Իսկ Աննետան նստել էր կծկված, չոր աչքերը անդունդին հառած։ Ամենուրեք խավար էր՝ վերևում, ցածում, նրա շուրջբոլորը, հոգում։ Նրան պահում էին սև թևերը, նա գիշերվա կենտրոնակետն էր։ Նա ինքը գիշեր էր։

եկավ ցերեկը։ Նոր դարաշրջանը։ Post mortem[1]: *Ծագում էր օտար արևը, որին Մարկի աչքերը չհասցրեցին ճանաչել։ Աննետան այլևս ուրիշ դարի էր պատկանում...*

Բայց աչք խփելու և նրա կողքին նրա նման մարմնով մեկ ձգված պառկելու, ձեռքերը կրծքին խաչելու ժամանակը չէր։ Մնում էր պարտքը, և ոչ միակը, որ հարկավոր էր կատարել։ Աննետան լվացվեց, փոխեց շորերը, հետևեց, որ Ասյան մի բան ուտի, թեկուզև հակառակ ցանկության։ Նա Ասյային ստիպեց ուտել։ Ասյան հրաժարվում էր, ուտում էր, լալիս, կուլ էր տալիս արցունքներն ու սնունդը։ Բայց վերջում նրա մոտ սրտախառնություն սկսվեց, և նա փսխեց։ Վաղ առավոտյան բերեցին կապարե թիթեղով պատված դագաղը և հավիտյանս փակեցին կապարե կացարանը։ Ասյան, ինչպես խենթ, դուրս վազեց միջանցք։ Նա ձեռքերով փակել էր ականջները։ Աննետան կտրականապես հրաժարվեց դուրս գալ սենյակից։ Նա նայում էր, թե ինչպես էին իր երեխային փակում դագաղի մեջ։ Շրթունքները միմյանցից չհեռացնելով, նա շշնջում էր.

— Մի վախեցիր։ Մի վախեցիր, թանկագինս, ես այստեղ եմ...

Հետո կողմնակի մարդիկ գնացին, և նրանք մնացին երեքով։ Պատուհանների փեղկերը առավոտվանից այնպես էլ չբացեցին։ Ոչ ոք չէր շարժվում։ Ոչ որդին, ոչ մայրը, և ոչ էլ կինը։ Երեքն էլ պառկել էին անշարժ։ Ասյային, որը չէր կարողանում մենակ մնալ, Աննետան պառկեցրեց իր կողքին՝ իր մահճակալին։ Պառկել էին մեջքի վրա և միմյանց ձեռք բռնել։ Վշտից բթացած Ասյան չէր ընկալում փողոցից լսվող աղմուկն ու ճիչերը, բայց հանկարծ սկսեց դողալ, լսելով սենյակում թռչող ճանճի չարգուշակ տզզոցը։ Այդ պահին Աննետան ավելի ուժեղ սեղմեց Ասյայի ձեռքը։ Հայացքը առաստաղին հառելով և այն չտեսնելով, Աննետան Մարկի հետ քայլ առ քայլ վերհիշեց որդու ամբողջ կյանքը։

Գնացքը մեկնում էր երեկոյան, ժամը տասներկուսից մի քանի րոպե անց։ Կառամատույցում Աննետային ու Ասյային արդեն սպասում էր ֆրանսիական հյուպատոսը, որը նրանց վերցրեց իր հովանավորության տակ և մինչև գնացք նստելու պահը չհեռացավ նրանցից։ Նրանց համար առանձին կուպե էին թողել։ Աննետան գլուխը պատուհանից դուրս հանելով, ուղեփակոցի

---

1 *Մահից հետո (լատ.)։*

Հանում տեսավ ջարդված ձեռքով այն տղային, որի կյանքը փրկեց Մարկի միջամտությունը։ Տղային հաջողվեց թափանցել կառամատույց, սակայն վագոնին մոտենալ նրան չթողեցին։ Աննետան նրան ձեռքով արեց և հյուպատոսին ասաց, որ ուզում է խոսել տղայի հետ։ Ոստիկանական կոմիսարը տհաճությամբ ներս թողեց տղային, որը ցատկեց վագոնի ոտնատեղին և դառնագին արցունք թափելով, համբուրեց Աննետայի ձեռքը։ Նա ինչ-որ բան էր ասում, խոսում էր երկար ու արագ, բայց Աննետան ոչինչ չէր հասկանում, ասենք, նրանք խոսքերի կարիքը չէին էլ զգում։ Նա արտասուքից թաց ձեռքը նա քաշելով դրեց տղայի գլխին ու բարձրաձայն, կարծես բոլոր շրջապատողներին կոչ էր անում վկա լինել, ասաց, որ երեխային հանձնում է իշխանությունների խնամքին, և ֆրանսիական հյուպատոսից խնդրեց նրա հետագա ճակատագրի մասին հայտնել իրեն։ Նա ուզում էր իր մեկնումից հետո հնարավորին չափ կանխել վրեժխնդրությունը։

Շոգեքարշը շշաց։ Կարիք չկար ձգձգելու այդ տեսարանը։ Աննետան նստեց և իջեցրեց սգո շղարշը։ Եվ գնացքն անհետացավ գիշերվա խավարում։

VIA SACRA[1]

Վերջին ժամանակները Սիլվիան իրեն լավ չէր զգում։ Ասենք, նա այդքան վաղուց էր հիվանդ։ Բայց այն առավոտ նա արթնացավ բոլորովին ուժասպառ եղած։ Ձեռքերն ու ոտքերն ասես կապարով էին լցված։ Նա դժվարությամբ վեր կացավ անկողնուց։ Որտե՞ղ էին անցած-գնացած զարթոնքները, աշխուժությունը, երբ արտևանունքների առաջին իսկ թարթումից հետո գիտակցությունն ազատվում էր քնի իշխանությունից և նույն ակնթարթին էլ, սավանները մի կողմ գցելով, մերկ ոտքերն արդեն շոշափում էին փոքրիկ գո՛րգը, և փոքր, ուժեղ ոտնաթաթերը բավականությամբ իրենց մատներն էին բացում։ Իսկ այսօր, նախքան վեր կենալը, նա երկար նստեց անկողնում, ամբողջովին թուլացած, քրտնած, շնչակտուր։

Նա դողում էր և ուժ չուներ նույնիսկ տնային զգեստը հագնելու։ Հսկա՛յական ջանք գործադրելով, Սիլվիան սկսեց հագնվել, բայց քանիցս կանգ առավ ու նստեց հանգստանալու։ Նրան չէր հերիքում ոչ այնքան ֆիզիկական, որքան կամքի ուժը։ Որովհետև այն շարժումներից յուրաքանչյուրը, որոնք առաջ արվում էին զուտ ինքնաբերաբար, մեկը մյուսի ետևից, կանխելով իրենց հաջորդականության մասին միտքը, հիմա կամքի լարում էին պահանջում։ Մազերը սանրելու համար բարձրացրած ձեռքն անզորությամբ ընկնում էր կամ քարանում օդում, և հարկ էր լինում ամեն վայրկյան նրան ստիպել շարժվել. «Դեհ շարժվի՛ր, դեհ»։

Այդ ամենը ծայրաստիճան հոգնեցնում էր։ Եվ չնչին ջանքը շնչարգելություն էր առաջացնում... Հայելու մեջ նա տեսնում էր մի անառողջ, դեղնած դեմք, իսկ սանրի առամների արանքում՝ թափված մազերի փնջիկներ (ինչպե՞ս են թափվում)։ Քունքերը

---

[1] Սրբազան ուղի (իտալ.)։

սկսել էին ճերմակել։ Նա արհամարհանքով ու կարեկցությամբ ժպտաց իր պատկերին։ Եվ միայն մի բանում էր զգացվում նրա անցած-գնացած ավյունը՝ այն դաժան դատավճռում, որ նա բարբառում էր ուլորմելի, անպետք հնոտի դարձած այդ մարմնի հասցեին։ Նա անխնա քննում էր այդ մաշված հյուսվածքի յուրաքանչյուր կտորը։ Եվ երբ ձեռքը դիպավ փորին, սուր ցավը դանակի հարվածի նման, խոցեց Սիլվիային։ Լոգարանի եզրին մերկ նստած, նա ամբողջ մարմնով կծկվեց, կռացավ դեպի ծնկներն ու երկու ձեռքով սեղմեց ցավոտ տեղը։ Ցավն անհետացավ, թաքնվեց ինչ-որ տեղ ներսում։ Բայց Սիլվիան դեռ շարունակում էր մնալ նախկին վիճակում, սպասելով, թե ցավը երբ է արձագանքվելու մարմնի խորքում։ Վերջապես, նա շտկվեց, ձեռքը սահեցրեց ձախ ազդրի վրայով և պահեց թեթևակի ուռած ծնկի մոտ. շատ սպիտակ մաշկը ողորկ էր, ուժեղ ձգված, իսկ ոտքը ծանր էր թվում, ասես քարից էր։ Անկասկած, ահա հենց այստեղից է ծնունդ առնում իր մշտական հոգնածությունը։ Սակայն հոգնածությունը միանգամայն դատարկ բան էր նրա հոգին ծվատող խռովքի համեմատությամբ։ Թե որտեղից էր այն, Սիլվիան չէր հասկանում։ Որևէ ակնհայտ պատճառ չկար։ Կյանքն ընթանում է այնպես, ինչպես որ պետք է ընթանար։ Նա՝ Սիլվիան, ծերանում էր։ Ուժերը, առողջությունը, ամբողջ կյանքը գնում են գրողի ծոցը։ Եվ նա գիտի, թե ինչու։ Իսկ երբ գիտես, թե ինչու, և եթե դու մաշել ես քեզ, մաշել գիտակցաբար, սեփական կամքով, հաճույքը լիաբուռ վայելելով, դանգատվելը մեղք է. փողերիդ դիմաց մի բան էլ ավելի ես ստացել։ Սիլվիան հակված չէ սակարկելու, երբ նրան արժեքավոր բան են առաջարկում, այնպես, ինչպես հակված չէ սակարկելու գործերում։ Ջի՛ զլանա վճարել... Ուրեմն, որտեղից է այս ընկճվածությունը...

Ամբողջ օրը նա մնաց նստած, ոչ մի տեղ դուրս չեկավ։ Տանը ոչ ոք չկար։ Բևեռագետան և նրա ամուսինը, օգտվելով սուրբ երրորդության օրվա առիթից, մի քանի օրով ավտոմեքենայով մեկնել էին Բայոնա։ Սիլվիան ընդարմացած նստել էր զրասեղանի բաց գզրոցի առջև. մեկիկ-մեկիկ նայում էր հին նամակները, բաց թողնում ձեռքից և աչքին ընկած որևէ տողից ընկնում մոռացության մեջ։ Ճակատը հոնքերից վերև ցավում էր։ Ցավի ընկերակցությամբ նա այնքան էլ միայնակ չէր զգում իրեն։ Երկար, դատարկ օրն անցավ։ Սիլվիան հանկարծ հայտնը-

վեց գիշերվա շեմին։ Երևի ժամանակ առ ժամանակ նիրհել էր, Նա սկսեց անհանգստանալ, հուզվել, որ ժամանակն այդպես արագ էր անցել։ Ցանկանում էր կանգնեցնել այն։

Մատուցեցին երեկոյան թերթերը։ Սիլվիան անկողնում պառկած, անշտապ բաց արեց դրանք։ Անտարբերությամբ աչքի անցկացրեց պատահարների խրոնիկան։ Վերջին նորություններում հինգ հակիրճ տող.

«Ֆլորենցիայում ֆրանսիացին զոհ գնաց մահափորձին...»։

Նա ուրիշ ոչինչ չկարդաց, բացի այդ առաջին տողից (նրան թվաց, թե ինքը ոչինչ չի կարդացել)։ Ասենք, այդ տողի վրա էլ ուշադրություն չդարձրեց։ Լույսը հանգցրեց. հոգնածությունը կաշկանդել էր ամբողջ մարմինը, և թերթն էլ մնաց վերմակի վրա ընկած... Քուն։ Տձև փոս... Թե՞ այդ տձևությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ առանց դադարի, ձանձրալիորեն իրար հաջորդող ձևերի ժամանակավոր մոռացություն։ Դու կարծես բերանը կապված և դատարկության մեջ նետված պարկի մեջ ես, առանց օդի և լույսի, և ոչ ձեռքեր ունես, ոչ շնչառություն, ոչ աչքեր... Եվ այդպես ամբողջ գիշերներ։ Սիլվիան փորձում էր դուրս գալ, կտրում էր պարանները, որոնցով կապկպված էր պարկը, և, ուժասպառ լինելով, նորից ժամերով ինչ-որ տեղ էր ընկնում։

Երբ, վերջապես, նրան հաջողվեց ազատվել պարկից, վառեց լամպն ու տեսավ, որ ժամը տասներկուսը դեռ չկա՝ մի ժամ էլ չէր քնել։ Անտանելի անձկությունը սեղմում էր նրա կուրծքը։ Սիլվիան մի գիրք վերցրեց ու փորձեց կարդալ։ Բայց աչքերը տողերի վրայով սահեցին վերև ու նկատեցին անկողնուն ընկած թերթը։ Նա վերցրեց այն, առանց իրեն հաշիվ տալու գտավ տողը, ուր գրված էր Ֆլորենցիայում զոհ դարձած ֆրանսիացուհու մասին և այնուհետև կարդալով՝ «Ռիբիերը...» սրտում ծակոց զգաց... (Միայն այդ պահին նա հասկացավ, որ այդ անունը, հավանաբար, կարդացել էր թերթն առաջին անգամ աչքի անցկացնելիս...)։ Եվ թերթը ձեռքին, հայացքը տառերին հառած, քարացավ... Այնտեղ սևով սպիտակի վրա տպված էր. «Ռիբիերը... սպանվեց Առնոյի ափին, սև բլուզավորների հետ ընդհարման ժամանակ...»։ Սիլվիան թոթվեց ուսերը, մի կողմ շպրտեց թերթը, նորից հանգցրեց լույսն ու աշխատեց գիտակցությունը սուզել խավարի մեջ։ Հանկարծ այդ ի՞նչ մտավ իր գլուխը։

«Այ թե տխմարն եմ։ Միշտ մի բան կհնարեմ»։

Չէ որ այնտեղ սևով սպիտակի վրա տպված է «Ռիբիերը»,

առկա է «բ» տառը։ Սիլվիան շրջվեց մյուս կողքին... Եվ, այնուամենայնիվ, ավելի հանգիստ էր մտածել, որ քույրն ու քրոջ որդին գտնվում են Շվեյցարիայում... Փա՞ռք քեզ, աստված։ Այդ գիշեր նա մի քանի անգամ ինքն իրեն հիշեցրեց Շվեյցարիայի մասին։ Բանականությունը, վերջապես, տեղի տվեց։ Բայց քնաղդը՝ ոչ։ Եվ Սիլվիան վախենում էր իրեն խոստովանել, որ ամեն անգամ աստիճաններին ոտնաձայն լսելիս շունչը պահած լարում է ուշադրությունը։

Անքուն գիշերին փոխարինելու եկավ առավոտը։ Եվ, այնուամենայնիվ, շնչելը հեշտացավ, հեռագիր չկար։ Իսկ վատ լուրերը չէ որ շուտ են տեղ հասնում։ Ստացավ, բայց ոչ հեռագիր։ Բացիկ։ Բարի լուրերով։ Բարի լուրերը երբեմն վատ լուրերից ավելի ահավոր են լինում։ Նամականիշի լայնքով աչքի էր ընկնում «Ֆլորենցիա» կնիքը, և գրել էր Մարկը... Արյան ալիքը հորդեց դեպի աչքերը։ Սիլվիան հանկարծ կորցրեց տեսողությունը։ Եվ նորից այդ թափանց ծակող ցավը փորի ներքևի մասում... Սիլվիան ճգնում էր ազատվել մշուշի քողից։ Ուզում էր կարդալ բացիկը, բայց ստիպված էր սպասել, մինչև ալիքը ետ գլորվի։ Ձեռքերը դողում էին...

Գրել էր Մարկը։ Կնշանակի ողջ էր։ Ամսի քանիսի՞ն էր գրել։ Երեկ չէ մյուս օրը։ Մարկը ուրախ էր, քնքուշ ու ծաղրասեր։ Նա բարեկամաբար կատակում էր իր հին մտերմուհու հետ։ Նրան ուղարկել էր Բրերի Բանգարանում պահվող Կրիվելիի «Տիրամայրը մոմով» նկարի արտատպությունը։ Անաղարտ, նուրբ, փոքր-ինչ չոր դիմագծերով, վճռականություն արտահայտող շրթունքներով գեղեցիկ, թարմ ու առողջ, փառահեղ ու պարզամիտ կինը բազմել էր եզրերը պտղադրասանդներով զարդարված ամպհովանու տակ դրված գահին ու երկարամատ, գեղեցիկ և ուժեղ ձեռքը մեկնած, տանձ է տալիս մանկիկին։

Իսկ մյուս մանկիկը (փարիզյան ծաղրասերը) գրում էր. «Ճանաչո՞ւմ ես»։

Եվ իսկապես, Սիլվիան նմանություն ունի այս տիրամոր հետ, ավելի ճիշտ, նմանություն ուներ նախկին Սիլվիան։ Կնշանակի, Մարկը մինչև հիմա նրան տեսնում է այդպիսին։

Այնուհետև նա գրել էր.

«... Իսկ գահի շուրջը քո հաղթանակների պատուղներն են։ Այնուամենայնիվ, ընտիր բեռ է, այսինքն՝ տանձեր։ Իսկ ոտքերիդ մոտ դրված փոքրիկ մոմը ես ինքս եմ»։

(Իմ հարազա՞տ չարաճճի՝ եվ այս ամենը նա գրել է բացիկի վրա, այլ ոչ թե փակ նամակում...)։

Նա նաև գրել էր.

«Ո՛չ, հնդրում եմ, դեմքիդ այդպիսի բարկացած արտահայտություն մի տուր։ Ներիր ինձ։ Ես խելագարվել եմ։ Ինձ արբեցնում է այստեղի ոսկե արևը։ Ինչպես նաև ամբողջ շրջապատը՝ հնամյա քարերը, նորօրյա ծաղիկները, այժմյան և անցյալի չքնաղ կույսերը։ Ա՜հ, ինչ դեղեցիկ է այս ամենը։ Ինչ լա՜վ է ապրելը։ Սիրելիդ իմ պառավիկ, դու ինչո՞ւ չեկար մեզ հետ։ Այնպես եմ զգում քո կարիքը։ Երբ քեզ տեսա այդ նկարում, քիչ մնաց համբուրեի տիրամորը։ Բայց վախեցա Աստային ասել այդ մասին։ Ապա մոտեցրու կզակդ...»։

Այս խելառ տղան, հավանաբար, հարբել է արևից։ Ի՞նչ ջահել է նա։ Ինչպե՞ս ես ջահելանում նրան լսելով... Սիլվիան ծիծաղելով, կզակը մոտեցրեց ու համբուրեց բացիկի վրա խնամքով գրված տողերը։

Իսկ հետո դարձյալ խավար, դարձյալ անձկություն... Սիլվիան բացիկի ուղարկման ամսաթիվն ու ժամը համեմատեց պատահարների խորագրի տակ նշվածի հետ...

«Ո՛չ, անկարելի է։ Այդ մասին մտածելն անգամ հանցագործություն է... Երեկ առավոտից մինչև հիմա հո տասնյակ անգամ կհասցնեին հայտնել ինձ։ Պարզապես հիմար պառավ եմ»։

*Բայց արդեն րոպե անց նա անկողնուց վեր թռավ ու սկսեց հապճեպ հագնվել։ Կյանքում առաջին անգամ նրա դողդողացող մատները անմիջապես չգտան կոճակները, խառնեցին ճարմանդները։ Եվ նույնիսկ առանց սուրճ խմելու (սուրճ խմելը ևս մտնում էր վերկացի ծիսակարգի մեջ), Սիլվիան դուրս եկավ տնից, Ֆլորենցիայից ստացած բացիկը իրանակալի մեջ դրած։ «Հիմար եմ, դեհ, իհարկե, իսկական հիմար»։ Որովհետև ուշադրություն չդարձնելով ուռած ոտքին (իսկ Սիլվիան գլուխ էր հանում հիվանդություններից և կռահում էր, որ բանը բուրդ է), նա որոշել էր ոտքով բարձրանալ Մոնմարտրի բլուրը և աղոթել տաճարում։ Այդպիսի երդում էր նա տվել իրեն։ Ատամները սեղմած նա բարձրանում էր աստիճաններով և քարշ տալիս անիծյալ ոտքը, ինչպես տաժանակիրը՝ ամբագունդը, իսկ վերջում արդեն ուղղակի ձեռքերով էր ոտքը աստիճանից աստիճան տեղափոխում և այդպես բարձրացավ բոլոր երկու հարյուր քսանհինգ

աստիճանները։ Սիրով ծնկաչոք կգնար, բայց վախեցավ, որ չի կարողանա ոտքի ելնել։ Նա բոլորովին ուժասպառ էր եղել։ Գիտակցությունը հազիվ չկորցնելով, ծնկի իլվեց տիրամոր արձանի առջև։ Աղոթում էր, աղոթում... Բայց նրան ոչ մի կերպ չէր հաջողվում մինչև վերջ ասել գոնե մի աղոթք։ Մտքի թելը շարունակ կտրվում էր։ Սուրբ խոսքերը մոռանալով, նա համառորեն, անհողդողդ, գրեթե սպառնալիքով կրկնում էր.

— Նա ո՛ղջ է, ո՛ղջ է, նա ո՛ղջ է... Ուզում եմ, որ նա ո՛ղջ լինի...

Նա ուզում էր, որ աստվածը ենթարկվի իր հրամանին։ Եվ հրամանը կրկնում էր մինչև ուժասպառության աստիճան։ Վերջապես, նա լռեց, որպեսզի շունչ քաշի։ Ոչ գլխում միտք կար, ոչ սրտում՝ արցունք։ Նա աչքերը վեր բարձրացրեց, նայեց իր վրա խոնարհված տիրամորը և հիշեց մյուսին, նրան, որն այնքան նման էր իրեն։ Նա ոչ մի րոպե չշփոթվեց այն մտքից, որ նման համեմատությունը սրբապղծություն է։ Տիրամոր հետ խոսեց հավասարի նման, կարծես դիմում էր հայելու մեջ անդրադարձվող իր սևիլական պատկերին։ Նա ասաց. «Ուզում եմ, ուզում եմ», ասես նրա՝ մյուսի փոխարեն ինքն էր կանգնել պատվանդանին։ Բայց այն մյուսը, որ կանգնած էր Սիլվիայի առջև, առաջվա նման տխուր էր ու անօգնական ձեռքերն էր տարածել։ Նա չէր ուզում։ Սիլվիան, որ մի պահ նիրհել էր նրա ոտքերին հենված, խուլ ձայնով ինչ-որ բան քրթմնջաց և ցասումը համակեց նրան։ Նա նորից սկսեց ստեպ-ստեպ փնթփնթալ միևնույն խոսքերը և բարձրաձայն պարզ ու հստակ ասաց.

— Նա ողջ է։ Ողջ է...

Սիլվիան փորձում էր կաշառել աստծուն։ Փող էր առաջարկում նրան և հետո ինչ-որ անիմաստ բաներ՝ բարեպաշտության և ոչ բարեպաշտության ուխտեր, երդվում էր հոգու և մարմնի վրա վերցնել ցանկացած ապաշխարություն, ուսերին դնել ցանկացած չարչարանք, ենթարկվել ցանկացած տառապանքների, միով բանիվ, թոթովում էր միանգամայն անհասկանալի, կիսաղառանցական խոսքեր։ Բայց աստծո ինչի՞ն էր պետք այդ ամենը։ Սիլվիան զզաց դա ու պահանջեց.

— Ախր ես չգիտեմ։ Դու, դու ինքդ ասա։ Կանեմ, ինչ որ ցանկանաս.

Եվ նեռվեց հնազանդության անդունդը, ստիպեց իրեն նեռվել։ Բայց հազիվ ընկղմվելով, ոտքերի տակ զգաց հատակը.

պարզվեց, որ իր անդունդը խորը չէ։ Եվ Սիլվիան նորից երես առ երես հանդիպեց իր տոչորված հոգուն, վերքի պես կսկծացող իր «ես»-ին, որ չէր կարող, չէր կարողանում ընկնել մոռացման մեջ։ Նա եղունգներով ճանկռում էր իր թե՛ հոգին, և թե՛ մարմինը, հուսալով, որ այնտեղից հավատի հեղեղ դուրս կհորդի, կհասնի նրա երեսին, ով քնած է, ով կարող է և չի ուզում, և այդ հեղեղը նրան կհարկադրի ենթարկվել իր կամքին։ Բայց հեղեղ դուրս չհորդեց։ Եվ նա, ով քնած էր, չարթնացավ քնից...

Ոչ, նա քնած չէր... Սիլվիան զգաց, որ մի քիչ իջեցրած կոպերի տակից նա հետևում է իրեն... Եվ հանկարծ նրա գլխավերևում ասես որոտ ճայթեց...

«Կատարվե՛ց»։

Օ՛, ոչ նրա կամքով, նա հո քարացած է, անզոր, համր։ Սիլվիան հասկացավ այդ, նայելով իր գունատ թևարկուին, նրան, որը աստծու գահի մոտ տարավ իր աղաչանքը և բերեց պատասխանը։ Մերժումը կարդացվում էր նրա անօգնականորեն տարածած ձեռքերում.

«Իմ իշխանությունից վեր է»։

«Այդ դեպքում ինչո՞ւ են աղոթում քեզ»։

Սիլվիան կատաղորեն մի կողմ հրեց փոքրիկ նստարանն ու ծնկած տեղից ոտքի կանգնելիս շուռ տվեց այն։ Նա նույնիսկ չլսեց դղրդյունը, որը խուլ կերպով կրկնեցին կամարները։ Նա միայն լսեց, թե ինչպես իր ուղեղում որոտաձայն հնչեց խղճուկ արդարացումը.

«Ես ոչինչ չեմ կարող։ Դա ճակատագիրն է...».

— Եվ դու դեռ համարձակվում ես քեզ աստված կոչել... Ստախո՛ս։ Ստախո՛ս։ Դու պարզապես ճակատագրի հլու-հնազանդ շունն ես։ Պարզապես շո՛ւնը։

Սիլվիան խոսում էր ամբողջ ձայնով։ Բարեբախտաբար, շուրջը գրեթե աղոթողներ չկային։ Իսկ մոտերքում նստածները միայն փնթփնթոց, անհասկանալի բառեր լսեցին... Երբ տաճարի պահակը աղմուկի վրա եկավ իմանալու, թե ինչ է պատահել, տեսավ մի կնոջ, որը աթոռները մի կողմ հրելով, մոլեգնաբար գնում էր դեպի ելքը։

Սիլվիան կրկին հայտնվեց մեռած երկնքի տակ, իր ոտքերի մոտ օղակաձև փռված մեռած քաղաքի վերևում։ Ամեն քայլին սայթաքելով, նա սկսեց ցած իջնել Յոթ վշտերի ուղղաբերձ սանդուղքով։ Եվ այդ պահին վշտերի թիվը մեկով ավելացավ...

Սիլվիան չղաձգորեն կառչում էր բազրիքից, վախենալով ընկնել... Առանց այդ էլ նա շատ շուտով կվերադառնա։ Նա գիտեր, թե իրեն ինչ է սպասում։ Ջարմանալի բան, հիմա նա արդեն չէր կասկածում։ Իսկ չէ որ գիտեր ոչ ավելի, քան երբ գնում էր տաճար։ Նա ամեն ինչ գիտեր... Եվ անմտություն կլիներ այդ վիճարկել։ Որքան ցած էր իջնում սանդուղքով, այնքան նրա չարությունը այնտեղ, վերևում բազմածների դեմ մեղմանում էր։ Նրանք անզոր են, նրանք նույնպիսի պարտվածներ են, ինչպես ինքը, ինչպես բոլոր այն դժբախտ հիմարները, որոնք իրեն ընդառաջ էին բարձրանում նույն աստիճաններով, որոնցով ժամ առաջ ինքն էր բարձրացել։ Նա ուզում էր բղավել.

«Մի՛ գնացեք այնտեղ։ Նրանք, ովքեր այնտեղ են, վերևում, ընդունակ չեն անգամ իրենց օգնելու։ Էլ ինչպե՞ս կարող են ձեզ օգնել։ Դուք հո տեսնում եք, որ նա նույնպես մեռել է, նա՝ կնոջ որդին, իրենց որդին, երկնային որդին...»։

Սակայն ցասումը, ինչպես որ վերջին ուժերը, աստիճանաբար լքեց նրան։ Նա հազիվհազ էր քարշ դալիս։

Անմարդկային ջանքեր թափելով, նա հասավ տուն։ Ճի թեև հպարտությունից ու համառությունից երբեք ոչ մեկից օգնություն չէր խնդրում, ստիպված էր դիմել դռնապանուհուն, որը թափառում էր շքամուտքի առջև.

— Դուք ինձ չեք օգնի՞ բարձրանալ, տիկին Բուարո։

Նա չէր լսում, թե ինչ է ասում իրեն բարեսիրտ տիկին Բուարոն։ Բայց երրորդ հարկի հարթակին նա տեսավ իրեն սպասող Ժորժին։ Նա գիտեր, որ այդպես էլ կլինի։

Ժորժը սև էր հագել և լալիս էր։ Սիլվիան լաց չեղավ։ Նա միայն հարցրեց.

— Այդ դո՞ւ ես, Ժորժ։

Սիլվիան բաց թողեց տիկին Բուարոյին, որը դեմ չէր մնալ ու լսել։ Նա Ժորժին ասաց.

— Սպասիր, հիմա բանալիները կգտնեմ։

Ապա բացեց դուռը, ներս մտավ, կողպեց դուռը... Եվ երբ երկուսով հայտնվեցին ննջասենյակում, երբ Ժորժը, արդեն հեկեկոցը չզսպելով, ձեռքերը մեկնեց նրան ու մրմնջաց.

— Սիլվիա... Սիլվիա...

Սիլվիան պատասխանեց.

— Այո, այո, ես արդեն գիտեմ։

Եվ աչքերը փակ, ուժասպառ, խիստ գունատ, կիսամեռ ընկավ բազմոցին։

Եվ միայն այդ ժամանակ հրամայեց Ժորժին.

— Դե, իսկ հիմա պատմի՛ր։

Ժորժը, որը հանգստանում էր Շվեյցարիայում, հեռագիր ստացավ, որով Աննետան խնդրում էր նախապատրաստել Սիլվիային։ Նա գիշերային գնացք է վանդայի հետ եկավ Փարիզ։ Եվ իսկույն ևեթ վազեց Սիլվիայի մոտ։ Սակայն ի զարմանս նրա, Սիլվիան արդեն բավականաչափ նախապատրաստված էր, իսկ որ գլխավորն է, չցնցվեց, չբղավեց, արցունք չթափեց։ Եվ միայն իր պատանեկան հսկայական վիշտը լալով ամոքելուց հետո, որը մեղմանում է արցունքի վտակների հետ բուռն կերպով դուրս հոսելով, Ժորժը նկատեց, որ իր առջև փակ աչքերով բազմոցին նստած Սիլվիան մեռելի պես գունատ է։ Եվ վախեցավ։ Նա ճանկեց Սիլվիայի սառույցի պես սառը ձեռքերը, ձեռքը դրեց ճակատին, շոշափեց նրա սրտի բաբախյունը և նրան սեղմեց գրկին։ Սիլվիան առաջվա նման լուռ էր։ Միայն կոպերը վեր բարձրացրեց։ Բայց նայում էր ուրիշ կողմ։

Ժորժն իր ուժեղ թևերով բազմոցից բարձրացրեց նրան ու տարավ անկողնու մոտ։ Հանեց նրա շորերը։ Շորերը հանելով, փորի ներքևի մասում ուռուցք նկատեց ու հասկացավ, թե ինչ վտանգ է այն սպառնում։ Մինչև բժշկի գալը ինքը կալանդ դրեց ուռուցքին և Սիլվիային ստիպեց անկողին մտնել։ Սիլվիան թույլ էր տալիս իր հետ ամեն ինչ անել և անգամ չէր շարժվում։ Ժորժը իզուր էր նրան խոսեցնելու փորձեր անում. առաջվա նման ի պատասխան՝ ոչ մի բառ։ Այդժամ Ժորժը նստեց անկողնու գլխավերևը և վճռեց խնամել հիվանդին։ Նա չգիտեր, թե ինչպես վարվի. վանդան տանը մնացել էր մենակ, իսկ այստեղ Սիլվիան էր, որին չէր կարելի լքել այդ պահին։ Սիլվիան կռահեց նրա երկընտրանքը։ Հսկայական ջանք գործադրելով, նա աչքերը բարձրացրեց աղջկա վրա և ասաց.

— Տղան սպասում է քեզ։ Գնա նրա մոտ։

— Բայց ես չեմ կարող ձեզ մենակ թողնել այստեղ։

— Ոչինչ, ես ընտելացել եմ։

— Իսկ եթե հանկարծ ու որևէ բան հարկավոր լինի ձեզ, ի՞նչ կանեք այդ դեպքում։

— Այն, ինչ սովորաբար արել եմ՝ մի կերպ յոլա կգնամ։

— Բայց ձեզ վնասակար է շարժվելը։

— Ջեմ շարժվի։ Կպառկեմ, ինչպես Նա։

Ժորժը ցնցվեց, և նրա երիտասարդ աչքերից կրկին արցունքներ ցայտեցին։ Նա թաց այտը հպեց Սիլվիայի այտին, և Սիլվիան իր շրթունքներին զգաց նրա արցունքների աղի համը։

— Դու երջանիկ ես, որ կարող ես արտասվել,— ասաց նա։— Իսկ հիմա գնա։ Ուզում եմ մնալ մենակ։ Մինչև երեկո անկողնուց վեր չեմ կենա։ Երեկոյան արի։ Ես պետք է դուրս գամ տնից։

Արցունքներն իսկույն չորացան Ժորժի աչքերում։ Նա վեր ցատկեց տեղից և անսպասելիությունից նույնիսկ ճիչ արձակեց։

— Այո, պետք է դուրս գամ։

Ժորժը վճռականորեն ասաց, որ դա անմտություն է։ Ինքը կտրականապես արգելում է։ Նա բարկացավ։

— Պետք է դուրս գամ։

Ժորժը հիշեցրեց, որ Աննետան հայտնել է երեկոյան գնացքով իր ժամանելու մասին։ Եվ տեղնուտեղը Սիլվիան որոշեց գնալ կայարան՝ քրոջը դիմավորելու։ Վիճելն անօգուտ էր։

— Բայց դուք վտանգում եք ձեր կյանքը։

— Մե՞ծ բան է...

Ժորժը բողոքեց։ Բայց Սիլվիան պնդեց.

— Հերիք է։ Կգաս, կօգնես ինձ։ Այլապես մենակ կգնամ։

Ժորժը լռեց ու սենյակից դուրս եկավ։

Սիլվիան մնաց մենակ, նա մեջքի վրա պառկեց անկողնում և մինչև երեկո չշարժվեց։ Նրա մարմինը մեռել էր, իսկ մտովի նա այն գնացքում էր, որն այդ նույն ժամանակ, ռելսերի կցատեղերում դղրդալով, Շվեյցարիայից գալիս էր Փարիզ։ Սիլվիան ամբողջ էությամբ Աննետայի հետ էր։ Քույրական հին սերը նրանց նորից միմյանց գիրկ էր նետել։ Եվ երկուսից յուրաքանչյուրի համար այդ ղողանջունքը փրկության էր, վերացում սեփական վշտից։ Յուրաքանչյուրը մտածում էր մյուսի մասին։

«Դժբախտ է։ Դժբախտ է»։

(Աննետա. «Տեսնես առանց ինձ նա ինչպես կիմանա այդ մասին»։

Սիլվիա. «Տեսնես առանց ինձ նա ինչպես է դիմացել հարվածին»)։

Ու թեև նրանցից յուրաքանչյուրին տանջում էր վիշտը, երկուսն էլ մտածում էին մեկը մյուսի կսկիծը թեթևացնելու մասին։ Թող որ վաղուց են բաժանվել նրանց ճակատագրերը, հո-

գինները, յուրաքանչյուրը գիտեր, որ այդ վիշտը իր համար ծանր է նույնքան, որքան մյուսի համար։ Չէ որ նրանք ասես երկուսով միասին էին հղիացել այդ երեխայով, սնել նրան, դաստիարակել, կիսել միմյանց միջև։ Նրանք այլևս չէին մտածում վիճարկել նրան։ Երկուսն էլ մեռնում էին, որովհետև մեռել էր նա։ Այնպե՞ս հարազատացան նրանք, իջնելով նրա գերեզմանը։

— Իմ խե՜ղճ Աննետա։ Եկ մենք էլ քնենք։

Եվ Սիլվիան հանկարծ պարզորոշ տեսավ Մարկի օրորոցի վրա խոնարհված երկու ջահել, երջանիկ դեմք՝ քրոջ այրը դիպչում էր մյուս քրոջ այտին։

Երեկոյան դեմ Սիլվիան, արհամարհելով ժորժի արգելքը, անկողնուց վեր կացավ, բացեց պահարանը, մեկ առ մեկ նայեց բոլոր հին շրջազգեստները, ընտրեց սևը և մկրատի ու ասեղի օգնությամբ հարմարեցրեց իր կազմվածքին։ Ժամը ութին եկավ ժորժը։ Քանի որ նա չէր կարողացել խանգարել Սիլվիային, նրա պարտքն էր գոնե ամեն ինչ անել՝ վտանգը նվազեցնելու համար։ Նա նորից վիրակապ ու կալանդ դրեց և Սիլվիային օգնեց հագնվել։ Սիլվիան մահճակալի մոտ դրված սեղանից վերցրեց փոքրիկ հայելին և կարմրաներկը. ինչո՞ւ իր տեսքով վախեցնի Աննետային։ Ժորժը, որ ուժեղ ձեռքերով պահում էր Սիլվիային, նրան գրեթե գրկած իջեցրեց սանդուղքով։ Կայարան հասան տաքսիով։

Սիմպլոնյան գնացքը ճշտապահ էր, ինչպես թագավորները (եթե հավատալու լինենք առածին) և ինչպես դժբախտությունները։ Ժամը տասնմեկի սկզբներին գնացքի ժամանմանը սպասող երկու կանայք ուղևորների ամբոխի մեջ երեսներին թանձր քող գցած երկու կին տեսան։ Նրանցից ավելի երիտասարդը, քողը ցած իջեցնելով, ծածկել էր դեմքը։ Աննետան, դեմքը բացելով, քայլում էր անշտապ, հարսի հետ թևանցուկ, բայց սրատես Սիլվիան անմիջապես հասկացավ, որ հարսի թևը Աննետայի համար հենարան չէր ծառայում, նա, ով ավելի երիտասարդ էր, ավելի թույլ էր։ Աննետան հեռվից ճանաչեց Սիլվիային։ Նա քայլերը չարագացրեց, բայց նրա աչքերը այլևս չէին կտրվում քրոջ հայացքից։ Սիլվիան տեսնում էր, թե ինչպես էին այդ աչքերը մոտենում իրեն. նրանցում սահմռկելի հանգստություն կար, և նույնպիսի սահմռկելի հանգստություն էր արտահայտում քրոջ խոշոր, խստորեն փակ բերանը։ Աննետան հասցրեց զննել Սիլվիայի անկենդան դեմքը, և նրան չխաբեցին քրոջ

խորամանկությունները. կարմրաներկի շերտն անգամ չէր կարողացել սքողել այդ անառողջ, ու ուռածավուն դեմքի մեռելային գունատությունը։ Քույրերը, գրկելով միմյանց, ոչ մի խոսք չփոխանակեցին, բայց այդ գրկախառնությունը նրանց հուշեց, որ իրենց մարմինը քրքրողը միևնույն վերքն է։ Ժորժն ու Ասյան գրկախառնված դառնադին լալիս էին։ Երբ, վերջապես, Սիլվիան գրկեց Ասյային, Աննետան Ժորժի ձեռքից բռնելով նրան մոտեցրեց իրեն և հարցրեց քրոջ առողջության մասին։ Ժորժը նրա ականջին արագ շշնջաց այն ամենը, ինչ իմացել էր։ Աննետան կրկին գրկեց Սիլվիային և ձեռքը փաթաթեց նրա իրանին։ Քրոջ համար աննկատելիորեն նրան սատարելով, որովհետև Սիլվիան, ցանկանալով թաքցնել իր վիճակը, քայլում էր ուղղաձիգ, Աննետան ափի տակ զգաց այդ ախտաբեկ մարմնի դողը։ Նա քրոջը տարավ իր մոտ։

Հայտնվելով տանը, Աննետան առաջին հերթին գնաց համբուրելու քնած Վանյային։ Մի քանի րոպե միայնակ նստեց մութ ննջասենյակում. լույսը ներս էր թափանցում միայն դռնի հարևան սենյակ տանող բաց դռնից։ Երեխան քնի մեջ փնթփնթաց.

— Բարև, հայրիկ։

Ապա զարթնեց, նայեց տատիկին։

— Բայց սա նա չէ, սա Աննետա մայրիկն է։

— Մեկ է՝ նա է։ Քնիր հարազատս։

Վանյան նորից քնեց։

Աննետան գնաց ճաշասենյակ, որտեղ սպասում էին նրան մյուսները, և ձեռքի շարժումով վերջ դրեց խոսակցություն սկսելու փորձերին։ Նա դիմեց Սիլվիային։

— Դու կպառկես ինձ հետ։ Բոլորովին էլ հարկ չկա, որ տուն վերադառնաս։ Ինձ համար էլ այդպես լավ կլինի։ Միայն թե չենք խոսելու։ Խոստանո՞ւմ ես։

Այնուհետև Աննետան ղբաղվեց հարսով և նրան տիրպեց մի բան ուտել։ Ասյան հրաժարվում էր ու արտասվում։ Աննետան նրան հանձնեց Ժորժի հոգացողությանը, որը Ասյային տարավ մյուս սենյակը. Ժորժին հրահանգներ էին տրվել վաղը տեղի ունենալիք հուղարկավորության հետ կապված ձևականությունների վերաբերյալ։ Հարևան սենյակում նստած երկու ջահել կանայք, որոնց ոչ մի կերպ չէր հաջողվում զսպել իրենց աչքերից թափվող ու թափվող արցունքները, իրենք իրենց հաղցնում էին.

«Նա ինչպե՞ս կարող է, երանք երկուսն էլ ինչպե՞ս կարող են չարտասվել»։

Դա նրանց գրեթե զայրացնում էր, բայց էլ ավելի՝ վախեցնում։ Եվ, վերջապես, ժողովը բարձրաձայն արտահայտեց իր և Ասյայի ընդհանուր միտքը.

— Աստվա՜ծ իմ, աստվածե իմ, հավանորեն դժոխային տառապանք է չարտասվելը...

Քույրերը նստեցին մահճակալին և անսահման քնքշությամբ նայեցին իրար։ Աննետան Սիլվիային օգնեց հանվել և, լույսը հանգցնելով, պառկեց նրա կողքին։ Նրանք գրկախառնվեցին և հանկարծ նրանց կամքը կոտրվեց։ Կրտսեր քույրը սեղմվում էր ավագ քրոջը, ավագը գրկի մեջ սեղմում էր կրտսերին։ Առաջինը Սիլվիան անքալով ասաց.

— Մեր խե՜ղճ երեխա։

Եվ հենց այդ պահին հորդեց հեղեղը, որը սրտից էր բխում... Ամբարտակը ճեղքվեց։ Եվ արցունքները ողողեցին ամեն ինչ։ Ոչ ոք չէր կարող տեսնել դրանք։ Նույնիսկ՝ երեքը։ Նրանցից յուրաքանչյուրը ծծում էր մյուսի այտերով հոսող երկու գառն վտակները, որոնք խառնվելով գետ էին դառնում։ Օ՜հ, ինչ վշտալից էր այդ գետը։ Նա նրանց անունն էր, նաև՝ ճակատագիրը... Իսկ գետի ջրերը՝ նրանց զգացմունքների տենդը, սերը և ցավը։ Բայց հիմա գետը մաքուր էր, ինչպես օրհնյալ ջուրը։ Ոչինչ չէր պղտորում հոսանքը։ Գետը իր հետ, իր կոհակներում տանում էր եսամոլության վեցջին մնացորդները։ Քույրերը իրենց մասին չէին մտածում, այլ մտածում էին «խեղճ երեխայի» և քրոջ վշտի մասին։ Երբ հոգին սուր խղճահարությամբ ողողած առաջին, ամենահզոր ալիքը ետ գլորվեց, նրանք համբուրվեցին, շրթունքները հպելով հարազատ աչքերին ու ունգներին։ Մեկի ափր սրբում, շոյում էր մյուսի-այրը, բերանը...

Այնուհետև Աննետան ազատվեց Սիլվիայի գրկից, մեջքի վրա մեկնվեց նրա կողքին, բռնեց նրա ձեռքը, կարծես միասին գնում էին անթափանց խավարի միջով, և միայն այդժամ ավագը սկսեց պատմել կրտսերին։ Համառոտակի, հասարակ բառերով պատմեց վերջին օրվա, այն ճակատագրական պահի մասին։ Խոսում էր ցածր, խուլ ձայնով և դանդաղ, ժամանակ առ ժամանակ լռելով, որպեսզի ուժերը ժողովի կամ, երբ քրոջ ձեռքը, որ իր ձեռքում էր, գթություն էր աղերսում։ Այդպես երկու-

սով ավարտեցին պատմությունը։ Տիրեց լռություն, որն իրենով լցրեց ամբողջ ննջասենյակը։ Սիլվիան բաց թողեց քրոջ ձեռքը, խոնարհվեց նրա կրծքին և շրթունքները սեղմեց այն տեղին, ուր բաբախում էր Աննեատայի սիրտը։ Առավոտվա կատաղությունն ու ցասումը մոռացվել էին։ Հիշողության մեջ հնչում էին աղոթքների առանձին հատվածներ։ Stabat mater dolorosa[1]...

Աննեատան լռելյայն ընդունում էր քրոջ համբույրները։ Այո, նա չէր խոնարհվել, կանգնած էր— stabat — խավարում։ Նա մայրական գորովանքով շոյեց Սիլվիայի գլուխը, ապա ասաց.

— Իսկ հիմա եկ քնենք։ Վաղը մեզ ծանր օր է սպասում։

Նրանք մեջքով շրջվեցին մեկը մյուսի կողմը, հավեցին իրար։ Մի վտակ էր հոսում երկու մարմնի միջով։ Թե՛ մեկը, թե՛ մյուսը պառկել էին լուռ, անքուն։ Միայն շատ ավելի ուշ, խուլ գիշերին, Սիլվիան հանկարծ անձկությամբ հարցրեց.

— Ո՞րտեղ է նա։ Որտե՞ղ է նա։

Եվ Աննեատայի ձայնը պատասխանեց.

— Իսկ մենք որտե՞ղ ենք։

Դողը համակեց միմյանց կիպ սեղմված այդ երկու մարմիններին։ Եվ ապա, սոսկ մի րոպե անցավ, թե՞ մի ամբողջ ժամ, Սիլվիան նորից ասաց.

— Չեմ հասկանում, չեմ հասկանում...

Աննեատան չպատասխանեց, նա միայն հավեց քրոջ ուսին։ Սիլվիան երկչոտությամբ, վախեցած երեխայի նման հարցրեց.

— Ի՞նչ է կյանքը։ Ի՞նչ է մահը։

Աննեատան պատասխանեց.

— Դրանք միևնույն բաներն են։

Աննեատան ու Ասյան որոշել էին Մարկին թաղել ոչ թե Փարիզում, այլ գյուղական փոքրիկ գերեզմանոցում, որը գտնվում էր Իվեթի մոտ, ուր երիտասարդ զույգը, այդ երկու անառակ զավակները հարազատ օջախ վերադառնալուց հետո իր՝ Աննեատայի համար սրբազան օրեր էին անցկացրել... Հաշված օրեր։ Մի շաբաթից էլ քիչ (չէր հաջողվել ավելի տևական արձակուրդ վերցնել), բայց դրա փոխարեն ժամանակից դուրս։ Մարկը մի անգամ Ասյային ու մորը ցանկություն էր հայտնել այդ հողում պառկելու, ասել էր, իհարկե, ոչ լրջորեն, նույնիսկ չմտածե-

---

1 Կանգնած էր մայրը վշտահար (լատ.)։

լով, որ այդ ցանկությունը կարող է իրագործվել։ Բայց Աննետան ու Ասյան միահամուռ որոշեցին կատարել իրենց սիրելիի պատգամը (կատարել իրենց իսկ սեփական պատգամը)։

Թաղումը քիչ ձեռականություններ չպահանջեց։ Բայց արագաշարժ ժորժը հոր օգնությամբ ամեն բան արեց, ինչպես որ պետք էր։ Աննետան ու ժորժը միասին գնացին կայարան, որպեսզի վերցնեն մարմինն ու այն տանեն վերջին հանգստավայրը... Բայց Աննետան որդուն ուղեկցելու գնաց մենակ։

Առավոտյան նա ուշադիր նայեց քրոջը և վճռեց, որ Սիլվիան մինչև վերջնականապես ապաքինվելը չպետք է վեր կենա անկողնուց։ Սիլվիան փորձեց բողոքել։ Սակայն ենթարկվեց և ոչ այնքան Աննետայի անդրդվելի կամքին, որքան այն սիրուն, այն համառ թախանձանքին, որ կարդաց քրոջ աչքերում։ Ոչ, հիմա, այս ժամերին նա իրավունք չունի որևէ բանում մերժել Աննետային, իրավունք չունի վտանգելու իր կյանքը, երբ այդ կյանքը ինչ-որ արժեք ունի (Սիլվիան հասկանում էր դա) ավագ քրոջ համար։

«Չեմ ուզում մեռնել,— մտածում էր Սիլվիան։— Ես նրան պետք եմ»։

Ասյան ամբողջ գիշերը ուժեղ տենդի մեջ էր։ Բժիշկը, որին առավոտյան հրավիրել էր Աննետան, չորոշեց հիվանդությունը, բայց խորհուրդ տվեց խուսափել հոգնածությունից։ Նրա խոսքերով, նոր հուզմունքները կարող էին հանգեցնել անցանկալի հետևանքների։ Ասյան հուսահատվեց, չէր ցանկանում ենթարկվել և կրկնում էր, որ անպայման կգնա Աննետայի հետ միասին։ Բայց նրա ամբողջ էությունը ենթագիտակցորեն ընդդիմանում էր.

«Ոչ, ոչ, ոչ մի դեպքում չե՛մ գնա»։

Նա վախենում էր գերեզմանոցից, վախենում էր տեսնել դագաղը։ Նա, այդ կինը, որ մահվան, պատերազմի ու հեղափոխության այնքան դաշտեր էր անցել... Այո՛, այո։ Անցել էր այդ դաշտերի միջով և դրանց հետքը դանդաղորեն, ոչ միանգամից, բայց կերել էր պողպատը։ Նյարդային ուժը սպառվել էր, և վերջին հարվածը ընկճեց նրան։ Նա չէր կարողանում նույնիսկ մտածել մի ամբողջ օր ննջեցյալի հետ անցկացնելու մասին։ Թող ինքը չտեսնի՛ նրան։ Թող տեսնեն նրան, այնքան սարսափելի չէր լինի իր համար... «Այն, ինչ տեսնում եմ, գոնվում է ինձանից դուրս։ Իսկ այն, ինչ չեմ տեսնում և գտնվում է կողքիս, ինձանից մի քայլ չի հեռանում, թափանցում է իմ մեջ...»։

Աննետան չպնդեց էլ։ Նա ուզում էր մենակ կատարել իր պարտքը, միայն թե չէր համարձակվում բարձրաձայն արտահայտել այդ միտքը։ Նա հրաժարվեց ժորժի օգնությունից, որը չէր ուզում նրան մենակ թողնել, սակայն չհամարձակվեց հրաժարվել ժուլիեն Դավիի օգնությունից։

Գյուղական փոքրիկ գերեզմանոց։ Ցեմենտով չամրացված տարբեր մեծության քարերով շարված ատամնավոր պարսպից այն կողմ սալատաձև երևում էին քիչ առաջ գութանով փորված կարմիր կավահողի թմբերը։ Լսվում էր, թե հեռվում ինչպես է ղրնգում խոփը, քարերին զարնվելով, և ինչպես է մանչիալը «դեհ», «դեհ-դեհ» ասելով քշում իր ձին։ Կանաչ ցանկապատերում ծաղկել էր մասրենին։ Տաք և մաքուր օդը թարմ էր, ինչպես մատաղ շուրթերի համբույրը։ Իսկ շուրջբոլորը լուռություն էր, և այդ լուռության մեջ չոր հողը թափվում էր դագաղի կափարիչի վրա։ Աննետան կանգնել էր գերեզմանի վրա խոնարհված, նա ամեն ինչ լսեց, տեսավ մինչև վերջ։ Նա շշնջում էր.

— Ես այստեղ եմ։ Քնիր։

Նրան թվաց, թե վերմակով փաթաթում է փոքրիկ մահճակալին քնած որդուն։ Ժուլիենին ուղարկեց տուն, եվ մնալով մենակ, ամբողջ օրը նստեց գերեզմանի մոտ։ Նա մտածում էր.

«Զավա՜կս, զավա՜կս... Ինչքա՜ն հեռու ես արդեն։ Դու ինձանից առաջ անցար։ Կկարողանա՞մ, արդյոք, հասնել քեզ»։

Որովհետև նրա աչքերի առաջ ասես տեսիլք հայտնվեց. նա, որ մեռած էր, խոշորաքայլ հեռանում էր իրենից, ինչպես կատարելապես ողջ։ Գերեզմանոցի պարսպի վրայով Աննետան հայացքով հետևում էր արտերի միջով հեռացող մարդու ստվերապատկերին։ Ստվերապատկերը բարձրացավ բլուրը և, հասնելով գագաթին, սկսեց փոքրանալ ու անհետացավ հակադիր կողմում։ Աննետան ձեռքերը կարկառեց նրա ետևից.

— Սպասիր ինձ։

Հողը կլանեց տեսիլքը։ Աննետան ամբողջ մարմնով դողաց ու վեր ցատկեց տեղից։ Բայց նրա հայացքը սահեց գերեզմանաթմբերի վրայով, և նրա վրա հանդարտություն իջավ։ Նա կրկին նստեց գերեզմանի եզրին... Նա այստեղ է... Թող որ անհետացավ բլրի ետևում։ Երկրի արգանդն այստեղ է, իր կողքին։ Մայրը կկարողանա վերամիավորվել որդու հետ։

— Ի՛մ չափահաս, իմ մեծ։

Օ՛, նա ինչքան է մեծացել այն ժամանակվանից, երբ մայրը նրան իր ընդերքում էր կրում։

— Հիմա դու տարիքով անցար ինձանից... Դեռ երեկ իմ պատուղն էիր։ Այսօր՝ իմ ծառը...

Եվ նա պարսպի վրայով նայեց այնտեղ, ուր դեպի վերև ձգվող ճանապարհի ոլորանում գեղեցիկ ճյուղերի թևերի նման տարածած մի հզոր հաճարենի կար։ Մի պառավ գեղչկուհի, ձեռքին ծանր զամբյուղ, նստեց հանգստանալու նրա ստորոտում, քարե խաչի կողքին։ Իսկ Աննետան գորովանքով կըրկնում էր.

— Իմ չափահաս... Սատարիր ինձ։ Ես այնքա՜ն թույլ եմ։ Այնքա՜ն ծանր է ինձ համար։ Գիտեմ, գիտեմ, չեմ համարձակվում, դու արգելում ես ինձ... Այո, իմ քաջ, հիմա ես պետք է արժանի լինեմ քեզ, այդպես է հարկավոր... Եվ կլինեմ, կլինեմ, երբ դու այստեղ ես... Ինձ մի լքիր։ Բռնիր ձեռքս... Կտեսնես, որ մայրդ քեզ չի խայտառակի։ Նա կդիմանա, եթե դու նրան սատարես։ Այսուհետև դու հայր ես։ Իսկ ես՝ քո երեխան... Գնա՜նք, ուրեմն, իմ մեծահասակ...

Աննետան ոտքի ելավ։ Մայիսյան երկնքից սկսեց բարակ անձրև կաթկթալ, թափանցելով մինչև նրա ոսկորները։ Անձրև կաթկթաց նաև գերեզմանաթմբի վրա։ Անձրևը միավորում էր մորն ու որդուն։ Մոր թրջված ուսերն ու վիզն ի վար գլորվող յուրաքանչյուր կաթիլ ասես հագեցնում էր ննջեցյալի ծարավը։

— Այն բոլորը, ինչ իմն է, քոնն է՝ չուրն ու հողը։ Մենք բոլորը կիսում ենք հավասար։ Դու ինձ քո մահն ես տալիս, ես քեզ՝ իմ կյանքը։ Ես ոչ մի տեղ չեմ գնում։ Կպառկեմ քո կողքին և կմնամ այստեղ։ Ես ոչ մի տեղ չեմ գնում։ Դու ես գնում։ Իսկ ես հետևում եմ քեզ։ Դու կանխեցիր ինձ... Արիացիր, Աննետա, դեհ, նորից առաջ գնա։ Այնտեղ, ուր իմ Մարկն է գնում, և ես կհասնեմ, ես հավատում եմ։ Դեհ, գնա, իմ Մարկ։ Քո ծեր մայրը ճանապարհին քեզ չի լքի։ Ես ու դու մի էակ էինք։ Եվ այսուհետև էլ կլինենք։

Եվ երբ Աննետան կռացավ ու ձեռքը քսեց թաց հողին, շոյելով որդու շիրիմը, նա հանկարծ լսեց, թե ինչպես թեթև, փութկոտ քայլերից խշխշաց մանրախիճը։ Շտապ քայլերով ուղիղ դեպի Աննետան էր գնում մի երիտասարդ, բարձրահասակ, նըրբակազմ սգավոր կին։ Մոտենալով, նա ասաց.

— Ես եկա... Ներեցեք ինձ։ Գնացքը ամբողջ երկու ժամ ուշացավ...

Աննետան նայում էր անծանոթուհու երկարավուն դեմքին ու մոխրագույն աչքերին, որոնք հանկարծ նեղացան, ասես ժպիտ նախագուշակելով, բայց նրանցից արցունքի երկու խոշոր կաթիլ դուրս գլորվեց։ Աննետան լուռ սպասում էր, նա առաջներում երբեք չէր տեսել այդ կնոջը։ Իսկ կինը շարունակեց.

— Ես Ռյուշն[1] եմ։ Նա ճանաչում էր ինձ։

Աննետայի վշտահար դեմքը պայծառացավ։

— Հիշում եմ ձեր անունը։ Իմ խեղճ փոքրիկ կրնտի համար դուք լավ տանտիրուհի եք եղել։

Ռյուշը կռացավ (ճկունությամբ նա առաջվա նման քեռծե էր հիշեցնում) և հանկարծական պոռթկումով, նախքան Աննետան կհասցներ ուշքի գալ, իր երկարավուն դնչիկը թաքցրեց մոր թաց, հողոտ ափերի մեջ։ Երբ նա շտկվեց, նրա այտերին մնաց գերեզմանի խոնավ հետքը։ Նա իր աչքերը, լուսարձի ափերին ծնված չինուհու աչքերը, այնպես էր թարթում, ասես ուզում էր հուզմունքը ծածկել կոպերի վարագույրով։ Բայց Աննետան առանց դժվարության երիտասարդ հոգու խորքում կարդաց այն։ Եվ, գիրկը բացելով, համբուրեց այդ այտերը, որոնց վրա իր ձեռքերը հետք էին թողել՝ որդու հետքը։ Ռյուշը, գրկելով Աննետային, ափերի տակ զգաց, որ նրա շրջապգեստն ամբողջովին թրջվել է և դատեր տագնապով ասաց.

— Մայր, այլևս չի կարելի մնալ այստեղ։ Կմրսեք։ Գնանք, ես կուղեկցեմ ձեզ։

Եվ նա շալը գցեց Աննետայի ուսերին։ Աննետան սիրուր ժպտաց.

— Ես հիմա շատ դուստրեր ունեմ։

Ռյուշը պատասխանեց.

— Բայց նրանցից ոչ մեկը այնպես ուժգին չի սիրում ու հարգում ձեզ։

Աննետան, Ռյուշին թևանցուկ արած, դանդաղ, կաղծես ըղձկամությամբ, դուրս եկավ գերեզմանոցից։ Նա հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ առաջներում երբեք ինձ չեք ասել այդ մասին։

Ռյուշը պատասխանեց.

— Ես ավելորդ էի։ Դուք ուրիշ դուստրեր ունեիք։

---

[1] Տես՝ «Նախագուշակումին», հ.I, Ռ. Ռ.։

— Վերջին անգամ ե՞րբ եք տեսնվել որդուս հետ,

— Յոթ տարի առաջ. մենք չէինք հանդիպում այն ժամանակվանից, ինչ ես մեկնեցի Փարիզից,

— Հապա ինչու չէիք տեսնվում, եթե մնացել էիք իրրև բարեկամներ,

— Նա ամուսնացավ, ես ամուսնացա,

Եվ փութանակի ավելացրեց.

— Ջմտածեք, խնդրում եմ, թե մեր միջև կապ կար: Ես նույնիսկ նրա սիրուհին չեմ եղել:

Այդ «նույնիսկ» բառի մեջ ափսոսանքի երանգ հնչեց, Աննետայի ականջն իսկույն լեթ ընսաց այն: Իսկ Ռյուշը, որի բերանից միանգամայն հանկարծակի էր դուրս թռել այդ բառը, փորձեց ուղղել իրեն.

— Ես չէի ուզենա, որ դուք այդպես մտածեիք,

Աննետան նայեց նրան և, շարունակելով առաջ գնալ, ասաց.

— Իսկ եթե ես, այնուամենայնիվ, այդպես մտածեի, Ի՞նչ վատ բան կա այստեղ,

Ռյուշը կարմրեց:

— Դուք իրավացի եք, ես պարզապես անհաջող արտահայտվեցի: Լավ, հիմա ես ամեն ինչ կասեմ: Եթե դուք այդպես մտածեիք, կուզենայի, որ իրոք այդպես էլ լիներ,

Աննետան արմունկով սեղմեց բարակ, դողացող ձեռքը:

— Ճշմարտախոս աղչիկս, նույնիսկ դա չէր կարող ձեզ մոտեցնել ինձ ավելի, քան ձեր խոստովանությունը:

— Ոչ էլ ինձ՝ նրան, եթե իրոք դա այդպես լիներ... Ես ոչինչ չեմ ուզում թաքցնել ձեզանից... Եվ հիմա դա արդեն ձերն է, նրանն էր, դարձավ ձերը, իսկ ես ձեր պարտապանն եմ... Եթե իրոք այդպես լիներ, ես կտեի, դիտավորյալ չասելով, որ հիմա այնքան էլ ցավ չեմ զգում: Բայց ես նույնպես ստած կլինեի (չէ որ դուք հավազուտ եք ինձ), եթե ձեզանից թաքցնեի, որ այն, ինչ եղել է իսկապես (այսինքն չի եղել), ինձ համար ավելի գեղեցիկ է ու թանկ...

Անձրևի տակ Աննետան ու Ռյուշը հասան գյուղ, որի փոքր պանդոկում պետք է սպասեին փարիզյան գնացքին: Ռյուշը սրտառուչ հոգ էր տանում Աննետայի մասին: Աննետան դեռ պետք է թաղման հետ կապված որոշ գործեր վերջացներ, խոսեր այգեպանի ու մարմարագործի հետ և նրանց հանձնարարեց գերեզմանի խնամքը: Եվ նա որոշեց վերադառնալ գերեզմանոց,

Ռյուշն ամենուրեք հետևում էր նրան, և նրա գործնական ուշիմությունը շատ օգնեց Աննետային։

Անձրևը դադարեց։ Կանայք կրկին երկար կանգնեցին գերեզմանի մոտ և, կայտառան գնալուց առաջ, շրջանցեցին փոքրիկ բլրակն ու նստեցին մի կողմ, ուղիղ արտի մեջ։ Ռյուշը պատմեց, թե իր համար ինչ էր եղել Մարկը այն անցած-գնացած օրերին ու գիշերներին։ Պատմեց իր սովորական անողոք անկեղծությամբ, ճշտորեն, ոչինչ չթաքցնելով, չամաչելով, չտատանվելով, և նրա պատմությունը հիշեցնում էր ցայտուն և հստակ գծանկար՝ առանց գունազարդումների։ Ոչ մի գերզգայունություն և, ամբողջ ճշգրտությամբ հանդերձ, ճշմարտությանը անշեղորեն հետևելով հանդերձ՝ ոչ մի չինծու երանգ։ Պատմողի հիշողությունը կարծես անսխալական, բայց ոչ անդեմ, հայելի էր։ Ռյուշի կողմը թեքված Աննետան լուռ էր. նրա վշտի միջից, ինչպես լույսի աղոտ ճառագայթը մայիսյան այդ անձրևային օրվա միջից ժպիտ դուրս եկավ։ Աննետան ժպտաց, պատկերացնելով, թե ինչպես են երկու մոլորված երեխաները փարիզյան տենդագին գիշերը ոտ ու գլուխ պառկել անկողնում, և մեկը ձեռքերի մեջ տաքացրել է մյուսի ոտքերը։

Ռյուշն ասում էր.

— Նա փրկեց ինձ, ևս արդեն հատակն էի իջնում։ Որ գոյություն ունեմ, որ այն եմ, ինչ կամ ես, պարտական եմ այն գիշերին, այն մի քանի օրերին, որ անց ենք կացրել միասին, այն իմաստությանը, այն անակնկալ բարությանը, որ գտա ձեր որդու մեջ։ Ես նրան երբեք այդ մասին չեմ ասել։ Ես ու նա ավելորդ զգայնություններից սիրահար չէինք։ Մեր ամենանվիրական զգացմունքները՝ երախտագիտությունն ու սերը աշխատում էինք որքան կարելի է խորը թաքցնել, որպեսզի մյուսը չնկատի։ Կարող է նույնիսկ թվալ, թե դա հիմարություն էր (մեզանից յուրաքանչյուրը, իհարկե, ամեն բան տեսնում էր), բայց այն, ինչ թաքցված է արգավանդ հողում, ավելի լավ է աճում։ Այն գիշերվա փոքրիկ ընձյուղը իմ սրտում աճելով փարթամ ծառ դարձավ, և նա այստեղ է (Ռյուշը ձեռքը դրեց իր տափակ կրծքին), այստեղ է այն ակնթարթների, Մարկի՝ այժմ դիպչող մերկ ոտքերի սրբազան հուշը։ Ես համբուրում եմ նրա ոտքերը...

Եվ Աննետան հիշեց, Մի ուրիշ կին մի ժամանակ նման խոսքեր էր ասել, ասել էր վաղուց, շատ վաղուց, ժամանակի խո-

վարում[1]։ Նվ ծեր կինը հագնած գլուխը դրեց երիտասարդ կնոջ ուժեղ ուսերին, որի ճկուն մարմինը իր որդուն որպես սնար էր ծառայում։

Ռյուշը պատմում էր իր կյանքից։ Յոթ տարի առաջ գավառ վերադառնալով, ամուսնացել է երիտասարդ տաղանդավոր փաստաբան Ռենո Կորդիեի հետ։ Հիմա ունի երեք երեխա։ Զգացել է, որ կրկին խրվում է բուրժուական կյանքի մեջ, բայց չի ցանկացել անձնատուր լինել։ Օրինակելիորեն կարգի է բերել տունը, դա իր համար գրեթե պատվի գործ համարելով, բայց չի փակվել չորս պատերի մեջ։ Իր ընդունակությունները նա ի սպաս է դրել ամուսնուն, իսկ ամուսինը իր ընդունակությունները ի սպաս է դրել հասարակական գործերին, տարբեր միավորումների, արհմիությունների կազմակերպմանը։ Դարձել է նրա քարտուղարուհին, համագործակցում է նրա հետ։ Շրջապատողները հաստատ համոզված են (Ռյուշն այդ չասաց Աննետային), որ նա ոգևորում է ամուսնուն, որ նրա առջև լայն հորիզոններ է բացել։ Ազնիվ հոգու տեր այդ մարդը (Ռյուշը պնդում էր, որ ամուսինն իրենից անհամեմատ լավն է) հենց սկզբից անվերապահորեն ընդունել է միությունը կնքելիս նրա առաջադրած պայմանները՝ փոխադարձ հարգանք մյուսի անձնական կյանքի նկատմամբ, փոխադարձ վստահություն մեկառմիշտ։ Ամուսինը պատվով է կատարում իր խոսքը։ Թույլ է տալիս գնալ, երբ ինքն ուզում է, թույլ է տալիս բացակայել ու վերադառնալ, երբ իր խելքին փչի, ճանապարհորդել, հանդիպել ում հետ որ սիրտն ուզում է և երբեք հաշիվ չի պահանջում։ Իսկ դա Ռյուշի նման կնոջ հետ վարվելու ամենաճիշտ ձևն է։ Նա չի կարող նույնիսկ մազաչափ վատություն անել այն մարդուն, որն անսահման վստահություն է ցուցաբերում, հաշիվ է տալիս իր բոլոր արարքների համար։ Ամուսինը գիտեր բոլոր մտքերը։ Գիտեր նաև, թե իր համար ինչ է եղել Մարկը, և ինքն է ասել նրան.

— Անպայման գնա, թանկագինս։ Ես էլ կգայի քեզ հետ, բայց վախենում եմ խանգարեմ։

Աննետան խորհում էր այն մասին, թե ինչ կյանք կարող էին ապրել ինքն ու Ռոժեն։ Այն, ինչ ինքը ուզում էր և ինչը մերժում էր Ռոժեն, այժմ, երեսուն տարի անց, իրականացրին այս երի-

---

1 Տես՝ «Ամառթ» վեպը, Աննետայի երգը։ Ռ.Ռ.։

առաջարկները։ Եվ հուշերով տարված, անցյալը ներկայի հետ շփոթելով, նա ասաց.

— Իմ անունից շնորհակալություն հայտնեք ձեր Ռոժեին։ Չհասկանալով նրան, Իյուշն արձագանքեց։

— Ոչ թե Ռոժե, այլ Ռենո։ Դուք շփոթեցիք ասպետի անունը։

Նա Աննետային ուղեկցեց մինչև տուն։ Արդեն ուշ էր։ Մուտքի մոտ նրանք բաժանվեցին։ Իյուշը կարականալես հրաժարվեց գիշերել Փարիզում։ Նա ասաց, որ իրեն անհրաժեշտ է շտապ վերադառնալ Լիոն, և մեկնեց գիշերային գնացքով։ Մինչդեռ իրականում, նա շտապելու տեղ չուներ։ Բայց Իյուշն այնքան էլ չէր ցանկանում հանդիպել այն կնոջը, որի հետ ամուսնացել էր Մարկը։ Թեև հիանալի գիտես, որ ոչ մի իրավունք չունես, թեև կարծում ես, որ նախատրամադիր չես խանդի, միևնույն է, կինը հաղվադեպ է դառնում ընկերուհին իր ամուսնու ընկերուհու, որի հետ ամուսինն այնքան մոտ է եղել։ Իյուշը Լիոնից առաջինը գրեց Աննետային, և նամակագրությունը սկսվեց։ Բայց երկրորդ հանդիպումը կայացավ միայն այն ժամանակ, երբ Աննետան գնաց Իյուշի մոտ։

Ամենածանրը տակավին առջևում էր։ Քանի դեռ որդին կողքին էր, նրա ներկայությունը մոր մեջ վառում էր կրքոտ հերոսության կրակ, որն այդ սարսափելի օրերին օգնում էր նրան։ Քանի դեռ որդու մարմինն այստեղ էր, մոր մոտ, որդին առաջվա նման նրա ուղեկիցն էր, նույնիսկ տառապանքի և մահվան մեջ. նա խոսում էր մոր հետ։

Բայց գերեզմանոցից վերադառնալով, Աննետան մենակ մնաց։ Կրակը հանկարծ հանգավ այդ օրերի անմարդկային լարվածության հետ միասին։ Աննետան հոգեմաշ էր լինում, նրա ուժը չէր բավականացնում իր առջև պահպանելու ոգեշունչ պատրանքը։ Եվ նա հասկացավ, որ դա պատրանք է։ Ու միայն այդ ժամանակ սկսվեց մահը։

Իսկ Աննետան չէր կարող շնչել մահվամբ։ Աննետան՝ կյանքի այդ մարմնացումը, երբեք չէր կարող պատկերացնել անգոյությունը (և ո՞վ կարող է), երբեք չէր կարող հաշտվել անգոյության հարևանության հետ։ Երբ իր հուշերում նա դիմում էր նրանց, ում բոլորից շատ էր սիրել՝ հորը, ժերմենին, նրան թվում էր, թե նորից է կախվում անդունդի վրա և սարսափը կրկին համակում էր նրան։ Բայց այն ժամանակ խոսքն այն մասին չէր,

թե նրա համար ով է ամեն ինչ, այն ժամանակ դեռ կարելի էր մի կերպ խույս տալ։

Իսկ այժմ նրա ամեն ինչը դրվել էր խաղաթղթի վրա ու տանուլ տրվել։ Ներքին ցնցումն անչափ մեծ էր, նա չէր կարող չհասկանալ այդ։ Աննետան շատ լավ գիտեր (իսկ ո՞ր մայրը չգիտի), որ որդին իր համար ավելի էր, քան կյանքը։ Բայց դրանք սոսկ խոսքեր են, սրտի ճիչ, պայղապաես վկայություն այն սիրո, որը պատրաստ է կրակի մեջ նետվելու, միայն թե փրկի սիրեցյալին։ Դրանք չեն որոշում այն իսկական տեղը, որ մեր կյանքում դրավում է նա, ում սիրում ենք և այն ինչ կմնա մեր կյանքից, եթե հանկարծ մեզանից խլեն մեր սիրեցյալին։ Այդպես էլ Աննետային թվաց, որ նրան ոչինչ չի մնում։ Սիրասուն զավակը ամեն ինչ էր։

Նույնիսկ այն ժամանակ, երբ Աննետայի մայրական կիրքը հասել էր բարձրակետին, նա չէր կասկածում, որ այդպես էլ կա։ Կրակը, որ անդադրում պահպանում էր նրա բորբոքուն, գործունյա կյանքը, թվում էր, թե կարող է վառվել նաև առանց կրքի, չէ որ շատ անգամ էր նա իր համար ուրիշ սնունդ գտել։ Բայց ներքուստ նա ոչ մի րոպե չէր բաժանվում որդուց։ Դրանում իրեն հաշիվ չտալով, նա զգում էր, որ որդին միշտ իր կողքին է և նա հարկավոր է իրեն, ինչպես յուղ է հարկավոր, որպեսզի կանթեղը վառվի։ Թող որ բոցը երբեմն լուսավորում է մահճակալի առագաստը, ամբողջ տունը։ Բայց կրակի օջախը կանթեղն է։ Եվ որդին կրակի կենտրոնակետն էր։ Իսկ մնացած բոլորը՝ անցողիկ փայլատակումներ։

Երբ նա հիմա հետադարձ հայացք էր գցում իր ապրած կյանքի վրա, ջանալով որոշել, թե նա ինչ է եղել իր համար, մի ժամ էլ չէր գտնում, որը լցված չլիներ զավակով։ Երեսուն տարվա համատեղ կյանքի ընթացքում բաժանման ոչ մի օր։ Եվ նույնիսկ մինչև ծնվելն էր նա ապրում Աննետայի մեջ, նրա մարմնի նվիրական խորքերում, որպես նրա վաղեմի պոռթկում, ձգտում և նպատակ, էություն, գոյության իմաստ... «Սեր, ես գտա քեզ, ես դու դարձա, դու՝ ես, և ես ու դու մի մարմին ենք...»։ Կյանքը, իր բոլոր հիասթափություններով հանդերձ, չէր կարող սասանել այդ հավատը։ Որդին նրա կրկնակն էր, նրա իսկական «ես»-ը, նրա մեջ եզած ամենալավը։ Որդին այդ ուղում էր, թե ոչ, սիրում էր նրան, թե ոչ, համապատասխանում էր ճշմարտությանը, թե ոչ, միևնույն է, այդպիսին էր նրա գաղտնի, անկոտրում,

բառերով չարտահայտված հավատի բանաձևը։ Իսկ հիմա այդ հավատն արտահայտվեց այն բանի ջախջախիչ ըմբռնման մեջ, որ եթե որդին մեռել է, այլևս ոչինչ չի մնացել։

Մնացյալը պատը ծածկած տերևախիտ բաղեղ էր։ Եվ հանկարծ ինչ-որ մեկը բաղեղը պրկեց հենարանից։ Ամեն ինչ փլվեց, ամեն ինչ հող ու մոխիր դարձավ։

Ինչպե՞ս։ Մի՞թե այլ հենարաններ չկան։ Ուրեմն, նա ինքնին ոչի՞նչ է։ Նա իր լավագույն ուժերը, ամենալուսավոր հույսերը ամփոփել էր այդ երկրորդ «ես»-ի մեջ։ Եվ առաջինի համար ոչինչ չէր մնացել։ Ջո՛ւր չէր նման նվիրատվությունը։ Գուցե։ Բայց ինչ կարող ես անել, եթե մայր ես ծնվում և եթե կյանքդ ամբողջովին, անքակտելիորեն հյուսված է զավակիդ հետ։ Էլ ուրիշ ով կօգնի քեզ կապելու կտրված թելերը։ Անգամ Սիլվիային լոկ մի քանի րոպեով էին թույլ տալիս թափանցել այդ կյանքի գաղտնիքների մեջ, բայց իր հանապազօրյա հացը Աննետան միայն Մարկի հետ էր կիսում։ Իսկ մնացած բոլորը ոչ վաղուցվա եկվորներ էին։ Ժորժի սերը միայն վերջին երեք-չորս տարիներին էր ջերմացնում Աննետային. նրա ամբողջ նախկին կյանքը աղջկա համար անտեսանելի աշխարհ էր։ Իսկ այդ աշխարհում Աննետայի համար արդեն ոչ մի կենդանի էակ չէր մնացել։ Այդ աշխարհը դարձել էր անապատ։

Թոռնիկը՝ վանյան, անշուշտ, ինչ-որ չափով վերածնում էր որդուն։ Բայց Աննետան այդ կյանքը նորից սկսելու ոչ արիություն ուներ, ոչ էլ ֆիզիկական ուժ։ Եվ երբ դիտես, թե քեզ ուր հասցրեց և ինչպես ընդհատվեց այդ ամբողջ, արդեն հաղթահարված վերելքը, որտե՞ղ նստես շունչ քաշելու այն վերատին, երկրորդ անգամ հաղթահարելու համար։

Մնում էր պատրանքային սփոփանքը «Իմ սիրասուն զավակը մեռել է, բայց նա մեռած չէ։ Նա միշտ ինձ հետ է...»։ Աննետան շարունակ այս միտքն էր կրկնում վշտով արբենալու առաջին ժամերին։ Բայց արբեցումը վաղ թե ուշ անցնում է։ Իսկ սուտը՝ մնում։ Իզուր ես ինքդ քեզ կրկնում. «Նա այստեղ է, նա ինձ հետ է»։ Դու հո գիտես, որ նա չկա։ Անմարմին պատրանքը թույլ դարման էր այնպիսի ուժեղ, այնպիսի երկրային անհատականության համար, ինչպիսին էր Աննետան։ Կարելի էր, իհարկե, սուղվել զգայախաբությունների աշխարհը։ Բայց Աննետան արդեն ոչ մի կերպ այդ չէր ցանկանում։ Նա անչափ առողջ և անչափ շիտակ մարդ էր։ Նրան սարսափեցնում էր այն

միտքը, որ կարելի է անձնատուր լինել խելացնորությանը, որը երբեք չի հեռանում մեր շեմքից և շողոմաձայն շշնջում է. «Արի ինձ մոտ, ես քեզ մխիթարություն եմ բերում»։ Աննեատան այլ բան էր լսում. «Ես սատ՛ում եմ։ Միասին կատենք»։ Ոչ մի դեպքում։ Այդպիսի ուղի բռնել, նշանակում է պղծել իր վիշտը, ննջեցյալ որդուն, Հանուն նրա նա պարտավոր է արդարամիտ լինել, Ինչպիսին նա ինքն էր։ Այսպիսով, նա երես առ երես կմնա նրա և իր անհունության հետ։

Միայն մի բան է թուլլատրվում նրան՝ մեռնել որդու հետ միասին։ Եվ նա մեռնում է...

Երբեմն ցերեկը կամ գիշերը վրա էր հասնում հոգու օրհասը, բայց ոչ ոք այդ չէր իմանում։ Նրա դուռը բոլորի համար փակ էր։ Նույնիսկ բարեկամները չէին համարձակվում միջամտել։ Նա մենակ պետք է մղեր իր մարտը։ Ահավոր մարտը։ Ավելի ուշ, երբ նա դուրս եկավ մարտադաշտից, հասկացավ, որ մարտերում թուլացել է իր ամենաևկենսունակ կիրքը, որը նրա հոգին դեռևս պահում էր «Հմայքի մեջ»։ Անտեսանելի ուժերը նրան ոչ միայն սկզբում զավակ տվեցին, իսկ հետո խլեցին նրանից։ Նա այն ափին էր թողել ինքն իրեն, մորը, կնոջը։ Կյանքը տակավին ձգվում էր նրա ետևից, ինչպես ստվերը մայրամուտի ժամին։ Կյանքը դեռ հետևում էր նրան։ Բայց նա արդեն լոկ ստվեր էր, պատրաստ, ուր որ է լուծվելու դաշտավայրի վրա իջնող մեծ Ստվերի մեջ։ Նրան ի՞նչ էր մնում անել։ Էլ ի՞նչ էր նա։ Նա էության ներքին աչքն էր այդ Ստվերի վիթխարի կոպերի տակ, էության, որը նրան ձգում էր դեպի իրեն։

Մի անգամ առավոտյան նա արթնացավ այնպիսի զգացումով, ասես գերեզմանից էր դուրս եկել։ Հոգին անմարմին էր, Նրան թվաց, թե կյանքն արդեն վերջացել է։ Ստվերը հազիվհազ էր կառչել նրա ոտնաթաթերից...

Այդ առավոտ նրան այցի եկավ հին բարեկամը, ծեր խոտլացին, որը վերադարձել էր տևական ճանապարհորդությունից։ Մարկի մահից հետո նրանք չէին տեսնվել։ Երբ Բրունոն ննջասենյակ մտավ, նա Աննեատային տեսավ բազմոցին նստած։ Աննեատան մի օր էլ չէր համաձայնվում մնալ անկողնում։ Չէր զգում մերձավորների ոչ հոգատարության, ոչ էլ խղճահարության կարիքը։ Նրանք չէին նկատում, որ նրա առողջությունը խախտվել էր։ Արտաքուստ նա առաջվա պես բավական մարմ-

նեղ էր, երեսը չէր կորցրել իր գույնը։ Բայց դա խաբուսիկ փայլ էր։ Աննեատայի երակներում եռում էր խրոնիկական հիվանդությունը դարձած չարորակ տենդի թույնը, ասենք, սիրտն էլ էր սկսել տեղի տալ։

Բրունոյին ապշեցրեց Աննեատայի մեջ կատարված փոփոխությունը։ Դա ուրիշ կին էր։ Աննեատան սիրալիր, քնքուշ հայացք ձգեց նրա վրա։ Բայց նրա հոգնած աչքերը իսկույն ևեթ մոռացան բարեկամի ներկայությունը։ Այն ամենը, ինչ Բրունոն պատրաստվում էր ասել, հանկարծ նրան թվաց անտեղի և անհեթեթ։ Նա չխոսեց այն մասին, ինչը հուզում էր նրանց երիուսին։ Ոչ մի խոսք մահվան մասին, ոչ մի խոսք մեռածի մասին։ Նրանց միջև լռության անսահման տարածություն գոյացավ։ Բրունոն ղգաց, որ ամբողջ երեսուն տարով փոխադրվում է ետ, դեպի լռության այն անծայրածիր թագավորությունը, որտեղ տրեխով ողոդված ճահիճներում, տենդից տառապելով, իր վիշտն էր կրում։ Լույսի շլացնող ու անդադարացնող ճառագայթների միջ նա կրկին էր վերապրում «մեծ խավարը». «Հոգում ոչինչ չկա, ոչ մի շրշյուն»... Հոդին, որի վրայից քաշել-պոկել են ամեն ինչ, «անսիրության փոխակերպված», առաջին անգամ հաղորդակից է դառնում Միակին... Դա քո առաջին օթևանն է դեպի ազատագրում և հանգիստ տանող զառիվեր ճանապարհին։ Մեր ուժերից վեր է ուխտադրուժությունից ետ պահել նրանց, ում սիրում ենք։ Կարևորն այն է, որ նրանք կարողանան մինչև վերջ գնալ։ Աննեատան կհասներ։ Բրունոն ուշադիր հայացքը չէր կտրում ընկերուհու դեմքից, որն այդքեն հեռու էր, տեսնում էր նրա աչքերի տակի այտուցվածությունը, այտերի կարմիր-ադյուսագույն գծերը, հետքը լճացած արյան, որը քնել էր, ինչպես աենդն է քնում արևի ուժգ փարթամորեն աճած շամբուտներում... «Զարթնի՛ր։ Բացվի՛ր, արցունքի աղբյուր։ Արյո՛ւն, նորից սկսիր քո վազքը»։ Եվ ննջասենյակի լռության մեջ Բրունոն կիսաձայն, ասես արթմնի անրջելով, սկսեց պատմել մի միստիկական կրույց՝ Նարադայի առակը.

«Մի անգամ Նարադան Կրիշնային ասաց. «Տե՛ր, ինձ ցույց տուր Մայային»։ Անցավ որոշ ժամանակ։ Կրիշնան Նարադային տարավ անապատ, և նրանք մի քանի օր գնացին միասին։ Եվ ասաց Կրիշնան. «Ես ծարավեցի, Նարադա, գնա ջուր բեր ինձ համար»։

Եվ Նարադան գնաց ջուր որոնելու։ Հասավ մի գյուղ։ Թակեց

առաջին տան դուռը։ Դուռը բաց արեց մի չքնաղ աղջիկ և նրան տեսնելով, Նարադան ամեն ինչ մոռացավ և միայն նրան էր նայում։ Սիրուց արբելով, նրան խնդրեց իր կինը դառնալ։ Եվ նրանք ամուսնացան։ Կինը Նարադայի համար երկու երեխա ծնեց, և ուրախության մեջ նրանք ապրեցին տասներկու տարի։ Երջանիկ էր Նարադան իր կնոջ, երեխաների հետ, հիանում էր իր նախիրներով ու արգավանդ արտերով։ Մի անգամ գիշերը գետը դուրս եկավ ափերից և ողողեց գյուղը։ Տները փլվեցին, հոսանքը քշեց տարավ մարդկանց ու անասուններին։ Նարադան սկսեց լողալ, ջանալով ձեռքից բաց չթողնել կնոջն ու երեխաներին։ Երեխաներից մեկը դուրս սահեց նրա ձեռքից։ Յանկանալով նրան փրկել, Նարադան բաց թողեց երկրորդին, իսկ կնոջը սրընթաց հեղեղը պոկեց ամուսնուց։ Եվ ալիքը նրան ափ շպրտեց, և մնալով մենակ, Նարադան դառնադի լաց եղավ։

Եվ հանկարծ թիկունքում մի կամաց ձայն լսեց.

«Որդյակ իմ, իսկ ուր է ջուրը։ Չէ որ դնացիր ինձ համար մի բաժակ ջուր բերելու, ես սպասում եմ քեզ։ Արդեն կես ժամ է անցել, ինչ դնացել ես ջուր բերելու»։

«Կես ժա՞մ»,— բացականչեց Նարադան։

Տասներկու տարի էր անցել։ Երջանկության ու վշտի տասներկու տարի... Երևացին ու անհետացան Մայայի աչքերը»։

Աննետան հուզված լսում էր Բրունոյին, և երբ նա հասավ վերջին բառերին, ցնցվեց.

— Մի բաժակ ջուր անգամ ես չբերեցի։

Բրունոն առարկեց.

— Դուք արդեն հասել եք աղբյուրին։ Այնտեղից վերցրեք։

Աննետան ձեռքերով ծածկեց դեմքն ու լաց եղավ։ Երբ ձեռքերը ետ քաշեց, Բրունոյի աչքերում արցունք տեսավ, բայց Բրունոն հանգիստ էր։ Աննետան բռնեց նրա ձեռքը.

— Իմ թանկագին բարեկամ, դուք նույնպես գիտեք այդ աղբյուրի տեղը։ Դուք ինձանից շուտ եք հասել նրան։

— Մենք բազմությունն ենք։

— Ի՞նչ լռություն է։

— Հապա, ավելի լավ ականջ դրեք։

— Ես ոչինչ չեմ լսում։

— Լարեք ձեր լսողությունը։

Այդ պահին դրսում, հեռու ինչ-որ տեղ հնչեց պիրենեյան այծապահի սրինգը։ Աննետան դողաց։ Բրունոն ասաց.

— Կրիշնայի սրինգը։

Նրանք լռեցին։ Աննետայի աչքերում լույս վառվեց։ Նա հարցրեց ինքն իրեն.

«Չլինի՞ քնել էի։ Մի՞թե բոլորը երազ էր»։

Անկողնում անքուն պառկած, ծանր անզգայությամբ, ինչպես սավանով, պարուրված կինը, որը ուժ չուներ շարժելու ոչ ձեռքը, ոչ ոտքը, դիշերը հանկարծ շտկվեց, մի կողմ նետեց վերմակն ու ասաց.

— Ոչ, հովվական սրինգներն ինձ հարկավոր չեն... Ով ինչո՞ւ է այդ մի բաժակ ջուրը ավելի մեծ իրականություն, քան անհունին կուլ գնացած իմ դժբախտ Մարկը։ Կամ իմ ցավն էլ սոսկ պատրանք է, ինչպես որ Միակը, և այդ դեպքում ամեն ինչ ոչինչ է։ Կամ այս ամենը՝ ճշմարտություն է, ամեն ինչ իրական, և՛ բարին, և՛ չարը, և՛ մահը, և՛ Միակը։ Ով ինչպե՞ս կարող եմ ընտրել երկուսից մեկը։ Միայն ցանկությունն ու ահը կլինեն դերակշռող նժարը։ Ես ոչինչ չգիտեմ։ Ուրեմն, թող արիություն ունենամ ոչինչ չիմանալու և դեմ-դիմաց հանդիպելու նրա հետ, որի մասին ասված է՝ ով էլ որ լինես, Ամեն ինչ կամ Ոչինչ, ես կհասնեմ իմ ճակատագրի վախճանին։ Որովհետև գոնե մի բան ինձ է պատկանում՝ իմ կամքը։ Անձնատուր չլինել։ Նայել առանց աչքերը կկոցելու։ Մեռնել շարժման մեջ...

Հերոսական «ի՞նչ գիտեմ ես»-ի նման դագաթը գրոհով գրավելու և այնտեղ գրոշակ կանգնեցնելու համար արիության, մի ջղաձիգ պոռթկումը, ճշմարտության պոռթկումը բավական չէ։ Թվում է, թե ահա այդքան հասել ես նպատակիդ, և հանկարծ գետինը փոս է ընկնում ոտքերիդ տակ, և դու նորից լեռան ստորոտում ես և մխրճ մեջ դեսուդեն ես ընկնում, ինչպես վեզուվի ստորոտում, իսկ այնտեղ մխիթարողներն արդեն դարան են մտել, սպասում են, թե երբ ուժասպառ կլինես, որպեսզի կառչեն քեզանից և սկսեն առաջարկել, ոչ, վզիդ փաթաթել իրենց օգնությունը... Կրիշնայի սրինգը... Նրա գեղգեղանքները հաճախ էին հնչում տանջահար Աննետայի ականջի տակ։ Ով հոգնաբեկ Աննետան հաճախ էր պատրաստ լինում ընդունելու այն և դրա հետ միասին անմարելի հույսը... Ասենք, ինչու հրաժարվեր։ «Ի՞նչ գիտեմ ես»-ի դատաստանի առաջ հավատը, հույսը պահպանում են իրենց բոլոր իրավունքները, ինչպես հակառակ երեսը հնարավորի, այն ամենի, ինչ հնարավոր է։ Բայց հնարավորն իրավունք չունի գերիշխելու իրականության

վրա։ Այն չի կարող գոյություն ունեցողը դարձնել գոյություն չունեցող...

«Ես կեամ[1]։ Ես կին եմ, որն իր մեջ որդի է հասունացրել, որը հույս ուներ իրեն շարունակելու նրա մեջ։ Որդիս մեռավ։ Ես նրանից շատ ապրեցի։ Եվ իմ միակ հույսն ու ապավենը, նրա միակ հույսն ու ապավենը այն է, որ ես նրան կշարունակեմ։ Ես նրան խոստացել եմ այդ։ Թեև մեկն ընկնի, մյուսը նրան կհասցնի նպատակին։ Ես իրավունք չունեմ պառկելու՝ տրված հուշերին, ցավին, հույսերին։ Ոտքի՛։ Այդ ես չեմ, այդ նա՛ է գալիս։ Ես իմ մարմինը տալիս եմ նրան։ Եվ իմ մարմնում նա, մեռած, ավելի հեռուն կգնա, քան ողջ կգնար»։

Այնուհետև Աննետան սկսեց ապրել որդու կյանքով։ Նա իր ձևով փոխադրեց այն երգը, որն այծապահի սրինգն էր սուլում։ Մի բաժակ ջուրն այժմ արդեն Մարկի համար էր, այդ նա էր իրեն հրամայել աղբյուրից ջուր բերել։ Գործել նրա փոխարեն։ Ահավասիկ ամենաիրականը բոլոր իրականություններից։ Իսկ մնացածը ցնորք է, երազ, ուր հոգին հարմարվում է հանգստանալու այնքան ժամանակ, քանի դեռ երեկվա դասին փոխարինելու չի եկել այսօրվա դասը։ Եվ որքան դժվարանում էր քայլելը, որքան հաճախ էր հարկ լինում շունչ քաշելու համար կանգ առնել, Աննետան այնքան ամուր էր երազանքով, ինչպես շալով, փաթաթում քրտինքից խոնավ իր ուսերը, նստելով ճամփեզրին։ Իսկ հետո նորից ոտքի էր կանգնում ու գնում առաջ, չդեղվելով ճանապարհից։

Նա դեռ շատ անապատներ պիտի կտրեր-անցներ։ Եվ ամենաանբերրիները առջևում էին, ու նա մոտենում էր դրանց այն չափով, որ չափով որ ոտքերը նրան հեռու էին տանում այն շեկ ավազներից, որոնց տակ բխում է արյան աղբյուրը։ Վշտի պահերին մարդկային օրգանիզմը ինքնապաշտպանության նպատակով կարողանում է հարբել իր վշտով, ինչպես ալկոհոլով։ Արբեցումը, սակայն, անցնում է, իսկ օրգանիզմն ավելի է թուլանում, ավելի ընկճվում։ Վրա են հասնում հուսալքության գորշ, մռայլ, հեղձուկ ամիսները։ Բայց այդ ամիսները, շաբաթները և նույնիսկ օրերը իրենց լուսաճառագներն ունեն, այլապես ուղղակի անհնար կլիներ ապրել։ Բնությունը մարդուն դահճի լավությո՞ւն է անում՝ ուղում է, որ հոգին շունչ քաշի,

1 Կամ (գրաբար)։

նախքան կրկին շնչահեղձ լինելը, համաձայն այն անկանոն ռիթմին, որը դանդաղորեն դառնում է հավասարաչափ։ Ալիքը պարբերաբար թուլանում է և բարձրանում։ Աննետան մերթ սուզվում էր խորքերը, մերթ դուրս գալիս մակերես։ Բայց այդ ծփանքը եռում էր ափից հեռու։ Այն օտար հայացքներ չի հանդուրժում, և օտար հայացքներն իրենք են շրջվում դրանից։ Ծովածավալ վիշտը մարդուն ամբողջովին համակող ուրախության ազգականն է. ոչ մեկը, ոչ էլ մյուսը թույլ չեն տալիս, որ իրենց կիսեն։ Մարդն ապրում է նրանց հետ առանձնացած և ինքն էլ մենության է փնտրում։

Աննետան ապրում էր մենակ։ Ասյան ապրում էր մենակ։ Յուրաքանչյուրն առանձին։ Յուրաքանչյուրն առանձնացել էր իր հանգուցյալի հետ։ Հանգուցյալը երկու կերպարանք ուներ այդ կանանց՝ իր կացարանի երկու տիրուհիների համար, ովքեր սիրել ու տիրել էին իրեն, նրա համար, ով իր արգանդում հասունացրել էր իրեն, և նրա համար, ում արգանդը հասունացրել էր իր երեխային։

Աննետան օրերով տնից դուրս չէր գալիս, ապրում էր իր որդու մասին նյութական հիշողությունների՝ նրա հագուստի, թղթերի, որ կարգի էր բերում, շրջապատման մեջ, վեր ապրում որդու՝ միայն մասամբ իրեն հայտնի կյանքը, քանզի որդին որքան էլ որ մոտ էր մորն ու կնոջը, այնուամենայնիվ, իր հոգևոր որոնումների մեծ մասը իր մեջ էր պահում։ Տղամարդու հպարտություն։ Բայց կնոջ հպարտությունը չի դիջի տղամարդու հպարտությանը։ Յուրաքանչյուրին՝ իրենը։ Ոչ ոք պարտավոր չէ ուրիշների հետ կիսելու իր ծառի տված պտուղները։ Իսկ թե ինչ գաղտնի ուղիներով են շարժվում հյութերը, այդ արդեն իմ գործն է։

Աննետան կարդաց որդու բոլոր նամակներն ու սևագրությունները, օրագրի անջատ-անջատ թերթերը, ուր որդին երբեմն, երբ ազատ ժամանակ էր լինում, գրի էր առնում օրվա, պահի թողած տպավորությունները։ Նրա ապրումները, սրտի պարտքերը, մտքերը գարձան Աննետայի սեփականությունը։ Եվ որդուն է՛լ ավելի մոտենալու համար նա որոշեց հանդիպել բոլոր նրանց հետ, ում հետ որդին բարեկամություն էր արել։ Նրանցից շատերը մեռել էին կամ անհետացել...

Մի անգամ իրիկնադեմին, ծնևի լճափին գտնվող տանս դռնակից ներս մտավ մի տարեց կին։ Կարճատես աչքերը հեզա-

համբույր էին, այտերը փոս էին ընկել, ինչպես դա Վինչիի տիրամոր այտերը, իսկ շրթունքների անկյունները՝ փոքր-ինչ վեր բարձրացել ժպիտից, այն նույն ժպիտից, որի մեջ քնքշությունն ու տխրությունը միախառնվելով հաջց են տալիս. «Ինչի՞ համար»։ Առաջին իսկ հայացքից ճանաչեցի նրան և հիշեցի, թե ինչպես էր որդու ուսին հենված, քարերի վրայով անցնում առվակը։ Մոտեցավ այնպիսի հպարտ անբռնազբոսիկությամբ, որով հռոմեացի մատրոնաները տարբերվել են մյուսներից և որը հատուկ էր Աննեատային։ Բայց ես (մեր փոխանակած առաջին իսկ խոսքերից հետո) նրա մեջ տեսա մի հուզիչ ամոթխածություն, որը բառեր էր փնտրում ներողություն խնդրելու։ Նա ասաց.

— Ես իրավունք չունեմ ձեզ անհանգստացնելու։ Ներեցեք ինձ։ Բայց դիմանալու ուժ չունեի։ Ես մայրն եմ նրանցից մեկի, որին դուք օգնել եք։

— Դեռևս հինգ րոպե առաջ ես չգիտեի, որ դուք կգաք,— պատասխանեցի ես։— Բայց հիմա, երբ դուք եկել եք, ինձ թվում է, թե սպասում էի ձեզ։

Նրա դեմքը հանգիստ էր. նա թույլ չտվեց, որ հուզմունքը դուրս գար մակերես, միայն կարճատես աչքերի բիբերը լայնացան։

— Բայց դուք չգիտեք, թե ես ով եմ,— առարկեց նա։

— Գիտեմ, պատասխանեցի ես։— Դուք Մարկ Ռիվիերն եք։

Արյունը հանկարծ հորդեց դեպի նրա դեմքը, որը դեղնել էր միայնակ վշտի օրերի ընթացքում, այտերին երկու բոսորագույն բծեր դուրս տվեցին, և ես հասկացա այդ արյան ամբողջ խելահեղ կրքոտությունը։

— Ինչպե՞ս, դուք ինչպես կարող էիք...,— ասաց նա։— Ինչպես կարող էիք ճանաչել։ Չէ որ ես նման չեմ նրան։

— Նա ապրում է ձեր մեջ։ Թող որ կացարանն արտաքնապես նրան չի հիշեցնում։ Բայց նա այնտեղ է։ Նա ինձ է նայում պատուհանից։

Եվ ես ճշմարտությունն ասացի։ Ես նրան տեսնում էի Աննեատայի աչքերի պատուհանների ետևում կանգնած... Չգիտակցված միմետիզմի[1] օրենքը մարդուց անհայտ ձևավորվում է նրա

---

[1] *Տվյալ վայրի տարբեր թռչունների, կենդանիների գունավորման նմանությունը, որը նրանց օգնում է կոլեկտիվ կերպով պաշտպանվել թշնամիներից։ Օրինակ, կկվի և ճուռակի փետուրների գույնի նմանությունը։*

դեմքը սիրեցյալի պատկերով և նմանությամբ, նրա, որով մեղ համակել է։

Աննեատան ասաց.

— Ի՞նչ երջանկություն է, որ դուք այդպես ասացիք։ Կնշանակի, նա այստե՞ղ է։ (Նա ձեռքերը սեղմեց կրծքին)։ Կնշանակի, ինձ հաջողվե՞լ է փրկել նրան։

Եվ մենք լռեցինք։ Աննեատան չափազանց հուզված էր։ Ջցանկանալով նրան շփոթեցնել, ես հայացքս հեռացրի։ Նրա ձեռքն անվճռականորեն մի ակնթարթ կախված մնաց օդում, այնուհետև դուռավ իմ ձեռքը։

— Շնորհակալություն,— ասաց Աննեատան։

— Ես ձեզ արդեն տեսել եմ,— ասացի ես։

— Իսկ որտե՞ղ,— հարցրեց նա։

Ես պատմեցի մեր հանդիպման մասին։

— Կնշանակի, ձեր աչքերը եղել են իմ երջանկության վկաները,— ասաց Աննեատան։— Պահպանեցեք այն ինձ համար։ Երբ ինձ համակի անձկությունը, կիմանամ, որ երջանկությունս ձեր պահպանության տակ է, և դուցե դուք թույլ տաք նորից ձեզ մոտ գալ համոզվելու, որ այն դեռ ապրում է։

Այնուհետև նա ավելացրեց.

— Ես էլ եմ ձեզ տեսել։ Ո՛չ, ոչ, այն ժամանակ։ Ո՛չ ձեր դեմքը։ Այլ որդուս նկատմամբ ձեր դրսևորած բարությունը։ Եվ ձեր ցոլքը որդուս մոքերում։

— Բայց ես այնքան քիչ բան եմ արել։

— Երբ նա թափառում էր կորածի նման, այդ «քիչ բանը» ուղեցույց մատ էր։

— Այժմ թույլ տվեք ձեզ մի հարց տալ. դուք ինչպես եք իմացել այդ։

— Նա ինքն է գրել։ Ուշո՞ւմ եք կարդալ։ Ես արտագրել եմ հատկապես ձեզ համար։ Բերել եմ նաև նրան գրած ձեր նամակները։ Ներեցեք ինձ։ Բայց ես կարշացել եմ դրանք։

— Նրանք ձերն են։ Եվ եթե, ինչպես դուք եք ասում, ես նրան ուղի եմ ցույց տվել, մի բարկացեք ինձ վրա, որ այդ ուղին նրան հասցրեց անդունդ։

— Դուք չէիք կարող այդ կանխատեսել։

— Այո, ես չէի կանխատեսել այն ուղին, որը նրան դարա-

նակալել էր Առնոյի ափերին։ Բայց, միևնույն է, նրա ճանապարհն անցնում էր անդունդի միջով։

— Եվ, իմանալով այդ, դուք նրան ասացիք. «Գնա»։

— Ասացի։ Այլ կերպ չէի կարող։

Աննետան հայացքը ցած գցեց, ապա գլուխը վեր բարձրացրեց.

— Ես նույնպես, ես նույնպես այդպես կասեի։ Այդպիսին էր նրա ուղին։ Երբ նրանով հղիացա, երբ նրան լույս աշխարհ բերեցի, երբ տեսնում էի ինչպես է մեծանում, չափահաս մարդ դառնում, արդեն այն ժամանակ գիտեի, որ նրա ճանապարհը վտանգներով հղի է լինելու։ Ասենք, մեր օրերում՝ ուրիշ ճանապարհ չի էլ կարող լինել, միայն թե ոչ սրիկաների ու վախկոտների համար։ Քանի՞-քանի՞ անգամ գիշերները վաղօրոք ողբացել եմ նրա մահը։ Բայց ես հույս ունեի, թե նրա մահը կհապաղի գալ, կպասի գոնե իմ մահվանը։ Ինձ համար տանջալի է այն միտքը, որ մահը նրան չթողեց ապրել։ Տարավ հենց այն ժամանակ, երբ նա նոր-նոր էր թևակոխել իր հասուն շրջանը, երբ նրա մեջ նոր-նոր էր լույս վառվել, և նա չհասցրեց այն սփռել իր շուրջը։

— Նա թափեց իր արյունը։ Եվ այդ մաքուր արյունը նույն լույսն է։

— Նա, ով սիրում էր նրան, նրա երիտասարդ կինը այդ արյամբ թրջեց իր աչքերը։ Իսկ ես՝ մայրը, թրջեցի շրթունքներս։

Եվ ես տեսա երկու կանանց՝ ընկած իրենց սիրելիի դիակի վրա, և մեռածի արյունը մեկի շրթունքներին, մյուսի երիտասարդ, ոսկեգույն աչքերի շուրջը...

— Թույլ տվեք,— ասացի ես,— շրթունքներս հպել ձեր ձեռքերին։ Այդ ձեռքերը դիպել են նրան։

Ես համբուրեցի նրա ափը։ Նա ոտքի ելավ։ Ես հարցրեցի.

— Դուք արդեն գնո՞ւմ եք։ Հիմա՞։

— Այսօր այլևս չեմ կարող։ Մենք նրա մեջ արդեն հազորդակից դարձանք միմյանց։

Արևի ճառագայթներից ծիրանեգույն դարձած դռան շեմին ես հարցրեցի.

— Ես ձեզ էլի կտեսնե՞մ։

— Այո, մենք էլի կտեսնվենք։

Նա գնաց։

Նա գրում էր ինձ։ Տարին երկու-երեք կարճ նամակ, ավելի ճիշտ՝ մի քանի տող և անպայման տարեդարձի նախօրեին։ Ինձ մոտ այլևս չէր գալիս։ Ասենք, ես էլ էի հաղվադեպ հանդիպում նրա հետ։ Մենք խոսքերի կարիք չէինք զգում, մենք, ինչպես նա ասաց, միմյանց հաղորդակից էինք դարձել նրա որդու մեջ։

Նա տոգորվեց Մարկի կյանքով, նրա մահով։ Նա սովորեց հասկանալ որդու առաքելությունն ավելի լավ, քան ինքը որդին էր հասկացել։ Մարկն ընկել էր մինչև մարտն սկսվելը, ընկել էր որպես մի ամբողջ բանակի բանաստեղծ։ Զգիմադրելու սպրտակ որոշակը, որ ներկվել էր նրա արյունով, դարձավ միլիոնավոր զոհերի ալ դրոշը։

Աննեսան չէր տատանվում։ Նա բարձրացրեց դրոշը։ Չէր կարելի մարտից դուրս մնալ։ Աովեսան ու հավատը, մաքուր միտքն ու բնությունը, այդ բոլորը կարծես վիթխարի ծառի հովանիներ են, աղբյուրներ, որոնց մոտ հոգնած հոգին գալիս է հանգստանալու և ծարավը հագեցնելու։ Բայց ոչ մեկին իրավունք չի տրված անջրպետավելու այդ հովանիով։ Կյանքն այնտեղ է, ուր մարդկային վիշտն է, մարդկային մարտերը, արևի լույսի տակ է այն և փոթորկի մեջ։

Ասյան նույնպես միայնակ էր կրում իր վշտի ծանր բեռը։ Եվ ոչինչ չէր կարող թեթևացնել այն։ Տխրությունը ոչ թե մոտեցնում, այլ միմյանցից կտրում է մարդկանց։

Եվ չկա մեկը, չկա մեկը, որին հանգուցյալից մասին ասես. «Նա ի՛մն է։ Իմը։ Այնպես, ինչպես որ իմ վիշտը... Դա այն բոլորն է, ինչ մնացել է ինձ»։ Մարդը գանձ պահպանող վիշապի պես կառչում է իր վշտից, արյունլվա լինելու աստիճան հուշերով քրքրում իրեն։ Եվ նա ուրիշին ոչինչ չի ցիջի։

Բայց Ասյան սկզբում չէր կարողանում մենակ մնալ այն բնակարանում, ուր ինքն ու Մարկն էին ապրել։ Սարսափը պատում էր նրան։ Ամեն րոպե նա հայտնաբերում էր, որ Մարկը գոյություն չունի։ Ամեն մի շարժում նրան հասցնում էր անդունդի եզրը, և նրան թվում էր, թե ուր որ է կգայթի ու կընկնի անդունդը։ Շունչը կտրվում էր։ Կամ գահավիժել անդունդ, կամ փախչել։ Ասյան սենյակ վարձեց հյուրանոցում։ Նա կտրականապես, առանց որևէ բացատրությունների, հրաժարվեց փոխադրվել Աննեսայի մոտ, որը կանչում էր նրան։ Եվ Աննեսան չպնդեց։ Նա հասկացավ։ Նույնիսկ երկրորդ անգամ չհարցրեց

Ասյայի նոր հասցեն, որովհետև առաջին հարցին Ասյան պատասխանել էր լռությամբ։ Նրանց երկուսին էլ ժամանակ էր հարկավոր, որպեսզի բթանար ցավի սկզբնական սրությունը։ Առաջին շաբաթներին Ասյան էլ Աննետայի նման կենդանի դիակ էր։

Բայց նա շատ էր երիտասարդ հավիտյան այդպես ապրելու համար։ Մի անգամ դիշերը նա վազեց եկավ Աննետայի մոտ, հևիհև, խիստ նիհարած, ատամները դողից կափկափում էին։ Գլուխը կորցրած սեղմվեց սկեսուրին, կարծես ծանր մտքերից նրա կրծքին ապաստան էր որոնում։ Աննետան հյուրի համար ծալովի մահճակալ դրեց իր մահճակալի կողքին։ Բայց պարզվեց, որ դա էլ քիչ էր։ Դիշերը Ասյայի մատները չդադարեն սեղմում էին Աննետայի ձեռքը։ Կանայք չէին խոսում։ Նրանք միմյանց ձեռք էին բռնել ու, երկուսն էլ ասես նույն թոկով կապված, թափառում էին անդունդի եզրին։

Առավոտյան Ասյան վերադարձավ հյուրանոցի իր սենյակը։ Բայց դիշերը վրա հասնելուն պես նա համաձա էր վազում Աննետայի մոտ։ Հետո որոշեց վերադառնալ իր նախկին բնակարանը, մեռած Մարկի բնակարանը։ Բայց երեկոները գնում էր Աննետայի մոտ ճաշելու, և եթե անչափ հուզված էր լինում, մնում էր գիշերելու, տեղավորվելով բազմոցին։ Վերջապես, նա փոխադրվեց իր բնակարանը։ Որոշվեց, որ փոքրիկը ժամանակավորապես կմնա տատիկի մոտ, որտեղ Ասյան ամեն օր տեսնում էր նրան։ Սակայն ժամանակավոր ապրուստը դարձավ մշտական, թեև այդ մասին ոչ մի խոսք չէր ասվել։ Պատճառները, այն էլ ամենահիմնավոր, շատ էին՝ Վանյայի ներկայությունը թեթևացնում էր Աննետայի վիշտը, և երեխան ամենայն հավանականությամբ, տատիկի մոտ ավելի լավ էր ղգում իրեն, քան մոր։ Ասյան սիրով մեղադրում էր իրեն մանկավարժական ունակություններ չունենալու մեջ, իսկ Աննետան, որը սկզբում ուզում էր Ասյային, նրա իսկ բարօրության համար, աննկատելիորեն կապել երեխայի հետ, այլևս չէր պնդում. նրա եսասիրությունը հարմար առիթ էր որոնում, որպեսզի Վանյային իր մոտ պահի։

Իսկ ինչպես էին անցնում Ասյայի օրերը։ Նա անչափ գործունյա խառնվածք ուներ հուշերն անվերջ, մեկ առ մեկ վերարտադրելու համար։ Նա սկսեց կարգի բերել իր բոլոր անգին մասունքները, Մարկի բոլոր թղթերը, բայց շուտով կորցրեց հետաքրքրությունն այդ գործի նկատմամբ և ամեն ինչ թողեց կես

ճանապարհին՝ կարգուկանոն և թափթփվածություն, ավելի ճիշտ՝ թափթփվածություններից ամենաահավորը. նրա բնակարանում անհնար էր որևէ բան գտնել։ Ասենք, նա վուր էր չանում, երեկվա օրվա կշռելիությունը լուծվել էր անցյալի մեջ, իսկ նա՝ Ասյան, շարունակում էր գնալ առաջ։ Անցյալից նա կարող էր իր հետ տանել լոկ այն, ինչը չէր ընդհմանում առաջ շարժվելուն։

Եվ ամենից առաջ նման ուղեբեռ դարձան առելությունը մարդասպանների նկատմամբ, վրեժի ծարավը, նրանցից վրեժ լուծելու ծարավը, ովքեր առևանգել էին նրա Մարկին։ Բայց որտե՞ղ և ինչպես նրանց դարանակալել։

Նույնիսկ նրանք, ովքեր «լավատեղյակ» էին համարում, գուցե տեղյակ էլ էին, ապա բնավ ծարավի չէին «ասեվածների գաղտնիքներին» հաղորդակից դարձածների փառքին։ Ժան-Կաղիմիրը, որին այնքան էլ հեշտ չէր պատին սեղմել, հիմա հավատացնում էր, թե ինքը ամենևին էլ ոչ մի աղնտ չէր կանխատեսել։ Նա նույնիսկ փորձում էր նվազեցնել իր սեփական նախազգուշական խոսքերի իմաստը, որ ասել էր Ռիվիերների մեկնման նախօրյակին. դրանք, հավատացնում էր նա, ուղղակի, այսպես ասած, «ընդհանրապես զգույշ» լինելու խորհուրդներ էին, թեև արված «ընդհանրապես փորձից»։ Բայց երբ Ասյան, ցասումով ոռնգներն ուռեցնելով, նրա իսկ ամրոցում նրան նեղը գցելով, ցանկացավ իմանալ, թե այդ ինչ «ընդհանրապես փորձ» է, Ժան-Կաղիմիրը խուսափեց ուղղակի պատասխանից և սկսեց մշուշապատ խոսել այն անխուսափելի վտանգների մասին, որոնք սպասում են նրանց, ովքեր սպառնում են այս աշխարհի հզորների շահերին։

— Դուք նրանց գիտեք ինձանից ոչ վատ։

Եվ տեղնուտեղն էլ ավելացրեց.

— Բայց նրանք ոչ մի կապ չունեն այն ցավալի դեպքի հետ, որի զոհը դարձավ Մարկը։

Կան դարաշրջաններ, երբ «դժբախտ դեպքերը» համաճարակ են դառնում։ Հենց այդպիսի մի դեպք սպանեց Թիմոնին... Եվ մյուս «սխալմամբ» կամ «հանդամանքների բերումով» սպանվածներին։ Զարա՞ն նրան դուրս կբերի հանցագործության հետքի վրա, ինչ է։ Նա ցավակցություն էր հայտնել, բայց այնպես, ասես խոսքը սովորական երկաթուղային աղետի մասին էր... Շատ տարիներ անց Ամերիկայում Ասյան հանդիպեց Զարայի հետ, և նրա ճնշման տակ Զարան խուսափողական պատասխան

տվեց, որից սակայն, կարելի է եզրակացնել, թե հարվածը հատցրվել էր ավելի հեռավոր, ավելի բարձր ոլորտներից, քան «տերն» է։

— Այդ դեպքում որտեղի՞ց եվ ձեր Իտալիայում ո՞վ է ավելի շատ տեր, քան ինքը՝ տերը։

Ջարան ուսերն էր թոթվել.

— Նա նույնիսկ իր ոստիկանության տերը չէ։

Բայց առայժմ ոչինչ հայտնի չէր։ Լռում էին բոլորը՝ թե՛ նբրանք, ովքեր գիտեին, բայց մասնակից չէին, թե՛ նրանք, ովքեր ձևացնում էին, թե գիտեն, գուցե ոչինչ չիմանալով... Ասյան կատաղությունից ատամներն էր սեղմում։ Ասենք, նրան էլ ի՞նչ էր հարկավոր իմանալ։ Նա միայն գիտեր, որ Isfecit gui prodest[1]*, եթե չգիտեր, թե ով է թշնամին, գիտեր թե որտեղ է նա։ Եվ գիտեր, թե որտեղից զենք ճարի այդ թշնամուն ոչնչացնելու համար։ Նա շտապում էր նորից միանալ իր ճամբարին՝ հեղափոխության ճամբարին։ Պրոլետարների մեծ դաշինքի ճամբարին։*

Եվ Ասյան համոզում էր իրեն, որ միանալով այդ ճամբարին, կհետևի Մարկի կամքին, կկատարի նրա կտակը, այն, ինչ չհաջողրեց անել նա, կանի ինքը։ Այսպիսով, ննջեցյալի հոգու վրեժը, ինչպես հնում էին հավատում, ոչ միայն կլուծվի, այլև հոգին կսնվի գործողության հաշվին, որովհետև գործողությունը հենց կյանքն է, այն կյանքը, որը խլեցին Մարկից։ Հեղումը Ասյան կկատարի արյամբ, իր արյամբ, իր սեփական արյամբ, որը ծարավի է հեղվելու, և բացի դրանից, եթե կարողանա (իսկ նա կարող է), թշնամու արյամբ։

Բայց վրեժն ու գործելու տենչը չէին կարող լցնել Ասյայի խռովահույզ հոգին, որն իր առանցքից դուրս էր ընկել և պետք է իր համար նոր առանցք ստեղծեր, որպեսզի սկսեր գործել։ Գիշեր ցերեկ նրա ձեռքն ակամա կյանքի ուղեկցի ձեռքեր էր փընտրում, և նույնիսկ գտնում էր ուղեկցի ատվերը, շնչառությունը, մարմինը, որ տաք էր լինում գիշերը։ Եվ, այնուամենայնիվ, դա Մարկը չէր, դողացող ձեռքերը սոսկ դատարկություն էին գըրկում։ Ասյան հոգնություն չգիտեր։ Եվ, զգալով, թե ինչպես է հորդում կյանքի օրեցօր վարարող անողոք հեղեղը, ինչպես է այն ողողում ամբարտակը, Ասյան, խելակորույս ու զայրացած, բռունցքները սեղմում էր կրծքին, և քաղցը, Մարկի, ուղեկցի

[1] *Արել է նա, ում ձեռնտու էր (լատ.)։*

քաղցը կրծում էր նրան։ Բայց օրըստօրե ավելի ու ավելի նվազ կատաղությամբ էին սեղմվում բռունցքները, ավելի ու ավելի նվազ կատաղի էր դառնում ղայրույքը։ Պետք է որ գար ուղեկիցը։ Հարկավոր է ապրե՛լ։ Ասյան կրկնում էր.

«Ապրել Մարկի համար»։

Նա այդ խոսքերն ասաց հայելու առջև կանգնած և այդ խոսքերն ասելիս ամբողջ մարմնով ցնցվեց ու թքեց իր պատկերին։

Իսկ գիշերը ամեն ինչ սկսվեց նորից։

«Ապրել կամ մեռնել... Եթե մեռնեմ անխմաստ կերպով, այդ դեպքում, փոքրիկս, քո ինչին է պետք իմ մահը։ Դու ուղո՞ւմ ես, որ ես քեզ համար ապրեմ։ Օգնիր ինձ։ Իսկ եթե չես կարող ինձ օգնել, ստիպված կլինեմ ինքս ինձ օգնել։ Մենակ ես չեմ կարող։ Ինձ ուղեկից գտիր»։

Եվ Մարկը գտավ։ Եթե սա հարմար չլիներ, ուրիշը կգտնվեր։ Իսկ եթե չգտնվեր, Ասյան այնպիսի կին չէր, որ ուզղություն տվող նոր առանցք չստեղծեր իր համար։

Բայց Ասյան դրան հանգեց տևական ու բուռն պայքարից հետո։

Ասյան երբեք չի խաբվում, նույնիսկ այն ժամանակ, երբ ապրելու համար անհրաժեշտ պատրանքներ է ստեղծում։ Բայց երբ զգում ես պատրանքների կարիքը, որպեսզի վերահաստատվես գործելու իրական հողի վրա, նշանակում է պատրանքը ևս դառնում է իրականության մասնիկ և ունի գոյության իրավունք... Իրավունք, ուժ։ Ասյան պետք է նվաճի իր իրավունքը։

Եվ Ասյան նվաճում էր սարսափի ու տառապանքների գնով... Մի քանի շաբաթ նա չքվեց հորիզոնից։ Աննետայի մոտ չէր գալիս։ Հետո հայտնվեց Սիլվիան և հոնքերը բարկացած կիտելով ասաց, որ Աննետայի հարսին հաճախ են տեսել երեկույթներում, երկրպագուների շրջապատում, և համառ լուրեր են պտրտվում ոմն ամերիկացու հետ նրա սիրախաղի մասին։ Աննետան լսեց նորությունը և ոչնչով չմատնեց իր զգացմունքները, նա չէր հրաժարվել Ասյայի հանդեպ տածած իր սիրուց։

Սակայն, երբ բազմաշաբաթյա բացակայությունից հետո Ասյան նորից հայտնվեց, Աննետան փորձեց թաքցնել իրեն համակած խռովքը։ Չկարողացավ, սակայն, դա ճարպկորեն անել։ Ասենք, Ասյան էլ իրեն այնքան լավ չէր պահում։ Կանայք հասկանում էին, որ ինչ-որ կարևոր բան պետք է ասեն միմյանց։ Բայց թե՛ մեկը, և թե մյուսը չէին համարձակվում առաջինը

խոսել։ Ասյան հիմա գրեթե ամեն օր գալիս էր Աննետայի մոտ։ Բայց քիչ էր մնում։ Սենյակ մտնելուն պես սկսում էր նայել պատուհաններին ու դռանը, կարծես պատրաստվում էր աննկատելիորեն ծլկել։ Նա մերթ չտեսնված գորովալից էր լինում, զգվում և անվերջ համբուրում էր Աննետային։ Մերթ էլ հայտնվում էր գրգռված և Աննետայի հարցերին պատասխանում էր կոպտորեն։ Կամ, մտնելով Աննետայի ննջասենյակը, նույնիսկ չէր նստում, այլ կանգնած, մատներով նյարդայնորեն թմբկահարում էր աթոռի թիկնակին ու սևեռուն նայում սկեսուրին, որն աչքերը չէր կտրում կարից։ Թվում էր, թե նա ուզում է ինչ-որ բան ասել և չէր ասում, խոսում էր դատարկ բաներից, կամ էլ նստում ճաշասենյակում ու կես ժամ մնում անշարժ նստած, այնուհետև վեր ցատկում տեղից և հեռանում, ատամների արանքից սառնորեն նետելով. «Մնաք բարով»։

Մի անգամ Ասյան կանգնել էր Աննետայի կողքին սովորականից ավելի լուռ և ձևանում էր, թե զննում է բանվածքը, որի վրա խոնարհվել էր Աննետան (աչքերը թեթևակի շլելով, Աննետան իր դեմքի մոտ տեսավ Ասյայի դողացող ձեռքերը)։ Աննետան կտրվեց գործից և նայեց ուղիղ Ասյայի երեսին։ Ասյան հայացքը փախցրեց, և նրա ծնոտը դողաց։

— Ինչո՞ւ եք ինձ նայում,— դրգռված հարցրեց նա։

— Իսկ մի՞թե դա արգելված է։

Ասյան համառորեն շարունակեց.

— Ինչո՞ւ դուք բոլորդ այնպիսի տեսք ունեք, կարծես թե հանդիմանում եք ինձ։

— Ե՞ս, թանկագինս։

— Դուք ուզում եք ինձ կապկպել։ Մի՞թե ես ազատ չեմ կյանքս տնօրինելու մեջ։

Աննետան բանվածքը դրեց գոգը, բռնեց Ասյայի ձեռքը, նրբան մոտեցրեց իրեն, գրկեց իրանը և այտը սեղմելով նրա կողքին, վարից վեր նայեց նրա շրթունքներին, որոնք ծամոտվել էին ոչ այն է ցավից, ոչ այն է ցավ պատճառելու ցանկությունից։ Աննետան քնքշորեն շշնջաց.

— Իմ խեղճ աղջիկ։

Ասյան ծնկի իջավ ու դեմքը թաղեց Աննետայի շրջազգեստի ծալքերի մեջ։

— Դե, իհարկե, դու միանգամայն ազատ ես,— շարունակեց Աննետան, շոյելով Ասյայի մազերը։— Դու հո գիտես, որ եթե

մեկնումիկը համարձակվի ոտնձգություն կատարել քո ազատության դեմ, ես այստեղ եմ, պահպանում եմ քո ազատությունը։

Ասյան կորուկ շարժումով գլուխը վեր բարձրացրեց։ Նրա աչքերը վառվում էին։ Նա արագ բռնեց Աննետայի ձեռքերը.

— Դուք ինձ կպաշտպանեի՞ք, դուք։

— Իսկ միթե ես միշտ չեմ պաշտպանել քեզ։

Ասյան սկսեց համբուրել սկեսուրի ձեռքերը և նորից դեմքը թաքցրեց նրա ծնկների արանքում։

Աննետան մի պահ լռելուց հետո ասաց.

— Դե, իսկ հիմա պատմիր...

— Չեմ համարձակվում...

— Պետք է համարձակվել, հարազատս։ Համարձակվել ես անել, ուրեմն համարձակվիր և պատմել։ Եվ բացի այդ ես գիտեմ։

Ասյան երկչոտությամբ աչքերը հառեց Աննետային.

— Գիտե՞ք։ Դուք ի՞նչ գիտեք։

Աննետան նրա դեմքն առավ իր ափերի մեջ.

— Մի՞թե այս դեմքը կարող է բան թաքցնել ինձանից։

— Ահ, դուք որքան պիտի արհամարհեք ինձ։

— Դե ոչ, փոքրիկս։ Ես խղճում եմ քեզ և նախանձում, որ կյանքը կրկին համակել է քեզ։ Իսկ ես գիտեմ, թե դա ինչ է, չէ որ ինձ էլ է նա հաճախ համակել։ Բայց հիմա, փառք աստծո, ինձ համար ամեն ինչ վերջացած է։ Եվ փառք աստծո, որ քեզ համար այդպես չէ։ Իմ անգին երիտասարդություն, քո աչքերում (շուտ մի արի, խնդրում եմ) դեռ այնքան ուրախություն, այնքան վիշտ եմ տեսնում։ Ուրեմն, վերցրու դրանք։ Դու այդ իրավունքն ունես։

Եվ նա համբուրեց Ասյայի կոպերը։

Ասյան լաց եղավ.

— Ա՜հ, ինչ սարսափելի է այս ամենը... Ես այդ չէի ուզում...

Աննետան քնքշորեն Ասյային բարձրացրեց հատակից, նըստեցրեց իր ծնկներին, թաշկինակով սրբեց նրա աչքերը, նույնիսկ, փոքր երեխայի նման, սրբեց քիթը։ Ասյան փաթաթվել էր Աննետայի վզին, և շուրթերը հպելով անրակի մոտի փոսիկին, կրկին խոնավացած աչքերով լուռ մի կողմ էր նայում։ Աննետան հպվելով նրա ականջին, հազիվ լսելի շշնջաց.

— Դե, ասա, դու ո՞ւմ ես սիրում։

Եվ Ասյան ցածր, խեղդված ձայնով, կամաց-կամաց աշխուժանալով, սկսեց պատմել։

Աննետան առանձին ուշադրությամբ լսեց այն բոլորը, ինչ վերաբերում էր այն մարդուն, որին Ասյան խոսք էր տվել։

Նա ամերիկացի մի երիտասարդ ինժեներ էր, որ մի քանի տարի աշխատել էր Սովետական Միությունում։ Գործով էր գնացել այնտեղ, սակայն հափշտակվել էր աշխատանքի հերոսիկայով։ Հովարդ Դրեյքը Ռուսաստան էր ժամանել ամերիկյան տեխնոկրատի ամբարտավանությամբ տոգորված, որի համար մարդիկ, նյութական ամբողջ աշխարհի նման, սոսկ գործիք են տեխնիկայի վարպետների ճարտար ձեռքերում։ Իբրև աղնիվ մարդ, Հովարդը խոստովանել էր, որ եթե ինքն այնտեղ սովորեցնում էր մարդուն ծառայեցնել մեքենային, ապա դրա փոխարեն իրեն սովորեցրին մեքենան ծառայեցնել մարդկանց։ Ամերիկյան անհատապաշտությունը այդ հին ճշմարտությունը միշտ էլ համարել է իր գյուտը, բայց հետզհետե մոռացել է այն։ Իսկ չէ որ երբեք ուշ չէր այն կրկին յուրացնելու, և ամերիկացին յուրացրել էր, դպրոց անցնելով իր աշակերտների մոտ այն երկրում, ուր հին աշխարհը պատանի էր դարձել։ Այդ ռուս մատերիալիստներին, այդ անաստվածներին, որոնց դեմ խաչակրաց արշավանքի էլան Եվրոպայի ու Ամերիկայի իդեալիստները, ինչքան անըմբռնելի բավականությամբ Դրեյքը ներկայացնում էր որպես ամենաանխառն իդեալիստների, անգիտակից իդեալիստների, ի հակադրություն արևմտյան կեղծ բարեպաշտների ու բարեմիտ քաղքենիների թաքնված, սալոնային մատերիալիզմի։

Աննետան Ասյային խնդրեց իրեն ծանոթացնել Հովարդի հետ և տեսավ պարզամտորեն ծիծաղկոտ հայացքով մի շիկահեր մարդու, որի մեջ, ինչպես որ նրա հայրենակիցներից շատերի մեջ, ճարպիկ ձեռնարկատերի գործելաձևը զարմանալիորեն հաշտ գոյակցում էր զգացմունքների ամբողջականության և գորովալարժ թարմության հետ։ Նա իսկապես սիրահարվել էր Ասյային և ամենևին չէր նկատում երկու խառնվածքների ու երկու ռասաների տարբերությունը. մերժելով իր հայրենակիցներին բնորոշ նախապաշարմունքները, նա ցանկանում էր հավատացնել իրեն, որ բոլոր ռասաները հավասար են, և այդպես էր համարում այն նույն կուլր համառությամբ, որով նրա հայրե-

նակիցներն իրենց համարում էին ընտրյալ ռասա և հրաժարվում մյուս բոլոր ռասաները հավասար ճանաչելուց։ Սակայն, նա ինչ-որ չափով հասկանում էր, որ կարճ, բայց փորձով հարուստ կյանք ապրած կնոջ հետ իր ամուսնությունը որոշակի վտանգ է կրում իր մեջ (կարող եք չկասկածել, Ասյան ոչինչ չէր թաքցրել նրանից։ Ասյայի աղնվությունը հասնում էր արատի)։ Բայց նա զանց էր առել ամեն մի վտանգ։

Նրա մեջ ապրում էր ոչ միայն սիրահարված տղամարդու, այլև իր ուժերին վստահ ամերիկացու անհեթեթ ու աներեր հավատը, իսկ դա, եթե կուզեք, լավագույն եղանակն է մյուսներին համոզելու, որ դուք ուժեղ եք։ Եվ (բնավորության իրոք հաճելի գիծ) նա զուտ ամերիկյան հարգանքով էր վերաբերվում կնոջը և այն արտոնություններին, որոնք անգլոսաքսոնական ռասայի արական սեռի ներկայացուցիչները սիրով տրամադրում են հակառակ սեռի ներկայացուցիչներին, որպեսզի սեփական աչքերում բարձրացնեն նրանց գինը։

Աննետան քնքշանքով Ասյային ասաց, որ նրա բախտը բերել է ոչ ըստ արժանվույն և նրա հետ այդ թեմայի շուրջ վիճելուց հետո հավանություն տվեց Ասյայի ընտրությանը։ Նա հիմա, այդ պարագաներում, իսկական մայր էր դարձել Ասյայի համար։ Եվ հաշվի էր առնում միմիայն իր զգտեր շահերը։

Նրա հանգուցյալ որդու մասին երկար ժամանակ չէին խոսում։ Առաջինը Ասյան սկսեց, նրա առաքինությունների թվին չէր պատկանում այն մասին լռելու կարողությունը, ինչը անթեղված է հոգու գաղտնարաններում, ինչը ցավ է պատճառում։ Նա ասաց.

— Աստվա՜ծ իմ, աստված իմ... Իմ խե՜ղճ Մարկ։ Եթե նա իմանար, ինչքա՜ն կտանջվեր...

Աննետայի շրթունքները չդաձգորեն ծամուղեցին, բայց նա իսկույն տիրապետեց իրեն... Այնուամենայնիվ, անշնորհք է այս Ասյան։ Ինչպես է կարողանում տանջել իրեն և ուրիշներին, վերլուծելով իր արարքները, բայց չի ցանկանում հրաժարվել իրեն այնպես տանջող այդ արարքներից։

— Մարկը քեզ շատ էր սիրում և չէր կարող չցանկանալ քո երջանկությունը,— առարկեց Աննետան։

Բայց Ասյան իրենը պնդեց.

— Ես նրան հավատարիմ չեմ...

— Այնտեղ, որտեղ նա է հիմա, այդ խոսքերը գործածության

մեջ չեն։ Սեփականատիրոջ ի՞նչ իրավունքներ կարող է ունենալ նա։

— Բայց այնտեղ, որտեղ ես եմ, ես դավաճանել եմ ինձ։

— Անհավատարմությունը նույն կյանքն է։ Հանգստացիր։

— Ջեմ հանգստանա։ Ես սիրում էի նրան։ Նվիրվել էի նրան։ Կապվել էի նրան։

— Քո կապանքներից ազատում եմ քեզ... Սակայն կարճ ժամանակ դու ազատ կլինես։

— Ես չե՛մ կարող ազատ լինել։ Իսկ եթե ես ազատ չեմ, ես տառապում եմ։ Ջեզ այդ ինչպե՞ս է հաջողվում։

— Ես մաշում եմ իմ կապանքները։

— Ո՛չ։ Ավելի շուտ ես կմաշեմ սեփական մաշկս։ Իմ կապանքները մարմնիս մեջ խրվել ու ցավ են պատճառում, իսկ առանց դրանց ես չեմ կարող։ Ես դրանք կթողնեմ կյանքիս հետ միասին։

— Ապրիր դրանց հետ։ Սիրիր ցավդ։ Դու դրա համար ես ծնված։ Մի՞թե դու կարող էիր ցանկանալ կյանք առանց կապանքների, առանց այդ կապանքների դեմ մղվող պայքարի։ Ո՞վ իմ սիրելի տառապանք։

— Սիրելի տառապա՞նք... Այո, ես տառապանք եմ։ Տառապանք ինքս ինձ և բոլոր նրանց համար, ում սիրում եմ... Իսկ ձեզ ես սիրում եմ... Բայց չեմ հասկանում, թե դուք, դո՛ւք ինչպես կարող եք սիրել ինձ։

— Ի՞նչ արած,— քնքշորեն ծիծաղեց Աննետան։— Ես էլ քեզ նման եմ։ Ես սիրում եմ իմ սիրելի տառապանքը (Աննետան կրծքին սեղմեց Ասյային)։ Այն ինձ ջահելացնում է։ Դե՛հ, ինչքան կարող ես երկար մնա այդպիսին։

Նրանք գրկախառնվեցին։ Եվ ալեհերը, թերևս, ավելի երիտասարդ էր թխահերից։

Երբ Ասյայի ամուսնությունը հայտնի դարձավ, Սիլվիան զայրույթից քիչ մնաց խեղդվեր։ Ժորժը բոլորովին իրեն կորցրել էր։ Չփորձելով գլուխ հանել իր զգացմունքներից, նա խուսափում էր Ասյայի հետ հանդիպումներից, բայց այդ անում էր շատ անհաջող. նախասենյակում Ասյայի ձայնը լսելով, նա մյուս ելքով շտապ հեռանում էր։ Նա չէր կարողանա Ասյայից թաքցնել իր դեմքի սառցային արտահայտությունը։ Սիլվիայի դեմքի արտահայտությունը ոչ ոք սառցային չէր

անվանի, և նա չէր ցանկանում թաքցնել այն։ Նա նայում էր խստորեն ու արհամարհանքով։ Թվում էր, թե Ասյան վիրավորանք է հասցրել անձամբ նրան։ Եվ իրոք, Սիլվիան համարյա կարծում էր, թե Մարկը հենց իրեն է պատգամել պաշտպանել իր շահերը և որ վիրավորել նրան, նշանակում է վիրավորել իրեն՝ Սիլվիային։ Աննետայի համար հեշտ չէր միջնորդի դեր խաղալ հանգուցյալի այդ երկու պաշտպանների, որոնցից հանգուցյալը պաշտպանությունն չէր խնդրել, և Ասյայի միջև, որը նկատելով նրանց դեմքի թշնամական, հավանություն չտվող արտահայտությունները վայրի կատվի պես փշաքաղվում էր։

Բայց երբ Սիլվիան կռահեց, որ Աննետան ամեն ինչ պատշաճն է ընդունել, նրա ցասումն ուղղվեց քրոջ դեմ։

Աննետան միայն ասաց.

— Դեհ, թույլ տուր, որ մարդիկ ապրեն, վերջ ի վերջո։

— Հետևաբար, դա քեզ համար ոչինչ չի նշանակո՞ւմ։

— Նշանակում է, թե չի նշանակում, դա միայն ինձ է վերաբերում։ Իսկ քո ապրումները՝ միայն քեզ։ Խոսքը նրա մասին է։ Նա իրավունք ունի։

— Իրավո՞ւնք։ Իրավունք ունի լքելու մեր երեխայի՞ն։ Ախր դեռ մի տարի էլ չի անցել, որ նրա հետ անկողին էր մտնում։

— Այդ աղջկա ամբողջ կյանքը առջևում է։ Իսկ մենք, մեր կյանքը՝ ետևում, նրանց հետ, ովքեր ընկան։ Բավական է այն, որ մենք ողբում ենք նրանց։ Թող երիտասարդները գնան իրենց ճանապարհով։ Ի՞նչ լավ է, Սիլվիա, շարունակ առաջ ու առաջ գնալ, առանց ետ նայելու, երբ դեռ նույնիսկ երեսուն տարեկան էլ չկաս։

— Չեմ կարող հաշտվել այն բանի հետ, որ նա մոռացել է նրան։

— Իսկ դո՞ւ, մի՞թե դու զուրկ ես այդ պարգևից։

— Ո՞ր պարգևից։ Մոռացությո՞ւն։ Զուրկ եմ։ Երբեք չեմ մոռանում նրանց, ում սիրում եմ, և նրանց, ում ատում եմ։

— Մի՛ պարծեցիր։ Ինձ էլ հո չես խաբի։ Ոչ դու, ոչ ես չէինք կարող ապրել, եթե չմոռանայինք։ Մոռացությունը դաժան է, բայց և գթառատ, այն մեզ ստիպում է մեռնել ու հարություն առնել։ Սիլվիա, Սիլվիա, քանի՛-քանի՛ անգամ ենք ես և դու մեռել ու հարություն առել, ետևում թողնելով մեր մեռելներին...

— Մեր մեռելների՞ն։ Այդ ո՞ւմ։

— Մեղ։ Որտե՞ղ են նրանք՝ բոլոր անցած-գնացած Աննետաները, բոլոր անցած-գնացած Սիլվիանները։

— Ես միշտ տեսնում եմ նրանց, տեսնում եմ բոլոր Աննետաներին, նախկին, վաղուցվա Աննետաներին,— պատասխանեց Սիլվիան, բռնելով քրոջ ձեռքը, և նրա հայացքը հանկարծակի մեղմացավ, վառվեց քնքշությամբ։— Ես գտնում եմ մատնաչափիկի բոլոր քարերը, որ դու շպրտում էիր ճանապարհին։

— Այդ դեպքում գտիր նաև այն փոքրիկ, կարծր ու շիկացած քարը, որպիսին Սիլվիան էր Ասյայի տարիքում։ Եվ թող դա քեզ ներողամտություն սովորեցնի։

— Ես երբեք ներողամիտ չեմ եղել նույնիսկ իմ նկատմամբ։ Ուրեմն, ինչո՞ւ պետք է ներողամտություն ցուցաբերեմ այդ շնիկի նկատմամբ։

— Խնդրում եմ, քեզ բարեպաշտ մի ձևացրու։ Ես քեզ շնիկի դերում ավելի եմ սիրում, քան բարեպաշտի։ Շների աչքերը գոնե բարի են։ Հապա, աչքերիդ բարի արտահայտություն տուր, շուտ։

— Խնդրեմ, հիացիր նրանցով։ Միայն թե հիշիր, սա քեզ համար է, միայն քեզ համար։ Իսկ նրան, իսկ նրա համար՝ ո՛չ, ո՛չ և ո՛չ։

— Դու անիրավացի ես։ Ներիր և շնորհիր։

— Ես անիրավացի եմ... գուցե... Բայց, պատկերացրու, որ ինձ դուր է գալիս անիրավացի լինել... Երբեք նրան չեմ ների... Վերջ ի վերջո, եթե սիրահարվել է, թող ամուսնանա նրա հետ, ով դուր է գալիս իրեն։ Եվ թող նրա սիրունիկը նրա հետ միասին չքվի այստեղից։ Բարի ճանապարհ... Իսկ ես կաշխատեմ, որ նրանից հետք էլ չմնա։

Աննետան ուսերը թոթվեց և լռեց։ Երբ Սիլվիան մոլեգնում էր, նույնիսկ տեր աստծուն մնում էր միայն ազնվաբար ծլկել։

Աննետան ու Ասյան ջանացին այնպես անել, որ այդ վերջին օրն անցկացնեն միասին, առանց կողմնակի անձանց ներկայության։

Մնացած բոլոր անբարյացակամությունը կամ նրանց քաղաքավարի պարսավանքը, որ Ասյան նկատեց նույնիսկ Բրունոյի և Ժուլիենի շնորհավորանքներում, հոգու մեջ խրված գաղտնի դղրման խայթը Ասյային ստիպեցին ավելի լիակատար գնահատելու Աննետայի իմաստությունը։ Ասյան զգում էր Աննետայի իմաստության կարիքը, որպեսզի սեփական խղճի հետ մեն-մե-

նակ մնալով, հաստատվեր իր իրավունքի մեջ։ Ինքը համոզված էր, որ իրավունք ունի և վա՛յ նրան, ով կհամարձակվի ոտնձգություն կատարել դրա դեմ։ Բայց նա պատկանում էր ա՛յն անհատականությունների թվին, ովքեր դեպի հաղթանակ գնալիս, ամեն մի խոչճի խայթ ծողնում են շեմքի մոտ, իսկ հաղթելուց հետո, կրկին վերցնում այն։ Եվ դեռ սպասում են, որ մարդիկ, որոնց վրայով իրենք սառնասրտորեն լոք տալով անցնում են, օգնեն ավելի-մաքրելու իրենց իսկ քայլերից բարձրացրած փոշին։ Բայց մարդիկ չեն շտապում։ Ոչ ոք հակված չէ ավելու դրացու շեմքը, ավելի շուտ նրանցից յուրաքանչյուրը պատրաստ է իր սեփական աղբը թափել ուրիշի դռան առաջ։ Եվ այդ պատճառով էլ Աննետան ստիպված էր ամեն համառություն գործադրել, որպեսզի փայլեցնելու աստիճան ավելը Ասլայի շեմքը, նրա անհանդիստ խիղճը։ Եվ քանի որ ապրած վշտից հետո երիտասարդ հոգին ագահաբար վերցնում է առաջարկված երջանկությունը, Ասլան չստիպեց իրեն երկար համոզել ու ամբողջովին լույս էր ճառագում ուրախությունից։ Մինչդեռ Աննետան, իր ննջասենյակում մենակ մնալով, ակամա մատնվեց տխրության։ Այնպես անսահմանորեն դժվար է զոհացում տալ բոլորին, բոլոր նրանց, ում սիրում ես, բոլոր նրանց, ում կրում ես սրտիդ մեջ, ողջերին ու մեռածներին. յուրաքանչյուրը մորմոքում է. «Իմ ուրախությունը, իմ ցավը».— և մեկի ուրախությունը մյուսին ցավ է պատճառում։ Եվ մեծերը ստիպված են լինում զոհաբերել իրենց մասը։ Իր մեծ որդու, իր ավագի հետ մենակ մնալով (մեռածները միշտ մեծ են ողջերից), Աննետան սենյակների անողոք լռության մեջ լսում էր նրա ձայնը.

«Իմ մասը տուր նրան։ Իմ ինչին է այն հարկավոր։ Թող նա վայելի։ Թող որ նա, մեր երեխան, նոջանիկ լինի։ Թող նորից սիրի։ Մենք էլ երջանիկ լինենք այն բանով, որ նա նորից է սկսում ապրել»։

Ասլան երբեք այնքան գորովալից, այնքան ծնողասեր դուստր չէր եղել Աննետայի համար, որքան այդ վերջին օրերին։ Նա Աննետային վստահեց իր առաջվա կյանքի, այժմյան հոգու վարդուցվա գաղտնիքները, որոնցից մի քանիսը նա չէր վստահել ոչ մեկին, անգամ Մարկին, երբ նրանց գլուխները հանգչում էին նույն բարձի վրա (միայն աստծուն էր հայտնի, թե Ասլան ինչեր, ինչեր էր մատուցում նրան, թեև Մարկը կարող էր հիանալի յոլա գնալ առանց այդ հյուրասիրության)։ Երբեմն այդ խոստո-

վանուհյունները այնքան էլ չէին գեղեցկացնում պատմողի նկարագիրը, բայց Ասյան գտնում էր, որ չկա իր երախտագիտության ավելի ստույգ ապացույց, քան բոլոր այդ գաղտնիքները բացելն է, գաղտնիքներ, որոնց ողորմածությամբ իր անձը երևում էր ամենաանհանձնելի վիճակում. նա իրեն՝ անպաշտպանին, չգունազարդվածին հանձնում էր Աննետայի ձեռքը: Նա շատ լավ գիտեր, որ այդ ձեռքը ամեն բան կընդունի, մի հատիկ իսկ դեն չի գցի: Իսկ արտահայտվելը հսկայական թեթևացում էր: Կյանքում մեկ, գոնե մեկ անգամ իրեն ցույց տար այնպիսին, ինչպիսին կար, այնպիսին, որին հայելու մեջ էլ չէր համարձակվում նայել, և այդ բոլոր խոստովանություններից հետո լսեր. «Աղջիկս...»: Բայց նույնիսկ Աննետայի հետ դա հնարավոր եղավ միայն այն պատճառով, որ առջևում բաժանումն էր:

Այո, Աննետան ամեն ինչ ընդունում էր, ամեն բան հասկանում: Նա հասկանում էր, որ այդ անկեղծ խոստովանություններն ամենաարժեքավոր նվերն են Ասյայի աչքում: Աննետան փորձում էր թաքցնել, որ նվերն ընդունում է դողացող ձեռքով: Այն, ինչ թաքնված է հոգու խորքերում, սովորաբար մակերես չի բարձրանում... Չէ որ ինքն էլ քիչ բան չէր տեսել, քիչ բան չէր ճաշակել: Բայց երիտասարդ կինը նրա առջև բացեց կյանքի և հոգու նոր, անհայտ կողմեր: Սրտի ու մտքի հրեշներ... Եվ իր խեղճ Մարկը պառկել է նրանց կողքին: Գիտե՞ր նա արդյոք: Ասենք, նա էլ ի՛ր գաղտնիքներն է ունեցել:

«Իսկ ես՝ իմը... Ջունգլիներ, իսկական ջունգլիներ... Եվ այնուամենայնիվ, այնտեղ որտեղ նա է հիմա, ավելի հանգիստ է, քան այստեղ»:

Նա գրկի մեջ սեղմում էր թանկագին դատերը, ում նրբակազմ մարմինը իր մեջ պահել էր այդ կրակն ու դաժան խավարը, և ով վայրենի վստահության պոռթկումով իր նվերը մատուցեց նրան:

Ասյան մի նվեր ևս մատուցեց Աննետային՝ էլ ավելի գեղեցիկ, էլ ավելի մաքուր ու անգին. նա իր երեխային թողեց տատիկին: Պետք է ասել, որ Վանյան նրան նեղություն կպատճառեր: Երբ նոր մեղրամիս է սկսվում, շատ ծանր է ամբողջ ժամանակ աչքերի առջև ունենալ անցած-գնացած ամսվա լուսնի մահիկը: Այն հիշեցնում է հանգած գիշերները: Բայց և այնպես Ասյայի կողմից դա որոշակի զոհաբերություն էր: Ասյային կա-

բելի էր հանդիմանել, որ նա վատ էր սիրում նրանց, ում սիրում էր, բացառությամբ հերթական սիրեկանի։ Մի տեսակ անկանոն էր սիրում։ Բայց աղդարացի չէր լինի նրան հանդիմանել որդուն չսիրելու համար։ Նա որդուն սիրում էր կրակոտ սիրով, անասնաբար սիրելու ինչ-որ հիացմունքով։ «Իմն է։ Իմ մեջ եմ կրել նրան։ Ես դեռ ղգում եմ մեզ իրար կապած պորտալարը։ Նա պատկանում է ինձ...»։ Բայց ինքը չէր պատրաստվում պատկանել որդուն։ Մանելով սակարկության մեջ, նրա բնազդը հեռու էր վանում արտքրության նկատառումները։ Նա մերթ մոռանում էր որդուն, մերթ էլ տանում էր իր մոտ։ Բայց չէր կարողանում նրա վրա կենտրոնացնել իր ամբողջ կյանքը, իր ամբողջ կիրքը։ Եվ քանի որ Ասյան արդարամիտ էր, դրնե ընդունակ էր տեսնելու, թե ինչն է արդարացի և ինչը՝ ոչ, հասկանում էր, որ մեղավոր է որպու առաջ և որ ապագայում դեռ էլ ավելի մեղավոր կլինի։ Բայց գիտակցելով իր անիրավացիությունը, նա ճատն էլ չէր շարժի, սրպեսզի փոխվեր։ Կամքի մեծագույն ներքան մատչելի ջանքի արդյունք էր տղային հետը չտանելու որոշում ընդունելը, քանզի Ասյան իրեն հաշիվ էր տալիս, որ չի կարողանա բավարարել այն պահանջները, որպիսիք, բնականաբար, առաջադրում է նման տիրապետումը։ Բայց հրաժարվելով, նա սուր ցավ էր ղգում։ Եվ ուզում էր, որ Աննետան ճիշտ գնահատի իրեն այլևս զոհաբերությունը։ Ուրիշ ոչ մեկի համար Ասյան այդ չէր անի։ Աննետան դիտեր դա ու գնահատում էր։ Նա ինքը նույնպես ոչ մեկին այդպիսի զոհաբերություն չէր անի։ Անգամ (Աննետան ինքն իրեն խոստովանեց այդ), անգամ, եթե դա պահանջեր երեխայի բարօրությունը։ Այո, սատահական չէ, որ այդ երկու տառապյալները խոսքը բերանից չթռած հասկանում են միմյանց։

Մեկնելու նախօրյակին, վերջին դիշերը, Ասյան կատաղության ու հուսահատության պոռթկումով սկսեց ճչալ, որ չի ցանկանում կրկին ամուսնանալ, չի ցանկանում լքել իր Մարկին, որ ուզում է մնալ Աննետայի հետ, պահպանել նրան... Բայց Աննետան ասաց.

— Մեկնիր, աղջիկս։ Գնա՛, մարտնչիր Մարկի փոխարեն... Պայքարիր նրա համար, այն բանի համար, ինչ նա էր ուզում, ինչ նա չկարողացավ։ Մեր ընդհանուր գործի համար։

Ասյան ամբողջ մարմնով դողաց։ Նա արագորեն բռնեց Աննետայի ձեռքերը.

— Մեր գործի համա՞ր, կնշանակի, դուք մեզ հետ ե՞ք, Աննետան խոնարհեց գլուխը.

— Ես մեր Մարկի հետ եմ, Մարկը իմ մեջ է. Համաշխարհային օրենքները խախտվել են, ես ծնել եմ նրան, Հիմա նա իր հերթին ծնում է ինձ,

Ասյան կրկին սեղմվեց Աննետային.

— Իմ Մարկի մա՛յր, Իմ Մարկի դուստր, Այն ամենը, ինչ իմ օջախից մնացել է ինձ,

— Ջմռռանաս, դու փոքրիկ լույս ունես՝ քո Վանյան,

— Պահպանեցեք նրան ինձ համար,

— Ես պահպանում եմ նրան և պահպանում եմ քեզ... Գնա, աղջիկս, ինչ էլ որ պատահի մեր երկուսի հետ, հանձին ինձ դու միշտ կգտնես օջախի պահապանին, Հիշիր այդ և գիտցիր՝ նա քեզ կդիմավորի, կպատսպարի ու կպաշտպանի ամբողջ աշխարհից,

— Ամբողջ աշխարհը դատարկ բան է, ինքս էլ մի կերպ գլուխ կհանեմ, Ինձ ինձանից պաշտպանեք, Ես ուզում եմ ձեր ձեռքերը լինել, Իսկ դուք եղեք իմ սիրտը,

Ասյան մեկնեց ամուսնու հետ, Աննետան մնաց մենակ իր Մարկի հետ, Հիմա նա Մարկի համար պետք է փոխարիներ նրան, ով մեկնել էր,

Մարկը նրա կողքին էր, նրա սենյակում, ու թեև չէր կարող շարժել ոչ ձեռքը, ոչ ոտքը, նրա հայացքը լուսավորված էր կյանքով, միտքը եռում էր. նա ասում էր Աննետային.

«Գնա՛ իմ փոխարեն, Գործի՛ր իմ փոխարեն, Իմ փոխարեն մարտնչի՛ր»,

Նորից էր սկսվում մարտերի դարաշրջանը, Ահա արդեն քսան տարի դրանք չէին դադարում, Բայց տասնչորս թվականի համաշխարհային պատերազմը միայն շեմին էր, Դրանից ներս մտավ Հեղափոխությունը,

Հեղափոխությունը ոչ միայն սոցիալական պայթյուն էր, որը ցնցում է հողը այս կամ այն երկրում, Այն թափանցում էր հոգևոր կյանքի բոլոր դրսևորումների ամենախորքերը, Աննկատելիորեն փոխում էր բարոյական և սոցիալական բոլոր գաղափարները, Անաղարտ բանականությունը, որին նեղել էր համընդհանուր Հարաբերականությունը, կանգնեց ավագության իրավունքով (թեև համարվում է, որ Հարաբերականությունը

կրոսեր է, անձամբ ես հակառակն եմ կարծում, բայց եթե նույնիսկ այդպես լիներ, նա Աստվածաշնչի Հակոբի նման կհաղթշատակեր նախածնության իրավունքը)։ Եվ այսպես, անաղարտ բանական հոգեբյունը առաջինը դարձավ անհրաժեշտ հեղափոխության գործելու ասպարեզ։ Նա բոլորի համար աննկատելի, կատարում էր մարդկային շարժման գերագույն դրգռիչի» իր իսկական դերը։ Ինչպես Շոպենհաուերն է ասել. «Այո, եթե կյանքն անհեթեթություն և այլանդակություն չէ, Հեղափոխությունն ամեն ինչ է, նա ընդգրկում է ամեն ինչ և դառնում ճեմ մետաֆիզիկա»[1]։

Բայց ավելացրել է ֆրանկֆուրտցի այս դաժան բուրգուայականը, «զգուշացե՛ք քաղցր-մեղցր մետաֆիզիկայից։ Մի մոռացեք, որ գլխավորը ոչ թե բարու, այլ չարի խնդիրն է։ Փիլիսոփայությունը, որի էջերից լաց, հառաչանք, ատամների կրճտոց, համընդհանուր կոտորածի զոհերի ահեղ ճիչ չի լսվում, փիլիսոփայություն չէ»։

Այդ ծովի աղմուկը լցրել էր ամբողջ աշխարհը։ Հարկավոր էր խուլ դառնալ եսապաշտ բուրժուալիայի նման, որը խցել էր ականջները, թաքնվել արդեն դատապարտված անցյալի հարմարավետության մնացորդների մեջ. միայն թե չլսեր, թե ինչպես է բարձրանում մարդկային տառապանքների ու ըմբոստության ալիքը։ Աննետայի ականջները այդպիսի ամեն մի ձայն որսում էին։ Ժուլիեն Դավիթ շնորհիվ, որը բոլոր տառապյալ երկրներից և, գլխավորապես Եվրոպայի արևելքից, ամեն օր տանջալի նամակներ, փաստաթղթեր ու կոչեր էր ստանում, Աննետան կարողանում էր հաղորդակից դառնալ մարդկության կրքերին։ Այդ հաղորդակցությունը բնավ չէր տանջում նրան ի հակադրություն Ժուլիենի, որը ճնշվում էր այդ Lamento-ի միալարությունից և այն բանի գիտակցումից, որ ինքն անզոր է օգնելու զոհերին։ Աննետան արդեն իր լուման ներդրել էր, վճարել էր իր ամենամեծ սիրով, մարդկային տառապանքներին զոհ գնացած իր որդու կյանքով։ Նա տվել էր իր ունեցած ամենաթանկ բանը։ Այդ ողբերգության մեջ նա ոչ թե պարզապես հանդիսատես էր, որին տանջում է դաղտնի ամոթը այն բանի համար, որ իրեն գթացին. նա իրավունք ուներ տեղ գրավելու ճնշվածների շար-

---

1 Շոպենհաուերի զրույցները Ֆրեդերիկ Մորենի հետ, 1858 թվականին (Revue de Paris, 1864).— Ռ. Ռ.

քերում, և քանի որ կորցնելու այլևս ոչինչ չուներ, ավելի համարձակ էր նայում այն ճանապարհին, որով պետք է գնային ժողովուրդները։

Տվյալ պահին ճանապարհը շրջափակված էր։ Եվրոպայում Հեղափոխությունը վիջեց հարձակման նախաձեռնությունը և այն անցավ հետադիմության ձեռքը։ Զրկված լինելով իր վիթխարի շինարարության կարիքներով կլանված Սովետական Միության գործուն աջակցությունից (Ռուսաստանը վիթխարի կենդանու նման մազաթափության շրջան էր անցնում և կամաակամա մարտերից իրեն մի կողմ էր պահում, քանի դեռ այնպես նուրբ էր նրա նոր մաշկը), հեղափոխական Եվրոպան չկարողացավ կազմակերպվել։ Մի զարմանալի վհհերոտություն կաշկանդել էր երկու սերնդի ընթացքում պառլամենտարիզմի մեջ իրենց ամբողջ հավատն ու եռանդը սպառած սոցիալիստական կուսակցություններին։ Նրանց ձեռքերն ու ոտքերը կապել էր լեգալության մասին անհեթեթ մտահոգությունը, այն դեպքում, երբ նրանց հակառակորդները՝ նվազ բծախնդիր ֆաշիստ խոշոր բուրժուանները, ամբողջովին զանց էին առնում բոլոր լեգալությունները, երբ պահանջվում էր ճզմել թշնամուն։ Անհեթեթ հակադրության ուժով նրանք, ովքեր պետք է բոլոր միջոցներով ու ցանկացած գնով մաքրեին նոր կարգերի ճանապարհը, դարձան հին կարգերի և դրանց՝ որոշ կերած սկզբունքների դողհար կարիատիդներ, այն նույն սկզբունքների, որոնց արդեն վազուց չէին հավատում հետադիմության լպիրշ ու խորաթափանց ղեկավարները։ (Նրանք օգտվում էին այդ սկզբունքներից, երբ դրանք իրենց օգտին էին, և ոտնահարում էին այդ սկզբունքները, երբ դրանք խոչընդոտ էին դառնում)։ Այդ սոցիալիստ օրինամոլները, որոնց՝ կոմունիստների դեմ ունեցած եղբայրասպան չարությունը նետել էր անցյալի գիրկը, այնքան բուն մարտից չէին զարհուրում, որքան դրա հետևանքից։ Նրանք վախենում էին պարտությունից։ Եվ կվախենային հաղթանակից։ Նրանք կորցրել էին հավատն իրենց նկատմամբ։ Մարտիկների արյունը դուրս էր հոսել նրանց զարկերակներից... Իսկ նրանք, ում զարկերակներում հոսում էր այդ արյունը՝ կոմունիստները, չգիտեին, թե ինչի վրա գործադրեն իրենց ուժերը, դրանք վատնում էին դատարկ գժտությունների ու սպառնալիքների, բարձրացրած բռունցքների, շքերթային երգերի, ինքնագովության վրա. այդ ամենը ազատում էր լուռ, բայց կայուն կարգապահու-

թյան պահանջներից, որն անհրաժեշտ էր իսկական կազմակերպված գործողություն նախապատրաստելու համար, և միայն գրաստացնում էր թշնամուն, նրան դրդելով սպառազինվել։

Թշնամին կարողացավ ժամանակ շահել։ Նրա պարագլուխները գիտեին ուր ուղղել այն անհիմն խուճապը, որ Հեղափոխության շաղակրատները իրենց անզգույշ սպառնալիքներով ներշնչել էին տագնապած ամբոխին։ Եվրոպայով մեկ ֆաշիզմը ճչում էր բարոյական ու սոցիալական կարգերի, խնայատուփերի, անկիզելի պահարանների, ընտանիքի, հայրենիքի, «ճիվանդ մոր» և երկնային հոր պաշտպանի իր դերի մասին։ Խոշոր բուրժուազիան, որը բոլոր հիմքերն ուներ այնքան էլ չհավատալու ռեֆլեկտիվ եռանդին, բավականաչափ հեռատես էր, որպեսզի մահակը հանձներ ժողովրդի ծոցից ելած մարդկանց՝ իրենց եռանդը տակավին չսպառած տարբեր դուշնների ու ֆյուրերների, գայլերին դարձնելով իրենց պահապան շները։ Պրոլետարիատի դիկտատուրային հակադրվում էր պրոլետարական դասակարգի դավաճանների դիկտատուրան, դավաճաններ, որոնք օժտված էին մասսաներին տաժանակրային թիապարտության շղթայելու համար անհրաժեշտ անսահմանափակ, ճիշտ է, ժամանակավոր իշխանությամբ։ Երկրից երկիր էր տարածվում ֆաշիզմի մի տեղ սև, մեկ այլ տեղ դարչնագույն ժանտախտը, և հաջողություններին զուգահեռ աճում էր նրա թունոտ ներգործությունը։ Նույնիսկ Ֆրանսիան ու Անգլիան՝ դեմոկրատական ազատությունների իրենց անկիզելի պահարաններում պահպանության ընդունած այդ վերջին բանկերը ետ էին սովորել դրանք գործի մեջ կիրառել և դուրս էին հանել շրջանառությունից։

Պոչ խաղացնելու ժամանակը չէր։ Կամ կոզմ, կամ դեմ։ Բռնության և բռնության չընդդիմադրելու վերաբերյալ ակադեմիական բանավեճերն ահնհայտորեն անտեղի էին։ Պահանջվում էր ստեղծել բռնության և բռնության չընդդիմադրելու բոլոր ուժերի բլոկ ընդդեմ հետադիմության բոլոր ուժերի։ Ամեն բան պետք է իր տեղը գտներ բանակում՝ Դանդիի կազմակերպած մեծ մերժումը և Լենինի հարվածային ջոկատները։ Զինվորական ծառայությունից հրաժարվելը, գործադուլները գործարաններում ու տրանսպորտում, ապստամբությունը՝ այս ամենը այն զենքն էր, որը Աննեհան հիմա ընդունում էր մարտի համար։ Նա այդ մարտը համարում էր անհրաժեշտ։ Եվ ամենևին չսպասավելով թաքնվել Միակի գրկում, որի մասին մի ժամանակ

երգում էր այծապահի սրինգը, նա իր բոլոր արմատներով հողից վերցնում էր այն ուժերը, որոնց մասին խոսում էր Բրունոն, և դրանք վերածում գործողության։ Ի՞նչ կապատահի Միակի հետ, եթե դադարի այդ շրջապտույտը։ Նա՝ Միակը, չէ որ գործողության մեջ է։ Միակը առաջընթաց շարժման մեջ է։ Եթե նա դեմ մի ակնթարթ կանգ առնի, ամեն բան կփլվի։

Ամեն բան կփլվի Աննետաի նմանների, Արևմուտքի նրա եղբայրների ու քույրերի համար։ Որովհետև այնտեղ, ուր միտքը հոսում է, ինչպես հալած մետաղը ակոսով, նա ընդունում է կենդանի կամքի կերպարանք։ Այն նույն միտքը, որը, ծագելով Գաուտամայի[1] գլխում, դառնում է Նիրվանայի ժպիտ, եվրոպայի դուստրերի մոտ շողում է էգինյան Աթենաս-Պալլասի[2] ժպիտով։ Բրունո Կիարենցան Աննետային հաճախ էր կրկնում տիրեթյան ձյունապատ բարձրավանդակի իմաստունների խոսքերը։

«Ստեղծելը ոչինչ է։ Ոչնչացնելը՝ ամեն ինչ (ոչնչացնել վտղը, ոչնչացնել իր «ես»-ը, որ կանգնած է հոգու և արևի միջև)։

Աննետան այդ ասույթներում հեղափոխության կոչ էր լսում (բացառված չէ, որ ինքը՝ Բրունոն, նույնպես լսում էր)։ Ոչնչացնել պատրանքների ու նախապաշարմունքների խիտ ցանցը, հին աշխարհը կաշկանդած այդ մահաբեր ցանցը։

Փշրել Միքելանջելոյի «Սորուկի» շղթաները։ Նոր կյանքի ճնշմամբ ճեղքել մահացած կյանքի ամբարտակը, անցյալի ամբարտակը... Երբ Աննետան իրեն ճանաչեց այդ գետի մեջ, կոհակների առկայծող ցոլքերի մեջ, որտեղ իր սուրբ Բրունո Հիմալայացին բյուրավոր անհատականությունների մեջ նրան ցույց էր տվել «ես»-ի դեմքը, երբ նա այլ բաների մեջ տեսավ ի՛ր ծփանքը և այն ամենը, ինչը շուրջպար բռնած, հնդկական բաքոսի ինչ-որ շքերթի նման պտույտ գալով գլորվում էր դեպի օվկիանոս, նա չվախեցավ, որ Ասիայի այդ իմաստությունը, այդ սրբազան զառանցանքը Եվրոպայի հոգում պատասխան արձագանք է արթնացնում (քանզի երկուսն էլ միևնույն մոր դուստրերն էին), և հասկացավ, որ չի հրաժարվի իր անզուսպ գործունեությունից։ Եվ կլուծվի այդ շարժվող զանգվածի մեջ լոկ նրա համար, որպեսզի այնտեղ դտնի իր տասնապատկված «ես»-ը։

---

1 Բուդդայի անուններից մեկը։

2 Աթենքի ղեկուզի հին հունական դիցաբանության մեջ։

Ոգու այդ ֆարանդոլայում[1], բուռն կերպով դեպի օվկիանոս հոսող Գանգեսի մեջ նրան գրավում էր ոչ թե օվկիանոսը, ոչ, այլ գետը։ Աննեատան կզուգակցվի նրա հետ։ Նա լսում է, թե ինչպես է իր զարկերակներում արձագանքում մե՛ծ բանակի քայլքը։

Շուտով ժողովրդական ժսլովների մշտական մասնակիցներն ընտելացան սգավոր, փոքր-ինչ ծանրամարմին, դուրս պրծած խոշոր աչքերով այդ կնոջը, որը անշարժ նստելով անկյունում, թվում է, տեղն ու տեղը սկսում էր նիրհել. այնպիսի մտացրիվ, ամեն ինչից վերացած տեսք էր ունենում նա նման պահերին։ Այդպես նա ջանում էր աննկատելի մնալ, բայց բավական է ամբիոն բարձրանար ու սկսեր խոսել, որպեսզի նրան ամբողջովին ողողեր պատանեկության հեղեղը, և նրա յուրաքանչյուր դիպուկ խոսքը, որ արտասանվում էր անշտապ, ցածրաձայն, վստահ, ծանրաբարո, թափանցում էր մարդկանց գիտակցության մեջ և մղում գործողության։

Ժուլիեն Դավին շատ զարմացավ, երբ լսեց, որ Աննեատան ցանկանում է իր հետ գնալ հակաֆաշիստական միտինգի, որին նախագահում էր ինքը։ Ասենք, Աննեատան ևս քիչ չզարմացավ, մի անգամ զգալով, որ իրեն անհրաժեշտ է ձայն խնդրել։

Մինչ այդ հրապարակային բանակռիվները չէին հրապուրում նրան։ Դահլիճում իբրև հանդիսական գտնվելիս նա տեսնում էր ամբիոն բարձրացող հռետորներին և ուրիշ ոչինչ։ Իսկ հիմա, ամբիոնին կանգնած, զգաց մասսաների շունչը, տոգորվեց նրանց կրքոտ սպասումով։ Իրենց ճառերի կծիկը ճարտարությամբ քանդող հմուտ ճոռոմախոսներին հազվադեպ է հաջողվում բավարարել այդ սպասումը։ Քաղաքական հակառակորդների դեմ մղած իրենց պայքարում նրանք անչափ շատ են ունկընդիրներին քիչ հետաքրքրող վիճաբանություններ շռայլում, և չեն անսում իրենց ուղղված համր աղաչանքին։

«Ինձ ճանապարհ ցույց տուր, ուղիղ ճանապարհ ցույց տուր և ես կգնամ այդ ճանապարհով»։

Աննեատան լսում էր այդ կոչերը, ասես ինքն էր դրանք նետում դեպի ամբիոն, և քանի որ ոչ ոք չէր պատասխանում, կամ-

---

1 Ֆրանսիական (պրովանսալական) հին ժողովրդական խմբային պար։ Ֆարանդոլան որպես երաժշտական ձև օգտագործել են Շ. Գունոն («Միրեյլ» և ժ. Բիզեն («Արլեզիանուհի»)։

քին հակառակ բարձրացավ ամբիոն, որպեսզի բարձրաձայն արտահայտի այդ համր կոչը և պատասխանի դրան, ճիշտ այնպես, ինչպես վարվել էր անտիկ ողբերգության կորիֆեյը։

Առաջին խոսքերն արտասանած սեփական ձայնի հնչյունը դարմացրեց նրան. ձայնը գալիս էր այն մյուս Աննետայից, որն ամեն ինչում գերազանցում էր իրեն, մյուս «ես»-ից, որն աճում էր, ներծծելով ամբոխի հոսանքները։ Բայց գրեթե իսկույն էլ նա զգաց լսարանի հետ այն միաձուլումը, որը ծանոթ է ելույթ ունեցողին և մեծագույն ուժ է ի ծնե հռետորի ձեռքին։ Բայց չէ որ նրա խոսելաձևում հռետորական այովեստից ոչ մի բան չկար։ Նրա ներգործության ուժը կատարյալ պարզության ու հանգըստության մեջ էր, մի հանգամանք, որն առանձնապես ցայտուն էր դարձնում նրա փաստարկների համաձակությունը։ Այդ հանգստությունը ունկնդիրների սրտերը լցնում էր իրենց և այն գործի նկատմամբ հավատով, որ նրանք պաշտպանում էին։ Աննետան շուտ համբավ ձեռք բերեց։ Ելույթ ունենալով այդ ժողովներում, նա իր կողքին զգում էր որդու ներկայությունը։ Այո, նա այնտեղ էր, գոնե այդպես էին մտածում նրանցից շատերը, ովքեր լսում էին Աննետայի խոսքերը, քանզի Մարկի զոհվելու պատմությունը ոչ միայն հայտնի էր դարձել, այլև՝ վերածվել էր գրեթե լեգենդի։ Հասարակության աչքում նրանք միասին էին՝ որդին և մայրը։

Նրա շիտակությունը, կանացի գործնական և պարզեցումների հակված խելքը քիչ չնպաստեցին միջկուսակցական հարաբերությունների անհրաժեշտ տեղաշարժերին։ Աննետան, որ անտարբեր էր բոլոր և ամեն տեսակ պիտակների ու բյուրոկրատական ձևապաշտության նկատմամբ, երկու ինտերնացիոնալների գործիչներին, եղբայրներին և թշնամիներին դրդում էր իրենց ցույց տալ գործողության ասպարեզում։ Տեսության շուրջ դեռ կհասցնենք վիճել։ Միակ իսկական սահմանագիծն ընկած է գործել ցանկացողների և գործել չցանկացողների միջև։ Անգործությունն արդարացնող գաղափարական բոլոր պատրվակները ուղղակի դիմակ են։ Եվ կանացի ձեռքը այնքան էլ հարգանքով չէր պոկում այդ դիմակները ի մեծ տհաճություն տարբեր կուսակցությունների անկզբունք քաղաքգետների, խանգարելով նրանց երկդիմի խաղ խաղալ։ Բայց ամբոխը նույն կինն է. նա հավանություն էր տալիս Աննետայի

գործունեությանը։ Ամբոխին պարզ իրավիճակ էր հարկավոր, Աննետան աշալուրջ հետևում էր, որ շփոթ ստեղծող պերճախոսները մեգ-մառախուղ չանեն. նա կատարելապես հասու էր եղել ցանկացած վիճաբանություն պարզ ու գործնական առաջարկությանն հանգեցնելու արվեստին։ Ուժերը չխնայելով, նա ակտիվորեն մասնակցում էր միջազգային օգնության և միջազգային գործողության տարբեր կազմակերպությունների՝ Միջազգային բանվորական օգնության, Հեղափոխության մարտիկների օգնության միջազգային կազմակերպության, Հակաիմպերիալիստական լիգայի, Հակաֆաշիստական լիգայի, գաղութային ծի դեմ պայքարի լիգայի աշխատանքներին։ Որ սկսեցիր թվարկել, էլ կանգ չես առնի։ Աննետան ավելի շատ ուժեր էր ծախսում, քան կուտակել էր։ Ունկնդիրներին հիացնող հռչակավոր հանգստությունը նրան տրվում էր ներքին խոչընդոտների դեմ պայքարում կամքի գերլարման գնով։ Այդ բարձրահասակ, հանգիստ, արտաքուստ ամրակազմ, բավական գեր, տարիների հետ ծանրացած, բայց իր եռանդը չսպառած կնոջ հոգնած սիրտը սկսեց տեղի տալ։

Բժիշկները մասնագիտական սովորությամբ աշխատում էին հիվանդից թաքցնել վտանգավոր ախտի իսկական բնույթը։ Նրանք ելնում են այն բանից, որ մարգու կյանքի սերը անբաժանելի է մահվան վախից։ Եվ կարծում են, թե բոլոր մարդկանց համար կյանքին հրաժեշտ տալը մեծագույն դժբախտություն է, ամենավերջին սարսափը։ Բայց մի՞թե հասած պտուղը ուշ աշնանը չի ձգտում պոկվել ճյուղից։ Աննետան ժպտալով լսում էր նրանց թացատրություններն ու ակնարկները։ Նա շատ բան հասկանում էր թե՛ հիվանդապահուհու սեփական փորձով, և թե՛ շնորհիվ պրոֆեսիոնալ բժիշկների հետ, ինչպես ասենք, Ֆիլիպ Վիլարի՝ իր նախկին սիրեկանի[1] հետ, իր մոտիկության։

Վերջերս Աննետան հանդիպեց նրան։ Արդեն ճաղատ ծերունի էր, աչքերում վառվում էր առաջվա, գրեթե պատանեկան անհագ կրակը, գերհագեցման ծամածռությունը թյուրել էր նրա հաստ շրթունքները։ Բազմաթիվ պատիվների արժանացած այդ մարդը ծարավի էր նոր մեծարանքների, ինչպես մեծն Բերտոլոն (անցյալ դարի մարդը), որի մասին կատակով ասում էին, թե միակ բանը, ինչին նա չի ձգտել անհապաղ տիրելու եղել է իր տեղը

1 Տես՝ «Ամառը», Ռ. Ռ.

Պանթեոնում (չի ձգտել, կնշանակի, վստահ է եղել, որ կտիրի. ստույգ որը մեզ համար կորցնում է իր հետաքրքրքրությունը)։ Ցափից շատ կերած, անկշտում Ֆիլիպը գայլի պես առանց դադարի դեսուդեն ընկած փնտրտում էր guem devoret[1] և որսի չնչինությունը՝ մինչև ոսկորներն արդեն կրծոտված աշխատարհը, նրան հասցնում էր կատաղության։ Ոչ նա, ոչ Աննետան ոչ մի անգամ չէին փորձել կրկին հանդիպել, բայց իրենց տեսադաշտից չէին կորցրել մեկը մյուսին։ Մարկի մահից հետո, որն արձագանք էր գտել փարիզյան թերթերում, Ֆիլիպը փողոցում հանդիպեց սգազգեստ մորը. Աննետան քայլում էր ուղիղ, վիզը չթեքելով, ինչպես իտալացի դեղչկուհին, որը իր ծանր բեռը տանում է հպարտորեն բարձր պահած գլխին դրած։ Եվ հիացմունքի պոռթկումով մոտեցավ նրան...

Գրեթե ամեն բանի մասին նրանք տարբեր ձևով էին մտածում։ Քաղաքականության մեջ Վիլարը դիկտատուրաների կողմնակից էր. նրա պատկերացմամբ մարդկային զանգվածները թշնամական հոտեր էին, որոնց հարկավոր էր սանձել ու հնազանդեցնել, այնպես, ինչպես մարդը (այդ անվանն արժանի մարդը տեր է) կարողացել է անել մյուս կենդանիների նկատմամբ։ Այդ դաժան միտքը մասսաների շարժումները դասում էր բնության կույր ուժերի, ինչպես, օրինակ, համաճարակների շարքը։ Նրա և Ժուլիեն Դավիի միջև գոյություն ուներ խորը և անհաշտ հակակրանք, թեև երկուսն էլ այն չէին արտահայտում՝ Աննետայի նկատմամբ ունեցած հարգանքից մղված։

Եվ, այնուամենայնիվ, երբ Ֆիլիպն ու Աննետան մնում էին երկուսով, առանց կողմնակի մարդկանց, նրանց բաժանող անջրպետը չէր խանգարում։ Մինչև այժմ նրանց մեջ ապրում, նրանց կապում էին առաջվա մոտիկությունը, առաջվա գրկախառնությունները՝ մարմնի խորը արմատները (մարմինը նույն հոգին է)։ Նրանք միմյանց ճանաչում էին թե սիրո մեջ, և թե մարտում, գիտեին միմյանց ուժն ու թուլությունները, մեկի ուժն ու թուլությունները ինչ-որ չափով պատկանում էին մյուսին, երկուսն էլ ճաշակում էին դրանք։ Եվ մի հանգամանք էլ կար, որը գաղտնաբար մոտեցնում էր նրանց՝ երկուսն էլ գիտեին, որ դատապարտված են...

Առաջին իսկ հարցերից, որ Աննետան տվեց իր հիվանդու-

1 Թե ում խժռի (լատ.)։

թյան վերաբերյալ, Վիլարն անմիջապես արեց բոլոր հետևությունները (նա երբեք ասելիքը չէր ծամծմում)։ Նա ինքը նկարագրեց բոլոր ախտանշանները, որ զգում էր Աննետան՝ կուրծքը ծակող ցավը տարածվում է դեպի ձախ թիակը և ընդգրկում ամբողջ ձեռքը մինչև եղունգների ծայրը։ Նա նկատեց իր հիվանդի աչքերի տակի այտուցվածությունն ու կապտությունը և ձեռքերի գունատությունը։ Ծանոթ նշաններ էին։ Նա առաջին իսկ հայացքից ճանաչեց դրանք։ Դա այն կնոջ մարմինն էր, որին տիրել էր ինքը։ Ու թեև երկուսն էլ՝ և՛ Աննետան, և՛ Ֆիլիպը հիշում էին այդ, հիմա նա Աննետային նայում էր բժշկի սառը, քննող հայացքով։ Եվ հանկարծ Աննետան ևս, Ֆիլիպի նման, կողքից նայողի աչքերով տեսավ իր մարմինը և զգաց, որ այն ուրիշինն է, ոչ իրենը։

— Կնշանակի՝ կրծքհեղձո՞ւկ,— հարցրեց նա։

— Կլասիկ,— պատասխանեց Ֆիլիպը։

— Փա՜ռք աստծո, գոնե այս անգամ չենք կարող ինձ մեղադրել ռոմանտիզմի մեջ,— կատակեց Աննետան։

— Դուք միշտ ինքներդ էլ այդ չգիտակցելով, հոգու խորքում հակված եք եղել դեպի կլասիցիզմը։

Նա նայում էր, թե ինչպես է Աննետան կոճկում բլուզը։

— Դեհ, իսկ բանը շա՞տ է հեռու գնացել,— հարցրեց Աննետան։

— Հիվանդությունն արդեն սկզբնական փուլում չէ։

— Ինքս էլ գիտեմ այդ։

— Արդեն անցել է ճանապարհի բավական մեծ հատվածը։

— Իսկ դեռ որքա՞ն է մնացել։

— Նայած հանգամանքների։ Հարկավոր է քիչ քայլել։

— Բայց ես առանց այդ էլ գրեթե չեմ քայլում։

— Նույնիսկ ամենաանշարժ վիճակում դուք միշտ էլ գլխապատառ որևէ տեղ վազելու ձև կգտնեք։

— Իսկ դուք դրան խանգարելու միջոց գիտե՞ք։

— Չգիտեմ, իսկ եթե իմանայի էլ, դուցե չհայտնեի. որոշ դեղեր ավելի հաստատ են սպանում, քան ինքը հիվանդությունը։

— Մեռնել հիվանդությունի՞ց, թե բժշկի բուժումից։ Նախընտրում եմ հիվանդությունը։

Ֆիլիպը հավանություն տվեց։ Նա գիտեր, որ ինքն էլ է դատապարտված՝ նրան հյուծում էր երիկամների անբուժելի ախտը։ Բայց այդ մասին նա ոչ մեկին չէր ասում և բոլոր անգամ չէր

դաղարեցնում իր կատաղի հետապնդումը, ասես պետք է հավերժ ապրեր։ Ուստի և հակված էր չխանգարելու Աննետային, հույսը դնելով սեփական նավը վարելու նրա փորձի վրա։ Սակայն արգելք դրեց նրա հրապարակային ելույթների ու կոմիտեներում ծավալած գործունեության վրա։ Այստեղ բժշկի խորհուրդը համընկնում էր Աննետայի հասարակական գործունեության նկատմամբ ունեցած թշնամանքի հետ։ Հիանալի առիթ էր այն սահմանափակելու։ Նրա հակադեմոկրատիզմը սաստկանում էր նաև այն նողկանքից, որ զգում էր քաղաքականության մեջ խենթաբար խճճված կանանց հանդեպ։ Բայց Աննետային այնքան էլ դյուրին չէր խաբելը. բնական է, նա համառում էր։ Սակայն հիվանդությունը նրան կոչ էր անում ողջամիտ լինել։ Աննետան առողջ էր դառում և այլևս չհամաձեց։ Ստիպված էր դուրս գալ լծասարքից։ Ֆիլիպը նույնիսկ հարկ չհամարեց թաքցընել իր հրճվանքը։

— Մի շտապեք ուրախանալ,— նրան հսկահարված տվեց Աննետան։— Իմ կապարճում դեռ շատ նետեր կան։

— Բայց դուք, ամազոնուհի, ընդամենը երկու ձեռք ունեք աղեղը լարելու համար։

— Սխալվում եք։ Ես ուրիշ ձեռքեր էլ ունեմ։

Այնտեղ, հեռու-հեռվում նա դուստր ուներ՝ Ասյան։ Իսկ այստեղ իր հետ երեխան էր, իր որդու որդին։ Ինչպես և երեսուն տարի առաջ, նրա ձեռքին նորից երեխա հայտնվեց, որին հարկավոր էր մեծացնել։

Բայց ոչինչ չի կրկնվում։ Երեխան այն չէր։ Աննետան էլ նախկինը չէր։ Երբ ամբողջ երեսուն տարի որդուդ հետ գնում ես մի ճանապարհով և երբ ամեն ինչ նորից ես սկսում, սպասումի առաջվա տենդն արդեն չի լինում։ Գիտես, թե ճանապարհն ուր է տանում, այն ասես սագախաղի քարտեզ է, որի վրա նախօրոք նշված տեղում գտնում ես ջրհորը, վանդակը, ուրախությունները։ Ջառերը նետելով, իհարկե, որոշակի վտանգի ես ենթարկվում, բայց տեղանքն արդեն չի առաջացնում այն հուզմունքը, որ մենք ապրում ենք անհայտի առջև. այն արդեն շրջել ենք բոլոր ուղղություններով։ Ինքնին հասկանալի է, որ այդպես չէ։ Բնապատկերը հո փոխվել է այդ ժամանակամիջոցում՝ մի ամբողջ սերունդ է անցել։ Բացվել են նոր խանդակներ, իսկ հները լցվել են հողով։ Եվ հենց այն պատճառով, որ այդպես թվում

Ես հիշողությունները, քեզ սպառնում է մոլորվելու վտանգը։

Եվ հետո կա մի պստլիկ նոր էակ, որը թեկուզև նախկինի մասերից է ստեղծվել, այնուամենայնիվ, բոլորովին ուրիշ է, ուրիշ աշխարհ, ուրիշ ժամանակներ։ Ճշմարիտն ասած, գլուխդ կորցնում ես։ Այդ պստլիկն ունի նույն աչքերը, նույն դիմագծերը։ Նա նայում է ձեզ... Նա դեռ չի կարողանում խոսել, բայց արդեն զգում ես, գիտես, որ տուն է մտել նոր հյուր, նոր դրաշչյան։ Եվ նոր-նոր աշխարհ եկած փոքրիկ էակը, որին ինքներդ եք սովորեցրել քայլել, առաջին քայլերից վստահ կանգնում է հողին և ոչ մի արահետ դեռ չուսումնասիրած, ձեզանից ավելի լավ է ճանաչում այդ հողը։ Նա համընթաց է քայլում այսօրվա հետ։ Նրանք միաբան են։ Իսկ դուք մնացիք դռնից դուրս...

Ձեզանից է կախված շեմքն անցնելը։ Համարձակվել քայլ անել դեպի ապագա։ Եվ դա բոլորովին էլ դժվար չէ նրա համար, ով ազատվել է անցյալի բեռից։ Բայց Աննետան չէր ուզում, չէր կարող. նա չէր համաձայնվում ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը զոհաբերելու մտքի հետ։ Իսկ դրանց միջև ներդաշնակություն հաստատելու համար շատ ջանքեր են պահանջվում։ Սկզբում Աննետան մայրաբար հետևում էր փոքրիկ վանյային և ուրիշ ոչինչ։ Նա առաջիկայում վանյայից պետք է նույնքան բան սովորեր, որքան վանյան նրանից։ Եվ նրանց թարգմանի դերը կատարում էր Ժորժը։

Շատ տարօրինակ, շատ հմայիչ միություն ստեղծվեց օրիորդի և երեխայի միջև։ Հասակների տասնհինգ տարվա տարբերությունը բաժանում և միացնում էր նրանց։ Դեռևս ութը լբոլորած տղան և օրիորդը, որի քսանչորս տարին շուտով լրանալու էր, գաղտնի, բայց փոխադարձ համաձայնությամբ իրենցից մեկին թագավոր ճանաչեցին, մյուսին՝ թագավորի հպատակ... «Դու պատկանում ես ինձ։ Իմ սեփականությունն ես»։ Եվ նույնիսկ անհրաժեշտություն չկար ինչ-որ պայմաններ դնելու։ Առանց որևէ պայմանների։ «Ես քո սեփականությունն եմ։ Ես պատկանում եմ քեզ»։ Պայմանագիրը ստորագրվեց... «Դա բնավ քո կամքը չէ։ Դա իմ բավականությունն է։ Իսկ իմ բավականությունը քո՛ բավականությունն է»։

Իսկ ընդհանուր ինչ կարող է լինել փոքրիկ տղայի և մեծա-

հասակ օրիորդի միջև։ Ամեն ինչ։ Նաև այն բոլոր կապերը, որոնք ընդունակ են մերձավոր դարձնել մարդկային երկու էակների, իհարկե, բացի տղամարդուն և կնոջը միավորող կապերից։ Նրկուսն էլ գտնվում էին ջրբաժանի այն գծի վրա, որտեղ կարելի էր ջուր խմել բոլոր աղբյուրներից։ Եվ կար այնտեղ եղբայրական աղբյուր՝ մեծահասակ քույրը և նրա սիրասուն եղբայրը, նրա Բենիամինը։ Կար այնտեղ մայրական աղբյուր, երբ երեխան ի վիճակի չէ մենակ կրելու ուրախության կամ վշտի՝ իր մանկական ձեռքերի համար անչափ ծանր բեռը, և նետվում է կնոջ հուսալի գիրկը։ Նման պահերին Ժորժի էությունը թրթռում էր երջանկությունից, կարծես նրա փորում երեխա էր խայտում ու տոտիկներով աքացի տալիս։ Այնտեղ կար... այնտեղ կար նույնիսկ սիրո աղբյուր, միակ, իսկական սիրո (բոլորի համար միայն մի սեր կա), այն սիրո, որը քնած է կամ արթուն, անրջում է, շշնջում կամ լրիվ ձայնով խոսում արուների ու էգերի սրտում (եկեք վերականգնենք այդ գեղեցիկ, հանիրավի գռեհկացված խոսքերի արժանավորությունը), սեր, որը երկուսին ստիպում է վառվել միավորվելու անշեջ ցանկությամբ, միացնելու միևնույն էակի միմյանցից բաժան կեսերը։ Սրբազան սեր, որն իր գաղտնի ապաստանում ոչ մի արգելք չի ճանաչում, անցնում է տարիների տարբերության վրայով ու թեթև արմատներով կապված է մարմնի հետ, իրեն հաշիվ չի տալիս դրանում և անսահման պոռթկումով մարդկանց միավորում է ծովերի ու երկրների, տարածությունների ու տարիների միջով...

Որտեղի՞ց էր գալիս հարազատանալու այդ փոխադարձ ձգտումը, որը բավարարություն էր ստանում առանց ամոթի ու մտորումների։

Երեխայի համար՝ առաջին իսկ շաբաթներից, երբ նրա հիշողությունը սովորեց բռնել ու բաց չթողնել օրերի թելը։ Ահա արդեն երեք տարի նրան թվում էր, որ միշտ այդպես է եղել, միշտ աչքերը բարձրացնելով տեսել է իր մեծահասակ, հիանալի ընկերուհու ուրախ ժպիտը, նրա ատամների կուրացուցիչ փայլը և ամառային գիշերներին, երբ պատուհանից ներս էր խուժում ծղրիդների՝ մարգագետիններից եկող կտրուկ ճռճռոցը, երբ հեռվից լսվում էր գետակի ողորմաձայն վշվշոցը (Շվեյցարիայում էր այդ, այն օրերին, երբ նրա հայրը շտապում էր ֆլորենցիական դանակին ընդառաջ) տղան (Ժորժը նրան պահպանում էր իր անկողնում), այտն ու քիթը տաք ձեռքի ծալատեղին

հպած, լսում էր, թե ինչպես է համաչափ շնչում իր կողքին պառկած այդ մեծ էակը... երջանկություն և խաղաղություն... Ոչինչ չէր կարող սասանել այդ անսասան տպավորությունը։ Նույնիսկ գրան հաջորդած սգի ու վշտի, ամբողջ տունը համակած անհասկանալի հուզմունքի օրերին... Որովհետև այդ երկու բարեկամները, առանց մյուս երեքի, երբեք ոչ վիշտ էին ապրել, ոչ հուզմունք։ Cioia. Pace[1]։ Թե ձեզ անհայտ է նման վիճակը, բոլոր բացատրություններն անզոր են։ Դա նման է վարպետի հաջողությանը։ Հազարից մեկ անգամ բնությանը հաջողվում է իրագործել իր մտահղացումը՝ հաջողվում է ստեղծել գույգ։

Թվում է, որ այդ մոտիկության մեջ, ի տարբերություն երեխայի, օրիորդի համար գլխավոր դեր պետք է խաղար կամքը, պարզ էր, չէ՞, որ փոքրիկ բարեկամը մի մխանգամայն որոշակի օր մտել է իր կյանքը, որտեղ առաջ նա չկար։ Բայց տարօրինակ բան։ Երբ ժորժը հիմա մտածում էր այդ մասին, նրան անհեթեթ էր թվում, որ եղել է ինչ-որ կյանք, սակայն երեխան չի եղել այդ կյանքում։ Թե չէ նա ինչպես կարող էր անսխալ ճանաչել նրան, նրա առաջին իսկ հայտնվելուն պես։ Ժորժը հիշում էր. մի գեղեցիկ օր Աննետան մերկ երեխային դրեց նրա գոգը (Աստյան պետք է տեղ գնար), և աղջիկը մենակ մնաց երեխայի հետ, որի մատիկների հպումը, չգիտես ինչու, ալեկոծեց նրան. նա կռացավ փոքրիկ մարմնի, այդ անփեսուր ճուտիկի վրա, և bambino[2]-ն ժպտաց նրան։ Նույն պահին էլ ալիքը վեր բարձրացրեց նրան, ողողեց կոկորդից մինչև ծնկները, և ստինքների պտուկները լարվեցին։ Այդպես նա հայտնագործեց իր մայրությունը։ Մինչ այդ ժորժը ոչ մի անգամ չէր զգացել այդ ակնթարթային թրթիռը, ասենք, այն տեղ էլ չէր ունեցել մարզուհու աղմըկոտ, տղայական, գործունյա կյանքում։ Հիմա, երբ կայծակնասլաց հոսանքով այդ թրթիռը մտել էր նրա մեջ, նա նույնիսկ չէր ցանկանում թույլ տալ այն բանի հնարավորությունը, որ առաջ ապրել է առանց այդ երեխայի։ Նա ապրում էր նրա համար, ապրում էր սպասումի մեջ։ Մինչև այդ հանդիպումը շարժումն ու սպորտը կարծես շշմեցրել էին նրան, մինչև այդ հանդիպումը նա ամբողջ ժամանակ բոլորից ծածուկ ձևավորում, սնում, նանիկ էր ասում այդ երեխային, իր երեխային... Այդ

---

1 Ուրախություն (իտալ.)։

2 Երեխա (իտալ.)։

փոքրիկ մարմինը նոր բան էր նրա համար, և միևնույն ժամանակ նրա մեջ ամեն ինչ ծանոթ էր, մինչև ոտքի մատների պուճուրիկ եղունգները (նայելով այդ եղունգներին, Ժորժը գորովալից ծիծաղում էր), մինչև նրա բուրմունքը, որը նման էր տաք հացի բույրի։

Ժորժն, իհարկե, սիրտ չէր անում իր մտքերը բարձրաձայն արտահայտել, դրանք կիսել որևէ մեկի հետ։ Եվ բացի այդ, կար ուրիշ մեկը, նա, որն իրեն մայր էր համարում (խանդից տանջվող Ժորժը երախտապարտ էր նրան, որ նա ավելի քիչ էր մայր, քան ինքը՝ Ժորժը)։ Կար նաև Աննետան... (Աննետան, նայելով Ժորժին ու Վանյային, ժպտում էր. ով գիտե, աղշկա հոգում չէ՞ր կարդում արդյոք նրա նվիրական մտքերը։ Ժորժը քաջություն չուներ այդ պարզելու)։ Եվ հետո մնացած բոլորը՝ Սիլվիան, Ժորժի հայրը, որը ըստ սովորության ոչինչ չէր կարողանում հասկանալ... Այնպես որ մեկը չկար, որին հայտներ իր գաղտնիքը... Բայց Ժորժը պատրաստ էր երդվելու, որ փոքրիկն ամեն ինչ հասկացել է։ Դա նրանց ընդհանուր գաղտնիքն էր, միայն նրանց երկուսին պատկանող։ Եվ Ժորժը լսթալվեց, ոչ մի բանում լսթալվեց... Թերևս բացառությամբ այն բանի, որ մանչուկը այդ բոլորը համարում էր միանգամայն բնական և չէր մտածում դրանք թաքցնել։ Աննետան ստիպված էր աննկատելիորեն հետևել, որ նման վիճակը չվիրավորեր կամ չգրգռեր Ասյային։ Բայց Ասյան նոր ամուսնությանը նախորդած շաբաթներին զբաղվելով կլանված էր իր կրքերով ու տագնապներով և ժամանակ չէր գտնում տղային հետևելու։ Երբ Ասյան իրեն պատեցնող թաթառի մեջ հանկարծ հիշում էր որդուն, մորիկի պես ներխուժում էր Աննետայի մոտ, երեխային կտրում ցանկացած զբաղմունքից, լիներ դա խաղ, լիներ դա զրույց ընկերուհու հետ, տիրում էր նրան, գիրկն առնում և, հայացքը սուզելով նրա աչքերի մեջ, թե՛ հարցերի տարափ էր տեղում, որոնք հավանաբար պատասխանի կարիք չէին ղգում, և թե՛ համբույրների, դույզն ինչ չհետաքրքրվելով՝ տղային դա բավականություն պատճառո՞ւմ է արդյոք։ Հագենալով, որդուն հանգիստ էր թողնում և կրկին ընկնում իր տառապանքների ու հույսերի հետևից։

Միայն Աննետան էր տակնահան հետևում, թե երեխան ինչպես է ընդունում այդ ամենը։ Բայց նույնիսկ Աննետան կեսը չէր տեսնում։ Փոքրիկ մարդու հոգում աշխատանք էր կատարվում, որի մասին մեծերը չէին էլ կասկածում։ Վանյան (դաստիարակ-

չուհիների տրամադրության տակ երկու լեզուներով անուններ հարուստ ընտրություն կար՝ ժան, Իվան, ժաննո, Վաննո, Վանյա, Վանյուշա) շատ շուտ ըմբռնեց, որ անօգուտ ու թերևս անգամ անտեղի է դիմադրություն ցույց տալ հանկարծահաս փոթորիկին։

«Նա ինչո՞ւ է շարունակ պինդ գրկում ինձ։ Հավանորեն իրավունք ունի։ Ախր մայրիկս է...»։

Ամենախելացի քայլն էր սպասել, թե երբ կանցնի փոթորիկը, իսկ մինչ այդ ջանալ փրկել, ինչ կարելի էր։ Այդ պատճառով էլ Վանյան հնազանդորեն իր մարմինը դնում էր նրա տրամադրության տակ։ Բայց ոչ հոգու մասնիկն անգամ։ Նա սրատես դիտորդ էր։ Նկատեց, օրինակ, որ վերջին օրերը, նոր ամուսնությունից առաջ, մայրը զեղեցկացել է, սկսել ավելի շատ հեռևել իրենն։ Նրանից շատ դուրեկան հոտ էր գալիս։ Թուլացի իր քթիկով նա ղգում էր ոչ միայն մոր մաշկի բույրը, այլ նույնիսկ նրա գլխում պատռվող մազերի ընթացքը։ Հեզնախառն հետաքրքրասիրությամբ նա ականջ էր դնում մոր հոգևկան խռովքին ու արագ, հապշտապ, երգուն ձայնով ասած բառերին, որոնք զվարճացնում, հոգնեցնում էին իրեն, և ջանում էր իսկույն որսալ անզգուշորեն ասված ամեն մի խոսքը։ Նա իր յուրահատուկ մտավոր կյանքն ուներ և սեփական նկատառումները մոր երկրորդ ամուսնության վերաբերյալ։ Բայց ոչ մեկի հետ չէր կիսում իր նկատառումները։ Իսկ մեծերը խուսափում էին նրա հետ այդ թեմայի շուրջ խոսելուց։ Առավել ևս արժեր ինքնուրույն խորհել ամեն ինչի մասին։ (Մեծերը չեն հասկանում, որ եթե առանձնապես խուսափում են այս կամ այն խոսակցություններից, դրանով իսկ երեխայի ուշադրությունը գարձնում են դրանց վրա)։ Վանյայի համար իր մայրիկը անդուլ հետաքրքրության առարկա էր, ճիշտ է, շնչավոր։ Եվ հետաքրքրությունը հաղթում էր սիրուն։ Բայց այն ևս ուշադրություն է գրավում։ Ի՞նչ կա նրա ներսում։ Այն, ինչ կար ժորժի ներսում, Վանյայինն չէր հետաքրքրում։ Ո՞ւմ վիճակն էր ավելի լավ։

Առայժմ նա սպասում էր, որ զավթիչն ու չարչարողը՝ մայրիկը, հանգիստ թողնի իրեն։ Նա վաղուց արդեն նկատել էր, որ բոլոր անախորժությունները վազ թե ուշ վերջանում են։ Ասյան մեկնեց։ Վանյային առանձնապես ցավ չպատճառեց նրա մեկնումը դեպի հեռավոր երկրներ։ Բայց Ասյայի մեկնումից

հետո տղան սկսեց ավելի գնահատել նրան։ Վանյային հանկարծ թվաց, թե իր երկնակամարում մի բան պակասում է... Եվ, իհարկե, ոչ մայրական սերը։ Մայրական սեր նրա շուրջը կար սրտի ուղածի չափ։ Բայց ինքն իր մեջ նա բոլոր մայրերին դասավորել էր ըստ աստիճանների։ Ամերիկյան մայրիկը, նա, որը լքել էր նրան, և հենց այն պատճառով, որ լքել էր նրան, թերևս, ամենահարկավորն էր։ Նրա հասցեին ուղղված հանդիմանությունները (մասամբ Վանյան պատահաբար էր լսում դրանք, մասամբ էլ գլխի էր ընկնում) ներգործում էին ոչ այն ուղղությամբ, որի վրա հույս էին դնում Ասյային պարապողները։ Եթե Վանյան նույնիսկ չէր հասկանում մայրիկի արարքի շարժառիթները, եթե կարծում էր, որ նա վիրավորել է իրեն, դա ամենևին չէր նվազեցնում մոր նկատմամբ նրա հետաքրքրությունը։ Ավելի շուտ՝ հակառակը։ Նա բնավ այն թուլակազմ ու հեշտ խոցելի երեխան չէր, որը երկչոտաբար իր մեջ թաքցնում է գաղտնի վիրավորանքները, իր չարությունը կամ արգելված ցանկությունները։ Նա բավական հարուստ էր մտերմական կապերով (այնպիսի կապերով, որ ուրիշներն են նվիրում քեզ, և այնպիսի կապերով, որ ինքդ ես նվիրում ուրիշներին), ուստի զրկվելով դրանցից մեկից, չէր վշտանում. հաստատ համոզված էր, որ եթե շատ ցանկանա, կարող է վերադարձնել նրան, իսկ եթե նա չվերադառնա, ինչ կա որ, առանց նրա մի կերպ յոլա կգնա։ Այդ փոքրիկ մարդն անսասան հավատում էր իրեն և կյանքին, և եթե կարողանար բառերով արտահայտել իր մտքերը, երկու կանայք, որոնցից ծնվել էր՝ Ասյան և Աննետան, անչափ կզարմանային։ Նրա մեջ լավատեսության ոչ մի ինքնախաբեություն չկար։ Տղան, որ դեռ բոլորովին պստիկ էր, բավական բան էր տեսել ու գիտեր, որ կյանքը կազմված չէ լոկ գորովալից ու խանդակաթ ժպիտներից, բարի մայրիկներից ու բարի, ներկած, կոկիկ, մորուքավոր ծերուկ աստվածիկներից, որոնց ցուցադրում էին Սենսիոպիս փողոցում գտնվող խանութների ցուցափեղկերում։ Ամենափոքր տարիքից, կյանքի առաջին օրերից նա շատ էր քամահել գայլի մորթիներին, սկսած մորից և վերջացրած նրանցով (ասենք, այստեղ վերջ չկար), ովքեր սպանել էին իր հորը։ Թող լինեն գայլերը։ Նա ինքն էլ նրանց ոհմակից է։ Բնավ կարևոր չէ, որ կյանքը փաղաքշի քեզ։ Գլխավորն այն է, որ աշխույժ լինի։ Որքան շատ կյանք, այնքան շատ անունդ։ Իսկ մեր թմբլիկը չէր կարող դժգոհել, որ ախորժակ ու ամուր առամներ

չունի։ Եվ մարդկանցից, լավ, թե վատ (մարդիկ միշտ էլ հո անունդ են), նա գերադասում էր նրանց, ովքեր հետաքրքրություն էին ներկայացնում։ Իսկ հեռավոր ծովերից անդին անցածդնացած այդ փոթորիկ-մայրիկը շա՞տ էր հետաքրքրում երեխային։ Իր զգացմունքներից առանձնապես գլուխ չհանելով, նա շնչում էր մոր վրայից եկող ծովի հոտը (իսկ գուցե՝ տափաստանների՞ հոտը)։ Նա ի՞նչ գիտեր այդ փոթորկի մասին, բացի նրա մոլեգին շնչից։ Շատ սեր, շատ ատելություն և այդ փոթորիկները ընդգծեմ հաճարակություն (նա լսում ու մտքում պահում էր մոր բոցաշունչ խոսքերը)... Իսկ ի՞նչ բան է հաճարակությունը։ Դա այն տեղն է, ուր մե՞նք ենք ապրում։ «Ոչինչ, կապրենք, կտեսնենք։ Եվ ինքներս նրա վերաբերյալ ամեն ինչ կորոշենք»։ Իսկ առայժմ «այն տեղն է, ուր մեմ ենմ ապրում»-ի դեմ Վանյան պահում էր մթնոլորտը թնդացնող ամպրոպների մի ամբողջ պաշար։

Ասյան առանձնահատուկ մայրիկ էր, մայրիկ՝ հանդիսավոր օրերի համար։

Իսկ մյուսը՝ ժորժը, մայրիկ էր սովորական օրերի համար։ Նա ինքն այդ մասին ասաց ժորժին, ուղղակի և անկեղծորեն. «Մեկը տոների համար (տոն կամ փոթորիկ), մյուսը՝ ամեն օրվա»։ Եվ ժորժը կոկորդով մեկ քրքջաց։ Նա համաձայնեց նման դերաբաշխմանը։ Ջէ՞ որ նրան բաժին էին հասնում բոլոր օրերը։ Իսկ մնացածը թող վերցնի Ասյան։ Ժորժը հասկանում էր, թե Վանյան ինչու է Ասյային հատկացրել հենց տոնական օրերը։ Նա ինքն էլ էր ենթարկվում Ասյայի բուռն հմայքին և, հետևաբար, պարտավոր էր մեծահոգություն դրսևորել։ Այս հարցում նա տարաձայնվել էր Սիլվիայի հետ, որի ատելությունը հանդեպ Ասյայի չէր ուզում դենքը վայր դնել։ Երբ ժորժի ներկայությամբ հարձակվում էին Ասյայի վրա, նա անմիջապես հանդես էր գալիս նրան ի պաշտպանություն, և ինքն իրեն արգելում էր հանդիմանել Ասյային, ինչ էլ որ նա աներ։ Եթե պետք էր իսկապես հանդիմանել Ասյային, ապա առաջին հերթին այն բանի համար, որ նա ժորժին այդպիսի անգին նվեր էր տվել՝ իր սեփական որդուն։

«Մե՛ր երեխան։ Իմը։ Իմ հա՛յը։ Շնորհակալություն հացավաճառուհուն...»։

Նրանց համատեղ կյանքը հետզհետե կարգավորվում էր։ Սկզբում Ժորժը ամեն առավոտ վազում էր Աննետայի մոտ, բայց հարկ էր լինում, ուզեր, թե չուզեր, վերադառնալ հոր մոտ, նրա հետ նախաճաշել, այնուհետև կրկին գալիս էր Աննետայի մոտ, մինչև երեկո նստում երեխայի հետ և, հոգոց հանելով, գնում տուն՝ ընթրելու։ Ժուլիենը փոխադրվել էր Պասսի, իսկ Աննետան ապրում էր Լյուքսեմբուրգյան այգու մոտ։ Ժորժը ջոիցված էր խելագարի պես դեսուդեն վազել և ոչ մի կերպ չէր կարողանում գոհացնել որևէ մեկին։ Ժուլիենը տրտնջում էր, որ բոլորովին չի տեսնում դստերը և որ նա շարունակ ուշանում է ճաշից (նա պատկանում էր ֆրանսիական այն բուրժուաների թվին, ովքեր թափթփվածությունն չէին հանդուրժում և դրա դեմ պայքարում դառնում էին անհանդուրժող)։ Երեխան չէր ցանկանում, որ Ժորժը հեռանա իր մոտից։ Ամեն անգամ սիրահարների անվերջանալի հրաժեշտ, վերադառնալու խոստումներ և ապա նոր հրաժեշտներ։ Աննետան, որին զվարճացնում և հուզում էր դա, իր հին բարեկամին խնդրեց Ժորժին թույլ տալ իր մոտ նախաճաշելու։ Ժուլիենը համաձայնվեց. նա այնքան չէր տառապում դստեր բացակայությունից, որքան նրա մշտական ուշացումներից։ Իսկ հետո ինքն էլ հասկացավ։ Իր սովորական դանդաղամտությամբ նա սկզբում ոչ մի կերպ չէր կարողանում ըմբռնել, թե Ժորժն ինչու է ամեն բան թողել՝ տունը, աշխատանքը, այլևս չի հետաքրքրվում ոչնչով, բացի իր անհեթեթ ֆանտազիայից, սակայն, վերջապես տեսավ (Աննետայի աչքերով, որոնք այդքան սիրում էր) ամբողջ թովչանքը մայրության այն խորհրդավոր կրակի, որը վառվել էր դստեր կուսական սրտում։ Եվ ընդառաջ գնաց Ժորժի ցանկություններին։ Այնպիսի մարդ էր Ժուլիենը, որ իրեն կզոհաբերեր, աննկատելի, առանց աղմուկի։ Նա ինքն առաջարկեց, որ Աննետան Ժորժին վերցնի իր լիակատար խնամքի տակ։ Իսկ որպեսզի աղջիկը չտանջվեր խղճի խայթից, հայտարարեց, որ արդեն շատ վաղուց պատրաստվում է գիտական նպատակներով մեկնել Ամերիկա և, հավանաբար, մի ամբողջ տարի կմնա այնտեղ։ Իր համար մեծ ուրախություն կլինի այն բանի գիտակցումը, որ Ժորժն ապաստան է գտել Աննետայի մոտ։ Աննետային այնքան էլ հեշտ չէր խաբել, իսկ Ժորժը միայն սպասում էր, որ խաբեն իրեն. պատանեկության ամբողջ եսամոլությամբ նա ուրախության ճիչ արձակեց, հետո ֆիտիլեց համբույրներով ողողելու հորը, Աննետային

ու երեխային։ Երբ Աննետան մենակ մնաց Ժուլիենի հետ, նայեց նրան ու ժպտաց.

— Սիրելի Ժուլիեն... Հիմա իմ հերթն է։

Եվ համբուրեց Ժուլիենին։ Հուզված, շփոթված Ժուլիենը միայն հազաց և, հարկավոր բառերը դժվարությամբ գտնելով, ասաց.

— Վերջ ի վերջո, Ժորժը... ինքներդ էլ գիտեք... նա ձեզ է պատկանում...

Աննետան իր ափը դրեց նրա ձեռքին։

— Հասկանում եմ... Նա մերն է, ընդհանուրը... Իմ թանկագին բարեկամ։

Եվ անմիջապես սկսեցին խոսել դատարկ բաներից։ Նրանց տարիքում բառեր վատնելու հարկ չկար։ Առանց այդ էլ ամեն ինչ հայտնի էր։

Շուտով, ի մեծ ուրախություն երկու երեխաների, վերաբնակեցումը տեղի ունեցավ։ Ժորժը զբաղեցրեց Ասյայի նախկին սենյակը։ Վանյայի մահճակալը դրված էր կից փոքրիկ սենյակում, որի դուռը երբեք չէին ծածկում։ Առավոտները անկողնում պառկած, Աննետան միջնորմի միջով, որին կից դրված էր իր մահճակալի գլխամասը, լսում էր իր երկու ճնճղուկների ջլփչոցը, ծիծաղն ու քաշքշոցը և մերկ ոտքերի քստքստոցը պարկեշտ վրա, իսկ դա նշանակում էր, որ կից սենյակի բնակիչները այցելություններ են փոխանակում։ Քանի որ հիմա գործերը նրանց չէին պահում Փարիզում, որոշեցին փոխադրվել արվարձան։ Մեդոնյան անտառի փեշին մի մեկուսի, լուսավոր տնակ վարձեցին։ Տան առջև այգի կար, իսկ այգում՝ մեծ ծառեր։ Այստեղ ավելի ազատ էր։ Նույնիսկ Սիլվիայի համար մի սենյակ թողեցին, եթե նա հանկարծ ցանկանար ժամանել։ Բայց Սիլվիային այնքան էլ հեշտ չէր համոզել։ Սիլվիային իրենց մոտ հրապուրելու լավագույն միջոցն էր ձևացնել, թե նրան թանկ չեն գնահատում։ Եվ ոչ թե այն պատճառով, որ նա սիրվելու պահանջ չէր զգում, թեև ձևանում էր, թե ոչ մի սիրո չի հավատում։ Ոչ, զգում էր, բայց էլ ավելի ծարավի էր անկախության, և տարիների հետ դարձել էր կասկածամիտ, և զգույշ էր այն ամենի նկատմամբ, ինչը կարող էր սպառնալ նրա ազատությանը։

— Դեհ լավ, նստիր քո վերնակում։ Երբ ուզենաս, ցած կիջնես։ Եվ բոլորս էլ ուրախ կլինենք քեզ տեսնելու համար։ Իսկ եթե չգաս, մի կերպ կդիմանանք...

Երեքի փոքրիկ տիեզերքը ավարտուն էր, լեցուն, ինչպես ակորդը։

Աննա, կույս և մանկիկ։ Եվ, ինչպես ֆլորենցիական գահաքանդակների նկարում, սուրբ Աննետան լեռնարդո դա Վինչիի տիրամայրերի ծաղրական ու քնքուշ ժպիտով ծնկների արանքում պահում էր դեռատի կույսին, որն իր հերթին մանկիկին էր պահում իր ծնկներին։ Նա երկուսից էլ աչքը չէր կտրում, մինչդեռ նրանք սոսկ միմյանց էին տեսնում։ Աննետան չէր շտապում աղային դարձյալ ուղարկել։ Նա լռելյայն ճանաչեց այն դաստիարակչական հանճարը, որը այդ կույս-մոր մեջ հանկարծ արթնացրել էր նրա իսկ ստանձնած մայրությունը, և որպես սկիզբ քանդակագործի ճարպիկ ու ուժեղ մատների տրամադրության տակ դրեց փափուկ կավ՝ մի փոքրիկ մարմին։

Տարվա մի մասը Վանյան անցկացնում էր այգում կամ անտառում կէսամբրկ, հաճախ միայն կարճ շալվարով, ինչպես իսկական փոքրիկ գաղղնացի։ Բնազդը ժորժին հուշեց, որ դաստիարակության առաջին քայլը պետք է լինի կոփվածությունը, և, հասկանալի է, ոչ թե ստոիկյան (դա նրանց ապաստանն է, ովքեր թույլ ատամներ ունեն), այլ ուրախություն պարգևող կոփվածությունը։ Ուղիղ քառորդ դար առաջ ուրախության սկզբունքը նորից քաղաքացիության իրավունք ձեռք բերեց Արևմուտքի նոր դպրոցներում։ Ոչնչ չհասկանալով մանկավարժությունից, ժորժը ուրախության հասկացությունը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ երեխայի ազատ, անկաշկանդ խաղի արդյունքը, ավելացրեց նաև համարձակ ջանքի հասկացությունը, երբ առանց դժվարությունների հաղթահարելու լիակատար ուրախություն չես պատկերացնում։ Նա իր գայլաձագին շարունակ ասում էր.

— Եթե դու անում ես այն, ինչ կարող ես, դա անչափ քիչ է։ Հարկավոր է ամեն անգամ անել մի քիչ ավելի, քան կարող ես։ Ջեմ վիճում, բավականություն է կաթ ծծելը, հաճելի է, բայց դրան հո ամեն հորթ էլ ընդունակ է։ Ավելի լավ է, իսկապես լավ է, երբ սկսում ես ծամել քո դժվարությունները։ Եվ հավատա, դրանից ավելի քաղցր բան չկա։ Լիզի՛ր քրտինքդ... էլի՛, լլի՛։ Բայց տես չափից ավելի ջանքեր չթափես։ Հիմարն այնպես է ջանում, որ ջարդում է իր գլուխը։ Դու ոչ հորթուկ ես, ոչ էլ հիմար։ Հապա քեզ տեսնեմ։ Էլի՛ մեկ անգամ։ Էլի՛։ Բավական է։ Խնայիր ուժերդ։ Իսկ վաղն ավելի հեռու կգնանք։

Այդպիսի խաղերի հետևանքով տղայի ձեռքերը, ոտքերն ու

նրծքավանդակը դարձան բրոնզագույն։ Դա վնաս չհասցրեց մտավոր զարգացմանը։ Ժորժն այստեղ էլ կիրառեց ջանքերի մարզանքը։ Ժուլիենի դուստրը վարպետորեն տիրապետում էր բանականության կապարճին։ Նրա ճարտար մատներն այնպես ճարպկորեն էին արձակում գիտական ամենավերացական հարցերի հանգույցները, որ փոքրիկ կապիկը, իր արագաշարժ թաթիկներով կրկնելով ուսուցչուհու բոլոր շարժումները, նույնիսկ չէր էլ կասկածում, թե որքան բարդ է այդ ամենը։ Կռահումը կանխում էր միտքը, բնազդը ավելի շուտ էր լուծում խնդիրը, քան հասցնում էր հարց տալ իրեն՝ «ինչպես»։ Ճիշտ ուղին ամենակարճ գիծն է։ «Ինչպես»-ը կգա հետո, երբ կհասնես նպատակին։ Իսկ եթե տանը նստած սպասես, թե երբ կգա օրը, ամբողջ կյանքդ կանցնի։ Գնա՛ առանց կանգ առնելու։ «Ինչպես»-ն ինքը կհասնի քեզ ճանապարհին... Ժորժը ժանին էր փոխանցում իր խելքի ու ձեռքի բնազդը։ Դրանից հետո մտորելը նույնն էր, ինչ հետաքրքիր բառահանելուկ լուծելը, որով էլ զբաղվում էին ազատ ժամերին, երեկոյան։ Բայց ցերեկը՝ նայել ու կատարել։ Նայել՝ կատարելու համար։ Իսկ եթե դու առողջ ես, այդ երկու գործողությունները, ըստ էության, միևնույն բաներն են։ Ըմբռնելու համար դեռ ժամանակ կլինի։ Ըմբռնե՞լ։ Կարծես աչքն ու ձեռքը առաջին իսկ ակնթարթից արդեն ամեն ինչ չէին ըմբռնել։ Մտածելու համար խոսքերը բնավ էլ պարտադիր չեն։ Բայց երբ հասնում էր բառերի հերթը, պարզվում էր, որ Ժորժն ու Ժանը ամենևին էլ աղքատներ չեն։ Նրանց լեզուն չէր կպնում կոկորդներին։ Ահ, ինչքա՜ն էին նրանք սիրում վիճաբանել։ Եվ Աննետան, նրանց լսելով, քրքջում էր արտասվելու աստիճան։ Նույնիսկ ինչ-որ հարցի շուրջ մտորելիս, նույնիսկ վիճելիս այնպիսի տեսք էին ունենում, կարծես խաղ ու պարով գրոհի էին նետվում։

Լինելիության խնդիրները, որ նախորդ սերունդը արնաներկ տառապանքներում իմաստավորում էր իր համար, ինքնին հասկանալի է, չէին դժվարացնում նրանց ազատ քայլը։ (Ասենք, նրանք վազում էին միայն սանդալներով, առանց գուլպաների), նախ և առաջ երկուսն էլ՝ թե՛ օդիորդը, թե՛ տղան, աչքի էին ընկնում հազվագյուտ առողջությամբ։ Նրանք չգիտեին, թե ինչ է հիվանդությունը։ Սեփական փորձով չգիտեին նաև (ավելի ճիշտ՝ բավականաչափ չգիտեին, իսկ դա մեծ թերություն էր), թե ինչ է կարիքը, գոյության դաժան պայքարը։ Եթե իմանային, հավա-

Նաբաք, կնախապատրաստվեին հարձակման. Ժորժի նմանների համար կյանքը սպորտային մրցություն էր։ Այդպես անչափ լավ կլիներ։ Չէ որ մարզադաշտում սպորտային մրցությունն էլ է ճոխություն։ Չթաքցնենք, որ Ժորժի ու տղայի՝ այնպես պարզ և առողջ թվացող կյանքը, այնուամենայնիվ, ճոխ էր։ Նույնիսկ՝ գերճոխ, ոչ թե փողի, այլ աշխարհից լիովին անջրպետվելու իմաստով. դա անհատապաշտական դաստիարակություն էր և հեռու էր մնում մեծամասնությանը բաժին հասած փորձություններից։ Դրա համար էլ Աննետան աղոտ անհարմարություն էր զգում։ Այդ մասին նրանից ավելի որոշակի կարող էր արտահայտվել Սիլվիան։ Բայց Սիլվիան հազվադեպ էր արտահայտվում, որովհետև Աննետայի և նրա տնեցիների կյանքին միջամտելու անմիջական առիթ գրեթե չէր լինում։ Ասենք, Աննետան, որին կաշկանդում էին խիստ հոգնածությունը և պարզապես մենության պահանջը, թևակոխելով իր վերքի բուժման այդ առաջին շրջանը, ինքն էր Ժորժին տրամադրել կառավարման ղեկը, հիղճը մաքրելու համար նա հավաստիացնում էր իրեն, որ կմիջամտի հետո, ավելի ուշ, որ ժամանակը դեռ կորած չէր։

Եվ իսկապես որ այդպես էր։ Ժորժը ջանադրաբար զնդանի վրա կռում էր երկաթը, նախքան այն ջրդեղելը։ Փոքրիկ ժանը ամուր պողպատից կլինի։ Եվ լավորակ մետաղի պես չի ունենա ոչ մի թերություն։ Ոչ տագնապ, ոչ վախ՝ ստվերներից ու հրեշներից, որոնք ավելի հաճախ են կազմալուծում երեխայի փխրուն հոգեկան կառուցվածքը, քան մենք կարծում ենք։ Շլացուցիչ զուլալ կյանք, ուր կախարդանքները տեղ չունեն։ Չնայած թվում էր, թե հոր ողբերգական անհետացումը պետք է ցնցի Վանյային, երեխան բնավ միտք չէր անում վազքուղու վերջում վազորդին դարանակալող խավարամած նպատակի մասին։ Ժորժին դա տագնապեցնում էր ոչ ավելի։ «Հետո»-ի նկատմամբ նրանց հանգիստ վստահությունը թեթևացնում էր Աննետայի համար, նա պատրաստ էր զմայլվել նրանցով, բայց նրանց չէր հասկանում։ Որքա՜ն տառապեց ու ջանքեր գործադրեց, որպեսզի հանգեր ընդունման, որքա՜ն անհաջողություններ կրեց այդ ճանապարհին։ Իսկ նրանց մոտ ամեն բան իսկույն ստացվում էր։ Ժորժը Վանյային սովորեցրեց մահվանը նայել հենց այնպես, իբրև լիովին օրինաչափ, ոչ դժվարին ու ոչ ահավոր բնական երևույթի։ Այդ օրիորդն օժտված էր հիմնավոր ու կարգավորված խելքով, որը կարելի էր համեմատել լավ կառուցված տան հետ, ուստի առանց

դժվարության պահպանում էր հավասարակշռությունը բժշկության պարգևած գիտելիքների անողոքության, սպորտի պարգևած առույգության և անթերի մարմնի ուրախությունների միջև։ Բնականից նա օժտված էր հանգիստ ու զվարթ բնավորությամբ, կորուկ ու պայծառ մտքով, շատ էր հետաքրքրվում գոյության ունեցող ամեն ինչով և, բացի այդ, տիրապետում էր Վանյայի հետ բոլոր բնական հարցերի, կյանքի, հիվանդությունների, սեռական հարցերի շուրջ միանգամայն բնականորեն խոսելու գաղտնիքին։ Նրա հետ խոսելիս ժորժը երբեք չէր դիմում թերասածությունների, կեղծ ամոթ չէր դրսևորում և հավասարապես թույլ չէր տալիս անպարկեշտություններ ու անհամեստ խոսքեր, ամեն ինչի մասին խոսում էր այնպես, ինչպես որ դրանք կային։ Այն, ինչ կա՝ կա։ Եթե որևէ բան լավ է, հարկավոր է կարողանալ օգտվել լավից։ Եթե վատ է, հարկավոր է աշխատել վատը դարձնել լավ։ Եվ երկու դեպքում էլ պետք չէ աչքերը մի կողմ փախցնել։ Չէ որ դու տեսնում ես, իսկ տեսնելը միշտ էլ հետաքրքիր է։ Եթե նույնիսկ գործողությունը ծավալվում է քո մեջ։ Հատկապես քո մեջ։ Այդ դեպքում դու և՛ հանդիսատես ես, և՛ հանդես։

— Դիտի՛ր պիեսդ։ Եվ մի՛ վախեցա։ Դերասանները հուզվում են։ Բայց հանդիսականը հարմար նստել է օթյակում և ազատ է՝ ծափահարելու, սուլելու կամ հորանջելու։ Իսկ եթե ներկայացումը բնավ մեր ստրովը չէ, մենք, առանց քաշվելու, կասենք. «Բավակա՛ն է»։

Վանյան առանց հուզմունքի էր ապրում հասունացման հանդուգն ու միամիտ սկիզբը։ Նա ուրախ էր, որ տղա է ծնվել։ Բովանդակ աշխարհը նրան հրաշալի գյուտ էր թվում։ Ինչպիսի ճարտարապետությամբ է ստեղծված այս ամենը։ Կյանքի մեխանիզմը ենթարկվում է պարզ օրենքների։ Եվ մի՞թե կարելի է ըմբռնատանջ նման օրենքների դեմ։ Ամեն մեքենա ենթարկվում է իր օրենքներին։ Միայն հարկավոր է սովորել կառավարել մեքենան։ Իմ մարմինը, իմ ամբողջ կյանքը իմ ավտոմոբիլն է...

— Ճի՛շտ է, ժորժ։

— Իհարկե, Վանյո, լավ կառավարիր քո ավտոմոբիլը։ Եվ տես, անցորդներին տակը չգցես։

Այնուամենայնիվ, ի՜նչ զվարճալի է ապրելը։ Ի՜նչ ուրախալի է վաղ, դով առավոտյան դուրս գալ սպիտակ ճանապարհ, և քո ավտոմոբիլն էլ այնպես նոր է, այնպես փայլուն, ոչ մի փոշե-

հատիկ չկա նրա պաճուճավոր փոքրիկ անիվների վրա, նա թռչում է, ինչպես թռչունը, ենթարկվելով ձեռքի ամենաթեթև շարժմանը, իսկ կողքիդ քո ընկերուհին է, որն արդեն անցել է ճանապարհի մի մասը և նորից է անցնում այն, որպեսզի երկուսով կարողանաք էլ ավելի լիակատար հաճույք վայելել։ Իսկ ես, ես հաճույք եմ ստանում և՛ նրա տեսածից, և՛ իմ տեսածից, և՛ այն բանից, ինչ նա է տեսնում իմ աչքերով...

Ժորժին ու Վանյային թվում էր, որ իրենց կյանքը լեցուն է միայն այն ժամանակ, երբ միասին են։ Նրանցից յուրաքանչյուրը, մնալով մենակ, զգում էր, որ մի բան պակասում է իրեն։ Մի՞թե Վանյան կհասկանար անցյալը, տակավին այնպես մոտ անցյալը, որի պատուղը մենք հանդիսացել ենք՝ մեր հայրը՝ մայրը և ուրիշները, եթե նրա կողքին չլիներ Ժորժը՝ այդ անցյալի վկան։ Նա կարծես Ժորժին որպես հետախույզի ուղարկում էր առաջ՝ ճիշտ ուղի գտնելու։ Բայց ինքն էլ Ժորժի համար էր ուղիներ հետախուզում. նրա ուսերին նստած, ծնկներով սեղմելով նրա վիզը (հարազա՞տ ծնկներ), նա դեռքայինի սուր հայացքով տեղանքն էր զննում իր հլու-հնազանդ բեռնակրի գլխի վրայով. նրա հայացքն ավելի հեռավոր նպատակների էր ձգտում ու հասնում, քան Ժորժինը։ Տասնյակ անգամ, նույնիսկ այդ չկասկածելով, նա Ժորժին պարզաբանում էր նրա իսկ սեփական մտքերը։ Եվ դրա շնորհիվ Ժորժն ավելի պարզորոշ էր տեսնում ճանապարհը։ Այդպես նրանց միջև տարօրինակ հավասարություն հաստատվեց և հաճախ մեծը փոքրիկին հարցնում էր.

— Ասա, Վաննո, դու ի՞նչ ես մտածում այդ մասին։

Բայց Ժորժի օգնությունն հիրավի անգնահատելի էր լինում, երբ նա երեխայի առջև վերածնում էր նրա հոր պատկերը։ Վանյան վատ էր հիշում և ճանաչում հորը։ Մարկն անչափ տարված էր լինում իր կրքերով ու գործունեությամբ և չէր կարողանում ամբողջովին նվիրվել որդուն։ Բնական է, որ երեխան գրեթե չէր նկատում ո՛չ այդ կրքերը, ո՛չ էլ այդ գործունեությունը. ծնողների բաժանման ժամանակ նրա հիշողությունը նոր-նոր էր սկսել ազատվել մշուշից. հիշողությունների նույն փշրանքները, որ նա թոցրել էր դեսուդենից, ինչպես ճնճղուկը՝ հատիկներ, այնպես էլ ցիրուցան մնացել էին։ Իսկ հետո նա սովորեց ապրել իր՝ կրքերով համակված այդ երկու մարդկանցից անջատ կյանքով, և նրանք էլ վարվեցին նույն կերպ։ Բայց հիմա, երբ նրանց երկուսին հանկարծակի խլել էին իրենից, տղան բնազդաբար

զգում էր, որ ինքը նրանց մասնիկն է կամ նրանք են իր մասնիկը, և շատ կուզենար, որ նրանք իր մոտ լինեին։ Շա՜տ ուշ էր... Ոչինչ էլ շատ ուշ չէ, երբ կյանքն այնպիսի պահեստային ուժ ունի, ինչպիսին երևակայությունն է, որը պատրաստ է կռելու պակասը։ Ժորժը Վանյային օգնեց կռելու այդ պակասը. նա վերականգնեց մանկության առաջին օրերի պատրանքը, վերակենդանացրեց նրա հիշողությունից անհետ կորած տեսարանները, և դրանք մեծացված տեսքով ցուցադրվում էին պատկերի եռին պլանում, որտեղ հորիզոնի անավարտ ուրվագծերը թույլ էն տալիս կյանքի կոչելու և ընդունելու ցանկացած տեսիլք։ Ժորժը դեռ չէր հասցնում ավարտել իր պատմությունը, երբ տապանից դուրս թռած թռչունները, սև, ճերմակ թռչուններ, արդեն բնակվման տեղ էին գտնում Վանյայի հիշողությունների թփուտներում։ Նրանք այնտեղ նույնիսկ ձագեր էին հանում։ Եվ երբ Վանյան բարեխղճորեն կրկնում էր նույն պատմությունը, իր սեփական լրացումներն էր մացնում դրա մեջ։ Նա ընդունակ էր Ժորժին ասելու.

— Ո՛չ, այդպես չէ։ Ես քեզանից ավելի լա՛վ գիտեմ։ Չէ՞ որ այնտեղ եմ եղել։

Երկուսով դժվար չէր ստեղծել Մարկի ամենավսեմ կերպարը։ Մանավանդ Ժորժը հակված էր արձագանքելու Վանյայի գաղտնի ցանկությանը, որ ինքը լավ չի ճանաչել Մարկին։ Մարկը նրա մեջ ռոմանտիկ հետաքրքրություն էր արթնացնում, որը, ծանոթության կարճատևության հետևանքով, Ժորժը չէր հասցրել լիովին բավարարել, և հիմա, նրա ողբերգական մահվամբ ցնցված, ավելի քան երբևէ, հետաքրքրվում էր Մարկի անձնավորությամբ։ Քանի որ Աննետան ոչ մեկի հետ չէր խոսում որդու մասին, քանի որ նա մենակ էր տիրում նրան, Ժորժի երևակայությանը ոչինչ չէր խանգարում ստեղծելու ցանկացած որմնանկարը։ Աչքերի խորքում ինչ-որ տեղ այն ներկվում էր երևակայական լեգենդար երանգներով, և քիչ էր մնում ստանա սուրբ Գևորգի կերպարանքը։ Օր-սան-միքելցի պատանին, հանդիսավոր մատսույց տեսքով, չինչ հայացքով կուռծքը դեմ է տալիս ճակատագրի հարվածներին... Եվ այն, որ այս անգամ նա ընկավ մարտում, միայն ավելի էր պայծառացնում հերոսի լուսապսակը։

— Եվ ես նրա որդին եմ։ Ես կլուծեմ նրա վրեժը։

— Մենք կլուծենք նրա վրեժը։

— Չէ՞ որ, եթե Վանյան հիմա նրա որդին է, ինքը՝ Ժորժը

այրի է, նրան է պատկանում հանգուցյալի ամբյունը և նրան / պատկանում վրեժխնդրության իրավունքը...

Դեհ, իսկ մյուս կի՞նը։ Մյուս մա՞յրը... Չէ՞ որ իրենք երկուսն են, եվ, ուզես-չուզես, պետք է խոստովանես, որ նա՝ մյուսը տիրել է Մարկի լավագույն մասին, ընդ որում ամենևին էլ ոչ լեգենդար մասին (ժորժը շատ անկեղծ էր, որպեսզի գայթակղվեր իրականության նկատմամբ լեգենդի գերազանցությամբ, հատկապես այդ հարցերում)։ Բայց քանի որ խոսքը Վանյայի մասին էր, այստեղ արդեն հենց ինքը՝ ժորժն էր տիրում իրականությանը։ Ով լքում է իր տեղը, նա կորցնում է այն։ Ասյան կորցրել է իր տեղը և փառք աստծո, թվում է այնքան էլ չի շտապում այն նա պահանջել։ Նրան ամբողջովին կլանել է նոր կյանքը։ Բայց երբեմն նա ունենում էր հիշողությունների այրող նոպաներ։ Աննեաային զրում էր սիրով ու ղղջմամբ լեցուն նամակներ՝ լավայի վտակներ... Եվ մի անգամ լավան օվկիանոսից դուրս թափվեց՝ Ասյան ինքը հետևեց իր նամակին և ոչ ոքի չնախազգուշացնելով, անսպասելի հայտնվեց մեդոնյան քնակիչների մոտ։ Դա տեղի ունեցավ նրա մեկնումից տասնմեկ ամիս անց։ Բայց կրքերի ամբողջ դրամատիզմը բաժին հասավ Աննետային. նրանք երկուսով փակվեցին ու ժամերով խոսում էին։ Դրկախառնվելու առաջին իսկ պոռթկումի պահին Վանյան սառը քաղաքավարությամբ նահանջեց և այս պարագան այդ մասից կտրեց Ասյայի հետագա պոռթկումները։ Ասյան վախեցավ սեփական որդու սևեռուն հայացքից, որը ուսումնասիրում էր իրեն, մինչ ինքը խոսում էր մյուսների հետ։ Ճիշտ է, տղան սիրալիր էր, բարեհամբույր, հարգալից, նույնիսկ չափազանց հարգալից։ Բայց իրեն այնպես տարօրինակ կերպով հետևող այդ հայա՞ցքը։ Ասյան հանկարծ ցանկացավ երկու ձեռքով ծածկել սիրտը... Եվ ոչ միայն սիրտը... Նա իր արգանդում ուրիշ երեխա էր կրում. հմուտ հնարքների շնորհիվ նրա հղիությունը գրեթե աննկատելի էր, բայց մայրը կարմրում էր, երբ որդու հայացքը սահում էր նրա իրանի վրայով։ Նկատե՞լ է, արդյոք։ Ի՞նչ է մտածում։ Ասյան այնպիսի շփոթմունք ու ամոթ էր զգում, ինչպիսին երբեք չէր զգացել տղամարդու առջև։ Նա չէր համարձակվում հարցնել, թե ինչ է կատարվում այդ փոքրիկ գլխում, գուցեև երեխան ինքն էլ պարզ չգիտեր։ Բայց հանկարծ, երբ նա ամենից քիչ էր սպասում նրա հարցերին, Վանյան բացում է բերանն ու հարցնում.

— Իսկ քեզ առաջվա նման դո՞ւր է գալիս քո ամուսինը։

Բնականից ամենևին էլ ոչ ամոթխած Ասյայի շունչը մի պահ կտրվեց, նա իրեն կորցրեց և չգիտեր ինչ պատասխանի։ Իսկ Վանյան չէր հանգստանում.

— Դու նրան հայրիկից շա՞տ ես սիրում։

— Ոչ,— անկեղծորեն պատասխանեց Ասյան։

— Այդ դեպքում ինչո՞ւ ամուսնացար նրա հետ։

Այդ խոսքերը վիրջնականապես շվարեցրին Ասյային։ Նա շփոթված ասաց.

— Ես այլ կերպ չէի կարող...

Որդին չլսեց։ Ասյան հուզմունքով սպասում էր նրա դատավճռին։

— Դու բարկանո՞ւմ ես ինձ վրա։ Ասա, կնշանակի ես վատ բա՞ն եմ արել։

— Դե ոչ, ես հասկանում եմ, դու պարզապես չես կարող ապրել առանց ամուսնու։

Ասյային թվաց, թե ինքը կանգնել է ընտանիքի անչափահաս գլխավորի առջև, որը որոշել է ներողամիտ լինել։ Դա և՛ վախեցրեց, և՛ շշմեցրեց նրան։ Իր կսկիծը նա թափեց Աննետայի կրծքին։ Մեկը չկար, որին մեղադրեր։ Բոլոր տնեցիները բացառիկ սիրալիր էին նրա նկատմամբ։ Ժորժը իրեն նույնիսկ շռայլություն թույլ տվեց՝ խղճաց Ասյային։ Դա արդեն չափազանց էր։ Հիմա նա, մեկ էլ տեսար, կառաջարկի.

«Ուզում ե՞ք երեխային տանել ձեզ հետ»։

Այն աստիճան վստահ էր, որ Վանյան կմնա իր մոտ։

Վստա՞հ ես։ Շա՞տ ես վստահ։ Իսկ ես այ կվերցնեմ ու կտանեմ։

Ասյան պատրաստ էր ճանկելու Վանյային.

«Ես քեզ տանում եմ։ Դե՛հ։ Մեկնում ենք անհապաղ...»։

Իսկ եթե Վանյան հանկարծ ասի. «Ես ուզում եմ մնալ», այդ դեպքում ինքն ինչ անի։

Կամ էլ հանկարծ կառչի խոսքից.

«Հիանալի է։ Գնա՛նք»։

Ինքն ինչ է անելու նրա հետ այնտեղ, հեռվում, երբ շուտով լույս աշխարհ կգա մյուս երեխան և երբ ուրիշ ամուսին ունի։ Եվ Վանյան ի՞նչ է անելու այնտեղ, երբ նա տարիքին անհամեմատ այդպիսի լուրջ նայվածք ունի և շրթունքների այդպիսի

վճռական հպվածք։ Ոչ, թե՛ նրա և թե՛ իր համար ավելի լավ կլինի, որ նա մեռա այստեղ։

Բայց և այնպես Ասյան կարողացավ տանուլ տվածը ետ բերել, բազմաթիվ արատներ գտնելով Ժորժի կիրառած դաստիարակության եղանակների մեջ։ Առաջին իսկ րոպեից նրա սուր աչքերն ու խանդը օգնեցին նկատելու ամեն ինչ՝ և՛ այդ փոքրիկ արատնյալ բուրժուայի լիակատար մեկուսացվածությունը (արտոնություն հակառակ իմաստով, քանզի դա երեխային զրկում է այն արժեքավորից, որ տալիս է շփումը մարդկանց հետ), և՛ մյուս երեխաների հետ նրա շփման բացակայությունը, հատկապես այն երեխաների հետ, ովքեր կյանքի առաջին քայլերից ստիպված են լինում բախվելու դաժան ու առողջ իրականությանը (առո՞ղջ՝ լավ, թող որ՝ անառողջ։ Բայց պայքարը միշտ էլ առողջ է)։ Ասյան իր որդուն հաճույքով կընկղմեր այդ աշխարհը։ Նրա կապիտ հանդիմանությունները դիպան Ժորժի զգայուն թելերին։ Ասենք, Աննետայի մեջ էլ նորից վերականգնվել էին նրա սեփական գաղտնի կասկածները։ Երկու երիտասարդ կանայք կրքոտ վիճում էին։ Նրա ներկայությամբ, յուրաքանչյուրը պաշտպանում էր իր դիրքորոշումը, բայց երկուսն էլ ընկնում էին ծայրահեղությունների մեջ և անհեթեթություններ դուրս տալիս։ Եվ այդ արվում էր ոչ միայն հանուն երեխայի բարօրության։ Հոգու խորքում Ժորժն զգում էր, որ Ասյան իրավացի է, սակայն չէր ցանկանում ձեռքից բաց թողնել իր փոքրիկ ընկերոջը։ Բարեբախտաբար Ասյան գրգռվածության մեջ հասավ այնպիսի չափազանցությունների, որ Ժորժին ինքնապաշտպանության հիանալի հիմք տվեց։

Հենց այդ ժամանակ Սիլվիան որոշեց զբաղեցնել իր անհանգիստ ազատ ժամանակը, խիստ կասկածելի փոթթի կարգով դպրոց, թե գաղութ բացելով ամրություններ գոտու անապահովան երեխաների համար (ստորև կպատմենք նրա զբաղմունքի մասին)։ Ասյանը, լսելով այդ, անմիջապես որոշում կայացրեց. վեճի թունդ պահին նա հայտարարեց, որ Վանյային կտանի այնտեղ։ Ժորժը վայրացած բողոքեց։ Աննետան ժպտում էր։ Բայց Ասյան, փրփուրը բերանին պաշտպանում էր իր կարծիքը։ Վեճին վերջ դրեց երեխան, ասելով.

— Ո՛չ։

— Դա ի՞նչ «ոչ» էր,— հարցրեց մայրը։— Ո՞ր կարծիքը չեն հարցնում։

— Եվ մի էլ հարցրեք,— պատասխանեց տղան։— Ես ասացի. «Ոչ»։

Եվ նա եռանդուն տարուբերեց ղլուխը։

Ասյան արհամարհանքով նետեց.

— Փոքրիկ բուրժույ։

Բռունցքները սեղմելով, տղան ճչաց.

— Ճիշտ չէ՛։

— Վախենո՞ւմ ես փողոցային երեխաների հետ շփվելով կեղտոտվել։

— Ես կեղտոտվելուց չեմ վախենում։ Ես ուղղակի չեմ գնա։

— Ինչո՞ւ։

— Չեմ գնա և վե՛րջ։

Վանյան կտրականապես հրաժարվեց բացատրել պատճառը։ Բայց Աննետան մանչուկին քաշեց-մոտեցրեց իրեն և, կանգնեցնելով ծնկների արանքում, շշնջաց կամակորի ականջին.

— Դու չե՞ս ուզում գնալ նրա մոտ։

Նա վճռականորեն գլխով արեց։

— Դուք ի՞նչ եք այդտեղ գաղտնաբանում։

— Դա արդեն մեր գործն է։ Մենք հասկանում ենք միմյանց։

Այդ խոսակցությունից մի քանի օր առաջ Սիլվիան հայտնվեց Աննետայի մոտ։ Երջանիկ պատահականությամբ Ասյան տանը չէր։ Բայց Սիլվիան, որ միայն ժորժին ու ժանինն էր տեսել, նրանցից իմացավ Ասյայի անսպասելի ժամանման մասին։ Սիլվիան ընդունակ չէր զսպելու իր անբարյացակամությունը։ Այդ կինը, որ հաճույքով կթողներ իրեն կատր-կատր անեն հանուն նրանց, ում սիրում էր, ոչ սակաս հաճույքով կատր-կատր կաներ նրանց, ում ատում էր, և նույնիսկ սատանան ինքը գլուխ չէր հանի, թե ինչու է նա սիրում կամ ինչու է ատում։ (Հետո ինչ։ Ինքը հո գիտե՛ր)։ Իր անողորմ անբարյացակամության մեջ նա հասնում էր լիակատար խելացնորության, չէր ուզում հաշվի առնել, որ իր խոսքերը կարող են թունավորել մանչուկի հոգին, որին սիրում էր։ (Որևէ մեկին սիրել՝ նշանակում է ոչ թե միշտ և ամեն ինչում նրան բարիք ցանկանալ, այլ ամեն ինչում ցանկանալ այն բարիքը, որ ինքդ քեզ համար ես կամենում)։ Նա վանյայի ներկայությամբ չհայտնե՞ց մի քանի սրտի այն բոլոր խնդությունների մասին, որոնք քիչ էր մնում խորտակեին նրա ծնողների ընտանեկան կյանքը, իսկ ժորժը, լսած պատմությունից ալեկոծված, չմտածեց երեխային հեռացնել։ Սիլվիան, ինք-

նին հասկանալի է, այդ ամենը մատուցեց Ասլայի համար ոչ այնքան ձեռնտու ձևով... Այդ պահին վերադարձավ Աննետան, նա լսեց քրոջ վերջին բառերը, տեսավ Վանյայի գունատ, դժբախտ դեմքը, ինքն էլ գունատվեց, աչքերը վառվեցին չար կրակով, նա բռնեց Սիլվիայի ուսերից ու ցասումով նրան հրեց դեպի դուռը.

— Հնացի՛ր,

Վանյան ու ժորժը չճանաչեցին Աննետայի ձայնը, Սիլվիան ոչինչ չպատասխանեց և, մեղավոր գլուխը հակած, դուրս եկավ սենյակից, Աննետան քրոջ ետևից շրխկոցով ծածկեց դուռը, նրա ոտնգները լայնացել էին, հոնքերը կիտվել (Վանյան միայն այդ ժամանակ տեսավ, թե ինչ խիտ են տատիկի հոնքերը, քթարմատից վեր դրանք ահեղ գիծ էին կազմել), Աննետան շուրջը նայեց և որսաց Թոռան հայացքը։ Եվ նույն պահին էլ բաժանվեցին նրա խստորեն կիտված հոնքերը, շրթունքները ժպտացին, և Աննետան, թոթվելով ուսերը, ասաց.

— Ահա թե ինչ, երեխաներ, եթե ձեզ ասեմ, որ այլևս այդ մասին չմտածեք, միևնույն է, ձեզ չես արգելի այդ մասին մտածել։ Բայց ոչ ոքի մի դատապարտեք։ Դատապարտելու իրավունք մեզ չի տրված։ Ամեն ոք իր ուրախություններն ու տխրություններն ունի՝ հիմնավոր և անհիմն։ Ամեն ոք իր բեռն ունի, եվ դա նրանց գործն է և ուրիշ ոչ մեկի։ Իսկ մյուսներին արգելվում է իրենց քիթը խոթել նրանց գործերի մեջ։ Եթե մեր կողմից սիրված մարդիկ տանջվել են, սխալվել, նրանք էլ ավելի են արժանի մեր խղճահարությանն ու սիրուն։ Ուրեմն, եկեք ներողություն խնդրենք նրանցից, եթե պատահաբար իմացել ենք նրանց գաղտնիքները։

Բայց Վանյան չարությամբ պատասխանեց.

— Թող նա՛ ներողություն խնդրի։

Սակայն նա կարող էր ներողություն խնդրել թեկուզ մինչև վաղը։ Վանյան մեկ է, չէր նեղի նրան։ Նա ոխ էր պահել տատիկի քրոջ դեմ և աշխարհում ոչ մի ուժ չէր կարող նրան ստիպել գնալու իր մորը վիրավորողի մոտ։

Ասլան այնքան ժամանակ հանգիստ չտվեց Աննետային, մինչև որ Աննետան զուսպ արտահայտություններով նրան բացեց Վանյայի գաղտնիքը, նրա վճռականապես հրաժարվելու պատճառը։ Ասլան շինծու անտարբերությամբ լսեց իր մասին հայտնած անպատվաբեր կարծիքը և շարունակեց բծախնդրու-

թյամբ կպչել երեխային։ Բայց այն, որ տղան այնպես ջերմորեն պաշտպանել էր իրեն, սպեղանի էր Ասյայի տանջված սրտի համար։ Մեկնման օրը նա մրրիկի պես սլացավ Վանյայի կողքից, ասես նրան նույնիսկ չնկատելով, բայց հանկարծ շուռ եկավ, նետվեց դեպի նա և ուժգնորեն սեղմեց կրծքին.

— Իմ Մ՛արկ։ Իմ Մ՛արկ։

Վերջին ժամերն Ասյան անցկացրեց Աննետայի հետ, նրա ննջասենյակում։ Սկեսուրի ոտքերի մոտ ծնկի եկած, դառնագին լալով, դժվարությամբ զսպելով հեկեկանքը, որ դուրս էին հորդում կրծքից, նա շտապում էր զեղել իր բոլոր դաղտնիքները, բոլոր դառնությունները, բոլոր կրքերը, այն ամենը, ինչով լցված էր նրա անհագուդող հոգին, միայն թե իր բեռը փոխանցեր ուրիշի, հաղթազատի ուսերին։ Աննետան քնքշորեն շոյում էր իր խենթ դստեր մազերը, նրա վառվող ճակատը, վառվող աչքերը, վառվող քիթը, որ Ասյան, շան քթոթի պես քամսում էր սկեսրոջ քնքուշ ափին, նրա վառվող շրթունքները։ Երբ Ասյան համարձակվեր, երախտագիտության պոռթկումով կլիզեր այդ ձեռքերը։ Եվ հոգին թեթևացնելով, Ասյան հարցրեց.

— Ուրեմն, դուք դեռ կարո՞ղ եք ինձ սիրել։

Աննետան պատասխանեց.

— Չէ որ մենք պսակվել ենք։

Ասյան ծաղրանքով առարկեց.

— Դե՜-ե՜հ։ Դա դեռևս բավարար հիմք չէ։

Աննետան քրքջաց.

— Քեզ համար, իհարկե, բավարար չէ, անպիտան աղա։ Կանայք իրար գիրկ նետվեցին։

— Ի՞նչ արած, աղջիկս,— ասաց Աննետան։— Եթե դու խենթ ես, ուրեմն՝ ես նույնպես, քանի որ սիրում եմ քեզ։ Ստիպված եմ հաշտվել...

Ասյայի մեկնելուց հետո Վանյան ու Ժորժը մի քանի որ իրենց լավ չէին զգում։ Այնքան էլ չհասկանալով, թե ինչ է տեղի ունեցել, նրանք մեղոնյան օդում զգում էին սրընթաց անցած հոգեկան փոթորիկի հետքը, և նրանց խաղաղ օդը դեռ երկար ժամանակ հագեցած էր էլեկտրականությամբ։ Ժորժը շուտ չազատվեց այն տհաճ զգացողությունից, որ վիճելիս Ասյան իրեն ապտակ էր հասցրել, բայց մեկնելուց առաջ Ասյան ձեռքը բարեկամաբար մեկնել էր Ժորժին և ուղիղ նրա աչքերին նայելով, ասել՝

«Շնորհակալություն»։ Եվ հիմա ժորժը կատր-կատր էր լինում երկու հակադիր զգացմունքների միջև. նրան տանջում էր ափսոսանքը, որ չի կարող Ասյայի հետ վեճը շարունակել ու վերջնականապես հաղթել նրան, և կրքոտ կերպով ղղջում էր, որ այն ժամանակ, հրաժեշտի պահին չի ընկել նրա վիզը։ Վանյան, մնում-մնում, մեկ էլ շփում էր իր դնչիկը, որի վրա վառվում էին մայրական տենչագին շրթունքների խելահեղ համբույրները, և մտքում կրկնում իրեն ցնցած ճիչը՝ «Իմ մա՛րկ»։ Մայրիկն ինչքա՜ն է, ուրեմն, սիրել նրան՝ Մարկին, Վանյայի հորը... Համբուրելով Վանյային, նա համբուրել է Մարկին... Կնշանակի, ինքը Մա՞րկն է։ Մա՞րկը։ Այո, ինքը Մարկն է։ Կլինի Մարկ...

Եվ ջեյմ Ենախատագիտության ալիքը Վանյային հարազատեցրեց այդ մայրիկի հետ, որը նրան վստահել էր լինել իր համար գաղտնի կուռք դարձած մարդու շարունակությունը...

Մարկի մահվան առաջացրած ցնցումը Սիլվիայի վրա արտաքնապես ավելի նկատելի էր, քան Աննետայի։ Հարվածը ծայրահեղորեն վատացրեց նրա առանց այդ էլ՝ քայքայված առողջությունը, նա կտրուկ փոխեց իր ապրելակերպը։ Սիլվիան հանկարծ հակակրանք զգաց իր հոգեզավակների նկատմամբ և մի գեղեցիկ օր ասաց, որ գնում է նրանց մոտից՝ իբր ուզում է բնակություն հաստատել որևէ հեռու վայրում։ Բեռնադետան[1] պարտք համարեց համոզել նրան, բայց Սիլվիան կտրուկ պատասխանեց.

— Չէ որ փողերս քեզ եմ տվել։ Էլ ի՞նչ է հարկավոր քեզ։

Այդպիսի ապտակ ստանալով, Բեռնադետան կանաչ կտրեց։ Նա չառաջարկեց փողերը վերադարձնել, բայց հոգում մահացու վիրավորանք պահեց։ Նա կարճ պատասխանեց.

— Մեկնի՛ր։

Սիլվիան սխալվում էր, կասկածի տակ դնելով Բեռնադետայի զգացմունքները։ Բեռնադետան իրոք կապված էր նրան։ Թող որ այդ կապվածությանը պակասում էր ջերմությունը, բայց դա միակ զգացմունքն էր, որը գոնե մի քիչ խոնավացնում էր այդ ցամաք հոգու արմատները։ Ինքնասիրությունը, սակայն, հաղթանակեց։ Խոցված լինելով, այն չներեց։ Բեռնադետան

---

1 Տես՝ «Նախագուշակը», հ. 1, «Մի աշխարհի վախճանը»,— Ն. Ռ.

դուռը շրխկացնելով փակեց ու իրեն արգելեց այդուհետև մտածել անգամ Սիլվիայի մասին։

Իսկ ինչո՞վ էր սնվում Սիլվիայի չարությունը։ Այն հիրավի տարօրինակ անտարբերությամբ, որ նա կարգաց Բեռնադետայի դեմքին, երբ Բեռնադետան լսեց Մարկի մահվան մասին, եվ այդ անտարբերությունը Սիլվիային ավելի ահավոր կթվար, եթե նա իմանար նրանց միջև գոյություն ունեցած հարաբերությունների մասին։ Բայց ո՞վ կերաշխավորի, որ նա դրանց հոտը չէր առել։ Ախր Սիլվիայի ռունգները նույնիսկ ամենանուրբ հոտն էին զգում, եվ այդ ռունգները շատ բան ավելի շուտ էին իմանում, քան գլուխը...

Սիլվիան ընտրեց դյու Սեն փողոցի անկյունում՝ իր նախկին թաղամասում գտնվող վեցհարկանի հին շենքի ձեղնահարկի երեքսենյականոց բնակարանը։ Տունը հնաոճ կառուցվածքի էր, առանց ժամանակակից հարմարավետության ակնարկների։ Բարեկամներն աղմուկ բարձրացրին։ Սիլվիան ամբողջ կյանքն ապրել է լուության մեջ և հիմա, երբ առողջությունը քայքայված է, նախկին սովորություններից հրաժարվելու ժամանակը չէ։ Բայց Սիլվիան համառեց։ Հաջողվեց նրանից միայն մի զիջում կորզել։ Սիլվիան համաձայնվեց չբարձրանալ ուղղաբերձ աստիճաններով սև սանդուղքով, որն ուղիղ դեպի վեցերորդ հարկ էր տանում, այլ օգտվել շքամուտքում գտնվող վերելակից։ Վերելակով նա բարձրանում էր մինչև հինգերորդ հարկ, իսկ այնտեղից փոքրիկ դռան միջով անցնում մյուս սանդուղքը, այնպես որ ընդամենը մեկ հարկ էր հաղթահարում։ Տանտիրոջից վերելակից օգտվելու թույլտվություն ստանալն ավելի հեշտ էր, քան այդ իշամոր համաձայնությունը։ Ցուցական խիզախությամբ, նույնիսկ վերելակից օգտվելու թույլտվություն ստանալուց հետո էլ Սիլվիան համառորեն ձեղնահարկ էր բարձրանում ոտքով, «իր թեթև քայլվածքով», ինչպես ինքն էր ասում (բայց ստիպված էր խոստովանել, որ այդ թեթևությունը վաղուց էր կորսվել)։ Երբ Սիլվիային ոչ ոք չէր կարող տեսնել, նա շարունակ կանգ էր առնում, հենվում պատին, և արյունն աղմուկով զարկում էր նրա ականջներում, երբեմն էլ շունչ քաշելու համար նույնիսկ ուղղակի աստիճանին էր նստում։ Այդպես շարունակվեց ընդհուպ մինչև այն օրը, երբ ոտքերի այտուցները նախազգուշացրին Սիլվիային, որ ժամանակն է խաղն ավարտելու։ Կամա-ակամա հաշտվեց վերելակի հետ, և առաջին երկու ուղե-

վորութիւններից հետո ընդունեց in petto, որ վերնակը շատ հարմար բան է։ Բայց դգուշացավ այդ կարծիքը հայտնել մերձավորներին, իսկ մերձավորները, խնայելով նրա ինքնասիրութիւնը, ձևացնում էին, թե ոչինչ չեն նկատում։

Ոչ ոք (բացառութիւնամբ Աննետայի) չէր հասկանում մենակեցութեան այդ հանկարծական մոլութիւնը։ Բայց Սիլվիայի հետ պատահածի դեպքում խոսքը ոչ միայն պարզապես մոլութեան մասին էր։ Նրա համար կյանքը կործանվել էր ճանապարհի կեսին։ Շենքի այն մասից, որը գտնվում է քանհինդ և հիսուն տարիների միջև, միայն փլատակներ էին մնացել։ Ինչի՞ ծառայեցին նրա ծանր աշխատանքի պտուղները։ Ամենասիրելիները չօգտվեցին դրանցից։ Ինչ վերաբերում է այդ բեռնադետային՝ վերջ։ Ոչինչը ոչինչ էլ կա՛։ Սիլվիան վերադառնում էր Լեման կամ՝ դյու Մեն փողոցում գտնվող իր բնակարանը, որի դուռը բացվում էր երկար, սալարկված ընդհանուր միջանցքի վրա, ուր մի անգամ երեկոյան լսվեցին վազելազ քրոջ մոտ եկած Աննետայի շտապ ոտնաձայները[1]։

Այո, ավագ քույրն ամեն ինչ հասկացել էր։ Բայց խոսքը սրտի այնպիսի խորքերի մասին էր, որ մյուս սիրտը, հասկանալով այդ, նույնիսկ չէր ձգտում անհարկի լույս սփռել այնտեղ։ Ամեն ոք գաղտնարան ունի, ուր թաքցնում է իր խղճուկ խաղալիքները՝ հիշողութիւններն ու երազանքները։ Եվ եթե այդ գաղտնարանի դուռը բացես նույնիսկ ամենամոտ մարդու առջև, մահն անխուսափելի է. չէ որ դրանք գոյութեան գերագույն իմաստն են։ Աննետան ևս իր գաղտնարանն ուներ, միայն թե էլ ավելի խորը, ավելի թաքնվածը։ Այլապես, ինչով բացատրել որդու մահվամբ որբացած մոր անբացատրելի հանգստութիւնը։ Հենց այդ հանգստութեանն էլ վերջերս դեմ առավ վախեցած Սիլվիան, և այն կբարկացներ ու կմտահոգեր նրան, եթե կրտսեր քույրն այնպես լավ չճանաչեր անակնկալներով հարուստ այդ հոգին։ Եվ Սիլվիան նույնպես (ոչ առանց դժվարութեան) տիրապետեց Ասյայի հոգու նվիրական գաղտնիքների մասին չխելու իմաստուն գիտակցութեանը, ինչպես որ Աննետան էր լռում Սիլվիայի հոգու գաղտնիքների մասին...

Չնայած արտաքուստ թվում էր, թե Աննետան այնքան ուժեղ ցնցված չէ Մարկի մահվամբ, որքան Սիլվիան, կրտսեր քույրը

---

[1] Տես՝ «Աննետան և Սիլվիան», Ռ. Ռ.

քաջ գիտեր, որ այդպես չէ։ Բայց նրան գոհունակություն էր պատճառում առաջնությունն իրեն վերագրելը, թող որ հայտնի դասատերը խեղաթյուրելով։ Այս աշխարհից հեռացած Մարկը Սիլվիայի հոգում անհամեմատ մեծ տեղ էր գրավել, քան Սիլվիան ենթադրում էր նրա կենդանության օրոք։ Մի ամբողջ ժամանակաշրջան, եվ վերջին տողից մինչև առաջին տողը վերընթերցելով անցյալի՝ հիմա, ավա՜ղ, արդեն ավարտված գիրքը, Սիլվիան հայտնաբերում էր ավելի խոր իմաստ, քան առաջ, երբ իրենք միասին էին գրում այդ գիրքը։ Նա հաճույքով ինքն իր համար պահպանում էր այն պատրանքը, որ ինքը Մարկին ավելի մոտ է եղել, քան որևէ մեկը, նույնիսկ նրա հարազատ մայրը (Ասյայի մասին Սիլվիան խոսել էլ չէր ուզում, նա առաջվա պես նրան բարկությամբ ու արհամարհանքով մի կողմ էր վանում. «Դու, սիրելիս, մերը չես, և ես չեմ ընդունում քեզ»)։ Նա միայն Աննետային էր ճանաչում որպես մրցակցուհի։ Ասենք, որոշ իմաստով Սիլվիան իրոք որ չէր սուտ։ Նա եղել էր դեռահաս Մարկի կյանքի մի ամբողջ ժամանակաշրջանի վկան, հավատարմատարն ու մեղսակիցը, ժամանակաշրջան, որի մասին Մարկը չէր պատմել մորը։ Մարկը կիսով չափ եղել էր նրա որդին, նրա աշակերտը, նրա սանը։ (Մենք դեռ չենք պատմել այդ Lehrjahre[1]-ների մասին)։ Ընդհուպ մինչև այն խելացնոր գիշերը Անտեն ավենյուում, որին հաջորդեցին տխմար գժտության տարիները... Այդ գժտությունից օգավեց օտարուհին ու հափռեց Մարկին... Եվ նորից գրչի կատաղի շարժումը ջնջում է Ասյային։ Ջուր էին այդ երկու կանայք ձգտում մեղմել իրենց անհեթեթ խանդը, ջուր էին իրենց հարկադրում փոխադարձաբար սիրալիր լինել ու ժպտալ միմյանց. խանդը գժտեցնում էր մրցակցուհիներին, որոնք առանձնապես անհաշտ ու անդրդվելի էին դարձել ընդհանուր կորստից հետո։ Բարեբախտաբար, նրանց միջև ընկած էր Ատլանտյան օվկիանոսը։ Երբ Ասյան կտրումանցնում էր այն, եղկուան էլ խուսափում էին հանդիպումներից։

Ազատվելով իր փողից, գբաղմունքներից, գործունյա կյանքից, և, դրանց հետ միասին նաև մարդկանցից, բոլոր «օտարներից» (բացառությամբ հինգ-վեց հոգու, որոնք «օտար» չէին,

---

[1] Աշակերտական տարիներ (գերմ.)։

այլ իր՝ Սիլվիայի մասն էին), նա իր չորս կողմը ոչ մի րոպե դատարկություն չզգաց։ Ավելին, թեթևացած շունչ քաշեց։

Լինում են այնպիսի դժբախտ էակներ (և նրանք բազմաթիվ են մեր մեքենայացված հասարակության մեջ), որոնք հանգրվանի գնալու տարիքում գրկվելով իրենց նեցուկներից, կարդա՝ սովորություններից, մնկեն փուլ են գալիս խոնավացած ծեփի պես։ Բայց Սիլվիան շինված էր ֆրանսիական լավորակ, զարմանալիորեն հղկված, մեկը մյուսին ամուր հարմարեցված քարերից, ինչպես Շարտրի և Լառնի շարվածքը։ Նույնիսկ իր կառուցվածքով նա հարազատ էր այդ քարերին՝ դրանց պես հոծ, ամուր և նուրբ էր նրա «ես»-ը։ Այն «ես»-ը, որը պատկանում էր նրան, միայն նրան և միմիայն նրան։ Նեցուկների կարիք նա չէր զգում։ Եվ երբ հեռացվեցին ամբողջ քսանհինգ տարի և ավելի նրա կյանքը խճողած փայտամածները, Սիլվիան իրեն ազատ զգաց ու սկսեց վայելել աղատ օդի հաճույքը։

Իսկ օդն էլ հենց առատ էր նրա այդ աստղադիտարանում, որտեղից երևում էին տանիքները, պարապուտները, ցածրավայրերն ու բլուրները, ուր վխտում էր քաղաքի վիթխարի մրջնանոցը, իսկ դրա վերևում օձագալար բարձրանում էին ծխի երկար շիթերը։ Նախկին պայմաններում Սիլվիան նորից վերապրեց օրիորդական տարիների հմայքը։ Նա նույնիսկ ջահելացավ։

Բայց դա երկար չտևեց։ Կյանքի ուշ ամառն էր։ Վերջին արևոտ օրերից և ոչ մեկը նա չկորցրեց։

Ամենից առաջ Սիլվիան հոգ տարավ իր համար հարմարավետ բույն հյուսելու մասին։ Ոչ մի շքեղություն, բայց հարմարավետությունը պարտադիր էր։ Մեր մեծակյացը ոչ մի լավ բան չէր մերժում ո՛չ փորին, ո՛չ ձեռքերին, ո՛չ նստատեղին, ո՛չ էլ կողերին՝ հարմարավետ փափուկ անկողին, որը դյուրաթեքորեն ընդունում էր նրա ուսերն ու ազդրերը, աչքի և բոբիկ ոտքերի համար հավասարապես գայթակղիչ փափկամազ գորգ, իրանը քնքշորեն գրկող բազկաթոռ, թանկարժեք փայտից պատրաստված ամուր, պարզ, հարմարավետ ու դուրեկան կահույք, պատերին՝ վառ պաստառներ, պատուհաններին՝ ոչ մի վարագույր։ Հարևաններ չկային, ուրեմն թաքնվել պետք չէր։ Բայց եթե հարևաններ լինեին էլ, Սիլվիային դա բոլորովին չէր շփոթեցնի։

«Եթե ուզում են, թող աչքները ողողեն։ Չէ՞ որ ես իմ հայացքը ողողում եմ գեղեցիկ այգաբացով, որն ամբողջ թափով

ներխուժում է ինձ մոտ։ Ես ուզում եմ նրան տեսնել կատարելապես մերկ և թող ինքն էլ ինձ այդպիսին տեսնի»։

Նրա հայացքը բաղեի հայացքի պես ջինջ էր, իսկ աչքերը նա երբեք չէր թարթում։ Նրա սնարը ուղղված էր դեպի լույսը, ցերեկվա լույսը, լուսնի լույսը, Սիլվիան երբեք չէր հագենում լույսից։

Երեքսենյականոց փոքրիկ թափավորությունը վերջնականապես կարգի բերելուց հետո (թագավորության սմենամեծ չքեղությունը ծաղիկներն էին, նրա սահմանները պարսպապատված էին ծաղկեշղթաներով, բոլոր լուսամուտագոգերից կանաչ ընձյուղները, աստիճաններով վեր մագլցելով, տանիք էին բարձրացել), Սիլվիան որոշեց հետևել միջնադարյան բարոնների օրինակին, որոնք ճուռակների իրենց բներից ասպատակում էին շրջակա հովիտները։ Վերադարձավ գործունեության առաջվա ծարավը։ Եվ պահանջվում էր անմիջապես հագեցնել այն։ Սիլվիան հիշեց, որ մի անգամ խոսակցության ժամանակ իր ուսուցչուհի ընկերուհին արվարձանների և ամրությունների գոտու աղքատների երեխաների համար բացօթյա դպրոց կազմակերպելու միտք էր հայտնել։ Եվ Սիլվիան ընկերուհու հետ այդպիսի դպրոց հիմնադրեց պարապուտում, ամրությունների մոտ։ Թող որ դժվարությամբ էր քաշ տալիս իր ծեր ոտքերը, բայց նա կարողացավ ոտքի հանել ամբողջ թաղամասը։ Նրա սուր լեզուն, որ կարողանում էր հրամայել ու հմայել, գայթակղեցրեց և՛ իշխանություններին, և՛ ծնողներին։ Մի ակնթարթում, հացի փշրանք տեսած ճնճղուկների երամի պես, վազեցին եկան երեխաները (դպրոցում փշրանքներ կային ոչ միայն մտքի, այլև ստամոքսի համար. դրանց վրա ծախսվեց Սիլվիայի խնայողությունների կեսը)։ Մի անգամ իմանալով դեպի մսուր տանող ճանապարհը, երեխաներն այլևս չէին կարողանում մոռանալ այն։ Նրանք առավոտից մինչև ուշ գիշեր խռնվում էին այնտեղ։ Վատ հղանակից պատսպարվելու համար հարկ եղավ վարձակալել լաթավաճառների մի քանի բարաքներ։ Դրանք հին կոշիկների պես շատապ կարկատեցին։ Երեխաները հաճույքով մասնակցում էին բարաքների նորոգմանը, չնայած նրանց սնփսկան հագուստն ավելի շատ էր նորոգում պահանջում։ Երեխաների միջև սահմանեցին փոխօգնության նման մի բան՝ փոքրիկ մատրոնաների ու «մատրոնների» (պատրոններ չէին նախատեսված) հսկողության տակ։ Նրանց բարձրացրին ընտանիքի գլխավորի աստիճանի և

պարտավորեցրին հետևել իրենց ընտանիքներին՝ սրբել փոք-րիկների բիթը, տակը, կարկատել ու լցակարել շորերը։ Արհես-տանոցների պես բաներ էլ կազմակերպեցին։ Սիլվիային հա-ջողվեց հավաքագրել մի քանի կամավորների՝ հասարակական խղճալիդիմի ախտով տոգորված պատանիների ու աղջիկների (այդ ախտը բավական շուտ անցավ), մանրուքժուական մի-ջավայրի ծնունդ ծերունիների ու պառավ կանանց և պաշտոնա-թող աստիճանավորների, որոնք հետագայում միայն խանգարե-ցին, որովհետև փարիզյան չքավորության նորելուկ ձագերը նրանց ավելի խորթ էին քան ուրիշ ոսոսյի բնիկները. նրանք մինչև անդամ տարբեր լեզուներով էին խոսում, ամեն մի շփում վերածվում էր ընդհարման։ Ժամանակ առ ժամանակ, շաբաթ օրը, որը կարճեցված էր, կամ հիվանդության պատճառով տըր-ված արձակուրդի օրերին, ծնողներից ոմանք, հաճախ բանվոր-ներ, գալիս էին նրանց մոտ, հետաքրքրվում ամեն ինչով, օգ-նում վարելու տնտեսությունը և արհեստ սովորեցնում երեխա-ներին։ Բայց դրանք հազվագյուտ թռչուններ էին. աշխատավոր մարդը, իր աշխատանքը վերջացնելուց և երեխաներ ծնելուց հետո դադարում է հետաքրքրվել թե՛ մեկով և թե՛ մյուսով, նա ամեն ինչ մոռանալու պահանջ է զգում։

Փողը չէր բավականացնում, քաղցած կատուները անկշտում դուրս եկան, և ոչ աստծո, ոչ Սիլվիայի խոսքը չէին կարող հա-գեցնել դատարկ ստամոքսները։ Սիլվիան պակասեցրեց իր ուտե-լիքը, միայն թե կերակրեր իր ճուտիկներին, բայց նա չուներ Վենսեն դը Պոլի[1] առաքինությունները՝ իր շայիկը չէր հանի մերկանդամ մեկին հագցնելու համար։ Նրա կարծիքով, սուրբ Մարտիրոսի թիկնոցի կեսն էլ շատ էր։ «Հետույքիցս վերև, միևնույն է, չեմ կարիր։ Գաղիացու առողջ դատողությունը չէր հանձ-նըվում։ Սեփական արյամբ իր ճտերին կերակրող հավալուսնի և իրեն պահպանելու համար իր երեխաներին խժռող Ուգոլինոյի միջև միշտ էլ տեղ կգտնվի մոնպառնասցի բարի սամարիթու-հու համար, որը նախ կերակրում է իրեն, հետո մյուսներին... «Ծնիշդրենք նրանք ինձ լափեցին, դրանից ո՞վ է շահելու։ Այդ դեպքում ո՞վ նրանց կկերակրի վաղը։ Չլինի՞ թե աստված, որը հոգ է տանում երկնային հավքերի մասին»։ Այդ նույն աստծո

---

1 XVII դ. կրոնական հայտնի գործիչ, բարեգործ, որը կաթոլիկ եկեղեցու կողմից ենթարկվել է կանոնականացման։

հետ Սիլվիան լարված հարաբերությունների մեջ էր այն պահից ի վեր, ինչ նա սպանել կամ թույլ էր տվել, որ սպանեն նրա ձագուկին։ Սիլվիան չանում էր հեռու մնալ նրանից։ Որոշեց յոլա գնալ առանց նրա, թող նա էլ յոլա գնա առանց Սիլվիայի։ Նա այլևս ոտք չդրեց տաճար։ Նրա տաճարը հիմա դպրոցն էր, և անասնամած կինը հանդիսորեն պարծենում էր, որ ինքն իր մարմնի ավելի շատ մասն է տալիս երեխաներին, քան տեր աստվածը՝ հաղորդվելու պատրաստ մարդկանց։ «Ա՛յ թե հյուրասիրություն է, հա՛։ Ես ավելի կուշտ եմ կերակրում...»։ Բայց ինչքան էլ աշխատում էր հավասարել դրան, մեկ է, հասկանում էր, որ բավարար չափով կուշտ չի կերակրում։ Առարկություն չհանդուրժող տոնով նա իր սանների համար ողորմություն էր խնդրում բոլոր նրանցից, ում ճանաչում էր և շատ ու շատերից, ում բոլորովին չէր ճանաչում։ Նրա համար հեշտ չէր հիվանդ ոտքերով բարձրանալ ու իջնել անհարմար աստիճաններով։ Արդյունքը եղավ այն, որ թեև հունձը բավականաչափ առատ էր (նրանցից, ում ուղղված էր լինում խնդրանքը, քչերն էին համարձակվում մակարկել ողորմության այն չափերի համար, որ ահեղաբար պահանջում էր մուրացկանությունն անող քույրը), Սիլվիան ստիպված էր իրեն դատապարտել մի քանի շաբաթ անկողնում պառկելու։

Հարկավոր էր որևէ բանով լցնել ազատ ժամանակը, և Սիլվիան իր սանուհիներից ընտրեց հինգ թե վեց ամենաուշիմ աղջիկների ու սկսեց նրանց կարը անել սովորեցնել։ Առաջին քայլերը շատ հուսադրող էին. Փարիզում, չնչին բացառությամբ, բոլորը ոսկե ձեռքեր ունեն, տա աստված, որ մնացած բաներն էլ վատը չլիներ։ Բայց շատ շուտով բազմաթիվ անհարմարություններ ծագեցին։ Աղջիկները լցվում էին բնակարանը, ուր նեղվածք էր, և քանի որ Սիլվիան զամված էր անկողնում ու չէր կարող մշտապես հետևել նրանց, նրանք փայտե ներբաններով հողաթափերով քերծում էին աթոռների ոտքերը, եղունգներով պլոկում պաստառները, կահույքի վրա թողնում իրենց մատնահետքերը, կամաց-կամաց պոկոտում լուսամուտագոգերին աճած ծաղիկները, կոտրում դրանց ցողունները և, վերջ ի վերջո, մի դեղեցիկ օր Սիլվիան նկատեց, որ այդ չարաճճիները տակնուվրա են արել իր արկղերը և նույնիսկ գողացել լաքապատված զարդատուփը։ Բացի նրանից, որ զարդատուփը թանկ էր որպես հիշողություն, Սիլվիան չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ,

որ համարձակվել են գողանալ այն։ Սեփականատիրոջ վաղեմի բնազդը իր բարիքի դեմ ոչ մի ոտնձգություն թույլ չէր տալիս։ Շատ կասկածելի է, թե Սիլվիան կարող էր թևակոխել այնպիսի մի շրջան, երբ մարդն ասում է. «Վերցրու, եթե ուզում ես։ Ոչինչ չի պատկանում ինձ»։ Դրան հակառակ, Սիլվիան հայտարարում էր. «Ես տալիս եմ, որովհետև սա իմն է։ Բայց ես արգելում եմ քեզ, անիծյալ գող, թաթերդ այստեղ խոթել առանց իմ թույլտվության»։ Նա վռնդեց իր բոլոր աշակերտուհիներին։

Մինչ նա պառկած էր անկողնում, դեկորդից զրկված դպրոցը աղետի ենթարկվեց։ Գազումը ասելիք էր դարձել։ Ընտանիքի գլխավորի պաշտոնում նշանակված իգական և արական սեռի անչափահաս մատրոն-մատրոնաներից ոմանք իրենց դերն ստանձնել էին անչափ լրջորեն, կամ եթե կուզեք, դերին մոտեցել էին ամենալուրջ կողմից և այնպիսի օյիններ էին խաղացել, որոնք ծրագրով բնավ նախատեսված չէին։

— Դրանց տեսեք, ինչ մի մեծ բան է,— ուսերը թոթվեց Սիլվիան, իմանալով տեղի ունեցածի մասին։

Եթե նրա կամքը լիներ, պատանի հանցագործներին կդնքըստեր ու դրանով կսահմանափակվեր...

— Թող նման դատարկ բաներով մեզ չանհանգստացնեն։ Մ'յ թե կեղծ բարեպաշտներ են։ Չլինի՞ կարծում էին, թե մենք երեխաներ ենք դաստիարակում Հռոմի պապի երգչախմբի համար։ Թող մի փորձեն կապել գոտու իմ շնիկներին։ Անձամբ ես նրանց վարժեցնում եմ ազատության մեջ։ Հո չի կարող ամեն ինչ հարթ ընթանալ։ Ոչինչ, կարգուկանոն կհաստատենք։ Կարիք չկա այդպիսի աղմուկ բարձրացնելու։

Բայց թշնամիները շատ լավ գիտեն, թե ինչ են անում։ Բուրժուական թևերերը, որ արդեն վազուց էին խեթ-խեթ նայում անսրխիզմի այդ օջախին, տագնապ զարկեցին, հայտարարելով, որ ամբողջ Փարիզի բարոյականությունը սպառնալիքի տակ է։ Հետաքննություն սկսվեց, չարաճճիներին հարցաքննեցին, իսկ նրանք այնքան չվախեցան իրենց մեղքերի համար հատուցելուց, որքան պարծեցան, որ իրենց մասին գրում են թերթերը, և ավելի գունազարդեցին իրենց քաչագործությունները... Ապա հանդես եկավ վրդովված ծնողների և թատերապատշգամբների հետաքրքրասեր հասարակության մի հացյալ խումբը։ Երբ հիվանդ Սիլվիային կանչեցին նախաքննության, նա շան լափ թափեց քննիչի գլխին։ Պետք է ենթադրել, որ քննիչն այնքան էլ գոհ չէր։

Երբ Սիլվիային հաջողվեց առանց իրեն վնաս հասցնելու դուրս քաշել խրված փոքրիկ մագիլները, ապա ոչ այն պատճառով, որ նրան օգնեց իր իրավացիությունը, այլ այն պատճառով, որ ժամանակին նա քիչ վնաս չէր հասցրել «առաքինությանը»։ Նրա բարեկամների թվում կային դատական աշխարհի հետ կապ ունեցող մարդիկ, իսկ նրա բարեկամներին ոչ մի կերպ չէր կարելի հանդիմանել երախտամոռության մեջ (դրանում է կնոջ մեծագույն արվեստը, և Սիլվիան կատարելապես տիրապետում էր դրան)։ Նրան պատասխանատվության չենթարկեցին, բայց դպրոցը փակեցին։ Իսկ «շնիկներին» մնացին առուները, ուր նրանք կարող էին ղվարճանալ սրտերն ուզածի չափ։ Կեղտե՛ր բարոյականություն։

Այդ արկածը վերջ դրեց հանուն հասարակության բարօրության կրկին խաչակրած արշավանքների դուրս գալու Սիլվիայի ցանկությանը։ Եթե նա ավելի երիտասարդ լիներ, պարզ համառությունից, թշնամուն տհաճություն պատճառելու համար ամեն ինչ նորից կսկսեր։ Բայց երբ սեփական ձեռքերդ ու ոտքերդ պավաճանում են քեզ, այստեղ արդեն խաղալու տրամադրություն չի մնում։ Վաթերլոոյի մոտ կարե[1] շարելու համար, վատթարացույն դեպքում, գոնե հին գվարդիա է հարկավոր։ Մինչդեռ գվարդիայից միայն ղորապետն էր մնացել։ Այդ պատճառով էլ Սիլվիան ասաց իր սիրած թունդ խոսքը և հասարակությանը ցույց տվեց մեջքը, ավելի ճիշտ այն, ինչ մեջքից մի քիչ ցածր է։

Մերձավորները, նրա միակ հասարակությունը, նրա հետ էին։ Եվ դա բավականացնում էր...

Տարօրինակ բան։ Միայն հիմա, ամեն ինչ դեսուդեն շպրտելուց հետո Սիլվիան հանկարծ հայտնաբերեց, որ սկսվել է իր իսկական կյանքը... Չնայած քույրերը ոչ մի բառ չէին ասել միմյանց, ավազը ևս նույնպիսի հայտնագործություն էր արել, բայց որդուն կորցնելուց հետո նրա այդ հայտնագործությունը էլ ավելի զարմանալի էր, ավելի դաժան։

Այդ ժամանակ միջակ հոգիներին ոչինչ չի կապում կյանքի հետ, և նրանք հեռանում են։ Բայց կան նաև ուրիշ հոգիներ։ Նրանք հանկարծ լիակատար չափով զգահորում են իրենց հենց այն ժամանակ, երբ նրանց ոչ մի բան չի պահում երկրի վրա,

---

[1] *Ջորքի բառանկյուն դասավորություն։*

անգամ ամենասրբազան կապերը։ Եվ ահա նրանք վերածնվում են, թևակոխում գործունեության նոր դարաշրջան, գործունեություն, որ նրանցից ոչ ոք չէր սպասում։ Հենց այդ ժամանակ Աննեուսայի մեջ այնպիսի հզորության ներքին կյանք բորբոքվեց, որ նրա փայլը անհաղթահարելի քնքշության հետ միախառնված, կամաց-կամաց պետք է դուրս սկսվեր։ Սիլվիան, օվկիանոսի վրա փայլատակող այդպիսի փարոս չուներ, բայց նա էլ էր փոքրիկ կրակ վառել, որն առկայծում էր թանձրացող խավարում։ Կնշանակի, նա ևս չէր պատկանում այն միջակ հոգիների թվին, որոնց մասին մենք հենց նոր ասացինք, նա կարողանո՞ւմ էր դրսևորել իրեն։ «Հոգի»՝ ինչ հավակնոտ բառ է։ Սիլվիան անպայման այն կշպրտեր ձեր երեսին...

«Ես բոլորովին մերկ եմ... Ես, որ գնում եմ... Ես, որ գնալով, թողնում եմ այս բոլորը... Այս բոլորը, իսկ ի՞նչ է բոլորը։ Ինձ։ Այն ամենը, ինչ ապրում է իմ մեջ և ինչ թողել եմ իզուր... Ով կմտածեր, որ նույնիսկ չեմ իմացել, թե ինչ է եղել իմ մեջ։ Բայց մի՞թե կարելի է զուր կորցնել ժամանակը։ Հապա, շտապենք բռնել նրան, այդ դեպքում մեզ կհաջողվի մեր ծոմուված մագիլներով նրան հետներս տանել նույնիսկ պատանքի տակ։ Ուղղակի սոսկալի կլիներ, եթե գնացքը մեկներ, իսկ կառամատույցում մնար քո ունեցած ամենալավ բանը, դրամապանակը վերցրել ես, իսկ կյանքը՝ մոռացել...»։

Սակայն մեր փարիզյան «որկրամոլը» համարում էր, որ մինչև կոկորդը կշտացել է կյանքից։ Նա անկեղծորեն հավատում էր, որ ճաշակել է ամենահամեղ խորտիկները։ Եվ սեղանի մոտից վեր է կացել ծանրացած։ Նրա սիրտը խառնում էր կեբրակրի հոտից ու սիգարեթի ծխից։ Բայց ահա բացեցին պատուհանը, և թարմ օդի հետ եկավ նոր ախորժակը...

Հետաքրքրական պատմություն։ Զգեցնելով մի բանով փարատել երեկոյան անհատակ ձանձրույթը (ճիշտն ասած, շրջահայաց Սիլվիան դեռևս առաջին հորանջոցի վրա իրեն բռնելուց շատ առաջ վախենում էր այդ ձանձրույթի վրա հասնելուց), նա ռադիոընդունիչ ձեռք բերեց։ Սկզբում նա համարձակ և բախտաբերի չոմփացնելով քայլում էր գորտերի այդ ճահճում. այլաձայն կոկոցը, որ լսվում էր Հոռմից մինչև Թուլուզ, էյֆելյան աշտարակից մինչև Բրատիսլավա, զվարճալի կատակերգության նման ուրախացնում էր նրան։ Միծաղելու համար ցեխից ու ջրից կարկանդակներ շինող երեխայի պես նա խառնում էր

բղկոց ու ղկրտոց հիշեցնող այդ հնչյունները։ Խառնաշփոթությունը գոհացում էր տալիս հումորի նրա զգացումին և աղմուկի դուռ փարիզյան նրա պահանջմունքին։ «Ի՞նչ կյանք առանց աղմուկի»։ Բայց երբ Սիլվիան այդ ղովոցի օգնությամբ ինքն իրեն ապացուցեց, որ շարունակում է գոյատևել, հանկարծ հողնություն զգաց։ Մատները նյարդայնորեն, անհամբերատարորեն, ընդունիչը չանջատելով, պտտեցրին կոճակը և ռադիոն լռեց։ Սիլվիան նստել էր բազմոցին, պատուհանի մոտ, իսկ այնտեղ, պատուհանից այն կողմ իջնում էր գիշերային խավարը։ Եվ մեծն գիշերը, որը քիչ էր մնում աղմուկի դեմ նահանջեր, հայտնաբերելով, որ տեղն ազատ է, կրկին իջավ հոգու գաղտնարանները։ Իսկ հոգնած հոգին նորից զգաց ցավը, որը թաքնվել էր հալումաշ եղած մարմնում և սրտում։ Սիլվիային բռնել էին անդեն։ Նա չէր կարողանում իրեն ստիպել վեր կենալ, և գիշերը սառցե թիկնոց գցեց նրա ուսերին։ Սիլվիան գգաց, որ ինքը ողորմելի է, մերկանդամ, մահացու վիրավոր... Եվ, ինչպես ողորմության, սպասում էր վերջին հարվածին։

Եվ ողորմությունը եկավ։ Սենյակի հեռավոր մութ անկյունում, ինչ-որ տեղ նրա թիկունքում լսվեց հրաշալի երաժշտություն։ Լայն, հզոր և հանդարտ ալիքները տարածվեցին սենյակով մեկ, դանդաղ սողալով հասան խղճալիորեն ուռած ոտնաթաթերին, բարձրացան մինչև ծնկները, ազդրերը և նրա մարմինը թրթռաց, ինչպես ծառերի. կատարներն են թրթռում սյուքից, և մարմնի խորհրդավոր ձայնը հնչեց, ինչպես կոչը անտառի թավուտից։ Նվագը, տրտունջը և արբեցումը կամաց-կամաց տիրեցին ամբողջ մարմնին, ողողեցին կուրծքն ու ուսերը, և, վերջապես, զովացրին չորացած, վառվող բերանը։ Եվ ճակատը վերջին կատարն էր, որին դիպավ հեղեղը։ Երաժշտության անծայրածիր օվկիանոսը նրա գիտակցությունը հասավ ամբողջ մարմինը ողողելուց հետո միայն։ Ուրիշ մարդկանց մոտ պլուխը սրտի նախադուռն է։ Բայց Սիլվիան խրատ էր ստանում իր արմատներից՝ մարմնից։

Եվ երբ, վերջապես, հնչյունների այդ հորդացումի միջից սկսեց դուրս գալ գագաթը, Սիլվիան, ալիքներով ողողված, հանկարծ գիտակցեց, ինչպես Դանայան, որ իրեն պարուրում են ոսկեգույն ամպերը, ներս թափանցելով բոլոր ծակոտիներից։ Առաջին անգամ էր նա հայտնվում այդպիսի գրկում։ Եվ բերա-

նը կիսաբաց դմայլանքի մեջ, ձեռքերը պարզեց Սիրեցյալին։

Ինքնին հասկանալի է, որ Սիլվիան այնպես էլ երբեք չիմացավ իրեն համայած ստեղծագործության անվանումը։ Նա միայն աղոտ կռահում էր ժանրը՝ սիմֆոնիա, գործիքների հարյուրաձայն հուլքով հանդերձ։ Իսկ Սիլվիայի համար երաժշտությունը հնչեց իբրև մեկ միասնական ձայն, որը նրա էության մեջ արձագանքում էր ոչ թե մարդկային ծեծված բառերով, այլ կյանքի հեղեղը լռության պատով անջրպետող վիթխարի ծառի ճյուղերի անասելի թրթիռով։ Բայց ո՞վ էր խոսում։ Ո՞վ էր այդ արարածը։ Ինքը։

Շշմած Սիլվիայի գլխին միանգամից երկու հայտնագործություն թափվեց՝ նա ոչ միայն հայտնաբերեց մինչ այդ անհայտ ղգացողություններն աղբյուրը, այլև այն, որ այդ աղբյուրը գտնվում է հենց իր մեջ։ Քանզի նա նույնիսկ չմտածեց, որ այդ երաժշտությունը երաժիշտների ստեղծագործություն է։ Անշուշտ, երաժշտական արտահայտության և նրա սեփական էության նույնությունը, նրա սեփական արյան զարկերին ներդաշնակ զարկող հնչյունների ալիքը հրաշք էր, և այդպիսի հրաշք տեղի է ունենում ամեն մի համերգի ժամանակ, ամեն մի համերգասրահում, հոգեկան բարեբախտությամբ օժտված ամեն մի ունկնդրի համար, բայց այդ հրաշքն առավել ակնառու էր խաղաղ սենյակում, որի մերկ պատերը անդրադարձնում էին ներաշխարհների վաղուց սպասված ձայնը։ Համրության այնքա՜ն տարիներից հետո։ Ձայն, որը ոչնչով իմաց չէր տվել իր մասին... Եվ ի՞նչ էր ասում նա, ինչպե՞ս դա բառերով արտահայտել։

«Աստված իմ։ Աստված իմ։ Ես չեմ հասկանում... Բայց գիտեմ, գիտեմ, հավանորեն, որ դու ճշմարտությունն ես ասում, թափանցում ես իմ մեջ, իմ «ես»-ի ամենագաղտնի անկյունները, ուր չի նայել ոչ ոք, նույնիսկ ես, և իմ ամբողջ էությունը մի ամբողջ կյանք, ամբողջ կյանք տևած քնից արթնացած լարի պես դողում էր քո մատների տակ։ Էլի։ Էլի»։

Բոլոր հաջորդ երեկոները Սիլվիան փորձում էր ստիպել, որ ձայնը նորից խոսի։ Բայց անհաջողության մատնվեց։ Տակավին ոչ կատարյալ սարքը և նրա քմահաճ ալիքները միշտ չէ որ համաձայնվում էին արձագանքել կոչին, իսկ երբեմն էլ բոլորովին արտառոց պատասխան էին տալիս։ Սիլվիան ջանք էր թափում ընդունիչի վրա, կատաղությունից դողացող մատներով բախտա-

բերի պատեցնում կոճակը, հուսալով անլուր քաոսի մեջ, ուր հյուսիսն ու հարավը չանում էին միմյանցից բարձր բղավել, բռնել այն կախաղանական հավքը, որի ձայնը քնից արթնացրել էր իրեն։ Բայց նա շարունակ դեմ էր առնում ռեկլամային հայտարարությունների, որ դեպի երեր էր հղում Թուլուզի հայտնի ռադիոն կամ պարասրահից հաղորդվող անճաշակ ու նվաղուն ջազային երաժշտությանն։ Երբ երջանիկ պատահականությամբ Սիլվիային հաջողվում էր բռնել հավքը, սա Սիլվիայի բռան մեջ երեք-չորս փետուր թողնելով, անհետանում էր անտառում, որտեղ հանկարծ հայտնված հրեշը նրան տրորում, ճզմում էր ոտքերով։ Սիլվիան կոշկակարի պես հայհոյում էր ու մոնչացող գազանին կրկին գցում լռության անդունդը։ Բայց մոնչացող ցուլերի բերանը փակելու ուրախությունը (իսկ դա իսկապես ուրախություն էր) չէր հատուցում հավքի կորուստը։ Մի քանի շաբաթվա համառ որոնումներից հետո մեր արգոնավորդուհին հասկացավ, որ Կոլիդոյին սիրելու ամենահիշատ միջոցը ոչ թե սպասելն է, թե նա երբ կգա քեզ մոտ, այլ նրան նվաճելը manu militari[1], սեփական ճկուն և տիրական ձեռքով։

Կյանքի վեցերորդ տասնամյակում նա սովորեց դաշնամուր նվագել։ Բնավորությամբ Սիլվիան ամեն ինչում, առանձնապես հաճույքներում, պատսիվության հակված չէր։ Նվ եթե նա ընտրել էր երաժշտությունը, ուրեմն երաժշտությունն էլ թող ակտիվ լինի։ Նրաժշտական պարապմունքների մեջ նա ներդրեց իր սովորական եռանդը։

Սիլվիան ոչ ոքի ոչինչ չասաց։ Բայց մի գեղեցիկ օր, վեց հարկ հաղթահարելով, Աննետան զարմանքից չռեց աչքերը, սենյակի անկյունում դաշնամուրը տեսնելով։ Կյանքով իմաստնացած ավագ քույրը զգուշացավ կատակներով կրոսեր քրոջը վիրավորելուց, սակայն չկարողացավ թաքցնել զարմանքը։ Այդ պատճառով էլ Սիլվիան որոշեց խոսել առաջինը։

— Այո, պատկերացրու, զբաղվում եմ դրանով։ Եփած հավի ծիծաղը կգա։ Դե, ծիծաղիր, խնդրեմ։ Բայց իմ տարիքում հաշվի չեն առնում այն, ինչը ծիծաղելի է։ Այլ անում են այն, ինչը բավականություն է պատճառում։

— Դու այդպես ես արել ցանկացած տարիքում, անուշիկս,— ասաց Աննետան,— և ես ամենևին չեմ պատրաստվում քեզ ծաղր

---

1 Զինված ձեռքով (լատ.)։

րել հիմա։ Ես, իհարկե, ծիծաղում եմ, բայց ծիծաղում եմ ուրախությունից, որ այս խաղալիքը քեզ ուրախություն է պատճառում։

Սիլվիայի դեմքը պայծառացավ.

— Խելագարները միշտ էլ համաձայնության կգան։

— Կողք-կողքի ապրելով վարակվում ենք մեկս մյուսից։

— Երևում է, սեփական խենթություններս քիչ են եղել, որ քո խենթություններն էլ եմ ճանկել։

— Մի վշտանա,— պատասխանեց Աննետան,— իմը ինձ հերիք է։

Զգույշ արտահայտություններով Աննետան առաջարկեց դաշնամուրի դասեր տալ քրոջը։ Սիլվիան համաձայնվեց լսել լոկ առաջին ցուցումները, բայց քրոջը թույլ չտվեց թափանցել իր տարածքի խորքերը։ Իր սովորական արթուն փափկանկատությամբ Սիլվիան իրեն շատ լավ հաշիվ էր տալիս սեփական տգիտության մեջ և ուզում էր հաճույքի համար սայթաքել առանց կողմնակի, թեկուզև (և առաջին հերթին) ամենաբարեկամական աչքի։ Ուստի նախընտրեց անհրաժեշտ օգնության համար դիմել անծանոթ և վճարովի խորհրդատուների։

Նրա երաժշտական գիտելիքները սահմանափակվում էին սոլֆեջիոյի մակերեսային իմացությամբ. երիտասարդ ժամանակ նա այն ուսումնասիրել էր համամատչելի դասընթացներում, Գալեն-Պարի-Շևե սիստեմով։ Պարապմունքներն անց էին կացվում անկանոն. ձեղնաբնակ երիտասարդ կատուն այն ժամանակները գերադասում էր իր գիշերները լցնել այլ երաժշտությամբ։ Իսկ ինչ վերաբերում է այն երգերին, որ երգում են փողոցներում ու արհեստանոցներում, Փարիզի իսկական դուստրը չի զգում նոտաների կարիքը, որպեսզի դրանք բերանացի անի։ Սիլվիան սուր ականջ և ղիլ ձայն ունեը՝ ամեն ինչում ոտքից գլուխ այծամարդ էր։ Ընդհուպ մինչև ստորին բարակ շրթունքը (ատամներով թելը կտրելիս նա ֆագոտի ծայրոցի նման խողովակաձև դուրս էր ցցում այն) և ընդհուպ մինչև շվիի ձայնի պես մի քիչ ծվծվան ձայների երանգը։ Դրան ավելացրած անսխալական հիշողությունը։ Սիլվիան ցանկացած մեղեդի իսկույն ըմբռնում էր։ Եվ քսան տարի անց կարող էր պահած տեղից դուրս հանել դրանք, ինչպես բրդյա գոլքը սանդերքի ատամների միջից։ Նրա լսողությունը Աննետան էր զարգացրել դեռևս վաղեմի երջանիկ օրերին, բուրգունդյան իրենց տանը, երբ ավագ քույ-

րը երաժշտությունը մատները սահեցնում էր ստեղնաշարի վրայով։ Եվ չնայած Սիլվիան այն ժամանակ ծիծաղում էր այդ երաժշտության վրա, դրանք անարգել մտնում էին նրա աղավնաբույնը։ Թող որ նա չէր հասկանում, բայց դրա փոխարեն ընդունում էր. Սիլվիայի մոտ առհասարակ ոչինչ զուր չէր կորչում՝ ոչ անուրջները, ոչ էլ ժպտավեննների կատրները։ Նա դրանք խնամքով դարսում էր ու թաքցնում։ «Ոչ մի բանի պետք չե՞ն, ասում ես։ Ինչ իմանաս»։ Միշտ էլ կարող է այնպիսի պահ վրա հասնել, երբ դրանք պետք կգան։ Ավելի ուշ, ծաղկման շրջանում, Սիլվիան իր տանը համերգներ էր կազմակերպում։ Ինքնին հասկանալի է. որ նվագում էին ատոնալիստների[1] վերջին գյուտը հանդիսացող ամենամոդայիկ աննշդաշնակ ստեղծագործությունները։ Սիլվիան ոչինչ չէր հասկանում և հոգու խորքում ծիծաղում էր, որ այդ հաճելի տոհանները այնպես եռանդով ջանում էին պատռել ուկնդիրների թմբկաթաղանթը։ Բայց զարմանալի բնազդի շնորհիվ կազմակերպված աղմուկը չէր ձանձրացնում Սիլվիային, նրան չէր ողողում գլխովին. նա լողում էր հնչյունների մեջ, ինչպես կույր ձուկը, որը սիրով տրվում է հոսանքին ու պոչով հարվածում գիշերային ալիքին։ Հնչյունների աշխարհը Սիլվիայի իսկական տարերքն էր։ Եվ երբ հարմար առիթ էր ներկայանում, Սիլվիան այդ աշխարհում շարժվում էր փակ աչքերով ու երբեք չէր գայթում։

Ի սեր աստծո, չկարծեք, թե նա լսում էր։ Նա լսում էր միայն ինքն իրեն։ Երաժշտությունը աշխուժացնում էր նրան, բարձրացնում տրամադրությունը. Սիլվիան ավելի գործունյա էր դառնում։ Թմբուկների ռիթմիկ աննշդաշնակության ու շեփորների ոռնոցի տակ հնագանդորեն քայլում են չէ՞, դեպի սուտյդ մահ։ Բայց երաժշտության տակ Սիլվիայի ոչ թե ոտքերն էին սկսում շարժվել, այլ ուղեղը։ Նրա միտքը երբեք այնքան «թեթևասահ», դիպուկ, գործնական ու արագաշարժ չէր լինում, ինչպես այն ժամանակ, երբ նա երաժշտություն էր լսում (չէր լսում)։ Սիլվիան նույնիսկ կարողանում էր Բեթհովենի սիմֆոնիան լսելու ժամանակ մտքում ամփոփել ամսական ծախսերի հաշիվը... Օ՜, սիրելի մարդիկ, ես, տեսնում եմ, թե դուք ինչպես եք ձեր դեմքը արհամարհանքով ծռմռում։ Ձեր բարձունքներից Սիլվիային շատ մի խղճացեք նրա երաժշտական ողորմելիության համար։

---

[1] Անատոնայնության հետևորդներ։

Նա երաժշտության ավելի լավ կիրառություն էր գտնում, քան ձեր եղբայրակիցներից շատերը, ովքեր քաջ ուսումնասիրել են տեսությունը, բայց նվագախմբի հնչյունները նրանց համար մնում են իբրև չոր մաթեմատիկա։ Սիլվիան նույնիսկ չէր կասկածում, որ երաժշտությունը ֆերմենտի նման թափանցում է նրա ամեն մի եղակի մեջ և դառնում արյան բաղադրիչ մասը. երաժշտությունը վերափոխվում էր եռանդի, իսկ դա ալքիմիայի հրաշքներից ամենափոքրը չէ։ Անիրազեկ մարդկանցից շատերը, ում այնպես քամահրում են մասնագետները, կարողանում են անգիտակցորեն արարել այդ հրաշքը, իսկ ահա որոշ մասնագետների համար դա, թերևս, ուժից վեր բան է։

Բայց մինչև վերջերս Սիլվիան ժամանակ չէր ունենում մտածելու իր գործունեության ակունքների մասին. նա պարզապես դրծում էր, պարզապես առաջ վազում։ Իսկ հիմա սոփիպված էր նստել գետակի մոտ ու լսել, թե հիմա նա ի՛նչ է ասում իրեն, ի՛նչ էր ասում մի ժամանակ աղջնակ Սիլվիային, որին ոչ մի կերպ չէր հաջողվում լսել նրա ձայնը, որովհետև նրա հետ միաժամանակ ինքն էլ էր խոսում։

Սիլվիան լռեց... Լռելը գիտություն է (կամ եթե կուզեք՝ արվեստ), որը նախկինում անմատչելի էր Սիլվիային։ Հիմա նա տիրապետում էր այդ գիտելիքներին։ Հոյակա՜պ հայտնագործություն։ Լռություն... Ամենաբնակեցվածը բոլոր ներդաշնակությունները... Մեր ցանկությունների բոլոր պատուղներով լցված հասուն արգանդ... Սիլվիան թուխսի պես սնուցում էր իր անուրջները... Հետո, հետո չտեսնող մատները ստեղնաշարին հպելով, սովորեց լույս աշխարհ դուրս բերել ռիթմիկ տատանումներ՝ ապագա ստեղծագործությունների տակավին նախնական ուրվագծերը։ Սանդուղքով վեր էր բարձրանում ներդաշնակության թիկնոցո՛վ ծածկված վայելչակազմ կամ ծանրաբարո ստվերապատկերների շարանը։ Ոմանք ենթարկվում էին փոխադարձաբար միմյանց ձգտելու օրենքին, ոմանք էլ ընդհարման մեջ էին մտնում։ Բայց այդ բոլորը խաղարկվում էր ոչ բեմի վրա, կողմնակի աչքերի առջև. թե՛ մեկը և թե՛ մյուսը դրոշմվում էին էկրանի հակառակ երեսին, ինչպես մարդկային հոգու սրբյակներում։ Խաղում ես ինքդ քեզ։ Մոլորված թափառում ես այդ թավուտներում։

Եվ հարկավոր է գտնել ճանապարհը։

Անհամբեր Սիլվիան որտեղից էլ համբերություն էր գտնում

երաժշտական գրագիտությանը հասու լինելու։ Նա հաղթահարելից ինքն իրեն, սկսեց դասեր վերցնել երաժշտական խանութի խորքում գտնվող փոքրիկ սենյակում։ Եվ երբ նեղ փողոցով դղրդյունով ավտոբուս էր սլանում, դաշնամուրները սրտաճմլիկ գվվոցով պատասխանում էին ավտոբուսին։ Իսկ ձեղնահարկի իր բնակարանում Սիլվիան ժամերով նստում էր գործիքի մոտ և մեկ առ մեկ թերթում հարևան հնագրավաճառի մոտ պատահաբար գտնված դաշնամուր նվագելու հին ինքնուսույցները։ Այդ համառ կինը զուսպ կատաղությամբ իր տասը մատները լծել էր գամմանեղի կառքին, որն ամբողջ ատեղնաշարի վրայով վեր ու վար էր գլորվում։ Եվ մի քանի շաբաթվա ընթացքում բթամատը վարժելու հարցը նրա համար դարձավ «to be or not to be»[1]։ Բայց Սիլվիայի նմանների համար պատասխանը կասկած չէր հարուցում։ Թող ոչ նրա ձեռքերը նույնիսկ չէին հնազանդվում կամքին։ Իսկական փարիզուհու ճկուն, համբերատար, ճարպար ձեռքերը, որ վարժվել էին կյանքի բոլոր խաղերում, հագուստների, կար անելու և սիրո մեջ... Տարիները չէին կարողացել հաղթել նրանց։ Եվ դժվարությունները նույնիսկ հաճույք էին նրանց համար։ Սակայն մեզ թույլ տանք կասկածել, որ Մեն փողոցի տան մնացած կենվորները հավասարապես զգում էին այդ հաճույքը։ Բայց դա բոլորից քիչ էր մխրճնում Սիլվիային։

Նա իմացավ նաև համերգասրահների ճամփան։ Նստում էր ամենաէժան տեղերում։ Ամենից առաջ ողջամտության նկատառումներով՝ փողը չէր բավականացնում։ Եվ բացի այդ, նաև ելնելով իր հակումներից. նա իրեն լավ էր զգում միայն երիտասարդության և նրանց միջավայրում, ովքեր արվեստից հաճույք ստանալու համար դիմում են զոհաբերությունների։ Միայն նրանք են իսկական վայելք ապրում։ Նրանք, ի տարբերություն օթյակներում մշտապես տեղ զրավող գերհագեցած մարդկանց, չեն կարծում, թե բավական է լեզվի ծայրը հպել երաժշտության օվկիանոսին կամ մատը զզվանքով մտցնել այդ օվկիանոսի մեջ։ Ոչ, իսկական երաժշտասերները նետվում են խորխորատը, առանց ոտնգները փակելու սուզվում մինչև հատակը, ենթարկվելով խեղդվելու վտանգին։ Եվ երբ մակերևույթ են ելնում, նրանց

---

[1] «Լինել, թե չլինել» (անգլ.).— Համլետի մենախոսության առաջին բառերը։

աչքերը դուրս են պրծնում կապիճներից։ Սիլվիայի աչքերն էլ էին դուրս պրծնում կապիճներից, երբ նա լսում էր որոշ հատվածներ «Ցաուստի դատապարտումից» կամ բեթհովենյան սիմֆոնիաների նվրափակիչ մասը։ Վերջին ակորդների հետ նա սկսում էր ոտքերով թխկթխկացնել։ Կողքին նստածները ծիծաղելով շուռ էին գալիս ու նայում տիրական, հուզմունքից աղճատված դեմքով այդ կնոջը, որը, աղմուկով օդը ռունգներից արտաշնչելով, անհամբերությամբ ոտքը խփում էր հատակին և, թվում է, շուրջը ոչինչ չէր նկատում։ Նվագախումբն ու երգչախումբը միայն նրա համար էին ջանում։ Սրահում նստած մյուս բոլորը գոյություն չունեին։ Նրա համար ոչինչ չարժեր բղավել դիրիժորին... «Կրկնի՛ր»։ Չէ որ այդ ամենն իրենն է, նշանակում է ինքն իրավունք ունի կարգադրելու... Իրենն են ցասման այդ հեղեղները, այդ սլացքները, անձկությունը, ցանկասիրությունը։ Իրե՛նը։ Իրե՛նը։

«Կրկնի՛ր»։

Մի անգամ Սիլվիան այդպես էլ բղավեց, ամբողջ ձայնով, և հրաշալաբար ձեռքը թափ տվեց։ Շուրջը ծիծաղ լսվեց։ Մեկը ծափահարեց նրան։ Սիլվիան ահեղ հայացքով չափեց կարգերը։ Հետո, անուրջներից սթափվելով, աչքով արեց հարևաններին, և նրանք հասկանալով, ի պատասխան ժպտացին նրան։ Ախր հոգու խորքում նրանց նույն զգացմունքներն էին ալեկոծել։ Նրանք բոլորն էլ միևնույն ընտանիքի անդամներն էին։ Ո՞ւմ ընտանիքի։ Նրա, ով խոսում էր նրանց փոխարեն, և կարևոր չէ՝ Բերլիոզ էր կոչվում, Բեթհովեն, թե՞ Վագներ, անունը ոչինչ չէր փոխում։ Կարևորն այն է, որ դա միասնական ընտանիք էր։ Երբ նրանք բղավում էին «Բրավո», այդ իրենք իրենց էին բղավում։ Եվ Սիլվիան նրանց կորիֆեյն էր։

Փոքրիկ դրախտի այցելուները այժմ արդեն ճանաչում էին Սիլվիային, նրա կյանքի պատմությունը շրջել էր վերնասրահի բոլոր կարգերը։ Երբ նա, ոտքով անվճռականորեն շոշափելով չափազանց լայն աստիճանները, իջնում էր սանդուղքով, նրան անպայման օգնության էին նետվում երիտասարդ աղջիկներ կամ շատ քաղաքավարի, շատ նրբանկատ, շատ հուզված մի պատանի, և հարգալից բռնում նրա արմունկը։ Մենօրիկների աշխարհում, պարտերում գոռոզաբար բազմած այդ «բովանդակ Փարիզում» արդեն մոռացված նրա փառքի ժամը տակավին իր ֆոսֆորային փայլն էր արձակում համերգասրահի կամարների

*ամակ պատասպարված փոքրիկ աշխարհի մշուշի մեջ։ Այդ երիտասարդության երևակայության մեջ նա դերձակուհիների սիրախաղուհի, նրբաճաշակ տոնախմբություններ կախարդուհի, չառամյալ թագուհի Սավսկայա էր. նրա սոսկ անունը՝ Սիլվիա, հիշողության մեջ վերակենդանացնում էր հեքիաթային տեսարաններ՝ վառտոյի ոդով... Նրանք շրջապատում էին Սիլվիային, ինչպես փոքրիկ արքունիք, որը հետևում է սանդուղքով, պատրաստելի հեռավորության վրա ոչ միայն թագուհուց, այլև նրա ընտրյալից, որին քախտ էր վիճակվել բռնել թագուհու ոչ թե փեշատուտը, այլ ձեռքը։ Սիլվիան իր հպատակների հետ խստորեն էր վարվում, ում ասես կշփոթեցներ այն տառը հայացքը, որով նա պատասխանում էր սիրալիրությունների, իսկ սանդուղքով ցած իջնելուց հետո ձեռքի վճռական ու կտրուկ շարժումով իրենից հեռացնում էր ուղեկցողներին։ Մեր Սիլվիան, փառք աստծո, հենակների կարիք դեռ չէր զգում։ Եվ, բացի այդ, նա տանել չէր կարող, որ համերգից դուրս գալիս իրեն խանգարեին կենսագրանալ։ Բայց երբեմն, շքախմբից դուրխան ազատելով, նա բարեհոգաբար անդրադարձ էր այդ պատանիների, այդ երիտասարդության վրա, որի հետ հենց նոր այնպես դաժանորեն էր վարվել։

Տուն էր վերադառնում մենակ։ Եվ չտաքացված սենյակում, անդամ գլխարկը չհանած, նստում էր գործիքի մոտ ու ջանում մամուռի մեջ շոշափելով գտնել այն հնտքը, որ թողել էին հենց նոր իր սրտի միջով անցած մեղեդու գեղեցիկ մերկ ոսքերը։ Հաճախ դա հաջողվում էր նրան, ճիշտ է, իր ձևով, ճիշտ գիծը և իսկական իմաստն աղավաղելու գնով, բայց դրա փոխարեն բավարարություն էր տալիս սեփական ղգացմունքներին։ Վերջ ի վերջո, նկարիչների պատանի տիրոպալ Ռաֆայելը մի՞թե այդ ձևս չի աղավաղել անտիկ նմուշները, պատճենահանելով ըղբանք։ Այն, ինչ շատ ես սիրում, դառնում է քոնը, քո սեռնդը։ Հարգանքի մեջ չափից ավելի ջանք մի թափիր։ Հարգալից մարդը չափազանց ուժեղ է սիրում։ Իսկ դա բավական չէ։

Հիմա նրա ապրելակերպը շատ համեստ էր։ Սիլվիան սպասավորուհի չէր պահում, ծախսերը կրճատել էր խնայողության խստագույն օրհնքը միայն հազվադեպ էր խախտվում, երբ պահանջվում էր հագնվել համադամասիրության նոպան (իսկական ֆրանսուհին երբեք չի հրաժարվի որևէ պատվավոր

կոչումից) կամ էլ հանուն այլ կարգի անուշեղենի՝ մաշկին քընքըշորեն հպվող նուրբ սպիտակեղենի (այդ կրքից Սիլվիան հրաժարվեց վերջին հերթին)։ Այս շեղումները չհաշված, Սիլվիան ապրում էր ինչպես միանձնուհի։ Նա իսկապես որ կարիքը դարձրել էր առաքինություն։ Որովհետև դպրոցի և հոգեզավակների վրա դրամագլխի հիմնական մասի վատնումից հետո մնացած չնչին գումարը կբավականացներ միայն ճգնավորի համեստ գոյություն ապահովելու համար։ Բայց նրան ավելին հարկավոր էլ չէր։ Եվ այնպիսին էր ներքին աննկատելի աշխատանքի ներգործությունը, որ իր ցանկությունների այգում աճող ամեն մի պտուղ անզուսպ կերպով ճաշակող այդ կույսը այսուհետև հաճույք էր գտնում հարկադրական աղքատության մեջ։ Առաքինությունը նրա համար անհրաժեշտություն էր դարձել։ Դա կարելի է համեմատել միայն մերկությունից ստացվող հաճույքի հետ։ Բոլոր ծածկույթները քաշել-պոկելու հիմքում ինչ-որ զգայական բան կար։ Ասենք, կարո՞ղ էր Սիլվիայի մոտ զգայականությունից զերծ որևէ բան լինել։ Ոչինչ, ընդհուպ մինչև լիակատար ինքնահրաժարումը։ (Դրանով նա շա՞տ էր, արդյոք, տարբերվում մյուս ճգնավորներից)։

Բայց Սիլվիան չէր ցանկանում կողմնակի հանդիսականներին թույլ տալ մտնելու իր համեստ բնակարանը, որը ամսեամիս ավելի ու ավելի աղքատիկ տեսք էր ստանում, որովհետև տիրուհին առանց երկար-բարակ մտածելու ծախծխում էր ամբողջ կահույքը, միայն թե բավարարեր իր վերջին տիրակալի ու սիրեցյալի՝ երաժշտության քմայքը։ Նա չհրաժարվեց իր չափազանց մեծ հպարտությունից։ Նա վատ չէր հարմարվել կարիքի հետ, բայց պայմանով, որ դա միայն ու միայն իր անձնական գործն է։ Նա ամենևին չէր ուզում, որ մեկնումեկը քիթը խոթի իր բնակարանը և կպչուն կարեկցությամբ հոտոտի, թե ինչ կա այնտեղ։ Ինքը Սիլվիան իր կրպակում այդպիսի ապրանք չէր պահում, ինչպիսին կարեկցությունն է և ուրիշներից էլ չէր ցանկանում ստանալ։ «Նեղություն քաշիր, բարեկամս, խղճահարությունդ քեզ պահել»։

Բայց հպարտ թերահավատությունը բոլորովին էլ նրա կամավոր մենակեցության գլխավոր պատճառը չէր։ Դրա իսկական դրդապատճառը այն էր, որ մենակեցությունը դուր էր գալիս իրեն։ Նա երբեք զոհաբերություն չէր կատարի, եթե դա իր սրտովը չլիներ։ Հաճույքը եղել և մնում էր նրա օրենքը։ Սիլ-

վիան պատկանում էր կատվի ցեղին։ Եվ ամբողջ գիշերը տանիքներին պտտող կատվի պես նա մտավ իր մեկուսի անկյունը, որպեսզի ուզածի չափ քնի։ Քնի կատվային խորը, քաղցր, անվերջանալի, անհասկանալի քնով... Նախանձելի քուն... Նրանում դրախտային երանությունն ավելի իսկական է, քան այն երանությունը, որ սուրբ գիրքն է մեզ խոստանում... Քնել, քնել... «Գուցե անրջել»... Եվ, իհարկե, կատվիկ Սիլվիան անրջում էր։ Նա, որ առաջ երբեք չէր երազում (ժամանակ չէր ունենում, որովհետև անցումը ցանկության առաջացումից դեպի գործողություն կատարվում էր ակնթարթորեն), հիմա իրեն չէր մերժում երազանքի հաճույքը վայելելուց։ Երազանքին պարտք էր վճարում ամբողջ անցած և ամբողջ ապագա կյանքի համար։ Սիլվիան, թերևս, չէր կարողանում ասել, թե ինչ է երազում (և ով կարող է։ Դեռ լավ է, եթե հաջողվում է երկու-երեք փշրանք բռնել ու տրորել մատների արանքում...)։ Բայց երազանքը, ինչպես զանգը, իր ղողանջով ցնցում էր նրան։ Եվ Սիլվիան ժամանակ առ ժամանակ ամբողջ մարմնով ցնցվում էր։

Նրան հայտնի դարձան ներքին կյանքի ամբողջ հարստություններ, որոնց համար առաջ կիրառություն չէր գտնում առօրյա կյանքում՝ սրտի, զգացմունքների կյանքում (և բոլորից քիչ՝ խելքի կյանքում, թեև դրա պակասությունը ևս չէր զգացվում. Սիլվիայի միտքը բնավ վերացական չէր, այլ անսխալ, դործնական, այսպես ասած, «կիրառական»)։ Ոչ մի նոր բան։ Կյանքը կազմված էր ապրած օրերից։ Բայց թվում էր, թե մի ժամանակ այդ կյանքը խցկել էին արկղերի, ստվարաթղթե տուփերի մեջ ու պահել պահարանի խորքում։ Սիլվիան բացել էր պահարանը։ Եվ օրեցօր ամեն ինչ կարգի էր բերում։ Կարգի՞։ Անկարգության։ Նա հանկարծ իրեն բռնում էր այն բանի վրա, որ նիրհել է անուրջների շեղջը ծնկներին, և չորս կողմը հատակին թափթփված են անուրջներ, անուրջներ... Սիլվիան վերցնում էր մեկը, ձեռքից վայր էր գցում, վերցնում էր մյուսը, ապա նորից առաջինը, մոռանալով, որ արդեն ձեռք է տվել դրան և մի կողմ էր նետում... Սխալը նկատելով, Սիլվիան իր գլխին ուրախ լուտանքներ էր թափում...

«Ինչպես կովը մարգագետնում, որոճում է այն, ինչ տասնյակ անգամ որոճացել է...»։

Բայց դա այնքան էլ չէր օգնում. րոպե անց Սիլվիան նորից

էր ընկնում փայտացման վիճակի մեջ, որի հետ կարելի էր համեմատել միայն սննդարար ճաշից ու դինուց հետո վրա հասնող հաճելի ընդարմացումը... Երջանիկ վիճակ էր այդ։

Վտանգավոր վիճակ էր այդ։ Ամբողջ արյունը հորդում էր դեպի գլուխը։ Հորդում էր դեպի այտերը, ճակատը, աչքերը։ Սիլվիան այդ զգում էր միայն այն ժամանակ, երբ դանգը սկսում էր ցավել։ Նա մատով շոշափում էր վզի վրայի փոքրիկ գնդիկները, որոնք զարկում էին զարկերակի հետ միասին։ Սիլվիան քաջ գիտակցում էր, որ գործունյա կյանք ապրած մարդու համար կործանարար են անշարժությունն ու տաք վառարանի մոտ նստելը, երբ այդ վառարանը վառվում է ուղեղիդ մեջ։

«Թքա՛ծ»։

Թո՛ղ լինի, ինչ լինելու է։ Նա որոշեց անել այն ամենը, ինչը դուր էր գալիս իրեն, ինչպես որ միշտ էր արել։ Միակ այցելուները՝ Աննետան ու ժորժը կշտամբում էին Սիլվիային։ Նա գոնե հոնքը շարժեր։ Ոչ ոք երբեք չէր կարող նրա վրա ազդել։

Բայց գլխապտույտի երեք-չորս նոպայից հետո, որոնցից մեկը տխուր վերջացավ՝ Սիլվիան ճակատով զարնվեց վառարանի շիկացած դռնակին (այդ մասին ոչ մեկին չասաց), նա համաձայնվեց բուժվել։ Մաքրեց ստամոքսը, ոտքերին մանանեխի սպեղանի կպցրեց, բայց ապրելակերպը չփոխեց։

Տևական պասից հետո (հոգնածության, անտարբերության, ծուլության, սանդուղքով իջնել-բարձրանալ չցանկանալու պատճառով) նա հանկարծ ուժեղ քաղց զգաց, ստամոքսն ու քիմքը իրենցն էին պահանջում, և թաթախվեց մի ամբողջ ափսե ոստրեներով, սագի պաշտետով, կամամբերով[1] և մի շիշ վուվրեով։ Նրա բախտն ուղղակի բերեց, որ այդ օրը ցրվածության հետեվանքով չէր կողպել մուտքի դուռը, և բարապանուհին, որը պետք է նամակ հանձներ, ներս մտավ սենյակ։ Նա տեսավ, որ Սիլվիան բազկաթոռից սահել ընկել է հատակին, գլուխը անզոր թեքվել է դեպի ուսը։ Սիլվիան կաթվածահար էր եղել։ Բարեբախտաբար նրանց շենքում բժիշկ էր ապրում։ Նա հիվանդին անմիջապես առաջին օգնությունը ցույց տվեց, իսկ երբ Սիլվիան արդեն ուշքի էր եկել (նա հավատացնում էր, թե բնավ գիտակցությունը չի կորցրել), եկավ հասավ վախեցած Աննետան։

---

1 Պանրի տեսակ։ Ծ. խմբ.։

Դրանով վերջացան իր անկախությունը պաշտպանող Սիլվիայի քաջագործությունները։

Աննետան հայտարարեց, որ եթե Սիլվիան ընդունակ չէ իրեն խելամտորեն պահելու, նրան այլևս թույլ չեն տա մենակ ապրել։ Նա կբռնի քրոջը, կտանի իր մոտ, կպահի փակի տակ։ Ավելի խիստ համոզիչ լինելու համար Աննետան դեմքին կատաղի արտահայտություն տվեց, որը առաջներում քույրերի համար նշանակում էր՝ «լսել»։ Սիլվիան ժպտաց ու փորձեց առարկել, բայց լեզուն դժվարությամբ էր ենթարկվում, և բունությանը անտրտունջ ենթարկվող, բայց աստվածներից պաշտպանություն աղերսող անմեղ զոհ ձևանալով, նա հանձնվեց քրոջ հոգատարությանը։ Հոգու խորքում նույնիսկ գոհ էր. Աննետայի անկեղծ զայրույթը, խոսելու նրա տիրական տոնը և սիրող ձեռքերի գրկախառնությունը Սիլվիայի հիշողության մեջ վերակենդանացրին այն հիանալի անցած-գնացած օրերը, երբ ավագ քույրն այ հենց այդպես փոթորկի նման ներխուժեց ձեղնահարկ, փոքրիկ հիվանդ դերձակուհու մոտ ու նրան տարավ իր հետ։ Եվ հենց նույն պահին Աննետան, կռանալով Սիլվիայի վրա, նրա աչքերում նկատեց այն ժամանակվա առևանգման հիշողությունների արտացոլքը։ Եվ նրանց հայացքները պայծառացան։

— Այսպես, ուրեմն, պառավս,— ասաց Աննետան,— մենք նորի՞ց ենք թևակոխում մեր քսանամյակը։

— Այ թե իսկապես, որ թևակոխում ենք,— ալատասխանեց Սիլվիան, ցույց տալով հայելին, որի մեջ արտացոլվել էին նրա կարմրատակած դեմքն ու գիրացած մարմինը։— «Երբ ես դուքս Նորֆոլկի պաժն էի...»։

— Շաղակրա՛տ։ Լորի՛կ,— պատասխանեց Աննետան, գրկելով քրոջը։— Ինչքան յուղոտ է, այնքան ախորժելի։

— Ուրեմն շուտ վերցրու և պատվիրիր տապակել։ Հիմա ես միայն տեր աստծու շամփուրին եմ հարմար։

Բայց Սիլվիան կտրականապես հրաժարվեց Փարիզը թողնել։

— Ինձ այստեղ են տնկել ի սկզբանե։ Եթե հանկարծ որոշեն ինձ տեղափոխել, արմատից կչորանամ։ Եվ չհամարձակվես խոսել ինձ վերաբերնակեցնելու մասին։ Նույնիսկ Փարիզի շրջակայքում, նույնիսկ քո սիրած Մեդոնում զբոսանքի դուրս գալիս ես առաջին հերթին աչքերով որոնում են էյֆելյան աշտարակը։ Հենց որ գնացքն անցնում է ուղեկալը, ինձ թվում է, թե ընկել

եմ արտասահման։ Եվ նախանձով եմ նայում ետ վերադարձող առաջին իսկ գնացքին։ Միայն Փարիզում կարելի է շնչել։ Այստեղ էլ կսատկեմ և դիտավորյալ բերանս լայն կբացեմ, որ մի կուշտ շնչեմ նրա սիրելի հոտերն ու լսեմ աղմուկները։

Քանի որ Աննետան չէր ցանկանում բռնության դիմել և չէր կարող քրոջն այդ վիճակում թողնել մենակ, որոշեց փոխադրվել Փարիզ, Ժուլիեն Դավիի բնակարանը, առավել ևս, որ Ժորժը, հոր բացակայության ժամանակ, բնակարանը դրեց Աննետայի լիակատար տրամադրության տակ։ Քույրերը միասին բնակություն հաստատեցին Ժուլիեն Դավիի բնակարանում։ Ժորժն ու Վանյան մնացին Մեդոնում և շաբաթը մեկ-երկու անգամ գալիս էին տատիկներին այցի կամ էլ Աննետան էր այցելում նրանց։ Իսկ հեռախոսը քաղաքային տնից առավոտյան ու երեկոյան կանոնավորապես ողջույններ էր հաղորդում անտառային տնակին։ Երկուսի համար ոչ հարմար և Աննետայի համար հոգնեցուցիչ այդ բիվակային կյանքը, անշուշտ, չէր կարող երկար տևել։ Բայց Սիլվիայի կյանքը ևս։ Քույրերը դրա վերաբերյալ պատրանքներ չէին ստեղծում և միայն ջանում էին լմտածել այդ մասին։ Մի օր ևս ապրեցինք՝ լավ է։ Առավել անհոգ, ինչպես և պետք էր սպասել, Սիլվիան էր։ Բայց և յուրաքանչյուր օրը տենչացողը։ Մի ամբողջ օր, դա հո շահում էր։ Երեկոյան, կիսաքուն, մտովի հանրագումարի բերելով անցած ժամերը, նա ասում էր.

— Եվս մեկ ժամ, որ նմանը պրուսացիները չեն ունենա[1]։

Իսկ առավոտյան, արթնանալով և ատուգելով դիրքերը, նա գոհունակությամբ, բայց և զարմանքով նկատում էր.

— Նորից է սկսվում...

Նրան տեղավորեցին դեպի խաչմերուկը դուրս եկող անկյունային սենյակում։ Մնացած բոլոր սենյակները, անգամ լավագույնը՝ Ժորժի պարտեզին նայող լուսամուտներով ննջասենյակը, Սիլվիային չզայնացնում էին։ Նրան հարկավոր էր իր փարիսյը, թող այն լինի կողքին, ցածում։ Աննետան զբաղեցրեց միջանցքի մյուս կողմի, դիմացի սենյակը։ Նրանք դռները չէին ծածկում։ Ամեն մեկն իր մահճակալին պառկած, միմյանց բաժանող նեղուցի վրայով, քանդում էին անցած օրերի կծիկը։ Աննետան, իհարկե, երբեք առաջինը չէր սկսի, նա ամբողջ կծիկը

---

1 1870 թվականի ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Ֆրանսիայում ծնունդ առած ժողովրդական ասացվածք։

պահում էր իր համար։ Բայց Սիլվիան, որը հիմա իր ճարպիկ մատները զբաղեցնելու բան չուներ, սկսեց պատսպարել հիշողությունների իլիկը։ Ամենից հաճախ լուսածեգին կապարային քնի անդունդից հազիվ դուրս գալով, նա սկսում էր ինչ-որ բան Բոթովել, քնից դեռ ոչ բոլորովին արթնացած երեխայի նման բառերը անվստահ արտասանելով։ Աննետան ծիծաղում էր լսելով, թե Սիլվիան ինչպես է երգում կամ սկիզբ և վերջ չունեցող ինչ-որ պատմություններ պատմում ինքն իրեն։ Սիլվիան զրուցում էր ինքն իր հետ, անսպասելի, դիպուկ ու զվարճալի ռեպլիկաներ տալիս իրեն։ Նա առաջինն էր դրանց վրա զարմանում, իսկ մի քանիսից նույնիսկ շփոթմունքի մեջ էր ընկնում։ Այդ ժամանակ Աննետան բղավում էր նրան.

— Կեցցե՛ս։ Բռնվեցի՛ր։

Իսկ երբ Աննետան համառորեն լուռ էր պահպանում, Սիլվիան, չդիմանալով, սկսում էր ախ ու վախ քաշել և մեղմաձայն, քնքշորեն, շողոմաբար, անհամբերությամբ, պաղատագին հարցնում էր. «Աննետա, քնա՞ծ ես», հետո շշուկը դառնում էր բարձրաձայն և փոխվում որոտալից «Բարի լույս»-ի։

— Բարի լույս, ինձ բարի լույս ասա։ Աննետա, դու քնա՞ծ ես։ Քնած չե՛ս։ Քեզ համար պարզապես թքած ինձ վրա։ Գրողը տանի։ Հիմա ես քո ականջները կքաշեմ...

Աննետան քրթմնջալով արձագանքում էր.

— Դեհ, քնիր։ Ինձ հանգիստ թող։

— Օֆ,— թեթևացած շունչ էր քաշում Սիլվիան։— Ինչ լավ է։ Իմ Աննետան բառաչում է։ Կնշանակի, մենք դեռ ողջերի հովտում ենք...

Երբեմն լռությունը Սիլվիայի մեջ ոչ թե պարզապես անհանդստություն էր առաջացնում, այլ նույնիսկ սարսափ։ Դուրս սրծնելով քնի վիհերից, որոնք գրեթե մահվան պես կլանում էին նրան, Սիլվիան ոչ բոլորովին էր վստահ լինում, որ տակավին ողջ է։ Բայց եռանդը սպառվելուն զուգընթաց, այդպիսի գիշերներից հետո արթնանալով, նա նմանվում էր սիրով լիքը լցված ավազանի, սեր, որը տենչում էր դուրս թափվել, տենչում էր իր տվածի դիմաց ինքն էլ լցվել պատասխան զգացմունքով։ Աննետան ակամա ենթարկվում էր այդ անդիմադրելի տրտունջին։ Նա վեր էր կենում անկողնուց, գնում կրտսեր քրոջ մոտ, ձեռքերը փաթաթում նրա փափուկ վզին։ Անշարժությունը կաշկանդել էր ծանրացած Վիրսավիայի մարմինը։ Քրտինքը պատել էր նրա

գիրգ կուրծքը։ Շնչառությունը մի քիչ խոպոտ էր։ Սակայն ձեռքերի դաստակները չէին կորցրել իրենց ճկունությունը, իսկ մեղմ ժպիտով լուսավորված դեմքը գեղեցիկ էր, ավելի գեղեցիկ, քան սովորաբար։

Սիլվիան գրեթե երբեք չէր տխրում անցյալի համար։ Ապշեցուցիչ հանգստությամբ նա իր համար ճանապարհ էր բացում երկու կյանքերը նշանավորած աղետների միջև։ Մի անգամ նա բարձրաձայն վերհիշեց իր փոքրիկ դստեր մահը, բայց նրա խոսքերում դառնություն չէր զգացվում։ Տարօրինակ քննքշությամբ նա մինչև վերջ հասցրեց իր պատմությունը, շոյելով Աննետայի ձեռքը։ Այդ հանգստությունը հսկայական բարիք էր Աննետայի համար, նրա աչքում բարձրացնում էր Սիլվիային։ Աննետան քրոջը նայում էր հարգանքով, բայց նրա սիրտը տանջալիորեն կծկվում էր։ Եթե մարդ հասնում է այդ աստիճան օտարացման, կնշանակի, երկար չեն դիմանա վերջին կապերը...

Բայց դրանք դիմանում էին։ Սիլվիան առաջվա նման կապված էր հողին։ Ոչ մի րոպե կապը նրա հետ չէր կորցնում։ Ի տարբերություն Աննետայի, Սիլվիան չէր կարող, Մարկի մահից հետո, պատրանքները կորցնելով, գնալ այդ ծովի միջով և չընկղմվել նրա ալիքների մեջ։ Մահվան մոտենալը, որի վրա հասնելը աներկմտորեն վկայում էր հիվանդության նոր փուլը՝ մեջընդմիջվող տենդ, անզգայացում, որի դեմ ապարդյուն փորձում է պայքարել մարող գիտակցությունը և, որը Ֆաբրի նկարագրած միջատի նման տեսնում է, թե ինչպես են իրեն ողջ-ողջ ուտում, ինչպես են իր մարմնից ամբողջ կտորներ պոկում, բայց թշնամու կողմից անդամալուծված լինելով նույնիսկ շարժվել չի կարողանում, հանկարծ վախեցրեց Սիլվիային։ Սիլվիան չէր ըմբռնում, թե ինչ է կատարվում։ Նա կորցնում էր իրեն։ Զևազուրի աշխարհը, որով լցված էր նրա փոքրիկ տիեզերքը, նրա համար ոչ մի իմաստ չուներ։ Նրան հարկավոր էին իր Սիլվիան, իր Աննետան, իր Մարկը... Մի՞թե նրանք խույս կտան իրենից։

«Բայց սա ի՞նչ բան է։ Սա ի՞նչ բան է»։

Նա բոլորովին գլուխը կորցրել էր։ Այդ մտքերից նրան դող էր համակում, և նա դրանք իրենից հեռու էր վանում։

Միայն մի անգամ խռովքի ու սիրո ճիչ դուրս թռավ նրա բերանից։

— Ա՜խ,— ասաց նա մի անգամ երեկոյան, և բաց արած մատների արանքից թաշկինակն ընկավ վերմակին,— ախ, եթե

այնտեղ, այդ Ոչնչում մի այնպիսի տեղ լիներ, ուր կարողանայինք հանդիպել բոլոր նրանց հետ, ում սիրում ենք և արտահայտել նրանց մեր ամբողջ սերը, որը չի արտահայտվել։

Աննետան զգացվեց։ Միայն մեկ, մեն-միակ անգամ ի հայտ եկավ ամբողջ խորությունն այն կրքոտ քնքշության, որը այդ չոր, ծաղրասեր ու գործնական կինը զսպում էր ամբողջ կյանքում։ Երկարատև լռություն տիրեց, այնուհետև Աննետան ասաց (նա անընդում էր բարձրաձայն).

— Իսկ քեզ երբեմն չի թվո՞ւմ, որ նրանց մեջ, ում կուզենայինք հանդիպել, կան նաև ուրիշները, բացի նրանցից, ում տեսել ենք այս կյանքում։

Այդ անակնկալ հարցը ապշեցրեց Սիլվիային։

— Ինչպե՞ս հանգնցներ այդպիսի մարքի,— հարցրեց նա։— Մինչև քո ասելն, ինձ թվում էր, թե երբեք այդ մասին չեմ մտածել։ Իսկ քո խոսքերից հետո, թվում է, որ ես էլ եմ այդ մասին մտածել։ Բայց ի՞նչ բան է դա։ Ի՞նչ ես կարծում։

Աննետան ափը սահեցրեց աչքերի վրայով։

— Արդեն չեմ հիշում։

— Ի՞նչ տարօրինակ է։ Ով գիտի, գուցե մենք ոչ թե մեկ, այլ մի քանի կյանք ենք ապրել։

Սիլվիան մտածմունքի մեջ ընկավ և ապա խնդրող տոնով ասաց.

— Իմ մեծ, իմ փոքր, ես ու դու կհանդիպե՞նք ապագայում։

— Իսկ դու չա՞ո ես ուզում ապագա կյանք։

— Ուզում եմ հանդիպել քեզ հետ...

Եվ հոգնած ավելացրեց.

— Բայց նախ եկ մի կուշտ քնենք։ Մենք շատ ենք տանջվել։

Նա, որ այնպես անխոնջ էր, ոչ թե հոգեպես ընկճվել էր, այլ իրեն հոգնած ու անպաշտպան էր զգում ավերիչ բնության առջև, ինչպես բույսը աշնանային մշուշից արդեն մթագնված վերջին արևոտ օրերին։ Մի անգամ քույրերը խոսում էին Եվրոպայի վրա կախված սպառնալիքներից, վտանգներով հղի վաղվա օրից, և Սիլվիան, մտածելով Մարկի մասին, ասաց.

— Գիտե՞ս ինչ, թերևս նույնիսկ լավ է, որ մենք մեղանից հետո ոչ ոքի չենք թողնի։

Աննետան չէր կարծում, որ դա շատ լավ է, բայց որոշեց, որ

վիճելը անօգուտ է. ձեռքը քնքշանքով դնելով քրոջ ճակատին, նա հարցրեց.

— Իսկ մեր մանչո՞ւկը։

Ճի՛շտ որ, Սիլվիան բոլորովին մոռացել էր նրան։ Բայց մանչուկը շատ լավ յոլա էր գնում առանց նրանց։ Սիլվիան հասկանում էր, որ առաջինը նա կասեր.

«Կարող եք գնա՛լ։ Իմ մասին չանհանգստանաք։ Ես մնո՛ւմ եմ»։

Բայց Սիլվիան նրան լքում էր ափսոսանքով։ Կուզենար իր հետ տանել բոլոր յուրայիններին։ Եվ ամենևին էլ ոչ փոքրոգությունից, ո՛չ։ Այլ այն պատճառով, որ այսուհետև նա չի լինի այստեղ, որպեսզի պաշտպանի նրանց։ Քանի դեռ այստեղ էր, չէր նայի հոգնածությանը, կկարողանար հետ մղել բոլոր դժվարություններն ու վտանգները։

Սիլվիան հրաժարվում էր ցերեկը պառկել անկողնում։ Նույնիսկ անտանելի թուլության պահերին պահանջում էր, որ իրեն նստեցնեն բազմոցին։ Եվ հակառակ բոլոր արգելքների, դուրս էր գալիս տնից, անդամալույծ ոտքը քարշ տալով քսանական անգամ իջնում-բարձրանում որևէ դատարկ բան, խաղալիք բերելու, որին տղան ոչ մի ուշադրություն չէր դարձնում։ Այնպես որ Սիլվիայի ամբողջ հաճկատարությունը զուր էր անցնում։

— Փոքրիկ անպիտա՛ն։ Կնշանակի, մենք արդեն հաշվի մեջ չենք,— ատամների արանքից փնթփնթում էր Սիլվիան։— Դու, հավանաբար, չգիտես, որ ե՛ս կարող էի քեզ լույս աշխարհ բերել։

— Այդ ի՞նչ ես քթիդ տակ խոսում,— հարցրեց Աննետան։

— Հենց այնպես, հին չարությունները հիշեցի։

— Խաղողի բերքահավաքն արդեն ավարտվել է։

— Բայց տաքարի մեջ գինին զուլալվում է։ Մենք այն կբացենք դրախտում։

— Մի՞թե մտադիր ես տաքարդ երկինք տանել։

— Հապա ինչպե՞ս։ Եվ գինիս նույնպես։ Կխմենք Մերուկի հետ։

— Ո՞ր Մերուկի։

— Տեր Աստծու։

— Եվ չե՞ս ամաչում։

Բայց Սիլվիան ամենևին չէր ամաչում։ Նա կատակում էր Մերուկի հետ։ Նրան թվում էր, թե դա նույնիսկ զուր է գալիս

Մերուկին՝ Ճիշտն ասած, այնքան էլ հաստատ համոզված չէր, որ Մերուկը գոյություն ունի։ Բայց այդ պարագան նրան չէր տանջում։ Նա նեղություն չէր կրում պլուխ հանել իր տատանումներից, ուր փարիզյան չարաճճիությունը, զուտ ժողովրդական վոլտերականությունը միահյուսվում էին կույր հավատի հետ։ Սիլվիան ավելին չէր էլ պահանջում։ Աննետան ջանում էր չալեկոծել քրոջը։ Քույրերը երես առ երես շատ լավ հասկանում էին իրար։ Եվ երկուսի համար էլ դա ամենագլխավորն էր։ Իսկ մնացյալը՝ ըստ էության դա ի՞նչ նշանակություն ուներ։ Ոչ թե «ի՞նչ գիտեմ ես», այլ «ի՞նչ գիտենք մենք»։

«Հավատա, եթե ուզում ես, եթե դրանից վիճակդ թեթևանում է։ Եվ կասկածիր նաև, ավելի վատ չի լինի... Նույնիսկ ենթադրենք, թե այնտեղ, վերևում մեկը կա, մի՞թե դա նրան կվնասի։ Նա բավականաչափ խելամիտ է, կհասկանա։ Եվ բարեհոգաբար կծիծաղի մեզ հետ միասին (ինչպես ինքդ ես ծիծաղում, Նանետա...) Credo... «Հավատում եմ»... եթե դա հարկավոր է նրան... Ախր ես ոչինչ չեմ մերժում... Մտի՛ր, տեր... Բանալին թողել եմ դռան վրա, վատահությունը լիակատար է, ես քնում եմ... եթե դիշերը ոչ ոք ներս չմտնի, ավելի լավ, Նանոն, ես կուշտ կքնեմ... Այնպես քաղցր է քնելը, այնպես քաղցր է սիրելը... Ինձ ամեն բան պետք կգա... Ոչ թե ես եմ ընտրելու, այլ դո՛ւ, տեր»։

Եվ ընտրվեց մայիսյան օրվա երեկոն։

Ուշադրություն չդարձնելով բոլոր հորդորներին, Սիլվիան շրջում էր տանը։ Նույնիսկ հիմա, փոխանակ դնար պառկեր, կանգնել էր, լուսամուտագոգին հենված։ Պատուհանից դուրս կախված նա շնչում էր իր Փարիզի բուրմունքը, նրա փոշին, ղղրդյունը, հոտը ձյութի, որով ամրացված էին սալարկի կտրվածքները, քնքշորեն դեմքին հպվող և հարևան այգուց ակացիաների բույրը բերող արևի վերջին շողերի տաքությունը։ Նա երգ էր դնդնում։ Հետո հանկարծ շատ կամաց ճչաց՝ «Ա՜խ», և դա հնչեց իբրև նրա երգի նոտա։ Աննետան աչքերը վեր բարձրացնելով, տեսավ, որ Սիլվիան վայր է ընկնում։ Նա նետվեց դեպի քույրը և հասցրեց բռնել ու բարձրացնել նրան։ Սակայն երեկոյան Սիլվիայի մարմնի ծանրության տակ։ Փոքրիկ լորիկը ծանր էր ու սրընթաց ընկավ, կարծես որսորդի գնդակն էր խոցել նրան։ Աննետան քրոջը պառկեցրեց հատակին, ծնկի եկավ նրա մոտ։ Սիլվիան նայում էր նրան, բայց արդեն հեռվից։ Կռանալով նրա

դեմքի վրա, Սիլվիայի շրթունքները դեռևս շարժվում էին, Անհետաև ավելի շուտ աչքերով, քան լսողությամբ, որսաց Հրաժեշտի շշուկը։

— Անհետաև, սիրելիս։

Աչքերը շուռ եկան։ Սուլոցով օդը ճեղքելով, պատուհանի մոտով մի ծիծեռնակ սլացավ։ Իսկ ավտոմոբիլների աղդանշաններից էլ բարձր, ինչպես և այն ժամանակ, այն մյուս երեկո, նորից հնչեց հովվական սրինդի նվագը... Վերջին պատկերները, որ պար են գալիս, պտտվում ու մառախուղով պատվում հայելու խորքում... Այծիկը վեր է բարձրանում հին Մոնմարտրի նեղ փողոցով... Ի՞նչ կա այնտեղ վերևում։ Նա արդեն չի հասցնի իմանալ։ Նա մեռավ վեր բարձրանալով, չիմանալով, որ մեռնում է...

Սիլվիայի հետ Մարկը մեռավ երկրորդ անգամ։ Նույնիսկ ավելին, մեռավ ինքը՝ Անհետաև, նրա կյանքի քառասուն տարին։ Մեր բոլոր օրերի վերջին վկան։ Գնաց, անհետացավ նա, և արդյոք, հաստատ համոզվա՞ծ ենք, որ եղել են այդ օրերը։

Իհարկե, մնաջել է երեխան, որդուս որդին, մարմինը իմ մարմնից, ծովի պարգևը, որ ծովը, հեռանալով, թողել էր ափին... Բայց որտե՞ղ է նա՝ ծովը։ Որտե՞ղ եմ ես, ես ինքս։ Օվկիանոսի հեռավոր շառաչ... Ափն ամայի է։ Ավազը՝ հարթ։ Միայն աղահամ քամին է սուրում՝ տարածությունների տիրակալը։ Նա իր հետ բերում է այն ահավոր արբեցումը, որը լավ է թաքցնես...

Իմ բարեկամ մի ճապոնացի պատմեց ինձ, որ Տոկիոյում տեղի ունեցած երկրաշարժի հաջորդ օրը, հանդիպելով իր ծանոթի հետ, որը, կոմս Կիարենցայի նման, աղետի ժամանակ կորցրել էր այն ամենը, ինչ ունեցել էր, բոլոր մերձավորներին, շտապել է դժբախտին ցավակցություն հայտնել։ Սա տարօրինակ ժպտացել է ու պատասխանել. «Օ՛, ինչ թեթևություն ես զգում»։

Կյանքի բոլոր ծածկոցներն ընկան։ Մնում ես մերկ... Բայց ո՞վ է մնում։ Բրունոն նրան կկոչեր հնդկական խորհրդավոր «Օմ» բառով։ Ամեն ինչը և ոչինչը, որոնք, երևի Միակի երկու դեմքերն են...

Բայց ով էլ որ նա լինի՝ ամեն ինչ կամ ոչինչ, նա տարածությունների տիրակալն է, կողքից սուրացող աղահամ քամին։ Եվ ինչ խորն է քո միայնությունը, ինչ քիչ շոր կա հագիդ (իսկ ոտքերիդ տակ ափի սառն ավազն է), այնքան ուժեղ է փչում քա-

մին, փչում է քո մեջ։ Նա քեզ քշում-տանում է հեռու, աշխարհով մեկ ցրիվ տալիս անցյալի հագուստի ծվենները։ Նա տիրել է քեզ, նա քանդում է դուռը, քանդում տան պատերը, ներխուժում ներս, դու պատկանում ես նրան, դու դառնում ես նա, տիեզերքի կյանքը կոհակվում է քո գոտկատեղում։

Բայց ի՞նչ կարող ես անել, եթե հիվանդությունը տարեցտարի, ամսեամիս շուրջդ ավելի ու ավելի է սեղմում օղակը, քեզ փակում քո այգում, տանը, ննջասենյակում, եթե քեզ զրկում է գործելու հնարավորությունից։ Ինչպիսի՛ ծաղր։ Երբ մեծ աշխարհը համակում և ոտի՛ց գլուխ այնպես է ողողում քեզ, որ չես կարողանում այլևս շնչել, որտե՞ղ գործադրես երկրային ուժերի այդ հեղեղը։ Գրե՞ս։ Մի՞թե կարող ես հարկադրել, որ հեղեղը կաթիլ առ կաթիլ հոսի գրչի նեղ ակոսով։ Ասենք, Աննետան գրելու սիրահար էլ չէր՝ նա միայն նամակներ էր գրել որդուն և ընթանց, ում սիրել էր. նրան անհրաժեշտ էր տեսնել այն աչքերը, որոնք կարդալու էին իր գրած տողերը։ Աննետան չէր կարող անստորագիր նամակ գրել, նա պահանջ էր զգում անմիջականորեն շփվելու ամբոխի հետ, բայց հենց այդ շփումից էլ նա զրկված էր։

Աննետան, որ դուրս էր մղվել գործող մարդկանց շարքից, զգում էր, թե ինչպես է ներքին հեղեղը մոլեգնում իր կրծքում, տարածվելով մինչև մատների ծայրը։ Մի ժամանակ առաջին պլան դուրս եկավ երաժշտությունը՝ Աննետան վաղուց էր այն թողել, բայց երաժշտությունը նիրհել էր նրա էության նվիրական խորքերում։ Երաժշտությունն այն ողողվածքն էր, այն մեծ սրընթաց հոսանքը, որ գետը բացել էր ոգու ամբարտակի մեջ։ Աննետան ժամեր էր անցկացնում դաշնամուրի մոտ, մատներն ու միտքը համալելով ակորդների խորհրդավոր զուգակցմամբ, ակորդներ, որոնք ներքին կյանքի ալիքներ էին։ Դուրս հանում բառի կուրությանն անմատչելի հոգու խորքերից։ Երբեմն ժորժի հետ, որը լավ ջութակահարուհի էր, որևէ սոնատ էր նվագել սովորում, բայց իրոք միասին հուզվելու, համընթաց քայլելու համար նրանք երկուսն էլ չափազանց անկախ անհատականություններ էին։ Ե՛վ Աննետան, և՛ ժորժը հակված էին հանպատրաստից ինչ-որ բաներ հորինելու կատարվող ստեղծագործության հիման վրա, վերափոխելու այն իրենց ներքին ռիթմին համապատասխան։ Գիտակ մարդը խստորեն կդատապարտեր նման փորձերը։ Բայց «գիտակները» հազվադեպ են այդպիսին լինում

այլ բառի աստվածաշնչական իմաստով։ Նրանք իրենց մահճում ստեղծագործությամբ չեն տոգորվում։ Իսկական երաժշտությունը նույն գրկախառնությունն է։

Բայց գրկախառնությունը անչափ պոռթկուն եղավ Աննետայի համար, և նրան գրեթե լիովին արգելված էր գործադրել մկանների վերջին ջանքերը։ Ինչպես միշտ, Աննետան ինքնամոռաց տրվում էր երաժշտությանը, իսկ հիվանդությունը վտանգի մասին մեծ ուշացումով էր հիշեցնում։ Հարկ եղավ փակել դաշնամուրի կափարիչը։ Ցավին ավելի շուտ սովորությամբ, քան խառնվածքի շնորհիվ դիմացող Աննետան (նա չէր պատկանում այն մարդկանց թվին, ովքեր հանուն բավականության կամ հպարտությունից, կամ բարոյական նկատառումներով տարվում են իրենց ցավով կամ հոխորտում դրանով) կարող էր հաշտ լինել ցավի հետ, անհրաժեշտության դեպքում ընդունում էր այն, բայց ընդունում էր նաև դրա նախանշանը։ Փղոսկրե ստեղնաշարը լռեց, բայց միտքն այդուհետև արագաշարժ մատների համար փոխարինեց ստեղնաշարին։ Աննետայի բոլոր ցերեկները, բոլոր գիշերները ողողում էր անլռելի երաժշտության ալիքը։ Ժամերի վազքը, ժամանակի հեղեղը ազատ ու արձակ տարածվելով դառնում էր սիմֆոնիայի օվկիանոս, զարմանահրաշ ձայնակարգության մեջ ծավալվում էին օրվա բոլոր հուզմունքները, բոլոր մեծ ու փոքր իրադարձությունները՝ թե՛ երեխայի ծիծաղը, թե՛ ժողովուրդների պայքարի ահեղ արձագանքները, թե՛ բնության զարնանային զարթոնքը և թե՛ ճնշվածների խռովությունը։ Աննետային թվում էր, որ ինքը վառ գույներով կտոր է գործում։ Բայց բնավ էլ նրա մտահղացումը չէր ընկած նախշի հիմքում, նա չէր ուրվանկարել դրա էսքիզը, նա չէր ընտրել մետաքսների երփներանգ փունջը։ Նա ինքը մաքոք էր և կախարդական կտոր գործող ձեռք։ Ձեռքը կույր է, և այնուամենայնիվ տեսնում է, շոշափում է դաշնության գաղտնի ամբողջականությունը, և մատների յուրաքանչյուր շարժում, յուրաքանչյուր նոր մգդակ դրոշմում է այդ տաք ու բրթոտացող դաշնությունը, նոր երանգ ավելացնում այն պատկերին, որը արդեն նախագոյություն ուներ հոգում։ Եվ հնազանդ մատների տակ ծնվում ու ժամ առ ժամ, ամեն մի նոր մերակի հետ ընդարձակվում է մտահղացումը։ Ինչ որ գոյություն ունի, նախշի սոսկ մի մասն է։ Բոլոր ողբերգությունները, պատմության փոթորիկները դրա կարմիր, սև, ոսկեգույն թելերն են։

Բայց այստեղ ո՞րն է իր լուման, իր սեփական ստեղծագործությունը։ Միթե ինքը ընդամենը հլու-հնազանդ գործիք է։ Աննետան դեռ չէր հասել այդ աստիճան ինքնահրաժարման։ Քանի դեռ ապրում ես, քանի որ բնությունը քեզ կին է արարել, դու պահանջ ես զգում հղիանալու և ծնելու, մարմիններ լինեն, թե հոգիներ, զգալու, թե ինչպես է կաթդ հոսում դեպի մեկ ուրիշ բերան և արյունդ դեպի ուրիշ զարկերակներ, պահանջ ես զգում կյանքդ փոխանցելու ուրիշին, այնպես վարվել, որ վարմունքդ երազանք ճառագայթի...

Միայն թե վառվի՛ր։ Ոչ մի կրակ զուր չի անցնի, երբ շուրջբոլորը խավար է։ Լայն բացված պատուհանի մոտ նստած, Աննետան հիանում էր Կասիոպեայով։ Եվ երկյուղածությամբ կրկնում հին եգիպտոսի խոսքերը.

«Այնպես արա, որ ես նմանվեմ համաստեղություններին»։

Բայց նրա աղաչանքն ավելի համեստ էր։ Համաստեղությունները անչափ հեռու են, անչափ բարձր։ Իսկ Աննետայի համար բավական էր մասնիկը լինել թող որ ամենափոքր համաստեղության, բայց դրա փոխարեն այստեղ, երկրի վրա։

Նա չէր էլ կասկածում, որ համաստեղություն է։

Նա մենակ չէր։ Նրա հետ կողք-կողքի նույն կտորին, որ ինքն էր գործում, իր երազանքն էր ներհյուսում փոքրիկ Վանյան։ Այդ քաջառողջ, ֆիզիկապես ուժեղ, զվարթ ու գործունյա, հավասարակշռված երեխան ապրում էր ափեափ լցված կյանքով, բայց նա նույնպես իր թաքուն երազանքն ուներ, իր աշխարհը՝ դաշտերով, անտառներով, հովիտներով ու ջրամբարներով, որոնց խորությունը ոչ ոք չէր կարող չափել։ Նա թափով գլխիվայր սուզվում էր, սուզվում էր այնպես հանկարծակի, որ ոչ ոք չէր հասցնում նկատել այդ սուզումը։ Եվ նույնիսկ ժորժը՝ նրա դաստիարակչուհին, որ առաջնակարգ լողորդուհի էր, չէր կարողանա նրան այնտեղից դուրս հանել։ Ժորժը հազիվ թե նկատում էր նրա բացակայությունը։ Նա խոսում էր նրա հետ։ Բայց Վանյան լինում էր հեռու։ Իսկ երբ ետ էր դառնում, ժորժը չէր նկատում նրա վերադարձը, ինչպես թույլ առաջ չէր նկատել, որ նա գնացել է։ Իսկ Վանյան նրան դնում էր շարունակ նույն կամ նոր, կարևոր չէ, արտահայտությունը չավարտած, և ինքն իրեն՝ ժպտացող ու ցրված. ժորժը նրա համար երաժշտական արկղիկի նման մի բան էր։

Իսկ ե՞րբ էին կատարվում այդ փախուստները։ Մեծ մասամբ

գիշերային ժամերին։ Օրվա ընթացքում Վանյան հասցնում էր այնքան ցատկոտել, այն աստիճան հոգնեցնել ոտքերն ու մկանները, որ շորերը հանելիս ոտքի վրա քնում էր. հարկ էր լինում ուժով քաշել-հանել նրա կարճ շալվարը, ինչպես ճագարից՝ մորթին. մատները մեղակների մեջ մտցրած, անկողնում լայնակի պառկած, նա արդեն քնած էր լինում։ Նրան պառկեցնում էին ինչպես հարկն է, վերմակի եզրերը կոխում մերկ տոտիկների ու պնդակազմ հարթ մեջքի տակ. նա ոչինչ չէր զգում, նա արդեն հեռու էր, և տեսքն էլ՝ շատ երանավետ։ Ով նման արտահայտություն էր հայտնվում նրանց դեմքին, ովքեր նայում էին նրան։ Այդպես նա քնում էր մինչև առավոտ և ոչ ոք չէր տեսնում կամ լսում, որ նա շարժվի... Սակայն ճիշտ լուսաբացին, երբ այգում արթնանում էին թռչունները, արթնանում էր նաև Վանյան։ Գրեթե ամեն գիշեր մի քանի րոպեի (դուցե հինգ, դուցե ավելի քիչ, իսկ իրեն թվում էր, թե երկու-երեք ժամ էր անցնում...) նա կարծես դանդաղ սավառնում էր երկրի վրա, և նրա մտքերը թրթռում էին հիացական պայծառացմամբ, որը նման չէր օրվա ճաճանչափայլության։ Այդ պայծառացումը, մասամբ առաջանում էր այն ֆոսֆորափայլից, որ ճառագայթում էին նրա երազները, և, արթնանալով, նա ջանում էր որոշել դրա համը և իմաստը։ Ընտրյալ պահերին առաջացող այդ պայծառացումը նաև հյուսված էր խորհրդավոր մոռացված հիշողություններից, որոնք ծխի պես բարձրանում էին նրա երեխայական կյանքից, ուր տպավորվել էին անգիտակցորեն։ Երազում փայլատակած տարօրինակ իմաստությունը տալիս էր այն էակներին ճանաչելու բանալին, ում հետ կապված էր նրա կյանքը՝ հորը, մորը, Աննետային ու Ժորժին՝ իր թիկնապահուհուն։ Նա մանրամասնորեն ուսումնասիրում էր նրանց, երբեմն կրծքին հասցված հարվածի պես մի բան զգում, երբ արգելված հայտնագործություն էր անում կամ մտածում էր, թե անում է։ Տեսնել և մնալ անտեսանելի... Տեսնել այն, ինչ չպետք է տեսնել... Նա «Հազար ու մի գիշեր» գրքում եղած կախարդական մատանու տերն է... Հետո նա հանկարծ նորից էր քնում, բռունցքները սեղմելով, և քնում էր այնքան, մինչև ժորժը չէր արթնացնում նրան։ Ով նա ոչինչ, բոլորովին ոչինչ չէր հիշում այն ամենից, ինչ տեղի էր ունեցել լուսադեմի այդ հայտնագործությունների ժամանակ։ Սակայն ոչինչ չէր կորչում։ Ամեն ինչ գրվում էր այն ներքին գրքի մեջ, աշխատանքը որի վրա շարունակվում էր գիշերից-

*դիշեր, եվ ցեղակը, ամենաանպատիհ րոպեներին, հանկարծ մա-կերես էին դուրս գալիս դրա ցոլքերը: Բոլորովին հազվագեպ հանգստի պահին, որն իրոք իսկական հանգիստ էր լինում («ես ոչ մի բանի մասին չեմ մտածում») կամ դաս սովորելիս (աչքերը մի կետի հառած նա գնում է մտքի հետքերով. «ուրիշ ոչինչ չեմ տեսնում»...), իսկ սովորաբար խաղի ամենաթունդ պահին, երբ մկաններըը լարած, գնդակ էր նետում կամ խելահեղ վազվզոցի ժամանակ, (շունչը կտրվում է, ուր որ է սիրտը կպայթի...) ամեն ինչ հանկարծ պայծառանում էր: Կամ էլ այն ժամանակ (հաճելի չէ խոսել այդ մասին, բայց ինչ արած, այդպես հո պատահում է), երբ նրա փոքրիկ հետույքը արտաքնոցում չարչարվում էր բնական ֆունկցիան կատարելու համար, այդ անհեթեթ պահին, երբ իմաստության ձայնը մեկ էլ տեսար հնչում է աստծո մարդկանց հոգում, այն պահին, որի մասին մեր անաստված, աչառատիպ ու անպատկառ Դալամբերը սիկին լեսպինասին ասել է, որ դա իբր թե ամենամաքուր է մահկանացուին մատչելի բոլոր հաճույքներից: Ահ, եթե այդքան մեծ օրինակ արդեն տրվել էր, վանդային էլ թույլատրելի էր բացել պայծառացման դուռը... «spiritus flatubi vult»[1]: Ա՜յ թե կբրջար վանդան, եթե խորհեր դրա շուրջ: Չէ՞ որ նա էլ էր Ադաբլեի երկրից... Բայց այնքա՞ն բան կար, որոնց մասին հարկավոր էր մտածել: Նա երազում է... Նվ երազանքները նրան այնքան հեռու են տանում, որ երբ վերադառնում է նրանց շրջապատը, ովքեր զլխիվեր են քայլում, ցնցվում է ու ամոթից կարմրում, լսելով ժորժի ձայնը.

— Շալվարդ կոճկիր, վանդա:

Նա ցած է ընկնում լուսնից: Ոչ ոք չդիտի, թե նա այնտեղ ինչ է տեսել: Միայն Աննետան է կասկածում, որ նա շատ հետաքրքրքրական հանդիպումներ է ունենում այնտեղ. բավական էր հիշել սեփական հանդիպումները: Նա հիմա էլ դրանց հետքը տեսնում է երեխայի բիբերի մեջ:

Նրանք շարունակ հետևում են միմյանց: Այնքան էլ շատ բան չգիտեն մեկը մյուսի մասին: Նրանց միջև ընկած է տարիների անանցանելի անդունդը: Բայց նրանք քնքշարար ու դյուրահավատորեն ընտելանում էին միմյանց հոտին, ինչպես մի ցեղի երկու գազանները. ոռնիգները զգում են միևնույն երազանքի ծանոթ հոտը, դրա դուրեկան հաբազատ հոտը: Իր աննման ժորժի

---

[1] Ոգին ճախրում է, որտեղ կամենում է (լատ.):

հետ սպասելուց վազվզելուց, խաղալուց, վիճելուց և բղավելուց հետո, Վանյան գնում է Աննետայի ոտքերի մոտ նստելու. Նա այտը հպում է տատի կոզքին և լուռ նայում նրան, սպասելով, թե երբ է հանդարտվելու արյան բուռն հոսքը։ Աննետայի ափերը գուրգուրանքով շոյում են հարազատ, սիրելի գազանիկի դնչիկը։

Հետո, առանց որևէ անցման, գազանիկը սկսում է բարձրաձայն մտածել.

— Մաննի (Աննետայի անունը միացնելով «մայրիկ» բառի հետ, ինքն էր հնարել այդ մականունը), իսկ դու վաղուց ես ապրում։

Դա հարց չէր, այլ կատարյան հաստատում։ Սակայն Աննետան պատասխանում է.

— Արդեն ինքս էլ չգիտեմ, վաղուց է, թե ոչ։ Եթե նայելու լինենք այստեղից, որտեղ ես եմ հիմա, ոչ մի տարբերություն էլ չի նկատվում։ Իմ չափ կապրես, այն ժամանակ կտեսնես։

Բայց նա չի լսում, նա հետևում է իր մտքի ընթացքին.

— Մաննի, իսկ այդ ինչպե՞ս է, որ վաղուց, շատ վաղուց չես մեռել։

— Ուրեմն, քո կարծիքով ես չափից ավելի՞ եմ ապրել աշխարհում։

— Դե ոչ... Բայց չէ՞ որ հայրիկը մեռել է...

— Նա պետք է ինձանից շատ ապրեր։ Միայն թե նրան սպասնացին։

— Իսկ քե՞զ։

— Դա ոչ բոլորին է տրված։ Աշխարհում շատ մարդիկ կան, որ ապրում են հանգիստ ու խաղաղ։

— Դե, դրանք ուրիշներն են... Ոչ թե մենք։

— Ո՞վ՝ մենք։

— Մենք։

(Նա սեղմվում է Աննետային, և նրա կզակը մխրճվում է Աննետայի ծնկների մեջ, ինչպես կեռնեխի կտուցը ծառաբնի մեջ)։

— Դու, հավանաբար, ուզում էիր ասել ոչ թե «մենք», այլ «ես»։ Ի՞նչ գիտես, թե քեզ հետ ինչ է պատահելու։

— Գիտեմ, ինձ կսպանեն, ինչպես հայրիկին,— հանգիստ պատասխանում է նա։

— Ինչե՞ր ես հնարում։ Ինչո՞ւ են քեզ հանկարծ սպանելու։

— Սպանելու են։ Ես չէ՞ որ հեղափոխություն եմ անելու։

— Այդ որտե՞ղ՝ Ֆրանսիայո՞ւմ՝

— Ոչ, ոչ Ֆրանսիայում՝ Այստեղ բոլորը կարծես ծերունիներ են՝ Ամերիկայում՝

— Ահա թե ի՞նչ՝ Իմ ժամանակ երազում էինք Ամերիկա գնալ գանգամաշկ բերելու՝ Իսկ դու այլ որս ես երազում... Բայց որտե՞ղ, փոքրիկս, ո՞ր Ամերիկայում՝ Ամերիկան մեծ է՝ Հյուսիսայի՞ն՝ Հարավայի՞ն՝

— Միևնույն է, թե որ՝ Չէ որ պետք է հեղափոխություն անել ամբողջ աշխարհում, ճի՞շտ է, Մաննի՝

— Կնշանակի, Ֆրանսիային միայն վերջում հերթը կհասնի՞՝ Խելքս պահավ՝ Այ քեզ խելագար... Այդ երևի մայրի՞կդ է քեզ կարմիր գույնով ներկել՝

— Ոչ, նաև դու՝

— Ե՞ս՝ Բայց մի՞թե ես կարմիր եմ՝

— Կարմիր ես, միայն թե ներսից...

— Իսկ դու արդեն հասցրե՞լ ես այնտեղ նայել, այ դու սատանա՝ Ո՞վ է քեզ թույլ տվել մարդու ներսը նայել, հը՞՝

— Ինքս եմ ինձ թույլ տվել՝ Դա հո զվարճալի է՝

— Ահա թե ինչ, դու զվարճանո՞ւմ ես՝ Կնշանակի, մենք զվարճացնո՞ւմ ենք քեզ՝ Քո կարծիքով, կյանքը զվարճալի բան է՝

— Օ՜հ, այն էլ ինչքան է զվարճալի՝ Սիծաղից կարելի է ուղակի պայթել՝

— Այդ դեպքում ինչու ես շարունակ խոսում մահվան մասին՝

— Ամենևին էլ ոչ մահվան՝ Այլ այն մասին, որ ինձ կսպանեն՝

— Դա միևնույն բանն է՝

— Ոչ՝ Ինքդ էլ գիտես՝

— Չգիտեմ՝

— Գիտես՝ Մահն այն է, երբ սպասում ես՝ Ջանգրուլթ, ուրիշ ոչինչ՝ Իսկ երբ սպանում են քեզ, դա հետաքրքիր է՝

— Այո, լուրջ խաղ է՝

— Ինչքան լուրջ է, այնքան զվարճալի՝

— Ձվերը սովորեցնում են հավին՝ Դու ճիշտ ես՝

— Իսկ դու հավ չես՝ Դու կարմրախայտ ձուկ ես՝

— Այդ ինչո՞՝

— Ճիշտ է, չէ՞, որ կարմրախայտը բարձրանում է գետն ի վեր՝

— Ճիշտ է՝

— Իսկ երբ որևէ արգելքի է հանդիպում, թռչում է դրա վրայով։

— Ասում են։

— Իսկ դու թռե՞լ ես։

— Անհոգ եղիր, թռել եմ։

— Իսկ երբ թռել ես, ես եղե՞լ եմ քո փորում։ (Մնդի դաղտնիք նրա համար գոյություն չունի)։

— Եղել ես։

— Կնշանակի, կարիք չկա, որ ես գնամ այդ ճանապարհով, դու այն արդեն անցել ես։

— Դա էլ ճիշտ է։ Ես ազատել եմ քեզ, անբան, ավելորդ նեղությունից։

— Այո, իսկ երբ մեռնես, ես կշարունակեմ։

— Շարունակիր։ Իմ փոխարեն։ Թռիր, կարմրախայտ ձկնիկ։ Ամեն ոք իր ժամանակն ունի։

Աննետան ծիծաղում էր, բայց հոգու խորքում հուզվում էր, հպարտանում։ Նա չի մեռնի։ Եվ իր Մարկը նույնպես չի մեռնի։ Նրանք կշարունակվեն։

Նրան ծանոթ էր ազի այդ համը, ծովային ջրիմուռների այդ հոտը. հավերժության քամին ղրանցով էր ներծծել նրա ամբողջ կյանքը։ Այդպիսին էր նրա ստացած լավագույն ընծան, և նա վերադարձրեց այն մի բանով ավելի։ Հանձնեց իր ամբողջ տոհմին։

Իր տոհմին... Իսկ ո՞ւմ։ Այդ փոքրիկ տղայի՞ն։ Ոչ, իր ամբողջ համաստեղությանը։

Նա ուրիշ երեխաներ էլ ուներ։ Միշտ չէ, որ ամենամերձավորները արյամբ են մերձավոր։

Աննետան ոչ մի րոպե չէր մոռանում իր ամերիկյան դստերը։ Ասյան ևս չէր մոռանում, թեև նրանից ավելի ու ավելի ուշ-ուշ էին նամակներ ստացվում, դրանք շատ քիչ բան էին պատմում Ասյայի կյանքի մասին։ Մեկ դրանք կարճ, հապճեպ, խզբզած բացիկներ էին լինում, մեկ էլ երկար ուղերձներ, որոնցում կիրք էր խլխլթում, և երկու դեպքում էլ փաստերը շատ քիչ էին։ Ասյային համակել էին գործունեությունը և առհասարակ ամերիկյան տեղը, այն չոր և նախօրոք հաշվարկած տեղը, նյարդերի ու կամքի այն ծայրագույն լարումը, որոնք երբեմն տիրում են զգացմունքներին և հախուռն լիցքաթափվում։ Միացյալ Նահանգների քաղաքներում դասախոսություններով շրջագայելիս, ժու-

լինեն Դավին հանդիպեց Ասյայի հետ և ապշեց այն հեղինակությամբ, որ նա կարողացել էր նվաճել քաղաքականության ու կապիտալների դեմի մոտ կանգնած հայտնի շրջանակներում։ Առաջին հանդիպման ժամանակ նա նույնիսկ անմիջապես չճանաչեց Ասյային։ Ասյան գիրացել էր։ Հյուրասենյակներում նա թողնում էր կատվի՝ փայլուն մազածածկոցով, անաղմուկ քայլվածքով գեղեցիկ կենդանու տպավորություն, այն աստիճան անտարբեր աշխարհում ամեն բանի նկատմամբ, որ իրեն նույնիսկ նեղություն չի տալիս շարժվելու։ Բայց երբ նրանք մնացին երես առ երես, շինծու ծուլության այդ դիմակն անմիջապես սահեց-ընկավ. կարծես թե անհետացավ հաճելի կլորաձևությունը, այտերը փոս ընկան, խայթիչ ծալքը բոլորեց շրթունքները, բիբերի փաղաքշող թավիշը փոխվեց պողպատի փայլի։ Թվում էր, թե նրան լափում է պայքարի անհագ կրակը։ Ասյան ամերիկյան Արևմուտքում վտանգավոր աշխատանք էր կատարում հանուն սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի, ի պաշտպանություն հալածանքի ենթարկվող կոմունիստների։ Հետևանքների մասին չմտահոգվելով, նա այդ պայքարի մեջ ներքրավեց իր ամուսնուն և ամուսնու բարեկամներին։ Իր շուրջը համախմբեց ամերիկյան երիտասարդության զարդը՝ գիտնականների, ինժեներների, գրողների, բարեգործական նպատակներով շահագործվող ընդարձակ կալվածքների անկախ տերերի՝ հարուստների ու աղքատների, մեծամասնությամբ նոր Անգլիա նահանգի բնակիչների այն ազնիվ, ուղղամիտ, խիզախ, մի քիչ միամիտ տեսակից, որին մենք ճանաչում ենք շատ օրինակներով։ Գործողության պարգևած ուրախության և անզիջում արիության ազդեցության տակ փթթած այդ մի քիչ հնաոճ հոգեկան թարմությունը Ասյայի դեմքին ժպիտ էր առաջացնում, բայց նա գիտեր այդ ժպիտի գինը և սիրում էր իր բարեկամներին։ Նրանք Ասյային վերաբերվում էին ինչպես քրոջ, փայփայում էին նրան ու հիանում նրանով։ Խանդի մասին խոսք լինել չէր կարող. նա հավասարապես պատկանում էր նրանց բոլորին, իսկ ամուսինը նրանցից մեկն էր, միայն ամենաավագը։ Ասյան ամեն կերպ ջանում էր չխոովել նրանց զգացմունքները։ Իսկ եթե մեկ-մեկ դժվար էր լինում զերծ մնալ իր խառնվածքին բնորոշ մոլեգին ու հանկարծական պոռթկումներից, նա զգուշանում էր դրանք արտահայտել այդ եղբայրական խմբակի շրջանակներում՝ մի քա-

նի օրով կամ շաբաթով անհետանում էր, և ոչ ոք չէր փորձում իմանալ, թե որտեղ է նա և ինչ է պատահել նրան։ Ամուսինը միանգամայն օրինական էր համարում միայնակ մնալու, ազատորեն իր ժամանակը տնօրինելու Ասյայի ցանկությունը. մի շատ լուրջ զրույցից հետո նա մեկընդմիշտ ճանաչել էր Ասյայի այդ իրավունքը։ Պայմանագիրը կնքվել էր և անգլոսաքսոնական ռասայի լավագույն ներկայացուցիչներին բնորոշ ազնվությամբ, որ լատինացիները սխալմամբ բացատրում են սառնությամբ (իսկ միթե կարելի է սառը համարել նրան, ով ընդունակ է հավատալու ամբողջ կյանքում), ամուսինը ոչ մի անգամ չփորձեց վերանայել պայմանագիրը, հրաժարվում էր վերահսկել իր ուղեկցուհու իրեն անհայտ կյանքը։ Ասյան արդարացնում էր նրա վստահությունը. փախուստի, անհետացման օրերը նա օգտագործում էր կենտրոնանալու, կրկին իրեն հավաքելու համար։ Երբեմն դա լինում էր սուզում մոռացության մեջ մի որևէ խուլ վայրում, օրինակ, բուժման կուրս որևէ մեկուսի առողջարանում, երբեմն էլ իր նախկին դևերին ջանում էր զսպել ֆիզիկական հոգնածությամբ, անտառներով ու սարերով կատարած երկար անցումներով։ Թթե հավատալու լինենք ասեկոսեներին, եղել են հանդիպումներ, երբ սատանան վերցրել է իրենը. համենայն դեպս Ասյան ինքը այդ չէր ջանկանում և սովորաբար կարողանում էր խուսափել գայթակղությունից։ Այսպես թե այնպես, նա երբեք իր ետևից խղճի խայթի կամ զղջման պոչ քարշ չէր տալիս, չէ որ դրանք այնպիսի դատարկ բաներ էին, մեծ, միակ սրբազան զգացմունքների համեմատությամբ... Նա ջնջում էր ոչ հարկավոր հիշողությունները։ Եվ ամուսնու ու բարեկամների մոտ էր վերադառնում ինչպես նոր տետր. նախորդ էջը պոկված էր, հաշվարկային գրքույկը սկսվում էր այն նույն տեղից, որի վրա թողնում էր Ասյան, որը հիմա, ինչպես երբեք, կապված էր իր տանը (իսկ տունը նրանց ամբողջ խումբն էր) և ընդհանուր, բոլորին միավորող գործին։ Թող հասարակական կարծիքը բամբասի, ոչ Ասյան, ոչ նրա բարեկամները այդ բամբասանքը նույնիսկ արհամարհանքի չէին արժանացնում։

Նրանք մասնակցում էին բողոքի բոլոր լայն շարժումներին՝ ընդդեմ ամերիկյան օրենքի և իշխանությունների անարդարացիության։ Անզսպորեն պայքարում էին Սակկոյի և Վանցետտիի փրկության համար, այն բանի համար, որ բանտից ազատեն Թոմ Մոնին։ Արթուն հետևում էին Միացյալ Նահանգների

կյանքին, ներառյալ երկրի ամենահեռավոր անկյունները, և համաշխարհային հասարակայնության առջև մերկացնում իշխանության չարաշահումներն ու հանցագործությունները։ Նրանք ընդհարվում էին կատաղի թշնամիների, մահակի հերոսների, արտոնագրված ու դիմակավորված փոր թափողների հետ, կապիտալիստական ամբողջ բանդիտիզմի և գազանային, հարյուրտոկոսանոց խավարամոլության հետ։ Այդ վեհանձն երիտասարդներից շատերը ենթարկվում էին վայրենի հարձակումների, նրանց ծեծում էին, կուպր քսում ու թավալ տալիս փետուրների մեջ, կոխկրտում։ Նրանցից մի քանիսին վիճակված էր զոհվել՝ որին գնդակը խոցեց, որը շունչը փչեց խոշտանգումներից հետո։ «Ռուս կնոջը» ևս նույն վտանգն էր սպառնում։ Կու-կլուքս-կլանական քարոզիչները նրան հայտարարեցին իգական սեռի դև, որին պարտքը թելադրում էր մատնել կրակի։ Բայց բարեկամները Ասյայի շուրջը արթուն պահակախումբ կազմեցին։ Եվ, բացի այդ, Ասյան օգտվում էր բարձր հովանավորությունից, որը հարկ չէր համարում հայտարարել իր մասին, չէր ձգտում, որ իր մասին իմանային։ Սակայն Ասյան գիտեր, թե ով է գաղտնի միջոցներ ձեռք առնում իր պաշտպանության համար։ Նույնիսկ պաշտոնական անձանց մեջ կային լուսավորյալ մարդիկ, ովքեր կարողացել էին գնահատել անշահախնդիր գործունեությունը այդ փոքրիկ լիգայի, որը միավորել էր այն լավագույնը, ինչ կար ԱՄՆ-ում, և բարեկամություն էին անում նրա որոշ անդամների հետ։

Բազմաթիվ բարդություններից հետո, որոնց մասին Աննետան այնպես էլ ոչինչ չիմացավ, Ասյան, այնուամենայնիվ, ստիպված եղավ հեռանալ Միացյալ Նահանգների սահմաններից։ Նրա ամուսինը, որի կարիերան Ասյան երկու թե երեք անգամ խորտակել էր, չէր գանգատվում այդ հանգամանքից. նա անփոփոխ հիանում էր իր կնոջով և արդեն երկու թե երեք անգամ փոխել էր իր ինժեներական գործունեության ասպարեզը, հաստատվելով մերթ Մեքսիկայում, մերթ Բոլիվիայում կամ Պերուում։ Ասյան հետևում էր նրան, և ամենուրեք, ուր ոտք էր դնում, իսկույն հուզումների նոր օջախ էր վառվում։ Հիմա նա ամբողջ կրքով նվիրվեց ամերիկյան հնդկացիների պաշտպանության գործին։ Նա ձգտում էր նրանց պայքարը շաղկապել Ասիայի ժողովուրդների անկախության մեծ շարժման հետ, որը պաշտպանում էր Հակաիմպերիալիստական լիգան։ Ասյան սկսեց

դեպի Անդերը։ Ժամանակ առ ժամանակ նրան տեսնում էին Սան Ֆրանցիսկոյի սալոններում կամ Շանհայի պերճաշուք հյուրանոցներում, ուր նա, թափառումներից ուժասպառ եղած, ապահով կյանք վարելով, նորից վերականգնում էր մարմնաձևերի երբեմնի կլորավունությունը և վերադարձնում իր երբեմնի փայլը։ Նույնիսկ հավատացնում էին, որ նրան տեսել են սիբիրյան ճեպընթացում, որ նա նորից է կապ հաստատել Մոսկվայի հետ։ Այդ թափառական կյանքում նա հնար էր գտել ամուսնուն երկու երեխա պարգևելու՝ տղա, որին Աննետայի մոտ տանելու ցանկությամբ էր բռնվել հանկարծ (տղան թևակոխել էր վեցերորդ տարվա մեջ), և աղչիկ, որը դեռ շատ փոքր էր նման ճանապարհորդության համար՝ ոչինչ, կգնա մյուս անգամ։

Մի քանի տարվա բաժանումը Ասյայի աչքում բնավ էլ բաժանում չէր։ Երբ Ասյան արահետով գնում էր դեպի Մեդոնյան անտառի եզրին գտնվող տունը, նրան թվում է, թե երեկ է այդտեղ եղել։ Նա ոչինչ չի մոռանում։ Նրա հիշողության մեջ կան մեկը մյուսի վրա տեղադրված երեք-չորս բաժանմունքներ, և դրանցից յուրաքանչյուրը նա կողպում կամ բաց է անում իր հայեցողությամբ։ Ամենահեռավորը, ամենագաղտնին այն է, ուր պահվում են Մարկն ու Աննետան։ Եվ նա այդ բաժանմունքը շատ հազվադեպ էր բացում, ամենից հաճախ փախուստի օրերին, երբ չքվում էր իր ամերիկյան բարեկամների հորիզոնից։ Քանզի այդ պահատուփից արձակվող հոտը անչափ ուժեղ էր. Ասյան շնչահեղձ էր լինում։ «Մարկ»։ Կուսկոյի[1] մոտ գտնվող լքված տանը կամ չինական հյուրանոցի համարում անկողնին կամ խսիրին ժամերով մեկնված, Ասյան տրվում է հիշողություններին, վերապրում դրանք այնքան ժամանակ, մինչև որ քաղցրանուշ դառնություններից ու ցավից ուժասպառ չի լինում։ Կորցնելով օրերի հաշիվը, նա ընկղմվում է քացախից ու բուրավետ խոտերից պատրաստված թուրմի մեջ... Բայց ոչ. երբ նրան սպասում էր գործը. նա չէր կարող իրեն այնպիսի շռայլություն թույլ տալ, ինչպիսին էր զգացմունքների խռովքը։ Թող պահատուփը մնա փակ։

Երբ նա այդ տուփը իր հետ Մեդոն է տանում, որպեսզի Աննետայի մատները բացեն այն, խռովված զգացմունքները խաղաղվում են, դառնում մաքուր, դառնությունը փոխվում է քաղցրության. անցած օրերը վերակենդանանում են, ցավ չպատճա-

1 Քաղաք Պերուում։

ռելով։ Դրանք խռնվող փեթակի պես բախման մեջ չեն մտնում ներկա օրերի հետ, նոր սկսած կյանքի հետ։ Աննեետան ժպտում է ամերիկյան շիկահեր ու հաստաթուղթ թմբլիկ երեխային, որը նրան «տիկին» է կոչում և նայում ամոթխած, բայց ուշադիր։ Աննեետան կսմթում է նրա կզակը.

— Հարկավոր է ասել «տատիկ», լսում ես շեկ գայլաձագ։ Դու մի՞թե չգիտես, որ այս մեծ աղջիկը իմ աղջիկն է։

Բայց երբ Ուոլդոն՝ «շեկ գայլաձագը» մեն-մենակ մնաց Վանյայի հետ, երկու տղաներն էլ խստորեն նայեցին իրար։ Ուոլդոն, հոնքերը կիտելով, կասկածանքով ոտից գլուխ զննում է նրան, ով իր կիսեղբայրն էր, ավելի շուտ եղբայր ու կեսը, որովհետև տարիքով կրկնակի մեծ էր։ Ճակատը մռայլվում է, նա փորձում է, բայց, ավա՜ղ, ապարդյուն, գլուխ հանել նոր իրադրությունից։ Վանյան հասկանում է, նա հո լավ գիտի, թե ինչպես պետք է իրեն պահի իր մոր երեխաների հետ. նրա շուրթերին հայտնվում է մի քիչ հովանավորի, բայց սիրալիր ժպիտ, որը բազմիցս վիրավորել է իր մորը, հիմա էլ վիրավորում է այդ փոքրիկին։ Նա գտնում է, որ իր պարտքն է՝ լինել սիրալիր տանտեր ու եկվորին հյուրընկալության ցույց տալ։ Մի քիչ էլ մնար, նա իր մորը կտար Ուոլդոյին։ Չէ որ իր մայրիկն է և ինքը կարող է ցանկությամբ նրան ետ պահանջել, ինչքան չլինի ավագ որդին է։ Բայց համաձայն է մորը պարտք տալ։ Եվ անգամ ձևացնում է, թե բնավ էլ նրանով չի հետաքրքրվում։

«Մինչև հիմա առանց նրա հո ցոլա գնացել եմ»։ (Դա այնքան էլ ճիշտ չէ։ Մայրիկը միշտ էլ հետաքրքրում է իրեն։ Միայն թե ոչ ոք այդ չգիտի)։

Ուոլդոն եղբոր նկատմամբ համակվում է ամենաթշնամական զգացումներով։ Գրպաններում սեղմած բռունցքները այրվում են։ Եվ ահա նրանք անզսպելիորեն դուրս են գալիս սենյակից։ Անտառի ծառուղու շրջադարձին, երբ տղաներին ոչ ոք չի տեսնում, պստիկ շեկլիկը, առանց ակնհայտ պատճառի, հարձակվում է ավագի վրա և ուժեղ բռունցքներով կատաղորեն խփում նրան։ Թրախկ-թրախկ-թրախկ-թրախկ։ Հարվածներն ընդունող Վանյայի կրծքավանդակը Ուոլդոյի քթի բարձրության վրա է։ Հարձակման պահին Վանյան կանգնել էր մի ոտքի վրա և քիչ է մնում վայր ընկնի։ Բայց նա պահպանում է հավասարակշռությունը և, զարմանքը չթաքցնելով ջանում զսպել այդ փոքրիկ խոյին, որն արդեն գլխով է հարվածներ տեղում իր փորին։

Վանյան կռանում է, որպեսզի ագրեսորին հարցնի, թե բանն ինչ է, իսկ փոքրիկ շիկահեր գլուխը նույն ակնթարթին թակի պես վեր է բարձրանում, և հարվածը դիպչում է Վաննոյի քթին։ Այս անգամ Վանոն բարկանում է և Ուոլդոյին գիրկն առնում։ Ուոլդոն պաշտպանվում է իր բոլոր չորս վերջույթներով։ Վանոն առանց դժվարության նրան պառկեցնում է ճանապարհին, իր աջցաններով սեղմելով բացում հակառակորդի դաստակները և, նրան շարժվելու հնարավորությունից վերջնականապես զրկելու համար, նստում ոտքերին։ Այդ դիրքով նստած նայում է մեջքի վրա շռւռ եկած բզեզին։ Վանյան կատաղել է. նրա վրա հարձակվել են ոչ ըստ կանոնների։ Բայց տեսնելով տապալված հակառակորդի ամոթահար, պեպենասփյուռք կերպարանքը, գթաշարժ քթիումը աչքերի, որոնք փորձում են թաքցնել ամոթը, Վանյան չի դիմանում, սկսում է քրքջալ և Ուոլդոյին լեզու է ցույց տալիս։ Ծիծաղը լրացնում է նվաստացումը. Ուոլդոյի աչքերից արցունք է ցայտում։ Այդ ժամանակ Վանյան պստիկի վզովն է ընկնում և ահա երկուսն էլ, կծիկ դարձած, գլորվում են ճանապարհի մի կողմից մյուսը։ Նրանք պինդ-պինդ համբուրվում են, և տակավին հեկեկացող Ուոլդոն այդ զբաղմունքի մեջ ներդնում է նույն այն կիրքը, որով խփում էր Վանյայի փորին։ Վանյան հայրաբար սրբում է նրա քթիը (ամենամեծ վիրավորանքը փոքրիկ մարդու համար, որն առանց այդ էլ իրեն հավիտյանս խայտառակված էր համարում, որ թույլ է տվել իրեն բարձրաձայն լաց լինել վկայի ներկայությամբ։ Բայց նա արդեն մինչև վերջ խմել էր խայտառակության բաժակը, և Վանյայի ձեռքի հասցրած վիրավորանքը, որքան էլ տարօրինակ է, նույնիսկ հաճելի էր իրեն)։ Տեսնելով, որ Ուոլդոն ցեխից սևացած ձեռքերով ջանասիրաբար այտերն է տրորում, Վանյան զգուշացնում է.

— Դե, կամաց տրորիր, թե չէ մեկ էլ տեսար քթիդ սիրունիկ, շեկ պեպենները ջնջեցիր։

Երկուսն էլ կոկորդով մեկ քրքջում են։ Վանյայի քթից դեռ արյուն է կաթում։ Բայց երբ մանուկները վերադառնում են տուն, ազնվասիրտ Վանյան հայտարարում է, թե վազելիս կպել է ծառին։ Այդ գիշեր Ուոլդոն երկար ժամանակ չի կարողանում քնել՝ հիացմունքով մտածում է Վանյայի մասին։

Երբ մանչուկների միջև նորից է անծայրածիր օվկիանոս գոյանում, նրանք նամակ են գրում միմյանց, բայց Ուոլդոյի գրիչը, ինչպես որ լեզուն, ընդունակ չէ արտահայտելու նրա սրր-

տում վառվող զգացմունքները։ Մինչդեռ Վանյայի գրիչը նրա լեզվի պես ճկուն է։ Վանյան հասկանում է, որ խաղացողների ուժերն անչափ անհավասար են և չարժե նիզակներ փշրել։ Ինչպես այն ժամանակ, երբ բռունցքներով անհնազանդ բզեզին գետին սեղմելով, ավագը ձեռք էր առնում կրտսերին, այնպես էլ հիմա նա լեզու է ցույց տալիս նրան։ Ոչ մի կերպ խոսակցությունը չի ստացվում։ Միայն ռազմատենչ կոչ։

«Ալլո՛, Ուլդո։ Գոյտոյո՛։ Մենք մարտական եղբայրներ ենք։ Ալլալա՛։ Երբ էլի տեսնվենք, ես կխմեմ քո արյունը, դու կխմես իմ արյունը, և մենք կնետվենք մարտի»։

Ուլդի համար պարտավորությունը խաղ չէ։ Նա տակավին չգիտի, թե խոսքն ինչ մարտի մասին է, բայց դրա փոխարեն հաստատ համոզված է, որ եթե Վանյան գնա մարտի, ինքը կլինի նրա կողքին։ Եվ Ասյան գիշերը շշնջում է Մարկին.

— Դու հո տեսնում ես, ուրեմն մի բարկացիր ինձ վրա։ Ես քեզ համար մի գայլաձագ էլ եմ ծնել։

Մեղմնում որոշ ժամանակ մնալուց հետո նա տուն է վերադառնում պայծառացած։ Թող որ Աննետան քիչ էր խոսում, կամ գրեթե ոչինչ չէր խոսում (տեսակցության ժամերը լուծվում էին Ասյայի խոսքերի հեղեղի մեջ. ինչպիսի դառնությամբ էր նա հետո կշտամբում իրեն), միևնույն է, Ասյան ավելի լավ է ճանաչում իրեն այն բանից հետո, երբ Աննետայի աչքերը թափանցում են նրա հոգու խորքերը։ Ուժասպառ անող թափառումները աշխարհով մեկ, մոլեգին խռովությունները նրա ոլորապտույտ ճանապարհի նշաձողերն էին. հանկարծ նորից են շոշափում, գտնում հարկավոր ուղղությունը, առնում ճիշտ հետքի հոտը։ Հեղափոխությունը Ասյային նայում է Աննետայի աչքերով. նույն լայնացած բիբերն են, երբ նա՝ Աննետան, հանգիստ ու պարզ հայացքով հետևում է ճակատագրի անխուսափելի ընթացքին, նույն անսասան վստահությունը, որը լայնացնում է այսօրվա մարտերի ճակատային անկանոն գծով նշված հորիզոնի սահմանները։ Եվ մարտերի վերևվում, դրանցից այն կողմ սկսում ես տեսնել այն հետագիծը, որին վիճակված չէր երբևէ դեպի ցած թեքվել, մշտնջենական շառաչը տիեզերական այն ալեբախության, որին վիճակված չէ ետ նահանջել, այն շարժվող աշխարհների օրենքը, ուր հանդարտվում են գլխապտույտ սուրացող հողմերը։

Աննետան, սակայն, վերջինը իմացավ, թե ինչ էր թաքցնում իր հայացքը։ Տեսնում ես ուրիշ մարդկանց, նրանք էլ քեզ են տեսնում, և քեզ ճանաչում ես միայն ուրիշների աչքերի արտացոլմամբ։

Թե ինչ էր իր օջախը, Աննետան հասկացավ միայն այդ օջախից վառված կրակները տեսնելով։ Որդու մահից հետո որբացած ծեր, միայնակ կինը այժմ հասկանում էր, որ իր բախտավորությունը պտղավետությունն է եղել։

Այդ օրերին Աննետան հայտնաբերեց, որ մի ուրիշ, ճիշտ է, ավելի կասկածելի, սերունդ էլ ունի։ Նրան այցի եկավ Բեռնադետան։

Նրանց հարաբերությունները միշտ սառն էին։ Մի ժամանակ նրանք տեսնվում էին հանուն Սիլվիայի։ Իսկ Սիլվիայի և նրա հոգեդստեր գժտվելուց հետո երկուսն էլ չէին ձգտել հանդիպման։ Եթե գժտությունը Բեռնադետային ցավ կամ սրտնեղություն էր պատճառում, նա ոչնչով չէր արտահայտում իր զգացմունքները, ավելին, արտակարգ ծածկամիտ լինելով, նա Սիլվիայի մահից հետո Աննետային նույնիսկ ցավակցական ոչ մի խոսք չգրեց։ Աննետան դա չէր մոռացել։ Նա թաքուն հակակրանք էր զգում այդ կնոջ նկատմամբ, չիմանալով, թե ինչ է տեղի ունեցել Մարկի և նրա միջև։

Ասենք, Բեռնադետան էլ իր հերթին երբեք ոչ մի հետաքրքրություն չէր դրսևորում Աննետայի նկատմամբ։ Նույնիսկ Մարկի հետ ունեցած հարաբերությունները նրան չմերձեցրին Աննետային. Մարկի մայրը չէր կարող օգտակար լինել նրան։ Իսկ սառն ու հաշվենկատ Բեռնադետան անգամ մարմնի ու մտքի խելահեղության պահերին բանի տեղ չէր դնում այն, ինչը իրեն ձեռնտու չէր... Ուրեմն ինչո՞ւ էր այսօր նա եկել Աննետայի մոտ։

Նրանք կանգնել էին դեմ հանդիման։ Թավշյա, բայց մի քիչ ծակող Աննետան (աչքը դեռ կարող էր սխալվել, բայց կանացի մատները՝ երբեք) զուր ջանում էր տանտիրուհու սիրալիր տոն պարտադրել իրեն։ Բայց մինչ նրա բերանից սիրալիր խոսքեր էին դուրս գալիս, բայց ոտնգները թշնամաբար հոտոտում էին անկոչ այցելուին։ Դա, սակայն, երկար չտևեց։ Բեռնադետան մենակ չէր եկել։ Հայացքով աննկատելիորեն հյուրին ոտից գլուխ չափելով, Աննետան հանկարծ տեսավ աղջնակին, որին Բեռնադետան բերել էր իր հետ։ Տեսավ ու այլևս աչքը չկարողացավ

կարել նրանից։ Իսկ Բեռնադետան, շարունակելով պարապ սիրալիրություններ ասել, իր ժիր, սրատես, հածող աչքերով զգոն հետևում էր տանտիրուհու ամեն մի շարժմանը, ինչպես նիհար ու երկար ժանտաքիսն է հետևում իր զոհին, և ի վերջո նկատեց ծուղակն ընկած հայացքը։ Մի ակնթարթ Բեռնադետան իսնարհեց հայացքը։

«Այդպե՜ս։ Հարվածը դիպավ նպատակին»։

Ութ-ինը տարեկան աղջնակը ռետուշած դիմանկարն էր մյուս երեխայի, որի մասին բովանդակ աշխարհում այլևս ոչ ոք չէր մտածում, բացի այդ պառավ կնոջից, որը նայում է առանց աչքը կարելու, քանզի միայն ինքն է տեսնում նրան։ Այս աղջիկն ուներ նրա տենդագին փայլող ժիր աչքերը, նույրբ, նիհար դեմքի ձվաձևությունը, նույն լայն ճակատը, նույն գունատությունը, նույն վճռական տեսքը։ Ավելին, աղջկա հագուստն անգամ հիշողության մեջ վերակենդանացնում է նրա, մյուսի կերպարը՝ նավաստիական մեծ օձիք, խոշոր կոճակներով կապույտ բլուզ, փոքրիկ Բոնապարտի մազերի պես երկար, հարթ մազեր։ Ինչպե՞ս է Բեռնադետան կարողացել վերստեղծել նրան։ Ինչպե՞ս է այդ կինը հանդգնել ձեռք բարձրացնել իրենց մասունքի՝ մանչուկի դեղնած ու խունացած, ընդամենը երկու օրինակից տրպված, միայն Սիլվիայի ու Աննետայի մոտ պահպանվող լուսանկարի վրա։ Բայց ամենաանտանելի հանդգնությունը ոչ թե դեմքը շրջանակած մազերն էին, ոչ թե նավաստիական օձիքը, ոչ թե գգեստը, այլ ներսում թաքնված բուն էությունը... «Երբ և ինչպե՞ս են նրան առևանգել իմ մոտից»։

Երկու կանայք կատաղի երկխոսություն են սկսել, բայց նրանց բերանից ոչ մի բառ դուրս չի դալիս։

«Որտեղի՞ց ես նրան գտել»։

«Ճանաչո՞ւմ ես»։

«Ո՛չ, ո՛չ, դա ճիշտ չէ՛»։

«Ճի՛շտ է»։

Սակայն Աննետան հանգիստ, միայն մի քիչ դողացող ձայնով մոտ կանչեց փոքրիկ Մարսելին (անամոթ, դեռ համարձակվել է ստորագրել դիմանկարը) և, խոսակցությունը չընդհատելով, շոյեց նրա մազերը, ապա բարձրացրեց աղջկա գլուխը և ագահ հայացքը սուզեց այդ հայելու մեջ, որը պահպանել էր նախկին Մարկի պատկերը։ Նա ուզում էր գրկում սեղմել աղջը-

կան։ Բայց զսպեց իրեն, ձեռքի խիստ շարժումով հեռացրեց իրենից ու մորը հրամայեց.

— Տա՛ր նրան։

Եվ պատճառ բերելով հոգնածությունը, տեղից վեր կացավ։ Բեռնադետան գնաց։ Նա գիտեր, որ Աննետան կկանչի իրեն։

Հաջորդ օրն իսկ Աննետան նամակ գրեց նրան, բայց ուղարկեց միայն երեք շաբաթ հետո։ Ասենք, նամակը, որ գրել էր գրեթե տասն անգամ վերափոխելուց հետո, բովանդակում էր մի օր աղջնակին իր մոտ բերելու և լավ եղանակին նրա հետ զբոսանքի գնալու քաղաքավարի հրավեր։

Վանյան ու Մարսելը ծանոթացան։ Քիչ էին խոսում միմյանց հետ։ Աղջկա ներկայությամբ Վանյան դառնում էր սակավախոս և կորցնում իր սովորական ինքնավստահությունը։ Երբանք ամբողջ ժամանակ բացահայտ կամ ծածուկ հետևում էին իրար։ Շատ շուտով Մարսելը հասկացավ, որ Վանյան հետաքրքրվում է իրենով։ Դա երբեմն գրգռում էր Վանյային, և նա աղջկա հետ վարվում էր խստորեն։ Բայց Մարսելին այնքան էլ հեշտ չէր շփոթեցնել։ Երկուսից առավել խստասիրտը թնավ նա չէ, ով ցույց է տալիս իր խստասրտությունը։ Շինծու անտարբերությամբ Մարսելն սպասում էր, որ նա մեղայականով ներկայանա, գուցե նվեր տա կամ գուցե այլ կերպ արտահայտի իր ուշադրությունը, իսկ ինքը իբրև պատշաճն ընդունի Վանյայի զղջման այդ երբեմն հմայիչ, երբեմն անհեթեթ նշանները։ Ասենք, նա երբեք պչրանք կամ փառամոլություն չէր դրսևորում, նրա խոսքերում սեթևեթելու նշույլ անգամ չկար, որին դիմում էր նրա մայրը որևէ միջավայրում գտնվելիս։ Խոսում էր քիչ, պարզ և կտրուկ։ Նրա մեջ առհասարակ տոհմպություն էր զգացվում։ Թերահաս հաղարջի այդ համը և՛ գրգռում էր Վանյայի քիմքը, և՛ գրավում նրան։ Հենց այդ նյութն էր պակասում նրա աննդի մեջ։ Աննետան, որը հետևում էր երեխաներին և համեմատում նրանց, զարմանքով իրեն խոստովանում էր, որ հենց աղջկա կապույտ երակներում է հոսում Մարկի արյունը։ Իսկ Վանյայի երակներում իր՝ Աննետայի արյունն է։

Բեռնադետան ոչ մի անգամ չբացեց իր գաղտնիքը, Աննետան ոչ մի անգամ նրան որևէ բան չհարցրեց։ Սովորաբար նրանք շատախոսում էին, ինչպես միմյանց այցի գնացած տիկնայք են շատախոսում։ Աննետան չէր կամենում բացել իր հոգու նվիրական անկյունների դուռը, նա այդ կնոջը իրենից բավական հեռու

էր պահում։ Ասենք Բեռնադետան ներխուժման փորձ չէր էլ անում։

Բայց այնուամենայնիվ, նա ինչո՞ւ էր եկել։ Ի՞նչ պատճառներ էին դրդել նրան։ Երբ բախվում ես նման բարդ խառնվածքի տեր մարդու հետ, դժվար է ասել, թե նրա մեջ ինչն է գերակշռում՝ չարը՞, թե բարին։ Դրանք խառնվում են, բայց խառնված են անկարգությունը սեփական օգտին կարգավորել կարողացող փարիզուհու հմուտ ձեռքով։ Իր ամուսնական և գործարար կյանքում նա բոլոր հաշիվները պահում է «առօր» վիճակում։ Ամուսնությունը նույնպես գործ էր, և ինչպես պարզվեց, երկու մասնակիցների համար էլ ոչ վատ գործ՝ լավ կահավորված տուն, անընդհատ աճող եկամուտներ, չափավոր ծախսեր, արդյունաբերական խոշոր պատվերներ (գործարանը արտադրում էր ավտոմոբիլների և ինքնաթիռների շարժիչներ), չորս առողջ երեխա, ամուսինն էլ լամբակում ժապավեն է կրում։ Լաթի այդ կտորը պոկելու և դրանով ամուսնուն զարդարելու համար կինը շատ ջանք էր թափել, իսկ ինչ վերաբերում է երեխաներին, ամուսինը գանգատվելու ոչինչ չուներ՝ նրանք միայն մեկով էին ավելի, քան նրան բաժին էր հասնում։ Պետք է արդարամիտ լինենք՝ Մարկին տիրանալու գիշերից հետո իր հունը վերադառնալով, գետը ոնց որ թե այլևս հակված չէր դուրս գալու ափերից։ Ինչոր իրեն պետք է, տանը կա։ Զվարճությունները քիչ են, բայց ո՛չ նա, ո՛չ նրա ամուսինը դրա համար չեն վշտանում։ Բոլորից շատ և ուժեղ նրանց հուզում, երևակայությունը բորբոքում ու հմայում են եկամուտների կլոր թվերը, և նրանք փող են դիզում ամենևին էլ ոչ թե կուտակելու կամ վատնելու համար, այլ որպեսզի այսօր ավելի շատ լինի քան երեկ, իսկ վաղը ավելի շատ, քան այսօր։ Դա հաճույք է, որը հասկանալի է ավտոարշավորդներին, դա accelerando[1]-ի տենչ է։

Բայց հեռավոր ճանապարհներին վթարներ են պատահում։ Իսկ դրանցով չեն պարծենում։ Նման վթարներից մեկի ժամանակ Բեռնադետան, ավտոմեքենայի տակ յուղախառն փոշու մեջ պառկած, շարժիչի նորոգմամբ զբաղվելիս, հանկարծ հիշողությունների տաք մեգում մի գրկախառնություն գտավ, մի գիշեր, երբ խաղաղվեց նրա կուսական, այնքան չոր ու տենդային մոլեգնությունը... Եվ վերջին հաշվով դա եղել ու մնում է միակ անխառն ուրախությունը նրա ամբողջ կյանքում. միտքն ու մար-

[1] Արագացման (իտալ.)։

մինը հասել էին իրենց նպատակին, միտքը, մարմինն ու նպատակը մեն-միակ անգամ համընկել էին, ինչ կուզես ասա, բայց դա հաղթանակ է։ Եվ հաղթանակը չի մեռել՝ գոյություն ունի Մարսելը։ Եկավ այն օրը, երբ իր հաղթանակը լիովին վայելելու, իսկ գուցեև կասկածներից այն պաշտպանելու համար (բայց հաղթե՞լ եմ, արդյոք։ Ապրե՞լ եմ արդյոք), Բեռնադետային անհրաժեշտ էր հաղթանակի աքտացոլումը տեսնել ուրիշի աչքերում, միակ աչքերում, որոնք կարող էին հաստատել այն։ Աննետայի աչքերը տեսան ու հաստատեցին։ Եվ Բեռնադետայի անթափանց սիրտը ցնծաց, կարծես նա մի անգամ ևս տիրացավ Մարկին։ Ելեց նրան մորից, կնոջից, որդուց...

«Ես տիրել եմ նրան։ Ու տիրում եմ...»։

Նա իր Մարսելին ներկայացրեց ոչ առանց մարտահրավերի, բավականությամբ։ Աղջնակը քաղում էր այդ թաքնված չարախնդության պտուղները։ Երբեմն էլ Մարսելը դառնում էր հին թշնամության բանբերը. հին ու նոր դառնությունները մակերես էին դուրս գալիս։ Բայց Մարսելը հակված չէր այդպիսի դաժան բաներից հուզվելու. նախատում էին նրան, թե փաղաքշում, միևնույն է, նա իր սեփական եղրակացություններն էր անում ու պահում իր մեջ. նրա հոգու, ինչպես և մոր հոգու, ծածկույթը այն նյութից էր, որ անջրանցիկ են անվանում։ Միայն Աննետան կարող էր կռահել այն, ինչ տեղի էր ունենում այդ հոգում, կարդալ նրա այբուբենը, արկղուկյան փոքրիկ, թերահավատ թմբկահարի, համառ ու հպարտ երեխայի՝ Մարկի այբուբենը, որը թաքցնում է իր հուզմունքն ու քնքշությունը, չէր ցանկանում իր հոգին որևէ մեկի առջև բանալ, նախքան ամեն ինչ պարզելը։ Նրան, ում Մարսելը սիրում է, ավելի քիչ է վրատահում,քան նրան, ում ատում է կամ արհամարհում, քանզի նրա վերաբերյալ, ում ատում կամ արհամարհում էր, նա արդեն իր կարծիքն ուներ։ Եվ, հետևաբար, նա Աննետային կասկածանքով է վերաբերվում, բայց հենց այդ կասկածանքն էլ մագնիսի պես նրան ձգում է դեպի ծեր կինը։ Երբեմն նա խաղի կեսին թողնում է ընկերոջը, և մինչ Վանյան այգում փնտրում է նրան, նա հուշիկ մտնում է սենյակ, ուր Աննետան նստած գիրք է կարդում։ Հարևան աթոռին տեղավորվելով, նա շունչը պահում է և լուռ, աչքերը չռած նայում Աննետային։ Եթե Աննետան հարցով դիմի նրան, աղջիկը կարճ կպատասխանի «այո» կամ «ոչ»։ Բայց Աննետան հասկանում է, նա արդեն ծանոթ է այդ համառ լուռ-

Թյանը, լսել է երկու անձանց այդ լուռ մենախոսությունները, տեսել գողերի մոտ ընկած փոքրիկ Օլիվեր Թվիստի այդ հայացքը, որը սահում է երկաթե վանդակի ճաղերի վրայով, որպեսզի հափշտակի իր Աննետայի սիրտը։ Աննետան չի բողոքում, նա ժպտում է, և տեսնելով այդ ժպիտը, գող-կաշաղակը հասկանում է, որ բռնվել է։ Կաշաղակը խոժոռվում է, ցցում փետուրները, կտուցը սպառնագին կիսաբաց է, աչքերը փայլում են չար կրակով։ Այդժամ Աննետան մատնելով իրեն, քրքջում է, վեր է կենում և գրկում փոքրիկին։ Նրա գրկում անզգա սառույցի մի կտոր է։ Բայց սառույցը հալվում է, և Աննետան շշնջում է.

— Այ խորամանկ, ես քեզ շատ լավ եմ հասկանում։ «Ցես, կհասնեմ քեզ։ Մեկ, երկու, երեք, և մեկ, երկու, երեք։— Ջես հասնի ինձ, բարեկամս։— Առաջինը ո՞ւմ ապտակ հասցնենք»։

Աննետան զգում է թե ինչպես են իր մատների տակ թուլանում լարված մարմնի մկանները, լսում է խուլ ծիծաղ։ Նա կատակով կծում է աղջկա ականջն ու հարցնում.

— Ուրեմն, բարեկամներ ե՞նք։

Մարսելը նեղվում է Աննետայի գիրկը և, չնայելով նրան, արագ-արագ շշնջում է ոչ թե ականջին, այլ վզին.

— Այո, այո, այո, այո...

Դա արդեն խաղ չէ, այլ վավերացվում է պայմանագիրը։ Ի՞նչ է կատարվում այդ փոքրիկ գլխում։ Խստահայաց աղջիկը, որը միայն աստված գիտի թե ինչու, հարազատ ընտանիքում իրեն օտար է զգում, կաուչել է Աննետայի վզից այնպես, ինչպես ծիծեռնակն է կառչում հին տան հեծաններից, որտեղ անցյալ տարի բույն է հյուսել և որն անմիջապես ճանաչել է հիմա. այդ ծեր սրտում աղջիկը գտնում է ծանոթ բույնը՝ հոր բույնը։ Հոր հոտը։

Գիշերը Աննետան անրջում է արթմնի. նա իրեն պատկերացնում է երեք-չորս, ներառյալ ժորժինը, ընտանիքի նախամայր, և իր թևերով ծածկում, տաքացնում է այնպես միասնական և այնպես տարբեր քառակի ձագակազմը։ Եվ նրա համար ամենևին պարտադիր չէ իմանալ, թե այդ ձագուկներից որն է այստեղ ջնկել օրինական իրավունքի ուժով, իսկ որը՝ իբրև առաքինության պարգև։ Նրանք բոլորը իր ձագուկներն են։ Եվ այն ուժը, որ առաջնորդում է իրեն, այդ ձագուկներին կբարձրացնի անընդգրկելիորեն լայնածավալ երկինք, և նրանք եռանկյունաձև շարք կազմած կչվեն դեպի այն հեռավոր նպատակը, որին այլևս չի հասնի իր սեփական նեռը։

Իր երամին Աննետան կարող էր ավելացնել ևս մի հոգեորդու՝ Սիլվիո Մարոնիին, նրան, որի պատճառով սպանվել էր իր զավակը։ Մարկի զոհաբերությունը ընդամենը մի քանի ամիս էր պահպանել Սիլվիոյի հոր կյանքը. գազազած թշնամիները դատաստան էին տեսել նրա հետ. նրան գտել էին անկողնում սպանված։ Բայց Սիլվիոյին, որին աքսորել էին կղզիներ, հաջողվել էր փախչել. փոթորիկը փախստականների մակույկը ափ էր նետել Կորսիկայում։ Պատանին հասել էր Փարիզ և անմիջապես հայտնվել տարագիրների՝ ամենաանհաշտ հակաֆաշիստների միջավայրում, սակայն չէր կարողացել հարել նրանց խմբերից որևէ մեկին. նա ուներ բանաստեղծի հոգի, սնված Հունաստանի մեծ երազանքներով ու ռոմանտիկ իդեալիզմով։ Քաղաքականությունը նրա մեջ նողկանք էր առաջացնում, նա ոչ թե վախենում էր առօրյա մարտերից. նրա պատանի սիրտը վառվում էր իրեն զոհաբերելու ցանկությամբ, այլ ճակատամարտը, որին նա ձգտում էր, հումերոսյան աստվածների ճակատամարտն էր, ճակատամարտը ամպերում, նույնիսկ ամպերից էլ վեր, արևի կուրացուցիչ ճաճանչների մեջ, դա Իկարի ճակատամարտն էր։ Գրականությամբ անչափ ներծծված նրա իդեալները շարժում էին եւրոպատերազմյան «ռեալիստականն» սերնդի երիտասարդ ներկայացուցիչների ժպիտը, բայց նրանցից և ոչ մեկը ընդունակ չէր այնպես ամբողջությամբ ծառայելու այդ վտանգավոր «ռեալությունների», ինչպես անհաշտ ու խիզախ պատանի իտալական Շելլին էր ծառայում իր «գրականությանը»։ Նա չէր կարող ապրել իր բանավեճերի ու փոխադարձ անվստահության մթնոլորտում, տարբեր կուսակցությունների՝ տարագրության դառնությունից չարացած անդամների փոխհարաբերություններում տիրող թունալից ու մաղձոտ տարաձայնությունների կամ անազնիվ փոխզիջումների մթնոլորտում։ Նա հեռացավ նրանցից և մենակ ապրում էր անուրջների աշխարհում, որտեղ պոեզիան զարմանահրաշ կերպով միահյուսվում էր գործելու ծարավին, այն անուրջների աշխարհում, որ մարմրում էին մոխրի տակ առօրյա կյանքի, որտեղ նա դժվարությամբ էր հացի փող վաստակում։ Երբ նա ազատ երեկո էր ունենում, սլանում էր Մեդոն. առաջին իսկ օրերից նա սովորել էր այնտեղ տանել իր էրախտագիտությունը, տանջվելով խղճի խայթից, չէր մոռանում, որ տիկին Ռիվիերը իր համար վճարել էր Մարկի կյան-

քով։ Աննետան ևս այդ էր մոռանում, և որդեգրելով Սիլվիոյին, արտում չէր մոռանում վճարված գինը (նա Սիլվիոյին ուզղակի ասաց)։

— Դու պատկանում ես ինձ։

Սիլվիոն այդ բառերը լրջությամբ ընդունեց։ Նա վաստակել էր։ Այդ բառի մեջ նա դնում էր ասպետական պատվի հասկացություն։

Բայց նա մի քիչ խորամանկում էր ինքն իր հետ։ Դուցե այնպես չանհաւրաբար Մեդոն չայցելեր, եթե նրան այնտեղ չձգեր մի զույգ մատաղ աչք։ Ժորժը կախարդել էր նրան, և Սիլվիոն չէր կարողանում այդ թաքցնել։ Նա իր զգացմունքներն ի հայտ էր բերում հախուռն միամտությամբ։ Ժորժը ծիծաղում էր նրա երեսին։ Նրանց միջև վեց տարվա տարբերություն կար, Սիլվիոն քսանն էր լրացել, իսկ Ժորժի քսանյոթ տարին լրանալու էր շուտով։ Բայց այդպիսի դատարկ բանները չէին շփոթեցնում Սիլվիոյին։ Նրանք կարծես երկու ազնվացեղ շներ էին, երկուսն էլ մարմնեղ, պնդակազմ, բարձրահասակ։ Ժորժը որքան մոտենում էր երեսունի սահմանագծին, այնքան ավելի շատ էր արտաքինով հիշեցնում Մանոն Ռոլանին. նրա նման ուժեղ էր և նրբակազմ, խարտիշահեր ու վարդագույն, փարթամ առածիգ կրծքով։ Հենց որ որևէ տղամարդ ընկնում էր Ժորժի ուղեծիրը, մի ուժ մագնիսի պես ձգում էր դեպի նա, իմեծ դժգոհություն Ժորժի. նա այդ անտանելի էր համարում։ Աննետան խորհուրդ էր տալիս.

— Լապտերիդ լույսը մեզմացրու։ Պատրույգն իջեցրու։

— Այդ ինչո՞ւ,— պատասխանում էր Ժորժը։— Ես չէ որ նրանց չեմ նայում։

— Քո մեջ անչափ շատ կյանք կա։ Նրանց բերանի չուրը գնում է։

— Կնշանակի, ձեր կարծիքով, ես պետք է կյանքս պահպանում փակե՞մ։

— Վախենում եմ նույնիսկ փակի տակ էլ նրանք զգան դրա հոտը։ Չափազանց ուժեղ է այդ բուրմունքը։

— Շնորհակալ եմ հաճոյախոսության համար։ Այդ դեպքում, թաքնվելու հարկ էլ չկա։ Համենայն դեպս, ինձանից սատկած առնետի հոտ չի գալիս, ինչպես փարիզյան այդ դժբախտ, թթված կնամոլներից։

Իտալական առնետը ժիր էր, նույնիսկ չափից ավելի։ Ինքը՝ Ժորժը, չէր կարող դա ժխտել։ Նա նրան արժանացրեց իր համակրանքին։ Ընդունում էր, որ նա գեղեցիկ և խելոք տղա է, իհար-

կե, միայն այն ժամանակ, երբ չի խոսում սիրո մասին։ Եվ հիանալի ընկեր է, ճարպիկ, հնարամիտ, չի ձանձրացնում վերամբարձ խոսակցություններով, հայացքն անվրեպ է, ձեռքերը՝ մուտ և գեղանկարչության, և քանդակագործության, և փայտի փորագրության մեջ, բացի այդ, նա իրեն վստահ է զգում ժորժին հարազատ մարզական ասպարեզում։ Թեև խոսքը սոսկ մարզական մրցություններ կամ համատեղ camping[1]-ների մասին լիներ, ժորժը առանց վարանելու կհամաձայնվեր նրան խաղընկեր վերցնել։ Ավելացնենք, որ իտալացին կարողանում էր լավ ուտել, ժորժն էլ է կարողանում, Սիլվիոն նույնիսկ առիթի դեպքում կարող է որևէ արտասովոր խորտիկի բազադրատոմսը տալ։ Այդ բոլորը հրաշալի էր, և ժորժը սիրով կհանդիպեր նրա հետ ամենուրեք՝ սեզանի շուրջ, արվեստանոցում կամ խոհանոցի սալօջախի մոտ, տուրիստական արշավի ժամանակ, վազքուղում, հանգստի ժամերին, բայց միայն ոչ անկողնում, ինչպես ինքը հայտարարեց Սիլվիոյին, երբ նա սկսեց համառորեն հետապնդել նրան իր խոստովանություններով։ Սիլվիոն մոայլվում էր, զայրանում, որ իր լիրիկական զեղումները ժորժն ընդհատում է, կոպտորեն դիմելով ռեալության աշխարհին, ապացուցում էր, որ իր սերը մաքուր է, ինչպես կրակը, որ այն անշահախնդիր է։ Բայց ժորժն էլ ավելի էր ծիծաղում ու ճչում, որ չի հավատում՝ մի՞թե Սիլվիոն ազնվասարեկ է։ Իսկ եթե նա իրոք ազնվասարեկ է և պահանջ է զգում ինչ գնով էլ լինի երգել երգելու համար, չի՞ բարեհաճի արդյոք փոխել իր երգերի թեման կամ առարկան։ Ո՛չ, Դուլցինեայի դեղին նա համաձայն չէ, ազատեք այդպիսի անտանելի տաղտկությունից։ Այն էլ նման անշահախնդրության դեպքում, երբ միևնույն է, թե ում համար ես հոգում։ Թող գնա փողոցում երգի իր երգերը... Սիլվիոն խռովում էր, նեղանում։ Բայց հետևյալ օրը ամեն ինչ նորից էր սկսվում...

Վանյան ժորժի հետ միասին ծիծաղում էր Սիլվիոյի վերամբարձ խոսքերի վրա ու նրա տնազն անում, ցույց տալով, թե նա ինչպես է չռում իր վառվռուն աչքերը։ Աննետան հանդիմանում էր իր չարաճճիներին ու խղճում դժբախտ պատանուն։ Ժորժը հավատացնում էր, որ Սիլվիոն ամենևին էլ այդքան դժբախտ չէ։ Եթե իրեն՝ ժորժին նայելը նրան բավականություն է պատճառում, թող նայի թեկուզ մինչև առավոտ։ Իսկ ինչ վերաբերում

1 Տուրիստական արշավներ, համբարական հանգրվաններ (անգլ.)։

է հառաչանքներին, ապա դա տարիքի հետ կապված սովորական հիվանդություն է, ինչպես ասենք, զկրտոցը։ Ոչինչ, կմեծանա, կմոռանա։

Կարճ ասած, նման վիճակը երկուսի համար էլ ձեռնտու էր։ Նրանք կապվեցին միմյանց։ Բայց Սիլվիոյի համար ժորժը հանելուկ էր մնում։ Նա կին էր, իսկական կին, և այնքան քիչ էր կին։ Կյանքի չերմաջերմ շունչ, սքանչելի ծաղկափթիթ մարմին, քաղցրասեր թմբլիկ շրթունքներ, փարթամ սրածայր ստինքներ։ Այո, այդ մարմինը ծաղկափթիթ էր, պտղակալած, ինչպես կիտրոնածառերի պուրակը, բայց սիրտն ու զգացմունքները լուռ էին։ Ժորժը կարողացել էր զգացմունքների նվազագույն ծախսումով իրականացնել կնոջ բարոյական անկախության այն իդեալը, որ Աննետան փնտրել էր ամբողջ կյանքում, սակայն իր կրքոտ խառնվածքի պատճառով գտել էր միայն վերջին տարիներին (այն էլ ոչ հաստատապես)։ Ժորժը սկզբունքորեն չէր մերժում ոչ սերը, ոչ ազատ կամ պաշտոնական միությունը, բայց նա չէր ջատագով։ Նա կրկնում էր.

— Թող կորչի դա։ Խոսենք պակաս ձանձրալի բաներից։

Սիլվիոն սպառնում էր, որ բնությունը վաղ թե ուշ վրեժխնդիր կլինի իր համար։ Ժորժը պատասխանում էր.

— Դե ինչ, դա զվարճալի կլինի։

Նա անչափ փորձված էր, որպեսզի պնդեր։ «Աղբյուր, ես երբեք չեմ խմի քո ջուրը»։ Նա ասում էր.

«Ես դեռ խմել չեմ ուզում»։

Եվ ավելացնում էր, որ բժիշկները խորհուրդ են տալիս ջուր խմել միայն ընթրիքից հետո, ու եթե ինքը ստիպված լինի ամուսնանալ (աշխարհում ամեն տեսակ դժբախտություններ պատահում են), նա կհամաձայնվի ամուսնանալ միայն այն բանից հետո, երբ կուտի իր անձնական կյանքի սահմանված պատառը (և ոչ փոքրիկ պատառը։ Նա մեծ բերան ուներ)։

Ամուսնությունը դա նույն անկելանոցն է։

Դե, իսկ Վանյա՞ն, իսկ երեխա՞ն... Անիծյալ երեխաներ։ Ժորժը բնավ մտադիր չէր յոլա գնալու առանց նրանց... Առանց մեկի կամ մի քանիսի... Դե, ասենք, հինգ երեխաների... Եվ նրանք բոլորովին էլ չեն լինի ինչ-որ անհայտ ծագումով հոգեզավակներ։ Խոնարհաբար շնորհակալ եմ, թող նրանց դայակություն անեն պետության վարձած անսեռ մրջյունները։ «Է՛, ոչ, սխալվում ես։ Պետությունն անանուն հասարակություն է, թքել եմ

նրա վրա։ Ես ատում եմ՝ իմ երեխան, իմը, որին ես ինքս եմ ծնել...»

— Այդ դեպքում ի՞նչն է պակասում,— հարցնում էր Սիլվիոն։

— Այն, որ նա լինի ի՛մը, միայն ի՛մը։ Որ ոչ մի տղամարդ չիառնվի այդ գործին։ Ինչո՞ւ չի կարելի երեխաներ լույս աշխարհ բերել առանց տղամարդու, մենակ։

Աննետան ուրախ մխիթարում էր նրան.

— Սպասիր, դրան էլ կհասնեն։ Գիտության համար ամեն ինչ հնարավոր է։

Սիլվիոն վախեցած տեսքով նայում էր երկու կանանց։ Նա ամեն բան հալած յուղի տեղ էր ընդունում, իսկ մեր շաղակրատները օգտվում էին դրանից։ Նա կրակոտ կերպով ընդվզում էր կանանց ծաղրական դիտողությունների դեմ։ Դոն Քիշոտը, նիզակը առաջ պարզած, հարձակվում էր հողմաղացների վրա, իսկ հողմաղացները նրան թևից-թև էին նետում։ Չէր հաջողնում շուրջը նայել, երբ արդեն պառկած էր լինում խոտերին, իսկ կանայք ծիծաղից թուլանում էին... Այ թե սատանա էին... Սակայն, իր ամբողջ փափկանկատությամբ հանդերձ, Սիլվիոն չէր նեղանում այդ ծիծաղից։ Չէ՞ որ սիրում էր նրանց և քաջ գիտեր, որ նրանք էլ իրեն են սիրում։ Ճիշտ է, բոլորովին ոչ այնպես, ինչպես ինքը կուզենար։ Բայց եթե նույնիսկ բոլորովին այնպես չէին սիրում, լոկ տխմարը կարող էր հրաժարվել դրանից։

Նրան վշտացնում էր ժորժի հանդուգն պոզիտիվիզմը, որով ժորժը նույնիսկ պարծենում էր։ Եվ այն, որ Աննետան կարծես թե համաձայնվում էր ժորժի հետ։ Ժորժը նրանց ականջը տարել էր, ասելով, որ բացարձակապես ազատ է բարոյական ցանկացած նախապաշարմունքներից։ Աղոտ, հեռավոր հակազդման բերումով ընդդեմ այն ամենի, ինչը դառնացրել էր հոր երիտասարդությունը, նա, ինչպես ինքն էր ասում, ամբողջապես արմատից կտրել էր կրոնական ամեն տեսակ զգացմունք, նույնիսկ այդ բառի ոչ կրոնական հասկացությամբ, բոլոր «կտրական բարբաջանքները» և երբ հիշատակում էին մեծապատիվ «հրամայականների» մասին, ձեռքն անհույս թափ էր տալիս։

Իսկ Սիլվիոն, որ առանց երկար-բարակ դատողություններ անելու, իր հայրենակից Մաձինիին արժանի միամտությամբ, տառապում էր այդ բարոյագիտական աթեիզմից։

Աննետան գիտեր, թե ի՛նչ է պետք մտածել այդ մասին։ Նա ժորժին ավելի լավ էր հասկանում, քան ժորժը՝ ինքն իրեն, հաս-

կանում էր նրա խառնվածքի կատարյալ մաքրությունը, որ օրիորդը մաքրասիրության բնազդ էր համարում, Վանյայի նկատմամբ նրա տածած մեծ սերը, քրոջ այն կրքոտ զգացումը, որ ժորժը, թերևս, չէր կարող բացատրել, բայց հանուն որի անվարան կզոհաբերեր իրեն, և էլի բազմաթիվ այլ խոր ու անմեկնելի զգացումներ, որոնք ենթագիտակցաբար նույն հավատն էին... Եվ ամենազարմանալին այն էր, որ այդ պայծառամիտ օրիորդը, որի ամբողջ կյանքն անցել էր մթին ծակուծուկերից հեռու, ուրախ խոհեմության ու առողջության ճաճանչներում, բոլորի աչքի առաջ, առանց որևէ գաղտնապահության, այդ օրիորդը չուխակը ձեռքն առնելով կորցնում էր ինքնատիրապետումը։ Նվագում էր, հոգ չտանելով տեսության ու կանոնների մասին, բայց կոնտոցի առաջին իսկ թափահարումից դևեր էին հայտնվում։ Նրա ձեռքի տակ չորս լարերը հեծեծում էին ինչպես գերված հոգի, և նրա ճիչը սիրտ էր տակնուվրա անում, խռովում։ Եվ ժորժն ինքն էլ էր կերպարանափոխվում, փոխվում էին աչքերը, դիմագծերը, ամեն ինչ։ Նա գունատվում էր։ Ավելի ցայտուն էին ուրվագծվում կիպ սեղմած շրթունքները։ Լարվածության պահին ավելի ցցուն էին դառնում ճակատոսկրերը։ Դեմքին ողբերգական խստասրտության կնիք էր հայտնվում։ Տանջալից խաղաղությո՞ւն։ Եվ հանկարծ՝ հարթավայրից սուրացող քամու պոռթկումներ, հրճվանքի ու ցասման ոստյուններ, կոնտոցի գնչուական պար... Ամբողջ տունը լռում էր, ունկնդրելով ժորժի նվագը։ Յուրաքանչյուրը նստում էր իր սենյակում, իսկ ժորժը նվագում էր իր սենյակում, և յուրաքանչյուրը խուսափում էր նրա աչքին երևալ. ժորժը անմիջապես վայր կդներ չուխակը։ Միակ մարդը, որին հանդուրժում էր, Վանյան էր, բայց նա մոռանում էր Վանյայի գոյությունը։ Վանյան պառկում էր մահճակալի մոտ հատակին փռած մորթու վրա։ Երբեմն հուզմունքից խելքը կորցնելով, նա նյարդայնորեն մատներով պռկոտում էր տիբեթյան այծի մորթին, դեմքը թաքցնելով դրա մեջ։ Երբեմն ժորժն ուշքի էր գալիս, շպպացնում էր Վանյային։

Սիլվիոն սովորաբար կանգնում էր այգում, տան պատին հենված, և ագահաբար ներս էր քաշում սիգարեթի ծուխը։ Գիտենալով, որ մթության մեջ իրեն ոչ ոք չի տեսնի, նա կամաց լալիս էր, և արցունքի խոշոր կաթիլները գլորվում էին այտերն ի վար։

Աննետան, մութ ննջասենյակում նստած, պայծառացած սըր-

տով լսում էր իր դատեր սիրտը այցելած անտեսանելի աստծո ձայնը։

Դաշնամուրի վրա մի ակորդ վերցնենք։ Ակորդի աններդաշնակությունը, այլ կերպ ասած, տառապանքը, ներդաշնակության տարր է. և ցավը, ինչպես որ հավասարապես մահը, բթացնում է իր խայթը...

Աննետան գիտեր այն օրերը, երբ այդ խայթը խրվում էր իր սիրտը։ Կրքոտ հուսահատությամբ նա պատեճենում էր խորը մխրճված սուր ծայրը։ Եվ ահա եկել էր Հովհաննես Մկրտչի գիշերը[1], երբ հոգին պարում է երկար, ուղիղ ոյան պես դեպի երկինք ձգվող խարույկի բոցի հետ միասին.

«Օվկիանոսը, կլանելով իր մեջ թափվող ջրերը, անխախտ հավասարակշռություն է պահպանում, այդպիսին է և ապրողը, որի հոգու մեջ գալիս միախառնվում են ցանկությունները, բայց դրանցից և ոչ մեկը նրա նկատմամբ հաղթանակ չի տոնում. «Այդժամ նա հանգստի տիրակալն է»[2]։

Աննետան այժմ կարծես իր մեջ տեսնում էր երկու ինքնություն։ Այստեղ անցնում էին օրերը, որոնց մասն էր դեռևս ինքը, ինչպես ջրերն ակոսող նավի խելին կանգնած ղեկորդն է հանդիսանում անձնակազմի մասը. այնտեղ ներքին անդունդն էր, ուր Աննետան իջնում էր լանջի վրա կախված ընկուզենու տերևի նման ճախրելով։

Եվ նա չգիտեր ինքն է ցած իջնում, թե անդունդն է բարձրանում նրան ընդառաջ։ Բայց անդունդը նրան չէր սարսափեցնում։ Իր անխռով խավարով այն պարուրում էր Աննետային, և Աննետան հետզհետե սովորեց կարդալ այդ խավարում։ Նրա ուռուցիկ աչքերը բուի հայացքի թավշյա փայլ ստացան։ Սիլվիոն և Ժորժը յուրաքանչյուրն առանձին նկատեցին այդ, և մի անգամ, երբ նրանք խոսեցին այդ մասին, Ժորժը խրատական տոնով ասաց (նրա գիտական պաշարը մեծ չէր, բայց ուրիշի դեպքում նա սիրում էր պարծենալ դրանով), որ Աննետան հիշեցնում է Աթենաս-Պալլասին։ Աննետայի ճակատը, ինչպես նաև աչքերը, որոնք կլանել էին նրա ամբողջ դեմքը, Սիլվիոն փորագրեց մի կտոր տանձենու փայտի վրա, դրանք պատկերելով լայնորեն

---

1 Ամառային արևադարձի հնագույն տոն։

2 «Բհագավաթ Գիտա»— Ռ. Ռ.—բառացի «Աստվածության երգ»։ Այդպես է կոչվում Մահաբհարաթայի 6-րդ գրքի մեջ մտնող փիլիսոփայական պոեմը։

տարածված թևերի միջև, և տարօրինակ մեղալիոնը մեխեց մուտքի դռան կողասյամին, ինչպես խաչված բուի։ Միայն Աննետան էր, որ այդ պատկերում չճանաչեց իրեն։ Նա մեղոնյան ամբողջ տունը տվել էր երիտասարդներին, իրեն թողել միայն ննջասենյակը, իսկ հետո ննջասենյակում էլ սկսեց ավելի ու ավելի նեղանալ մոգական շրջանը, բայց դրա ներսում մի ամբողջ տիեզերք էր։ Աննետան մտացրիվ նայում էր շեմքից նայող թռչնի չռված աչքերին, ժպտում ու չկասկածելով, որ դրանք իր սեփական աչքերն են, ասում.

— Թռչունն արթուն է։

— Գիտեք, ես ոչ մի կերպ չեմ կարողանում նրան փակ աչքերով պատկերացնել,— ասում էր Սիլվիոն Ժորժին։— Իսկ դուք երբևէ նրա աչքերը փակ տեսե՞լ եք։

— Այո,— պատասխանում էր Ժորժը,— բայց ես նույնիսկ ինձ չեմ հավատում, նա կոպերը փակ էլ է տեսնում։

Եվ Աննետան առաջվա պես տեսնում էր, իր ներսում և իրենից դուրս, այն նույն երկու պլանը, որոնք վերջ ի վերջո, միախառնվելով դարձան մի պլան։ Աչքը տիրեց կացարանին, ամբողջովին գրավեց այն։ Իր անբնական սրատեսության պատճառով ամբողջ կյանքում տառապած Աննետան հասավ այն բանին, որ արդեն չէր կարողանում մոռացության մեջ ընկնել։ Նա ապրում էր պայծառացած ու հանգիստ անքնության վիճակում, երբ գիտակցությունը ճրագի պես անընդհատ աղոտ լույս է արձակում, անաղմուկ և անծուխ, բայց ձեթը գնալով պակասում է։

Ամեն մի տևական վիճակ հանգեցնում է nihil-ի[1]։ Եվ դրանից չի պաշտպանում նույնիսկ վիճակի լարվածությունը։ Ժամանակի ընթացքում ամեն ինչն ու ոչինչը երկվորյակների նման դառնում են անզանազանելի։ Մարմնական ամենաարբեցուցիչ շփումը, եթե երբեք չի ընդհատվում ու վերսկսվում, կլուծվի էության անդունդի մեջ։ Անընդհատ գործող գիտակցությունը դառնում է լույս առանց ստվերների, այլ խոսքերով, զրկվում է որոշակի ուրվագծերից։ Աչքը, միայն աչքն է լցնում ամեն ինչ, և քանի որ նրա համար սահմաններ չկան, նա իրեն կորցնում է։ Բուն իր լայնացած բիբերով արդեն չի կարող ցերեկվա շլացուցիչ լույսը տարբերել ներքին լուսաբեր գիշերից։ Եվ երբ Աննետան իրեն նույնացնում է ուրիշ էությունների՝ նախ մեկի, ապա մյուսի կամ բոլորի հետ, նա միաժամանակ իր վրայից քաշում-պո-

1 Ոչինչ (լատ.)։

կում է սեփական էությունը, քեզ հենց այն է տիրում մնացած բոլորին։ Իսկ նա ինչի՞ն է տիրում։ Ոչնչի՞։ Համբնում և սեր՝ ահավասիկ այն բոնող օրգանները, որոնք օգնում են նրան պահելու տիեզերքը։ Բայց հենց որ նրա անձը, նրա «ես»ը, որի մասն են այդ օրգանները, դուրս են պրծնում նրա իսկ իշխանության տակից, տիեզերքն իսկույն ևեթ քաշում-տանում է նրանց, ինչպես շնաձուկն է իր ետևից քաշում-տանում պարանը՝ որսատեգի հետ միասին։ Իսկ ալիքների պես ճոճվում է դատարկ մակույկը։

Աննետան շտապում է ընկղմվել ջրերի մեջ, միայն թե ազատվի անձկությունից, որն իր հետ բերում էր ահավոր մենությունը՝ արևի կիզիչ ճառագայթների տակ։ Բայց նա գիտի՝ մոտ է օրն ու ժամը, երբ վրա կհասնի վախճանը։ Նա կմեռնի մենակ։ Եվ այդ մտքից ճակատին սառը քրտինք է դուրս տալիս։ Աննետայի նման կնոջ համար մեռնելը ոչինչ չի նշանակում։ Եվ ոչինչ չի նշանակում անօգուտ հանդերձանքը, մարմնական թաղանթը՝ իր տենդով, իր կործանարար հմայքով հանդերձ մի կողմ նետելը... Բայց մի՞թե դա կլինի նաև իր ամենաքնքուշ մտերմական կապերի վերջը։ Եվ ցնցվելով, նա պնդում է՝ «Ո՛չ»։ Բայց մի՞թե նա կարող է ասել «ոչ» կամ «այո»։ Նրան թույլ կտրվի՞ արդյոք տնօրինելու դրանք, երբ սկսեն նրա կյանքը տնօրինել անտեսանելի ուժերը... (Նա արդեն զգում է դրանց խուլ ստորգետնյա աշխատանքը, դրանք արդեն սկսել են տնօրինել...) Աննետան չափազանց անկեղծ է, որպեսզի փակի ականջները ու չլսի մոայլ, անկասելիորեն մոտեցող որոտը... Անկողնում պառկած, նա ձեռքերը պարզում է մարմնի երկարությամբ ու շշնջում.

— Ինքնաթավ է նրա մարտը։ Կկռվենք մինչև վերջ։

Նրա երկու բարեկամները, պայքարի ուղեկիցները, տարեկիցները՝ Ժուլիեն Դավին և կոմս Կիարենցան գտնվում են հեռվում։ Նրանց ձայնը միայն մեկ-մեկ է լսվում, ասես ուրիշ մոլորակներից։

Բրունոն նորից է ճամփա ընկել ուխտագնացության Կենտրոնական Ասիա։ Նա ակտիվորեն մասնակցում է ավազների տակ թաղված հնագույն քաղաքների պեղումներին։ Ավազները կարծես նրան էլ են կուլ տվել։ Ամիսներով նրանից ոչ մի լուր չկա։ Ժամանակ առ ժամանակ թերթերում հաղորդում է երևում նրա որևէ հայտնագործության, օրինակ, շումերական արձանագրությունների մասին, այն էլ ասենք, որ լրագրողը անպայման աղավաղում է նրա անունը։ Բայց նրա ձայնն անպայման

կհնչի բարեկամների փոխկանչի ժամանակ՝ տարեգարձի օրը, Մարկի օրը։ Եթե նա լռում է, ուրեմն ճանապարհին է։ Երբեմն նրա ձայնը լսվում է ամենահեռավոր վայրերից, այնպիսի հեռաստանից, որ թերթերը ուշացումով են ուշքի գալիս և հաղորդում նրա ժամանման մասին։ Իսկ այն մասին, թե ինչ է անում այնտեղ, ինչով է զբաղվում, նա գրեթե ոչինչ չի գրում։ Նա նոր, կատարելագործված տարբերակով վերսկսում է զրույցը Նարադայի մասին. դա կարծես նրա բոլոր խորհրդածությունների լեյտմոտիվն է։ Բայց այս գործում նա քիչ բան կարող է առվոր եցնել Աննետային, քանզի Աննետան ինքն է ընդունակ նման հենքով ամենատարբեր նախշեր ստեղծագործելու։ Բայց ոչ Բրունոն, ոչ էլ Աննետան, չե՞ն շտապում մի բաժակ ջուր բերել... Արևմուտքի հոգին չի հանձնվում։ Գործել, գործել, հավերժ գործել... Մահվանից առաջ Գյոթեն ասել է, որ ինքը «համոզված է երկրային կյանքի շարունակման մեջ հենց գործունեության հասկացության շնորհիվ»։ Արևմուտքում շատ են մեր նմանները, ովքեր առանձնապես չեն անհանգստանում՝ կյանքը շարունակվելո՞ւ է արդյոք նաև մահից հետո։ Բայց մեզանից՝ իսկապես ողջերից և ոչ մեկը չի հրաժարվի հավերժության փոխարեն տրված գործունեության մեկ ժամից։

Անսահմանություն կոչվող անափ, անձև օվկիանոսի աղմուկով իրեն օրոր ասելով Բրունոն շարունակում է ջանք թափել, հասկանալու համար թիզ առ թիզ, կտոր առ կտոր ետ նվաճելու Մարդու ամենավերջնական անդաստանը։ Նա այնտեղ՝ անապատներում (այդ մասին նա լռում է) պայքար է մղում սորուն ավազուտների դեմ, ծարավի, քաղցի, արևի դեմ, ցրտի, մարդկանց դեմ, բնության ու սեփական մարմնի դեմ, այդ հին մահճի դեմ, որը շարունակ սայթաքում է ու գթության աղերսում... «Դեհ, առա՛ջ»։ Եվ բացի դրանից (այդ մասին նա ալ-դեն բոլորովին չի պատմում) նա գաղտնի մասնակցում է սոցիալական շարժումներին, որոնք սկսել են ընդգրկել Ասիայի ժողովուրդներին։ Հնագետի գործունեությունը նրան քող է ծառայում, ճիշտ է՝ միանգամայն իրական քող։ Նա հարաբերություններ է պահպանում Հնդկաստանի բանվորական և գյուղացիական միությունների հետ, որոնց առաջնորդները նետված են Մերութի բանտը։ Կյանքը վտանգելով, Բրունոն ճեղքեց պաշարման մեջ գտնվող Փեշավար նահանգի վրա ծանրացած շրջափակումը, և բազմից միջնորդ ծառայեց երկրով մեկ ցրված Հնդկական ազ-

գային կոնգրեսի անդամների միջև։ Նա դարձել է քարոզիչը գանդիական Սաթյագրահայի, որը բրիտանական կեղեքիչները հույս ունեին խեղդել Պունայի բանտում[1]։ Հնդկաստանի սահմաններից դուրս նա տարածեց ուսմունքը մի մարդու, որը մենակ դեռևս պահում է բռնության մրրկածուփ հեղեղի ճնշման տակ փլվելու պատրաստ ամբարտակը։ Զընդդիմադրել կամ բռնություն՝ այս երկու ուղիներով, այս երկու ոտքերով հերթակայությամբ քայլ անելով, ընթանում և մոտենում է հեղափոխությունը։ Դրանք միևնույն ծառի երկու ընձյուղներն են։ Uno avulso, non deticit alter[2]։ Բրունոն այդ բանակի պիոներներից է։ Թեև նրա ոգին կանխեց գործունեության նպատակը՝ երբ նա տոգորված է գործունեությամբ, բոլորանվեր տրվում է դրան։

Իսկ Արևմուտքում ապրող նրա ընկերուհին՝ Աննետան, որն արդեն դասավորել էր ճամպրուկները և պատրաստ էր այն ճանապարհորդության, որից չեն վերադառնում, դեռ երբեք այնպես սիրով չէր մշակել իր պարտեզը։ Թող որ նա գրեթե չէր կարողանում շարժվել, երբ ոգին ձգտում է ընդգրկելու արտաքին աշխարհը, աշխարհն ինքն է գնում նրան ընդառաջ։ Արտաքին ամեն բան ի սպաս է դրված ոգուն։ Ոգին վերցնում է։ Աննետան, որը միանգամայն անկեղծորեն կարծում էր, թե հրաժարվել է բոլոր պարգևներից, իրականում հրաժարվել էր միայն ինքն իրենից, և բոլորովին էլ ոչ վերցնելուց։ Բայց նա, բարեխիղճ այդ մարդը, նույնիսկ չէր կասկածում այդ մասին։ Եվ եթե բարեխղճությունից մոռանում էր ինքն իրեն, դա տեղի էր ունենում այն պատճառով, որ նա անչափ շատ գործ ուներ և ժամանակ չուներ մտածելու, որ ինքը գոյություն ունի։ Այն ամենը, ինչ գոյություն ուներ նրա համար, գտնվում էր իրենից դուրս, այն կողմում, և նա տենչում էր մի քիչ էլ, գոնե մի քիչ էլ ճանաչել ու հասկանալ այն, ինչը շուտով լքելու էր։ Նա ջանում է հաղորդակից դառնալ իր երկու բարեկամների հոգևոր կյանքին։ Հետևում է արևելագիտական աշխատություններին, գիտական գրականությանը։ Վատ էր, թե լավ, բայց նրան հաջողվեց կըրկին համընթաց քայլել արևմուտքի մտքի հետ։ Այդ բանում նրան օգնում էր Ժուլիեն Դավին, ինչպես մի ժամանակ, նրանց պատանեկության օրերին, սուրբ Ժենևևայի գրադարանում տեղի ունեցած զրույցների ժամանակ։

---

1 Պունա քաղաքի բանտ է նետվել Մահաթմա Գանդին։

2 Եթե մեկը (ընձյուղը) պոկվի, կմնա մյուսը (լատ.)։

Ամուսնության ժամանակ նրանք ոչ մի անգամ չանդրադարձան այն բանին, որ Մարկը ամառային այն օրը թաքուն կարդացել էր մոր աչքերում, երբ Աննետան, լեռների գրկում երազանքով տարված, իր գաղտնիքը հայտնել էր որդուն։ Գուցե Ժուլիենն էլ էր կարդացել այդ գաղտնիքը (կարծում էր, թե կարդացել է), բայց նա սիրո գործերում անչափ համեստ էր, անչափ վհհերոտ և կասկած էր տանում իր հայտնագործության նկատմամբ։ Նա շատ լավ հասկանում էր, որ Մարկի մահը վերջ է դրել համատեղ կյանքի իրենց բոլոր երազանքներին. հիմա Աննետայի օջախի մոտ անբաժանելիորեն իշխում էր մեռած որդին։ Ժուլիենը զգում էր դա և ջանում աքողել իր զգացմունքները։ Եվ, այդուհանդերձ, նրանց սրտերը դեռ երբեք այնքան մոտ չէին եղել, ինչպես հիմա։ Նրանց՝ տարեց տղամարդու և տարեց կնոջ միջև ձգվում էին ըմբռնողության, խոր և գորովալից ըմբռնողության գաղտնի թելերը։ Իսկ այդ արտահայտելու համար բառերի կարիքը չի զգացվում։

Ժամանակ առ ժամանակ Ժուլիենը այցելում էր Աննետային, օգտվելով Ամերիկայում կատարած իր շրջագայություններից միջև եղած կարճատև դադարներից, որտեղ հանդես էր գալիս դասախոսություններով և գիտական աշխատանք էր կատարում, որտեղ նրան Կարնեջիի ֆոնդից վարձատրվող մշտական պաշտոն էին տվել։ Ամեն անգամ հանդիպմանը նրանք նվիրում էին մի քանի օր։ Երբեմն, երբ զրույցն անչափ երկարում էր կամ անձրև էր գալիս, Ժորժն իր մահճակալը զիջում էր հորը, իսկ ինքը քոչում Վանյայի մոտ։ Եվ այդպիսի գիշերներին Աննետային, որն արթուն էր մնում, թվում էր, թե ինքը թևի տակ է պահում իր բոլոր ձագուկներին, և ծեր ամուսնուն նույնպես։ Ասենք, Ժուլիենը ևս գրեթե չէր քնում. պառկում էր անկողնում, չհամարձակվելով շարժվել, որովհետև այնտեղ, պատի եռևում, իր կողքին, շնչում էր Աննետան, և նա վախենում էր անզգույշ շարժումով փախցնել պատրանքը։ Բայց, անտարակույս, նա ավելի շատ կվախենար, եթե այդ պատրանքը հանկարծ իրականություն դառնար։ Որովհետև Աննետայի նկատմամբ նրա տածած զգացմունքը միաժամանակ չափազանց ուժեղ էր և չափազանց ակնածալի։ Չափազանց երկար ժամանակ էր նա այդ զգացմունքը ընկճել ու տրորել, մի՞թե հիմա կարտահայտեր այն։ Երբ Աննետան ողջ չի լինի, նա գուցե ցավից դողա, հիշելով, որ Ֆլորեն-

գիայի ծեր քարտաշի[1] նման ոչ մի անգամ չի դիպել նրա կենդանի շրթունքներին։ Իզուր չէր նա պատկանում մարդկանց այն տեսակին, որը ընդունակ չէ ետ սովորելու դառնության համից։

Իսկ նրանք, ովքեր ընդունակ են ետ սովորելու, ինչպես օրինակ, Բրունոն, Ժուլիենին քաքուն կերպով հրեշներ են թվում (կոմս Կիարենցայի հանդեպ ունեցած ամբողջ հարգանքով հանդերձ)։ Մոռացության այդ ուժը արդյոք թուլություն չէ՞։ Նսեմություն չէ՞։ Կամ թեթևամտություն։ Միանգամայն հավանական է, որ Բրունոն պակաս չուներ ոչ մեկում, և ոչ էլ մյուսում. նրա թերությունները հիանալիորեն խաղաղ գոյակցում էին հերոսության ու բարության հետ։ Նա օժտված էր այն «երջանիկ» իտալական խառնվածքով, որի հիմքում, որի կրքերի, ցավի և ուրախության հիմքում ընկած է խորը անտարբերության պատկառելի բաժին։ Ոմ որ սիրում է, իրոք սիրում է ուժեղ, բայց մոռանում է նրանց... բոլորովին մոռանում... մի քանի ամիս անց։ Աննետան գիտեր այդ և միայն ժպտում էր։ Ժուլիենը չէր կարողանում հասկանալ այդ ժպիտի իմաստը, նա չէր վիճում, լռելյայն խոնարհում էր գլուխը, որովհետև Աննետան էր ժպտում։ Բայց այդ ժպիտն, այնուամենայնիվ, տագնապեցնում էր նրան՝ կնշանակի Աննետան էլ է հաշտվո՞ւմ մոռացության հետ։ Իսկ, վկա է աստված, որ Ժուլիենը բնավ չէր ցանկանա վշտի անչնչելի խորշում տեսնել նրա ճակատին։ Նա սիրում էր Աննետային և կարող էր միայն ուրախանալ, որ Աննետան թոթափել է անցյալի սպանիչ բեռը։ Բայց այդ «ուրախությունն» էլ նման էր տխրության, ինչպես որ Ժուլիենի մնացած բոլոր զվարճությունները։ Նա այդ թեմայի շուրջ չի խոսում Աննետայի հետ։ Բայց Աննետան հասկանում է և ավիր քնքշորեն դնում նրա ճակատին։

— Իմ խեղճ Ժուլիեն։ Ահա թե ում են անհրաժեշտ Լետայի[2] ջրերը։

Նա զարմանքից լայնորեն բացում էր աչքերը։ Աննետան ծիծաղում էր և գերմաներեն մեջ բերում Գյոթեի խոսքերը.

— «...Լետայի եթերային հոսանքը»։

Ժուլիենը մոայլվում է։

— Այն հարկավոր չէ ինձ։

---

1 Ակնարկվում է Վիտորիա Կոլոննայի նկատմամբ Միքելանջելոյի պաթետիկ սերը։

2 Մոռացության գետի անվանումը հին հռոմեական դիցաբանության մեջ։

— Ամեն առավոտ մի փոքրիկ բաժակ, ուղղակի աղբյուրից։

— Ամենևին, ազատեք ինձ բուժական գործողություններից։

— Դե ինչ արած,— համաձայնվում էր Աննետան,— թող ձեր հիվանդությունը մնա մեզ հետ։ Չէ որ մենք երկուսով ենք, և ցավը կարող է բարիք դառնալ։

— Ես բոլորովին չեմ ցանկանում իմ հիվանդությունները բարդել ձեզ վրա։ Լա՛վ նվեր է։ Անգոյությունը շատ չի՞, արդյոք։ Լինում են պահեր, երբ ես տառացիորեն վախենում եմ մատս շարժել, որպեսզի չդիպչեմ նրանց հավատին, ում կյանքից ավելի եմ սիրում։

— Լսեցեք հապա այս ասույթը, որ Բրունոն ինձ նվեր է ուղարկել Նոր տարվա առթիվ,— ասաց Աննետան։— «Երբ մարդ այլևս ոչնչի չի հավատում, հասել է մերձավորներին ընծաներ տալու ժամանակը»։

Ժուլիենը ապշեց։ Բրունոյի խոսքերը նրա հոգում պատասխան արձագանք առաջացրին։ Բայց նրա ոգին հակված չէր վրատահելու այն բանին, ինչ տեղի էր ունենում բանականության հսկողությունից դուրս։ Նա հարցրեց.

— Երբ մարդ ոչինչ չունի, ինչպե՞ս կարող է ընծաներ տալ։

Աննետան երգեցիկ ձայնով արտասանեց Միլարեպայի[1] մահվան մահճում հորինած հիմնը.

Անգոյության մասին միտքը մայրն է խղճահարության։
Խղճահարությունը ջնջում է սահմանները քո և քո մերձավորի միջև։
Քո նույնությունը մերձավորիդ հետ քո մեջ մարմնավորում է ք. մերձավորին։
Իսկ ով իրենով մարմնավորում է իր մերձավորին, միանում է ինձ։
Իսկ ով միանա ինձ, կդառնա Բուդդա։

Աննետան լռեց, իսկ Ժուլիենը տակավին ոչ մի բառ չէր արտասանում։ Վերջապես, նա ասաց.

— Դա հիանալի է։ Անչափ հիանալի՝ ինձ համար... Ես երբեք Բուդդա չեմ դառնա... Բայց դուք, դուք, Աննետա, ի սեր երկրնքի, ասացեք ինձ, որ դուք Բուդդա չեք։

Աննետան ծիծաղեց.

— Եսապա՛շտ։ Ավա՛ղ, վախենում եմ, որ մինչև կյանքիս վերջը ես կմնամ Աննետա։

Ժուլիենը թեթևացած շունչ քաշեց.

— Ի՛նչ երջանկություն։

---

[1] Միլարեպա—տիբեթցի իմաստուն։

— Մինչև վերջը,— կրկնեց Աննետան, մատով նրան սպառնալով։— Դեհ, իսկ հետո, հետո... Ա՜հ, բոլորդ էլ այնպիսի սեփականատերեր եք։ Բռնել եք ինձ ու բաց չեք թողնում։ Ինչպիսի՜ երջանկություն է՝ փախչել ձեզանից։

— Հետո՛։ Հետո՛...— ասաց Ժուլիենը թերահավատ տոնով։— Ավելի լավ է թող որ ես ունենամ՝ առաջ։

Եվ իսկույն տխրելով, ավելացրեց.

— Ես այն չեմ ունեցել։

Աննետան դեմքը մոտեցրեց Ժուլիենին և ծեր կնոջ երիտասարդ աչքերը նայեցին նրան.

— Հարազատդ իմ միամիտ, նույնիսկ ընդունակ չես ունենալու այն, ինչ չես ունեցել։ Իսկ ահա ես ունե՛մ։

Նա հարցրեց.

— Անցյա՞լ։

Աննետան թափ տվեց ձեռքը, կարծես նրան հրավիրելով ականջ դնել։ Այդուց լսվեց Ժորժի ուրախ ձայնը։

— Ջո անցյալը։ Այն իմն է։

Ժուլիենը կուացավ ու Աննետայի ձեռքերը համբուրելով, ասաց.

— Այն քեզանից է։

Գալիս է մի այնպիսի պահ, երբ անցյալը, ներկան և նույնիսկ այն, ինչը դեռ լինելու է, կարծես թե միախառնվելով, մի ամբողջության են կազմում։ Մտնում ես շփման մեջ բոլոր ողջերի հետ։

Շփումն այդ անընդհատ է։ Այստեղից էլ տագնապը։ Այն գրվանի տակ է, գոյություն ունի օրվա բոլոր ակնթարթներին, առանց մեր մտքի մասնակցության։ Զգում ես, որ սահում ես դեպի անդունդ... Աննետան դա նկատեց այն բանից, թե ինչպես էր ճմլվում սիրտը ամեն անգամ, երբ թերթում կարդում կամ լսում էր ջրհեղեղների, Չինաստանում մասսայական սպանությունների, երկրագնդի տարբեր ծագերում սանձազերծված հալածանքների, աշխարհի տառապանքների կամ ուրախությունների մասին (բայց դրանք այնքան հազվադեպ են)։ Այդ լուրերը թափանցում են արյան մեջ ու արյան հոսքի հետ տարածվում մարմնով մեկ։ Եվ մարմինը ավելի շուտ է հաղորդակից դառնում դրանց, քան միտքը։ Արգանդը սրբազան անդաստանը թաքցնող ծածկույթ է, ինչպես խեցին, ուր արձագանքում են երկրի թրթիռները։ Մանուկ աշխարհի հետ այդ անդաստանը

մխացնող պորտալարը դեռևս կտրված չէր նա, ով ոտնձգություն է անում երեխայի դեմ, ոտնձգություն է անում նաև մոր դեմ։ Եվ երկուսին էլ ողողում են նույն ալիքները, տաք, թե սառնասառույց... Աննետան գիշերը ըմբոշխնում է այդ զարմանալի մայրության տանջալից քաղցրությունը։ Եվ աչքերը փակելով շշնջում.

— Որդյակդ իմ, որդյակդ իմ, Աշխարհ։ Մի՞թե իմ ծոցում ավելի լավ չէիր զգում քեզ։ Ինչո՞ւ դու ծնվեցիր...

Աշխարհը բնակեցված է հոգիներով, և նրանք ասես զանգեր են՝ հեռավոր ու մոտիկ։ Երբեմն Աննետային թվում է, թե ինքը վերադարձել է դեպի այն պահը, երբ որդու կողքին, դաշձի ծաղիկներով ու օձասխտորի կապտավուն աստղիկներով սիրված լեռնային խոտերի վրա մեկնված, ականջ էր դնում իրիկնային զանգերի՝ հարթավայրի բոլոր կողմերից լսվող ղողանջին։ Ոչ բոլոր զանգերն են միաժամանակ ղողանջում։ Մի քանիսը դեռ նոր-նոր են սկսում համաձայնքը, մյուսներն արդեն ղողանջել-վերջացրել են։ Զանգերից մի քանիսն էլ բոլորովին լուռ են, բայց լարված լսողությունը տարածությունը լցրած մտապատրանքների մեջ տակավին շարունակում է որսալ արդեն լռած կերկերուն ձայնը։ Լռել է Բրունոյի զանգը։ Միայն Աննետան է մեկ-մեկ որսում ծանոթ ձայնը։ Թե՞ լոկ նրա հիշողության մեջ են հնչում այդ ձայնից տարածվող ալիքները։ Ահա արդեն մեկ տարուց ավելի է, ինչ Բրունոյից լուրեր չկան։ Ո՞ղջ է, թե մեռած։ Անհետ կորե՞լ է, կատարելով իր վտանգավոր առաքելությունը։ Վերջին նամակում նա ակնարկում էր, որ շուտով կվերադառնա։ Բայց այն ժամանակվանից նրա հետքը կորցրեցին նույնիսկ սակավաթիվ բարեկամները, ովքեր գրում էին Հնդկաստանից, ասենք բուն Հնդկաստանն էլ փաստորեն գտնվում է պաշարողական վիճակում։ Ո՞ր ashram[1]-ում է նա կորցրել պատկերացումը ժամանակի մասին։ Թե՞ բոլորովին դուրս է եկել ժամանակի իշխանության տակից։ Աննետային այդ ասում էր մի անբացատրելի զգացում։ Օրերից մի օր, միանգամայն որոշակի մի ժամին (բայց այն ժամանակ Աննետայի մտքով չանցավ գրի առնել դա) Բրունոն հանկարծ դադարեց նրա համար հեռավոր բարեկամ լինելուց, բարեկամ, որը թափառում է մեր երկրով մեկ, չարչարվում նրա կեղևի որևէ դժվարամշակ կտորի վրա, և մեր տաղնապահույզ սիրտն ու երևակայությունը չանում են

1 Անապատում (հնդ.)։

Հետամուտ լինել նրա քայլերին։ Նա հիմա այստեղ է, ննջասենյակի կիսախավարում, ստվերում, ամեն մի շարժում պարուրող լույսի ներքո։ Նվ հարկ չկա նույնիսկ վերհիշելու նրա դեմքը, խոսքերը։ Նա ձուլվել է մեր շնչառությանը...

Նվ մյուս զանգն էլ ուր որ է կպոկվի ու ցած կընկնի զանգակատնից, բայց ոչ ոք չի կանխազգում այդ։ Աննետան չէր էլ կասկածում, որ Սիլվիոյի օրերը հաշված են, հաշված են իր՝ Սիլվիոյի կողմից։ Բայց Աննետայի օրինակը մեծ դեր էր խաղացել այդ վճիռը ընդունելու մեջ։ Շատ զարմանալի մի երևույթ. այդ կնոջից, որն արդեն կիսով չափ հեռացել էր կյանքից, զրկված էր գործելու հնարավորությունից՝ այնպես մաշված էր նրա օրգանիզմը, այնքան լուրջ էր նրա հիվանդությունը և այնքան խորն էր ներքին օտարացումը, այդ կնոջից, առանց նրա միջամտության, այնպիսի ուժ էր հորդում, որը գործելու կամքով էր վարակում բոլոր նրան մոտեցողներին։ Մարկի զոհը ինչ-որ չափով նրա երկրորդ մոլուցքն էր, թեև նա որդուն ցանկանում էր երկար, խաղաղ ու երջանիկ կյանք (ո՞ր մայրը չի ցանկանա), և դեռ զոհաբերության շատ կրակներ էին վառվելու նրա իսկ հանգիստ բոցից, նույնիսկ նրա կամքին հակառակ։ Հենց այդ օտարացումն էր թվում, անունդ ծառայում երիտասարդ եռանդի համար, որը դեռևս չէր հասցրել ճանաչել իրեն և ծարավի էր մարդկանց ծառայելու։ Նրա արտաքին անշարժությունը նման էր խառնարանի, ուր եռում է հալած մագմայի լիճը։ Լճի մակերեսը հայելանման հանգիստ է, լիճը նիրհում է։ Բայց նրան մոտեցողը կզգա, թե ինչպես է տաքությունը խփում իր դեմքին, թափանցում մինչև ուղն ու ծուծը։ Կրակը խոսքերի կարիք չի զգում։ Իրեն դիպչողին նա ասում է. «Այրվիր...»։ Բավական էր, որ այդ հանգիստ կինը նայեր ձեզ։ Թե որ ինքն այդ իմանար, գուցե աչքերը փակեր։

Երբ երես առ երես նա լսում էր Սիլվիոյին, որը տրտնջում էր տարագրության այլող դառնությունից, խոստովանում, թե ինչպես է տանջվում, որ լքել է գերեզմանային լռության մեջ զմրսված իր ժողովրդին, ափը դնում էր պատանու գանգուրներին, և Սիլվիոն վշտի բեռան տակ կորացած, չհամարձակվելով խոնարհած աչքերը բարձրացնել, լսում էր.

«Արթնացրու մեռածին նրա գերեզմանոցում։ Մի՞թե քեզ հայտնի չէ, թե ինչ գնով է ձեռք բերվել նրա Risorgimento*-ն։ Գնա և վճարի՛ր»։*

Աննախադեպ շրջունքները տեղմված էին։ Թայլց Սիլվիոյի ճակատին դրված նրա ափը պատանուն հաղորդում էր անխոս հրամանը։ Բավական էր, որ նա մի անգամ նայեր պատանուն և հարցներ.

— Մի՞թե դու մահճինիկ զավակը չես։

Այդքանը միայն Սիլվիոն գլուխը բարձրացրեց, նրան թվաց, թե իր վրա մկրտության ծես է կատարվել, մաքրվել ու հավատով է լցվել տատանվող հոգին։ Ճակատագիրն արդեն չէր ճնշում նրան։ Նա տեսնում էր իր խնդիրը և այրվում այն կատարելու ցանկությամբ։

Նա հրաժեշտ տվեց մեդոնյան փոքրիկ ամառանոցին։ Նրանից մեկ-մեկ կարճ նամակ էին ստանում։ Երրորդ անձանց միջոցով Աննետան իմացավ, որ Սիլվիոն իր հացը վաստակում է՝ լոնդոնի հյուրանոցներից մեկում թարգմանիչ աշխատելով։ Առանձնապես ոչինչ չկար դրանում։ Միջոցներ չունեցող տարագիրները հանձն էին առնում առաջին իսկ պատահած աշխատանքը։ Ժուլիենի միջոցով Աննետան փորձեց Սիլվիոյի համար գոնե համեստ կրթաթոշակ դասավորել, որը նրան թույլ կտար շարունակելու ուսման դադարնեցած Փարիզի համալսարանում, բայց Սիլվիոն հրաժարվեց, նույնիսկ չբացատրելով հրաժարվելու պատճառները։ Երևի ուզում էր մի քիչ փող կուտակել։ Ի՞նչ նպատակով, ոչ ոք չգիտեր։ Եվ քանի որ բարեկամները պնդում էին, նա ընդհանրապես դադարեց գրել։ Նրա մեջ նողկանք էին առաջացնում վեճերը, հավերժ ջուր ծեծելը, պասիվությունն ու տարաձայնությունները, փոխադարձ կասկածանքները, գործուն իդեալիզմի պակասը, ճոռոմախոսությունը, հակումը դեպի հին, նեխած պառլամենտարիզմը, որն արդեն չէր կարողանում հավասարվել նոր աշխարհի ընթացքին։ Նրան զզվեցրել էին ամբողջ արևմտյան երիտասարդությանը բնորոշ թերահավատությունը, ձգտումը դեպի հաճույքները, չափից դուրս հակվածությունը դեպի զգուշությունն ու փոխզիջումները, իդեալիստի համարում ձեռք բերելու՝ պճնամոլներին բնորոշ վախը, նույնիսկ «զոհ» բառի բուն իմաստը բոլորովին չհասկանալը... Հենց ներքին հակազդեցության շնորհիվ առողջ կենսական ուժը նրան ոգեշնչեց կատարելու իր հուսահատության մեջ հերոսական արարք, միայն թե այն հնչեր իբրև համայն աշխարհի վախկոտներին ու սրիկաներին հասցեագրված ապտակ։ Այդ պատանի, բայց ուշացումով ծնված, Շելլիի բանաստեղծական ռոմանտիզ-

մը զուգակցվում էր իր հոգևոր հոր՝ Մաձինեի անբերր հավատի հետ... Մեկ տարի անց Սիլվիոյի հետքը վերջնականապես կորավ։ Միայն Աննետան էր անկողնում պառկած այն որոնում գիշերվա մեջ, ականջ դնելով, թե ինչպես է պատուհանից այն կողմ խշշում անտառը, և նրան տանջում էր անորոշ կանխազգացումը, որ վաղ թե ուշ փախստականը դուրս կգա թավուտից և կկատարի առայժմ անիմանալի մի գործ։

Այն ժամանակ Մեդոնում նորից հայտնվեց Ասյան։ Նա երկրորդ անգամ էր այրիացել։ Ամերիկացի ամուսինը ճանապարհին լքել էր նրան։ Երևում է, Ասյային վիճակված էր ուժասպառ անել իր ուղեկիցներին, նրանց իր ետևից քարշ տալով քարքարոտ ճամփաներով, որոնցով հանգիստ քայլում էին վնասվածքներից չվախեցող նրա ոտքերը։ Հովարդ Դրեյքը մեռել էր իր դիրքում, պերուական բանտից դուրս գալուց անմիջապես հետո, որտեղ նրան խոշտանգել էին։ Նրան բաց էին թողել, երբ նա, տիֆով հիվանդ, արդեն մահամերձ էր։ Վախճանվել էր օտար ձեռքերի վրա. Ասյան, որին չէին հասցրել ժամանակին զգուշացնել, շտապ կտրել-անցել էր ամբողջ Ամերիկան, բայց ուշացել էր,— Հովարդի մարմինն արդեն հանգչում էր հողում։ Եվ մինչև վերջին րոպեն նա սրբորեն հավատացել էր Ասյային։ Ոչ մի բանի համար չզղջաց։ Եվ մեռնելիս խնդրել էր Ասյային հաղորդել. «Շնորհակալություն ամեն ինչի համար։ Ասյա, թանկագինս, կանգ մի առ, գնա առաջ։ Իմ թեթևաքայլին մաղթում եմ դյուրին ճանապարհ»։

Եվ թեթևաքայլը վերսկսել էր իր վազքը։ Հետը վերցնելով ամերիկացի շեկլիկ ձագուկներին, վերադարձել էր Սովետական Միություն, որտեղ շուտով գնահատել էին հնդկա-ամերիկյան պրոբլեմների նրա իմացությունը։ Նրան զանազան հանձնարարություններ էին վստահել։ Եվ մի անգամ նա ճանապարհը թեքեց դեպի Մեդոն։ Աննետայի տնեցիները տեսան արևառ, թխադեմ, կոփված մի կնոջ, կոպտացած ափերով, երևի նաև նույնպիսի ներբաններով, բայց դեմքին ոչ մի կնճիռ չկար, միայն երբեմն հոնքերի արանքում մի մութ խորշում էր հայտնվում։ Այտերի ու ճակատի մաշկը ողորկ էր, պիրկ, անխոցելի երկնային ու երկրային բոլոր փորձությունների դեմ։ Իր թափառումներից նա Վանյային զվարճալի մասունքներ էր բերել՝ բաց արծաթավուն երանդի օձի խորխեր, պաշտամունքի զարհուրելի և հետաքրքրական առարկաներ, եղյուրե փորագրված կոթով պա-

ջույն։ Ամեն մի նվերի հանձնումը ուղեկցվում էր դրա ձեռք բերման հակիրճ պատմությամբ։ Հենց այդ հակիրճությունն էլ ընդգծում էր նվերի արտասովոր լինելը։ Իսկ Աննետայի համար Ասյան բերել էր պալեխյան վարպետների գործերից մի լաքապատ զարդատուփ, որի կափարիչին ռուս գեղջուկ-տնայնագործները պատկերել էին մարգագետին, իսկ մարգագետնում, Բյուզանդիան կամ Ռավենան հիշեցնող ոճով, անկաշկանդ ու ծանրաբարո շուրջպար։

Ասյային ապշեցրեց Աննետայի արտաքինում տեղի ունեցած փոփոխությունը, որ չէին նկատում Աննետային ամեն օր տեսնող տնեցիները։ Նա ժորժին մի կողմ տարավ և պատվիրեց առաջին իսկ տագնապի դեպքում հեռագրով անհապաղ իրեն լուր տալ։ Նա կգա, որտեղ էլ որ գտնվելիս լինի։ Ժորժը նույնիսկ չմտածեց էլ զայրանալ Ասյայի այդքան տիրական տոնի համար։ Նա ևս, ինչպես Վանյան, հոգու խորքում հիանում էր Ասյայի՝ ցանկացած վտանգ արհամարհող կյանքով։ Ու, թեև նա չէր սիրում Ասյային, Ասյան նրան հարգանք էր ներշնչում ոչ թե այն բանով, թե ի՛նչ էր ասում, այլ թե ինչ չէ՛ր ասում մինչև վերջ և էլ ավելի այն բանով, ինչը լրացնում և ամբողջացնում էր իր՝ Ժորժի, երևակայությունը... Ասյան չէր ջանում որևէ բան թաքցրնել. նա այնպես էլ չէր ապաքինվել անկեղծության հիվանդությունից (բացառությամբ իր աշխատանքի) այլ ուղղակի միշտ շտապում էր, պատմությունը ընդհատում կտրուկ դիտողությամբ կամ, խոսքը չավարտած, հանկարծ բարձրաձայն ծիծաղում էր։ Եվ դա սովորաբար պատահում էր ամենահետաքրքիր տեղերում։ Գրգռելով իր ունկնդիրներին, նա լռում էր։ Ասյան ինքն էլ շարունակելու խնդրանք էր տեսնում Վանյայի հայացքում։ Ասյայի մութ աչքերում ծիծաղ էր փայլատակում։ Նա ասում էր.

— Հետո, հետո։ Ժամանակ չունեմ։ Կմեծանաս, ամեն բան ինքդ կտեսնես։

Նա մեկնեց։ Եվ Ժորժն ու Վանյան դեռ երկար ժամանակ մտովի ջանում էին հետևել տարածության մեջ արդեն կորած նրա հետքին։ Այժմ նրանք իրար հետ հաճախ էին խոսում այն մասին, թե ինչ է կատարվում Ռուսաստանի կարմիր դարբնոցում։ Վանյայի ուշադրությունն ու ինքնասիրությունը բորբոքում էին այն կարճ, շտապով խզբզած նամակները, որ մեկ-մեկ ուղարկում էր նրա խորթ եղբայրը՝ աղվեսաճուտ Ուլդոն։ Այդ նորահայտ, տասնամյա մոսկվացին ուղղակի հպարտությունից

չգիտեր ինչ անել։ Նա գրում էր «մեր հնգամյակի» մասին, իբր տեսնք, «մենք էլ ենք վար անում»։ Նա «հոկտեմբերիկ» էր (այդպես էին կոչվում նրա տարիքի երեխաները), բայց հպարտորեն հայտարարում էր, թե շուտով պիոներ «կդառնա»։ Պիոների կոչումը ծանր պարտականություններ էր դնում նրա վրա, որոնք Ուոլդոն ամեն տեսակ իրավունքներից բարձր էր գնահատում։ Նա շտապում էր շուտ, շուտ դառնալ «հարվածային բանվոր»։ Հովանավորական ափսոսանքի տոնով հարցնում էր, թե Վանյան և նրանց ամբողջ Արևմուտքը, վերջապես, երբ են որոշելու հետևել ռուսների օրինակին և իրենց մոտ հեղափոխություն անել։ Կարդալով իր ինքնագոհ եղբայրիկի ուղերձը, Վանյան քրքջում էր արտասվելու աստիճան։ Նա պատկերացնում էր Ուոլդոյի կճատ, շեկ պեպեններով ծածկված քիթը, մշմշացող ու փնչացող քթիկը, և անչափահաս այդ Հերկուլեսին, որը պարզած ձեռքերի վրա, ինչպես կցագնդեր տանում է «հնգամյակների» պլանները։ Բայց հոգու գաղտնարաններում Վանյան տառապում էր, որ չի կարող նույն կերպ պատասխանել։ Եվ այն լուրը, որ Ուոլդոն այնտեղ միջնակարգ դպրոցում աշխատանքային պոլիտեխնիկական կրթություն է ստանում, բոլորովին վշտացրեց նրան։ Վանվի լիցեյը հիմա նրան թվում էր անհույս հնացած։ Ջնայած Վանյան թույլտվություն էր ստացել ազատ ժամերին աստղաձագործական արհեստի դասեր վերցնելու, այդ դասերը բոլորովին էլ իսկական աշխատանքի բնույթ չէին կրում (կոնկրետ բնույթ, ինչպես Ուոլդոն էր արտահայտվել), դրանցում չկար այն ընկերական ոգին, որը տիրում էր արհեստանոցներում, որտեղ Ուոլդոն և նրա ընկերները սովորում էին մշակել փայտ, կաշի կամ մետաղ և արտադրում էին հասարակության համար օգտակար առարկաներ։ Այնտեղ բանվոր-բանվոր չէին խաղում։ Այնտեղ բանվոր ծնվում էին, այնտեղ մանուկ տարիներից մասնակցում էին մեծ կառույցին։ Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև այնտեղ բոլոր մարդիկ մեկ միասնական օրգանիզմ էին կազմում։ Ինչպե՞ս էր նրանց նախանձում Վանյան՝ փոքրիկ անհատապաշտը, անհատապաշտների որդին, թոռը, ծոռը։ Աստղալ բնազդը, ավելի շուտ՝ իր ուժերի նկատմամբ ունեցած գաղտնի հավատը հուշում էր նրան, որ այնտեղ, այն հասարակական հզոր օրգանիզմում նրա անհատապաշտությունն ավելի մեծ ազատություն կգտնի իր համար, կզարգանա էլ ավելի լիակատար կերպով։

Վանյան պահանջեց, որ Ժորժն իրեն ծանոթացնի մարքսիստական տեսությանը, որի մասին Ժորժը պատկերացում չուներ, և պատմի Սովետական Միությունում դրա կիրառման մասին։ Ժորժը լրջորեն ձեռնամուխ եղավ մարքսիզմի ուսումնասիրությանը և իսկապես հետաքրքրվեց առարկայով։ Նա շռայլորեն օժտված էր առողջ դատողությամբ ու զուտ ֆրանսիական թեթևամտությամբ և չէր կարող իրեն անվերապահորեն նվիրել այնքան ծայրահեղ մի քաղաքական կոնցեպցիայի ծառայելու գործին։ Մյուս կողմից, նրան ամենից քիչ էին անհանգստացնում այն վտանգները, որոնք սոցիալական ցնցումների ժամանակ կարող էին սպառնալ նրան, նրա մերձավորներին և հատկապես նրա բարիքներին, անձնական գույքին։ Չէ՞ որ վտանգները մեր կենդանության օրոք մեզ մատչելի բավականությունների կեսն են։ Հանգիստ, առանց ավելորդ բառերի, նա սկսեց խոհվարարական գրքույկներ թարգմանել գերմաներենից, իսկ հետո նաև ռուսերենից, որ սովորել էր հանուն իր և Վանյայի բավականության։ Հրատարակիչ էլ գտնվեց, թեև Ժորժի բոլոր հարազատներին ու բուրժուական ընտանիքներից սերած ծանոթներին այդ գրքույկներն ընթերցելիս դող էր համակում։ Շուտով Ժորժի մասին «մոսկովյան պրոպագանդիստուհու» համբավ տարածվեց։ Դա արդեն վերջնականապես ծիծաղեցրեց նրան։ Թե իրեն բանադրողներին, և թե իրեն պատրելով կանչել ջանացողներին նա քիթ էր ցույց տալիս։ Նա պահպանեց իր ազատությունը և գտնվում էր հանգիստ անհանգստության, անորոշության վիճակում։ Նա ասում էր. «Թող լինի, ինչ լինելու է» և չէր ցանկանում դիմել սիրած նեցուկներին իր ծնողի, որը շարունակ կրկնում էր. «Արա այն, ինչ հարկ է»։ «Խե՜ղճ հայրիկ»։ Նա, որ հանուն իր համոզմունքների գիտակցաբար վտանգների էր ենթարկել իրեն, ավելի շատ էր անզուսպ պահանջ զգում կառչելու «պարտքից», բացարձակի ստվերից, աստծո հանգուցյալ հավատի մնացուկներից, քան իր դուստրը։ Նա ոչմի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչպես է իր դուստրը կայտառորեն ու ճարպկությամբ ձկան պես լողում մշտական փոփոխությունների մեջ, չէ՞ որ մեր օրերում ամեն բան այնպես հոսուն է և հարաբերական...

«Այսօր՝ այսօր է, իսկ վաղը՝ վաղը։ Ես հարմարվում եմ ցանկացած օրվան։ Եվ եթե նույնիսկ ամեն ինչ հանկարծ տակնուվրա լինի, մի կերպ կանգուն կմնամ։ Ջուր չէ, որ դահուկորդու-

հի եմ և կարողանում եմ ցատկել։ Հապա մի ցատկի՛ր, հատրակութիւն»։

Որոշակի կարգուկանոնի պայմաններում դարեր ապրած մարդկութիւնը սոսկում է ճամփաբաժնում իր ցեղին դարանակալող աղետի մտքից։ Նա չի կասկածում, որ այդ ցեղը փոխում է մաշկը և հարմարվում աղետներին այնպես, ինչպես կարգուկանոնին։ Ինչպես մարդու մաշկն է աստիճանաբար ընտելանում բևեռային սառնամանիքների խայթոցներին և արևադարձային ճառագայթների այրոցներին, այնպես էլ աստիճանաբար նեղդաշնակութիւն է հաստատվում աղետածին հանգամանքների և դրանցից կյանք առնող մարդկային ֆաունայի միջև։ Այնտեղ, ուր մեռնում են ծերունիները, ում թոքերն այլևս չեն կարող հարմարվել ու շնչել նորովի, այնտեղ աներկյուղ թռչկոտում է երիտասարդութիւնը։ Ով գուցե այն օդը, որ դյուրին շնչել են հայրերը, սպառնա հեզձամահ անել որդիներին։ Գրո՛ղը տանի։ Ժորժն ու Վանյան ամպրոպալից ու քամու պոռթկումներից ցնցվող այժմյան օդը չէին փոխի ամենադրախտային օդախառնուրդի հետ։

Ոչ թե փոթորկի միջով թռչող-անցնող թռչուններն են փոթորիկ ստեղծում, այլ փոթորիկն է ստեղծում նրանց։ Փոթորիկը նրանց սովորական տարերքն է։ Երեկվա օրով ապրողների համար չերմաչափը տենդ է ցույց տալիս, բայց դա մեր ժամանակների համար ամենասովորական չերմաստիճանն է։ Երեկվա օրից ժառանգութիւն մնացած բանականութիւնը ևս քշվում-տարվում է փոթորիկի կողմից, այն արդեն անցել է «երեկվա» շեմքը և մի ցատկով հասնում է նոր հետևութիւնների։ Ոգին զուր է չանում, մարտից խուսափելով, անկախութիւն պահպանել. խառնվածքը մոնում է նրա մեջ, չթողնելով, որ արթնանա գիտակցութիւնը։ Որքան էլ, որ Ժորժին անհեթեթ էր թվում դասակարգային պայքարի գաղափարը, նա արդեն գտնվում էր բարիկադների այն կողմում, արդեն կանգնել էր «պրոլետարական» դրոշի ներքո, թեև առաջվա պես կատակով ծաղրում էր «պրոլետար» բառը։

Ու եկավ այն երեկոն, երբ արտասահման կատարած նրանց կարճատև ճամփորդութեան ժամանակ՝ Աննետան գնացել էր սրտի հիվանդութիւնների մասնագետի հետ խորհրդակցելու և հետը տարել էր Ժորժին ու Վանյային, նրա երիտասարդ ուղեկիցները գնացին փողոցներում թափառելու։ Երբ նրանք վերա-

զարձան հյուրանոց, Աննետան զարմանքով նայեց նրանց գըր-գըռված դեմքին, վառվող աչքերին։ Ժորժը հանդգնորեն ծիծաղում էր, իսկ Վանյան, ափը պարզելով Աննետային, մի դնդակ ցույց տվեց, որ վերցրել էր հրապարակից, ուր անսպասելիորեն, առանց որևէ նախազգուշացման, զինվորները կրակ էին բացել ցուցարարների անզեն ամբոխի վրա։

— Հաջորդ անգամ պետք կգա թշնամու դեմ,— ասաց Ժորժը։

«Թշնամո՞ւ։ Կնշանակի Ժորժի համար արդեն թշնամի դոյություն ունի։ Կնշանակի նա արդեն ընտրություն է կատարե՞լ։ Ընտրությունը նա՛ չէր կատարել։ Նրա փոխարեն էին ընտրություն կատարել, ընտրությունը թշնամին էր կատարել։ Եթե դուք նույնիսկ ուզում եք մերժել դասակարգային պայքարի գաղափարը, տիրող դասակարգը ուժով ձեր վզին կփաթաթի այդ գաղափարը, թեև հնարավոր է, որ դուք ինքներդ պատկանում եք այդ դասակարգին։ Մարդը խզում է իր կապերը այդ դասակարդի հետ, հեռանում, ոտքերի վրայից թափ տալով նրա հողն ու մոխիրը, քանզի տեսնում է, թե ինչպես այդ դասակարգը, ցանկանալով պահպանել իր եկամուտներն ու խարդախությունների ազատությունը, արդեն չբավարարվելով այն օրենքներով, որոնց վրա հիմնվում էր նրա դեմոկրատիան, կոպտորեն ոտնահարում է այդ նույն օրենքները, սեփական ձեռքով շուռ տալիս իր դեմոկրատիան և դիմում դնդացիրների ու արտակարգ տրիբունալների օգնությանը, ինչպես նաև զանազան դուչենների, սոցիալիզմի ռևնեգատների օգնությանը, որոնք դուրս են եկել բանվորական միջավայրից և հիրավի ունեն հզոր ծնոտ ու հզոր վիզ, միանգամայն օգտակար բոլոր նրանց համար, ովքեր ծառայում են պառամյալ տերերին (փոխադարձ հաշիվները նրանք հետո կըմաքրեն, երբ ժողովուրդը սանձված կլինի)։ Դեմոկրատիան դավաճանեց իրեն։ Նա ինքը կտոր-կտոր արեց այն վարչակարգին բնորոշ կեղծիքի սարդոստայնը, որը պարծենում էր իր «լիբերալիզմով» և ազատությամբ այնքան ժամանակ, քանի դեռ կարող էր ազատորեն լիբերալիզմի լոգունգներով քողարկել իր հանցանքները։ Իսկ հիմա, երբ դրա համար ուժ է հարկավոր, «լիբերալիզմը» վերածվում է ֆաշիզմի։ Պատերազմը հայտարարված է։ Եվ այն հայտարարել է «կարգուկանոնի» կուսակցությունը։ Կարգուկանոնը ընդդեմ կարգուկանոնի, ուժը ընդդեմ ուժի։

Աննետան հստակ պատկերացնում էր, թե ինչ վտանգներ էին սպասում նրանց, ում ինքը սիրում էր՝ իր երեխաներին, բարե-

կամներին, մերձավորներին։ Երբեմն նրան ցույց էին տալիս այդ վտանգները։ Բժիշկ Վիլարը, Ժուլիեն Դավին։ Նրանք միայն զարմանում էին նրա հանգստության վրա։ Աննետան բոլորովին չէր կարծում, որ իր երեխաների բախտը այնքան ողբալի է։

Սրտնեղության պահերին Ֆիլիպ Վիլարը Աննետայից չէր թաքցնում, որ իր կուսակցությունը չի խնայի ո՛չ Աննետային, ո՛չ նրա կուսակցությանը։ Աննետան ինքն էլ հասկանում էր այդ։ Բայց թե մեկը, թե մյուսը գիտեին, որ երկուսն էլ կմեռնեն մինչև վճռական ճակատամարտերի սկսվելը։ Եվ մեկը մյուսին ձեռնոց նետելով, մարտականորեն ու բարեկամաբար ժպտում էին։

Ժուլիեն Դավիի սովորական հոռետեսությունն ավելի սաստկացավ։ Վերադառնալով Ամերիկա կատարած վերջին ուղևորությունից (դա հիտլերյան թաթառի նախօրյակին էր, Գերմանիայում սոցիալիզմը փլվել էր, ինչպես թղթե տնակ, նրա պարագլուխները հանձնվել էին առանց մարտի՝ լավա՜ծ կործանում), Ժուլիենը երկյուղ հայտնեց, որ Արևմուտքի ազատությունը գըտնըվում է սպառնալիքի տակ։ Աննետան լսեց նրան հանգիստ ժպտալով։ Նա գտնում էր, որ այնքան էլ մեծ դժբախտություն չէ, եթե մեր պաշտպանած գործը պարտություն է կրել։ Այ, եթե մենք լռելյայն ընդունենք պարտությունը, այդ դեպքում, դըժբախտությունը հիրավի անուղղելի կլինի։

— Երբեք չեմ ընդունի այն, ոչ ես, ոչ էլ նրանք, ում սիրում եմ՝ իմ զավակները, բարեկամները, իմ ուղեկիցները, այդ թվում և դուք, Ժուլիեն։ Ուրեմն ինչո՞ւ մորմոքվենք։ Մենք արդեն դուրս ենք եկել այն տարիքից, երբ ուզում են անմիջապես ստանալ դուր եկած խաղալիքը։ Տասը, քսան, հարյուր տարին ոչինչ չեն նշանակում, եթե մենք կամք ունենք։ Եթե մենք գիտենք, որ գործն արդար է, որ այդպես էլ պետք է լինի, հետևաբար, մենք գիտենք, որ այդպես էլ կլինի։ Այն, ինչ մտել է մեր գիտակցության մեջ, ճակատագիր է։ Եվ այն կկատարվի մեր կյանքի կամ մահվան օգնությամբ։ Տա աստված, որ հանուն դրա մի քիչ էլ ապրեմ, հանուն դրա զոհեմ կյանքս։ Գոնե գիտեմ, որ մերձավորներս կկարողանան իրենց կյանքը տալ նույնպիսի ուրախությամբ, ինչպիսի ուրախությամբ, որ ես կտայի։ Ողջ, թե մեռած, ես կլինեմ ճակատամարտի մասնակից... «Quos non accendam[1]»։ Հարկավոր է միայն զորավիգ լինել նրանց եռանդին ու հավա-

1 Ինչ գագաթների ասես, որ ես չեմ հասնի (լատ.)։

տին, ում սիրում ես։ Ահա նրանք, ում եռանդը հավասար չէ հավատին (կնշանակի, թույլ է նրանց հատավատը), նրանք, ովքեր չունեն մի այնպիսի բան, հանուն որի զոհաբերեն իրենց, նրանց իրոք շրջանցել է ճակատագիրը։ Մեր ժամանակները ծանր են, դաժան, բայց հիանալի են ուժեղների համար։ Իսկ ուժեղ կարող է լինել ամենավտիտ մարդը, պետք է միայն ժամանակի հետ համընթաց քայլել։

— Այդ դեպքում ինչո՞ւ էիք պացիֆիստուհի ձևանում,— հարցրեց Ֆիլիպը։— Ինչո՞ւ էիք պատերազմի տարիներին այնպիսի զզվանք դրսևորում պատերազմի նկատմամբ։

— Որովհետև ես զզվում եմ ամեն տեսակ անմտությունից։ Իսկ ազգերի այն պատերազմը հիմնված էր կեղծիքի ու հիմարության վրա։ Այն մեզ քաշում էր դեպի ետ, դեպի անցյալ։ Ես ափսոսում եմ միլիոնավոր զոհվածներին, ցավում նրանց համար, և նրանք ինձ զայրացնում են։ Բայց ինձ զայրացնում է ոչ այնքան նրանց զոհաբերությունը, որքան այդ զոհաբերության անհեթեթությունը։ Այնտեղ, որտեղ խոսքը մարդկային հասարակության ու նրա ապագայի իսկական փրկության մասին է, զոհաբերության հարց չկա։ «Ո՛չ, դա զոհաբերություն չէ»։ Հիշեք հապա Ալեքսեյի մեներգը[1]։ Մարդը գիտի, հավատում, սիրում է ու զոհաբերում իրեն։

— Զոհաբերում է ուրիշներին։

— Ճիշտ չէ։ Ես ուղղակի մյուսներին օգնում եմ գիտակցելու, թե հանուն ինչի արժե զոհաբերել իրեն։ Բայց թող նրանք ազատ լինեն իրենց ընտրությունում մեջ։

— Նրանք ընտրության ազատությունից կզրկվեն հենց այն պահին, երբ դուք կշեռքի նժարին գցեք ձեր կրքերը...

— Իմ բանականությունը...

— Դե լավ, թող լինի բանականությունը։ Բայց չէ՞ որ բանականությունը բոլոր կրքերից ամենակույրն է։

— Ամեն ինչ պայքար է, ուզում ենք մենք այդ, թե չենք ուզում։ Պարզ ու առավել հստակ միտքը չի հապաղի այսպես թե այնպես իր ազդեցությունը գործել։ Այն անխուսափելիորեն ներգործում է թույլ և անվստահ հոգիների ընտրության վրա։ Այստեղ արդեն ոչինչ չես կարող անել։ Եվ լավ է, որ այդպես է։ Մեծ ծանրությունը մեծ էլ կշիռ է ունենում, ճիշտ չէ՞։ Զգողականության օրենքն է այդպիսին։

[1] Գլուխի «Ալեքսեյա» օպերայից։

— Դե, գիտեք ինչ, հոգու խորքում դուք ինձանից ավելի անմարդկային եք։ Դուք ուղղակի քար եք։

— Օ՜, եթե կարողանայի քար դառնալ, մեկը այն քարերից, որոնցից կառուցվելու է աստծո Քաղաքը։

Աննետան լռեց ապա, տխուր ժպտալով, ավելացրեց.

— Եվ չմոռանաք, որ այդ շենքը ես ամրացրել եմ տղայիս արյամբ։ Քարից արյուն է ծորում։ Քարը կենդանի է։

Մեծերի խոսակցությունը լսելով, Վանյան ինչ-որ բանի մասին էր մտորում։ Երբ բժիշկ Վիլարն ու Ժուլիեն Դավին գնացին, նա հարցրեց Աննետային.

— Աստծո Քաղաք... Դու ինչո՞ւ այդպես ասացիր։ Բայց չէ՞ որ, Մաննի, աստված գոյություն չունի։

(Ժորժի և Ասյայի համար դա միևնույն էր)։

Եվ իրոք, Աննետան ինչո՞ւ ասաց այդ բառը։ Նա դրա մեջ չէր դնում այն իմաստը, որ դնում էին ուրիշները։ Բայց ինչպես արտահայտել այն, ինչով լցված է Վանյայի սիրտը, այն, ինչ չի անցնում, ինչպես անցնում է ամեն բան աշխարհում, այն, ինչ իր մեջ է ներառնում բոլոր նրանց, ում սիրում ես՝ թե մեռածներին, թե ողջերին, և նրանց հանդեպ քո տածած ամբողջ սերը, բոլոր էակների անխախտ դաշինքը և, վերջապես, այն ամենը, ինչ գտնվում է անդին։ Աննետան ժպտաց։

— Ես ուզում էի ասել, «այն, ինչ սիրում եմ»։ Իսկ մնացած բոլորը թող լինի կամ չլինի, դա արդեն իմ գործը չէ։

— Կարելի է սիրել լոկ այն, ինչը կա։

— Եթե սիրում եմ, կնշանակի, դա կա։

Վանյան կնճռոտեց ճակատը։ Բայց Աննետան խորհուրդ տվեց.

— Քեզ մի չարչարիր... Մեկը մի բանի է հավատում, մյուսը՝ մի այլ բանի։ Դա մեծ նշանակություն չունի։ Բառերն ասես ճանապարհի ուղեցույց սյուներ լինեն։ Քամին կարող է տապալել դրանք, անձրևը՝ սրբել մակագրությունները։ Միակ կարևոր բանը ճանապարհն է։

Իսկ մեր կողմնացույցը մեզ հետ է... Գնա՜նք միասին։ Մեկը աջ է նայում, մյուսը՝ ահյակ։ Բայց բոլորն էլ քաջաբար գնում են նույն ճանապարհով... Ինչպես երգի մեջ. «Գնանք զբոսնելու անտառում»։ Իսկ այնտեղ գայլ կա։ Ուղիղ գայլին ընդառաջ։

Գայլը հասկանալի էր։ Եվ Վանյան պատրաստ էր հանդիպելու նրան։ Բայց Վանյայի համար, ինչպես և Ժորժի համար, տատիկը, անտառի թավուտի պես լի էր հրաշքներով ու առեղծված-

ներով։ Երկուսին էլ ձգում էր Աննետան, թեև քաշվում էին նրանից։ Տատիկն այստեղ էր, նրանց կողքին (աշխարհում ոչ ոք չէր կարող նրանց ավելի մոտ լինել) և միևնույն ժամանակ նրանցից շատ հեռու։ Երբեմն ուղղակի սիրտ-սրտի կպած էր լինում։ Բայց նրանք լավ չգիտեին, թե նա ինչ է մտածում։ Աննետան ևս միշտ չէ, որ իմանում էր այն, ինչ նրանք էին մտածում։ Չկար այն մշտական ու իրավահավասար մոտիկությունը, որ գոյություն ուներ փոքրիկ ժանի ու ժորժի միջև։ Դա քիչ էր և միաժամանակ անսահմանորեն շատ։ Երկու սերունդ, երկու տարբեր աշխարհ։ Ջեմ սխալվի, եթե ասեմ, որ մեր գյուղերում հավատացյալները մոտավորապես այդպես են զրուցում իրենց երկնային թագուհու հետ և մոտվի նրան վստահում իրենց բոլոր գործերը. գիտեն, որ նա բարի է, հավատում են նրան, սիրում։ Բայց թե ինչ կա նրա հոգում, դրանից նրանք գլուխ չեն հանում։ Շատ բան կա այդ հոգում, որը գոյություն է ունեցել դեռևս այն ժամանակ, երբ նրանք չեն եղել։ Նրանք այնքան էլ չեն հասկանում նրա ժպիտի իմաստը, հայացքը։ Եվ չեն կասկածում, որ իրենց աչքերը նրա համար նույնպիսի առեղծված են։ Նրանց մեջ շատ բան կա, որ գոյություն է ունենալու նրանից հետո։

Անրջելով բաց պատուհանի մոտ, Աննետան տեսնում էր, թե ինչպես է գիշերը փոխարինում ցերեկին, ամառը՝ ձմռանը, տարվա մի եղանակը՝ մյուսին։ Իսկ նրան այդ ամբողջը մեկ միասնական տարի էր թվում։

Այդ օրերին մենք կրկին տեսնվեցինք՝ վերջին անգամ։ Ես նրան մենակ գտա Մեդոնյան անտառի եզրին թաքնված նրանց տնակում։ Երիտասարդները տեղ էին գնացել։ Նրանք վազվզում էին Փարիզում և նրա շրջակայքում։ Հաճախ ամբողջ օրը տանը չէին լինում։ Սկզբում ժորժը խղճի խայթ էր զգում, բայց Աննետան հանգստացրեց նրան (նրանց էլ հենց միայն այդ էր պետք)։ Նա Geschwister[1] համոզեց օգտվել գարնանային հրաշալի օրերից և հեծանիվով շրջել Իլ-դը-Ֆրանսում, կամ ոտքով էքսկուրսիա կատարել, գիշերել ճանապարհին պատահած գյուղակում, եթե եղանակն ու տեղանքը թույլ տան՝ նաև բաց երկնքի տակ, իսկ վաղը վերադառնալ տուն։ Նա տնակում մնաց մենակ։ Եվ ամբողջ գիշեր ականջ էր դնում շների հեռավոր հաչոցին։ Նա իրեն լքված չէր զգում։ Մոտվի թափառում էր իր ուրախ ոտատր-

1 Եղբորն ու քրոջը (գերմ.)։

ներք հետ միասին։ Նրանց ոտքերը, ձեռքերը, աչքերը Աննետայի փոխարեն հաճույք էին ստանում կյանքից, նրանցով նորոգվում էր Աննետայի հեռացող կյանքը...

Ես իսկույն նկատեցի, որ նա շատ է հոգնել, այնքան է հոգնել, որ չի կարող նույնիսկ պարտեզ դուրս գալ։ Նա կիսապառկել էր փոքրիկ պատշգամբում, դեպի ուր տանում էր նրա ննջասենյակի դուռը։ Թեև նրա կարճատես աչքերը, ամառային երկար իրիկվա պես հոգնած նրա հայացքը արդեն չէին զանազանում անցորդներին, նա իսկույն ևեթ ճանաչեց ինձ, նույնիսկ ավելի շուտ, քան ես կբացեի պարտեզի դռնակը։ Աննետան ձայն տվեց ինձ և, ձեռքը սիրալիր թափահարելով, հրավիրեց.

— Մտեք։

Տանը ոչ ոք չկար, երիտասարդ աղախինը առանց թույլտվության ինչ-որ տեղ էր փախել։ Ես թեթևակի հանդիմանեցի Աննետային. տանը մենակ մնալը պարզապես անզգուշություն է։ Բայց նա ինձ խնդրեց չնախատել աղջկան։ Հեռու ինչ-որ տեղ, ես այնպես էլ չհասկացա, թե որտեղ, հնկնկում էր երգեհոնիկը, ճռնչում էին կարուսելները, լսվում էր տոնավաճառի այլաձայն ժխորը, հավանաբար փայտե ձիերը դիտելու համար թռել հավաքվել էին, ինչպես ճանճերը մեղրի վրա, շրջակայքի բոլոր դեռահասները։ Երևի այնտեղ էր վազել նաև Աննետայի աղախինը։

— Նրա տարիքում ես էլ չէի համբերի,— ասաց Աննետան։

— Իսկ եթե հանկարծ ու պահանջվի որևէ բան մատուցել ձեզ։ (Ես դիտմամբ չասացի «օգնել», բայց Աննետան հասկացավ)։

— Դե, ինձ նման պառավն ինչից պետք է վախենա։ Ես այլևս ոչինչ չունեմ, ոչինչ, բացի իմ անուրջներից։ Դա մեր միակ առավելությունն է երիտասարդության նկատմամբ։ Պատահում էր մի ամբողջ կույտ ամեն տեսակ բարիք էինք վերցնում և, մեկ է, կորցնում էինք ամբողջ ճանապարհին, դեռ մեջքներս էլ ծռում էինք, ինչպես մի շալակ փայտի տակ։ Իսկ հիմա խնդրեմ, վերցրեք ինձանից ամեն ինչ, նույնիսկ կճեպս, ես դուրս եմ պրծել դրա միջից և հիմա այն հազիվհազ է կառչում կյանքից, ինչպես հողաթափերը բութ մատից (և Աննետան մերկ ոտքից դեն գցեց կոշիկը)։ Մի՞թե ավելի լավ չէ ազատվել ամեն ինչից։

— Մի քիչ սպասեք, ինչո՞ւ շտապել։ Դեն մի գցեք ձեր բարեկամներին։ Չէ որ մենք բոլորս նույնպես ձեր հողաթափերն ենք։

— Դուք իմն եք, ես՝ ձերը։ Այո, մարդուս համար ամբողջ

կյանքում հազվադեպ և կոշիկ են ծառայում նրանք, ում սիրում ես՝ ծնողները, երեխաները, բարեկամները, սիրեկանները և այս բարի, հինավուրց հողը, դուք միայն նայեք նրան, տեսեք, թե ինչպես է նա իր գարնանային տաք շնչով պարուրում ձեզ, այն բոլորը, ինչը աճել, միացել է մեզ՝ գազանները և մարդիկ, իսկ դա երբեմն հնշում է։ Բայց ես գնում եմ։ Հիմա արդեն շուտով։

— Գոնե դրանով մի պարծեցեք մեր առջև, չափազանց ակընհայտ մի դրսևորեք ձեր բավականությունը։

Աննետան ծիծաղեց.

— Ներեցեք ինձ, խնդրում եմ։ Բայց, բարեկամս, ես չէ որ ձեզ էլ եմ բաժին թողնում նույն բավականությունից։ Բոլորը հետս չեմ տանի։ Դուք էլ կգնաք։ Դուք գնում եք։ Եվ այն ամենը, ինչ մենք սիրում ենք, գնում է, նույնիսկ այս հինավուրց, բարի հողը։ Ո՛չ, ո՛չ, մենք եսամոլներ չենք։ Ո՛չ մի ավելորդ ներողամտություն։ Ինչ մեկին, այն էլ մյուսին։ Լիակատար հավասարություն։

— Դեմոկրա՜տ։

— Ո՛չ։ Կոմունիստ, նույնիսկ մահվան մեջ։

— Մենակ՝ բոլորի հետ։

— Այո, մենակ՝ բոլորի մեջ։

— Այդ դեպքում, որտե՞ղ կգտնենք ազատագրումը, որտե՞ղ կթոթափենք այս նեղ աշխարհը։

— Գետիս մեջ... Ի՞նչ զարմանալի է այդ։

(Այդ խոսքերն ասելիս Աննետան փակեց աչքերը, և տասը-տասնհինգ վայրկյան, ոչ ավելի, մենք նստած էինք լուռ)։

— Հենց նոր ընկղմվեցի անցյալի մեջ։ Տեսա, տեսնում եմ (աստվա՜ծ իմ, ինչ հեռու է այդ ամենը) կարմիր լճակը անտառում[1]։ Կրկին սուզվեցի նրա ոսկեփայլ ջրերի մեջ, կրկին ոտքերս գիպան տիղմին, կրկին զգացի հաստ ջրիմուռների հպումը ազդրերիս... (Ո՛չ, դուք չեք հասկանա այդ...) Քիչ էր մնում տիղմը կլաներ ինձ, ես զուր ջանում էի դուրս պրծնել, բարեբախտաբար ամբարտակը բացեցին։ Ինչպե՞ս դա կատարվեց։ Չգիտեմ։ Իհարկե, ուժերս չէին բավականացնի։ Մենակ չէի կարողանա դուրս գալ։ Բայց ամբարտակը բացվեց, մեռած ջրերի վտակը շարժվեց ու ձիգ աղեղով, սրընթաց գնաց խառնվեց կենդանի ջրերին, գետին։ Իսկ գետը հոսեց դեպի ծովը։ Ես փրկված էի։

1 «Աննետան և Սիլվիան», Աննետայի տեսիլքը։ Ռ. Ռ.։

Այո, մեծ երջանկություն է սեփական հուն գտնելը։ Ըստ էության, հանուն գրա էլ ապրում ես։ Իսկ ինչ վերաբերում է մնացած բոլորին ու նպատակին, գետը ինքը մեզ կտանի այնտեղ։ Պետք է միայն լուծվել նրա մեջ։ Միախառնվել ողջերի հեղեղին։ Եվ կորչեն կանգնած ջրերը։ Լոկ այն է կյանք, ինչ շարժվում է։ Կյանքը առաջ գնացողների մեջ է։ Հեղեղը մեզ տանում է անգամ մահվան մեջ։

Աննետան բռնեց ձեռքս։

— Անգամ մահվան մեջ մենք առջևում կլինենք։

Այս երդմամբ էլ մենք բաժանվեցինք։ Ոտքի ելնելով (Աննետան ներողություն խնդրեց, որ չի կարող վեր կենալ շեզլոնգից), ես նրա ոտքին հագցրի մի կողմ ընկած կոշիկը և խնդրեցի.

— Եթե դուք առաջինը գնաք, դրանք կտակեք ինձ՝ ի հիշատակ մեր զրույցի։

— Վերցրեք հիմա,— պատասխանեց Աննետան։

Անտառի արահետին հանդիպեցի տուն շտապող Ժորժին ու Վանյային։ Երկուսն էլ շիկնել էին, արևը ոսկեգույն այրուկով էր պատել նրանց դեմքը։ Նրանք ճանաչեցին ինձ, և ես նկատեցի, որ ամոթ զգացին այն մտքից, որ Աննետային գտել եմ միայնակ։ Ժորժը անբնականորեն բարձր ծիծաղելով, անճարպիկ արդարանում էր։ Ես չէի ուզում պղտորել նրանց ուրախությունը։

— Մենք հիանալի յոլա գնացինք առանց ձեզ։

Երբ կյանքը մոտենում է վախճանին, վրա է հասնում մի այնպիսի պահ, որ հանկարծական պայծառացման մեջ հակադրությունը դառնում է նույնություն. թե՛ գլխապտույտ շարժումը, թե՛ լիակատար անշարժությունը այլևս նույնն են։ Կեցության շրջանն ավարտված է։ Բայց ահա միանում են դրա երկու տարբեր ծայրերը։ Եվ հավերժության օձը խայթում է սեփական պոչը։ Այլևս չգիտես, թե ինչ է ապագան և ինչ՝ անցյալը։ Հիմա ոչ սկիզբ կա, ոչ վերջ։ Քեզ հատկացված ժամանակն ապրված է։

Ահա այդպիսի պահ է վրա հասնում, և ժամանակն է, ժամանակն է եղած-չեղածը հավաքել կապելու։ Եվ Աննետան արդեն կապել էր իր եղած-չեղածը, երբ մոտով սլացավ-անցավ նրա համար ճանապարհ հարթող պատանի լրաբերը։

Հուլիսի քսանվեցի առավոտյան փոստատարն Աննետային հանձնեց մի ծրար, որի վրա դեպի վեր էին սողում Սիլվիոյի ձեռքով գրված խոշոր տառերը։ Իսկ ներսում ընդամենը մի քա-

նի խոսք. «Փառաբանություն սուրբ Աննային, որ նա փառաբանությունը մատուցի տիրոջը»։

Ներքևում ավելացված էր.

«Benedica suo figliuolo gran Madre» (Օ՛, մեծ Մայր, օրհնիր քո որդուն), և երկտողի մեջ փաթաթված մի փոքրիկ մազափունջ կար։

Իսկապես, դա սուրբ Աննայի օրն էր։ Ոչ ոք այդ չհիշեց մեղոնյան տնակում, որտեղ վաղուց արդեն ետ էին սովորել սրբերին հարգելուց, բայց իտալական զանգի ձայնը հիշողության մեջ վերակենդանացրեց այն հեռավոր համազանգը, որը աղջնակ Աննետայի անվանակոչության օրը տարածվում էր փոքրիկ զանդակատնից, և ֆլորենցիական որմնանկարներում պատկերված դեմքերը, որոնցով նա հիանում էր Մարկի հետ ձեռք-ձեռքի կանգնած։ Ասենք, մեղոնյակ անասուն իր օղակով ընդգրկած ամառային երկինքն էլ իր թափանցիկ փայլատակությամբ հիշեցնում էր Պերուջինոյի tondi[1]-ները, որոնցում արծաթափայլ ֆոնի վրա հստակ գծագրվում են պատանիների նմանվող մատղաշ ծառերի նուրբ ու սեգ ստվերապատկերները։ Ժորժն ու Վանյան նորից գնացին էքսկուրսիայի։ Մինչև երեկո Աննետան մենակ էր։ Նա քնքշորեն մատների արանքից բաց էր թողնում շագանակագույն մազերի փունջը։ Տարօրինակ նվեր։ Կարծես թե եկեղեցում ականջը կտրած մատաղի գառան գեղմի մի ծվեն էր դա։ Նա օրհնեց այն ճակատը, որի վրա ոլորվել էր այդ խոպոպը։

Ջախ ձեռքում և կրծքում նա անհասկանալի տագնապ ծնող ծանրություն էր զգում։ Ով-ով, բայց նա գիտեր, թե որտեղից էր գալիս այդ ցավը։ Սակայն նա ուզում էր օգտվել երեխաների բացակայությունից և գոնե մի քիչ տունը կարգի բերել։ Ներանց ներկայությամբ չէր հաջողվում՝ կսկսեին հանդիմանել և խորհուրդներ տալ, առանձնապես կզայրանար Ժորժը. Վիլարը նրան զգուշացրել էր, որ Աննետային չի կարելի հոգնել։ Աննետան սովորաբար հնազանդվում էր։ Երբ ծերանում ես, քեզ սիրող երիտասարդների փնթփնթոցն անգամ իր հմայքն է ունենում։ Բայց հարմար առիթ ներկայանալու դեպքում նրանց չլսելու մեջ ևս, անկախ տարիքից, երեխայական բավականություն կա, չէ՞ որ այնպես ևս ուզում մի քիչ չարություն անել։

Մնալով առանց հսկողության, Աննետան իրեն այդպիսի բավականություն պատճառեց։ Նախ կարգի բերեց իր բոլոր արկղերն ու պահարանները, ընդ որում երևի տասն անգամ վեր ու

1 Բոլորակ նկարներ Ռ. Ռ.։

վար արեց սանդուղքով՝ նկուղից մինչև տանիքի վահան, և՝ երբ բավականաչափ հոգնեց, որոշեց, այնուամենայնիվ, մի պտույտ կատարել այգում: Նա դիտեց բոլոր տունկերը, հռանալով, քնքշորեն սրբեց իր սիրած ծաղիկների տերևները, շոշափեց հողը, և տեսնելով, որ այն անչափ չոր է, մի քանի անգամ գնացել ջրի ծորակից մինչև ծարավից պապակ հեզ տառապյալները: Նա այնպես չանասիրությամբ էր աշխատում, որ սրտում ցավ զգաց: Հարկ եղավ մի կողմ թողնել ցնցուղը, և ձեռքերը սեղմելով կրծքին, Աննետան նստեց ուղիղ մանրախճով ծածկված նեղ ճանապարհին: Շունչը կտրվում էր, ցավը դառնում անտանելի: Նա այնպիսի զգացողություն ուներ, կարծես ուր որ է կմեռնի: Նայեց մեռելի ձեռքերի պես գունատ իր ձեռքերին, որոնցից արյունը ետ էր հոսել, և իրեն թվաց, որ ինքը ևս մեռնում է: Չնայած ուժեղ ջավին, Աննետան չէր ափսոսում արածի համար: Նա մտածում էր.

«Թթե սա վերջն է, ավելի լավ է թող այստեղ լինի...»:

Նա լսում էր, թե ինչպես էին մեղուները դզզում իր շուրջը, բարձր երկնքում գվվում ինքնաթիռը... Իսկ իր ներսում՝ անչափ մեծ սիրտը: Այն պատրաստ էր կտոր-կտոր լինելու: Աչքերը կկոցելով ու բերանը բացելով, նա գլուխը վեր բարձրացրեց, ականջներում ավելի ու ավելի բարձր էր արձագանքվում ինքնաթիռի գվվոցը: Հավանորեն, այն սլացավ նրա գլխավերևով: Երբ աչքերը բացեց, ինքնաթիռն արդեն անհետացել էր անտառի եռևում: Գվվոցն ու ցավը մեղմացան, նրա ճակատից ցած էին գլորվում քրտինքի կաթիլները: Կամքի հսկայական լարումով նա ոտքի ելավ ու գնաց դեպի տուն: Նա չէր ուզում, որ երեխաները վերադառնալով, իմանային իր արարքի մասին: Ամառանոցի շեմքին նա ետ նայեց: Նրա ձեռքերն ու ոտքերը հրաժեշտ տվեցին այդ բարի հողին:

— Բարի գիշեր, իմ հող: Ոչ, ոչ թե մնաս բարով... Ես դեռ կվերադառնամ քեզ մոտ...

Նա պատկեց: Շուտով վերադարձան ծորժն ու Վանյան: Բայց նրանց դեռ չտեսած, Աննետան, որ սուր լսողություն ուներ, զարմացավ: Սովորաբար նա արդեն հեռվից լսում էր նրանց ուրախ ձայները:

Նրանք ուղիղ գնացին նրա ննջասենյակը: Ներանք Աննետայի ձնմքին չնկատեցին հենց նոր բորբոքված ճակատամարտի հետքերը, չհարցրեցին, թե նա ինչպես է զգում իրեն. երկուսն էլ

հուզված էին, բայց լռում էին։ Ժորժը ձեռքին մի բաց թերթ էր պահել։ Նվազեալ ձայնով, չկանալով զսպել խեղդող հեկեկանքը, ասաց.

— Նա երկնքից ընկել է Հռոմի վրա։

Աննետան հարցրեց.

— Ո՞վ։

(Բայց դեռ չհասկացած, նա արդեն գիտեր)։

Վանյան, հուզմունքից շնչահեղձ լինելով, բացականչեց.

— Սիլվիո՜ն։

Աննետան վերցրեց թերթը, բայց սենյակի կիսախավարում (նա չէր ուզում լույսը վառել, վախենալով, որ կնկատեն, թե ինչպես է սմքել իր դեմքը) դժվարությամբ էր նշմարում բառերը, նշմարում էր այնքան, որպեսզի ընդհանուր գծերով կռահեր պատանի Իկարի խելահեղ սխրագործությունը, որը թափանցելով Իտալիայի ուղիղ սիրտը, խիզախել էր առելի բռնակալին մարտահրավեր նետել նրա սեփական որջում։ Նա կարողացել էր ճեղքել թշնամու օդային պաշտպանությունը, ինքնաթիռով սլացել էր Հռոմի վրայով, ստրկացված senatus Populusque-ի[1] վրա կապոցներով թռուցիկներ նետելով, որոնք ապստամբության կոչ էին անում և նշավակում իր ամրացված պալատում, ինչպես որջում, կուլ եկած բռնապետին։ Աննետան թերթը տվեց Ժորժին և խնդրեց.

— Կարդա՛։

Ժորժը թերթը մեկնեց Վանյային։ Երեխայի բեկբեկուն ձայնով, շտապելով ու շեշտելով նախադասությունների վերջին բառերը, բարձրաձայն կուլ տալով բերանի անկյուններում հավաքված թուքը, Վանյան սկսեց կարդալ։ Կարդում էր մանկական փքուն երանգավորումով, և նրա անկեղծ հուզմունքի մեջ հրճվանք էր երևում։ Ժորժը գլուխը կախ, արձանի պես անշարժացած, լռում էր։ Լավ լսելու համար, Աննետան աչքերը փակեց։ Նա լսում էր ինքնաթիռի գվվոցը...

Փարիզում լույս տեսնող իտալական հակաֆաշիստական թերթը հրապարակել էր Սիլվիոյի կտակը, որ նա փոստարկղ էր գցել Նիցցայում, դեպի «այն եզերքը» կատարած թռիչքից մի քանի րոպե առաջ։ Նա կանխատեսել, ավետել էր իր մահը, որոնել էր այն։ Իր զոհաբերությամբ ցանկացել էր քավել խայտառակությունը և «Մաձինիի ժողովրդի» սրտում վառել ազատության

1 Սենատի և ժողովրդի (լատ.)։

կրակը։ Նա կրկնել էր այն նույն խոսքերը (լաելով դրանք, Աննետան սարսուռ զգաց), որ ինքն էր ասել նրան։ Սիլվիոն գրել էր նաև այն, ինչ Աննետան չէր ասել, բայց այդ խոսքերն էլ էր Աննետան իրենը համարում. չէ՞ որ նա կարդացել էր իր մտքերը...

«Ինչո՞ւ է հերոսականությամբ այնպես աղքատ մեր երկիրը, որը եղել է Risorgimento-ի երկիրը։ Որովհետև սպասում է, որ իրեն անձնազոհության, կամավոր ինքնազոհաբերության օրինակ ցույց տան, սպասում է արյունաներկ ցողին՝ ծիրանեգույն լուսաբացի նախանշանակին։ Օ՜, Gioventu կյանքի ծարավ երիտասարդություն, քո պարտքն է հրաժարվել կյանքից, հույսերից, ուրախություններից, դառնություններից, ապագայից, դրանք տալ հանուն քավության։ Ազատագրում է ոչ թե սպանությունը, այլ զոհաբերությունը։ Սվ բռնակալի երեսին սեփական մահվամբ մարտահրավեր նետել, կնշանակի նրան սպանել ավելի ստույգ, քան է վախից իր բնում կուչ եկած այդ շանը հարվածելը... Ելի՛ր, ժողովուրդ։ Ինքդ էլ չգիտես, թե ինչ հզոր ես։ Նույնիսկ, եթե առանց մարտի, ուղղակի ձեռքերդ կլրծքիդ խաչած ասես՝ «Ոչ», բռնակալը կտապալվի...»։

Ինքնաթիռն այդ մարտակոչը նետել էր այն նույն հրապարակի վրա, որտեղ Ցիցերոնը նշավակել էր Անտոնիոսին, իսկ սա՝ սպանել Ցիցերոնին։ Ինքնաթիռն անհետացել էր գիշերվա խավարում, հետապնդվելով պողպատաթև ուրուրների կողմից։ Այդ ժամանակվանից նրան այլևս չէին տեսել... Վանյան ավարտեց ընթերցումը։ Նա շտապում էր խոսել։ Բայց կանանց լռությունը շփոթեցրեց նրան։ Նա սկսած խոսքը չավարտեց։ Նրան չպատասխանեցին։ Երկուսն էլ տարվել էին իրենց մտքերով, երկուսն էլ պապանձվել էին ննջասենյակի կիսախավարում։ Վանյան ևս լռեց։ Մի քանի րոպե անց, մահճակալից վեր չկենալով, Աննետան ասաց.

— Գնացեք քնեք, երեխաներ։

Ժորժը ոտքի ելավ։ Եվ նա ու Վանյան գնացին իրենց սենյակները, այդպես էլ չվառելով լամպը։

Վանյան պառկեց։ Ժորժը փակվեց իր սենյակում։ Տոթակեղ լռությունը լցրել էր տունը։ Անտառը լուռ էր։ Եվ ահա ամառային գիշերվա առկայծումների մեջ թևածեց ջութակի նվագը։ Աննետան ու ժանը շունչները պահած լսում էին։ Սկզբում նվագն առաջ էր շարժվում անվստահ, կանգ էր առնում, նախքան որևէ

հարցին պատասխանելը, սպասում էր, նորից առաջ շարժվում, նորից սպասում։ Հետո ավելի համարձակ դարձավ, ասես ճանաչելով ծանոթ ճանապարհը. անդրադարձավ առաջին արտահայտությանն ու լայնորեն ծավալեց այն։ Նրա սահուն հնչյուններում տխրություն չէր զգացվում, և շուտով մերկության աստիճանի պարզ մեղեդին, շիվի նման ռիթմիկ օրորվելով, հանկարծ փթթեց երիտասարդ, լուսավոր, խնդուն վարիացիաներով, ինչպես բալենին գարնանը։ Քամին անցավ շիվերի արանքով, և դրանք թափվում էին որպես եռահնչյուն անձրև։ Մերկացած, կրկին վերադարձավ առաջին թեման։ Նրա մաքուր ու հպարտ ստվերապատկերը հիշեցնում էր հենդելյան largo...

Ջութակը լռեց, վանյան խաղաղ քնել էր, ափը այտի տակ դրած, ժորժը հանվեց մութ սենյակում, նրա մարմինը վառվում էր, իսկ հոգին պայծառ էր՝ լարվածությունն անցել էր։ Նա չէր փորձում ըմբռնել իր հետ տեղի ունեցածը. ջութակը նրա փոխարեն կատարել էր այդ աշխատանքը, ամեն հարց լուծել էր, ամեն ինչ լավ էր։ Նա քնեց, բարձր ու համաչափ շնչելով։

Աննետան կրկին, այս էլ քանիերորդ անգամ, արթուն էր։ Բայց այս անգամ նա իզուր չէր արթուն։ Նրա մոտ պետք է Հյուր գար...

Նա մտածում էր իր սպանված որդիների, աստծո գառների՝ Մարկի, Սիլվիոյի մասին։ Նրանք զոհաբերեցին իրենց։ Ինքը զոհաբերեց նրանց։

Ջուր էր փորձում արդարանալ, հաճկատար հիշողության մեջ ապացույց գտնել, որ ոչինչ չի ասել նրանց, ոչ մի տեղ նրանց չի ուղարկել, որ նրանք գործել են առանց իր գիտության։ Նա գիտեր, շատ լավ գիտեր, որ ինքն էր ծնել զոհաբերության խոյանքը։ Հայացքի տակ նրա աչքերի, որոնք ավելի շուտ էին ներսել նրանց ճանապարհը, քան նրանք իրենք դա կգիտակցեին, այդ երեխաները, այդ փոթորկալից հոգիները, համարյա իրենց կյանքին հակառակ, գնացին դանակի դեմ։ Նա իր սեփական ձեռքերով չէ՞, արդյոք, նրանց դրել զոհասեղանին։

«Իսահակի աստված, դու, որ փրկեցիր նրան, դու չփրկեցիր իմ երեխաներին։ Քեզ պետք էին այդ զոհերը։ Հիմա դու գո՞հ ես»։

Բայց աստված էլի էր փափագում։ Աննետան գիտեր այդ։ Գիտեր, որ նա սպասում է հաջորդներին... Իսկ ո՞ւմ, ո՞ւմ։ «Բոլոր նրանց, ովքեր որ քոնն են»։

Նա իզուր էր ջանում աչքերը փակել. գիտեր, որ ամբողջովին խաղերի ու մանկական անուրջների ազդեցության տակ հա-

ըևան սենյակում քնած փոքրիկ տղան, աշխարհի կրքերը և ծիծաղաշարժ գաղափարները հեգնող մեծահասակ, ուրախ ու առողջ օրիորդը նույնպես վաղվա մարտադաշտում, ուղիղ կգընան գնդակների դեմ, ինչպես որ մյուսը՝ ավագը, նրա ռուս դուստրը, որը կամավոր մտել է Մեծ Բանակի շարքերը։ Նրանց բոլորին նախասահմանված է հիացմունքով մահ ընդունել կրակի մեջ, եվ այդ կրակը նա ինքը՝ Աննետան է կուրորեն բորբոքել օրեցօր։ Նա, որ ուզում էր տաքացնել նրանց սրտերը, ում սիրում էր, հավաքել նրանց այդ կրակի շուրջը, ինչպես օջախի շուրջը, նա ինքն է վառել իր տունը։ Կրակը, որ նա վառ էր պահում սեփական կրծքում, որը ուղղակի դեպի երկինք էր ճգտում, այն կրակը, որ չայրելով լուսավորում էր իրեն, հենց այդ կրակն էլ տապալեց պատերն ու հրդեհեց մյուսների հոգին։

Նրա առաքելությունն էր, այդ մասին ինքը նույնիսկ չէր էլ կասկածում, հանգիստ ձեռքով տանել միտքը լուսավորող գործունեության ջահը։ Ուրիշ ձեռքեր բռնեցին այդ ջահը, իսկ քամին կրակը ետ նետեց, դեպի իր կացարանը... Համայված հոգին և նրա ճագուկները, փյունիկի պես, ծնվել էին խարույկի համար։ Ուրեմն, փառք խարույկին, եթե նրանց մոխրից, ինչպես փյունիկի մոխրից, կվերածնվի նոր, առաքյալ արժանավոր մարդկություն...

«Այրիր ինձ իմ որդիների հետ միասին։ Նկել է ժամը։ Տե՛ս, դահիճ, ես վիզս դնում եմ դանակի տակ...»։

Եվ նա զգաց, թե ինչպես դանակը խրվեց իր կուրծքը։ Դաժան, այլորդ ցավը շամփրեց սիրտը, վիզը։ Ճիչը զսպելով, նա երկու ձեռքով սեղմեց վերքը։ Այդ ցավի դաժանության մեջ հիացական ուրախություն կար, ուրախություն այն պատճառով, որ նա հաղորդակից է դարձել իր որդիների կամավոր անձնազոհությանը։ Բռնելով դանակի կոթը, նա այն ավելի խորը խրեց վերքի մեջ...

«Մխրճվիր»։

Մինչև որ, վերջապես, ատամները սեղմած, ջղաձգումների մեջ, կորցրեց գիտակցությունը։

Արշալույսին երեխան առաջինը լսեց հարևան սենյակից եկող տարօրինակ շշունջը։ Նա միանգամից չէ, որ հասկացավ, քնաթաթախ վիճակում նրան նախ թվաց, թե տան շուրջը վիրավոր կենդանի է թափառում։ Հետո վախեցավ, վեր ցատկեց անկողնուց, ձայն տվեց ժորժին։ Ժորժը քնել էր անզվարթ քնով. նրա

անկողնու գլխավերևը գտնվում էր ուղիղ այն պատի մոտ, որի հետևում պահված էր Աննետան։ Վանյան ցնցեց Ժորժի ուսը։ Ժորժը, աչքերը չբացելով, ձեռքը թափ տվեց. երազների արոտավայր ընկնելիս նա սիրում էր կուշտ ու կուռ արածել։ Բայց հենց որ բացվեց նրա՝ երազներով կաշկանդված զգացմունքների, բանալիով փակված դռնակը, գիտակցությունը միանգամից վերադարձավ։ Նա վեր թռավ անկողնուց, տակավին աչքերը փակ, և, կույրի պես պատերը շոշափելով, նետվեց դեպի այն մահճակալը, որտեղից աղիողորմ տնքոց էր լսվում։

Աննետան ուշագնաց էր, նույնիսկ չէր գիտակցում, որ տընքում է։ Նայելով Աննետային, Ժորժը վախեցավ նրա դեմքի հանկարծակի փոփոխությունից։ Նա իսկույն հասկացավ, թե ինչպիսին կլինի մարտի ճակատագրական ելքը։ Ժորժը ժամանակ չկորցրեց։ Տեղնուտեղը հեռախոսով կանչեց Ֆիլիպ Վիլարին, իսկ Վանյան վազեց փոստատուն՝ Ասյային հեռագիր ուղարկելու։ Ժամանած բժիշկը ոչինչ չավելացրեց այն միջոցներին, որոնց արդեն դիմել էր փորձառու Ժորժը՝ տաք ջուր և սառույց։ Հին մարտիկի սառն աչքերը, որոնք սովոր էին ռինգին և վաղօրոք կռահում էին մենամարտի բոլոր բարդությունները, անմիջապես որոշեցին, որ անօգուտ է շարշարել նրան, ով պայքարել է խավարի մեջ. խաղը տանուլ էր տրված։ Նա սիրով կկրճատեր Աննետայի ճանապարհը, ինչպես որ կկրճատի իրենը, երբ հասկանա, որ նույնպես պարտված է։ Բայց երբ ժամանակին նա այդ ելքն առաջարկեց Աննետային, Աննետան կտրականապես հրաժարվեց նրա ընծայից, արգելեց տնօրինել իր կամքը, քանի դեռ իր մեջ կյանքի մի կաթիլ կա, թեկուզ այդ կաթիլը նույնիսկ տառապանքի ամբողջ օվկիանոս լինի...

«Ես թույլ չեմ տա ընդհատել մարտը։ Ի՛մ մարտը ի՛մն է։ Ինձ մենակ թողե՛ք»։

Եվ նա թողեց։ Նրա ձեռքը, որի երկաթե մատները կարողանում էին թաշվի պես փափուկ լինել, վերմակի տակ շոշափեց ու քնքշորեն սեղմեց Աննետայի արդեն սառչող ոտքերը.

«Հանգստացեք... Դուք բարով, Աննետա...»։

Հաջորդ գիշեր, Մեդոնի մոտ ինքնաթիռ վայրէջք կատարեց։ Հանկարծ ամառանոցի պատուհանները բախեց մի դողահար թռչուն։ Ժորժը բացեց դուռը... Ասյան էր... Ասյան ամբողջ թափով սլացել-եկել էր։ Հեռագիրը ստացել էր սկանդինավյան մի քաղաքում, ուր գտնվում էր կարևոր հանձնարարությամբ։ Եվ

տեղնուտեղը ինքնաթիռով թռել էր Ֆրանսիա։ Նա նույնիսկ չէր մտածել, որ կրկնակի վտանգի է ենթարկում իրեն. Ֆրանսիայում նրան գրեթե անխուսափելի ձերբակալություն ու վտարում էր սպառնում, իսկ կուսակցությունը չէր նեղի, որ հանուն քմահաճույքի, թե կրքի հարվածի տակ է դրվել նրա պաշտոնական կամ կիսապաշտոնական վիճակը։ Բայց թող անհատապաշտությունն անկեղծորեն իրեն ենթարկի կարգապահությանը, մեկ է, ոչ ոք չի կարող կաշկանդել նրա անսպասելի պոռթկումները, և ոչ ոք, նույնիսկ ինքը՝ անհատապաշտությունը ընդունակ չէ դրանք կանխազգալու։ Այսպես մոտ գործողությունը կանխել էր միտքը։ Միայն հիմա, մեռնող Աննետայի մահճի մոտ նստած, նա սկսեց մտածել այդ մասին։ Թող լինի, ինչ լինելու է։ Ինքը կատարել է իր խոսքը... «Մայր, ես այստեղ եմ։ Ես կուղեկցեմ քեզ մինչև շրջադարձը...»։

Ասյան խոստանում էր այն, ինչը կատարելը վեր է մարդկային ուժերից։ Վերջին ժամը ուղեկիցներ չի հանդուրժում։

Աննետան մենակ էր դանդաղորեն գնում դեպի իր ճանապարհի վերջը։ Իլիականի մարտնչող աստվածների նման Աննետան վարագուրվել էր կրակով ու ծխով։ Նրանք, ովքեր խոնարհվում էին նրա փուված մարմնի վրա, չէին տեսնում նրան, տեսնում էին միայն պատը, որի եռևում գնում էր Աննետան։ Ժամանակ առ ժամանակ հոծ ամպերը նոսրանում էին, ծխի քուլաների արանքում լուսաշերտ էր գոյանում, և այդ ճեղքում Աննետան տեսնում էր իրեն... Նրա շուրջը ամեն ինչ իր էր դարձել... Նույնիսկ այդ մանչուկի ձայնը, որին նա չէր տեսնում (նա այնտեղ էր, իր կողքին, իր բարձի մոտ, բավական է գլուխը թեքեր, որպեսզի տեսներ նրան, բայց նա չփորձեց)... Նույնիսկ այդ մանչուկը նրա մեջ ոչ մի զգացմունք չէր արթնացնում։ Նա կա, նա գոյություն ունի։ Նա իր է։ Լուսաշերտը... փակվեց ծխի քուլաներով։ Նրա միջով դեռ լսվում են ձայները։ Ի՞նչ հեռու են դրանք։ Ի՞նչ հեռու է այն ամենը, ինչ ապրում է։

Նրա մեջ բոցկլտացող խարույկի ջերմությունը սփռվում էր չորսդին։ Նախորդ օրերի բոլոր հոգսերը, այն ամենը, ինչը զբաղեցրել էր նրա միտքը, մարմնավորվում էին տենդալից տեսիլքների հետ համահավասար, իսկ տեսիլքները տեղնուտեղը վերածվում էին երևակայության ստեղծած անուրջների և շարք էին կանգնում բեմի վրա... Նրան թվում էր, թե վերադար-

ձել է Փարիզ, իր բնակարանը։ Փարիզը թոցարձակ վառվում էր... Ջարկերակներում ճանապարհ հարթող արյան խուլ աղմուկը փոխվում էր հրետանային համազարկերի, հրացանային փոխհրաձգության ճարճատյունի։ Փողոցներում կռվում էին։ Եվ նա, ում օդը չէր հերիքում, զգաց ծխի կծու համը։ Այն թափանցում էր բաց պատուհաններից ներս և նստվածք տալիս ուղիղ նրա աչքերի առջև։ Հրդեհը բորբոքվում էր, սողում դեպի վեր, լիզում տան պատերը... Աննետան չզարմացավ, երբ նրա վրա խոնարհվեց Ասյայի դեմքը։ Ասյայի ներկայությունը նա կապեց հեղափոխության սկզբի հետ։ Եվ Ասյան, իհարկե, պետք է լինի այստեղ։ Այն հեռավորությունից, որտեղից Աննետան էր նայում, տարածությունը Օսլոյից մինչև Փարիզ ամենևին էլ ավելի չէր, քան մի սենյակից մինչև հարևան սենյակը։ Հիմա ամբողջ երկիրը գտնվում էր մի հարթության վրա։

Բայց վերացավ նաև տարածությունը կյանքի թաղանթի՝ այդ աչքերի, շրթունքների, ձեռքերի, շարժումների, բառերի ու այն մտքերի միջև, որ մենք՝ ողջերս, թաքցնում ենք ուրիշներից և մեզանից, ինչպես արգելված տեսարան։ Արտասովոր սրտեսությամբ Աննետան ճանապարհ էր հարթում օտար հոգիների իսավարի միջով ու կարդում դրանք։ Այդպես նա ակամա թշնամանք կարդաց իր ջերմորեն սիրելի դստեր հոգում, որը արթուն կանգնել էր իր գլխավերևում։ Բայց իր անուրջներում Աննետան միավորում էր ամեն մի հոգու էությունը կազմող երկու կողմերը։ Նրան թվում էր, թե բոցը համակել է ամբողջ տունը, և երեխաները լքում են այն։ Տեսնում էր Ժորժին ու Վանյային, որոնք փրկություն որոնելով, պատուհանից դուրս գալով, բարձրանում էին տանիք։ Ժորժն ինչ-որ բան էր բղավում, դիմում պաշարողներին, նա կարծես Դեկլերուայի Ազատությունն էր բարիկադների վրա, ջահել կրծքով հեղափոխությունը, երգող ու որոտացող հեղափոխությունը, իսկ կողքին՝ հրացանը ձեռքին ծիծաղող տղան։ Միայն Ասյան էր, որ համառորեն չէր ուզում լքել նրան, բայց նա անհամբեր սպասում էր վախճանին և մրթքում կրկնում.

«Արեհ, շտապի՛ր»։

Մեռնողի շրթունքները թուլլ շարժվեցին և Ասյային թվաց, թե նա խոսում է (ոչ մի ձայն լսվեց).

— Շտապում եմ։ Բայց ծեր ոտքերս չեն կարողանում արագ շարժվել։ Ինձ մի՛ սպասիր։ Գնա, աղջիկս, գնա՛։

Հոգնած ձեռքով Ասյան իբենից վանեց անմաքուր մտքերը։ Չնայած հսկայական հոգնածությանը, նա ուզում էր գիշերն անցկացնել Աննետայի մոտ։ Ժորժին ու Վանյային ստիպեց պառկել, ինքը մեռնողի հետ մնաց մեն-մենակ։ Միայն աստված գիտեր, թե ինչպիսի քնքշությամբ ու կրքով էր կապված նա Աննետային։ Ասյան, որն առհասարակ կանանց չէր սիրում, միայն Աննետային էր սիրում։ Աննետայի մեջ սիրում էր Մարկին։ Աննետայի մեջ սիրում էր մորը, ավելի քան հարազատ մորը։ Աննետայի մեջ սիրում էր բարեկամին, նրան, ով վստահել էր իրեն, նրան, ով իրեն՝ օտարին, անտուհիին, մերժվածին տվել էր իր ամենաթանկ ունեցվածքը՝ իր Մարկին և թանկագին մերձեցումը Մարկի հետ, նրան, ով իրեն՝ Ասյային հավատում էր ավելի, քան Ասյան էր երբևէ հավատացել ինքն իրեն, նրան, ով կրկնակի անգամ իրեն օգնել էր ոտքի կանգնել. սրբելով իր ոտքերի ցեխը, նրան, ով փրկել էր իրեն։ Եվ լիովին հնարավոր է, որ նա Աննետային նույնիսկ Մարկից շատ է սիրել, իսկ Մարկի մեջ ամենից շատ սիրել է Աննետային։ Նրանք երկուսը՝ մայրը և որդին այժմ, այս պահին ձուլվելով մի ամբողջություն էին դարձել, և հալվելով Աննետայի՝ մահառաջի քրտինքից թաց ճակատին, Ասյան այլևս չէր տարբերում սահմանները, երկուսին էլ սեղմում էր իր խելահեղ գրկի մեջ։ Բայց նույն ակնթարթին էլ թշնամական զգացումը խլրտաց նրա մեջ։ Ասյային սարսռացնող անտարբերություն համակեց։ Ձեռքերը թուլացնելով, նա ուժասպառ եղած նստեց մահճակալի մոտ դրված աթոռին։ Այդ օրերին ու անքուն գիշերներին նա հոգնել էր, հալումաշ եղել, սպառել իր ամբողջ ավյունը։ Սերը, կարեկցությունը վերացել էին։ Նրան ձգում էր ողջերի եզերքը՝ իր հոգսերով հանդերձ և հենց նրանցից է իրեն շեղել այդ մեռնող կինը, շեղել չափազանց երկար ժամանակով։ Ասյան հանկարծ հիշեց, որ այդտեղ գալով նա վտանգի է ենթարկում իրեն, և այդ վտանգը մեծանում էր մեդոնյան տնակում անցկացրած ամեն ժամի հետ։ Ջար հայացքով նա նայեց բարձերի կույտի վրա հանգչող (պայքարող) ուռած երեսին, ջանում էր հաշվարկել Աննետային բաց թողնված ժամերի քանակը ու մտածում էր.

«Այսպես թե այնպես, նրա վերջը եկել է։ Ուրեմն թող շտապի՛»։

Ենթարկվելով դաժան, չգիտակցված անբարյացակամության զգացումին, Ասյան մի գիրք ձեռքն առավ, որն իր կոպտությամբ

խզեց վերջին կապը մեռնողի հետ։ Բայց ընդամենը երկու-երեք էջ աչքի անցկացրեց, նախադասությունները լավում էին կոկորդում, նա բարկացած թքեց, Զվանքով փակեց գիրքը։ Կրկին տեսնելով հոգեվարքի դեմքը, Ասյան սարսափեց ինքն իրենից և իր հանցավոր մտքից։ Նա արագ ծնկի իջավ և հոնկուր-հոնկուր լալով, սկսեց համբուրել անկողնուց կախ ընկած, ուռած երակներով ձեռքը... Ի՞նչ արեց նա։ (Չէ որ մահվան առջև միտքն էլ արարք է)։ Վերջին մարտում։ Աննետայի կողքին կանգնելու փոխարեն նա իր ձեռքով սպանում էր ամենասիրելի արարածին։ Եվ Ասյան տնքաց.

— Մա՛յր։ Ախր դա ես չեմ։ Ներիր, ների՛ր ինձ։ Ազատի՛ր ինձ։

Աննետայի դեմքը, սակայն առաջվա պես անխռով էր, հեռու։ Մեռնողը ամեն ինչ հասկանում էր, բայց ոչ տառապում էր, ոչ զայրանում։ Այդ ամենն այլևս իրեն չէր վերաբերում։ Նա մենակ էր... Նրա մահվան մահճի շուրջը բացվել էր աշխարհի անդունդը, բոլոր տեղերից ծխի ծանր քուլաներ էին բարձրանում, ամենուրեք պատերազմ էր ու Հեղափոխություն։ Եվրոպայում, Ասիայում մարդկությունը վառվում էր ամեն կողմից մեկեն բռնկված խարույկի պես։ Նույնիսկ երկինքն էր ծածկվել ինքնաթիռների վիթխարի վահանով, որոնք հարձակվում էին շնչահեղձ լինող քաղաքի վրա։ Որտե՞ղ է ապաստանը, եթե ոչ այնտեղ, մահվան պատուհանից այն կողմ։ Ամենասիրելի հոգիները լքել էին նրան և հիմա նրան ոչինչ չէր փրկում մենակության այդ շնչահեղձությունից... Բայց, երևում է, հակառակ ընդհանուր կարծիքի, հոգեվարքի մենությունը ոչ միայն ապրողների ու մեռելների անհաղթահարելի անջատվածություն է։ Մենության էությունը, գաղտնիքը ինքն իրենից հեռանալն է, ինչը և կատարվում է մեռնողի խորքերում։ Աննետայի մեջ այլևս Աննետա չկար։ Նա, որ հանգչում էր բարձերի վրա, միայնակ էր։ Մյուսը՝ նրա կրկնորդը հեռանում էր. պատրաստվում էր փոխադրվելու։ Եվ փոխադրվելու էին պատրաստ ծխի քուլաները, այդ ամբողջ աղմուկը, ճիչերը, հուզումները, ամբոխների ու կրքերի այդ ամբողջ իրարանցումը, բուն մարտը... Անխռով աշխարհի ներքանն արդեն դիպել էր տան փլատակներին։ Մարմինը լարվել էր այդ թարմացնող հպման ակնկալությամբ։

Բայց երբ Աննետան ջղաձիգ ճիգ գործադրեց, որպեսզի կորի կտրվել չցանկացող վերջին կապը՝ բարակ ժապավենը, նրան հանկարծ մի բան կոպտորեն ետ քաշեց, ինչպես որ ետ են քա-

դում թելով կապված մայիսյան բզեզին, մոտեցրեց այն նույն հողեղեն ցավին, որից հույս ուներ խույս տալ։ Նախքան հոգուլ այդ ձևը ոչնչացնելը, նախքան այդ սիրտը՝ տիեզերքն արտացոլող լիճը, կուլ տալը, Ուժը՝ ամեն տեսակ կյանքի Մայրը, ևս մի անգամ, վերջին անգամ մեռնողի մեջ արթնացնում է թափանց ծակող գիտակցումն այն բանի, թե ինչ է եղել ինքը։ Դաժան ուժը նրան ստիպում է տառապանքի չղաձգումներում, բոլոր կապերի ոչնչացմանն ուղեկցող չանքերում դեմ առնել նիզակների ծայրերին, ծակող խեցիկներին, որոնցով վերից վար սփռված են նրա թաղանթի պատերը, որոնց նա զարնվում է, փորձելով դուրս պրծնել այդ սահմաններից, իր մահվան մահճից, պատեր, ուր նա մեղվի պես կառուցել է իր կյանքի փեթակը, կառուցել ամբողջ վաթսուն տարի, որպեսզի մահաքրիչքի պահին, ակնթարթային պայծառացման մեջ տեսնի իր բախտաբաժինը, իր կյանքը, հասկանա լինելիության ու իր մահվան իմաստը։ Վարագույրը բացվում է։ Ուրեմն շտապի՛ր, նայի՛ր։

Նա նայում է ագահաբար, նայում է իր վիթխարի աչքերով, որոնք շուտով ապակիանալու են։ Նրանք, ովքեր հավաքվել են այստեղ, նրա անկողնու շուրջը, կարծում են, թե Աննետան ուշագնաց է։ Նրանք չեն տեսնում, որ նա և՛ տեսնում է, և՛ լսում։ Նրանք չեն տեսնում, որ նա գնում, բարձրանում է վերջին լանջն ի վեր։ Իսկ նրա հետ միասին գնում, գնում է տառապանքը... Փայլատակող միտքը նիզակի հարվածի պես խոցում է ուղեղը.

«Տառապել՝ կնշանակի ճանաչել...»։

Այդ բառերից ճառագայթող լույսը բթացրեց անգամ բուն տառապանքը։ Թրթռացող մարմինը կորցրեց իր զգայունակությունը։ Մնացին միայն աչքերը, ներհայաց աչքերը և մեկ էլ՝ ականջի ծովախեցին։

Կարծես հեռվից նա լսում էր իր ընդհատուն շնչառությունը։ Գերգրգռված լսողությունը որոում է աղմկոտ շնչառությունը, և նրան թվում է, թե դղրդալով գնացք է սլանում... Ո՞վ է սլանում, Ի՞նքը, թե ուրիշը։ Նա արդեն չի տարբերում իր և ուրիշի սահմանները։ Քամու պոռթկումը տապալել է սահմանային բոլոր սյուները։ Ես չեմը, դա ես եմ։ Ես եմը, դա ես չեմ։ Ամեն ինչ դարձել է գիշերվա անհունում կուտակված սև մագմա, ինչպես քանձր նավթը երկաթե տակառում։ Մակարդակը բարձրանում է։ Մագման հասնում է խառնարանի եզրերին, պսակաձև փքվում

շուրջանակի, մի վայրկյան տատանվում, ապա թափվում է եղրերից ու հանկարծ հորդում... Լավայի հեղեղը հոսդում է դեպի վե՛ր, երկրային օրենքները ջնջված են։ Զգողականությունը (Zieht uns hinan)[1]։

«Ոմիվիեր, գիտեմ ես (ինձ այդպես են կոչել, բախտս նախանշվել է ի սկզբանե, բայց միայն այժմ այն պարզ դարձավ), Գետ լինելիության, Գետ ողջերի, Գետ դարերի, որը օձագալար վեր է բարձրանում լեռան զառիթափ լանջերով։ Եվ եթե շուռ գամ, կերևան կծկվող ու բացվող անվերջանալի գալարները։ Իսկ այնտեղ, վերևում, մեծանում է երկարավուն գլուխը օձի, որն աճում է իր համար ճանապարհ հարթելով, կախված ժայռերի ելուստները շոշափելով ու դրանց վրա հաստատվելով։ Իսկ ամենավերևում և ամենավերջին խորքերում, այնտեղ, կատարներից էլ վեր երկնային օվկիանոսի խորխորատն է...»։

Երերուն մագմայի մակերեսով ծայրեծայր անցնող յուրաքանչյուր պոռթկման ժամանակ Աննետան լարվում է՝ ուր որ է նետը դուրս կթռչի աղեղից...

Իսկ նրա մահճի մոտ կանգնածները, ում աչք է տրված չտեսնելու համար, տեսնում էին միայն նրա սմքած ձեռքերը, որոնք ճմրթում էին սավանի եզրերը։ Օտար մատներ են դիպչում նրա դաստակներին, զգում, թե ինչպես է թուլանում զարկերակի թելը, բայց ինքը՝ Աննետան դեռ լսում է իր սրտի բաբախյունը։ Նա իր դեմքին զգում է Ասյայի շունչը, բայց չի նըշմարում նույնիսկ նրա ուսերի սովերը, թեև պարզորոշ որսում է ձայները, որ արդեն հարկ չեն համարում անցնել շշուկի։ Կամֆորայի և կոֆեինի սրսկումներից ծակծկված նրա մարմինը կորցրել է իր ծածկույթների զգայունակությունը, մինչդեռ լսողությունը համառում է, և վերահաս խավարի մեջ միայն լսողության մեջ է կենտրոնացել լույսի ամբողջ ուժը։ Երկրի վերջին փնթփնթոցը... Անցնում է հեղեղը, ինչպես ճախրընթացը, մի ակնթարթ երևում են տների լուսավորված պատուհանները ու մնում ինչ-որ տեղ, ետևում, Աննետան ուզում է ձեռքերը պարզել դեպի այդ լույսերը, բայց ձեռքերն ասես քարացել են, նա ժպտում է. շրթունքներին միայն ժպիտի աղոտ արտացոլք կա, բայց նրան փարված Ասյան նկատում է այն... Արտացոլքը նորից անցնում է խավարի գիրկը։ Գնացքը արդեն շատ հեռու է։ Եվ ճամփորդը սլանում է նրա հետ միասին։

1 Մեզ վերև է տանում (գերմ.)։

Հանկարծ գետը ծառս է լինում, մոլեգնում, կնճռոտվում է նրա ջրերի հարթ մակերեսը, արյան մակերեսը... Եվ գետը սկզբից մինչև վերջ պնդանում է, նա ամբողջովին երկաթից է, նա կարծես լեռան ուղղաբերձ լանջին հենած վիթխարի սանդուղք է, պողպատե ատամնանիվ, որի յուրաքանչյուր քերթը համապատասխանում է որևէ մարդկային կյանքի։ Նա անցնում է Ալպերի լեռնաճյուղավորումները։ Աննետան գիտեր, սիրում էր այդ Ալպերը, տասնյակ անգամ եղել էր այնտեղ, գրկի եւած եղևնիների ջոկատներից առաջ անցած, լեռներով բարձրացել անտառի սահմանից այն կողմ գտնվող սառած, ձյունապատ կատարներից կաուչած ամպերի փրփուրով պատված, սառցադաշտերի ճերմակութիւյամբ պսակված բազալտե բուրգը՝ Մատերգորնի կեռ կտուցը... Եվ ահա երկաթե սանդուղքը ցնցվում է. վերից վար այն ցնցում են անդունդի հատակից բարձրացող ծանրը քայլերը, հիմա սանդուղքը կարծես ուղիղ դեպի երկինք արձակված թրթռացող տեգ է։

Սառույցի վերափոխված պնդացած կրակից կռված սանդուղքը այժմ տնքում է չափից դուրս ծանրության տակ։ Դողում են աստիճանները, դողը փոխանցվում է ամբողջ սանդուղքին, ինչ մոտ է ոտնաձայնը, այնքան անզուսպ է դողը, բոլոր աստիճանները վարից վեր միավորված են այդ դողով։ Բայց ինչպես որ քամու պոռթկումից մարգագետնում բոլոր բարձր խոտերը միանգամից մեկ աչ են թեքվում, մեկ ձախ, այնպես էլ սանդուղքի բոլոր աստիճանները թեքվում են դեպի նա, ով վեր է բարձրանում՝ դեպի նեղքև։ Եվ ամեն անգամ, երբ անտեսանելի ճիրանը կառչում է սանդուղքի որևէ աստիճանից ու պոկում այն, բովանդակ աշխարհը խոնարհվում է այդ կետի, այդ հոգիվարքի վրա, որը կործանվելով, իր վրա է պահում ճակատագրի ամբողջ ծանրությունը, խոնարհվում է ջարդվող, պայքարող ու բոլորի համար մեռնող կենդանի աստիճանի վրա. և նրա մահառաջի ջղաձգումների մեջ միախառնվում է բոլոր ողջերի շնչառությունը։ Բայց հենց որ մարտն ավարտվում է, հենց որ հեռանում է իր ետևից միայն մոխիր թողած անտեսանելի Մանրատիչը, կրակե պտտահողմից դեպի գետին կռացած զզզվված խոտերը նորից են ակոսից վեր բարձրանում. մոխրացած կյանքի աստիճանը հիմա ցնցվում է այնտեղ, վերևում, ապագայում ընթացող մարտերից։ Նրանից, ում հենց նոր լքեց կյանքը, լինելիության ամբողջ վտակը սրընթաց հոսում է դեպի մյուսնե-

րը, այնտեղ ուր գահավիժելուս էի սլանալով դեպի գետաբերան... Նա, ով ողջերի մեջ Աննետա էր, ով դեռ Աննետա է մնում մի ակնթարթ ևս, որպեսզի ներկա լինի այն բանին, թե ինչպես են իրեն խաղողի ողկույզի նման ճմլելու տաքարի մեջ, ծխի միջով տեսնում է, թե ինչպես է ներքևից վերև բարձրանում նա՝ խաղողագործը... Ցուրաքանչյուր ծանր քայլի հետ թանձրանում է բոսորագույն—սև ծուխը... Մեծն Խավարը իր շրշացող հանդերձի փեշերով ծածկում է դեպի հատակն իջնող հոգին, եվ անանուն մեկը, ամպրոպի որոտմունքի ուղեկցությամբ, խորքերից վեր է բարձրանում։ Մամլիչն իջնում է։ Ամեն ինչ չնչըխված է, ամեն ինչ՝ իրանը, աչքերը, բերանը, ընդերքը, ամեն ինչ խոցոտված է բյուրավոր շաղափիներով, ամեն ինչ քամված է. ահա այն՝ մարտիրոսական տառապանքը, մահվան գրկախառնության անասելի քաղցրությունը։ Տրորված, ճմլված հոգին լի է ցնծությամբ, նա հիմա միասնական մարմին է Դերագույն էակի հետ։ Դատարկելով այդ մարմինը, Դերագույն էակը կմիանա նրան.

«Դու իմն ես, և ես քոնը...»։

Օ՜, լիակատարություն։ Օ՜- նույնություն... Այդ ակնթարթին նա հասկանում է ամեն ինչ, այն ամենը, ինչը գտնվում է բարությունից այն կողմ, լինելիությունից այն կողմ... Ամբողջական «Erleben»[1]-ը ավարտված է։ Ավարտվում է Հմայված հոգու բոլորաշրջանը... Նա եղել է դատարկության վրայով, շրջադարձերից մեկում գցված սանդուղքի օղակը։ Եվ երբ ոտքը անգթորեն հենվում է այդ աստիճանին, նա չի հանձնվում, աղեղի պես կորացած նրա մարմնի վրայով անդունդն է անցնում Ուսուցիչը։ Եվ նրա կյանքի ամբողջ ցավը շեղման անկյունն է եղել այն ճանապարհի, որով առաջ է գնում ճակատագիրը...

«Ճակատագի՛ր։ Առա՜ջ։ Շնորհակալություն, որ ինձ որպես աստիճան վերցրիր... Ես գալիս եմ քո հետևից։ Ճակատագիրը ես եմ»։

Խաղողագործի կրնկի տակ ճմլված ողկույզի հյութը հոսում է սահմանված ակոսով, անհետացող կյանքի վտակը խմված է, այն խմել են կրքից արբած շրթունքները։ Վերջին անգամ ներքևից լսվում է թռչնի ճիչը։ Վտնյան ձայն է տալիս.

— Մայրի՛կ...

«Սիրելիներս։ Օ՜, դուք, որ մնում եք այստեղ, մեր հետևում»։

---

1 Ապրում (գերմ.)։

Ոչ, նրանք մեր հետևում չեն, նրանք առջևում են։ Նրանց աստիճաններով ,որոնք զետեղված են իմի վերևում, վեր բարձրանալով կանգնի խաղողագործը։ Իսկ մենք, որ դարձել ենք նրա ակոսը, մենք նույնպես կանցնենք-կգնանք, ինչպես որ անցան-գնացին մեր սիրելիները, մենք կմասնակցենք նրանց վերջին մարտերին, կաջակցենք նրանց մեր գրկախառնությամբ, որն այսուհետև անբաժանելի է գրկախառնություններից խաղողագործի, որն էլ իր ձեռքով կճզմի նրանց։ Մահվան մեջ մեզ կանխած մեր սիրելիների նման մենք, մեռնելով, գրկախառնվում ենք, միանում... Մենք միասին ենք անցնում մեր ճամփան։ Գետը միշտ նույնն է...

«Գնաս բարով, Աննետա։ Հիմա ես հասկացա Nunc dimittis»[1]։

Աննետան շունչ քաշեց։ Ասյան հպվելով մեռնողի շրթունքներին, ագահորեն ներծծում էր նրա շունչը... Բայց Ասյայի գրկում պառկած էր միայն ունայն թաղանթը։ Համայված հոգին համբարձվել էր։ Նա մահվան բացած ակոսով դեպի լեռան ուղիղ վերևում գտնվող երկնքի կիրճը հոսող սերմի շիթ է, մեծ ամբարտակ, որի վրայով անցնում է Մեր Կաթինը, գիշերների մանյակը, աշխարհների օձը, որը Լինելիության գալարներն է բացում Անսահմանության մարգագետիններում։

ՄԱՐԻԱՑԻՆ

Ինքս իմ դեմ պայքարի տասը տարի,
Հարկավոր է պայքարել, հաղթահարել ինքդ քեզ։
Պատերազմից ծնված, պատերազմ ծնած
տասը խաղաղ տարիներ։

Մի տրտնջա։ Այնտեղ, առջևում, աշխարհն է։
Գնա՛նք նրան ընդառաջ։

Քեզ, իմ կին ու բարեկամ, վերքերս եմ նվիրում։
Լավագույնն այն բոլորից, ինչ որ կյանքն է տվել ինձ։
Դրանցով է նշվել իմ յուրաքանչյուր քայլն
Առաջ։

Սեպտեմբեր, 1933 թ. *Ռ. Ռ.*

---

1 Այժմ ազատյալդ (լատ.)։

Ռոմեն Ռոլանը ուշ շրջանի իր առավել նշանակալից ստեղծագործությունը՝ «Հմայված հոգին» էպոպեան մտահղացել է «Ժան Քրիստոֆ» վեպը ավարտելու տարում, 1912 թվականին, սակայն ինը տարի հետո միայն, 1921 թվականի հունիսին, օրագրում գրել է. «Սկսել եմ «Աննետան և Սիլվիան» նոր վեպը։ Հոկտեմբերյան բավականություն եմ զգում։ Մի անծանոթ էակ բնակություն է հաստատում իմ մեջ, և ես համակվում եմ նրա կյանքով, մտքերով, ճակատագրով»։

«Աննետան և Սիլվիան» վեպը, որը պետք է դառնար «Հմայված հոգին» էպոպեայի առաջին գիրքը, գրվել է կես տարուց պակաս ժամանակամիջոցում և ավարտվել է 1921 թ. հոկտեմբերին, 1922 թ. լույս է ընծայել Օլենդորֆ հրատարակչությունը։

«Հմայված հոգու» երկրորդ գրքի վրա գրողն աշխատել է 1922 թ. Զալցիս ամսից մինչև նոյեմբեր ամիսը, այնուհետև շարունակել ու ավարտել է 1923 թ. առաջին կիսամյակում։ Գիրքը 1924 թ. լույս է ընծայել Օլենդորֆ հրատարակչությունը։ Միայն երկու տարի անց Ռոմեն Ռոլանը ձեռնամուխ է լինում «Հմայված հոգին» վեպի շարունակությանը։ Այդ ստեղծագործության երրորդ՝ «Մայր և որդի» գիրքը հեղինակը սկսել է 1925 թ. հոկտեմբերին և ավարտել 1926 թ. մայիսին։ Այս գիրքը 1927 թ. հրապարակել է Ալբեն Միշել հրատարակչությունը։

Վեպի «Մայր և որդի» գրքի ավարտից մինչև վերջին՝ «Նախագուշակը» գրքի վրա աշխատանքը սկսելը անցնում է գրեթե երեք ու կես տարի։ Ինչպես ինքը հեղինակն է նշում «Հմայված հոգին» վեպի 1934 թ. հունվարի 1-ի թվակիր իր ներածությունում, այդ ժամանակը կարևոր ուղենիշ է եղել նրա սեփական գաղափարական էվոլյուցիայում։

Ոչ միայն Աննետան ու Մարկն էին հետևում աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին և անքուն գիշերներին կրկին ու կրկին հանդում իրենց զոհաբերելու վճռին, սպասումի մեջ էր գտնվում նաև ինքը՝ հեղինակը...

«Այդ տարիներին մտավի անգրադառնում էի սոցիալական երկու մեծ ազդուն ձեռնարկումների, որոնք իրագործվում էին Հնդկաստանում և ՍՍՀՄ-ում։ Հիանում էի թե մեկով և թե մյուսով։ Հենց որ ծանոթացա դրանց, առաջին իսկ օրից հանդես եկա ՍՍՀՄ-ի և Գանդհի պաշտպանությամբ՝ ընդդեմ նրանց թշնամիների։ Բայց պատմական նախասահմանության բերումով նրանք ընթանում էին տարբեր ուղիներով։ Եվ ես Մարկի նման ամեն կերպ չէի ուզում էր երկու բանակները շաղկապող օղակ դառնալ ու նպաստել երկու մեծ հեղափոխությունների՝ ազատ ոգու և պրոլետարիատի կազմակերպված մասսաների միասնական ճակատի ստեղծմանը՝ ընդդեմ հատարակական ու քաղաքական հետադիմության, իմպերիալիստա-ֆան կապիտալիզմի և ֆաշիստական վարչակարգերի համախմբված ուժերի, որոնք սպառնում են դարերով կասեցնել մարդկության առաջընթաց շարժումը»։

Վեպի վերջին գիրքը՝ «Նախագուշակը», գրողն ոկոել է 1929 թ. նոյեմբերին և ավարտել 1933 թ. ապրիլին, նույն թվականին էլ այն լույս է ընծայել Ալբեն Միշել հրատարակչությունը։

Մասն առաջին 7
Մասն երկրորդ 163
Մասն երրորդ 396
Պատմագրական ակնկիռք 573

Ռոմեն Ռոլան
ՀՄԱՅՎԱԾ ՀՈԳԻՆ
Վեպ

Ромен Ролан
ОЧАРОВАННАЯ ДУША
Роман
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1983

Խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան, նկարիչ՝ Վ. Ֆ. Մանդակունի, գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան, տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան, վերատեսուչ սրբագրիչ՝ Ս. Մ. Բալաթյան

ИБ *№ 3866*

Հանձնված է շարվածքի 27.06.83։ Ստորագրված է տպագրության 20.10.83։ Ձևաչափ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 30,24։ Պայմ. տպ. մամ., 30,44 պայմ. ներկ. թերթ. 29,25 Հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 20000։ Պատվեր՝ 1584։
Գինը՝ 2 ռ. 50 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան № 65։
Типография № 1 Госкомтета по делам издательств,
полиграфии и книжной торговли Арм. ССР,
Ереван, ул. Алавердяна, 65.